Վշոտ Հայրապետյան

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ
Բ Ա Ռ Ա Ր Ա Ն
(ՇՈՒՐՋ 10.000 ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ)

(ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 801.3=919.81
ԳՄԴ 81.2 Հ-4
Հ 300

**Գրքի տպագրությունը հովանավորել է
ՀՀ Ազգային ժողովի նախագահ
ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ**

Երաշխավորված է հրատարակության
Երևանի պետական համալսարանի ընդհանուր և
համեմատական լեզվաբանության ամբիոնի կողմից

Գիտական խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ ***Արտաշես Սարգսյան***

Հայրապետյան Ա. Պ.
Հ 300 Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն) / Ա.Պ.Հայրապետյան: Գիտ. խմբ.Ա.Սարգսյան - Եր.: Հեղինակային հրատ., 2011, 644 էջ:

Բառարանում ներկայացված, բացատրված և մասնակիորեն ստուգաբանված են այլ լեզուներից հայերենին անցած այն բառերը, որոնց օտար լինելը գիտակցվում է հանրության կողմից: Բառահոդվածներում տրվում են նաև հանրագիտական տեղեկություններ: Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 801.3=919.81
ԳՄԴ 81.2 Հ-4

ISBN 978-9939-53-938-6

© Ա. Հայրապետյան, 2011 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բառարանների կազմումը տարիների աշխատանք է, և այս բառարանն էլ բացառություն չէ: Տարիներ առաջ այս գործը նախաձեռնող հեղինակներից մեկը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մարգարյանը, ցավոք, այսօր կենդանի չէ: Նա կյանքից հեռացավ, երբ դեռ բառերն ամբողջությամբ հավաքված չէին, երբ դեռ շատ անելիքներ կային, երբ դեռ շատ էր զգացվում վաստակաշատ լեզվաբանի արժեքավոր խորհուրդների կարիքը: Այս աշխատանքը լրացվեց ու ամբողջացվեց առանց նրա, բայց իր կողմից առաջարկված մոտեցումները հիմք և ուղեցույց դարձան այս աշխատանքի համար: Ուստի նրա իսկ հեղինակած գիրքը նվիրվում է հենց իր հիշատակին՝ որպես հարգանքի ու երախտագիտության տուրք:

1-ին հրատարակության
2004 թ.

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Ա	Ի	Յ	Տ
Բ	Լ	Ն	Ր
Գ	Խ	Շ	Ց
Դ	Ծ	Ո	ՈՒ
Ե	Կ	Չ	Փ
Զ	Հ	Պ	Ք
Է	Ձ	Ջ	ԵՎ
Ը	Ղ	Ռ	Օ
Թ	Ճ	Ս	Ֆ
Ժ	Մ	Վ	

ԱՌԱՋԱԲԱՆ

Լեզուն անընդհատ զարգանում է, և այդ զարգացման ընթացքում անշուշտ կատարվում են փոփոխություններ: Դրանք վերաբերում են լեզվական տարբեր իրողությունների, ինչպես նաև բառապաշարին, որը, ի թիվս այլ փոփոխությունների, հարստանում է նոր բառերով: Այդ բառերը կարող են կազմվել տվյալ լեզվում արդեն գործածվող միավորներով կամ էլ փոխառվել այլ լեզուներից: Այս բառարանը ներկայացնում է ժամանակակից արևելահայերենում գործածվող օտար բառերը. բայց ի՞նչ է օտար բառը, արդյո՞ք այլ լեզուներից փոխառված բոլոր բառերն են դրանք: Լայն առումով, այո՛: Այն բոլոր բառերը, որոնք հայերենը հնդեվրոպական մայր լեզվից չի ժառանգել, կարելի է օտար համարել, սակայն այս բառարանում այդ բառերի ամբողջությունը չէ, որ ընդգրկված է: Օտար ասելով՝ նկատի են առնվել այն բառերը, որոնք այսօր հանրության կողմից գիտակցվում են որպես այդպիսիք: Մասնագետին հայտնի է, որ ասենք *աշխարհ*, *բժիշկ*, *ճաշակ* բառերը պարսկական փոխառություններ են, սակայն ոչ մասնագետի մտքով դժվար թե նման միտք անցնի: Մինչդեռ ասենք *օլիմպիադա* բառը, որը դարեր շարունակ (օլիմպիական խաղերի սկիզբը համարվում է մ. թ. ա. 776 թվականը) գործածվում է հայերենում, բոլորի կողմից համարվում է օտար բառ: Ո՞րն է դրա պատճառը: Թերևս ամենահիմնական պատճառն այն է, որ հայերենին ու հայ ժողովրդին սերտորեն առնչվող լեզուներում, մասնավորապես ռուսերենում գործածվում է այդ բառը, որից էլ պարզ է դառնում նրա օտար լինելը: Այսպիսով՝ այս բառարանում ընդգրկված են այնպիսի բառեր, որոնց օտար լինելը գիտակցվում է հայերեն խոսող ժողովրդի կողմից: Բառարանում տեղ են գտել թե՛ առօրյա խոսակցական բառեր, թե՛ որոշ գործածական տերմիններ: Հեղինակների նպատակն է առաջին հերթին բացատրել բառերի նշանակությունները, որպեսզի դրանք գործածվեն տեղին և ճիշտ: Բայց կա ավելի կարևոր նպատակ. բառարանի հենց առաջին էջից էլ պարզ է, որ նրանում կան մեծ թվով բառեր, որոնք խոսակցական շերտին են պատկանում և իհարկե ունեն այդպիսի նշում՝ *խսկց.*, ինչպես՝ *մալյար*, *մայկա*, *մասսա*, *սուխարի*, *ցիրկ* և այլն: Արդյո՞ք այս բառարանով խրախուսվում է այդպիսի բառերի գործածությունը: Ճիշտ հակառակը. այդ բառերի բացատրություններից հետո հնարավորության դեպքում բերվում են դրանց հայերեն համարժեքները, որն էլ հենց ինքնըստինքյան մերժում է տվյալ օտար բառի գործածությունը: Այսինքն՝ օտար բառերի բառարանը մերժում է օտար այն բառերի գործածությունը, որոնք ունեն հայերեն համարժեքներ, և նպաստում, որ տարածվեն ու գործածելի դառնան վերջիններս: Իսկ օտար բառերը հատկապես վերջին տարիներին մեծ հոսքով թափանցում են հայերենի բառապաշար. դրանք տնտեսագիտությանը, իրավաբանությանը, տեխնիկային և այլ բնագավառներին

վերաբերող բառեր են, որոնք տնտեսաքաղաքական բուռն փոփոխությունների հետևանքով լայն տարածում են ունենում: Բառերի այդ հորձանուտում «չխեղդվելու» համար անհրաժեշտ է կանոնավորել ու դասակարգել դրանք, հնարավորության դեպքում ստեղծել ու կիրառել դրանց հայերեն համարժեքները: Բառարանում ընդգրկված են մասնագիտական բառեր և տերմիններ: Ներառված են նաև բառեր, որոնք լայնորեն գործածվում են մամուլում, լրատվական այլ միջոցներում և բանավոր խոսքում: Այսպիսով՝ բառարանի հեղինակները ոչ թե խրախուսում են օտար բառերի գործածությունը, այլ, ընդհակառակը, փորձում ինչ-որ չափով սահմանափակել ու կանոնավորել այն:

Իհարկե, բազմաթիվ բառեր արդեն իսկ ընդգրկված են նախորդ բառարաններում, բայց այս բառարանի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանում տեղ գտած շատ բառեր նոր են անցել հայերենին և չէին կարող ներառված լինել նախորդներում: Ընթերցողներին այս բառարանը էլ ավելի օգտակար կլինի նրանով, որ այստեղ կան նաև օտար բառերից հայերենի բառակազմական օրենքներով կազմված որոշ բառեր:

Բառարանը գրված է հետևյալ սկզբունքներով: Այբբենական դասավորությամբ բերված են գլխաբառերը՝ ամբողջությամբ մեծատառերով: Բառահոդվածները կազմված են հետևյալ ձևով: Գլխաբառին հաջորդում է տվյալ բառի ռուսերեն տարբերակը, քանի որ օտար բառերի մեծագույն մասը հայերենին անցել է ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ: Դրան հաջորդում է բառի ստուգաբանությունը, հետո նշվում է խոսքիմասային պատկանելությունը, ապա բառի գործածության ոլորտը կամ ոճական արժեքը (օր.՝ *գրք.*, *խոհր.*, *սպորտ.*, *խսկց.* և այլն): Այնուհետև բերվում է բառի բացատրությունը, իսկ հնարավորության դեպքում՝ հայերեն համարժեքը: Գլխաբառի բառահոդվածին կարող են հաջորդել շղատառով գրված բառեր՝ իրենց բացատրություններով, բայց բնականաբար արդեն առանց ստուգաբանության, որովհետև գլխաբառը ստուգաբանված է: Դրանք այն բառերն են, որոնք կազմված են գլխաբառից հայերենի բառակազմության օրենքներով:

Բառահոդվածները պարունակում են նաև հանրագիտական տեղեկություններ:

Հատկապես մեր օրերում թերևս ամեն օր հայերենը համալրվում է նոր բառերով, հետևաբար բառարանը լիակատար լինել չի կարող: Ուստի ընթերցողները բառարանից օգտվելիս չպետք է մոռանան այս հանգամանքը: Բայց այն, ինչ որ ներկայացված է բառարանում, կարծում ենք՝ կօգնի նրանից օգտվողներին:

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

1-ին հրատարակության առաջաբանը, 2004թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայտնի է,որ բառապաշարը արտացոլում է հասարակական կյանքի փոփոխությունները, և ինքն էլ աստիճանաբար փոփոխվում դրա զարգացմանը զուգընթաց: Այդ փոփոխությանների ընթացքում բառապաշարից դուրս են մղվում շատ բառեր, լեզվի ներքին միջոցներով ստեղծվում են նորերը, ինչպես նաև այլ լեզուներից կատարվում են փոխառություններ: Սրանք կարող են մնալ լեզվում՝ հարստացնելով նրա բառապաշարը, սակայն կարող են նաև հետագայում ստեղծվել օտար բառերի համարժեքները, և փոխառված բառերը այդ դեպքում վերածվում են օտարաբանությունների, աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից, թեև այդ գործընթացը կարող է բավական երկար ժամանակ տևել:

Այս բառարանում ներկայացված են օտար բառեր, որոնց մի մասի համաժեքները թեև ստեղծվել են, սակայն ակտիվ բառապաշարից դեռ դուրս չեն մղվել(այդ օտար բառերը հատկապես գիտության որևէ ճյուղի մասնագիտական բառացանկից են), իսկ մյուս մասի համար դեռ համարժեքներ չկան, և ժամանակը միայն ցույց կտա՝ կստեղծվե՞ն համարժեքներ, թե՞ փոխառված բառերը կդառնան հայերենի բառապաշարի սեփականությունը: Ասում են, որ բառարանները ինչքան էլ արագ կազմվեն ու հրատարակվեն, դարձյալ չեն կարող համընթաց լինել լեզվական փոփոխություններին, և ինչ-որ բառեր միշտ էլ դուրս կմնան բառացանկից: Այս բառարանի առաջին հրատարակությունից արդեն անցել է վեց տարի: Մեր օրերում կատարվող լեզվական փոփոխությունները բառապաշարի ոլորտում բավական զգալի են, ուստի անհրաժեշը էր վերանայել բառարանը կատարել շտկումներ, ավելացնել նոր բառեր:

Բառարանի կազմումը ձեռնարկել էին Ալաքսանդր Մարգարյանը և Աշոտ Հայրապետյանը, սակայն դեռ նոր էին աշխատանքները լիովին սկսվել, երբ կյանքից հեռացավ բազմավաստակ լեզվաբան պրոֆեսոր Ալ. Մարգարյանը, և դժվարին աշխատանքը շարունակեց դոցենտ Աշ. Հայրապետյանը: Բառարանի առաջին հրատարակությունը նվիրվեց Ալ. Մարգարյանի հիշատակին: Դոցենտ Աշ. Հայրապետյանը հրատարակումից հետո շարունակեց բառահավաքման աշխատանքը, և արդեն հրատարակվում է մի բառարան, որը ավելի քան 2000 բառով հարուստ է նախորդից: Երկրորդ հրատարակության մեջ պահպավել են բառարանի կազմության սկզբունքները.ներկայացվում է գլխաբառը, բերվում են ստուգաբանությունը և բացատրությունը, այնուհետև հնարավորության դեպքում նշվում է հայերեն հահամարժեքը:

Բառարանը օգտակար է մի շարք առումներով: Նախ ընթերցողը իմանում է իրեն հետաքրքրող բառի ծագումը, այնուհետև բացատրությունը. կան նաև հանրագիտական տեղեկություններ: Գրքի գործնական արժեքը բարձրացնում են բառերի հայերեն համարժեքները, որոնց մի մասը ընդհանրապես դեռ լայն տարածում չունի, իսկ մյուս մասը գործածվում է միայն գրական լեզվում, բայց ժողովրդախոսակցականին բնորոշ է օտար բառի կիրառությունը:

Անշուշտ, այս բառարանն էլ չի ընդգրկում օտար բառերի ողջ բառացանկը, որը, չմոռանանք, անընդհատ աճում է գլոբալիզացիայի մեր դարում, ուստի ցանկանում ենք, որ հեղինակը շարունակի իր աշխատանքը, և հայ բառարանագրության հարուստ շտեմարանը հարստացվի նորանոր աշխատանքներով:

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
2-րդ հրատարակության առաջաբանը, 2011թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Օտար բառերի բացատրական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2004, 503 էջ:

Առաջին անգամ լույս է տեսել մի շատ կարևոր ու օգտակար բառարան, որի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում հայերենագիտության մեջ: Հայտնի է, որ լեզուն անընդհատ զարգացող համակարգ է, և այդ զարգացումը ամենից առաջ կատարվում է լեզվի բառապաշարի մեջ. այն տեղի է ունենում թե՛ տվյալ լեզվի ներքին օրինաչափությունների և թե՛ փոխառությունների միջոցով: Փոխառությունները հատուկ են աշխարհի բոլոր լեզուներին, առանց փոխառությունների լեզուն կլինի խեղճ ու աղքատ: Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի հաշվումներով հայերենում հնդեվրոպական 927 արմատների դիմաց հին լեզուներից կան 4015, նոր լեզուներից 5825 փոխառյալ արմատներ (խոսքը մինչև 1950-ական թվականների մասին է):

Բառարանի «Առաջաբանի» հեղինակ, լեզվաբան Արտաշես Սարգսյանը նշում է՝ աշխարհ, աշակերտ, բժիշկ, տոմս, ամբիոն, քահանա, նամակ և հնդեվրոպական շատ այլ արմատներ մասնագետի համար փոխառություններ են, սակայն ոչ մասնագետը հազիվ թե այդ գիտակցի, մինչդեռ ասենք՝ աբսուրդ, ադիդաս, բարիտոն, բարոկկո, գրանդ, դակտիլ, դիսերտացիա, դելեգատ, օլիգարխ, ֆորմացիա և հազարավոր նման բառեր թե՛ մասնագետի և թե՛ ոչ մասնագետի համար օտար բառեր են:

Իսկ ի՞նչ են փոխառությունները կամ օտար բառերը, դրանք մի ժողովրդի լեզվից մի այլ ժողովրդի լեզվին անցած բառերն են: Դա, ինչպես ասվեց, համընդհանուր երևույթ է և պայմանավորված է ժողովուրդների հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի փոփոխություններով, ինչպես նաև գիտության, տեխնիկայի, արվեստի, սպորտի զարգացման և այլ գործոններով: Փոխառությունները լինում են երկու տեսակ՝ անմիջական (երբ փոխառու լեզուն որևէ լեզվից բառերը վերցնում է ուղղակիորեն) և միջնորդավորված (երբ փոխառությունը կատարվում է մի երրորդ լեզվի միջոցով): Հատուկ նշելի է, որ երկու դեպքում էլ, որպես կանոն, փոխառյալ բառերը ենթարկվում են փոխառու լեզվի օրենքներին ու օրինաչափություններին, հարմարեցվում են տվյալ լեզվի հնչյունական, բառակազմական, քերականական և իմաստային կանոններին:

Այս բոլոր հանգամանքները նկատի ունենալով էլ «Օտար բառերի բացատրական բառարանի» հեղինակները՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալ. Մարգարյանը և բանասիրական գի-

տությունների թեկնածու, դոցենտ Ա. Հայրապետյանը խնամքով հավաքել ու բարեխղճորեն բացատրել են այսօրվա մեր մամուլում և ռադիոհեռուստատեսային լեզվում, նաև գիտական ու գեղարվեստական գրականության մեջ այնքան առատորեն գործածվող շուրջ 8 հազար բառային միավոր:

Բառարանի վրա հեղինակներն աշխատել են երկար տարիներ, իսկ պրոֆեսոր Մարգարյանի մահվանից հետո Աշոտ Հայրապետյանը ամբողջացրել, համակարգել ու հրատարակել է բառարանը՝ հիմք և ուղեցույց ունենալով իր ավագ գործընկերոջ առաջարկած մեթոդներն ու սկզբունքները: Հայրապետյանը համալրել է բառացանկը, այն բերել այբբենական տեսքի և բառահոդվածների վերաբերյալ տվել հետևյալ մեկնությունները.

1. Օտար բառից հետո բերվում է նրա ռուսերեն տարբերականվանումը. սա արվում է երկու նպատակով, նախ, որ ամեն մի օտար բառ վկայակոչվում է ռուսական թարգմանական բառարաններում, ապա՝ հեղինակներն իրենց բացատրություններն ավելի հավաստի են դարձնում նաև ռուսերենով, և որ դրանք մեր լեզվին են անցել ռուսերենից կամ ռուսերենի միջոցով:
2. Օտար լեզուների իմացությունը (հին և նոր) հեղինակներին հնարավորություն է տվել ռուսերեն անվանումից հետո անմիջապես նշել, թե տվյալ բառը ինչ լեզվի ծագում ունի և ինչ է նշանակում, ստուգաբանում են բառը:
3. Նշվում է բառի խոսքիմասային պատկանելությունը (գոյական, ածական, բայ, մակբայ և այլն):
4. Այս բոլորից հետո պարտադիր կերպով նշվում են նաև բառի գործառական ոճերն ու գործածության ոլորտները՝ համառոտագրությամբ՝ քեր., տնտ., գիտ. գրք., խսկց.:
5. Բերվում է նաև բառի բազմիմաստությունը (եթե ունի), նշվում են բոլոր իմաստները (ուղիղ և փոխաբերական)՝ իրենց ստուգաբանություններով ու բացատրություններով: Օրինակ՝ կուրս (լատ. cursus-վազք, ընթացք) բառի համար նշվում է 8 իմաստ:
6. Եթե տվյալ բառն ունի իր հայերեն համարժեքը, բառահոդվածի վերջում անպայման բերվում է հայերեն տարբերակը: Օրինակ՝

ԴԻՍԵՐՏԱՑԻԱ [< диссертация < dissertatio հետազոտում, դատողություն], գոյ. Գիտական թեզ՝ գիտական աշխատանք, որ հրապարակային պաշտպանության է ներկայացվում և պաշտպանվում՝ գիտական աստիճան ստանալու նպատակով, ատենախոսություն:

Հեղինակները իրավացիորեն բառարան են ներմուծել ԳԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի հրատարակած քառահատոր և ակադեմիկոս էդուարդ Աղայանի երկհատոր հայերեն բացատրական բառարաններում տեղ գտած բազմաթիվ օտար բառեր ու տերմիններ, որոնք դեռ 1950-ական թվականներից, դրանից էլ առաջ,

գործածվում էին մեր բառապաշարում, ինչպես՝ ավանգարդ, պիոներ, բորսա, բրիկետ, ասպիրանտ, բալետ, օպերա, ֆրազ և այլն, որոնք փոխառություններ են, բայց հիշյալ բառարաններում չեն նշվում որպես այդպիսիք: Այս նոր բառարանում սրանց վերաբերյալ կատարվել են որոշ ճշգրտումներ ու հավելումներ:

«Օտար բառերի բացատրական բառարանի» առավելություններից մեկն էլ այն է, որ բացի որևէ բառի բազմիմաստության բոլոր իմաստները արաբական թվանշաններով նշելուց, տրվում է նաև տվյալ բառի համանունությունը (նույնանունությունը)՝ հռոմեական թվանշաններով (եթե կան այդպիսիք): Օրինակ՝

ԴԵԼՏԱ I [< дельта < հուն, delta հունարեն այբուբենի 4-րդ տառը], գոյ. (աշխգր.): Գետաբերանում գետի բացվածքներից գոյացած հարթություն, որը բազմաթիվ ճյուղավորումների է բաժանվում գետի բազուկներով և ունի եռանկյունու և դելտա տառի ձև:

ԴԵԼՏԱ II [< дельта < հուն, delta], գոյ. 1. Հունարեն այբուբենի չորրորդ տառը: 2. Նյութի վիճակներից մեկը:

Անհրաժեշտության դեպքում, բառի հետ կապված, տրվում են նաև լրացուցիչ, հանրագիտական տեղեկություններ. Օրինակ՝ գլաուկոմա, ամազոնուհիներ, օրթոդոքս, կոնյակ, Բի-Բի-Սի, գեներալիսսիմուս, Սորբոն: Իմիջիայլոց ասենք, որ Սորբոնը եզակի հատուկ անուն չէ բառարանում:

Համագործածական բառերի ու տերմինների հետ բառարան են մուտքագրվել նաև լեզվի խոսակցական շերտում գործածվող ոչ քիչ թվով բառեր՝ խսկց. համառոտագրությամբ, որոնք թեև հեղինակները չեն խրախուսում, բայց բերում են որպես փոխառություններ՝ նշելով դրանց ծագումն ու ստուգաբանությունը: Դրանք, այսպես կոչված barbarismos՝ տվյալ լեզվի լեզվական նորմին չհամապատասխանող օտարաբանություններ են, ինչպես՝ բլեֆ, ազարտ, գարաժ, ֆորմա, կուկլա, կուպե, գաստրոնոմ, խրուստալ, պլիտա, բալկոն, պարկետ, պալտո, պլաշչ, սորոչկա, մայկա, ցիրկ, տուրիստ և այլն: Բերվում են նման օտարաբանությունների հայերեն համարժեքները, այսինքն թե՝ խորհուրդ է տրվում մեր մաքուր, ոսկեղենիկ լեզուն չաղտոտել նման օտարաբանություններով:

Վերջապես ո՞րն է այս բառարանի արժեքը, անժխտելի փաստ է, որ հատկապես վերջին տարիներին մեր լեզվի բառապաշարի մեջ են թափանցել (և դա անընդհատ տեղի է ունենալու) հազարավոր օտար բառեր, առանց որոնց լեզուն գործառել չի կարող:

Մի՞թե այսօր թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում մենք կարող ենք չգործածել հետևյալ բառերն ու տերմինները՝ ադիդաս, ալբոմ, ալերգիա, աթերոսկլերոզ, ազբեստ, բետոն, բիզնես, բիլիարդ, բլից, գամբիտ, գեն, գլոբուս, ստաժ, սոպրանո, բարիտոն, սպիրտ, օֆսեթ, ֆավորիտ, ֆելիետոն և այլն, և այլն:

Ներկայումս զանգվածային լրատվության միջոցները հեղեղված են օտար բառերով, խորհրդարանում ու համագումարներում ելույթ ունեցողները հաճախ են գործածում նման բառեր, որոնց իմաստները ոչ միայն հասարակ ժողովուրդը, երբեմն իրենք՝ օգտագործողներն էլ ճիշտ չեն իմանում, իսկ այս բառարանը տալիս է այդպիսի բառերի մեծ մասի բացատրությունը:

Ինչ խոսք, բառարանը լիակատար համարել չի կարելի, ինչպես լիակատար չէ ցանկացած բառարան, մանավանդ որ այս բառարանն առաջին փորձն է մեզանում, մինչդեռ ռուսերենում նման բառարաններ-ը պարբերաբար են հրատարակվում, արդեն կան օտար բառերի երկու տասնյակից անցնող բացատրական բառարաններ, կան նույնիսկ նման տիպի դպրոցական տարբերակներ:

Անհրաժեշտություն է, որ մենք նույնպես պարբերաբար հրատարակենք այդպիսիք: Մնում է հուսալ, որ լեզվաբան-բառարանագիր Աշոտ Հայրապետյանը կշարունակի անընդհատ հավաքել լեզու մուտք գործած նորանոր օտար բառեր և 4-5 տարին մեկ անգամ կվերահրատարակի այս անհրաժեշտ բառարանը՝ վերամշակված նորանոր հավելումներով:

Ափսոսանքով պետք է նշել, որ բառարանը լույս է տեսել ընդամենը 300 օրինակ տպաքանակով: Այն հրատարակվել է ՀՀ պաշտպանության նախարարության հովանավորությամբ:

Խ. Գ. ԲԱԴԻԿՅԱՆ
Գրքի առաջին հրատարակության վերաբերյալ
ԲԵՀ, № 2, 2005 թ.

Ա

ԱԲԱԶԻԱ [< абазия < հուն. a ժխտական մասնիկ + basis քայլելը, ոտքով գնալը], գ. (բժշկ.): Նյարդային համակարգի խանգարման պատճառով քայլելու ունակության կորուստ:

ԱԲԱԺՈՒՐ [< абажур < ֆր. abat-jour < batte վայր գցել, պակասեցնել + jour ցերեկային լույս], գ. (տեխ.): Լուսամփոփի ապակե, երկաթե, թղթե ևն կափարիչը, որի մեջ գտնվում է լամպը:

ԱԲԱԿ [< абак, абака < լատ. abacus < հուն. abax(abakos) հաշվետախտակ], գ. 1. (ճարտ.): Թակաղաղ, թակաղակ, սյունի խոյակի վերնահարթակ: 2. (մաթ.): Հաշվետախտակ (հին հույների ու հռոմեացիների մոտ և միջին դարերում):

ԱԲԱԿԱ [< абака < իսպ. abaca < լատ. abacus < հուն. abax (abakos) տախտակ], գ. (բսբ.): Արևադարձային երկարամյա բույս, որի մազաթելերից գործում են պարաններ, թոկեր ևն նավերի համար:

ԱԲԱՍԻ [< абаз < պարսկ. abbāsi արծաթադրամ շահ Աբաս I (1587-1629թթ.) անունից], գ. (հնց.): 1. (պատմ.): Չորսշահանոց արծաթադրամ Իրանում և մինչհեղափոխական Վրաստանում: 2. (Քսանկոպեկանոց արծաթադրամ):

ԱԲԲԱ [< аббат < լատ. abbas (abbatis) < ասոր. abba հայր], գ. (կրոն.): Աբբահայր՝ կաթոլիկ վանքի վանահայր:

ԱԲԲԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (կրոն.): 1. Աբբայի կոչումը և պաշտոնը: 2. Աբբա լինելը: 3. Աբբային ենթակա հաստատությունը և ունեցվածքը, միաբանություն:

ԱԲԴԻԿԱՑԻԱ [< абдикация < լատ. abdicatio հրաժարում], գ. (հնց.): Գահից հրաժարում, իշխանությունից, պաշտոնից, աստիճանից հրաժարվելը:

ԱԲԵՌԱՑԻԱ [< аберрация < լատ. aberratio շեղում, մոլորում < aberrare շեղվել, շփոթվել], գ. 1. (աստղգ.): Երկնոլորտում լուսատուի թվացող տեղաշարժ, որ հետևանք է լույսի տարածման վերջավոր արագության և Երկրի շարժման: 2. (օպտ.): Պատկերի թերություն, որ առաջ է բերում օպտիկական համակարգը: 3. (կենսբ.): Բուսական կամ կենդանական տեսակի շեղում նորմալ ձևից: 4. (հոգեբ.): Շեղում նորմալ մտածողությունից:

ԱԲԶԱՑ [< абзац < գերմ. Absatz], գ. (խսկց.): 1. Պարբերություն՝ տեքստի այն մասը՝ հատվածը, որ ընկած է երկու նոր տողերի միջև: 2. Տողագլուխ, նոր տող: 3. (լեզվբ. քեր.): Պարբերույթ՝ բազմաթիվ լրացումների ու երկրորդական նախադասությունների ամբողջությունը ներկայացնող շարահյուսական կառուցվածք՝ բարդ նախադասություն, որ բնութագրվում է մտքի հանգամանալից ծավալումով և արտասանությամբ:

ԱԲԻՈԳԵՆԵԶ [< абиогенез < հուն. a ժխտական մասնիկ + bios կյանք + genesis ծագում], գ. (կենսբ.): Անօրգանական նյութերից կենդանի էակների առաջացման տեսություն:

ԱԲԻՍԱԼ [< абиссальный < հուն. abyssos անհատակ], ած. (երկրբ.): Խորքային, խորջրյա:

ԱԲԻՍԱԼ ԳՈՏԻ – (երկրբ.):Խորջրյա գոտի՝ սկսած 2 կմ-ից: Սրան հատուկ է ջրի ծայ-

ռաստիճան դանդաղ շարժումը, կայուն ջերմաստիճանը (մոտ 0^0), խտությունն ու աղիությունը:

ԱԲԻՍԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ - (երկրբ.): Խորջրյա ծովային նստվածքներ ավելի քան 3 կմ խորություններում: Գոյանում են օվկիանոսի վերին շերտերում ապրող օրգանիզմների կմախքներից, քամիներով և ծովային հոսանքներով ցամաքից բերված ապարների մասնիկներից, հրաբխային և տիեզերական փոշուց:

ԱԲԻՏՈՒՐԻԵՆՏ [< абитуриент < միջին լատ. abituriens (abiturientis) հեռանալ պատրաստվող], գ. (խսկց.): Դիմորդ՝ միջնակարգ դպրոցն ավարտող, որը պատրաստվում է ընդունվել բուհ:

ԱԲԼԱՏԻՎ [< аблатив < լատ. (casus) ablativus], գ. (քեր.): Բացառական հոլով:

ԱԲԼԱՈՒՏ [< аблаут < գերմ. Ablaut], գ. (լեզվբ.): Ձայնդարձ՝ միևնույն ձևույթի ձայնավորների հերթագայական փոփոխություն, որով ստացվում են ձևույթի զուգահեռ ձևեր (օր.՝ binden, band, gebunden):

ԱԲՈԼԻՑԻՈՆԻԶՄ [< аболиционизм < անգլ. abolitionism < լատ. abolitio վերացում, բնաջնջում], գ. (քղք.): 1. Որևէ օրենքի կասեցմանը ձգտող հասարակական շարժում: 2. Ստրկամարտություն՝ ԱՄՆ-ում XVIII-XIX դդ. նեգրերի ստրկությունը վերացնելու շարժում:

ԱԲՈՅՄԱ [< рուս. обойма], գ. 1. (ռազմ. խսկց.): Փամփշտատուփ՝ հատուկ ձևով պատրաստված տուփ, որի մեջ լցնելով փամփուշտները՝ հագցնում են հրազենին և կրակելու ժամանակ փամփուշտներն ավտոմատորեն մատուցվում են փամփշտանոցը: 2. Պահունակ՝ հրացանի կամ ատրճանակի պահեստատուփի մեջ դրվող փամփուշտների շրջանակ, մետաղյա հարմարանք, որի մեջ ամրացնում են որոշ քանակով փամփուշտներ՝ պահեստատուփի մեջ դնելու, ինչպես և փամփշտակալի գրպաններում տեղավորելու համար:

ԱԲՈՆԵՄԵՆՏ [< абонемент < ֆր. abonnement], գ. (խսկց.): 1. Բաժանորդագիր՝ բաժանորդագրության անդորրագիր: 2. Որոշ ժամանակամիջոցում որևէ բանից օգտվելու իրավունքի փաստաթուղթ:

ԱԲՈՆԵՆՏ [< абонент < գերմ. Abonnent < ֆր. abonner ստորագրել, ստորագրվել], գ. Բաժանորդ՝ 1. Պարբերական հրատարակություններին բաժանորդագրված անձ: 2. Կուլտուր-կենցաղային ապասարկումներից համապատասխան վճարով օգտվող անձ:

ԱԲՈՐԴԱԺ [< абордаж < ֆր. abordage], գ. (ծով.): Նավաճանկում՝ թշնամու նավը ճանկերով մոտեցնելը՝ ձեռնամարտ մղելու համար, նավագզեռում:

ԱԲՈՐԻԳԵՆ(ՆԵՐ) [< аборигены < լատ. aborigines < ab նախա + origine սկզբնական], գ. ած. Անդրենածին, նախաբնիկ, բնիկ՝ տվյալ վայրում սկզբից ի վեր եղած՝ բնակված:

ԱԲՈՐՏ [< аборт < լատ. abortus վիժում], գ. (բժշկ.): Վիժում՝ մինչև 28 շաբաթական պտուղի՝ արգանդից վաղաժամ հանումը բնական կամ արհեստական եղանակով:

ԱԲՍԵՆՏԵԻԶՄ [< абсентеизм < լատ. absens (absentis) բացակայող], գ. (քղք.): Բացակայություն՝ ընտրություններից ընտրողների զանգվածաբար խուսափելը, ձայնի իրավունքից հրաժարվելը:

ԱԲ(Պ)ՍԻԴ [< апсид < հուն. apsis (apsidos) թաղ, կամար], գ. (ճարտ.): Շինության ծավալի մաս, որն ավարտվում է գմբեթարդով կամ թաղով:

ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄ [< абсолютизм < ֆր. absolutisme < լատ. absolutus անսահման], գ. (քղք.): Բացարձակ՝ միահեծան իշխանություն՝ կառավարման ձև, երբ գերագույն իշխանությունը անսահմանափակորեն պատկանում է մեկ անձի՝ միապետի:

ԱԲՍՈԼՅՈՒՏԻՍՏ [< абсолютист < ֆր.], գ. Աբսոլյուտիզմի կողմնակից:

ԱԲՍՈՐԲԱՑԻԱ [< абсорбация < լատ. absorbere], գ. (տնտսգ.): Այլ երկրներից մշտական բնակության ներգաղթած անձանց ներգրավումը տվյալ երկրի տնտեսական կյանքում:

ԱԲՍՈՐԲՑՈՒՄ [< абсорбция < լատ. absorptio կլանում], գ. (ֆիզ. քիմ.): 1. Ներծծում՝ ներս ծծել, ծծելով ներս առնել՝ յուրացնել, կլանել: 2. Էլեկտրամագնիսական և առաձգական տատանումների էներգիայի կլանում:

ԱԲՍՏԻՆԵՆՑԻԱ [< абстиненция < լատ. abstīnere ինքնազրկում], գ. (բժշկ.): Ալկոհոլային խմիչքից մասնակի կամ ամբողջական ինքնազրկում, հրաժարում:

ԱԲՍՏՐԱԿՏ [< абстрактный < լատ.], ած. (գիտ.): Վերացական՝ 1. Վերացարկման ճանապարհով՝ միջոցով ստացված՝ գոյացած: 2. Վերացարկման վրա հիմնված, վերացարկում կատարող, վերացարկման հատկություն ունեցող: 3. Առօրյա կյանքից՝ իրականությունից կտրված, իրականության վրա չհիմնված: 4. (գիտ.): Առարկաներից անկախ, առարկաներից վերացարկված:

ԱԲՍՏՐԱԿՑԻԱ [< абстракция < լատ. abstractio վերացարկում], գ. (գիտ.): 1. Վերացում, վերացարկում՝ վերացարկելը, վերացարկվելը, աբստրահումը: 2. Վերացական հասկացություն, տեսական ընդհանրացում: 3. (տնտսգ.): Վերացարկում՝ գործին չվերաբերող տնտեսական և արտատնտեսական փաստերի բացառումը տնտեսական վերլուծությունից:

ԱԲՍՏՐԱԿՑԻՈՆԻԶՄ [< абстракционизм < լատ.] գ. (արվ.): Վերացապաշտություն՝ ոչ ռեալիստական ուղղություն ժամանակակից կերպարվեստի բնագավառում:

ԱԲՍՈՒՐԴ [< абсурд < լատ. absurdus անհեթեթ], գ. Անհեթեթություն՝ 1. Անհեթեթ լինելը: 2. Անհեթեթ խոսք, արարք: 3. ած. Անհեթեթ՝ տխմար, անիմաստ, անմիտ:

ԱԲՎԵՐ [< Абвер < հմռտգ. գերմ. Abwehr < Auslandsnachrichten und Abwehramt], գ. (պատմ.): Հիտլերյան Գերմանիայի ռազմական հետախուզությունը և հակահետախուզությունը:

ԱԲՐԱԶԻԱ [< абразия < լատ. abrasio քերում], գ. 1. (երկրբ.): Ծովափի ողողում, քայքայում: 2. (բժշկ.): Քերում, արտաքերում:

ԱԲՐԱԿԱԴԱԲՐԱ [< абракадабра < հմմտ. լատ. abracadabra (< հուն. abrakos աստվածային նշանակությամբ + հին հրեերեն dabar բառ) կախարդական բառաձև, որին տրվում էր հրաշագործ ուժ], գ. Բառերի անհեթեթ բառակույտ, բանդագուշանք:

ԱԲՐԵՎԻԱՏՈՒՐԱ [< аббревиатура < իտլ. abreviatūra < լատ. brevis կարճ], գ. (լեզվբ. հնց.): Հապավում՝ բառերի հապավված բաղադրիչներով կազմված բարդ բառ (օր.՝ ուսմասվար, ԱՄՆ ևն):

ԱԲՐԵՎԻԱՑԻԱ [< аббревиация < լատ. abbreviātio կրճատում], գ. (լեզվբ. հնց.): Հապավում կազմելը, հապավելը. բառերի հապավված բաղադրիչներով բարդ բառ կազմելը:

ԱԲՐՈԳԱՑԻԱ [< аброгация < լատ. abrogatio վերացում, ոչնչացում], գ. (իրավբ.): Օրենքը չեղյալ հայտարարելու գործողություն:

ԱԳԱԹ(Տ) [< агат < հուն. achatēs], գ. (հնք.): Քվարցի գույնզգույն շերտերից բաղկացած կիսաթանկարժեք քար:

ԱԳԱԼՄԱՏՈԼԻԹ [< агальматолит < հուն. agalma (agalmatos) զարդարանք, արձան + lithos քար], գ. (հնք.): Բազմագույն փափուկ քար, որ Չինաստանում օգտագործվում է զանազան իրեր (արձանիկներ, դաշույնի կոթեր ևն) պատրաստելու համար:

ԱԳԱՄԻԱ [< агамия < հուն. agamia], գ. 1. (ազգգր.): Ամուրիություն, անամուսնություն: 2. (կենսբ.): Սեռի բացակայություն:

ԱԳԱՄՈԳՈՆԻԱ [< агамогония < հուն. agamōs անամուսնական + gonōs ծնունդ], գ. (բսբ.): Բնական օրգանիզմների անսեռ բազմացում՝ բջիջների բաժանման միջոցով:

ԱԳԱՎԱ [< агава < հուն. agauos զարմանքի արժանի], գ. (բսբ.): Արևադարձային բազմամյա բույս, որի հայրենիքը Մեքսիկան է. սրանց որոշ տեսակների տերևներից ստանում են թել՝ կոպիտ գործվածքներ, պարաններ ևն գործելու համար:

ԱԳԵՆԵԶԻԱ [< агенезия < գերմ. Agenesie < հուն. a ժխտական ածանց + genēsis ծնունդ], գ. (բժշկ.): Տե՛ս Ապլազիա:

ԱԳԵՆՏ [< агент < լատ. agens (agentis) գործող], գ. (խսկց.): 1. Գործակալ, լրտես՝ որևէ ուրիշ երկրի շահերին ծառայող մարդ: 2. Հավատարմատար, ներկայացուցիչ՝ որևէ ձեռնարկության՝ հիմնարկի ներկայացուցիչ անձ:

ԱԳԵՆՏՈՒՐԱ [< агентура < լատ.], գ. Գործակալություն՝ 1. Գործակալների կազմ (տե՛ս Ագենտ 1): 2. Լրտեսական ծառայություն:

ԱԳԵՎԶԻԱ [< агевзия < գերմ. Ageusie < հուն. a ժխտական ածանց + geusis համ], գ. (բժշկ.): Համի զգացողության կորուստ:

ԱԳԻՏԱՏՈՐ [< агитатор < լատ.], գ. (հնց.): Իրազեկող, քարոզիչ՝ քարոզչությամբ զբաղվող մարդ:

ԱԳԻՏԱՑԻԱ [< агитация < լատ. agitatio գործողության մեջ դրված], գ. (հնց.): Իրազեկում, քարոզչություն՝ գրավոր և բանավոր գործունեություն՝ ժողովրդական լայն զանգվածների վրա որոշ ուղղությամբ քաղաքականապես ներգործելու համար:

ԱԳԻՏԱՑԻՈՆ [< агитационный < լատ.], ած. (հնց.): Ագիտացիային՝ քարոզչությանը հատուկ, ագիտացիայի հետ կապված, ագիտացիայով զբաղվող:

ԱԳԼՈՄԵՐԱՏ [< агломерат, аггломерат < լատ. agglomeratus միացյալ, կուտակված], գ. (հնք.): 1. Շեղջաքար, խառնահանք՝ կավով, երկաթօքսիդով և ցեմենտված ճլաքարի ու գլաքարի նստվածքային ապար: 2. *փխբ.* Այլազան տարրերից բաղկացած իր:

ԱԳԼՈՄԵՐԱՑԻԱ [< агломерация, аггломерация < լատ. agglomerare միացնել, կուտակել], գ. (հնք.): 1. Շեղջաքարացում՝ զանազան հանքատեսակների միացման գործընթաց: 2. (տեխ.): Եռակալում՝ մամլելու կամ շիկացնելու միջոցով մանր փոշենման փխրուն հանքանյութերից վերահալելու պիտանի կտորներ ստանալը:

ԱԳԼՈՒՏԻՆԱՏԻՎ [< агглютинативный < լատ. agglutinare կցել], ած. (լեզվբ. հնց.): Կցական՝ կցական լեզուներ, որի մեջ քերականական իմաստները հիմնականում արտահայտվում են հիմքին մասնիկների կցումով:

ԱԳԼՈՒՏԻՆԱՏԻՎ ԼԵԶՈՒՆԵՐ - (լեզվբ.): Կցական լեզուներ (օրինակ՝ ժամանակակից հայերեն, թուրքական, ուգրաֆիննական լեզուները):

ԱԳԼՈՒՏԻՆԱՑԻԱ [< агглютинация < լատ. agglutinatio կցում, սոսնձում], գ. 1. (բժշկ.): Հեղուկներում կախված մասնիկների (մանրէներ, էրիթրոցիտներ, լեյկոցիտներ ևն) միմյանց կպչելու երևույթ: 2. (լեզվբ. հնց.): Բարդ բառերի և քերականական ձևերի կազմության եղանակ՝ արմատի վրա մասնիկների հավելման միջոցով:

ԱԳԼՈՒՏԻՆԻՆ [< агглютинин < լատ.], գ. (բժշկ.): Ագլուտինացիա առաջացնող հատուկ նյութ, որ հայտնվում է արյան շիճուկի մեջ վարակիչ հիվանդությունների և հակավարակային պատվաստումների ժամանակ:

ԱԳՆՈԶԻԱ [< агнозия < հուն. a ժխտական մասնիկ + gnosis գիտելիք], գ. (գիտ.): Կանոնավոր ընկալման մասնավոր խանգարում:

ԱԳՆՈՆԻՄ [< агноним < հուն. a ժխտական մասնիկ + gnosis գիտելիք, ճանաչողություն + onyma անուն], գ. (լեզվբ.): Լեզվակիրներին անծանոթ, (համարյա) անահասկանալի, խիստ հազվադեպ գործածական բառ:

ԱԳՆՈՍՏԻՑԻԶՄ [< агностицизм < հուն. a ժխտական մասնիկ + gnosis գիտելիք՝ չգիտակցող], գ. (փիլ.): Օբյեկտիվ աշխարհի իմացությունը և ճշմարտության օբյեկտիվ բնույթը ժխտող իդեալիստական ուսմունք:

ԱԳՈԳԻԿԱ [< агогика < հուն. agoge վարել, տանել], գ. (երժշտ.): Երաժշտական ֆրազը հնչեցնելիս արտահայտչականության նպատակներով ռիթմից (նաև տեմպից) աննշան շեղումները, որոնք նոտաներում չեն նշվում:

ԱԳՈՆԻԱ [< агония < հուն. agonia պայքար], գ. Հոգեվարք՝ մահվանը նախորդող վիճակ, շունչը փչելու վայրկյանը:

ԱԳՈՐԱ [< агора < հուն. agora], գ. (պատմ.): Ժողովրդական ժողով Հին Հունաստանում, ինչպես նաև սրահներով, առևտրական, հասարակական և պաշտամունքային շենքերով շրջապատված ժողովատեղի, հրապարակ, որտեղ գումարվում էր այդ ժողովը:

ԱԳՐԱՎԱՑԻԱ [< аггравация < լատ. aggravare ծանրացում], գ. (բժշկ.): Հիվանդության առանձին ախտանիշների (երբեմն տառապանքի) չափազանցում հիվանդի կողմից:

ԱԳՐԱՐ [< аграрий < լատ.], գ. 1. Խոշոր հողատեր, կալվածատեր: 2. (քղբ.): Միայն հոգն.՝ խոշոր հողատերերի շահերը պաշտպանող կուսակցություն (անդամները) որոշ երկրներում:

ԱԳՐԱՐԱՅԻՆ [< аграрный < լատ. agrarius հողային], ած. (հնց.): Հողային, հողագործական՝ հողին, հողագործությանը վերաբերող՝ հատուկ:

ԱԳՐԱՖ [< аграф < ֆր. agrafe ճարմանդ], գ. Շքեղ ճարմանդ՝ կոճակ՝ օղակ:

ԱԳՐԱՖԻԱ [< аграфия < հուն. a ժխտական մասնիկ + graphō գրում եմ], գ. (բժշկ.): Նյարդային հիվանդություն, որով հիվանդը զրկվում է գրելու ունակությունից:

ԱԳՐԵԳԱՏ [< агрегат < լատ. aggregatus միացված, հավաքված], 1. գ. (տեխ.): Զանազան մասերի միացում մեկ ամբողջության մեջ, միացք: 2. Մի քանի մեքենաներից բաղկացած բարդ մեքենա: 3. (երկրբ.): Բյուրեղային հատիկների զանգված:

ԱԳՐԵՄԱՆ [< агреман < ֆր. agrément համաձայնություն], գ. (դվնգ.): Համաձայնություն՝ կառավարության համաձայնությունն իր երկրում մեկին որպես դիվանագիտական ներկայացուցիչ ընդունելու:

ԱԳՐԵՍԻԱ [< агрессия < լատ. aggressio], գ. (խսկց.): Նախահարձակում՝ հարձակում, ներխուժում, զավթում՝ մեկ կամ մի քանի երկրների զինված հարձակում այլ երկրի (երկրների) վրա նվաճողական նպատակով:

ԱԳՐԵՍԻՎ [< агрессивный < ֆր. agressif < լատ.], ած. (խսկց.): Նվաճողական, զավթողական՝ նվաճման նպատակ հետապնդող, հարձակողական:

ԱԳՐԵՍՈՐ [< агрессор < լատ.], գ. Նախահարձակ՝ նվաճող, զավթող՝ հարձակվող կողմը, զավթում, հարձակում, նվաճում կատարողը:

ԱԳՐԻԿՈՒԼՏՈՒՐԱ [< аргикультура < լատ. agricultura հողագործություն], գ. (գղտնտ.): Դաշտամշակություն, հողամշակում՝ հողագործության մակարդակի բարձրացմանը ծառայող միջոցառումների ու միջոցների ամբողջությունը:

ԱԳՐՈ... [< агро... < հուն. agros դաշտ] Բարդ բառերի հապավված բաղադրիչ՝ ագրոնոմիական (գյուղատնտեսական) նշանակությամբ:

ԱԳՐՈԲԱԶԱ [< агробаза < ագրո... + բազա], գ. Գյուղատնտեսական բազա:

ԱԳՐՈԲԻՈԼՈԳԻԱ [< агробиология < ագրո... + բիոլոգիա], գ. (գիտ.): Գիտություն՝ հողագործության, բուսաբուծության և անասնաբուծության կենսաբանական ընդհանուր օրենքների մասին, ագրոկենսաբանություն:

ԱԳՐՈԿՈՄՊԼԵՔՍ [< агрокомплекс < ագրո... + կոմպլեքս], գ. 1. Գյուղատնտեսական միջոցառումների կոմպլեքս՝ ամբողջություն: 2. Իրար հետ սերտորեն կապված գյուղատնտեսական միջոցառումներ: 3. Գյուղատնտեսական ձեռնարկությունների բազմաբնույթ համալիր:

ԱԳՐՈԿԼԻՄԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Կլիմայագիտության բաժին, ուսումնասիրում է կլիման՝ որպես երկրագործության գործոն:

ԱԳՐՈՆՈՄ [< агроном < հուն.], գ. (հնց.): Գյուղատնտես՝ գյուղատնտեսության մասնագետ:

ԱԳՐՈՆՈՄԻԱ [< агрономия < հուն. agronomia հողօգտագործում], գ. (հնց. գիտ.): 1. Գյուղատնտեսություն՝ տնտեսության այն բնագավառը, որ ընդգրկում է հողագործությունը, անասնապահությունն ու անտառային տնտեսությունը: 2. Երկրագործության զանազան ճյուղերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունների ընդհանուր անունը:

ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱ [< агротехника < ագրո... + տեխնիկա], գ. (գիտ.): Գիտական երկրագործության մեթոդների ու կանոնների կիրառում, գյուղատնտեսական կուլտուրաների մշակման տեխնիկա:

ԱԳՐՈՔԻՄԻԱ [< агрохимия < ագրո... + քիմիա], գ. (գիտ.): Գիտաճյուղ, որ զբաղվում է բարձր ու հաստատուն բերք ստանալու համար գործադրվող միջոցառումների համակարգում կիրառելի քիմիական միջոցների, բույսերի սննդառության և պարարտանյութերի օգտագործման հարցերով:

ԱԳՐՈՖԻԶԻԿԱ [< агрофизика < ագրո... + ֆիզիկա], գ. (գիտ.): Գիտաճյուղ բույսերի արտաքին կենսապայմանների հետազոտության ֆիզիկական մեթոդների և կենսագործունեության ֆիզիկական գործընթացների մասին:

ԱԴԱԹ [< адат < արաբ. ādа(t) սովորույթ], գ. (խսկց.): Սովորույթ՝ չգրված օրենք մարդկանց կամ հասարակության մեջ, ավանդույթ:

ԱԴԱՄԱՆԴ [< адамант < հուն. adamas (adamantos)], գ. (հնք.): Ալմաստ՝ թանկագին քար:

ԱԴԱՄԻՏ [< адамит < ֆր. Adamite (Adam) հատուկ անունից + ite ածանց], գ. (պատմ.): Քրիստոնեական (բողոքական) աղանդ (կամ այդ աղանդի անդամ), որը մերժում է մասնավոր սեփականությունը և եկեղեցական ցանկացած կազմակերպություն կամ ծես:

ԱԴԱՄՍԻՏ [< адамсит < հատուկ անունից], գ. (քիմ.): Մարտական քիմիական թունավոր նյութ:

ԱԴԱՊՏԱՑԻԱ [< адаптация < լատ. adaptare հարմարեցնել], գ. Հարմարեցում, ընտելացում: 1. (կենսբ.): Օրգանիզմի հարմարեցումը շրջապատին: 2. (գրկն.): Տեքստի հեշտացումը օտար լեզու սկսնակ սովորողների համար:

ԱԴԱՊՏԵՐ [< адаптер < լատ. adaptare հարմարեցնել], գ. (հնց. տեխ.): Ձայնահան՝ ձայնապնակի վրա գրանցվածը ուժեղացնող սարքի միջոցով վերարտադրելու էլեկտրամեխանիկական սարք:

ԱԴԱՋԻՈ, ԱԴԱՋՈ [< адажио < իտլ. adagio դանդաղ], գ. (երժշտ.): 1. Դանդաղ, հանդարտ տեմպ (երաժշտական երկի բնույթի և կատարման մասին): 2. Դանդաղ տեմպով կատարվող երաժշտական երկ կամ դրա մի մասը:

ԱԴԵՆԻՏ [< аденит < ֆր. adēnite < հուն. adēn գեղձ], գ. (բժշկ.): Տե՛ս Լիմֆադենիտ:

ԱԴԵՆՈՄԱ [< аденома < հուն. adēn գեղձ + oma ուռուցք], գ. (բժշկ.): Բարորակ ուռուցք՝ օրգանիզմի տարբեր մասերում:

ԱԴԵԿՎԱՏ [< адекватный < լատ. adaequatus հավասարեցված], ած. Համապատասխան՝ համարժեք, նույնական, լիովին համապատասխանող:

ԱԴԵԿՏԻՎԱՑԻԱ [< адъективация < լատ. adjectivum ածական], գ. (լեզվբ.): Ածականացում՝ այլ խոսքի մասերի ածականացում:

ԱԴԻԱԲԱՏ [< адиабата < հուն. adiabatos փակ], ած. Ադիաբատ գործընթացը պատկերող կոր:

ԱԴԻԱԲԱՏ ԳՈՐԾԸՆԹԱՑ - (կենսբ.): Մարմնի կամ համակարգի վիճակի փոփոխություն՝ առանց արտաքին միջավայրի հետ ջերմափոխանակություն:

ԱԴԻԴԱՍ [< АДИДАС < անգլ. ADIDAS], գ.(սպորտ.): Սպորտային մարզահագուստ և մարզագույք արտադրող գերմանական ընկերություն:

ԱԴԻՏԻՎՈՒԹՅՈՒՆ [< аддитивность < լատ. additio ավելացում, գումարում], գ. (մաթ.): Մեծությունների հատկություն՝ ամբողջ օբյեկտին համապատասխանող մեծության արժեքը հավասար է նրա առանձին մասերին համապատասխանող մեծությունների արժեքների գումարին անկախ օբյեկտի տրոհման եղանակից:

ԱԴՀԵԶԻԱ [< адгезия < լատ. adhezio կպչել],գ. (գիտ.): Երկու տարասեռ նյութերի (պինդ կամ հեղուկ) իրար կպչելու երևույթը:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ [< администратор < լատ.], գ. Կառավարիչ՝ 1. Որևէ գործի, հիմնարկի կառավարիչ, վարիչ, վարչատար: 2. Վարչական մեթոդներով աշխատող, այդպիսի հատկություններով օժտված անձ:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ [< администрация < լատ. administratio ղեկավարություն], գ. (խսկց.): Ղեկավարության վարչություն՝ որևէ հիմնարկի վարչական կազմը, ղեկավար մարմինները, գերատեսչություն, վարչակազմ:

ԱԴՄԻՐԱԼ [< адмирал < արաբ. amīr al-bāhr տիրակալ ծովում], գ. (հնց.): Ծովակալ՝ ռազմածովային նավատորմում բարձրագույն հրամանատարական կազմի սպայական կոչում:

ԱԴՅՈՒԼՏԵՐ [< адюльетер < ֆր. adultère < լատ. adulter անառակ, անբարոյական], գ.: Ամուսնական անհավատարմություն՝ դավաճանություն:

ԱԴՅՈՒՆԿՏ [< адъюнкт < գերմ. Adjunkt < լատ. adjunctus միացած, կցված], գ. (ռազմ.): Ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության ասպիրանտ:

ԱԴՅՈՒՏԱՆՏ [< адъютант < գերմ. Adjutant < լատ. adjutans (adjutantis) օգնող, օգնական], գ. (հնց.): Համհարզ՝ ռազմական ցածր աստիճանի սպա, որն օգնում է հրամանատարին՝ ծառայողական հանձնարարություններ կատարելով, կամ ծառայում է շտաբում:

ԱԴՈՆԻՍ [< Адонис < հուն. Adonis], գ. (դից.): 1. Փյունիկյան աստված, որն անձնավորում էր մահացող և վերակենդանացող բնությունը: 2. *փխբ.* Գեղեցիկ երիտասարդ:

ԱԴՈՊՏԱՑԻԱ [< адоптация < ֆր. adoptation < լատ. adoptatio որդեգրում], գ. (իրավբ.): Որդեգրում, որդեգրելը:

ԱԴՈՐԱՑԻԱ [< адорация < լատ. adorātio ստրկամտորեն պաշտելը], գ. (գրք. հնց.): Երկրպագություն, պաշտամունք, աստվածացում:

ԱԴՍՈՐԲՈՒՄ [< адсорбия < լատ. ad վրա + sorbeo կլանում եմ], գ. (գիտ.): Սորբման մասնավոր դեպք. գազի և հեղուկում լուծված նյութի կլանումը պինդ մարմնի կամ հեղուկի՝ ադսորբենտի (կլանիչի) մակերևույթի կողմից:

ԱԴՍՏՐԱՏ [< адстрат < գերմ. Adstrat < լատ. ad վրա + stratum տախտակելը, հատակ], գ. (լեզվբ.): Առշերտ՝ տվյալ լեզվի մեջ մի ուրիշ լեզվի տարրերը, որոնք

առաջանում են սահմանամերձ շրջաններում, էթնիկական խառնման հետ կապված և միայն դրանից հետո տարածվում ու ընդլայնում են իրենց գործածության ոլորտը: Ընդ որում՝ այդ ճանապարհով առաջացած երկլեզվության շերտերը կարող են չիշխել մեկը մյուսի վրա և հավասար գործածություն ունենալ:

ԱԴՎԵԿՑԻԱ [< адвекция < լատ. advectio տեղ հասցնելը], գ. (օդերև.): Օդի և նրա հատկությունների հորիզոնական փոխանցում, ի տարբերություն կոնվեկցիայի, որն է օդի ուղղաձիգ փոխանցումը:

ԱԴՎԵՆՏԻՍՏՆԵՐ [< адвентисты < լատ. adventus գալուստ], գ. (կրոն.): Քրիստոնեական աղանդի ներկայացուցիչներ, որոնց դավանքի հիմքում ընկած է «Քրիստոսի երկրորդ գալստյան» և երկրի վրա «Աստծո հազարամյա թագավորության» ստեղծման հավատը:

ԱԴՎԵՐԲԻԱԼԻԶԱՑԻԱ [< адвербиализация < լատ. adverbium մակբայ], գ. (լեզվբ.): Մակբայացում՝ բառի կամ բառակապակցության մակբայացում:

ԱԴՎՈԿԱՏ [< адвокат < գերմ. Advokat < լատ. advocatus < advocare օգնության կանչել], գ. (իրավ. խսկց.): Փաստաբան՝ 1. Դատարանում դատվողի իրավունքները պաշտպանող անձ: 2. Գրավոր կամ բանավոր ձևով ի պաշտպանություն մեկի հանդես եկող անձ:

ԱԴՎՈԿԱՏՈՒՐԱ [< адвокатура < լատ.], գ. 1. Փաստաբանների կոլեգիա: 2. Դատապաշտպանություն:

ԱԴՐԵՆԱԼԻՆ [< адреналин < լատ. ad + renalis երիկամային], գ. (կենսբ.): Մակերիկամի ուղեղային շերտի հորմոն. արագացնում և ուժեղացնում է սրտի աշխատանքը, աշխուժացնում հիմնական նյութափոխանակությունը:

ԱԴՐԵՍ [< адрес < ֆր. adresse], գ. (խսկց.): 1. Հասցե՝ որևէ կազմակերպության՝ հիմնարկի գտնվելու վայրը կամ որևէ անձի բնակության վայրը մատնանշող: 2. Գրավոր ուղերձ՝ շնորհավորանք որևէ անձի կամ կազմակերպության:

ԱԴՐԵՍԱՆՏ [< адресант < գերմ. Adressant], գ. (խսկց.): Հասցեագրող:

ԱԴՐԵՍԱՏ [< адресат < գերմ. Adressat], գ. (խսկց.): Հասցեատեր:

ԱԵՐԱՐԻՈՒՄ [< аэрарий < հուն. aēr օդ], գ. (տեխ. բժշկ.): Օդահարթակ, որի վրա օդային լոգանքներ են ընդունում. պաշտպանված է արևի ուղիղ ճառագայթներից և քամուց:

ԱԵՐԱՑԻԱ [< аэрация < ֆր. aération < հուն. aēr օդ], գ. (գիտ.): Օդահագեցում՝ ջուրն ու հողը օդով հագեցնելը:

ԱԵՐՈ... [< аэро... < հուն. aēr օդ] Բարդ բառերի բաղադրիչ՝ 1. Օդաչուների: 2. Օդագնացության: 3. Օդի, օդային նշանակությամբ:

ԱԵՐՈԲԻԿԱ [< аэробика < անգլ. aerobics, ֆր. aérobique < հուն. aēr օդ], գ. (սպորտ.): Առողջարարական ռիթմիկ մարմնամարզություն, որը կատարվում է երաժշտության ուղեկցությամբ համեմատաբար բարձր արագությամբ:

ԱԵՐՈԲԻՈՆՏՆԵՐ [< аэробионты < աերո... + հուն. bion (biontos) ապրող], գ. (կենսբ.): Օրգանիզմներ, որոնք բնակվում են ցամաքում:

ԱԵՐՈԲՆԵՐ [< аэробы < աերո...+ հուն. bios կյանք], գ. (կենսբ.): Օդակյացներ՝ օրգանիզմներ, որոնց կենսագործունեությունը պայմանավորված է օդի ազատ մոլեկուլային թթվածնով:

ԱԵՐՈԲՈՒՍ [< аэробус < անգլ. aerobus < հուն. aēr օդ + անգլ. bus ավտոբուս], գ. (օդգնց.): Ուղևորատար մեծ ինքնաթիռ:

ԱԵՐՈԳԵՆ [< аэрогенный < աերո... + ... գեն], ած. Օդածին, օդով փոխանցվող (օր.՝ աերոգեն վարակ):

ԱԵՐՈԳՐԱՖ [< аэрограф < աերո... + հուն. grapho գրում եմ], գ. (տեխ.): Սեղմված օդի ճնշումով աշխատող ներկ ցողող սարք:

ԱԵՐՈԳՐԱՖԻԱ [< аэрография < աերո. + ... գրաֆիա], գ. (տեխ.): Ներկ ցողող սարքով թղթի, կտորի նկի ներկելը, պատկեր ստանալը:

ԱԵՐՈԴԻՆԱՄԻԿԱ [< аэродинамика < աերո… + հուն. dynamikos ուժային], գ. (գիտ.): Մեխանիկայի բաժին, որն ուսումնասիրում է գազերի շարժումը և հավասարակշռությունը, նաև՝ գազերի և պինդ նյութերի փոխհարաբերությունները:

ԱԵՐՈԴՐՈՄ [< аэродром < աերո… + հուն. dromos վարելու տեղ, վազք], գ. (հնց.): Օդանավակայան՝ օդանավերի կայանման, թռիչքի և վայրէջքի տեղ, նաև շինությունները և դրանք սպասարկող անձնակազմը:

ԱԵՐՈԶՈԼ [< аэрозоль < աերո… գերմ. Sole], գ. (գիտ.): Առկախված պինդ կամ հեղուկ մասնիկներով գազային միջավայր ներկայացնող կոլոիդային համակարգ (օր.՝ ծուխ, մշուշ):

ԱԵՐՈԹԵՐԱՊԻԱ [< аэротерапия < աերո... + հուն. therapeia խնամք, բուժում], գ. (գիտ.): Օդաբուժություն՝ հիվանդության բուժում իոնացված օդի միջոցով:

ԱԵՐՈԼՈԳԻԱ [< аэрология < գերմ. Aerologie < հուն. aēr օդ + logōs գիտություն], գ. (գիտ.): Օդաբանություն՝ գիտություն մթնոլորտի ստորին և միջին շերտերի ուսումնասիրման մեթոդների մասին:

ԱԵՐՈՄԵԽԱՆԻԿԱ [< аэромеханика < աերո… + մեխանիկա], գ. (գիտ.): Գիտություն, որն ուսումնասիրում է գազանման մարմինների հավասարակշռությունն ու շարժումը զանազան միջավայրերում և այդ միջավայրերի ազդեցությունն իրենց մեջ գտնվող պինդ մարմինների վրա:

ԱԵՐՈՆԱՎՏ [< аэронавт < հուն. aēr օդ + nauter ծովագնաց], գ. (օդգնց.): Օդագնաց, օդանավորդ:

ԱԵՐՈՆԱՎՏԻԿԱ [< аэронавтика < աերո… + հուն. nautes ծովագնաց], գ. (հնց.): Օդագնացություն՝ գիտություն թռչող ապարատների՝ օդում շարժման մասին:

ԱԵՐՈՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ, գ. Ինքնաթիռից կատարվող նկարահանում (ռազմական կառույցի, տեղանքի):

ԱԵՐՈՆՈՄԻԱ [< аэрономия < հուն. aēr օդ + nomos օրենք], գ. (գիտ.): Գիտություն մթնոլորտի վերին շերտերի (30 կմ և բարձր) ուսումնասիրման մեթոդների մասին:

ԱԵՐՈՊԼԱՆ [< аэроплан < ֆր. aeroplane < աերո… + լատ. planum հարթություն], գ. Ինքնաթիռ, օդանավ, սավառնակ՝ օդում թռչող ապարատ:

ԱԵՐՈՊՈՆԻԿԱ [< аэропоника < աերո... + հուն. ponēo կատարում եմ], գ. (գիտ.): Առանց բնահողի բույսերի աճեցումը խոնավ օդի միջավայրում սնուցիչ հեղուկների միջոցով:

ԱԵՐՈՊՈՐՏ [< аэропорт < աերո… + լատ. portus], գ. (խսկց.): Օդանավակայան՝ օդանավերի կայանման տեղ՝ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

ԱԵՐՈՍՏԱՏ [< аэростат < աերո… + հուն. statos կանգնած], գ. Օդապարիկ՝ օդից թեթև ապարատ, որը օդ է բարձրանում՝ շնորհիվ գազերի բարձրացնող ուժի. գազերը գտնվում են հատուկ թաղանթի մեջ:

ԱԵՐՈՏՈՐԻԱ [< аэротория < աերո... + լատ. territorium տարածք], գ. (օդգնց.): Օդատարածք՝ օդանավակայանի և նրան հարող օդային տարածք, որով բարձրանում և վայրէջք են կատարում ինքնաթիռները:

ԱԵՐՈՍՏԱՏԻԿԱ [< аэростатика < աերո... + հուն. statos], գ. (գիտ.): Աերոմեխանիկայի մի բաժինը, որն ուսումնասիրում է գազերի հավասարակշռությունը և անշարժ գազերի ազդեցությունը նրանց վրա:

ԱԵՐՈՖՈԲԻԱ [< аэрофобия < աերո... + ... ֆոբիա], գ. (մանգ.): Օդավախություն (օդ բարձրանալուց, բարձրությունից նն վախենալը):

ԱԶԱՐՏ [< азарт < ֆր. hasard դեպք, ռիսկ], գ. (հոգեբ.): Տարվածություն՝ 1. Հոգեկան վիճակ, երբ մարդը իր սպասելիքից շատ գործողություններ է կատարում: 2. Անզուսպ կիրք՝ մոլուցք, մոլեգնություն (խաղի, մրցության նն մեջ):

ԱԶԲԵՍՏ [< азбест, асбест < հուն. asbestos չհանգող], գ. (հնք.): Մանրաթելային կառուցվածքով հրակայուն և թթվադիմացկուն հանքատեսակ:

ԱԶԻՄՈՒՏ [< азимут < արաբ. as-simūt հոգն. թիվ. as-samt ուղղություններ], գ. (երկրբ.): Երկնային լուսատուների դիրքը որոշող անկյունը, որը կազմում է դիտման կետի միջօրեականի հարթությունը լուսատուի վրայով անցնող հարթության հետ:

ԱԶՈՏ [< азот < հուն. a ժխտ. մասնիկ + zōos կենդանի], գ. (քիմ.): Քիմիական տարր. անգույն, անհոտ, անհամ գազ, բորակածին:

ԱԹԵԻԶՄ [< атеизм < ֆր. athe´isme < հուն. a ժխտական մասնիկ + theos աստված], գ. (գիտ.): Աստվածամերժություն՝ Աստծու գիտականորեն հիմնավորված բացասումը՝ ժխտումը:

ԱԹԵԻՍՏ [< атеист < ֆր. < հուն.], գ. Աստվածամերժ՝ աթեիզմի հետևորդ:

ԱԹԵՐՈՄԱ [< атерома < հուն. athēroma], գ. (բժշկ.): Բարորակ ուռուցքի տարատեսակ:

ԱԹԵՐՈՍԿԼԵՐՈԶ [< атеросклероз < հուն. athēr խյուս + sklerosis < skleros, կարծր, պինդ], գ. (բժշկ.): Երակների՝ անոթների խրոնիկ հիվանդություն, որի ժամանակ ներքին պատերը ծածկվում են ճարպային զանգվածով, որի արդյունքում կտրուկ ձևափոխվում են երակների պատերը:

ԱԹԼԱՍ [< атлас < արաբ. atlas], գ. Կերպաս՝ 1. Բամբակե կամ մետաքսե նուրբ կտավ: 2. Մետաքսե նուրբ գործվածք: 3. (հնց.): Մետաքսե:

ԱԺԻՈ [< ажио < իտլ. aggio], գ. (տնտսգ.): Փողի մի տեսակը մյուսով (օր.՝ մետաղադրամը թղթադրամով) փոխանակելու համար վճարվող արժեքի տարբերությունը:

ԱԺԻՈՏԱԺ [< ажиотаж < ֆր. agiotage], գ. Իրարանցում՝ 1. Բորսայական արժեթղթերի սպեկուլյացիա: 2. Զանազան սպեկուլյացիաների հետ կապված հուզում, իրարանցում: 3. Իրարանցում, խառնաշփոթ իրավիճակ:

ԱԺԻՏԱՏՈ [< ажитато < իտլ. agitato], մկ. (երժշտ.): Հուզված կերպով, գրգռվածորեն:

ԱԺԻՏԱՑԻԱ [< ажитация < ֆր. agitation հուզմունք], գ. (հնց.) Գրգռվածություն, հուզվածություն:

ԱԺՈՒՐ I [< ажур < ֆր. à jour առօր], գ. (հաշվ.): Առօր՝ հաշվապահական գրանցումների այնպիսի վիճակ, երբ գործարքները գրանցվում են նույն օրը:

ԱԺՈՒՐ II [< ажур < ֆր. à jour թափանցանց], գ. Ցանցկեն՝ 1. Ցանցի նման ծակոտիներ ունեցող կտոր՝ գործվածք: 2. Ցանցահյուս: 3. ած. Ցանցավոր:

ԱԼԱԲԱՍՏՐ [< алебастр < հուն. alabastros], գ. Լանակում՝ 1. (հնք.): Սպիտակ թափանցիկ գաջաքար: 2. Ալաբաստրե անոթ:

ԱԼԱԼԻԱ [< алалия < հուն. a ժխտական մասնիկ + հուն. lalia խոսք], գ. (գիտ.): Երեխաների խոսքի մասնակի կամ ամբողջական բացակայություն ուղեղի խոսքային կենտրոնների թույլ զարգացածության կամ վնասման հետևանքով:

ԱԼԱՐՄԻՍՏ [< алармист < ֆր. alarmiste խուճապարար < alarme տագնապ], գ. (հնց.): Խուճապարար, խուճապարկու:

ԱԼԲԱ [< альба < պրովանս. alba լուսաբաց], գ. (գրկն.): Տրուբադուրների պոեզիայում՝ առավոտվա՝ լուսաբացի երգ:

ԱԼԲԱՏՐՈՍ [< альбатрос < ֆր. albatros], գ. (կենդբ.): Ջրխոթան՝ ծովային թռչունների տեսակ՝ նեղ թևերով և ուժեղ զարգացած կտուցով:

ԱԼԲԵԴՈ [< альбедо < լատ. albus սպիտակ < ուշ լատ. albedo սպիտակություն], գ. (գիտ.): Մարմնի մակերևույթին ընկնող ճառագայթային էներգիայի անդրադարձման ունակությունը բնորոշող մեծություն, որը որոշվում է մարմնի մակերևույթից անդրադարձած և նրա վրա ընկնող ճառագայթային էներգիաների քանակների հարաբերությամբ:

ԱԼԲԻԳՈՅՑԻՆԵՐ [< албигойцы < ֆր. albigeois], գ. (պատմ.): Կաթոլիկ եկեղեցու դեմ պայքարող աղանդավորներ հարավային Ֆրանսիայում XII-XIII դարերում:

ԱԼԲԻԴՈՒՄ [< альбидум < լատ. albidus սպիտակավոր, սպիտակ], գ. (բսբ.): Ցորենի տարատեսակ (սպիտակ հատիկներով):

ԱԼԲԻՆԻԶՄ [< альбинизм < ֆր. albinisme < լատ. albus սպիտակ], գ. (կենսբ.): Լանամաշկություն, լանամորթություն (մարդու և կենդանիների), գունազրկություն, կանաչատություն (բույսերի)՝ մարդկանց և կենդանիների մաշկի, մազերի, աչքի ծիածանաթաղանթի բնական գունավորման (պիգմենտացիայի) բացակայություն, իսկ բույսերի մեջ՝ ամբողջ բույսի կամ դրա առանձին մասերի կանաչ գունավորման խիստ սակավություն կամ բացակայություն:

ԱԼԲԻՆՈՍ [< альбинос < ֆր. < լատ.], ած. (կենսբ.): Լանամաշկ (մարդ կամ կենդանի), կանչատ (բույս), գունազար:

ԱԼԲԻՈՆ [< альбион < կելտ.], գ. (պատմ.): Անգլիայի հնագույն անվանումը:

ԱԼԲԻՏ [< альбит < լատ. albus սպիտակ], գ. (հնք.): Միներալ պլագիոկլազների խմբից Na ($AlSi_3O_8$):

ԱԼԲԻՏՈՖԻՐ, գ. (հնք.): Մագմատիկ ապար. կազմված է դաշտային սպաթներից (ալբիտ) և մասամբ՝ քվարցից:

ԱԼԲՈՄ [< альбом < ֆր. album], գ. 1. Մաքուր թերթերով կազմված գիրք կամ տետրակ, որի մեջ նկարում են, գծագրում, գրում: 2. Կազմված գիրք, որի մեջ լուսանկարներ են պահում: 3. (երժշտ.): Երգերի հավաքածու:

ԱԼԲՈՐԱԴԱ [< альборада < իսպ. alborada առավոտյան երգ], գ. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործության տարատեսակ Իսպանիայում, որը կատարվում է առավոտյան (հովվի նևի կողմից):

ԱԼԲՈՒՄԻՆՆԵՐ [< альбумины < լատ. albumen (albuminis) սպիտակուց], գ. (կենսբ.): Պարզ սպիտակուցներ, գտնվում են կենդանական և բուսական հյուսվածքներում: Կիրառվում են սննդի, տեքստիլ արդյունաբերության և բժշկության մեջ:

ԱԼԳՈԼ [< алгол < անգլ. algorithmic ալգորիթմական + language լեզու], գ. (լեզվբ. տեխ.): Մի շարք ծրագրավորման լեզուների կրճատ անվանումը: Եղել է մի քանի տեսակ՝ Ալգոլ-58, Ալգոլ-60, Ալգոլ-68:

ԱԼԳՈԼՈԳԻԱ [< альгология < լատ. alga ծովախոտ, ջրիմուռ + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Բուսաբանության բաժին. գիտություն ջրիմուռների մասին:

ԱԼԳՈՐԻԹՄ [< алгоритм < algorithmi արաբ. XIX դարի միջինասիացի գիտնական Ալ-Խորեզմիի անվան լատինացված ձևն է], գ. (մաթ.): Տվյալ խնդրի լուծման մաթեմատիկական գործողությունների ամբողջությունը:

ԱԼԳՎԱՍԻԼ [< альгвасил < իսպ. alguacil < արաբ. al-visir], գ. (հզվդ.): Դատավորի, ոստիկանի աստիճան Իսպանիայում:

ԱԼԴԵՀԻԴՆԵՐ [< альдегиды < լատ. (արհեստական) al(cohol) dehyd (rogenatum) ալկոհոլ, ջրածնազրկել], գ. (կենսբ.): Օրգանական ռադիկալի և ջրածնի ատոմի հետ միացած կարբոնիլ խումբ (C=0) պարունակող միացություններ:

ԱԼԵԱՏՈՐԻԿԱ [< алеаторика < իտլ. aleatorio հանդգնորեն, պատահականությունից կախված], գ. (երժշտ.): Երաժշտություն ստեղծելու և կատարելու ձևապաշտական եղանակ:

ԱԼԵԲԱՐԴ [< алебарда < ֆր. hallebarde < գերմ. helmbarte կացին], գ. (պատմ.): Սակրատեգ, տապարատեգ:

ԱԼԵԳՈՐԻԱ [< аллегория < հուն. allegoria], գ. Այլաբանություն՝ 1. (արվ.): Վերացական հասկացությունների արտահայտումը կոնկրետ պատկերներով: 2. Խոսք՝ պատկեր կամ նշան, որոնց մեջ թաքնված է ներքին այլ իմաստը:

ԱԼԵԳՐԵՏՈ [< аллегретто < իտլ. allegretto], գ. (երժշտ.): 1. Չափավոր արագ տեմպ: 2. Այդպիսի տեմպով երաժշտական ստեղծագործություն:

ԱԼԵԳՐԻ [< аллегри < իտլ. allegri (եղեք) ուրախ - գրություն վիճակախաղի տոմսի վրա], գ. (հնց.): Ակնթարթային վիճակախաղ, երբ շահումն անմիջապես տրվում էր հաղթողին:

ԱԼԵԳՐՈ [< аллегро < իտլ. allegro ուրախ], ած. (երժշտ.): 1. Երաժշտական արագ տեմպ: 2. Երաժշտական ստեղծագործություն կամ դրա մի մասը՝ արագ տեմպով կատարվող: 3. Բալետում՝ դասական պարի (պա դե դե, պա դե տրուա, գրան պա են) արագ մասը:

ԱԼԵԼԻԶՄ [< аллелизм < հուն. allelon մեկը մյուսին, փոխադարձաբար], գ. (կենսբ.): Ալելոմորֆիզմ՝ օրգանիզմի երկընտրելի (փոխադարձաբար բացառվող) հատկանիշների գոյություն, որոշ դեպքերում բազմաբանակության երևույթ, որը պայմանավորված է դրանց զարգացման ուղղությունը որոշող ալելներով:

ԱԼԵԼՆԵՐ [< аллель < հուն.], գ. (կենսբ.): Գենի երկընտրելի տարբերակներ:

ԱԼԵԼՈՒԻԱ [< аллилуия < եբրայերեն halleluja տիրոջը գովե՛ք], գ. (կրոն.): Գովասանքի կրկներգ քրիստոնեական ժամերգության մեջ:

ԱԼԵՄԱՆԴԱ [< аллеманда < ֆր. allemand, բառացի՝ գերմանական], գ. (ազգգր.): Գերմանական հին զուգապար, որ տարածված էր Ֆրանսիայում XVI դարից:

ԱԼԵՅԱ [< аллея < ֆր. allée], գ. (խսկց.): Ծառուղի՝ 1. Ճանապարհ, որի երկու կողմերում տնկված են ծառեր: 2. Փոքրիկ ճանապարհ այգում կամ պարտեզում:

ԱԼԵՅԿԻԱ [< алейкия < հուն. a ժխտական մասնիկ+ leukos սպիտակ], գ. (բժշկ.): Արյունաստեղծ օրգանների հիվանդություն, երբ արյան համակարգում խիստ նվազում կամ վերանում են սպիտակ գնդիկներն ու թիթեղիկները:

ԱԼԵՅՐՈՆԻ ՀԱՏԻԿՆԵՐ [< алейроновые (< հուն. aleuron ալյուր) зерна] - (կենսբ.): Պրոտեինային հատիկներ. որոշ բույսերի սերմերում մեծ խտության

սպիտակուցային նյութերի կարծրացած նստվածքներ՝ հատիկների տեսքով:

ԱԼԵՎՐԻՏՆԵՐ [< алевриты < հուն. aleuron ալյուր], գ. (հնք.): Բեկորային մանրահատիկ (0,01-0,1մմ) փխրուն ապարներ, որոնք միջանկյալ դիրք են գրավում ավազային և կավային ապարների միջև:

ԱԼԵՎՐՈԼԻՏՆԵՐ [< алевролит < հուն. aleuron + lithos քար], գ. (հնք.): Պնդացած և ցեմենտացած ալևրիտներ:

ԱԼԵՐԳԵՆ [< аллерген < ալերգիա + հուն. genos ծնունդ, առաջացում], գ. (կենսբ.): Ալերգիա առաջացնող տարաբնույթ նյութեր:

ԱԼԵՐԳԻԱ [< аллергия < հուն. allos ուրիշ + ergon գործողություն], գ. (կենսբ.): Կենդանի օրգանիզմի այլափոխված զգայությունը և ռեակտիվությունը զանազան նյութերի, այսպես կոչված՝ ալերգենների նկատմամբ:

ԱԼԵՐԳՈԼՈԳԻԱ [< аллергология < հուն. allos ուրիշ, այլ + ergon գործողություն + logōs գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որն ուսումնասիրում է ալերգիայի առաջացման պատճառները և բուժման մեթոդներն ու եղանակները:

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՏ [< александрит < հուն. Ալեքսանդր Մակեդոնացու անունից], գ. (հնք.): Ոսկեբյուրեղ՝ թանկարժեք քար:

ԱԼԵՔՍԻԱ [< алексия < հուն. a ժխտական մասնիկ + lexis բառ], գ. (բժշկ.): Կարդալու կարողության կորուստ՝ գլխուղեղի վնասման պատճառով:

ԱԼԹԻՆԳ [< альтинг < իսլանդ. althing], գ. (քղք.): Ժամանակակից Իսլանդիայի պառլամենտը, ընտրվում է 4 տարին մեկ:

ԱԼԻԲԻ [< алиби < լատ. alibi ուրիշ տեղում], գ. (իրավբ.): Այլուրեքություն՝ հանցագործությունը կատարվելու պահին մեղադրյալի՝ հանցավայրում չգտնվելը՝ որպես հանցավոր կամ հանցակից չլինելու ապացույց:

ԱԼԻԳԱՏՈՐ [< аллигатор < անգլ. alligator < իսպ. el lagarto մողես], գ. (կենդբ.): Կոկորդիլոսի տեսակ. մի տեսակը հյուսիսամերիկյանն է, մյուսը՝ չինական (սա տարածված է Յանցզիցզյան գետի ստորին ավազանում):

ԱԼԻԶԱՐԻՆ [<ализарин < ֆր. alizarine < արաբ.], գ. Տորոնաներկ՝ սինթետիկ ներկի տեսակ:

ԱԼԻՄԵՆՏ [< алимент < լատ. alimentum սնունդ, ապրուստի միջոց], գ. (իրավբ.): Ապրուստի միջոց, որ ըստ օրենքի տրվում է ընտանիքի առանձին ապրող անաշխատունակ անդամներին խնամակալների կողմից (երեխաներին, կնոջը, ծնողներին):

ԱԼԻՏԵՐԱՑԻԱ [< аллитерация < լատ. al < ad + lit(t)era տառ], գ. (գրկն.): Բաղաձայնույթ՝ նույն կամ նմանահունչ բաղաձայնների կուտակում բանաստեղծական խոսքի մեջ՝ արտահայտչականությունը ուժեղացնելու համար:

ԱԼԼԱՀ [< аллах < արաբ. ilah աստվածություն], գ. (կրոն.): Մահմեդականների աստծու անվանումը:

ԱԼԼՈԴ [< аллод < գերմ. Allod < հին վերին գերմ. all լրիվ, ամբողջ + od տիրույթ], գ. (պատմ.): Ֆեոդալական պարտույթից ազատ հողային սեփականություն՝ վաղ միջնադարյան Եվրոպայում:

ԱԼԿԱԼԴ [< алькальд < իսպ. alcalde < արաբ. al-quadi դատավոր], գ. (քղք.):

Իսպանիայում և Լատինական Ամերիկայի որոշ երկրներում՝ քաղաքային խորհրդի նախագահ:

ԱԼԿԱԼՈԻԴՆԵՐ [< алкалоиды < արաբ. algili բուսական մոխիր, հիմք + հուն. eidos տեսակ], գ. (քիմ.): Ազոտ պարունակող, հիմնականում բուսական ծագում և հիմնային հատկություններ ունեցող օրգանական միացություններ, որոնք լայնորեն կիրառվում են բժշկության մեջ՝ որպես դեղանյութեր, և գյուղատնտեսության մեջ՝ որպես միջատասպաններ:

ԱԼԿԱՍԱՐ [< алькасар < իսպ. alcazar ամրոց], գ. (պատմ.): Ամրացված պալատ կամ ամրոց Իսպանիայում (սովորաբար կառուցված մավրիտանական ոճով):

ԱԼԿՈՀՈԼ [< алкоголь < արաբ. alkuhl մանր փոշի], գ. Ոգելից խմիչք՝ 1. (քիմ.): Օրգանական միացություն, որը պարունակում է իր մեջ թթվածնի և ջրածնի ատոմներ: 2. (խսկց.): Գինու սպիրտ:

ԱԼՄԱ ՄԱՏԵՐ [< альма-матер < լատ. alma-mater, բառացի՝ կերակրող մայր] - Համալսարանին տրվող հնագույն անվանում, օգտագործվում է կա՛մ փաղաքշական, կա՛մ հեգնական իմաստով:

ԱԼՄԱՆԱԽ [< альманах < հմմտ. լատ. almanachus < արաբ. al-manach օրացույց], գ. 1. Տարբեր գրողների գեղարվեստական ստեղծագործությունների հավաքածու: 2. Տարբեր տեղեկություններով (աստղագուշակություններով) օրացույց՝ հատկապես միջին դարերում:

ԱԼՄԱՆԴԻՆ [< альмандин < Փոքր Ասիայի Ալաբանդո քաղաքի աղավաղված անունից], գ. (հնք.): Միներալ նռնաքարերի խմբից. օգտագործվում է որպես թանկարժեք քար և հղկանյութ:

ԱԼՄԱՍՏ [< алмаз < արաբ. almas ամրագույն], գ. (հնք.): 1. Միներալ, զուտ ածխածնի (C) բյուրեղային ձևափոխությունը: 2. Հազվադեպ՝ մի կողմը տաշած բարակ ադամանդներ: 3. Փոքրիկ ձողիկի ծայրին ագուցված ալմաստ, որով կտրում են ապակին:

ԱԼՄԵՆԴԱ [< альменда < գերմ. Allmende], գ. (պատմ.): Վաղ միջնադարում գերմանական ժողովուրդների մոտ (հետագայում Արևմտյան Եվրոպայի այլ երկրներում)՝ համայնքի անդամների ընդհանուր գործածության հողային արոտավայրեր:

ԱԼՅԱՆՍ [< альянс < ֆր. aliance], գ. Միություն, դաշինք՝ պետությունների միություն, ավելի լայն իմաստով՝ միություն ընդհանրապես:

ԱԼՅՈՒԶԻԱ [< аллюзия < ֆր. allusion < լատ. alludere ակնարկել, կատակել], գ. (գրկն.): Ոճական հնար, որն օգտագործվում է առօրյա խոսքում կամ գեղարվեստական ստեղծագործության մեջ իբրև կենցաղային կամ պատմական հայտնի փաստի ակնարկ: Օր.՝ «մեծ կոմբինատոր» (Ի. Իլֆ և Ե. Պետրովի «Տասներկու աթոռից») բառակապակցության գործածությունը՝ իբրև որևէ անձի բնութագրություն:

ԱԼՅՈՒՄԻՆ [< алюминий < լատ. alumen (aluminis) շիբ], գ. (քիմ.): Քիմիական տարր. ցուցիչ՝ Al, կարգային համարը 13, քաշը՝ 26.97, թեթև սպիտակ-արծաթափայլ կռելի մետաղ:

ԱԼՅՈՒՄԻՆԱԹԵՐՄԻԱ [< алюминотермия < ալյումին + հուն. therme ջերմություն], գ. (գիտ.): Մետաղների և համաձուլվածքների, նաև որոշ ոչ մետաղների ստացման եղանակ, երբ մետաղների օքսիդները վերականգնում են ալյումինով:

ԱԼՅՈՒՎԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ [< аллювиальные (< լատ. alluvio ջրաբերուկ) отложения] - Հոսող ջրերի առաջացրած նստվածքներ, կազմված են գլաքարերից, մանրախճից, ավազից, կավերից ևն:

ԱԼՅՈՒՐ [< аллюр < ֆր. allure < aller քայլել, շարժվել], գ. (մսնգ): Ձիու քայլքի, վազքի ձև, տեսակ:

ԱԼՈ [< алло < անգլ. hello(a)], ձայն. (խսկց.): Հեռախոսային զանգին պատասխանելիս (ալո՛, լսում եմ, լսեցե՛ք):

ԱԼՈ... [< алло... < հուն. allos այլ, ուրիշ] Բարդ բառերի բաղկացուցիչ մաս, որը նշանակում է այլ, օտարածին:

ԱԼՈԳԱՄԻԱ [< аллогамия < ալո... + հուն. gamos ամուսնություն], գ. (գիտ.): Բույսի ծաղկի փոշոտումը մեկ ուրիշ բույսի ծաղկի միջոցով:

ԱԼՈԳԻԶՄ [< алогизм < հուն. a ժխտական մասնիկ + logismos բանականություն], գ. (փիլ.): Ճանաչողության մեջ տրամաբանության դերի ժխտում:

ԱԼՈԴ [< аллод < գերմ. Allod < հին գերմ. al լրիվ + ōd տիրույթ], գ. (պատմ.): Արևմտյան Եվրոպայում գերմանական ցեղերի մոտ վաղ ֆեոդալական դարաշրջանում՝ ժառանգական անհատական-ընտանեկան հողային սեփականություն:

ԱԼՈԵ [< алое, алоэ < հուն. aloe], գ. (բսբ.): Հալվե՝ աֆրիկյան բազմամյա բույս՝ շուշանազգիների ընտանիքից՝ հաստ տերևներով, որոշ տեսակների տերևների հյութը բժշկության մեջ տարաբնույթ կիրառություն ունի, տերևներից ստացվող բամբակից գործում են պարաններ, գորգեր և կոշտ կտորներ:

ԱԼՈԽԹՈՆ [< аллохтонный < ալո…+ հուն. chthōn հող], գ. (հնք.): 1. Ապարներ և օգտակար հանածոներ, որոնք առաջացել են վերնստվածքային ելանյութից: 2. Ճալքավոր կառուցվածքների մասեր, որոնք վրաշարժված են չխախտված ավտոխթոն կառուցվածքների վրա և առաջացնում են տեկտոնական ծածկույթներ:

ԱԼՈԽԹՈՆՆԵՐ [< аллохтоны < հուն.], գ. Տվյալ վայրում ապրող օրգանիզմներ, որոնք, ի տարբերություն ավտոխթոնների, առաջացել են այլ տեղում, ապա տարածվել:

ԱԼՈՄՈՐՖ [< алломорф < ալո... + հուն. morphē ձև], գ. (լեզվբ. հնց.): Ենթաձևույթ՝ ձևույթի դիրքային տարբերակ(ներ)՝ պայմանավորված յուրահատուկ միջավայրով: (օր.՝ անգլերենի հոգնակի թվի ձևույթն իրացվում է -s, -z, -iz ևն ենթաձևույթներով, որոնք ունեն ընդհանուր նշանակություն, չեն հանդիպում միևնույն միջավայրում, այսինքն՝ գտնվում են լրացուցիչ բաշխման մեջ):

ԱԼՈՆԺ [< аллонж < ֆր. allonge երկարացում, կցկտուր], գ. 1 (սպորտ.): Բոքսում՝ տարածության ամենահեռավոր կետը, որից բռնցքամարտիկը կարող է հարվածել հակառակորդին: 2. (տնտսգ.): Մակաթերթ՝ մուրհակին կցված լրացուցիչ թերթիկ, որի վրա կատարվում են փոխանցման գրությունները:

ԱԼՈՆԻՄ [< аллоним < ալո... + հուն. ōnyma անուն], գ. (մսնգ.): Ինչ-որ մեկի անվան օգտագործումը մեկ ուրիշի կողմից իբրև մականուն:

ԱԼՈՊԱՏ(Թ)ԻԱ [< аллопатия < ալո... + հուն. pathos հիվանդություն], գ. Այլաբուժություն՝ անվանումը տրվել է հոմեոպատ(թ)իայի հիմնադիր՝ Հանեմանի կողմից՝ որպես ոչ հոմեոպատ(թ)իական բուժման ձև:

ԱԼՈՊԼԱՍՏԻԿԱ [< аллопластика < ալո... + հուն. Plastikē ծեփագործում], գ. (բժշկ.): Վերականգնողական վիրաբուժության ժամանակակից մեթոդ. օգտագործում է ոչ կենդանական (արհեստական) ծագմամբ նյութեր հյուսվածքների վերականգնման համար:

ԱԼՈՏՐՈՊԻԱ [< аллотропия < ալո... + հուն. tropos շրջադարձ, ուղղություն, հատկություն], գ. (քիմ.): Տարաձևություն՝ միևնույն քիմիական տարրի՝ մի քանի պարզ նյութերի ձևով գոյություն ունենալու հատկություն:

ԱԼՈՖՈՆ [< аллофон < ալո... + հուն. phōnē հնչյուն], գ. (լեզվբ. հնց.):

Ենթահնչույթ՝ հնչույթի դիրքային տարբերակ(ներ)՝ պայմանավորված յուրահատուկ միջավայրով: (օր.՝ հայերենի **կ** հնչույթն իրացվում է փափկացված (օր.՝ անկյուն) և կոշտ (օր.՝ փակ) հնչյունական տարբերակներով, որոնք ունեն ձայնային-արտասանական նմանություն, չեն հանդիպում միևնույն միջավայրում, այսինքն՝ գտնվում են լրացուցիչ բաշխման մեջ):

ԱԼՊԱՐԻ [< альпари < իտլ. al pari, alla pari հավասար], գ. (տնտսգ.): Համահավասար՝ արժեթղթի կամ տարադրամի շուկայական գնի համապատասխանությունը դրա անվանական արժեքին:

ԱԼՊԵՆՇՏՈԿ [< альпеншток < գերմ. Alpenstock < Alpen Ալպեր + Stock փայտիկ], գ. (սպորտ.): Ալպինիստի հանդերձանքի մաս կազմող ալպյան ցուպ (երկար և երկաթածայր):

ԱԼՊԻՆԱՐԻԱ [< альпинарий < գերմ. Alpinarium < Alpen Ալպեր], գ. Քարքարոտ բլուր պարտեզում լեռնային ծաղիկներ աճեցնելու համար:

ԱԼՊԻՆԻԶՄ [< альпинизм < արևմտյան Եվրոպայի Ալպեր լեռնաշղթայի անվանումից], գ. Լեռնարշավ՝ 1. (սպորտ.): Մարզաձև, վերելք դեպի դժվարամատչելի լեռնագագաթներ: 2. Բարձր լեռնային տուրիզմ:

ԱԼՊԻՆԻՍՏ [< альпинист < հատուկ անունից], գ. Լեռնարշավորդ՝ լեռնագնաց:

ԱԼՎԵՈԼԱՅԻՆ [< альвеолярный < լատ. alveolus ակոսիկ, փորակ], ած. (հնց. լեզվբ.): Լնդերային՝ ալվեոլային բաղաձայններ՝ բաղաձայն հնչյուն, որի կազմավորման ժամանակ լեզվի ծայրը կպչում է լնդերին՝ անգլ. [t], [d]:

ԱԼՏ [< альт < իտլ. alto < լատ. altus բարձր], գ. (երժշտ.): 1. Համույթում կամ վոկալ խմբում երգվող հատված՝ կանացի կամ մանկական ցածր ձայնով. հնչում է տենորից ավելի բարձր: 2. Երեխայի (հատկապես տղայի) ցածր ձայն: 3. Ջութակից մեծ երաժշտական գործիք:

ԱԼՏԱՀԱՐ, գ. Ալտ նվագող:

ԱԼՏԱՐ [< алтарь < լատ. altaria < altus բարձր], գ. 1. (հնց.): Գերեզմանաքար: 2. (եկեղ.): Քրիստոնեական եկեղեցու արևելյան մասը, որտեղ գտնվում է գահը, իսկ ուղղափառ եկեղեցում ալտարը բաժանվում է մյուս հատվածից սրբանկարներով:

ԱԼՏԵՐԱՑԻԱ [< альтерация < լատ. alteratio փոփոխություն], գ. 1. (կենսբ.): Օրգանների, հյուսվածքների, բջիջների կառուցվածքի և գործունեության փոփոխություն, որն առաջանում է վնասատու ազդակների (մեխանիկական, ջերմային, էլեկտրական, քիմիական ևն) ներգործությամբ: 2. (երժշտ.): Հիմնական հնչյունաշարի աստիճանների (դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի) բարձրության փոփոխումը մեկ կամ երկու կիսատոնով, որի նշաններն են՝ դիեզ, բեմոլ, բեկար:

ԱԼՏԵՐՆԱՏ [< альтернат < ֆր. alternat < լատ. alternus փոփոխական], գ. (քղք.): Միջազգային իրավունքում կանոնների համակցություն, որը սահմանում է պայմանագրի ստորագրման կարգ:

ԱԼՏԵՐՆԱՏԻՎ [< альтернативный < ֆր. alternatif < լատ. alternare հերթագայել, հաջորդել], գ. ած. (խսկց.): 1. Երկընտրանքային՝ երկուսից (կամ ավելիից) ընտրության անհրաժեշտություն, երբ թե՛ մեկը, թե՛ մյուսը բացառում են մեկմեկու՝ տվյալ խնդրի լուծման հնարավորությունից ելնելով: 2. Այլընտրանքային՝ այդ հնարավորություններից յուրաքանչյուրը:

ԱԼՏԵՐՆԱՑԻԱ [< альтернация < լատ. alternatio հերթագայություն], գ. (լեզվբ.): Ձևույթի հնչյունների կամ հնչյունախմբերի օրինաչափ փոփոխությունները նոր արմատների կամ բառաձևերի կազմման գործընթացում: Լինում է բաղաձայնների (օր.՝ лик-лицо-личный (к-ц-ч) և ձայնավորների հերթագայություն՝ ձայն-

դարձ (օր.՝ везу-воз (е-о):

ԱԼՏԻՄԵՏՐ [< альтиметр < լատ. altum բարձրություն + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.): Բարձրաչափ (կիրառվում է թռչող ապարատներում):

ԱԼՏԻՏՈՒԴԱ [< альтитуда < լատ. altitudo բարձրություն], գ. (աշխգր.): Բացարձակ բարձրություն:

ԱԼՏՐՈՒԻԶՄ [< альтруизм < ֆր. altruisme < լատ. alter ուրիշ], գ. Այլասիրություն՝ անշահախնդիր հոգատարություն ուրիշների բարեկեցության հանդեպ, սեփական շահերի զոհաբերություն ուրիշների հետաքրքրությունների իրականացման համար: Հակադրվում է «էգոիզմ» բառին:

ԱԼՏՐՈՒԻՍՏ [< аьтруист < ֆր. < լատ.], գ. Այլասեր:

ԱԼՈՒՆԻՏ [< алунит < ֆր. alun պաղլեղ], գ. (հնք.): Միներալ բարդ սուլֆատների խմբից: Օգտագործվում է պաղլեղ, կավահող և կալիումական աղեր ստանալու համար:

ԱԼՔԻՄԻԱ [< алхимия < հմմտ. լատ. alchemia < արաբ. al-kimiya], գ. Միջնադարյան «քիմիան», որը խնդիր ուներ հասարակ մետաղից ստանալ թանկարժեք մետաղներ՝ ոսկի և արծաթ հատուկ նյութի միջոցով («փիլիսոփայական քար»), որը բնության մեջ իրականում չկար:

ԱԼՔԻՄԻԿՈՍ [< алхимик < հմմտ. լատ. < արաբ.], գ. Ալքիմիայով զբաղվող մարդ:

ԱԼՖԱ [< альфа < հուն. alpha], գ. 1. Հունարեն այբուբենի առաջին տառը: 2. Որևէ բանի սկիզբը: Ալֆա և օմեգա՝ սկիզբը և վերջը, հիմնականը և գլխավորը: 3. (աստղգ.): Յուրաքանչյուր համաստեղության ամենապայծառ աստղի անվանումը: 4. Առաջին բաղադրիչ, որ իմաստային առնչություն ունի ալֆա - մասնիկներ տերմինի հետ:

ԱԼՖԱ-ՄԱՍՆԻԿՆԵՐ, α- մասնիկներ՝ հելիոններ, որոշ ռադիոակտիվ նյութերի առաքած հելիումի ատոմի միջուկներ:

ԱԼՖԱ-ՏՐՈՀՈՒՄ, α-տրոհում, ատոմային միջուկների ալֆա-մասնիկների ինքնաբերաբար առաքումը ռադիոակտիվ տրոհման գործընթացում:

ԱԼՖԱՎԻՏ [< алфавит < հունարենի այբուբենի առաջին երկու տառերի անվանումից՝ ալֆա և բետա, որը միջին հունարենում արտասանվում էր՝ վիտա], գ. (հնց.): Այբուբեն՝ որևէ լեզվի տառերի ամբողջությունը՝ որոշակի դասավորությամբ:

ԱԼՖՈՆՍ [< альфонс < ֆր. Ա. Դումայի «Մուսյո Ալֆոնս» կատակերգության հերոսի անունից], գ. *փխբ.* Կնոջ՝ սիրուհու հաշվին ապրող տղամարդ:

ԱԽԻԼԻԱ [< ахилия < հուն. achylos հյութազուրկ], գ. (բժշկ.): Աղաթթվի և պեպսինի բացակայությունը ստամոքսահյութում:

ԱԽՏԵՐԼՅՈՒԿ [< ахтерлюк < հոլանդ. achterluik], գ. (ծով.): Նավի տախտակամածի հիմնական դիտահորերից մեկը, որտեղ պահվում են մեծածավալ բեռներ:

ԱԽՐՈՄԱՏՈՊՍԻԱ [< ахроматопсия < հուն. achrōmatos անգույն + opsis տեսողություն], գ. (բժշկ.): Գույների զանազանման ունակության խանգարում:

ԱԿԱԴԵՄԻԱ [< академия < լատ. Academia < հատուկ անուն հուն. Akadēmeia], գ. (պատմ.): 1. Փիլիսոփայական դպրոց, որը հիմնադրվել է Պլատոնի կողմից մ.թ.ա. 4-րդ դարում Աթենքի մոտ՝ այգիներում (նվիրված դիցաբանական հերոս Ակադեմոսին). այստեղ Պլատոնը իր աշակերտներին դասախոսություններ էր կարդում: 2. Պետական բարձրագույն գիտական հիմնարկություն, որի նպատակն է գիտության զարգացումը, կաճառ: 3. Մի քանի բարձրագույն ուսումնական հաստատությունների (ռազմական, գյուղատնտեսական ևն) անվանում:

ԱԿԱԴԵՄԻԶՄ [< академизм < լատ.], գ. 1. Զուտ տեսական հարցերով զբաղվելը՝

պրակտիկայից ու կյանքի պահանջներից կտրված: 2. (արվ.): Ուղղություն, որ սահմանել էր դասական արվեստի նմուշներին հետևելու անխախտելի կանոններ և պայքարում էր ռեալիզմի դեմ:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ [< академик < լատ.], գ. Կաճառական՝ ակադեմիայի իսկական անդամ:

ԱԿԱՆԹ [< акант < ֆր. acanthe < հուն. akantha], գ. (բսբ.): Ականթազգիների ընտանիքի բույսերի ցեղ: Տեսակները բազմամյա խոտաբույսեր են, երբեմն՝ թփեր (մոտ 40 տեսակ): Կոչվում է նաև արջամագիլ:

ԱԿԱՊԵԼԼԱ [< а капелла < իտլ. a cappella կապելլայով, երգչախմբով], գ. (երժշտ.): Տերմին, որով նշվում է առանց նվագակցության խմբական երգեցողությունը, այդպիսի կատարման համար գրված ստեղծագործությունը, երաժշտական գրության այդօրինակ եղանակը և ոճը:

ԱԿԱՐԱՊԻԴՈԶ [< акарапидоз < հուն. akari տիզ + eidos տեսակ], գ. (կենսբ.): Ակարապիդոզ մեղուների, մեղուների շնչառական օրգանների տիզային հիվանդություն:

ԱԿԱՐՈԼՈԳԻԱ [< акарология < հուն. akarus տիզ + logos գիտություն], գ. (կենդբ.): Կենդանաբանության մասնաճյուղ, որն զբաղվում է տիզերի ուսումնասիրությամբ, տիզաբանություն:

ԱԿԱՑԻԱ [< акация < լատ. Acacia], գ. (բսբ.): Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող ծառ:

ԱԿԱՖԻՍՏ [< акафист < հուն. akathistos < a ժխտական մասնիկ + kathizō նստում եմ], գ. (կրոն.): Քրիստոնեական եկեղեցական գովերգական երգ, որը կատարվում է բոլոր ներկաների կողմից կանգնած վիճակում:

ԱԿԻՆ [< акын < թուրք. akyn], գ. (հզվդ.): Աշուղ (Ղազախստանում, Ղրղզստանում և մի շարք այլ երկրներում):

ԱԿԻՆԱԿ [< акинак < հուն. akinakes], գ. (պատմ.): Սկյութների երկաթյա կարճ թուրը (40-60 սմ):

ԱԿԻՆԵԶԻԱ [< акинезия < հուն. akinesia անշարժունակություն], գ. (բժշկ.): Շարժումներ կատարելու անկարողություն:

ԱԿԼԱՄԱՑԻԱ [< аккламация < լատ. acclamatio հավանության կամ մերժման բացականչություն], գ. (հզվդ.): Ժողովի կողմից որևէ առաջարկի մերժումը կամ ընդունումը առանց ձայների հաշվարկի, մասնակիցների արտահայտած բացականչությունների հիման վրա:

ԱԿԼԻՄԱՏԻԶԱՑԻԱ [< акклиматизация < գերմ. Akklimatisation < լատ. ad + հուն. klima (klimatos) կլիմա, եղանակ], գ. Կլիմայավարժում, օդընտելացում՝ մարդու, կենդանիների, բույսերի ընտելանալը փոխված կամ նոր կլիմայական պայմաններին:

ԱԿՄԵԻԶՄ [< акмеизм < ֆր. acmeisme < հուն. akme որևէ երևույթի բարձրագույն աստիճանը, բարգավաճող վիճակ], գ. (պատմ.): Մոդեռնիստական հոսանք XX դարի սկզբի ռուսական պոեզիայում. որը պաշտպանում էր «արվեստն արվեստի համար» սկզբունքը:

ԱԿՄԵԻՍՏ [< акмеист < ֆր.], գ. Ակմեիզմի հետևորդ, կողմնակից:

ԱԿՈԼԱԴԱ [< акколада < ֆր. accolade գրկախառնություն], գ. 1. (երժշտ.): Նոտագրության մեջ՝ ուղիղ կամ ձևավոր փակագիծ: 2. (տպգր.): Ձևավոր փակագիծ:

ԱԿՈՄՈԴԱՑԻԱ [< аккомодация < լատ. accomodatio հարմարունակություն], գ. (բժշկ. կենսբ.): Աչքի հարմարունակության ձեռքբերում, հարմարում, հարմարեցում:

ԱԿՈՄՊԱՆԵՄԵՆՏ [< аккомпанемент < ֆր. accompagnement ուղեկցում], գ. 1. (երժշտ. հնց.): Նվագակցություն, նվագակցում: 2. *փխբ.* Ձայնակցություն, ձայնակցում:

ԱԿՈՆԻՏ [< аконит < հուն. akoniton], գ. (բսբ.): 1. Ընձախոտ: 2. Ընձախոտի բյուրեղափոշի կամ թուրմ, որ օգտագործվում է որպես դեղ:

ԱԿՈՆՏՈ [< а-конто < իտլ. a conto], գ. (տնտսգ.): Առևտրավճարում՝ արտահանողի հաշվի վրա ներմուծողի կողմից վճարման կատարում:

ԱԿՈՐԴ [< аккорд < իտլ. accordo համաձայնություն], (երժշտ.): Դաշնաձայնություն՝ ներդաշն՝1. Մի քանի ձայների ներդաշնակ զուգորդություն: 2. Որևէ լարային գործիքի լարերի համալիր:

ԱԿՈՐԴԵՈՆ [< аккордеон < ֆր. accordeʹon], գ. (երժշտ.): Հարմոնի տիպի երաժշտական գործիք, բայց դաշնամուրային ստեղնաշարով՝ աջ ձեռքի համար՝ դաշնոն:

ԱԿՈՐԴԵՈՆԻՍՏ [< аккордеонист < ֆր.], գ. Ակորդեոն նվագող:

ԱԿՍԱԿԱԼ [< аксакал < թուրք. aksakal սպիտակամորուք, ճերմակամորուք], գ. Միջին Ասիայում և Ղազախստանում՝ ցեղի, ընտանիքի ամենաավագ և ամենահարգված անդամը:

ԱԿՍԵԼԵՐԱՏՈՐ [< акселератор < լատ. accelerare արագացնել], գ. (տեխ.): Ոտնակ՝ հարմարանք, որի շարժման չափի դեպքում կարգավորվում է մեքենայի արագությունը, արագարար:

ԱԿՍԵԼԵՐԱՑԻԱ [< акселерация < լատ. acceleratio արագացում], գ. (կենսբ.): Երեխաների և պատանիների հասակի, սեռական հասունության չափազանց արագ աճը:

ԱԿՍԵԼԵՐՈՄԵՏՐ [< акселерометр < լատ. accelero արագացնում եմ + հուն. metreō], գ. (տեխ.): Արագացումը չափելու սարք: Օգտագործվում է մեքենաների և նրանց մասերի թրթռումները կամ շարժումները հետազոտելիս ավիացիայում, տիեզերագնացության մեջ նն:

ԱԿՎԱԼԱՆԳ [< акваланг < լատ. aqua ջուր+ անգլ. lung թոք], գ. (տեխ.): Ջրի խորքում մարդու շնչելու հարմարանք՝ բաղկացած սեղմված օդով լի անոթից, դիմակից և դրանք միացնող առաձգական խողովակից:

ԱԿՎԱՄԱՐԻՆ [< аквамарин < լատ. aqua marina ծովաջուր], գ. (հնք.): Միներալ, բերիլի թափանցիկ տարբերակը: Գույնը՝ կապտականաչ կամ երկնագույն: Թանկարժեք քար է, ծովակն, ծովաբյուրեղ:

ԱԿՎԱՄԵՏՐԻԱ [< акваметрия < լատ. aqua ջուր + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.): Գիտություն բազմապիսի նյութերում ջրի քանակային պարունակության բացահայտման մեթոդների մասին:

ԱԿՎԱՆԱՎՏ[< акванавт < լատ. aqua ջուր + հուն. nautēs նավաստի], գ. (տեխ.): Հատուկ հանդերձանքով կամ ստորջրյա սարքերով ջրի խորքում աշխատանքներ կատարող սուզակմասնագետ:

ԱԿՎԱՊԼԱՆ [< акваплан < լատ. aqua + planum հարթություն], գ. (սպորտ.): Սպոր-

տային լաստ, որով մարզիկը ջրում տեղաշարժվում է ինքնաշարժ նավակի հետևից:

ԱԿՎԱՏԻՆՏԱ [< акватинта < իտլ. acquatinta], գ. Փորագրության տեսակ, որը կատարվում է ասֆալտի կամ բևեկնախեժի փոշով ծածկված մետաղե փորագրատախտակը թթվով մշակելու՝ կետագծելու եղանակով:

ԱԿՎԱՏՈՐԻԱ [< акватория < լատ. aquatorium], գ. Ջրի մակերևույթի հատվածը նավահանգստում, ջրատարածություն:

ԱԿՎԱՐԵԼ [< акварель < ֆր. aquarelle < լատ. aqua ջուր], գ. 1. Ջրաներկ: 2. Ջրանկարչություն:

ԱԿՎԱՐԻՈՒՄ [< аквариум < լատ. aquarium ջրավազան], գ. Ձկներ՝ ջրային կենդանիներ ու բույսեր պահելու տարբեր չափերի ապակե անոթներ:

ԱԿՎԵԴՈՒԿ [< акведук < լատ. aquaeductus < aqua + duco տանում եմ], գ. Ջրանցույց՝ կամրջանման շինվածք, որով ջուրն անցնում է, նավ:

ԱԿՎԻԶԻՏՈՐ [< аквизитор < գերմ. Akquisitor < ֆր. acquisiteur < լատ. aquisitor ձեռք բերող], գ. (առևտր.): Տրանսպորտային ձեռնարկության կամ ապահովագրական ընկերության աշխատակից, ով զբաղվում է ակվիզիցիայով:

ԱԿՎԻԶԻՑԻԱ [< аквизиция < գերմ. Akquisition < ֆր. acquisition < լատ. acquisitio ձեռքբերում], գ. (առևտր.): Տրանսպորտային ձեռնարկության կամ ապահովագրական ընկերության կողմից նոր բեռների կամ ապահովագրումների ներգրավում:

ԱԿ(Ք)ՎԻԼՈՆ [< аквилон < լատ. aquilo (aquilonis) հյուսիսային քամի], գ. 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ հյուսիսային քամու աստվածը: 2. *փխբ.* Հյուսիսային քամի

ԱԿՏ [< акт < լատ. actus], գ. 1. Արարք, գործողություն, գործ: 2. Պետական, օրինական փաստաթուղթ, արձանագրություն: 3. Դրամատիկական՝ թատերական ստեղծագործության առանձին մասը:

ԱԿՏԻՆԻԱՆԵՐ[< актиния < հուն. aktis (aktinos) ճառագայթ], գ. (կենդբ.): Աղեխորշավորների տիպի, վեցճառագայթավոր կորալների ենթադասի ծովային կենդանիներ՝ տարածված հիմնականում արևադարձային և մերձարևադարձային շրջաններում:

ԱԿՏԻՆԻԴՆԵՐ, ԱԿՏԻՆՈԻԴՆԵՐ [< актиниды, актиноиды < ակտինիում + հուն. eidos տեսակ], գ. (քիմ.): Տարրերի պարբերական համակարգի 7-րդ պարբերության երրորդ խմբում ակտինիումից հետո տեղավորված ռադիոակտիվ տարրերի ընտանիք:

ԱԿՏԻՆԻՈՒՄ [< актиний < հուն. aktis (aktinos) ճառագայթ], գ. (քիմ.): Ռադիոակտիվ քիմիական տարր (AC)՝ պարբերական համակարգի երրորդ խմբի արծաթագույն, սպիտակ մետաղ: Հանդիպում է ուրանի հանքաքարերում:

ԱԿՏԻՆՈ... [< актино... < հուն. aktis (aktinos) ճառագայթ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս կապը ճառագայթների, ճառագայթման և ճառագայթային էներգիայի հետ:

ԱԿՏԻՆՈԳՐԱՖ [< актинограф < ակտինո... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Ինքնագիր սարք՝ արևային ճառագայթումը գրանցելու համար:

ԱԿՏԻՆՈՄԵՏՐԻԱ [< актинометрия < ակտինո... + հուն. metron չափ], գ. (գիտ.): Գեոֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է ճառագայթումը, նրա փոխակերպում-

ները և տեղափոխությունը մթնոլորտում, հիդրոսֆերայում և Երկրի մակերևույթին:

ԱԿՏԻՆՈՄԻԿՈԶ [< актиномикоз < ակտինո... + հուն. mykes սունկ], գ. (բժշկ.): Կենդանիների և մարդկանց քրոնիկական վարակիչ հիվանդություն, որի հարուցիչները ճառագայթասնկերն են:

ԱԿՏԻՆՈՄԻՑԵՏՆԵՐ [< актиномицеты < ակտինո... + հուն. mykes (myketos) սունկ], գ. (կենդբ.): Միկրոօրգանիզմների խումբ՝ ճառագայթասնկեր. մոտ են բակտերիաներին, ապրում են հողի և ջրի մեջ, ինչպես նաև բույսերի վրա:

ԱԿՏԻՎ I [< актив < լատ. activus գործող, արարող], ած. Գործունյա՝ 1. Որևէ կազմակերպության՝ հիմնարկի, կուսակցության ևնի առավել գործուն մասը: 2. Գործունյա, գործուն, ազդու, ներգործող:

ԱԿՏԻՎ II [< актив < լատ. activus գործող, արարող], գ. Հիմնարկության, կազմակերպության ունեցվածքը:

ԱԿՏՈՒԱԼ [< актуальный < լատ. actualis գործուն], ած. (խսկց.): Արդիական՝ հրատապ՝ հասունացած, լուծում պահանջող, ներկա պահին անհրաժեշտ:

ԱԿՏՈՒԱԼԻԶՄ [< актуализм < անգլ. actual < ֆր. actuel < լատ. actualis գործուն, ժամանակակից], գ. (երկրբ.): Անցյալի երկրաբանական գործընթացների բնույթը և պատմությունը ժամանակակից երկրաբանական գործընթացների համանմանությամբ վերականգնելու պատմահամեմատական մեթոդ:

ԱԿՐ [< акр < անգլ. acre], գ. Հողի չափման միավոր Անգլիայում և Հյուսիսային Ամերիկայում, որը հավասար է 4047 մ^2:

ԱԿՐԱՏՈՖՈՐ [< акратофор < հուն. akratophorōs գինու ջրաման], գ. (տեխ.): Հերմետիկ ջրաման 350-10.000 լ տարողությամբ. օգտագործվում է շամպայնգինիների արտադրության մեջ:

ԱԿՐԵԴԻՏԻՎ [< аккредитив < գերմ. Akkreditiv < ֆր. accreditif < լատ. accreditivus հավատարմագրային], գ. Վարկաթուղթ, վարկագիր՝ 1. (ֆին.): Դրամական փաստաթուղթ, որը պարունակում է մի բանկի վճարման հրաման մյուսին՝ ինչ-որ մեկին որոշակի գումար վճարելու: 2. (դվնգ.): Հավատարմագիր՝ լիազորագիր, որը հնարավորություն է տալիս լիազորելու որևէ դիվանագետի աշխատելու այլ պետության մեջ:

ԱԿՐԻԴ [< акрида < հուն. akris (akridos) ծղրիդ, մորեխ, մարախ], գ. (կենդբ.): Մորեխ, մարախ:

ԱԿՐԻԴԻՆ [< акридин < լատ. acer (acris) սուր], գ. (կենսբ.): Օրգանական՝ դեղնավուն բյուրեղներով ազոտապարունակիչ նյութ: Որոշ ածանցյալները կարևոր դեղանյութեր են (ակրիխին, ռիվանոլ) և արժեքավոր ներկանյութեր:

ԱԿՐԻԽԻՆ [< акрихин < լատ. acer (acris) սուր], գ. (բժշկ.): Սինթետիկ դեղանյութ՝ դեղին, դառնահամ, անհոտ, ջրում լուծելի բյուրեղային փոշի. հակամալարիական դեղ:

ԱԿՐՈԲԱՏ [< акробат < հուն. akrobates վեր բարձրացող], գ. (հնց.): Մարմնամարզիկ՝ 1. Կրկեսային մարմնամարզության վարպետ: 2. Սպորտային մարմնամարզության վարպետ:

ԱԿՐՈԲԱՏԻԿԱ [< акробатика < հուն.], գ. Մարմնամարզություն՝ կրկեսային և սպորտային մարմնամարզություն:

ԱԿՐՈԲՈԼԻՍՏ [< акроболист < հուն. akrobolistōs նետաձիգ], գ. (պատմ.): Հին Հունաստանում՝ թեթև հեծելազորի զինվոր, որը զինված էր աղեղով, թրով ու տեգով և չուներ վահան:

ԱԿՐՈԼԵԻՆ [< акролейн < լատ. acer (acris) սուր + oleum յուղ], գ. (կենսբ.): Անգույն, սուր հոտով, արցունքաբեր օրգանական նյութ: Օգտագործվում է գլիցերինի և մի շարք կարևոր օրգանական միացությունների (մեթիոնի ևն) սինթեզի համար:

ԱԿՐՈԿԵՖԱԼԻԱ [< акрокефалия, акроцефалия < հուն. akros բարձր, վերին + kephalē գլուխ], գ. (բժշկ.): Գանգի ձևի անկանոնություն (աշտարակի նման):

ԱԿՐՈՄԵԳԱԼԻԱ [< акромегалия < հուն. akron վերջավորություն + megas (megalu) մեծ], գ. (բժշկ.): Հիվանդություն՝ կապված հիպոֆիզի առաջնային բլիթի գործունեության խանգարման հետ. արդյունքում՝ խախտվում է ոսկորների համաչափ աճը, հաստանում են ծայրանդամները:

ԱԿՐՈՄԵԼԱՆԻԶՄ [< акромеланизм < հուն. akron ծայր, վերջույթ + melas սև], գ. (կենսբ.): Ալբինիզմի տարատեսակ, որի դեպքում գունազրկված է կենդանու ամբողջ մարմինը բացի վերջույթներից՝ թաթերից, պոչից, դնչից:

ԱԿՐՈՆԻՄ [< акроним < հուն. akros բարձր + ōnyma անուն], գ. (լեզվբ.): Տառային հապավում (օր.՝ ՀՀ, ՌԴ, ԱՊՀ):

ԱԿՐՈՊՈԼԻՍ [< Акрополь < հուն. akros վերին + polis քաղաք], գ. (պատմ.): Հին հունական քաղաքների բարձրադիր և ամրացված մասը՝ միջնաբերդը:

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ [< акростих < հուն. akrostichion < akros եզրային + stichos տող, բանաստեղծություն], գ. (գրկն.): Բանաստեղծության տեսակ, որի տողերի առաջին տառերը կազմում են որևէ ամբողջություն՝ բառ, բառակապակցություն կամ նախադասություն:

ԱԿՐՈՏԵՐ [< акротерий < հուն. akrōtēria գագաթ], գ. (ճարտ.): Ճակտոնազարդ՝ քանդակային հարդարանք (արձան ևն) ճարտարապետական դասական օրդերով՝ կառուցված շենքի ճակտոնի անկյունում, տանիքի վրա:

ԱԿՑԵՆՏ [< акцент < լատ. accentus], գ. (խսկց.): 1. Առոգանություն, շեշտ՝ շեշտը դնելը ինչ-որ բանի վրա՝ առանձնացնելը մյուսներից, հատկապես ուշադրություն դարձնելը ինչ-որ բանի: 2. Առոգանություն՝ արտասանության տեսակ, երբ մի այլ լեզվի բառերը արտասանելիս փոխվում են այդ լեզվի հնչյունները խոսողի կողմից:

ԱԿՑԵՆՏՈԼՈԳԻԱ [< акцентология < լատ. accentus + հուն. logōs գիտություն], գ. (քեր. հնց.): Շեշտաբանություն:

ԱԿՑԵՆՏՈՒԱՑԻԱ [< акцентуация < լատ. accentus], գ. (քեր.): Շեշտադրություն՝ 1. Լեզվի շեշտադրության կանոնների համակարգը: 2. Բառի մեջ որևէ հնչյունի, նախադասության մեջ որևէ բառի առանձնացումը շեշտի միջոցով:

ԱԿՑԵՊՏ [< акцепт < լատ. acceptus ընդունված], գ. Հոժարագիր՝ 1. (իրավբ.): Քաղաքացիական իրավունքում պայմանագիր կնքելու առաջարկությանը (օֆերտ) մյուս կողմի համաձայնությունը, որն առաջացնում է իրավական հետևանքներ: 2. Վճարողի համաձայնությունը վճարելու փոխանցվող մուրհակը ժամանակին ստանալու մասին: 3. (բանկ.): Բանկի համաձայնությունը երաշխավոր լինել՝ փոխանցվող մուրհակի վճարմանը:

ԱԿՑԻԱ [< акция < ֆր. action], գ. 1. (ֆին.): Բաժնետոմս, բաժնեթուղթ, արժեթուղթ, որ ձեռք են բերում որևէ ձեռնարկության նևի մեջ որոշ գումար ներդնելով՝ այդ ձեռնարկության եկամուտից բաժին ստանալու համար: 2. (դվնգ.): Գործողություն՝ միջոցառում, որը կատարվում է քաղաքական կամ տնտեսական նպատակներ իրականացնելու համար:

ԱԿՑԻԴԵՆՑԻԱ [< акциденция < լատ. accidentia դիպված, պատահականություն], գ. (փիլ.): 1. Պատահականություն՝ փիլիսոփայական հասկացություն, որն արտահայտում է իրերի պատահական, փոփոխական, ոչ էական, անցողիկ հատկանիշները: 2. (տպգր.): Տպագրական մանր գործեր:

ԱԿՑԻԶ [< акциз < ֆր. accise < լատ. accido կտրում եմ], գ. (տնտսգ.): Բաժ՝

արդյունաբերական ապրանքների՝ առավելապես մասսայական սպառման առարկաների, ինչպես նաև կոմունալ, տրանսպորտային և տարածված այլ ծառայությունների վրա սահմանված անուղղակի հարկի տեսակ:

ԱԿՑԻՈՆԵՐ [< акционер < ֆր. actionnaire], գ. Բաժնետեր՝ բաժնետիրական ձեռնարկության մեջ բաժին ունեցող անձ:

ԱԿՈՒԶԱՏԻՎ [< аккузатив < լատ. (casus) accusativus], գ. (քեր.): Հայցական հոլով:

ԱԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐ [< аккумулятор < լատ. accumulator հավաքիչ], գ. Կուտակիչ՝ էներգիայի կուտակման սարք՝ հարմարանք՝ հետագա օգտագործման համար (օր.՝ էլեկտրական, հիդրավլիկ, տորֆային ակումուլյատորներ):

ԱԿՈՒՄՈՒԼՅԱՑԻԱ [< аккумуляция < լատ. accumulatio], գ. (գիտ): Էներգիայի հավաքում՝ կուտակում:

ԱԿՈՒՇԵՐԿԱ [< акушерка < ֆր. accoucheur օգնել ծննդաբերության ժամանակ], գ. (խսկց.): Մանկաբարձուհի՝ բժշկական միջին անձնակազմի անդամ, որը հատուկ պատրաստվածություն ունի՝ օգնելու երեխայի ծննդի ժամանակ:

ԱԿՈՒՍՏԻԿԱ [< акустика < հուն. akustikos ձայնային], գ. (գիտ. հնչ.): 1. (գիտ.): Ձայնաբանություն: 2. Ձայնի՝ երաժշտության ևն լսելիությունը որևէ շինությունում:

ԱԿՈՒՏ [< акут < լատ. acutus սուր, բարձր], գ. 1. (լեզվբ.): Շեշտի տեսակ հին հունարենում. շեշտված վանկի արտասանությունը բարձրացող հնչերանգով: 2. (լեզվբ. տպգր.): Դիակրիտիկ (տարբերակիչ) նշան (օր.՝ ֆր. été - ամառ):

ԱՄԱԶՈՆԻՏ [< амазонит < անվանումը՝ Ամազոն գետից], գ. (հնք.): Միներալ դաշտային ապարների խմբից:

ԱՄԱԶՈՆՈՒՀԻՆԵՐ [< амазонки < հուն. amazones < a ժխտական մասնիկ + mazos ստինք], գ. (դից.): Ամազոնուհիներ՝ հին հունական առասպելներում՝ ռազմատենչ կանայք, որոնք ապրում էին Սև ծովի ափերի մոտ և հարձակվում հարևան երկրների վրա: Ըստ հին ավանդապատումների՝ ամազոնուհիները կտրում էին իրենց աջ կուրծքը՝ աղեղից ու նետից ավելի հեշտ օգտվելու համար: Վարժ և քաջ հեծյալներ են եղել: Տարեկան մի անգամ են կապ հաստատել տղամարդկանց հետ՝ սերունդ ունենալու նպատակով: Տղա ծնվելու դեպքում սպանել են կամ ուղարկել հորը, իսկ աղջկան պահել են, վարժեցրել զինվորական գործին:

ԱՄԱԼԳԱՄԱՑԻԱ [< амальгамация < ֆր.], գ. (գիտ.): Ամալգամացում. սա տեղի է ունենում, երբ սնդիկը թրջում է մետաղի մակերևույթը և ապա դիֆուզվում նրա մեջ:

ԱՄԱԼԳԱՄՆԵՐ [< амальгама < ֆր. amalgame], գ. (քիմ.): Մետաղների համաձուլվածքները սնդիկի հետ:

ԱՄԲԻՑԻԱ [< амбиция < ֆր. ambition < լատ. ambitio], գ. (հնց.): 1. Պատվախնդրություն, պատվամոլություն: 2. Ինքնավստահություն, գոռոզամտություն, հավակնություն:

ԱՄԲԻՑԻՈԶ [< амбициозный < ֆր. < լատ.], ած. Պատվախնդիր, հավակնոտ:

ԱՄԲՐԱԶՈՒՐԱ [< амбразура < ֆր. embrasure], գ. 1. (ռազմ.): Հրակնատ՝ ամրության պատի կամ ռազմանավի, տանկի պտտվող աշտարակի մեջ բացած անցք՝ հրազենից կրակելու համար: 2. Որմնանցք՝ դռան կամ պատուհանի համար:

ԱՄԲՐՈՍԻԱ [< амброзия, амврозия < հուն. ambrosia], գ. 1. (դից.): Աստվածների շատ քաղցր, անմահություն և հավերժական երիտասարդություն պարգևող կերակուր (ըստ հունական դիցաբանության): 2. (*փխբ.* հնց.): Անուշահոտ օծանելիք: 3. (բսբ.): Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող խոտաբույս:

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ [< амбулатория < լատ. ambulatorius շարժական], գ. (բժշկ.): Բուժարան՝ բժշկական հիմնարկություն, որ օգնություն է ցույց տալիս թե՛ այցելու և թե՛ տանը պառկած հիվանդներին:

ԱՄԵԹԻՍՏ [< аметист < հուն. amethystos չհարբեցնող], գ. (հնք.): Միներալ, քվարցի մանուշակագույն տարբերակը: Հանդիպում է պեգմատիտներում, քվարցային երակներում:

ԱՄԵԼԻՈՐԱՑԻԱ [< амелиорация < ֆր. amélioration < լատ. melior ավելի լավ], գ. Լավացում, կարգավորում:

ԱՄԵՆ [< аминь < հուն. amen < եբրայերեն ճիշտ, ճշմարիտ լինի], (կրոն.): Քրիստոնեական աղոթքի կամ քարոզի եզրափակող բառ:

ԱՄԵՆՈՐԵԱ [< аменорея < ֆր. aménorrhée, գերմ. Amenorrhöe < հուն. a ժխտական ածանց + mēn ամիս + rheō հոսում եմ], գ. (բժշկ.): Սեռական հասունության շրջանում կնոջ մոտ դաշտանի բացակայություն£

ԱՄԵՆՑԻԱ [< аменция < լատ. amentia խելագարություն], գ. (բժշկ.): Գիտակցության խանգարում, նկատվում է ուժեղ վարակիչ հիվանդությունների դեպքում:

ԱՄԵՈԲԱ [< амёба < հուն. amoibē փոփոխություն], գ. (կենդբ.): Կայուն ձև չունեցող միաբջիջ կենդանի:

ԱՄԵՈԲԻԱԶ, գ. (բժշկ.): Վարակիչ հիվանդություն. առաջանում է հաստ աղիքները, բերանի խոռոչը, ներքին այլ օրգանները դիզենտերային ամեոբայով ախտահարվելու հետևանքով:

ԱՄԵՏՐՈՊԻԱ [< аметропия < գերմ. Ametropie, ֆր. amétropie < հուն. a ժխտական ածանց + mētron չափ + opsis տեսողություն], գ. (բժշկ.): Նորմալ տեսողությունից շեղում (կարճատեսություն, հեռատեսություն):

ԱՄԻԱ [< амия < լատ. Amia calva], գ. (կենդբ.): Ձկան տեսակ:

ԱՄԻԱԿ [< аммиак < հուն. hals ammoniakos բառերի հմռտգ.], գ. (քիմ.): Անգույն գազ՝ սուր անդուրեկան հոտով, ազոտի և ջրածնի միացություն, առաջանում է օրգանական նյութերի փտումից, օր.՝ գոմաղբից՝ ամոնիակ: Արդյունաբերության մեջ ստացվում է ազոտի և ջրածնի սինթեզից, օգտագործվում է հիմնականում հեղուկ վիճակում (нашатырный спирт):

ԱՄԻԴՆԵՐ [< амиды < ամիակ + հուն. eidos տեսակ], գ. (քիմ.): Թթուների ածանցյալներ, որտեղ թթվի հիդրոքսիլ խումբը փոխարինված է ամինախմբով:

ԱՄԻԴՈԼ [< амидол < հուն.], գ. (քիմ.): Օրգանական նյութ, անգույն բյուրեղներ: Օգտագործվում է լուսանկարչական թղթի և գունավոր բազմաշերտ ժապավենների առաջին (սև-սպիտակ) հայտածման համար:

ԱՄԻԴՈՍՏՈՄՈԶ [< амидостомоз < լատ. amidostomosis], գ. (ախտ.): Բադերի հիվանդություն, որը հարուցվում է հատուկ որդերի կողմից:

ԱՄԻԼԱԶՆԵՐ [< амилазы < հուն.], գ. (քիմ.): Օսլան և գլիկոգենը հիդրոլիտիկ եղանակով ճեղքող ֆերմենտներ:

ԱՄԻԼԱՑԵՏԱՏՆԵՐ [< амилацетаты < հուն. amylon օսլա + լատ. acetum քացախ], գ. (կենսբ.): Օրգանական նյութեր, որոնք օգտագործվում են սննդի արդյունաբերության մեջ (մրգաջրեր, կարամել ևն):

ԱՄԻԼՈԶ [< амилоза < հուն. amylon օսլա], գ. (կենսբ.): Բնական օսլայի բաղադրիչ մասը:

ԱՄԻԼՈԻԴ [< амилоид < հուն. amylon +eidos տեսակ], գ. (կենսբ.): Հատուկ սպիտակուցային նյութ մարդկանց և կենդանիների մեջ:

ԱՄԻԼՈՊԵԿՏԻՆ [< амилопектин < հուն. amylon + pektos], գ. (կենսբ.): Բնական օսլայի բաղադրիչ մասը:

ԱՄԻՄԻԱ [< амимия < հուն. a ժխտական ածանց + mimos նմանակում], գ. (բժշկ.): Նյարդային համակարգի խանգարման պատճառով դիմախաղի (դիմաշարժություն) մասնակի կամ ամբողջական բացակայություն:

ԱՄԻՆՆԵՐ[< амины < հուն.], գ. (քիմ.): Ամոնիակի օրգանական ածանցյալներ:

ԱՄԻՏՈԶ [< амитоз < հուն. a ժխտ. մասնիկ + mitos թել, գիծ], գ. (կենսբ.): Կորիզի ուղղակի բաժանում, նախակենդանիների, բուսական և կենդանական բջիջների կորիզի բազմացման ձև:

ԱՄՆԵԶԻԱ [< амнезия < հուն. a ժխտական մասնիկ + mneia, mnēmē հիշողություն], գ. (բժշկ.): Անհիշություն՝ հիշողության թուլացում կամ կորուստ:

ԱՄՆԻՍՏԻԱ [< амнистия < հուն. amnestia մոռացում, ներում], գ. (իրավբ.): Համաներում՝ գերագույն իշխանության օրենսդրական ակտ, որով ներվում է դատապարտյալը՝ պատժից ու պատասխանատվությունից ազատվելով կամ պատիժը մեղմացվելով:

ԱՄՈՆ [< Амон < հուն. Amon], գ. (դից.): Աստված հին եգիպտական դիցարանում: Պատկերվել է ոչխարի եղջյուրներով տղամարդու կերպարանքով:

ԱՄՈՆԱԼՆԵՐ [< аммоналы < ամոնիում + ալյումին], գ. (քիմ.): Պայթուցիկ խառնուրդներ, ամոնիտների խմբից: Կայուն են հարվածի և շփման նկատմամբ, պայթում են դետոնացումից:

ԱՄՈՆԻԱԿ Տե՛ս **ԱՄԻԱԿ:**

ԱՄՈՆԻՏՆԵՐ I [< аммониты I < եգիպտական աստծու անունից], գ. (կենդբ.): Արտաքինխեցիավոր գլխոտանի փափկամորթների ամոնոիդեա անհետացած խմբին տրվող ընդհանուր անվանումը:

ԱՄՈՆԻՏՆԵՐ II [< аммониты II < հուն. ամոնիում + nitron], գ. (քիմ.): Պայթուցիկ խառնուրդներ, պարունակում են ամոնիումի նիտրատ, պինդ կիզանյութեր և պայթուցիկ նյութեր:

ԱՄՈՆԻՈՒՄ [< аммоний < հուն. (ամիակ)], գ. (քիմ.): NH^{+}_{4} , անօրգանական իոն: Ազատ գոյություն չունի, գտնվում է շատ միացություններում, որոնք օգտագործվում են գյուղատնտեսության և տեխնիկայի մեջ:

ԱՄՈՐԱԼ [< аморальный < հուն. a ժխտական մասնիկ + moralis բարոյական], ած. (հնց.): Անբարոյական՝ բարոյականությունից զուրկ:

ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ [< амортизатор < ֆր. amortir թուլացնել, մեղմել < լատ.], գ. (տեխ.): Մեղմիչ՝ ավտոմոբիլի, տանկի, ինքնաթիռի ևն ցնցումները մեղմացնող հարմարանք:

ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ I [< амортизация < լատ. amortisatio մարում], գ. 1. (ֆին.): Պարտքի աստիճանական մարում: 2. Գույքի արժեքի աստիճանական մարումը՝ նրա բնականորեն մաշվելու հետևանքով: 3. (իրավբ. ֆին.): Պարտագրի դրամական փաստաթղթի գործածության դադարեցումը, անվավեր համարելը:

ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ II [< амортизация < ֆր. amortir մեղմել], գ. (տեխ.): Մեղմացում՝ ցնցումների մեղմացում՝ օր.՝ ավտոմոբիլի, ինքնաթիռի ևն:

ԱՄՈՐՖ [< аморфный < հուն. amorphos], ած. 1. Բյուրեղային կազմություն չունեցող: 2. Անձև: 3. Անկերպարանք:

ԱՄՊԵԼՈԳՐԱՖԻԱ [< ампелография < հուն. ampelos խաղող + graphō գրում եմ], գ. (գիտ.): Խաղողագրություն՝ գիտություն խաղողի տեսակների մասին:

ԱՄՊԵՐ [< ампер < ֆրանսիացի ֆիզիկոս Ամպերի (Ampère 1775-1836թթ.) անունից], գ. (ֆիզ.): Էլեկտրական հոսանքի ուժի չափման միավոր:

ԱՄՊԵՐԱՆՈՑ, ած. (ֆիզ.): Թվականի ցույց տված քանակով ամպերի ուժ ունեցող:

ԱՄՊԵՐՄԵՏՐ [< амперметр < ամպեր+ հուն. metreō չափում եմ], գ. (ֆիզ.):

Էլեկտրական հոսանքի ուժի չափման սարք՝ հարմարանք:

ԱՄՊԻՐ [< ампир < ֆր. empire կայսրություն], գ. (արվ.): XIX դ. առաջին երեք տասնամյակների եվրոպական ճարտարապետության և կերպարվեստի (հիմնականում՝ դեկորատիվ կիրառական) ոճ, որով ավարտվեց կլասիցիզմի զարգացումը:

ԱՄՊԼԻԴԻՆ [< амплидин < գերմ. Amplidyne < լատ. amplificare ուժեղացնել, ավելացնել + հուն. dyn(amis) ուժ], գ. (տեխ.): Թույլ հոսանքն ուժեղացնող էլեկտրական մեքենա (գեներատորի տարատեսակ):

ԱՄՊԼԻՏՈՒԴ(Ա) [< амплитуда < լատ. amplitudo մեծություն], գ. (ֆիզ.): Լայնույթ՝ 1. Որևէ փոփոխական մեծության սահմանների միջոցը: 2. Ճոճման՝ տատանման թափ՝ հավասարակշռության դիրքից ամենամեծ շեղումը ներդաշնակ տատանումների դեպքում: 3. Ջերմության կամ խոնավության միջին և ծայրային աստիճանների տարբերությունը:

ԱՄՊԼԻՖԻԿԱՑԻԱ [< амплификация < ֆր. amplification < լատ. amplificatio ավելացում, տարածում], գ. 1. (գրկն.): Ընդարձակաբանություն՝ հռետորական և ոճական հնար, երբ խոսքի մեջ ուժեղանում և լարվում են մակդիրները, պատկերները, հոմանիշները, համեմատությունները նն խոսքի ներգործությունն ունկնդրի և ընթերցողի վրա ուժեղացնելու նպատակով: 2. Պատկերավորման միջոցների շռայլում խոսքում. 3. (լեզվբ.): Տեքստի ծավալի ավելացումը թարգմանության ժամանակ:

ԱՄՊԼՈՒԱ [< амплуа < ֆր. emploi կիրառում, պաշտոն], գ. (թատր.): 1. Հատկադեր՝ դերերի տեսակ, որը սովորաբար կատարում է որևէ դերասան՝ կախված նրա բեմական տվյալներից՝ օր.՝ սիրահարի, չարագործի նն: 2. *փխբ.* Հասարակական դեր՝ դիրք, զբաղմունքների շրջանակ:

ԱՄՊՈՒԼԱ [< ампула < լատ. ampulla], գ. Սրվակ՝ սովորաբար ապակե անոթ՝ նեղ բերանով՝ հեղուկ նյութերի՝ հատկապես դեղերի ստերիլ պահպանման համար:

ԱՄՊՈՒՏԱՑԻԱ [< ампутация < լատ. amputatio կտրում], գ. (բժշկ.): Անդամահատում՝ մարմնի որևէ մասի՝ սովորաբար ծայրանդամների ամբողջական կամ մասնակի հեռացում՝ վիրաբուժական եղանակով:

ԱՄՈՒԼԵՏ [< амулет < լատ. amuletum հուռութ], գ. (խսկց.): Հուռութ՝ սնոտիապաշտ մարդկանց կողմից մարմնի վրա կրվող որևէ առարկա, որը պահպանում է հիվանդություններից, վերքերից, չարագործություններից, փորձանքից:

ԱՄՈՒՆԻՑԻԱ [< амуниция < ֆր. amunitionnement ռազմամթերքի մատակարարում], գ. (ռազմ.): Հանդերձանք՝ զինվորական հագ ու կապը, նաև ռազմական հանդերձանքը:

ԱՄՈՒՐ [< Амур < ֆր. Amour < լատ. amor սեր], գ. 1. (դից.): Սիրո աստվածը հռոմեական դիցարանում (համապատասխանում է հունական Էրոսին): 2. (աստղգ.): Փոքր մոլորակներից մեկը, որը մոտենում է Երկրին 15 մլն. կմ հեռավորությամբ:

ԱՄՖԻԲԻԱ [< амфибия < հուն. amphibios երկկենցաղ], գ. Երկկենցաղ 1. (կենսբ.): Երկկենցաղ կենդանի, բույս: 2. (տեխ.): Թե՛ ցամա-

քի և թե՛ ջրի վրա աշխատող հարմարանք՝ սարք (օր.՝ ինքնաթիռ, ավտոմեքենա, տանկ ևն):

ԱՄՖԻԲԻՈՆԻՏՆԵՐ[< амфибиониты < հուն. amphi երկակի + bios կյանք], գ. (կենդբ.): Օրգանիզմներ, որոնք հարմարվել են երկկենցաղ կյանքի:

ԱՄՖԻԲՈԼԻՏ(Թ)ՆԵՐ [< амфиболиты < հուն. amphibolos երկակի, խաբուսիկ + lithos քար], գ. (հնք.): Մետամորֆային ապար՝ հոծ կամ թերթավոր, մուգ գույնի:

ԱՄՖԻԲՈԼՆԵՐ [< амфиболы < հուն. amphiboles երկակի], գ. (հնք.): Ապար կազմող միներալների մեծ խումբ՝ մագնեզիումի, երկաթի, կալցիումի, ավելի քիչ՝ ալյումինի և ալկալիների սիլիկաթթվածնային միացություններ:

ԱՄՖԻԲՐԱՔՈՍ [< амфибрахий < հուն. amphi երկու կողմից+ brachys կարճ], գ. (տոչփ.): Տաղաչափական հասկացություն. եռավանկ չափական միավոր՝ բանաստեղծական ոտք, քողաղոտ: Անտիկ տաղաչափության մեջ բաղկացած էր եզրային երկու կարճ և սրանց միջև գտնվող մեկ երկար վանկից:

ԱՄՖԻԹԱՏՐՈՆ [< амфитеатр < հուն. amphitheatron], գ. 1. (պատմ.): Հին հունական թատրոնում՝ հանդիսատեսների համար սարքված կիսաշրջանաձև տեղերը (սովորաբար բլուրների լանջերին): 2. (պատմ.): Հույների և հռոմեացիների մոտ՝ հրապարակային հանդեսների ընդարձակ, շրջանաձև կամ ձվաձև շինություն՝ սանդղաձև բարձրացող տեղերով: 3. (թատր.): Պարտերին հաջորդող կարգերը դահլիճում:

ԱՄՖԻՄԱԿՐՈՍ [< амфимакр < հուն. amphimakros < հուն. amphi երկու կողմից + makros երկար], գ. (տոչփ.): Տաղաչափական հասկացություն. եռավանկ չափական միավոր՝ բանաստեղծական ոտք: Անտիկ տաղաչափության մեջ բաղկացած էր եզրային երկու երկար և սրանց միջև գտնվող մեկ կարճ վանկից:

ԱՄՖԻՄԻՔՍԻՍ [< амфимиксис < հուն. amphi + mixis խառնում], գ. (կենսբ.): Սեռական գործընթացի սովորական եղանակ, երբ տեղի է ունենում իգական և արական սեռական բջիջների կորիզների միաձուլում:

ԱՄՖԻՊՈԴ [< амфипод < հուն. amphi երկու կողմից + pus(podos) ոտք], գ. (կենդբ.): Ծովերում և անուշահամ ջրերում լայն տարածված խեցեմորթների տարատեսակ:

ԱՄՖՈԴՈՆՏՈԶ [< амфодонтоз < հուն. amphi երկու կողմից + odus(odontos) ատամ], գ. (բժշկ.): Տե՛ս Պարոդոնտոզ:

ԱՄՖՈՐԱ [< амфора < լատ. amphora < հուն.], գ. Անտիկ անոթ՝ բարձր, ուռուցիկ, դեպի ներքև սեղմվող իրանով, նեղ վզով և վերձիգ զույգ կանթով:

ԱՅԱԹՈԼԱ [< аятолла < արաբ. aḫat նշան + al-ilāh աստված], գ.(կրոն.): Իրանի մահմեդականների հոգևոր առաջնորդը:

ԱՅԱՔՍ [< Аяксы < լատ. Ajax < հուն. Aias (Aiantos)], գ. 1. (պատմ.): Հին հունական էպիկական պոեմում՝ «Իլիականում» տրոյական պատերազմի երկու հերոսներ, որոնք միասին հունական կողմից կռվել են տրոյացիների դեմ՝ «երկու Այաքսներ»՝ երկու անբաժան ընկերներ: 2. (սպորտ.): Ֆուտբոլային թիմ Հոլանդիայում:

ԱՅԿԻԴՈ[< айкидо < ճապ.], գ. (սպորտ.): Արևելյան մարտարվեստի՝ մարզաձևի տեսակ:

ԱՅՄԱԿ [< аймак < մոնղ. aimak], գ. (քղք.): Վարչատարածքային միավոր կամ շրջան Մոնղոլիայում, Բուրյաթիայում և Հյուսիսային Ալթայում:

ԱՅՍԲԵՐԳ [< айсберг < անգլ. iceberg < շվեդ. isberg], գ. Սառցալեռ՝ լողացող սառույցի զանգված՝ լեռ՝ բուրգ:

ԱՅՍԻՆԳ [< айсинг < անգլ. icing], գ.(սպորտ.): Տափօղակով հոկեյում՝ տափօղակի նետումը՝ անցկացնելը խաղադաշտի բոլոր գոտիներով խաղացողների հավասար կազմերի ժամանակ:

ԱՅՎԱ [< айва < թուրք.], գ. (բսբ.): Սերկևիլ՝ ոչ մեծ ծառերի կամ թփերի տեսակ վարդազգիների ընտանիքից, որը տարածված է Կովկասում, Միջին Ասիայում, Իրանում. մեծ հոտավետ պտուղներից պատրաստում են հյութեր, մուրաբաներ:

ԱՆԱԲԱՊՏԻՍՏ [< анабаптист < ֆր. anabaptiste < հուն. anabaptizō նորից մկրտում եմ], գ. (կրոն. հնց.): Պլեբեյական կրոնական աղանդի անդամ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում ռեֆորմացիայի ժամանակաշրջանում. սրանք կողմ էին հասուն հասակում անձի մկրտվելուն, մերժում էին դպրոցները, եկեղեցական աստիճանավորությունը, մի շարք քրիստոնեական խորհուրդներ, պահանջում էին սեփականության վերացում:

ԱՆԱԲԻՈԶ [< анабиоз < հուն. anabiosis կենսադարձ], գ. (կենսբ.): Օրգանիզմի վիճակ, երբ կենսական գործընթացները (նյութափոխանակություն են) ժամանակավորապես դադարում են կամ աննկատ լինելու աստիճան դանդաղ, կենսադադարություն:

ԱՆԱԲՈԼԻԶՄ [< анаболизм < հուն. anabolē վերելք], գ. (կենսբ.): Օրգանիզմում նյութափոխանակություն առաջացնող ռեակցիաների ամբողջությունը:

ԱՆԱԲՈԼԻԿՆԵՐ [< анаболики < հուն. anabolē], գ. (դղգրծ.): Դեղամիջոցներ, որոնք ուժեղացնում են սպիտակուցների սինթեզումն օրգանիզմում. օգտագործվում են մարզիկների կողմից որպես դոպինգ:

ԱՆԱԳՐԱՄԱ [< анаграмма < հուն. ana շուրջ + gramma գիր], գ. 1. (լեզվբ.): Գրաշրջություն, անդրատառություն՝ բառի մեջ տառերի տեղափոխություն, որի հետևանքով ստեղծվում է նոր բառ, օր.՝ շուն – նուշ, պատ – տապ: 2. (գրկն.): Ոտանավոր-հանելուկ:

ԱՆԱԴԻՊԼՈՍԻՍ [< анадиплосис < հուն. anadiplōsis կրկնակիություն], գ. (գրկն.): Կցուրդ՝ բանաստեղծական տողի վերջին բառի կամ բառախմբի կրկնությունը հաջորդ տողի սկզբում:

ԱՆԱԵՐՈԲՆԵՐ[< анаэробы < հուն. an ժխտական նախածանց + aēr օդ + bios կյանք], գ. (կենդբ.): Անօդակյացներ՝ ազատ թթվածնի բացակայության պայմաններում ապրելու և զարգացման ընդունակ միկրոօրգանիզմներ (թարթիչավոր infուզորիաներ, փափկամորթներ են):

ԱՆԱԼԳԻԱ [< анальгия < հուն. analges ցավազրկված], գ.(բժշկ.): Ցավի զգացման բացակայություն (նաև՝ անալգեզիա):

ԱՆԱԼԳԻՆ [< аналгин < հուն. anagesia ցավի բացակայություն], գ. (դղգրծ.): Ցավը հանգստացնող, ջերմությունն իջեցնող և հակաբորբոքային դեղանյութ:

ԱՆԱԼԵԿՏՆԵՐ [< аналекты < հուն. analekta ընտրություն], գ. (գրկն.): Որևէ հեղինակի կամ հեղինակների ստեղծագործությունների կամ դրանց որևէ հատվածի ընտրանի, ժողովածու, հատընտիր:

ԱՆԱԼԻԶ [< анализ < հուն. analysis տարրալուծում, անդամահատում], գ.(գիտ.): Վերլուծություն՝ 1. Ուսումնասիրության մեթոդ, որ հիմնվում է հետազոտության առարկան բաղադրիչ մասերի տարրալուծելու և տրամաբանական վերացարկման միջոցով առարկան մանրատելու վրա: 2. Այն գործողությունների ամբողջությունը, որոնք կատարվում են ուսումնասիրելի նյութի բաղադրությունը որոշելու համար: 3. Քննություն, բազմակողմանի քննարկում՝ հետազոտում, բոլոր տվյալների ու փաստերի բազմակողմանի հաշվառում ու քննություն: 4. Գեղարվեստական երկի գրական ուսումնասիրություն: 5. (լեզվբ.): Մեքենական թարգմանության

առաջին փուլը, որի ժամանակ որոշում են թարգմանելի տեքստի բառային ու քերականական իրազեկումները: 6. (գիտ.): Տարրալուծություն՝ որևէ նյութի՝ երևույթի բաղադրությունը՝ կազմությունն ու հատկությունը որոշելը:

ԱՆԱԼԻԶԱՏՈՐ [< анализатор < հուն.], գ. 1. (կենսբ.): Բարձրակարգ կենդանիների և մարդու անատոմաֆիզիոլոգիական բարդ համակարգեր, որոնք ընդունում և նուրբ վերլուծության են ենթարկում արտաքին ու ներքին միջավայրի բոլոր գրգիռները: 2. (ֆիզ.): Լույսի բևեռացումը հայտնաբերող գործիք:

ԱՆԱԼԻՏԻԿ [< аналитический < հուն. analytikos], ած. Վերլուծական՝ վերլուծությանը հատուկ՝ վերաբերող:

ԱՆԱԼՈԳԻԱ [< аналогия < հուն. analogia համապատասխանում, նմանություն], գ. 1. (գիտ.): Նմանակություն, համանմանություն, նմանօրինակություն՝ որոշ կարգի նմանություն այնպիսի առարկաների, որոնք ընդհանուր առմամբ իրարից տարբերվում են: 2. (լեզվբ.): Համաբանություն՝ լեզվական որևէ երևույթի առաջացում արդեն գոյություն ունեցող մի այլ երևույթի նմանությամբ, նմանակություն: 3. (իրավբ.): Օրենքով որոշակիորեն չնախատեսված, բայց իրավական կարգավորում պահանջող հարաբերության վճռումը օրենսդրության համանման նորմով կամ իրավունքի ընդհանուր սկզբունքով: 4. (կենսբ.): Ոչ միանման կազմություն ունեցող և տարբեր սաղմերից առաջացող օրգանիզմների, օրգանների կամ նրանց մասերի արտաքին նմանություն, որը պայմանավորված է կյանքի պայմանների կամ ֆունկցիաների միանմանությամբ:

ԱՆԱԽՈՐԵՏ [< анахорет < հուն. anachōrētes հեռացում], գ. (հնց.): Անապատական, մենակյաց, ճգնավոր:

ԱՆԱԽՐՈՆԻԶՄ [< анахронизм < հուն. ana հետ + chronos ժամանակ], գ. (գիտ.): Ժամանակավրիպում՝ 1. Որևէ ժամանակի, դեպքի կամ իրադարձության սխալական հատկացումը այլ ժամանակաշրջանի: 2. Հնացած, տվյալ ժամանակին ոչ համապատասխան դեպք՝ արարք՝ երևույթ:

ԱՆԱԽՐՈՆԻԿ [< анахронический < հուն.], ած. (գիտ.): 1. Ժամանակավրեպ, ժամանակագրական տեսակետից ոչ ճիշտ: 2. Ապաժամյա:

ԱՆԱԿՈՆԴԱ [< анаконда < իսպ. anaconda], գ. (կենդբ.): Վիշապների ընտանիքի օձ՝ մինչև 9 մ երկարությամբ: Ապրում է Բրազիլիայի գետերի, լճերի և ճահիճների ափերին: Ունի արդյունագործական նշանակություն (օգտագործվում են մաշկը, միսը, ճապը):

ԱՆԱԿՐԵՈՆՅԱՆ [< анакреонический < հույն բանաստեղծ Անակրեոնի անունից], ած. Անակրեոնյան պոեզիա՝ կենսասիրական թեթև քնարերգություն, որը տարածված էր եվրոպական մի շարք երկրներում Վերածննդի և Լուսավորության ժամանակաշրջաններում:

ԱՆԱԿՐՈՒԶ(Ս)Ա [< анакруза, анакруса < հուն. anakrusis հրում, հետընթացք], գ. (տոչփ.): Բանաստեղծական տողի սկզբի վանկերը մինչև շեշտված, այսինքն՝ երկար վանկը (անտիկ տաղաչափության մեջ):

ԱՆԱՄՆԵԶ [< анамнез < հուն. anamnesis հիշողություն, հիշել], գ. (բժշկ.): Տեղեկություններ հիվանդի կյանքի՝ տվյալ հիվանդությանը նախորդած պայմանների մասին, ինչպես նաև հիվանդության զարգացման ամբողջ պատմությունը:

ԱՆԱՄՈՐՖՈԶ [< анаморфоз < ֆր. anamorphose < հուն. anamorphosis ձևախեղում], գ. (տեխ.): Պատկերի ձևախեղում:

ԱՆԱՆԱՍ [< ананас < իսպ. ananas, anana < Բրազիլիայում խոսվող գուարանի լեզվից nana], գ. (բսբ.): Արքայախնձոր՝ թրատերևների կարգին պատկանող արևադարձային բույս և դրա պտուղը:

ԱՆԱՇԱ [< анаша < թուրք. anaŠa կանեփ], գ. 1. (բսբ.): Վայրի կանեփի տեսակ, որի տերևները ևն պարունակում են թմրեցուցիչ նյութեր: 2. Այդ բույսից պատրաստված թմրադեղ:

ԱՆԱՊԵՍՏ [< анапест < հուն. anapaistos հետ արտացոլված], գ. (տղչփ.): Վերջատանջ՝ հին հունահռոմեական տաղաչափության մեջ՝ եռավանկ ոտք, որի առաջին երկու վանկերը կարճ են, երրորդը՝ երկար:

ԱՆԱՏՈՄԻԱ [< анатомия < հուն. anatomē անդամահատում, կտրատում], գ. (կենդբ.): Կազմախոսություն՝ գիտություն կենդանի օրգանիզմների կազմության, ֆունկցիաների, զարգացման մասին:

ԱՆԱՏՈՄԻԿՈՒՄ [< анатомикум < հուն.], գ. Հերձարան՝ 1. Գիտական կամ ուսումնական հաստատությանը կից հերձարան, դիահերձարան: 2. Այն շենքը, որտեղ գտնվում է հերձարանը:

ԱՆԱՏՈՔՍԻՆ [< анатоксин < հուն. ana հակա... + toxikon թույն], գ. (կենսբ.): Տոքսինի ոչ վտանգավոր ածանցյալ, որը պահպանում է նրա հակածինային և իմունածինային հատկությունները: Բժշկության մեջ կիրառում են փայտացման, գազային գանգրենայի հարուցիչներից և օձերի թույներից ստացված անատոքսիններ:

ԱՆԱՐԽԻԱ [< анархия < հուն. anarchia], գ. 1. (քղբ.): Անիշխանություն, անկազմակերպվածություն: 2. Խառնաշփոթություն՝ անկարգություն, խառնակ վիճակ:

ԱՆԱՐԽԻԶՄ [< анархизм < հուն.], գ. (պատմ.): 1. (քղբ.): Հասարակական-քաղաքական հոսանք, որը ժխտում է ամեն մի իշխանություն ու պետություն: 2. *փխբ.* Կարգ ու կանոնին՝ հասարակական նորմաներին չենթարկվելը: 3. (խսկց.): Ինքնագլխություն:

ԱՆԱՐԽԻՍՏ [< анархист < հուն.], գ. 1. (քղբ.): Անարխիզմի կողմնակից, անիշխանական: 2. *փխբ.* Հասարակական կարգ ու կանոնին չենթարկվող մարդ:

ԱՆԱՐԽՈՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ [< анархосиндикализм < հուն.], գ. (քղբ. պատմ.): Մանրբուրժուական հոսանք բանվորական շարժման մեջ, որ գտնվում էր անարխիզմի գաղափարաքաղաքական ազդեցության ներքո:

ԱՆԱՖԱԶ [< анафаза < հուն. ana + phasis փուլ], գ. (կենսբ.): Բուսական և կենդանական բջիջների միտոզային բաժանման երրորդ փուլը:

ԱՆԱՖԵՄ(Ա) [< анафема < հուն. anathema], գ. (կրոն.): Բանադրանք՝ քրիստոնեական բարձրագույն եկեղեցական պատիժը:

ԱՆԱՖԻԼԱՔՍԻԱ [< анафилаксия < հուն. ana + phylaxis անպաշտպանություն], գ. (կենդբ.): Մարդու և կաթնասուն կենդանիների ախտաբանական վիճակ, որը զարգանում է, երբ օրգանիզմ են ներարկում (շրջանցելով մարսողական ուղին) օտար նյութեր, մեծ մասամբ սպիտակուցային բնույթի հակածիններ (անաֆիլաքտոգեններ), ալերգիայի ձևերից մեկը:

ԱՆԱՖՈՐԱ [< анафора < հուն. anaphora], գ. (գրկն.): Հարակրկնություն՝ բանաստեղծական խոսքի դարձվածք, որը կազմվում է չափածո տողերի ու տների սկզբում բառերի կամ շարահյուսական կապակցությունների, իսկ արձակի մեջ՝ առանձին արտահայտությունների կրկնությամբ:

ԱՆԱՖՐՈՆՏ [< анафронт < հուն. ana վերև + լատ. frōns (frontis) ճակատ], գ. (օդերև): Մթնոլորտային ճակատ, որը բնութագրվում է տաք օդի բարձրացող հոսանքով:

ԱՆԳԱՐ [< ангар < ֆր. hangar], գ. (տեխ.): Ինքնաթիռների կայանման, տեխնիկական վերանորոգման և պահպանման շինություն:

ԱՆԳԻՆԱ [< ангина < լատ. angina < angere խեղդել], գ. (բժշկ.): Բկաբորբ, նշիկաբորբ, քմային ավշային հանգույցների (նշագեղձեր) սուր բորբոքում, որն ուղեկցվում է կոկորդի ցավերով, ջերմության բարձրացմամբ և ընդհանուր թուլությամբ:

ԱՆԳԻՈ... [< ангио < հուն. angeion անոթ], Բարդ բառերում գործածվելիս ցույց է տալիս, որ դրանք վերաբերում են մարդու՝ կենդանիների՝ բույսերի անոթային համակարգին:

ԱՆԳԻՈԳՐԱՖԻԱ [< ангиография < անգիո... + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Արյունատար անոթների ռենտգենային հետազոտության մեթոդ, երբ անոթների մեջ ներարկվում են ռենտգենային ճառագայթների համար անանցանելի նյութեր:

ԱՆԳԻՈԼՈԳԻԱ [< ангиология < անգիո... + հուն. logos ուսմունք], գ. (բժշկ.): Անոթաբանության՝ կազմախոսության բաժին, որը ուսումնասիրում է արյունատար և լիմֆատիկ համակարգը:

ԱՆԳԻՈՄԱ [< ангиома < անգիո... + հուն. ...oma վերջավորություն ուռուցք բառից], գ. (բժշկ.): Ուռուցք, որը կազմված է արյունատար և լիմֆատիկ անոթներից:

ԱՆԳԻՈՆԵՎՐՈԶ [< ангионевроз < անգիո... + հուն. neuron նյարդ], գ. (բժշկ.): Կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություն՝ անոթաշարժիչ նյարդերի վնասմամբ: Արտահայտվում է սրտի հատվածում ոչ դուրեկան զգացումով, հանկարծակի գունատվելով կամ մաշկի կարմրությամբ նն:

ԱՆԳԻՈՍՊԱԶՄ [< ангиоспазм < անգիո... + հուն. spasma], գ. (բժշկ.): Զարկերակների և մազանոթների պարբերական կծկում, որը խանգարում է հյուսվածքների և օրգանների արյունամատակարարմանը և սնուցմանը:

ԱՆԳԻՈՍՏՈՄԻԱ [< ангиостомия < անգիո... + հուն. stoma անցք], գ. (բնխս.): Արյունատար անոթների վրա հատուկ փողիկի (ֆիստոլ) անցկացման ձև, որի միջոցով կենդանուց կարելի է արյուն վերցնել երկարատև փորձի ժամանակ:

ԱՆԳԼԵԶԻՏ [< англезит < ֆր. anglaisite Անգլիայի մոտ գտնվող Անգլսի կղզու անվանումից], գ. (երկրբ.): Միներալ, կապարի ձուլման հանքանյութ:

ԱՆԳԼԻՑԻԶՄ [< англицизм < ֆր. anglicisma], գ. Անգլիաբանություն՝ անգլերեն լեզվից փոխառություններ:

ԱՆԳԼՈՄԱՆԻԱ [< англомания < անգլո... + հուն. mania կիրք, ձգտում], գ. Անգլամոլություն՝ Անգլիայի մշակույթին՝ լեզվին կրքոտ ձգտում, դրանցով գայթակղված լինելը:

ԱՆԳՈԲ [< ангоб < ֆր. angobe], գ. Բաց գույնի, նուրբ մշակված և ջրի մեջ լուծված կավե մածուկ: Կիրառվել է հնագույն ժամանակաշրջանից՝ կավե անոթների մակերեսը ծածկելու համար:

ԱՆԳՈԼԱՐ [< анголар < հատուկ անուն], գ. (ֆին.): Անգոլայի դրամը մինչև 1977 թ.-ի հունվարը, հավասար էր 100 սենտավոյի:

ԱՆԳՍՏՐԵՄ [< ангстрем < շվեդացի ֆիզիկոս Անդերս Յոհաս Անգստրեմի (1814-1874 թթ.) անունից], գ. Երկարության միավոր, մետրի տասը միլիարդերորդական մասը: Օգտագործվում է գլխավորապես օպտիկայում, սպեկտրոսկոպիայում, ատոմային և մոլեկուլային ֆիզիկայում:

ԱՆԴԱԼՈՒԶԻՏ [< андалузит < Իսպանիայի Անդալուզիա մարզի անունից], գ. (հնք.):

Միներալ. ալյումինի սիլիկատ: Պարունակում է նաև երկաթի և մանգանի օքսիդներ: Օգտագործվում է հրակայուն և թթվակայուն առարկաների արտադրության մեջ:

ԱՆԴԱՆՏԵ [< андante < իտալ. andante քայլել], գ. (երժշտ.): Հանդարտ քայլքին համապատասխանող չափավոր դանդաղ տեմպ:

ԱՆԴԵԶԻՆ[< андезин < Հարավային Ամերիկայում գտնվող Անդյան (Andes) լեռնաշղթայի անունից], գ. (երկրբ.): Ապար կազմող միներալ՝ պլագիոկլազների խմբից: Համակարգը տրիկլինային է, գույնը՝ սպիտակ: Սովորաբար հանդիպում է հատիկներով:

ԱՆԴԵԶԻՏ [< андезит < տե՛ս անդեզին], գ. (երկրբ.): Հրաբխային ապար, որը օգտագործվում է որպես շինանյութ և թթվակայուն նյութ:

ԱՆԴՐՈԳԵՆԵԶ [< андрогенез < հուն. anēr (andros) տղամարդ + genesis], գ. (բժշկ.): Բազմացման հատուկ ձև, երբ ձվաբջիջի զարգացման ժամանակ մասնակցում է միայն արական սաղմը:

ԱՆԴՐՈԳԻՆԻԱ [< андрогиния < հուն. androgynos երկսեռ], գ. Անձի մոտ երկսեռության դրսևորում:

ԱՆԴՐՈՄԵԴԱ, ԱՆԴՐՈՄԱՔԵ [< Андромеда < հուն. Andromedē], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանական հերոսուհի: 2. (աստղգ.): Համաստեղություն երկնքի հյուսիսային կիսագնդում՝ Կասիոպեա, Պերսեոս, Եռանկյուն, Ձկներ, Պեգաս և Մողես համաստեղությունների միջև: Միջին լայնություններում լավ երևում է ամռանը, աշնանն ու ձմռանը:

ԱՆԴՐՈՖՈԲԻԱ [< андрофобия < հուն. anēr (andros) տղամարդ + phobos վախ], գ. Այրատեցություն՝ այրատյաց լինելը, այրատյաց հատկությունը:

ԱՆԵԿԴՈՏ [< анекдот < հուն. anekdotos չհրապարակված], գ. Բանահյուսության տեսակ՝ կարճ մտացածին զավեշտական պատմվածք:

ԱՆԵՄԻԱ [< анемия < հուն. an ժխտական մասնիկ + haima արյուն], գ. (բժշկ.): Սակավարյունություն՝ արյան պակասություն:

ԱՆԵՄՈԽՈՐԻԱ [< анемохория < հուն. anemos + choreō տարածվում եմ], գ. (բսբ.): Քամու միջոցով բույսերի բազմացում:

ԱՆԵՄՈՄԵՏՐ [< анемометр < հուն.], գ. (տեխ.): Հողմաչափ՝ քամու արագությունը (որոշ կոնստրուկցիաներում նաև ուղղությունը) չափող գործիք, որի պարզագույն տեսակը հողմնացույցն է:

ԱՆԵՄՈՄԵՏՐԻԱ [< анемометрия < հուն. anemos քամի + metreō չափում եմ], գ. (գիտ.): Օդերևութաբանության բաժին: Զբաղվում է քամին բնորոշող մեծությունների (արագություն, ուղղություն) չափումով:

ԱՆԵՄՈՖԻԼԻԱ [< анемофилия < հուն. anemos + philia սեր], գ. (բսբ.): Բույսերի խաչաձև փոշոտում քամու օգնությամբ:

ԱՆԵՍԹԵԶԻԱ [< анестезия < հուն. anaisthēsia անզգայություն], գ. (բժշկ.): Զգայության կորուստ. առաջանում է նյարդային որոշակի հիվանդությունների ժամանակ կամ հնարավոր է իրականացնել արհեստականորեն՝ վիրաբուժական միջամտության ժամանակ:

ԱՆԵՎՐԻԶՄ [< аневризм < հուն. aneurysma ընդարձակում], գ. (բժշկ.): Զարկերակալայնանք՝ արյունատար անոթների կամ սրտի խոռոչի լայնացում:

ԱՆԵՎՐԻՆ [< аневрин < հուն. a ժխտական մասնիկ + neuron նյարդ], գ. (քիմ.): Թիամինի հնացած անվանումը կամ վիտամին B_1:

ԱՆԵՔՍԻԱ [< аннексия < լատ. annexio միացում], գ. (քղք.): Բռնագրավում, բռնազավթում՝ որևէ երկրի կողմից մեկ այլ երկրի հողատարածքի բռնագրավում, նվաճում, կցում այդ երկրի ժողովրդի կամքին հակառակ:

ԱՆԹԵՅ [< Антей < հուն. Antaios], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ հսկա-հերոս՝ Պոսեյդոնի և Գեայի որդին: Սպանվել է Հերակլեսի կողմից՝ նրան գետնից պոկելով և խեղդելով:

ԱՆԹԵՐԻԴԻՈՒՄ [< антеридий < հուն. antheros ծաղկող], գ. (բսբ.): Սպորավոր բույսերի՝ ջրիմուռների, սնկերի, մամուռների, պտերների արական սեռական օրգան:

ԱՆԹԵՐՈԶՈԻԴ [< антерозоид < հուն. antheros + zoon կենդանի + eidos տեսակ], գ. Անթերիդիումի ներսում՝ սպերմագոնիում. հյուսվածքից առաջանում են սպերմատոզոիդները (անթերոզոիդներ):

ԱՆԹՈԼՈԳԻԱ [< антология < հուն. anthos ծաղիկ + lego հավաքում եմ], գ. (գրկն.): Տարբեր հեղինակների ընտիր ստեղծագործությունների՝ հատկապես բանաստեղծությունների հավաքածու, ժողովածու, հատընտիր, ծաղկաքաղ:

ԱՆԹՐՈՊՈ... [< антропо... < հուն. anthropos մարդ] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց իմաստի կապը մարդու հետ:

ԱՆԹՐՈՊՈԳԵՆ [< антропоген < անթրոպո... + հուն. genos ծնունդ], գ. (երկրբ.): Չորրորդական ժամանակաշրջան, պոստպլիոցեն. Երկրի շերտագրական սանդղակի և երկրաբանական պատմության վերջից ցայսօր շարունակվող ժամանակաշրջանը: Անթրոպոգենի ժամանակաշրջանի տևողությունը որոշվում է 600 հզ.-1 մլն. տարուց մինչև 2.5-3.5 մլն. տարի: Այս ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունը մարդու երևան գալն է:

ԱՆԹՐՈՊՈԳԵՆԵԶ [< антропогенез < անթրոպո... + հուն. genes ծնված, ծնող], գ. (գիտ.): Մարդաբանության մի բաժինը: Մարդու ֆիզիկականի, աշխատանքային ունակությունների, խոսելու կարողության, ինչպես նաև հասարակության ձևավորման պատմաէվոլյուցիոն ընթացքը:

ԱՆԹՐՈՊՈԳԵՆԵՏԻԿԱ [< антропогенетика < անթրոպո... + հուն. genetikos], գ. (գիտ.): Գիտություն, որը ուսումնասիրում է մարդու ծագումը և զարգացումը:

ԱՆԹՐՈՊՈԶՈՈՆՈԶՆԵՐ [< антропозоонозы < անթրոպո... + հուն. zoon կենդանի + nosos հիվանդություն], գ. (բժշկ.): Մարդկանց և կենդանիների վարակիչ ընդհանուր հիվանդությունների խումբ:

ԱՆԹՐՈՊՈԼՈԳԻԱ [< антропология < հուն. anthropos + logos հասկացություն, գիտություն], գ. (գիտ.): Մարդաբանություն՝ գիտություն մարդու մասին:

ԱՆԹՐՈՊՈԽՈՐԻԱ [< антропохория < անթրոպո... + հուն. choreō տարածվում եմ], գ. (բսբ.): Բույսերի տարածում մարդու ինքնաբերական մասնակցությամբ:

ԱՆԹՐՈՊՈՄԵՏՐԻԱ [< антропометрия < անթրոպո... + հուն. metreō չափում եմ], գ. (գիտ.): Մարդաչափություն՝ մարդաբանության բաժին մարդու մարմնի պարամետրերի չափումների մեթոդների մասին:

ԱՆԹՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ [< антропоморфизм < հուն. morphē տեսակ, ձև], գ. Մարդակերպություն՝ 1. Նախագիտական պատկերացում, իբր կենդանիները, բույսերը և երևույթները բնության մեջ ունեն մարդկային հատկանիշներ: 2. (եկեղ.): Աստծու կերպարանքը մարդու տեսքով:

ԱՆԹՐՈՊՈՆԻՄ [< антропоним < անթրոպո... + հուն. ōnyma անուն], գ. (գիտ. լեզվբ.): Մարդու հատուկ անունը՝ որպես լեզվաբանական քննության առարկա:

ԱՆԹՐՈՊՈՆԻՄԻԿԱ [< антропонимика < անթրոպո... + հուն. ōnyma անուն], գ. (գիտ. լեզվբ.): Մարդու անվանաբանություն՝ անվանագիտություն՝ մարդկանց անունների ամբողջությունը լեզվում և ուսմունքը դրանց մասին:

ԱՆԹՐՈՊՈՑԵՆՏՐԻԶՄ [< антропоцентризм < անթրոպո... + հուն. kentron

կենտրոն], գ. Կրոնական պատկերացում, ըստ որի մարդը տիեզերքի կենտրոնն է և նրա վերջնական նպատակը:

ԱՆԹՐՈՊՈՖԱԳԻԱ [< антропофагия < անթրոպո... + հուն. phagein ուտել], գ. Մարդակերություն՝ մարդկային մսով կերակրվելը:

ԱՆԻԶՈԿՈՐԻԱ [< анизокория < հուն. anisos անհավասար + kore բիբ], գ. (բժշկ.): Բիբերի անհավասարաչափություն հիվանդների մոտ, որոնք տառապում են ողնուղեղի և գլխուղեղի, նաև աչքերի օրգանական հիվանդություններով:

ԱՆԻԶՈՏՐՈՊԻԱ [< анизотропия < հուն. anisos + tropos հատկություն], գ. 1. (ֆիզ.): Հատկությունների բաշխումը ֆիզիկական մարմինների մեջ: 2. (բսբ.): Տարամետություն՝ բույսերի հնարավորությունը արտաքին ազդակների ազդեցության տակ (օր.՝ լույսի) համաչափորեն տարբեր կողմեր շեղվելը:

ԱՆԻԶՈՖԻԼԻԱ [< анизофилия < հուն. anisos + phyllon տերև], գ. (բսբ.): Տարատերևություն՝ բույսերի տարբեր ձևի տերևներ ունենալու հատկությունը:

ԱՆԻԼԻՆ [< анилин < պորտ. anil լեղակ < արաբ. an-nīl < սանսկրիտ nīla կապույտ], գ. (քիմ.): Անգույն կամ դեղնագույն, յուղային, թունավոր հեղուկ, որը օգտագործվում է զանազան օրգանական նյութեր պատրաստելու համար՝ ներկերի, դեղերի, պայթուցիկ նյութերի: Արհեստական անիլինը ստացվել է 1842 թ. ռուս քիմիկոս Ն. Ն. Զինինի կողմից:

ԱՆԻՀԻԼԱՑԻԱ [< аннигилация < լատ. annihilatio ոչնչացում, անհետացում < ad դեպի + nili ոչինչ], գ. (ֆիզ.): Մասնիկի և նրան համապատասխանող հակամասնիկի փոխակերպումը էլեկտրամագնիսական ալիքների՝ ֆոտոնների կամ ուրիշ մասնիկների՝ այլ բնույթի ֆիզիկական դաշտի քվանտների:

ԱՆԻՄԱԼԻԶՄ [< анимализм < ֆր.], գ. (արվ.): Կենդանիների կերպավորում գեղանկարչության և քանդակագործության մեջ:

ԱՆԻՄԱԼԻՍՏ [< анималист < ֆր. animaliste < լատ. animal կենդանի], գ. (արվ.): Քանդակագործ, նկարիչ, որը կենդանիներ է կերպավորում:

ԱՆԻՄԱՏՈ [< анимато < իտալ. animato], մկ. (երժշտ.): Ոգևորված, կենսուրախորեն, ոգևորությամբ:

ԱՆԻՄԱՑԻԱ [< анимация < ֆր. animation < լատ. anima կենդանի արարած], գ. 1. (կինո.): Տե՛ս Մուլտիպլիկացիա: 2. (ինֆորմ.): Համակարգչի էկրանին շարժվող առարկաների պատկերում:

ԱՆԻՄԻԶՄ [< анимизм < լատ. anima հոգի], գ. (գիտ.): Ոգեպաշտություն՝ փիլիսոփայական ուսմունք, որ աշխարհի էությունն ու նախահիմքն է համարում ոգին և մատերիայի ճանաչողության հնարավորությունը ժխտելով՝ գիտությունը փոխարինում է հավատով:

ԱՆԻՄԻՍՏ [< анимист < լատ.], գ. (գիտ.): Ոգեպաշտ՝ ոգեպաշտության հետևորդ:

ԱՆԻՈՆՆԵՐ [< анионы < հուն. ana վերև], գ. (ֆիզ.): Բացասական իոններ՝ էլեկտրական դաշտում շարժվում են դեպի անոդը:

ԱՆԻՍՈՆ [< анис < հուն. anison], գ. 1. (բսբ.): Հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս, որի պտուղներից եթերայուղ և ճարպայուղ է ստացվում: Պտուղները և եթերայուղը օգտագործվում են սննդի և օծանելիքի արտադրության մեջ, քուսպը՝ որպես կեր: Հայրենիքը Փոքր Ասիան է: 2. Խնձորի տեսակ:

ԱՆԿԵՏԱ [< ռուս. анкета], գ. (խսկց.): Հարցաթերթիկ՝ որոշ կարգի (կենսագրական, աշխատանքային ևն) տեղեկություններ ստանալու համար տրվող հարցերի թերթ:

ԱՆԿԵՐ [< анкер < գերմ. Anker], գ. (տեխ.): 1. Ժամացույցի աշխատող

կարգավորիչ, խարիսխ: 2. Որմածքի երկաթե պահանգ, որմակար, խարիսխ:

ԱՆԿԻԼՈԶ [< анкилоз < հուն. ankylos անշարժ], գ. (բժշկ.): Հոդի անշարժություն՝ հոդավորող ոսկորների կպումների պատճառով:

ԱՆԿԻԼՈԶԱՎՐ(ԵՐ) [< анкилозавры < հուն. ankylos կեռ + sauros մողես], գ. (գիտ.): Կավճային դարաշրջանի դինոզավրերի տեսակ:

ԱՆԿԼԱՎ [< анклав < ֆր. enclave], գ. Մի պետության հողատարածքի ամբողջական գտնվելը մի այլ պետության մեջ:

ԱՆՇԼԱԳ [< аншлаг < գերմ. Anschlag հայտարարություն], գ. Հայտարարություն թատրոնում, կրկեսում նն, որ բոլոր տոմսերը տվյալ ներկայացման համար վաճառված են:

ԱՆՇԼՅՈՒՍ [< аншлюс < գերմ. Anschluß միացում], գ. (պատմ.): Ավստրիան զավթելու Գերմանիայի քաղաքականությունը: Ժամանակավորապես իրականացվեց հիտլերականների կողմից 1938 թ.:

ԱՆՈԴ [< анод < հուն. anodos վերընթաց ճանապարհ], գ. (ֆիզ.): Դրական լիցքով էլեկտրոդ:

ԱՆՈՄԱԼԻԱ [< аномалия < հուն. anomalia անհարթություն], գ. 1. Անկանոնություն՝ նորմայից, ընդհանուր օրինաչափություններից շեղված: 2. (աստղգ.): Երկնային մարմնի շառավիղ-վեկտորի և նրա ուղեծրի մեծ առանցքի միջև կազմված անկյունը: 3. (կենսբ. բժշկ.): Օրգանիզմի կամ առանձին օրգանների գործունեության և կառուցվածքի շեղումները բնականոն զարգացումից: 4. Մագնիսական անոմալիաներ:

ԱՆՈՆԱ [< аннона < լատ. annona < annus տարի], գ. 1. (պատմ.): Տարեկան բերքը (նաև ցորենի տարեկան պաշարը՝ Հռոմը հացով ապահովելու համար): 2. (դից.): Բերքահավաքի աստվածուհին հին հռոմեական դիցաբանության մեջ:

ԱՆՈՆԻՄԿԱ [< анонимка < հուն. anonymos անանուն], գ. (խսկց.): Ամբաստանագիր՝ անստորագիր նամակ, սովորաբար՝ բողոք:

ԱՆՈՆՍ [< анонс < ֆր. annonce], գ. Ծանուցում, հայտարարություն՝ նախատեսվող հյուրախաղերի՝ համերգների, թատրոնի նն նախնական հայտարարություն:

ԱՆՈՍՄԻԱ [< аносмия < հուն. an + osme հոտ], գ. (բժշկ.): Հոտերի տարբերակման կամ հոտառության բացակայություն:

ԱՆՈՏԱՑԻԱ [< аннотация < լատ. annotatio դիտողություն], գ. Հոդվածի, գրքի բովանդակության, սյուժեի հակիրճ ներկայացումը՝ շարադրանքը: 2. (գրդր.) Ծանոթագրություն:

ԱՆՈՐԹԻՏ [< анортит < հուն. anorthos շեղ], գ. (հնք.): Միներալ պլագիոկլազների խմբից: Սովորաբար պատահում է անկանոն հատիկների ձևով:

ԱՆՈՐԽԻԶՄ [< анорхизм < հուն. an ժխտական ածանց + orchis ձու], գ. (կզմխս.): Մարդու կամ կենդանու մոտ ամորձիների ի ծնե բացակայությունը:

ԱՆՈՐՄԱԼ [< анормальный < ֆր. anormal < հուն. a ժխտական ածանց + լատ. normalis նորմալ], գ. (խսկց.) 1. Ոչ բնական, ոչ նորմալ: 2. Խելագար, գիժ:

ԱՆՈՔՍԵՄԻԱ [< аноксемия < հուն. an ժխտական ածանց + լատ. oxy (genium) թթվածին + հուն. haima արյուն], գ. (բժշկ.): Թթվածնի բացակայությունը արյան մեջ:

ԱՆՈՔՍԻԱ [< аноксия < հուն. an + լատ. oxygenium թթվածին], գ. (կզմխս.): Թթվածնի բացակայություն օրգանիզմում, առանձին օրգաններում, հյուսվածքներում և արյան մեջ: Իսկական, ընդհանուր անոքսիան արագ վրա հասնող մահվան պատճառ է:

ԱՆՈՖԵԼԵՍ [< анофелес < հուն. anopheles վնասակար], գ. (կենդբ.): Մոծակների ցեղ՝ մալարիայի հարուցիչի փոխանցողներ:

ԱՆՈՖԹԱԼՄ [< анофтальм < հուն. an ժխտական ածանց + ophthalmos աչք], գ. (բժշկ.): Մեկ կամ երկու աչքի բացակայությունը:

ԱՆՍԱՄԲԼ [< ансамбль < ֆր. ensemble միասին], գ. 1. Համաձայնեցում՝ որևէ ամբողջության բոլոր մասերի ներդաշնակ միավորում: 2. (թատր.) Համախաղ՝ բեմադրության մասնակիցների կազմը: 3. (երժշտ.): Համույթ՝ երաժշտական ստեղծագործությունը կատարող մասնակիցների կազմը: 4. (ճարտ.): Համակառույց՝ միմյանց կից կառուցված շինությունների ամբողջություն:

ԱՆՏԱԲԼԵՄԵՆՏ [< антаблемент < ֆր. entablement], գ. (ճարտ.): Ախավեղագես՝ դասական ճարտարապետական օրդերի բաղկացուցիչ մաս. սովորաբար նստում է սյուների խոյակների վրա:

ԱՆՏԱԳՈՆԻԶՄ [< антагонизм < հուն. antagonizomai պայքարում եմ ինչ-որ մեկի դեմ], գ. Հակամարտություն՝ անհաշտ հակամարտություն, օր.՝ հարուստների և աղքատների միջև:

ԱՆՏԱԳՈՆԻՍՏ [< анагонист < հուն. antagōnistēs], գ. Հակամարտիկ:

ԱՆՏԱՆՏ(Ա) [< антанта < ֆր. entente համաձայնություն], գ. (պատմ.): Որոշ երկրների միջև կնքված համաձայնություն, պակտ. առանձնապես հայտնի է 1904-1907 թթ. ստեղծված բլոկը՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914-1918 թթ., Անտանտան դիմագրավում էր Գերմանիային և նրա դաշնակիցներին:

ԱՆՏԱՐԿՏԻԿԱ [< Антарктика < հուն. ant(i)…+ arktikos հյուսիսային], գ. Երկրագնդի հարավային բևեռային շրջանը մինչև հարավային լայնության 48°-60°:

ԱՆՏԵՆԱ, ԱՆՏԵՆՆԱ [< антенна < լատ. antenna առագաստակալ], գ. Ալեհավաք, ալեցիր՝ 1. Ալեհավաք կամ ալեցիր օդալարերի համակարգ: 2. Օդալարերն ամրացնելու ձող:

ԱՆՏԻ… [< анти < հուն. anti … հակա …] Նախածանց, որը, գործածվելով բառերում, համապատասխանում է հայերենի հակա… ածանցին:

ԱՆՏԻԲԻՈՏԻԿՆԵՐ [< антибиотики < անտի... + հուն. bios կյանք], գ. (կենսբ.): Կենսաբանական ծագում ունեցող նյութեր, որոնք սինթեզվում են միկրոօրգանիզմների կողմից և ներազդում են այս կամ այն մանրէների զարգացման վրա:

ԱՆՏԻԳԵՆ [< антиген < անտի... + հուն. genos ցեղ, ծագում], գ. Հակածին՝ օրգանական ծագում ունեցող բարձր մոլեկուլային նյութեր, որոնք մարդու և կենդանիների օրգանիզմ ներարկելիս կարող են առաջացնել յուրահատուկ նյութեր՝ հակամարմիններ:

ԱՆՏԻԳԼՈԲԱԼԻԶՄ [< антиглобализм < ֆր. antiglobalisme, անգլ. antiglobalism < անտի... + լատ. globus գունդ], գ. (քղք.): Հակագլոբալիզմ՝ քաղաքական շարժում Եվրոպայում XX դ. վերջում և XXI դ. սկզբում գլոբալիզացիայի (համընդհանրացման) դեմ:

ԱՆՏԻԴԵՊՐԵՍԱՆՏՆԵՐ [< антидепрессанты < անտի... + լատ. dēpressēre սեղմել + ant ածանց], գ. (բժշկ.): Հոգեկան մասնակի կամ լրիվ խանգարման ժամանակ օգտագործվող դեղամիջոցներ:

ԱՆՏԻԴՈՏՆԵՐ [< антидоты < հուն. antidoton հակաթույն], գ. (բժշկ.): Դեղամիջոցներ թունավորման դեմ:

ԱՆՏԻԹԵԶ [< антитезис < ֆր. antithèse < հուն. antithesis հակադրություն], գ.

Հակադրույթ՝ սկզբնական դրույթի ժխտումը զարգացման գործընթացում, թեզին հակադրվող: Հեգելի իդեալիստական դիալեկտիկայի մեջ երկրորդը՝ երեք աստիճանի երրորդությունից (թեզ, անտիթեզ, սինթեզ):

ԱՆՏԻԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼԻԶՄ [< антиинтеллектуализм < անտի... + լատ. intellectus հասկացողություն, գիտակցություն + ism ածանց], գ. (փիլ.): Գիտակցության միջոցով ճշմարտության ճանաչողության ժխտում:

ԱՆՏԻԼՈՊ [< антилоп < ֆր. antilope < լատ. anthalopus], գ. (կենդբ.): Այծքաղ՝ սնամեջ եղջերավորների ընտանիքի որոճող, երկկճղակավոր կաթնասուն կենդանիներ:

ԱՆՏԻԿ [< античный < ֆր. antique < լատ. antiquus հին], ած. 1. Հին, վաղեմի: 2. Հին Հունաստանի և Հռոմի պատմությանն ու մշակույթին վերաբերող: 3. *փխբ.* Բարձրարվեստ:

ԱՆՏԻԿԼԻՆԱԼ [< антиклиналь < անտի... + հուն. klinō կռում եմ, թեքում եմ], գ. (երկրբ.): Անտիկլինալային ծալք, ապարների շերտերի կամարաձև ծալք, որի կենտրոնում շերտերն ավելի հին են, քան թևերում:

ԱՆՏԻԿԼԻՆՈՐԻՈՒՄ [< антиклинориум < անտի... + հուն. klinō + oros բարձրություն], գ. (երկրբ.): Երկրակեղևի խոշոր ու բարդ կառուցվածք ունեցող անտիկլինալային բարձրացում, որի առանցքային մասում մերկանում են հին և սովորաբար խիստ փոխակերպված ապարներ:

ԱՆՏԻԿՈՐ [< антикор < անտի... + լատ. corrosio (ներսից կրծել, մաշել), բառի կրճատ ձևը], գ. (տեխ.): Նյութ, որով պատում են երկաթային մակերևույթը, որպեսզի այն կոռոզիայի չենթարկվի:

ԱՆՏԻԿՎԱՐ [< антиквар < լատ. antiquarius], գ. (խսկց.): 1. Հնավաճառ՝ հին արժեքավոր իրեր՝ գրքեր, նկարներ, արվեստի գործեր վաճառող, նաև հնահավաք, հնագրավաճառ: 2. Հին արժեքավոր իր:

ԱՆՏԻԿՎԱՐԻԱՏ [< антиквариат < գերմ. Antiquariat < լատ. antiquus հնագույն], գ. Հնարժեք իրեր (նկարներ, գրքեր, կահույք են), որոնք գեղարվեստական արժեք ունեն:

ԱՆՏԻՄՈՆԻՏ [< антимонит < ուշ լատ. antimonium ծարիր], գ. (հնք.): Միներալ, ծարիրի սուլֆիդ (ստիբնիտ)՝ ծարիրի ստացման հիմնական հանքանյութը:

ԱՆՏԻՆՈՄԻԱ [< антиномия < հուն. antinomia < anti հակա + nomos օրենք], գ. (փիլ.): Հակաօրինություն՝ հակասություն՝ ներհակություն երկու իրարամերժ օրենքների՝ սկզբունքների՝ կատեգորիաների միջև:

ԱՆՏԻՊԱՏԻԱ [< антипатия < հուն. antipatheia], գ. (խսկց): Հակակրանք՝ մեկին չսիրելու՝ չհամակրելու զգացմունք, մեկի նկատմամբ հակառակ տրամադրվածություն:

ԱՆՏԻՊԵՐՍՊԻՐԱՆՏ [< антиперспирант < անգլ. antiperspirant < անտի... + perspiration քրտինք], գ. (բժշկ.): Միջոցներ քրտնարտադրության դեմ:

ԱՆՏԻՊԻՐԵՆ [< антипирен < անտի... + հուն. pyr կրակ], գ. (տեխ.): Հակաբոցավառիչ միջոց. կանխարգելում է այրվող նյութերի բոցավառումը:

ԱՆՏԻՊԻՐԵՏԻԿՆԵՐ [< антипиретики < անտի... + հուն. pyretos ջերմ, տենդ], գ. (բժշկ.): Ջերմիջեցնող միջոցներ (դեղեր):

ԱՆՏԻՊՈԴՆԵՐ [< антиподы < հուն. antipodes հակոտնյա], գ. 1. (կենսբ.): Բջիջներ, որոնք տեղադրված են ծածկասերմ բույսերի սաղմազարկի ծայրում գտնվող թվաբջջային ապարատի հակառակ բևեռում: 2. Որևէ մեկին հակառակորդ (գաղափարներով ճաշակով են):

ԱՆՏԻՍԵՄԻՏ [< антисемит < ֆր. anti-Semite < անտի... + Sēm Սեմ՝ Նոյի որդին], գ. (քղք.): Հրեատյաց:

ԱՆՏԻՍԵՄԻՏԻԶՄ [< антисемитизм < ֆր. antisémitisme < անտի... + sémitque հրեական], գ. (քղք.): Հրեատյացություն:

ԱՆՏԻՍԵՊՏԻԿՆԵՐ [< антисептики < ֆր. antiseptique < անտի... + հուն. septikos նեխիչ], գ. (բժշկ.): Հականեխիչ միջոցներ:

ԱՆՏԻՍՊԱՍՏ [< антиспаст < հուն. antispastos կաղ], գ. (տղչփ.): Տաղաչափական հասկացություն. բանաստեղծական ոտք: Անտիկ տաղաչափության մեջ բաղկացած էր եզրային երկու կարճ և նրանց միջև գտնվող երկու երկար վանկերից:

ԱՆՏԻՑԻԿԼՈՆ [< антициклон < անտի...+ հուն. kyklon պտտվող], գ. (օդերև.): Մթնոլորտի բարձր ճնշման մարզ, ուր կա օդի շրջանաձև շարժում, Հյուսիսային կիսագնդում՝ ժամացույցի սլաքի, Հարավայինում՝ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:

ԱՆՏԻՖՈՆ [< антифон < հուն. antiphonos ի պատասխան հնչող], գ. (երժշտ.): Երկձայն երգեցողության ձև, երբ փոխնիփոխ, մեկը մյուսին պատասխանելով՝ երգում են երկու երգիչ, երգիչ և երգչախումբ, երկու երգչախումբ:

ԱՆՏԻՖՐԱԶԻՍ [< антифразис < հուն. antiphrasis], գ. (լեզվբ.): Արտահայտության ձև, որով ասվում է հակառակը այն բանի, ինչ մտածվում է տվյալ առարկայի, երևույթի մասին (օր.՝ «Շա՜տ խելոք բան ասացիր»՝ «հիմար բան է ասածդ»-ի փոխարեն):

ԱՆՏԻՖՐԻԶ [< антифриз < անգլ. antifreeze < freeze սառչել], գ. Հակասառուցիչ՝ նյութ, որն իջեցնում է հեղուկի սառչելու աստիճանը. լցվում է մեքենայի հովացուցիչի մեջ:

ԱՆՏՈՆԻՄ [< антоним < անտի... + հուն. onoma անուն], գ. (հնց.): Հականիշ՝ իրար հակառակ իմաստներ ունեցող բառեր՝ օր.՝ մեծ - փոքր, լայն – նեղ:

ԱՆՏՈՆԻՄԻԱ [< антонимия < անտի... + հուն. ōnyma անուն], գ. (լեզվբ.): Հականիշ բառերի ամբողջությունը և ուսումնքը դրանց մասին՝ որպես բառագիտության բաժիններից մեկը:

ԱՆՏՈՆՈՎԿԱ [< рուս. антоновка < рուս. ազգանուն Антонов], գ. (բսբ.): Խնձորի տեսակ (դեղնակարմիր մեծ պտուղներով):

ԱՆՏՈՑԻԱՆՆԵՐ [< антоцианы < հուն. anthos ծաղիկ + kyanos լազուր, կապույտ], գ. (բսբ.): Բույսերը գունավորող գլյուկոզիդային բնույթի պիգմենտներ:

ԱՆՏՐԱԿՏ [< антракт < ֆր. entr'acte (entre) միջև], գ. (հնց.): Ընդմիջում՝ բեմադրության, համերգի հատվածների միջև ընկած ընդմիջում:

ԱՆՏՐԱՇԱ [< антраша < ֆր. entrechat], գ. (արվ.): Բալետային պարային թռիչք՝ օդում ոտքերի արագ փոփոխմամբ:

ԱՆՏՐԱՑԵՆ [< антрацен < հուն. anthrax (anthrakos) ածուխ], գ. (քիմ.): Բյուրեղային ածխաջրածին, որն ստացվում է քարածխից և օգտագործվում է ներկեր պատրաստելու համար:

ԱՆՏՐԱՑԻՏ [< антрацит < հուն. anthrax ածուխ], գ. (հնք.): Սև, փայլող, պինդ ածուխ, որը պարունակում է 89.5-96.5 % ածխածին, արձակում է 7800-8350 կալորիա ջերմություն, վառվում է թույլ բոցով, համարյա անծուխ:

ԱՆՏՐԵ [< антре < ֆր. entrée մուտք, ելույթ], գ. (արվ.): 1. Բալետում՝ պարողի կամ պարողների պարային մուտք: 2. Կրկեսում՝ ծաղրածուական ծիծաղաշարժ կամ մնջկատակային համար:

ԱՆՏՐԵԿՈՏ [< антрекот < ֆր. entrecôte], գ. (խսկց.): Տավարի միջկողային մաս, նաև այդ մսից կոտլետ, թակովի կողամիս:

ԱՆՏՐԵՊՐԵՆՅՈՐ [< антепренер < ֆր. entrepreneur ձեռնարկու], գ. Մասնավոր

հանդիսադիր ձեռնարկության (թատրոնի, կրկեսի ևն) տեր, վարձակալ, տնօրեն, նաև խմբի կազմակերպիչ:

ԱՆՏՐԵՍՈԼ [< антресоль < ֆր. entresol], գ. Միջահարկ՝ 1. Շենքի վերին ցածր հարկ: 2. Շենքի վերին մասը, որը բաժանված է երկու կիսահարկի: 3. Շինություն առաստաղին կից՝ իրեր պահելու համար:

ԱՆՏՈՒՐԱԺ [< антураж < ֆր. entourage < entourer շրջապատել], գ. (գիտ. հնց.): Շրջապատ, միջավայր:

ԱՆՈՒԼՅԱՑԻԱ [< аннуляция < լատ. annullare ոչնչացնել], գ. Անվավեր դարձնելը, չեղյալ հայտարարելը, վերացում:

ԱՆՖԻԼԱԴ [< анфилада < ֆր. enfilade], գ. (ճարտ.): 1. Սենեկաշար, սրահաշար, հաջորդականորեն կից սենյակների շարք, որոնց դռների բացվածքները դասավորված են միևնույն առանցքով և բաց վիճակում երևում է բոլոր ինտերիերների միջանցուկ հեռապատկերը: Սա բնորոշ է բարրոկկոյի և կլասիցիզմի ոճի պալատներին ու XIX-XX դդ. թանգարանային շենքերին: 2. (ռազմ.): Տողահարություն, ճակատի երկայնքով գնդակոծում:

ԱՇՈՒՂ [< ашуг < թուրք. ašyk < սիրահար], գ. Ժողովրդական բանաստեղծ - երգիչ (Կովկասում):

ԱՈՐԻՍՏ [< аорист < հուն. aoristos], գ. (լեզվբ.): Բայական ձև, որն արտահայտում է անցյալ գործողություն՝ առանց կերպը ցույց տալու:

ԱՈՐՏԱ [< аорта < հուն. aorthē], գ. (կզմխս.): Մայր զարկերակ, որը անոթներով արյուն է մատակարարում մարմնի բոլոր մասերին՝ բացի թոքերից:

ԱՊԱՇ [< апаш < ֆր. apache հնդկացիների ապաչի ցեղի անունից], գ. (հզվդ.): 1. Տղամարդու վերնաշապիկի տեսակ՝ բաց՝ լայն օձիքով: 2. Ֆրանսիայում՝ գող, խուժան:

ԱՊԱՍԻՈՆԱՏ [< аппассионата < իտլ. appassionato], գ. (երժշտ.): Կրքով, հուզմունքով, մեծ ոգևորությամբ կատարվող երաժշտական ստեղծագործություն:

ԱՊԱՏԻԱ [< апатия < հուն. apatheia անզգայություն], գ. Հոգեկան անտարբերության հիվանդագին վիճակ, հուլություն:

ԱՊԱՏՈԶԱՎՐ < апатозавр < հուն. apatē սուտ + ...զավր], գ. (հնէաբ.): Տե՛ս Բրոնտոզավր:

ԱՊԱՏԻՏ [< апатит < հուն. Apatē խաբված լինել, այդպես է անվանվել, քանի որ հաճախ շփոթել են այլ միներալների հետ], գ. (հնք.): Միներալ, կալցիումի ֆոսֆորաթթվային աղ. պարունակում է փոփոխական քանակությամբ ֆտոր և քլոր: Օգտագործվում է արհեստական պարարտանյութ, ֆոսֆոր և ֆոսֆորային միացություններ ստանալու համար, սև և գունավոր մետալուրգիայում, ապակու արդյունաբերության մեջ են:

ԱՊԱՏՐԻԴՆԵՐ [< апатриды < հուն. a ժխտական մասնիկ + patris (patridos) հայրենիք], գ. Քաղաքացիություն չունեցող մարդիկ՝ հայրենազուրկներ:

ԱՊԱՐԱՏ [< аппарат < լատ. apparatus], գ. (հնց.): 1. Սարք, հարմարանք, գործիք: 2. Հիմնարկություն կամ նրա կազմը, որ սպասարկում է տնտեսության կամ պետական կառույցի որևէ ճյուղը: 3. Մարդու, կենդանու, բույսի օրգանների ամբողջությունը, որոնք միասին ունեն մեկ գործառույթ, օր.՝ շնչառական ապարատ:

ԱՊԱՐԱՏՈՒՐԱ [< аппаратура < լատ. apparatus], գ. Որևէ աշխատանքի ծառայող ապարատների ամբողջությունը:

ԱՊԱՐՏԱՄԵՆՏ [< апартамент < ֆր. appartement բնակարան], գ. (խսկց.): Մեծ, շքեղ բնակարան:

ԱՊԱՐՏԵԻԴ [< апартейд < աֆրիկանս (բուրերեն) apartheid անջատ բնակություն], գ. (քղք.): Ռասայական բաժանման՝ խտրականության քաղաքականություն. ամենասուր ձևով արտահայտվել է ՀԱՀ-ում աֆրիկացիների և հնդիկների նկատմամբ:

ԱՊԵԼՅԱՆՏ [< апеллянт < գերմ. Appellant], գ. (իրավք.): Բողոքարկու:

ԱՊԵԼՅԱՑԻԱ [< апелляция < լատ. appellatio դիմում, բողոք], գ. (հնց.): Բողոքարկում, գանգատարկում՝ որևէ որոշման բողոքարկում ավելի բարձր օրգանում, որն իրավունք ունի փոխելու կայացված որոշումը:

ԱՊԵԼՍԻՆ [< апельсин < գերմ. Apfelsine չինական խնձոր], գ. (բսբ.): Նարինջ (ծառը և պտուղը):

ԱՊԵՆԴԻԿՈՒԼՅԱՐԻԱՆԵՐ [< аппендикулярий < լատ. appendiculariae], գ. (կենդբ.): Քորդավորների տիպի թրթուրաքորդավորների ենթատիպի կենդանիների դաս: Մարմինը կազմված է իրանից և պոչից, որտեղ, ի տարբերություն մնացած թրթուրաքորդավորների, ամբողջ կյանքի ընթացքում պահպանվում է քորդան:

ԱՊԵՆԴԻՑԻՏ [< аппендицит < լատ. appendix (appendicis) հավելուկ], գ. (բժշկ.): Կույր աղիքի որդանման ելուստի բորբոքում:

ԱՊԵՆԴԻՔՍ [< аппендикс < լատ.], գ. (կզմխս.) Կույր աղիքի որդանման ելուստ:

ԱՊԵՏԻՏ [< аппетит < լատ. appetitus հակում, ցանկություն, ձգտում], գ. (հնց.): 1. Ախորժակ՝ ուտելու ցանկություն: 2. Մեծ ցանկություն, ինչ-որ բանի ձգտում:

ԱՊԵՐԿՈՏ [< апперкот, апперкет < անգլ. uppercut], գ. (սպորտ.): Ներքևից ծնոտին կամ իրանին հակառակորդին հարված բռնցքամարտում:

ԱՊԵՐՏՈՒՐԱ [< апертура < լատ. apertura անցք], գ. 1. (ֆիզ.): Օպտիկական սարքի գործող կտրվածք, բնութագրվում է ոսպնյակների չափերով կամ դիաֆրագմաներով: 2. Անտենայի բաղադրիչ մաս:

ԱՊԵՔՍ [< апекс < լատ. apex գագաթ], գ. (աստղգ.): Երկնոլորտի կետ, որի ուղղությամբ շարժվում է Արեգակը կամ Երկիրը (գտնվում է Հերակլեսի համաստեղության մեջ):

ԱՊԻԹԵՐԱՊԻԱ [< апитерапия < լատ. apis մեղու + հուն. therapeia], գ. (բժշկ.): Մեղվի թույնի օգտագործումը բուժական նպատակով:

ԱՊԻՍ [< Апис < հուն. Apis], գ. (դից.): Հին եգիպտացիների սրբազան ցուլը:

ԱՊԼԱԶԻԱ [< аплазия < ֆր. aplasie < հուն. a ժխտական ածանց + plasis կազմավորում], գ. (բժշկ.): Մարմնի որևէ մասի ի ծնե բացակայությունը:

ԱՊԼԻԿԱՏ [< аппликата < լատ. applicatus կցված], գ. Կետի դեկարտյան կոորդինատներից մեկը տարածության մեջ:

ԱՊԼԻԿԱՑԻԱ [< аппликация < գերմ. Applikation < լատ. applicatio դասավորել], գ. (արվ.): 1. Պատկեր, որը ստացվում է գունավոր թղթերի ևն կտորները համապատասխան դասավորությամբ գործվածքի, թղթի ևն վրա սոսնձելուց կամ ամրացնելուց: 2. Այդպիսի պատկեր ստանալու եղանակը:

ԱՊԼԻՏ [< аплит < հուն. haploos հասարակ], գ. (հնք.): Բաց գույնի մագմատիկ ապար՝ բաղկացած դաշտային սպաթի և քվարցի տձև հատիկներից:

ԱՊԼՈՄԲ I [< апломб < ֆր. aplomb հավասարակշռություն], գ. (գիտ.): Չափից դուրս ինքնավստահություն անձի պահվածքում՝ խոսքում:

ԱՊԼՈՄԲ II [< апломб < ֆր.], գ. (արվ.): Պարի ժամանակ պարողի հավասարակշռված և ինքնավստահ կատարումը:

ԱՊՈԳԱՄԻԱ [< апогамия < հուն. apo առանց + gamos ամուսնություն], գ. (բսբ.): Բույսերի բազմացման եղանակ, երբ սաղմն առաջանում է առանց բեղմնավորման,

ոչ թե ձվաբջջից, այլ սեռական սերնդի՝ իգական գամետոֆիտի այլ բջիջներից:

ԱՊՈԳԵՅ [< апогей < հուն. apogeion երկրից հեռու գտնվող], գ. (հնց.): Հեռակետ, գագաթակետ՝ 1. Լուսնի ուղեծրի կետը, որն ամենահեռացվածն է Երկրից: 2. Ամենաբարձր աստիճանը, ամենածաղկուն աստիճանը:

ԱՊՈԶԻՑԻԱ [< аппозиция < գերմ. Apposition < լատ. appositio վերադիր], գ. (լեզվբ.): Գոյական որոշիչ՝ որոշիչ, որն արտահայտված է գոյականով (օր.՝ *զորավար* Վարդան, *ծաղիկ* հասակ):

ԱՊՈԹԵՈԶ [< апофеоз < հուն. apotheosis], գ. 1. Ինչ-որ անձի (դեպքի, երևույթի) մեծարում, աստվածացում: 2. Որոշ թատերական ներկայացումների վերջին հանդիսավոր պատկերը:

ԱՊՈԼԻԴ [< аполид < հուն. a ժխտական ածանց + polis (polidos) քաղաք, երկիր, պետություն], գ. (իրավբ.): Տե՛ս Ապատրիդ(ներ):

ԱՊՈԼՈԳ [< аполог < հուն. apologos առակ], գ. (գրկն.): Առակ, այլաբանական-խրատական (նաև չափածո) ստեղծագործություն:

ԱՊՈԼՈԳԻԱ [< апология < հուն. apologia], գ. Ջատագովություն՝ ինչ-որ անձի կամ երևույթի պաշտպանություն, մեծարում:

ԱՊՈԼՈՆ [< аполлон < հուն. Apollon], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ արևի աստվածը, մշակույթի հովանավորը (այլ անունով՝ Ֆեբոս): 2. Շատ գեղեցիկ տղամարդ: 3. (աստղգ.): Մեկը բազմաթիվ մանր մոլորակներից, որը գտնվում է Երկրից 5 մլն. կմ հեռավորության վրա:

ԱՊՈԿԱԼԻՊՍԻՍ [< апокалипсис < հուն. apokalypsis], գ. Հայտնություն՝ նոր կտակարանի գրքերից մեկը, քրիստոնեության՝ մեզ հասած հնագույն գրական ստեղծագործությունը, որը պարունակում է առեղծվածային պատմություններ մարդու և Երկրի ճակատագրի մասին, աշխարհի վերջի կանխագուշակումներ:

ԱՊՈԿՈՊԱ [< апокопа < հուն. apokopē հատում], գ. (լեզվբ.): Վերջատում՝ արտասանվածքում բառավերջի հնչյունի կամ որոշ հնչյունների բացթողում (օր.՝ ռուս. почтамп>почтам):

ԱՊՈԿՐԻՖՆԵՐ [< апокрифы < հուն. apokryphos գաղտնի, ծածուկ], գ. Պարականոն գրվածք, անվավեր գիրք՝ 1. (կրոն.): Սրբազան համարված, բայց ոչ պաշտամունքային գրվածքներ, որոնք գաղտնի պահվում էին մեհյաններում, եկեղեցական կանոնի մեջ չընդգրկված գրքեր: 2. Գրվածք, որի ենթադրյալ հեղինակը հաստատված չէ:

ԱՊՈՄԻՔՍԻՍ [< апомиксис < հուն. apo առանց + mixis խառնում], գ. (բսբ.): Բույսերի և կենդանիների անսեռ բազմացման եղանակ:

ԱՊՈՄՈՐՖԻՆ [< апоморфин < հուն. apo առանց + հատուկ անուն Morpheios], գ. (դեղգրծ.): Փխսման կենտրոնն ընտրողաբար դրդող դեղանյութ: Օգտագործվում է ստամոքսաղիքային թունավորումների և քրոնիկական ալկոհոլամոլության դեպքերում:

ԱՊՈՍՏԵՐԻՈՐԻ [< апостериори < լատ. a posteriori հետևյալից], գ. Հետփորձականորեն՝ փորձին հաջորդող, փորձից բխող, փորձով պայմանավորված գիտելիք, հասկացություն: Սրան հակադիր է ապրիորին:

ԱՊՈՍՏՈԼ [< апостол < հուն. apostolis առաքյալ], գ. (կրոն.): 1. Առաքյալ, քարոզիչ: 2. *փխբ.* Որևէ գաղափարի կամ ուսմունքի ջատագով, քարոզիչ, առաքյալ:

ԱՊՈՍՏՐՈՖ [< апостроф < հուն. apostrophos դեպի հետ և կողք ուղղված], գ. (հնց.): Ապաթարց՝ տողից վերև դրվող նշան, որը նման է ստորակետի: Փոխարինում է ձայնավորին, օր.՝ Жанна д' Арк (де Арк), Ժաննա դ' Արկ, he's անգլ.՝ նաև պատկանելություն՝ boy's:

ԱՊՈՍՏՐՈՖԱ [< апострофа < հուն. apostrophē], գ. (լեզվբ): Հռետորական դիմում, որն ուղղվում է (հաճախ անսպասելի) լսողին կամ կարդացողին, երևակայական որևէ անձի կամ անշունչ առարկայի:

ԱՊՈՐԻԱ [< апория < հուն. aporia դժվարություն, տարակուսանք], գ. (փիլ.): Տերմին, որ հին հունական փիլիսոփայության մեջ նշանակում է տրամաբանորեն դժվար լուծելի կամ անլուծելի պրոբլեմ: Առավել հայտնի են Զենոն Էլեացու ապորիաները, որոնցով նա փորձում է հիմնավորել անհնարինությունը:

ԱՊՈՖԵՐՄԵՆՏ [< апофермент < հուն. apo (ինչ-որ բանից) + լատ. fermentum], գ.(կենսբ.): Ֆերմենտների սպիտակուցային մաս:

ԱՊՏԵԿԱ [< аптека < հուն. apotheke պահեստ], գ. (խսկց.): Դեղատուն՝ դեղերի և բժշկական այլ ապրանքների պատրաստման, պահպանման և վաճառքի հաստատություն:

ԱՊՐԱՔՍԻԱ [< апраксия < հուն. apraxia անգործություն], գ. (բժշկ.): Գլխուղեղի կեղևի վերին բաժինների խեղման հետևանքով նպատակամիտված շարժումներ կատարելու ունակության կորուստ:

ԱՊՐԵՏԱՎՈՐՈՒՄ [< аппретирование < ֆր. appreter վերջնականապես մշակել], գ. Գործվածքների վերջնամշակման հիմնական գործողություններից մեկը. դրանց քսածածկումը կամ տոգորումը լուծույթներով՝ ապրետներով:

ԱՊՐԻԼ [< апрель < լատ. Aprīlis], գ. Ապրիլ՝ տարվա չորրորդ ամիսը:

ԱՊՐԻՈՐԻ [< априори < լատ. a priori ի սկզբանե], ած. (փիլ.): 1. Փորձից անկախ, փորձի ու պրակտիկայի վրա չհիմնված (իմացության տեսության իդեալիստական ընբռնում՝ Լայբնից, Կանտ): 2. Կանխակալ, նախապես ենթադրվող՝ որոշվող:

ԱՊՐՈԲԱՑԻԱ [< апробация < լատ. approbatio հավանություն տալ], գ. 1. Հավանություն՝ հաստատում: 2. (գղտնտ.): Փորձորոշում՝ սորտային ցանքերի և պտղատու տնկարկների հետազոտում՝ սորտի իսկությունը հաստատելու, դրա և բերքի որակը որոշելու, ինչպես նաև սերմնաբուծության կանոնների կատարումն ստուգելու համար:

ԱՊՐՈՊՐԻԱՑԻԱ [< апроприация < լատ. appropriatio], գ. (հնց.): Հափշտակում, յուրացում, զավթում:

ԱՋԻԿԱ [< аджика < վրաց. adzhika], գ. (խոհր.): Պղպեղով, սխտորով ևն պատրաստված կծու համեմունք:

ԱՌԻԹՄԻԱ [< аритмия < հուն. arrhythmia], գ. (կզմխս.): Սրտի գործունեության խանգարում, որի դեպքում փոխվում է սրտի կծկումների հաճախականությունը կամ հերթականությունը:

ԱՌԼԵԿԻՆ [< арлекин < իտալ. arlecchino], գ. 1. Իտալական ժողովրդական կատակերգության գործող անձ: 2. Խեղկատակ, ծաղրածու:

ԱՍ [< ас < ֆր. as տուզ, մեկանոց], գ. 1. (ռազմ.): Ռազմական (կործանիչ) ինքնաթիռի օդաչու, որը մեծ վարպետության է հասել պատերազմի ժամանակ. որոշակի թվով հակառակորդի ինքնաթիռներ է ոչնչացրել: 2. (խսկց.): Հմուտ, բարձրակարգ վարպետ:

ԱՍԱՄԲԼԵԱ [< ассамблея < ֆր. assemblée հավաքույթ], գ. (քղք.): 1. (պատմ.): Պետրոս Մեծի ժամանակ կազմակերպվող հանրահավաքներ: 2. Միջազգային որևէ կազմակերպության անդամների ընդհանուր ժողով. ՄԱԿ-ի ասամբլեա:

ԱՍԱՄԲԼՅԱԺ [< ассамбляж < ֆր. assemblege], գ. (գիտ.): Գինեգործության մեջ՝ կուպաժին նախորդող գործողություն:

ԱՍԵՆԻԶԱՑԻԱ [< ассенизация < ֆր. assainissement առողջացում], գ. (տեխ.): Սանիտարական միջոցառումների համակարգ՝ աղբահանությունը կազմակերպելու և ջրատարների մաքրությունը ապահովելու համար:

ԱՍԵՍՈՐ [< ассесор < լատ. assesor ատենակալ], գ. (պատմ.): Հին Հռոմում, միջնադարյան Եվրոպայի և արդի մի շարք պետություններում վարչակազմի ներկայացուցիչ, որն օժտված է դատական իշխանությամբ՝ պրետորի օգնական: 2. Նախահեղափոխական Ռուսաստանում կոլեգիական ասեսորը ութերորդ դասի քաղաքացիական աստիճան էր:

ԱՍԹԵՆԻԱ [< астения < հուն. astheneia թուլություն], գ. (բժշկ.): Անուժակություն (մարմնի ամբողջական ուժազրկում ներքին օրգանների հիվանդության, վարակի ևն պատճառով):

ԱՍԹԵՆՈՍՖԵՐԱ [< астеносфера < հուն. asthenes թույլ + sphaira գունդ], գ. (գիտ): Գուտենբերգի շերտ, ալիքատար, ցածր կարծրության միջնախավ Երկրի մանթիայի վերին մասում, սովորաբար 50-200 կմ խորությունների վրա:

ԱՍԹՄԱ [< астма < հուն. astma], գ. (բժշկ.): Շնչարգելք, որը կապված է սրտի որոշ հիվանդությունների հետ, կա նաև բրոնխային ցնցուղային ասթմա:

ԱՍԻԱ [< Азия < հուն. Asia, հավանաբար ասուրական asu- արևելք, արևածագ բառից], գ. Ամենամեծ աշխարհամասը, Եվրասիա մայրցամաքի մասը:

ԱՍԻԳՆԱՑԻԱ [< ассигнация < ֆր. assignat եզ. թիվ], գ. 1. (պատմ.): Թղթադրամներ, որոնք շրջանառության մեջ են եղել Ռուսաստանում 1769-1849 թթ., որից հետո գործածվել են արծաթադրամները: 2. Հատկացում՝ հատկացված գումար:

ԱՍԻԶՆԵՐ [< ассизы < ուշ լատ. assisae նիստ], գ. 1. (պատմ.): Միջնադարյան Անգլիայում գերագույն դատարանի արտագնաց նստաշրջաններ երդվյալ ատենակալների մասնակցությամբ: 2. (պատմ.): Միջնադարում Արևմտյան Եվրոպայի երկրներում ասիզներ ասելով հասկանում էին նիստեր, ժողովներ, ավելի ուշ՝ դրանցում ընդունված որոշումներ և այդ որոշումներով ստեղծված հաստատություններ: 3. Ֆրանսիայի դեպարտամենտներում դատարաններ (երդվյալ ատենակալներով), որոնք վճռում են առավել ծանր քրեական գործեր:

ԱՍԻՄԵՏՐԻԱ [< асимметрия < հուն. asymmetria անհամաչափություն], գ. Անհամաչափություն, անզուգաչափություն, սիմետրիայի բացակայություն:

ԱՍԻՄԻԼՅԱՑԻԱ [< ассимиляция < լատ. assimilatio յուրացում, նույնացում], գ. 1. (լեզվբ.): Առնմանում՝ հնչյունաշարքում մի հնչյունի ազդեցությամբ մյուսի նմանեցումը կամ նույնացումը, օր.՝ անբասիր > ամբասիր, բոկիկ > բոբիկ: 2. (քղք.): Ձուլում՝ պետական քաղաքականություն՝ մեկ ժողովուրդ մի ուրիշի մեջ ձուլումը: 3. (կենսբ.): Անաբոլիզմ՝ բուսական և կենդանական օրգանիզմների արտաքին միջավայրից ընդունած պարզ տարրերի յուրացումը և փոխակերպումը ավելի բարդ նյութերի:

ԱՍԻՄՊՏՈՏ [< асимптота < հուն. asymptotos չհամընկնող], գ. (երկրչ.): Ուղիղ, որին անվերջորեն մոտենում է կորը իր անվերջ ճյուղով:

ԱՍԻՍՏԵՆՏ [< ассистент < լատ. assistens (assistentis) ներկա գտնվող, օգնող], գ. Ընթերակա՝ 1. Պրոֆեսորի օգնական, որն անցկացնում է գործնական պարապմունքներ, բուհի կրտսեր աշխատող: 2. Բժշկի օգնական, որը հետևում է հիվանդության զարգացմանը, օգնում է վիրաբույժին վիրահատության ժամանակ ևն: 3. (ռազմ.) Ձույգ պատվո պահակներ, որոնք ուղեկցում են դրոշակակրին:

ԱՍԿԱՐԻԴՆԵՐ [< аскариды < հուն. askarides], գ. (կենդբ.): Կլոր որդերի ընտանիք: Մարդկանց և ողնաշարավոր կենդանիների աղիքների (հազվադեպ թոքերի,

լյարդի) մակաբույծներ, որոնք առաջացնում են ասկարիդոզ հիվանդությունը:

ԱՍԿԱՐԻԴՈԶ [< аскаридоз < հուն.], գ. (բժշկ.): Մարդկանց և կենդանիների ճիճվային հիվանդություն: Հարուցիչները կլոր որդերի դասի ասկարիդներն են:

ԱՍԿԵՏ [< аскет < հուն. asketes որևէ բանում վարժվող, ճգնավոր], գ. 1. (կրոն.): Նա, ով հրաժարվել է աշխարհից ու նրա վայելքներից և իր անձը ենթարկում է զրկանքների, մենակյաց, անապատական: 2. (կրոն.): Նահատակ, մարտիրոս: 3. *փխբ.* Ամբողջապես մտավոր աշխատանքին նվիրված և առօրյա կյանքից մեկուսացած անձ: 4. (կրոն.): Ընդհանրապես՝ աշխարհի չարիքների, սատանայի գայթակղությունների դեմ կռվող:

ԱՍԿԵՏԻԶՄ [< аскетизм < հուն.], գ. 1. (կրոն.): Ճգնավորություն, ճգնավոր լինելը, ճգնավորի կյանքը: 2. Ապրելաձև, որի դեպքում մարդը կամավոր ճնշում է իր հոգևոր ու մարմնական պահանջմունքները, հանձն է առնում նույնիսկ տառապել կրոնական կամ բարոյական «կատարելության» հասնելու համար:

ԱՍԿՅԱՐ [< аскер < թուրք. asker], գ. (ռազմ.): Թուրք զինվոր:

ԱՍԿՈՐԲԻՆԱԹԹՈՒ [< аскорбиновая кислота < հուն. a ժխտական մասնիկ + scorbutus լնդախտ], գ. (գիտ.): Վիտամին C, հակալնդախտային վիտամին:

ԱՍՈՆԱՆՍ [< ассонанс < ֆր. assonance], գ. 1. (գրկն.): Առձայնություն՝ նույն կամ նմանահունչ ձայնավորների կրկնությունը բանաստեղծական տողի կամ տան մեջ: 2. Թերահանգ: 3. Նմանահնչություն, նմանաձայնություն, հնչյունների տոնային նմանություն:

ԱՍՈՇԻԵՅԴԵՏ ՊՐԵՍ [< Ассошиейдет Пресс < անգլ. Associated Press], գ. ԱՄՆ-ի խոշորագույն տեղեկատու գործակալություններից, հիմնվել է 1848 թ.: Ղեկավարման ապարատը կենտրոնացած է Նյու Յորքում:

ԱՍՈՐՏԻ [< ассорти < ֆր. assorti լավ ընտրված], գ. Հավաքածու, ընտրանի՝ ինչ-որ բանի հատուկ ընտրված հավաքական ամբողջություն:

ԱՍՈՐՏԻՄԵՆՏ [< ассортимент < ֆր. assortiment], գ. Նմուշանք, տեսականի՝ զանազան ապրանքների կամ ապրանքի զանազան տեսակների հավաքածու կամ դրանց ընդգրկումը՝ քանակը՝ ցանկը:

ԱՍՈՑԻԱՑԻԱ [< ассоциация < լատ. associatio միացում], գ. 1. Միություն, ընկերություն՝ կազմակերպությունների, անձերի միության քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական, գաղափարական նն բնագավառներում ինչ-որ նպատակների հասնելու համար: 2. (քիմ.): Միացություն՝ քիմիական երևույթ, որի ժամանակ մոլեկուլները կրկնապատկվում, եռապատկվում են: 3 (հոգեբ.) Զուգորդում՝ երկու կամ ավելի հոգեբանական գոյացությունների միջև որոշակի պայմաններում առաջացած կապ (զգայություններ, ընկալում, մտապատկերներ նն):

ԱՍՊԱՐԱԳԻՆԱԹԹՈՒ [< аспарагиновая кислота], գ. (գիտ.): Ծնեբեկաթթու, ամինաթթու՝ որոշակի քանակությամբ պարունակվում է բուսական, կենդանական սպիտակուցներում:

ԱՍՊԱՐԱԳՈՒՍ [< аспарагус < լատ. asparagus], գ. (բսբ.): Ծնեբեկ՝ շուշանազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս, որի դալար ցողունը օգտագործվում է իբրև բանջար:

ԱՍՊԵԿՏ [< аспект < լատ. aspectus հայացք, տեսակ], գ. 1. Տեսանկյուն, տեսակետ, առում, հայեցակետ. ըստ որի քննվում է առարկան, երևույթը, հասկացությունը ևն: 2. (բսբ.): Տեսույթ՝ բույսերի, բուսականության ժամանակավոր տեսք: 3. (լեզվբ. հնց.): Կերպ՝ բայի գործողության վիճակն արտահայտող քերականական կարգ:

ԱՍՊԵԿՏՈԼՈԳԻԱ [< аспектология < լատ. aspectus կերպ + հուն. logōs գիտություն], գ. (լեզվբ.): Կերպաբանություն, կերպագիտություն՝ լեզվաբանության բաժին, որը զբաղվում է բայի կերպերի և դրանց իմաստների ուսումնասիրությամբ:

ԱՍՊԵՐԳԻԼ(ԻՈՉ) [< аспергилл < լատ. Aspergillum], գ. (բժշկ.): Թռչունների, ավելի քիչ գյուղատնտեսական մյուս կենդանիների և մարդկանց վարակիչ հիվանդություն, որը բնորոշվում է շնչառական օրգանների և լորձաթաղանթների ախտահարմամբ: Հարուցիչը քիմիական և ֆիզիկական ազդակների նկատմամբ դիմացկուն բորբոքասունկն է (Aspergillus fumigatus):

ԱՍՊԻԴՆԵՐ [< аспиды < հուն. aspis (aspidos) թունավոր օձ], գ. (կենդբ.): 1. Թունավոր օձերի ընտանիք, որը տարածված է Ավստրալիայում, Հարավային Ասիայում, Աֆրիկայում, Ամերիկայի արևադարձային և մերձարևադարձային շրջաններում: 2. *փխբ.* Չար, նենգ մարդ:

ԱՍՊԻՐԱՆՏ [< аспирант < լատ. aspirans (aspirantis) ձգտող], գ. Ասպիրանտուրայում սովորող անձ:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ [< аспирантура < լատ.], գ. 1. Գիտամանկավարժական կադրերի պատրաստման հիմնական ձև բուհում և գիտահետազոտական ինստիտուտում: 2. Տվյալ հաստատությանը կից ասպիրանտների պատրաստումով զբաղվող բաժինը: 3. (հվք.): Ասպիրանտների կազմը:

ԱՍՊԻՐԱՏ [< аспират < լատ. aspiratio], ած. (լեզվբ. հնց.): Շնչեղ բաղաձայններ (փ, թ, ք, ց, չ):

ԱՍՊԻՐԱՏՈՐ [< аспиратор < լատ. aspirare փչել, արտաշնչել], գ. 1. (տեխ.): Սարք՝ ներծծմամբ գազերից նմուշ վերցնելու համար: 2. (բժշկ.): Սարք՝ վերքերից, օրգանիզմի փակ և բաց խոռոչներից, ինչպես նաև մի շարք փափուկ ուռուցքներից հեղուկների արտածծման համար՝ բուժման և ախտորոշման նպատակով:

ԱՍՊԻՐԱՑԻԱ [< аспирация < լատ. aspiratio], գ. 1. (բժշկ.): Ջրի կամ օդի հեռացումը մարմնի որևէ մասից հիվանդության պատճառով: 2. Այլ առարկաների ներթափանցումը շնչուղիներ ներշնչման ժամանակ: 3. (տեխ.): Շինությունից փոշու հեռացումը ապահովող համակարգ՝ սարքավորումներ:

ԱՍՊԻՐԻՆ [< аспирин], գ. (բժշկ.): Ացետիլսալիցիլային թթու՝ ջերմիջեցնող, ցավազրկիչ և հակաբորբոքային դեղանյութ:

ԱՍՏԱԶԻԱ [< астазия < հուն. a ժխտական մասնիկ + stasis վիճակ], գ. (բժշկ.): Նյարդային համակարգի հիվանդության պատճառով մարդու կանգնելու ունակության կորուստ:

ԱՍՏԱՏԻՆ [< астатин < հուն. astatos անկայուն], գ. (քիմ.): Տարրերի պարբերական համակարգի VII խմբի ռադիոակտիվ քիմիական տարր (At):

ԱՍՏԵՐԻԱ [< астерия < հուն. aster աստղ], գ. (կենդբ.): Ծովաստղ՝ անողնաշարավորների դասի ծովային կենդանի:

ԱՍՏԵՐԻՍԿ [< астериск < ֆր. astérisque < հուն. aster աստղ], գ. (տպգր.): Աստղանիշ՝ տպագրական աստղաձև նշան, որը սովորաբար կիրառվում է ծանոթագրություններ նշելու համար:

ԱՍՏԵՐՈԻԴՆԵՐ [< астероиды < հուն. aster աստղ + eidos կերպ], գ. Աստղակեր-

պներ՝ 1. (աստղգ.): Փոքր մոլորակներ, որոնք պտտվում են Արևի շուրջը՝ Մարսի և Յուպիտերի արանքում: 2. (կենսբ.): Ծովաստղեր՝ անողնաշարավորների դասի ծովային կենդանիներ:

ԱՍՏԻԳՄԱՏԻԶՄ [< астигматизм < a ժխտական մասնիկ + հուն. stigmē կետ], գ. (օպտ.): 1. Տարաբեկություն՝ օպտիկական համակարգի թերություն: 2. Աչքի աստիգմատիզմ՝ աչքի բեկող ապարատի թերություն, որը պայմանավորված է եղջերաթաղանթի կամ ոսպնյակի կորության շառավիղների բեկող ուժերի տարբերությամբ:

ԱՍՏՐԱ [< астра < հուն. astēr աստղ], գ. (բսբ.): Աստղածաղիկ:

ԱՍՏՐՈ... [< астро ... < հուն. astron աստղ] Բարդ բառերում նշանակում է աստղ, աստեղային:

ԱՍՏՐՈԲԻՈԼՈԳԻԱ [< астробиология < աստրո... + բիոլոգիա], գ. (գիտ.): Աստղակենսաբանություն՝ գիտություն, որը քննում է այլ մոլորակների վրա կյանքի հնարավորությունը:

ԱՍՏՐՈԲԼԵՄ(Ա) [< астроблема < աստրո... + հուն. blema վերք], գ. (երկրբ.): Երկրաբանական կառուցվածք, որը առաջացել է Երկրի մակերևույթին աստղակերպների և երկնաքարերի հետ բախման հետևանքով:

ԱՍՏՐՈԲՈՏԱՆԻԿԱ [< астроботаника < աստրո... + հուն. botanike < botane խոտ, բույս], գ. (գիտ. հնց.): Աստղաբուսաբանություն՝ գիտություն, որը քննում է այլ մոլորակների վրա բույսերի աճման հնարավորությունը:

ԱՍՏՐՈԳՆՈԶԻԱ [< астрогнозия < աստրո... + հուն. gnosis գիտելիք, գիտություն], գ. Գիտելիք, որը հնարավորություն է տալիս կողմնորոշվելու տարածության և ժամանակի մեջ երկնքի աստղերի միջոցով:

ԱՍՏՐՈԳՐԱՖ [< астрограф < աստրո... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ. հնց.): Աստղագիր՝ աստղագիտական խողովակ՝ երկնային լուսատուներ նկարելու համար:

ԱՍՏՐՈԼԱԲ [< астролябия < հուն. astrolabion], գ. (պատմ. տեխ.): Հին աստղաբաշխական գործիք, որով որոշում էին երկնային լուսատուների դիրքը:

ԱՍՏՐՈԼՈԳ [< астролог < հուն.], գ. (հնց.): Աստղագուշակ:

ԱՍՏՐՈԼՈԳԻԱ [< астрология < աստրո... + logōs գիտություն], գ. (հնց.): Աստղագուշակություն՝ հին և միջին դարերում տարածված կեղծ գիտություն, որը կանխատեսում է մարդու ճակատագիրը՝ աստղերի դիրքից ելնելով:

ԱՍՏՐՈՄԵՏՐԻԱ [< астрометрия < աստրո.... + հուն. metreō չափում եմ], գ. (գիտ. հնց.): Աստղաչափություն՝ աստղագիտության բաժին, որը զբաղվում է երկնային մարմինների ճշգրիտ դրության և ժամանակի ընթացքում դրանց կատարած փոփոխության որոշումով:

ԱՍՏՐՈՆԱՎՏ [< астронавт < հուն.], գ. (հնց.): Աստղանավորդ, տիեզերագնաց:

ԱՍՏՐՈՆԱՎՏԻԿԱ [< астронавтика < աստրո... + հուն. nautike ծովագնացություն], գ. (գիտ. հնց.): Աստղագնացություն՝ հրթիռային տիեզերանավի վարման տեսությունը միջմոլորակային տարածություններում:

ԱՍՏՐՈՆՈՄ [< астроном < հուն.], գ. (հնց.): Աստղագետ, աստղագիտության մասնագետ:

ԱՍՏՐՈՆՈՄԻԱ [< астрономия < աստրո... + հուն. nomos օրենք], գ. (գիտ. հնց.): Աստղագիտություն՝ գիտություն համաստեղության և երկնային մարմինների կառուցվածքի և զարգացման մասին. քննում է երկնային մարմինների տեղը և շարժումը, քիմիական կազմը, ծագումն ու զարգացումը:

ԱՍՏՐՈՖԻԶԻԿԱ [< астрофизика < աստրո... + հուն. physike < physis բնություն], գ. (գիտ. հնց.): Աստղաֆիզիկա՝ աստղագիտության բաժին, որը քննում է երկնային մարմինների կազմությունը, նրանց ֆիզիկական հատկանիշները և քիմիական կազմը:

ԱՍՑԻԴԻԱ(ՆԵՐ) [< асцидия < հուն. askidion պարկիկ], գ. 1. (կենդբ.): Քորդայավորների տիպի, տունիկավորների ենթատիպի դասի ծովային կենդանիներ:

ԱՍՑԻՏ [< асцит < գերմ. Aszites < հուն. askos ջուր պահելու տիկ], գ. (բժշկ.): Որովայնախոռոչի ջրգողություն՝ ուռուցվորություն:

ԱՍՖԱԼՏ [< асфальт < հուն. asphaltos], գ. 1. Արհեստական և բնական ծագումով ձյութային զանգված, որ գործածվում է ճանապարհների հատակման համար, օգտագործվում է արդյունաբերության որոշ ճյուղերի մեջ, մայթաձյութ: 2. Փողոցի՝ ճանապարհի ասֆալտապատ մասը:

ԱՍՖԻԿՍԻԱ [< асфиксия < հուն. asphyktos անշունչ], գ. (բժշկ.): Շնչահեղձուկ՝ շնչարգելում (լրիվ կամ մասնակի). առաջանում է արյան և հյուսվածքների մեջ թթվածնի ոչ բավարար քանակից:

ԱՎԱՆԳԱՐԴ [< авангард < ֆր. avant առջև + garde պահազոր], գ. 1. (ռազմ.): Առաջապահ ջոկատ՝ ռազմական ջոկատ, որն առաջ է մղվում դեպի հակառակորդի դիրքերը՝ պահպանելու հիմնական ուժերին հանկարծահաս հարձակման ժամանակ: 2. Որևէ հասարակական կամ քաղաքական խմբավորման առաջավոր մասը:

ԱՎԱՆԳԱՐԴԻԶՄ [< авангардизм < ֆր. avant – gardisme], գ. (պատմ.): Պայմանականորեն այդպես են կոչվել XX դարի գեղարվեստական մի շարք ուղղություններ, որոնք ձգտում էին արվեստի արմատական փոփոխության ինչպես բովանդակային, այնպես էլ ձևի առումով:

ԱՎԱՆԳԱՐԴԻՍՏ [< авангардист < ֆր.], գ. Ավանգարդիզմի հետևորդ:

ԱՎԱՆՍ [< аванс < ֆր. avance], գ. (խսկց.): 1. Կանխավճար՝ դրամի որոշակի չափ, որը տրվում է նախօրոք որևէ ապրանք գնելու համար՝ հետագայում նրա արժեքը լրիվ վճարելու պայմանով: 2. Կանխավարձ:

ԱՎԱՆՍՑԵՆԱ [< авансцена < ֆր. avant-scène < avant առջև + scène բեմ], գ. Բեմահարթակի առաջնային մասը՝ առաջ մղված դեպի հանդիսասրահը:

ԱՎԱՆՏՅՈՒՐԱ, ԱՎԱՆՏՅՈՒՐԻԶՄ [< авантюра < ֆր. aventure արկած], գ. (խսկց.): Բախտախնդրություն, արկածախնդրություն՝ որոշակի կատարվող գործողություն՝ քայլ, երբ հաշվի չեն առնվում իրական հնարավորությունները և ուժերը:

ԱՎԱՆՏՅՈՒՐԻՍՏ [< авантюрист < ֆր.], գ. (խսկց.): Արկածախնդիր, բախտախնդիր:

ԱՎԱՐԻԱ [< авария < իտլ. avaria], գ. (խսկց.): 1. Վթար, դժբախտ պատահար. նավի, ինքնաթիռի, մեքենայի, հաստոցի, շենքի, սարքավորման նևի շարքից դուրս գալը: 2. *փխբ.* Անհաջողություն, դժբախտություն:

ԱՎԳԻՏ [< авгит < հուն. augē փայլ], գ. (հնք.): Միներալ պիրոքսենների խմբից. գլխավոր ապար կազմող միներալն է բազալտում, անդեզիտում, դիաբազում նև հիմքային հրային ապարներում:

ԱՎԳՅԱՆ ԱԽՈՌՆԵՐ[< Авгиевы конюшни] - (դից.): 1. Հին հունական դիցաբանության մեջ Հելլադայի Ավգիաս արքայի աղբակուտակ հսկայական ախոռները: Հերակլեսը մեկ օրում մաքրում է դրանք՝ այնտեղ ուղղելով Ալփեոս և Պինոս գետերի ջրերը: 2. *փխբ.* Բարձիթողի վիճակում գտնվող, չափազանց կեղտոտ:

ԱՎԳՈՒՐ [< авгур < լատ. augur < avis թռչուն], գ. (պատմ. հնց.): 1. Հին Հռոմում՝ գուշակող քուրմ, որը իր գուշակությունը կատարում էր թռչունների թռիչքով, նաև

կայծակով և այլ երկնային երևույթներով, հավահմա, հավահարցուկ: 2. *փխբ.* Անձ, որ ցույց է տալիս, թե իրեն մեծ գաղտնիքներ են հայտնի, գիտակցաբար մոլորեցնող, խաբող անձ:

ԱՎԵ ՄԱՐԻԱ [< Аве Мария < Ave Maria ուրախացի՛ր, Մարիա՛], 1. (կրոն.): Կաթոլիկական աղոթք: 2. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործություն՝ գրված կանոնիկ կամ ազատ տեքստով:

ԱՎԵՆՅՈՒ [< авеню < ֆր. avenue], գ. (հնց.): Պողոտա՝ լայն ճանապարհ, որի երկու կողմերում կարող են տնկված լինել ծառեր:

ԱՎԵՍՏԱ [< авеста < միջին պարս. apastāk հիմունքներ], գ. Իրանական ժողովուրդների նախաիսլամական կրոնի՝ զրադաշտականության սուրբ գիրքը, որը ստեղծվել է մ.թ.ա. I հազարամյակի 1-ին կեսին բանավոր ձևով, հետագայում լրացվել ու գրի է առնվել հին իրանական մի լեզվով, որ պայմանականորեն անվանվում է ավեստայի լեզուն:

ԱՎԻԱ... [< авиа... < լատ. avis թռչուն] Բարդ բառերում հապավված առաջին բաղադրիչ՝ 1. Օդագնացություն նշանակությամբ: 2. Օդային նշանակությամբ:

ԱՎԻԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. Ավիացիոն արդյունաբերություն:

ԱՎԻԱԲԱԶԱ [< авиабаза < ավիա...+ ֆր. base < հուն. basis], գ. (հնց.): Օդանավակայան՝ բոլոր օժանդակ շենքերով, արհեստանոցներով ու սպասարկու կազմով:

ԱՎԻԱԲՈՄԲԱ [< авиабомба < ավիա... + ֆր. bombe], գ. (հնց.): Ավիառումբ՝ ռումբ, որն ինքնաթիռից գցվում է հակառակորդի տարածքի, զորքերի այլ շինությունների վրա՝ դրանք ոչնչացնելու նպատակով:

ԱՎԻԱԴԵՍԱՆՏ [< авиадесант < ավիա... + ֆր. descente իջեցնելը], գ. (ռազմ.): Օդային դեսանտ՝ հատուկ պատրաստված ջոկատ, որը տեղափոխվում է ինքնաթիռներով և իրականացնում է ռազմական հանձնարարություններ:

ԱՎԻԱԿԻՐ, գ. (ռազմ.): Վերջրյա ռազմանավ, բարձր մանևրայնություն ունեցող ավիացիոն բազա, որոնց մարտական հիմնական միջոցն ավիացիան է (ինքնաթիռներ և ուղղաթիռներ)՝ զինված հրթիռներով, ռումբերով և տորպեդներով՝ միջուկային կամ սովորական լիցքերով:

ԱՎԻԱՄՈԴԵԼ [< авиамодель < ավիա... + ֆր. modéle < իտլ. modello], գ. Թռչող մեքենայի մոդելը:

ԱՎԻԱՄՈԴԵԼԻԶՄ [< авиамоделизм < ավիա... + ֆր.], գ. Թռչող ապարատների, այդ թվում և հրթիռների մոդելների նախագծումն ու կառուցումը տեխնիկական կամ սպորտային նպատակներով:

ԱՎԻԱՄՈԴԵԼԻՍՏ [< авиамоделист < ավիա... + ֆր.], գ. Ավիամոդելներ սարքող:

ԱՎԻԱՏԻԿԱ [< авиатика < գերմ. Aviatik < լատ. avis], գ. (հնց.): Օդագնացություն՝ օդագնացության մասին գիտության հին անվանումը:

ԱՎԻԱՏՈՐ [< авиатор < ֆր. aviateur], գ. (հնց.): Օդաչու՝ ինքնաթիռը՝ օդանավը վարող՝ կառավարող անձ:

ԱՎԻԱՏՐԱՆՍՊՈՐՏ [< авиатранспорт < ավիա... + լատ. transportare], գ. Մարդկանց, բեռների ևն օդով տեղափոխման համար նախատեսված մեքենաների՝ սարքերի ամբողջությունը:

ԱՎԻԱՑԻԱ [< авиация < ֆր. aviation < լատ. avis], գ.: 1. Օդագնացություն՝ ինքնաթիռների ևն թռչող սարքավորումների օդով տեղաշարժման տեսությունը և պրակտիկան: 2. Օդագնաց մեքենաների ամբողջությունը:

ԱՎԻԶՈ I [< авизо < իտլ. avviso], գ. (բանկ.): Ծանուցագիր, ազդագիր՝ փոխանցվող գումարի, ապրանքի, ծանրոցի մասին ստացողին ծանուցող նամակ:

ԱՎԻԶ(Ո) II [< авизо < իսպ. և ֆր. aviso < իտալ. avviso], գ. (ռազմ.): Մի շարք երկրների բանակներում ռազմական նավատորմի հետախուզական նավ:

ԱՎԻՍՏԱ [< ависта < իտալ. a vista], գ. (բանկ.) Մակագրություն մուրհակի կամ որևէ ֆինանսական փաստաթղթի վրա, որով վավերացվում է, որ դրա վճարումը պետք է իրագործվի ներկայացնելու պահին կամ դրանից հետո որոշակի ժամկետի ընթացքում:

ԱՎԻՏԱՄԻՆՈԶՆԵՐ [< авитаминозы < հուն. a ժխտական մասնիկ + լատ. vita կյանք], գ. (բժշկ.): Հիվանդություն, որն առաջանում է համապատասխան վիտամիններ չպարունակող, որակապես ոչ լիարժեք սննդի երկարատև ընդունման հետևանքով:

ԱՎԻՏԵԼԻՆՈԶՆԵՐ [< авителлинозы < լատ. Avitellinoses], գ. (կենդբ.): Կենդանիների հիվանդությունների տեսակ, որոնց հարուցիչը ժապավենային ճիճուներն են:

ԱՎԼՈՍ [< авлос < հուն. aulos], գ. (երժշտ.): Սրնգի տիպի, երկծվանանի երաժշտական հին գործիք, որը տարածված էր Հունաստանում և Առաջավոր Ասիայում:

ԱՎՈԿԱԴՈ [< авокадо < պորտ. abascate < ացտեկերեն], գ. (բսբ.): Խափնազգիների ընտանիքի մշտադալար ծառ, որի պտուղները կարելի է ուտել: Տարածված է արևադարձային և միջարևադարձային շրջաններում:

ԱՎՍՏՐԱԼԻԱ [< Австралия < լատ. australis հարավային], գ. Մայր ցամաք հարավային կիսագնդում:

ԱՎՏԱՐԿԻԱ [< автаркия < հուն. autarkeia ինքնաբավություն], գ. (տնտսգ.): Տնտեսական հարաբերությունում՝ առանձին երկրի շրջանակում ինքնուրույն մեկուսացած տնտեսության ստեղծում, որը հանգեցնում է միջազգային տնտեսական ավանդական կարգերի խզմանը:

ԱՎՏՈ... [< авто... < հուն. autos ինքը] Բարդ բառի սկզբնամաս, որն իր իմաստով համապատասխանում է՝ 1. «ինքնա...»: 2. «ավտոմատիկ»: 3. «ավտոմոբիլ», «ավտոմոբիլային» բառերին:

ԱՎՏՈԱՄԲԱՐՁԻՉ, գ. Ավտոմոբիլի կմախքի վրա տեղակայված ամբարձիչ մեքենա:

ԱՎՏՈԲԱԶԱ [< автобаза < ավտո... + ֆր. base < հուն. basis], գ. (խսկց.): 1. Տրանսպորտային ձեռնարկություն, որ զբաղվում է ավտոառաքումների կազմակերպումով ու ղեկավարությամբ: 2. Ավտոմոբիլները պահելու և վերանորոգելու տեղը՝ վայրը:

ԱՎՏՈԲԱՆ [< автобан < գերմ. Autobahn < ավտո... + Bahn ճանապարհ], գ. (խսկց.): Լայնարձակ մայրուղի՝ մեքենաների արագընթաց երթևեկության համար:

ԱՎՏՈԲԵՌՆԻՉ, գ. 1. Ավտոմոբիլի վրա տեղակայված մեքենա՝ բեռներ բարձելու, բեռնաթափելու և տեղափոխելու համար: 2. Ինքնաբեռնիչ:

ԱՎՏՈԲԻՈԳՐԱՖԻԱ [< автобиография < ավտո...+ հուն. bios կյանք + graphō գրում եմ], գ.: Ինքնակենսագրություն՝ անձի կողմից իր կենսագրությունը ներկայացնող գրություն:

ԱՎՏՈԲՈՒՍ [< автобус < ավտո... + լատ. (omni) bus], գ. Ուղևորներ փոխադրող բազմատեղ մեքենա:

ԱՎՏՈԳԱՄԻԱ [< автогамия < ավտո... + հուն. gamos ամուսնություն], գ. 1. (բսբ.):

Բարձրակարգ բույսերի (հացազգիներից՝ ցորեն, վարսակ, գարի, ընդավորներից՝ լոբի, սիսեռ են) ինքնափոշոտումը և ինքնաբեղմնավորումը: 2. (կենսբ.): Միաբջիջ օրգանիզմների (դիատոմային ջրիմուռներ, որոշ ամեոբաներ են) ինքնաբեղմնավորումը:

ԱՎՏՈԳԱՐԱԺ [< автогараж < ավտո... + ֆր. garage], գ. (խսկց.): Ավտոսրահ՝ մեքենաների կայանման և սպասարկման տեղ, ավտոտնակ:

ԱՎՏՈԳԵՆ [< автоген < ավտո.... + հուն. genos], գ. (տեխ.): Մետաղների ավտոգենային կտրում և եռակցում:

ԱՎՏՈԳԵՆԵԶ [< автогенез < ավտո... + հուն. genesis ծագում], գ. (գիտ.): Ուսմունք, որը ձգտում է օրգանիզմների էվոլյուցիան բացատրել արտաքին միջավայրից կտրված, միայն ներքին գործոններով:

ԱՎՏՈԳՐԱՖ [< автограф < ավտո... + հուն. graphō], գ. (հնց.): Ինքնագիր՝ անձի կողմից որևէ բանի վրա սեփական ձեռքով դրվող նշանների համակարգը (ստորագրությունը):

ԱՎՏՈԳՐԱՖԻԱ [< автография < ավտո...+ հուն. graphō գրում եմ], գ. (գիտ.): Գիտություն ինքնագիր ձեռագրերի մասին:

ԱՎՏՈԴԵՏԱԼ [< автодеталь < ավտո... + ֆր. detail], գ. Ավտոմանրակ՝ մեքենայի հանգույցները, մասերը:

ԱՎՏՈԴՐԵԶԻՆԱ [< автодрезина < ավտո... + ռուս. дрезина], գ. (տեխ.): Այրման շարժիչով դրեզինա:

ԱՎՏՈԴՐՈՄ [< автодром < ավտո... + հուն. dromos վազելու տեղ, վազք], գ. Տեղ՝ մարզադաշտ հատուկ նախատեսված մեքենաների փորձարկման կամ ավտոսպորտի մրցումների համար:

ԱՎՏՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԷՄԻՍԻԱ [< автоэлектронная (< ավտո... + հուն. elektron + լատ. emissio) эмиссия]- (ֆիզ.): Սառը էմիսիա, արտաքին շատ ուժեղ էլեկտրական դաշտի ազդեցությամբ մետաղից կամ կիսահաղորդչից էլեկտրոնների արձակման երևույթ:

ԱՎՏՈԺԻՐ [< автожир < ֆր. autogyre < ավտո... + gyros շրջան, պտույտ], գ. (տեխ.): Թռչող ապարատ, որի հիմնական տանող մակերևույթը հանդիպակաց օդի հոսքի ազդեցության տակ ուղղաձիգ առանցքի շուրջն ազատ կերպով պտտվող օդապտուտակ ռոտորն է:

ԱՎՏՈԼ [< автол < ավտո... + լատ. ol(eum) յուղ], գ. Ավտոմոբիլային և տրակտորային շարժիչների քսայուղ:

ԱՎՏՈԼԱՄՊ [< автолампа < ավտո... + անգլ. lamp], գ. Ավտոմոբիլային լամպ:

ԱՎՏՈԼՈԳԻԱ [< автология < ավտո... + հուն. logōs գիտություն], գ. (լեզվբ.): Բառի գործածությունը իր հիմնական, առաջնային իմաստով:

ԱՎՏՈԽԹՈՆՆԵՐ [< автохтоны < ավտո... + հուն. chthon հող], գ. (գիտ.): 1. Բնիկներ: 2. Օրգանիզմներ, որոնք էվոլյուցիայի ընթացքում առաջացել են տվյալ վայրում և այժմ էլ ապրում են այնտեղ:

ԱՎՏՈԽՈՐԻԱ [< автохория < ավտո... + chōreō տարածվում եմ], գ. (բսբ.): Ինքնատարածում՝ բույսերի սերմերի, բեղմնիկների, սերմնիկների տարածումը սեփական միջոցներով:

ԱՎՏՈԿԱՐ [< автокар < ավտո... + անգլ. car], գ. Ներքին այրման շարժիչով փոխադրամիջոց՝ բեռներ տեղափոխելու համար, օգտագործվում է գործարաններում, պահեստներում են:

ԱՎՏՈԿԼԱՎ [< автоклав < ավտո... + լատ. clavis բանալի], գ. (տեխ.): Հերմետիկորեն փակվող կաթսա՝ բարձր ճնշման տակ հեղուկներ, գազեր տաքացնելու համար. օգտագործվում է գործարաններում՝ ստերիլիզացնելու համար սննդամթերքներ, գործիքներ:

ԱՎՏՈԿՈԴ [< автокод < ավտո... + ֆր. code], գ. (ինֆորմ.): Ծրագրավորման լեզուներից մեկը:

ԱՎՏՈԿՐԱՏԻԱ [< автократия < հուն. autokrates], գ. (հնց.): Ինքնակալություն՝ մենիշխանություն, բռնապետություն:

ԱՎՏՈՄԱԳԻՍՏՐԱԼ [< автомагистраль < ավտո... + լատ. magistralis գլխավոր], գ. (հնց.): Տե՛ս Ավտոմայրուղի:

ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂԻ, գ. Ավտոմոբիլային երթևեկության մայրուղի:

ԱՎՏՈՄԱՏ [< автомат < հուն. automatos ինքնաշարժ], գ. 1. Ինքնաշարժ՝ մեքենա, որ գործում է հատուկ մեխանիզմի օգնությամբ՝ առանց մարդու անմիջական մասնակցության: 2. *փխբ.* Անգիտակցորեն, մեքենայորեն գործող մարդ: 3. (ռազմ.): Ինքնաձիգ՝ ձեռքի ինքնաձիգ զենք: 4. Կիբեռնետիկայի հիմնական հասկացություններից մեկը:

ԱՎՏՈՄԱՏԻԿԱ [< автоматика < հուն.], գ. (գիտ.): Գիտության ու տեխնիկայի այն բնագավառը, որ մշակում է արտադրական գործընթացների մեքենայացման միջոցներն ու եղանակները:

ԱՎՏՈՄԱՏԻԿՈՐԵՆ, մկ. Ավտոմատիկ կերպով:

ԱՎՏՈՄԵՏԱՄՈՐՖԻԶՄ [< автометаморфизм < ավտո... + հուն. metamorphō փոխվում եմ], գ. (երկրբ.): Մագմատիկական ապարների փոփոխություն, որը պայմանավորված է նրանց սառչելու գործընթացում անջատվող ցնդող նյութերի և լուծույթների ներգործությամբ:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱ, տե՛ս Ավտոմոբիլ:

ԱՎՏՈՄԻԿ(Ք)ՍԻՍ [< автомиксис < ավտո... + հուն. mixis խառնում], գ. (կենսբ.): Ինքնաբեղմնավորում (տարածված է պարզագույն օրգանիզմների մոտ):

ԱՎՏՈՄՈԲԻԼ [< автомобиль < ֆր. automobile < գերմ. Automobil < հուն. autos + լատ. mobilis շարժվող], գ. Ինքնաշարժ՝ ներքին այրման շարժիչով կառք՝ անռելս ճանապարհներով ուղևորներ ու բեռներ փոխադրելու համար:

ԱՎՏՈՆՈՄ [< автоном < ավտո... + հուն. nomos], ած. (հնց.): Ինքնավար՝ 1. Ինքնավարություն ունեցող, ինքնավարությամբ կառավարվող: 2. Ինքնավարության վրա հիմնված: 3. Առանց կառավարողի՝ ինքնովի ընթացող, ինքն իրեն վարող: 4. Առանց արգելքների՝ սահմանափակումների ապրող, ազատ:

ԱՎՏՈՆՈՄԻԱ [< автономия < հուն. autonomia < ավտո... + nomos օրենք], գ. (հնց.): Ինքնավարություն՝ 1. (իրավբ.): Ներքին օրենսդրության ու կառավարման գործերի ինքնուրույն կերպով վճռելու և տնօրինելու իրավունք: 2. Որևէ կազմակերպության՝ ընկերության՝ տնտեսական կամ վարչական միավորի են ներքին կառավարման հարցերն իր ուժերով լուծելու և տնօրինելու իրավունք:

ԱՎՏՈՊԱՐԿ [< автопарк < ավտո... + անգլ. park], գ. (խսկց.): Ավտոմոբիլային

ձեռնարկություն, որ զբաղվում է ավտոսարքավորումների կազմակերպումով և ղեկավարությամբ:

ԱՎՏՈՊԻԼՈՏ [< автопилот < ավտո... + ֆր. pilote], գ. (խսկց.): Սարք՝ թռչող ապարատների ավտոմատ ղեկավարման համար. այն որոշ չափով փոխարինում է օդաչուին:

ԱՎՏՈՊՈՐՏՐԵՏ [< автопортрет < ավտո...+ ֆր. portrait], գ. (հնց.): Ինքնադիմանկար՝ հեղինակի կողմից ինքն իրեն նկարելը:

ԱՎՏՈՌԱԼԼԻ [< авторалли < ավտո... + անգլ. rally], գ. Միջազգային (բազմօրյա) մրցավազք, որը իրականացվում է զանգվածային արտադրության ավտոմեքենաներով:

ԱՎՏՈՌԵՖԵՐԱՏ [< автореферат < ավտո... + լատ. referre հայտնել, զեկուցել], գ. (խսկց.): Սեղմագիր՝ գիտական աշխատության բովանդակության համառոտ շարադրանքը հեղինակի կողմից:

ԱՎՏՈՌՈԴԵՈ [< автородео < ավտո... + անգլ. rodeo < rodear շրջապատել < լատ. rotare պտտեցնել], գ. (սպորտ.): Ավտոմեքենաների ձևավոր վարման մրցություն:

ԱՎՏՈՍՏՈՊ [< автостоп < ավտո... + անգլ. stop], գ. (խսկց.): Համընթաց մեքենայով երթևեկելու միջոց՝ առանց փոխադրավարձ վճարելու:

ԱՎՏՈՍՏՐԱԴԱ [< автострада < ավտո... + իտալ. strada ճանապարհ], գ. (հնց.): Մայրուղի՝ լայն ճանապարհ միայն մեքենաների երկկողմանի երթևեկության համար:

ԱՎՏՈՎԱԳՈՆ [< автовагон < ավտո... + անգլ. wagon], գ. Սեփական շարժիչով երկաթուղային վագոն:

ԱՎՏՈՏՈՄԻԱ [< автотомия < ավտո... + հուն. tomē հատու, անջատում], գ. (կենսբ.): Ինքնախեղում, ինքնահաշմում՝ շատ կենդանիների պաշտպանական ռեակցիան կտրուկ գրգռվածության դեպքում:

ԱՎՏՈՏՈՊԻԱ [< автотопия < գերմ. Autotypie < ավտո... + հուն. typos դրոշմ], գ. (լանկրչ.): Լուսանկարների, նկարների վերարտադրության եղանակ՝ միջոց, ինքնատպում, ինքնատպագրություն:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏ [< автотранспорт < ավտո..+ լատ. transportare տեղափոխել], գ. Ավտոմոբիլային տրանսպորտ:

ԱՎՏՈՏՐՈՊԻԶՄ [< автотропизм < ավտո... + հուն. tropos շրջադարձ, ուղղում], գ. (բսբ.): Բույսերի ճյուղերի ևն ուղղվելը ճկված վիճակից, ինքնաուղղում:

ԱՎՏՈՐԻՏԱՐ [< авторитарный < ֆր. autoritaire իշխող < լատ. auctoritas ընդհանուր իշխանություն, ազդեցություն], ած. (քղք.): 1. Իշխանությանը կուրորեն հնազանդվող, բռնապետական: 2. Իշխող, իշխանության ձգտող, իշխանատենչ:

ԱՎՏՈՐԻՏԵՏ [< авторитет < գերմ. Autorität < լատ. auctoritas արժանիք, ուժ], գ. (խսկց.): 1. Հեղինակության՝ ազդեցության, համընդհանուր ընդունված իմաստ: 2. Համընդհանուր ընդունված, ազդեցություն ունեցող անձ:

ԱՎՏՈՖԻԼԻԱ [< автофилия < ավտո... + հուն. phileō սիրում եմ], գ. (հնց.): Ինքնասիրահարվածություն:

ԱՎՏՈՖՈՒՐԳՈՆ [< автофургон < ավտո... + ֆր. fourgon], գ. Փակ թափքով մեծ ավտոմեքենա՝ երկար տարածությունով բեռներ փոխադրելու համար:

ԱՎՐՈՐԱ [< аврора < լատ. aurora], գ. 1. (բնստղծ.): Արշալույս՝ բանաստեղծությունների մեջ՝ լուսաբացը: 2. (դից.): Հին հռոմեական ավանդություններում լուսաբացի աստվածուհին, որը հին հունական ավանդություններում համընկնում էր Էոսին: 3. (պատմ.): Բալթյան նավատորմի հածանավի անուն, որն ակտիվորեն մասնակցել է 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությանը (հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7)):

ԱՎՈՒԱՐ [< авуары < ֆր. avoir ունենալ], գ. 1. (տնտսգ.): Ունեգումար՝ 1. Ակտիվներ, որոնցով իրականացվում են վճարումները և մարվում են պարտավորությունները: 2. Օտարերկրյա բանկերի հաշիվներում գտնվող բանկի միջոցները՝ օտարերկրյա արտարժույթով:

ԱՏԱԿԱ [< атака < ֆր. attaque], գ. (հնց.): Հարձակում՝ թշնամու վրա սրընթաց հարձակում, հարձակման վերջնական փուլը:

ԱՏԱԿ(Ք)ՍԻԱ [< атаксия < հուն. ataxia անկանոնություն], գ. (բժշկ.): Գլխուղեղի խանգարման ժամանակ դրսևորվող հիվանդություն, երբ խաթարվում է տարբեր մկանային խմբերի համաչափ աշխատանքը:

ԱՏԱՄԱՆ [< ռուս. атаман < թուրք. odaman կազակների, ճամբարական հովիվների ղեկավար], գ. 1. Կազակային զորքի ռազմական և վարչական պետ: 2. (պատմ.): Սպիտակգվարդիական զորքի պարագլուխ Ուկրաինայում, Դոնի ափերին, Միջին Ասիայում և Սիբիրում:

ԱՏԱՇԵ [< атташе < ֆր. attaché], գ. (դվնգ.): 1. Դիվանագիտական կրտսեր աստիճան: 2. Դիվանագիտական կազմի ներկայացուցիչ, որն ինչ-որ ճյուղի մասնագետ է, օր.՝ ռազմական, առևտրական ատաշե:

ԱՏԱՎԻԶՄ [< атавизм < լատ. atavus հեռավոր նախնի], գ. (կենսբ.) Հետասերում՝ մարդու, կենդանու, բույսի մոտ նկատվող ժառանգական գենի արթնացում, որն օրգանիզմների պատմական զարգացման ապացույցն է:

ԱՏԱՐԱԿՏԻԿՆԵՐ [< атарактики < հուն. ataraktos հանգիստ], գ. (բժշկ.): Հանգստացնող դեղամիջոցներ:

ԱՏԵԼԵԿՏԱԶ [< ателектаз < հուն. ateles ոչ լրիվ + ektasis ձգում], գ. (կենսբ.): Ամբողջ թոքի կամ նրա մի հատվածի ախտաբանական վիճակ, երբ թոքաբշտերից օդի դուրս գալու հետևանքով նրա պատերը կուչ են գալիս:

ԱՏԵԼԼԱՆԱ [< ателлана < լատ. atellana], գ. Ժողովրդական հանպատրաստից ներկայացման տեսակ Հին Հռոմում մ.թ.ա. III դարում: Այդպես է կոչվել Նեապոլի մոտ գտնվող Ատելլա քաղաքի անունով:

ԱՏԵԼՅԵ [< ателье < ֆր. atelier], գ. (խսկց.): Արհեստանոց, արվեստանոց՝ գեղանկարչի, քանդակագործի, լուսանկարչի աշխատատեղ: Նորաձևության ատելյե՝ հագուստի կարման, ձևավորման սրահ, արտել:

ԱՏԵՄՊՈ [< а темпо < իտլ. a tempo], մկ. (երժշտ.): Նախկին տեմպով, նախկին տեմպը վերականգնելով (արագացնելուց կամ դանդաղեցնելուց հետո):

ԱՏԵՍՏԱՏ [< аттестат < լատ. attestari վկայել], գ. (խսկց.): 1. Ավարտական՝ պաշտոնական վկայական ուսումնական հաստատությունը ավարտելու մասին: 2. Գիտական կամ մասնագիտական կոչում շնորհելու վկայական: 3. Հավաստագիր՝ զինվորականին տրվող փաստաթուղթ՝ տեղափոխությունների կամ գործուղման ժամանակ: 4. (գղտնտ.): Անասունի ցեղայնությունը հաստատող փաստաթուղթ:

ԱՏԵՍՏԱՑԻԱ [< аттестация < լատ. attestatio վկայություն], գ. Ատեստավորում՝ աշխատողի կամ սովորողի որակավորման որոշում:

ԱՏԻՏՅՈՒԴ [< аттитюд < ֆր. attitude դիրք], գ. (արվ.): Դասական պարի հիմնական դիրքերից մեկը, որի ժամանակ հավասարակշռությունը պահպանվում է մեկ ոտքի վրա, իսկ մյուս ոտքը այդ ընթացքում բարձրացված է, ետ է տարված թեքված դիրքով:

ԱՏԻՑԻԶՄ [< аттицизм < հուն. attikismos], գ. (պատմ.): Նուրբ, գրագետ և պատկերավոր խոսք, որը հատուկ էր Ատիկայի բնակիչներին, գերազանցապես՝ աթենա-

ցիներին (Հին Հունաստանում):

ԱՏԼԱՆԹՐՈՊՈՍ [< атлантропос < Ատլաս՝ լեռնային երկիր Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում + հուն. antronos մարդ], գ. (հնէաբ.): Պեղածո մարդ՝ 1954-55 թթ. Թերնիֆինում (Ալժիր) հնագիտական պեղումներ կատարելիս հայտնաբերել են գանգոսկրի կտորներ և երեք ծնոտ, շելյան և վաղ շելյան գործիքների հետ միասին: Ապրել է 360 հազար տարի առաջ:

ԱՏԼԱՆՏ [< Атлант < հուն. Atlans (Atlantos)], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության հերոս Ատլաս տիտանի անունով, որն աստվածների դեմ տիտանների կռվին մասնակցելու համար որպես պատիժ Զևսի հրամանով իր ուսերին պահում էր երկնակամարը: 2. (ճարտ.): Տղամարդու արձան, որ տեղադրվում է օրդերի սյան կամ որմնասյան փոխարեն. պահում է շինության ծածկը, պատշգամբը ևն:

ԱՏԼԱՍ [< атлас < հուն. Տե՛ս Ատլանտ], գ. 1. Քարտեզագիրք: 2. Երկրաբանական, պատմական ևն քարտեզների հավաքածու՝ մեկ ալբոմով կամ գրքով: 3. Կենդանիների, բույսերի ևն պատկերների հավաքածու՝ ցուցադրական կամ կրթական նպատակով:

ԱՏԼԵՏ [< атлет < հուն. athletes ըմբիշ], գ. (սպորտ.): 1. Թեթև կամ ծանր ատլետիկայով զբաղվող մարզիկ: 2. Զարգացած մկանային համակարգով չափազանց ուժեղ մարդ:

ԱՏԼԵՏԻԿԱ [< атлетика < հուն. athletikos ատլետիկ < athlēsis ըմբշամարտ], գ. (սպորտ.): 1. Ֆիզիկական և մարմնամարզական վարժությունների ամբողջություն՝ ճարպկություն, ուժեղություն և տոկունություն զարգացնելու համար: Թեթև ատլետիկա՝ սպորտի այն տեսակը, որն ընդգրկում է վազք, ցատկ, սկավառակի, նիզակի նետում, թռիչք բարձրություն և երկարություն ևն: Ծանր ատլետիկա՝ սպորտի այն տեսակը, որի մեջ մտնում են ծանրություններ բարձրացնելու զանազան ձևեր: 2. (հնց.): Ըմբշամարտ:

ԱՏՄՈՍՖԵՐԱ [< атмосфера < հուն. atmos գոլորշի + sphaire գունդ], գ. (հնց.): Մթնոլորտ՝ 1. Երկիրը և մի քանի ուրիշ մոլորակներ շրջապատող օդը: 2. Գազերի ճնշումը չափելու միավոր, որը հավասար է 760 մմ կամ 1.0332 կգ/սմ^2: 3. *փխբ.* Միջավայր, շրջապատող պայմաններ՝ հանգամանքներ:

ԱՏՈԼ [< атолл < անգլ. atoll < մալդիվերեն adol ներփակ], գ. Օղակաձև, ներփակ կամ կիսաբաց մարջանային կղզի, մինչև 100 մ խորությամբ ծովալճակով:

ԱՏՈՄ [< атом < հուն. atomos անբաժանելի], գ. Հյուլե՝ քիմիական տարրի փոքրագույն մասնիկ, որ բաղկացած է միջուկից և էլեկտրոնից. միջուկը նույնպես բարդ կազմություն ունի՝ բաղկացած է պրոտոններից և նեյտրոններից: Մինչև 20-րդ դարը այն անբաժանելի էր համարվում:

ԱՏՈՄԻԶՄ [< атомизм, атомистика < հուն. atomos], գ. 1. (փիլ.): Հին աշխարհի մատերիալիստական փիլիսոփայական համակարգ, ըստ որի՝ բնությունը բաղկացած է անբաժանելի մասնիկներից՝ ատոմներից:

ԱՏՈՄԻՍՏ [< атомист < հուն.], գ. Ատոմիզմի հետևորդ:

ԱՏՈՆԻԱ [< атония < ֆր. atonie < հուն. a ժխտական ածանց + tonos լարում, լարվածություն], գ. (բժշկ.): Անկորովություն, լարման թուլացում, թառամություն, թուլություն:

ԱՏՏԻԿՈՍ [< аттик < հուն. attikos ատտիկական], գ. (ճարտ.): Ցածր պատ, որ բարձրացվում է ճարտարապետական կառույցները պսակող քիվից վեր:

ԱՏՐԱԿՑԻԱ [< аттракция < լատ. attractio ձգողականություն], գ. 1. (երկրբշխ.): Ուղղահայաց շեղում: 2. Բակառություն:

ԱՏՐԱԿՑԻՈՆ [< аттракцион < ֆր. attraction], գ. 1. Տպավորիչ համար կրկեսում կամ էստրադայում: 2. Ժամանցի վայր զբոսայգում, պուրակում:

ԱՏ(Թ)ՐԵՊՍԻԱ [< атрепсия < հուն. a ժխտական ածանց + threpsis սնունդ], գ. (բժշկ.): Սննդախանգարում. նկատվում է որոշ նորածինների մոտ արհեստական կերակրի անցնելիս:

ԱՏՐԻԲՈՒՏ [< атрибут < լատ. attribuo տալիս եմ, օժտում եմ], գ. 1. (փիլ.): Առարկայի և առհասարակ կեցության անհրաժեշտ, անբաժանելի հատկությունը:

ԱՏՐՈՊԻՆ [< атропин < լատ. atropa belladonna], գ. (դեղրդ.): Խոտաբույսերից ստացվող խիստ թունավոր նյութ, որը գործածվում է իբրև ցավամոք միջոց:

ԱՏՐՈՖԻԱ [< атрофия < ֆր. atrophie < հուն. a ժխտական ածանց + trophē սնունդ], գ. 1. (բժշկ.): Ապաճում, ծյուրանք. որևէ օրգանի չափերի փոքրացում (մարդու և կենդանու մոտ), որը ուղեկցվում է այդ օրգանի ֆունկցիայի խանգարմամբ (մասնակի կամ լրիվ): 2. *փխբ.* Բթացում, կորուստ (զգացմունքների կամ հատկության):

ԱՐ [< ар < լատ. area հրապարակ, մակերևույթ], գ. Մակերեսի չափման միավոր հավասար է 100 մ^2:

ԱՐԱԲԱ [< арба < թուրք. araba], գ. (հնց.): Սայլ (Ղրիմում, Կովկասում, Միջին Ասիայում):

ԱՐԱԲԵՍԿ [< арабеск < ֆր. arabesque < իտալ. arabesco], գ. 1. Բալետում. դասական պարի հիմնական կեցվածքներից մեկը: 2. (կերպր.): Երկրաչափական և ոճական բուսական մոտիվների քմահաճ միահյուսումով բարդ նախշ, որ երբեմն ընդգրկում է նաև մակագրություններ: 3. (երժշտ.): Նրբագեղ բնույթի հաճելի մեղեդիով պիեսներ:

ԱՐԱԲԻԶՄ [< арабизм], գ. Բառեր և արտահայտություններ, որոնք հատուկ են արաբերենին:

ԱՐԱԳՈՆԻՏ [< арагонит < լատ. Aragon մարզ՝ Իսպանիայում], գ. (հնց.): Միներալ. կալցիումի բնածին կարբոնատ, որը մարգարիտի հիմնական բաղադրամասն է, հաճախ կազմում է փափկամորթների խեցու սաղավային շերտը:

ԱՐԱԽԻՍ [< арахис < հուն. arachis], գ. (բսբ.): Գետնանուշ՝ թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող միամյա յուղատու բույս և նրա պտուղը:

ԱՐԱԽՆՈԼՈԳԻԱ [< арахнология < հուն. arachnē սարդ + ... լոգիա], գ. (գիտ.): Կենդանաբանության ճյուղ, որն ուսումնասիրում է սարդակերպերին, սարդագիտություն, սարդաբանություն:

ԱՐԱՆԺԻՐՈՎԿԱ [< аранжировка < ֆր. arranger, բառացի՝ կարգի բերել, հարդարել], գ. (խսկց. երժշտ.): Վերադաշնակում՝ որևէ նվագարանի կամ անսամբլի համար հորինված ստեղծագործության հարմարեցումը մի այլ նվագարանով կամ անսամբլով կատարելու համար՝ գործիքավորում:

ԱՐԲԱԼԵՏ [< арбалет < ֆր. arbalète], գ. (պատմ.): Աղեղազեն, ձգազեն՝ ձեռքի

նետողական զենք, ինքնաձիգ, կատարելագործված աղեղ. հնում այն համարվում էր զինվորի անձնական զենքը:

ԱՐԲԻՏՐ [< арбитр < ֆր. arbitre < լատ. arbiter], գ. (խսկց.): Դատավոր՝ 1. (իրավք.): Միջնորդ դատավոր, իրավարար: 2. (սպորտ.) Խաղի օրենքների պահպանմանը հետևող անձ:

ԱՐԲԻՏՐԱԺ [< арбитраж < ֆր. arbitrage], գ. 1. (իրավք.): Իրավարարություն՝ 2. Վիճահարույց հարցերի քննման ձև, երբ կողմերը դիմում են միջնորդ դատարան: 3. (առևտր.): Առևտրական գործառնություն՝ գների տարբերությունից օգուտ քաղելու համար:

ԱՐԲՈՐԵՏՈՒՄ [< арборетум < լատ. arbor ծառ], գ. Հողամաս, որտեղ տեղաբաշխված է բաց գրունտում մշակվող ծառերի, թփերի և բնափայտավոր փաթաթվող բույսերի հավաքածու: Կիրառվում է գիտական, ուսուցողական, ցուցադրական նն նպատակներով:

ԱՐԳԻԼԻԹ [< аргиллит < հուն. argillos կավ + lithos քար], գ. (հնք.): Մուգ գույնի նստվածքային ապար. առաջանում է կավերի ջրազրկման, խտացման և մասամբ ցեմենտացման հետևանքով: Օգտագործվում է որպես քիմիկատների և պլաստմասսաների լցանյութ:

ԱՐԳՈ [< арго < ֆր. argot], գ. (լեզվք.): Արգո լեզուներ՝ ծածկալեզուներ (գողերի նն). լեզվի հասարակական տարբերակային ձևերից մեկը:

ԱՐԳՈՆ [< аргон < հուն. argos անգործուն], գ. (քիմ.): Քիմիական տարր, նշանը՝ Ar, կարգային համարը՝ 18, կշիռը 39.944, առանց գույնի և հոտի իներտ գազ, մթնոլորտում կազմում է մոտ 1 %, օգտագործվում է գովազդային երկարաձիգ կապտավուն լամպերում:

ԱՐԳՈՆԱՎՈՐԴՆԵՐ [< аргонавты < հուն. Argō նավի անուն + nautes ծովային], գ. (դից.): 1. Հին հունական հերոսներ, որոնք ծովագնացություն կատարեցին «Արգո» նավով դեպի Կոլխիդա՝ ոսկե գեղմը ձեռք բերելու համար: 2. *փխբ.* Խիզախ ծովագնացներ, ծովում արկածներ որոնողներ:

ԱՐԳՈՍ [< Аргус < լատ. Argus < հուն. Argos], գ. 1. (դից.): Հին հունական բազմաչք պահակ: 2. *փխբ.* Արթուն պահակ: 3. (բսբ.): Թռչնի տեսակ: 4. (կենդբ.): Ձկան տեսակ:

ԱՐԳՈՏԻԶՄ [< арготизм < ֆր. argotisme], գ. (լեզվք.): Ծածկաբանություն, փոխառում արգոյից, ծածկաբանական դարձվածք:

ԱՐԳՈՒՄԵՆՏ [< аргумент < լատ. argumentum], գ. 1. (հնց.): Դատողություն (կամ փոխառնչվող դատողությունների համախումբ), որն արվում է մեկ այլ դատողության (կամ դատողությունների համակարգի, տեսակետների, տեսությունների նն) իսկությունը հաստատելու համար: 2. (տրամբ.): Ապացույցի նախադրույթ (կոչվում է նաև հիմնավորում կամ ապացույցի փաստարկ), երբեմն նաև՝ ապացույցն ամբողջությամբ: 3. (մաթ.): Անկախ փոփոխվող մեծություն: 4. Կոմպլեքս թվի արգումենտ (նաև ամպլիտուդ): 5. (տնտսգ.): Փաստարկ:

ԱՐԳՈՒՄԵՆՏԱՑԻԱ [< аргументация < լատ. argumentatio], գ. (խսկց.): Փաստարկներ բերելը, փաստարկների դատողությունների ամբողջությունը հօգուտ մեկի, փաստարկում:

ԱՐԴԵՆՆԵՐ [< Арденны < կելտ. ard բարձր], գ. 1. Բարձրություն (400 մ - 694 մ)

Բելգիայի հարավում, մասամբ Ֆրանսիայում և Լյուքսենբուրգում: Հռենոսյան թերթաքարային լեռների վերջավորությունն է: 2. (կենդբ.): Ճանրաքարշ ձիերի ցեղ, որ ստացվել է Բելգիայում՝ Արդենյան բարձրավանդակի շրջանում:

ԱՐԵԱԼ [< ареал < լատ. area տարածություն, հրապարակ], գ. Երկրի մակերևույթի (կամ ջրատարածության) հատված, որին բնորոշ է կենդանիների, բույսերի որևէ տեսակ (ցեղ, ընտանիք են): Արեալները երկրաբանական քարտեզի վրա պատկերվում են գծերով, կետերով կամ գույներով:

ԱՐԵՆԱ [< арена < լատ. arena ավազ], գ. (խսկց.): Ասպարեզ՝ 1. (պատմ.): Հին հռոմեական ամֆիթատրոնում՝ ավազով լցված հրապարակ, որտեղ կռվում էին գլադիատորները: 2. Նույնատիպ տարածք կրկեսում: 3. Տեղ, որտեղ տեղի է ունենում, կայանում է մրցություն, հանդիսություն: 4. Գործունեության շրջան:

ԱՐԵՆԴԱ [< аренда < լեհ. arenda < լատ. arendare], գ. (խսկց.): 1. Վարձակալություն՝ հողի՝ շինության ևնի ժամանակավոր վարձակալություն՝ որոշակի գումարի վճարումով: 2. Վարձավճար՝ վարձակալության համար տրվող գումարը:

ԱՐԵՆԴԱՏՈՐ [< арендатор < լեհ. < լատ.], գ. Վարձակալ:

ԱՐԵՈԳՐԱՖԻԱ [< ареография < հուն. Arēs Մարս + graphō գրում եմ] , գ. (աստղգ.): Մարս մոլորակի մակերևույթի նկարագրություն:

ԱՐԵՈԼԱ [< ареола < լատ. areola հրապարակ], գ. (կզմխս.): Ծծապտուկը շրջանակող գունավոր շրջանը, խոցի բորբոքված օղիկը ևն:

ԱՐԵՈԼՈԳԻԱ [< ареология < հուն. Ares Մարս + logos ուսմունք], գ. (աստղգ.): Գիտություն Մարսի մոլորակի մասին, մարսագիտություն:

ԱՐԵՈՄԵՏՐ [< ареометр < հուն. araios հեղուկ + metreō չափում եմ], գ. (ֆիզ.): Հեղուկների խտությունը չափող սարք՝ խտաչափ, անոսրաչափ:

ԱՐԵՈՊԱԳ [< ареопаг < հուն. Areios pagos], գ. 1. (պատմ.): Հին Աթենքում դատական և կառավարական բարձրագույն ատյան: 2. *փխբ.* Հեղինակավոր անձանց ժողով:

ԱՐԵՍ [< Арес < հուն. Arēs], գ. (դից.): Զևսի և Հերայի որդին՝ հելլենական դիցաբանության մեջ, պատերազմի աստվածը: Հին Հռոմում նույնացվում էր Մարս աստծու հետ:

ԱՐԵՖԼԵԿՍԻԱ [< арефлексия < հուն. a ժխտական մասնիկ + լատ. reflexio արտացոլում], գ. (բժշկ.): Ռեֆլեքսների բացակայություն:

ԱՐԻԱ [< ария < իտլ. aria], գ. (երժշտ.): 1. Կառուցվածքով ավարտուն դրվագ օպերայում, օրատորիայում կամ կանտատում, որը կատարում է երգիչը նվագախմբի հետ՝ մեներգ: 2. Գործիքային երգեցիկ երաժշտական ստեղծագործություն:

ԱՐԻԱԴՆԵ [< Ариадна < հուն. Ariadne], գ. (դից.): Մինոս արքայի դուստրը, Ֆեդրայի քույրը: Արիադնեի օգնությամբ Թեսևսը սպանեց Մինոտավրոսին և հաջողությամբ դուրս եկավ լաբիրինթոսից՝ օգտագործելով թելի կծիկ:

ԱՐԻԵՏԱ [< аритта < իտլ. arietta], գ. (երժշտ.): Ոչ մեծ արիա:

ԱՐԻԵՐԳԱՐԴ [< арьергард < ֆր. arrière թիկունքային + garde պահազոր], գ. (ռազմ.): Հետևապահ ջոկատ՝ ստորաբաժանում, զորամաս կամ միավորում, որը պահպանում է նահանջող կամ ռազմաճակատից թիկունք ռազմաերթ կատարող զորքերին:

ԱՐԻՈԶՈ [< ариозо < իտլ. arioso], գ. (երժշտ.): Մեներգային դրվագ օպերայում (օրատորիայում, կանտատում), որը սովորաբար ավելի փոքր է, քան արիան՝ գրված ազատ հորինվածքով:

ԱՐԻՍՏՈԿՐԱՏ [< аристократ < հուն.], գ. (պատմ.): 1. Ազնվական՝ բարձր

ազնվական խավին պատկանող անձ: 2. (արիմրհ.): Մասսաներից իրեն հեռու պահող՝ գործից խուսափող մարդ:

ԱՐԻՍՏՈԿՐԱՏԻԱ [< аристократия < հուն. aristokratia լավագույնների, տոհմիկների իշխանություն], գ. 1. Ազնվականություն՝ բարձր խավ: 2. (պատմ.): Կառավարման ձև, երբ պետական իշխանությունը պատկանում է արտոնյալ տոհմիկ փոքրամասնությանը: 3. Որևէ դասակարգի կամ հասարակական խմբի արտոնյալ խավ, որն օգտվում է հատուկ արտոնություններից կամ իրավունքներից:

ԱՐԻՖՄԵՏԻԿԱ [< арифметика < հուն. Arithmētikē < arthmos թիվ], գ. (գիտ. հնց.): Թվաբանություն (մաթեմատիկայի բաժին):

ԱՐԽԱԻԶՄ [< архаизм < հուն. archaios հին], գ. (հնց.): Հնաբանություն՝ 1. (լեզվբ.): Գործածությունից դուրս եկած բառ կամ բառակապակցություն, որի հասկացությունը հնացած է: 2. Հին երևույթ, անցյալի մնացորդ:

ԱՐԽԱԻԿԱ [< архаика < հուն. archaikos հին], գ. (արվ.): Հնություն, հնամենիություն, հնադարյան հատկություն՝ որևէ երևույթի զարգացման պատմության վաղ շրջանը:

ԱՐԽԱԼՈՒՂ [< архалук < թուրք. arkalyk < arka մեջք], գ. (հնց.): Տղամարդկանց և կանանց կարճ մինչև ծնկները հասնող հագուստ:

ԱՐԽԱՆԳԵԼ [< архангел < հուն. archaggelos < achi գլխավոր, ավագ + aggelos հրեշտակ], գ. (եկեղց. հնց.): Հրեշտակապետ:

ԱՐԽԵՈ... [< архео < հուն. archaios հին] Բարդ բառերում գործածվելիս ցույց է տալիս դրանց կապը հին ժամանակների հետ:

ԱՐԽԵՈԳՐԱՖԻԱ [< археография < արխեո... + հուն. + graphō գրում եմ], գ. (գիտ. հնց.): Հնագրագիտություն՝ հին ձեռագրերի (գրավոր հուշարձանների) նկարագրություն և հրապարակում:

ԱՐԽԵՈԼՈԳԻԱ [< археология < հուն. archaiologia], գ. (գիտ. հնց.): Հնագիտություն՝ գիտություն, որն ուսումնասիրում է մարդկային հասարակության պատմությունը՝ նյութական հուշարձաններով (աշխատանքի գործիքներ, զենքեր, շիրիմներ ևն):

ԱՐԽԵՈՊՏԵՐԻՔՍ [< архептерикс < արխեո... + հուն. pteryx թև], գ. (հնէաբ.): Բրածո ողնաշարավոր նախաթռչուն. մարմնի և կմախքի կառուցվածքն ունի թռչունի և սողունի ընդհանուր շատ գծեր: Կմախքն առաջին անգամ հայտնաբերվել է 1860-ին Զոլոնհոֆենի՝ վերին յուրայի վիմագրական թերթաքարերում:

ԱՐԽԵՈՐՆԻՍ [< археорнис < արխեո... + հուն. ornis թռչուն], գ. (հնէաբ.): Արխեոպտերիքսի հայտնաբերված 3 կմախքներից մեկը, որը սխալմամբ մի ժամանակ ինքնուրույն տեսակ էր համարվում:

ԱՐԽԵՈՑԻԱՏՆԵՐ [< археоциаты < արխեո... + հուն. cyathos գավաթ], գ. (հնէաբ.): Բրածո անողնաշարավոր ծովային կենդանիներ:

ԱՐԽԻ... [< архи... < հուն. archē սկիզբ] Բարդ բառերում գործածվելիս ցույց է տալիս 1. Որևէ եկեղեցում բարձր դիրք ունեցող հոգևորական: 2. Հատկանիշի գերակայությունը, որն առկա է բառի երկրորդ մասում:

ԱՐԽԻՎ [< архив < լատ. archivum ատյան, պաշտոնատուն], գ. Պահոց՝ 1. Անցյալի գրավոր ու գծագրական փաստաթղթերի նկարագրությամբ, դասակարգումով ու պահպանումով զբաղվող հիմնարկություն: 2. Հիմնարկության այն բաժինը, որին հանձնվում են ի պահ հին փաստաթղթերն ու ավարտված գործերը: 3. Հիմնարկի կամ անձի գործունեության մասին զանազան փաստաթղթերի, գծագրությունների, ձեռագրերի, նկարների ևն հավաքածու:

ԱՐԽԻՎԱԴԱՐԱՆ, գ. Այն տեղը (շենքը, սենյակը ևն), որտեղ պահվում է արխիվը (3):

ԱՐԽԻՎԱՐԻՈՒՍ [< архивариус < լատ.], գ. 1. Արխիվը (3) պահելու գործով զբաղվող անձ, արխիվի աշխատող: 2. Արխիվի (1, 2) աշխատող:

ԱՐԽԻՏԵԿՏՈՆԻԿԱ [< архитектоника < հուն. architektonikē շինարվեստ, ճարտարապետություն], գ. (ճարտ.): 1. Ճարտարապետության մեջ՝ կառուցողական արվեստի գլխավոր սկզբունքը: 2. Շինության, նաև կլոր քանդակի կամ դեկորատիվ արվեստի ծավալային ստեղծագործության կոնստրուկտիվ համակարգին հատուկ կառուցվածքային օրինաչափությունների գեղարվեստական արտահայտությունը:

ԱՐԽԻՏԵԿՏՈՐ [< архитектор < հուն.], գ. (հնց.): Ճարտարապետ՝ ճարտարապետության մասնագետ:

ԱՐԽԻՏԵԿՏՈՒՐԱ [< архитектура < լատ. architectura < հուն. architektōn շինարար], գ. (հնց.): Ճարտարապետություն՝ կառուցման արվեստ, գիտություն շինարարության արվեստի մասին:

ԱՐԽԻՏՐԱՎ [< архитрав < ֆր. architrave < արխի... + լատ. trabs հեծան], գ, (ճարտ.): Քովթար՝ անտաբլեմենտի 3 հորիզոնադիր մասերից ներքևինը, որ նստում է սյուների խոյակներին և ունի հիմնական կոնստրուկտիվ տարրի նշանակություն:

ԱՐԽՈԶԱՎՐ [< архозавр < հուն. archos առաջին, հին + ... զավր], գ. (հնէաբ): Մեզոզոյան ժամանակաշրջանի ցամաքային ողնաշարավոր կենդանիների ընդհանուր անվանումը:

ԱՐԽՈՆՏ [< архонт < հուն. archon (archontos) ղեկավար], գ. (պատմ.): Հին Հունաստանի քաղաք-պետությունների բարձրագույն պաշտոնական անձ:

ԱՐԿ... [< арк... < լատ. arcus աղեղ] - (մաթ.): Բարդ բառի առաջին բաղադրիչը, որ կցվում է ուղիղ եռանկյունաչափական ֆունկցիաներին՝ արկսինուս, արկսեկանս, արկտանգես, արկկոսեկանս, արկկոսինուս, արկկոտանգես:

ԱՐԿԱ [< арка < իտլ. arco < լատ. arcus աղեղ], գ. (ճարտ. հնց.): Կամար՝ շենքի, շինության, կառուցվածքի (կամուրջի ևն) աղեղաձև ճակատ՝ գոտի:

ԱՐԿԱԴԱ [< аркада < ֆր. arcade], գ. (ճարտ. հնց.): Կամարաշար՝ նմանատիպ կամարների շարք:

ԱՐԿԱԴԻԱ [< Аркадия < հուն. Arkadia], գ. 1. (պատմ.): Հին հունական նահանգ կենտրոնական Պելոպոնեսում, որի բնակիչները հիմնականում վարել են հովվական կյանք, պարզ և չափավոր կենցաղ: 2. *փխբ.* Անդորր, երջանիկ կյանքով ապրող երկիր:

ԱՐԿԱՆ [< аркан < թուրք. arkan հաստ պարան], գ. (հնց.): Օղապարան, օղաթոկ:

ԱՐԿԲՈՒՏԱՆ [< аркбутан < ֆր. arcboutant], գ. (ճարտ.): Արտաքին քարե կիսակամար, որ գոթական տաճարի գլխավոր նավի թաղերի հրող ուժերը հաղորդում է շինության հիմնական ծավալից դուրս գտնվող հենման մույթերին՝ կոնտրֆորսերին:

ԱՐԿԵԲՈՒԶ(Ա) [< аркебуз(а) < ֆր. arquebuse], գ. (պատմ.): Պատրույգավոր՝ չախմախավոր հրացան Արևմտյան Եվրոպայում:

ԱՐԿՏԻԿԱ [< арктика < լատ. arcticus < հուն. arktikos հյուսիսային], գ. Երկրագնդի հյուսիսային բևեռային շրջանը. ամենատաք ջերմաստիճանը տարվա մեջ +10° է:

ԱՐՄԱԴԱ [< армада < իսպ. armada], գ. (պատմ.): Նավատորմիղ՝ իսպանացի թագավոր Ֆիլիպ II նավատորմը, որը կազմավորվել է 1588 թ. Անգլիայի դեմ պատերազմելու համար: «Անպարտելի արմադայի» մի մասը խորտակվեց մրրիկի ժամանակ, մյուսը՝ անգլիական և հոլանդական նավերի կողմից:

ԱՐՄՐԵՅՍՏԼԻՆԳ [< армрестлинг < անգլ. arm բազուկ + wrestling մրցություն], գ. (սպորտ.): Բազկամարտ՝ սպորտի տեսակ, երբ երկու մարզիկ սեղանի շուրջը կանգնած փորձում են ծալել, սեղանին կպցնել միմյանց բազուկները:

ԱՐՄԱՏՈՒՐԱ [< арматура < լատ. armatura սպառազինություն], գ. (խսկց. տեխ.): 1. Որևէ սարքի, մեքենայի ևն հանգույցների և սարքավորումների ամբողջություն, էլեկտրական լուսավորություն ապահովող առարկաների ամբողջությունը: 2. Ամրան, ամրաձող՝ երկաթբետոնյա կառուցվածքի անբաժան տարրեր:

ԱՐՄԻԱ [< армия < գերմ. Armee < ֆր. armée < լատ. armare զինել], գ. (ռազմ. հնց.): Բանակ, զորք, ցամաքային զորք:

ԱՐՇԻՆ [< аршин < թուրք. aršyn], գ. (պատմ. հնց.): 1. Երկարության չափման միավոր = 0,71 մ (Ռուսաստանում ևն): 2. Այդ չափի ուղիղ փայտ (կտորեղեն ևն չափելու համար):

ԱՐՇԻՊԵԼԱԳ [< архипелаг < իտալ. Arcipelago անվանում, որ վենետիկցիները առաջարկել են Էգեյան ծովի համար], գ. Իրար մոտ գտնվող կղզիների խումբ, որը դիտվում է որպես մի ամբողջություն, կղզիախումբ:

ԱՐՈԶԻԱ [< аррозия < գերմ. Arrosion < լատ. arrōdere խածատել, կերամաշել], գ. (բժշկ.): Բորբոքային գործընթացների և խոցերի ժամանակ հյուսվածքների և անոթների քայքայում՝ մաշում:

ԱՐՈՄԱՏ [< аромат < հուն. aroma (aromatos) բուրող իր], գ. (խսկց.): Անուշահոտություն, բուրմունք, հաճելի հոտ, բույր:

ԱՐՊԵՋՈ [< арпеджио, арпеджо < իտալ. arpeggiare տավիղ նվագել], գ. (երժշտ.): Ակորդի կատարման եղանակ, երբ տոները հնչում են ոչ թե միաժամանակ, այլ միմյանց արագ հաջորդելով:

ԱՐՍԵՆԱԼ [< арсенал < ֆր. arsenal], գ. 1. Զենքի և զինամթերքի արտադրության, վերանորոգման և պահպանման գործարան՝ ձեռնարկություն, զինագործություն: 2. Որևէ բանի շատ և բազմատեսակ քանակություն, մեծ պաշար, շտեմարան:

ԱՐՍԻՆ [< арсин < լատ. arsenicum մկնդեղ], գ. (քիմ.): Մկնդեղի և ջրածնի միացություն (թունավոր գազ):

ԱՐՏ... [< арт... < լատ. ars (artis) արվեստ, վարպետություն] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս դրանց իմաստի կապը արտիստ, արվեստագետ (արտիստիկ) բառերի հետ:

ԱՐՏԵԶՅԱՆ [< артезианский < ֆր. artésien < լատիներեն ծագմամբ ֆրանսիական տեղանուն Արտուա (Artesium), որտեղ հին ժամանակներից օգտագործում էին ստորգետնյա ջրեր], ած. (երկրբ.): Խոր ստորգետնյա ջրերին վերաբերող՝ հատուկ:

ԱՐՏԵԼ [< артель < իտալ. artieri արհեստավորներ], գ. (հնց.): Արհեստագործական միություն:

ԱՐՏԵՄԻՍ [< Артемида < հուն. Artemis (Artemidos)], գ. (դից.): Հին հունական աստվածուհի, Զևսի և Լետոյի դուստրը՝ կենդանիների և որսի, կանանց կու-

սության ու ծննդաբերության հովանավորուհի:

ԱՐՏԵՐԻԱ [< артерия < հուն. arteria], գ. (կզմխս. հնց.): 1. Երակ՝ արյունատար անոթ, որը մատակարարում է արյունը սրտից մարմնի տարբեր օրգաններին և հյուսվածքներին: 2. (տրանս.): Հաղորդակցման կարևորագույն ուղի(ներ)՝ երկաթուղի, ջրային ուղի, մայրուղի:

ԱՐՏԵՐԻՈՍԿԼԵՐՈԶ [< артериосклероз < հուն. artēria արյունատար անոթ + sklērōsis կարծրացում], գ. (բժշկ.): Զարկերակների կարծրացում:

ԱՐՏԵՐԻՏ [< артериит < հուն. artēria արյունատար անոթ], գ. (բժշկ.): Արյունատար անոթների (զարկերակների) պատերի բորբոքում:

ԱՐՏԻԼԵՐԻԱ [< артиллерия < ֆր. artillerie], գ. (ռազմ. հնց.): Հրետանի՝ զորամասի տեսակ, որի հիմնական զինատեսակը հրանոթն է: 2. Հրետազոր: 3. Հրետանագիտություն:

ԱՐՏԻԿԼ [< артикль < ֆր. article < լատ. articulus], գ. (լեզվբ. հնց.): Հոդ՝ մասնիկ, որը դրվում է գոյականի վրա կամ նրան կից՝ արտահայտելու քերականական իմաստներ՝ որոշյալության, անորոշության են: Մի շարք լեզուներում հոդը չի փոփոխվում (անգլերեն, հայերեն), մի շարք լեզուներում (գերմաներեն են) փոփոխվում է սեռով, հոլովով, թվով:

ԱՐՏԻԿՈՒԼ(Յ)ԱՑԻԱ [< артикуляция < լատ. articulatio < articulare պարզ արտասանել], գ. (կզմխս. հնց.): Արտաբերություն, արտասանություն՝ արտասանության օրգանների աշխատանքը հնչյունների արտաբերման համար:

ԱՐՏԻՇՈԿ [< артишок < գերմ. Artischoke < իտլ. articiocco], գ. (բսբ.): Արտիճուկ՝ բարդածաղկավորների ընտանիքին պատկանող բույս, խոշոր ծաղիկներով ընտանի կանկար:

ԱՐՏԻՍՏ [< артист < ֆր. artiste], գ. (խսկց.): Դերասան՝ անձ, որի մասնագիտությունը գեղարվեստական ստեղծագործությունը հասարակությանը հրապարակայնորեն ներկայացնելը (դերասան, երգիչ, երաժիշտ): 2. Դերասան:

ԱՐՏՐԻՏ [< артрит < հուն. arthron հոդ], գ. (բժշկ.): Հոդերի բորբոքային հիվանդություն:

ԱՐՏՐՈ... [< артро... < հուն. arthron հոդ] Բարդ բառերի առաջին բաղադրիչ՝ հոդ իմաստով:

ԱՐՏՐՈԼՈԳԻԱ [< артрология < արտրո... + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Կազմախոսության բաժին, որ զբաղվում է հոդերի կազմության ուսումնասիրությամբ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ [< архиепископ < հուն. archiepiskopos], գ. (կրոն.): Եկեղեցու ծառայող, որի աստիճանը եպիսկոպոսի և միտրոպոլիտի միջև է:

ԱՐՖԱ [< арфа < գերմ. Harfe], գ. (հնց.): Տավիղ՝ եռանկյունաձև շրջանակ ունեցող լարավոր երաժշտական գործիք:

ԱՑԵՏ... [< ацет... < լատ. acetum քացախ] Բարդ բառերի առաջին բաղադրիչ, ցույց է տալիս դրանց կապը քացախաթթվին:

ԱՑԵՏԱԼԴԵՀԻԴ [< ацетальдегид < լատ.], գ. (քիմ.): Քացախալդեհիդ՝ օրգանական միացություն՝ սուր հոտով, անգույն հեղուկ: Օգտագործվում է քացախաթթու, քացախաթթվի անհիդրիդ, էթիլացետատ, դեղանյութեր են ստանալու համար:

ԱՑԵՏԱՏՆԵՐ [< ацетаты < լատ.], գ. (քիմ.): Քացախաթթվի աղերը և էսթերները: Օգտագործվում է (այլ տարրերի համակցությամբ) բժշկության և գյուղատնտեսության մեջ:

ԱՑԵՏԻԼԵՆ [< ацетилен < լատ.], գ. (քիմ.): Չհագեցած ածխաջրածին, ացետիլե-

նային ածխաջրածինների հոմոլոգ շարքի առաջին անդամը. անհոտ և անգույն գազ է, որն օգտագործվում է օրգանական նյութեր սինթեզելու, մետաղներ կտրելու և զոդելու համար:

ԱՑԵՏԻԼԽՈԼԻՆ [< ацетилхолин < լատ.], գ. (քիմ.): Խոլինի քացախաթթվային էսթեր: Կենսաբանական ակտիվ նյութ է՝ լայնորեն տարածված բնության մեջ, չնչին քանակությամբ պարունակվում է օրգանիզմի հյուսվածքներում: Սահմանափակ չափով օգտագործվում է բժշկության մեջ:

ԱՑԵՏԻԼՑԵԼՅՈՒԼՈԶ [< ацетилцеллюлоза < լատ.], գ. (քիմ.): Ցելյուլոզի քացախաթթվական էսթերը: Սպիտակ զանգված է, լուսադիմացկուն, չի այրվում: Մեծ չափով օգտագործվում է պլաստմասսաներ, լաքեր, չայրվող կինոժապավեններ և ացետատային մետաքս ստանալու համար:

ԱՑԵՏՈՆ [< ацетон < լատ.], գ. (քիմ.): Օրգանական միացություն: Անգույն բնորոշ հոտով հեղուկ է: Օգտագործվում է որպես լուծիչ՝ սննդի և դեղանյութերի արտադրության մեջ:

ԱՑԻԴՈԶ [< ацидоз < լատ. acidus թթու], գ. Թթվահիմքային հավասարակշռության տեղաշարժ, երբ նյութափոխանակության խանգարման հետևանքով օրգանիզմում կուտակվում են թթու նյութեր:

ԱՑԻԴՈՖԻԼԻԱ [< ацидофилия], գ. Թթվասիրություն՝ կենդանական կամ բուսական բջիջների՝ թթվային գունանյութերով գունավորելու հատկությունը:

ԱՑԻԴՈՖԻԼԻՆ [< ацидофилин < լատ. acidus + հուն. phileō սիրում եմ], գ. Դիետիկ սնունդ՝ կաթ՝ ացիդոֆիլային բակտերիաներով հարուստ:

ԱՑԻԴՈՖՈԲԻԱ [< ацидофобия < լատ. acidus + հուն. phobos վախ], գ. (կենսբ.): Վախ թթվահիմքային միջավայրից:

ԱՈՒԴԻԵՆՑԻԱ [< аудиенция < լատ. audientia ունկնդրություն], գ. 1. (հնց.): Ընդունելություն՝ բարձաստիճան պաշտոնյայի մոտ պաշտոնական ընդունելություն: 2. Դիվանագիտական ներկայացուցչի ընդունելությունը պետության ղեկավարի կողմից:

ԱՈՒԴԻՈԼՈԳԻԱ [< аудиология < լատ. audire լսել + հուն. logōs գիտություն], գ. (գիտ. բժշկ.): Բժշկության բաժին, որն ուսումնասիրում է լսողությունը և դրա խանգարումները, ինչպես նաև դրանց բուժման մեթոդներն ու եղանակները:

ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ՏԵԽՆԻԿԱ [< аудио-видео техника < լատ. audire լսել + videre տեսնել + հուն. technikē], գ. (տեխ.): Ցուցադրող և ընկալող տեխնիկական միջոցների ամբողջությունը:

ԱՈՒԴԻՏ [< аудит < անգլ. audit], գ. (տնտսգ.): Հաշվեստուգում՝ կազմակերպության ֆինանսական հաշվեկշռի ստուգում:

ԱՈՒԴԻՏՈՐ [< аудитор < անգլ. auditor], գ. (տնտսգ.): Հաշվեստուգիչ՝ վստահված անձ, որ զբաղվում է ֆիրմայի ֆինանսատնտեսական ոլորտի ստուգմամբ:

ԱՈՒԴԻՏՈՐԻԱ [< аудитория < լատ. auditorium լսելու տեղ], գ. (հնց.): Լսարան՝ 1. Տեղ, որտեղ կարդացվում են դասախոսություններ, զեկուցումներ են: 2. Լսարանում հավաքվածները:

ԱՈՒԼ [< аул < թուրք.], գ. 1. Կովկասյան լեռնաբնակների գյուղի անվանումը: 2. Միջինասիական քոչվորների բնակության վայրի անվանում:

ԱՈՒԿՑԻՈՆ [< аукцион < գերմ. Auktion < լատ. auctio (auctionis) աճում], գ. (խսկց.): Աճուրդ՝ ապրանքի հասարակական վաճառք, որի ժամանակ ապրանքը ձեռք է բերում ամենաբարձր գին վճարողը:

ԱՈՒՍԿՈՒԼՏԱՑԻԱ [< аускультация < լատ. auscultatio ունկնդրում], գ. (բժշկ.): Ունկնդրում՝ մարդու և կենդանիների ներքին օրգանների հետազոտման մեթոդ՝

դրանցում առաջացած ձայնային երևույթների ունկնդրմամբ:

ԱՈՒՍՊԻՑԻԱ [< аусписции < լատ. auspicium < avis թռչուն + spicere նայել], գ. (պատմ.): Հին հռոմեացիների մոտ՝ ավգուրների կողմից գուշակություններ կատարելը թռչունների թռիչքի և հանած ձայների հիման վրա:

ԱՈՒՍՏԵՆԻՏ [< аустенит < անգլիացի գիտնական Վ. Ռ. Աուստենի (1843-1902թթ.) անվամբ], գ. Երկաթածխածնային համաձուլվածքների՝ պողպատների և թուջերի կառուցվածքային բաղադրիչներից:

ԱՈՒՏ, ԱՈՒԹ [< аут < անգլ. out դուրս], գ. (սպորտ.): 1. Խաղային սպորտաձևերում գնդակի դուրս գալը խաղից՝ խաղադաշտից: 2. Բռնցքամարտի դատավորի հրահանգը, երբ նոկաուտի մեջ ընկած բռնցքամարտիկին հանում է խաղից:

ԱՈՒՏԲՐԻԴԻՆԳ [< аутбридинг < անգլ. outbreeding < out դուրս + breeding բազմացում], գ. (կենսբ.): Ոչ ազգակից՝ տարբեր ցեղերի օրգանիզմների խաչաձևում:

ԱՈՒՏԵՆՏԻԿՈՒԹՅՈՒՆ [< аутентичность < հուն. authentikōs իսկական], գ. (հզվդ.): 1. Իսկականություն, վավերականություն, հավաստիություն, ճշգրտություն, ստուգություն: 2. Բնագրային, բնագրի արժեք ունեցող, բնագրաբնույթ բան:

ԱՈՒՏԻԶՄ [< аутизм < հուն. autos ինքնիրեն], գ. (հոգեբ.): Անձնական ապրումների աշխարհում խորասուզվելը՝ արտաքին աշխարհից ակտիվորեն մեկուսանալով:

ԱՈՒՏՈԴԱՖԵ [< аутодафе < պորտ. auto da fe հավատքի ակտ], գ. 1. (պատմ.): Հրաղատություն՝ միջին դարերում «հերետիկոսներին» և «հերետիկոսական» գրքերն այրելը՝ հրկիզելը՝ ինկվիզիցիայի որոշմամբ: 2. Հեղափոխական և առաջադիմական գրականության, գիտության, արվեստի և այլ երկերի հրապարակային հրկիզումը ռեակցիայի կողմից:

ԱՈՒՏՈԹՐԵՆԻՆԳ [< аутотренинг < առտո... + անգլ. training մարզում], գ. (բժշկ.): Հոգեթերապիայի ժամանակակից մեթոդ. ֆիզիկական հանգստության ձեռքբերում, լարվածությունից և հոգնածությունից ձերբազատում ինքնաներշնչման միջոցով:

ԱՈՒՏՈ... [< ауто... < հուն. autos ինքը] Բարդ բառերի սկզբնամաս, որը համապատասխանում է հայերենի ինքնա- ձևին:

ԱՈՒՏՈԻՆՏՈԿՍԻԿԱՑԻԱ [< аутоинтоксикация < առտո... + լատ. in մեջ + հուն. toxikon թույն], գ. (բժշկ.): Ինքնաթունավորում՝ օրգանիզմի թունավորումը իր ներսում առաջացած թունավոր նյութերի կողմից:

ԱՈՒՏՈԻՆՖԵԿՑԻԱ [< аутоинфекция < առտո... + լատ. infectus վարակված], գ. (բժշկ.): Ինքնավարակում՝ օրգանիզմի վերստին վարակումը լիարժեք չբուժված հիվանդության մանրէների կողմից:

ԱՈՒՏՈՊՍԻԱ [< аутопсия < առտո... + հուն. opsis տեսնելը], գ. (բժշկ.): Դիակի հերձում մահվան պատճառների բացահայտման նպատակով:

ԱՈՒՏՈՏՐԱՆՍՖՈՒԶԻԱ [< аутотрансфузия < առտո... + լատ. transfusio], գ. (բժշկ.): Բուժման մեթոդ՝ սեփական արյան փոխներարկման միջոցով:

ԱՈՒՏՍԱՅԴ, ԱՈՒԹՍԱՅԴ [< аутсайд < անգլ. outside արտաքին կողմը], գ. (սպորտ., խսկց.): Ֆուտբոլում, հոկեյում ևն խաղից դուրս վիճակ:

ԱՈՒՏՍԱՅԴԵՐ, ԱՈՒԹՍԱՅԴԵՐ [< аутсайдер < անգլ. outsider], գ. 1. (տնտսգ.): Ձեռնարկություն, որը չի մտնում միավորման մեջ: 2. (սպորտ.): Թիմ կամ մարզիկ, որը մրցումներում գրավել է վերջին տեղերից մեկը, հետնապահ: 3. (քղք.): Հասարակության լայն շերտերի վստահությունը չվայելող քաղաքական կազմակերպություն կամ գործիչ:

ԱՈՒՐԱ [< аура < հուն. aura քամու փչելը], գ. 1. (կրոն.): Միստիկական և կրոնական ուսմունքներում՝ լույս, որ ճառագում է աստվածային էակներից և սրբերից. պատկերվում է լուսապսակի տեսքով: 2. (հոգեբ.): Պարահոգեբանության մեջ՝ հատուկ դաշտ, որը ստեղծվում է կենսաբանական օրգանիզմների կամ օրգանիզմների խմբակցությունների կողմից: 3. (բժշկ.): Էպիլեպտիկ, միգրենի ևն նոպաներին նախորդող տեսողական, լսողական ևն հուզական և այլ կարգի զգացողություններ ու ապրումներ:

ԱՈՒՐԻՊԻԳՄԵՆՏ [< аурипигмент < լատ. aurum ոսկի + pigmentum ներկ], գ. (հնք.): Միներալ. արսենի սուլֆիդ: Կիտրոնագույն կամ ոսկեդեղին նյութ է, երբեմն գորշավուն: Օգտագործվում է արսենի միացությունները ստանալու համար:

ԱՈՒՔՍԻՆՆԵՐ [< ауксинны < հուն. auxano ավելացնում եմ, աճում եմ], գ. (կենսբ.): Կենսաբանական բարձր ակտիվության նյութեր, որոնք, արտադրվելով բուսական բջիջներում, խթանում են դրանց աճման գործընթացները: Օգտագործվում է բուսաբուծության մեջ՝ կտրոնների արմատակալումն առաջացնելու, լոլիկի բերքատվությունը բարձրացնելու ևն:

ԱՓԳՐԵՅԹ(Դ) [< апгрейд < անգլ. upgrade նորացում, բարելավում < up վերև, բարձր + to grade փոփոխել], գ. (հմկրգչ.): Համակարգչի բարենորոգում՝ արդիականացում որոշ համասարքերի փոխարինումով կամ հավելումով:

ԱՓԴԵՅԹ [< апдейд < անգլ. to update նորացնել, ուղղել, շտկել], գ. (հմկրգչ.): Համակարգչի ծրագրի նորացում՝ թարմացում:

ԱՔԻԼԼԵՍ [< Ахилл, Ахиллес < հուն. Achilleus], գ. (դից.): Հոմերոսի «Իլիականի» հերոսներից, Տրոյական պատերազմի մասնակիցներից քաջագույնը՝ որդին Պելևս արքայի և Թետիս աստվածուհու: Ըստ դիցաբանության՝ նրա մարմնի վրա միակ խոցելի տեղը գարշապարն էր: Այստեղից էլ «Աքիլլեսյան գարշապար» արտահայտությունը, որ գործածվում է «խոցելի տեղ» իմաստով:

ԱՔՍԵՍՈՒԱՐ [< аксессуар < ֆր. accessoir], գ. 1. Որևէ պարագա, զուգորդվող առարկա (օր.՝ հագուստի աքսեսուար, որ զգեստին ավարտուն տեսք է տալիս՝ շարֆ, ձեռնոցներ, գլխաշոր, փողկապ ևն): 2. (թատր.): Բուտաֆորական կամ այլ իրեր: 3. (նկարչ.): Պատկերի երկրորդական, օժանդակ մանրամասներ:

ԱՔՍԻՈԼՈԳԻԱ [< аксиология < հուն. axios արժեքավոր + logos ուսմունք], գ. (փիլ.): Արժեքաբանություն՝ փիլիսոփայական ուսմունք արժեքների մասին, լայն տարածում է գտել XX դարի փիլիսոփայական ուղղություններում:

ԱՔՍԻՈՄ(Ա) [< аксиома < հուն. axioma], գ. 1. (գիտ.): Առանց ապացույցի ընդունվող դրույթ, որն ուրիշ դրույթների համար իբրև ելակետ է ծառայում: 2. *փխբ.* Բացահայտ՝ անվերապահ ճշմարտություն:

ԱՔՍԻՈՄԱՏԻԿԱ [< аксиоматика < հուն.], գ. Աքսիոմների ուսմունք՝ համակարգ:

ԱՔՍՈՆՈՄԵՏՐԻԱ [< аксонометрия < հուն. axon առանցք + metreō չափում եմ], գ. (գիտ.): Տարածական մարմինները հարթության վրա զուգահեռ պրոյեկտմամբ պատկերելու եղանակ, երբ մարմնի հետ միասին հարթության վրա պրոյեկտվում է նաև կոորդինատական համակարգը, որին վերագրված է մարմինը:

ԱՔՐՈՄԱՏԻՆ [< акроматин < հուն. akroma անգույն], գ. (խսկց.): Բուսական և կենդանական բջջակորիզի թույլ ներկող նյութ՝ բջջի անուղղակի բաժանման ժամանակ երևացող:

ԱՖԱԶԻԱ [< афазия < հուն. aphasia], գ. (բժշկ.): Խոսելազրկություն՝ խոսելու կարողության մասնակի կամ լիակատար կորուստ գլխուղեղի համապատասխան կենտրոնների վնասման հետևանքով:

ԱՖԱԼԻՆԱ [< афалина < հուն. aphalos], գ. (կենդբ.): Դելֆինի տարածված տարատեսակ (հեշտ վարժեցվող):

ԱՖԱԿԻԱ [< афакия < հուն. a ժխտական մասնիկ + phakos ոսպնյակ], գ. (բժշկ.): Անոսպնյակություն՝ աչքի ոսպնյակի բացակայություն:

ԱՖԵԿՏ [< аффект < լատ. affectus կիրք, հուզմունք], գ. Արտաքին աշխարհի ազդեցությամբ՝ մարդու մեջ առաջացած բուռն, համեմատաբար կարճատև զգայական վիճակ (զայրույթ, սարսափ, հուսահատություն, վախի պոռթկում ևն):

ԱՖԵՐԻՍՏ [< аферист < ֆր. affaire գործ], գ. Շահախարդախ՝ մութ գործերով զբաղվող անձ:

ԱՖԻՆԱԺ [< аффинаж < ֆր. affinage մաքրում], գ. Արդյունաբերական եղանակով ազնիվ մետաղների (ոսկի, պլատին, արծաթ) ստացում զտման միջոցով:

ԱՖԻՆԱՑԻԱ [< аффинация < ֆր. affination < affiner մաքրել, զտել], գ. (տեխ.): Զտում, զտարկում՝ շաքարավազի նախնական զտումը մինչև ռաֆինադի (տարբեր ձևերի զտած կտոր շաքար) վերածելը:

ԱՖԻՇ(Ա) [< афиша < ֆր. affiche], գ. (խսկց.): Ազդ՝ թատրոնի, երաժշտության ևնի հայտարարություն:

ԱՖԻՑԻԴՆԵՐ [< афициды < լատ. aphis ուտիճ + caedere սպանել], գ. (քիմ.): Նյութ՝ ուտիճների վերացման համար:

ԱՖԻՔՍ [< аффикс < լատ. affixus կցված, ամրացված], գ. (լեզվբ. հնց.): Ածանց, մասնիկ, որն ունի քերականական իմաստ:

ԱՖԻՔՍԱՑԻԱ [< аффиксация < լատ. affixus], գ. (լեզվբ. հնց.): Ածանցում՝ ածանցի հավելում, կցում, միացում բառին (կամ բառարմատին). բառակազմության տեսակ:

ԱՖՅՈՐԱ [< афера < ֆր. affaire գործ], գ. (խսկց.): Շահախարդախություն՝ մութ գործ, արկածախնդրություն:

ԱՖՈՆԻԱ [< афония < հուն. aphonia համրություն], գ. (բժշկ.): Համրություն, մնջություն՝ ձայնի բացակայություն կոկորդի վնասման, նյարդային համակարգի խաթարման ևն պատճառներով:

ԱՖՈՐԻԶՄ [< афоризм < հուն. aphorismos համառոտ իմաստալից խոսք], գ. Կարճ և իմաստալից ասացվածք:

ԱՖՐԻԿԱՆՍ [< африка(а)нс < հոլանդ. afrikaans], գ. (լեզվբ.): Բուրերեն՝ Հարավաֆրիկյան Հանրապետության լեզուներից մեկը՝ հոլանդերենին շատ մոտ, որը հնդեվրոպական լեզվաընտանիքի գերմանական ճյուղի լեզու է:

ԱՖՐԻԿԱՏ [< аффриката < լատ. affricata], գ. (լեզվբ. հնց.): Պայթաշփական՝ հնչյունի տեսակ, որի արտասանության ժամանակ բերանի խոռոչում նախ ստեղծվում է փակված, որը վերածվում է նեղվածքի օդի ազդեցության տակ, որտեղով էլ անցնում է օդի հոսանքը. հայերենի պայթաշփականներն են՝ ջ, ճ, չ, ձ, ծ, ց:

ԱՖՐՈԴԻՏԵ [< Афродита < հուն. Aphroditē], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ գեղեցկության և սիրո աստվածուհի, հին հռոմեականում՝ Վեներա, հայկականում՝ Աստղիկ:

Բ

ԲԱԲԵՋԻԱ [< бабезия < ռումինացի հետազոտող Վ. Բաբեշի անունից (V. Babeş)], գ. (կենսբ.): Խոշոր և մանր եղջերավոր անասունների, ձիերի, խոզերի, շների արյան մակաբույծ, որը ծանր հիվանդությունների հարուցիչ է:

ԲԱԲԻՏՆԵՐ [< баббиты < անգլ. babbit < ամերիկյան հետազոտող Ի. Բաբիտի անունից (I. Babbitt)], գ. (տեխ.): Անագի կամ կապարի հակաշփական համաձուլվածք, որն օգտագործվում է առանցքակալների պատրաստման համար:

ԲԱԲԻՐՈՒՍ [< бабирусса < մալայերեն], գ. (կենդբ.): Վայրի խոզերի տեսակ, որոնք ապրում են հոտերով Ինդոնեզիայի ճահճային անտառներում (մարդիկ դրանք որսում են և օգտագործում են որպես կերակուր):

ԲԱԲՅՈՖԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< бабувизм < ֆր. կոմունիստ-ուտոպիստ Գ. Բաբյոֆի (Babeuf 1797թ.) անունից], գ. (պատմ.): XVIII դարի վերջին ուտոպիստական-կոմունիստական հոսանք Ֆրանսիայում:

ԲԱԲՈՒԻՆ[< бабуин < ֆր. babouin], գ. (կենդբ.): Շնակապիկների ցեղի ներկայացուցիչ, որը բնակվում է Կենտրոնական և Արևելյան Աֆրիկայի տափաստաններում՝ լեռնային շրջաններում:

ԲԱԲՈՒՇՆԵՐ, ՓԱՓՈՒՇՆԵՐ [< бабуши < գերմ. Babuschen < ֆր. babouche տնային կիսակոշիկներ < արաբ. babuš, պարսկ. pa-poš կոշիկ], գ. (խսկց.): Փափուկ հողաթափեր:

ԲԱԳԱԺ [< багаж < ֆր. bagage < հին ֆր. bague փաթեթ], գ. (խսկց.): 1. (տրանս.): Ուղեբեռ: 2. *փխբ.* Գիտելիքների պաշար:

ԲԱԳԱՏԵԼ [< багатель < ֆր. bagatelle, բառացի՝ չնչին՝ անարժեք բան], գ. (երժշտ.): Դաշնամուրով կատարվող ոչ մեծ, համեմատաբար հեշտ ստեղծագործություն:

ԲԱԳԵՏ [< багет < ֆր. baguette], գ. Շրջանակաձող՝ փայտից ձող՝ շրջանակ կամ քիվ պատրաստելու համար:

ԲԱԳԻ [< багги < անգլ. buggy], գ. (սպորտ.): Բաց թափքով և պինդ հենոցով մեկ կամ երկու տեղանի սպորտային ավտոմեքենա. նախատեսված է կարճ և կտրտված տեղանքի համար:

ԲԱԳԻՆԳ [< баггинг < անգլ. bugging < bug բզեզ], գ. (տեխ.): Ժամանակակից էլեկտրոնային լսողական միջոցները (շատ մանր չափերի) և դրանց կիրառության տեխնիկան:

ԲԱԴՄԻՆԹՈՆ [< бадминтон < Անգլիայում՝ տեղանքի անվանումից՝ Badminton], գ. (սպորտ.): Փետրագնդակ՝ խաղային մարզաձև, երբ փետրավոր գնդակը ձեռնաթիակով անցկացվում է ցանցի վրայով. խաղում են մեկ կամ երկու մարզիկ ամեն թիմից:

ԲԱԴՐԻՋԱՆ [< баклажан < պարսկ. bādlijān], գ. (բսբ.): Սմբուկ:

ԲԱԶԱ [< база < ֆր. base < հուն. basis], գ. 1. Հիմք: 2. Որևէ կարգի նյութական՝ տեխնիկական արժեքների գոյություն կամ որևէ կարգի գործունեության անհրաժեշտ պայ-

մանների ամբողջությունը: 3. (ռազմ.): Որևէ կարգի կառուցվածքների, ամրությունների, նյութական արժեքների ամբողջությունը և դրանց վայրը, ռազմածովային բազա: 4. Պահեստ՝ հիմնական, գլխավոր պահեստ: 5. Որևէ կարգի ծառայությունների՝ սպասարկումների հարմարեցրած շենքերի ամբողջությունը և սպասարկու կազմը:

ԲԱԶԱԼՏ [< базальт < լատ. basaltes], գ. (հնք.): Հիմքային հրաբխային ապար՝ սև, մուգ գորշ գույնի: Օգտագործվում է հիմնականում որպես շինանյութ:

ԲԱԶԱՐ [< базар < թուրք. bazar < պարսկ. bāzar շուկա, տոնավաճառ], գ. (խսկց.): 1. Տարաբնույթ ապրանքների վաճառքի շուկա: 2. *փխբ.* Աղմուկ, բացականչություններ, խառնաշփոթ:

ԲԱԶԻԴԻՈՄԻՑԵՏՆԵՐ [< базидиомицеты < հուն. basidion հիմք + mykes (myketos) սունկ], գ. (բսբ.): Բազիդիավոր սնկեր՝ բարձրակարգ սնկերի մեծ դաս, որոնք ունեն բազմացման հատուկ օրգաններ՝ բազիդիոմներ:

ԲԱԶԻԼԻԿ(Ա) [< базилика < լատ. basilica < հուն. basilikē թագավորական տուն], գ. (ճարտ.): Հատուկ տիպի միջնադարյան և անտիկ տաճար՝ երկայնակի քառանկյունի ձևով, որի ներսը բաժանված է երկու այունաշարով:

ԲԱԶԻՍ [< базис < հուն. basis], գ. 1. Հասարակական արտադրական հարաբերությունների ամբողջությունը, որի վրա բարձրանում է վերնաշենքը: 2. Հիմք, պատվանդան, խարիսխ: 3. (երկրբ.) Տեղանքի ճշտորեն չափվող այն գիծը, որով որոշվում են ուրիշ գծերի մեծություններն ու հաշվարկումներ կատարվում: 4. Հիմնահատ, հիմնակող: 5. (տնտսգ.): Հիմք, հենք՝ ակտիվի սկզբնական արժեքը գումարած ենթադրվող ծախսերը: Բազիսի շնորհիվ որոշվում է շահույթը կամ վնասը:

ԲԱԶՈՖԻԼԻԱ [< базофилия < հուն. basis + phileo սիրում եմ], գ. (կենսբ.): Հիմնասիրություն՝ կենդանական կամ բուսական մարմինների բջիջների և հյուսվածքների՝ հիմնական գունակներով գունավորելու հատկությունը:

ԲԱԶՈՒԿԱ [< базука < անգլ. bazooka], գ. (ռազմ.): Ձեռքի ականանետիչի անունը ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների զինված ուժերում:

ԲԱԹԻԱԼ [< батиальный < հուն. bathys խորը], ած. (երկրբ.): Բաթիալ գոտի՝ համաշխարհային օվկիանոսի միջանկյալ գոտի 200-2500 մ խորությունների սահմաններում:

ԲԱԹԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ - Օվկիանոսային և ծովային նստվածքներ՝ բեկորային նյութեր, կրաքարային տիղմեր և խորջրյա ավազներ:

ԲԱԹԻՍԿԱՖ [< батискаф < հուն. bathys խոր + kaphos նավ], գ. (տեխ.): Խորջրյա ինքնագնաց ապարատ՝ օվկիանոսագրական նն հետազոտությունների համար:

ԲԱԹԻՍՖԵՐԱ [< батисфера < հուն. bathys խոր + sphaira գունդ], գ. (տեխ.): Ստորջրյա դիտումների համար օգտագործվող, պողպատյա գնդաձև խցիկ, որը ճոպանով իջեցվում է նավից:

ԲԱԹՄԱՆ [< батман < ֆր. battement հարվածել], գ. Բալետում՝ դասական պարի շարժումների խումբ:

ԲԱԹՈԼԻՏ [< батолиты < հուն. bathos խորություն + lithos քար], գ. (հնք.): Հրային ապարների տեղադրման ձև, որն առաջանում է զգալի խորության վրա և հետագա էրոզիայի ժամանակ մերկանում է:

ԲԱԹՈՄԵՏՐ [< батометр < հուն. bathos խորություն + metreō չափում եմ], գ. Խորաչափ՝ սարք բնական ջրավազանի տվյալ խորությունից (լաբորատոր ուսումնասիրության նպատակով) ջրի նմուշ վերցնելու համար:

ԲԱԼ [< балл < ֆր. balle գնդակ], գ. 1. (գիտ): Պայմանական միավոր՝ բնական

երևույթների (քամու արագություն, ամպամածություն, երկրաշարժ) ուժը, աստիճանը չափելու համար: 2. (հնց.): Մանկավարժությունում՝ թվանշան սովորողների առաջադիմության և վարքի գնահատման համար: 3. Սպորտում՝ թվանշանային համակարգ մի քանի ձևերի (մարմնամարզություն, լող, ձևավոր չմշկասահք են) մրցության արդյունքների գնահատման համար, միավոր:

ԲԱԼԱԳԱՆ [< ռուս. балаган < պարս. bālāhāna վերին սենյակ, պատշգամբ], գ. 1. Թատերական, կրկեսային կամ էստրադային ներկայացումների ժամանակավոր շինություն, որը կառուցվում է տոնավաճառների և ժողովրդական տոնախմբությունների ժամանակ: 2. *փխբ.* Տեսարաններ, մարդկանց գործելակերպ, որ նման է բալագանային տեսիլների, խեղկատակային է, կոպիտ:

ԲԱԼԱԼԱՅԿԱ [< ռուս. балалайка], գ. (երժշտ.): Ռուսական եռալար (հնում՝ երկլար) կսմիթային երաժշտական եռանկյունաձև գործիք: Նվագում են աջ ձեռքի ցուցամատով՝ բոլոր լարերը հնչեցնելով և առանձին լարեր կսմիթելով:

ԲԱԼԱՆՍ I [< баланс < ֆր. balance կշեռք], գ. Հաշվեկշիռ՝ 1. (տնտագ.): Եկամուտների ու ծախսերի համեմատական հանրագումարը, որով փակվում է հաշիվը: Եռամսյա հաշվեկշիռ, տարեկան հաշվեկշիռ: 2. Որևէ գործառնության՝ գործունեության են այն կողմերի հարաբերակցության քանակային արտահայտությունը, որոնք պետք է հավասարակշռեն միմյանց: Առևտրական հաշվեկշիռ (ներմուծման և արտածման հարաբերությունը որոշ ժամանակամիջոցում): 3. Որևէ հարաբերակցության հավասարակշռություն: 4. *փխբ.* Հանրագումար:

ԲԱԼԱՆՍ II [< баланс, балансы < ֆր.], գ. (մսնգ.): Թղթի արդյունաբերության և ցելյուլոզի մշակման մեջ օգտագործվող փայտեղեն:

ԲԱԼԱՆՍԻՐ [< балансир < գերմ. Balancier (stange) < ֆր. balancier], գ. (տեխ.): 1. Ճոճան՝ ճոճանակին փոխարինող կարգավորիչ ժամացույցի մեխանիզմում: 2. Մեքենաների մեջ՝ անիվի առանցքի շուրջը տատանողական շարժումներ կատարող լծակ՝ շարժումը մյուս մասերին փոխանցելու համար: 3. Երկար ձող, որով ակրոբատը պահպանում է հավասարակշռությունը պարանի վրա, լանգառք:

ԲԱԼԱՆՍԻՐՈՎԿԱ [< балансировка < ֆր. balancer], գ. (մսնգ. խսկց.) Բալանսավորում՝ ավտոմեքենայի դողերի հավասարակշռության կարգավորումը:

ԲԱԼԱՍՏ [< балласт < հոլանդ. ballast], գ. 1. Նավի և թռչող սարքերի կշիռն ավելացնող բեռ՝ նրանց ընթացային՝ ծովագնացային հատկությունները բարելավելու համար: 2. Երկաթուղու հողե պաստառի վրա տեղադրված, սորուն նյութերից (խիճ, կոպիճ, ավազ են) կազմված շերտ:

ԲԱԼԱՏՈՆ [< Балатон < սլավ. blamo ճահիճ], գ. Լիճ Հունգարիայում՝ Միջին Դանուբյան դաշտավայրում:

ԲԱԼԲՈԱ [< бальбоа < անգլ. balboa], գ. (ֆին.): Պանամայի դրամական միավոր:

ԲԱԼԴԱԽԻՆ [< балдахин < գերմ. Baldachin < ֆր. baldaquin < միջին լատ. baldacinus, բառացի՝ գործվածք Բաղդադից], գ. (հզվդ.): Շվաքարան, կիսածածկ ծածկարան՝ զարդարված վերից վար ձգվող սյունիկավոր գործվածքով (գահույքի, անկողնու վրա, սգակառքում են):

ԲԱԼԵՏ [< балет < ֆր. ballet < իտլ. balletto < լատ. ballare պարել], գ. 1. Բեմարվեստի տեսակ, ներկայացում, որի բովանդակությունն արտահայտվում է պարային-երաժշտական կերպարների միջոցով: 2. Մնջախաղով, պարով ու երաժշտությամբ թատերական ներկայացում: 3. Այդպիսի ներկայացման համար գրված երաժշտական ստեղծագործություն:

ԲԱԼԵՏՄԵՅՍՏԵՐ [< балетмейстер < գերմ. Ballettmeister], գ. 1. Բալետապետ: 2. Բալետավար՝ բալետի ռեժիսոր՝ պարերի և մնջախաղի՝ շարժումների բեմադրիչ:

ԲԱԼԵՏՈՄԱՆ [< балетоман < բալետ + ... ման], գ. (խսկց.): Բալետի թունդ սիրահար, բալետամոլ:

ԲԱԼԵՏՈՄԱՆԻԱ [< балетомания < բալետ + հուն. mania կիրք], գ. (խսկց.): Բալետամոլություն:

ԲԱԼԵՐԻՆԱ [< балерина < իտլ. ballerina], գ. (խսկց.): Բալետի պարուհի:

ԲԱԼԶԱՄ [< бальзам < հուն. balsamon], գ. Բալասան՝ 1. Զանազան ծառերից ու ծաղիկներից ստացվող հյութ, որ պարունակում է խեժ և եթերային յուղեր: 2. Այդ հյութն ունեցող ծառերի ու ծաղիկների ընդհանուր անունը: 3. Զանազան բուժական խոտերից պատրաստված այլևայլ դեղեր՝ ըմպելիքներ՝ անուշահոտ օծանելիքներ: 4. *փխբ.* Սփոփանք, մխիթարություն, սպեղանի:

ԲԱԼԻԿ [< балик < թուրք. balyk ձուկ], գ. Զուրգել, թառափի սուկի՝ աղ դրած և ապխտած:

ԲԱԼԻՍՏԻԿ [< баллистический < հուն.], ած. Ձգաբանական:

ԲԱԼԻՍՏԻԿԱ [< баллистика < հուն. ballō գցում եմ], գ. Ձգաբանություն՝ 1. (մեխ.): Տեսական մեխանիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է որոշ անկյունով հորիզոն նետած ծանր մարմնի շարժման օրենքները: 2. (ռազմ.): Գիտություն, որ ուսումնասիրում է արկերի շարժման օրենքները հրանոթի փողում (ներքին ձգաբանություն) և հրանոթից թռչելուց հետո:

ԲԱԼԼԱԴ [< баллада < պրովանս. ballada պարերգ], գ. 1. (երժշտ.): Սկզբնապես՝ ձայնական կամ գործիքային երաժշտական երկի մի տեսակ: 2. (գրք.): Քնարական փոքրիկ վիպերգ, որի մեջ բանաստեղծը հաղորդում է ոչ միայն իր հույզերն ու մտքերը, այլև դրանք առաջացնող դեպքերը, երևույթները:

ԲԱԼԿՈՆ [< балкон < իտլ. balcone < ուշ լատ. balcus այուն], գ. 1. (խսկց.): Պատշգամբ՝ շենքի պատի արտաքին կողմից դուրս ձգված և սովորաբար վանդակապատ կամ բազրիքաշարով հարթակ՝ դեպի ներս տանող մուտքով: 2. (թատր.): Թատերապատշգամբ:

ԲԱԼՅՈՒՍՏՐԱԴԱ [< балюстрада < ֆր. balustrade < իտլ. balaustro այունակ], գ. (ճարտ.): Ճաղաշարք, ձևավոր ճաղաշարք (պատշգամբներում, աստիճանավանդակներում):

ԲԱԼՆԵՈԳՐԱՖԻԱ [< бальнеография < լատ. balneum բաղնիք, լոգանք + հուն. graphō գրում եմ], գ. (գիտ.): Կուրորտագիտության մի մասը. զբաղվում է առողջարանների և առողջավայրերի նկարագրությամբ:

ԲԱԼՆԵՈԹԵՐԱՊԻԱ [< бальнеотерапия < լատ. balneum + հուն. therapeia

հոգացություն, բուժում], գ. (բժշկ.): Ջրաբուժություն՝ լոգանքների միջոցով:

ԲԱԼՆԵՈԼՈԳԻԱ [< бальнеология < լատ. balneum + հուն. logos գիտություն], գ. (բժշկ.): Բժշկագիտության բաժին, որն ուսումնասիրում է բնական բուժիչ հանքային ջրերը, նրանց ծագումն ու ֆիզիկաքիմիական հատկությունները, բուժկանխարգելիչ նպատակով օգտագործելու մեթոդները, բժշկական ցուցումներն ու հակացուցումները:

ԲԱԼՆԵՈՏԵԽՆԻԿԱ [< бальнеотехника < լատ. balneum + հուն. technikē վարպետ], գ. Կուրորտաբանության մի մասը. զբաղվում է հանքային ջրերի պահպանմամբ, ինչպես նաև դրանց աղտոտման դեմ տեխնիկական միջոցների պայքարով:

ԲԱԼՈՆ [< баллон < ֆր. ballon գունդ], գ. (հնց.): Գլանոթ, գնդանոթ՝ 1. Ապակյա, մետաղյա, ռետինե նեղբերան անոթ՝ հեղուկների կամ գազի համար: 2. Օդապարիկի անգազաթափանց թաղանթը:

ԲԱԽՉԱ [< бахча < պարսկ. baγča պարտեզ], գ. (խսկց. հնց.): Պարտեզ, բոստան (բանջարանոց):

ԲԱԽՏԱՐՄԱ [< бахтарма < թուրք. bastyrma սեղմած, մամլած], գ. (տեխ.): Մաշկված կաշվի ներսի կողմը:

ԲԱԿԱԼԱՎՐ [< бакалавр < լատ. baccalaureus սկզբնական նշանակությունը՝ ենթավասալ < baccalaria կալվածք նաև < bacca laureātus դափնիներով պսակվել], գ. Շատ երկրների համալսարաններում՝ առաջին գիտական աստիճանի անվանում, կրտսեր գիտական կոչում, պսակակիր:

ԲԱԿԱԼԱՎՐ(Ի)ԱՏ, գ. Այդ աստիճանը տվող կրթություն, համակարգ:

ԲԱԿԱԼԵԱ [< бакалея < արաբ. bakkāl ուտելիք վաճառող], գ. (խսկց.): Նպարեղեն՝ թեյ, շաքար, սուրճ, ալյուր, ձավարեղեն, չորացրած մրգեր և այլ նման ուտելիքների ամբողջությունը և խանութը (խանութի բաժինը), որտեղ դրանք վաճառվում են:

ԲԱԿԱՐԱ I [< баккара < ֆր. baccara], գ. Բարձրորակ բյուրեղապակի: Նախապես այն արտադրվել է ֆրանսիական Բակարա (Baccarat) քաղաքում գտնվող բյուրեղապակիների գործարանում:

ԲԱԿԱՐԱ II [< баккара < ֆր.], գ. Թղթախաղի տեսակ:

ԲԱԿԵՆ [< бакен < հոլանդ. baken], գ. (տեխ.): Խութերը ցույց տվող խարիսխավոր լողան:

ԲԱԿԵՆԲԱՐԴՆԵՐ [< бакенбарды < գերմ. Backenbart < Backe այտ + Bart մորուք], գ. (հնց.): Այտամորուք՝ մազի փնջեր, որոնք ձգվում են այտերի վրայով մինչև մաքուր ածիլված ծնոտը:

ԲԱԿԼԱԳԱ [< баклага < թաթարերեն baklak ջրանոթ], գ. (խսկց. հնց.): Տափաշիշ, գլանաշիշ:

ԲԱԿՏԵՐԵՄԻԱ [< бактеремия < հուն. bakteria ձողիկ, ցուպիկ + haima արյուն], գ. (կենսբ.): Բակտերարյունություն՝ բակտերիաների (մանրէների) առկայությունը արյան մեջ, որն առաջացնում է բազմաթիվ վարակիչ հիվանդություններ (օր.՝ տիֆ, բրուցելոզ ևն):

ԲԱԿՏԵՐԻԱԼԻԶ [< бактериолиз < հուն. bakteria + lysis լուծել, քայքայել], գ. (կենսբ.): Բակտերիաների (մանրէների) թաղանթի քայքայումը և պրոտոպլազմայի դուրս գալը շրջապատող միջավայր:

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ [< бактерии <հուն. bakteria], գ.(կենսբ.): Մանրէներ՝ բնության մեջ տարածված միաբջիջ մանր օրգանիզմներ, որոնք նկատելի են մանրադիտակով:

ԲԱԿՏԵՐԻԱՖԱԳԵՐ [< бактериофаги < հուն. bakteria + phagos խժռող, լափող], գ. Բակտերիային վիրուսներ, որոնք օժտված են բակտերիաներ և այլ միկրոօրգանիզմները քայքայող, լուծող հատկությամբ:

ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳ [< бактериолог < հուն.], գ. Մանրէաբան՝ մանրէների մասնագետ:

ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳԻԱ [< бактериология < հուն. bakteria + logos ուսմունք, գիտություն], գ. (գիտ.): Մանրէաբանություն՝ գիտություն մանրէների մասին:

ԲԱԿ(Ք)ՇՏԵՅՆ [< бакштейн < գերմ. Backstein, բառացի՝ աղյուս], գ. (խոհր.): Հոլանդական պանրի տեսակ՝ ճարպերի մեծ պարունակությամբ:

ԲԱԿՏՐԻԱՆ [< бактриан < հին պարսկ. < Բակտրիա (Bactria) տեղանունից, որտեղով անցնում էին դեպի Հնդկաստան և Չինաստան տանող քարավանային ճանապարհները], գ. (կենդբ.): Երկսապատավոր ձեռնասուն ուղտ. դրա վայրի տեսակները պահպանվել են Ասիայի որոշ շրջաններում:

ԲԱԿՈՒՆԻԶՄ [< Бакунизм < ռուս անարխիզմի և նարոդնիկության հիմնադիր Մ. Ա. Բակունինի անունից], գ. (պատմ.): Անարխիզմի տարատեսակ, որը կապված է Մ. Ա. Բակունինի անվան հետ:

ԲԱՄԲՈՒԿ [< бамбук < ֆր. bambou < մալայերեն bambu], գ. (բսբ.): Հնդկեղեգ՝ հացազգիների ընտանիքին պատկանող ծառակերպ արևադարձային խոտաբույս, որի հաստ, մերկ ու երկար ցողունը օգտագործվում է կահույքագործության և շինարարության մեջ:

ԲԱՄԻԱ [< бамя, бамья < թուրք.], գ. (բսբ.): 1. Տաղտուկազգիների ընտանիքին պատկանող միամյա բանջարանոցային բույս: 2. Այդ բույսի ունդը և դրա պատիճը:

ԲԱՄՊԵՐ [< бампер < անգլ. bumper], գ. (տեխ.): Ավտոմեքենայի թափարգել՝ բախարգել:

ԲԱՅԱՆ [< ռուս. баян հին ռուսական լեգենդար երգիչ-ասացող Բայանի կամ Բոյանի անունով], գ. (երժշտ.): Լեզվակավոր օդահունչ երաժշտական գործիք, կոճակավոր հարմոն՝ աջ ձեռքի ստեղնաշարի լրիվ հնչյունաշարով և ձախ ձեռքի բասային ու ակորդային նվագակցությամբ:

ԲԱՅԴԱՐԿԱ [< ռուս. байдарка], գ. (սպորտ.): Մակույկ՝ ջրային սպորտի և տուրիզմի համար:

ԲԱՅԹ [< байт < անգլ. byte], գ. Ինֆորմացիայի չափի միավոր. 1 բայթը հավասար է 8 բիթի:

ԲԱՅԿ(Ք)ԵՐ [< байкер < անգլ. biker < bike մոտոցիկլետ], գ. (խսկց.): Հատուկ հանդերձանքով (մուգ ակնոցներ, կաշվե հագուստ, տարատեսակ գոտիներ են) քաղաքային երիտասարդներ, որոնք անսահման սեր ունեն մոտոցիկլետների նկատմամբ. վարում են դրանք միայնակ կամ խմբերով:

ԲԱՅՐԱՄ [< байрам < թուրք. bairam հանդիսություն, տոն], գ. (կրոն.): Մահմեդական տոն՝ հանդիսություն, որի առաջին մասը սկսում է Ռամազանից անմիջապես հետո, իսկ երկրորդ մասը առաջինից յոթ օր հետո:

ԲԱՆԱԼ [< банальный < ֆր. banal անհամ, տափակ], ած. (խսկց. հնց.): Տափակ, անհամ, ծամծմված, ճղճիմ:

ԲԱՆԱՆ, ԲԱՆԱՆԵՆԻ [< банан < իսպ. banano < բակոնգո լեզվից banam], գ. (բսբ.): Աղամաթուզ, աղամաթզենի՝ բանանազգիների ընտանիքի բազմամյա բույսերի ցեղ: Հայտնի է մոտ 80 տեսակ. աճում է Աֆրիկայի, Ասիայի և Ավստրալիայի արևադարձային և մերձարևադարձային շրջաններում, նաև Բրազիլիայում, Հնդկաս-

տանում, Կենտրոնական Ամերիկայում: Մի շարք տեսակները ուտելի են, տերևապատյաններից ստանում են թել. նաև դեկորատիվ բույս է :

ԲԱՆԴԱ [< банда < իտլ. banda], գ. (խսկց.): Հրոսակախումբ, ավազակախումբ՝ գողերի, մարդասպանների խումբ:

ԲԱՆԴԱԺ [< бандаж < ֆր. bandage], գ. (խսկց.): 1. Փորի վրա կապելու հարմարանք՝ գոտի: 2. (տեխ.) Մեքենայի անվամաս, անվահեծ:

ԲԱՆԴԱՆԱ [< бандана < անգլ. bandana < իսպ. banda ժապավեն], գ. (խսկց.): Գլխաշոր (գունավոր ժապավեն կամ թաշկինակ):

ԲԱՆԴԵՐԻԼԱ [< бандерилья < իսպ. banderilla դրոշակ, ժապավեն], գ. (հզվդ.): Ցլամարտում՝ փոքր նիզակ՝ տեգ՝ զարդարված ժապավենով:

ԲԱՆԴԵՐԻԼԵՐՈ [< бандерильеро < իսպ. banderillero], գ. (հզվդ.): Հետիոտն ցլամարտիկ՝ զինված ժապավենով զարդարված կարճ նիզակով՝ տեգով:

ԲԱՆԴԵՐՈԼ [< бандероль < ֆր. banderole], գ. 1. (խսկց.): Խաչկապ, ծանրոցածրար, փաթեթ՝ փոստային հաղորդակցման տեսակ՝ գրքերի, ամսագրերի, թերթերի ուղարկման համար: 2. Պետական տուրքի թղթե պիտակ՝ մաքսը և տուրքը վճարելու մասին:

ԲԱՆԴԻՏ [< бандит < իտլ. banda], գ. (խսկց.): Ավազակ, ելուզակ, կողոպտիչ, կեղեքիչ:

ԲԱՆԴԻՏԻԶՄ [< бандитизм < իտլ.], գ. 1. Ավազակություն: 2. Պետական կառավարման և հասարակական անվտանգության հիմքերի դեմ ուղղված առավել վտանգավոր հանցագործություն:

ԲԱՆԴՈՒՐԱ [< бандура < լեհ. bandura < հուն.], գ. (երժշտ.): Ուկրաինական բազմալար կսմիթային երաժշտական գործիք:

ԲԱՆԵՐ [< баннер < անգլ. bannez դրոշակ], գ. (հմկրգչ.): Համացանցի որևէ տիրույթում՝ կայքում գովազդային նշան, որի վրա մկնիկով նշելով՝ ընդլայնված տեղեկություն կարելի է ստանալ գովազդվող ապրանքի նևի մասին:

ԲԱՆԿ [< банк < ֆր. banque], գ. Դրամատուն՝ հատուկ տնտեսական սահմանավարկեր, վարկային ոլորտի ձեռնարկություններ, որ կենտրոնացնում են բանակապես ազատ դրամական միջոցները (ավանդները) և օգտագործում վարկի ձևով. կատարում են դրամական հաշվարկներ, բաց թողնում թղթադրամ, վարկադրամ և տարատեսակ արժեթղթեր:

ԲԱՆԿԱ [< банка < լեհ. banka], գ. (խսկց.): Երկայնաձև՝ լայն բերանով ապակյա՝ կավե կամ հախճապակե անոթ:

ԲԱՆԿԵՏ [< банкет < ֆր. banquet], գ. (խսկց.): Ճաշկերույթ՝ հանդիսավոր ճաշկերույթ՝ որևէ մեկի պատվին կամ որևէ առիթով:

ԲԱՆԿԻՐ [< банкир < գերմ. Bankier < ֆր. banquier], գ.: Բանկային աշխատող՝ բանկի տնօրեն, բանկային խոշոր բաժնետեր:

ԲԱՆԿՆՈՏ [< банкнот < անգլ. banknote], գ. (ֆին.): 1. Բանկատոմս՝ շրջանառության մեջ գործող դրամ՝ փող: 2. Էմիսիոն բանկերի կողմից բաց թողնվող փող՝ թղթադրամ:

ԲԱՆԿՐՈՏ [< банкрот < գերմ. Bankerott < իտլ. bancorotto], գ. 1. (ֆին.): Սնանկացած, անվճարունակ հիմնարկ՝ ֆիզիկական անձ, որը ի վիճակի չէ վճարելու: 2. *փխբ.* Անհաջողակ՝ անհաջողության ենթարկված:

ԲԱՆՋՈ [< банджо < անգլ. banjo < իսպ.], գ. (երժշտ.): Լարային, կսմիթային երաժշտական գործիք, որի տարատեսակներն օգտագործվում են ջազում: Իրանը նման է կաշվե թաղանթով տափակ դափի՝ 4-9 լարով: XVII դարում Աֆրիկայից բերվել է ԱՄՆ:

ԲԱՆՏ [< бант < գերմ. Band ժապավեն], գ. (խսկց. հնց.) Ժապավենակապ, վարդակապ:

ԲԱՆՏՈՒ [< банту < բանտու ba հոգն. թիվ + ntu մարդ], գ. (լեզվբ.): Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի ամենատարածված լեզուների խումբ:

ԲԱՇԻԲՈԶՈՒԿ [< башибузук < թուրք. Bašybozuk < baš գլուխ + bozuk խելագար], գ. 1. (պատմ.): XIX դարում՝ թուրքական բանակի անկանոն զորամասի զինվոր: 2. (խսկց.): Ավազակ, մարդասպան:

ԲԱՈԲԱԲ [< баобаб < եթովպ.], գ. Վարազածառ, կապկածառ՝ արևադարձային Աֆրիկայում աճող վիթխարի ծառ. պտուղների միջուկը ուտելի է: Կեղևից ստացվող թելն օգտագործվում է կոպիտ գործվածքներ և պարաններ հյուսելու համար: Հայտնի է ծառի 10 տեսակ, ապրում է 4 -5 հազար տարի:

ԲԱՊՏԻԶՄ [< бантизм < հուն.], գ. (կրոն.): Բողոքականության ուղղություն, որը մկրտությունը թույլատրում է միայն գիտակցական հասակում:

ԲԱՊՏԻՍՏՆԵՐ [< баптисты < հուն. baptistes մկրտող], գ. Բապտիզմի հետևորդ:

ԲԱՍ [< бас < իտլ. basso < ֆր. basse ցածր], գ. (երժշտ.): 1. Տղամարդու ամենացածր ձայնը: 2. Այդպիսի ձայն ունեցող երգիչ: 3. Երաժշտական ստեղծագործության ամենացածր ձայնը: 4. Փողային կամ լարային գործիք, որը հնչում է այդ ձայնը:

ԲԱՍԵԻՆ [< бассейн < ֆր. bassin], գ. 1. (խսկց.): Ջրավազան: 2. (աշխրգ. երկրբ.): Ավազան:

ԲԱՍԵՏ [< бассет < անգլ. basset < base ցածր], գ. (կենդբ.): Ցածրահասակ որսորդական շների ցեղ և այդ ցեղի շուն:

ԲԱՍԻԼԵՎՍ [< Басилей, Басилеьс < հուն. basileus], գ. (պատմ.): Միկենյան դարաշրջանի Հունաստանում՝ ոչ մեծ բնակավայրի կամ տերիտորիալ համայնքի կառավարիչը, հոմերոսյան դարաշրջանում՝ ցեղի, ցեղային միության գլխավորը՝ օժտված ռազմական առաջնորդի, քրմապետի, դատավորի իրավունքներով:

ԲԱՍԿԵՏԲՈԼ [< баскетбол < անգլ. basket զամբյուղ + ball գնդակ], գ. (սպորտ.): Խմբական սպորտային գնդակախաղ (մասնակցում են երկու թիմեր՝ 5 խաղացողով), որի ժամանակ գնդակը փոխանցվում է ձեռքով և խմբերից յուրաքանչյուրը ձգտում է գնդակը նետել հակառակորդի՝ գետնից որոշակի բարձրության վրա գտնվող «զամբյուղը»:

ԲԱՍԿԵՏԲՈԼԻՍՏ [< баскетболист < անգլ.], ած. Բասկետբոլ խաղացող մարզիկ:

ԲԱՍՄԱ [< басма < թուրք.], գ. 1. Տավարի կու, աթար: 2. Կտավի մի տեսակ: 3. Ճաղկափոշի, որ խառնում են հինայի հետ: 4. Մազերին քսելու ներկ (փոշի կամ հեղուկ):

ԲԱՍՄԱՉ [< басмач < թուրք.], գ. (պատմ.): Հակա-

հեղափոխական բանդայի անդամ Միջին Ասիայում 1918-24 թթ.:

ԲԱՍՏԻԼԻԱ [< Бастилия < ֆր. Bastille], գ. (պատմ.): Ամրոց, նաև բանտ Փարիզում XIV-XVIII դդ.՝ միահեծան իշխանության խորհրդանիշ: Գրավվեց ֆրանսիական հեղափոխության ժամանակ ժողովրդի կողմից 1789 թ. հուլիսի 14-ին:

ԲԱՍՏԻՈՆ [< бастион < ֆր. bastion], գ. Ամրոցի պարսպափակի անկյուններում հնգանկյուն ամրություն՝ պարսպապատերի երկարությամբ կամ նրանց առջևի խրամատները և մոտակա տեղանքը գնդակոծելու համար:

ԲԱՏԱԼԻՈՆ[< батальон < ֆր. bataillon], գ. (ռազմ.): Գումարտակ՝ զինվորական միավոր, որը կազմված է 3-4 վաշտերից. լինում են հետևակային, տանկային, ինժեներական են:

ԲԱՏԱԼԻՍՏ [< баталист < իտլ. batalista], գ. (նկարչ.): Մարտանկարիչ՝ ճակատամարտի դրվագներ նկարող:

ԲԱՏԱՏ [< батат < իտլ. batata], գ. (բսբ.): Քաղցր կարտոֆիլ:

ԲԱՏԵՐՖԼԱՅ [< баттерфляй < անգլ. butterfly թիթեռ], գ. (սպորտ.): Սպորտային լողի տեսակ, երբ լողորդը, պահպանելով մարմնի հորիզոնական դիրքը, առաջ տարածած ձեռքերով կատարում է թիավարման շարժումներ դեպի ներքև և ետ, իսկ ոտքերը, ծալելով ծնկային և կոնքազդրային կողերում, կատարում է հրում: Արտաշնչելիս գլուխն իջեցվում է ջրի մեջ:

ԲԱՏՈՆ [< батон < ֆր. bâton ցուպ], գ. 1. Գլանահաց: 2. Ցպիկաձև շոկոլադ կամ հրուշակեղեն:

ԲԱՏՈՔՐՈՄՆԵՐ [< батохромы < հուն. bathos խոր + chrōma գույն], գ. Ատոմների խմբեր, որտեղ ներկայությունը օրգանական ներկանյութի մոլեկուլի մեջ խորացնում է նրա գույնը՝ փոխելով այն անգույն → դեղին → նարնջագույն→կարմիր→ մանուշակագույն → կապույտ → երկնագույն→ կանաչ → սև հաջորդականությամբ:

ԲԱՏՐԱԽՈԶԱՎՐ [< батрахозавр < հուն. batrachos գորտ + ... զավր], գ. (հնէաբ.): Հնակենդանաշրջանի (պալեզոյի) ողնաշարավոր բրածո կենդանի (երկկենցաղ սողուն):

ԲԱՏՐԱԽՈԼՈԳԻԱ [< батрахология < հուն. batrachos գորտ + logōs գիտություն], գ. (գիտ.): Երկկենցաղ կենդանիներ ուսումնասիրող կենդանաբանության բաժնի հնացած անվանում:

ԲԱՏՐԱԿ [< ռուս. батрак], գ. (պատմ.): Կուլակային կամ կալվածատիրական տնտեսություններում աշխատող գյուղատնտեսային բանվոր, մշակ:

ԲԱՏՈՒՏ [< батут < ֆր. batoude < իտլ. battuta հարված], գ. (սպորտ.): Ձգված ցանցատիպ կտոր, որի վրա թռչկոտում են կրկեսային արտիստները կամ մարզիկները:

ԲԱՐ I [< бар < անգլ. bar], գ. (խսկց.): 1. Խորտկարան՝ փոքր ռեստորան, որտեղ վաճառվում են ուտելիքներ և խմիչքներ վաճառասեղանի մոտ: 2. Խմիչքի (օղի, գինի, կոնյակ են) համար նախատեսված արկղ:

ԲԱՐ II [< бар < հուն. baros ծանրություն], գ. Ճնշման արտահամակարգային միավորը:

ԲԱՐԱԺ [< барраж < ֆր. barrage < barrer արգելափակել], գ. (տեխ.): 1. Աերոստատների արգելափակոց օդում: 2. Արգելափակոց (ականներից, ցանցերից են) ջրում նավերի կամ սուզանավերի համար: 3. Արգելափակոցներ (բլուրներից, քարակույտերից են) երկաթգծերի համար (հեղեղումների դեմ):

ԲԱՐԱԽԼՈ [< ռուս. барахло], գ. (խսկց. հնց.): 1. Հնոտիք, հին ու մին բան (զգեստ,

կարասի են): 2. Անպետք՝ անարժեք բան(եր): 3. *փխբ.* Անպետք մարդ:

ԲԱՐԱՆՏԱ [< баранта < թուրք. baranta ավազակային հարձակում], գ. Քոչվոր ժողովուրդների մոտ գոյություն ունեցող ավանդույթ, երբ հանցագործը ինքնագլուխ առևանգում է տուժողի անասունը կամ որևէ այլ գույք՝ բացառապես նպատակ ունենալով հարկադրել նրան կամ նրա ազգականներին քավելու նախկինում հասցրած վիրավորանքը կամ հատուցելու պատճառած նյութական վնասը:

ԲԱՐԱՏՐԻԱ [< баратрия < անգլ. barratry, բառացի՝ դատամոլություն, հայցամոլություն], գ. (ծով. իրավ.): Նավի անձնակազմի կամ կապիտանի դիտավորյալ գործողությունները նավին կամ բեռներին վնաս հասցնելու համար:

ԲԱՐԱՔ [< барак < ֆր. baroque < իտլ. baracca], գ. Սովորաբար փայտե տուն, շենք՝ ժամանակավոր բնակության համար:

ԲԱՐԲԵՔՅՈՒ [< барбекю < անգլ. barbecue շամփուրով խորոված < ֆր. barbecue մանղալ], գ. (խոհ.): Շամփուրով խորոված մսի կտորներ (հատուկ վառարանում), խորոված:

ԲԱՐԴ [< бард < կելտ. bard], գ. (պատմ.): Գուսան, երգիչ (հին կելտերի մոտ):

ԲԱՐԴԱԿ [< бардак < ֆր. bordel, նախնական՝ տնակ, բորդել բառի խեղաթյուրված ձևից], գ. (խսկց.): 1. Պոռնկատուն: 2. *փխբ.* Խառնշփոթ, քաոս:

ԲԱՐԴՈՏԻԶՄ [< бардотизм < ֆր. Bardotisme < ֆրանսիացի դերասանուհի Բ. Բարդոյի (Bardot) անունից], գ. (արվ.): Սեքս խորհրդանիշ համարվող կնոջ պաշտամունք:

ԲԱՐԺԱ [< баржа < ֆր. barge], գ. (ծով.): Բեռնանավ, լաստանավ, որը նախատեսված է բեռների փոխադրման համար գետերում, լճերում կամ նավահանգստի ջրամակերեսում:

ԲԱՐԻԼ [< баррилъ < իսպ. barril, բառացի՝ տակառ], գ. Չափման և տարողության միավոր Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում 1 բարիլ = 76 լ, որոշ երկրներում՝ 1 բարիլ = 97 լ:

ԲԱՐԻԿԱԴ [< баррикада < ֆր. barricade], գ. Արգելափակոց՝ փակոց՝ տարվածք, որ ապստամբները կառուցում են փողոցներում զանազան մեծածավալ իրերից (տակառներ, գերաններ, քարեր են)՝ փողոցային մարտերում հակառակորդից պաշտպանվելու համար:

ԲԱՐԻՈՆՆԵՐ [< барионы < հուն. barys ծանր], գ. (ֆիզ.): Պրոտոնից ոչ թեթև տարրական մասնիկների՝ հադրոնների խումբ:

ԲԱՐԻՍՏԵՐ [< барристер < անգլ. barrister], գ. (իրավ.): Մեծ Բրիտանիայում՝ բարձրաստիճան դատապաշտպան՝ փաստաբան, որը կարող է ծառայություններ մատուցել բոլոր տիպի դատարաններում:

ԲԱՐԻՍՖԵՐԱ [< барисфера < հուն.], գ. (երկրբ.): Երկրի կենտրոնական մասը:

ԲԱՐԻՏ [< барит < հուն.], գ. (ֆիզ.): Բարիումի բնական սուլֆատ, ծանրասպաթ:

ԲԱՐԻՏՈՆ [< баритон < հուն. barytonos], գ. (երժշտ.): 1. Տղամարդու ձայն՝ բասի և տենորի միջինը: 2. Այդպիսի ձայն ունեցող երգիչ: 3. Նվագախմբի պղնձե փողային գործիք:

ԲԱՐԻՈՒՄ [< барий < հուն. barys ծանր], գ. (քիմ.): Տարրերի պարբերական համակարգի II խմբի քիմիական տարր, Ba, արծաթագույն մետաղ:

ԲԱՐԽԱՆ [< бархан < թուրք. barxan շարժուն բլուր], գ. (հզվդ.): Ավազաթումբ (անապատում են)՝ քամուց տեղափոխվող՝ տեղաշարժվող:

ԲԱՐԽԱՏ [< бархат < գերմ. barchât < արաբ., պարսկ. barrakan], գ. (հնց.): Թավիշ:

ԲԱՐԿԱՍ [< баркас<հոլանդ. barkas], գ. 1. Նավի ամենամեծ մակույկը՝ 14-22 թիա-

կով: 2. Ինքնագնաց ոչ մեծ նավ՝ բեռներ կամ ուղևորներ տեղափոխելու համար:

ԲԱՐԿԱՐՈԼ [< баркарола < իտալ. barcarola < barca մակույկ], գ. (երժշտ.): 1. Կենցաղային երգի տեսակ, հատկապես տարածված է Վենետիկում, մակույկավարի, թիավարի երգ: 2. Ձայնի կամ երաժշտական գործիքի համար գրված, քնարական բնույթի հանդարտ ստեղծագործություն՝ 6/8 կամ 12/8 չափով:

ԲԱՐՄԵՆ [< бармен < անգլ. barman], գ. (խսկց.): Բարի տնօրեն կամ այն ղեկավարող անձ, ինչպես նաև բարի վաճառասեղանի հետևում աշխատող անձ՝ խմիչք, ուտելիք վաճառող:

ԲԱՐՅԵՐ [< барьер < ֆր. barriere], գ. (խսկց.): 1. Շարժմանը խանգարող արգելափակոցներ: 2. (սպորտ.): Արգելապատ, որի վրայից թռչելով՝ հաղթահարում է վազորդը:

ԲԱՐՈ ... [< баро < հուն. baros ծանրություն] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց կապը ծանրությանը, ճնշմանը:

ԲԱՐՈԹԵՐԱՊԻԱ [< баротерапия < բարո... + թերապիա], գ. (բժշկ.): Մթնոլորտային բարձր կամ ցածր ճնշման կիրառումը բարոկամերայում՝ որպես բուժական մեթոդ:

ԲԱՐՈԿԱՄԵՐԱ [< барокамера < բարո... + լատ. camera սենյակ < հուն. kamara], գ. (տեխ.): Բարոխցիկ՝ հերմետիկ խուց, որտեղ արհեստականորեն ստեղծվում է բարձր կամ ցածր ծանրաչափական ճնշում: Ծառայում է սարքերի փորձարկման, տիեզերագնացների, օդաչափերի մարզման, նաև որոշ հիվանդությունների բուժման համար:

ԲԱՐՈԿԿՈ [< барокко < իտալ. barocco պաճուճազարդ], գ. (արվ.): Եվրոպական արվեստի ոճ, որը երևան է եկել XVI դարում՝ հաջորդելով Վերածննդին և կլասիցիզմին (XVII-XVIII դդ.):

ԲԱՐՈՄԵՏՐ [< барометр < հուն. baros ծանրություն + metreō չափում եմ], գ. 1. Խորաչափ՝ մթնոլորտային ճնշման չափման գործիք՝ սարք: 2. փխբ. Հասարակական, հոգեկան, զանազան վիճակների փոփոխության ցուցիչ:

ԲԱՐՈՆ [< барон < ֆր. baron < հին գերմ. baro ազատ], գ. (պատմ.): Ազնվականական կոչում Արևմտյան Եվրոպայում. Ռուսաստանում բարոնի կոչումը մտցվել է Պետրոս Մեծի կողմից:

ԲԱՐՈՆԵՍԱ [< баронесса < ֆր. baronesse], գ. (պատմ.): Բարոնի կինը կամ դուստրը:

ԲԱՐՈՆԵՏ [< баронет < անգլ. baronet], գ. Ազնվականական կրտսեր կոչում Անգլիայում:

ԲԱՐՏԵՐ [< бартер < անգլ. barter], գ. (առևտր.): Առևտրի տեսակ, երբ մի ապրանքը փոխարինվում է մյուսով, ապրանքափոխանակություն:

ԲԱՐՐԵԼ, ԲԱՐԵԼ [< баррель < անգլ. barrel տակառ], գ. Չափման և տարողության միավոր Անգլիայում և ԱՄՆ-ում. Անգլիայում սորուն նյութերի համար 1 բարրել= 163.65 լիտր, ԱՄՆ-ում՝ 1 բարրել =115.64 լիտր. նավթի համար՝ 158.76 լիտր:

ԲԱՑԻԼ [< бацилла < լատ. bacillum], գ. (բժշկ.): Ցուպիկի ձև ունեցող մանրէ՝ հիվանդության հարուցիչ:

ԲԱՑԻԼԱԿԻՐ, ած. Իր մեջ վարակիչ հարուցիչներ կրող՝ ունեցող (մարդ, կենդանի):

ԲԱՔ [< бак < հոլանդ. bak տաշտ], գ. (տեխ.): Հեղուկի՝ ջրի, բենզինի ևն պահեստավորման համար նախատեսված մետաղյա մեծ փակ անոթ՝ տարա, պարունակություն:

ԲԱՔԽՈՍ [< бакхий < հուն. bakcheion], գ. (տղչփ.): Անտիկ տաղաչափության մեջ՝ բանաստեղծական ոտքի տեսակ, որը բաղկացած էր մեկ կարճ և երկու երկար վանկերից:

ԲԱՔՈՍ [< Бахус < հուն. Bakchos < լատ. Bacchus], գ. 1. (դից.): Հին հռոմեացիների գինու և խրախճանքի աստծու անունը: 2. *փխբ.* Գինարբուք, կերուխում:

ԲԱՔՈՍՈՒՀԻ, գ. (դից.): 1. Բաքոսի քրմուհի (Հին Հռոմում): 2. *փխբ.* Հեշտասեր՝ վավաշոտ՝ ցոփ կին:

ԲԱՔՍ [< бакс < անգլ. bucks իշոտնուկ (հարմարանք փայտ սղոցելու համար) սկզբնապես այդպես է անվանվել տասդոլարանոց թղթադրամը, քանի որ վրան պատկերված էր հռոմեական X թիվը], գ. (խսկց.): Ամերիկյան դոլար(ներ):

ԲԵԱՏԻՖԻԿԱՑԻԱ [< беатификация < ֆր. beatification < լատ. beatificus երջանկաբեր], գ. (կրոն.): Կաթոլիկ եկեղեցում՝ սրբերի դասին դասելը:

ԲԵԲԻ [< беби < անգլ. baby երեխա, մանուկ], գ. (խսկց.): Մանկիկ:

ԲԵԲԻՍԻՏԵՐ [< бебиситер < անգլ. babysitter < baby երեխա + to sit նստել], գ. (խսկց.): Երեխա խնամող (հաճախ որոշակի գումարի դիմաց) անձ:

ԲԵԳ, ԲԵԿ [< бек < թուրք.], գ. Թուրքական ժողովուրդների մոտ կալվածատերի, ֆեոդալի անվանում: 2. Հաճախ օգտագործվում է հատուկ անուններին կից:

ԲԵԳԵՄՈՏ [< бегемот < հին հրեերեն bəhēmoth], գ. (կենդբ.): Գետաձի՝ խոշոր խոտակեր կենդանի, որն ապրում է Աֆրիկայի լճերում և գետերում:

ԲԵԳՈՆԻԱ [< бегония < լատ. Begonia], գ. (բսբ.): Բեգոնիաների ընտանիքի բազմամյա բույսերի ցեղ: Թփեր, կիսաթփեր և խոտեր են՝ սողացող (երբեմն մագլցող) կամ պալարաձև հաստացած կոճղարմատներով: Օգտագործվում է նաև սենյակային ծաղկաբուծության մեջ:

ԲԵԴՎԻՆՆԵՐ [< бедуины < արաբ. անապատի բնակիչ], գ. Առաջավոր Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի վաչկատուն և կիսավաչկատուն անասնապահ արաբները:

ԲԵԶԵ [< безе < ֆր. baiser համբույր], գ. (խոհր.): Քաղցրավենիք՝ ձվի սպիտակուցով և շաքարավազով հարված:

ԲԵԺ [< беж < ֆր. beige], ած. (խսկց.): Բաց դարչնագույն՝ դեղնավարդագույն երանգով:

ԲԵԼԵՄՆԻՏՆԵՐ [< белемниты < հուն. belemnon սլաք], գ. (կենդբ. հնէաբ.): Գլխոտանի փափկամորթների ներքին խեցավորների ենթադասին պատկանող կենդանիների մահացած խումբ:

ԲԵԼԵՏԱԺ [< бельэтаж < ֆր. bel գեղեցիկ], գ. (ճարտ. խսկց.): Շենքի երկրորդ՝ հիմնական (սովորաբար բարձր սենյակներով) հարկը:

ԲԵԼԵՏՐԻՍՏԻԿԱ [< беллетристика < ֆր. belles lettres գեղեցիկ գրականություն], գ. (գրկն.): Գեղարվեստական արձակ ստեղծագործությունների (պատմվածք, վեպ, վիպակ են) հավաքական անվանումը: Արձակագիր գրողին երբեմն կոչում են բելետրիստ:

ԲԵԼԻԼԱ [< ռուս. белила], գ. Սպիտականերկ՝ 1. Սպիտակ հանքային ներկ՝ պատերը, դռները ներկելու համար: 2. Սպիտակ ներկ՝ թատերական դիմակահարդարության համար:

ԲԵԼԿԱՆՏՈ [< бельканто < իտալ. bel canto գեղեցիկ երգեցողություն], գ. (երժշտ.): Վոկալ կատարման ոճ. կազմավորվել է XVII դարի կեսին Իտալիայում, որին բնորոշ է վոկալացման սահունությունը և գեղեցկությունը, երգեցողության առավելագույն թեթևությունը և ազատությունը, կատարման նրբագեղությունը:

ԲԵԼՎԵԴԵՐ [< бельведер < իտալ. belvedere գեղեցիկ տեսք՝ տեսարան], գ. (ճարտ.): Արևնակ՝ շենքը պսակող աշտարակ, վերնաշենք կամ առանձին կառույց բարձրադիր վայրում, որտեղից դիտվում է գեղատեսիլ շրջակայքը, դիտանոց:

ԲԵԿԱՐ [< бекар < ֆր. bécarre], գ. (երժշտ.): Նախորդող դիեզի կամ բեմոլի գործողությունը վերացնող և նոտայի հիմնական նշանակությունը վերականգնող նշան:

ԲԵԿՈՆ [< бекон < անգլ. bacon], գ. (խոհր.): Խոզի ապխտած կամ չորացած միս:

ԲԵՄՈԼ [< бемоль < ֆր. bemol < իտալ. bemolle], գ. (երժշտ.): Հնչյունաշարի որևէ աստիճանը կես տոն իջեցնելու նոտագրական նշան (b), կիսվար:

ԲԵՅ [< бай < թուրք. bai հարուստ, տեր, պարոն], գ. Միջին Ասիայում, Թուրքիայում նն՝ ֆեոդալների, հարուստների, վաճառականների համար գործածվող անվանում, բեգ:

ԲԵՅԼԻՖ [< бейлиф < անգլ. bailiff], գ. Անգլիախոս երկրներում՝ շերիֆի օգնական (դատական օրգաններին կցված ոստիկան):

ԲԵՅՋ [< бейдж < անգլ. badge նշան], գ. (խսկց.): Անվանաքարտ՝ բաճկոնին ննին ամրացված որևէ կազմակերպության աշխատակցի քարտ՝ ժողովի մասնակցի ննի անձնական տվյալներով:

ԲԵՅՍԲՈԼ [< бейсбол < անգլ. baseball], գ. (սպորտ.): Անգլիայում և ԱՄՆ-ում տարածված գնդակով և ծեծանով սպորտային խաղ:

ԲԵՅՍԻԿ(Ք) [< бейсик < անգլ. basic հապավում beginners all-purpose symbolic instruction code], գ. (հմկրգչ.): Ծրագրավորման լեզու՝ հաշվողական համամետաբար հեշտ խնդիրներ լուծելու համար (օգտագործվում է փոքր և անհատական համակարգիչներում):

ԲԵՆԴԻ [< бенди < անգլ. bandy], գ. (սպորտ.): Գնդակով հոկեյի անգլերեն անվանումը:

ԲԵՆԵՖԻՍ [< бенефис < ֆր. bénéfice], գ. 1. (խսկց.): Ներկայացում՝ հօգուտ մասնակիցներից մեկի կամ մի քանիսի: 2. Տոնահանդես, ներկայացում՝ հանդես ինչ-որ մեկի պատվին:

ԲԵՆԵՖԻՑԻԱՆՏ [< бенефициант < ֆր.], գ. Դերասան նն, որի պատվին կամ համար կազմակերպվում է բենեֆիս:

ԲԵՆԵՖԻՑԻՈՒՄ [< бенефиций < լատ. beneficium բարեգործություն], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ որևէ արտոնություն (օր.՝ հարկատուին, կայսերական

ժամանակաշրջանում՝ զանազան հարկային արտոնություններ, կայսրերի շնորհագրեր են): 2. Արևմտյան Եվրոպայում՝ վաղ միջնադարում բենեֆիցիում՝ գլխավորապես հողի պայմանական և ժամանակավոր շնորհում էր թագավորի կամ ֆեոդալ-սենյորի կողմից՝ զինվորական կամ վարչական ծառայության համար: 3. Եկեղեցական եկամտաբեր պաշտոն կաթոլիկ եկեղեցում:

ԲԵՆԶԻՆ [< бензин < իտլ. benzina < ֆր. benzine < լատ. benzone], գ. Նավթի թորումից ստացվող անգույն դյուրավառ հեղուկ՝ ներքին այրման շարժիչների համար:

ԲԵՆԶՈԼ [< бензол < արաբ. benzoa հոտավետ հյութ (ben հոտ, բուրմունք + zoa հյութ) + լատ. ol (eum) յուղ], գ. (քիմ.): Հեղուկ ածխաջրածին, որ ստացվում է քարածխի՝ ձյութի՝ նավթի են թորումից: Անգույն, յուրահատուկ հոտով, դյուրաշարժ, ցնդող հեղուկ է, որը լայնորեն օգտագործվում է ներկանյութերի, դեղերի ևն արտադրության մեջ:

ԲԵՆԹՈՍ [< бентос < հուն. benthos խորություն], գ. (կենդբ.): Օրգանիզմների ամբողջություն, որ ապրում է ծովային և մայրցամաքային ջրավազանների հատակում և հատակամերձ շերտերում:

ԲԵՆԻԼՅՈՒՔՍ [< Бенилюкс < Բելգիայի, Նիդեռլանդների և Լյուքսեմբուրգի անվանումներից], գ. Բելգիայի, Նիդեռլանդների (Հոլանդիա) և Լյուքսեմբուրգի մաքսատնտեսական դաշինքի կրճատ անվանումը:

ԲԵՇԱՄԵԼ [< бешамель < ֆր. béchamel], գ. (խոհր.): Կաթով, կաթնասերով, ձվով և ալյուրով պատրաստված սոուս, որը մատուցվում է մսի, ձկան ևնի հետ:

ԲԵՇԲԱՐՄԱԿ [< бешбармак < թուրք. bäšbarmak, բառացի՝ հինգ մատ], գ. (խոհր.): Ոչխարի մսով ուտեստ՝ ալյուրի համեմունքով. ուտում են ձեռքով (այստեղից էլ անվանումը):

ԲԵՆՏՈՆԻՏ, ԲԵՆԹՈՆԻՏ, [< бентонит < անգլ. bentonite ԱՄՆ-ի Բենթոն բնակավայրի անունից], գ. (հնք.): Սպիտակեցնող կավերի տարատեսակներ, որոնք օգտագործվում են մետալուրգիայում, սննդի, նավթի, տեքստիլ, թղթի արդյունաբերություններում, կերամիկայում:

ԲԵՆՈՒԱՐ [< бенуар < ֆր. baignoire, նախնական՝ վաննա < baigner լողացնել], գ. (թատր.): Օթյակներ հանդիսադահլիճում՝ պարտերի մակարդակին հավասար կամ մի քիչ դրանից բարձր:

ԲԵՇՄԵՏ [< бешмет < թուրք.], գ. Տղամարդու զգեստ, որը տարածված է Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի ժողովուրդների մոտ:

ԲԵՍՏՍԵԼԵՐ [< бестселлер < անգլ. bestseller < best լավագույն + to sell վաճառել], գ. (խսկց.): Շատ տպաքանակով, արագ վաճառվող, մեծ պահանջարկ ունեցող գիրք:

ԲԵՏԱ [< бета < հուն. beta], գ. 1. Հունական այբուբենի երկրորդ տառը: 2. Նյութի վիճակներից մեկի անվանումը: 3. Մասնիկ, որը ցույց է տալիս տվյալ տերմինի կապը բետա-մասնիկների հետ:

ԲԵՏԱ-ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ, գ. (ֆիզ.): Ռադիոակտիվ նյութերից արձակվող և արագ տատանումների հոսք հանդիսացող ճառագայթներ:

ԲԵՏԱ-ՄԱՍՆԻԿՆԵՐ, գ. (ֆիզ.): Ռադիոակտիվ նյութերից արձակվող էլեկտրոններ:

ԲԵՏԱՏՐՈՀՈՒՄ, գ. Ատոմների միջուկների ռադիոակտիվ փոխարկում:

ԲԵՏԱՏՐՈՆ [< бетатрон < հուն. beta + elektron], գ. (տեխ.): Արագացուցիչ՝ շարժման՝ գործողության ևն գործընթացն արագացնող մեքենա՝ սարք՝ հարմարանք:

ԲԵՏՈՆ [< бетон < ֆր. béton < լատ. bitumen բիտում], գ. (շին.): Ցեմենտի, ավազի, ջրի, խճի խառնուրդից ստացվող կարծրացած շաղախ, որ օգտագործվում է որպես շինանյութ:

ԲԵՐԳԱՄՈՏ [< бергамот < ֆր. bergamotte < իտլ. bergamotta < թուրք. bej armudu < bej պարոն, իշխան + armudu տանձ], գ. (բսբ.): Քաղցր, հյութալի տանձ և դրա ծառը (տանձենի):

ԲԵՐԵ [< бере < ֆր. beurré յուղով պատված], գ. (բսբ.): Աշնանային տանձենու տեսակ՝ խոշոր, հյութալի պտուղներով (յուղի նման մսալի միջուկով):

ԲԵՐԵՏ [< ռուս. берет], գ. Առանց հովարի փափուկ գլխարկ՝ մահուդից կամ թավշից:

ԲԵՐԻ-ԲԵՐԻ [< бери-бери < սինգալերեն beri թուլություն], գ. (բժշկ.): Սննդային բազմանյարդաբորբ՝ հիվանդություն, որն առաջանում է սննդի մեջ վիտամին B1-ի (թիամինի) պակասության կամ բացակայության հետևանքով:

ԲԵՐԻԼ [< берилл < հուն. bēryllos], գ. (հնք.): Հանքատեսակ, որի տարբերակները թանկագին քարեր են (զմրուխտ, հելիոդորը ևն):

ԲԵՐԻԼԻՈՒՄ [< берилий], գ. Քիմիական տարր՝ խիստ թեթև ու պինդ պողպատագույն մետաղ:

ԲԵՐԿԼԻՈՒՄ [< берклий, беркелий < անվանվել է ի պատիվ հայտնաբերման վայրի՝ Բերկլի քաղաք (Կալիֆոռնիա, ԱՄՆ)], գ. (քիմ.): Ակտինիդների ընտանիքի արհեստական ռադիոակտիվ քիմիական տարր:

ԲԵՐԿՈՒՏ [< беркут < թուրք. börküt], գ. (կենդբ.): Քարարծիվ. օգտագործում են նապաստակ, աղվես, հազվադեպ նաև գայլ և եղնիկ որսալու համար:

ԲԵՐՏՈԼԵՏՅԱՆ [< бертолетова < ֆր. քիմիկոս Կ. Լ. Բերտոլի (Bertollet) անունից] աղ - (քիմ.): Լուցկիների, պայթուցիկ նյութերի, ազդանշանային հրթիռների արտադրության մեջ կիրառվող քիմիական նյութ (կալիումի քլորատ):

ԲԵՔ ՎՈԿԱԼ [< бэк-вокал < անգլ. backing vocal,բառացի՝ երգեցողություն հետին պլանում], գ. (երժշտ.):Երգային կատարում կամ ձայնակցում, որը ուղեկցում է հիմնական վոկալ երգին:

ԲԵՔ ՎՈԿԱԼԻՍՏ [< бэк-вокалист < անգլ. backing vocalist, բառացի՝ հետին պլանում երգող], գ. (երժշտ.):Անձ, որը ձայնակցում է հիմնական մենակատարին:

ԲԵՖՍՏՐՈԳԱՆՈՎ [< бефстроганов < ֆր. boeuf տավարի միս և ռուս. ազգանուն Строганов], գ. (խոհր.): Մանր կտորներով միսը թթվասերով տապակած ուտեստ:

ԲԻ ... [< би ... < լատ. bi < bis կրկնակի] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց առնչությունը երկու առարկաների, երևույթների հետ:

ԲԻԱԹԼՈՆ [< биатлон < բի... + հուն. athlon ըմբշամարտ], գ. (սպորտ.): Ձմեռային սպորտային մարզաձև. դահուկային վազք (20 կմ)՝ չորս կանգառով, և հրացանային հրաձգություն:

Բի-Բի-Սի [< ББС < անգլ. British Broadcasting Corporation, BBC], գ. Բրիտանական ռադիոհաղորդումների կորպորացիա, որը հիմնադրվել է 1927 թ.:

ԲԻԲԼԻԱ [< библия < հուն. biblia < biblion (գիրք) հոգնակի], գ. (կրոն.): Աստվածաշունչ՝ քրիստոնեական և հրեական կրոնի սրբազան գիրքը:

ԲԻԲԼԻՈ ... [< библио ... < հուն. biblion գիրք] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց առնչությունը գրքի հետ:

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ [< библиография < բիբլիո... + հուն. graphō գրում եմ], գ. (գիտ.): Մատենագրություն՝ 1. Գրքերի և այլ հրատարակությունների գիտական

որևէ հատկանիշով ու որոշակի սկզբունքով համակարգի վերածված թվարկումն ու նկարագրությունը: 2. Որևէ գիտության՝ գիտակարգի՝ գիտական խորհրդի են վերաբերող գրականության ցուցակ: 3. Մատենագիտական ցանկեր կազմելու եղանակներին ու մեթոդներին վերաբերող գիտելիքների ամբողջությունը՝ որպես գիտակարգ:

ԲԻԲԼԻՈՄԱՆ [< библиоман < բիբլիո... + ...ման], գ. (խսկց.): Գրքամոլ:

ԲԻԲԼԻՈՄԱՆԻԱ [< библиомания < բիբլիո... + ...մանիա], գ. (խսկց.): Գրքամոլություն՝ գրքեր կուտակելու կիրք:

ԲԻԲԼԻՈՏԵԿԱ [< библиотека < հուն. bibliothēkē], գ. (հնց.): Գրադարան՝ 1. Գրքերի հավաքածու: 2. Տեղ՝ շինություն, որտեղ հավաքված են գրքեր: 3. Հաստատություն, որ ընթերցանության համար գրքեր է տալիս:

ԲԻԳԱՄԻԱ [< бигамия < բի... + հուն. gamos ամուսնություն], գ. (գիտ.): Երկամուսնություն, երկկնություն:

ԲԻԳՈՒԴԻ [< бигуди < ֆր. bigoudi], գ. (խսկց.): Մազերը խոպոպելու հարմարանք, վարսափաթթուկ:

ԲԻԴԵ [< биде′ < ֆր. bidet], գ. Լվացվելու հատուկ հարմարանք:

ԲԻԴՈՆ [< ռուս. битон], գ. (խսկց.): Նեղ բերանով ու կափարիչով կոնաձև թիթեղյա աման՝ հեղուկներ պահելու համար:

ԲԻԵՖ [< биеф < ֆր. bief], գ. Գետի, ջրամբարի կամ ջրանցքի հատված, որը հարում է հենարանային կառույցին (ամբարտակ, շլյուզ են):

ԲԻԶՆԵՍ [< бизнес < անգլ. business], գ (խսկց.): Գործարարություն՝ առևտրով, տնտեսական գործունեությամբ զբաղվելը:

ԲԻԶՆԵՍՄԵՆ [< бизнесмен < անգլ. businessman], գ. (խսկց.): Գործարար՝ առևտրով, տնտեսական գործունեությամբ են զբաղվող անձ:

ԲԻԶՈՆ [< бизон < լատ. հուն. bison], գ. (կենդբ.): Վայրի ցուլ, որը ապրում էր Հյուսիսային Ամերիկայում:

ԲԻԹ [< бит < անգլ. bit բիչ], գ. (տեխ.): Ինֆորմացիայի չափի նվազագույն միավոր:

ԲԻԹԼԶ [< Битлз < անգլ. «The Beatles» բզեզներ], գ. Անգլիական վոկալ-գործիքային քառյակի անունը, որը կազմակերպվել է 1960 թ. Լիվերպուլում: Անդամներն էին Պ. Մակ-Քարտնին, Ջ. Լենոնը, Ջ. Հարիսոնը, Ռ. Սթարը:

ԲԻԺՈՒՏԵՐԻԱ [< бижутерия < ֆր. bijouterie ոսկյա իրերի վաճառք], գ. (խսկց.): Կանացի զարդարանքներ (ականջօղեր, մատանիներ, թևնոցներ են), որոնք պատրաստված են ոչ թանկարժեք մետաղներից և քարերից:

ԲԻԼԱԲԻԱԼ [< билабиальный < բի... +

լատ. labialis շրթնային], ած. գ. (լեզվբ.): Երկշրթնային բաղաձայններ, որոնց արտաբերումը կատարվում է վերին և ստորին շրթունքների ակտիվ մասնակցությամբ (օր.՝ բ, պ, փ, մ):

ԲԻԼԲՈՐԴ [< бильборд < անգլ. billboard < to bill գովազդել + board տախտակ], գ. Գովազդային վահանակ (քաղաքային ճանապարհներում, մայրուղիներում են):

ԲԻԼԻԱՐԴ [< бильярд < ֆր. billard, bille գունդ], գ. (սպորտ.): Սեղանի գնդախաղ՝ հատուկ ձևով սարքված սեղանով և երկար ձողով: Այս խաղի հայրենիքը համարվում են Հնդկաստանը և Չինաստանը: Եվրոպայում տարածվել է XVI դարից:

ԲԻԼԻՆԱ [< рус. билина], գ. (գրկն.): Ռուսական ժողովրդական բանահյուսության ժանր՝ հերոսական և սոցիալ-կենցաղային բովանդակությամբ էպիկական երգ:

ԲԻԼԻՆԳՎԻԶՄ [< билингвизм < լատ. bilinguis], գ. (լեզվբ.): Երկլեզվություն՝ երկու լեզուների հավասարապես գործածություն:

ԲԻԼԻՈՆ [< биллион < ֆր. billion], գ. (մաթ.): Թվանշան, որ հավասար է մեկ միլիարդի (ռուսական, ֆրանսիական, ամերիկյան համակարգերում) և հազար միլիարդի (գերմանական, անգլիական, հայկական համակարգերում):

ԲԻԼԻՌՈՒԲԻՆ [< билирубин < լատ. bilis լեղի + ruber կարմիր], (կենսբ.): գ. Մարդու և ողնաշարավոր կենդանիների օրգանիզմի հիմնական ներկող նյութերից մեկը, որը պարունակվում է լեղու, աննշան քանակությամբ նաև արյան և հյուսվածքների մեջ. դարչնագույն բյուրեղներ են:

ԲԻԼԻՎԵՐԴԻՆ [< биливердин < լատ. bilis + ֆր. vert (verd) կանաչ], գ. (կենսբ.): Մարդու և ողնաշարավոր կենդանիների օրգանիզնի հիմնական ներկող նյութերից մեկը. կանաչ գույնի է:

ԲԻԼԼ [< билль < անգլ. bill], գ. (իրավբ.): Որոշ անգլիախոս երկրներում (Անգլիա, ԱՄՆ, Կանադա են) օրենքի նախագծի անվանում, որը ներկայացնում է օրենսդրական օրգանների քննարկմանը, նաև մի շարք սահմանադրական ակտերի անվանում, օր.՝ Բիլլ իրավունքների մասին (անգլ. Bill of Rights):

ԲԻԿԱՄԵՐԱԼԻԶՄ [< бикамерализм < անգլ. bicameralism < bicameral երկպալատ], գ. (քղք.): Որոշ երկրներում պառլամենտական երկպալատ համակարգ:

ԲԻԿԱՐԲՈՆԱՏՆԵՐ [< бикарбонаты < բի… + լատ. carbo (carbonis) ածուխ], գ. (քիմ.): Ածխաթթվի թթու աղերը, որոնք տաքացնելիս կամ թթվի ազդեցությամբ քայքայվում են (անջատելով CO_2) և վերածվում կարբոնատների: Ժամանակակից անվանումն է հիդրոկարբոնատներ:

ԲԻԿԻՆԻ [< бикини < Խաղաղ օվկիանոսում Bikini կղզու անվանումից], գ. (խսկց.): Կանացի լողազգեստի տեսակ:

ԲԻՀԵՎԻՈՐԻԶՄ [< бихевиоризм < անգլ. behaviour վարք], գ. (գիտ.): Ամերիկյան հոգեբանության ուղղություն, որը մարդու վարքագիծը բացատրում է ֆիզիոլոգիական ազդեցություններով:

ԲԻՄԵՏԱԼԻԶՄ [< биметаллизм < բի… + լատ. metallum < հուն. metallon հանք], գ. (ֆին.): Երկմետաղություն՝ դրամական համակարգ, երբ երկրում ոսկուն և արծաթին օրենսդրությամբ տրվում է համընդհանուր համարժեքի դեր:

ԲԻՆԱՐ [< бинарный < լատ. binarius], ած. Կրկնակի՝ երկու մասից, բաղադրիչներից կազմված:

ԲԻՆԱՈՒՐԱԼ [< бинауральный < լատ. bini զույգ, երկու + auris ականջ], ած. (կենսբ.): Բինաուրալ էֆեկտ՝ ընդունակություն, որով օժտված մարդիկ ու բարձ-

ռակարգ կենդանիները երկու ձայնընդունիչներով՝ ականջներով, որոշում են, թե իրենցից ինչ ուղղության վրա է գտնվում ձայնի աղբյուրը:

ԲԻՆԳՈ [< бинго < անգլ. bingo], գ. Դրամով խաղի տեսակ, երբ լրացվում է կտրոնը արկղից դուրս մղվող գնդերի վրա նշված թվերի օգնությամբ.կտրոնը առաջինը լրացնող մասնակիցը բղավում է «բինգո»՝ որպես հաղթության նշան:

ԲԻՆՈԿԼ [< бинокль < ֆր. binocle < լատ. bini + oculus աչք], գ. (հնց.): Հեռադիտակ՝ ձեռքի գործիք՝ հեռավոր առարկաները լավ դիտելու համար:

ԲԻՆՈՄ [< бином < բի… + հուն. nome մասնաբաժին, մաս], գ. (մաթ.): Երկանդամ՝ երկու հանրահաշվական արտահայտությունների գումարը կամ տարբերությունը:

ԲԻՆՏ [< бинт < գերմ. Binde], գ. (խսկց.): Վիրակապ՝ վերքը կապելու երկար ձգվող փաթաթան:

ԲԻՈ… [< био... < հուն. bios կյանք] Բարդ բառերի մաս, որը նշանակում է կապ կյանքի, կենսական գործընթացների հետ:

ԲԻՈԳԵՆԵԶ [< биогенез < բիո…+ հուն. genesis ծագում], գ. (գիտ.): Կենսածագում՝ տեսություններ, որոնք ժխտում են Երկրի վրա կյանքի ծագումը որպես անկենդան մատերիայից կենդանի էակների առաջացման արդյունք:

ԲԻՈԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՕՐԵՆՔ [< биогенетический закон] - (գիտ.): Կենդանի բնության օրինաչափություն. ձևակերպել է գերմանացի գիտնական Է. Հեկկելը (1866 թ.), որի էությունն այն է, որ օրգանիզմի անհատական զարգացումը՝ օնտոգենեզը, տեսակի էվոլյուցիայի՝ ֆիլոգենեզի, փուլերի արագ և համառոտ կրկնությունն (ռեկապիտուլյացիա) է:

ԲԻՈԳԵՈԳՐԱՖԻԱ [< биеогеография < բի…+ գեո…+ հուն. graphia], գ. (գիտ.): Կենսաաշխարհագրություն՝ երկրագնդի վրա կենդանական ու բուսական մարմինների տարածման ու բաշխման ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:

ԲԻՈԳԵՈՑԵՆՈԶ [< биогеоценоз < բիո…+ գեո…+ հուն. koinos ընդհանուր], գ. Բնության ամենաբարդ համակարգերից մեկն է, որը, նյութերի և էներգիայի փոխանակությամբ կապված, կենդանի և անկենդան բաղադրամասերի փոխադարձ պայմանավորված համալիր է:

ԲԻՈԳԵՈՑԵՆՈԼՈԳԻԱ [< биогеоценология < բիո… + գեո…+ հուն. logos ուսմունք], գ. Գիտություն բիոգեոցենոզների և կենսոլորտի մասին:

ԲԻՈԳԵՈՔԻՄԻԱ [< биогеохимия < բիո…+ գեո… + լատ. (al)chimia], գ. (գիտ.): Կենսաերկրաքիմիա՝ կենսաքիմիայի այն ճյուղը, որ ուսումնասիրում է կենսոլոր-

տում կենդանի մարմինների մասնակցությամբ տեղի ունեցող երկրաքիմիական երևույթներ:

ԲԻՈԳՐԱՖԻԱ [< биография < բիո…+ հուն. graphia], գ. Կենսագրություն՝ 1. (հնց.): Մեկի կյանքի և գործունեության շարադրությունը կամ նկարագրությունը: 2. Որևէ մեկի կյանքը՝ կյանքի ուղին:

ԲԻՈԴԻՆԱՄԻԿԱ [< биодинамика < բիո…+ հուն. dynamikos ուժային], գ. (գիտ.): Կենսադինամիկա՝ կենդանի մարմնի ընդհանուր կենսագործունեության ուսումնասիրությունը:

ԲԻՈԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼՆԵՐ [< биоэлектрические потенциалы] - (գիտ.): Կենսաէլեկտրական պոտենցիալներ. առաջանում են մարդու, կենդանիների, բույսերի հյուսվածքներում, առանձին բջիջներում և հանդիսանում են գրգռման, արգելակման գործընթացների կարևորագույն բաղադրամասը:

ԲԻՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ [< биоэнергетика < բիո... + հուն. energeia գործունեություն], գ. (գիտ.): Կենսաէներգետիկա՝ ուսումնասիրում է օրգանիզմի կենսագործունեության ընթացքում փոխակերպվող էներգիայի մեխանիզմները:

ԲԻՈԻՆԴԻԿԱՏՈՐՆԵՐ [< биоиндикаторы < բիո… + լատ. indicator ցուցիչ], գ. (գիտ.): Կենսացուցիչներ՝ օրգանիզմներ, որոնց առկայությունը ցույց է տալիս որևէ բնական գործընթացի կամ որոշակի նյութերի գոյությունը:

ԲԻՈԼՅՈՒՄԻՆԵՍՑԵՆՑԻԱ [< биолюминесценция < բիո…+ լատ. lumen (luminis) լույս + escent վերջածանց, որը ցույց է տալիս թույլ գործողություն], գ. (գիտ.): Կենսալյումինեսցենցում՝ օրգանիզմների տեսանելի լուսարձակումը՝ կապված նրանց կենսագործունեության գործընթացների հետ: Բնորոշ է բազմաթիվ մանրէների, սնկերի, որոշ անողնաշարավորների, ձկների ևն:

ԲԻՈԼՈԳԻԱ [< биология < հուն. bios + logos գիտություն], գ. (գիտ.): Կենսաբանություն՝ գիտություն կյանքի մասին: Ուսումնասիրում է կենդանի էակների կառուցվածքն ու գործառույթը, տարածվածությունը, ծագումն ու զարգացումը, ինչպես նաև կապը միմյանց և անկենդան բնության հետ:

ԲԻՈԼՈԳԻԶՄ [< биологизм < բիո…+ հուն. logos ուսմունք], գ. Բնության օրինաչափությունները մեխանիկորեն ու միակողմանիորեն հասարակական երևույթների վրա տարածող ուսմունք. ծագել է XIX դարի երկրորդ կեսին:

ԲԻՈԼՈԿԱՑԻԱ [< биолокация < բիո…+ լատ. locatio տեղաբաշխում], գ. (գիտ): Կենսատեղաբաշխում՝ կենդանի օրգանիզմների ունակությունը ինչ-որ օբյեկտի կամ սեփական դիրքի որոշումը տարածության մեջ:

ԲԻՈԽԹԱՆԻՉ, ած. գ. Կենսախթանիչ՝ կենսագործունեության խթանիչ:

ԲԻՈԿԱՏԱԼԻԶԱՏՈՐՆԵՐ [< биокатализаторы < բիո… + հուն. katalysis կործանում, ավերում], գ. (գիտ.): Կենսակատալիզատորներ՝ նյութեր, որոնց ներկայությունը կենդանի օրգանիզմում առաջ է բերում քիմիական գործընթացների առաջացում կամ դանդաղեցում: Կենսակատալիզատորներ են առաջին հերթին ֆերմենտները. սրանց շարքին են դասվում նաև հորմոնները, վիտամինները և միկրոէլեմենտները:

ԲԻՈԿԻԲԵՌՆԵՏԻԿԱ [биокибернетика < բիո…+ հուն. kybernētikē կառավարման արվեստ], գ. (գիտ.): Կենսակիբեռնետիկա՝ գիտական ուղղություն, որը կիբեռնետիկայի մեթոդները նն օգտագործում է կենսաբանության մեջ, այն ուսումնասիրում է կառավարման և ինֆորմացիայի հաղորդման ընդհանուր օրինաչափությունները կենդանի օրգանիզմներում:

ԲԻՈԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱ [< биоклиматология < բիո… + հուն. klima (klimatos)

թեքություն + logos ուսմունք], գ. (գիտ.): Կենսաեղանակագիտություն՝ գիտություն, որը ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների, մասնավորապես մարդու և նրա գործունեության վրա եղանակների ազդեցությունը:

ԲԻՈԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱ [< биокоммуникация < բիո… + լատ. communicatio], գ. (հնց.): Կենսահաղորդակցում՝ կենդանիների հաղորդակցում:

ԲԻՈԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ [< биокриминалогия < բիո… + լատ. crimen (criminis) հանցագործություն + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Կենսաքրեագիտություն՝ քրեագիտության ուղղություն, որը գտնում է, թե հանցագործության կատարումը կապված է կենսաբանական գործոնների հետ:

ԲԻՈՄԵԽԱՆԻԶՄ [< биомеханизм < բիո…+ հուն. mēchanikē գործիք, մեքենա], գ. (գիտ.): Կյանքի մասին մեխանիկական ուսմունք. որը օրգանական նյութի բոլոր օրինաչափությունները հանգեցնում է նրա մեջ տեղի ունեցող ամենապարզ ֆիզիկաքիմիական երևույթներին:

ԲԻՈՄԵԽԱՆԻԿԱ [< биомеханика < հուն.], գ. (գիտ.): Կենսամեխանիկա՝ բնախոսության բաժինը, որն ուսումնասիրում է մարդու և կենդանիների շարժողական օրգանների զարգացումը, կառուցվածքն ու գործունեությունը:

ԲԻՈՄԵՏՐԻԱ [< биометрия < բիո…+ հուն. metrom չափ, metreo չափում եմ], գ. (գիտ.): Կենսաչափություն՝ կենսաբանության բաժին, որը մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով մշակվում և պլանավորում է կենսաբանական օբյեկտների ուսումնասիրություններից ստացվող արդյունքները:

ԲԻՈՆԻԿԱ [< бионика < հուն. bios կյանքի տարր], գ. (գիտ.): Կիբեռնետիկայի ուղղություն, որի խնդիրն է կենսաբանական համակարգերի գործառույթի և կառուցվածքի ինժեներական սկզբունքների ուսումնասիրությունն ու մոդելավորումը, ստացված տվյալների կիրառումը գոյություն ունեցող տեխնիկական համակարգերի կատարելագործման և նորերի ստեղծման համար:

ԲԻՈՊՍԻԱ [< биопсия < բիո…+ հուն. opsis տեսք, տեսարան], գ. (բժշկ.): Կենդանի օրգանիզմի ախտահարված հյուսվածքի մի մասի հեռացում՝ մանրադիտակով դիտելու և ախտահարված գործընթացի բնույթը պարզելու համար:

ԲԻՈՍՏՐԱՏԻԳՐԱՖԻԱ [< биостратиграфия < բիո…+ լատ. stratum շերտ + հուն. graphia], գ. (գիտ.): Շերտագրության բաժին. զբաղվում է նստվածքային ապարների շերտերի հարաբերական հասակի որոշմամբ՝ նրանց մեջ հանդիպող բրածո օրգանիզմների ուսումնասիրման հիման վրա:

ԲԻՈՍՖԵՐԱ [< биосфера < բիո…+ հուն. sphaira գունդ], գ. (հնց.): Կենսոլորտ՝ կենդանի օրգանիզմներով բնակեցված Երկրի թաղանթը:

ԲԻՈՏԻՆ [< биотин < բիո…], գ. (քիմ.): Վիտամին H, պարունակվում է խմորասնկերում, լյարդում, ձվի դեղնուցում, երիկամներում, կաթում և բուսական մթերքներում, որի բացակայության ժամանակ բորբոքվում է մաշկը:

ԲԻՈՏԻՏ [< биотит < ֆրանսիացի գիտնական Ժ. Բ. Բիոյի (Biot) (1774-1862թթ.) անվամբ], գ. (հնք.): Միներալ փայլարների խմբից: Որպես ապար կազմող միներալ՝ լայնորեն տարածված է մագմատիկ և մետամորֆային ապարներում: Օգտագործվում է էլեկտրամեկուսիչներ և բրոնզի ներկ ստանալու համար:

ԲԻՈՏՈՊ [< биотоп < բիո…+ հուն. topos վայր], գ. (երկրբ.): Երկրի մակերևույթի (ցամաքի կամ ջրամբարի) տեղամաս, որն ունի միջավայրի նույնատեսակ աբիոտիկ պայմաններ (ռելիեֆ, կլիմա, հողեր) և զբաղեցված է այս կամ այն բիոցենոզով:

ԲԻՈՑԵՆՈԶ [< биоценоз < բիո…+ հուն. koinos ընդհանուր], գ. (կենդբ.): Ցամաքի

կամ ջրամբարի որոշ հատվածներում բնակվող որոշ բույսերի, կենդանիների, միկրոօրգանիզմների համախումբ:

ԲԻՈՑԵՆՈԼՈԳԻԱ [< биоценология < բիոցենոզ + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Կենսաբանության բաժին, որն ուսումնասիրում է բիոցենոզները, նրանց ծագումը, զարգացումը, կառուցվածքը, փոխազդեցությունը շրջապատի և միջավայրի վրա:

ԲԻՈՔԻՄԻԱ [< биохимия < բիո… + լատ. (al)chimia], գ. (գիտ.): Կենսաքիմիա՝ գիտություն, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմի քիմիական կազմությունը, նրանում հայտնաբերված միացությունների հատկությունները, նյութափոխանակությունն ու կենսական գործընթացների հիմքում ընկած քիմիական մեխանիզմները:

ԲԻՈՖԻԶԻԿԱ [< биофизика < բիո… + հուն. phisikē], գ. (գիտ.): Կենսաֆիզիկա՝ գիտություն, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմում ընթացող ֆիզիկական և ֆիզիկաքիմիական գործընթացները, ինչպես նաև կենդանի մատերիայի զարգացման բոլոր մակարդակի օրգանիզմների կենսաբանական համակարգերի ուլտրակառուցվածքն ու մոլեկուլային կառուցվածքը:

ԲԻՊԼԱՆ [< биплан < ֆր. biplan < բի… + լատ. planum հարթություն], գ. (տեխ.): Երկթևանի ինքնաթիռ, որի մի թևը տեղադրված է մյուսի վերևում:

ԲԻՍ [< бис < լատ. bis կրկնակի], ձայն. (խսկց.): Արտիստի կատարած երգի՝ նվագի ևն կրկնության պահանջ կամ պարզապես բուռն հավանություն արտահայտող բացականչություն:

ԲԻՍԵԿՍՈՒԱԼԻԶՄ [< бисексуализм < բի…+ լատ. sexualis սեռային], գ. (կենսբ.): Երկսեռություն՝ երկու սեռի հատկանիշների առկայություն մեկ օրգանիզմում:

ԲԻՍԿՎԻԹ, ԲԻՍԿՎԻՏ [< бисквит < ֆր. biscuit], գ. (խոհր.): Քաղցրավենիք՝ հարած ձվից, ալյուրից, շաքարից, թխվածք:

ԲԻՍՏՐ [< бистр < ֆր. bistre], գ. Թափանցիկ դարչնագույն ներկ, որ պատրաստվել է փայտի մրուրից և ջրի մեջ լուծված բուսական սոսնձի խառնուրդից. օգտագործվել է եվրոպական նկարչության մեջ XV- XVIII դարերում:

ԲԻՍՏՐՈ [< бистро < ֆր. bistro], գ. Ոչ մեծ խորտկարան՝ հաճախորդներին արագ սպասարկելու համար:

ԲԻՍՈՒԼՖԱՏՆԵՐ[< бисульфаты < բի… + լատ. sulphur], գ. (քիմ.): Ծծմբական (серной) թթվի թթու աղերը. ժամանակակից անվանումը՝ հիդրոսուլֆատներ:

ԲԻՍՈՒԼՖԻՏՆԵՐ [< бисульфиты < բի…+ լատ. sulphur], գ. (քիմ.): Ծծմբային (сернистой) թթվի թթու աղերը. ժամամակակից անվանումը՝ հիդրոսուլֆիտներ:

ԲԻՏ [< бит < անգլ. bit < binary երկուական + digit նշան, թվանշան], գ. Էնտրոպիայի և ինֆորմացիայի քանակի չափման միավոր:

ԲԻՏՈՒՄՆԵՐ [< битумы < լատ. bitumen լեռնային ձյութ], գ. (քիմ.): Օրգանական լուծիչներում լուծվող պինդ, հեղուկ և գազանման բնական ածխաջրածնային նյութերի կամ նրանց վերամշակման արգասիքների ընդհանուր անվանումը:

ԲԻՐԺԱ [< биржа < գերմ. Börse < հուն. byrsa պայուսակ], գ. (տնտսգ.): Սակարան՝ 1. Ֆինանսական և առևտրական խոշոր գործարքներ կատարող հիմնարկ: 2. Աշխատուժի առաջարկի և վարձման վայր: 3. Ձանազան տարարժույթների օրվա արժեքի ամփոփագիր:

ԲԻՖՇՏԵՔՍ [< бифштекс < անգլ. beefsteak], գ. (խոհր.): Տավարի սուկիի տապակայի մի տեսակ:

ԲԼԱՆԿ [< бланк < ֆր. blanc սպիտակ, մաքուր], գ. Թուղթ՝ սովորաբար սպիտակ, որի վրա՝ մի անկյունում, նշված է հիմնարկության անվանումը, հասցեն, հեռախոսները ևն: Օգտագործվում է փաստաթղթային գործառությունների համար:

ԲԼԱՆԿԻԶՄ [< бланкизм < ֆրանսիական հեղափոխական, ուտոպիստ-կոմունիստ Լ. Օ. Բլանկի անվամբ], գ. (պատմ.): Քաղաքական հոսանք XIX դարի ֆրանսիական հասարակական և բանվորական շարժման մեջ Լ. Օ. Բլանկի (Blangui 1805-1888 թթ.) անվամբ:

ԲԼԱՆՄԱՆԺԵ [< бланманже < ֆր. blancmanger < blanc սպիտակ + manger ուտել], գ. (խոհր.): Դոնդողակ՝ սերուցքից կամ նշի կաթից:

ԲԼԱՆՖԻՔՍ [< бланфикс < ֆր. blanc սպիտակ + fixe անշարժ], գ. Անօրգանական ներկ, քիմիական բաղադրությամբ՝ բարիումի սուլֆատ: Որպես սպիտակ պիգմենտ և լցանյութ օգտագործվում է լաքերի և ներկերի, բարձրորակ թղթի արտադրություններում:

ԲԼԱՍՏՈՄԱ [< бластома < հուն. blastos ծիլ, ընձյուղ + oma ուռուցք], գ. (կենսբ.): Ուռուցք:

ԲԼԱՏ [< блат < իդիշ blat ծանուցված, համաձայն], գ. (ժրգ.): 1. Գողերի ծածկալեզու (արգո լեզու): 2. Ծանոթություն, կապեր (ոչ օրինական ճանապարհով հարցեր լուծելու համար):

ԲԼԵԿ-ՌՈԹ(Տ) [< блек-рот < անգլ. black rot, բառացի՝ սև նեխուկ], գ. (բսբ.): Խաղողի որթի հիվանդություն (հատկապես տերևների և ողկույզի):

ԲԼԵՅԶԵՐ [< блейзер < անգլ. blazer < to blaze փայլել], գ. (խսկց.): Մինչև գոտկատեղ հասնող սպորտային գունավոր բաճկոն (պիջակ):

ԲԼԵՆՈՌԵԱ [< бленнорея < հուն. blennos լորձ + rheō հոսում եմ], գ. (բժշկ.): Աչքի լորձաթաղանթի (շաղկապենու) սուր, թարախային բորբոքում, որի հարուցիչը գոնոկոկն է:

ԲԼԵՖ [< блеф < անգլ. bluff խաբեություն], գ. (խսկց.): 1. Խաղաթղթերով խաղի ժամանակ՝ խաղացողներից մեկի կողմից մյուսներին թյուրիմացության մեջ գցելը. խաղացողը, որն ունի վատ խաղաթղթեր, բայց ցույց է տալիս՝ ունի հաղթող խաղաթղթեր: 2. Կեղծիք, խաբեություն:

ԲԼԵՖԱՐԻՏ [< блефарит < գերմ. Blepharitis, ֆր. blépharite < հուն. blepharon կոպ], գ. (բժշկ.): Կոպերի բորբոքում:

ԲԼԻՆ [< рուս. блин], գ. (խոհր.): Բարակաբլիթ, նրբաբլիթ՝ թավայի մեջ տապակած խմորի բարակ բլիթ:

ԲԼԻՆԴԱԺ [< блиндаж < ֆր. blindage < blinda արգելապատնեշներով ծածկել], գ. (ռազմ.): Խրամատ՝ պաշտպանվող զինվորների՝ թշնամու կրակից պաշտպանվելու համար կառուցված ամուր կացարան:

ԲԼԻՑ [< блиц < գերմ. Blitz], ած. 1. Չափազանց արագ կատարվող: 2. գ. (սպորտ.): Շախմատի խաղի ձև:

ԲԼԻՑԿՐԻԳ [< блицкриг < գերմ. Blitzkrieg], գ. (պատմ.): Արագ պատերազմ. այդպիսի պատերազմ էր նպատակադրվել անցկացնելու ֆաշիստական Գեր-

մանիան Խորհրդային Միության դեմ:

ԲԼԻՑՏՈՒՐՆԻՐ [< блицтурнир < գերմ. Blitzturnier], գ. (խսկց. սպորտ.): Սպորտային մրցություն, որը անցկացվում է արագ տեմպով:

ԲԼՅԱԽԱ [< бляха < լեհ. < հին գերմ. blëh], գ. (խսկց.): Վահանակ՝ որպես տարբերիչ նշան կամ զարդարանք (դրոշմված նկարով, գրությամբ, համարով նն):

ԲԼՅՈՒԶ [< блюз < անգլ. blues մելանխոլիա], գ. 1. (երժշտ.): Միսսիսիպիի ափերի ամերիկյան նեգրական երաժշտություն, երգերի և պարի ձևով. սովորաբար շատ քնարական: 2. Ջազային երաժշտական տեսակ: 3. Պարի տեսակ:

ԲԼՅՈՒՄԻՆԳ, ԲԼՈՒՄԻՆԳ [< блюминг < անգլ. blooming], գ. Բարձր արտադրողականության հզոր գլոցման հաստոն, որի վրա մինչև 12 տ կշռով, մեծ լայնական հատվածքով պողպատե ձուլազանգվածը շրջասեղմումով մշակվում է քառակուսի հատվածքով նախապատրաստուկի՝ բլյումի:

ԲԼՈԳ [< блог < անգլ. blog < (We) b համացանց + log < Logbook օրագիր, մատյան], գ. (հմկրգչ.): Համացանցից օգտվողի անհատական էլեկտրոնային օրագիր:

ԲԼՈԳԵՐ [< блог(г)ер < անգլ.], գ. (հմկրգչ.): Համացանցում էլեկտրոնային օրագիր վարող անձ:

ԲԼՈԿ I [< блок < ֆր., անգլ. bloc], գ. (քղք.): Համաձայնություն (երկրների, քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների) որևէ տիպի նպատակի իրականացման համար:

ԲԼՈԿ II [< блок < անգլ. block], գ. 1. Ճախարակ, ծիծեռնիկ: 2. (տեխ.): Որևէ կառուցվածքի մի մաս, որ իր հերթին բաղկացած է մի քանի մանրակներից՝ մասերից, զանգված: 3. Աղյուսաձև մեծածավալ արհեստական շինարարական քար՝ բետոնի զանգվածից:

ԲԼՈԿԱԴԱ [< блокада < անգլ. blockade], գ. (խսկց.): Շրջափակում՝ 1. (ռազմ.): Պաշարում՝ հակառակորդի բանակի, քաղաքի, նավահանգստի, ռազմական բազայի պաշարումը՝ շրջափակումը՝ նրան արտաքին աշխարհից կտրելու և անձնատվության հարկադրելու նպատակով: 2. (քղք.): Միջոցառումների համակարգ՝ որևէ պետության քաղաքականապես ու տնտեսապես մեկուսացնելու և դրանով նրա վրա քաղաքական ճնշում գործադրելու նպատակով: 3. (բժշկ.): Որևէ անդամի կամ համակարգի գործառության անջատում:

ԲԼՈԿԲԱՍՏԵՐ [< блокбастер < անգլ. blockbuster < block խումբ, բլոկ + buster անսովոր], գ. (կինո.): Բարձրորակ մարտաֆիլմ (հատկապես մեծ քանակով ֆինանսական միջոցների ներդրման արդյունքում):

ԲԼՈԿՀԱՈՒԶ [< блокгауз < գերմ. Blockhaus], գ. (ռազմ.): Դաշտային ամրություն՝ հրակնատներով:

ԲԼՈԿՆՈՏ [< блокнот < ֆր. blocnotes], գ. (խսկց.): Նոթատետր՝ հատվածական թերթերից բաղկացած գրելու տետր կամ գրքույկ:

ԲԼՈՆԴԻՆ [< блондин < ֆր. blondin], ած. գ. (խսկց.): Շիկահեր, խարտյաշ տղամարդ:

ԲԼՈՆԴԻՆԿԱ [< блондинка < ֆր. blondine < գերմ. Blondine], ած. գ. (խսկց.): Շիկահեր, խարտյաշ կին:

ԲԼՈՒԶ [< блуза < ֆր. blouse < գերմ. Bluse], գ. (խսկց.): Տղամարդու լայն ու կարճ շապիկ:

ԲՅԱԶ [< бязь < թուրք. bäzz < արաբ.], գ. Գործվածքի տեսակ:

ԲՅՈՒԳԵԼՀՈՌՆ [< бюгельхорн < գերմ. Bügelhorn < ֆր. կամ անգլ. bugle ազդափողակ + գերմ. Horn փող], գ. (երժշտ.): Տարբեր ձայնածավալի ամբուշյուրային (մունդշտուկավոր) փողային գործիքների ընտանիք, որ առաջացել է հետևակային ազդափողակի կատարելագործմամբ:

ԲՅՈՒԼԵՏԵՆ [< бюллетень < ֆր. bulletin], գ. 1. (խսկց.): Տեղեկաթերթ՝ կարճ պետական հաղորդակցություն կարևոր դեպքի առիթով: 2. Տեղեկատվություն պարունակող թողարկում՝ տեղեկագիր: 3. Ընտրաթերթ, քվեաթերթ: 4. Հիվանդության թերթիկ՝ անաշխատունակության թերթիկ:

ԲՅՈՒՋԵ [< бюджет < անգլ. budget պայուսակ], գ. (տնտսգ.): Հավասարակշռված նախահաշիվ՝ 1. Պետության դրամական եկամուտների և ծախսերի՝ հերթական ժամկետի համար կազմված գրանցում: 2. Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կամ առանձին անձանց եկամուտների և ծախսերի որոշակի ժամկետով պլան:

ԲՅՈՒՍՏ [< бюст < ֆր. buste], գ. (խսկց.): Կիսանդրի՝ 1. Մարդու արձան մինչև գոտկատեղը: 2. Կանացի կուրծք:

ԲՅՈՒՍՏԳԱԼՏԵՐ [< бюстгальтер < գերմ. Büstenhalter < Buste կանացի կուրծք + Halter պահող], գ. (խսկց.): Կանացի կրծկալի տեսակ:

ԲՅՈՒՐԳԵՐ [< бюргер < գերմ. Bürger քաղաքացի], գ. (պատմ.): 1. Միջին դարերում՝ Արևմտյան Եվրոպայի երկրների քաղաքացի: 2. (խսկց.): Գերմանիայում և մի շարք այլ երկրներում՝ քաղաքի բնակիչ: 3. *փխբ.* Քաղքենի:

ԲՅՈՒՐԵՏ [< бюретка < ֆր. burette < buire սափոր, կուժ], գ. (տեխ.): Լուծույթների ծավալը չափելու աստիճանավորված ապակյա գլանաձև խողովակ:

ԲՅՈՒՐՈ [< бюро < ֆր. bureau], գ. 1. Որոշ կազմակերպությունների՝ մարմինների ևն ղեկավար կամ կարգադրիչ անձնակազմի անվանումը: 2. Որոշ հիմնարկների՝ բաժինների՝ գրասենյակների անվանումը:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏ [< бюрократ < ֆր. bureaucrate], գ. (խսկց.): Գործի էության մեջ չթափանցող՝ ձևապաշտ պաշտոնյա:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱ [< бюрокртия < ֆր. bureaucratie < ֆր. bureau + հուն. kratos իշխանություն], գ. 1. Հասարակության մեջ՝ կառավարման համակարգ, որ իրականացվում է կյանքից կտրված ու տիրող իշխանության շահերը պաշտպանող աստիճանավորների կողմից: 2. Բարձր աստիճանավորների կազմը այդպիսի համակարգում:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԶՄ [< бюрократизм < ֆր., հուն.], գ. 1. Գրասենեկայնության, ձևականությունների պահպանման համար գործի էության անտեսում: 2. Տե՛ս Բյուրոկրատիա (1):

ԲՅՈՒՔՍ [< бюкс < գերմ. Büchse անոթ], գ. (տեխ.): Հղկված կափարիչով ապակյա բաժակաձև անոթ: Օգտագործվում է խոնավություն կլանող և սորուն նյութերը կշռելու և պահելու համար:

ԲՈԱ [< боа < ֆր. boa < լատ. boa օձ], գ. (կենդբ.): Վիշապօձի մի տեսակ, որ ապրում է Ամերիկայում: 2. Կանացի պարանոցի մորթե կամ փետուրե շարֆ:

ԲՈԲ [< боббu < անգլ. bobby], գ. (խսկց. հզվդ.): Ոստիկանի մականունը Անգլիայում:

ԲՈԲՍԼԵՅ [< бобслей < անգլ. bobsleigh կարճ սահնակ, ղեկասահնակ], գ.

(սպորտ.): Կառավարվող սահնակներով՝ ղեկասահնակներով արագընթաց վայրէջք բարձունքից՝ հատուկ սարքավորված սահուղիով:

ԲՈԳՀԵԴ [< богхед < շոտլանդ. Boghead տեղանունից], գ. (հնք.): Սապրոպելային ածուխների տարբերակ:

ԲՈԳՈՄԻԼՆԵՐ [< ռուս. богомилы < քահանա Բոգոմիլի անունից], գ. (պատմ.): X դարում Բուլղարիայում առաջացած աղանդավորական, գյուղացիական շարժմանը հարողները:

ԲՈԴԻ-ԱՐՏ [< боди-арт < անգլ. body-art < body մարմին + art արվեստ], գ. (արվ.): Ժամանակակից արվեստի տարատեսակ, երբ մերկ մարմնի վրա (սովորաբար կնոջ) բազմաբնույթ գունավոր պատկերներ են նկարվում:

ԲՈԴԻԲԻԼԴԻՆԳ [< бодибилдинг < անգլ. body մարմին + building կառուցում], գ. (սպորտ.): Մարմնամարզության տեսակ, որը հիմնված է հատուկ վարժությունների վրա՝ մկանային մասսան ավելացնելու և համաչափորեն զարգացնելու, մարմնակերտություն:

ԲՈԴԻՖԼԵՔՍ [< бодифлекс < անգլ. body մարմին + to flex կորացնել] գ. (մարզ.): Մարմնամարզական-շնչառական մեթոդ, որի նպատակն է նվազեցնել քաշը և վերականգնել առողջությունը:

ԲՈԼԵՐՈ [< болеро < իսպ. bolero], գ. Իսպանական հին ազգային պար, որն ուղեկցվում է երգով և կաստանիետների կափկափյունով:

ԲՈԼԻԴ [< болид < հուն. bolis (bolidos) նետողական զենք], գ. (աստղգ.): Խոշոր ասուպ, որը պայծառությամբ գերազանցում է նույնիսկ Վեներային:

ԲՈԼԻՎԱՐ I [< боливар < իսպ. bolivar < իսպանական գաղութարարների դեմ պայքարող ազատամարտիկ Ս. Բոլիվարի (S. Bolivar) անունից], գ. (ֆին.) Վենեսուելայի դրամական միավորը = 100 սենտավոյի:

ԲՈԼԻՎԱՐ II [< боливар < իսպ.], գ. Տղամարդու լայնեզր գլխարկ (XIX-XX դդ.):

ԲՈԼՇԵՎԻԶՄ [< ռուս. большевизм], գ. (պատմ.): Միջազգային բանվորական շարժման մեջ՝ հեղափոխական հոսանք, որն իր դրսևորումը գտել էր Վ. Ի. Լենինի կողմից Ռուսաստանում ստեղծված նոր տիպի պրոլետարական կուսակցության մեջ: Այն առաջացել է մարքսիզմ-լենինիզմի հիման վրա՝ իբրև դարաշրջանի առանձնահատուկ պայմաններում հեղափոխական մարքսիզմի կիրառություն:

ԲՈԼՇԵՎԻԿ [< ռուս. большевик], գ. (պատմ.): 1. ՌՍԴԲԿ 2-րդ համագումարում (1903 թ.) Լենինի գլխավորությամբ կազմված մեծամասնության անդամ: 2. ՀամԿ(բ)Կ-ի անդամ: 3. Հետևողական՝ մարտնչող մարքսիստ-լենինյան:

ԲՈԼՈՄԵՏՐ [< болометр < հուն. bole ճառագայթ + metreō], գ. (տեխ.): Ճառագայթման էներգիան չափող սարք:

ԲՈԼՈՆԿԱ [< болонка < Հյուսիսային Իտալիայի Բոլոնիա (Bologna) նահանգի անունից]. գ. (կենդբ.): Սենյակային դեկորատիվ փոքր շների տեսակ՝ երկար մետաքսանման մազերով (բոլոնյան շնիկ):

ԲՈԿԱԼ [< бокал < ֆր. bocal շիշ], գ. (խսկց.): Բաժակ, գավաթ (գինու ևնի համար):

ԲՈՀԵՄԱ [< богема < ֆր. bohème Անրի Մյուրժեի «Բոհեմայի կյանքը» վեպի անունից (1848)], գ. 1. Նյութապես չապահովված, անկարգ կյանք վարող մտավորականություն (մեծ մասամբ դերասաններ, նկարիչներ, երաժիշտներ են): 2. Այդ մտավորականության միջավայրը և անկարգ կենցաղը:

ԲՈՀԵՄԻՍՏԻԿԱ [< богемистика < չեխ. bohemistika < լատ. Bohemia Չեխիայի տարածքի նախկին անվանումը], գ. (լեզվբ. գրկն.): Գիտություն չեխերեն լեզվի և գրականության մասին:

ԲՈՄԲ [< бомба < ֆր. bombe], գ. (խսկց.): Ռումբ՝ պայթուցիկ լիցքով արկ:

ԲՈՄԲԱՐԴԻՐ [< бомбардир < գերմ. Bombardier < ֆր. bombardier], գ. ած. (խսկց.): Ռմբարկու՝ 1. (ռազմ.): Ռմբակոծող, ռումբերով հարվածող, ռմբահարող (մարդ, սավառնակ ևն): 2. *փխբ.* (սպորտ.): Թիմային մարզաձևի մարզիկ, օր.՝ ֆուտբոլում, որը հմտորեն ամենաշատ գնդակներն է խփում հակառակորդի դարպասը:

ԲՈՆԶ [< бонза < ֆր. bonze < ճապ. bonsō < չին. fan sêng], գ. 1. (կրոն.): Բուդդայական քուրմ: 2. *փխբ.* Պարծենկոտ, գոռոզ, սնապարծ անձ:

ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱ [< бонитировка < լատ. bonitas բարձր որակ], գ. (գղտնտ.): Որակավորում (գյուղատնտեսական անասունների որակական գնահատում՝ նրանց ցեղական կամ տնտեսական արժեքը որոշելու նպատակով):

ԲՈՆՄՈ [< бонмо < ֆր. bon mot < bon լավ + mot բառ], գ. (հնց.): Սրախոսություն, սուր արտահայտություն՝ խոսք:

ԲՈՆՆԱ [< бонна < ֆր. bonne դայակ], գ. (հնց.): Օտարերկրյա դաստիարակչուհի (մինչև 1917 թ. Ռուսաստանում):

ԲՈՆՏՈՆ [< бонтон < ֆր. bon ton լավ տոն], գ. (հնց.): Նրբակրթություն, լավ վարվեցողություն:

ԲՈՅԱՐ [< рус. боярин], գ. (պատմ.): 1. Ֆեոդալական հասարակության վերնախավը X-XVII դարերում Ռուսական պետության մեջ: 2. Ռումինիայում՝ մոտ XIV դարում ձևավորված ֆեոդալական դասի ներկայացուցիչները:

ԲՈՅԼԵՐ [< бойлер < անգլ. boiler], գ. (տեխ.): Հարմարանք՝ մեխանիզմ գոլորշու միջոցով ջրի տաքացման համար:

ԲՈՅԿՈՏ [< бойкот < անգլ. boycott], գ. (քղք.): 1. Քաղաքական և տնտեսական պայքարի ձև՝ միջոց, որի էությունը հարաբերությունների դադարեցումն է որևէ պետության, կազմակերպության հետ: 2. Որևէ մեկի հետ հարաբերությունները խզելը՝ նրան մեկուսացնելը:

ԲՈՅՍԿԱՈՒՏ [< бойскаут < անգլ. boyscout < boy տղա + scout հետախույզ], գ. Սկաուտական կազմակերպության անդամ՝ տղա կամ պատանի:

ԲՈՅՖՐԵՆԴ [< бойфренд < անգլ. boyfriend < boy տղա + friend ընկեր], գ. (խսկց.): Ընկեր, սիրեկան, որի հետ աղջիկը կամ կինը գտնվում է մշտական սիրային հարաբերությունների մեջ (օրինական ճանապարհով ամուսնացած չեն):

ԲՈՆ [< боны < ֆր. bons], գ. (պատմ. ֆին.): 1. Տոմս, որ իրավունք էր տալիս նրա վրա նշանակված քանակով փող կամ նյութեղեն ստանալու: 2. Պետական դրամանիշ, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո (1917 թ.) շրջանառության մեջ մտցվեց և հանվեց 1924 թ.:

ԲՈՆԱՊԱՐՏԻԶՄ [< бонапартизм < Ն. Բոնապարտի անունից], գ. (պատմ.): 1. Ֆրանսիայում՝ պետական իշխանության գծերը և մեթոդները Նապոլեոն Բոնապարտի և Լուի Բոնապարտի կայսրությունների ժամանակ: 2. Խոշոր բուրժուազիայի դիկտատուրայի ձև, որը հիմնված էր զինվորականության, բյուրոկրատական ապարատի և միլիցիայի վրա:

ԲՈՆԲՈՆԵՐԿԱ [< бомбоньерка < ֆր. bonbonniere], գ. (խսկց.): Գեղեցիկ կոնֆետատուփ՝ կոնֆետներով:

ԲՈՆԻՖԻԿԱՑԻԱ [< бонификация < ֆր. bonification բարելավում եմ < լատ. bonus բարի, լավ], գ. (իրավք.): Քաղաքացիական իրավունքում՝ առուծախի պայմանագրերում սահմանված գնի հավելուրդ՝ ավելի բարձր որակի ապրանքների մատակարարման համար: Հաճախ կիրառվում է արտաքին առևտրում:

ԲՈՆՎԻՎԱՆ [< бонвиван < ֆր. bon vivant լավ ապրող], գ. (հնց.): Ցոփ ու շվայտ կյանքով ապրող մարդ:

ԲՈՆՈՒՍ [< бонус < անգլ. bonus], գ. 1. Պարգևավճար, վարձատրություն՝ խրախուսելու նպատակով արված վարձատրություն: 2. (առևտր.): Ապրանքի գնի իջեցում, որը իրականացվում է վաճառողի կողմից իր մշտական հաճախորդին:

ԲՈՌՆԻՏ [< борнит < ավստրիացի հանքաբան Ի. Բոռնի (I. Born 1742-1791թթ.) անունով], գ. (հնք.): Պղնձի խայտաբղետ հանքանյութ, միներալ, պղնձի և երկաթի սուլֆիդ:

ԲՈՍԿԵՏ [< боскет < ֆր. bosquet], գ. Փոքրիկ արհեստական պուրակ՝ հարթ խուզած պատանման ծառերով:

ԲՈՍՍ [< босс < անգլ. boss], գ. (խսկց.): Որևէ խմբի, հիմնարկի, կազմակերպության ղեկավարին դիմելու ոչ պաշտոնական ձև:

ԲՈՍՏՈՆ [< бостон < ԱՄՆ-ի Բոստոն (Boston) քաղաքի անունից], գ. 1. Բրդյա բարձրորակ կտոր: 2. Եվրոպական պար՝ վալսի մի տեսակը: 3. Թղթախաղի մի տեսակ:

ԲՈՏԱՆԻԿԱ [< ботаника < գերմ. Botanik < հուն. botanikē < botanē խոտ, բույս], գ. (բսբ. հնց.): Բուսաբանություն (գիտություն բույսերի մասին):

ԲՈՏԻՆԿԱ [< ботинки < ֆր. bottine < botte ճտքավոր կոշիկ], գ. (խսկց.): Կիսաճտքավոր կոշիկ:

ԲՈՏՈՒԼԻԶՄ [< ботулизм < լատ. botulus երշիկ], գ. (ախտ.): Սննդամթերքից (պահածոյի, երշիկի, ձկան ևն) ծանր թունավորում՝ բոտուլինոս մանրէների միջոցով:

ԲՈՐ [< бор < ուշ լատ. borax], գ. (քիմ.): Քիմիական տարր, որ լինում է զանազան հանքերի բաղադրության մեջ:

ԲՈՐԱԹԹՈՒ, գ. (քիմ.): Բորի միացություն ջրածնի և թթվածնի հետ (H_3BO_3):

ԲՈՐԱ [< бора < իտալ. bora < հուն. boreas հյուսիսային քամի], գ. Ուժեղ և պոռթկուն քամի: Նկատվում է այն վայրերում, որտեղ ոչ բարձր լեռնաշղթան սահմանակից է տաք ծովին (օր.՝ Կովկասի սևծովյան ափին՝ Տուապսեի և Նովորոսիյսկի միջև):

ԲՈՐԱՏ [< бораты < ուշ լատ. borax], գ. (քիմ.): Զանազան բորաթթվական միացություններից գոյացող միներալների (բորացիտ ևն) ընդհանուր անվանումը:

ԲՈՐԱՑԻՏ [< борацит], գ. (հնք.): Միներալ անջուր բորատների խմբից՝ երկնագույն և մոխրագույն, հաճախ՝ անգույն:

ԲՈՐԳԵՍ [< боргес < իտալ. borghese], գ. Լրագրերի տեքստերը շարելու համար

օգտագործվող տպատառ: Առաջին անգամ կիրառվել է 1498թ.-ին Վենետիկում: Հայկականը ստեղծվել է 1933 թ.:

ԲՈՐԴԵԼ [< бордель < ֆր. bordel,նախնական՝ տնակ], գ. (խսկց.): Պոռնկատուն:

ԲՈՐԴՅՈՒՐ [< бордюр < ֆր. bordure], գ. (խսկց.): Ճանապարհի՝ ասֆալտի եզրագիծ՝ սովորաբար բազալտաքարից:

ԲՈՐԴՈ [< Бордо < ֆր. Bordeaux քաղաք Ֆրանսիայում], գ. 1. Գինու տեսակ: 2. (սպորտ.): Ֆուտբոլային թիմի անվանում: 3. (խսկց.): Մուգ կարմիր:

ԲՈՐԺՈՄ [< боржоми < Վրաստանի համանուն քաղաքի անունից, որտեղ կան հանքային ջրերի աղբյուրներ], գ. Հանքային ջրի տեսակ:

ԲՈՐՄԵՔԵՆԱ [< бормашина < գերմ. Bohr(er) + հայերեն մեքենա], գ. (բժշկ. տեխ.): Ատամնաբուժական սարք, որը պտտեցնում է բորը (պողպատե գչիր):

ԲՈՐՇ, ԲՈՐՇՉ [< ռուս. борщ], գ. (խոհր.): Ապուրի տեսակ՝ կաղամբով, այլ բանջարեղեններով և մսով, կաղամբապուր:

ԲՈՐՍԱ [< հոլանդ. bours < ֆր. bourse < իտալ. borsa], գ. Նույնն է՝ Բիրժա, սակարան:

ԲՈՐՏ I [< борт < հոլանդ. boort], գ. (հնք.): Ալմաստի անմաքուր տեսակը, որ օգտագործվում է ապակի կտրելու, հորատող գործիքների ևն համար:

ԲՈՐՏ II [< борт < ֆր. bord < գերմ. Bord և Borte], գ. (տեխ.): 1. Նավակող: 2. Եզրակող: 3. Լանջեզր:

ԲՈՐՏՄԵԽԱՆԻԿ [< бортмеханик < բորտ II + հուն. mēchanikē], գ. (օդգ.): Թռչող մեքենաների անձնակազմի այն անդամը, որ պատասխանատու է շարժիչների, սարքավորումների, սարքերի ու ապարատների աշխատանքի ու վիճակի համար:

ԲՈՐՏՌԱԴԻՍՏ [< бортрадист < բորտ II + լատ. radiare], գ. (օդգ.): Թռչող մեքենաների անձնակազմի ռադիովար:

ԲՈՑՄԱՆ [< боцман < հոլանդ. bootsman < boot նավակ + man մարդ], գ. (ծով.): Նավատորմի կրտսեր հրամանատարական կազմին պատկանող անձ, որին ենթակա է նավի անձնակազմը՝ տնտեսական գործերում:

ԲՈՈՒԼԻՆԳ [< боулинг < անգլ. bowling], գ. (սպորտ.): Կեգլի խաղի տարատեսակ ԱՄՆ-ում, Անգլիայում և մի շարք այլ երկրներում:

ԲՈՔՍ I [< бокс < անգլ. boxing], գ. (սպորտ.): Բռնցքամարտ՝ բռունցքներով կռիվ՝ հատուկ կանոններով:

ԲՈՔՍ II [< бокс < անգլ. box], գ. (խսկց.): Հիվանդանոցում հատուկ կահավորված սենյակ՝ ծանր հիվանդների համար:

ԲՈՔՍԻԴ [< боксит < ֆր. beauxite ֆրանսիական Beaux տեղանունից], գ. (երկրբ.): Նստվածքային ապար՝ կազմված կավահողի հիդրատներից, երկաթի օքսիդնե-

րից, միներալային այլ բաղադրիչներից, ալյումինի հանքաքար:

ԲՌԱ, ԲՐԱ [< бра < ֆր. bras ձեռք], գ. (խսկց.): Պատին ամրացվող լուսամփոփ, պատի աշտանակ, որմնալամպ:

ԲՐԱԲԱՆՍՈՆ [< брабансон < պատմական Բրաբանտ բելգիական և հոլանդական մարզի անունից, ֆր. Brabancon բրաբանտյան], գ. (կենդբ.): Ճանրաքարշ ձիերի ցեղ, որը հայտնի է բելգիական «բանող ձիեր» ընդհանուր անունով:

ԲՐԱԲԻՈՆ [< հուն. brabetos հաղթության մրցանակ < լատ. brabeum], գ. 1. (հնց.): Հաղթանակի ծաղկեպսակ: 2. (բսբ.): Շքանարգիզազգիների ընտանիքին պատկանող գեղազարդային բույս:

ԲՐԱԽԻԿԱՐԴԻԱ [< брахикардия < հուն. brachys կարճ + kardia սիրտ], գ. (բժշկ.): Դանդաղասրտություն՝ սրտի կծկումների հաճախականության դանդաղում (1 րոպեում 60 զարկից պակաս):

ԲՐԱԽԻԿ(Ց)ԵՖԱԼԻԱ [< брахицефалия < հուն. brachys կարճ + kephale- գլուխ], գ. (բժշկ.): Կարճագանգություն՝ գանգի լայնության և երկարության այնպիսի հարաբերություն, որի դեպքում գլխային ցուցիչը 80-ից մեծ է:

ԲՐԱԿՈՆՅԵՐ [< браконьер < ֆր. braconnier], գ. (հնց.): Որսագող՝ անձ, որը զբաղվում է արգելված որսով՝ ձկնագող:

ԲՐԱՀՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< брахманизм < սանսկրիտ brahmā], գ. (կրոն.): Հին հնդկական կրոն, որ ծագել է մ.թ.ա. I հազարամյակում: Գերագույն աստված է համարվում Բրահմին, որը հաջորդաբար մարմնացել է հանձինս Բրահմանի, Վիշնուի, Շիվայի:

ԲՐԱՀՄԱՆ [< брахман < հնդկ.], գ.(կրոն): Բարձրագույն քրմական կաստային պատկանող անձ Հնդկաստանում:

ԲՐԱՀՄԻ [< брахми < հնդկ.], գ. (լեզվբ.): Հնդկական վանկային գրի հնագույն տարատեսակ:

ԲՐԱՆԴՍՊՈՅՏ [< брандспойт < հոլանդ. brandspuit հրդեհային պոմպ], գ. (տեխ.): Ճկուն ռետինե խողովակի մետաղե ծայրապանակ:

ԲՐԱՇՊԻԼ [< брашпиль < հոլանդ. braadspil], գ. (ծով.): Հորիզոնական լիսեռով և երկու թմբուկներով կարապիկ. կիրառվում է նավերում՝ խարսխի շղթայի և խարսխի բարձրացման, ինչպես նաև կառանման համար:

ԲՐԱՍ [< брасс < ֆր. brasse], գ. (սպորտ.): Սպորտային լողաձև՝ կրծքի վրա.բնորոշվում է հորիզոնական հարթության վրա վերջավորությունների միաժամանակյա համաչափ շարժումներով:

ԲՐԱՍԼԵՏ [< ռուս. браслет < ֆր. bracelet], գ. (խսկց.): Ապարանջան:

ԲՐԱՎԻՍԻՄՈ [< брависсимо < իտլ. bravissimo լավագույն], ձայն. Հիացմունք, խրախուսանք, հավանություն արտահայտելու ձև:

ԲՐԱՎՈ [< браво < իտլ. bravo], ձայն. Հիացմունք, խրախուսանք, հավանության արտահայտմելու ձև:

ԲՐԱՈՒՆԻՆԳ [< браунинг < ամերիկացի նախագծող Browning-ի անունից], գ. (ռազմ.): Ինքնաձիգ ատրճանակի տեսակ:

ԲՐԵԳԵՏ [< брегет < ֆր. վարպետ Բրեգեի (Bréguet 1747-1823թթ.) անունից], գ. Գրպանի ժամացույցի տեսակ, որն աչքի էր ընկնում աշխատանքի ճշգրտությամբ:

ԲՐԵԶԵՆՏ [< брезент < հոլանդ. presenning], գ. Վուշյա կոշտ անջրանցիկ կտոր:

ԲՐԵԼՈԿ [< брелок < ֆր. brelogue], գ. (խսկց.): Կախազարդ՝ իր, որը ամրացվում է բանալիների խրձին, շղթային:

ԲՐԵՄՍԲԵՐԳ [< бремсберг < գերմ. Bremsberg, Bremse արգելակ + Berg լեռ], գ.

Դեպի երկրի մակերևույթ անմիջական ելք չունեցող ստորգետնյա թեք հանքափորվածք: Ծառայում է օգտակար հանածոների վագոնիկներով կամ փոխարկղիկներով վերին հորիզոնից ստորինը իջեցնելու համար:

ԲՐԵՅՆ-ՌԻՆԳ [< брейн-ринг < անգլ. brain ուղեղ + ring շրջան], գ. Վիկտորինայի տեսակ՝ ինտելեկտուալ մրցություն՝ հեռուստատեսային շոու ծրագրի ձևով կամ այլ դրսևորումներով:

ԲՐԵՆԴ [< бренд < անգլ. brand դրոշմ], գ. (տնտսգ.) Ձեռնարկության ապրանքանիշ, որը նաև գովազդում է այդ ձեռնարկությունը:

ԲՐԵՆԴԻ [< бренди < ֆր. brandy], գ. (խսկց.): Թունդ ալկոհոլային խմիչք, կոնյակ, բարկօղի:

ԲՐԵՏԵԼԿԱ [< бретелька < ֆր. bretelle], գ. (խսկց. հնց.): Ուսակապ, ձգակապ (վարտիքի, շապիկի ևն):

ԲՐԻԳԱԴ [< бригада < ֆր. brigade], գ. 1. (ռազմ.): Մի քանի գնդերից, գումարտակներից ու մարտկոցներից, իսկ նավատորմում՝ մի քանի միացյալ ռազմանավերից բաղկացած միավորում: 2. (երկթղ.): Գնացքն սպասարկող անձնակազմ: 3. Որոշ արտադրական՝ աշխատանքային առաջադրանք կատարող աշխատողների խումբ:

ԲՐԻԳԱԴԻՐ [< бригадир < գերմ. Brigadier], գ. Բրիգադ (2, 3) ղեկավարող:

ԲՐԻԶ [< бриз < ֆր. brise], գ. (ծով.): Առափնյա զեփյուռ, ափազեփյուռ, ափահովիկ (ցերեկները ծովից, գիշերները ցամաքից փչող):

ԲՐԻԼՅԱՆՏ [< бриллиант, брильянт < ֆր. brillant փայլող], գ. (խսկց.): Շողակն՝ հատուկ եղանակով երեսակված և հղկված ադամանդ:

ԲՐԻԿԵՏ [< брикет < ֆր. briquette < brique աղյուս], գ. Վառելանյութի, շինանյութի, սննդամթերքի ևն աղյուսաձև մամլած կտոր՝ զանգված:

ԲՐԻԿԵՏԱՑՈՒՄ, գ. Մամլման միջոցով նյութի վերամշակումը երկրաչափորեն կանոնավոր ձև ունեցող և միատեսակ զանգվածով կտորների՝ բրիկետների վերածելը:

ԲՐԻՆԴԻԶԻ [< бриндизи < իտլ. brindisi, բառացի՝ բաժակաճառ < գերմ. bring dir's խմում եմ քո առողջության համար], գ. (երժշտ.): Խնջույքի երգ (իտալական օպերայում):

ԲՐԻՆԶԱ [< брынза < ռում. brinza], գ. Ոչխարի պանրի մի տեսակ:

ԲՐԻՋ [< бридж < անգլ. bridge կամուրջ], գ. (մարզ.): Անգլիայում, Ամերիկայում տարածված թղթախաղի տեսակ:

ԲՐԻՋԻ [< бриджи < անգլ. breeches], գ. Բրիջներ՝ կարճ անդրավարտիք:

ԲՐԻՖԻՆԳ [< брифинг < անգլ. briefing], գ. Ճեպազրույց՝ մամլո կարճ ասուլիս:

ԲՐՅՈՒՄԵՐ [< брюмер < ֆր. brumaire < brume մարախուղ], գ. (պատմ.): Ֆրանսիական հանրապետական օրացույցի (գործել է 1793-1805 թթ.) երկրորդ ամիսը (22-24 հոկտեմբերի - 20-22 նոյեմբերի): Բրյումերի 18-ին (9 նոյեմբեր, 1799 թ.) կատարվեց պետական հեղաշրջում և իշխանության եկավ Նապոլեոն Բոնապարտը:

ԲՐՅՈՒՆԵՏ [< брюнет < ֆր. brunet < brun դարչնագույն], գ. (խսկց.): Թխահեր, թուխ տղամարդ:

ԲՐՈԿԵՐ, ԲՐՈՔԵՐ [< брокер < անգլ. broker], գ. Միջնորդ՝ վաճառողի և գնորդի, այլ գործարքներ կատարողների միջև:

ԲՐՈՄ [< бром < հուն. brōmos գարշահոտություն], գ. (քիմ.): Քիմիական տարր հալոգենների դասից: Ցուցիչը՝ Br (Bromum), մուգ կարմիր, սուր հոտով, ծանր հեղուկ է: Օգտագործվում է բժշկության, լուսանկարչության ևն մեջ:

ԲՐՈՄԻԴՆԵՐ [< бромиды < հուն.], գ. (քիմ.): Բրոմի միացությունները քիմիական այլ տարրերի հետ:

ԲՐՈՆԶ [< бронза < ֆր. bronze], գ. Պղնձի և այլ մետաղների (անագի, ցինկի ևն) միաձուլվածք, անագապղինձ:

ԲՐՈՆԶԵ ԴԱՐ – (հնէաբ.): Քարե դարին հաջորդող դարաշրջանը, որի ժամանակ մարդիկ բրոնզից գործիքներ էին պատրաստում:

ԲՐՈՆԽԻՏ [< бронхит < հուն.], գ. (բժշկ.): Բրոնխների բորբոքում:

ԲՐՈՆԽՆԵՐ [< бронхы < հուն. bronchos շնչափող], գ. (կզմխս.): Բարձրակարգ ողնաշարավորների և մարդու շնչափողի ստորին ծայրից սկսվող, աջ ու ձախ թոքերի մեջ ճյուղավորվող օդատար ուղիներ:

ԲՐՈՆԽՈԳՐԱՖԻԱ [< бронхография < բրոնխներ + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Շնչափողի և բրոնխների ստվերային պատկերի ստացման ռենտգենաբանական մեթոդ:

ԲՐՈՆԽՈԷԿՏԱԶԻԱ [< бронхоэктазия < բրոնխներ + հուն. ektasis ձգել], գ. (բժշկ.): Շնչառության օրգանների հիվանդություն. ուղեկցվում է բրոնխների լայնացումով:

ԲՐՈՆՏՈԶԱՎՐ [< бронтозавр < հուն. bronte որոտ + ... զավր], գ. (հնէաբ.): Հյուսիսային Ամերիկայում Յուրյան շրջանի բրածո խոշոր դինոզավրի տարատեսակ:

ԲՐՈՇ, ԲՐՈՇԿԱ [< брошь, брошка < ֆր. broche < իտլ. brocca ասեղ], գ. (խսկց.): Մետաղյա զարդ, մետաղազարդ, ամրացվում է հագուստին (կրծքի մասում), օձիքին ևն:

ԲՐՈՇՅՈՒՐ [< брошюра < ֆր. brochure], գ. 1. Գրքույկ՝ կարած կամ կպցրած թերթերով փոքրիկ գրքույկ՝ սովորաբար թղթե կազմով: 2. Փոքրածավալ հանրամատչելի գրքույկ:

ԲՐՈՒԴԵՐ [< брудер < անգլ. brood նստել ձվերի վրա], գ. (գղտնտ.): Ինկուբատորում հանած ճտերի տաքացման սարք:

ԲՐՈՒՏՏՈ [< брутто < իտլ. brutto կոպիտ, ոչ մաքուր], ած. (մսնգ.): Անզատ, տարայով հանդերձ (ապրանքի քաշի մասին), համաքաշ:

ԲՐՈՒՑԵԼՅՈԶ [< бруцеллёз < անգլիացի բժիշկ Bruce-ի անունից, որը հայտնաբերել է սրա մանրէն], գ. (բժշկ.): Մալթայան տենդ, Բանգի հիվանդություն՝ մարդկանց և կենդանիների ընդհանուր սուր կամ քրոնիկական վարակիչ-ալերգիական հիվանդություն:

ԲՈՒԲՈՆ [< бубон < հուն. bubōn աճուկ, ուռուցք], գ. (բժշկ.): Ավշահանգույցների բորբոքում:

ԲՈՒԳԵԼ [< бугель < գերմ. Bügel կամար], գ. 1. (տեխ. բժշկ.): Ցցող, կայմող: 2. (էլեկտ.): Հոսքաղեղ:

ԲՈՒԳԻ-ՎՈՒԳԻ [< бути-вути < անգլ. boogie-woogie], գ. 1. (երժշտ.): Ջազային երաժշտության տեսակ: 2. (արվ.): Ամերիկյան ազատ ոճի զուգապարի տեսակ:

ԲՈՒԴԴԻԶՄ [< буддизм < կրոնի հիմնադիր Բուդդայի անունից], գ. (կրոն.): Մ.թ.ա. I հազարամյակի կեսերին Հնդկաստանում ծագած կրոն, որը հետագայում տարածվել է Կենտրոնական և Արևելյան Ասիայում:

ԲՈՒԴԴԻՍՏ [< буддист < հատուկ անունից], գ. Բուդդայականության հետևորդ:

ԲՈՒԴՈՒԱՐ [< будуар < ֆր. boudoir], գ. (խսկց.): 1. Կնոջ հանդերձասենյակ, զարդասենյակ, որտեղ ընդունում է ամենամոտ ծանոթներին: 2. Այդպիսի սենյակի կահույք:

ԲՈՒԺԻ, ԲՈՒԺԵՐ [< бужи < ֆր. bougie մոմ], գ. (բժշկ.): Հոծ կամ սնամեջ ձողեր: Օգտագործվում են խողովակավոր օրգանները (միզուկ, կերակրափող) լայնացնելու և հետազոտելու համար:

ԲՈՒԼԱՎԱ [< булава < լատ. bulla երկաթյա գունդ], գ. 1. (պատմ.): Հնագույն զենքի տեսակ: 2. (սպորտ.): Գեղարվեստական մարմնամարզության մեջ օգտագործվող մարզագույք:

ԲՈՒԼԴՈԳ [< бульдог < անգլ. bulldog], գ. (կենդբ.): Ընտանի շների մի ցեղ:

ԲՈՒԼԴՈԶԵՐ [< бульдозер < անգլ. bulldozer], գ. (տեխ.): 1. Տրակտորին ամրացվող սարք՝ գետինը հարթեցնելու և հողը փորելու ու վերցնելու համար: 2. Այդ սարքը վրան ունեցող տրակտոր:

ԲՈՒԼԵ [< буле < հուն. bulē], գ. (պատմ.): Աթենքում և հունական այլ քաղաքպետություններում կառավարական խորհուրդ:

ԲՈՒԼԻՄԻԱ [< булимия < ֆր. boulimie < հուն. bus ցուլ + limos սով], գ. (բժշկ.): Սրտագդալի շրջանում անասելի ցավեր (ուշաթափության հասցնող), թուլություն՝ պայմանավորված սովի զգացումով:

ԲՈՒԼԻՏ [< буллит < անգլ. bullet փամփուշտ, միջուկ], գ. (սպորտ.): Տափօղակով հոկեյի մեջ հակառակորդի դարպասին նշանակված տուգանային հարված:

ԲՈՒԼԿԻ [< рուս. булка], գ. (խսկց.): Ցորենի ալյուրից թխված փոքրիկ հաց, հացիկ:

ԲՈՒԼՅՈՆ [< бульон < ֆր. bouillon < լատ.], գ. Արգանակ՝ եփած մսի ջուր, մսաջուր:

ԲՈՒԼՎԱՐ [< бульвар < ֆր. boulevard < գերմ. Bollwerk], գ. (խսկց.): Զբոսայգի՝ քաղաքային այգի՝ պարտեզ որպես զբոսանքի վայր:

ԲՈՒԽԱՆԿԱ [< буханка < լեհ. bochenek], գ. (խսկց.): Աղյուսաձև հաց:

ԲՈՒԽԱՐԻ [< бухари > արաբ. buxar գոլորշի], գ. Պատի մեջ կառուցված խորշաձև վառարան:

ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱ [< бухгалтерия < գերմ. Buchhalterie], գ. (տնտսգ. հնց.): Հաշվապահություն:

ԲՈՒԿԵՏ [< букет < գերմ. Bukett < ֆր. bouquet], գ. 1. (խսկց.): Փունջ, ծաղկեփունջ: 2. (հնց.): Համ ու հոտ:

ԲՈՒԿԻՆԻՍՏ [< букинист < ֆր. bouquiniste], գ. Հնագրավաճառ՝ հին գրքերի առևտրով զբաղվող:

ԲՈՒԿԼԵՏ [< буклет < անգլ. booklet], գ. Մի թղթի վրա տպագրված, որը ծալվում է զուգահեռաբար և կարելի է առանց կտրելու կարդալ:

ԲՈՒՄ I [< бум < անգլ. boom], գ. (խսկց.): Արհեստական եռուզեռ՝ իրարանցում, խառնաշփոթ վիճակ:

ԲՈՒՄ II [< бум < անգլ. boom], գ. (հնց. սպորտ.): Մարմնամարզական ձող:

ԲՈՒՄԵՐԱՆԳ [< бумеранг < անգլ. boomerang < ավստրալ.], գ. Նետվող և նետողին վերադարձող փայտե կեռ մահակ. որսորդական և մարտական զենք՝ ավստրալիական մի շարք ցեղերի մոտ անցյալում:

ԲՈՒՅ [< буй < հոլանդ. boei], գ. (տեխ. ծով.): Խարսխավոր լողան:

ԲՈՒՆԳԱԼՈ, ԲԵՆԳԱԼՈ [< бунгало, бенгало < անգլ. bungalow < հինդի banglā տուն], գ. (հզվդ.): Գյուղական տուն (փոքր, ծածկապատշգամբով) Հնդկաստանում, Մալազիայում:

ԲՈՒՆԴ [< бунд < գերմ. Bund միություն], գ. (պատմ.): Համահրեական սոցիալ-դեմոկրատական միություն՝ ստեղծված 1897 թ. և գործող մինչև 1921 թ.:

ԲՈՒՆԴԵՍԲԱՆԿ [< бундесбанк < գերմ. Bundesbank], գ. (պատմ.): ԳՖՀ-ի կենտրոնական բանկը:

ԲՈՒՆԴԵՍԼԻԳԱ [< бундеслига < գերմ. Bundes + լատ. ligare], գ. (սպորտ.): Գերմանիայի Դաշնության ֆուտբոլի առաջնությունը:

ԲՈՒՆԴԵՍՎԵՐ [< бундесвер < գերմ. Bundeswehr], գ. (պատմ.): ԳՖՀ-ի զինված ուժերը:

ԲՈՒՆԴԵՍՏԱԳ, ԲՈՒՆԴԵՍԹԱԳ [< бундестаг < գերմ. Bundestag], գ. (պատմ.): ԳՖՀ բարձրագույն ներկայացուցչական մարմինը (պառլամենտը):

ԲՈՒՆԴԵՍՐԱՏ [< бундесрат < գերմ. Bundesrat դաշնակցական խորհուրդ], գ. (պատմ.): Գերմանական կայսրության (1871-1918թթ.), ինչպես նաև Ավստրիայի պառլամենտի վերին պալատը:

ԲՈՒՆԿԵՐ [< бункер < անգլ. bunker], գ. 1. Նավի վրա ածուխի պահեստավորման տեղ: 2. Պահասենյակ, զետեղարան: 3. Հողի տակ՝ հատուկ կառուցված և կահավորված սենյակ՝ ռմբակոծությունից պաշտպանվելու համար:

ԲՈՒՆՏ [< ռուս. бунт < լեհ. bunt < գերմ. Bund կապ], գ. (հնց.): Խռովություն՝ տարերային ապստամբություն:

ԲՈՒՆՏԱՐ [< ռուս. бунтар < լեհ., գերմ.], գ. (խսկց.): Բունտի մասնակից:

ԲՈՒՇԵԼ [< бушель < անգլ. bushel], գ. Հեղուկների և փխրուն նյութերի չափման միավոր Անգլիայում (36, 37 լ) և ԱՄՆ-ում (35,24 լ):

ԲՈՒՇԼԱՏ [< ռուս. бушлат < հմմտ. գերմ. Buscherun ձկնորսական վերնաշապիկ + արաբ. xalat միացությունից], գ. 1. Նավաստու մահուդե վերնազգեստ: 2. (խսկց.): Մգդաված հաստ վերնազգեստ:

ԲՈՒՇՄԵՆ(ՆԵՐ) [< бушмен(ы) < անգլ. bushmen < հոլանդ. անտառային մարդ], գ. Հարավային և արևելյան Աֆրիկայի հնագույն և հիմնական բնակչությունը: Ապրում են Կալահարի և Նամիբ անապատներում ու հարակից շրջաններում՝ մոտ 50 հազար: Խոսում են բուշմենական, ինչպես նաև բանտու լեզուներով:

ԲՈՒՌԼԱԿ [< ռուս. бурлак], գ. (պատմ.): Նավաքարշ բանվոր:

ԲՈՒՌԼԵՍԿ [< бурлеск(а) < ֆր. burlesque < իտլ. burla կատակ], գ. 1. (գրկն.): Հումորային պոեզիայի ժանր և այդ ժանրի ստեղծագործություն: 2. (երժշտ.): Հումորային՝ կատակային երաժշտական փոքր ծավալի գործ:

ԲՈՒՍՈԼ [< буссоль < ֆր. boussole], գ. (տեխ.): Մագնիսական միջօրեականի և որևէ առարկայի ուղղության միջև հորիզոնական անկյունները չափող երկրաչափական գործիք:

ԲՈՒՏԱԴԻԵՆ [< бутадиен < հուն.], գ. (քիմ.): Դիվինիլ՝ դիենային ածխաջրածին. անգույն, բնորոշ հոտով գազ է: Այն ստացվում է էթիլալկոհոլից, ացետիլենից կամ բուտանից և բուտեններից: Օգտագործվում է արհեստական կաուչուկների արտադրության ժամանակ և այլ սինթեզների համար:

ԲՈՒՏԱՆ [< бутан < հուն. but(yron) կարագ, յուղ], գ. (կենսբ.): Օրգանական միացություն՝ հագեցած ածխաջրածիններ: Հայտնի են նորմալ բուտանը և իզոբուտանը, որոնք անգույն, անհոտ գազեր են.պարունակվում են նավթային, կրեկինգային և բնական գազերում: Օգտագործվում են բուտադիենի արտադրության համար:

ԲՈՒՏԱՖՈՐ [< бутафор < իտլ. buttafuori], գ. Սկզբնական շրջանում իտալական թատրոնի բեմի աշխատող, որ կուլիսներից զանազան առարկաներ (զենք, ծա-

ղիկներ, գրեր են) էր մատուցում դերակատարներին: Ժամանակակից թատրոնում՝ մարդ, որ պատրաստում է բուտաֆորիա:

ԲՈՒՏԱՖՈՐԻԱ [< бутафория < իտլ.], 1. (թատր.): Նմանեցված առարկաներ (կահույք, ամանեղեն, զենք, զարդարանք են)՝ թատերական ներկայացումներում իսկական իրերի փոխարեն օգտագործելու համար: 2. փխբ. Շինծու իրեր:

ԲՈՒՏԵՐԲՐՈԴ [< бутерброт < գերմ. Butterbrot կարագով հաց], գ. (խսկց.): Վրան կարագ՝ ձկնկիթ՝ պանիր՝ երշիկ են դրած հացի շերտ:

ԲՈՒՏԻԿ [< бутик < ֆր. boutique, բառացի՝ կրպակ], գ. (առևտր.): Նորաձև հագուստների փոքրիկ խանութ՝ կրպակ:

ԲՈՒՏԻՐՈՄԵՏՐ [< бутирометр < հուն. butyron յուղ, կարագ + metreō չափում եմ], գ. (տեխ.): Կաթի յուղայնությունը չափող սարք:

ԲՈՒՏԼԵԳԵՐ [< бутлегер < անգլ. bootlegger < boot կոշիկ + leg ոտք], գ. (հզվդ.): Որոշ երկրներում անձ, որը զբաղվում է ալկոհոլային խմիչքների անօրինական ներկրմամբ և վաճառքով:

ԲՈՒՏՈՆԵՐԿԱ [< бутоньерка < ֆր. boutonnière կոճակամայր], գ. Ճաղկեփնջակալ (կրծքին ամրացնելու համար):

ԲՈՒՐ [< бур < հոլանդ. boor շաղափ, գայլիկոն, գչիր], գ. (տեխ.): Հորատ, հորատիչ մեքենա:

ԲՈՒՐԲՈՆ [< бурбон < Ֆրանսիայի թագավորական դինաստիայի անունից] գ. 1. (պատմ.): Թագավորական դինաստիա Ֆրանսիայում, Իսպանիայում, երկու Սիցիլիաների (կամ Նեապոլիտանական) թագավորությունում, Պարմի և Պյաչենցի դուքսերի դինաստիա: 2. *փխբ.* Գռեհիկ, անքաղաքավարի և իշխանասեր մարդ:

ԲՈՒՐԳՈՄԻՍՏՐ [< бургомистр < գերմ. Bürgermeister քաղաքագլուխ], գ. Բարձրագույն պաշտոնյա Գերմանիայի Դաշնության պետական իշխանության քաղաքային, ինչպես նաև մի քանի այլ երկրների (Բելգիա, Հոլանդիա, Ավստրիա) տեղական կառավարման մարմիններում:

ԲՈՒՐԵՐ [< буры < հոլանդ. boer գյուղացի], գ. (ազգգր.): Հարավային Աֆրիկայում եվրոպացի գաղութարարների (հիմնականում հոլանդացիների) ժառանգները:

ԲՈՒՐԺՈՒԱ [< буржуа < ֆր. bourgeois], գ. 1. Բուրժուական դասակարգին պատկանող անձ: 2. (արմտհ.): Հարուստ, փափկակյաց մարդ: 3. Հարստահարիչ՝ շահագործող մարդ:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ [< буржуазия < ֆր. bourgeoisie], գ. (պատմ.): 1. Կապիտալիստական հասարակության իշխանակարգը, որ տիրում է արտադրության գործիքներին և շահագործում է վարձու աշխատանքը: 2. Ֆեոդալական հասարակության մեջ՝ քաղաքացիների դասը:

ԲՈՒՐԺՈՒՅԿԱ [< ռուս. буржуйка], գ. 1. (խսկց.): Թիթեղյա փոքրիկ վառարան: 2. Խմորեղեն եփելու մետաղյա ման:

ԲՈՒՐԻՄԵ [< бурИме < ֆր. bouts rimés, բառացի՝ հանգավորում], գ. (տղչփ.): Բռնահանգ:

ԲՈՒՐԽԱՆ [< бурхан < մոնղ. burqan < սանսկրիտ Buddha Բուդդա], գ. (կրոն.): Մոնղոլ բուդդայականների կուռքը:

ԲՈՒՑԵՖԱԼ [< буцефал < լատ. Bucephalus < հուն. Bukephalos], գ. (պատմ.): Ալեքսանդր Մակեդոնացու ձիուցի անունը:

ԲՈՒՔՄԵՅՔԵՐ [< букмекер < անգլ. bookmaker], գ. (խսկց.): Անձ, որ ընդունում է փողերը «կատալիզատոր» խաղի հիմնականում ձիարշավի, ֆուտբոլի ևն ժամանակ:

ԲՈՒՔՍԻՐ [< буксир < հոլանդ. boegseren բուքսիրել], գ. 1. Ոչ ինքնագնաց նավեր կամ լողացող այլ կառույցներ քարշող-հրող ինքնագնաց նավ: 2. Բուքսիրից կապելու պարան: 3. (խսկց.): Ավտոմեքենա կամ տրակտոր, որ իր հետևից ուրիշ մեքենա է քաշում: 4. *փխբ.* Հասարակական աջակցություն՝ օգնություն որևէ կազմակերպության՝ հիմնարկի ևն:

ԲՈՒՖԱԼՈ [< буффало < անգլ. buffalo], գ. (կենդբ.): Ամերիկյան բիզոն:

ԲՈՒՖԵՏ [< буфет < ֆր. buffet], գ. 1. Ամանեղեն՝ ուտելիք՝ խմիչքեղեն ևն պահելու սենյակի պահարան, սպասքապահարան: 2. Ուտելիք ու խմիչք (խմիչքեղեն) վաճառելու փոքրիկ բաժանմունք հիմնարկներում և հասարակական վայրերում, ներհիմնարկային խորտկարան: 3. Ուտելեղենի և խմիչքեղենի վաճառասեղան ռեստորաններում ու ճաշարաններում:

ԲՈՒՖԵՐ [< буфер < անգլ. buffer], գ. (տեխ.): Թափարգել՝ շոգեքարշի՝ վագոնի՝ ավտոմոբիլի ևն հատուկ սարած հարվածի՝ ցնցման ուժը թուլացնելու համար:

ԲՈՒՖՈՆ [< буффон < ֆր. bouffon], գ. (թատր.): Դերասան, որն օգտվում է ընդգծված երգիծական, ծաղրածուական հնարքներից (բուֆոնադից):

ԲՈՒՖՈՆԱԴ [< буффонада < իտլ. buffonata կատակ, խեղկատակություն], գ. (թատր.): Դերասանական խաղի կերպ, որը հատուկ է կատակերգական ժարին. զարգացել է առավելապես միջնադարյան թատրոնում և ամբողջացել իտալական «կոմեդիա դելլ արտե» թատրոնում:

Գ

ԳԱԲԱՐԴԻՆ [< габардин < ֆր. gabardine], գ.(մնծգր.): Բրդյա թանկարժեք գործվածքի մի տեսակ՝ վերարկուի, կոստյումի ևն համար:

ԳԱԲԱՐԻՏ [< габарит < ֆր. gabarit], գ. 1. (մսնգ.): Մեքենաների, կամուրջների, շենքերի ծայրասահմանային ուրվագծերը: 2. (երկթղ.): Գնացքի անարգել երթևեկության համար անհրաժեշտ տարածությունը՝ ռելսային ուղու և կառամատույցների միջև:

ԳԱԲԲՐՈ [< габбро < իտլ. gabbro, Լիվարինո քաղաքից հարավ գտնվող տեղանքի անունով], գ. (հնք.): Հիմքային բաղադրության մագմատիկ ապար, որը պարունակում է մոտավորապես հավասար քանակությամբ հիմքային պլագիոկլազներ ու գունավոր և ոչ մեծ քանակությամբ հանքային միներալներ: Օգտագործվում է որպես դեկորատիվ շինանյութ ճանապարհաշինության մեջ:

ԳԱԲԻՈՆ [< габион < ֆր. gabion < իտլ. gabbione մեծ վանդակ], գ. Ցանցարկղ՝ մետաղացանցից պատրաստված, քարով լցված արկղի ձև ունեցող կառուցվածք, որը նախատեսված է գետի հունը ողողումներից պաշտպանելու և ափապաշտպան կառույցները տեղակայելու համար:

ԳԱԶ I [< газ < ֆր. gaze], գ.(մնծգր.): Մետաքսե թափանցիկ կտոր:

ԳԱԶ II [< газ < ֆր. gaz գործածության մեջ է դրվել XVII դարում հոլանդացի գիտնական Վան Հելմոնտի կողմից. ենթադրվում է՝ այն առաջացել է հունարեն

chaos բառից], գ. 1. (քիմ.): Ֆիզիկական մարմին, որի բաղադրիչ մասերը շատ թույլ են կապված և ազատորեն շարժվելով՝ ձգտում են զբաղեցնել այն ամբողջ տարածությունը, որի մեջ նրանք պարփակված են, ինչպես՝ թթվածին, ածխաթթու գազ են: 2. Ընդհանուր անվանումը գազանման և գոլորշանման այրվող նյութերի, որոնք օգտագործվում են ջեռուցման, լուսավորման նպատակով և որպես շարժիչ ուժ: 3. Ստամոքսում և աղիքներում առաջացած գազանման նյութ, քամի, փուք:

ԳԱԶԱԲԱԼՈՆԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼ - Սեղմված կամ հեղուկ գազով աշխատող շարժիչով ավտոմեքենա:

ԳԱԶԵԹ [< газета < իտալ. gazzetta < gazeta վենետիկյան հին մետաղադրամ, որով վճարում էին՝ թերթ գնելու համար], գ. (հնց.): Թերթ, լրագիր:

ԳԱԶԵԼ I [< газель < արաբ. gazāl], գ. (գրկն.): Արևելյան քնարերգության մեջ մշակված երկտող տներով ոտանավոր, որոնք միահյուսվում են ամեն զույգ տողի վերջում կրկնվող ռեդիֆով:

ԳԱԶԵԼ II [< газель < ֆր. gazelle < արաբ. gazal], գ. 1. (կենդբ.): Վիթ՝ Աֆրիկայում և Ասիայում հանդիպող այծքաղների խմբին պատկանող կենդանի՝ արագավազ, վայելչակազմ: 2. Գորկիի ավտոգործարանում արտադրվող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների տեսակ:

ԳԱԶԻՖԻԿԱՑԻԱ [< газификация < գերմ. Gasifikation < հուն.], գ. (տեխ.): 1. Գազիֆիկացում, գազիֆիկացնելը, գազ դարձնելը, գազացում, գազ արտադրելը: 2. Գազավորում, գազային էներգիա մատակարարելը (արդյունաբերությանը, բնակարաններին ևն):

ԳԱԶՀՈԼԴԵՐ [< газгольдер < անգլ. gasholder < gas գազ II + to hold պահել, տեղավորել], գ. (տեխ. հնց.): Գազապահեստարան:

ԳԱԶՈԼԻՆ [< газолин < գազ I + լատ. oleum յուղ], գ. (քիմ.): Բնական նավթային գազից կամ նավթի թորումից ստացվող հեղուկ, որի վերամշակումով ստացվում է բենզին:

ԳԱԶՈՅԼ [< газойль < գազ I + անգլ. oil յուղ], գ. (քիմ.): Նավթի թորումից ստացվող հեղուկ վառելիք՝ ներքին այրման շարժիչների համար:

ԳԱԶՈՆ [< газон < ֆր. gazon], գ. Պուրակներում, ճանապարհների եզրերում են առանձնացված տարածք, որը ցանված է կարճ կտրված և խնամված սիզախոտով. կատարվում է դեկորատիվ նպատակներով, սիզամարգ:

ԳԱԶՈՆԱՊԱՏ, ած. Սիզապատ:

ԳԱԼ [< гал < իտալացի ֆիզիկոս և աստղագետ Գալիլեո Գալիլեի (1564-1642) անունից], գ. Արագության միավոր՝ 1 սմ/վ^2:

ԳԱԼԱ [< гала < ֆր. gala], գ. 1. (պատմ.): Պալատական հանդիսություն XVII-XVIII դդ: 2. Գոյականին կից գործածությամբ, օր.՝ Գալահամերգ՝ հատուկ հանդիսավորությամբ իրականացվող, անցկացվող համերգ:

ԳԱԼԱԿՏԻԿԱ [< галактика < հուն. galaktikos կաթնային], գ. (աստղգ.): 1. Միասնական աստղային համակարգությունը, որի մեջ մտնում է Արեգակը. Ծիր Կաթին: 2. Աստղային ամեն մի ամբողջական համակարգ՝ բաղկացած հարյուր միլիոնավոր աստղերից:

ԳԱԼԱՆՏ [< галантный < ֆր. galant], ած. Չափազանց քաղաքավարի, նրբաճաշակ:

ԳԱԼԱՆՏԵՐԵԱ, ԳԱԼԱՆՏԵՐԻԱ [< галантерея < ֆր. galanterie նրբակրթություն], գ. Արդուզարդի և անձնական գործածության մանր առարկաների (սանր, ճարմանդ, ժապավեն և այլ անձնապիտո առարկաների) ընդհանուր անվանումը:

ԳԱԼԵՏ(Թ) [< галета < ֆր. galette], գ. Մի տեսակ պաքսիմատ, որոնք պահպանում են իրենց սննդարար հատկությունը երկար ժամանակ:

ԳԱԼԵՐ [< галера < իտլ. galera], գ. (պատմ.): Իսպանական ռազմանավ. օգտագործվում էր Միջերկրական ծովում (մինչև XVIII դարը), թիավարները ստրուկներ, ռազմագերիներ, հանցագործներ էին: Ֆրանսիացիների, իսպանացիների, իտալացիների կողմից այս բառը օգտագործվում է նաև «աքսոր» իմաստով:

ԳԱԼԵՐԵԱ [< галерея < ֆր. galerie], գ. 1. Սրահ՝ երկար և նեղ փակված սրահ, որը կապում է կառույցի տարբեր մասեր: 2. (հնք.): Ստորասրահ՝ ստորանցք, որը հողի տակից կապում է կառույցների՝ հանքերի առանձին մասերը: 3. (թատր.) Պատշգամբասրահ՝ թատրոնի ամենավերին և ամենաէժան նստատեղերը: 4. (արվ.) Պատկերասրահ՝ սրահ նկարներ ցուցադրելու համար: 5. *փխբ.* Քանդակների՝ արձանների՝ գրական կերպարների կամ հերոսների նն շարք՝ շարան:

ԳԱԼԻՈՆ, ԳԱԼԵՈՆ [< галион, галеон < ֆր. galion < իսպ. galeon < լատ. galea սաղավարտ], գ. (պատմ.): Իսպանական կամ պորտուգալական մեծ առագաստանավ:

ԳԱԼԻՑԻԶՄ [< галлицизм < ֆր. gallicisme < լատ. Gallicus գալլական], գ. (լեզվբ.) Ֆրանսիաբանություն՝ ֆրանսերենից փոխառված բառ կամ արտահայտություն:

ԳԱԼԻՈՒՄ [< галлий < հայտնագործման տեղանքի անվանումից՝ լատ. Gallia Ֆրանսիա], գ. (քիմ.): Ga, տարրերի պարբերական համակարգի III խմբի քիմիական P տարր: Գալիումի ստացման հիմնական աղբյուրը ալյումինի արտադրությունն է: Այն կիրառվում է բարձր ջերմաստիճանային ջերմաչափեր (600-1300°C) պատրաստելու համար և վակուումային պոմպերում:

ԳԱԼԻՖԵ [< галифе < ֆրանսիացի հեծելազորային գեներալ Galliffet-ի անունից, որը հայտնի է իր դաժանությամբ փարիզյան կոմունարների նկատմամբ 1871 թ.], գ. (խսկց.): Մինչև ծնկները նեղ փողքերով և դեպի կողքերը լայնացող վերնամասով անդրավարտիք:

ԳԱԼԼ(ԵՐ) [< галлы < լատ. Galli], գ. (ազգգր.): Ժամանակակից Ֆրանսիայի, Բելգիայի և հյուսիսային Իտալիայի տարածքում ապրող հնագույն ազգություն, գաղիացի(ներ):

ԳԱԼՅՈՒՆ [< гальюн < հոլանդ. galjoen], գ. (ծով.): Նավաստիների զուգարան (նավի վրա):

ԳԱԼՈՆ [< галлон < անգլ. gallon], գ. Հեղուկ և սորուն մարմինների չափման միավոր Անգլիայում՝ 4.546 լիտր: ԱՄՆ-ում՝ հեղուկների համար 3.785 լիտր և 4.405 լիտր սորուն նյութերի համար:

ԳԱԼՈՊ [< галоп < ֆր. galop], գ. 1. Քառարշավ՝ ձիու քառատրոփ վազք, արշավ: 2. (հնց.): Հին պարի մի տեսակ, որը տարածված էր XIX դարի վերջում:

ԳԱԼՅՈՐԿԱ [< рուս. галёрка], գ. (թատր. խսկց.): Թատրոնի վերին՝ էժանագին տեղերով օթյակաշարք:

ԳԱԼՎԱՆԱԿԱՆ [< гальванический < իտլ. գիտնական Գալվանիի (Galvani 1737-1798 թթ.) անունից], ած. (ֆիզ.): Գալվանականությանը հատուկ:

ԳԱԼՎԱՆԱՉԱՓ, գ. Թույլ էլեկտրահոսանք չափելու սարք:

ԳԱԼՎԱՆԱՊԼԱՍՏԻԿԱ [< гальванопластика < գալվանական + հուն. plastikē], գ. Մետաղե և ոչ մետաղե շինվածքների մետաղյա պատճենի ստացումը էլեկտրոլիզի միջոցով:

ԳԱԼՎԱՆԱՍՏԵԳԻԱ [< гальваностегия < գալվանական + հուն. stegē ծածկույթ], գ. (տեխ.): Առարկաների մակերևույթներն մետաղով և համաձուլված-

քով պատելը՝ պաշտպանական և դեկորատիվ նպատակով: Կիրառվում է ավտոմոբիլաշինության, ավիացիոն, ռադիոտեխնիկական և էլեկտրոնային արդյունաբերության մեջ:

ԳԱԼՎԱՆԱՍՏԵՐԵՈՏԻՊԻԱ [< гальваностереотипия < գալվանական + հուն. stereos պինդ + typos հետք, դրոշմ], գ. (տպգր.): Բարձր տպագրություն մամլակաղապարների պատճենների պատրաստման եղանակ՝ մամլակաղապարի վրա մետաղի շերտի էլեկտրոլիտիկ նստեցման մեթոդով:

ԳԱԼՎԱՆԱՏԵԽՆԻԿԱ [< гальванотехника < գալվանական + հուն. technikē], գ. Կիրառման էլեկտրաքիմիայի բնագավառ, որն ընդգրկում է մետաղե և ոչ մետաղե առարկաների մակերևույթներին մետաղների ու համաձուլվածքների էլեկտրոլիտիկ նստեցման գործընթացները:

ԳԱԼՎԱՆԱՅՈՒՅԺ, գ. (ֆիզ.): Գալվանաչափի նախատիպը, շղթայի մեջ հաստատուն հոսանք հայտնաբերելու սարք:

ԳԱՄԲԻՏ [< гамбит < ֆր. gambit < իտլ. dare il gambetto ոտք գցել], գ. (սպորտ.): Շախմատային այնպիսի խաղասկիզբ, որի ժամանակ զոհաբերվում է զինվոր կամ որևէ այլ խաղաքար՝ ակտիվ դիրք ստանալու կամ շուտափույթ հարձակում սկսելու համար: Օր.՝ թագուհու գամբիտ:

ԳԱՄԲՈՒԶԻԱ [< гамбузия < իսպ. gambuxia], գ. (կենդբ.): Ծածանատամնավորների կարգի, Polcilidae ընտանիքի ձկնիկ: Կենդանածին է, տարեկան կարող է տալ 3-6 սերունդ: Սնվում է մոծակների թրթուրներով և հարսնյակներով: Գամբուզիայի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է:

ԳԱՄԵՏԱՆԳԻՈՒՄ [< гаметангий < հուն. gamatēs ամուսին+angeion], գ. (կենսբ.): Սեռական օրգան, որտեղ առաջանում են շարժվող սեռական բջիջներ (սնկերի ևն):

ԳԱՄԵՏՆԵՐ [< гаметы < հուն. gametes ամուսին, gamete-կին], գ. (կենսբ.): Կենդանական և բուսական օրգանիզմների սեռական բջիջներ, որոնք միանում են միմյանց:

ԳԱՄԵՏՈՖԻՏ [< гаметофит < գամետներ + հուն. phyton բույս], գ. (բսբ.): Բույսերի սեռական սերունդ:

ԳԱՄՄԱ I [< гамма < հուն. gamma հունական այբուբենի երրորդ տառը], գ. 1. (երժշտ.): Ձայնաշար, ելևէջ՝ իջնող կամ բարձրացող հաջորդական ձայների շարքը մեկ կամ մի քանի ութնյակի մեջ: 2. *փխբ.* Հաջորդափունջ, հաջորդաբույլք, հաջորդաշարք՝ միմյանց հաջորդող՝ միասնություն կազմող միատեսակ, բայց իրարից որոշ չափով տարբերվող երևույթների՝ տարրերի ևն բազմություն՝ շարան՝ շարք: Գույների գամմա:

ԳԱՄՄԱ II [< гамма < հուն.], գ. (ֆիզ.): 1. Գրամի մեկ միլիոներորդ մասը: 2. Էրստեդի մեկ հարյուրհազարերորդ մասը:

ԳԱՄՄԱ III [< гамма < հուն.], գ. Հունական այբուբենի երրորդ տառի անվանումը (գործածվում է զանազան գիտությունների նշանային համակարգերում):

ԳԱՄՄԱ-ԳԼՈԲՈՒԼԻՆՆԵՐ [< гамма-глобулины < գամմա II + լատ. globulus գնդիկ], գ. (կզմխս.): Արյան պլազմային գլոբուլինների ֆրակցիա, որը պարունակում է հակամարմինների մեծամասնությունը: Օգտագործվում են առավելապես երեխաների վարակիչ հիվանդությունների (կարմրուկ, կապույտ հազ, պոլիոմելիտ, դեղնախտ) կանխարգելման և բուժման համար:

ԳԱՄՄԱ-ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ [< гамма II - излучение], գ. (ֆիզ.): Կարճ էլեկտրամագնիսական ալիքներ, որոնք անցնում են անթափանց առարկաների միջով:

ԳԱՄՄԱ-ՄԵԹՈԴ [< гамма-метод < գամմա II + հուն. methodikē], գ. Օգտակար

հանածոների հետախուզության երկրաֆիզիկական մեթոդ՝ հիմնված ապարների ռադիոակտիվության վրա:

ԳԱՄՄԱ-ՍՊԵԿՏՐՈՄԵՏՐ [< гамма II- спектрометр < գամմա II + լատ. spectrum տեսանելի + հուն. metron], գ. (տեխ.): Գամմա-սպեկտրաչափ, գամմա-ճառագայթների սպեկտրը չափելու սարք:

ԳԱՄՄԱ-ՍՊԵԿՏՐՈՍԿՈՊԻԱ [< гамма- спектроскопия < գամմա II + լատ. spectrum + հուն. skopeō նայում եմ, դիտում եմ], գ. (գիտ.): Միջուկային սպեկտրոսկոպիայի բաժիններից, ուր հետազոտում են գամմա-ճառագայթների սպեկտրները և գրգռված ատոմների միջուկների տարբեր հատկություններ, որոնց տրոհումը ուղեկցվում է γ -քվանտների առաքմամբ:

ԳԱՄՄԱ-ՖՈՒՆԿՑԻԱ [< гамма-функция < գամմա II + լատ. functio], գ. (ֆիզ.): Ֆակտորիալի հասկացությունը ընդհանրացնող հատուկ ֆունկցիա:

ԳԱՆԳԼԻՈՆՆԵՐ [< ганглий < հուն. ganglion հանգույց], գ. (կզմխս.): Նյարդային բջիջների, նյարդաթելերի և հարակից հյուսվածքների մեկուսացած կուտակումներ:

ԳԱՆԳՍՏԵՐ [< гангстер < անգլ. gangster < gang հրոսակախումբ], գ. (խսկց.): Ավազակ՝ բանդիտ, բանդիտական խմբի անդամ:

ԳԱՆԳՍՏԵՐԻԶՄ [< гангстеризм < անգլ.], գ. Լայն իմաստով՝ կազմակերպված հանցագործություն:

ԳԱՆԳՐԵՆԱ [< гангрена < հուն. gangraina], գ. (բժշկ.): Փտախտ՝ արյան շրջանառության խանգարման հետևանքով մարմնի կամ օրգանիզմի որևէ մասի հյուսվածքների մահացում, մեռուկ. տարբերակվում են փտախտի չոր, թաց և գազային տեսակներ:

ԳԱՆԴԻԶՄ [< гандизм < Հնդկաստանի ազգային-ազատագրական շարժման ղեկավար Մ. Կ. Գանդիի (1869-1948) անունից], գ. (քղք.): Հասարակական-քաղաքական, կրոնափիլիսոփայական ուսմունք, որի գլխավոր նպատակներն էին Հնդկաստանի անկախության ձեռքբերումը խաղաղ ճանապարհով, ժողովրդական զանգվածներին ազգային պայքարում ներգրավելը, «դասակարգային խաղաղության» հաստատումը են:

ԳԱՍԿՈՆԱԴԱ [< гасконада < ֆր. gasconnade < Ֆրանսիայի Գասկոն նահանգի անունից, որի բնակիչները պարծենկոտ էին], գ. (գրկն.): Ֆրանսիական գրականության մեջ՝ պարծենկոտության, սնապարծության իմաստ ունեցող բառ:

ԳԱՍՏԱՐԲԱՅՏԵՐ [< гастарбайтер < գերմ. Gastarbeiter < Gast հյուր + Arbeiter բանվոր, աշխատող], գ. (խսկց.): Գերմանիայում, ՌԴ-ում և մի շարք այլ երկրներում՝ գաղթյալ բանվոր, որն օգտվում է ավելի քիչ իրավունքներից, քան տվյալ երկրի բնակիչները:

ԳԱՍՏՐԻՆ [< гастрин < հուն. gastēr (gastros) ստամոքս], գ. (կզմխս.): Պոլիպեպտիդային բնույթի հորմոն. արտադրվում է ստամոքսաելքի լորձաթաղանթում:

ԳԱՍՏՐԻՏ [< гастрит < հուն. gastēr (gastros) ստամոքս], գ. (բժշկ.): Ստամոքսի թաղանթի բորբոքում:

ԳԱՍՏՐՈ... [< гастро... < հուն. gaster(gastros) ստամոքս] Բարդ բառերի առաջին բաղադրիչ, որը ցույց է տալիս այդ բառերի կապը ստամոքսի, մարսողության հետ:

ԳԱՍՏՐՈԼ [< гастроль < գերմ. Gastrolle < Gast հյուր + Rolle դեր], գ. (թատր. խսկց.) Հյուրախաղ՝ հյուր եկած դերասանի կամ դերասանական խմբի ելույթ կամ ներկայացումներ:

ԳԱՍՏՐՈԼՅՈՐ [< гастролёр < գերմ.], գ. (խսկց.): 1. Հյուրախաղորդ: 2. *փխբ.*

Որևէ բան պատահականորեն ու ժամանակավորապես կատարող մարդ:

ԳԱՍՏՐՈՆՈՄ [< гастроном < ֆր. gastronome < հուն. gastēr (gastros) ստամոքս + nomos օրենք], գ. (հնց.): 1. Խորտկագետ, համադամագետ՝ համեղ ճաշերի գիտակ ու սիրող անձ: 2. Նպարախանութ՝ նպարեղենի խանութ:

ԳԱՍՏՐՈՍԿՈՊԻԱ [< гастроскопия < հուն. gastēr (gastros) + skopeō տեսնում եմ], գ. (բժշկ.): Ստամոքսի թաղանթի զննում հատուկ գործիքի միջոցով, որը ներս է մտցվում բերանի խոռոչի և կերակրափողի միջով:

ԳԱՐԱԺ [< гараж < ֆր. garage], գ. (խսկց.): Ավտոտնակ՝ երկաթե կամ քարե շինություն մեքենաների կայանման, վառելիքալցման, վերանորոգման համար:

ԳԱՐԱՆՏ [< гарант < ֆր. garant], ած. գ. (խսկց.): Երաշխավոր՝ պետություն, կազմակերպություն կամ որևէ ֆիզիկական անձ, որը ինչ-որ բանի երաշխավորն է:

ԳԱՐԱՆՏԻԱ [< гарантия < ֆր. garantie], գ. (խսկց.): Երաշխավորություն, երաշխիք:

ԳԱՐԴԵՄԱՐԻՆ [< гардемарин < ֆր. gardē-marine], գ. (պատմ.): Նախահեղափոխական Ռուսաստանում՝ ծովային դպրոցի բարձր դասարանի աշակերտ:

ԳԱՐՆԻԶՈՆ [< гарнизон < ֆր. garnison], գ. (ռազմ. հնց.): Կայազոր՝ քաղաքում, բերդում կամ պաշտպանական շրջանում տեղավորված մշտական կամ ժամանակավոր զորք:

ԳԱՐՆԻՏՈՒՐ [< гарнитур < գերմ. Garnitur < ֆր. garniture], գ. Լիակատար կոմպլեկտ՝ համալիր:

ԳԱՐՆԻՐ [< гарнир < ֆր. garnir մատակարարել, զարդարել], գ. (խսկց.): Ճաշալրաց, խավարտ՝ մսային կամ ձկնային ուտեստներին ավելացվող, լրացվող սննդամթերք:

ԳԱՐՍՈՆ [< гарсон < ֆր. garçon տղա], գ. (խսկց.): Մատուցող՝ Ֆրանսիայում ռեստորաններում կամ սրճարաններում, հյուրանոցներում մատուցող, աշխատող:

ԳԱՈՒԴԵԱՄՈՒՍ [< гаудеамус < լատ. gaudeamus - եկեք ուրախանանք], գ. Լատիներեն ուսանողական հնագույն երգի անվանում, որն այժմ էլ շատ արդիական է ուսանողական միջավայրում:

ԳԵԴՈՆԻԶՄ [< гедонизм < հուն. hēdon հաճույք], գ. 1. (փիլ.):Հեդոնիզմ՝ բարոյագիտական ուսմունք, որի համաձայն մարդը ձգտում է միայն հաճույքների և խուսափում է տառապանքներից: 2. (գրկն.): Խրախճանքներ գովերգող քնարերգություն: 3. *փխբ.* Խրախճանքասիրություն:

ԳԵԴՈՆԻՍՏ [< гедонист < հուն.], գ. Հեդոնիզմի հետևորդ:

ԳԵՀԵՆ [< геенна < հուն. geenna], գ. (կրոն.): Դժոխք, գեհեն:

ԳԵՄՄԱ [< гемма < լատ. gemma], գ. Գեմաքար, փորագրված պատկերով ազնիվ քար:

ԳԵՅ [< гей < անգլ. gay, բառացի՝ անառակ], գ. (խսկց.): Հոմոսեքսուալիստ, միասեռական (տղամարդ):

ԳԵՅԱ [< Гея < հուն. Gē, Gaia], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ ցամաքի աստվածուհի՝ Անթեյի մայրը:

ԳԵՅԶԵՐ [< гейзер < իսլ. geysir < geysa դուրս հորդել], գ. Հանքային աղբյուր, որից ժամանակ առ ժամանակ դուրս են ցայտում տաք ջրի կամ գոլորշու շատրվաններ՝ 20-40 մ բարձրությամբ: Գեյզերները հիմնականում գտնվում են հանգչող հրաբխային գոտիներում՝ Կամչատկայում, Իսլանդիայում, Նոր Զելանդիայում, Հյուսիսային Ամերիկայում, հեյզեր:

...ԳԵՅԹ [< ...гейт < անգլ. ...gate < Watergate] Բարդ բառերի վերջնաբաղադրիչ,

որը ցույց է տալիս այդ բառերի կապը քաղաքական սկանդալների, կոռուպցիայի և նմանատիպ այլ երևույթների հետ:

ԳԵՅՄ [< гейм < անգլ. game խաղ], գ. (սպորտ.): Խաղափուլ՝ թենիսի խաղի որևէ կայացած հատված:

ԳԵՆ [< ген < հուն. genos ծագում, առաջացում], գ. (կենսբ.): Օրգանիզմներում ժառանգականության մատերիական կրողը՝ ժառանգակիրը. ժառանգության տարրական միավոր, որը դեզօքսիռիբոնուկլեինաթթվի (ԴՆԹ), իսկ որոշ վիրուսներում՝ ռիբոնուկլեինաթթվի (ՌՆԹ) մոլեկուլի մի հատվածն է: Գենների միագումարությունը՝ գենատիպը, գենետիկական ինֆորմացիա է կրում օրգանիզմի տեսակային և անհատական բոլոր առանձնահատկությունների մասին:

...ԳԵՆ [< ... ген < հուն. ... genēs ծնված] Բարդ բառերի բաղադրիչ մաս, որը ցույց է տալիս որևէ բանի առաջացումը, ծագումը (օրինակ՝ գլիկոգեն, անտիգեն ևն):

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ [< гендерный < անգլ. gender < լատ. genus սեռ], ած. Սեռային, սեռին հատուկ՝ վերաբերող:

ԳԵՆԵԱԼՈԳԻԱ [< генеалогия < հուն. genealogia], գ. (գիտ.): Տոհմաբանություն՝ 1. Տոհմի պատմություն, ազգաբանություն: 2. Մի տոհմի սերունդների հաջորդական կանոնավոր ցանկ, որը հավաստում է ազգակցության աստիճանը և հաջորդականությունը:

ԳԵՆԵԶԻՍ [< генезис < հուն. genesis], գ. Ծագում՝ առաջացման, ծագման, սկզբնավորման պատմություն:

ԳԵՆԵՏԻԿԱ [< генетика < հուն. genētikos ծննդին վերաբերող], գ. (գիտ.): Ծագումնաբանություն՝ կենսաբանության այն ճյուղը, որն ուսումնասիրում է օրգանիզմների ծագումն ու զարգացումը, փոփոխականությունն ու ժառանգականությունը:

ԳԵՆԵ(Ի) ՏԻՎ [< генетив < լատ. casus gene(i)tivus], գ. ած. (լեզվբ.): Սեռական հոլով:

ԳԵՆԵՐԱԼ [< генерал < լատ. generalis ընդհանուր, գլխավոր], գ. (ռազմ.): 1. Զինվորական բարձր հրամկազմի և պետկազմի կոչում կամ աստիճան՝ չորս կարգով՝ գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, գեներալ-գնդապետ, բանակի գեներալ: 2. Այդ կոչումը կրող զինվորական:

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ [< генерал-адъютант], գ. (պատմ.): Գեներալի աստիճանով պաշտոնյա կայսեր մոտ:

ԳԵՆԵՐԱԼ-ԲԱՍ [< генерал-бас < գերմ. General-baß < լատ. generalis գլխավոր, ընդհանուր + իտալ. basso ցածր], գ. (երժշտ.): Հոմոֆոնակորդային կերտվածք ունեցող ստեղծագործության նոտագրված ստորին ձայնը, որին կցված են նվագակցության ակորդները նշող թվանշաններ, այստեղից էլ երկրորդ՝ թվագրված բաս (իտալ. basso continuo) անվանումը:

ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՍ [< генералиссимус < լատ. generalissimus ամենագլխավոր], գ. (ռազմ.): Զինվորական ամենաբարձր հրամանատարական կոչումը. այդ կոչումը ունեցել են՝ Ա. Վ. Սուվորովը. Պետրոս Առաջինը շնորհել է այդ կոչումը Ա. Դ. Մենշիկովին և Ա. Ս. Շեինին: Խորհրդային Միությունում՝ 1945 թ. հունիսի 27-ին գեներալիսսիմուս է շնորհվել Ի. Վ. Ստալինին:

ԳԵՆԵՐԱԼԻՏԵՏ [< генералитет < գերմ. Generalität < լատ. generalis], գ. (ռազմ.): Բանակի բարձր հրամանատարական կազմը, բոլոր գեներալները միասին:

ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏ [< генерал-губернатор], գ. (պատմ.): Մեկ կամ մի քանի նահանգների զինվորական ու վարչական իշխանությամբ օժտված նահանգապետ:

ԳԵՆԵՐԱՏՈՐ [< генератор < լատ. generator արտադրող], գ. (տեխ.): 1. Մեխանիկական էներգիան էլեկտրականի փոխարկող մեքենա: 2. Շոգեմեքենայի կաթսա: 3. Կարծր վառելանյութը այրվող գազի փոխարկող մեքենա՝ սարք, գազածին, գազագեներատոր:

ԳԵՆԵՐԱՑԻԱ [< генерация < լատ. generatio], գ. 1. (մանգ.): Սերունդ, զարմ, տեսակ: 2. Վերարտադրում, արտադրում: 3. (ռադ.): Էլեկտրական տատանումներ անտենայում:

ԳԵՆՇՏԱԲ [< ռուս. генштаб < генеральный штаб], գ. (ռազմ.): Գլխավոր շտաբ՝ զինվորական կառավարման բարձրագույն մարմին, որը գլխավորում է կենտրոնական և տեղական բոլոր զինվորական մարմինների աշխատանքը:

ԳԵՆՈՄ [< геном < անգլ. genome < գերմ. Genom < հուն. genos], գ. (կենսբ.): Քրոմոսոմների հապլոիդ հավաք, տվյալ օրգանիզմի քրոմոսոմների մեկական հավաքակազմում տեղակայված գեների միագումար: Տերմինն առաջարկել է գերմանացի կենսաբան Գ. Վինկլերը (1920 թ.):

ԳԵՆՈՏԻՊ [< генотип < հուն. genos + typos կերպար], գ. (կենսբ.): Օրգանիզմի ժառանգական հիմքը. տվյալ օրգանիզմի քրոմոսոմներում տեղակայված բոլոր գեների համախմբվածություն:

ԳԵՆՈՑԻԴ [< геноцид < հուն. genos + լատ. caedere սպանել], գ.: Ցեղասպանություն՝ բնակչության առանձին խմբերի՝ ազգային փոքրամասնությունների՝ ժողովրդի ևն ոչնչացում՝ կոտորած՝ ռասայական, ազգայնական կամ կրոնական շարժառիթներով:

ԳԵՆՈՖՈՆԴ [< генофонд < հուն. genos + ֆր. fond հիմք], գ. 1. Գեների ամբողջությունը, որ կա անձի մեջ: 2. Ազգի բազմացման հիմքը, ազգի սերուցքը:

ԳԵՆՏԵՔՍ [< гентекс < անգլ. Gentex < to generalize + teletype + exchange + service հապավում], գ. (տեխ.): Միջազգային հեռահաղորդակցման համակարգ:

ԳԵՇԵՖԹ, ԳԵՇԵՖՏ [< гешефт < գերմ. Geschäft գործ, առևտրական գործարք], գ. (տնտսգ.): Ձեռնտու գործարք, օրենքը շրջանցող բիզնես, չարաշահական գործ:

ԳԵՈ... [< гео... < հուն. gē երկիր] Բարդ բառերում ցույց է տալիս բառիմաստի կապը երկրագնդին, երկրի կեղևին ևն:

ԳԵՈԱՆՏԻԿԼԻՆԱԼ [< геоантиклиналь < գեո... + անտի... + հուն. klinō կռում եմ], գ. Երկրակեղևի մասնակի, նեղ կամարաձև բարձրացում գեոսինկլինալային համակարգի սահմաններում:

ԳԵՈԲՈՏԱՆԻԿԱ [< геоботаника < գեո…+ հուն. botanikē < botanē խոտ, բույս], գ. (գիտ.): Բուսաբաշխաբանություն՝ բուսաբանության բաժին, որն ուսումնասիրում է Երկրի մակերևույթի բուսական աշխարհը՝ որպես ամբողջություն:

ԳԵՈԴԵԶԻԱ [< геодезия < գեո... + հուն. daiomai բաշխում], գ. (գիտ. հնց.): Երկրաբաշխություն՝ գիտություն, որ ուսումնասիրում է Երկրի մակերևույթի ձևերն ու չափերը և զբաղվում տեղանքի չափումներով՝ քարտեզների ու գծագրերի մեջ երկրի մակերևույթը պատկերելու համար:

ԳԵՈԴԵԶԻՍՏ [< геодезист < հուն.], գ. Երկրաբաշխ:

ԳԵՈԳՐԱՖԻԱ [< география < հուն. geōgraphia], գ. (գիտ.): Աշխարհագրություն՝ 1. Մարդկային հասարակությունը շրջապատող բնական պայմանները, արտադրության տեղաբաշխումը, նրա զարգացման պայմաններն ու առանձնահատկու-

թյունները և բնակչությունն ու կենդանական աշխարհը նկարագրող գիտությունների ընդհանուր անվանումը: 2. Երկրի վրա կամ նրա առանձին վայրում՝ շրջանում՝ երկրամասում նն որևէ բանի տարածման ուսումնասիրությունը: 3. *փխբ.* Որևէ բանի տեղաբաշխման ընդհանուր պատկերը:

ԳԵՈԹԵՐՄԻԿԱ [< геотермика < գեո… + հուն. thermē ջերմ, տաք], գ. (գիտ.): Երկրաջերմություն՝ երկրաֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է Երկրի ընդերքի ջերմային վիճակն ու ջերմային պատմությունը:

ԳԵՈԼՈԳԻԱ [< геология < գեո… + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Երկրաբանություն՝ գիտություն, որը ուսումնասիրում է Երկրի վրա օրգանական կյանքի առաջացման ու զարգացման պատմությունը, երկրակեղևի կառուցվածքը, բաղադրությունն ու պատմությունը, օգտակար հանածոների հանքավայրերը:

ԳԵՈԿՐԻՈԼՈԳԻԱ [< геокриология < գեո... + հուն. krios սառնամանիք + logos], գ. (գիտ.): Գիտություն սառած գրունտների և ապարների, դրանց առաջացման գործընթացների, զարգացման պատմության, գոյության պայմանների մասին:

ԳԵՈՄԵՏՐԻԱ [< геометрия < հուն. geōmetria], գ. (գիտ.): Երկրաչափություն՝ մաթեմատիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է մարմինների տարածական ձևերն ու հարաբերությունները, ինչպես և իրականության այլ ձևեր ու հարաբերություններ, որոնք իրենց կառուցվածքով նման են տարածական ձևերին ու հարաբերություններին:

ԳԵՈՄՈՐՖՈԼՈԳԻԱ [< геоморфология < գեո…+ հուն. mophē + logos գիտություն], գ. (գիտ.): Երկրամակերևույթի գիտություն՝ ֆիզիկական աշխարհագրության այն ճյուղը, որ ուսումնասիրում է Երկրի մակերևույթի կազմությունն ու պատմությունը:

ԳԵՈՊՈԼԻՏԻԿԱ [< геополитика < գեո…+ հուն. politikē պետությունը կառավարելու արվեստ], գ. (քաղ.): Աշխարհաքաղաքականություն՝ գիտական տեսություն, որ աշխարհագրական միջավայրը կյանքի զարգացման վճռական գործոնն է համարում:

ԳԵՈՍԻՆԿԼԻՆԱԼ [< геосинклиналь < գեո…+ հուն. synkliniai հանդիպակաց լեռների լանջեր], գ. Երկրակեղևի համեմատաբար նեղ, գծային ձգված գալարուն գոտի, որն իր հատկանիշներով հակադրվում է պլատֆորմին:

ԳԵՈՏԵԿՏՈՆԻԿԱ [< геотектоника < գեո... + հուն. tektonikē], գ. Նույնն է՝ Տեկտոնիկա:

ԳԵՈՐԳԻՆ(Ա) [< георгин(а) < գերմ. Georgine], գ. (բսբ.): 1. Բարդածաղկավորների ընտանիքին պատկանող գեղազարդային ծաղկաբույս՝ մեծ ու վառ գույնի ծաղիկներով: 2. Այդ բույսի ծաղիկը:

ԳԵՈՑԵՆՏՐԻԶՄ [< геоцентризм < գեո... + լատ. centrum < հուն. kentron], գ. (հնց.): Երկրակենտրոնություն՝ գիտության կողմից հերքված աշխարհայացք, որի համաձայն Երկիրը դիտվում էր որպես տիեզերքի անշարժ կենտրոն, որի շուրջը պտտվում են երկնային մարմինները:

ԳԵՈՔԻՄԻԱ [< геохимия < գեո…+ հմմտ. լատ. (al) chemia, (al-)chimia < արաբ. al-ki-mīyā], գ. (գիտ.): Երկրաքիմիա՝ երկրագնդի քիմիական բաղադրության և երկրագնդի վրա քիմիական տարրերի տարածման, բաշխման, տեղաշարժերի ու փոխանցումների ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:

ԳԵՈՔԻՄԻԿՈՍ [< геохимик < գեո... + քիմիա], գ Երկրաքիմիկոս՝ երկրաքիմիայի մասնագետ:

ԳԵՈՖԻԶԻԿԱ [< геофизика < գեո... + հուն. physikē < physis բնություն], գ.

(գիտ.): Երկրաֆիզիկա՝ երկրի ֆիզիկական հատկությունների ու գործընթացների ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:

ԳԵՈՖԻԶԻԿՈՍ [< геофизик < գեո... + ֆիզիկա], գ. Երկրաֆիզիկոս՝ երկրաֆիզիկայի մասնագետ:

ԳԵՈՖՈՆ [< геофон < գեո…+ հուն. phonē ձայն, աղմուկ, խոսք, բառ], գ. (տեխ.): Երկրակեղևի վերին շերտերում տարածվող ձայնային ալիքների ընդունիչ:

ԳԵՍՏԱՊՈ [< гестапо < գերմ. Gestapo հպվ. Geheime Staatspolizei], գ. (պատմ.): Պետական գաղտնի ոստիկանություն հիտլերյան Գերմանիայում, որ իրականացնում էր զանգվածային տեռորն ու մահապատիժները Գերմանիայում ու Եվրոպայի բռնագրավված երկրներում:

ԳԵՏՏՈ [< гетто < իտլ. ghetto], գ. (պատմ.): Առանձնաթաղ՝ առանձնացված թաղ (հրեաների կամ ռասայական խտրականության ենթարկվող այլ ժողովուրդների համար):

ԳԵՐԲ [< герб < գերմ. Erbe ժառանգություն, լեհ. herb], գ. (խսկց.): Զինանշան՝ որևէ պետության՝ քաղաքի՝ իշխանության՝ տոհմի ևն խորհրդանիշը՝ նշանը, որ գծագրվում՝ նկարվում է վահանի՝ դրոշի ևն վրա:

ԳԵՐԻԼԻԱ [< герилья < իսպ. guerrilla < guerra պատերազմ], գ. (պատմ.): Պարտիզանական պատերազմի անվանում Իսպանիայում և Լատինական Ամերիկայի երկրներում: Առավել հայտնի է իսպանական հեղափոխության (1808-14 թթ.) շրջանի գերիլիան, որը զուգակցել է ֆրանսիական զավթիչների և ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարը:

ԳԵՐՄԱՆԻԶՄ [< германизм < Գերմանիա անունից], գ. (լեզվբ.): Գերմանական լեզուներից փոխառված բառ կամ արտահայտություն:

ԳԵՐՄԱՆԻՍՏ [< германист], գ. (լեզվբ.): Գերմանական լեզուների մասնագետ:

ԳԵՐՄԱՆԻՍՏԻԿԱ [< германистика], գ. (լեզվբ. գրկն.): Գերմանական բանասիրություն:

ԳԵՐՄԱՆԻՈՒՄ [< германий < անվանվել է՝ ի պատիվ հայտնաբերողի հայրենիքի], գ. (քիմ.): Ge, տարրերի պարբերական համակարգի V պարբերության IV խմբի քիմիական տարր, որը հայտնաբերել է գերմանացի քիմիկոս Կ. Վինկլերը (1886 թ.): Օգտագործվում է ինֆրակարմիր ճառագայթների դետեկտորների արտադրության մեջ:

ԳԵՐՈՆՏՈԼՈԳԻԱ [< геронтология < հուն. gerōn (gerontos) ծեր + logos գիտություն], գ. (գիտ.): Ծերաբանություն՝ բժշկակենսաբանական գիտության բաժին, որը ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների և մարդու ծերացման գործընթացները:

ԳԵՐՈՒՆԴԻՎ [< герундив < լատ. gerundivum], գ. (լեզվբ.): Կրավորական ապառնի դերբայը լատիներենում:

ԳԵՐՈՒՆԴԻՈՒՄ [< герундий < լատ. gerundium], գ. (լեզվբ.): Բայի ոչ դիմավոր ձև լատիներենում և անգլերենում:

ԳԵՐՈՒՍԻԱ [< герусия < հուն. gerusia], գ. (պատմ.): Ավագ(ագույն)ների խորհուրդ Հին Հունաստանի քաղաք-պետություններում:

ԳԸՐԼՍԿԱՈՒՏ [< гёрлскаут < անգլ. girl աղջիկ + scout հետախույզ], գ. (հզվդ.): Սկաուտական կազմակերպության իգական սեռի անդամ:

ԳԸՐԼՖՐԵՆԴ [< гёрлфренд < անգլ. girlfriend ընկերուհի < girl աղջիկ + friend], գ. (խսկց.): Ընկերուհի, սիրուհի, ում հետ երիտասարդը մտերմական սիրային հարաբերություն ունի և ամուսնացած չէ նրա հետ:

ԳԻԲԲՈՆ [< гиббон < անգլ. gibbon], գ. (կենդբ.): Երկարաձեռք, նեղքիթ կապիկի տեսակ Հարավարևելյան Ասիայում և Մալայան կղզիներում. մարմնի կազմությամբ մոտ է մարդակերպների խմբին:

ԳԻԳԱԲԱՅԹ [< гигабайт < հուն. gigas հսկա + անգլ. byte], գ. (հմկրգչ.): Համակարգչի հիշողության ծավալի չափման միավոր:

ԳԻԳԱՆՏ [< гигант < հուն. gigas (gigantos) հսկա], գ. (խսկց.): 1. Հսկա՝ արտակարգ ուժով և խիստ հաղթանդամ մարդ, աժդահա: 2. աձ. Վիթխարի՝ արտակարգ մեծության, շատ մեծ: 3. աձ. գ. *փխբ.* Որևէ բնագավառի մեծագույն՝ առաջնակարգ ներկայացուցիչ:

ԳԻԳԱՆՏԻԶՄ [< гигантизм < հուն.], գ. Մարդու ոչ բնականոն բարձր հասակ, որը 190 սմ-ից բարձր լինելու դեպքում կարող է ախտաբանական բնույթ կրել:

ԳԻԴ [< гид < ֆր. guide], գ. (խսկց.):1. Ուղեվար՝ 1. Զբոսաշրջիկներին ուղղություն տվող, նրանց առաջնորդող անձ: 2. Ուղեցույց՝ ուղեցույց գիրք՝ տեղեկատու:

ԳԻԼԴԻԱ [< гильдия < գերմ. Gilde միություն], գ. (հնց.): 1. Վաճառականների միություն Արևմտյան Եվրոպայում միջին դարերում: 2. Վաճառականների կարգ հին Ռուսաստանում:

ԳԻԼԶ(Ա) [< гильза < գերմ. Hülse թաղանթ], գ. (հնց.): 1. Պարկուճ՝ փամփուշտի խողովակաձև մասը, որի մեջ լցվում է վառոդը և ծայրին ագուցվում գնդակը: 2. Գլան՝ երկրաչափական մարմին, որ ստացվում է ուղղանկյուն քառանկյունու լրիվ պտույտով՝ իր մի կողմի շուրջը: 3. (տեխ.): Այդպիսի ձև ունեցող մանրակ կամ հարմարանք: 4. (տպգր.): Փայտյա կամ մետաղյա այդպիսի մարմին, որով շարվածքին ներկ (մուր) են քսում՝ տպելու համար:

ԳԻԼԻՈՏԻՆ [< гильотина < ֆր. guillotine], գ. Կառափնատ՝ գլխատելու մեքենա, որ սկսեց գործադրվել Ֆրանսիայում 1792 թ.՝ բուրժուական հեղափոխության ժամանակ բժիշկ Ժ. Գիլյոտենի առաջարկությամբ:

ԳԻՄՆԱԶԻԱ [< гимназия < հուն. gymnasion Հին Հունաստանում գիմնազիան նախապես եղել է մարմնակրթարան, հետագայում փիլիսոփաների և գիտնականների հավաքատեղի], գ. (պատմ.): Հանրակրթական միջնակարգ ուսումնական հաստատություն:

ԳԻՄՆԱԶԻՍՏ [< гимназист < հուն.], գ. Գիմնազիայի աշակերտ:

ԳԻՄՆԱՍ(Զ)ԻՈՆ [< гимнасий < հուն. gymnasion], գ. (հնց.): Ուսումնադաստիարակչական հիմնարկ Հին Հունաստանում, ապա հելլենիստական Արևելքում: Գիմնասիոններից ավելի նշանավոր էին պլատոնյան ակադեմիան և Արիստոտելի հիմնած լիցեյը:

ԳԻՄՆԱՍՏ [< гимнаст < հուն. gymnastēs մարմնամարզության ուսուցիչ], գ. 1. Մարմնամարզիկ՝ մարմնամարզությամբ (սպորտային և գեղարվեստական) զբաղվող մարզիկ: 2. Կրկեսային մարմնամարզությամբ զբաղվող դերասան:

ԳԻՄՆԱՍՏԻԿԱ [< гимнастика < հուն. gymnastikē], գ. (սպորտ..): Մարմնամարզություն՝ ֆիզիկական վարժությունների ամբողջություն, որ նպաստում է մարմնի ընդհանուր զարգացմանն ու առողջության ամրապնդմանը:

ԳԻՄՆԵՏՆԵՐ [< гимнеты < հուն. gymnēteia < gymnos վահանով չփակված՝ չծածկված], գ. (պատմ.): Թեթևազեն զինվորներ Հին Հունաստանի բանակի հետևակում:

ԳԻՆԳԻՎԻՏ [< гингивит < ֆր. Gingivite < լատ. gingiva լինդ], գ. (բժշկ.): Լնդերի բորբոքում:

ԳԻՆԵԱ [< гинея < անգլ. guinea], գ. (պատմ.): 21 շիլլինգ արժեքով անգլիական հին ոսկեդրամ:

ԳԻՆԵԿՈԼՈԳ [< гинеколог < հուն.], գ. (բժշկ.): Կանացի հիվանդությունների բժիշկ:

ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ [< гинекология < հուն. gynē (gynaikos) կին + logos գիտություն)], գ. (բժշկ.): գ. Կնախտաբանություն՝ գիտություն, որ զբաղվում է կանացի օրգանների առանձնահատկությունների, կանացի սեռական օրգանների հիվանդությունների ուսումնասիրությամբ և բուժումով:

ԳԻՊՅՈՒՐ [< гипюр < ֆր. guipure < guiper գործել], գ. (խսկց.): Ժանյակի տեսակ (ցցուն ձևավոր պատկերով):

ԳԻՊՍ [< гипс < հուն. gypsos կավիճ, կիր], գ. (հնք.): 1. Գաջ: 2. Այրած և մանրացրած գաջ, որ օգտագործվում է իբրև շինարարական՝ քանդակագործական նյութ, նաև բժշկության մեջ 3. (բժշկ.): Այդ նյութից պատրաստված ամուր վիրակապ: 4. Գիպսաքանդակ:

ԳԻՐԼՅԱՆԴԱ [< гирлянда < իտլ. ghirlanda], գ. 1. (հնց.): Դրասանգ, ծաղկաշղթա: 2. Դրասանգաղրվագ, դրասանգազարդ:

ԳԻՐՈԴԻՆ [< гиродин < անգլ. gyrodyn < հուն. gyreyō պտտվում եմ + dynamis ուժ], գ. (տեխ.): Սարքավորում, որը ապահովում է թռիչքի ժամանակ տիեզերանավի ճիշտ կողմնորոշումը և կանխարգելում դրա անկանոն պտտվելը:

ԳԻՐՈՍԿՈՊ [< гироскоп < հուն. gyros շրջան + skopeō դիտում եմ], գ. (տեխ.): Արագ պտտվող պինդ մարմին, որի պտտման առանցքը տարածության մեջ կարող է փոխել իր դիրքը:

ԳԼԱԳՈԼԻՑԱ [< ռուս. глаголица], գ. (պատմ.): Ռուսերեն գրի տեսակ:

ԳԼԱԴԻԱՏՈՐ [< гладиатор < լատ. gladiator < gladius թուր, սուր], գ. (պատմ.): Կրկեսամարտիկ՝ գազանամարտիկ՝ Հին Հռոմում՝ գերիներ, ստրուկներ, բանտարկյալներ, որոնց հատուկ մարզում էին միմյանց կամ գազանների դեմ կռվելու համար:

ԳԼԱԴԻՈԼՈՒՍ [< гладиолус < լատ. gladiolus ոչ մեծ թուր], գ. (բսբ.): Թրաշուշան՝ հիրիկազգիների ընտանիքին պատկանող ծաղկաբույս:

ԳԼԱԶՈՒՐ [< глазурь < գերմ. Glasur], գ. 1. Ջնարակ, վերնիճ՝ ապակենման ձուլվածք, որով պատում՝ զօծում են խեցեգործական առարկաները: 2. (խոհր.): Շաքարաշերտ՝ շաքարահյութի շերտը, որը լցնում են մրգերի, խմորեղենի վրա:

ԳԼԱՄՈՒՐ [< гламур < անգլ. glamour հմայք, հրապույր], գ. (խսկց.): Արտաքին փայլ, գրավչություն, սանդոսափայլ (գերազանց հագուստով, զարդարանքով, կոսմետիկայով ևն):

ԳԼԱՆԴՆԵՐ [< гланды < ֆր. glande < լատ. glans (glandis) կաղին], գ. (բժշկ.): Քիմքի գեղձեր, նշագեղձեր:

ԳԼԱՍԵ [< гл(а)ясе < ֆր. glacé սառեցված], գ. (խոհր.): Կոֆե գլասե՝ սև սուրճ պաղպաղակով:

ԳԼԱՈՒԲԵՐՅԱՆ ԱՂ [< глауберова (< գերմանացի քիմիկոս և բժիշկ Գլաուբերի (Glauber) անունից) соль] - (հնք.): Միրաբիլիտ՝ միներալ սուլֆատների դասից, անգույն, սպիտակ, փայլը՝ ապակու: Օգտագործվում է հիմնականում քիմիական արդյունաբերության բնագավառում՝ սոդայի և կծու նատրիումի ստացման համար, ինչպես նաև բժշկության մեջ՝ որպես լուծողական:

ԳԼԱՈՒԿՈՄԱ [< глаукома < հուն. glaukōma < glaukos ծովագույն, բաց երկնագույն], գ. (բժշկ.): Աչքի ոսպնյակի կապտավուն մթագնում: Հայաստանում հայտնի է «սև ջուր» անունով: Աչքի ծանր հիվանդություն, որի ժամանակ բարձրանում է աչքի ճնշումը. բարձիթողի անելու դեպքում այս հիվանդության արդյունքը կուրությունն է:

ԳԼԱՈՒԿՈՆԻՏ [< глауконит < հուն. glaukos], գ. (հնք.): Միներալ, երկաթի ջրային այլումինասիլիկատ հիդրոփայլարների խմբից: Կիրառվում է ջրի կոշտության նվազեցման, կանաչ ներկ ստանալու համար, նաև որպես կալիումական պարարտանյութ:

ԳԼԵԴԻՉԻԱ [< гледичия < գերմանացի բուսաբան Գլեդիչի (Gleditsch 1714-1796) < անունից], գ. (բսբ.): Ընդավորների ընտանիքի տերևաթափ ծառերի ցեղ: Հայտնի է 12 տեսակ. տարածված է Ասիայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Արևադարձային Աֆրիկայում, Անդրկովկասում (Թալիշի անտառներ): Բնափայտն օգտագործվում է ատաղձագործության մեջ:

ԳԼԵՏՉԵՐ [< глетчер < գերմ. Gletscher < լատ. glacies սառույց], գ. Սառցադաշտի մաս: Ձևավորվում է ձնածածկույթից սառցադաշտերի սնուցման մարզերում:

ԳԼԻԿԵՄԻԱ [< гликемия < հուն. glykys քաղցր + haima արյուն], գ. (բժշկ.): Շաքարի պարունակություն արյան մեջ. հաճախ օգտագործվում է արյան մեջ շաքարի նորմայից բարձր պարունակությունը նշանակելու համար (հիպերգլիկեմիա):

ԳԼԻԿՈԳԵՆ [< гликоген < հուն. glykys + genos ծնող], գ. (կենսբ.): Կենդանաբանական օսլա. մարդու և կենդանիների հիմնական պահեստային շաքար: Հայտնաբերել է ֆրանսիացի կենսաբան Կլոդ Բեռնարը (1857 թ.):

ԳԼԻԿՈԶԻԴՆԵՐ [< гликозиды < հուն. glykys + eidos տեսակ], գ. (կենսբ.): Բուսական, հազվադեպ կենդանական ծագում ունեցող օրգանական միացություններ: Սրանք կենսաբանական ակտիվ միացություններ են, որոնցից ստրոֆանտինը, ցիմարինը, սինիգրինը են օգտագործվում են որպես դեղամիջոցներ:

ԳԼԻԿՈԼԻԶ [< гликолиз < հուն. glykys + lysis քայքայում, տարրալուծում], գ. (կենսբ.): Ածխաջրերի (հիմնականում գլյուկոզի) անաէրոբ ճեղքումը կենդանական հյուսվածքներում: Ուղեկցվում է ադենոզինեռֆոսֆորաթթվի սինթեզով և ավարտվում կաթնաթթվի առաջացմամբ: Անջատվող էներգիան օգտագործվում է օրգանիզմի կենսագործունեության համար:

ԳԼԻԿՈԼՆԵՐ [< гликоли < հուն. glykys], գ. (քիմ.): Երկատոմ սպիրտներ, երկու սպիրտային խումբ պարունակող ալիֆատիկ շարքի միացություններ: Օգտագործվում են որպես լուծիչներ:

ԳԼԻՈՄԱ [< глиома < հուն. glia սոսինձ + oma ուռուցք], գ. (բժշկ.): Ուռուցք, որը զարգանում է գլխուղեղում, հազվադեպ՝ ողնուղեղում և կազմված է ուղեղի միջանկյալ հյուսվածքի բջիջներից:

ԳԼԻՊՏԻԿԱ [< глиптика < ֆր. glyptique < հուն. glyphō փորագրում եմ], գ. (արվ.): Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի վրա փորագրելու, քանդակելու արվեստ:

ԳԼԻՊՏՈՏԵԿԱ [< глиптотека < ֆր. glyptothéque < հուն. glypto փորագրած +

thēkē պահեստարան], գ. Քանդակաքարերի (նաև քանդակների) հավաքածու:

ԳԼԻՍԱԴԱ [< глиссада < ֆր. glissade սահում], գ. (օդգ.): Ինքնաթիռի ևն թռիչքի հետագիծը վայրէջքի ժամանակ:

ԳԼԻՍԱՆԴՈ [< глиссандо < իտլ. glissando < ֆր. glisser սահել], գ. (երժշտ.): Սահանցիկ՝ երաժշտության կատարման ժամանակ հնչյունատարբերման հատուկ եղանակ, երբ հնչյունների մի շարքից որոշակիորեն ընկալվում է միայն առաջին և վերջին հնչյունի բարձրությունը:

ԳԼԻՍԵՐ [< глиссер < ֆր. glisseur < glisser սահել], գ. Սահանավ՝ արագընթաց թեթև նավ, շարժման ժամանակ գլիսերի հատակի հատուկ ձևի շնորհիվ առաջանում է հիդրոդինամիկ ուժ, որը, բարձրացնելով նավի ցռուկային մասը, այն հանում է ջրի երես՝ կրճատելով ջրի հետ հատակի շփման մակերևույթը, մեծացնելով արագությունը:

ԳԼԻՑԵՐԻԴՆԵՐ [< глицериды < հուն. glykeros + eidos], գ. (քիմ.): Գլիցերինի և օրգանական կամ անօրգանական թթուների էսթերներ: Սրա հիդրոլիզից արդյունաբերության մեջ ստանում են օճառ և գլիցերին:

ԳԼԻՑԵՐԻՆ [< глицерин < հուն. glykeros քաղցր], գ. (քիմ.): Ճարպերից պատրաստվող օշարականման քաղցր և թափանցիկ հեղուկ, որ օգտագործվում է բժշկության մեջ և տեխնիկայում:

ԳԼԻՑԻՆ [< глицин < հուն. glykys-քաղցր], գ. (քիմ.): Ամինաքացախաթթու, ալիֆատիկ շարքի պարզագույն ամինաթթու. օգտագործվում է բուֆերային լուծույթներ պատրաստելու, արծաթը և պղինձը քանակապես որոշելու համար և օրգանական սինթեզում:

ԳԼԻՑԻՆԻԱ [< глициния < հուն. glykys հաճելի, քաղցր], գ. (բսբ.): Գեղազարդային բույս՝ բաց մանուշակագույն հոտավետ ծաղիկներով:

ԳԼՅՈՏ [< глёт < գերմ. Glätte], գ. (քիմ.): PbO, կապարի օքսիդի տեխնիկական անվանումը: Օգտագործվում է ներկերի արտադրության մեջ:

ԳԼՅՈՒԿԱԳՈՆ [< глюкагон < հուն. glykys + gonos ծնունդ], գ. (կենսբ.): Հորմոն. մշակվում է ենթաստամոքսային գեղձում:

ԳԼՅՈՒԿՈԶ(Ա) [< глюкоза < հուն. glykys քաղցր], գ. (քիմ.): Խաղողաշաքար՝ պտուղների մեջ պարունակվող քաղցր նյութ՝ ածխաջրատ:

ԳԼՈԲԱԼ [< глобальный < ֆր. global], ած. Համընդհանուր՝ համընդհանուր բնույթ կրող:

ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ [< глобализация < ֆր.], գ. Համընդհանրացում, համաշխարհայնացում՝ երկրների տնտեսական, մշակութային, քաղաքական ևն համակարգերի միասնականացում, միօրինականացում:

ԳԼՈԲԱԼԻՍՏ [< глобалист < ֆր.], գ. Գլոբալիզացիայի կողմնակից:

ԳԼՈԲԻԳԵՐԻՆՆԵՐ [< глобигерины < լատ. globus (globi) գունդ + gerere տանել], գ. (կենդբ. հնց.): Միաբջիջ կենդանիների սեռ արմատոտանիների դասի ֆորամինիֆերիների խմբից:

ԳԼՈԲԻՆ [< глобин < լատ. globus], գ. Հեմոգլոբինի սպիտակուցային մաս:

ԳԼՈԲՈԻԴԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ [< глобоидная (< լատ. globus + հուն. eidos) передача] - (տեխ.): Որդնակային փոխանցման տարատեսակ, ուր որդնակի ծնիչն ունի գլոբոիդային (գոգավոր) ձև: Կիրառվում է տրանսպորտային և լեռնահանքային մեքենաներում, ինքնաթիռներում ևն:

ԳԼՈԲՈՒԼԻՆՆԵՐ [< глобулины < լատ. globulus գնդիկ], գ. (կենսբ.): Կենդանական և բուսական սպիտակուցների խումբ, ամենատարածվածը բնության մեջ:

ԳԼՈԲՈՒՍ [< глобус < լատ. globus], գ. Ուրվագծերի երկրաչափական նմանությամբ և մակերեսների հարաբերության պահպանմամբ երկրագնդի ամբողջ մակերևույթը պատկերող մոդել: Հայկական առաջին գլոբուսը պատրաստվել է 1850 թ. Վիեննայում:

ԳԼՈՍՍԱ [< глосса < հուն. glōssa լեզու, խոսք], գ. 1. (լեզվբ.): Անհասկանալի բառի կամ արտահայտության մեկնություններ լուսանցքում կամ բնագրում: 2. (իրավբ.): Օրենքի տողացի մեկնություն: 3. (գրկն.): Հին իսպանական բանաստեղծության տեսակ:

ԳԼՈՍՍԱՐԻՈՒՄ [< глоссарий < լատ. glossarium], գ. 1. (լեզվբ.): Բացատրական բառարան (հատկապես հին տեքստերի): 2. (իրավբ.): Օրենքների և ակտերի մեկնությունների ժողովածու:

ԳԼՈՍՍԵՄԱ [< глоссема < հուն.], գ. (լեզվբ.): Կառուցվածքային լեզվաբանության տերմին. նշանակում է լեզվական արտահայտության նվազագույն միավորը, որ ծառայում է որևէ նշանակություն հաղորդելու համար:

ԳԼՈՍՍԵՄԱՏԻԿԱ [< глоссематика < գերմ. Glossematik < հուն. glōssa լեզու + sēma նշան], գ. (լեզվբ.): Կառուցվածքային լեզվաբանության ուղղություն (Կոպենհագենյան դպրոց, Լ. Ելմսլև). լեզվական երևույթների գնահատման հիմքում դրվում են լեզվի տարրերի ունեցած փոխադարձ վերացական հարաբերությունները:

ԳԼՈՍՍՈԼԱԼԻԱ [< глоссолалия < հուն. glōssa լեզու + lalēo խոսում եմ], գ. 1. (կրոն.): Որոշ կրոնական աղանդներում՝ էքստազի վիճակում արտահայտած անիմաստ բացականչություններ: 2. (գրկն.): Բանահյուսության մեջ՝ մոգական կախարդիչ հնչյունակապակցություններ:

ԳԼՈՏՏՈԳՈՆԻԱ [< глоттогония < հուն. glōtta լեզու + gonos ծնունդ], գ. (հնց.): Լեզվաստեղծում՝ լեզվի ծագումը և զարգացումը:

ԳԼՈՏՏՈԼՈԳԻԱ [< глоттология < հուն. glotta լեզու + logōs գիտություն], գ. (լեզվբ. հնց.): Լեզվաբանություն տերմինի հնացած անվանումը:

ԳՅԱՎՈՒՐ [< гяур < թուրք. gâvur < արաբ.], ած. գ. (խսկց.): Մահմեդականների կողմից քրիստոնյաներին տրվող արհամարհական անվանում, անհավատ:

ԳՅՈՒՍ [< гюйс < հոլանդ. geus], գ. (ռազմ.): Ռուսաստանում նավի դրոշակի տարատեսակ, նավադրոշ (1-ին և 2-րդ կարգի ռազմանավերի, ծովամերձ ամրոցների):

ԳՅՈՒՐԶԱ [< гюрза < պարսկ. gurza], գ. (կենդբ.): Թունավոր իժերի տեսակ (Հարավային Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում):

ԳՆԵՅՍ [< гнейс < գերմ. Gneiß], գ. (հնք.): Թերթային կառուցվածքի մետամորֆային ապար: Կազմված է դաշտային ապաթներից, քիչ քանակությամբ՝ քվարցից, փայլարներից: Օգտագործվում է ճանապարհաշինանյութ և երեսապատման սալիկներ պատրաստելու համար:

ԳՆՈՄ [< гном < գերմ. Gnom], գ.: Գետնաթզուկ՝ հեքիաթային գետնաոգի, որն աչքի էր ընկնում իր գաճաճությամբ:

ԳՆՈՍԵՈԼՈԳԻԱ [< гносеология < հուն. gnōsis (gnōseos) իմացություն + logos գիտություն], գ. (գիտ.): Իմացաբանություն՝ իմացության տեսություն, փիլիսոփայական ուսմունք իմացության գործընթացի, աղբյուրների, ձևերի և հավաստիության մասին:

ԳՆՈՍՏԻՑԻԶՄ [< гностицизм < հուն. gnōsis գիտելիք], գ. (փիլ.): Քրիստոնեության վաղ շրջանի կրոնափիլիսոփայական ուղղություն, որ քրիստոնեական կրոնի դոգմաների, հունական իդեալիստական փիլիսոփայություն և արևելյան կրոնական ուսմունքների խառնուրդն էր:

ԳՆՈՒ [< гну < անգլ. gnoo < գերմ. Gnu < աֆրիկանս], գ. (կենդբ.): Հարավաֆրիկյան այծքաղ:

ԳՈԲԵԼԵՆ [< гобелен < ֆր. gobelin], գ. (արվ.): Գեղարվեստական նկարներով հյուսվածք:

ԳՈԷԼՌՈ [< ռուս. ГоЭлРо], գ. (պատմ.): Ռուսաստանի էլեկտրաֆիկացման պետական հանձնաժողով (հպվ. государственная электрафикация России բառերի):

ԳՈԷԼՌՈՅԻ ՊԼԱՆ - այդ հանձնաժողովի 1920 թ. կազմած էլեկտրաֆիկացման պլանը:

ԳՈԹԱԿԱՆ ԳԻՐ [< готический (< իտլ. gotico < գերմանական «գոթ» ցեղի անվանումից) шрифт] – (լեզվբ.): Գոթական մինուսկուլ, լատինական միջնադարյան գրի խիստ ձևափոխված տեսակ:

ԳՈԹԱԿԱՆ ՈՃ [< готический стиль] – (արվ.): Արևմտյան, Կենտրոնական, մասամբ՝ Արևելյան Եվրոպայի XII դ. կեսերից մինչև XV-XVI դդ. արվեստի (հատկապես քանդակագործության) իշխող ոճը, գոթիկա:

ԳՈԼ [< гол < անգլ. goal նպատակ], գ. (սպորտ.): 1. Դարպաս: 2. Ֆուտբոլի խաղի և մի շարք այլ խաղերի (ջրագնդակ, հոկեյ, ռեգբի ևն) ժամանակ գնդակը հակառակորդի դարպասի մեջ գցելը:

ԳՈԼԴԵՆ [< гольден < գերմ. gold ոսկե], գ. (բսբ.): Խնձորենու և դրա պտղի տեսակ (խոշոր, հյութալի, դեղնաոսկեգույն պտուղներով):

ԳՈԼԻԱՐԴ [< голиард < ֆր. goliard], գ. (պատմ.): Թափառական դերասան, երգիչ, երգիծական ներկայացումների մասնակից:

ԳՈԼԻԱՖ [< Голиаф < հուն. Goliath], գ. 1. Ըստ Աստվածաշնչի՝ փղշտացի հսկա, որը պարտվեց մենամարտում հովիվ Դավիթի կողմից, ով հետագայում դարձավ հրեաների թագավոր: 2. *փխբ.* Հսկա, աժդահա (մարդու մասին): 3. (կենդբ.): Թերթաբեղիկավորների ընտանիքի բզեզ. ապրում է Աֆրիկայի արևադարձային անտառներում:

ԳՈԼԿԻՊԵՐ [< голкипер < անգլ. goalkeeper < goal դարպաս + to keep պահել], գ. (սպորտ. խսկց.): Դարպասապահ (ֆուտբոլում, հոկեյում ևն):

ԳՈԼՖ [< гольф < անգլ. golf], գ. (սպորտ.): Գնդախաղի մի տեսակ, որը տարածված է Անգլիայում: Գնդակը պետք է գցել փոսիկների մեջ հատուկ մականի օգնությամբ առավելագույն քիչ հարվածներով:

ԳՈԼՖՍՏՐԻՄ [< Гольфстрим < անգլ. Gulf Stream ծոցային հոսանք], գ. Ատլանտյան օվկիանոսում ջրերի տաք հոսանք, որ սկսվում է Մեքսիկական ծոցից և գնում է հյուսիսարևելյան ուղղությամբ մինչև Շպիցբերգենի և Նոր Երկիր կղզիների ափերը:

ԳՈՂԳՈԹԱ [< Голгофа < հուն. Golgotha < արամերեն], գ. 1. (կրոն.): Երուսաղեմի մոտ բլուր, որտեղ իրականացվում էին մահապատիժներ, և այստեղ է խաչվել

Քրիստոսը (ըստ Աստվածաշնչի): 2. փխբ. Տանջանքների, չարչարանքների վայր:

ԳՈՄԻՆԴԱՆ [< гомин(ь)дан < չին. ազգային կուսակցություն], գ. (քղք.): Քաղաքական կուսակցություն Չինաստանում, որը ստեղծվել է 1912 թ. օգոստոսին՝ Տունմենխոյ միության (ղեկավար՝ Սուն Յաթսեն) և լիբերալ բուրժուազիայի մի քանի կազմակերպությունների միաձուլումից:

ԳՈՄՈԶ [< гомоз < ֆր. gomme խեժ], գ. (բսբ.): Խեժահոսություն՝ բույսերի հիվանդություն, վնասվում են գլխավորապես պտղատու ծառերը (կորիզավորներ, ցիտրուսներ, թթենի ևն):

ԳՈՆԱԴՈՏՐՈՊ ՀՈՐՄՈՆՆԵՐ [< гонадотропные (< հուն. gonē ընտանիք + trōpe շրջել, ուղղել) гормоны] - (կենսբ.): Հիպոֆիզի առջևի բլթից արտադրվող նյութեր, որոնք կարգավորում են սեռական գեղձերի ներզատական ֆունկցիան:

ԳՈՆԳ [< гонг < մալայերեն gong], գ. (սպորտ.): Բռնցքամարտի խաղափուլի սկիզբը և վերջը ազդարարող կոչնակ:

ԳՈՆԴՈԼ [< гондола < իտլ. gondola], գ. (խսկց.): 1. Մակույկ՝ վենետիկյան երկար հարթահատակ միաթի մակույկ: 2. (օդգ.): Զամբյուղ՝ օդապարիկից՝ դիրիժաբլից՝ աերոստատից կախված զամբյուղ-զետեղարան՝ անձնակազմի կամ մեխանիզմի համար: 3. (երկթղ.): Ապրանքատար բաց վագոն, որ բեռնաթափվում է տակից:

ԳՈՆԴՈԼԱՎԱՐ, գ. Գոնդոլը վարող, գոնդոլի թիավար:

ԳՈՆԻԴԻՈՒՄՆԵՐ [< гонидии < հուն. gonē ընտանիք + փոքրացնող վերջածանց], գ. (բսբ.): 1. Կանաչ կամ կապտականաչ ջրիմուռներ, որոնք սնկերի հետ միասին առաջացնում են քարաքոսներ: 2. Թելաձև բակտերիաների շարժական կամ անշարժ բջիջներ: 3. Փոքր, անշարժ, գնդաձև բջիջներ, որոնք մասնակցում են կապտականաչ ջրիմուռների բազմացմանը: 4. Անսեռ ճանապարհով առաջացող սպորների հնացած անվանումը:

ԳՈՆԻՈՄԵՏՐ [< гониометр < հուն. gonia անկյուն + metron], գ. (տեխ.): Սարք՝ բյուրեղների նիստերի միջև եղած անկյունները չափելու համար:

ԳՈՆԻՏ [< гонит < հուն. gony ծունկ], գ. (բժշկ.): Ծնկոսկրի բորբոքում:

ԳՈՆՈԿՈԿ [< гонококк < հուն. gonos սերմ + kokkos հատիկ], գ. (բժշկ.): Դիպլոկոկի տարատեսակ՝ գոնորեա հիվանդության հարուցիչ:

ԳՈՆՈՐԵԱ [< гонорея < հուն. gonorrhoia < gonos սերմ + rheō հոսում եմ], գ. (բժշկ.): Վեներական վարակիչ հիվանդություն՝ գոնոկոկ հարուցիչով:

ԳՈՊԱԿ [< гопак < ուկր. гопак < գոպ ձայնարկությունից], գ. (արվ.): Ուկրաինական ազգային պար և դրա երաժշտությունը:

ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ [< гордиев узел] - 1. (դից.): Ըստ հին հունական ավանդության՝ փռյուգիական տոհմապետ Գորդիոսը Զևսի տաճարին է նվիրում իր կառքը, որի լուծը քեղիին էր կապված այնպիսի հնարամտությամբ, որ հնարավոր չէր հանգույցի ծայրերը գտնել ու արձակել: Ում որ հաջողվեր, նա պետք է տիրեր Ասիային: Ալեքսանդր Մակեդոնացին պարսկական արշավանքից առաջ Գորդիոսի հանգույցը լուծեց թրի մի հարվածով: 2. *փխբ.* Անլուծելի, կնճռոտ խնդիր:

ԳՈՐԻԼԼԱ [< горилла < անգլ. gorilla < աֆրիկանս], գ. (կենդբ.): Ամենամեծ մարդանման կապիկը. ապրում է Աֆրիկայում և ունի մինչև 2 մետր հասակ:

ԳՈՖՐԵ [< гофре < ֆր. gaufré], գ. (խսկց.): 1. Զուգահեռ ձևավոր ծալքեր որևէ նյութի վրա: 2. Ծալքազարդով իր:

ԳՎԱՐԴԻԱ [< гвардия < ֆր. garde պահակ], գ. 1. (ռազմ.): Ընտիր զորամաս՝ զորք: 2. (քղք.): Որևէ բնագավառի փորձված՝ հմուտ գործիչներ, իրենց գործին նվիրված՝ քաջարի մարտիկներ: 3. (հնց.): Միապետների թիկնապահ զորք:

ԳՐԱԲԵՆ [< грабен < գերմ. Graben փոս], գ. (երկրբ.): Շրջապատի նկատմամբ երկրակեղևի իջած տեղամաս՝ սահմանափակված վարնետվածքներով:

ԳՐԱԴԱՑԻԱ [< градация < լատ. gradatio աստիճանական բարձրացում, ուժեղացում], գ. (հնց.): Աստիճանավորում՝ առանց կտրուկ փոփոխությունների, հետզհետե կատարվող՝ տեղի ունեցող. ստորին ձևից անցումը վերինին և հակառակը:

ԳՐԱԴՈՆԱՉԱԼՆԻԿ [< ռուս. градоначальник], գ. (հնց.): Քաղաքապետ:

ԳՐԱԴՈՒՍ [< градус < լատ. gradus աստիճան], գ. (տեխ. հնց.): 1. Աստիճան՝ անկյուն կամ աղեղ չափելու միավոր: 2. Ջերմաստիճան՝ ջերմությունը չափելու միավոր: 3. Աստիճան՝ հեղուկի, սպիրտի խտությունը չափելու միավոր: 4. *փխբ.* Աստիճան, չափ, աստիճանագիծ:

ԳՐԱՄ [< грамм < ֆր. gramme < հուն. gramma կշռի փոքր չափ], գ. Ծանրության միավոր՝ մի խորանարդ ջրի կշիռը 4° ջերմության ժամանակ: Կիլոգրամի 0.001 մասը:

ԳՐԱՄԱՏԻԿԱ [< грамматика < հուն. grammatikē], գ. (լեզվբ. հնց.): Քերականություն՝ լեզվի մեջ պատմականորեն կազմավորված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող՝ բառերի փոփոխությունների՝ նախադասությունների մեջ նրանց կապակցությունների և խոսքի կառուցման համար գործադրվող կանոնների ամբողջությունը:

ԳՐԱՄ-ԱՏՈՄ, գ. (քիմ.ֆիզ.): Քիմիական տարրի գրամների այն քանակը, որ հավասար է նրա ատոմական կշռին:

ԳՐԱՄ-ՀԱՄԱՐԺԵՔ, գ. (քիմ.ֆիզ.): Քիմիական տարրի կամ միացության քանակությունը գրամներով, որը թվապես հավասար է նրա քիմիական համարժեքին:

ԳՐԱՄ-ՄՈԼԵԿՈՒԼ, գ. (քիմ.ֆիզ.): Նյութի քանակությունը գրամներով, որը թվապես հավասար է նրա մոլեկուլային զանգվածին:

ԳՐԱՄՈՖՈՆ [< граммофон < հուն. gramma գրանցում + phōnē ձայն, հնչյուն], գ. (տեխ.): Ձայնասկավառակիչ՝ ձայնի մեխանիկական վերարտադրման սարք:

ԳՐԱՆԴ [< гранд < իսպ. grande], գ. (պատմ.):1. Արքունական բարձր ազնվականի ժառանգական տիտղոս Իսպանիայում (մինչև 1931 թ.), ինչպես և այդ տիտղոսը կրող անձը: 2. Որոշ ֆիրմաների անուններում հանդիպող բաղադրիչ, օր.՝ Գրանդ Տոբակո, Գրանդ Քենդի:

ԳՐԱՆԻՏ [< гранит < իտլ. granito < լատ. granum հատիկ], 1. գ. (հնք.): Բյուրեղային ապար, որ բաղկացած է դաշտային սպաթից, քվարցից և փայլարից: 2. ած. *փխբ.* Շատ ամուր, կարծր:

ԳՐԱՆԻՏԱԿԵՐՏ, ած. Գրանիտից կերտված:

ԳՐԱՆ ՊԱ [< гран па < ֆր. grand pas, բառացի՝ մեծ քայլ], գ. (արվ.): Պարային շարժումների խումբ՝ ընդհանուր իմաստով միավորված:

ԳՐԱՆ ՊՐԻ [< гран-при < իսպ. grande prix], գ. Մրցույթներում բարձրագույն պարգև:

ԳՐԱՆՏ [< грант < անգլ. grant], գ.1. Դրամաշնորհ: 2. (խսկց.): Ուսանողական թոշակ, կրթաթոշակ: 3. Աշխատանք (գիտական ևն) կատարելու համար սահմանված, տրվող գումար:

ԳՐԱՆՈՒԼՅԱՑԻԱ [< грануляция < հուն. granulum հատիկ], գ. Հատիկավորում՝ 1. (արտ.): Նյութը փոքր կտորների՝ հատիկների բաժանելը: Կիրառվում է մետալուրգիայում, էներգետիկայում, քիմիական արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ: 2. (բժշկ.): Հատիկավոր հյուսվածք՝ հատիկավոր մակերևույթով, հյութալի, ալ կարմիր, երիտասարդ շարակցական հյուսվածք, որը զարգանում է վերքերի և բորբոքային օջախների ապաքինման ժամանակ:

ԳՐԱՎԻՄԵՏՐ [< гравиметр < լատ. gravis ծանր + հուն. metreō չափում եմ], գ.

(տեխ.): Գործիք ծանրության ուժի արագացման հարաբերական արժեքը չափելու համար:

ԳՐԱՎԻՄԵՏՐԻԱ [< гравиметрия < լատ. gravis + հուն. metron չափ], գ. (գիտ.): Գիտություն Երկրի գրավիտացիոն դաշտը բնութագրող մեծությունների չափումների մասին:

ԳՐԱՎԻՏԱՑԻԱ [< гравитация < լատ. gravitas ծանրություն], գ. (ֆիզ.): Ձգողականություն՝ մարմինների միմյանց ձգելու ֆիզիկական հատկությունը:

ԳՐԱՎԻՏՈՆ [< гравитон < լատ.], գ. Ձգողության (գրավիտացիոն) դաշտի քվանտ:

ԳՐԱՎՅՈՒՐ(Ա) [< гравюра < ֆր. gravure], գ. (կերպր.): 1. Փորագրանկար՝ փորագրված կլիշեից արտատպված նկար: 2. Փորագրված նկար, փորագրությամբ պատկերված նկար:

ԳՐԱՑԻԱ [< грация < լատ. gratia գրավչություն], գ. 1. Նրբագեղություն՝ նազանիություն, նրբաշարժություն. նազանքով շարժումներ անելը, վայելուչ արտաքին ունենալը: 2. (դից.): Հին հռոմեացիների մոտ գեղեցկության երեք աստվածուհիներից յուրաքանչյուրը, գեղուհի: 3. (խսկց.): Կանացի սեղմիրանի տեսակ:

ԳՐԱՖ [< граф < գերմ. Graf], գ. (պատմ.): Կոմս՝ ազնվական տիտղոս եվրոպական երկրներում՝ Ֆրանսիայում, Անգլիայում, նաև Ռուսաստանում:

...ԳՐԱՖԻԱ [< ...графия < հուն. ...graphō գրում եմ, գծում եմ, նկարում եմ] Բարդ բառերի վերջնամաս, որ նշանակում է գիտության անվանում, նկարագրություն, գրառում, գծագիր, գծանկար նն:

ԳՐԱՖԻԿ [< график < հուն. graphikos], գ. (խսկց.): 1. Ժամանակացույց՝ աշխատանքային պլան, որտեղ նշված են աշխատանքի նորմաները և նրանց կատարման ժամկետները: 2. Գծանկար՝ գծերի միջոցով որևէ գործընթացի զարգացման քանակական փոփոխություններն արտահայտող ցուցատախտակ:

ԳՐԱՖԻԿԱ [< графика < հուն. graphikē], գ. 1. Գծանկարչություն՝ առարկաները գծերի միջոցով առանց այլ ներկերի արտահայտող արվեստ, գծերով արտահայտված նկարչություն: 2. Գծանկար անելը:

ԳՐԱՖԻՆ [< ռուս. графин], գ. (խսկց.): Ջրաման՝ ջրի՝ խմիչքի նն ապակյա կամ հախճապակյա անոթ:

ԳՐԱՖԻՏ [< графит < հուն. graphō գրում եմ], գ. 1. (հնք.): Գրաքար՝ մուգ գորշագույն կամ սև հանքանյութ, որը բնածուխի տարբերակն է: 2. Մատիտի միջի գրող ձողիկը, որ պատրաստում են այդ հանքանյութից:

ԳՐԱՖՈԼՈԳԻԱ [< графология < գերմ. Graphologie < հուն. graphō գրում եմ + logōs գիտություն], գ. (գիտ. իրավք.): Ձեռագրաբանություն:

ԳՐԱՖՖԻՏՈ [< граффито < իտալ. graffito], գ. (շին.): Շենքերի ինտերիերում պատը գեղազարդելու եղանակ, երբ ծեփի վերին նուրբ շերտը, ըստ նախապես արված գծանկարի, ակոսում են մինչև ներքևի՝ այլ գույնի շերտին հասնելը:

ԳՐԵՅԴԵՐ [< грейдер < անգլ. grader հարթող], գ. (տեխ.): Հողը փորող ու մի կողմ թափող մեքենա, որ օգտագործվում է ճանապարհները հարթելու, ջրանցքները փորելու համար:

ԳՐԵՅԶԵՆ [< грейзен < գերմ. Greisen], գ. (հնք.): Մետասոմատիկ ապար՝ կազմված գլխավորապես քվարցից և բաց գույնի փայլարներից՝ լեպիդոլիտից ու մասուկովիտից:

ԳՐԵՅՊ(Փ)ՖՐՈՒՏ [< грейпфрут < անգլ. grape-fruit], գ. (բսբ.): Մերձարևադարձային ցիտրուսային բույս, որի պտուղները հիշեցնում են նարինջ, սակայն մի քիչ դառնահամ են և նրա պտուղը, թուրինջ:

ԳՐԵՅՖԵՐ [< грейфер < գերմ. Greifer < greifen բռնել], գ. (տեխ.): Ամբարձիչների, բեռնիչների և միառելս սայլակների բեռնաբռնիչ հարմարանք, որն ունի բեռը բռնող դարձկեն ատամնավոր ծնոտներ:

ԳՐԵՆԱ [< грена < ֆր. graine սերմ, հատիկ], գ. (կենդբ.): Շերամի թիթեռի ձու, որից ստացվում է թրթուր, ապա (հարսնեկավորվելուց հետո) բոժոժ՝ մետաքսահումք:

ԳՐԵՆԱԺ [< гренаж < ֆր. grainage], գ. Հատուկ ձեռնարկություններում (տոհմային շերամապահական կայան, գրենայի գործարան) թթենու և կաղնու շերամորդի թիթեռներից առողջ ու կենսունակ գրենայի ստացում:

ԳՐԵՆԼԱՆԴԻԱ [< Гренландия < անգլ. Greenland կանաչ երկիր], գ. Աշխարհի ամենամեծ կղզին Հյուսիսային սառուցյալ և Ատլանտյան օվկիանոսներում, Հյուսիսային Ամերիկայից հյուսիս-արևելք:

ԳՐԻԶԼԻ [< гризли < անգլ. grizzly], գ. (կենդբ.): Հսկա գորշ արջ (Ալյասկայում, Կանադայի արևմուտքում):

ԳՐԻԼ [< гриль < ֆր. griller տապակել], գ. 1. (տեխ.): Տապակելու սարք՝ գազով կամ հոսանքով աշխատող, որը ծառայում է՝ թռչունի կամ այլ տեսակի միս տապակելու համար՝ պտտվող ձողերի վրա հարմարեցնելով: 2. (խսկց.): Այդ սարքում տապակած միս (թռչուն ևն):

ԳՐԻԼՅԱԺ [< грильяж < ֆր. grillage], գ. 1. Շաքարահյութով բոված ընկույզ (կաղին, պնդուկ): 2. Այդ միջուկով պատրաստված շոկոլադ:

ԳՐԻՄ [< грим < ֆր. grimer դեմքը շպարել], գ. (թատր.): 1. Հատուկ միջոցներով (ներկերով, հատուկ մասեր կպցնելով ևն) դեմքի շպարում որևէ գործող անձ ներկայացնելու համար, դիմահարդարում: 2. Դերասանի շպարվելու համար օգտագործվող հատուկ յուղային ներկեր, ինչպես նաև կպցվող մասերը (օր.՝ քիթ, մորուք):

ԳՐԻՄՅՈՐ [< гримёр < ֆր. grimeur], գ. (թատր.): Դիմահարդար՝ թատրոնի աշխատող՝ գրիմ անելու մասնագետ, որն օգնում է դերասաններին ներկայացումներին պատրաստվելու համար:

ԳՐԻՆ-ՔԱՐՏ [< грин-карта < անգլ. green-card], գ. Արտասահմանյան գրանցման քարտ, որը ԱՄՆ-ը տալիս է մշտական բնակության համար:

ԳՐԻՊ [< грипп < ֆր. grippe ընդգրկել, փաթաթվել], գ. (խսկց.): Հարբուխ՝ սուր վարակիչ հիվանդություն, որը բնորոշվում է շնչառական ուղիների բորբոքումով և ջերմային վիճակով:

ԳՐԻՖ I [< гриф < ֆր. griffe], գ. 1. Ստորագրությամբ կամ որևէ մակագրությամբ կնիք: 2. Այդ կնիքի դրոշմվածքը, նկարահանությունը:

ԳՐԻՖ II [< гриф < հուն. gryps], գ. 1. (դից.): Գրիֆոն՝ առասպելական ճիվաղ՝ առյուծի իրանով, արծվի թևերով և առյուծի կամ արծվի գլխով: 2. (կենդբ.): Հսկա թևերով և ուժեղ կտուցով մեծ գիշատիչ թռչուն:

ԳՐՈԳ [< грог < անգլ. grog], գ. (խոհր.): Շաքարաջրով և կոնյակով կամ ռոմով պատրաստած խմիչք:

ԳՐՈՇ [< ռուս. грош], գ. 1. (պատմ.): Պղնձե մետաղադրամ, որը հատվել է Ռուսաստանում XVII դարում: 2. *փխբ.* Չնչին քանակություն:

ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐ, ԳՐՈՍՄԵՅՍՏԵՐ [< гроссмейстер < գերմ. Großmeister մեծ վարպետ], գ. (սպորտ.): Շախմատի և շաշկու բնագավառի սպորտային ամենաբարձր կոչումը:

ԳՐՈՏԵՍԿ [< гротеск < ֆր. grotesque ծիծաղաշարժ < իտլ. grottesca արտառոց < grotta քարանձավ], գ. 1. (արվ.): Գեղարվեստական կերպավորման եղանակ,

որը հիմնվում է ֆանտաստիկ չափազանցությունների, սուր երգիծական հակադրությունների վրա: 2. Այդ ոճով կերտված գեղարվեստական ստեղծագործություն: 3. (տպգր.): Տառատեսակ, որի տառերի գծերը հավասար են և ուղիղ:

ԳՐՈՒՆՏ [< грунт < գերմ. Grund հիմք, հող], գ. 1. (երկրբ.): Բնահող, գետին՝ հողմնահարման գոտում տեղադրված ինժեներաշինարարական օբյեկտ. ապարի պայմանական-կիրառական անվանումը: 2. (նկարչ.) Նախաներկ, հիմնաներկ:

ԳՐՈՒՆՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (երկրբ.): Ինժեներական երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է գրունտները շինարարության տեսանկյունից:

ԳՈՒԱՅԱՎԱ [< гуайява < իսպ. guayaba], գ. (բսբ.): Արևադարձային մշտադալար ծառ մրտազգիների ընտանիքից՝ իր հյութալի և հոտավետ պտուղներով:

ԳՈՒԱՆՈ [< гуано < իսպ. guano < կեչուա լեզվից], գ. (հզվդ.): 1. Թռչնաղբ. օգտագործվում է որպես ֆոսֆորային և ազոտային պարարտանյութ: 2. Ճապոնիայում, Նորվեգիայում պատրաստվող պարարտանյութ՝ ձկնարդյունաբերության թափոններից:

ԳՈՒԱՇ [< гуашь < ֆր. gouache < իտլ. guazzo], գ. Ջրաներկի մի տեսակը:

ԳՈՒԲԵՐՆԱՏՈՐ [< губернатор < լատ. gubernator], գ. Նահանգապետ՝ երկրի որևէ նահանգի կառավարիչ:

ԳՈՒԴՐՈՆ [< гудрон < ֆր. goudron], գ. Ձյութանման սև նյութ, որ ստացվում է նավթի թորման մնացուկից, հանքաձյութ:

ԳՈՒԼԴԵՆ [< гульден < հոլանդ. gulden < գերմ. Gulden < Gold ոսկի], գ. (ֆին.): 1. Հոլանդիայի դրամը. անվանվում է նաև ֆլորին: 2. Ինդոնեզիայի դրամը մինչև 1950 թ.: 3. Գերմանիայի, Ավստրոհունգարիայի նն դրամը մինչև 1892 թ. (XIV-XVI դդ. ոսկեդրամ,XVII-XIX դդ. արծաթադրամ):

ԳՈՒԼՅԱՇ [< гуляш < հունգ.], գ. (խոհր.): Մսի կտորներով և կարտոֆիլով, զանազան բանջարեղենով, հատկապես կարմիր պղպեղով պատրաստված կերակրատեսակ:

ԳՈՒՆԴԱՏԱԲԼ [< гундестабль < ֆր. connétable], գ. (պատմ.): Ջորքերի ընդհանուր հրամանատարը և նրա տիտղոսը Կիլիկյան Հայաստանում, սպարապետ:

ԳՈՒՊԻ [< гуппи < գերմ. Guppy < հինդի], գ. (կենդբ.): Ակվարիումային ձկնատեսակ (բազմագույն, կենդանածին):

ԳՈՒՎԵՐՆՅՈՐ [< гувернёр < ֆր. gouverneur], գ. (պատմ.): Անձ, որը ուրիշ ընտանիքում դաստիարակում է երեխաներին,դաստիարակ:

ԳՈՒՏԱՊԵՐՉ [< гуттаперча < անգլ. guttapercha < մալայերեն, նաև Սումատրա կղզու անվանումներից մեկը], գ. Բնական ծագմամբ կաշենման նյութ. կաուչուկի տրանսիզոմերը:

ԳՈՒՏԱՑԻԱ [< гуттация < լատ. gutta կաթիլ], գ. (կենսբ.): Ջրի կաթիլների արտազատումը բույսերի տերևներից: Կատարվում է ջրային հերձանցքներով, արմատային ճնշման տակ: Ջրի հետ արտազատվում են հանքային որոշ նյութեր, և բույսն ազատվում է աղերի ավելցուկից, հիմնականում՝ կալցիումից:

ԳՈՒՐՄԱՆ [< гурман < ֆր. gourmand], ած. գ. (խսկց.): Համեղ կերակուրներ սիրող և գիտակ (անձ), համադամասեր:

ԳՈՒՐՈՒ [< гуру < սանսկրիտ guru], գ. (կրոն.): Ուսուցիչ, հոգևոր դաստիարակ, խրատատու:

Դ

ԴԱԳԵՐՈՏԻՊԻԱ [< дагерротипия < ֆր. daguerréotype], գ. Լուսանկարչության առաջին տեխնիկապես մշակված եղանակ: Այժմ ունի զուտ պատմական հետաքրքրություն: Այս եղանակը հայտնաբերել է ֆրանսիացի նկարիչ Լ. Ժ. Դագերը (1787-1959թթ.) Ն. Նիեպսի փորձերի հիման վրա (1839 թ.):

ԴԱԴԱԻԶՄ [< дадизм < ֆր. dadaïsme < dada ձիուկ, փայտե ձի, *փխբ.*՝ մանկական անկապ թոթովանք], գ. (պատմ.): Մոդեռնիստական գրական-գեղարվեստական հոսանք Ֆրանսիայում և Գերմանիայում. գոյություն է ունեցել 1916-1924թթ.: Ծրագրային դրույթներից էին իռացիոնալիզմն ու ծայրաստիճան նիհիլիզմը, ցուցադրական հակաէսթետիզմը: 1920-ական թթ. Ֆրանսիայում դադաիզմը միաձուլվեց սյուրռեալիզմին, Գերմանիայում՝ էքսպրեսիոնիզմին:

ԴԱԼԱՅ ԼԱՄԱ [< далай-лама < մոնղ. dalay ծով (իմաստության) + lama բարձրյալ], գ. (կրոն.): Հոգևոր բարձրագույն տիտղոս Տիբեթում:

ԴԱԼԹՈՆԻԴՆԵՐ [< дальтониды < անգլիացի քիմիկոս և ֆիզիկոս Ջ. Դալթոնի անունից], գ. (քիմ.): Հաստատուն բաղադրությամբ քիմիական միացություններ: Դալթոնիդներ են քիմիական սովորական միացությունների մեծ մասը:

ԴԱԼԹՈՆԻԶՄ [< дальтонизм < անգլիացի քիմիկոս և ֆիզիկոս Ջ. Դալթոնի անունից], (բժշկ.): Գունակուրություն՝ տեսողության թերություն, որ արտահայտվում է՝ մի քանի (կամ բոլոր) գույները իրարից չզանազանելով:

ԴԱԼԹՈՆ ՊԼԱՆ [< дальтон-план < անգլ. Dalton-plan < ԱՄՆ-ի Դալթոն քաղաքի անվանումից] - Դպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման համակարգ, որի հիմքում դրված է անհատական ուսուցման սկզբունքը:

ԴԱ ԿԱՊՈ [< да-капо < իտլ. da capo], գ. (երժշտ.): Նոտագրության մեջ՝ երաժշտական երկը կրկնելու նշան:

ԴԱԿՏԻԼ [< дактиль < հուն. daktylos մատ], գ. (տոչփ.): Բանաստեղծական չափ, եռավանկ ոտք վանկաշեշտային տաղաչափության մեջ, որի մեջ շեշտն ընկնում է երեք վանկերից առաջինի վրա, ստեղն:

ԴԱԿՏԻԼԻՏ [< дактилит < հուն.], գ. (բժշկ.): Մատի բորբոքում, որի պատճառը առանձնահատուկ ինֆեկցիան է (օր.՝ սիֆիլիսի ժամանակ):

ԴԱԿՏԻԼՈ... [< дактило... < հուն. daktylos մատ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս դրանց կապը մատ բառի արտահայտած իմաստի հետ

ԴԱԿՏԻԼՈԳՐԱՖԻԱ [< дактилография < հուն. daktylos մատ + graphō գրում եմ], գ. (հնց.): Մատնագրություն՝ համր կամ խուլ ու համր խոսակցի հետ հաղորդակցվելու եղանակ:

ԴԱԿՏԻԼՈԼՈԳԻԱ [< дактилология < հուն. daktylos մատ + logos ուսմունք], գ. (հնց.): Մատնախոսություն՝ մատներով խոսելու ձև, ձեռքի այբուբեն՝ խուլ ու համրերի համար:

ԴԱԿՏԻԼՈՍԿՈՊԻԱ [< дактилоскопия < հուն. daktylos + skopeō տեսնում եմ, ուսումնասիրում եմ], գ. (հնց.): Մատնատպություն՝ մատների դրոշմը հանելը. մեծ կիրառություն ունի կրիմինալիստիկայի մեջ:

ԴԱԿՐԻՈԱԴԵՆԻՏ [< дакриоаденит < հուն. dakryon արցունք + adēn գեղձ], գ. (բժշկ.): Արցունքագեղձի բորբոքում:

ԴԱԿՐԻՈՑԻՍՏԻՏ [< дакриоцистит < հուն. dakryon + kystis պարկ], գ. (բժշկ.): Արցունքապարկի բորբոքում:

ԴԱՄԱ [< ռուս. дама], գ. (խսկց.): 1. Տիկին, կին: 2. Պարընկերուհի: 3. Աղջիկ (թղթախաղում): 4. Հորիզոնական և ուղղահայաց գծերով 64 վանդակի բաժանված տախտակ, որի վրա խաղում են այդ խաղը՝ 16-ական տարբեր գույնի և ձևի քարերով խաղացվող: 5. Այն քարը, որ հասնում է վերջին հորիզոնականին (1-ին կամ 8-րդ):

ԴԱՄԲ(Ա) [< дамба < հոլանդ. dam], գ. (հնց.): Ամբարտակ, պատնեշ, թումբ՝ հողից, քարից, բետոնե արհեստական կառույց, որը պաշտպանում է ափը ջրհեղեղից կամ ծառայում է պահելու ջուրը ջրավազանում:

ԴԱՄՈԿԼՅԱՆ ՍՈՒՐ [< дамоклов меч] - (դից.): 1. Ըստ հին հունական ավանդության՝ սրածայր սուր, որը ձիու մազից կախել էին Դամոկլեսի գլխավերևում Դիոնիսոս բռնակալի հրամանով: Դիոնիսոսը նրան նստեցրել էր իր տեղը ճոխ ընթրիքի ժամանակ: Երբ Դամոկլեսը սուրը տեսավ, լիքը բաժակը ձեռքից վայր ընկավ: 2. *փխբ.* Վտանգ, որ ամեն վայրկյան սպառնում է մարդուն:

ԴԱՅԿԱ [< дайка < անգլ. dike, dyke քարե պատ], գ. (երկրբ.): Զուգահեռ մակերեսներով սահմանափակված ինտրուզիվ մարմին, որը տեղադրված է ուղղահայաց կամ մեծ թեքությամբ: Հանդիպում է երկրակեղևի ճեղքվածքներում ներդրված մագմատիկ գոյացումների ձևով:

ԴԱՄՓԻՆԳ [< дампинг < անգլ. dumping նետում], գ. (տեխ.): Արտադրական թափոնների թաղման տեխնոլոգիա:

ԴԱՅՎԵՐ [< дайвер < անգլ. diver սուզորդ], գ. (սպորտ.): Մարզիկ, որը զբաղվում է դայվինգով, սուզալողորդ:

ԴԱՅՎԻՆԳ [< дайвинг < անգլ. diving սուզում, սուզվելը], գ. (սպորտ.): Ջրային մարզաձև՝ ստորջրյա լող ակվալանգով,սուզալող:

ԴԱՆ [< дан < ճապ. dan, բառացի՝ աստիճան], գ. (սպորտ.): Արևելյան մի քանի մարզաձևերի սպորտային կարգ՝ աստիճան:

ԴԱՆԱՅԱՆ ՆՎԵՐ [< данайцев дар] - (դից.): 1. Թևավոր արտահայտություն. ծագել է Տրոյայի գրավման ու տրոյական ձիու մասին առասպելից: Երբ տրոյացիները ուզում էին քաղաք բերել հույների (դանայացիների) լքած փայտե ձին (դրա մեջ զինվորներ էին թաքնված, որոնք բացեցին դարպասները), քուրմ Լաոկոոնը բացականչում է. «Վախենում եմ դանայացիներից (հույներից), թեկուզ և ընծա բերեն»,այսինքն՝ թշնամու ընծան վտանգավոր է: 2. *փխբ.* Ընծա, որը վտանգավոր է, կործանարար ստացողի համար:

ԴԱՆԱՅԻԴՆԵՐ [< данаиды < հուն. Danaides], գ. (դից.): Ըստ հին հունական դիցաբանության՝ եգիպտական թագավոր Բելի որդու՝ Դանայոսի 50 աղջիկները: Նրանք ամուսնացան և ամուսնության առաջին գիշերը իրենց հոր հրամանով սպանեցին փեսաներին, բացի Հիպեմնեստրայից: Նրանք դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի՝ դժոխքում ջրով պետք է լցնեին մի անտակ տակառ: 2. *Դանայան տակառ - փխբ.* Անարդյունք, անվերջանալի աշխատանք:

ԴԱՆՍԻՆԳ ՀՈԼ [< дансинг-холл < անգլ. dancing - hall < to dance պարել + hall դահլիճ], գ. Պարի դահլիճ (սովորաբար արտասահմանյան երկրներում):

ԴԱՆՏԻՍՏ [< дантист < ֆր. dentiste < լատ. dens (dentis) ատամ], գ. (հնց.): Ատամնաբույժ՝ ատամի բժիշկ, որ զբաղվում է ատամների բուժմամբ և պրոթեզավորմամբ:

ԴԱՏԱ [< дата < ֆր. date < լատ. data տվյալներ], գ. (խսկց.): 1. Թվական: 2. Տարեթիվ, ամսաթիվ:

ԴԱՏԻՎ [< датив < լատ. (casus) dativus], ած. գ. (լեզվբ.): Տրական հոլով:

ԴԱՐԻ [< дари < պարսկ. dara թագավոր, միապետ], գ. (լեզվբ.): Աֆղանստանի երկու հիմնական լեզուներից մեկը (մյուսը՝ փուշտու). հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի լեզու է:

ԴԱՐՉ [< дартс < անգլ. darts], գ. (սպորտ.): Մարզաձև, որի էությունը, փետրատեգով կլոր թիրախին խփելով, միավորներ հավաքելն է:

ԴԱՐՍՈՆՎԱԼԻԶԱՑԻԱ [< дарсонвализация < ֆր. կենսաբան, ֆիզիկոս Դ՚ Արսոնվալի անունից], գ. (բժշկ.): Էլեկտրաբուժման մեթոդ:

ԴԱՐՎԻՆԻԶՄ [< дарвинизм < առաջացել է անգլիացի գիտնական Չ. Դարվինի անունից], գ. (գիտ.): Դարվինականություն՝ ուսմունք կենդանական ու բուսական աշխարհի զարգացման և բնական ընտրությամբ տեսակների առաջացման մասին:

ԴԱՐՎԻՆԻՍՏ [< дарвинист < հատուկ անունից], գ. Դարվինական՝ դարվինիզմի հետևորդ՝ հետևող:

ԴԱՑԶԻԲԱՈ [< дацзыбао < չին. dàzibào < da մեծ + zi հիերոգլիֆ + boa թերթ, բառացի՝ մեծ հիերոգլիֆների թերթ], գ. (պատմ.): Պատի մեծ թերթ (ձեռագիր) կամ թռուցիկ Չինաստանում XX դարի 50-70-ական թթ. (հատկապես տարածված էր «մշակութային հեղափոխության» տարիներին):

ԴԱՈՒՆ [< даун < անգլ. down], գ. (բժշկ.): Հոգեկան հիվանդությամբ տառապող անձ, խելագար, խելապակաս, գիժ, հոգեկան հիվանդ:

ԴԱՈՒՆԻՆԳ ՍԹՐԻԹ [< Даунинг-Стрит < անգլ. Downing street], գ. Փողոց Լոնդոնում, որտեղ տեղակայված են մի շարք կառավարական հաստատություններ, նաև արտաքին գործերի նախարարությունը. լրագրային ժանրում հենց վերջին հաստատությունը նկատի ունեն:

ԴԱՖՆԻԱ [< дафния < հուն. Daphnē հատուկ անունից], գ. (կենդբ.): Ջրալու՝ խեցգետնակերպների ընտանիքին պատկանող ջրային շատ փոքրիկ կենդանի: Ջրալվեր բազմացվում են ձկնաբուծարաններում՝ փոքրիկ ձկնիկներին կերակրելու համար:

ԴԵ... [< де... < լատ. de...], Նախդիր, որ նշանակում է՝ 1. Բաժանում, հեռացում, ոչնչացում, վերացում: 2. Շարժում դեպի ներքև, իջեցում:

ԴԵԱԵՐԱՏՈՐ [< деаэратор < դե... + հուն. aēr օդ], գ. (տեխ.): Ջուրը դեաերացնող, այսինքն՝ նրանում լուծված գազերը հեռացնող սարք:

ԴԵԲԱՅ [< дебай < հոլանդացի ֆիզիկոս Պ. Դեբայի (1884-1966թթ.) անունից], գ. (ֆիզ.): Մոլեկուլի դիպոլային մոմենտի չափման միավոր:

ԴԵԲԱՏ(ՆԵՐ) [< дебаты < ֆր. débats], գ. Օգտագործվում է հատկապես հոգնակի թվով՝ քննարկումներ՝ ելույթների միջոցով կատարվող քննարկումներ, բանավեճ:

ԴԵԲԵՏ [< дебет < լատ. debet նա պարտք է], գ. (հաշվ.): Պարտք՝ կրկնակի հաշվապահական հաշվառման մեջ հաշվապահական հաշիվների ձախ երեսը՝ կողմը, որտեղ ներկայացվում են տվյալ հաշվեհամարում կատարված փոխանցումները, մուտքերն ու ծախսերը:

ԴԵԲԻԼ [< дебильность < լատ. debilis թույլ], ած. գ. (խսկց.): Բնածին մտավոր թուլություն:

ԴԵԲԻՏ [< дебит < ֆր. débit ծախս], գ. (տեխ.): Ջրի, գազի կամ որևէ էներգիայի այն քանակը, որ տալիս է աղբյուրը որոշ ժամանակամիջոցում:

ԴԵԲԻՏՈՐ [< дебитор < ֆր. debitor], գ. Պարտապան՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ունի պարտք տվյալ հիմնարկությանը, գործարանին, կազմակերպությանը ևն:

ԴԵԲՅՈՒՏ [< дебют < ֆր. début սկիզբ], գ. (խսկց.): 1. Առաջնելույթ՝ դերասանի, երգչի ևն առաջին հրապարակային ելույթը: 2. (սպորտ.): Սկզբնախաղ՝ շախմատային խաղի առաջին քայլերը կամ ուղղակի խաղասկիզբ (ֆուտբոլի, հոկեյի ևն):

ԴԵԲՅՈՒՏԱՆՏ [< дебютант < ֆր. débutant], գ. (խսկց.): Սկսնակ՝ որևէ բնագավառում առաջին քայլերն անող անձ:

ԴԵԲՈՇ [< дебош < ֆր. débauche], գ. (խսկց.): Անկարգություն՝ կռիվ, սկանդալ, ծեծկռտուք:

ԴԵԳԵՆԵՐԱՏ [< дегенерат < լատ. degeneratus], գ. (խսկց.): Այլասերունդ՝ այլասերման հատկանիշներ ունեցող՝ այլասերված մարդ՝ ֆիզիկական և հոգեբանական արտահայտությամբ:

ԴԵԳԵՆԵՐԱՑԻԱ [< дегенерация < լատ. degenerare], գ. Այլասերում՝ 1. (կենսբ.): Գոյության անբարենպաստ պայմանների հետևանքով կենդանաբանական և բուսական օրգանիզմների հատկությունների՝ սերնդեսերունդ վատանալը: 2. Օրգանիզմի որևէ գործարանի թուլացումը՝ փոքրացումը կամ անհետացումը պատմական զարգացման ընթացքում: 3. Բարքերի փչացում՝ անկում: 4. Անբարոյական դառնալը՝ դարձնելը:

ԴԵԳՐԱԴԱՑԻԱ [< деградация < ֆր. dégradation < լատ. gradus աստիճան], գ. Աստիճանային վատթարացում, անկում, դրական հատկանիշների՝ հատկությունների կորուստ: 2. *փխբ.* Քայքայում, կազմալուծում: 3. *Դեգրադացիա հողերի* - գործընթաց, որը հանգեցնում է հողում կուտակված օրգանական նյութերի, փոխանակային հողալկալի կատիոնների և տղմային ֆրակցիայի մասնակի կորստին, այսինքն՝ հողի հատկությունների վատացման և բերրիության անկման:

ԴԵԳՈՒՍՏԱՏՈՐ [< дегустатор < լատ. degustare համտես անել], գ. (մսնգ.): Համը տեսնելով՝ որակը որոշող մասնագետ, համտեսող:

ԴԵԳՈՒՍՏԱՑԻԱ [< дегустация < լատ.] գ. Համը տեսնելով՝ որակը որոշելը, համտեսել:

ԴԵԴԵՐՈՆ [< дедерон < անվանումը ծագել է գերմաներեն DDR (Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն) հապավումից], գ. (պատմ.): ԳԴՀ-ում արտադրվող կապրոնի առևտրական անվանումը:

ԴԵԴՈՒԿՏԻՎ [< дедуктивный < լատ.], ած. Արտածական՝ 1. Արտածելու համար, արտածվող: 2. (տրամբ.): Որտեղ գործ է դրվում արտածությունը:

ԴԵԴՈՒԿՑԻԱ [< дедукция < լատ. deductio բխեցում], գ. (տրամբ.): Արտածում՝ ընդհանուրից դեպի մասնավորին ընթացող տրամաբանական մտահանգում. այդ առումով այն հակադրվում է ինդուկցիային:

ԴԵԶ... [< дез... < ֆր. des..., de´s...] Նախածանց. նշանակում է ոչնչացում, հեռացում, բացակայություն կամ աղավաղում:

ԴԵԶԱՄԻՆԱՑՈՒՄ [< дезаминация < դեզ...+ ամիններ], գ. Ապամինացում՝ օրգանական միացությունից ամինախմբի (NH_2) պոկում, որը կարևոր դեր է խաղում

կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների կենսագործունեության գործընթացում:

ԴԵԶԵՐՏԻՐ [< дезертир < ֆր. déserteur], գ. (խսկց.): Դասալիք՝ 1. Զինվորական, որ ինքնակամ լքում է զորամասը՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար: 2. Զինակոչից կամ զինահավաքից խուսափող քաղաքացի: 3. *փխբ.* Իր քաղաքական պարտքը՝ հասարակական կամ պաշտպանական պարտականությունները կատարելուց խուսափող անձ:

ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱ [< дезинсекция < դեզ…+ լատ. insectum միջատ], գ. (հնց.): Միջատազերծում՝ հատուկ միջոցներով միջատների ոչնչացման մեթոդներն ու միջոցները: Տարբերում են բժշկական, անասնաբուժական և գյուղատնտեսական միջատազերծում:

ԴԵԶԻՆՏԵԳՐԱՑԻԱ [< дезинтеграция < դեզ…+ լատ. integer ամբողջական], գ. Ամբողջը բաղկացուցիչ մասերի վերածելը:

ԴԵԶԻՆՖԵԿՑԻԱ [< дезинфекция < դեզ…+ լատ. inficere փչացնել, վարակել], գ. (հնց.): Ախտահանություն՝ հատուկ միջոցներով ախտածին բակտերիաների ոչնչացում, ախտահանում, վարակազերծում:

ԴԵԶԻՆՖՈՐՄԱՑԻԱ [< дезинформация < դեզ…+ անգլ. inform տեղյակ պահել], գ. Տարազեկում, ապատեղեկատվություն՝ սխալ տեղեկություններ տալով՝ մոլորության մեջ գցելը, սխալ իրազեկումով ապակողմնորոշելը:

ԴԵԶՈԴՈՐ [< дезодорант < լատ.], գ. (խսկց.): Հոտազերծիչ, ապահոտիչ՝ հատուկ սարք, որը հեռացնում է վատ հոտը կամ քողարկում այն:

ԴԵԶՈԴՈՐԱՑԻԱ [< дезодорация < դեզ…+ լատ. odor հոտ], գ. Հոտազերծում՝ գազանշման նյութերի արհեստական հեռացումը կամ քողարկումը, որոնք առաջանում են օրգանական նյութերի (արտաթորանքներ, սննդամթերքներ, դիակներ ևն) նեխման քայքայումից:

ԴԵԶՈՒՐԲԱՆԻԶՄ [< дезурбанизм < դեզ…+ լատ. urbanus քաղաքային], գ. XX դարի քաղաքաշինության ուղղություն, որ ժխտում է խոշոր քաղաքների դրական սոցիալական դերը և քարոզում դրանց սահմաններից բնակչության ապակենտրոնացում:

ԴԵԻԶՄ [< деизм < ֆր. deisme < լատ. deus աստված], գ. (փիլ.): XVII-XVIII դարերի կրոնափիլիսոփայական ուսմունք, որն ընդունում էր աստծուն իբրև տիեզերքի նախապատճառ, բայց ժխտում էր նրա միջամտությունը բնության և հասարակության կյանքին, աստվածականություն:

ԴԵԻՍՏ [< деист < ֆր. < լատ.], գ. Դեիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԴԵԼԵԳԱՏ [< делегат < լատ. delegatus ուղարկված], գ.1. Պատվիրակ, պատգամավոր՝ պետության, հասարակության, կոլեկտիվի, կազմակերպության ևն կողմից ընտրված և իրեն տրված հրահանգների համաձայն գործող ներկայացուցիչ: 2. Հանձնակատար՝ մեկի համար զանազան հանձնարարություններ կատարող անձ:

ԴԵԼԵԳԱՑԻԱ [< делегация < լատ. delegatio], գ. Պատվիրակություն՝ պատվիրակների կազմ՝ խումբ:

ԴԵԼԻԲԱՇ [< делибаш < թուրք. Delibaš < deli խիզախ, վայրի], գ. (պատմ.): Թուրք փաշայի թիկնազորի լավ պատրաստված հեծյալ զինվոր:

ԴԵԼԻԿԱՏԵՍ [< деликатес < ֆր. délicatesse], գ. (խսկց.): Նրբախորտիկ՝ նուրբ ուտելիք, նրբահամ կերակուր, նրբահամակ:

ԴԵԼԻԿՏ [< деликт < լատ. delictum], գ. (իրավք.): 1. Իրավախախտում: 2. Քաղաքացիական իրավախախտում, որը առաջ է բերում հասցված վնասի հատուցման պարտավորվածություն:

ԴԵԼԻՄԻՏԱՑԻԱ [< делимитация < ֆր. délimitation], գ. (իրավք.): Միջազգային իրավունքում՝ փոխադարձ համաձայնությամբ հարևան պետությունների սահմանագծի որոշումը և գրանցումը համապատասխան քարտեզի վրա:

ԴԵԼՅՈՒՎԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ [< делювий, делювиальные (< լատ. deluere լվանալ) отложения] - (երկրբ.): Ապարների հողմահարման նյութերի կուտակումներ: Գենետիկորեն կապված են բեկորային նյութերի ծանրության ուժի, ձնհալի ու անձրևաջրերի ազդեցությամբ տեղափոխման և բարձրությունների լանջերին ու ստորոտում կուտակման հետ:

ԴԵԼՏԱ I [< дельта < հուն. delta հունարեն այբուբենի 4-րդ տառը], գ. (աշխգր.): Գետաբերանում գետի բացվածքներից գոյացած հարթություն, որ բազմաթիվ ճյուղավորումների է բաժանվում գետի բազուկներով և ունի եռանկյունու և դելտա տառի ձևը:

ԴԵԼՏԱ II [< дельта < հուն. delta], գ. 1. Հունարեն այբուբենի չորրորդ տառը - Δ,δ: 2. Նյութի վիճակներից մեկը:

ԴԵԼՏԱ-ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ - (ֆիզ.):Տիեզերական ճառագայթների հոսքի և ռադիոակտիվ ճառագայթման ատոմից անջատվող էլեկտրոններ:

ԴԵԼՏԱ-ՓԱՅՏԱՆՅՈՒԹ - Փայտաշերտավոր պլաստիկների տեսակ: Պատրաստվում է ֆենոլա - կամ կրեզոլա-ֆորմալդեհիդային խեժով տոգորված շպոնի (գլխավորապես կեչու) մամլման կամ սոսնձման միջոցով:

ԴԵԼՏԱ- ՖՈՒՆԿՑԻԱ - (մաթ.): Սիմվոլ (δ(x)), որն օգտագործվում է մաթեմատիկական ֆիզիկայում կենտրոնացված մեծություններ (կենտրոնացված ծանրաբեռնվածություն, կենտրոնացված լիցք են) պարունակող խնդիր լուծելիս:

ԴԵԼՏԱՁԵՎ ՄԿԱՆ - (կենդբ.): Ուսային հողը ծածկող և կլորացնող մկան, ձևով հիշեցնում է հունարեն դելտա տառը՝ շրջված վիճակում:

ԴԵԼՖԻՆ [< дельфин < հուն. delphis (delphinos)], գ. (կենդբ.): Ծովային կաթնասուն կենդանի՝ կետերի ցեղից: Մարմնի երկարությունը՝ 1-3 մ, երբեմն՝ մինչև 10 մ:

ԴԵԼՖԻՆԱՐԻՈՒՄ [< дельфинарий < հուն.], գ. Ջրավազան դելֆիններ պահելու, ուսումնասիրելու, հետազոտելու են համար:

ԴԵԿԱ [< дека < գերմ. Decke], գ. (երժշտ.): Լարային երաժշտական գործիքների մեջ՝ արձագանքն ուժեղացնող տախտակ:

ԴԵԿԱ... [< дека... < հուն. deka տասը] Ֆիզիկական մեծությունների չափման միավորների տասնապատկումը ցույց տվող նախածանց:

ԴԵԿԱԲՐԻՍՏ [< декабрист < լատ. december], գ. (պատմ.): Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի և ինքնակալության դեմ 1825 թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցած ապստամբության մասնակից:

ԴԵԿԱԴԱ [< декада < ֆր. décade < հուն. dekas (dekados) տասնյակ], գ. (խսկց.): 1. Տասնօրյակ՝ տասն օրվա ժամանակամիջոց, ամսվա մեկ երրորդ մասը: 2. Որևէ բանի (փառատոնի, կամպանիայի են) նվիրված տասնօրյա ժամանակամիջոց:

ԴԵԿԱԴԱՆՍ [< декаданс < ֆր. décadence], գ. (պատմ.): Անկում՝ վատթարացում, տնտեսության, մշակույթի մակարդակի իջեցում, վատանալը, փչանալը մշակութային հետադիմություն:

ԴԵԿԱԴԵՆՏ [< декадент < լատ. decadentia անկում], գ. (արվ. գրակ.): XIX դարի

վերջի և XX սկզբի գրականության և արվեստի անկումային ուղղությունների ընդհանուր անվանումը, դեկադենտություն:

ԴԵԿԱԼԻՏՐ [< декалитр < դեկա… + ֆր. litre < հուն. litra], գ. 1. Տասը լիտր: 2. Տասը լիտրի տարողություն ունեցող չափ: 3. Տասը լիտրի տարողությունը՝ որպես ծավալի չափման միավոր:

ԴԵԿԱԼՑԻՆԱՑԻԱ [< декальцинация < դե… + լատ. colx (calcis) կիր], գ. (բժշկ.): Կալցիումի հեռացումը ոսկրահյուսվածքներից որոշ հիվանդությունների ժամանակ:

ԴԵԿԱՄԵՏՐ [< декаметр < դեկա…+ հուն. metreō], գ. 1. Տասը մետր: 2. Տասը մետրի երկարություն՝ որպես չափման միավոր:

ԴԵԿԱՆ [< декан < լատ. decanus տասնապետ՝ հին հռոմեական զորքում՝ 10 զինվորի ղեկավար], գ. 1. Բուհերում՝ ֆակուլտետի ղեկավար և գիտական խորհրդի նախագահ: 2. (հնց.): Միջնադարում վանքի կառավարման գործում վանահոր օգնական:

ԴԵԿԱՆԱՏ [< деканат < լատ. decanus], գ. 1. Ֆակուլտետի վարչաուսումնական ղեկավարությունը: 2. Ֆակուլտետի վարչության գրասենյակը:

ԴԵԿԱՏ(Թ)ԼՈՆ [< декатлон < հուն. deka տասը + athlon մրցույթ], գ. (սպորտ.): Սպորտային մրցություն թեթև ատլետիկայի տասը մարզաձևից, տասնամարտ:

ԴԵԿԱՏՐՈՆ [< декатрон < դեկա… + հուն. tron], գ. (տեխ.): Թվարկության տասնական համակարգում՝ թվային հաշվարկ կատարող և էլեկտրական շղթան հոսանքափոխող բազմաէլեկտրոդ իոնային սարք:

ԴԵԿԵԼ [< декель < գերմ. Deckel անիվ], գ. (տպգր.): Տպագրական հաստոցի շրջանակ:

ԴԵԿԼԱՄԱՑԻԱ [< декламация < լատ. declamatio], գ. 1. Արտասանության՝ հնչյունների արտաբերման գործողությունը և դրա բնորոշ առանձնահատկությունները: 2. Գեղեցիկ առոգանությամբ ու շեշտադրությամբ ասելը:

ԴԵԿԼԱՐԱՏԻՎ [< декларативный < լատ.], ած. 1. Դեկլարացիա պարունակող, պաշտոնական հայտարարություն հանդիսացող: 2. *փխբ.* Միայն խոսքով արվող հայտարարության բնույթ ունեցող, լոկ խոսքով հայտարարվող՝ խոստացվող:

ԴԵԿԼԱՐԱՑԻԱ [< декларация < լատ. declaratio ծանուցում], գ. 1. Կառավարական՝ կուսակցական ևն պաշտոնական հայտարարություն որևէ կարևոր խնդրի՝ բանակցությունների՝ քաղաքական հիմնական սկզբունքների ևն վերաբերյալ: 2. Այդ հայտարարության պաշտոնական ձևակերպումը ներկայացնող փաստաթուղթը, հայտարարագիր: 3. Հայտարարություն՝ անհրաժեշտ տեղեկություններ պարունակող որոշ կարգի պաշտոնական փաստաթղթերի անվանում: 4. Հռչակագիր:

ԴԵԿԼԻՆԱՏՈՐ [деклинатор < լատ.], գ. (ֆիզ.): Խոտորացույց՝ մագնիսական խոտորումները չափելու սարք:

ԴԵԿԼԻՆԱՑԻԱ [< деклинация < լատ. declinatio խոտորում], գ. (ֆիզ.): Խոտորում՝ խոտորացույցի մագնիսական սլաքի շեղումը երկրաբանական միջօրեականից, մագնիսական շեղում:

ԴԵԿՈԴԵՐ [< дакодер < դե... + լատ. codex գիրք], գ. (տեխ. հմկրգչ.): Սարք՝ ծածկագրված թվային տվյալների վերծանման համար:

ԴԵԿՈԼՈՆԻԶԱՑԻԱ [< деколонизация < դե… + լատ. colonia գաղութ], գ. (հնց.): Ապագաղութացում՝ գաղութացման վերացում:

ԴԵԿՈԼՏԵ [< декольте < ֆր. décollete՛], գ. (խսկց.): 1. Լանջաբաց՝ կանացի զգեստի խոր ու լայն կտրվածք, որ բաց է պահում պարանոցն ու կուրծքը: 2. Այդպիսի կտրվածքով զգեստ:

ԴԵԿՈԿՏ [< декокт < գերմ. Dekokt < ֆր. décocté < լատ. decoctum], գ. (բժշկ. հնց.): Դեղաբույսերից եփուկ:

ԴԵԿՈՆՏ [< деконт < ֆր. déconte], գ. (ֆին.): Տե՛ս Ռեմիսիա:

ԴԵԿՈՄՊԵՆՍԱՑԻԱ [< декомпенсация < դե…+ լատ. compensatio հավասարակշռում], գ. (բժշկ.): Կոմպենսացիայի խանգարում՝ մարմնի կամ նրա որևէ օրգանի գործունեության խանգարում:

ԴԵԿՈՄՊՐԵՍԻԱ [< декомпрессия < դե…+ լատ. compressio սեղմում], գ. 1. (տեխ.): Ճնշման թուլացում: 2. Բարձր ճնշման միջավայրից ցածր ճնշման միջավայր անցնելը: 3. (բժշկ.): Հիվանդագին վիճակ՝ այդպիսի անցման դեպքում:

ԴԵԿՈՐ [< декор < ֆր. décor < լատ. decorō զարդարում եմ], գ.: Գեղազարդ՝ բեմի հարդարման՝ կահավորման՝ գեղազարդման առարկա:

ԴԵԿՈՐԱՏԻՎ [< декоративный < ֆր. < լատ.], ած. (արվ.): 1. Գեղազարդային: 2. Գեղատեսիլ, նկարչական, նկարագեղ: 3. (թատր.): Դեկորացիային հատուկ, դեկորացիայի:

ԴԵԿՈՐԱՏՈՐ [< декоратор < ֆր. décorateur], գ. (հնց.): 1. Բեմահարդար՝ բեմի ձևավորման մասնագետ: 2. Գեղազարդիչ: 3. Բնակավայրերի կանաչազարդման մասնագետ:

ԴԵԿՈՐԱՑԻԱ [< декорация < ֆր. décoration], գ. 1. (թատր.): Գեղազարդում՝ բեմի նկարչական կամ ճարտարապետական հարդարումը, ձևավորումն ու կահավորումը՝ ներկայացվող վայրին՝ տեսարանին համապատասխան: 2. հվք. Դեկորների ամբողջությունը: 3. *փխբ.* Արտաքին ձևով՝ զարդարանքով ներքինը քողարկող միջոց:

ԴԵԿՈՐՏ [< декорт < գերմ. Dekort], գ. (տնտսգ.): Ապրանքազեղչ՝ ապրանքի գների զեղչ՝ կապված վաղաժամկետ վճարման կամ ապրանքի ցածրորակության հետ, որը չի համապատասխանում պայմանագրում նախատեսված պայմաններին:

ԴԵԿՈՐՈՒՄ [< декорум < լատ. decōrum վայելչություն], գ. (հզվդ.): Արտաքին վայելչություն:

ԴԵԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱ [< деквалификация < դե... + կվալիֆիկացիա], գ. Ապաորակավորում, որակազրկում:

ԴԵԿՐԵՏ [< декрет < ֆր. décret < լատ. decretum որոշում], գ. (պատմ.): Բարձրագույն իշխանության՝ մարմնի որոշումը, որ օրենքի ուժ ունի. իրավական ակտի անվանում:

ԴԵԿՐԵՏԱԼԻԱ [< декреталия < լատ. dēcretalis դեկրետային], գ. 1. (կրոն.): Հռոմի պապի որոշումը ուղերձի տեսքով եկեղեցական հարցերի և կանոնական իրավունքի վերաբերյալ: 2. (իրավք.): Օրենքների և իրավական ակտերի միջնադարյան ժողովածու:

ԴԵԿՈՒՎԵՐ [< декувер < ֆր. decouvert չծածկված], գ. (ֆին.): Ապահովագրական և գնահատված գույքի գումարի տարբերությունը՝ իբրև ապահովագրողի ռիսկային մաս:

ԴԵԿՈՒՐԻՈՆ [< декурион < լատ. decurio (decurionis)], գ. (պատմ.): 1. Հին Հռոմում՝ 10 հեծյալների ղեկավարը: 2. Հանրապետության շրջանում՝ Իտալիայի քաղաքների խորհուրդների անդամ, իսկ Հռոմեական կայսրության ժամանակ՝ նաև պրովինցիաների:

ԴԵՀԻԴՐԱԶՆԵՐ [< дегидразы < դե…+ հուն. hydōr ջուր, խոնավություն], գ. (կենսբ.): Ֆերմենտների խումբ, որոնք օքսիդացող օրգանական նյութից վերացնում են ջրածինը և հանձնում թթվածնին կամ յուրահատուկ նյութերին:

ԴԵՀԻԴՐԱՏԱՑՈՒՄ [< дегидратация < դե…+ հուն. hydōr ջուր, խոնավություն], գ. (կենսբ.): Օրգանական կամ անօրգանական միացություններից ջրի պոկում:

Հիդրատացման հակադարձ ռեակցիան է:

ԴԵՀԻԴՐՈԳԵՆԱՑՈՒՄ [< дегидрогенизация < դե… + լատ. hydrogenium ջրածին], գ. (քիմ.): Քիմիական միացություններից ջրածնի պոկում: Հիդրոգենացման հակադարձ ռեակցիան է:

ԴԵՄԱԳՈԳ [< демагог < հուն. dēmagōgos], գ. (խսկց.): Ամբոխավար՝ անձ, որը մարդկանց մեջ փորձում է հեղինակություն ստեղծել կեղծ խոստումներով, իրականությունը խեղաթյուրելով ևն, դատարկախոս, երեսպաշտ:

ԴԵՄԱԳՈԳԻԱ [< демагогия < հուն. dēmagōgia], գ. (խսկց.): 1. Ամբոխավարություն՝ ժողովրդի անունից հանդես գալը, ժողովրդին իր անձնական շահերին ծառայեցնելը, դատարկախոսություն, երեսպաշտություն: 2. Ամբոխավարի վարքագիծ ու գործելակերպ:

ԴԵՄԱՐԿԱՑԻԱ [< демаркация < ֆր. démarcation], գ. 1.(դվնգ.): Սահմանագծում՝ հարևան տերությունների միջև սահմանների որոշումն ու տեղանքի վրա նշանակելը՝ անցկացնելը կնքված պայմանագրերի համաձայն: 2. (բժշկ.): Մեռած հատվածների սահմանազատումը կենդանի հյուսվածքներից:

ԴԵՄԱՐԿԱՑԻՈՆ [< демаркационный < ֆր.], ած. Սահմանագծային:

ԴԵՄԱՐՇ [< демарш < ֆր. démarche], գ. (դվնգ.): Դիվանագիտական գործողություն՝ ելույթ՝ միջոցառում որևէ պետության վրա ներգործելու նպատակով: Արտահայտվում է հայտագրի, հուշագրի, հայտարարության ևն ձևերով:

ԴԵՄԵՆՑԻԱ [< деменция < լատ. dementia խելահեղություն], գ. (բժշկ.): Թուլամտության (տկարամտության, խելապակասության) ձեռքբերում:

ԴԵՄԻԼԻՏԱՐԻԶԱՑԻԱ [< демилитаризация < դե... + լատ. militaris ռազմական], գ. (հնց.): Ապառազմականացում՝ համաձայնագրերով կամ հատուկ որոշումներով որոշակի տարածքում ռազմական արդյունաբերություն ունենալու, ամրություններ կառուցելու, զորքեր պահելու ևն արգելում:

ԴԵՄԻՈՒՐԳ [< демиург < հուն. dēmiurgos], գ. (պատմ.): 1. Հին Հունաստանում՝ արհեստավոր, վարպետ, նկարիչ: 2. Արարիչ, ստեղծագործող՝ կազմակերպող ուժ, զորություն: 3. Պլատոնի իդեալիստական փիլիսոփայության մեջ՝ արարիչ՝ աշխարհի ստեղծող:

ԴԵՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ [< демобилизация < ֆր. démobilisation], գ. (խսկց.): 1. Զորացրում՝ զինծառայողների արձակումը բանակային ծառայությունից: 2. Ռազմական ուժերի՝ ռազմական արդյունաբերության փոխադրումը խաղաղ հիմքերի վրա: 3. *փխբ.* Ակտիվության, ուշադրության, ռազմական պատրաստության թուլացում:

ԴԵՄՈԳՐԱՖԻԱ [< демография < հուն. dēmos ժողովուրդ + graphō գրում եմ], գ. (գիտ.): Ժողովրդագրություն՝ վիճակագրության այն ճյուղը, որը ուսումնասիրում է բնակչության կազմն ու դրա շարժումը:

ԴԵՄՈԿՐԱՏ [< демократ < հուն.], գ. 1. Ժողովրդավարության կողմնակից, ժողովրդապաշտ, ժողովրդավար: 2. Դեմոկրատական կառավարության անդամ: 3. *փխբ.* Ժողովրդասեր՝ պարզ՝ հասարակ՝ ոչ գոռոզ մարդ:

ԴԵՄՈԿՐԱՏԻԱ [< демократия < հուն. dēmokratia < dēmos ժողովուրդ + kratos իշխանություն], գ. 1. Ժողովրդավարություն՝ պետական կառուցվածքի ձև, որի ժամանակ իշխանության գերագույն մարմիններն ընտրվում են ժողովրդի կողմից որոշակի ժամանակով: 2. Որևէ կարգի կոլեկտիվի ղեկավարման գործում ամբողջ կոլեկտիվի մասնակցության ու գործուն ազդեցության ապահովում:

ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄ [< демократизм < հուն.], գ. Դեմոկրատիայի ճանաչում և կենսագործում:

ԴԵՄՈՆ [< демон < հուն. daimōn ոգի], գ. (խսկց.): Դև՝ քրիստոնեական դիցաբանության մեջ՝ չար ոգի, սատանա:

ԴԵՄՈՆՍՏՐԱՏԻՎ [< демонстративный < լատ.], ած. 1. Ցուցադրական: 2. Ցուցական:

ԴԵՄՈՆՍՏՐԱՑԻԱ [< демонстрация < լատ. demonstratio ցուցադրում], գ. 1. Ցույց՝ հասարակական-քաղաքական որոշ տրամադրությունների արտահայտությունը հանդիսացող զանգվածային երթ: 2. Ցուցադրում՝ հասարակայնորեն ինչ-որ բանի ներկայացնելը, ցույց տալը՝ թատերական ներկայացում, կինոնկար, ելույթ ևն: 3. (ռազմ.): Ցույց՝ թշնամու ուշադրությունը գլխավոր հարվածից շեղելու և նրան թյուրիմացության մեջ գցելու նպատակով կատարվող կողմնակի գործողություն: 4. (խսկց.) Բողոքի՝ դժգոհության ևն արտահայտությունը հանդիսացող որևէ արարք:

ԴԵՄՈՆՏԱԺ [< демонтаж < ֆր. dimontage], գ. (տեխ.): Ապասարում, սարքահանում, ապասարքավորում, քանդում:

ԴԵՄՈՍ [< демос < հուն. dēmos ժողովուրդ], գ. (խսկց.): 1. Ժողովուրդ՝ երկրի՝ տերության բնակչություն: 2. Որևէ ազգի բոլոր անհատների ամբողջություն, ազգություն:

ԴԵՄՈՐԱԼԻԶԱՑԻԱ [< деморализация < ֆր. démoralisation], գ. (հնց.): Բարոյալքում՝ կարգապահության անկում, բարոյական արժեքների կործանում, ոգու ընկճում ևն:

ԴԵՄՊՖԵՐ [< демпфер < գերմ. Dämpfer], գ. (տեխ.): Հանդարտիչ՝ շփումը մեծացնելու միջոցով մեխանիկական տատանումները թուլացնող՝ հանդարտեցնող հարմարանք, մարիչ:

ԴԵՄՓԻՆԳ [< демпинг < անգլ. dumping], գ. (տնտսգ.): Գնագցում՝ զգալի քանակությամբ ապրանքների վաճառքը արտաքին շուկայում էապես ավելի ցածր գներով, քան ներքին շուկայում, որի նպատակն է այս կամ այն շուկայում արտահանման մրցակցային առավելություն ձեռք բերելը:

ԴԵ ՅՈՒՐԵ [< де-юре < լատ. de jure], մկ. (իրավբ.): Իրավաբանորեն՝ իրավաբանական տեսակետից:

ԴԵՆԱՏՈՒՐԱԼԻԶԱՑԻԱ [< денатурализация < դե… + ֆր. naturalisation < լատ. naturalis իրական, բնական], գ. (քղք.): Որևէ պետության քաղաքացիությունից (հպատակությունից) զրկվելը:

ԴԵՆԱՏՈՒՐԱՏ [< денатурат < լատ. denaturatus բնական հատկանիշներից զրկված], գ. (մսնգ): Թունավոր սպիրտ, որը օգտագործվում է տեխնիկական նպատակներով:

ԴԵՆԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱ [< денационализация < ֆր. dénationalisation], գ. (հնց.): 1. Ապազգայնացում՝ ազգային բնույթից՝ առանձնահատկություններից զրկվելը: 2. (տնտսգ.): Ազգայնացրած գույքը նախկին սեփականատերերին վերադարձնելը:

ԴԵՆԱՑԻՖԻԿԱՑԻԱ [< денацификация < գերմ. Denazifikation], գ. (պատմ.): Միջոցառում, որը ուղղված էր ֆաշիստական Գերմանիայի դեմ հաղթանակից հետո նացիզմը արմատախիլ անելուն:

ԴԵՆԴԻ [< денди < անգլ. dandy], ած. գ. (խսկց.): Չափազանց գեղեցիկ, մոդայի վերջին ճիչով հագնված անձ:

ԴԵՆԴՐԱՐԻՈՒՄ [< дендрарий < հուն. dendron ծառ],գ. (մսնգ.): Դենդրոլոգիական այգի:

ԴԵՆԴՐԻՏՆԵՐ [< дендриты < հուն. dendron ծառ], գ. 1. (կենսբ.): Նյարդային բջջի ճյուղավորված ելուստ, որն ընկալում է ուրիշ նեյրոնների կամ ռեցեպտորային բջիջների դրդող և արգելակող ազդեցությունները: 2. Որևէ միներալի, մետաղի, ձուլվածքի, արհեստական միացության բյուրեղային գոյացում:

ԴԵՆԴՐՈԼՈԳԻԱ [< дендрология < հուն. dendron ծառ + logos գիտություն], գ. (գիտ.): Ճառաբանություն՝ բուսաբանության բաժին, որը ուսումնասիրում է ծառաբույսերը՝ ծառերը և թփերը:

ԴԵՆՈՄԻՆԱՑԻԱ [< деноминация < լատ. denominatio], գ. (ֆին.): Վերանվանում՝ դրոշմանիշների վերանվանում՝ որոշ արժեզրկումով:

ԴԵՆՈՆՍԱՑԻԱ [< денонсация < ֆր. dénoncer], գ. (հնց.): Հայտարարություն՝ պետության կողմից որևէ գործողություն դադարեցնելու կամ համաձայնագրից հրաժարվելու հայտարարություն:

ԴԵՆՈՏԱՏ [< денотат < լատ. dēnotatum անվանված], գ. (փիլ. լեզվբ.): Նշյալ՝ առարկան՝ որպես նշանակման օբյեկտ:

ԴԵՆՏԻՆ [< дентин < լատ. dens(dentis) ատամ], գ. (կզմխս.): Ատամոսկր, ատամոսկրի նյութ:

ԴԵՆՈՒԴԱՑԻԱ [< денудация < լատ. denudatio մերկացում], գ. (երկրբշխ.): Ապարների հողմնահարման արդյունքների հեռացում:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ [< департамент < ֆր. département], գ. 1. (պատմ.): Ցարական Ռուսաստանում և մի շարք երկրներում՝ նախարարության կառավարական կամ դատական բարձրագույն մարմնի բաժին: 2. ԱՄՆ-ում և Շվեյցարիայում՝ նախարարություն: 3. Ֆրանսիայում՝ երկրի վարչական բաժանման միավոր, նահանգ: 4. (բանկ.): Բանկում՝ վարչատնտեսական միավոր:

ԴԵՊԵՇ [< депеша < ֆր. dépêche], գ. Ճեպագիր՝ դիվանագիտական կամ ռազմական շտապ հաղորդում:

ԴԵՊԻԳՄԵՆՏԱՑԻԱ [< депигментация < դե…+ լատ. pigmentum ներկ], գ. (բժշկ.): Նորմալ պիգմենտացիայի կորուստ:

ԴԵՊԻԼՅԱՑԻԱ [< депиляция < լատ. depilare մազերը վերացնել], գ. Մազերի հեռացումը բժշկական կամ կոսմետիկ նպատակներով:

ԴԵՊՈ [< депо < ֆր. de´pôt պահեստ, ամբար], գ. (տեխ.): Շոգեքարշերի և վագոնների նորոգման կայան երկաթուղիներում:

ԴԵՊՈԶԻՏ [< депозит < լատ. depositum պահպանման հանձնված իր], գ. 1. (ֆին.): Ավանդ՝ դրամական գումար կամ արժեթղթեր, որոնք հանձնվում են բանկերին կամ խնայդրամարկղերին՝ ի պահ: 2. (իրավբ.): Դատական հիմնարկներ (նոտարական գրասենյակ) մուծվող գումար՝ պահանջատերերին հանձնելու կամ պահելու համար:

ԴԵՊՈՆԵՆՏ [< депонент < լատ. deponens (deponentis) հետաձգող], գ. Ավանդատու՝ ավանդ մուծող անձ:

ԴԵՊՈՊՈՒԼՅԱՑԻԱ [< депопуляция < ֆր. dépopulation < դե... + լատ. populus ժողովուրդ], գ. (ազգգր.): Բնակչության թվաքանակի նվազում:

ԴԵՊՈՐՏ [< депорт < ֆր. déport], գ. (տնտսգ.): Հետադարձում՝ 1. Ապրանքների կամ արտարժույթի առևտրում գնագոյացման համակարգ, որտեղ մոտ ապագայի առաքումներն ավելի բարձր գին ունեն, քան ավելի ուշ իրականացվողները: 2. Ճախսերին և տոկոսադրույքներին վերաբերող արտահայտություն, որը կիրառվում է բաժնեմասերի կարճատև վաճառքների ուշացած վճարումների դեպքում:

ԴԵՊՈՐՏԱՑԻԱ [< депортация < լատ. deportatio], գ. (քղք.): Բռնարտաքսում՝

տվյալ երկրից բռնի արտաքսում:

ԴԵՊՐԵՍԻԱ [< депрессия < լատ. depressio], գ. 1. (տնտսգ.): Անկում՝ լճացում երկրի տնտեսական կյանքում: 2. (բժշկ.): Ընկճվածություն՝ հոգեկան վիճակի անկում, վհատվածություն, ճնշվածություն, հոգեճգնաժամ: 3. (երկրբ.): Ցածրահարթություն՝ ծովի մակերեսից ցածր գտնվող հարթություն, իջվածք:

ԴԵՊՈՒՏԱՏ [< депутат < միջին լատ. deputatus ուղարկված], գ. (հնց.): Պատգամավոր՝ պետական ընտրովի մարմնի ընտրված անդամ:

ԴԵՌԱՏԻԶԱՑԻԱ [< дератизация < դե... + անգլ. rat առնետ,կրծող], գ.Կրծողների վնասազերծում:

ԴԵՌԵԳՈՒԼՅԱՑԻԱ [< дерегуляция < դե... + լատ. regulare], գ. (տնտսգ.): Ապակարգավորում՝ ֆինանսական գործարքների նկատմամբ հսկողության նվազեցում և շուկայական ուժերի ազդեցության ուժեղացում:

ԴԵՍԱՆՏ [< десант < ֆր. descente իջեցում], գ. (ռազմ.): 1. Ռազմական գործողություններ վարելու համար հակառակորդի տարածքը ռազմանավից կամ ինքնաթիռից իջեցված զորք: 2. Հակառակորդի տարածքում զորք իջեցնելը:

ԴԵՍԵԳՐԵԳԱՑՈՒՄ [< десегрегация < դե…+ լատ. segregatio բաժանում, անջատում], գ. (քղք.): Սեգրեգացիոն քաղաքականությունից հրաժարվելը, այդպիսի վերաբերմունք չունենալը (հասարակությունը ռասայական խմբերի չբաժանելը):

ԴԵՍԵՆՍԻԲԻԼԱՑՈՒՄ [< десенсибилизация < դե… + լատ. sensibilis զգայուն], գ. Ապազգայունացում՝ 1. (քիմ.): Լուսանկարչական թաղանթների լուսազգայունության արհեստական փոքրացում: 2. (կենսբ.): Օրգանիզմի զգայունության փոքրացումը որևէ քիմիական, հատկապես՝ սպիտակուցային նյութերի կրկնվող ներգործության նկատմամբ:

ԴԵՍԵՐՏ [< десерт < ֆր. dessert],
գ. (խսկց.): 1. Աղանդեր՝ ճաշից հետո մատուցվող մրգեղեն, քաղցրեղեն, անուշեղեն: 2. Ընդհանրապես՝ թեթև ուտելիք:

ԴԵՍԿՐԻՊՏԻՎ [< дескриптивная (< անգլ. descriptive նկարագրական) лингвистика]
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - (լեզվբ. հնց.): Նկարագրական լեզվաբանություն՝ կառուցվածքային լեզվաբանության (ստրուկտուրալիզմ) հիմնական ուղղություններից մեկը, որը մշակել է լեզվի կառուցվածքային նկարագրության ուրույն մեթոդիկա:

ԴԵՍՄՈՒՐԳԻԱ [< десмургия < հուն. desmos կապ, վիրակապ + ergon գործ], գ. (բժշկ.): Ուսմունք վիրակապերի և վիրակապության մեթոդների մասին:

ԴԵՍՅԱՏԻՆ [< ռուս. десятина], գ. (հնց.): Հողային տարածության հին չափ՝ 2.400 քառ. սաժեն կամ 1.09 հա:

ԴԵՍՈՐԲՈՒՄ [< десорбция < դե…+ լատ. sorbeo կլանում եմ], գ. (կենսբ.): Կլանված նյութի հեռացումը կլանիչի մակերևույթից կամ ծավալից: Սորբման հակադարձ երևույթն է:

ԴԵՍՊՈՏ [< деспот < հուն. despotēs կարգադրիչ], ած. գ. (խսկց.): 1. Բռնակալ՝ դաժան միապետ, որի գործունեությունը և իշխանությունը հիմնված է բռնության ու կամայականության վրա: 2. Կեղեքիչ: 3. Դաժան ու քմահաճ վարմունք

ունեցող, իր իրավունքները կամ իշխանությունը չարաչար գործադրող (անձ):

ԴԵՍՊՈՏԻԶՄ [< деспотизм < հուն.], գ. Բռնակալություն:

ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱ [< деструкция < լատ. destructio], գ. Կազմալուծում, ապակայունացում ևն՝ որևէ բանի կառուցվածքի ոչնչացում, քայքայում, տարրալուծում:

ԴԵՍՈՒԲԼԻՄԱՑԻԱ [< десублимация < դե…+ լատ. sublimare բարձրացնել], գ. Սուբլիմացիայի հակադարձ երևույթը:

ԴԵՎԱԼՎԱՑԻԱ [< девальвация < գերմ. Devalvation < դե…+ լատ. valeo նշանակություն ունեմ], գ. (ֆին.): Դրամական ռեֆորմ, որով շրջանառության մեջ եղած ու արժեզրկված դրամանիշները շրջանառությունից հանելով կամ նրանց պաշտոնական արժեքն իջեցնելով՝ ստեղծվում է կայուն դրամական կուրս՝ իրական արժեքով, արժիջեցում, արժեզրկում:

ԴԵՎԱԼՎԱՑԻՈՆ [< девальвационный < գերմ.], ած. (ֆին.): Դեվալվացիայի հետ կապված, դեվալվացիային հատուկ:

ԴԵՎԱՆԳԱՐԻ [< девангари < սանսկրիտ], գ. (լեզվբ.): Հնդկական, հիմնականում վանկային գրատեսակ, Հնդկաստանի պետական պաշտոնական գիրը. գործածության մեջ է XIII դարից և ունի 50 գրանշան: Կիրառվում է հինդի, մարաթի ևն, նաև սանսկրիտի տեքստերի գրառման նպատակով:

ԴԵՎԱՍՏԱՑԻԱ [< девастация < լատ. devastatio ավերում, բնաջնջում], գ. Միջոցառումների համալիր, որի նպատակը մարդկանց, կենդանիների և բույսերի վարակիչ ու ճիճվային հիվանդությունների հարուցիչների ոչնչացումն է՝ նրանց զարգացման բոլոր փուլերում. տերմինն առաջարկել է Կ. Ի. Սկրյուբինը 1944 թ.:

ԴԵՎԻԶ [< девиз < ֆր. devise], գ. (խսկց.): 1. Համառոտ մակագրություն զինանշանի կամ վահանի վրա: 2. Նշանաբան՝ նպատակի՝ հիմնական խնդրի կարճ արտահայտություն:

ԴԵՎՈՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ [< девонский (Անգլիայի Դևոնշիր կոմսության անվանումից) период] - (երկրբ.): Փուլ, համակարգ. պալեոզոյան դարաշրջանի չորրորդ փուլը, որն ընդգրկում է 60 մլն տարի: Սահմանել են անգլիացի երկրաբաններ Մուրչիսոնն ու Սեջվիկը՝ Շոտլանդիայում և Անգլիայի Դևոնշիր կոմսությունում 1839 թ.:

ԴԵՏԱԼ [< деталь < ֆր. de´tail], գ. 1. Մանրակ՝ մեքենայի՝ մեխանիզմի ևն մաս: 2. Մանրամասնություն՝ որևէ բանի (իրողության, խնդրի ևն) բոլոր հանգամանքների հաշվառում՝ ընդգրկում:

ԴԵՏԱԼԻԶԱՑԻԱ [< детализация < ֆր.], գ. Մանրամասնում:

ԴԵՏԱՆԴԵՐ [< детандер < ֆր. de´tendre < լատ. detendere թուլացնել], գ. (տեխ.): Գազը սառեցնող մեքենա. գործում է նրա ադիաբատ ընդարձակման հաշվին, որի հետևանքով կատարվում է արտաքին աշխատանք:

ԴԵՏԵԿՏԻՎ [< детектив < անգլ. detective < լատ. detectio բացահայտում], 1. գ. (խսկց.): Խուզարկու՝ ոստիկանական քննիչ: 2. ած. Լրտեսների՝ գաղտնի գործակալների ևն արկածները նկարագրող՝ պատմող (գրական երկի մասին): 3. գ. Այդպիսի բովանդակությամբ գրական երկ:

ԴԵՏԵԿՏՈՐ [< детектор < լատ. detector հայտնաբերիչ, բացահայտող], գ. 1. (ռադ.): Բարձրահաճախային ձայնալիքները ականջի համար լսելի ցածրահաճախականայինի փոխարկող սարք: 2. (տեխ.): Լույսի՝ ջերմության և այլն հայտնաբերման սարք:

ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏ [< детерминант < լատ determinans (determinantis) որոշող], գ. (մաթ.): Որոշիչ:

ԴԵՏԵՐՄԻՆԻԶՄ [< детерминизм < լատ. determinare որոշել], գ. (փիլ.): Ուսմունք, որի համաձայն երևույթները պայմանավորված են անհրաժեշտ պատճառական կապով:

ԴԵՏԵՐՄԻՆԻՍՏ [< детерминист < լատ.], գ. Դետերմինիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԴԵՏՈՆԱՏՈՐ [< детонатор < լատ.], գ. Անդրապայթիչ՝ պայթուցիչ, պայթուցիկ նյութի լիցք, որը նախատեսված է արկի, ականի, ավիառումբի հիմնական, ինչպես նաև քայքայիչ լիցքը՝ պայթեցնելու համար:

ԴԵՏՈՆԱՑԻԱ [< детонация < լատ. detonare պայթել], գ. 1. Անդրպայթյուն՝ պայթուցիկ նյութի կործանարար ուժով պայթելը և վերափոխումը գազերի՝ վիթխարի էներգիայի արտամղումով: 2. (երժշտ.): Ճիշտ տոնից շեղումը դեպի վեր և վար, սխալ կատարված ձայն:

ԴԵՐԱՏԻԶԱՑԻԱ [< дератизация < ֆր. dératisation < rat առնետ], գ. (մսնգ): Կրծողների (մկներ, առնետներ ևն) ոչնչացում:

ԴԵՐԲԻ [< дерби < անգլ. derby], գ. (սպորտ.): 1. Երեք և չորս տարեկան զտարյուն ձիերի մրցարշավ. չորս տարեկանները՝ 1600 մ, երեք տարեկանները՝ 2400 մ: Առաջին անգամ կազմակերպել է լորդ Դերբին (որից էլ անունը) Անգլիայում 1778 թ., Ռուսաստանում անցկացվել են 1886 թ.: 2. Նույն քաղաքի երկու կամ ավելի ակումբների մրցամարտ:

ԴԵՐԻՎԱՑԻԱ [< деривация < լատ. derivatio մի կողմ տանելը, թեքելը], գ. 1. (ռազմ. հնց.): Խոտորում՝ արկի կամ փամփուշտի շեղումը հարթությունից, որն անցնում է թնդանոթի կամ հրացանի փողի միջով: 2. (երկրբ.): Ջրաթեքում՝ գետի հիմնական հունից ջուրը կողմնային հունի մեջ ուղղելը՝ թեքելը:

ԴԵՐՄԱՏԻՆ [< дерматин < հուն. derma (dermatos) կաշի], գ. (խսկց.): Մաշկալաք՝ գործվածքեղենից պատրաստվող արհեստական կաշվի մի տեսակ:

ԴԵՐՄԱՏԻՏ [< дерматит < հուն. derma], գ. (բժշկ.): Մաշկի բորբոքում:

ԴԵՐՄԱՏՈ... [< дермато < հուն. derma (dermatos) կաշի] Բարդ բառերի բաղադրիչ, որը ցույց է տալիս դրանց կապը մաշկի, մաշկային հիվանդությունների հետ:

ԴԵՐՄԱՏՈԼՈԳԻԱ [< дерматология < դերմատո... + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Մաշկաբանություն՝ գիտություն մաշկի կառուցվածքի և ֆունկցիաների, ինչպես նաև մաշկային հիվանդությունների և դրանց բուժման մասին:

ԴԵՐՈԳԱՑԻԱ [< дерогация < լատ. derogatio], գ. (իրավ.): Հին օրենքի մասնակի արգելում, վերացում:

ԴԵՐՎԻՇ [< дервиш < պարսկ. därvīš չքավոր, մուրացկան], գ. (հնց.): Մահմեդական թափառական կրոնավոր՝ միստիկ, սուֆիզմի հետևորդ:

ԴԵՑԵՄՎԻՐՆԵՐ [< децемвиры < լատ. decemviri < decem տասը + viri այրեր, տղամարդիկ], գ. (պատմ.): Հատուկ պետական հանձնարարությամբ օժտված 10 հոգուց բաղկացած հանձնաժողովներ Հին Հռոմում:

ԴԵՑԻ... [< деци... < լատ. decem տասը] Բարդ բառերում հանդես է գալիս մեկ տասներորդ նշանակությամբ:

ԴԵՑԻԲԵԼ [< децибел < դեցի...+ անգլ. bel], գ. Բելի մեկ տասներորդ մասը: Նշանակվում է դբ:

ԴԵՑԻԳՐԱՄ [< дециграмм < դեցի...+ հուն. gramma], գ. Գրամի մեկ տասներորդ մասը: Նշանակվում է դգ:

ԴԵՑԻԼԻՏՐ [< децилитр < դեցի...+ հուն. litra], գ. Լիտրի մեկ տասներորդ մասը:

Նշանակվում է դլ:

ԴԵՑԻՄԱ [< децима < լատ. decima տասներորդ], գ. (երժշտ.): Դիատոնիկ շարքում որևէ աստիճանի և նրանից հաշված տասներորդ աստիճանի հարաբերությունը:

ԴԵՑԻՄԱՑԻԱ [< децимация < լատ. decimatio < decimus տասներորդ], գ. (պատմ.): 1. Հնում՝ 10-ից մեկի դատապարտումը մահվան վիճակահանության միջոցով: 2. Հետագայում՝ ամեն տասներորդի պատժումը մեղավորին չգտնելու դեպքում:

ԴԵՑԻՄԵՏՐ [< дециметр < դեցի...+ հուն. metron չափ], գ. Մետրի մեկ տասներորդ մասը: Նշանակվում է **դմ**:

ԴԵ ՖԱԿՏՈ [< де-факто < լատ. de facto փաստորեն], մկ. 1. (իրավք.): Փաստորեն՝ փաստական կերպով, իբրև փաստ: 2. Պետության կամ կառավարության ոչ լրիվ պաշտոնական ճանաչում, որին սովորաբար առաջնորդում է դե յուրեն:

ԴԵՖԵԿԱՑԻԱ [< дефекация < ֆր. défécation < լատ. defaecare մաքրել կեղտից], գ. 1. (տեխ.): Կեղտահանում, կեղտազերծում, զտում: 2. (բժշկ.): Կղկղում, արտաթորում:

ԴԵՖԵԿՏ [< дефект < լատ. defectus պակասություն], գ. (խսկց.): Թերություն՝ պակասություն, արատ:

ԴԵՖԵԿՏՈԼՈԳԻԱ [< дефектология < դեֆեկտ + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Գիտության բնագավառ, որն ուսումնասիրում է ֆիզիկական և հոգեկան պակասությամբ երեխաների զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, ուսուցման ու դաստիարակության հարցերը:

ԴԵՖԵԿՏՈՍԿՈՊ [< дефектоскоп < գերմ. Defektoskopie < լատ. defectus թերություն, արատ + հուն. skopeo դիտում եմ], գ. (տեխ.): Արատացույց (գործիք, սարքավորում):

ԴԵՖԵՆԶԻՎԱ [< дефензива < լատ. defendere ետ մղել], գ. (ռազմ.): Պաշտպանական մարտավարություն:

ԴԵՖԻՆԻՑԻԱ [< дефиниция < լատ. definitio], գ. (գիտ.): Սահմանում:

ԴԵՖԻՍ [< дефис < լատ. divisio բաժանում], գ. Միացման գծիկ, ենթամնա:

ԴԵՖԻՑԻՏ [< дефицит < լատ. deficit պակասում է], գ. (խսկց.): 1. Պակասուրդ, բացուրդ՝ ծախսերի գերազանցումը եկամուտներից: 2. Պասսիվի գերազանցում ակտիվի նկատմամբ: 3. Նյութական արժեքների պակաս: 4. Պակասություն՝ որևէ բանի պակաս, պակաս քանակով կամ չափով լինելը:

ԴԵՖԼԵԳՄԱՑԻԱ [< дефлегмация < դե...+ հուն. phlegma խոնավություն], գ. (քիմ.): Գազերի և գոլորշիների խառնուրդներից դժվարաեռ նյութերի անջատում:

ԴԵՖԼԵԿՏՈՐ [< дефлектор < լատ. deflecto խոտորում եմ, արտուղղում եմ], գ. (տեխ.): 1. Արտածգիչ սարք, որը դրվում է խողովակի (հանքահորի) արտաքին ծայրամասում, հիմնականում տարբեր շինություններից, ինչպես նաև երկաթուղային վագոններից կեղտոտված օդի արտածծման համար: 2. Մագնիսական կողմնացույցների շեղումները չափող ու դրանք վերացնող սարք:

ԴԵՖԼՈՐԱՑԻԱ [< дефлорация < գերմ. Defloration, ֆր. défloration < լատ.

defloratio], գ. (բժշկ.): Կուսությունից զրկում:

ԴԵՖԼՅԱՑԻԱ [< дефляция < ուշ լատ. deflatio դուրս փչելը], գ. (ֆին.): 1. Շրջանառությունից ավելորդ թղթադրամը հանելու միջոցով դրամական զանգվածի պակասեցում: 2. Գնանկում՝ գների ընդհանուր մակարդակի իջեցում, որը սովորաբար տեղի է ունենում գերարտադրության պայմաններում:

ԴԵՖՈԼԱՑԻԱ [< дефоляция < դե…+ լատ. folium տերև], գ. (բսբ.): Տերևազրկում՝ մեքենայացված բերքահավաքը հեշտացնելու նպատակով բույսերի տերևների հեռացումը արհեստական ճանապարհով՝ քիմիական նյութերով՝ դեֆոլիանտներով, որոնք առաջացնում են տերևների բնական ծերացմանը՝ տերևաթափին համանման գործընթացներ: Լայնորեն կիրառվում է բամբակագործության մեջ:

ԴԵՖՈԼՏ [< дефольт < անգլ. default < դե... + անգլ. fault], գ. 1. (քղք.): Պարտականությունների չկատարում: 2. (իրավք.): Դատարան չներկայանալը: 3. Ինչ-որ բանի պակասություն, բացակայություն: 4. (սպորտ.): Մրցումներից դուրս գալը:

ԴԵՖՈՐՄԱՑԻԱ [< деформация < լատ. deformatio աղավաղում], գ. (հնց.): Ձևախեղում՝ պինդ մարմնի ծավալի և ձևի զեղծումը, աղավաղումը արտաքին ազդեցության տակ՝ առանց զանգվածի փոփոխության: Ձևախեղման ձևերն են՝ ձգում, սեղմում, շեղում, պտտում, ճկում:

ԴԵՖՐՈՍՏԱՑԻԱ [< дефростация < դե…+ անգլ. frost սառնամանիք], գ. Սառեցված սննդամթերքի (միս, ձուկ ևն) հալեցնելը:

ԴԻ... [< gu... < հուն. di(s)...] Բարդ բառերի սկզբնամաս երկակի, կրկնակի իմաստով:

ԴԻԱԲԵՏ [< диабет < հուն. diabētēs], գ. (բժշկ.): Շաքարախտ՝ շաքարային հիվանդություն, որի ժամանակ մեզի հետ մեծ քանակությամբ շաքար է արտազատվում մարմնից, շաքարամիզություն, միզահյուծություն:

ԴԻԱԲԵՏԻԿ [< диабетик < հուն.], գ. (բժշկ.): Դիաբետով հիվանդ, շաքարախտավոր:

ԴԻԱԳԵՆԵԶ [< диагенез, диагенезис < հուն. dia... զատ, բաժան-բաժան... + genesis ծնունդ], գ. Ճնշման և ջերմաստիճանի ազդեցությամբ նստվածքներում կատարվող ֆիզիկաքիմիական, քիմիական և օրգանական փոփոխություններ, որոնց հետևանքով նստվածքը ենթարկվում է քարացման:

ԴԻԱԳՆՈԶ [< диагноз < հուն. diagnōsis որոշում, ճանաչում], գ. (խսկց.): 1. (բժշկ.): Ախտորոշում՝ բազմակողմանի հետազոտություն հիվանդության որոշումը: 2. *փխբ.* Եզրակացություն՝ կատարված եզրահանգումը: 3. *փխբ.* Կանխատեսում՝ եղած փաստերից՝ իրողություններից կատարման կանխագուշակում:

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ [< диагностика < հուն. diagnōstikos ճանաչել կարողանալը], գ. (բժշկ.): Ախտորոշաբանություն՝ բժշկության մի բաժինը, որը ուսումնասիրում է հիվանդությունների ախտանիշները և այն մեթոդներն ու սկզբունքները, որոնցով ախտորոշում է կատարվում:

ԴԻԱԳՈՆԱԼ [< диагональ < լատ. diagōnalis < հուն. diagōnios անկյունից անկյուն գնացող], գ. (խսկց.): 1. Շեղակի մակաշերտով ու խիտ գործվածքով կտոր: 2. (երկրն.): Ուղիղ գծի հատվածը, որը միացնում է բազմանկյան երկու անկյունների գագաթները, որոնք չեն պատկանում նույն կողի պատին, անկյունագիծ:

ԴԻԱԳՐԱՄ [< диаграмма < հուն. diagramma գծագիր], գ. (հնց.): Գծապատկեր՝ գծագրություն, որ սյունագծերով՝ գույներով՝ նկարներով ևն ցույց է տալիս որևէ կարգի մեծությունների հարաբերությունը, տրամագիր:

ԴԻԱԴԵՄԱ [< диадема < հուն. diadēma], գ. 1. Ականակուռ ապարոշ, ականախույր, արտախուրակ, աղամանդախույր, աղամանդե թագ: 2. Գոհարակուռ վարսակալ (բաց թագի ձևով):

ԴԻԱԴՈՐԱ [< Диадора < իտլ. Diadora], գ. (սպորտ.): Սպորտային մարզահագուստ և մարզագույք արտադրող իտալական ընկերություն:

ԴԻԱԴՈՔՈՍՆԵՐ [< диадохи < հուն. diadochos ժառանգորդ], գ. (պատմ.): Ալեքսանդր Մակեդոնացու մահից (մ.թ.ա. 323) հետո մակեդոնական ժառանգության համար պայքարող զորավարներ:

ԴԻԱԹԵԶ [< диатез < հուն. diathesis հակվածություն, նախատրամադրվածություն], գ. (բժշկ.): Օրգանիզմում նյութափոխանակության գործընթացների բնածին խանգարում:

ԴԻԱԹԵՐՄԻԱ [< диатермия < հուն. dia միջով + thermē տաքություն], գ. (բժշկ. տեխ.): Բարձր հաճախականության էլեկտրական հոսանքով մարմնի հյուսվածքների կամ օրգանների ջերմացում՝ տաքացում բուժական նպատակով, էնդոթերմիա:

ԴԻԱԼԵԿՏ [< диалект < հուն. dialektos], գ. (հնց.): Բարբառ՝ ընդհանուր լեզվի տարբերակը տվյալ վայրում:

ԴԻԱԼԵԿՏԱԼՈԳԻԱ [< диалектология < հուն. dialektos + logos գիտություն], գ. (լեզվբ. հնց.): Բարբառաբանություն, բարբառագիտություն՝ լեզվաբանության բաժին, որը զբաղվում է բարբառների քննությամբ:

ԴԻԱԼԵԿՏԻԿԱ [< диалектика < հուն. dialektikē], գ. 1. (փիլ.): Գիտություն բնության, մարդկային հասարակության և մտածողության շարժման ու զարգացման ընդհանուր օրենքների մասին: 2. Որևէ երևույթի շարժման, զարգացման ներքին գործընթացը:

ԴԻԱԼԻԶ [< диализ < հուն. dialysis բաժանում, քայքայում], գ. (մանգ.): Կիսաթափանցիկ թաղանթի միջոցով կոլոիդ համակարգերի և բարձրամոլեկուլային լուծույթների բաժանումը ցածրամոլեկուլային խառնուրդներից:

ԴԻԱԼՈԳ [< диалог < հուն. dialogos], գ. (հնց.): 1. Երկխոսություն՝ խոսակցություն երկու (կամ ավելի) անձերի միջև, զրույց: 2. Գրվածքի այն մասը՝ հատվածը, որ այդպիսի խոսակցություն է ներկայացնում: 3. (գրկն.): Զրույցի ձևով գրված գրական երկ:

ԴԻԱԽՐՈՆԻԱ [< диахрония < հուն. dia + chronos ժամանակ], գ. (լեզվբ.): Տարաժամանակություն՝ լեզվական երևույթների պատմական զարգացումը:

ԴԻԱՄԱԳՆԵՏԻԶՄ [< диамагнетизм < հուն. dia տարամիտում (ուժագծերի) + magnetis lithos Մագնեսիայի (քաղաք Փոքր Ասիայում) քար], գ. (ֆիզ.): Դիամագնիսականություն՝ մագնիսականության տեսակ, որը պայմանավորված է նյութում՝ արտաքին մագնիսական դաշտին հակառակ ուղղված մագնիսական դաշտի առաջացմամբ:

ԴԻԱՄԵՏՐ [< диаметр < հուն. diametros տրամագիծ], գ. (երկրչ.): 1. Տրամագիծ՝ ուղիղ գիծ, որն անցնում է շրջանի կենտրոնով և միացնում շրջանի երկու հակադիր կետերը: 2. Յուրաքանչյուր կլոր կամ կլոր թվացող առարկայի լայնությունը:

ԴԻԱՆԱ [< Диана < լատ. Diana], գ. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ որսորդության, լուսնի, բերքատվության, ծննդաբերության, վայրի գազաններին հովանավորող աստվածուհի. հին հունական դիցարանում համապատասխանում է Արտեմիսին:

ԴԻԱՆԵՏԻԿԱ [< дианетика < անգլ. dianetics < հուն. dianeō հաղթահարում եմ], գ. (գիտ.): Գիտության մարդու հոգեկան առողջության մասին. ուսումնասիրում է հոգեկան անառողջ վիճակի հաղթահարման մեթոդները:

ԴԻԱՊԱԶՈՆ [< диапазон < հուն. dia pasōn], գ. 1. (երժշտ.): Ձայնածավալ՝ ձայնի

կամ երաժշտական գործիքի հնչական ծավալը՝ ընդգրկումը: 2. *փխբ.* Մտահորիզոն՝ գիտելիքների՝ մտավոր հետաքրքրությունների շրջանակ՝ ծավալ:

ԴԻԱՊՈԶԻՏԻՎ [< диапозитив < հուն. dia միջով + լատ. positivus դրական], գ. (մանգ.): Գունավոր կամ սև-սպիտակ լուսանկարչական պոզիտիվ պատկերներ՝ թափանցիկ հիմքով (ապակի կամ թաղանթ): Այն դիտվում է լուսաշերտի դիմաց կամ էկրանի վրա պրոյեկտված հատուկ սարքերի միջոցով (դիապրոյեկտոր, դիասկոպ):

ԴԻԱՊՐՈՅԵԿՏՈՐ [< диапроектор < հուն. dia միջով + լատ. projector առաջ գցող], գ. (տեխ.): Դիաֆիլմեր ցուցադրող սարք:

ԴԻԱՍԿՈՊ [< диаскоп < հուն. dia + skopeō տեսնում եմ, քննում եմ], գ. Նույնն է՝ Դիապրոյեկտոր:

ԴԻԱՍՊՈՐԱ [< диаспора < հուն. diaspora ցրում], գ.: Սփյուռք՝ տվյալ ազգի որոշակի հատվածի՝ հայրենիքից դուրս ապրելը, գտնվելը, որն առաջանում է բռնագաղթման, եղեռնի վտանգի, սոցիալական ևն պատճառներով:

ԴԻԱՍՏԱԶ [< диастаз < հուն. diastasis բուժում, անջատում], գ. (քիմ.): Ամիլազներ՝ օսլան և գլիկոգենը հիդրոլիտիկ եղանակով ճեղքող ֆերմենտներ: Գիտությանը հայտնի առաջին ֆերմենտն է. հայտնաբերել է ռուս գիտնական Կ. Ս. Կիրխգոֆը (1814 թ.):

ԴԻԱՍՏՈԼԱ [< диастола < հուն. diastolē կծկում], գ. (բժշկ.): Սրտի կծկումի թողանք:

ԴԻԱՏՈՄԻՏ [< диатомит < հուն. diatomēa դիատոմային ջրիմուռներ], գ. (հնք.): Կիզելգուր՝ դիատոմային ջրիմուռներից կազմված նստվածքային ապար, սովորաբար փուխր կամ թույլ ցեմենտացած, բաց մոխրագույն կամ դեղին: Օգտագործվում է կերամիկայի, շինանյութերի ևն արտադրության մեջ:

ԴԻԱՏՈՆԻԿ [< диатонический < հուն. diatonikos անցում տոնից տոն], ած. (երաժշտ.): Տոնայնության հաջորդական աստիճանների՝ մեկից մյուսին անցնող (բարձրացող կամ իջնող):

ԴԻԱՐԵԱ [< диаррея < հուն. diarrheō հոսում եմ], գ. (բժշկ.): Փորլուծություն, անընդհատ լուծելը:

ԴԻԱՖԻԼՄ [< диафильм < հուն. dia միջով + անգլ. film ժապավեն], գ. (կինո.): Թեմատիկ ընդհանրություն ունեցող կամ (հազվադեպ) տարբեր պոզիտիվ պատկերներից կազմված կարճամետրաժ ֆիլմ:

ԴԻԱՖՈՆ [< диафон < հուն. dia + phōnē ձայն], գ. (տեխ.): Փարոսի վրա տեղադրված սարք՝ մառախուղի ժամանակ բարձր ձայնային ազդանշաններ տալու համար:

ԴԻԱՖՐԱԳՄԱ [< диафрагма < հուն. diaphragma միջնորմ], գ. 1. (կզմխս.): Կրծքի և որովայնի խոռոչներն իրարից բաժանող մկանային միջնապատը՝ թաղանթը: 2. (օպտ.): Օպտիկական համակարգերում (հեռադիտակ, մանրադիտակ, լուսանկարչական ապարատ ևն) լուսային փնջերը լայնական կտրվածքով սահմանափակող անթափանց արգելք, որի չափերը և դիրքը պայմանավորում են պատկերի լուսավորվածությունն ու որակը, տեսադաշտը և հարթության վրա պատկերող տարածության կորությունը: 3. (տեխ.): Խոսափողի մաս, որը ընդունում կամ արձակում է ձայնային ալիքներ: 4. Թաղանթ՝ որևէ բանի մակերեսին գոյացած բարակ շերտ կազմող ծածկույթ:

ԴԻԳԵՍՏՆԵՐ [< дигесты < լատ. digesta < digerere համակարգել], գ. (իրավք. պատմ): Բյուզանդական համակարգված իրավունքի հիմնական մաս, հետագայում ճանաչվել է որպես քաղաքացիական իրավունքի ժողովածու:

ԴԻԳԵՐՆԵՐ [< дигеры < անգլ. diggers փորողներ], գ. (պատմ.): XVII դարի անգլիական բուրժուական հեղափոխության դեմոկրատական շարժման ծայրահեղ ձախ թևի ներկայացուցիչներ: Հանդես են եկել մասնավոր սեփականության դեմ, պահանջել հավասար հողաբաժանում, մարդու շահագործման վերացում են: Ղեկավարն ու գաղափարախոսն է Ջ. Ուինստենլին:

ԴԻԳԻԹԱՅԶԵՐ [< дигитайзер < անգլ. digitizer < to digitize տվյալները թվայնացնել], գ. (հմկրգչ.): Համանման ազդանշանները թվայինի փոխարկիչ:

ԴԻԳԻՍԵՏ [< дигисет < գերմ. Digiset], գ. (տեխ.): Լուսաշարվածքային մեքենա՝ էլեկտրական հիշողության համակարգով:

ԴԻԳԻՏԱԼԻՍ [< дигиталис < լատ. digitale (digitalis) մատնոց], գ. (բսբ.): Մատնոցուկ՝ խուլածաղիկազգիների ընտանիքին պատկանող բույս, որն օգտագործվում է բժշկության մեջ:

ԴԻԳԼՈՍՍԻԱ [< диглоссия < հուն. di ... երկակի + glossa լեզու], գ. (լեզվբ.): Երկլեզվություն՝ հասարակության մեջ երկու լեզուների հավասարապես գործածությունը՝ կախված հաղորդակցման միջավայրից:

ԴԻԳՐԱՖ [< диграф < հուն. di... երկակի + graphē պատկեր], գ. (լեզվբ.): Երկու տառերի միակցություն. արտասանվում է որպես մեկ հնչյուն (օր.՝ ֆրանսերենի «ou» արտասանվում է [u]):

ԴԻԴԱԿՏԻԿԱ [< дидактика < հուն. didaktikos ուսուցանող], գ. (գիտ.): Մանկավարժության այն բաժինը, որ զբաղվում է ուսուցման բովանդակության, եղանակների ու ձևերի որոշումով:

ԴԻԵԶ [< диез < ֆր. dièse < հուն. diesis կիսատոն], գ. (երժշտ.): 1. Երաժշտական նշան, որ ցույց է տալիս ձայնի կես աստիճան բարձրացում: 2. ած. Կես աստիճանով բարձր:

ԴԻԵՏԱ [< диета < հուն. diaita կենսակերպ], գ. (խսկց.): Սննդակարգ, սննդառեժիմ՝ առողջ և հիվանդ մարդու սննդի կազմակերպման հատուկ ձև:

ԴԻԵՏԱԹԵՐԱՊԻԱ [< диетотерапия < հուն. diaita + therapeia խնամք, բուժում], գ. (բժշկ.): Դիետայով բուժելը, սննդաբուժում:

ԴԻԵՏԱԼՈԳԻԱ [< диеталогия < դիետա + հուն. logos գիտություն], գ. (բժշկ.): Դիետիկա՝ բժշկության բաժին, որը զբաղվում է հիվանդների սննդի կազմակերպման հարցերով:

ԴԻԶԱՅՆ [< дизайн < անգլ. design], գ. 1. Նախագիծ՝ կառույցի՝ շինվածքի՝ զգեստի են վերակառուցման և մշակման պլան: 2. Արտադրության մեջ արվեստի կիրառական դերի տեսությամբ ու պրակտիկայով զբաղվող ճյուղ:

ԴԻԶԱՅՆԵՐ [< дизайнер < անգլ. designer], գ. Դիզայնի մասնագետ:

ԴԻԶԱՐԹՐԻԱ [< дизартрия < ֆր. disarthrie < լատ. dis... անջատական, ժխտական իմաստ ունեցող ածանց + հուն. arthroō անդամահատում եմ], գ. (բժշկ.): Խոսքի խանգարում, որն արտահայտվում է առանձին բառերի, վանկերի, հնչյունների դժվար արտասանությամբ:

ԴԻԶԵԼ [< дизель < գերմ. ինժեներ Ռ. Դիզելի անունից], գ. (տեխ.): Ներքին այրման շարժիչ, որի վառելիքը բռնկվում է ուժեղ սեղմված օդի բարձր ջերմաստիճանից:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱ [< дизентерия < հուն. dysenteria < dys խանգարում + entron աղիք], գ. (բժշկ.): Թանչ՝ սուր վարակիչ հիվանդություն. արտահայտվում է արյունալուծությամբ:

ԴԻԶՅՈՒՆԿՑԻԱ [< дизъюнкция < լատ. disjunctio բաժանում], գ. (տրամբ.): Տրամաբանական գործողություն, բովանդակային մտածողության մեջ «կամ» շաղկապի օգտագործման ընդհանրացված արտահայտությունը:

ԴԻԶՈՍՄԻԱ [< дизосмия < հուն. dys + osmē հոտ], գ. (բժշկ.): Հոտառության խանգարում:

ԴԻԶՈՒՐԻԱ [< дизурия < հուն. dys + uron մեզ], գ. (բժշկ.): Միզելու խանգարում:

ԴԻԷԼԵԿՏՐԻԿ [< диэлектрик < հուն. dia միջով + անգլ. electric էլեկտրական], գ. (տեխ.): Էլեկտրական հոսանքի վատ հաղորդիչներ՝ մեկուսիչներ՝ ապակի, փայլար ևն: Տերմինը սահմանել է Մ. Ֆարադեյը:

ԴԻԼԱՏԱՏՈՐ [< дилататор < լատ.], գ. (բժշկ.): Ընդարձակող:

ԴԻԼԱՏԱՑԻԱ [< дилатация < լատ. dilatatio ընդարձակում], գ. (բժշկ.): Ընդարձակում, լայնացում:

ԴԻԼԱՏՈՄԵՏՐ [< дилатометр < լատ. dilato ընդարձակում եմ + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.): Ընդարձակաչափ, լայնաչափ՝ էլեկտրական և մագնիսական դաշտերի, իոնացնող ճառագայթումների կամ այլ գործոնների ազդեցությամբ մարմինների չափերի փոփոխությունները որոշող սարք:

ԴԻԼԱՏՈՄԵՏՐԻԱ [< дилатометрия < լատ.], գ. (գիտ.): Ֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է հեղուկի ծավալի կամ պինդ մարմնի գծային չափերի փոփոխության կախումը արտաքին պայմանների ազդեցությունից:

ԴԻԼԵՄԱ [< дилемма < հուն. di(s) կրկնակի+ lemma կանխատեսում], գ. 1. Երկսայրաբանություն՝ վիճակ՝ կացություն, որի մեջ երկու հնարավոր հակադրություններից յուրաքանչյուրի ընտրությունը հավասարապես դժվարին է ու ծանր: 2. Երկընտրանք՝ երկու (կամ ավելի) իրար բացառող հնարավորություններից՝ ելքերից՝ վճիռներից մեկն ընտրելու անհրաժեշտություն:

ԴԻԼԵՏԱՆՏ [< дилетант < իտալ. dilettante < լատ. delectare ժամանակ անցկացնող], գ. 1. (խսկց.): Սիրողական՝ առանց հատուկ պատրաստության՝ արվեստի կամ գիտության մակերեսային ծանոթությամբ որևէ ճյուղով իբրև սիրող զբաղվող մարդ: 2. *փխբ.* (հեգն.): Ոչ հմուտ՝ աղքատիկ գիտելիքներով մասնագետ:

ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄ [< дилетантизм < իտալ. dilettantisme < լատ.] գ. 1. Դիլետանտ լինելը: 2. Մակերեսային՝ հարևանցի տեղեկություններ և գիտելիքներ ունենալով՝ մի բանով զբաղվելը:

ԴԻԼԵՐ [< дилер < անգլ. dealer թվերի հետ խաղացող], գ. 1. Բորսայի գործավար՝ գործարքներ կատարող անձ, գործարքառու: 2. Խաղատներում՝ թղթախաղը վարող անձ:

ԴԻԼԻԺԱՆՍ [< дилижанс < ֆր. diligence], գ. (հնց.): Հանրակառք՝ բազմատեղ կառք՝ ուղևորներ և փոստ փոխադրելու համար:

ԴԻԼՈԳԻԱ [< дилогия < հուն. di(s) + logos ուսմունք], գ. Երկերգություն՝ 1. (պատմ.): Հին հունական թատրոնում դրամա՝ երկու գործողությամբ: 2. Ընդհանուր գաղափարով կապված երկու ստեղծագործություն:

ԴԻԽՈԳԱՄԻԱ [< дихогамия < հուն. dicha երկու մասի, առանձին + gamos ամուսնություն], գ. (բսբ.): Ծաղիկների փոշանոթների և սպիի ոչ միաժամանակյա հասունացում, որը կարևոր նշանակություն ունի խաչաձև փոշոտման համար: Առաջինը նկատել է Ա. Տ. Բոլոտովը (1780 թ.):

ԴԻԽՈՏՈՄԻԱ [< дихотомия < հուն. dichotomia < dicha երկու մասի + tomē ճեղքում, հատում], գ. (բսբ.): Երկճյուղում, երկճյուղավորում (բույսի):

ԴԻԿՏԱՏ [< диктат < գերմ. Diktat], գ. (քղք. իրավք.): 1. Միջազգային իրավունքում՝ մեկ տերության կողմից մի ուրիշ տերության հարկադրվող համաձայնություն՝ պայմանագիր՝ դաշինք: 2. Իր պայմանները թույլ տերության պարտադրելու քաղաքականություն:

ԴԻԿՏԱՏՈՐ [< диктатор < լատ. dictator], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ բարձրաստիճան պաշտոնյա, որ սենատի կողմից նշանակվում էր վտանգների դեպքում՝ ստանալով անսահմանափակ լիազորություններ և իրավունքներ: 2. Պետական իշխանությունը վարելու մեջ անսահմանափակ իրավունքներով օգտվող անձ՝ ղեկավար:

ԴԻԿՏԱՏՈՒՐԱ [< диктатура < լատ. dictatura], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ դիկտատորի լիազորությունները, իշխանությունը և դիկտատորության շրջանը: 2. Ոչ մի բանով չսահմանափակվող պետական իշխանություն, որ հենվում է տիրող դասակարգի ուժի վրա:

ԴԻԿՏՈՐ [< диктор < լատ. dictor խոսող], գ. (հնց.): Հաղորդավար՝ խոսափողի առջև ռադիո կամ հեռուստատեսային հաղորդման տեքստերը կարդացող մարդ:

ԴԻԿՏՈՖՈՆ [< диктофон < լատ. dictare թելադրել + հուն. phonē խոսք], գ. (տեխ.): Թելադրագիր, խոսագիր՝ հետագա լրիվ կամ մասնակի՝ հնչյունային-խոսքային ձևով վերարտադրության նպատակով իրազեկումը գրանցելու սարք, որը փոխարինում է սղագրությանը:

ԴԻԿՑԻԱ [< дикция < լատ. dictio արտասանություն], գ. (հնց.): Առոգանություն՝ ճիշտ՝ կանոնավոր շեշտադրությամբ ու ելևէջավորումներով բառերի, հնչյունների, վանկերի արտասանումը:

ԴԻՄԵԴՐՈԼ [< димедрол < լատ. Dimedrolum], գ. (դղգրծ.): Հակահիստամինային ակտիվ դեղանյութ: Վերացնում է հիստամինից առաջացած հարթ մկանների կծկումը, իջեցնում մազանոթների թափանցելիությունը, կանխում ալերգիկ ռեակցիան: Օժտված է նաև ընդհանուր հանգստացնող, հակաբորբոքային և սպազմոլիտիկ հատկություններով:

ԴԻՄԻՆՈՒԵՆԴՈ [< диминуэндо < իտալ. diminuendo փոքրացնելով, նվազեցնելով], գ. (երժշտ.): Ձայնի նվազեցում. Բարձր ձայնից աստիճանաբար ցածր ձայնի անցումը:

ԴԻՄՈՐՖԻԶՄ [< диморфизм < հուն. di(s) երկակի + morphē ձև], գ. (հնց.): Երկձևություն՝ 1. (կենսբ.): Միևնույն տեսակի օրգանիզմում երկու ձևերի առկայություն, որոնք տարբերվում են մորֆոֆիզիոլոգիական հատկանիշներով, սակայն ապրում են նույն վայրում: Սեռական դիմորֆիզմ: 2. (բսբ.): Բուսական միևնույն տեսակի գոյությունը երկու ձևով կամ բույսի մոտ միևնույն գործարանի երկու ձևով գոյությունը: Օր.՝ արինճի ծաղիկների դիմորֆիզմ: 3. (հնք.): Որոշ հանքերի երկու տարբեր բյուրեղային ձևերով գոյություն ունենալու հատկությունը:

ԴԻՆ [< дина < հուն. dynamis ուժ], գ. (ֆիզ.): Ուժի չափման միավոր մեխանիկայում: Ածանցյալ միավոր է և հավասար է այն ուժին, որը 1 գ զանգվածին հաղորդում է 1 սմ/վրկ^2 արագացում, 1 դն:

ԴԻՆԱՄԻԶՄ [< динамизм < հուն. dynamis], գ. 1. Շարժունություն, գործունություն: 2. (փիլ.): Իդեալիստական կեղծ պատկերացում, որի համաձայն ուժը դիտվում է որպես ինքնուրույն՝ մատերիայից անկախ և նույնիսկ նրան նախորդող ինքնակա սկզբունք: 3. *փխբ.* (գրկն.): Պատկերների՝ ապրումների՝ հույզերի ևն փոխհաջորդում, իրար արագորեն հաջորդող պատկերների ևն աշխույժ հերթագայություն:

ԴԻՆԱՄԻԿԱ [< динамика < հուն. dynamikos ուժային], գ. 1. (գիտ.): Մեխանիկայի մի բաժինը, որը ուսումնասիրում է մարմինների շարժման օրենքները՝ նրանց վրա ազդող ուժի ներգործությամբ: 2. *փխբ.* Կենդանություն, աշխուժություն, շարժում: 3. *փխբ.* Շարժման՝ զարգացման՝ փոփոխության ընթացքը՝ տեմպը:

ԴԻՆԱՄԻՏ [< динамит < հուն. dynamis], գ. (խսկց.): Ուժանակ՝ նիտրագլիցերինով պատրաստվող պայթուցիկ նյութ:

ԴԻՆԱՄՈ... [< динамо... < հուն. dynamis] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց կապը ուժի, էներգիայի հետ:

ԴԻՆԱՄՈԳՐԱՖ [< динамограф < դինամո...+ հուն. graphō գրում եմ], գ. (ֆիզ.): Ուժաչափ՝ ուժի չափանիշների ավտոմատ գրանցման համակարգով:

ԴԻՆԱՄՈՄԵՏՐ [< динамометр < դինամո...+ հուն. metreō չափում եմ], գ. (ֆիզ.): Ուժաչափ՝ մեքենական ուժի չափման գործիք:

ԴԻՆԱՄՈՄԵՏՐԻԱ [< динамометрия < հուն.], գ. Ուժաչափություն ՝ մեքենական ուժի չափում:

ԴԻՆԱՄՈՄԵՔԵՆԱ [< динамомашина < հուն.], գ. (տեխ.): Ուժամեքենա՝ էլեկտրական գեներատորի հնացած անվանումը:

ԴԻՆԱՍՏԻԱ [< династия < հուն. dynasteia], գ. Միևնույն տոհմի՝ արյունակցական ու ժառանգական իրավունքով իրար հաջորդող ինքնակալների շարքը և նրանց տիրապետության ժամանակաշրջանը, հարստություն:

ԴԻՆԱՐ [< динар < լատ. denarius < հռոմեական արծաթադրամի անվանումից], գ. (ֆին.): Դրամական միավոր. տարածված էր Մերձավոր Արևելքի մահմեդական երկրներում: Ներկայումս դրամական միավոր է Հնդկաստանում, Իրաքում, Թունիսում, Քուվեյթում և մանրադրամ Իրանում:

ԴԻՆԳՈ [динго < անգլ. dingo < ավստրալ.], գ. (կենդբ.): Ավստրալիական վայրի շուն:

ԴԻՆՈ... ԴԵՅՆՈ... [< дино..., дейно... < հուն. dinos, deinos ահարկու, սարսափելի, զարմանալի] Բարդ բառերի սկզբնամաս, որով կազմվում են հնէաբանական տերմիններ՝ անհետացած հսկա կենդանիներ անվանելու համար:

ԴԻՆՈԶԱՎՐ [< динозавр < հուն. deinos անսովոր, սարսափելի + sauros մողես], գ. (հնէաբ.): Անհետացած հսկայամարմին սողունների ցեղ, որ ապրել է մեզոզոյան դարաշրջանում: Երկարությունը հասել է 26 մ: Մեծ մասամբ ունեցել են փոքր գլուխ, երկար պարանոց, պոչ, լավ զարգացած կոնքոսկր և հետին վերջավորություններ:

ԴԻՆՈԹԵՐԻԱ [< динотерий < դինո... + therion գազան], գ. (հնէաբ.): Մինչև կայնոզոյան դարաշրջանի երկրորդ կեսը գոյություն ունեցած կնճիթավոր կենդանի՝ դեպի ներքև ձգված ժանիքներով:

ԴԻՆՈԿ(Ց)ԵՖԱԼ [< диноцефал, дейноцефал < դինո... + kephalē գլուխ], գ. (հնէաբ.): Պալեոզոյան դարաշրջանի ողնաշարավոր կենդանի:

ԴԻՆՈՐՆԻՍ [< динорнис < դինո... + հուն. ornis թռչուն], գ. (հնէաբ.): 3 մ-անոց հսկա վազող թռչուն Նոր Զելանդիայում (մինչև XIX դարի սկիզբը):

ԴԻՈԴ [< диод < հուն. di(s) երկակի + (էլեկտր) ոդ], գ. (գիտ.): Էլեկտրական հոսանքի միակողմ հաղորդականությամբ էլեկտրավակուումային, իոնային (գազապարպիչային) կամ կիսահաղորդչային երկէլեկտրոդ սարք:

ԴԻՈՆԻՍՈՍ [< Дионис < հուն. Dionysos], գ. (դից.): Խաղողագործության, գինեգործության, ուրախության հովանավորը հին հունական դիցարանում, նաև Բաքոս:

ԴԻՈՊՍԻԴ [< диопсид < հուն. di(s) + opis տեսակ], գ. (հնք.): Ապար կազմող

միներալ, սիլիկատ մոնոկլինային պիրոքսինների խմբից:

ԴԻՈՐԱՄԱ [< диорама < հուն. dia տրամ… մասնիկ (միջով) + horama տեսք], գ. Տրամապատկեր՝ 1. (գեղն.): Գեղանկարչության տեսակ, երբ պատկերը ստեղծվում է լուսաթափանցիկ, հատուկ լուսավորվող նյութի վրա: 2. Ժամանակակից իմաստով՝ գեղանկարչության տեսակ, երբ կտրվածքում կիսաշրջանաձև ենթաշրջանակի ներսակողմում ձգված ժապավենակերպ նկարը համադրվում է նրա առջև տեղադրված «առարկայական» պլանի հետ (շինծու և իրական առարկաներ, կառույցներ են):

ԴԻՈՐԻՏ [< диорит < ֆր. diorite < հուն. diorizō անջատում եմ], գ. (հնք.): Մագմատիկ ապար, կազմված պլագիոկլազից (անդեզին կամ օլիգոկլազ), եղջրախաբից, հազվադեպ՝ ավգիտից և բիոտիտից, երբեմն առկա է քվարց:

ԴԻՊԼՈՄ [< диплом < ֆր. diplôme < հուն. diplōma երկտակ փաստաթուղթ], գ.: 1. Բարձրագույն կամ մասնագիտական միջնակարգ ուսումնական հաստատության ավարտման վկայական: 2. Գիտական կամ այլ կարգի կոչում՝ աստիճան շնորհելու, ինչպես և կառավարական պարգևատրումների վկայական, վկայագիր: 3. (խսկց.): Դիպլոմային աշխատանք:

ԴԻՊԼՈՄԱՆՏ [< дипломант < հուն. diplōma], գ. 1. Դիպլոմավոր՝ որևէ դիպլոմ ունեցող կամ ձեռք բերող՝ ստացող: 2. Դիպլոմային աշխատանք գրող ուսանող:

ԴԻՊԼՈՄԱՏ [< дипломат < ֆր. diplomate < հուն. diplōma], գ. 1. Դիվանագետ՝ կառավարության կողմից լիազորված պաշտոնական անձ՝ ուրիշ տերությունների հետ դիվանագիտական հարաբերություններ վարելու համար: 2. *փխբ.* Վարպետ՝ խորամանկ ու ծայրահեղորեն զգուշավոր մարդ, քաղաքագետ:

ԴԻՊԼՈՄԱՏԻԱ [< дипломатия < ֆր. diplomatie], գ. (հնց.): Դիվանագիտություն՝ 1. Կառավարության գործունեությունը պետության արտաքին՝ միջազգային հարաբերությունների բնագավառում: 2. *փխբ.* Նրբամիտ հաշիվներով ու հնարագիտությամբ որևէ նպատակի հասնելու հնարքների ու գործողությունների ամբողջությունը: 3. *փխբ.* Դիվանագետի արարք, վարքագիծ:

ԴԻՊԼՈՄԱՏԻԿԱ [< дипломатика < ֆր. diplomatique < հուն. diplōma], գ. Վավերագրագիտություն՝ դիվանաբանություն՝ վավերագրաբանություն. վավերագրերի ձևը և բովանդակությունն ուսումնասիրող պատմական օժանդակ գիտաճյուղ:

ԴԻՊԼՈՊԻԱ [< диплопия < ֆր. diplopie < հուն. diploos երկակի + ōps աչք, հայացք], գ. (բժշկ.): Տեսողության խանգարման տարատեսակ, երբ առարկաները երկու հատ են երևում):

ԴԻՊՈԼ [< диполь < հուն. di(s) + polos բևեռ], գ. 1. (էլեկտր.): Իրարից որոշ հեռավորության վրա գտնվող և բացարձակ մեծություններով հավասար երկու տարաբնույն կետային լիցքերի համակարգ: 2. Մագնիսական, բացարձակ մեծություններով հավասար երկու տարանման «մագնիսական լիցքերի» համակարգ:

ԴԻՊՍՈՄԱՆԻԱ [< дипсомания < հուն. dipsa ծարավ + mania կիրք, ձգտում], գ. (բժշկ.): Ալկոհոլ օգտագործելու կրքի՝ ցանկության պարբերական առաջացում, ձգտում:

ԴԻՊՏԱՆԿ [< диптанк < անգլ. deeptank < deep խորը + tank տարա], գ. (ծով.): Հեղուկի տեղափոխման համար նախատեսված հսկայական տարա նավերի վրա:

ԴԻՊՏԵՐՈԼՈԳԻԱ [< диптерология < հուն. di(s) + pteron թև + logos գիտություն], գ. (գիտ.): Միջատաբանության բաժին, որն ուսումնասիրում է դիպտերները [

диптеры < հուն.]՝ երկթևանի միջատները, ինչպիսիք են՝ ճանճերը, մոծակները են:

ԴԻՊՏԻԽ [< диптих < հուն. diptychos երկտակ], գ. (պատմ.): 1. Հին Հունաստանում և Հռոմում նշագրումների երկու մոմապատ տախտակ: 2. Երկպատկեր՝ երկփեղկ գեղանկար կամ ռելիեֆ՝ ծալովի սրբապատկերով: 3. Ընդհանուր գաղափարով կապված արվեստի ստեղծագործություն՝ բաղկացած երկու պատկերից:

ԴԻՋԵՅ [< диджей < անգլ. DJ < disk jockey], գ. Երաժշտական հաղորդումներ վարող անձ (հեռուստատեսությամբ, ռադիոյով են):

ԴԻՍ..., ԴԻԶ... [< дис..., диз... < լատ. dis < հուն. dys] Նախածանց՝ ժխտման, բաժանման, անջատման և այլ նշանակություններով:

ԴԻՍԲԱԼԱՆՍ [< дисбаланс < ֆր. disbalance], գ. Բալանսի՝ հաշվեկշռի կորուստ՝ վերացում, անհավասարակշռություն:

ԴԻՍԵՐՏԱՆՏ [< диссертант < լատ. dissertans (dissertantis) քննող], գ. Ատենախոսություն գրող և պաշտպանող գիտնական, ատենախոս:

ԴԻՍԵՐՏԱՑԻԱ [< диссертация < լատ. dissertatio հետազոտում, դատողություն], գ. (խսկց.): Գիտական թեզ՝ գիտական աշխատանք, որ հրապարակային պաշտպանության է ներկայացվում և պաշտպանվում՝ գիտական աստիճան ստանալու նպատակով, ատենախոսություն:

ԴԻՍԵՐՏԱՑԻՈՆ [< диссертационный < լատ.], ած. (խսկց.): Ատենախոսությանը հատուկ՝ վերաբերող, ատենախոսության համար նախատեսված, ատենախոսություն հանդիսացող:

ԴԻՍԹԻՄԻԱ [< дистимия < գերմ. Disthymie < դիս... + հուն. thymos հոգի, զգացմունք, տրամադրություն], գ. (բժշկ.): Ճնշված՝ ընկած տրամադրություն, ընկճվածություն, տխուր լինելը:

ԴԻՍԻԴԵՆՏ [< диссидент < լատ. dissidens (dissidentis) չհամաձայնվող, հակասող], գ. (քղք.): Այլախոհ՝ այլ կերպ մտածող անձ:

ԴԻՍԻՄԻԼՅԱՏԻՎ [< диссимилятивный < լատ.], ած. 1. (լեզվբ.): Տարնմանական: 2. (կենսբ.): Տարրալուծական:

ԴԻՍԻՄԻԼՅԱՑԻԱ [< диссимиляция < լատ. dissimilatio], գ. 1. (լեզվբ.): Տարնմանություն՝ հնչյունափոխական երևույթ, երբ բառի երկու միանման հնչյուններից մեկը փոխարկվում՝ վեր է ածվում մի այլ հնչյունի (օր.՝ շունչ-սունչ): 2. (կենսբ.): Տարրալուծում՝ օրգանիզմի կենսական գործունեության ընթացքում օրգանական բարդ նյութերի քայքայում:

ԴԻՍԻՄԻԼՅԱՑԻՈՆ, Նույնն է՝ Դիսիմիլյատիվ:

ԴԻՍԼՈԿԱՑԻԱ [< дислокация < ֆր. dislocation], գ. 1. (ռազմ.): Տեղաբաշխում՝ որոշ կարգով բաշխել՝ բաժանել ըստ տեղերի, ըստ անհրաժեշտության տեղադրել, օր.՝ զորքերը և ռազմական կառույցները: 2. Ամեն մեկի համար տեղ գտնել, տեղավորել: 3. Շատ տեղերի միջև բաժանել՝ բաշխել: 4. (երկրբ.): Երկրագնդի կեղևի տարաշեղում, տեղախախտում: 5. (բժշկ.): Հոդի, ոսկրի տեղաշարժում, հոդախախտություն:

ԴԻՍԿ [< диск < հուն. diskos սկավառակ], գ.: Սկավառակ՝ 1. (խսկց.) Տափակ, հարթ մակերեսով իր, որն օգտագործվում է երաժշտություն ներկայացնելու համար: 2. (սպորտ.): Բոլորաձև մետաղյա տափակ բոլորակ՝ նետելու համար: 3. Արևի՝ լուսնի՝ մոլորակներից երկրից տեսանելի շրջանաձև մակերեսը՝ բոլորակը: 4. (կենսբ.): Թռչունների ձվի դեղնուցի վրա գտնվող սաղմնային բիծը: 5. (տեխ.): Մանվածքի սկավառակաձև ծաղկաբույլ:

ԴԻՍԿԱՆՏ [< дискант < ուշ լատ. discantus], գ. (երժշտ.): Մանկական բարձր ձայն. հավասար է կանացի սոպրանոյին:

ԴԻՍԿԵՏ [< дискета < անգլ. disk < հուն.], գ. Տեղեկատվություն կրող համակարգչային սկավառակ, պնակիտ: Լինում է երկու տեսակ՝ ճկուն (floppy) և կոշտ (hard):

ԴԻՍԿԺՈԿ(Ք)ԵՅ [< диск-жокей < անգլ. disk-jockey], գ. (մսնգ.): Անձ, որը վարում է դիսկոտեկայի ծրագիրը:

ԴԻՍԿՈԲՈԼ [< дискобол < ֆր. discobole < հուն. diskobolos < diskos սկավառակ + bolē նետում], գ. (սպորտ.): Սկավառակ նետող մարզիկ, սկավառակաձիգ, սկավառականետորդ:

ԴԻՍԿՈՄՖՈՐՏ [< дискомфорт < անգլ. discomfort], գ. (խսկց.): Անհարմարություն, շփոթություն, անհարմարավետություն (հատկապես մարդու ներքին, հոգեկան վիճակի վերաբերյալ):

ԴԻՍԿՈՆՏ [< дисконт < անգլ. discont], գ. (ֆին.): 1. Մուրհակի զեղչում: 2. Մուրհակի զեչման ժամանակ բանկային տոկոսի ձեռքբերումը, զեղչադրույք: 3. Ապրանքի, տարադրամի ևն գնի իջեցումը:

ԴԻՍԿՈՏԵԿ [< дискотека < հուն. diskos սկավառակ + thēkē պահեստ], գ. 1. Երաժշտական սկավառակների հավաքածու: 2. Երաժշտական երիտասարդական ակումբ՝ պարատուն:

ԴԻՍԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱ [< дисквалификация < գերմ. Disqualification, անգլ. disqualification < դիս... + կվալիֆիկացիա], գ. 1. Ապավորակում: 2. (սպորտ.): Որակազրկում:

ԴԻՍԿՐԵԴԻՏԱՑԻԱ [< дискредитация < ֆր. discreditation < դիս... + լատ. credō հավատում եմ], գ. (խսկց.): Վարկաբեկում, վարկաբեկելը:

ԴԻՍԿՐԵՑԻԱ [< дискреция < լատ. discretio], գ. (քղք.): Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի կողմից որևէ հարցի լուծումը սեփական նախաձեռնությամբ:

ԴԻՍԿՐԻՄԻՆԱՆՏ [< дискриминант < լատ. discriminans (discriminantis) անջատող, տարբերող], գ. (մաթ.): Հանրահաշվական որոշակի տեսակի հավասարման արտահայտությունն է, որտեղ xi-երը հավասարման արմատներն են:

ԴԻՍԿՐԻՄԻՆԱՑԻԱ [< дискриминация < լատ. discriminatio], գ. (հնց.): 1. Խտրականություն՝ իրավունքների անհավասարություն ըստ ազգային՝ ռասայական կամ այլ տարբերությունների: 2. Ոչ միատեսակ վերաբերմունք իրավական

տեսակետից հավասար մարդկանց նկատմամբ:

ԴԻՍԿՈՒՍԻԱ [< дискуссия < լատ. discussio], գ. (խսկց.): Բանավեճ՝ գրավոր կամ բանավոր հրապարակային քննարկում՝ մտքերի փոխանակություն որևէ խնդրի մասին (գիտական, քաղաքական, գրական ևն):

ԴԻՍԿՈՒՍԻՈՆ [< дискуссионный < լատ.], ած. Բանավիճական:

ԴԻՍԿՈՒՐՍ [< дискурс < ֆր. discours < անգլ. discourse < լատ. discursus զրույց], գ. (լեզվբ.): Խոսույթ՝ իրադրական խոսք, որը դիտվում է իր իրացման պայմանների ամբողջության մեջ:

ԴԻՍՀԱՐՄՈՆԻԱ [< дисгармония < գերմ. Disharmonie < դիս... + հարմոնիա], գ. 1. (երժշտ.): Հնչյունների աններդաշնակություն: 2. *փխբ.* Տարաձայնություն, անհամաձայնություն, աններդաշնակություն:

ԴԻՍՄԵՆՈՐԵԱ [< дисменорея < ֆր. dysmenorrhée < դիս... + հուն. mēn ամիս + rheō հոսում եմ], գ. (բժշկ.): Դաշտանի՝ ամսականի խախտում, որն ուղեկցվում է ցավով, տկարությամբ, սրտխառնոցով:

ԴԻՄՆԵՅԼԵՆԴ [< диснейленд < ամերիկյան կինոռեժիսոր Ու. Դիսնեյի (Disney) անունից + անգլ. land հող, երկիր], գ. Զբոսայգի, որ բացել է Ու. Դիսնեյը 1955 թ. Անահայմ (Կալիֆոռնիա) քաղաքում, որտեղ տեխնիկական ատրակցիոնները վերարտադրում են մուլտիպլիկացիոն կինոնկարների կերպարները:

ԴԻՍՈՆԱՆՍ [< диссонанс < ֆր. dissonance < լատ. dissonans տարահունչ], գ. Ապադաշնույթ՝ 1. Ներդաշնակության խախտում, ձայների՝ հնչյունների աններդաշնակ համակցություն: 2. Ներդաշնակությունը խախտող ձայն՝ հնչյուն՝ հանգամանք: 3. *փխբ.* Աններդաշնակություն, անհամերաշխություն, հակասություն:

ԴԻՍՈՑՈՒՄ [< диссоциация < լատ. dissociatio բաժանում, տրոհում], գ. 1. (քիմ.): Մոլեկուլների տրոհումը ավելի պարզ մասնիկների՝ մոլեկուլների, ատոմների, ռադիկալների կամ իոնների: Տարբերում են ջերմային, էլեկտրոլիտային, լուսաքիմիական դիսոցումներ: 2. (հոգեբ.): Հոգեկան երևույթների կապակցվածության խախտում:

ԴԻՍՊԱՆՍԵՐ [< диспансер < ֆր. dispensaire < dispenser ազատել], գ. (բժշկ.): Բժշկական հիմնարկ, որն զբաղվում է հիվանդությունների բուժումով ու կանխումով՝ մշտական բժշկական հսկողության միջոցով:

ԴԻՍՊԱՇԱ [< диспаша < ֆր. dispache], գ. Վնասահարդար՝ հատուկ փաստաթուղթ, որը սահմանում է նավի ընդհանուր վթարի առկայությունը, ինչպես նաև վնասները հաշվարկելու և չվերթի կազմակերպիչների (բեռնատեր, նավատեր, վարձակալ) միջև բաշխելու կարգը: Դիսպաշան կազմելու տեղը և կարգը նշվում է նավաբեռնագրում:

ԴԻՍՊԱՇԵՐ [< диспашер < ֆր. dispacheur], գ. Դիսպաշա իրականացնող պաշտոնական փորձագետ:

ԴԻՍՊԱՉ [< диспач < անգլ. dispatch արագություն], գ. Նավատիրոջ կողմից բեռնատիրոջը (վարձակալին) վճարված պարգևատրում՝ վերջինիս կողմից նավի բեռնումն ու բեռնաթափումը ժամկետից շուտ կատարելու համար: Դիսպաշան կազմելու տեղը և կարգը նշվում է նավաբեռնագրում:

ԴԻՍՊԵՊՍԻԱ [< диспепсия < հուն. dyspepsia], գ. (բժշկ.): Մարսողության խանգարում:

ԴԻՍՊԵՏՉԵՐ [< диспетчер < անգլ. dispatcher], գ. (խսկց.): Կարգավար՝ 1. (տրանս.): Տրանսպորտի երթևեկությունը որևէ կենտրոնական կետից կարգավորող պաշտոնյա: 2. (արտդր.): Ձեռնարկության աշխատանքային գործընթացը

մեկ կենտրոնական կետից կարգավորող պաշտոնյա:

ԴԻՍՊԵՐՍԻԱ [< дисперсия < լատ. dispersus ցրված], գ. (ֆիզ.): Ցրվածք՝ ցրում, տարրալուծում (լույսի), տարաբաժանում, տարամիտում (տարբեր գույնի լուսաճառագայթների):

ԴԻՍՊՈԶԻՑԻԱ I [< диспозиция < լատ. dispositio տեղաբաշխում], գ. (ռազմ. հնց.): Զորքի դիրքավորում, զորադասավորում մարտի համար:

ԴԻՍՊՈԶԻՑԻԱ II [< диспозиция < լատ. disposito բաշխում, բաժանում], գ. (իրավք.): Իրավաբանական նորմայի մասը, որը պարունակում է որոշակի կարգադրություն, արգելք:

ԴԻՍՊՐՈԶԻՈՒՄ [< диспрозий < հուն. disprositos դժվարհասանելի], գ. Dy, պարբերական համակարգի III խմբի քիմիական տարր: Լանթանիդ է, պատկանում է հազվագյուտ հողային տարրերի խմբին:

ԴԻՍՊՐՈՊՈՐՑԻԱ [< диспропорция < ֆր. disproportion < դիս... + պրոպորցիա], գ. (խսկց.): Անհամամասնություն, անհամաչափություն:

ԴԻՍՊՈՒՏ [< диспут < լատ. disputare քննել, վիճել], գ. (խսկց.): Բանավեճ՝ քննարկում՝ հրապարակային բանավոր վեճ՝ մտքերի փոխանակություն գիտական՝ գրական ևն հարցերի մասին:

ԴԻՍՍԻՄԻԼՅԱՑԻԱ [< диссимиляция < գերմ. Dissimilation < լատ. dissimilatio բաժանում, ցրում, տարածում], գ. 1. (կենսբ.): Քայքայում (բարդ օրգանական նյութերի): 2. (լեզվբ.): Տարնմանում, տարնմանություն:

ԴԻՍՍԻՄՈՒԼՅԱՑԻԱ [< диссимуляция < գերմ. Dissimulation < լատ. dissimulatio թաքցնելը], գ. (բժշկ.): Կեղծելով թաքցնելը (հիվանդության):

ԴԻՍՍՈՑԻԱՑԻԱ [< диссоциация < լատ. dissociatio բաժանում], **գ.** 1. (քիմ.): Տարրաբաժանում: 2. (բժշկ.): Փեղեկում, մտացրում (հոգեկան խախտում):

ԴԻՍՏԱՆՑԻԱ [< дистанция < լատ. distantia], գ. (հնց.): 1. Հեռավորություն՝ հեռավոր լինելը: 2. Երկու առարկայի՝ կետի՝ վայրի միջև եղած տարածությունը: 3. Երկու ժամանակակետեր միմյանցից բաժանող միջոցը, ժամանակամիջոց: 4. Հեռավոր կետ՝ վայր՝ տարածություն:

ԴԻՍՏ(Թ)ԻԼՅԱՑԻԱ [< дистилляция < ֆր. distillation < լատ. distillatio կաթելը, կաթկթելը, քամվելը], գ. (քիմ. տեխ.): Թորում, զտում:

ԴԻՍՏԻՔՈՍ [< дистих < հուն. distichon], գ. (տղչփ.): Երկտող՝ երկու տողերից բաղկացած բանաստեղծություն:

ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐ [< дистрибютор < անգլ. distributor], գ. 1. (առևտր.): Բաշխիչ՝ անձ՝ խանութ, որը, ձեռք բերելով մեծաքանակ ապրանքներ, առաքում, բաժանում է այլ խանութների: 2. (տեխ.): Գազի՝ էլեկտրահոսանքի՝ գոլորշու ևն բացթողումը, ներմուծումն ու արտածումը կարգավորող սարած շարժիչների՝ մեքենաների ևն մեջ: 3. (էլեկտր.): Բաշխասարք՝ բաշխիչ սարք՝ էլեկտրական հոսանքի հաղորդումը՝ առաքումը կարգավորելու համար:

ԴԻՍՏՐՈՖԻԱ [< дистрофия < դիս…+ հուն. trophē սնունդ], գ. (բժշկ.): Սննդախանգարում՝ հյուսվածքների և օրգանների սնման խախտում նյութափոխանակության խանգարման պատճառով. ընկած է շատ հիվանդությունների զարգացման հիմքում:

ԴԻՍՑԻՊԼԻՆ [< дисциплина < լատ.], գ. (հնց.): 1. Գիտակարգ՝ գիտության ճյուղ, բնագավառ: 2. Ուսումնական առարկա:

ԴԻՍՑԻՊԼԻՆԱ [< дисциплина < լատ. disciplina], գ. (խսկց.): 1. Կարգապահություն՝ սահմանված կարգ ու կանոն, որին ենթարկվելը պարտադիր է տվյալ խմբի

(հիմնարկի, կազմակերպության ևն) բոլոր անդամների համար: 2. Խիստ կարգի սովորություն՝ հետևողություն:

ԴԻՍՑԻՊԼԻՆԱՐ [< дисциплинарный < լատ.], ած. Կարգապահական, կարգապահությանը հատուկ՝ վերաբերող:

ԴԻՍՓԼԵՅ [< дисплей < անգլ. display ցույց տալ], գ. Համակարգչի մաս, որի էկրանին գրվում՝ երևում է համակարգչի կատարած աշխատանքը՝ նրա կուտակած տեղեկատվությունը, էկրան:

ԴԻՍՓՆՈԵ [< диспноэ < դիս... + հուն. pnoē շնչառություն], գ. (բժշկ.): Շնչարգելում, շնչառության դժվարացում:

ԴԻՍՖԱԳԻԱ [< дисфагия < դիս…+ հուն. phagos խժռող], գ. (բժշկ.): Սննդի ընդունման՝ կուլ տալու գործունեության խանգարում՝ պայմանավորված օրգանական և ֆունկցիոնալ երևույթներով:

ԴԻՍՖՈՐԻԱ [< дисфория < դիս…+ հուն. pherō տանում եմ], գ. (բժշկ.): Տրամադրության վատացում՝ ընկճվածություն, տխրություն ևն, որն ուղեկցվում է ջղագրգիռ վիճակով. հատուկ է որոշ հոգեկան հիվանդությունների և ալկոհոլամոլությանը:

ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱ [< дисфункция < դիս…+ լատ. functio], գ. (կենսբ.): Որևէ օրգանի, համակարգի գործունեության խախտում՝ հատկապես որակական բնույթի:

ԴԻՎԱՆ I [< диван < պարս. divan գրասենյակ, ատենատուն, սկզբնական նշանակությունը՝ թուղթ, գիր, գիրք], գ. 1. (պատմ.): Թուրքական սուլթանի խորհուրդը, որի մեջ եղել են մեծ վեզիրը, մահմեդական հոգևորականության առաջնորդը և բարձրաստիճան այլ անձինք: 2. Այժմ մահմեդական Արևելքի մի շարք երկրներում վարչական և դատական հաստատություններ:

ԴԻՎԱՆ II [< диван < պարսկ.], գ. (գրկն.): Արևելյան բանաստեղծների քնարական ստեղծագործությունների ժողովածու:

ԴԻՎԱՆ III [< диван < ֆր. divan անկողին < պարսկ.], գ. (խսկց.): Փափուկ մեծ բազմոց՝ նստելու և պառկելու համար:

ԴԻՎԵՐԳԵՆՑԻԱ [< дивергенция < լատ. divergentia տարամիտում, անջատում], գ. 1. (կենսբ.): Էվոլյուցիայի ընթացքում օրգանիզմների հատկանիշների տարամիտում: Այս երևույթը բացահայտել է Չ. Դարվինը՝ բացատրելով մշակովի բույսերի բազմաթիվ տեսակների, ընտանի կենդանիների տեսակների, ինչպես նաև բնության մեջ գոյություն ունեցող կենսաբանական տարբեր ձևերի առաջացումը: 2. (մաթ.): Տարամիտություն. տվյալ կետը շրջապատող մակերևույթի միջով կատարվող վեկտորական դաշտի հոսքի և այդ մակերևույթով սահմանափակված ծավալի հարաբերության սահմանն է, երբ մակերևույթը կծկվում է կետի շուրջը: 3. (լեզվբ.): Տարամիտում, տարաճում՝ պատմական հնչյունափոխության մի դրսևորումն է. մեկ հնչյունի վերածումը ինքնուրույն տարրերի՝ սրանց վերաարժեքավորումով, հնչույթավորումով: Օր.՝ հնդեվրոպական l > լ. ղ. (ջիլ // ջիղ):

ԴԻՎԵՐՍԱՆՏ [< диверсант < լատ.], գ. (ռազմ.): Դիվերսիա կատարող անձ, վնասագործ, խափանարար:

ԴԻՎԵՐՍԻԱ [< диверсия < լատ. diversio շեղում], գ. 1. (ռազմ.): Ռազմական կողմնակի գործողություն՝ թշնամու ուշադրությունը գլխավոր հարվածի ռազմաբեմից հեռացնելու նպատակով: 2. Ռազմական և արդյունաբերական կարևոր օբյեկտների պայթեցում՝ հրկիզում՝ ավերում ևն ներքին թշնամիների կամ ուրիշ պետությունների գործակալների կողմից, խափանարարություն:

ԴԻՎԵՐՍԻՈՆ [< диверсионный < լատ.], ած. (ռազմ.): Դիվերսիային հատուկ՝ վերաբերող, դիվերսիայի բնույթ կրող, դիվերսիայի ձգտող:

ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱ [< диверсификация < լատ. diversus տարբեր + facere ա-նել], գ. (տնտսգ.): Բազմազանեցում, բազմակողմանի զարգացում, բազմատեսակացում:

ԴԻՎԵՐՏԻՍՄԵՆՏ [< дивертисмент < ֆր. divertissement զվարճալիք], գ. (թատր.): Ներկայացումից կամ համերգից հետո ներկայացվող երաժշտական կամ թատերական փոքրիկ համարներից բաղկացած բաժին:

ԴԻՎԻԴԵՆԴ [< дивидент < լատ. dividendus բաժանման ենթակա], գ. 1. (տնտսգ.): Շահութաբաժին՝ բաժնետիրական ձեռնարկության օգուտների՝ շահույթի այն մասը, որ ընկնում է բաժնետերերից յուրաքանչյուրին՝ նրա ներդրած դրամագլխի համապատասխան: 2. փխբ. Որևէ բանից ստացած շահ:

ԴԻՎԻԶԻԱ [< дивизия < լատ. divisio բաժանում, տրոհում], գ. (ռազմ.): Մի քանի գնդերից կամ բրիգադներից բաղկացած մեծ զորամիավորում:

ԴԻՎԻԶԻՈՆ [< дивизион < ֆր. division < լատ.] գ. (ռազմ.): 1. Հրետանային՝ հեծելազորային և զրահատանկային զորքերի ստորաբաժանում: 2. Միատիպ ռազմանավերի միավորում՝ ջոկատ:

ԴԻՎԻԶԻՈՆԻԶՄ [< дивизионизм < ֆր. division տրոհում], գ. (արվ.): Նեոիմպրեսիոնիզմին բնորոշ գեղանկարչական համակարգ, որի հետևորդները, բարդ գունային տոնը հետևողականորեն տարրալուծելով մաքուր գույների, դրանք կտավի վրա տեղադրում են հստակ զանազանվող տրոհված բծերով:

ԴԻՎԻՆԻԼ [< дивинил < դի…+ լատ. vinum (vini) գինի], գ. Նույնն է՝ Բուտադիեն:

ԴԻՐԵԿՏԻՎ [< директива < ֆր. directive < լատ. dirigere ուղղություն տալ], գ. 1. Հրահանգ՝ վերադաս մարմնի անվերապահորեն կատարելի ղեկավար ցուցմունք: 2. ած. Վերադաս:

ԴԻՐԵԿՏՈՐ [< директор < լատ. director < dirigere ուղղել, ուղղորդել], գ. Տնօրեն՝ հիմնարկի՝ ձեռնարկության կամ միջնակարգ ուսումնական հաստատության ղեկավար պաշտոնյան՝ պետը:

ԴԻՐԵԿՏՈՐԱՏ [< директорат < լատ.], գ. Խոշոր ձեռնարկության՝ հիմնարկության դիրեկտորների կոլեգիա գլխավոր դիրեկտորի գլխավորությամբ, տնօրենություն:

ԴԻՐԵԿՏՈՐԻԱ [< директория < ֆր. Directoir < միջին լատ. directorium ղեկավարություն], գ. (պատմ.): Որոշ կառավարությունների անվանում (օր.՝ Ֆրանսիայում՝ 1795-1799 թթ. բուրժուական հեղափոխության ժամանակ, Ուֆայում և Ուկրաինայում՝ սպիտակ գվարդիականների «կառավարությունները»), կոլեգիալ ղեկավարման տեսակ:

ԴԻՐԵԿՑԻԱ [< дирекция < լատ. directio ղեկավարում], գ. Հիմնարկի՝ ձեռնարկության՝ ուսումնական հաստատության ղեկավար մարմինը՝ դիրեկտորի գլխավորությամբ, տնօրենություն:

ԴԻՐԻԺԱԲԼ [< дирижабль < ֆր. dirigeable ղեկավարվող], գ. Օդից թեթև օդանավ՝ գազով լցված մարմնով և ղեկավարման հարմարանքով:

ԴԻՐԻԺՈՐ [< дирижер < ֆր. diriger ուղղություն տալ, ղեկավարել], գ. 1. Նվագախմբի՝ երգչախմբի ևն ղեկավար, նվագապետ: 2. *փխբ.* Պարագլուխ, ղեկավար:

ԴԻՔՍԻԼԵՆԴ [< диксиленд < անգլ. dixieland < Dixie ԱՄՆ-ի հարավային նահանգների անվանումը խոսակցական տարբերակով + land երկիր], գ. (երժշտ.): 1. Ջազի տարատեսակ՝ ավելի ավանդական ռիթմերով և մեղեդայնու-

թյամբ: 2. Առաջին ջազային համույթների անվանումը ԱՄՆ-ում (ձևավորված սպիտակամորթների կողմից, որոնք փորձում էին նմանակել երգն ու երաժշտությունը սևամորթների կատարմամբ): 3. Նվագախումբ, որը հիմնականում կազմված էր փողավոր երաժշտական գործիքներից՝ ջազի տվյալ տարատեսակը կատարելու համար:

ԴԻՔՐՈԻԶՄ [< дихроизм < դի…+ chrōma գույն], գ. Երկգունություն՝ պլեոքրոիզմի մասնավոր դեպքը:

ԴԻՕՊՏՐԱ [< диоптрия < հուն. dioptra], գ. (ֆիզ.): Ոսպնյակի կամ ոսպնյակների համակարգի օպտիկական ուժի միավոր, նշանակվում է՝ դ: Ոսպնյակի օպտիկական ուժը չափվում է նրա գլխավոր կիզակետային հեռավորության հակադարձ մեծությամբ: 1 դ այն ոսպնյակի օպտիկական ուժն է, որի գլխավոր կիզակետային հեռավորությունը 1 մ է:

ԴԻՖԱՄԱՑԻԱ [< диффамация < լատ. diffamare հռչակել, հրապարակել], գ. (իրավ.): Անվանարկում, անվանարկություն:

ԴԻՖԵՐԵՆՏ [< диферент < լատ. differens (differentis) տարբերություն], գ. 1. (ծով): Նավի երկայնակի թեքման անկյունը, որն առաջանում է քթի և նավախելի թաղվածքի տարբերությունից: 2. (խոհ.): Առևտրական գործողություններում՝ ապրանքի գնի տարբերությունը պատվերի և դրա ստացման ժամանակ:

ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ [< дифференциал < լատ. differentia տարբերություն], գ. 1. (մաթ.): Ա. Ֆունկցիայի դիֆերենցիալ: Ֆունկցիայի աճի գլխավոր մասը: Բ. Անկախ դիֆերենցիալ: Անկախ փոփոխականի մեծության կամայական աճ: 2. (տեխ.): Ընդհանուր առնիով միացած երկու անիվներին տարբեր արագությամբ պտտվելու հնարավորություն տվող մեխանիզմ (ավտոմոբիլի, տանկի ևն): 3. Տարբերակիչ:

ԴԻՖԵՐԵՆՑԻԱՑԻԱ [< дифференциация < լատ. differentia տարբերություն], գ. Տարբերակում՝ տարանջատում, շերտավորում:

ԴԻՖԻՐԱՄԲ [< дифирамб < հուն. dithyrambos], գ. Ներբող՝ 1. (պատմ.): Փառաբանական երգ, որ հին հույները երգում էին՝ ի պատիվ Դիոնիսոսի: 2. (գրկն.): Որևէ անձի կամ նշանավոր իրադարձության նվիրված փառաբանական քնարական ստեղծագործություն, գովերգ: 3. *փխբ.* Փառաբանական՝ գովաբանական խոսք՝ ճառ՝ հոդված ևն:

ԴԻՖՏԵՐԻԱ, ԴԻՖՏԵՐԻՏ [< дифтерия, дифтерит < հուն. diphthera թաղանթ, կաշի], գ. (բժշկ.): Կեղծամաշկություն՝ վարակիչ հիվանդություն, մեծ մասամբ մանուկների, որ ախտահարում է բկի և քթի լորձաթաղանթները և առաջ բերում մարմնի ընդհանուր թունավորում:

ԴԻՖՏՈՆԳ [< дифтонг < դի…+ հուն. phthongos հնչյուն, ձայն], գ. (լեզվբ. հնց.): Երկբարբառ՝ երկու ձայնավորի կամ մեկ ձայնավորի ու մի ձայնորդի միասնությունը մեկ վանկի մեջ, որի հետևանքով նրանցից մեկը զրկվում է վանկարար դերից և լիահնչությունից:

ԴԻՖՐԱԿՑԻԱ [< диффракция < լատ. diffractus բեկված, կոտրված], գ. (ֆիզ.): Ա. Դիֆրակցիա ալիքների - ուղղագիծ տարածումից ալիքների շեղման և այդ շեղումն առաջ բերող խոչընդոտների շրջանցման երևույթը: Բ. Դիֆրակցիա լույսի - նեղ ճեղքերով թափանցիկ կամ անթափանց ալիքների եզրերով կամ խիստ անհամասեռություններ պարունակող միջավայրով լույսի տարածման ժամանակ դիտվող երևույթ, որ պայմանավորված է երկրաչափական օպտիկայի օրենքների խախտումով: Գ. Դիֆրակցիա մասնիկների - միկրոմասնիկների (էլեկտրոններ, նեյտրոններ ևն) առաձգական ցրումը բյուրեղներից կամ հեղուկների ու գազերի մոլեկուլներից,

որի դեպքում մասնիկների սկզբնական փնջից առաջանում են լրացուցիչ փնջեր, որոնց շեղման անկյունը և ինտենսիվությունը կախված են ցրող նյութի ներքին կառուցվածքից:

ԴԻՖՈՒԶԱՅԻՆ ՄԻԳԱՄԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ - (աստղգ.): Միջաստղային գազի կամ փոշու լուսավոր և մութ ամպեր: Այս միգամածությունները մի քանի որպեից մինչև մի քանի աստիճանի անկյունային չափերով, անկանոն տեսքի լուսավոր և մութ գոյացումներ են:

ԴԻՖՈՒԶԻԱ [< диффузия < լատ. diffusio տարածում, ընդարձակում], գ. (գիտ.): Շփվող նյութերի փոխադարձ ներթափանցման երևույթը՝ մասնիկների ջերմային շարժման հետևանքով:

ԴԻՖՈՒԶՈՐ [< диффузор < լատ. diffusio], գ. 1. (տեխ.): Տարալվացման եղանակով անհրաժեշտ նյութերը (օր. ճակնդեղից՝ շաքարահյութը) հանելու սարած: 2. Փողք՝ խողովակի լայնացող մաս, որի մեջ տեղի է ունենում հոսանքի դանդաղում և ճնշման ավելացում: 3. (ռադ.): Անձայնափող բարձրախոսների մեջ ձայնի ուժեղացմանը ծառայող թղթե կամ մետաքսե թաղանթ:

ԴՅՈՒԲԵԼ [< дюбель < գերմ. Dübel մեխ], գ. (տեխ.): Ռետինե առարկա, որն իր սուր մասով դրվում է պատի մեջ նախապես արված անցքի մեջ և մյուս կողմից ձգվում պտուտակով:

ԴՅՈՒԺԻՆ [< ռուս. дюжина], գ. Տասներկու հատ, երկվեցյակ:

ԴՅՈՒԿԵՐ [< дюкер < գերմ. Düker < լատ. ducere անցկացնել], գ. (տեխ.): Ճնշումային ջրատար, անց է կացվում գետի կամ ջրանցքի հունի, ճանապարհի տակով, խոր հովտի (ձորակի) լանջերով ու հատակով՝ հատող ջրահոսքը բաց թողնելու համար:

ԴՅՈՒՅՄ [< дюйм < հոլանդ. duim բթամատ], գ. Մատնաչափ՝ 1. Երկարության չափ՝ միավորների անգլիական և ամերիկյան համակարգերում, որտեղ երկարության հիմնական միավորը ֆուտն է: 1 դյույմը 1/12 ֆուտն է: 2. Օգտագործվել է նաև չափերի հին ռուսական համակարգում որպես արշինի 1/28 մաս. գործել է մինչև 1918 թ.: 3. Միջազգային համակարգի երկարության միավորով արտահայտված՝ 1դ= 0.0254 մ:

ԴՅՈՒՅՄԱՆՈՑ, ած. Դյույմի երկարություն կամ հաստություն ունեցող:

ԴՅՈՒՅՄԱՉԱՓ, ած. Դյույմի չափ, դյույմանոց:

ԴՅՈՒՆԵՐ [< дюны < գերմ. Düne եզ. թիվ < կելտ. dune], գ. Ավազաբլուրներ՝ ավազային բլուրներ և բլրաշարեր: Առաջանում են քամուց՝ ծովերի, լճերի և գետերի ցածրադիր ավազային ափերին, ուր քամին մեծ մասամբ ուղղված է ափից ցամաք:

ԴՅՈՒՇԵՍ [< дюшес < ֆր. duchesse հերցոգուհի], գ. 1. (բսբ.): Ջրալի տանձի՝ հարավում աճող տեսակ: 2. Կոնֆետի տեսակ:

ԴՅՈՒՐԱԼՅՈՒՄԻՆ [< дюралюминий < լատ. durus պինդ + ալյումին], գ. (քիմ.): Ալյումինի, մագնիումի և կրեմնիումի թեթև ու ամուր համաձուլվածք:

ԴՈ [< до < իտալ. do], գ. (երժշտ.): Երաժշտական ձայնաշարի առաջին ձայնը և դրա ձայնանիշը:

ԴՈԲԵՐՄԱՆ-ՊԻՆՉԵՐ [< доберман-пинчер < հատուկ անունից], գ. (կենդբ.): Շան տեսակ՝ երկար բարակ մարմնով և կարճ մազերով, աչքի է ընկնում ուժեղ հոտառությամբ:

ԴՈԳ [< дог < անգլ. dog շուն], գ. (կենդբ.): Շան տեսակ՝ մեծ մարմնով և կարճ մազերով. լինում է սև, մոխրագույն, մարմնագույն ևն:

ԴՈԳՄԱ [< догма < հուն. dogma ուսմունք, կարծիք], գ. 1. Բոլոր ժամանակների ու պայմանների համար իբրև անառարկելի ճշմարտություն ընդունվող դրույթ, անառարկելի պնդում, դավանություն: 2. (կրոն.): Կրոնական դավանանքի անառարկելի, անքննելի, անքննադատելի դրույթ:

ԴՈԳՄԱՏԻԶՄ [< догматизм < հուն.], գ. (տրամ.): Մտածողության մեթոդ, որի դեպքում որոշակի դրույթներ՝ դոգմաներ, վերածվում են քարացած եզրակացությունների՝ դոգմաների, առանց կյանքի կոնկրետ պայմանները հաշվի առնելու:

ԴՈԳՄԱՏԻԿ [< догматик < հուն. dogmatikos], ած. 1. Դոգմաների վրա հիմնված: 2. Առարկություն չթույլատրող, իբրև անհերքելի ճշմարտություն ընդունող կամ թելադրող: 3. գ. Դոգմատիստ:

ԴՈԴԵԿԱՖՈՆԻԱ [< додекафония < հուն. dōdeka տասներկու + phōnē հնչյուն, բառացի՝ տասներկու հնչյուն], գ. Երաժշտություն հորինելու մեթոդ: Սկզբնավորվել է 1910-ական թթ՝ կապված ատոնալ երաժշտության զարգացման հետ. առաջին փորձերը կատարել է ավստրիացի կոմպոզիտոր Յո. Մ. Հաուերը: Մեթոդը հենվում է խրոմատիկ հնչյունաշարի բոլոր տասներկու հնչյուններից (առանց կրկնվելու) կազմված որոշակի շարքի վրա («սերիա»), որը, շարունակ ձևափոխվելով, կրկնվում է:

ԴՈԶԱ [< доза < հուն. dosis], գ. 1. (գղգրծ.) Դեղաբաժին՝ մեկ անգամվա կամ օրվա դեղի քանակություն: 2. (խսկց.): Չափ՝ ինչ-որ բանի քանակություն:

ԴՈԶԱՉԱՓՈՒՄ [< дозаметрия < հուն.], գ. (ֆիզ.): Կիրառական ֆիզիկայի բաժին. զբաղվում է իոնացնող ճառագայթման դոզայի և ռադիոակտիվ փորձանմուշների ակտիվության չափումներով, այդ չափումների սարքերով ու մեթոդներով, ինչպես նաև օրգանիզմի վրա իոնացող ճառագայթների ազդեցությունների ուսումնասիրությամբ:

ԴՈԶԱՏՈՐ [< дозатор < հուն.], գ. Հեղուկ և սորուն նյութերի տրված զանգվածը կամ ծավալը ավտոմատ չափող (դոզավորող) սարք: Կիրառվում է մետալուրգիայի, քիմիական, սննդի ևն արդյունաբերության մեջ:

ԴՈԺ [< дож < իտլ. doge < լատ. dux (ducis) առաջնորդ], գ. (պատմ.): Հասարակապետության նախագահի կոչումը միջնադարյան Վենետիկում և Ջենովայում:

ԴՈԼԱՐ [< доллар < անգլ. dollar], գ. Դրամական միավոր ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում (25 երկրներում). հավասար է 100 ցենտի:

ԴՈԼԵՐԻՏ [< долерит < հուն. doleros խաբուսիկ], գ. (հնք.): Մագմատիկ ապար, բազալտի տեսակ: Օգտագործվում է շինարարության մեջ հատաքար և խճաքար պատրաստելու համար:

ԴՈԼԻԽՈԿ(Ց)ԵՖԱԼԻԱ [< долихок(ц)ефалия < հուն. dolichos երկար + kephalē գլուխ], գ. (բժշկ.): Երկարագլխություն, երկայնագլխություն:

ԴՈԼՄԵՆ [< дольмен < ֆր. dolmen], գ. Հնագույն դամբարանական կառույց: Կառուցվել են վիթխարի քարերից և ծածկվել մեկ կամ մի քանի սալաքարերով: Հայտնաբերվել են Եվրոպայի, Հյուսիսային Աֆրիկայի և Ասիայի ծովափնյա վայրերում:

ԴՈԼՈՄԱՆ [< доломан < թուրք. doloman, dolama ենիչերու մահուդե հագուստ < dola շրջապատել, փաթաթել], գ. (պատմ.): Հուսարի համազգեստ՝ բազմաթիվ քուղակապերով:

ԴՈԼՈՄԻՏ [< доломит < ֆր. երկրաբան Դ. Դոլոմիենի անունից], գ. (հնք.): Կալցիումի ու մագնեզիումի պարունակությամբ մոխրագույն սպիտակ հանք՝ միներալ:

ԴՈԼՉԵ [< дольче < իտլ. dolce], մկ. (երժշտ.): Նրբորեն:

ԴՈԿ [< док < հոլանդ. dok < անգլ dock], գ. Նավանորոգարան՝ նավերը նորոգելու արհեստանոց:

ԴՈԿԵՐ [< докер < անգլ. docker], գ. Նավաշինարանի կամ նավանորոգարանի բանվոր:

ԴՈԿ(Ք)ՍՈԳՐԱՖ [< доксограф < հուն. doxa կարծիք + graphō գրում եմ], գ. (պատմ.): Հին Հունաստանում՝ այնպիսի ժողովածուի հեղինակ, որի մեջ զետեղված են հին հունական տարբեր փիլիսոփաների տարաբնույթ ասույթներ, մտքեր, գաղափարներ:

ԴՈԿՏՈՐ [< доктор < լատ. doctor ուսուցիչ < docere սովորեցնել], գ. 1. Գիտական բարձր աստիճան: 2. Այդ աստիճանն ունեցող անձ: 3. (խսկց. հնց.): Բժիշկ:

ԴՈԿՏՈՐԱՆՏ [< докторант < լատ.], գ. Դոկտորանտուրայում դոկտորական ատենախոսություն պատրաստող գիտնական:

ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ [< докторантура < լատ.], գ. Գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներին առընթեր՝ գիտական կադրեր՝ դոկտորներ պատրաստելու համակարգ:

ԴՈԿՏՐԻՆԱ [< доктрина < լատ. doctrina], գ. Ուսմունք, հինադրույթ՝ 1. (գիտ.): Բնության, հասարակական կյանքի ևն երևույթների որևէ բնագավառի մասին ստեղծված տեսական դրույթների ամբողջությունը: 2. Որևէ մտածողի՝ գիտնականի՝ գիտական դպրոցի ուղղություն ևն հիմնական դրույթների հայացքների ամբողջությունը՝ համակարգը:

ԴՈԿՏՐԻՆՅՈՐ [< доктринёр < ֆր. doctrinaire < լատ.] գ. Որևէ ուսմունքի կույր և համառ հետևորդ:

ԴՈԿՈՒՄԵՆՏ [< документ < լատ. documentum], գ. (խսկց.): Փաստաթուղթ՝ 1. Որևէ բանի հաստատումը՝ վավերացումը հանդիսացող կամ որևէ իրավունք արտոնող պաշտոնական գրություն՝ թուղթ: 2. (իրավ.): Ներկայացնողի ինքնությունը հաստատող գրավոր վկայական: 3. Գրավոր հուշարձան՝ գիրք՝ գրություն ևն, որպես պատմական՝ գիտական՝ գեղարվեստական արժեք ներկայացնող սկզբնաղբյուր:

ԴՈԿՈՒՄԵՆՏԱԼ [< документальный < լատ.], ած. Փաստաթղթային՝ 1. Փաստաթղթերին հատուկ, փաստաթղթերի: 2. Փաստաթղթերով հաստատվող՝ հիմնավորվող (հաստատված՝ հիմնավորված): 3. Փաստաթղթեր պահելով՝ հավաքելով՝ մատակարարելով զբաղվող: Վավերագրական՝ 1. Վավերագրերով հաստատված՝ հավաստված: 2. Վավերագիր հանդիսացող, վավերագրի բնույթ ունեցող: 3. Իրական դեպքերն ու իրադարձությունները վերարտադրող՝ արտացոլող: Փաստական՝ 1. Փաստերով հաստատվող՝ հիմնավորվող: 2. Իրական, իրողություն հանդիսացող: 3. Փաստերին հատուկ՝ վերաբերող, փաստերի:

ԴՈԿՈՒՄԵՆՏԱՑԻԱ [< документация < լատ.] գ. 1. Որևէ բանի՝ փաստաթղթերով հիմնավորելը: 2. (հվք.): Որևէ բանի վերաբերող փաստաթղթերի

ամբողջությունը, փաստաթղթեր:

ԴՈՄԲՐԱ [< домбра < ղազախ. dombəra], գ. (երժշտ): Ղազախական լարային կսմիթավոր երաժշտական գործիք: Տարածված է նաև Ուզբեկստանում և Բաշկիրիայում:

ԴՈՄԵՆ [< домен < ֆր. domaine < լատ. dominium տիրապետություն, տիրույթ], գ. 1. (պատմ.): Ֆեոդալիզմի դարաշրջանում Արևմտյան Եվրոպայում՝ ֆեոդալի կալվածքի այն մասը, որտեղ նա սեփական տնտեսությունն էր վարում՝ շահագործելով ճորտերին: 2. (ֆիզ.): Ֆեռոմագնիսական դոմեն - ինքնաբերաբար մագնիսացած տիրույթներ: Սեգնետոէլեկտրական, դոմեն-էլեկտրական դաշտի տարբեր լարվածությամբ տիրույթներ:

ԴՈՄԵՍՏԻԿԱՑԻԱ [< доместикация < ֆր. domestication < լատ. domesticus տնային, ընտանի], գ. (կենդբ.): Վայրի կենդանիներին ընտանի՝ ձեռնասուն դարձնելը:

ԴՈՄԻՆԱՆՏ [< доминант < լատ. dominans (dominantis) իշխող], գ. 1. Հիմնական՝ գերիշխող գաղափար: 2. Որևէ բանի հիմնական հատկանիշ՝ բաղադրիչը, տիրապետող հատկանիշը: 3. (կենսբ.): Զոդման օջախ՝ կենտրոնական նյարդային համակարգում, որը ժամանակավորապես որոշում է օրգանիզմի պատասխան ռեակցիայի բնույթն արտաքին և ներքին գրգիռների նկատմամբ: 4. (երժշտ.): Մաժոր և մինոր լադերի V աստիճանը և այդ աստիճանի վրա կառուցված ակորդը, որ ունի տոնիկայի մեջ լուծվելու պարզ արտահայտված ձգտում:

ԴՈՄԻՆԱՏ [< доминат < լատ. dominatus միիշխանություն], գ. (պատմ.): Միապետության յուրահատուկ ձև (III-IV դդ.) Հռոմում՝ ուշ կայսրության շրջանում:

ԴՈՄԻՆԻՈՆ [< доминион < անգլ. dominion], գ. (քղբ.): Բրիտանական կայսրության ինքնավար մասերի (նախկին գաղութների) անվանումը:

ԴՈՄԻՆՈ [< домино < ֆր. domino < իտլ.] , գ. 1. Դիմակահանդեսի մի տեսակ զգեստ: 2. Կաթոլիկ եկեղեցու սպասավորի զգեստ: 3. Կետերով նշանակված հատուկ տեսակի ոսկրե կամ փայտե թիթեղիկներով խաղ և այդ խաղի քարերը (28 հատ):

ԴՈՄԿՐԱՏ [< домкрат < հոլանդ. dommekracht < Daumkraft], գ. (տեխ.): Ամբարձիկ՝ իրերը որոշակի բարձրությամբ բարձրացնող սարք՝ հարմարանք:

ԴՈՄՆԱ [< ռուս. домна], գ. (տեխ.): Հրահալոց՝ հանքամշակման հնոց՝ բով՝ երկաթահանքից չուգունի հալվածք ստանալու համար:

ԴՈՅՆԱ [< дойна < ռում. doină], գ. (երժշտ.): Ռումինների և մոլդավների քնարական (սկզբնապես՝ հովվական) երգ:

ԴՈՆ [< дон < իսպ. don < լատ. dominus տեր], գ. Իսպանիայում տղամարդկանց հարգալից դիմելաձև՝ պարոն իմաստով:

ԴՈՆԳ [< донг < վիետն.], գ. Վիետնամի Հանրապետության դրամական միավոր:

ԴՈՆ ԺՈՒԱՆ [< Дон-жуан < իսպ. Don Juan], գ. ած. 1. (գրկն.): Գրականության և արվեստի ստեղծագործությունների հերոս: Ասպետի կերպար՝ կնամոլ: Ստեղծվել է Վերածնության դարաշրջանում իսպանական ժողովրդական լեգենդի հիման վրա: 2. *փխբ.* Սիրային արկածներ որոնող, կնամոլ:

ԴՈՆ ԿԻԽՈՏ [< Дон-Кихот < հատուկ անուն իսպաներենից՝ Սերվանտեսի համանուն վեպի հերոսը], գ. *փխբ.* Երազող՝ հանուն անիրագործելի ու ոչ կենսական բաների՝ ապարդյուն պայքարի ելնող պարզամիտ հերոս: Հայերենում գործածվում է նաև Դոնքիշոտ գրությամբ:

ԴՈՆՆԱ [< донна < իտլ., պորտ. donna], գ. Դոն բառի իգական ձևը. կանանց հարգալից դիմելաձև՝ տիկին իմաստով:

ԴՈՆՈՐ [< донор < լատ. donare նվիրել], գ. 1. Անձ, որն իր արյունն է տալիս հի-

վանդին ներարկելու, նաև հյուսվածքներ (օր.՝ մաշկ) կամ օրգան (օր.՝ երիկամ) պատվաստելու համար: 2. *փխբ.* Օգնություն տրամադրող (օր.՝ դոնոր կազմակերպություն, դոնոր երկիր):

ԴՈՊԻՆԳ [< допинг < անգլ. doping < dope թմրադեղ օգտագործել], գ. (բժշկ.): Արհեստականորեն օրգանիզմը աշխուժացնող միջոցների՝ դեղամիջոցների հավաքածու: Արգելվում է ժամանակակից սպորտում:

ԴՈՍՅԵ [< досье < ֆր. dossier], գ. Փաստաթղթերի հավաքածու՝ նաև թղթապանակ, որը վերաբերում է ինչ-որ մեկին կամ որևէ գործի:

ԴՈՏԱՑԻԱ [< дотация < լատ. dotare մատակարարել], գ. (տնտսգ.): Պետական դրամական հատկացում ձեռնարկություններին՝ հիմնարկություններին նն՝ վնասները ծածկելու կամ այլ նպատակների համար, լրավճար:

ԴՈՑԵՆՏ [< доцент < լատ. docens (docentis) ուսուցանող, սովորեցնող], գ. 1. Բարձրագույն դպրոցի դասախոսի կոչում և պաշտոն: 2. Այդ կոչումը ունեցող դասախոս:

ԴՈՔՍՈԳՐԱՖՆԵՐ [< доксографы < հուն. doxa կարծիք + graphō գրում եմ], գ. (գրկն.): Անտիկ գրողներ, որոնք իրենց երկերում շարադրել են հին փիլիսոփաների մտքերը: Հիմնադիրը համարվում է Արիստոտելի աշակերտ Թեոֆրաստը:

ԴՈՖԻՆ [< дофин < ֆր. dauphin], գ. (պատմ.): XII դարից Օվերնի և Վենուա կոմսությունների (Ֆրանսիա) տիրակալների տիտղոսը, XIV դարից՝ Ֆրանսիայի գահաժառանգի: Վերացել է 1830 թ:

ԴՌԵԼ [< дрель < գերմ. Drell], գ. (տեխ.): Շաղափիչ՝ գայլիկոն՝ գործիք՝ սարք երկաթի՝ փայտի՝ բետոնի վրա անցք բացելու համար՝ մեխանիկական կամ էլեկտրական:

ԴՐԱԳԱ [< драга < անգլ. drag], գ. (տեխ.): Լողացող լեռնահարստացուցիչ կառույց: Նախատեսված է օգտակար հանածոների ջրավորված հանքավայրերի մշակման, ոսկու, պլատինի նն կորզման համար:

ԴՐԱԳԼԱՅՆ [< драглайн < անգլ. dragline], գ. 1. (տեխ.): Էքսկավատոր՝ ճոպանավոր կովշով: 2. Էքսկավատորի այդպիսի կովշը:

ԴՐԱԳՈՄԱՆ [< драгоман < գերմ. Dragoman < արաբ. targumān թարգմանիչ], գ. (դվնգ.): Արևելքի երկրներում՝ եվրոպական դեսպանատան թարգմանիչ:

ԴՐԱԳՈՒՆ [< драгун < ֆր. dragon], գ. (պատմ.): Հեծյալ զինվոր, որ կռվում էր նաև որպես հետևակ, վիշապազորքի զինվոր:

ԴՐԱԺԵ [< драже < ֆր. dragée], գ. 1. Շաքարահատ՝ գնդիկների ձևով պատրաստված փոքրիկ կոնֆետների տեսակ, շաքարագնդիկ: 2. (դեղգրծ.): Դեղի տեսակ, որը արտաքուստ պատած է շաքարով կամ շոկոլադով՝ թաքցնելու դեղի ոչ հաճելի համը:

ԴՐԱԽՄԱ [< драхма < հուն. drachmē], գ. 1. Դեղագործական կշռաչափ = 3.732 գրամ: 2. Հունական դրամական միավոր, հավասար է 100 լեպտայի:

ԴՐԱԿՈՆ [< дракон < հուն. drakōn օձ], գ. (խսկց.): 1. Վիշապ՝ առասպելական թևավոր վիշապ, որի բերանից կրակ էր ժայթքում: 2. (կենդբ.): Թևավոր մողես: 3. *փխբ.* Դաժան՝ անողոք մարդ:

ԴՐԱՄԱ [< драма < հուն. drama գործողություն], գ. 1. (գրկն.): Թատերական ստեղծագործություն, որ պատկերում է բարդ ու լուրջ հանգույցներ, բայց չունի հերոսական կամ ողբերգական բովանդակություն: Ձևավորվել է XVIII դ. Ֆրանսիայում և Գերմանիայում: 2. Թատերական ստեղծագործություններն իբրև գրական սեռ, դրամատիկական սեռ: 3. Պիես: 4. *փխբ.* Ծանր՝ աղետալի դեպք՝ անցք՝ իրողություն: 5. *փխբ.* Հոգեկան ծանր տանջալից ապրումներ, տվայտանք, մեծ վիշտ:

ԴՐԱՄԱՏԻԶԱՑԻԱ [< драматизация < հուն.], գ. 1. (թատր..): Ստեղծագործությունը դրամայի՝ թատերական երկի վերածելը: 2. Դրամատիզմը ուժեղացնելը, լարվածությունը մեծացնելը:

ԴՐԱՄԱՏԻԶՄ [< драматизм < հուն.], գ. 1. (գրկն.): Թատերական երկի մեջ ներկայացվող գործողություն՝ դրություն ևն՝ դրամային հատուկ լարվածությամբ: 2. *փխբ.* Հուզիչ՝ ցնցող լինելը (վիճակի՝ դեպքի ևն մասին):

ԴՐԱՄԱՏՈՒՐԳ [< драматург < հուն.], գ. Թատերգու:

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ [< драматургия < հուն. dramaturgia], գ. 1. Թատերգություն՝ թատերական ստեղծագործություններ: 2. Թատերական երկերի ամբողջությունը:

ԴՐԱՅՎ [< драйв < անգլ. drive < to drive into a state ինչ-որ վիճակի հասցնել], գ. (խսկց.): Հաճելի վիճակ, բավարարվածություն (նախնական իմաստով՝ թմրանյութերի ընդունման ազդեցության տակ):

ԴՐԱՊ [< драп < ֆր. drap մահուդ, ասվի], գ. Բրդյա հաստ գործվածք, որից վերնազգեստ են կարում:

ԴՐԱՑԵՆԱ [< драцена < գերմ. Drazäne < հուն. drakainos վիշապանման], գ. (բսբ.): Վիշապածառ, վիշապենի:

ԴՐԵԴՆՈՈՒՏ [< дредноут < անգլ. dreadnought անվախ], գ. (ռազմ. պատմ.): XX դ. առաջին տասնամյակում վիթխարի զրահանավ:

ԴՐԵԶԻՆԱ [< дрезина < գերմանացի գյուտարար Դրեզի անունից], գ. (երկթղ.): Երկաթուղային քառանիվ սայլակ-վագոնիկ, որը շարժման մեջ է դրվում ձեռքով կամ ներքին այրման շարժիչով:

ԴՐԵՅՖ [< дрейф < հոլանդ. drijven լողալ, քշել], գ. 1. (ծով.): Նավախոտորում՝ շարժվող նավի քշվելը քամիների և հոսանքների ազդեցությամբ: 2. Սառույցի ևն նմանատիպ տեղաշարժը ծովում:

ԴՐԵՆ [< дрена < անգլ. drain չորացնել], գ. Ուրդոց՝ ստորերկրյա առու՝ խողովակով ջրերը հեռացնելու համար:

ԴՐԵՆԱԺ [< дренаж < ֆր. drainage < անգլ.], գ. (մսնգ.): Ցամաքուրդ՝ ճահճուտների ցամաքեցում առուների կամ խողովակների համակարգով և այդ համակարգը: 2. (բժշկ.): Ռետինե կամ ապակյա անցքավոր խողովակիկ՝ թարախը կամ հեղուկը մարմնի ներքին գործարաններից հանելու համար: 3. (մսնգ.): Ջրաքաշում՝ դրենայով ճահճուտ տեղերի չորացում:

ԴՐԻԱԴՆԵՐ [< дриады < լատ. dryas (dryadis) < հուն. dryas (dryados) < drēs կաղնի], գ. (դից.): Անտառի դիցուհիներ՝ հավերժահարսեր (հունական դիցաբանության մեջ), անտառահարսեր:

ԴՐԻԲԼԻՆԳ [< дриблинг < անգլ. dribbling], գ. (սպորտ.): Որոշ խաղային մարզաձևերում՝ գնդակը կամ տափօղակը վարելու ձև:

ԴՐՈԶՈՖԻԼՆԵՐ [< дрозофила < լատ. Drosophila], գ. (կենդբ.): Պտղաճանճեր՝ երկթևանի միջատների ընտանիք: Թրթուրները զարգանում են փտող պտուղներում և հանդիպում են հատկապես մրգերի ու բանջարեղենի պահեստներում:

ԴՐՈԺ [< ռուս. дрожжи միայն հոգն.], գ. Թթխմոր՝ բուսամակարդիչ, որը լցնում են շաղված ալյուրի մեջ՝ թթվեցնելու համար:

ԴՐՈՄԱԴԵՐ [< дромадер < ֆր. dromadaire < հուն. dromas (kamelos) արագ վազող ուղտ], գ. (կենդբ.): Միասապատ ուղտ (չկա վայրի պայմաններում):

ԴՐՈՍԵԼ [< дроссель < գերմ. Drossel], գ. 1. (էլեկտր.): Հակազդիչ: 2. (տեխ.): Կարգավորող կափարիչ, փական:

ԴՐՈՒԶՆԵՐ [< друзы < արաբ. druza], գ. (կրոն.): Մահմեդական կրոնի շիա ուղղության իսմայիլական աղանդի ճյուղավորման հետևորդ արաբներ:

ԴՐՈՒԺԻՆԱ [< ռուս. дружина], գ. (պատմ.): Զորագունդ՝ զինվորների ընտրովի ջոկատ՝ բանակ:

ԴՐՈՒԻԴԻԶՄ [< друидизм < ֆր. druidisme < կելտ.], գ. (կրոն.): Կելտական, բնապաշտական կրոն, որը պահանջում էր զոհաբերություն (հաճախ մարդկային) անտառում:

ԴՐՈՒԻԴՆԵՐ [< друиды < ֆր. druides < կելտ.], գ. (կրոն.): Կելտական քուրմեր:

ԴՈՒԱԼԻԶՄ [< дуализм < լատ. duo երկու], գ. 1. (փիլ.): Կեղծ գիտական ուսմունք, որ կեցության հիմքում ընդունում է երկու իրարամերժ անկախ սկզբունք (օր.՝ մատերիա և ոգի, բարի և չար են): 2. (գրկն.): Երկվություն:

ԴՈՒԱԼԻՍՏ [< дуалист < հուն.], գ. Դուալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԴՈՒԲԻՆԿԱ [< ռուս. дубинка], գ. (խսկց.): Մահակ՝ ռետինե մահակ, որն օգտագործում են հատուկ մարզված ոստիկանական կամ զինվորական խմբերը:

ԴՈՒԲԼ [< дубль < ֆր. double կրկնակի], գ. (կինո.): 1. Ֆիլմի մեջ որևէ տեսարանի կրկնակի նկարահանում: 2. (սպորտ.): Նույն մրցաշրջանում երկրի առաջնության և գավաթի մրցաշարը հաղթելը: 3. Մեկ խաղում երկու անգամ դարպասի գրավում նույն մարզիկի կողմից (ֆուտբոլում են)

ԴՈՒԲԼԵՏ [< дублет < ֆր. doublet < double], գ. 1. (հնց.): Կրկնօրինակ՝ ինչ-որ իրի երկրորդ օրինակը, կրկնակ: 2. Որսի ժամանակ՝ միաժամանակյա երկփող կրակոց:

ԴՈՒԲԼԻԿԱՏ [< дубликат < լատ. duplicatus], գ. (խսկց.): 1. Կրկնագիր՝ գրավոր փաստաթղթի երկրորդ օրինակը, որն ունի նույն իրավական արժեքը, ինչ առաջինը: 2. Որևէ առարկայի կրկնօրինակը, պատճենը:

ԴՈՒԲԼՅԱԺ [< дубляж < ֆր. doublage], գ. (կինո. հնց.): Կրկնօրինակում՝ կինոնկարի խոսքային մասը մի լեզվի թարգմանելով վերարտադրել:

ԴՈՒԲԼՅՈՆԿԱ [< ռուս. < дублёнка < дублёный], գ. (խսկց.): Աղաղած, խաղաղած կաշվից պատրաստված վերնազգեստ՝ վերարկու:

ԴՈՒԲԼՅՈՐ [< дублёр < ֆր. doubleur], գ. (հնց.): Փոխարինող կրկնորդիչ՝ թատրոնում՝ ֆիլմում են նույն դերի երկրորդ կատարող:

ԴՈՒԵԼ [< дуэль < ֆր. duel < լատ. duellum կռիվ], գ. (խսկց.): Մենամարտ՝ երկու անձերի մենամարտ՝ ընտրովի զենքով:

ԴՈՒԵԼՅԱՆՏ [< дуэлянт < գերմ. Duellant < լատ.], գ. (խսկց.): Դուելի մասնակից:

ԴՈՒԵՏ [< дуэт < իտլ. duetto < լատ. duo], գ. (երժշտ.): Զուգերգ՝ 1. Երաժշտական ստեղծագործություն երկու երգչի կամ երկու գործիքով նվագելու համար, որոնցից յուրաքանչյուրը իր առանձին բաժինն ունի: 2. Երկու անդամից (նվագողից կամ երգչից) բաղկացած խումբ:

ԴՈՒԼՍ(Ց)ԻՆԵԱ [< Дульцинея < իսպ.] գ. 1. (գրկն.): Պոետական անուն, որը Սերվանտեսի հերոս Դոն Կիխոտը հորինել է՝ անվանելու համար իր «արտի հերոսուհուն»: 2. *փխբ.* Սիրած, սիրված կին:

ԴՈՒԽՈԲՈՐՆԵՐ [< ռուս. духобор հոգու համար պայքարողներ], գ. (կրոն.):

Ռուսական բողոքական աղանդավորներ:

ԴՈՒԿԱՏ [< дукат < իտլ. ducato < duca հերցոգ], գ. XIII դարից սկսած վենետիկյան ոսկեդրամ, որը հետագայում տարածվում է ամբողջ Արևմտյան Եվրոպայում:

ԴՈՒՄԱ [< рус. дума], գ. (քղք.): Գերագույն խորհուրդը, պառլամենտը Ռուսաստանում. ընտրովի օրգան է:

ԴՈՒՄԱ(ՆԵՐ) [< дума < ուկր.], գ. (պատմ.): Ուկրաինական երաժշտաբանահյուսական էպիկական-քնարական ժանր, բովանդակությամբ՝ պատմական:

ԴՈՒՄԿԱ [< думка < ուկր.], գ. (պատմ.): 1. Ուկրաինական և լեհական քնարական և քնարաէպիկական երգերի ընդհանուր անվանումը, որ կիրառել են XIX դ. Ուկրաինայի արևմտյան մարզերի բանահավաքները: 2. Որոշ գործիքային և վոկալ պիեսների կամ ստեղծագործության մասերի անունը:

ԴՈՒՆԻՏ [< дунит < Նոր Զելանդիայի Դուն լեռան անունից], գ. (հնք.): Մագմատիկ ապար: Կազմված է օլիվինից (85-100 %), խառնուրդների ձևով պարունակում է քրոմիտ, փոքր քանակությամբ սիլիկահող, հարուստ է մագնեզիումով:

ԴՈՒՇ [< душ < ֆր. douche], գ. (խսկց.): 1. Ցնցուղ, ցնցղուկ, ջրացնցուղ: 2. Ջրցող:

ԴՈՒՇՄԱՆ [< душман < պարսկ. dushman թշնամի], գ. (խսկց.): Մոջահեդ:

ԴՈՒՉԵ [< дуче < իտլ. duce առաջնորդ], գ. (պատմ.): Ֆաշիստական Իտալիայի առաջնորդին՝ Մուսոլինիին տրվող անունը:

ԴՈՒՉԵՆՏՈ [< дученто < իտլ. ducento երկու հարյուր], գ. Իտալական մշակույթի պատմության փուլերից մեկը, որ սկիզբ դրեց պրոտոռենեսանսի արվեստին:

ԴՈՒՊԼԵՏ [< дуплет < ֆր. doublé], գ. 1. (սպորտ.):Բիլիարդի խաղաձողի մի տեսակ հարված, երբ մի գնդիկով հարվածվում է մյուսին, վերջինս դրանից ընկնում է փոսիկի մեջ: 2. (որս.): Որսորդական հրացանի զույգ կրակոցը:

ԴՈՒՐՐԱ [< дурра, дурро < արաբ. durr մարգարիտ], գ. (բսբ.): Արևադարձային հացաբույս՝ սորգոյի մի տեսակ. տարածված է Աֆրիկայում, Հարավարևելյան Ասիայում, ԱՄՆ-ում:

ԴՈՒՔԱՆ [< духан < թուրք. dükan], գ. (խսկց.): 1. Փոքր ռեստորան Մերձավոր Արևելքում: 2. Խանութ:

ԴՈՒՔՍ [< լատ. dux (ducis) առաջնորդ], գ. 1. (պատմ.): Բարձրաստիճան ազնվականության տիտղոս Արևելյան Եվրոպայում: 2. Այդ տիտղոսն ունեցող ավատատեր իշխան: 3. Ռազմական և քաղաքական պաշտոն Հռոմեական կայսրության, ուշ բյուզանդական կայսրության վաղ ժամանակաշրջանում:

ԴՕՍԱԱՖ [< рус. հպվ. ДОСААФ: Добровольная общество содействия армии, авиации и флоту], գ. (պատմ.): Զանգվածային կազմակերպություն խորհրդային տարիներին, որի նպատակն էր աջակցել երկրի պաշտպանության ամրապնդմանը և աշխատավորների նախապատրաստմանը երկրի պաշտպանության համար:

ԴՕՏ [< рус. հպվ. долговременная огневая точка], գ. (ռազմ.): Քարե՝ երկաթբետոնե ամրապինդ կառուցվածք՝ հրանոթներ, ականանետներ և նրանց սպասարկող անձնակազմին պատսպարելու համար:

Ե

ԵԲՐԱՅԻԶՄ [< гебраизм < ֆր. hébraïsme < hébraïque հրեական < հուն. hebraios հրեա], գ. (լեզվբ.): Եբրայաբանություն՝ հին հրեերենից (եբրայերենից) փոխառված բառ կամ արտահայտություն:

ԵԳԵՐ [< егерь < գերմ. Jäger], գ. 1. (ռազմ.): Հատուկ հրաձգային զորամասերի զինվոր: 2. Որսորդ՝ անտառտնտեսության որսի մասնագետ. նրա պարտականությունների մեջ են մտնում վայրի կենդանիների վերահսկումը և կերակրումը, դրանց որսը:

ԵԳԻՊՏՈԼՈԳԻԱ [< египтология < գերմ. Ägyptologie < Ägypten Եգիպտոս + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Եգիպտաբանություն, եգիպտագիտություն:

ԵԴԵՄ [< эдем < հին հրեերեն eden հաճույք, վայելք], գ. 1. Ըստ աստվածաշնչյան լեգենդի՝ երկրային դրախտ: 2. *փխբ.* Երանավետ վայր: 3. *փխբ.* Երջանկություն:

ԵԶՎԻՏ [< иезуит < Հիսուս անվան լատիներեն ձևից՝ Jesus], գ. 1. Կաթոլիկ եկեղեցու ամենառեակցիոն ու ռազմատենչ հիսուսյան կարգի անդամ, հիսուսյան կրոնավոր, ճիզվիտ: 2. *փխբ.* Խարդախ ու նենգավոր, իր նպատակին հասնելու համար միջոցների մեջ խտրականություն չդնող մարդ:

ԵԹԵՐ [< эфир < հուն. aithēr օդի վերին շերտերը], գ. 1. (դից.): Օդի ամենավերին մաքուր ու նոսր շերտը՝ ըստ հունական դիցաբանության: 2. (երկրբ.): Օդի վերին ոլորտները: 3. Ենթադրական անկշռելի և առաձգական գոյացություն, որը, ինչպես կարծում էին, լցնում է ամբողջ օդային տարածությունն ու սովորական նյութերի (մոլեկուլների, ատոմների ևն) միջև եղած տարածությունը, և որով առաջ բացատրում էին էլեկտրամագնիսական ալիքների տարածումը: 4. Շրջապատող օդային տարածությունը, օդը, որի մեջ տարածվում են ռադիոալիքները: 5. (քիմ.): Օրգանական միացություն, որ ստացվում է սպիրտից կամ ֆենոլից՝ ջրային բաղադրությունը հեռացնելու միջոցով, էթեր, էֆիր:

ԵԹՈՎՊԱՑԻ [< эфиоп < հուն. Aithiopia արևաթուխ], գ. (ազգգր.): Եթովպական բարձրավանդակի բնակչի ինքնանվանում:

ԵՆԻՉԵՐԻ [< еничери < թուրք.], գ. 1. Բռնությամբ մահմեդականացրած գերի քրիստոնյաներից կազմված զորք՝ սուլթանական Թուրքիայում: 2. Այդ զորքի զինվոր: 3. *փխբ.* Վայրագ՝ գազանաբարո մարդ:

ԵՊԱՐՔՈՍ Տե՛ս Էպարխ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ [< епископ < հուն. episkopos տեսուչ, վերահսկիչ], գ. (եկեղ.): 1. Կրոնական՝ հոգևոր աստիճան և կոչում, որ հաջորդում է վարդապետի աստիճանին ու կոչմանը: 2. Գավառի թեմի կրոնական առաջնորդ, որ ունի քահանաներ ձեռնադրելու իրավունք:

ԵՊԻՏԻՄՅԱ [< епитимья < հուն. epitimia պատիժ], գ. (եկեղ. հնց.): Ապաշխարանք:

ԵՊԻՏՐԱԽԻԼ [< епитрахиль < հուն. epitrachēlion < epi վրա, վերև + trachēlos պարանոց], (եկեղ.): Փորուրար՝ քահանայի և եպիսկոպոսի զգեստավորման մաս, որ հագնվում է վզից ու կրծքի վրայով, իջնում մինչև ոտքերը:

ԵՍԱՈՒԼ [< есаул < թուրք. äsual, բառացի՝ ցրիչ, սուրհանդակ] գ. (պատմ.): Մինչհեղափոխական Ռուսաստանում՝ կազակային զորքերի սպայական աստիճան, որ համապատասխանում էր հետևակի կապիտանին:

ԵՎԳԵՆԻԿԱ [< евгеника < հուն. eu լավ, բարի + genes ցեղ], գ. (գիտ.): Ուսմունք մարդկային ցեղի (նրա ժառանգական հատկանիշների) լավացման մասին: Սրա

խնդիրն է ակտիվ ազդել մարդու էվոլյուցիայի վրա, կատարելագործել նրա բնույթը, նպաստել տաղանդի ժառանգմանը և հնարավորին չափ սահմանափակել ժառանգական հիվանդությունների փոխանցումը հետագա սերունդներին:

ԵՎՆՈՒԽ [< евнух < հուն. eunuchos < eunē անկողին + ehein փռել, գցել], գ. (հնց.): Ներքինի:

ԵՎՊԱՏՐԻԴՆԵՐ [< евпатриды < հուն. eupatrides ազնվատոհմիկներ], գ. (պատմ.): Տոհմական ավագանու արտոնյալ դասը Հին Ատտիկայում:

ԵՎՐԱ... [< евро... < անգլ., գերմ. Euro < European եվրոպական] Բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակում է «եվրոպական, եվրոպական ստանդարտներին համապատասխանող, եվրոպական երկրներում ընդունված»:

ԵՎՐԱԼԻԳԱ[< евролига < եվրա…+ լիգա] , գ. (սպորտ.): Եվրոպական լավագույն թիմերի մրցություն ֆուտբոլից, վոլեյբոլից ևն:

ԵՎՐՈ [< евро < անգլ. Euro < անգլերեն կամ գերմաներեն European բառի կրճատ ձևը], գ. (ֆին.): Ընդհանուր դրամական միավոր եվրոպական մի շարք պետություններում:

ԵՎՐՈԱԿՑԻԱ [< евроакция < եվրո + ակցիա], գ. (ֆին.): Եվրոբաժնետոմս:

ԵՎՐՈԿՐԵԴԻՏ [< еврокредит < եվրո + կրեդիտ], գ. (ֆին.): Եվրովարկ:

ԵՎՐՈՊԻՈՒՄ [< европий < հատուկ անունից], գ. (քիմ.): Eu, պարբերական համակարգի III խմբի քիմիական տարր: Լանթանոիդ է. լատիներեն անվանումը Europium:

ԵՎՐՈՎԱԼՅՈՒՏԱ [< евровалюта < եվրո + վալյուտա], գ. (ֆին.): Եվրաարժույթ:

ԵՎՐՈՕԲԼԻԳԱՑԻԱ [< еврооблигация < եվրո + օբլիգացիա], գ. (ֆին.): Եվրոպարտատոմս:

ԵՐԱԼԱՇ [< ералаш < թուրք. aralash], գ. 1. (խսկց. խոհր.): Քաղցրավենիքների ամբողջություն: 2. (թղթխդ.): Թղթախաղի տեսակ: 3. (կինո.): Կինանկարի տեսակ: 4. *փխբ.* Խառնաշփոթ իրավիճակ:

ԵՖՐԵՅՏՈՐ [< ռուս. ефрейтор < գերմ. Gefreiter ազատված շարքային զինվորի որոշ պարտականություններից], գ. (ռազմ.): 1. Ջոկի հրամանատարին փոխարինող ավագ կամ լավագույն զինվորի զինվորական կոչում: 2. Այդ կոչումն ունեցող զինվոր:

Զ

ԶԱԳՍ [< ռուս. загс հպվ.՝ записи актов гражданского состояния], գ. Թաղապետարանի բաժին, որ արձանագրում՝ գրանցում է քաղաքացիների ամուսնությունը, ամուսնալուծությունը, որդեգրությունը, ծնունդը և մահը:

ԶԱԼ [< зал < ֆր. salle], գ. (խսկց. հնց.): Դահլիճ, սրահ:

ԶԱԼՊ [< залп < գերմ. Salve < լատ. salve բարև], գ. (խսկց. հնց.): Համազարկ:

ԶԱՄՇ [< замша < գերմ. sämisch Leder], գ. 1. Թավշակաշի՝ խավավոր նուրբ ու փափուկ կաշի, որ պատրաստվում է եղջերուի և իշայծյամի ևն մորթիներից: 2. ած. Նույնն է՝ Զամշե:

ԶԱՄՇԵ, ԶԱՄՇՅԱ, ած. Զամշից պատրաստած՝ կարած:

ԶԱՆԴՐԵՐ [< зандры < իսլանդ. sander եզակի թիվ < sand ավազ], գ. (երկրբ.): Սառցադաշտի եզրերին հարող տարածություններ՝ ծածկված սառցահալի ջրերի կող-

մից լվացված և վերանստեցված մորենային նյութերով, գերազանցապես ավազով:

...ԶԱՎՐ [< ...завр < հուն. sauros մողես] Բարդ բառերի վերջին արմատ. վերաբերում է հնագույն ժամանակների կենդանական պեղածոներին:

ԶԱՐԻՆ [< зарин < գերմ. Zarin], գ. (քիմ.): Նյարդալուծանքային թունավոր նյութ. անգույն, շարժուն հեղուկ է: Հուսալի պաշտպանական միջոցը հակագազն է:

ԶԵԲՐ [< зебра < ֆր. zèbre < Կոնգոյի լեզվով], գ. (կենդբ.): Վագրաձի՝ աֆրիկյան կենդանի ձիերի խմբից՝ սև գծերով մարմնի դեղնասպիտակավուն ֆոնի վրա, կարճ, ցցված պոչով:

ԶԵԲՈՒ [< зебу < ֆր. zebu < տիբեթ. mdzopo], գ. (կենդբ.): Եզնազգիների ենթաընտանիքին պատկանող ընտանի կենդանի, սապատավոր եզ:

ԶԵՅԳԵՐՈՒՄ [< зейгерование < գերմ. Seigern], գ. (տեխ.): Գունավոր մետալուրգիայում համաձուլվածքը բաղադրամասերի բաժանելու գործընթաց. հիմնված է նրանց հալման ջերմաստիճանների տարբերության վրա:

ԶԵՆԴ-ԱՎԵՍՏԱ, տե՛ս Ավեստա:

ԶԵՆԻԹ [< зенит < ֆր. zénith < արաբ. samt ուղղություն], գ. (աստղգ.): 1. Երկնքի այն կետը, որ գագաթնահայաց ուղղությամբ գտնվում է դիտողի գլխի վրա: 2. *փխբ.* Ամենաբարձր դիրք, որին մարդ կարող է հասնել, բարձրագույն կետ, գագաթնակետ: 3. *փխբ.* Որևէ բանի զարգացման բարձրագույն աստիճանը՝ կետը:

ԶԵՆԻԹԱՄԵՐՁ, ած. (աստղգ.): Զենիթին մերձավոր՝ մոտիկ գտնվող:

ԶԵՎՍ [< Зевс < հուն. Zeus], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ գլխավոր աստվածը. համապատասխանում է հին հռոմեական Յուպիտերին:

ԶԵՓՅՈՒՌ [< зефир < հուն. zephyros], գ. 1. Հին հույների մոտ՝ արևմտյան քամի: 2. Թեթև՝ տաք քամի: 3. Գործվածք՝ կտոր հիմնականում տղամարդկանց վերնաշապիկներ կարելու համար: 4. Մրգապաստեղ:

ԶԵՓՅՈՒՌԱԲԵՐ, ած. Զեփյուռ բերող, հով քամի բերող՝ փչող:

ԶԻԳԶԱԳ [< зигзаг < ֆր. zigzag], գ. Կեռագիծ, ոլորագիծ, կեռման:

ԶԻԳՈՏ [< зигота < հուն. zygōtē իրար միացած], գ. (կենսբ.): Բջիջ, որը առաջանում է սեռական բջիջների միաձուլման հետևանքով, կենդանիների և բույսերի բեղմնավորման գործընթացում:

ԶԻԼՈՏՆԵՐ [< зилоты < հուն. Zylotai նախանձախնդիրներ], գ. (պատմ.): Քաղաքական խմբավորում Բյուզանդիայում՝ Թեսալոնիկե քաղաքում:

ԶԻՄԱԶՆԵՐ [< зимаза < հուն. zymē թթվեցում, խմորում], գ. (քիմ.): Ֆերմենտների համալիր, որը մտնում է խմորասնկերի հյութի բաղադրության մեջ և կատալիզում գլյուկոզի սպիրտային խմորումը:

ԶԻՆԳՇՊԻԼ [< зингшпиль < գերմ. Singspiel, Singen երգ + Spiel խաղ], գ. (պատմ.): XVIII դարի երգիծական օպերայի գերմանական և ավստրիական տարատեսակը՝ երաժշտական համարների միջև առկա երկխոսություններով:

ԶԼՈՏԻ [< злотий < լեհ. zloty], գ. (ֆին.):Լեհաստանի դրամական միավոր:

ԶՄՐՈՒԽՏ [< изумруд < պարս. zummurud], գ. (հնք.): 1. Վառ կանաչ գույնի թա-

փանցիկ թանկագին քար: 2. *փխբ.* Կանաչ, բուսականություն: 3. ած. Զմրուխտի գույնի, վառ կանաչ:

ԶՈԲ [< ռուս. зоб], գ. (բժշկ.): Խպիպ՝ վահանաձև գեղձի՝ բորբոքային գործընթացների, արյունաշեղումների և ուռուցքների հետ չկապված մեծացում:

ԶՈԴԻԱԿ [< зодиак < հուն. zōdiakos kyklos կենդանական շրջան], գ. (աստղգ.): Կենդանակերպ՝ արեգակնածրին զուգահեռ տեղավորված այն 12 համաստեղությունները, որոնք կոչվում են կենդանիների անուններով:

ԶՈԼԵՐ [< золь, золи < գերմ. Sole կոլոիդ լուծույթ], գ. (ֆիզ. քիմ.): Հեղուկ դիսպերս միջավայրով խիստ դիսպերսված կոլոիդ համակարգեր:

ԶՈՄԱՆ [< зоман < գերմ.], գ. (քիմ.): Նյարդալուծանքային թունավոր նյութ. անգույն, քիչ ցնդող հեղուկ է: Մաշկի վրա ընկնելիս առաջացնում է ընդհանուր թունավորում: Պաշտպանվում են հակագազով և պաշտպանական հագուստով:

ԶՈՄԲԻ [< зомби < անգլ. zombi < աֆրիկանս zumbi հաջողություն բերող կուռք], գ. 1. Միստիկ էակ («կենդանի դիակ»), որի կարող է փոխարկվել մեռած մարդը, և որը կուրորեն ենթարկվում է իր վրա ազդեցություն գործող մարդկանց կամքին: 2. *փխբ.* Մարդ, որը կուրորեն ենթարկվում է այլ մարդու (մարդկանց) կամքին:

ԶՈՆԱ [< зона < հուն. zōne գոտի, շրջան], գ. գոտի՝ 1. (աշխգր.): Երկրագնդի մակերևույթի՝ երկու միջօրեականների միջև պարփակված տարածությունը: 2. Առհասարակ երկրի՝ որևէ բանով բնորոշվող վայր՝ շրջան՝ տարածություն: 3. (ռազմ.): Պատերազմի ժամանակ որևէ ընդհանուր հատկանիշով կամ որևէ նպատակի ծառայող վայր՝ տարածություն:

ԶՈՆԴ [< зонд < ֆր. sonde զնդոց], գ. (տեխ.): 1. Զննաձող՝ գուտապերչի կամ մետաղյա ձողանման գործիք, որով հետազոտում են վերքերը կամ մարմնի ներքին գործարանները: 2. Հորատիչ՝ անցքերի՝ փոսերի հորատման երկաթյա ձող՝ ապարների և հետազոտման համար: 3. Հատուկ գործիքներով սարքավորված օդապարիկ՝ օդի վերին շերտերը ուսումնասիրելու համար:

ԶՈՆԴԱԺ [< зондаж < ֆր. sonde], գ. 1. (բղբ.): Քաղաքականության մեջ նախապես ուսումնասիրելը, հետազոտելը: 2. (տնտսգ.): Գործարքների կամ բանակցությունների մասնակիցների դիրքորոշումների նախնական պարզումը:

ԶՈՆՏԻԿ [< зонтик < հոլանդ. zonne-dek, բառացի՝ արևից ծածկոց], գ. 1. (խսկց.): Հովանոց, ծածկոց, շվաքարան: 2. (բսբ.): Հովանոցածաղիկ:

ԶՈՈ... [< зоо... < հուն. zōon կենդանի, կենդանի էակ] Բարդ բառերի մասնիկ, որը ցույց է տալիս տվյալ բառի վերաբերելը կենդանական աշխարհին:

ԶՈՈԼՈԳԻԱ [< зоология < զոո... + հուն. logos], գ. (գիտ. հնց.): Կենդանաբանություն՝ կենսաբանության մի բաժին, որն ուսումնասիրում է կենդանական աշխարհը:

ԶՈՈԽՈՐԻԱ [< зоохория < գերմ. Zoochorie < զոո... + հուն. choreō շարժվում եմ, ուղղություն եմ վերցնում], գ. (բսբ.): Բույսերի սերմերի և պտուղների տարածումը կենդանիների միջոցով:

ԶՈՈՆԻՄ [< зооним < զոո... + հուն. ōnyma անուն], գ. (լեզվբ.): Կենդանու անունը (մականունը)՝ որպես լեզվաբանական քննության առարկա:

ԶՈՈՍՊՈՐՆԵՐ [< зооспора < զոո…+ հուն. spora ցանք, սերմ], գ. (կենսբ.): Ջրիմուռների և ստորին սնկերի հատուկ բջիջներ, որոնք ծառայում են անսեռ բազմացմանը:

ԶՈՈՏԵԽՆԻԱ [< зоотехния < ֆր. zootechnie < հուն. zōon կենդանի + technē վարպետություն], գ. (գիտ. կենդբ.): Տե՛ս Զոոտեխնիկա:

ԶՈՈՏԵԽՆԻԿԱ [< зоотехника < զոո... + հուն. technikē < technē վարպետություն], գ. (գիտ.): Կենդանաբուծություն, անասնաբուծություն՝ 1. Գյուղատնտեսու-

թյան այն ճյուղը, որ զբաղվում է անասունների բուծումով՝ լավագույն տեսակների պահպանումով, դրանց որակի բարձրացումով, նոր տեսակների ստացմամբ: 2. Անասունների բուծելը, անասունների բուծումով զբաղվելը:

ԶՈՈՖԱԳ [< зоофаг < ֆր. zoophage < հուն. zōon կենդանի + phagos ուտող], գ. (կենդբ.): Կենդանի, որը սնվում է միայն այլ կենդանիներով:

ԶՈՈՖԻԼԻԱ [< зоофилия < զոո... + հուն. philia սեր], գ. 1. (բսբ.): Բույսերի հարմարվելը՝ ընտելանալը կենդանիների (միջատների, թռչունների ևն) միջոցով փոշոտմանը: 2. (բժշկ.): Սեռական այլասերման տեսակ (հակում կենդանիների հետ սեռական հարաբերության):

ԶՐՈ [< зеро < ֆր. zéro զրո], գ. Զրոյական միավոր:

ԶՐՈՅԱԿԱՆ, ած. 1. Զրոյին հատուկ, զրոյի: 2. Զրոյի արժեք ունեցող, զրոյի հավասար:

ԶՈԻԼՈՍ [< зоил < ֆր. zoïle < լատ. zoilus < հույն հռետոր և քննադատ Զոիլոսի անունից (մ. թ. ա. IV դար), որը հայտնի է որպես Հոմերոսի ստեղծագործությունների անխնա քննադատ], գ. (հնց.): Չար և բծախնդիր քննադատ:

ԶՈՒՄԵՐ [< зуммер < գերմ. Summer < summen բզզալ, տզզալ], գ. (տեխ. խսկց.): 1. Ձայնային ազդանշաններ տալու էլեկտրական սարք: 2. Ձայնային ազդանշան:

ԶՈՒՌՆԱ [< зурна < թուրք. zurna < պարսկ. surna], գ. (երժշտ.): Երաժշտական գործիքի տեսակ:

Է

ԷԲԵՆՈՍ [< эбенос < հուն. ebenos սև ծառ], գ. Եբենոս (Էբենոս)՝ 1. (բսբ.): Եբենազգիների ընտանիքին պատկանող արևադարձային բույս: 2. Այդ ծառի փայտը, սևափայտ: 3. Այդ փայտից պատրաստված իր՝ առարկա՝ կահույք:

ԷԲԵՐԱԿԱՆՆԵՐ [< эбертисты < ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչ, լրագրող Ժ. Ռ. Էբերի անունից], գ. (պատմ.): Յակոբինյանների ձախ խմբավորում: Պաշտպանում էին աղքատ քաղաքաբնակների շահերը:

ԷԲՈՆԻՏ [< эбонит < հուն. ebenos սև ծառ], գ. (տեխ.): Կարծր եղջերառետին՝ սևագույն բեկուն նյութ, որ գործածվում է էլեկտրասարքավորումների և էլեկտրագործիքների, բժշկական սարքավորումների արտադրության մեջ: Ստացվում է բնական կամ արհեստական կաուչուկը ծծմբով վուլկանացնելիս:

ԷԲՈՒԼԻՈՍԿՈՊԻԱ [< эбуллиоскопия < լատ. ebullio եռում եմ + հուն. skopeō քննում եմ, դիտում եմ], գ. (ֆիզ. քիմ.): Ֆիզիկաքիմիական հետազոտության եղանակ, որը հիմնված է լուծույթի և մաքուր լուծիչի եռման ջերմաստիճանների տարբերությունը չափելու վրա:

ԷԳԱԼԻՏԱՐԻԶՄ [< эгалитаризм < ֆր. égalitarisme < égalité հավասարություն], գ. (փիլ.): Հավասարապաշտություն՝ ուսմունք հասարակական հակամարտությունների վերացման մասին մասնավոր սեփականության հավասար վերաբաշխման միջոցով:

ԷԳԻԴԱ [< эгида < հուն. aigis (aigidos) < Զևսի վահանի անունից], գ. (խսկց.): Հովանի, պաշտպանություն, հովանավորություն:

ԷԳՈԻԶՄ [< эгоизм < ֆր. égoïsme < լատ. ego ես], գ. Եսապաշտություն, եսամոլություն, եսասիրություն՝ 1. Իր եսը՝ իր անձնականը ուրիշների և ամբողջ հասարակության շահերից բարձր դասելը: 2. Եսամոլի արարք՝ վարքագիծ:

ԷԳՈԻՍՏ [< эгоист < ֆր. égoïste < լատ.], գ. Եսապաշտ, եսամոլ, եսասեր՝ եսապաշտությամբ աչքի ընկնող:

ԷԳՈՑԵՆՏՐԻԶՄ [< эгоцентризм < լատ. ego ես + centrum կենտրոն], գ. Մտածելակերպ, որն անհատական կողմնորոշումը (այդ թվում նեղ, անձնական շահերը) համարում է համընդհանուր սկզբունք, իսկ «ես»-ը՝ երևույթներն ընկալելու և գնահատելու միակ հնարավոր չափանիշ, եսակենտրոնություն:

ԷԳՐԵՏ [< эгрет, эгретка < ֆր. aigrette ցցունք], գ. (հզվդ.): Փետուր կամ փետուրների խումբ, որը զարդարում է կնոջ գլխարկի առաջնային մասը կամ մազերի հարդարանքը, փետրափունջ, ցցունք:

ԷԴԵԼՎԵՅՍ [< эдельвейс < գերմ. Edelweiß], գ. (բսբ.): Առյուծաճանկ՝ ցորենազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս՝ սպիտակադեղնավուն ծաղիկներով, որն աճում է լեռներում՝ բարձրությունների վրա. դրա որոշ տեսակներ հանդիպում են Սիբիրում և Ալթայում, առյուծամագիլ, առյուծաթաթիկ:

ԷԴԻԼՆԵՐ [< эдильи < լատ. aediles], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ տրիբունների օգնականները, որոնք վերահսկում էին հասարակական շենքերը և տաճարները, ճանապարհները, շուկաները, քաղաքի սննդամատակարարումը, տոնակատարությունները և հասարակական կարգուկանոնը:

ԷԴԻԿՏ [< эдикт < լատ. edictum < edico հայտարարում եմ], գ. Հրովարտակ՝ 1. (պատմ.): Հին Հռոմում՝ մագիստրանտների գործունեության ծրագիր, որ նրանք հրապարակում էին պաշտոնի անցնելիս: 2. Գերագույն իշխանության հատկապես կարևոր հրամանագիր զանազան պետություններում:

ԷԴԻՊ [< Эдип < հուն. Oidipus], գ. (դից.): 1. Հին հունական դիցաբանական հերոս, որը կարողացավ լուծել Սֆինքս-հրեշի առաջադրած երեք հանելուկները և դարձավ Թեբե քաղաքի արքան: 2. *փխբ.* Իմաստուն մարդ, որը կարողանում է բարդ հանելուկներ բացել:

ԷՋՈԹԵՐԻԿ [эзотерический < հուն. esōterikos ներքին], ած. Գաղտնի, թաքցրած. հակադիր է էկզոթերիկին:

ԷԹԱՆ [< этан < հուն. aithēr եթեր, օդ], գ. (քիմ.): Օրգանական միացություն՝ հագեցած ածխաջրածին: Անգույն, անհոտ գազ է: Ստացվում է նավթի և բնական գազի ջերմային մշակմամբ: Էթանը հումք է սպիրտների, եթերների, սինթետիկ կաուչուկի և խեժերի ստացման համար:

ԷԹԱՆՈԼ [< этанол < հուն.], գ. (քիմ.): Էթիլալկոհոլ՝ գինու սպիրտ՝ միատոմ սահմանային սպիրտ: Անգույն, դյուրաշարժ, յուրահատուկ հոտով և այրող համով հեղուկ է: Օգտագործվում է արտադրության տարբեր բնագավառներում՝ ներկերի, պայթուցիկ նյութերի, դեղագործության, սպիրտային խմիչքների ևն արտադրության մեջ:

ԷԹԵՌՆԻՏ [< этернит < լատ. aeternus մշտական], գ. (հնց.): Տանիքի ազբեստացեմենտային մամլած սալիկների անվանումը:

ԷԹԻԼ [< этил < հուն. ait(hēr) օդ + hylē նյութ, փայտ], գ. (քիմ.): Ածխածնի ու ջրածնի ատոմներից բաղկացած խումբ, որ մտնում է շատ օրգանական միացությունների բաղադրության մեջ:

ԷԹԻԼԱՑԵՏԱՏ [< этилацетат < հուն.], գ. (քիմ.): Օրգանական միացություն՝ քացախաթթվի էթիլէսթեր՝ անգույն, դուրեկան հոտով հեղուկ: Ստացվում է քացախալդեհիդից՝ ալյումինի ալկոհոլատի կատալիտիկ քանակների առկայությամբ:

ԷԹԻԼԵՆ [< этилен < հուն.], գ. (քիմ.): Չհագեցած ածխաջրածին՝ անգույն, թույլ հոտով գազ: Արտադրության մեջ ստացվում է բնական գազի և նավթի ջերմային

մշակմամբ: Օգտագործվում է էթիլ, ալկոհոլ, էթիլենօքսիդ ևն արժեքավոր նյութեր ստանալու համար:

ԷԹԻԼԵՆԳԼԻԿՈԼ [< этиленгликоль < հուն.], գ. (քիմ.): Էթանդիոլ՝ երկատոմ պարզ սպիրտ՝ անգույն, անհոտ, մածուցիկ հեղուկ: Օգտագործվում է որպես հակասառեցուցիչ միջոց, կիրառվում է նաև պլաստմասսաների, արհեստական մանրաթելի ևն արտադրության մեջ:

ԷԹԻԿԱ [< этика < լատ. ethica < հուն. ēthos բնավորություն], գ. (գիտ.): 1. Բարոյագիտություն՝ փիլիսոփայական ուսմունք բարոյականության՝ որպես հասարակական գիտակցության ձևերից մեկի մասին: 2. Հասարակության կամ նրա որևէ խավի՝ խմբավորման՝ դասակարգի ևն վարքուբարքի կանոնների ամբողջությունը:

ԷԹԻՈԼԱՑԻԱ [< этиоляция < ֆր. étioler խունանալ, թոշնել (բույսերի համար)], գ. (բսբ.): Մթության կամ սակավ լույսի պայմաններում բույսերի աճման գործընթացը: Քլորոֆիլի սինթեզի բացակայության պայմաններում բույսերը անգույն են կամ բաց դեղնավուն, տերևները մանր են, արմատը թույլ զարգացած:

ԷԹԻՈԼՈԳԻԱ [< этиология < հուն. aitia պատճառ + logos գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որը ուսումնասիրում է հիվանդության առաջացման պատճառներն ու պայմանները:

ԷԹՆՈԳԵՆԵԶ [< этногенез < հուն. ethnos ժողովուրդ + genesis ծագում], գ. (գիր.): Ժողովրդի ծագումը: Երկարատև և բարդ պատմական երևույթ, որն արտացոլում է մարդկային առանձին խմբերի ծագման, լեզվական, ազգագրական, մշակութային առանձնահատկությունները, նրանց փոխազդեցությունները, տեղաշարժերը, դրանց պատմությունը:

ԷԹՆՈԳՐԱՖԻԱ [< этнография < հուն. ethnos + graphō գրում եմ], գ. (գիտ.): Ազգագրություն՝ ցեղերի՝ ազգերի՝ ժողովուրդների կենցաղի, սովորությունների ու մշակույթի նկարագրությամբ ու դասակարգմամբ զբաղվող գիտություն:

ԷԹՆՈԼՈԳԻԱ [< этнология < հուն. ethnos + logos], գ. (գիտ.): Ազգագիտություն՝ ցեղերի՝ ազգերի՝ ժողովուրդների միջև եղած տարբերություններն ու դրանց պատճառներն ուսումնասիրող գիտություն:

ԷԹՆՈՍ [< этнос < հուն. ethnos ժողովուրդ, ցեղ], գ. (ազգգր.): Ժողովուրդ:

ԷԺԵԿՏՈՐ [< эжектор < ֆր. éjecteur < ejecter դեն նետել], գ. (տեխ.): Արտարկիչ՝ արտահանիչ հարմարանք՝ գործիք՝ օդի, վառելանյութերի ևն դուրս մղման համար:

ԷԺԵԿՑԻԱ [< эжекция < ֆր. éjection արտանետում], գ. (տեխ.): Արտարկում:

ԷԼԱՍՏԻԿ [< эластик < հուն. elastikos], գ. ած. (տեխ.): 1. Ռետինե: 2. Արհեստական առաձիգ թել՝ ժապավեն:

ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ, գ. Փոքր ճիգերի դեպքում նյութի կամ առարկայի առաձգական դարձելի զգալի դեֆորմացիայի ենթարկվելու հատկությունը (առանց քայքայվելու), առաձգականություն:

ԷԼ(Յ)ԱՏԻՎ [< элатив, элятив < լատ. elativus < effere վեր բարձրացնել], գ. (լեզվբ.): 1. Բացարձակ գերադրական աստիճան: 2. Էլ(յ)ատիվ հոլով (ֆիննական լեզուներում):

ԷԼԴՈՐԱԴՈ [< эльдорадо < իսպ. el dorado ոսկե երկիր], գ. 1. (պատմ.): Հեքիաթային հարստություններով ու հրաշալիքներով, ոսկու լեռներով ու թանկագին քարերով լի առասպելական երկիր, որ փնտրում էին Ամերիկայում իսպանական առաջին նվաճողները: 2. *փխբ.* Առասպելական հարստությունների ու հրաշալիքների երկիր:

ԷԼԵԳԱՆՏ [< элегантный < ֆր. élégant], ած. (խսկց.): 1. Նրբագեղ՝ նուրբ, պերճաշուք: 2. Նրբաճաշակ, նրբակիրթ:

ԷԼԵԳԻԱ [< элегия < հուն. elegeia < elegos բողոք], գ. (գրկն.): Եղերերգ՝ տխուր բովանդակությամբ քնարական բանաստեղծություն:

ԷԼԵԿՏՈՐԱՏ [< электорат < լատ. elector ընտրող], գ. (քղք.): Ընտրազանգված՝ ընտրողները, ընտրողների զանգվածը:

ԷԼԵԿՏՐԱ... [< электро ... < հուն. elektron խեժ, սաթ] Բարդ բառերի սկզբնամաս. օգտագործվում է էլեկտրականությանը առնչվող տերմիններում:

ԷԼԵԿՏՐԱԱԿՈՒՍՏԻԿԱ [< электроакустика < էլեկտրա...+ ակուստիկա], գ. (գիտ.): Էլեկտրաձայնագիտություն:

ԷԼԵԿՏՐԱԼԱՂԵՂ, գ. Տևական էլեկտրական լիցք էլեկտրոդների միջև, ուր առաջանում է բարձր ջերմություն և պայծառ լուսարձակում, վոլտյան աղեղ:

ԷԼԵԿՏՐԱԱՊԱՐԱՏ [< электроаппарат < էլեկտրա... + ապարատ], գ. 1. Էլեկտրականությամբ աշխատող ապարատ՝ սարք: 2. Էլեկտրական ապարատ, էլեկտրական հոսանքի սարք:

ԷԼԵԿՏՐԱԲԱՇԽԻՉ, ած. գ. Էլեկտրաէներգիան առանձին կետերի՝ կայանների և ենթակայանների ևն միջև բաշխող:

ԷԼԵԿՏՐԱԳԱՍՏՈԳՐԱՖԻԱ [< электрогастография < էլեկտրա...+ հուն. gastēr ստամոքս + graphō], գ. (բժշկ.): Ստամոքսի աշխատանքի հետազոտության եղանակ:

ԷԼԵԿՏՐԱԳՐԱՖ [< электрограф < էլեկտր...+ հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Մթնոլորտի էլեկտրական վիճակը գրանցող սարք:

ԷԼԵԿՏՐԱԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ [< электродиагностика < էլեկտր... + դիագնոստիկա], գ. (բժշկ.): Էլեկտրական հոսանքի միջոցով նյարդի անցողականության կամ մկանի կրճատվելու հատկության ստուգում:

ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ [< электродинамика < էլեկտրա... + դինամիկա], գ. (գիտ.): Ֆիզիկայի մի բաժինը, որն ուսումնասիրում է էլեկտրական լիցքերի փոխներգործությունների ու շարժումների օրենքները:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ [< электроэнергия < էլեկտրա...+ էներգիա], գ. Էլեկտրական հոսանքի էներգիա:

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱ [< электроэнергетика < էլեկտրա...+ էներգետիկա], գ. (տնտսգ.): Տնտեսության ճյուղ. ընդգրկում է էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումը, փոխակերպումը և բաշխումը:

ԷԼԵԿՏՐԱԷՆՑԵՖԱԼՈԳՐԱՖԻԱ [< электроэнцефалография < էլեկտրա...+ հուն. enkephalos գլխուղեղ + graphō], գ. (բժշկ.): Գլխուղեղի գործունեության հետազոտման մեթոդ՝ հիմնված նյարդային բջիջներում առաջացած էլեկտրական ներուժի գրանցման վրա:

ԷԼԵԿՏՐԱԹԵՐԱՊԻԱ [< электротерапия < էլեկտրա... + հուն. therapeia], գ. (բժշկ.): Էլեկտրական հոսանքով բուժման միջոց:

ԷԼԵԿՏՐԱԹԵՐՄԻԱ [< электротермия < էլեկտրա... + հուն. thermē ջերմություն], գ. (ֆիզ.): Տարբեր նյութերի տաքացման կամ հալման համար ջերմության կիրառում. վերջինս անջատվում է, երբ էլեկտրական հոսանքն անցնում է կարծր հեղուկ կամ գազանման (էլեկտրական աղեղ) հաղորդիչներով:

ԷԼԵԿՏՐԱԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ [< электролаборатория < էլեկտրա...+ լատ. laborare], գ. (տեխ.): Էլեկտրասարքերի ստուգման և կարգավորման լաբորատորիա:

ԷԼԵԿՏՐԱԼԱՄՊ [< электролампа < էլեկտրա...+ անգլ. lamp], գ. (տեխ.): Ապակե օդազուրկ անոթ, որ էլեկտրահոսանքից շիկացող լարով լույս է ճառագում:

ԷԼԵԿՏՐԱԼՅՈՒՄԻՆԵՍՑԵՆՑԻԱ [< электролюминесценция < էլեկտրա…+ լատ. lumen], գ. (տեխ.): Լյումինեսցենցման տեսակ, որն առաջանում է էլեկտրական դաշտի ազդեցությամբ:

ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ, գ. Էներգիայի այլ տեսակներից էլեկտրական էներգիա ստեղծող՝ արտադրող ձեռնարկություն:

ԷԼԵԿՏՐԱԿԱՐԴԻՈԳՐԱՄԱ [< электрокардиограмма < էլեկտրա…+ հուն. kardia + gramma], գ. Սրտի աշխատանքի գրային պատկերը, որ ստացվում է էլեկտրակարդիոգրաֆի միջոցով:

ԷԼԵԿՏՐԱԿԱՐԴԻՈԳՐԱՖԻԱ [< электрокардиография < էլեկտրա… + հուն. kardia սիրտ + graphō գրում եմ], գ. (բժշկ.): Սրտի բնախոսական հատկությունների ուսումնասիրության եղանակ, որը հիմնված է սրտամկանի աշխատանքի ժամանակ նրա մեջ առաջացող էլեկտրական ազդակների գրանցման վրա:

ԷԼԵԿՏՐԱԿՈՆՑԵՌՆ [< электроконцерн < էլեկտրա…+ անգլ. concern], գ. (տնտսգ.): Էլեկտրաարդյունաբերական կոնցեռն:

ԷԼԵԿՏՐԱՄԱԳԻՍՏՐԱԼ [< электромагистраль < էլեկտրա…+ լատ. magistralis], գ. Էլեկտրական մագիստրալ՝ գլխավոր գիծ:

ԷԼԵԿՏՐԱՄԵԽԱՆԻԿ [< электромеханик < էլեկտրա...+ հուն. mēchanikē], գ. Էլեկտրամեխանիկայի մասնագետ:

ԷԼԵԿՏՐԱՄԵԽԱՆԻԿԱ [< электромеханика < էլեկտրա…+ հուն. mēchanikē], գ. (տեխ.): Էլեկտրատեխնիկայի մի ճյուղը, որ զբաղվում է էլեկտրաշարժիչների, էլեկտրամեքենաների և էլեկտրական մեխանիզմների կառուցումով ու շահագործումով:

ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺ [< электромонтаж < էլեկտրա... + ֆր. montage], գ. Էլեկտրասարքավորումների՝ էլեկտրահարմարանքների նն մոնտաժում:

ԷԼԵԿՏՐՈՄՈՆՏՅՈՐ [< электромонтер < էլեկտրա... + ֆր. monteur], գ. Էլեկտրասարքավորումները կարգավորող ու սպասարկող և էլեկտրամատակարարման գծերն ու հարմարանքները անցկացնող որակյալ բանվոր:

ԷԼԵԿՏՐԱՊՈՄՊ [< электропомп < էլեկտրա…+ ֆր. pompe], գ. (տեխ.): Էլեկտրական պոմպ:

ԷԼԵԿՏՐԱՍԻՆԹԵԶ [< электросинтез < էլեկտրա… + հուն. synthesis], գ. (տեխ.): Էլեկտրալուծության միջոցով օրգանական և անօրգանական նյութերի ստացման եղանակ:

ԷԼԵԿՏՐԱՍՏԱՏԻԿԱ [< электростатика < էլեկտրա... + լատ. status դրություն], գ. (գիտ.): Ֆիզիկայի մի բաժինը, որն ուսումնասիրում է անշարժ էլեկտրական լիցքերի հատկություններն ու փոխազդեցությունները:

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ [< электротехника < էլեկտրա... + հուն. technikē], գ. (գիտ.): 1. Գիտություն էլեկտրաէներգիայի գործնական կիրառությունների մասին: 2. Տեխնիկայի այն ճյուղը, որ զբաղվում է էլեկտրաէներգիան գործնական

նպատակներով օգտագործելու խնդիրներով:

ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ [< электротранспорт < էլեկտր...+ լատ. transportare], գ. (տրանս.): Էլեկտրական էներգիայով աշխատող տրանսպորտ:

ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑ, գ. Էլեկտրաէներգիան էլեկտրականության աղբյուրից սպառման կետերին հասցնող էլեկտրագծերի ցանցը՝ ամբողջությունը: 2. Այդ ցանցի կառուցման ու շահագործման գործերով զբաղվող հիմնարկություն:

ԷԼԵԿՏՐԱՔԻՄԻԱ [< электрохимия < էլեկտրա…+ միջին լատ. al(chimia)], գ. (գիտ.): Ֆիզիկական քիմիայի մի բաժինը, որ ուսումնասիրում է քիմիական ու էլեկտրական էներգիայի փոխադարձ վերածումների ժամանակ տեղի ունեցող գործընթացները:

ԷԼԵԿՏՐԱՕՊՏԻԿԱ [< электрооптика < էլեկտրա… + հուն. optikē], գ. (գիտ.): Ֆիզիկայի մի բաժինը, որն ուսումնասիրում է էլեկտրական դաշտի ազդեցությունը նյութի օպտիկական հատկությունների վրա:

ԷԼԵԿՏՐԱՖԻԶԻՈԼՈԳԻԱ [< электрофизиология < էլեկտրա…+ հուն. physis + logos գիտություն], գ. (գիտ.): Ֆիզիոլոգիայի բաժին, որն ուսումնասիրում է էլեկտրական երևույթները կենդանի հյուսվածքներում և բջիջներում:

ԷԼԵԿՏՐԱՖԻԿԱՑԻԱ [< электрофикация < էլեկտր.. + լատ. facere անել], գ. (տնտսգ.): Էլեկտրականության՝ որպես էներգիայի հիմնական տեսակի օգտագործումը արդյունաբերության, գյուղատնտեսության, հաղորդակցման ու կենցաղի մեջ:

ԷԼԵԿՏՐԵՏ [< электрет < անգլ. electret], գ. (էլեկտր.): Բևեռացած դիէլեկտրիկ. ստացվում է տեսակարար մեծ դիմադրություն ունեցող մոմատիպ նյութերից:

ԷԼԵԿՏՐԻԿ [< электрик < անգլ. electric]: Էլեկտրականության մասնագետ:

ԷԼԵԿՏՐՈԴ [< электрод < էլեկտրա…+ հուն. hodos ճանապարհ, ուղի], գ. 1. (էլեկտր.): Թիթեղ՝ ձող՝ գնդիկի ևն ձևով հաղորդիչ, որով էլեկտրահոսանքը հաղորդվում է հեղուկին կամ գազին: 2. (տեխ.): Մեքենայի մաս, որ հոսանքը հաղորդում է մշակման ենթակա մասերին՝ էլեկտրական հատման ու ձուլման ժամանակ: 3. Էլեկտրական շղթայի երկու ծայրերից յուրաքանչյուրը:

ԷԼԵԿՏՐՈԼԻԶ [< электролиз < էլեկտրա...+ հուն. lysis], գ. (ֆիզ.): Էլեկտրատարրալուծում՝ էլեկտրականության միջոցով մարմինը լուծելը՝ բաղադրիչ մասերի բաժանելը:

ԷԼԵԿՏՐՈԼԻՏ [< электролит < էլեկտրա… + հուն. lytos], գ. (քիմ.): Էլեկտրալուծույթ՝ քիմիական նյութ, որը լուծման՝ քայքայման է ենթարկվում իր միջով էլեկտրական հոսանք անցնելուց:

ԷԼԵԿՏՐՈՆ [< электрон < հուն. elektron սաթ], գ. 1. (ֆիզ.): Նյութի՝ բացասական լիցքով նվազագույն տարրական մասնիկ: 2. (սխ.) Էլեկտրականություն: 3. Ալյումինի և մագնեզիումի համաձուլվածք:

ԷԼԵԿՏՐՈՆԱԳՐԱՖԻԱ [< электронография < էլեկտրոն + հուն. graphō գրում եմ], գ. (ֆիզ.): Նյութերի կառուցվածքի հետազոտման մեթոդ, որի հիմքում ընկած է էլեկտրոնների դիֆրակցիայի երևույթը:

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ [< электроника < հուն.], գ. (գիտ.): Ֆիզիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է էլեկտրոնային գործընթացները դատարկության, նյութերի, կարծր մարմինների մեջ, ինչպես և տեխնիկայի այն ճյուղը, որ զբաղվում է էլեկտրոնային սարքերի ստեղծումով, արտադրությամբ ու կիրառությամբ:

ԷԼԵԿՏՐՈՍԿՈՊ [< электроскоп < էլեկտրա… + հուն. skopeō նայում եմ], գ. Էլեկտրադիտակ:

ԷԼԵԿՏՐՈՆ-ՎՈԼՏ [< электрон-вольт < հուն.], գ. (ֆիզ.): Էներգիայի արտահամակարգային միավոր. կիրառվում է հիմնականում ատոմային և միջուկային ֆիզիկայում:

ԷԼԵԿՏՐՈՒՄ [< электрум < հուն.], գ. (հնք.): Միներալ. բնածին ոսկու՝ արծաթով հարուստ տարբերակը:

ԷԼԵՄԵՆՏ [< элемент < լատ. elementum], գ. 1. (փիլ.): Հին հռոմեական փիլիսոփայության մեջ՝ տարրեր. բնության բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը (կրակ, ջուր, օդ, հող): 2. (քիմ.): Տարր. պարզ նյութ, որը սովորական քիմիական միջոցներով չի տարրալուծվում և հանդիսանում է այլ բարդ նյութերի բաղկացուցիչ մասը: 3. Բաղադրիչ, որևէ բանի կազմող՝ բաղադրող՝ բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը:

ԷԼԵՄԵՆՏԱՐ [< элементарный < լատ. elementarius], ած. (խսկց.): Տարրական՝ 1. Սկզբնական, նախնական, որևէ բանի հիմունքներին վերաբերող: 2. Ամենապարզ, հասարակ, ոչ մի դժվարություն չներկայացնող: 3. Ինքնըստինքյան՝ առանց բացատրության հասկանալի, պարզ: 4. Մակերեսային, սահմանափակ, պարզունակ: 5. Ամենաանհրաժեշտ, հիմնական: 6. (ֆիզ.): Հայտնիներից՝ եղածներից ամենափոքրը, փոքրագույն: 7. Անբաժանելի, անտրոհելի:

ԷԼԵՎԱՏՈՐ [< элеватор < լատ. elevare բարձրացնել], գ. (տեխ.): 1. Հացահատիկների մեքենայացված շտեմարան: 2. Ամբարիչ, փոխադրիչ հարմարանք: 3. Ատամնահան գործիք:

ԷԼԻԶԻԱ [< элизия < լատ. elisio դուրսմղում], գ. (լեզվբ.): Հորանջ՝ բառավերջի ձայնավորի հապավում, երբ հաջորդ բառն սկսվում է նույն ձայնավորով (օր.՝ ֆրանսերենում l' esprit (խելք)> le esprit-ի փոխարեն):

ԷԼԻԶԻՈՒՄ [< Элизий, Элизиум < լատ. Elysium < հուն. Elysion], գ. 1. (դից.): Էլիզեյան՝ Եղյոսյան դաշտեր (աստվածների՝ ընտրյալների բնակավայր ծայրագույն Արևմուտքում): 2. (բնստղծ. հնց.): Դրախտավայր:

ԷԼԻՄԻՆԱՑԻԱ [< элиминация < լատ. eliminare դուրս հանել, վռնդել < limen դուռ, դուրս], գ. 1. (մանգ.): Հեռացում, բացառում, վերացում: 2. (մաթ. հնց.): Արտաքսում:

ԷԼԻՊՍ(ԻՍ) [< эллипс(ис) < հուն. elleipsis բացթողում], գ. 1. (երկրչ.): Ձվածիր՝ փակված կոր, որի յուրաքանչյուր կետի՝ տվյալ երկու կետերից հեռավորությունների գումարը հաստատուն է, ձվարդ: 2. (լեզվբ.): Ձեղչում՝ խոսքի մեջ որևէ բառի բացթողումը, որը հեշտությամբ կարելի է վերականգնել:

ԷԼԻՊՍԱՁԵՎ, ած. Ձվածրաձև, ձվարդաձև:

ԷԼԻՏԱ [< элита < ֆր. élite լավագույն], ած. գ. 1. (բսբ.): Ընտրատեսակ՝ բույսերի և կենդանիների բազմացման համար ընտրված ընտիր տեսակ, օրինակ: 2. Ընտրանի՝ հասարակության ևն ընտիր մասը՝ խավը: 3. Վերնախավ:

ԷԼԻՏԱՐ [< элитарный < ֆր.], ած. 1. (խսկց.): Էլիտային հատուկ՝ վերաբերող: 2. Ընտրանու: 3. Վերնախավային:

ԷԼԻՔՍԻՐ [< эликсир < ֆր. élixir < արաբ.], գ. 1. (պատմ.): Միջնադարյան ալքիմիկոսների պնդմամբ՝ կենսատու հեղուկ, որը հավերժ երիտասարդություն է ապահովում: 2. (բժշկ.): Բուսական հատուկ կամ սպիրտի, յուղերի ևն խառնուրդով թանձր թուրմ, որ գործածվում է բժշկության մեջ:

ԷԼՅՈՒՎԻԱԼ [< элювий < լատ. eluere ողողել, ողողելով քանդել, լվանալով մաքրել], ած. (երկրբ.): Հողմահարված ապարակուտակ:

ԷԼՅՈՒՎԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ – (երկրբ.): Ապարների հողմահարման տեղում մնա-

ցած արգասիքներ, որոնք տարբեր չափսերի անկյունավոր ապարաբեկորների և մասնիկների խառնածոներ են. (լինում են կավային, ավազային, խճաքարային և խոշորաբեկոր):

ԷԼ. ՓՈՍՏ [< эл. почта < անգլ. e-mail] – (տեխ.): Էլեկտրոնային փոստ՝ կապի ժամանակակից միջոցներից:

ԷԽԻՆԱԿՈԿ [< эхинакокк < հուն. echinos ոզնի + kokkos ցորեն], գ. 1. (կենդբ.): Պարկաճիճու՝ բշտաճիճու, բշտորդ՝ մակաբույծ, ժապավենաձև ճիճու, որն ապրում է մի քանի կենդանիների, նաև մարդու աղիքներում: 2. Դրա թրթուրը, որ լինում է մարդու և կենդանիների տարբեր գործարաններում և առաջացնում է ծանր խանգարումներ ու հիվանդություններ:

ԷԽԻՆԱԿՈԿՈԶ [< эхинококкоз < էխինակոկ+հուն. eidos], գ. (բժշկ.): Մարդկանց և կենդանիների քրոնիկական ճիճվային հիվանդություն:

ԷԽՈ [< эхо < հուն. echōe արձագանք], գ. (հզվդ.): Արձագանք՝ ձայնի անդրադարձումը՝ հետադարձ կրկնությունը:

ԷԽՈԼՈՏ [< эхолот < էխո + հոլանդ. lood], գ. (տեխ.): Էլեկտրական չափիչ սարք նավերի վրա՝ ծովի խորությունն ավտոմատորեն չափելու համար:

ԷԿԶԱԼՏԱՑԻԱ [< экзальтация < լատ. exaltatio], գ. Հիացմայլություն՝ ծայրահեղ հիցամունք՝ զմայլանք՝ ոգևորություն:

ԷԿԶԱՐԽ [< экзарх < հուն. exarchos], գ. 1. (պատմ.): Միջին դարերում՝ բյուզանդական կայսեր փոխանորդը: 2. (եկեղ.): Բարձրաստիճան հոգևորական, որ կառավարում է մի քանի թեմ:

ԷԿԶԵԳԵՏԻԿԱ [< экзегетика < հուն. exēgētikos], գ. Կրոնական կամ փիլիսոփայական երկերի մեկնաբանությունների կանոնների ու եղանակների ամբողջությունը:

ԷԿԶԵԿՈՒՑԻԱ [< экзекуция < լատ. exsecutio կատարում], գ. 1. (պատմ.): Մարմնապատիժ՝ մարմնական պատիժ: 2. Դատական կամ վարչական մարմնի վճռի ի կատար ածելը: 3. (իրավբ.): Միջազգային իրավունքի մեջ՝ մեկ տերության կողմից պատժական իրավունքների գործադրություն մյուսի նկատմամբ:

ԷԿԶԵՄԱ [< экзема < հուն. ekzeō], գ. (բժշկ.): Թրմաքոս՝ մաշկի բորբոքային, ոչ վարակիչ հիվանդություն, որ արտահայտվում է բշտիկների՝ ցանի՝ թեփի շատացումով ու թորով:

ԷԿԶԵՄՊԼՅԱՐ [< экземпляр < լատ. exemplar օրինակ], գ. (խսկց.): Նմուշ՝ նույնատիպ առարկաների, կենդանի էակների նն օրինակ:

ԷԿ(Ք)ԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄ [< экзистенциализм < լատ. existentia գոյություն], գ. (փիլ. գրկն.): XX դ. սկզբի ուղղություն փիլիսոփայության և գրականության մեջ. գոյության փիլիսոփայություն, որի գլխավոր թեման մարդու անհատական կեցությունն է, նրա կյանքի իմաստն ու ճակատագիրը:

ԷԿ(Ք)ԶԻՍՏԵՆՑԻԱԼԻՍՏ [< экзистенциалист < լատ.], գ. Էկզիստենցիալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԷԿԶՈԳԱՄԻԱ [< экзогамия < հուն. exō դուրս, արտաքին + gamos ամուսնություն], 2. (ազգգր.): Տարամուսնություն, արտամուսնություն՝ նախնադարյան տոհմատիրական հասարակարգին հատուկ սովորություն, որը արգելում է նույն ցեղի անհատներին իրար հետ ամուսնանալ:

ԷԿԶՈԳԵՆ [< экзогенный < հուն. exō + genos ծագում], ած. (երկրբ.): Արտածին՝ մի բանի սահմաններից դուրս ծնված՝ գոյացած:

ԷԿԶՈԹԵՐԻԿ [< экзотерический < հուն. exōterikos արտաքին], ած. (հզվդ.):

Հանրամատչելի, բաց, հրապարակային:

ԷԿԶՈԹԵՐՄԻԿ [< экзотермический < հուն. exō + thermos ջերմ], ած. (ֆիզ.): Ջերմարտադրական, ջերմատու:

ԷԿԶՈՏԻԿԱ [< экзотика < հուն. exōtikos օտար, օտարերկրյա], գ. (խսկց.): Տարաշխարհիկություն՝ այն ամենը, ինչ որ արտասովոր՝ արտակարգ՝ տարօրինակ է:

ԷԿԻՊԱԺ [< экипаж < ֆր. équipage], գ. 1. (հնց.): Կառք՝ նմանատիպ փոխադրամիջոցների ընդհանուր անվանումը: 2. Անձնակազմ՝ ինքնաթիռի, տանկի ևն սպասարկող կազմը:

ԷԿԼԱՄՊՍԻԱ [< эклампсия < հուն. eklampsis բռնկում], գ. (բժշկ.): Թալալոց, թալար՝ ծանր տոքսիկոզ՝ հղիության երկրորդ շրջանում՝ ուշաթափություններով և ցնցումներով ուղեկցվող:

ԷԿԼԵԿՏԻԶՄ [< эклектизм < հուն. eklektikos ընտրող], գ. (փիլ.): Տարբեր սկզբունքների՝ տեսակետների՝ հայացքների մեխանիկական, սկզբունքայնությունից զուրկ միացում՝ միավորում՝ համադրում:

ԷԿԼԵԿՏԻԿ [< эклектик < հուն.], 1. ած. Էկլեկտիզմին հատուկ, էկլեկտիզմի վրա հիմնված: 2. ած. գ. Էկլեկտիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԷԿԼԵԿՏԻԿԱ [< эклектика < հուն.], գ. (փիլ.): Ընտրաքաղություն՝ տարբեր, երբեմն հակադիր, բնութագրումների միացումը մեկ ամբողջության, տարբեր սկզբունքների համատեղումը մեկ տեսության մեջ, որը հաճախ աղճատում է հետազոտվող առարկայի պատկերը՝ պահպանելով տրամաբանական հիմնավորվածության երևութականությունը:

ԷԿԼԵՍԻԱ [< экклесия < հուն. ekklesia], գ. (պատմ.): Հին Աթենքում՝ ժողովրդական ժողով՝ պետության սահմանադրական օրգանը ստրկատիրական ժողովրդավարության շրջանում:

ԷԿԼԵՐ [< эклер < ֆր. éclair բուն կամ կայծակ], գ. (խսկց. խոհր.): Թխվածքաբլիթ՝ եփված խմորով և քաղցր խյուսով:

ԷԿԼԻՊՏԻԿԱ [< эклиптика < հուն. ekleiptike < ekleipsis խավարում], գ. (աստղգ.): Խավարածիր՝ երկնային մեծ շրջան, որ երևութապես կատարում է արեգակը մի տարվա ընթացքում (իրականում՝ երկրի տարեկան պտույտի գիծը արեգակի շուրջը), և որի մեջ տեղի են ունենում արեգակի և լուսնի խավարումները, խավարման ծիր:

ԷԿԼՈԳ(Ա) [< эклога < հուն. eklogē ընտրություն, հավաքածու], գ. 1. (պատմ.): Օրենսդրական ժողովածու Բյուզանդիայում 739-740 թթ.: 2. Հովվերգություն:

ԷԿԼՈԳԻՏ [< эклогит < հուն. eklogē տեսակավորում, ընտրություն], գ. (հնք.): Բյուրեղահատիկային ապար. հիմնականում կազմված է նռնաքարերից և օմֆացիտից:

ԷԿՈԼՈԳԻԱ [< экология < հուն. oikos տուն, հայրենիք + logos գիտություն], գ. (գիտ.): 1. Բնապահպանություն՝ կենսաբանության մի բաժինը, որ ուսումնասիրում է կենդանական ու բուսական մարմինների և նրանց շրջապատող միջավայրի փոխհարաբերությունները: 2. Հասարակական էկոլոգիա. սոցիոլոգիայի մի բաժինը, որ ուսումնասիրում է մարդու և շրջապատի փոխհարաբերությունը:

ԷԿՈՆՈՄԱՅԶԵՐ [< экономайзер < անգլ. economizer], գ. (տեխ.): 1. Կաթսայական ագրեգատի տարր, ջերմափոխանակիչ, որտեղ սնող ջուրը կաթսա մտնելուց առաջ տաքացվում է հեռացվող գազերով: 2. Ավտոմեքենայի մանրակ, որը փակում է հեղուկ վառելիքի հոսքը դեպի շարժիչ՝ մեքենայի՝ իներցիայով շարժվելու ժամանակ:

ԷԿՈՆՈՄԵՏՐԻԱ [< эконометрия < էկոնոմիկա + հուն. metreō չափում եմ], գ. (գիտ.): Տնտեսագիտության ուղղություն. բնութագրվում է տնտեսական երևույթների քանակական օրինաչափությունների վերլուծման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների լայն կիրառմամբ՝ անտեսելով այդ երևույթների որակական, սոցիալական բնույթը:

ԷԿՈՆՈՄԻԱ [< экономия < հուն. oikonomia], գ. (տնտսգ.): Տնտեսվարություն՝ տնտեսության հմուտ կերպով կառավարումը, խնայում, խնայողություն:

ԷԿՈՆՈՄԻԶՄ [< экономизм < հուն.], գ. (պատմ.): Օպորտունիստական հոսանք ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ (XIX դարի վերջում և XX դարի սկզբին). ըստ դրա՝ բանվոր դասակարգը պետք է պայքարեր բացառապես իր տնտեսական դրությունը բարելավելու համար՝ բուրժուազիային թողնելով քաղաքական պայքարը ինքնակալության դեմ:

ԷԿՈՆՈՄԻԿԱ [< экономика < հուն. oikonomia տնտեսության ղեկավարում], գ. Տնտեսություն՝ 1. (տնտսգ.): Տվյալ հասարակարգի՝ հասարակության արտադրական ուժերի զարգացմանը համապատասխանող արտադրահարաբերությունների ամբողջությունը: 2. Երկրի՝ շրջանի ևն տնտեսական կյանքը, տնտեսություն: 3. Տնտեսագիտություն:

ԷԿՈՆՈՄԻՍՏ [< экономист < հուն.], գ. (հնց.): 1. Էկոնոմիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. Տնտեսագետ:

ԷԿՈՏԻՊ [< экотип < հուն. oikos տուն + typos ձև, օրինակ], գ. (բսբ.): Որևէ տեսակին պատկանող բույսերի խումբ, որը, աճելով որոշակի հողակլիմայական և աշխարհագրական պայմաններում, ձեռք է բերում ուրույն մորֆոլոգիական, անատոմիական, ֆիզիոլոգիական հատկանիշներ և տարբերվում նույն տեսակի մյուս անհատներից:

ԷԿՎԱԼԱՅԶԵՐ [< эквалайзер < անգլ. equalizer < equalize հավասարեցնել], գ. (տեխ.): Ռադիոէլեկտրոնային համակարգ՝ մանրակ բարձրակարգ ստերեոֆոնիկ ապարատներում, որը ապահովում է պարզ, մաքուր ձայն՝ հնչեղություն:

ԷԿՎԱՏՈՐ [< экватор < լատ. aecuator հավասարեցնող], գ. (աշխգր.): Հասարակած՝ 1. Երկրի պտույտի առանցքին ուղղահայաց մեծ շրջագիծը, որ հավասար հեռավորություն ունի երկու բևեռներից և բաժանում է երկրագունդը հավասար մասերի: 2. Երկրի այն գոտին, որի վրայով անցնում է այդ շրջագիծը:

ԷԿՎԻԼԻԲՐԻՍՏԻԿԱ [< эквилибристика < լատ. aequilibris հավասարակշիռ], գ. (արվ.): Կրկեսային արվեստի տեսակ՝ հնարքների և վարժությունների ամբողջություն, որոնք կատարվում են ոչ կայուն՝ շարժվող առարկաների վրա:

ԷԿՎԻՎԱԼԵՆՏ [< эквивалент < լատ. aeguivalens (aeguivalentis)], ած. գ. (հնց.): Համարժեք՝ 1. Միևնույն արժեքն ունեցող, հավասարարժեք: 2. *փխբ.* Նույն հարգը՝ նույն նշանակությունն ունեցող: 3. Համազոր, համապատասխան: 4. (տնտսգ.): Ապրանք, որի մեջ կամ որով արտահայտվում է այլ ապրանքների արժեքը:

ԷԿՏԱԶԻԱ [< эктазия < հուն. ektasis], գ. (բժշկ.): Խոռոչային օրգանների ընդարձակում:

ԷԿՏՈ... [< экто ... < հուն. ektos դուրս, արտաքին] Բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակում է արտաքին, դուրս:

ԷԿՏՈԳԵՆԵԶ [< эктогенез < էկտո...+ հուն. genesis ծագում, առաջացում], գ. (գիտ.): Էվոլյուցիոն ուսմունքի ուղղությունների ընդհանուր անվանում: Ըստ այդ ուղղությունների՝ բնության պատմական զարգացումը դիտվում է որպես արտա-

քին միջավայրին օրգանիզմների հարմարվելու ուղղակի, պասսիվ գործընթաց:

ԷԿՏՈԴԵՐՄ [< эктодерма < էկտո…+ հուն derma մաշկ], գ. (կենդբ.): 1. Բազմաբջիջ օրգանիզմների սաղմի արտաքին շերտ (արտաքին սաղմնաթերթիկ): 2. Աղեխորշավոր կենդանիների մարմնի արտաքին պատ, որը կազմված է բջիջների մեկ շերտից:

ԷԿՐԱՆ [< экран < ֆր. écran], գ. 1. Մակերես (սպիտակ կտավ, պատ ևն), որի վրա ցուցադրում են կինոնկարները, մոգական լապտերների պատկերները ևն, լուսապաստառ: 2. Լուսային պատկերների՝ ազդանշանների ևն վերարտադրության մակերես, պատկերացույց, հեռուսատատեսային էկրան: 3. (տեխ.): Շարժական վահան՝ հալոցի (հնոցի) կրակից՝ լույսից ևն պաշտպանելու համար, հրադիմակալ, լուսադիմակալ: 4. (տեխ.): Մետաղյա վահան՝ էլեկտրական գործիքը ևն արտաքին ազդեցությունից պաշտպանելու համար:

ԷԿՐԱՆԱՎՈՐԵԼ, չբ. 1. Էկրանի՝ կինոնկարի համար հարմարեցնել, գրվածքը (վեպ, պիես ևն)՝ իրադարձությունը ևն կինոսցենարի վերածել՝ նկարահանելու համար: 2. Կինոֆիլմի վերածել, էկրանահանել:

ԷԿՈՒՄԵՆՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ [< экуменическое (< հմմտ. լատ. oecumenicus < հուն. oikumenē կենսահող) движение] – (կրոն.): Քրիստոնեական եկեղեցիները միավորել ցանկացող կրոնական շարժում: IV դարից քրիստոնեական եկեղեցու բաժանման հետ մեկտեղ նկատվել են տարբեր եկեղեցիների միավորման միտումներ՝ համաշխարհային («տիեզերական») եկեղեցի ստեղծելու նպատակով:

ԷՄԱԼ [< эмаль < ֆր. émail], գ. 1. Արծն՝ անթափանցիկ գունավոր ապակենման նյութ, որի բարակ շերտով պատում են մետաղյա իրերը, արծնապակի: 2. Ատամի արտաքին մակերեսը պատող նյութը:

ԷՄԱՆԱՑԻԱ [< эманация < ուշ լատ. emanatio արտահոսել, բխել], գ. 1. (փիլ. հնց.): Հին հունական և միջնադարյան փիլիսոփայության տերմին, որ նշանակել է կեցության ստորին, անցողիկ ձևերի բխումը բարձրագույնից՝ անփոփոխ, անսպառ նախահիմքից: 2. (քիմ.): Em, ռադիոակտիվ ռադոն տարրի նախկին անվանումը:

ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱ [< эмансипация < լատ. emancipatio], գ. (քղք.): Ազատագրություն՝ կախյալ վիճակից, ենթակայությունից, կեղեքումից, սնոտիապաշտությունից ևն ազատագրում:

ԷՄԲԱՐԳՈ [< эмбарго < իսպ. embargo արգելում], գ. Արգելք, բեռնարգելք՝ 1. (տնտսգ.): Որևէ բանի արտահանման ու ներմուծման արգելք: 2. (իրավք.): Օտար տերության պատկանող ունեցվածքի (նավի, բեռների ևն) ներկալում, նավարգելք:

ԷՄԲԼԵՄ [< эмблема < լատ. emblema < հուն. emblēma], գ. (խսկց.): 1. Խորհրդապատկեր՝ ինչ-որ գաղափարի պայմանական նշան: 2. Զինանշան: 3. (տնտսգ.): Դրոշմանիշ, դրոշմապատկեր:

ԷՄԲՈԼԻԱ [< эмболия < հուն. emballō ներխուժում], գ. (կզմխս.): Արյան կամ ավիշի հոսքով տարբեր մասնիկների՝ էմբոլների (թրոմբ, ճարպի կաթիլներ, գազի

բշտիկներ, քայքայված ուռուցքի բջիջներ) տեղաշարժվելը, որոնք կարող են խցանել արյան անոթի լուսանցքը և հյուսվածքներում առաջացնել արյան շրջանառության խանգարումներ՝ ինֆարկտ, մեռուկացում, փտախտ, անոթախցանում:

ԷՄԲՐԻՈԳԵՆԵԶ [< эмбриогенез < հուն. embryon սաղմ + genesis], գ. (կենսբ.): Օրգանիզմների սաղմնային զարգացման գործընթացը:

ԷՄԲՐԻՈԼՈԳԻԱ [< эмбриология < հուն. embryon + logos ուսմունք], գ. (կենսբ.): Գիտություն օրգանիզմների սաղմնային զարգացման գործընթացների մասին:

ԷՄԲՐԻՈՆ [< эмбрион < հուն. embryon], գ. 1. (կենսբ.): Սաղմ՝ մարդու և կենդանու պտուղը. ձվադրումից մինչև վերջնական արդյունքը: 2. (բսբ.): Բույսերի պտուղը:

ԷՄԲՐԻՈՏՈՄԻԱ [< эмбриотомия < հուն. embryon + tomē հատում], գ. (բժշկ.): Պտղահատում, պտղի կտրատում և բնական ճանապարհով կնոջ արգանդից հեռացում:

ԷՄԵՏՐՈՊԻԱ [< эмметропия < հուն. emmetros համաչափ + ops աչք], գ. (բժշկ.): Նորմալ՝ կանոնավոր տեսողություն:

ԷՄԻԳՐԱՆՏ [< эмигрант < լատ. emigrans (emigrantis) արտահանված], գ. (խսկց.): Վտարանդի՝ տարագիր անձ, որը հեռացվել է երկրից այս կամ այն պատճառով (տնտեսական, քաղաքական, կրոնական ևն):

ԷՄԻԳՐԱՑԻԱ [< эмиграция < լատ. emigrare], գ. (խսկց.): 1. Արտագաղթ՝ երկրից հեռանալը, հեռացվելը: 2. Իբրև վտարանդի՝ օտար երկրում ապրելը: 3. (հվք.): Վտարանդիներ, գաղութի բնակչությունը:

ԷՄԻՆԵՆՑԻԱ [< эминенция < լատ. eminentia առավելություն], գ. (կրոն.): Կաթոլիկ եպիսկոպոսների և կարդինալների տիտղոս:

ԷՄԻՍԱՐ [< эмиссар < լատ. emissarius ուղարկված], գ. (խսկց.): Գործակալ՝ գաղտնի քաղաքական հանձնարարությամբ այլ երկիր ուղարկված անձ:

ԷՄԻՍԻԱ [< эмиссия < լատ. emissio թողարկում], գ. (ֆին.): Արտարկ՝ պետության կամ մասնավոր ընկերությունների կողմից արժեթղթեր, բանկատոմսեր և թղթադրամներ բաց թողնելը՝ թողարկելը, դրամաթողարկում:

ԷՄԻՍԻՈՆ [< эмиссионный < լատ.], ած. Արտարկային:

ԷՄԻՐ [< эмир < արաբ., amir իշխող], գ. Ցեղապետի՝ իշխող պետի՝ կառավարչի, ինչպես և՝ Մուհամմեդի հետևորդների տիտղոսը մի քանի մահմեդական երկրներում:

ԷՄԻՐԱԹ [< эмират < արաբ. 'amir իշխող], գ. Պետության կամ ֆեոդալի տարածք Ասիայում կամ Աֆրիկայում (էմիրի կառավարմամբ):

ԷՄՈՏԻՎԻԶՄ [< эмотивизм < լատ. emovere հուզել], գ. (փիլ.): Նեոպոզիտիվիստական բարոյագիտական ըմբռնում, որը բարոյականությունը հակադրում է գիտական մտածողությանը, արժեքը՝ գիտելիքներին:

ԷՄՈՑԻԱ [< эмоция < ֆր. émotion < լատ. emovere հուզել], գ. (խսկց.): Հույզ՝ հոգեկան ապրում, զգացմունք:

ԷՄՈՑԻՈՆԱԼ [< эмоциональный < ֆր., լատ.], ած. Հուզական, դյուրահույզ, դյուրազգաց:

ԷՄՊԻՐԻԱ [< эмпирия < հուն. empeiria], գ. (փիլ.): Զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալումը, փորձ:

ԷՄՊԻՐԻԶՄ [< эмпиризм < հուն. empeiria փորձ], գ. 1. (փիլ.): Փիլիսոփայական ուղղություն, որը փորձը համարում է իմացության միակ աղբյուրը և ժխտում գի-

տական ընդհանրացումների ու վերացարկումների նշանակությունը: 2. *փխբ.* Միայն փաստերի նկարագրում կամ շարադրում առանց գիտական ընդհանրացումների:

ԷՄՊԻՐԻԿ [< эмпирический < հուն.], ած. 1. Էմպիրիզմին հատուկ: 2. Էմպիրիզմին հետևող: 3. գ. (տնտսգ.): Գործամետ մարդ:

ԷՄՊԻՐԻՈԿՐԻՏԻՑԻԶՄ [< эмпириокритицизм < հուն. empeiria + kritikē], գ. (փիլ.): Փիլիսոփայության և տեսական ֆիզիկայի սուբյեկտիվ իդեալիստական հոսանք. ղեկավարվում էր Է. Մախի և Ռ. Ավենարիուսի կողմից՝ մախիզմ:

ԷՄՊԻՐԻՈՄՈՆԻԶՄ [< эмпириомонизм < հուն. empeiria + monos մեկ], գ. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիստական հոսանք (Ա. Բոգդանով), որը ֆիզիկականը նույնացնում էր հոգեկանի հետ:

ԷՄՊԻՐԻՈՍԻՄՎՈԼԻԶՄ [< эмпириосимволизм < հուն. empeiria + symbol], գ.(փիլ.): Էմպիրիոկրիտիցիզմի տարատեսակ:

ԷՄՈՒ [< эму < պորտ. ema ջայլամ], գ. (կենդբ.): Ավստրալիական ջայլամ:

ԷՄՈՒԼԳԱՏՈՐՆԵՐ [< эмульгаторы < լատ.], գ. (քիմ.): Էմուլսիաները կայունացնող նյութեր. միջֆազային մակերևութային լարումը փոքրացնում են, և էմուլսիայի կաթիլների միջև ստեղծվում է պատնեշ՝ կանխելով դրանց կոալեսցենցումը:

ԷՄՈՒԼՍԻԱ [< эмульсия < լատ. emulsus < emulgere կթել], գ. 1. (քիմ.): Միմյանց մեջ չլուծվող երկու հեղուկների խառնուրդ. որոնցից մեկը մյուսի մեջ տարածվում է մանր կաթիլների ձևով: 2. Սոսնձի տեսակ:

ԷՄՈՒԼՍԻՆ [< эмульсин < լատ. emulsus կթված], գ. (կենսբ.): Նուշի սպիտակուցային նյութը:

ԷՄՖԱԶԱ [< эмфаза < հուն. emphasis արտահայտչականություն], գ. 1. (գրկն.): Հուզական արտահայտչականություն, խոսքի լարվածություն: 2. (կզմխս.): Ուժեղ արտասանություն (որոշ հնչյունների), արտասանական ուժգնություն:

ԷՄՖԱՏԻԿ [< эмфатический < հուն. emphatikos < emphasis], ած. 1. (գրկն.): Հուզարտահայտչական: 2. (լեզվբ.): Ազդու, ուժգնությամբ արտասանվող:

ԷՄՖԻԶԵՄԱ [< эмфизема < հուն. emphysēma փքում], գ. (բժշկ.): 1. Թոքերի ծավալի հիվանդոտ մեծացում: 2. Որևէ օրգանում կամ հյուսվածքում օդակուտակ:

ԷՅԱԿՈՒԼՅԱՑԻԱ [< эякуляция < լատ. ejaculari ժայթել], գ. (կզմխս.): Սերմնաժայթքում (կնոջ և տղամարդու մոտ):

ԷՅԴԵՏԻԶՄ [< эйдетизм < հուն. eidos պատկեր, արտաքին տեսք], գ. (գիտ.): Պատկերավոր հիշողության տարատեսակ, որը բնորոշվում է զգայական օրգանների վրա առարկայի ներգործության ընդհատումից հետո՝ նրա պատկերի ակնառու, վառ վերարտադրման հնարավորությամբ:

ԷՅԿՈՒՄԵՆ [< эйкумена < հուն. oikumenē < oikeō բնակեցնում եմ], գ. 1. (հնց.): Երկրագնդի՝ հին հույներին հայտնի մասը՝ Հելլադա կենտրոնով: 2. Երկրագնդի բնակեցված մասերի ամբողջությունը:

ԷՅՆՇՏԵՅՆ [< Эйнштейн < գերմանացի ֆիզիկոս-տեսաբան Ա. Էյնշտեյնի (Einstein 1879-1955թթ.) անունով], գ. (ֆիզ.): Լույսի քվանտների քանակի չափման միավոր. կիրառվում է լուսաքիմիայում:

ԷՅՆՇՏԵՅՆԻՈՒՄ [< эйнштейний < գերմանացի ֆիզիկոս-տեսաբան Ա. Էյնշտեյնի անունով], գ. (քիմ.): Es, ակտինիդների ընտանիքի արհեստական ռադիոակտիվ քիմիական տարր:

ԷՅՖՈՐԻԱ [< эйфория < հուն. euphoria < eu լավ + pherō տանում եմ], գ. (խսկց.):

1. Չափից ավել ուրախ տրամադրություն: 2. Իրականությունից, իրական դեպքերից չբխող բարձր տրամադրություն:

ԷՆԴԱՐՏԵՐԻՏ [< эндартериит < հուն. endon ներս + artēria], գ. (բժշկ.): Զարկերակների ներքին թաղանթի բորբոքում:

ԷՆԴԵՄԻԶՄ [< эндемизм < հուն. endēmos տեղական], գ. (բժշկ.): Տեղաճարակ՝ նույն տեղում վարակի մշտապես պահպանվելը՝ գոյությունը:

ԷՆԴԵՄԻԿ [< эндемический < հուն.], ած. Տեղային բնույթ կրող:

ԷՆԴԵՄՆԵՐ, ԷՆԴԵՄԻԿՆԵՐ [< эндемики < հուն.], գ. (կենսբ.): Կենդանիներ ու բույսեր, որոնք սահմանափակորեն տարածված են աշխարհագրական որևէ ոչ մեծ տարածությունում:

ԷՆԴՇՊԻԼ [< эндшпиль < գերմ. End(e) վերջ + Spiel խաղ], գ. (սպորտ. հնց.): Վերջնախաղ՝ շախմատային պարտիայի վերջնամասը՝ վերջնափուլը:

ԷՆԴՈ... [< эндо ... < հուն. endon ներս] Բարդ բառերի սկզբնամաս, որ նշանակում է ներքին, ներս:

ԷՆԴՈԳԵՆ [< эндогенный < էնդո…+ հուն. genes], ած. Ներքին ծագում ունեցող, ներքին պատճառներ ունեցող, ներծին:

ԷՆԴՈԴԵՐՄ [< эндодерма < էնդո…+ հուն. derma մաշկ], գ. (բսբ.): Բարձրագույն բույսերի առանցքային օրգանների (ցողուն, արմատ) առաջնային կեղևի ներքին շերտ, որը կազմված է մեկ շերտ խիտ միացած պարենքիմային բջիջներից:

ԷՆԴՈԹԵԼԻՈՄԱ [< эндотелиома < հուն. endothēlioma], գ. (բժշկ.): Արյան կամ ավշային անոթների էնդոթելային շերտի առավելապես չարորակ ուռուցք:

ԷՆԴՈԹԵՐՄԻԿ [< эндотермический < էնդո…+ հուն. thērmē ջերմություն], ած. Ներջերմային:

ԷՆԴՈԹԵՐՄԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ – (քիմ.): Քիմիական ռեակցիաներ, որոնք ընթանում են ջերմություն կլանելով: Այդպիսիք են օզոնի ստացումը, հանքանյութերից մետաղների վերականգնման ռեակցիաները, ֆոտոսինթեզը, քայքայման ռեակցիաների մեծ մասը:

ԷՆԴՈԿԱՐԴԻՏ [< эндокардит < էնդո…+ հուն. kardia սիրտ], գ. (բժշկ.): Սրտի ներսային մակերևույթը ծածկող շերտի (էնդոկարդի) բորբոքում:

ԷՆԴՈԿՐԻՆ [< эндокринные < հուն.], ած. (կենսբ.): Ներզատիչ գեղձերին հատուկ:

ԷՆԴՈԿՐԻՆՈԼՈԳ [< эндокринолог < հուն.], գ. (բժշկ.): Էնդոկրինոլոգիայի մասնագետ:

ԷՆԴՈԿՐԻՆՈԼՈԳԻԱ [< эндокринология < էնդո...+ հուն. krinō բաժանում եմ + հուն. logōs], գ. (բժշկ.): Ուսմունք ներզատիչ գեղձերի մասին:

ԷՆԴՈՄԵՏՐԻՏ [< эндометрит < էնդո... + հուն. mētra արգանդ], գ. (բժշկ.): Արգանդի լորձաթաղանթի բորբոքում:

ԷՆԴՈՄԻՏՈԶ [< эндомитоз < էնդո…+ հուն. mitos թել], գ. (կենսբ.): Քրոմոսոմների թվի մեծացումը բուսական և կենդանական օրգանիզմների բջիջների կորիզներում՝ առանց բջջի բաժանման կամ կորիզի կիսման:

ԷՆԴՈՍԿՈՊԻԱ [< эндоскопия < էնդո…+ հուն. skopeō դիտում եմ], գ. (բժշկ.): Ներքին օրգանների հետազոտման մեթոդ հատուկ սարքերի միջոցով՝ էնդոսկոպների, բրոնխոսկոպների ևն:

ԷՆԴՈՍՊԵՐՄ [< эндосперм < էնդո…+ հուն. sperma սերմ], գ. (բսբ.): Սերմերի հյուսվածք. բնորոշ է բոլոր մերկասերմերին և ծածկասերմ բույսերի մեծ մասին:

ԷՆԵՈԼԻԹ [< энеолит < լատ. aeneus պղնձե + հուն. lithos քար], գ. (երկրբ.):

Պղնձի դար, պղնձաքարային դար, նոր քարի դարից (նեոլիթ) բրոնզի դարին անցնելու ժամանակաշրջան: Էնեոլիթում քարե գործիքների կողքին երևան են գալիս պղնձե առաջին գործիքները, որոնք սկզբում պատրաստվում էին զտաբեկոր, այնուհետև հանքային պղնձից:

ԷՆԵՐԳԱՍԻՍՏԵՄ(Ա) [< энергосистема < էներգիա + հուն. systēma], գ. (տեխ. հնց.): Էներգետիկ համակարգ՝ էներգահամակարգ (մի քանի էլեկտրակայանների և էլեկտրացանցերի ամբողջությունը):

ԷՆԵՐԳԵՏԻԶՄ [< энергетизм < հուն. energetikos գործող], գ. (փիլ.): Փիլիսոփայական ուսմունք, որը ծագել է XIX դարի վերջում բնագետների մի մասի մոտ, որոնք բնության բոլոր երևույթները հանգեցնում էին մատերիական հիմքից զուրկ էներգիայի ձևափոխություններին:

ԷՆԵՐԳԵՏԻԿ [< энергетический < հուն.], ած. 1. Էներգետիկայի և դրա ստացմանն ու օգտագործմանը վերաբերող, էներգետիկայի հետ կապված: 2. Էներգետիկային հատուկ՝ վերաբերող: 3. գ. Էներգաարդյունաբերության և էներգաշինարարության մեջ աշխատող անձ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ [< энергетика < հուն. energeia], գ. (տնտսգ.): Տնտեսության մի ճյուղը, որը միավորում է բնական էներգիայի ստացման ու փոխակերպման միջոցները, ինչպես և տեխնիկայի այն ճյուղը, որը զբաղվում է էներգիայի արտադրությամբ, փոխակերպությամբ, հաղորդումով ու նրա տարբեր տեսակների օգտագործումով:

ԷՆԵՐԳԻԱ [< энергия < հուն. energeia գործունեություն, ուժ, եռանդ], գ. (ֆիզ.): 1. Նյութի հիմնական հատկություններից մեկը՝ նյութի շարժման չափը՝ շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձևով): 2. Որևէ մարմնի՝ նյութի ևն կարողությունը որևէ կարգի աշխատանք կատարելու կամ դրա համար անհրաժեշտ ուժի աղբյուր լինելու: 3. *փխբ.* Եռանդ, կենսաուժ:

ԷՆԶՈՈՏԻԱ [< энзоотия < հուն. en ներս + zōon կենդանի], գ. (կենդբ.): Կենդանիների վարակիչ հիվանդություն, որը կախված է որոշակի տեղանքից, անասնահամաճարակ:

ԷՆԹԱԼՊԻԱ [< энтальпия < հուն. enthalpō տաքացնում եմ], գ. (կենսբ.): Ջերմապարունակություն՝ նյութի (համակարգի) վիճակը նկարագրող թերմոդինամիկական ֆունկցիա:

ԷՆԹԻՄԵՄԱ [< энтимема < հուն. enthymema], գ. (տրամբ.): Կրճատ մտահանգում, մասնավորապես կրճատ սիլլոգիզմի տեսակ, երբ, որպես ինքնին հասկանալի, բաց է թողնվում նախադրյալներից մեկը կամ եզրակացությունը:

ԷՆԻԳՄԱՏԻԿ [< энигматический < հուն. ainigma (ainigmatos) հանելուկ], ած. (հզվդ.): Հանելուկային, անհասկանալի:

ԷՆԿԱՈՒՍՏԻԿԱ [< энкаустика < լատ. encaustica < հուն. enkáiō այրում եմ], գ. (արվ.): Մոմանկարչություն:

ԷՆԿԼԻՏԻԿԱ [< энклитика < հուն. enklino խոնարհվում եմ], գ. (լեզվբ.): Շեշտազուրկ բառ:

ԷՆԿՈՄԻ(Յ)ԵՆԴԱ [< энкомьенда < իտալ. encomienda հանձնարարություն], գ. (պատմ.): Ամերիկայի իսպանական գաղութներում՝ ամերիկյան հնդկացիների հարստահարման, բռնագաղութացման ձև (XVI-XVIII դդ.):

ԷՆՈՖԹԱԼՄ [< энофтальм < հուն. en մեջ + ophthalmos աչք], գ. (բժշկ.): Ակնախնձորի ոչ նորմալ խորությունը ակնակապիճում:

ԷՆՏԵԼԵԽԻԱ [< энтелехия < հուն. entelecheia իր իսկ մեջ նպատակ ունեցող], գ. (պատմ.): Արիստոտելի մոտ և սխոլաստիկայի մեջ՝ նպատակասլացություն, նպատակաուղղվածություն՝ որպես շարժիչ ուժ, ակտիվ սկզբնապատճառ, որը հնարավորությունը փոխարկում է իրականության:

ԷՆՏԵՐԻՏ [< энтерит < հուն. enteron աղիքներ], գ. (բժշկ.): Բարակ աղիքների բորբոքում:

ԷՆՏԵՐՈԲԻՈԶ [< энтеробиоз < հուն. enteron + bios կյանք], գ. (բժշկ.): Ճիճվային հիվանդություն, որի հարուցիչները մանր սպիտակ ճիճուներ են:

ԷՆՏԵՐՈԿԻՆԱԶ [< энтерокиназа < հուն. enteron + kyneō շարժում եմ], գ. (կենսբ.): Ֆերմենտ, արտադրվում է բարակ աղիքի վերին հատվածի լորձաթաղանթից:

ԷՆՏԵՐՈԿՈԼԻՏ [< энтероколит < հուն. enteron + kōlon հաստ աղիք], գ. (բժշկ.): Բարակ և հաստ աղիքների բորբոքում:

ԷՆՏԵՐՈԿՈԿ [< энтерокок < հուն. enteron + kokkos հատիկ], գ. (կենսբ.): Ձվաձև կամ կլոր մանրէ: Մարդու աղիքների սապրոֆիտ է, մասնակցում է ածխաջրերի խմորմանը:

ԷՆՏՈԴԵՐՄ [< энтодерма < հուն. entos ներքին + derma մաշկ], գ. (կենսբ.): Բազմաբջիջ կենդանիների սաղմի ներքին շերտ (ներքին սաղմնաթերթիկ): Առաջանում է սաղմի զարգացման ամենավաղ շրջանում, որից հետագայում ձևավորվում են ստամոքսաղիքային համակարգի հյուսվածքներ, լյարդը և տարբեր գեղձեր:

ԷՆՏՈՄՈԼՈԳԻԱ [< энтомология < հուն. entomon միջատ + logos գիտություն], գ. (կենդբ.): Միջատաբանություն՝ կենդանաբանության մի բաժինը, որն ուսումնասիրում է միջատները:

ԷՆՏՈՄՈՖԱԳ [< энтомофаг < հուն. entomon + phagos ուտող], գ. (կենդբ.): Կենդանի, որը սնվում է միջատներով:

ԷՆՏՈՄՈՖԻԼԻԱ [< энтомофилия < հուն. entomon + phileō սիրում եմ], գ. (բսբ.): Բույսերի՝ միջատների միջոցով փոշոտվելու հատկությունը:

ԷՆՏՐՈՊԻԱ [< энтропия < հուն. en մեջ + tropē շրջադարձ], գ. 1. (ֆիզ.): Թերմոդինամիկական համակարգի հավասարակշռության վիճակը բնութագրող մեծություն: 2. (ինֆորմ.): Պատահական ելքեր ունեցող փորձի անորոշության չափ: 3. Էնտրոպիայի հասկացությունը կարևոր նշանակություն ունի նաև գիտության մի շարք այլ բնագավառներում (քիմիա, կենսաբանություն):

ԷՆՏՈՒԶԻԱԶՄ [< энтузиазм < հուն. enthusiasmos], գ. (խսկց.): Խանդավառություն՝ բուռն ոգևորություն:

ԷՆՏՈՒԶԻԱՍՏ [< энтузиаст < հուն. enthusiastēs], ած. գ. (խսկց.): Էնտուզիազմով տոգորված՝ խանդավառությամբ լցված (մարդ):

ԷՆՑԵՖԱԼԻՏ [< энцефалит < հուն. enkephalos ուղեղ], գ. (բժշկ.): Ուղեղաբորբ՝ գլխուղեղի բորբոքում:

ԷՆՑԵՖԱԼՈԳՐԱՖԻԱ [< энцефалография < հուն. enkephalos + graphō գրում եմ], (տեխ. բժշկ.): Ուղեղագրություն՝ գլխուղեղի ռենտգենյան հետազոտության մեթոդ: Կատարվում է գլխուղեղի հեղուկային համակարգի մեջ, գոտկային և ծոծրակային պունկցիայի միջոցով կոնտրաստային նյութ (օդ, թթվածին ևն) ներարկելու շնորհիվ:

ԷՆՑԵՖԱԼՈՊԱՏԻԱ [< энцефалопатия < հուն. enkephalos + pathos տանջանք], գ. (բժշկ.): Գլխուղեղի հիվանդություն, որը կապված չէ որևէ բորբոքային գործընթացի հետ:

ԷՆՑԻԿԼԻԿԱ [< энциклика < ուշ. լատ. encyclicus < հուն. enkyklios շրջանային,

ընդհանուր], գ. Հռոմի պապի ուղերձը (կրոնական, բարոյական, քաղաքական բնույթի) հոգևորականությանը կամ կաթոլիկներին:

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻԱ [< энциклопедия < ֆր. encyclopédie < հուն. en + kyklos շրջան + paideia լուսավորություն], գ. (հնց.): Հանրագիտարան՝ բառարան, որի մեջ այբբենական կարգով դասավորված և բացատրված են բոլոր գիտությունների ու արվեստների կամ մի հատուկ բնագավառի բառերը՝ տերմինները և հատուկ անունները:

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻԶՄ [< энциклопедизм < ֆր. encyclopédisme < հուն.], գ. Բազմակողմանի կրթություն, համընդհանուր գիտելիքներ ունենալը:

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻՍՏ [< энцилкопедист < ֆր. encyclopédiste < հուն.], գ. 1. Հանրագիտական գիտելիքներով օժտված մարդ: 2. Առավելապես հոգնակի՝ XVIII դարի վերջում Դիդրոյի և Դալամբերի կողմից հրատարակվող «Էնցիկլոպեդիայի» շուրջը համախմբված առաջադեմ մտածողների խումբը: 3. Այդ միջավայրին պատկանող գործիչ: 4. ած. Բազմահմուտ, շատ գիտելիքների տեր:

ԷՇԱՖՈՏ [< эшафот < ֆր. échafaud հարթակ], գ. (հնց.): Կառափնարան՝ հարթակ, որտեղ իրականացնում են մահապատիժը:

ԷՇԵԼՈՆ [< эшелон < ֆր. échelon < echelle սանդուղք], գ. (ռազմ.): 1. Զորամասի կամ շարժվող զորասյան մարտակարգ, որի ժամանակ զորային միավորումները դասավորված են ոչ թե ճակատով, այլ խտությամբ: 2. Ռազմական փոխադրամիավոր (գնացքաշար, ավտոշարասյուն, օդանավախումբ ևն): 3. Ստրատեգիական իմաստով՝ պատերազմի ժամանակ հաջորդաբար ռազմաբեմ մտցվող զինված ուժերի հերթական խմբավորում:

ԷՇԼԵՏ [< эшлет < ֆր. échlette], գ. (ֆիզ.): Հարթ դիֆրակցիոն ցանցի առանձնահատուկ (հիմնականում անդրադարձնող) տեսակ. օժտված է իր վրա ընկնող ճառագայթման հոսքի մեծ մասը սպեկտրի որոշակի՝ որևէ (ոչ զրոյական) կարգում կենտրոնացնելու հատկությամբ:

ԷՈԶԻՆՆԵՐ [< эозины < հուն. ēōs արշալույս], գ. (քիմ.): Օրգանական՝ հիմնականում կարմիր երանգի ներկեր, ստացվում են սինթետիկ եղանակով:

ԷՈԶՈՈՆ [< эозоон < հուն. ēōs + zōon կենդանի]. գ. (երկրբ.): Ոչ օրգանական միներալներ, որոնք հայտնաբերվել են XIX դարի վերջին Հյուսիսային Ամերիկայում. սխալմամբ սրանք ընդունվում էին որպես հնագույն կենդանիների մնացորդներ:

ԷՈԼ [< эол < հուն. Aiolos], գ.1. (դից.) Հին հունական դիցաբանության մեջ՝ քամիների տիրակալը: 2. Հունական էոլ ցեղի ցեղապետը:

ԷՈԼԻԹ [< эолит < հուն. ēōs արշալույս + lithos քար], գ. (հնէաբ.): Քարի դարի հնագույն շրջան և այդ շրջանի քարե գործիքները:

ԷՈԼՅԱՆ ՏԱՎԻՂ [< эолова (< տե՛ս Էոլ) арфа] - 1. (դից.): Քամիների տիրակալ Էոլի տավիղը, որը նուրբ ձայներ էր հանում այուքի և արևածագի ժամանակ: 2. (տեխ.): Սովորաբար տանիքին դրվող, վրան աղեղալարեր քաշված փայտե շրջանակ, որի լարերը տատանման մեջ են դրվում քամու հոսանքով և մեղմ ու դուրեկան ձայն հանում: 3. (երժշտ.): Երաժշտական գործիքի տեսակ:

ԷՈՍ [< эос < հուն. Ēōs], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ արշալույսի աստվածուհին (հին հռոմեականում՝ Ավրորան): 2. (բնստդծ.): Արշալույս, արևածագ:

ԷՈՑԵՆ [< эоцен < հուն. ēōs + kainos նոր], գ. (երկրբ.): Պալեոգենի ժամանակաշրջանի միջին բաժինը: Առաջին անգամ առանձնացրել է Չ. Լայելը՝ 1833 թ.-ին:

ԷՊԱՆԱԼԵՊՍԻՍ [< эпаналепсис < հուն. epanalepsis], գ. (լեզվբ.): 1. Բառերի կրկնությունը խոսքում՝ ոճական նպատակներով: 2. Նախադասության որևէ

անդամի փոխարեն դերանվան օգտագործումը: Օր.՝ - Ու՞ր է Անահիտը:
- Անահի՞տը, նա սպասում է Ձեզ:

ԷՊԱՐԽ [< Эпарх < հուն. eparchos թեմակալ], գ. 1. (պատմ.): Բյուզանդական կայսրության ժամանակ Կոստանդնուպոլսի քաղաքապետը: 2. (եկեղ.): Թեմ:

ԷՊԵՅՐՈԳԵՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ [< эпейрогенические (< հուն. ēpeiros մայր ցամաք + genesis ծագում) колебательные движения] - (երկրբ.): Երկրակեղևի ընդարձակ հատվածների դանդաղ, դարավոր բարձրացումներ և իջեցումներ, որոնք կառուցվածքային փոփոխություններ չեն առաջացնում:

ԷՊԻ... [< эпи... < հուն. epi վրա, վեր, հետո] Բարդ բառերի սկզբնամաս, նշանակում է ինչ-որ բանից վեր գտնվելը, հաջորդելը:

ԷՊԻԲԼԵՄ [< эпиблема < հուն. epiblēma ծածկույթ], գ. (բսբ.): Բույսերի արմատները ծածկող հյուսվածք: Սա առաջացնում է արմատամազիկներ, որոնք նպաստում են արմատի ծծող մակերեսի մեծացմանը:

ԷՊԻԳԵՆԵԶ [< эпигенез < էպի...+ հուն. genesis], գ. 1. (կենսբ.): Ուսմունք օրգանիզմների սաղմնային զարգացման մասին, ըստ որի՝ այդ գործընթացն իրականանում է՝ շնորհիվ հաջորդաբար առաջացող նորագոյացությունների: 2. (երկրբ.): Երկրորդական գործընթացներ, որոնք պայմանավորում են միներալների և ապարների հետագա փոփոխություններն ու նորագոյացումները:

ԷՊԻԳԵՆԵՏԻԿ [< эпигенетический < հուն.], ած. (երկրբ.): Երկրորդական գործընթացների արդյունքում ձևավորված, կազմավորված:

ԷՊԻԳՈՆ [< эпигон < հուն. epigonos հետո ծնված], գ. Կույր հետևորդ՝ արվեստի՝ գիտության՝ գրականության մեջ մեկին կուրորեն հետևող՝ առանց իր կողմից նոր խոսք ասելու կրկնող մարդ:

ԷՊԻԳՐԱՄ [< эпиграмма < հուն. epigramma մակագրություն], գ. 1. (գրկն.): Ծաղրական կարճ ոտանավոր կամ ասույթ: 2. Հին հույների մոտ արձանագրություն, մակագրություն (շենքերի, հուշարձանների, նվերների վրա):

ԷՊԻԳՐԱՖ [< эпиграф < հուն. epigraphē արձանագրություն], գ. 1. (գրկն.): Բնաբան՝ գրվածքի կամ նրա հատվածի սկզբում բերվող իմաստալից խոսք: 2. Արձանագրություն՝ արձանագրություն մահարձանի վրա:

ԷՊԻԳՐԱՖԻԿ [< эпиграфический < հուն.], ած. Վիմագրական:

ԷՊԻԳՐԱՖԻԿԱ [< эпиграфика < հուն.], գ. (հնց.): Վիմագրություն՝ 1. Հարթ տպագրության եղանակ, որի ժամանակ տպագրությունը կատարվում է՝ հարթ քարի մակերեսին պատկերված նկարը արտատպելով: 2. Այդ եղանակով տպագրված գործ (պատկեր, գծագրություն ևն): 3. Վիմագրի՝ վիմագրիչի արհեստը: 4. Վիմագրական արձանագրություն:

ԷՊԻԴԵՄԻԱ [< эпидемия < հուն. epidēmia], գ. (հնց.): Համաճարակ՝ որևէ վարակիչ հիվանդության լայն տարածումը:

ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳ [< эпидемиолог < հուն.], գ. (հնց.): Համաճարակաբան, համաճարակագետ:

ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱ [< эпидемиология < հուն. epidemia + logos գիտություն], գ. Համաճարակագիտություն՝ բժշկության մի ճյուղը, որ ուսումնասիրում է համաճարակների առաջացման պատճառներն ու նրանց տարածման օրինաչափությունները և մշակում դրանց դեմ պայքարելու միջոցները:

ԷՊԻԴԵՐՄԻՍ [< эпидермис < էպի...+ հուն. derma], գ. 1. (կենդբ.): Մարդու և կենդանիների վերնամաշկ՝ մաշկի արտաքին շերտ, որը զարգանում է էկտոդեր-

մից: 2. (բսբ.): Բույսերի, բուսական օրգանիզմը ծածկող արտաքին շերտ, որը կազմված է բջիջների միայն մեկ շերտից:

ԷՊԻԴԵՐՄՈՖԻՏԻԱ [< эпидермофития < էպիդերմիս + հուն. phyton բույս], գ. (բժշկ.): Մաշկի և եղունգների վարակիչ հիվանդություն:

ԷՊԻԴԻԱՍԿՈՊ [< эпидиаскоп < էպի… + հուն. dia միջով + skopeō նայում եմ], գ. (տեխ.): Էկրանի վրա անլուսաթափանց կամ թափանցիկ պատկերների խոշորացված արտացոլում ստանալու օպտիկական ապարատ:

ԷՊԻԴԻԴԻՄԻՏ [< эпидидимит < էպի…+ հուն. didymos տղամարդու ձու], գ. (բժշկ.): Մակամորձի բորբոքում:

ԷՊԻԴՈՏ [< эпидот < հուն. epidosis աճելով միանալը, աճը], գ. (հնք.): Միներալ՝ ջրային սիլիկատների խմբից: Հանդիպում է մի շարք մետամորֆային ապարներում, քվարցային երակներում:

ԷՊԻԶՈԴ [< эпизод < հուն. epeisodion], գ. (խսկց.): 1. Միջադեպ՝ մանր դիպված: 2. Իրադարձություն՝ որևէ երևույթի՝ գործողության նն մի օղակը՝ հատվածը: 3. Հատված՝ գեղարվեստական ստեղծագործության որոշ չափով ավարտուն մաս, որը կարող է ընդունվել որպես ինքնուրույն գործ:

ԷՊԻԶՈԴԻԿ [< эпизодический < հուն.], ած. 1. Էպիզոդին հատուկ: 2. *փխբ.* Ոչ կանոնավոր, պատահական բնույթ կրող:

ԷՊԻԶՈՈՏՈԼՈԳԻԱ [< эпизоотология < էպի…+ հուն. zōon կենդանի +logos գիտություն], գ. (գիտ.): Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների առաջացման, զարգացման և մարման օրինաչափություններն ուսումնասիրող գիտություն:

ԷՊԻԹԱԼԱՄԱ [< эпиталама < հուն. epithalamios հարսանեկան], գ. (գրկն. հնց.): Հարսներգ, հարսանեկան բանաստեղծություն:

ԷՊԻԹԵԼ [< эпителий < էպի…+ հուն. thēlē պտկիկ], գ. 1. (կենդբ.): Մարդու և կենդանիների հյուսվածքների տեսակ, որը հիմնականում կատարում է պաշտպանական, արտազատիչ, ներծծող ֆունկցիա: 2. (բսբ.): Բարակ պատեր ունեցող պարենքիմային արտազատող բջիջների ընդհանուր անվանում:

ԷՊԻԼՅԱՏՈՐ [< эпилятор < լատ. e(x) + pilus մազ], գ. (տեխ.): Մազահանիչ սարք (մաշկի վրայից):

ԷՊԻԼ(Յ)ԱՑԻԱ [< эпиляция < լատ. e(x)-ից + pilus մազ], գ. (բժշկ.): Մազերի հեռացում:

ԷՊԻԼԵՊՍԻԱ [< эпилепсия < հուն. epilēpsia], գ. (բժշկ.): Ընկնավորություն՝ գլխուղեղի հիվանդություն՝ պարբերական սրացումներով, որը ուղեկցվում է գիտակցության կորուստով և դողով:

ԷՊԻԼՈԳ [< эпилог < հուն. epilogos < էպի…+ հուն. logos խոսք], գ. (հնց.): 1. Վերջաբան՝ գրքի վերջում զետեղված ամփոփիչ խոսք՝ բացատրություն՝ հաղորդում նն (հեղինակի կամ հրատարակչի): 2. Գեղարվեստական ստեղծագործության ավարտական-ամփոփիչ մասը: 3. (երժշտ.): Օպերայի եզրափակիչ տեսարան:

ԷՊԻԽԵՅՐԵՄԱ [< эпихейрема < հուն. epicheirema սեղմ մտահանգում], գ. (տրամբ.) Սիլլոգիզմ, որի նախադրյալները էնթիմեմաներն են:

ԷՊԻԿԱ [< эпика < հուն. epos], գ. 1. (գրկն. հնց.): Վիպերգություն, վիպերգությունների ամբողջություն: 2. (գրկն.): Էպիկական՝ պատմողական սեռ:

ԷՊԻԿԱՐԴ [< эпикард < հուն. epi վրա + kardia սիրտ], գ. (կզմխս.): Սրտի արտաքին թաղանթը, վերասրտենի:

ԷՊԻԿԱՐԴԻՏ [< эпикардит < հուն.], գ. (բժշկ.): Սրտի արտաքին թաղանթի բորբոքում:

ԷՊԻԿՈՏԻԼ [< эпикотиль < էպի…+ kotylē խորություն], գ. (բսբ.): Վերշաքիլային ծունկ՝ բույսի ծիլի ցողունի մաս, որն ընկած է շաքիլների և առաջին տերևների միջև:

ԷՊԻԿՐԻԶ [< эпикриз < էպի…+ krisis որոշում], գ. (խսկց.): Հիվանդության պատմության (թերթիկի) վերջին էջում զետեղված եզրակացությունը՝ ավարտված հիվանդության վերաբերյալ:

ԷՊԻԿՈՒՐՅԱՆ [< эпикуреец < հին հունական փիլիսոփա Էպիկուրի (մ.թ.ա. 341-270) անունից], ած. գ. (պատմ.): Էպիկուրի գաղափարների հետևորդ:

ԷՊԻՍԵՄԵՄԱ [< эписемема < հուն. episemēmē], գ. (լեզվբ.): Ըստ սեմանտիկների՝ շարահյուսական իմաստի նվազագույն միավորը, տագմեմայի արտահայտած իմաստը (Բլումֆիլդ):

ԷՊԻՍՈՄՆԵՐ [< эписомы < էպի...+ հուն. soma մարմին], գ. (կենսբ.): Բակտերիաների գենետիկական տարրեր, որոնք բջջում ունակ են գործելու անկախ բակտերիային քրոմոսոմներից:

ԷՊԻՍՏԵՄՈԼՈԳԻԱ [< эпистемология < հուն. epistemologia], գ. Արևմուտքում օգտագործվող տերմին՝ որպես իմացաբանության հոմանիշ:

ԷՊԻՍՏՈԼԱ [< эпистола < հուն. epistolē < epistello ուղարկում եմ], գ. 1. (հնց.): Նամակ, ուղերձ: 2. (գրկն.): Նամականի, նամակագրական ժանր:

ԷՊԻՍՏՐՈՖԱ [< эпистрофа < հուն. epistrophe հետդարձ, պտույտ], գ. (գրկն. երժշտ.): Կրկնաբանություն՝ նույն բառի, արտահայտության նն կրկնություն:

ԷՊԻՏԱՖԻԱ [< эпитафия < հուն. epitaphios], գ. (գրկն.): Տապանագիր՝ դամբանագիր, կարճ բանաստեղծություն (խոսք) նվիրված հանգուցյալին, դամբանական, դամբանախոսություն:

ԷՊԻՏԵՏ [< эпитет < հուն. epitheton], գ. (գրկն.): Մակդիր՝ գոյականի վրա դրվող և նրա հատկանիշը գեղարվեստականորեն բնորոշող որոշիչ բառ կամ բառակապակցություն:

ԷՊԻՑԵՆՏՐ [< эпицентр < էպի…+ լատ. centrum < հուն. kentron կենտրոն], գ. (հնց.): Էպիկենտրոն՝ երկրի մակերևույթի այն կետը, որտեղ գտնվում է երկրաշարժի էպիկենտրոնը:

ԷՊԻՑԻԿԼ [< эпицикл < էպի…+ kyklos շրջան], գ. (աստղգ.): Մակաշրջանակ՝ օժանդակ շրջանագիծ պտղոմեոսյան երկրակենտրոն համակարգում՝ մոլորակների հետընթաց շարժումը բացատրելու համար: Ենթադրվում էր, որ մոլորակը պտտվում է մակաշրջանակով, որի կենտրոնը իր հերթին պտտվում է մեկ այլ, ուղղորդ շրջանագծով՝ դեֆերենտով (< լատ. deferens), որի կենտրոնում գտնվում է անշարժ Երկիրը:

ԷՊԻՖԻԶ [< эпифиз < հուն. epiphysis պալար, կոն], գ. (կզմխս.): Վերին մակուղեղ, կոնաձև գեղձ՝ ողնաշարավոր կենդանիների և մարդու ներզատիչ գեղձ. գտնվում է գլխուղեղի քառաբլրի առաջային բլուրների վրա:

ԷՊԻՖԻՏՆԵՐ [< эпифиты < էպի…+phyton բույս], գ. (բսբ.): Բույսեր, որոնք ապրում են մեկ այլ բույսի (հիմնականում՝ ծառատեսակների) վրա և առնչություն չունեն հողի հետ: Հարուստ են հատկապես արևադարձային և մերձարևադարձային խոնավ անտառները:

ԷՊԻՖՈՐ [< эпифора < հուն. epiphora < էպի…+ phoros], գ. (տղչփ.): Վերջույթ՝ տողերի կամ իրար հաջորդող նախադասությունների վերջում նույն բառի կամ բառախմբի կրկնությունը:

ԷՊՅՈՒՐ [< эпюр < ֆր. épure գծագիր], գ. Գծագիր, ուր տարածական պատկերը ներկայացված է օրթոգոնալ պրոյեկցիաների մեթոդով:

ԷՊՈԼԵՏ [< эполеты < ֆր. épaulette < epaule ուս], գ.(հնց.): Ուսադիր՝ ուսի վրա կարելով կամ կոճկելով ամրացվող տարբերանշան՝ կտորի երկարուկ շերտի ձևով (զինվորական ևն կարգի համազգեստների համար):

ԷՊՈԽԱ [< эпоха < հուն. epochē կանգառ], գ. Դարաշրջան՝ 1. Որևէ կարգի նշանավոր իրադարձություններով՝ երևույթներով բնորոշվող և իր ուրույն առանձնահատկություններն ունեցող ժամանակաշրջան: 2. (երկրբ.): Երկրաբանական ժամանակաշրջաններից յուրաքանչյուրը: 3. (աստղգ.): Այն պահը, որից սկսվում է որևէ երկնային մարմնի շարժման ժամանակի հաշվարկումը:

ԷՊՈՆԻՄ [< эпоним < հուն. epōnymos], գ. (լեզվբ.): Այն անձը, որի անունից կազմված է ոչ անձնանուն, օր.՝ դարվինիզմ, մարքսիզմ, ստալինիզմ, անվանահայր:

ԷՊՈՊԵԱ [< эпопея < հուն. epopoïïa], գ. (հնց.): 1. (գրկն.): Դյուցազներգություն՝ պատմական խոշոր իրադարձությունների շարք պատկերող գեղարվեստական երկ, ինչպես՝ Հոմերոսի «Ոդիսականը», Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» ևն: 2. Սխրագործություն՝ մեծ արդյունք առաջ բերող գործ:

ԷՊՈԴ [< эпод < հուն. epode], գ. (գրկն.): Եվրոպական պոեզիայում՝ երկտող բանաստեղծություն, որտեղ երկրորդ տողը կարճ է առաջինից:

ԷՊՈՍ [< эпос < հուն. epos խոսք, պատմվածք, ասք], գ. (գրկն.): 1. Ժողովրդական խոշոր դյուցազներգական՝ վիպերգական ստեղծագործություն, վիպերգություն: 2. Այդ կարգի երկերի ամբողջությունը՝ որպես գրականության բնագավառ, էպիկական սեր: 3. Գրականության մեջ՝ պատմողական ստեղծագործություն, որ տարբերվում է քնարերգությունից և դրամայից:

ԷՊՈՍԱԲԱՆ, ԷՊՈՍԱԳԵՏ, ած. գ. (գրկն.): Էպոսագիտության մասնագետ:

ԷՊՍՈՄԻՏ [< эпсомит < անգլ. epsomite < Epsom (Էպսոմ) քաղաքի (Անգլիա) մոտակայքի աղբյուրներից ստացված], գ. (հնք.): Դառը աղ՝ միներալ բնական ծծմբաթթվային մագնեզիում: Կիրառվում է տեքստիլ, թղթի, շաքարի, քիմիական, դեղագործական արդյունաբերության մեջ, բժշկության բնագավառում:

ԷՊՈՒԼԻՍ [< эпулис < հուն. epi կից + ulon լինդ], գ. (բժշկ.): Լնդերի ուռուցիկ աճվածք:

ԷՍԵՆՑԻԱ [< эссенция < լատ. essentia էություն], գ. (քիմ.): Բնահյութ՝ որևէ ցնդական նյութի խտացված լուծույթ:

ԷՍԷՌՆԵՐ [< ռուս. эсэр // СР социалист революционеры սոցիալիստ հեղափոխականներ], գ. (պատմ.): Մանրբուրժուական կուսակցություն Ռուսաստանում. կազմավորվել է նարոդնիկական խմբերի համախմբումով 1902 թ.:

ԷՍԷՍԱԿԱՆ [< эсэсовец < գերմ. Schultz-staffeln պահպանական ջոկատներ], ած. գ. (պատմ.): 1. Գերմանաֆաշիստական պահպանական ջոկատների կամ բանակի հատուկ զորամասերի ծառայող: 2. ած. Էսէսականին հատուկ, էսէսականի: 3. Էսէսականներից կազմված, բաղկացած:

ԷՍԹԵՏ [< эстет < հուն. aisthētēs զգացող], ած. գ. (հնց.): 1. Գեղագետ՝ գեղագիտության կողմնակից՝ հետևորդ: 2. *փխբ.* Գեղասեր:

ԷՍԹԵՏԻԶՄ [< эстетизм < հուն.], գ. (արվ.): 1. Գեղեցիկի՝ գեղագիտորեն դրականի ձգտում՝ հակում, ձևական կատարելության ձգտում: 2. Արվեստի մեջ արտաքին ձևով ծայրահեղականորեն տարվելը՝ ի վնաս բովանդակության, ձևապաշտություն գեղագիտության մեջ, գեղապաշտություն, գեղամոլություն:

ԷՍԹԵՏԻԿ [< эстетический < հուն.], Տե՛ս Էսթետիկական:

ԷՍԹԵՏԻԿԱ [< эстетика < հուն. aisthētikos զգացում], գ. (գիտ.): Գեղագիտություն՝ փիլիսոփայական ուսմունք արվեստի մասին, գեղարվեստական ստեղծագործության՝ կյանքի ու բնության մեջ գեղեցիկի դրսևորման ձևերի մասին:

ԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ, ած. Գեղագիտական:

ԷՍԽԱՏՈԼՈԳԻԱ [< эсхатология < հուն. eschatos վերջին + logos գիտություն], գ. (կրոն.): Վախճանաբանություն՝ կրոնական ուսմունք առանձին մարդկանց վերջի, հանդերձյալ կյանքի և աշխարհի վերջի վերաբերյալ:

ԷՍԿԱԴՐԱ [< эскадра < ֆր. escadre], գ. (ռազմ..): Նավատորմիղ՝ ռազմածովային կամ օդային նավատորմի խոշոր միավորում:

ԷՍԿԱԴՐԻԼՅԱ [< эскадрилья < ֆր. escadrille], գ. (ռազմ.): Սավառնակախումբ՝ ռազմաօդային նավատորմի ստորաբաժանում, որ ընդգրկում է սավառնակների մի քանի օղակ:

ԷՍԿԱԴՐՈՆ [< эскадрон < ֆր. escadron], գ. (ռազմ.): Հեծելավաշտ՝ հեծելազորի գնդի ստորաբաժանում, որ համապատասխանում է հետևազորի վաշտին:

ԷՍԿԱԼԱՏՈՐ [< эскалатор < անգլ. escalator < ֆր. escalader բարձրանալ < լատ. scala աստիճան], գ. (տեխ.): Շարժասանդուղք՝ շարժվող սանդուղքների համակարգ, որը նախատեսված է բեռներ և մարդկանց տեղափոխելու համար:

ԷՍԿԱԼԱՑԻԱ [< эскалация < անգլ. escalation աստիճանի միջոցով վերև բարձրանալը], գ. (խսկց.): Որևէ երևույթի, բանի աստիճանական ավելացում, ուժեղացում, ընդլայնում, բորբոքում են:

ԷՍԿԱՐՊ [< эскарп < ֆր. escarpe], գ. (ռազմ.): Հակատանկային արգելք՝ բարձունքի լանջին՝ զառիվեր պատի ձևով, զառիվերակ:

ԷՍԿՈՐՏ [< эскорт < ֆր. escorte ուղեկցորդ], գ. (խսկց.): Ուղեկցորդ պահակախումբ՝ ուղեկցորդ խումբ:

ԷՍԿՎԱՅՐ [< эсквайр < անգլ. esquire < լատ. scutarius վահանակիր զինվոր, թիկնազորային], գ. (պատմ.): Պատվավոր տիտղոս Անգլիայում:

ԷՍԿՈՒԴՈ [< эскудо < իսպ. escudo, բառացի՝ զինանշան], գ. (ֆին.): Պորտուգալական դրամ, որը հավասար է 100 սենտավոյի:

ԷՍԿՈՒԼԱՊ [< эскулап < լատ. Aesculapius], գ. 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ բժշկության աստվածը: 2. (հնց.): Բժիշկ:

ԷՍՊԱԴՈՆ [< эспадон < ֆր. espadon < իսպ. espada թուր, սուսեր], գ. (հնց.): Մեծ, ծանր թուր, որը բռնում էին երկու ձեռքերով:

ԷՍՊԱԴՐՈՆ [< эспадрон < ֆր. espadon < իսպ. espada], գ. (հնց.): Թրասուսեր, բթասուսեր՝ ուսուցողական ծակող և կտրող սառը զենք:

ԷՍՊԱՆԴԵՐ [< эспандер < լատ. espandere ձգել], գ. (սպորտ.): Սպորտային մարզագույք՝ մկանները զարգացնելու համար:

ԷՍՊԵՐԱՆՏԻԴՈ [< эсперантидо < իսպ. esperantido], գ. (լեզվբ.): Արհեստական լեզու՝ հիմնված էսպերանտոյի վրա. ստեղծել է Ռ. դը Սոսյուրը (R. de Saussure):

ԷՍՊԵՐԱՆՏԻՍՏ [< эсперантист < իսպ.], գ. Էսպերանտո լեզվին տիրապետող անձ:

ԷՍՊԵՐԱՆՏՈ [< эсперанто < իսպ. esperanto հույս ունեցող], գ. (լեզվբ.): XIX դարի 70-ական թթ. լեհ բժիշկ Զամենհոֆի ստեղծած արհեստական լեզուն, որն ուներ հեշտ քերականություն և բառակազմություն, հիմնված էր առավել տարածված եվրոպական լեզուների վրա:

ԷՍՍԵ [< эссе < ֆր. essai փորձ], գ. (գրկն.): Գրական, փիլիսոփայական, հրապա-

ռակախոսական ուրվագիծ, ակնարկ:

ԷՍՏԱԿԱԴ(Ա) [< эстакада < ֆր. estacade], գ. (խսկց.): Ցցաթումբ՝ ցցերի վրա կառուցված թումբ՝ հարթակ, որ ծառայում է հաղորդակցության ճանապարհները բարձրացնելուն՝ ճանապարհի վրայով անցնելուն, ինչպես և բեռնավորման և բեռնաթափման նպատակներին:

ԷՍՏԱՄՊ [< эстамп < ֆր. estampe < իտլ. stampe դրոշմ, տպվածք], գ. (նկարչ.): Նկարչի կամ փորագրողի ձեռքի աշխատանքով տպագրական կաղապարից թղթի վրա արտատպված նկար:

ԷՍՏԱՖԵՏ(Ա) [< эстафета < ֆր. estafette < իտլ. staffa ասպանդակ], գ. 1. (հնց.): Ճեպազեկույց՝ ձիավոր սուրհանդակի միջոցով ուղարկվող ճեպափոստ: 2. (սպորտ.): Փոխանցումավազք՝ վազքամրցում (դահուկային ևն) կատարողների հաջորդական փոխարինումով: 3. (սպորտ.): Պայմանական իր, որ մեկ մարզիկը հանձնում է հաջորդին:

ԷՍ(Թ)ԵԶԻՈԼՈԳԻԱ [< эстезиология < հուն. aisthēsis զգացմունք + logos], գ. (կզմխս.): Կազմախոսության և բնախոսության բաժին, որն ուսումնասիրում է զգայարանների կառուցվածքը և գործունեությունը:

ԷՍՏՐԱԴԱ [< эстрада < ֆր. estrade < իսպ. estrado հարթակ], գ. 1. Բեմահարթակ՝ ներկայացում-համերգների վայր (շենք, սրահ ևն)՝ բարձր բեմահարթակով կամ հրապարակով: 2. Փոքրիկ՝ հիմնականում իրար հաջորդող երաժշտական առանձին համարներից բաղկացած համերգային ներկայացումներն իբրև արվեստի ճյուղերից մեկը:

ԷՍՏՐՈԳԵՆՆԵՐ [< эстрогены < հուն. oistros կիրք, ցասում + genos ծնունդ], գ. (կզմխս.): Իգական սեռական հորմոններ.արտադրվում են ձվարաններում և խթանում երկրորդային սեռական հատկանիշների զարգացումը:

ԷՍՏՈՒԱՐ [< эстуарий < լատ. aestuarium ողողվող գետաբերան], գ. (երկրբ.): Դեպի օվկիանոսը, ծովն ընդարձակվող ձագարաձև գետաբերան.բնորոշ է խոշոր գետերին՝ Ենիսեյ, Ամուր, Թեմզա ևն:

ԷՍՔԻԶ [< эскиз < ֆր. esquisse], գ. (խսկց.): 1. Ուրվանկար՝ ուրվագիծ: 2. Նկար՝ նախագիծ, որի համաձայն կերտում՝ սարքում են որևէ բան:

ԷՎԱԿՈՒԱՏՈՐ [< эвакуатор < լատ. evacuare դատարկել, պարպել], գ. (տեխ.): Հատուկ բեռնատար ավտոմեքենա, որը սարքավորված է յուրատեսակ ամբարձիչ համակարգով՝ վթարված ևն ավտոմեքենաներ բեռնելու և համապատասխան վայր տեղափոխելու համար:

ԷՎԱԼՎԱՑԻԱ [< эвальвация < ֆր. évaluation], գ. (բանկ.): Գնահատում, հաշվարկում:

ԷՎԱԿՈՒԱՑԻԱ [< эвакуация < լատ. evacuare], գ. (խսկց.): 1. Դատարկում՝ մարդկանց, հիմնարկ-ձեռնարկությունների գույքի, սարքավորումների կազմակերպված հեռացումը վտանգի ենթակա վայրերից (առավելապես պատերազմական գործողությունների ժամանակ): 2. Հեռացում՝ վիրավորների, հիվանդների ռազմական գույքի պլանային հեռացումը ռազմական գոտուց:

ԷՎԱԿՈՒԱՑԻՈՆ [< эвакуационный < լատ.], ած. 1. Էվակուացիայի հետ կապված՝ վերաբերող: 2. Էվակուացիա կատարելու հետ կապված, էվակուացիա կատարող, էվակուացիան իրագործող:

ԷՎԴԵՄՈՆԻԶՄ [< эвдемонизм < հուն. eudaimonia երջանկություն], գ. (փիլ.): Անտիկ փիլիսոփայության մեջ բարոյագիտական ուղղություն, որը բարոյականու-

թյան և մարդու պահվածքի չափանիշը համարում էր նրա երջանկության ձգտումը:

ԷՎԴԻՈՄԵՏՐ [< эвдиометр < հուն. eudios պարզ, մաքուր (օդի մասին) + metreō չափում եմ], գ. (տեխ.): Պարզաչափ՝ 1. Գազերի հետազոտման սարք: 2. Էլեկտրական կայծի օգնությամբ ջրի ստացման գործիք՝ թթվածնից և ջրածնից:

ԷՎԹԱՆԱԶԻԱ [< эвтаназия < հուն. eu լավ + thanatōs մահ], գ. (բժշկ.): Անբուժելի հիվանդներին մահացնելու գործընթացը:

ԷՎԻԿՑԻԱ [< эвикция < լատ. evictio բռնագանձում], գ. (իրավ.): Գնորդից ձեռք բերած սեփականության բռնագարավում դատարանի որոշման համաձայն:

ԷՎԿԱԼԻՊՏ [< эвкалипт < հուն. eu լավ + kalyptos ծածկված], գ. (բսբ.): Նիվենի՝ մրտազգիների ընտանիքին պատկանող արևադարձային բույս, տենդածառ՝ մինչև 150 մ բարձրության. այն պարունակում է եթերային յուղեր, որոնք օգտագործվում են բժշկության մեջ, իսկ բունը և արմատները՝ փայտամշակության:

ԷՎՈԼՅՈՒՏ և ԷՎՈԼՎԵՆՏ [< эволюта и эвольвента < լատ. evolutus փռված, evolventis փռող], գ. (երկրչ.): Կորի էվոլյուտ կոչվում է իր կորության կենտրոնների բազմությունը, իսկ էվոլվենտ՝ իր շոշափողների ուղղահայաց կորը:

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ [< эволюция < լատ. evolutio տարածում], գ. 1. (գիտ.): Որևէ բանի փոփոխությունը՝ զարգացման գործընթացը մի որակական վիճակից դեպի մի նոր որակական վիճակ, հոլովույթ: 2. (փիլ.): Զարգացման ձև, որը աստիճանական քանակական փոփոխություններով նախապատրաստում է որակական փոփոխությունը, բարեշրջություն: 3. Առհասարակ՝ մի վիճակից մի նոր վիճակի տանող փոփոխություն:

ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔ - Ուսմունք օրգանական աշխարհի զարգացման մասին, որ տեղի է ունենում տվյալ օրգանական ձևերից ուրիշ ձևերի անցնելու ճանապարհով:

ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻԶՄ [< эволюционизм < լատ.], գ. (գիտ.): 1. Ուսմունք, որի համաձայն ամեն ինչ գտնվում է անընդհատ զարգացման՝ էվոլյուցիայի մեջ: 2. Ուղղություն փիլիսոփայության և այլ գիտությունների մեջ, որը ժխտում է զարգացման թռիչքաձևությունը՝ որակական անցումները՝ հեղափոխությունները զարգացման մեջ:

ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆԻՍՏ [< эволюционист < լատ.], գ. ած. Էվոլյուցիոնիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԷՎՌԻԹՄԻԱ [< эвритмия < հուն. eurhythmia ներդաշնակություն, բարեհնչություն], գ. (մսնգ.): Ռիթմի համաչափություն երաժշտության, պարի և խոսքի մեջ:

ԷՎՏԵԿՏԻԿԱ [< эвтектика < հուն. eutēktos դյուրահալ], գ. (քիմ.): Որոշակի բաղադրության մանրաղիսպերս խառնուրդ կամ միաֆազ հեղուկ, որը բաղկացած է երկու կամ ավելի բաղադրիչներից և ունի խիստ որոշակի հալման ջերմաստիճան:

ԷՎՐԻԲԻՈՆՏ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ [< эврибионтные (< հուն. eurys լայն + bios կյանք) организмы] - (կենսբ.): Բուսական և կենդանական օրգանիզմների տեսակներ ու անհատներ, որոնք ապրում են միջավայրի տարբեր գործոնների ազդեցության պայմաններում:

ԷՎՐԻԿԱ [< эврика < հուն. heurēka], ձայն. 1. « Ես գտա» հույն մաթեմատիկոս և մեխանիկ Արքիմեդի (287-211 մ.թ.ա.) բացականչությունը՝ ջրակայունության հիմնական օրենքի բացահայտման ժամանակ: 2. Ուրախության բացականչություն՝

մի լավ միտք հղանալու, մի գաղտնիք կռահելու են առթիվ:

ԷՎՐԻՍՏԻԿԱ [< эвристика < հուն. heuriskō գտնում եմ, հայտնաբերում եմ], գ. Գիտելիքների բնագավառ, որն ուսումնասիրում է ստեղծագործական գործունեությունը՝ այն ըմբռնելով իբրև խնդիրների լուծում:

ԷՎՖԵՄԻԶՄ [< эвфемизм < հուն. euphēmismos < eu լավ + phēmi խոսում եմ], գ. (լեզվբ.): Մեղմասացություն՝ կոպիտ՝ գռեհիկ բառերն ու արտահայտությունները մեղմ՝ քաղաքավարի արտահայտություններով փոխարինելը:

ԷՎՖՈՆԻԱ [< эвфония < հուն. euphōnia < eu լավ + phōnē հնչյուն, ձայն], գ. (լեզվբ.): Գեղահնչյունություն՝ խոսքի կառուցման եղանակ, որ հենված է հեշտ արտաբերվող ու արտասանական հաճելի տպավորություն թողնող հնչյունների հարաբերակցության վրա, կիրառվում է հնչյունակրկնություններում՝ առձայնություններում, բաղաձայնություններում:

ԷՎՖՈՒԻԶՄ [< эвфуизм < հուն. euphyēs < Զ. Լիլիսի «Էվֆուես» վեպի հերոսի անունից], գ. (լեզվբ. հնց.): Ճոռոմություն՝ լեզվաարտահայտչական բազմազան տարրերի (փոխաբերություններ, մակդիրներ, համեմատություններ են) անսահմանափակ օգտագործման հետևանքով ստեղծվող ոճի փքունություն, ճոռոմություն, վերամբարձություն:

ԷՏԱԺ [< этаж < ֆր. étage < լատ. statio տեղ], գ. (խսկց. հնց.): Հարկ՝ 1. Շենքի մեկ հարթություն վրա գտնվող մասերի՝ սենյակների ամբողջությունը: 2. *փխբ.* Իրար վրա շարքերով բարձրացող շինվածքների յուրաքանչյուր շարքը՝ միևնույն հարթությամբ ձգվող մասը: 3. Իրար վրա բարձրացող առարկաների միևնույն հարթության վրա դասավորված մասերի ամբողջությունը:

ԷՏԱԺԵՐԿԱ [< этажерка < ֆր. étagère], գ. (խսկց.): 1. Դարակ՝ պատին կամ պահարանի մեջ ամրացված հարմարանք՝ տախտակ՝ մեջը գրքեր՝ ամանեղեն են դնելու համար: 2. Գզրոց, սեղանի արկղ: 3. Պահարանի բաժանմունք՝ աչք: 4. Գրադարակ՝ մի քանի դարակներից բաղկացած:

ԷՏԱԼՈՆ [< эталон < ֆր. étalon նմուշ], գ.: Չափանմուշ՝ չափման տվյալ միավորի ստուգանմուշ:

ԷՏԱՊ [< этап < ֆր. étape], գ. 1. Փուլ՝ շրջան՝ զարգացման, շարժման են: 2. (հնց.): Աքսորյալների գիշերելու վայրը, ինչպես ամբողջ և ճանապարհը մինչև աքսորավայրը: 3. Պահակախմբի հսկողությամբ որևէ տեղ տարվող կալանավորների խումբ:

ԷՏԱՏԻԶՄ [< этатизм < ֆր. étatisme < état պետություն], գ. (քղք.): Պետության վարած ակտիվ տնտեսական քաղաքականությունը:

ԷՏԻԿԵՏ [< этикетка < ֆր. étiquette], գ. 1. (խսկց.): Պիտակ՝ ապրանքային նշան, որն ամրացված է տվյալ ապրանքին կամ տուփին, ապրանքանշան: 2. Վարվելակերպի կանոնակարգ:

ԷՏԻՄՈԼՈԳԻԱ [< этимология < հուն. etymologia < հուն. etymon բառի հիմնական իմաստ + logos], գ. (լեզվբ.): Ստուգաբանություն՝ լեզվաբանության մի բաժինը, որն ուսումնասիրում է բառերի, ձևույթների ու քերականական ձևերի ծագումն ու պատմությունը, ինչպես և լեզվաբանական միավորների նախնական իմաստներն ու սրանց զարգացումը:

ԷՏԻՄՈՆ [< этимон < հուն. etymon ճշմարտություն, բառի հիմնական իմաստ], գ. (լեզվբ.): Բնիմաստ՝ տվյալ բառի նախնական՝ սկզբնական ձևը և իմաստը:

ԷՏԻՈԼՅԱՑԻԱ [< этиоляция < ֆր. étioler նվազ դարձնել], գ. (բսբ.): Բույսերի աճման գործընթացը մթության մեջ:

ԷՏՅՈՒԴ [< этюд < ֆր. étude < լատ. studium ջանք, ճիգ], գ. 1. (նկարչ.): Ճեպանկար: 2. Ուրվական: 3. Ակնարկ: 4. (արվ.): Վարժական ստեղծագործության ձևերից մեկը (երաժշտական, թատերական, շախմատային):

ԷՏՅՈՒԴԱՊԱՆԱԿ, գ. (նկարչ.): Էտյուդները մեջը դնելու և պահելու պահպանակ:

ԷՐԱ [< эра < լատ. aera], գ. (հնց.): 1. Թվականություն՝ ժամանակաշրջանը, որից սկսում են թվարկությունը, քրիստոնյաների մոտ՝ Քրիստոսի ծննդից, մահմեդականների մոտ՝ Մուհամմեդի՝ Մեքայից փախուստից՝ 622 մ. թ., հին հռոմեացիների մոտ՝ Հռոմի հիմնադրումից՝ 753 մ.թ.ա.: 2. Դարաշրջան՝ որևէ կարգի նշանավոր իրադարձություններով՝ երևույթներով բնորոշվող և իր ուրույն առանձնահատկություններն ունեցող ժամանակաշրջան: 3. (երկրբ.): Երկրաբանական ժամանակաշրջաններից յուրաքանչյուրը: 4. (աստղգ.): Այն պահը, որից սկսվում է որևէ երկնային մարմնի շարժման ժամանակի հաշվարկումը:

ԷՐԱՏՈ [< эрато < հուն. Eratō], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ ինը մուսաներից մեկը՝ սիրերգության հովանավորը:

ԷՐԲԻՈՒՄ [< эрбий < Իթերբի (Ytt)erby քաղաքի անվանումից (Շվեդիա)], գ. (քիմ.): Er, պարբերական համակարգի երրորդ խմբի քիմիական տարր՝ լանթանիդների խմբից: Օգտագործվում է որպես կատալիզատոր, իսկ նրա միացությունները՝ ներկերի, դեղանյութերի և ապակու արտադրության մեջ:

ԷՐԳ I [< эрг < հուն. ergon աշխատանք], գ. (ֆիզ.): Աշխատանքի և էներգիայի չափման միավոր միավորների CGS համակարգում: 1 Է հավասար է 1 սմ ճանապարհի վրա 1 դն ուժի կատարած աշխատանքին, եթե ուժի և դրա կիրառման կետի տեղափոխության ուղղությունները համընկնում են:

ԷՐԳ II [< эрг < արաբ.], գ. (հզվդ.): Ավազային զանգվածների արաբական անվանումը Հյուսիսային Աֆրիկայի անապատներում:

ԷՐԳԱՍՏԵՐԻՈՆ [< эргастерий < հուն. ergastērion], գ. (պատմ.): Հին Հունաստանում՝ արհեստանոց, որտեղ աշխատում էին ստրուկները:

ԷՐԳԱՍՏՈՒԼ [< эргастул < լատ. ergastulum], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ բանտ ստրուկների համար. հողի տակ շղթայակապ՝ նրանք հատուկ ծանր աշխատանք էին կատարում:

ԷՐԳԱՏԻՎ [< эргатив < հուն. ergatēs գործող անձ], ած. գ. (լեզվբ.): Ակտիվ հոլով, ակտիվ-սուբյեկտային հոլով, պատմական հոլով՝ էրգատիվ նախադասության մեջ տրամաբանական ենթակայի հոլովը:

ԷՐԳՈՆՈՄԻԿԱ [< эргономика < հուն. ergon + nomos օրենք], գ. (գիտ.): Աշխատանքի պայմաններ ստեղծող, նրա գործունեություններն ուսումնասիրող, այն մարդու ֆիզիոլոգիական և հոգեբանական հնարավորությունների հարմարեցնող դիսցիպլին:

ԷՐԳՈՍՏԵՐԻՆ [< эргостерин < ֆր. ergot], գ. (կենսբ.): Բուսական ծագում ունեցող ստերին: Ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ փոխարկվում է ակտիվ հակառախիտիկ նյութի՝ վիտամին D-ի:

ԷՐԵԿՏՈՐ [< эректор < լատ. erectio ուղղում], գ. (կզմխս.): Ուղղիչ, ուղղող՝ մկան, որը կանգնեցնում, ուղղում, լարում է մարմնի որևէ մասը:

ԷՐԵԿՑԻԱ [< эрекция < լատ. erectio], գ. (կզմխս.): 1. Տղամարդու սեռական օրգանի կանգնեցում, ուղղում, լարում: 2. Մարմնի որևէ մասի ուղղում, լարում:

ԷՐԵՏԻԶՄ [< эретизм < հուն. erethisma գրգռվածություն], գ. (բժշկ.): Ուժեղ գրգռականություն:

ԷՐԶԱՑ [< эрзац < գերմ. Ersatz փոխարինող], գ. Ոչ լիարժեք փոխարինող նյութ:

ԷՐԻԹԵՄԱ [< эритема < հուն. erythēma կարմրություն], գ. (բժշկ.): Մաշկի սահմանափակ կամ տարածված կարմրություն, կարմրամաշկություն:

ԷՐԻԹՐՈԴԵՐՄԻԱ [< эритродермия < հուն. erythros կարմիր + derma մաշկ], գ. (բժշկ.): Մաշկային հիվանդությունների խումբ, որոնք տարբեր են ծագմամբ և զարգացման գործընթացներով, սակայն նույնն են ընդհանուր հատկանիշով. մաշկի համընդհանուր բորբոքում՝ կարմրությամբ արտահայտված:

ԷՐԻԹՐՈՑԻՏՆԵՐ [< эритроциты < հուն. erythros + kytos բջիջ, զետեղարան, թաղանթ], գ. (կենսբ.): Արյան կարմիր մարմիններ, մարդու և կենդանիների արյան բջիջներ: Սրանք պարունակում են հեմոգլոբին և իրականացնում թթվածնի տեղափոխումը թոքերից դեպի հյուսվածքներն ու օրգանները, ինչպես նաև CO_2–ի փոխադրումը հյուսվածքներից դեպի շնչառական օրգանները:

ԷՐԻՍՏԻԿԱ [< эристика < հուն. eristikos վիճող], գ. (գիտ.): Վիճաբանության, բանավեճի արվեստ:

ԷՐԿԵՐ [< эркер < գերմ. Erker ելուստ, լուսանց, լապտեր], գ. (ճարտ.): Սենյակի կիսաբոլոր կամ բազմանկյունի կարկառամաս, որը հաճախ ընդգրկում է մի քանի հարկ: Սա ընդլայնում է սենյակի տարածությունը և նպաստում արևի ճառագայթների առատ ներթափանցմանը:

ԷՐՄԻՏԱԺ [< эрмитаж < ֆր. ermitage առանձնանալու տեղ, մեկուսացված անկյուն < ermite < մենակյաց], գ. Գեղարվեստական և պատմամշակութային թանգարան Սանկտ Պետերբուրգում:

ԷՐՈԶԻԱ [< эрозия < լատ. erosio ողողում, մաշում, քայքայում], գ. 1. (երկրբ.): Ողողամաշում՝ հորդ անձրևների, հեղեղումների հետևանքով երկրի վերին շերտի՝ հողաշերտի վնասում: 2. Մեխանիկական երևույթներից, էլեկտրական հոսանքից, երկաթի վերնաշերտի տեղային քայքայում: 3. (բժշկ.): Քերծվածք:

ԷՐՈՍ [< эрос < հուն. Erōs], գ. (բնստղծ.): Սեր, սիրո ուժգին զգացում (հունական դիցաբանության սիրո աստված Էրոսի անունից):

ԷՐՈՏԻԿ [< эротический < հուն.], ած. Սիրատարափ, տարփալից, տռփական:

ԷՐՈՏԻԿԱ [< эротика < հուն. erōs (erōtos) սիրում եմ], գ. 1. Ցանկասիրություն, սիրատարփություն, հեշտասիրություն: 2. Տարփերգություն՝ այդպիսի երևույթներ պարունակող (կինոնկար, ստեղծագործություն):

ԷՐՈՏՈՄԱՆ [< эротоман < հուն. erōs (erōtos) + mania կիրք, խելահեղություն], գ. ած. (խսկց.): Տարփամոլ, ցանկասեր (մարդ):

ԷՐՈՏՈՄԱՆԻԱ [< эротомания < հուն.], գ. (խսկց.): Տարփամոլություն, տռփագարություն, վավաշամոլություն, ցանկամոլություն, սիրագարություն:

ԷՐՍՏԵԴ [< эрстед < դանիացի ֆիզիկոս Էրստեդի անունից], գ. (ֆիզ.): Մագնիսական դաշտի լարվածության չափման միավոր:

ԷՐՑՀԵՐՑՈԳ [< эрцгерцог < գերմ. Erzherzog], գ. (պատմ.): Արքիդուքս, Հաբսբուրգների ավստրիական տան արքայազունների տիտղոսը՝ 1453-1918 թթ.:

ԷՐՈՒԴԻՏ [< эрудит < լատ. eruditus կրթված], ած. գ. (խսկց.): Բազմահմուտ՝ խորագետ, խորահմուտ, բազմակողմանի զարգացած մարդ:

ԷՐՈՒԴԻՑԻԱ [< эрудиция < լատ. eruditio կրթվածություն], գ. (խսկց.): Բազմահմտություն, խորահմտություն, բազմակողմանի զարգացվածություն:

ԷՐՈՒՊՑԻԱ [< эрупций < լատ. eruptio ժայթքում], գ. (աստղգ.): Հանկարծակի բոցավառում, բռնկում, վայրկենական փայլատակում Արևի վրա, որն ունի բազմավառ կետերի տեսք:

ԷՈՒՖԻԼԻՆ [< эуфиллин < լատ. Euphyllinum Amynophyllinum], գ. (դեղրդ.):

Անոթալայնիչ դեղանյութ.օգտագործվում է բրոնխային ասթմայի, սրտային ասթմայի, ստենոկարդիայի, ինսուլտի դեպքում:

ԷՓԻՄԵՐՏԵ, ԷՖԻՄԵՐԴԻ [< эфимерди < հուն. ephymeris օրագիր, առօրյա դեպք], գ. (պատմ.): 1. Պետական, քաղաքական ու ռազմական գործիչների օրագրերը Եգիպտոսում և Հին Հունաստանում: 2. Աստղագիտական հատուկ տվյալներ պարունակող աղյուսակներ ու հին օրացույցներ:

ԷՔՅՈՒ [< экю < ֆր. e´cu], գ. 1. (ֆին.): Ֆրանսիական ոսկե կամ արծաթե հին դրամ XIII-XVIII դարերում: 2. Եվրոպական արտարժույթի անվանումը, որը գործարկվել է 1979 թ.:

ԷՔՍ... [< экс ... < լատ. ex...] Բարդ բառերում ունի նախկին, անցյալի նշանակություն:

ԷՔՍԻԿԱՏՈՐ [< эксикатор < լատ. exsiccare չորացնել], գ. (տեխ.): Ապակյա հաստ պատով հերմետիկ փակվող անոթ, որն օգտագործվում է լաբորատորիաներում քիչ քանակությամբ նյութեր չորացնելու կամ չոր պահելու համար:

ԷՔՍԻՏՈՆ [< экситон < լատ. exitare գրգռել], գ. (ֆիզ.): Պինդ մարմնում էլեկտրոնների համակարգի տարրական գրգռում, որը կապված չէ էլեկտրական լիցքերի տեղափոխման հետ:

ԷՔՍԼԻԲՐԻՍ [< экслибрис < լատ. ex libris ի գրոց (որևէ մեկի)], գ. (հզվդ.): Մատենանիշ, գրքանիշ՝ գրքատիրոջ անունը կրող գեղարվեստականորեն ձևավորված պիտակ, որ փակցվում է կազմի կամ շապկի մակերեսին, գրքապիտակ:

ԷՔՍԿԱՎԱՏՈՐ [< экскаватор < անգլ. excavator < լատ. excavare փորել], գ. (տեխ.): Ինքնագնաց հողափոր մեքենա՝ գետինը փորելու, հողն ու քարերը տեղափոխելու և փոխադրող մեքենայի թափքը լցնելու համար, գետնափորիչ:

ԷՔՍԿԼՅՈՒԶԻՎ [< эксклюзив < անգլ. exclusive], ած. 1. Բացառիկ, հատուկ: 2. Միակ, եզակի: 3. Գերազանց, առաջնակարգ: 4. Նորաձև և թանկարժեք:

ԷՔՍԿՈՒՐՍ [< экскурс < լատ. excursus խոսքից շեղում], գ. Գլխավոր նյութից շեղվելը՝ նրա հետ որոշ կապ ունեցող կողմնակի հարցեր լուսաբանելու համար (ուսումնասիրության, զեկուցման ևն մեջ):

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ [< экскурсия < լատ. excursio ուղևորություն], գ. 1. Կոլեկտիվ ուղևորություն՝ զբոսանք՝ շրջագայություն գիտակրթական կամ զվարճության նպատակով, զբոսարշավ: 2. (խսկց.): Զբոսանք: 3. (լեզվբ. հնց.): Ելք՝ հնչյունների արտաբերության առաջին փուլը, երբ տվյալ հնչյունի արտաբերմանը մասնակցող օրգանները նախապատրաստական դիրք են գրավում: Հնչյունաշղթայում երկրորդ և հաջորդ հնչյունների էքսկուրսիան սովորաբար միակցվում է նախորդ հնչյունի ռեկուրսիայի հետ՝ առաջացնելով հնչյունափոխություն: Կոչվել է նաև կատաստազիս, կատաստազ [катастазис, катастаз < ֆր. catastase]:

ԷՔՍՀՈՒՄԱՑԻԱ [< эксгумация < լատ. ex + humus հող], գ. (իրավբ.): Դիակի հանումը հողից՝ դատաբժշկական, կրիմինալիստիկական ևն հետազոտման համար:

ԷՔՍՊԱՆՍԻԱ [< экспансия < լատ. expansio], գ. (քղք.): Ընդարձակում, զավթողագործություն՝ որևէ պետության կամ տնտեսական կառույցի ազդեցության ոլորտի ընդարձակում՝ ծավալում տնտեսական-քաղաքական կամ այլ միջոցներով, նոր ազդեցության գոտիների տիրանալու քաղաքականություն:

ԷՔՍՊԱՆՍԻՈՆԻԶՄ [< экспансионизм < լատ.], գ. (քղք.): Էքսպանսիայի քաղաքականություն:

ԷՔՍՊԱՆՍԻՈՆԻՍՏ [< экспансионист < լատ.], գ. Էքսպանսիոնիզմի կողմնակից:

ԷՔՍՊԱՆՍԻՎ [< экспансивный < ֆր. expansif < լատ. expansio տարածում], ած. 1. Էքսպանսիայի ձգտող, էքսպանսիա կատարող: 2. Էքսպանսիա արտահայտող: 3. *փխբ.* Եռանդ՝ կիրք՝ ջերմություն հանդես բերող:

ԷՔՍՊԱՏՐԻԱՑԻԱ [< экспатриация < լատ. ex + patria], գ. (քղք. իրավք.): Տարագրում, հայրենավտարում՝ հայրենի երկրից հարկադրաբար արտաքսում՝ քաղաքացիության զրկմամբ:

ԷՔՍՊԵԴԻՏՈՐ [< экспедитор < լատ. expedire], գ. (խսկց.): Առաքիչ՝ անձ, որը զբաղվում է հատկապես ապրանքների առաքմամբ:

ԷՔՍՊԵԴԻՑԻԱ [< экспедиция < լատ. expeditio], գ. (խսկց.): 1. Առաքում՝ ինչ-որ բան առաքումը, առաքելը: 2. Արշավախումբ՝ մարդկանց խմբի ուղարկելը ինչ-որ վայր, տեղանք՝ հատուկ նպատակով: 3. Գիտարշավ՝ գիտական նպատակով ուղարկված արշավախումբ: 4. Հատուկ նպատակով առաքված մարդկանց խումբը:

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏ [< эксперимент < լատ. experimentum փորձ], գ. (հնց.): 1. Փորձ՝ որոշակի պայմաններում որևէ երևույթի վերարտադրությունը կամ նոր երևույթի դիտարկումը՝ ուսումնասիրության նպատակով: 2. Գիտափորձ:

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ [< экспериментальный < լատ.], ած. Փորձառական, փորձարարական:

ԷՔՍՊԵՐՏ [< эксперт < լատ. expertus հմուտ], գ. (հնց.): 1. Փորձագետ՝ փորձագիտանքի համար որևէ վիճելի՝ բարդ գործի պարզաբանման նպատակով հրավիրվող մասնագետ: 2. Գիտափորձ կատարող մասնագետ-գիտնական:

ԷՔՍՊԵՐՏԻԶԱ [< экспертиза < լատ. expertus], գ. (խսկց.): Փորձաքննություն՝ որևէ բանի մասին ճիշտ եզրակացության գալու՝ որևէ բանի ճիշտ եզրակացության գալու՝ որևէ բանի ճիշտ գնահատական տալու նպատակով կատարվող մասնագիտական հետազոտություն՝ քննություն:

ԷՔՍՊԻՐԱՑԻԱ [< экспирация < լատ. expiratio], գ. (կզմխս.): Արտաշնչում՝ օդը թոքերից դուրս մղելը:

ԷՔՍՊԼԱՆՏԱՑԻԱ [< эксплантация < լատ. ex + plantare տնկել], գ. (բժշկ.): Փոխպատվաստում՝ 1. Կենդանական և բնական հանգույցների աճեցումը օրգանիզմից դուրս: 2. Ոսկրը՝ հյուսվածքը՝ օրգանը նն կտրելով՝ հանելով իր տեղից՝ այլ տեղում պատվաստելը:

ԷՔՍՊԼԱՏԱՑԻԱ [< эксплуатация < ֆր. exploitation], գ. (քղք.): Շահագործում՝ 1. Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված՝ վարձու աշխատանքի արդյունքների յուրացումը արտադրող-սեփականատերերի կողմից: 2. Գործադրության օգտագործում, որևէ կարգի նպատակների համար սիստեմատիկորեն օգտագործելը: 3. Շահագործելը, շահագործվելը:

ԷՔՍՊԼԻԿԱՑԻԱ [< экспликация < լատ. explicatio մեկնություն, բացատրություն], գ. 1. (մնգ.): Մեկնություն, բացատրություն: 2. Պարզաբանական տեքստ, պարզաբանագիր:

ԷՔՍՊՈԶԵ [< экспозе < ֆր. exposé < լատ. expositio նկարագրություն], գ. 1. (դվնգ.): Կարճ հաղորդում (վարվող արտաքին քաղաքականության մասին): 2. (մնգ.): Կարճ շարադրանք (ստեղծագործության նն):

ԷՔՍՊՈԶԻՑԻԱ [< экспозиция < լատ. expositio բացատրություն], գ. 1. (արվ.): Ներածություն՝ գրական կամ երաժշտական երկի ներածական մասում արտահայտված հիմնական գծերը, որոնք հետագայում զարգանում ու խորանում են: 2. Տեղադրում՝ առարկաների որոշ կարգով տեղադրելը՝ դասավորելը թանգարաններում՝ պատկերասրահներում նն: 3. Ցուցադրում՝ տեղադրված նմուշները:

ԷՔՍՊՈՆԱՏ [< экспонат < լատ. exponatus ցուցադրվող], գ. (խսկց.): Ցուցանմուշ՝ ցուցադրված իր:

ԷՔՍՊՈՐՏ [< экспорт < անգլ. export < լատ. exportare դուրս տանել], գ. (տնտսգ.): Արտահանում՝ 1. Ապրանքների, ֆինանսական միջոցների դուրսհանում երկրից: 2. Արտահանված ապրանքների քանակը և արժեքը:

ԷՔՍՊՐԵՍ [< экспресс < լատ. expressus ուժեղացված], 1. գ. (խսկց.): Ճեպընթաց՝ արագագնաց գնացք, ավտոբուս, նավ են, որ կանգ է առնում միայն մեծ կանգառներում: 2. ած. Արագ ընթացող, գործող:

ԷՔՍՊՐԵՍԻԱ [< экспрессия < լատ. expressio արտահայտություն], գ. Արտահայտչականություն, զգացմունք, ապրումների արտահայտման աստիճան:

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻԶՄ [< экспрессионизм < ֆր. exressionnisme < expression արտահայտություն], գ. (արվ. գրկն.): Գրականության և արվեստի մեջ XX դարի առաջին կեսին հանդես եկած ուղղություն, որի խնդիրն էր արվեստագետի ներքնաշխարհի և նրա անհատական ապրումների արտահայտումը:

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻՍՏ [< экспрессионист < ֆր.], գ. Էքսպրեսիոնիզմի հետևորդ՝ կողմնակից:

ԷՔՍՊՐՈՄՏ [< экспромт < լատ. expromtus պատրաստի], գ. Հանկարծաստեղծություն՝ առանց նախապատրաստության գրված բանաստեղծություն՝ երաժշտական ստեղծագործություն, արտասանված ճառ են:

ԷՔՍՊՐՈՊՐԻԱՏՈՐ [< экспроприатор < ֆր.], գ. Ունեզրկիչ:

ԷՔՍՊՐՈՊՐԻԱՑԻԱ [< экспроприация < ֆր. expropriation < լատ. ex + proprius սեփական], գ. 1. (պատմ.): Ունեզրկում՝ սեփականությունից, ունեցվածքից զրկելը: 2. Բռնագրավում՝ սեփականության, ունեցվածքի են բռնությամբ գրավելը, օտարելը:

ԷՔՍՏԱԶ [< экстаз < հուն. extasis հիացմունք, հափշտակություն], գ. (խսկց.): Հիազմայլանք, հիազմայլություն, հափշտակություն. հիացմունքի ծայր աստիճան, երբ մարդը հասնում է մոլեգնության և ինքնամոռացման:

ԷՔՍՏԵՆՍԻՎ [< экстенсивный < լատ. extensivus ընդարձակվող, ձգվող], ած. Տարածված, կենտրոնացված, միայն քանակի մեծացման հետ կապված, առանց որակի բարելավման:

ԷՔՍՏԵՌՆ [< экстерн < լատ. externus արտաքին], 1. ած. մկ. Առանց տվյալ ուսումնական հաստատությունում սովորելու քննություններ հանձնելու կարգով: 2. գ. Առանց ուսումնական հիմնարկում ուսանելու քննություններ տվող անձ:

ԷՔՍՏԵՌՆԱՆՏ [< экстернант < լատ.], գ. Առանց տվյալ ուսումնական հաստատությունում սովորելու քննություններ հանձնող քաղաքացի:

ԷՔՍՏԵՌՆԱՏ [< экстернат < լատ. externus], գ. 1. Էքստեռն ուսուցում: 2. Ուսումնական հաստատության էքստեռնանտների բաժինը:

ԷՔՍՏԵՐԻԵՐ [< экстерьер < ֆր. extérieur < լատ. exterior արտաքին], գ. Արտաքնակազմ, կենդանիների մարմնակազմի արտաքին ձևերը, լայն առումով՝ ուսմունք արտաքնատեսքով կենդանիների տնտեսական հատկանիշները գնահատելու մասին:

ԷՔՍՏԻՆԿՑԻԱ [< экстинкция < լատ. extinctio թուլացում, մեղմում], գ. (ֆիզ.): Լուսային շիթի թուլացում՝ ինչ-որ միջավայրի միջով անցնելու պատճառով, օրինակ՝ Երկրի մթնոլորտի, միջաստղային միջավայրի են:

ԷՔՍՏԻՐՊԱՑԻԱ [< экстирпация < լատ. extirpatio արմատախիլ անել], գ. (բժշկ.): Արմատահանում, արմատախլում, արմատախիլ անելը ուռուցքի կամ որևէ օրգանի:

ԷՔՍՏՐԱ... I [< экстра ... < լատ. extra] Բարդ բառերում գործածվում է արտակարգ, լրացուցիչ, արտա... նշանակությամբ:

ԷՔՍՏՐԱ II [< экстра < լատ. extra չափից դուրս], ած. Ինչ-որ բանի (ապրանքի ևն) ամենալավը, լավագույնը:

ԷՔՍՏՐԱԴԻԿՑԻԱ [< экстрадикция < լատ. ex միջից, դուրս + traditio հանձնում, փոխանցում], գ. (իրավք. դվնգ.): Օտարերկրացու հանձնումը իր պետությանը տվյալ երկրի օրենքները խախտելու պատճառով:

ԷՔՍՏՐԱԿՏ [< экстракт < լատ. extractum քամում, կորզում], գ. 1. Մուզ՝ մրգերը, բանջարեղենը ևն մզելուց՝ քամելուց ստացվող հյութ: 2. (բժշկ.): Հանուկ՝ որևէ բանի հյութի խտացումով ստացվող բուժական պատրաստուկ:

ԷՔՍՏՐԱԿՑԻԱ [< экстракция < լատ. extrahere], գ. 1. (բժշկ.): Հեռացում՝ հեռացնելը՝ հանելը՝ քաշելը: 2. Առանձնացում՝ առանձնանալը, առանձնացնելը, առանձնացվելը:

ԷՔՍՏՐԱՍԵՆՍ [< экстрасенс < լատ. extra + sensus զգացմունք], գ. (խսկց.): Պայծառատես՝ ամեն ինչ պայծառորեն տեսնող՝ հասկացող, խորամիտ, խելացի:

ԷՔՍՏՐԱՎԱԳԱՆՏ [< экстравагантный < ֆր. exstravagant < լատ. extra չափից ավելի + vagant տարածվել], ած. (խսկց.): Արտասովոր՝ տարօրինակ, ոչ սովորական:

ԷՔՍՏՐԱՎԵՐՍԻԱ [< экстраверсия < լատ. extra չափից ավելի + versere ուղղված՝ կենտրոնացած լինել], գ. (հոգեբ.): Անձի չափից դուրս կենտրոնացումը արտաքին աշխարհի առարկաների վրա:

ԷՔՍՏՐԵՄԱԼ [< экстремальный < լատ. exstremus ծայրահեղ], ած. (խսկց.): Ծայրահեղ:

ԷՔՍՏՐԵՄԻՍՏ [< экстремист < լատ.], գ. Ծայրահեղական:

ԷՔՍՏՐԵՄԻԶՄ [< экстремизм < լատ. estremus], գ. (քղք.): Ծայրահեղականություն՝ ծայրահեղական քաղաքականության կողմնակից (մարդ, կուսակցություն):

ԷՔՍՏՐԻՄ [< экстрим < լատ. extremum ծայրագույն], գ. 1. (սպորտ.): Վտանգներով լի մրցույթ ևն: 2. (խսկց.): Ծայրահեղ իրավիճակ, սուր զգացողությունների ևն վիճակ:

ԷՔՍՏՐՈՒԶԻԱ [< экструзия < լատ. extrusion արտամղում], գ. Մածուցիկ լավայով հրաբուխներին բնորոշ ժայթքման տեսակ:

ԷՔՍՑԵՆՏՐԻԿ [< эксцентрик < ֆր. excentrique < լատ. ex + centrum կենտրոն], ած. 1. (գիտ.): Արտակենտրոն՝ առանցքը կենտրոնում չգտնվող: 2. *փխբ.* Անհավասարակշիռ, հախուռն, ծայրահեղորեն յուրօրինակ:

ԷՔՍՑԵՍ [< эксцесс < լատ. excessus ելք], գ. 1. Անժուժկալ չափազանցություն: 2. Անկարգություն՝ հասարակական կարգի խանգարում, բախում:

ԷՔՍՑԵՐՊՑԻԱ [< эксцерпция < լատ. excerptio դուրսհանում], գ. (մսնգ.): Որևէ բնագրից մեջբերում, ցիտատ:

ԷՔՍՑԻԶԻԱ [< эксцизия < լատ. excisio], գ. (բժշկ.): Մաշկի մի կտորի հեռացում:

ԷՔՍՈՒԴԱՑԻԱ [< экссудация < լատ. exsudare քրտնել], գ. (բժշկ.): Արտաքրտնում, արտածորում:

ԷՖԵԲԻԱ [< эфебы < հուն. ephēbos], գ. (պատմ.): Պետական կազմակերպություն Հին Հունաստանում (Աթենքում, Սպարտայում)՝ 18-20 տարեկան ազատածին պատանիներին ռազմական և քաղաքացիական ծառայության պատրաստելու համար:

ԷՖԵԴՐԱ [< эфедра < հուն. ephedra], գ. (բսբ.): Տափաստանամորի:

ԷՖԵԴՐԱԶԳԻ, գ. ած. Էֆեդրազգիների դասին պատկանող:

ԷՖԵԴՐԻՆ [< эфедрин < լատ. Ephedrinum], գ. (դեղագրդ.): Դեղանյութ, ալկալոիդ, որը պարունակվում է էֆեդրա բույսի որոշ տեսակներում: Բժշկության պրակտիկայում օգտագործվում է էֆեդրինի հիդրոքլորիդը:

ԷՖԵԿՏ [< эффект < լատ. effectus գործողություն], գ. (հնց.): 1. Արդյունք, արգասիք: 2. Բուռն՝ վառ տպավորություն:

ԷՖԵԿՏԻՎ [< эффективный < լատ. effectivus], ած. 1. Արդյունավետ, մեծ արդյունք տվող: 2. Ներգործուն, գործուն, ազդու:

ԷՖԵՄԵՐՆԵՐ [< эфемеры < հուն. ephēmeros մեկօրյա], գ. (բսբ.): Տափաստանային, կիսատափաստանային և մասամբ անապատային միամյա բույսեր, որոնց վեգետացիան սահմանափակվում է շատ կարճ ժամանակամիջոցում:

ԷՖԵՆԴԻ [< эфенди < թուրք. efendi], գ. Հարգական տիտղոս (Թուրքիայում):

ԷՖՈՒԶԻԱ [< эффузия < լատ. effusio արտահոսում], գ. 1. (ֆիզ.): Գազային ներթափանցում: 2. (երկրբ.): Մագմայավիժություն, մագմայաթափություն. հեղուկ լավայի հանգիստ արտահոսումը, տարածումը երկրի երեսին:

ԷՖՈՒԶԻՎ [< эффузивный < լատ. effusio], ած. Արտավիժական՝ 1. Դուրս ժայթքող, թափվող, արտավիժող: 2. Արտավիժված, արտավիժումով գոյացած:

Թ

ԹԱԲՈՒԼԵ [< табуле < արաբ.tabule, բառացի՝համեմված], գ. (խոհր.): Մանր բլղուրով, զանազան կանաչեղենով և լոլիկով պատրաստված լիբանանյան աղցան:

ԹԱԲՈՒՆ I [< табун < գերմ.], գ. (քիմ.): Թունավոր նյութ:

ԹԱԲՈՒՆ II [< табун < թուրք.], գ. (խսկց.): 1. Ձիերի երամակ: 2. Մարդկանց խուռներամ բազմություն: 3. Քոչվոր մարդկանց և նրանց անասունների ու սայլերի խումբ՝ բազմություն:

ԹԱԼԻԲԱՆ [< талибан < թաջիկերեն tolib մահմեդական կրոնական դպրոցի (մեդրեսեի) սովորող < պարսկ. taleb ուսանող < արաբ. taleb փնտրող, հայցող], գ. (քղք. կրոն.): Մահմեդական կրոնական-քաղաքական շարժում, որը XX-XXI դդ. կարողացավ Աֆղանստանում մի քանի տարով գրավել իշխանությունը. շարժումը սկզբնապես ձևավորվել է XXդ. վերջին մեդրեսեի սովորողների կողմից. այստեղից էլ անվանումը:

ԹԱԼԻԲՆԵՐ [< талибы < թաջիկերեն < պարսկ. < արաբ.], գ. (քղք.): Թալիբան շարժման անդամ:

ԹԱ ԼԻՍՄԱՆ [< талисман < ֆր. talisman < արաբ. tolsmân կախարդանք, հմայություն] գ. Հուռութք՝ առարկա, որը, ըստ սնոտիապաշտական պատկերացումների, կրողին կամ ունեցողին երջանկություն՝ հաջողություն բերելու, փորձանքից՝ վտանգից ու չարքերից զերծ պահելու հատկություն ունի, հմայիլ:

ԹԱԼԻՈՒՄ [< таллий < հուն. thallos կանաչ ճյուղ], գ. (քիմ.): Քիմիական տարր. սպիտակավուն պարզ մետաղական մարմին: Բազմաթիվ մետաղների հետ առաջացնում է կայուն համաձուլվածքներ, որոնց վրա էլ հիմնված է նրա կիրառությունը:

ԹԱԼՄՈՒԴ [< талмуд < եբրայերեն talmüd ուսմունք < lāmad սովորեցնել], գ. Հրեաների հին կտակարանի մեկնությունների վրա հիմնված կրոնական, կենցա-

ղային, իրավական կանոնների ու պատվիրանների ժողովածու՝ հուդայականության տեսական հիմքերից:

ԹԱԼՈՄ [< таллом < հուն. thallos ընձյուղ, երիտասարդ ճյուղ], գ. (բսբ.): Ստորակարգ բույսերի (ջրիմուռներ, սնկեր, քարաքոսներ են) վեգետատիվ մարմին:

ԹԱԼՈՖԻՏՆԵՐ [< таллофиты < հուն. thallos + phyton բույս], գ. (բսբ.): Ստորակարգ բույսեր, որոնց մարմինը՝ թալոմը, տարբերակված չէ ցողունի, տերևի և արմատի:

ԹԱԽՏ [< тахта < պարսկ.], գ. 1. Փայտե հասարակ մահճակալ: 2. Առանց թիկունքի գահավորակ կամ բազմոց՝ մի քանի մարդկանց միաժամանակ նստելու համար: 3. *փխբ.* Տան մեջ սարքած տախտակաշեն քնատեղ: 4. Թագավորական գահ: 5. *փխբ.* Թագավորական իշխանություն:

ԹԱՄԱԴԱ [< тамада < վրաց. tamadoba], գ. (խսկց.): Սեղանապետ (խնջույքի ժամանակ):

ԹԱՅԲՐԵՅՔ [< тай-брейк < անգլ. tie-break < tie խաղում՝ հավասար հաշիվ + to break կոտրել, ընդմիջել], գ. (սպորտ.): Թենիսում և մի շարք այլ մարզաձևերում՝ լրացուցիչ խաղափուլի տրամադրում մրցող մարզիկներին (հավասար հաշվի դեպքում):

ԹԱՅՄԱՈՒԹ [< тайм-аут < անգլ. time out], գ. 1. (սպորտ.): Կարճ ընդմիջում (սովորաբար մեկ րոպե), որը տրամադրվում է մարզիկին՝ թիմին մարզիչի խնդրանքով: 2. *փխբ.* Ընդմիջում, կարճատև դադար:

ԹԱՅՄԵՐ [< таймер < անգլ. timer < to time ժամանակը նշել], գ. (տեխ. խսկց.): Ժամանակաչափ:

«ԹԱՅՄՍ» [< "ТАЙМС" < անգլ. «The Times» «ժամանակներ»], գ. Անգլիական օրաթերթ. լույս է տեսնում 1785 թ. Լոնդոնում:

ԹԱՅՔՎԱՆԴՈ [< таэ-квон-до < ճապ.], գ. (սպորտ.): Արևելյան մարտարվեստի տեսակ:

ԹԱՅՖՈՒՆ [< тайфун < չին.], գ. Կործանիչ մեծ ուժ ունեցող փոթորիկ, որ փչում է Ասիայի հարավարևելյան և Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասերում:

ԹԱՆԱՏՈԼՈԳԻԱ [< танатология < հուն. thanatos մահ + logōs գիտություն], գ. (գիտ.): Մահագիտություն՝ բժշկության բաժին, որը ուսումնասիրում է մահվան գործընթացը:

ԹԱՆԱՖՈԲԻԱ [< танафобия < հուն.], գ. (մանգ.): Մահավախություն:

ԹԱՏՐՈՆ [< театр < հուն. theatron հանդիսությունների վայր], գ. (թատր.): 1. Արվեստի ձև, որ գեղարվեստորեն արտացոլում է կյանքը՝ հանդիսատեսների առջև դերասանների խաղով ներկայացվող գործողություններով: 2. Թատերական երկի ցուցադրումը,ներկայացում: 3. Ներկայացումներ կազմակերպող հիմնարկություն՝ կազմակերպություն: 4. Թատերական ներկայացումների շենքը: 5. *փխբ.* Շինծու՝ կեղծ արարք՝ վիճակ: 6. *փխբ.* Թատերական գրականության ամբողջությունը,

թատերգություն: 7. *փխբ.* (խսկց.): Տարօրինակ՝ թեթևամիտ արարքներ կատարող մարդ:

ԹԵԶ [< теза < ֆր. thèse < հուն. thesis դրույթ], գ. 1. Դրույթ: 2. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայության մեջ՝ զարգացման ամեն մի գործընթացի առաջին աստիճանը՝ ստադիան: 3. Գիտական աշխատություն, որ ներկայացնում են հասարակական պաշտպանության՝ գիտական աստիճան ստանալու համար:

ԹԵԶԱՎՐԱՑԻԱ [< тезаврация < հուն. thesauros գանձ], գ. (ֆին.): Մասնավոր անձանց կողմից ոսկու կուտակում՝ կուտակելը:

ԹԵԶԱՈՒՐՈՒՍ [< тезаурус < հուն. thesauros գանձ], գ. (լեզվբ. ինֆորմ.): Գանձարան:

ԹԵԶԻՍ [< тезис < հուն. thesis], գ. 1. Նույնն է՝ Թեզ: 2. Որևէ աշխատության (հիմնականում հոդվածի) ամփոփ ներկայացում:

ԹԵԻԶՄ [< теизм < հուն. theos աստված], գ. (կրոն.): Աստվածադավություն՝ Աստծուն բանականությամբ ու կամքով օժտված և աշխարհն ստեղծող ու կառավարող անձնավորություն համարող կրոնական ուսմունք:

ԹԵԻՍՏ [< теист < հուն.], գ. Թեիզմի կողմնակից, հետևորդ, աստվածադավ:

ԹԵՄԱ [< тема < հուն. thema այն, ինչ դրված է հիմքում], գ. 1. Որևէ նյութ՝ խնդիր, որ դառնում է ուսումնասիրության կամ ստեղծագործության առարկա: 2. Նյութ, որ տրվում է աշակերտներին շարադրություն գրելու՝ թարգմանելու՝ վերապատմելու նն համար: 3. Դասախոսության՝ զեկուցման նյութ, առարկա: 4. Որևէ դասընթացի ծրագրային նյութի որոշ ինքնուրույնություն և ամբողջություն կազմող հատված՝ բաժին: 5. (երժշտ.): Երաժշտական եղանակ, որ արվեստագետը մշակում և ընդլայնում է: 6. Զրույցի՝ խոսակցության առարկա:

ԹԵՄԱՏԻԿ [< тематический < հուն.], ած. 1. Թեմային հատուկ՝ վերաբերող, թեմայի: 2. Որևէ թեմայի առկայությամբ բնութագրվող, թեմա ունեցող: 3. Թեմատիկային հատուկ՝ վերաբերող: 4. Ըստ թեմաների կատարվող՝ վարվող:

ԹԵՄԱՏԻԿԱ [< тематика < հուն.], գ. Թեմաների ամբողջությունը, ուսումնասիրվող՝ մշակվող՝ քննարկվող թեմաները:

ԹԵՅ [< чай < անգլ. tea], գ. (բսբ.): Թեյազգիների ընտանիքին պատկանող մշտադալար թփաբույս, որի չորացած տերևները գործածում են ըմպելիք պատրաստելու համար և դրանցով պատրաստված ըմպելիքը:

ԹԵՅԼՈՐԻԶՄ [< тейлоризм < Ամերիկացի ինժեներ Ֆ. ՈՒ. Թեյլորի (F.W.Taylor 1856-1915թթ.) անունով], գ. (տնտսգ.): Աշխատանքի կազմակերպման և նորմավորման, արտադրական գործընթացների կառավարման, աշխատուժի ընտրման, տեղաբաշխման և վարձատրման համակարգ:

ԹԵՆԻՍ [< теннис < անգլ. lawn-tennis], գ. (սպորտ.): Սպորտային խաղ, որի ժամանակ թեճակով գնդակը ցանցի վրայով մի կողմից մյուսն են նետում:

ԹԵՆԻՍԻՍՏ [< теннисист < անգլ.], գ. Թենիս խաղացող:

ԹԵՈԳՈՆԻԱ [< теогония < հուն. theos աստված + goneia ծնունդ, ծագում], գ. (դից.): Աստվածների ծննդաբանության մասին հին հունական առասպելների միագումար:

ԹԵՈԴՈԼԻՏ [< теодолит < հուն. thaomai հետազոտում եմ + dolichos երկար], գ. (երկբշխ.): Երկրաբաշխական գործիք, որն օգտագործվում է տեղագրական, երկրաբաշխական, մարկշեյդերական աշխատանքներում ուղղությունները որոշելու և հորիզոնական ու ուղղաձիգ անկյունները չափելու համար:

ԹԵՈԼՈԳ [< теолог < հուն.], ած. գ. Աստվածաբան:

ԹԵՈԼՈԳԻԱ [< теология < հուն. theos աստված + logos գիտություն], գ. (գիտ.): Աստվածաբանություն՝ աստծու և կրոնական դոգմաների մասին եկեղեցական ուսմունքների ամբողջությունը:

ԹԵՈԿՐԱՏԻԱ [< теократия < հուն. theos աստված + kratos իշխանություն], գ. (քղք.): Իշխանության ձև, երբ քաղաքական իշխանությունը պատկանում է հոգևորականությանը, օրինակ՝ Վատիկանը:

ԹԵՈՍՈՖԻԱ [< теософия < հուն. theo տաստված + sophia իմաստություն], գ. Աստվածիմացություն՝ կրոնափիլիսոփայական ուսմունք «աստծուն անմիջականորեն հասու լինելու» մասին:

ԹԵՈՐԵՄ(Ա) [< теорема < հուն. theōrēma < theōreō դիտարկում եմ], գ. Դեդուկտիվ տեսության դրույթ, որի ճշմարտացիությունը հավաստվում է ապացուցման միջոցով:

ԹԵՈՐԻԱ [< теория < հուն. theōria], գ. Տեսություն՝ 1. (փիլ.): Փորձի՝ հասարակական պրակտիկայի տրամաբանական ընդհանրացումը, որ արտացոլում է բնության ու հասարակության զարգացման օրինաչափությունները: 2. (գիտ.): Որևէ գիտության կամ նրա որևէ բաժնի ընդհանրացած դրույթների ամբողջությունը: 3. Գիտելիքների և արվեստի որևէ բնագավառի տեսական կանոնների՝ հիմնական դրույթների ամբողջությունը: 4. Որևէ գիտության ընդհանուր՝ տրամաբանական-վերացական ուսմունքները և դրանց իմացությունը՝ ի հակադրություն դրանց գործնական կիրառության: 5. Հայացքների՝ սկզբունքների համակարգ, ուսմունք:

ԹԵՐԱՊԵՎՏ [< терапевт < հուն. therapeutēs հիվանդներին հոգ տանող], գ. (բժշկ.): Ներքին հիվանդությունների բժիշկ, բուժագետ:

ԹԵՐԱՊԵՎՏԻԿ [< терапевтический < հուն.], ած. Թերապևտին, թերապիային հատուկ՝ վերաբերող:

ԹԵՐԱՊԻԱ [< терапия < հուն. therapeia խնամք, բուժում, հոգատարություն], գ. (բժշկ.): Ներքին հիվանդությունների բուժում առանց վիրաբուժական միջամտության, ինչպես և բժշկության այն բաժինը, որն ուսումնասիրում է ներքին հիվանդությունների ախտորոշման ու բուժման եղանակներն ու միջոցները, բուժագիտություն:

ԹԵՐՄԱՆԵՍԹԵԶԻԱ [< терманестезия < հուն. therme ջերմ, ջերմություն + anais-thēsia անզգայություն], գ. (բժշկ.): Ջերմության՝ տաքության զգայության կորուստ:

ԹԵՐՄԵՐ [< термер < հուն. thermos տաք], գ. (պատմ.): Հասարակական բաղնիքների տիպ Հին Հունաստանում:

ԹԵՐՄԻԴՈՐ [< термидор < ֆր. thermidor < հուն. thermē + doron նվեր], գ. (պատմ.): 1. Ֆրանսիական հեղափոխության օրացույցի 11-րդ ամիսը (հուլիսի 19-20-ից մինչև օգոստոսի 17-18-ը): 2. 1794 թ. այդ ամսի 9-ին (հուլիսի 27-ին) կատարված հակահեղափոխական հեղաշրջումը: 3. *փխբ.* Հակահեղափոխություն:

ԹԵՐՄԻՆԱՏՈՐ [< терминатор < լատ. terminare սահմանափակել], գ. 1. (աստղգ.): Լույսի և ստվերի սահմանագիծը Լուսնի, մոլորակի, արբանյակի մակերևույթին: 2. (կինո): Հերոս նույնանուն ամերիկյան կինոնկարում:

ԹԵՐՄԻՍՏՈՐ [< термистор < հուն. thermē ջերմություն + անգլ. (res) istor ակտիվ դիմադրություն], գ. (ֆիզ.): Ջերմադիմադրություն՝ մեծ, սովորաբար բացասական, ջերմային գործակից ունեցող, ոչ գծային, երկբևեռ դիմադրություն:

ԹԵՐՄԻՏ [< термит < հուն. thermē տապ, ջերմություն], գ. (քիմ.): Փոշեձև այլումինի խառնուրդ որոշ մետաղների հետ:

ԹԵՐՄՈ... [< термо ... < հուն. thermos տաք < thermē ջերմություն, տապ] Բարդ բառերի բաղադրիչ հետևյալ իմաստներով՝ 1. Ջերմությանը վերաբերող: 2. Ջերմության օգնությամբ ստացվող: 3. Ջերմության օգտագործման վրա հիմնված:

ԹԵՐՄՈԴԻՆԱՄԻԿԱ [< термодинамика < հուն. thermos տաք + dynamikos ուժային], գ. (գիտ.): Ջերմուժականություն՝ ֆիզիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է ջերմային շարժումը, նրա ազդեցությունը մարմինների ֆիզիկական հատկությունների վրա:

ԹԵՐՄՈՍ [< термос < հուն. thermos տաք], գ. (տեխ.): Ջերմապահ՝ հատուկ կառուցվածքով անոթ, որն իր մեջ լցվող նյութերը (հեղուկ, կերակուր ևն) սառչելուց կամ տաքանալուց պահպանում է:

ԹԵՐՄՈՍՏԱՏ [< термостат < հուն. thermos տաք + statos կանգնած], գ. (տեխ.): Կայուն ջերմություն պահպանող ապարատ, կայունաջերմող:

ԹԵՐՄՈՍՖԵՐԱ [< термосфера < թերմո... + հուն. sphaira գունդ], գ. (երկրբ.): Ջերմոլորտ՝ մթնոլորտի վերին շերտերը (80 կմ-ից բարձր):

ԹԵՐՄՈՔԻՄԻԱ [< термохимия < թերմո... + քիմիա], գ. (քիմ.): Ջերմաքիմիա՝ ֆիզիկական քիմիայի և քիմիական թերմոդինամիկայի բաժին:

ԹԵՈՒՐԳԻԱ [< теургия < հուն. theurgia < theōs աստված + ergōn գործ], գ. (կրոն.): Որոշ կրոնական ուսմունքներում (անտիկ, միջնադարյան)՝ դիցահմայություն, մոգություն:

ԹԻՆԵՅՋԵՐ [< тинейджер < անգլ. teenager < -teen 13-19 թվականների վերջածանց + age տարիք], գ. (խսկց.): Պատանի՝ 13-19 տարեկան (տղա, աղջիկ):

ԹԻՈ... [< тио... < հուն. theion ծծումբ] Ծծումբ պարունակող միացությունների (թիոինդիգո, թիոալկոհոլներ ևն) անվանման սկզբնամասը:

ԹԻՈԱԼԿՈՀՈԼՆԵՐ, գ. (քիմ.): Օրգանական միացություններ, սպիրտների ծծմբային նմանակներն են՝ RSH ընդհանուր բանաձևով:

ԹԻՈԵԹԵՐՆԵՐ, գ. (քիմ.): Օրգանական միացություններ, եթերների ծծմբային նմանակներն են՝ R-S-R բանաձևով:

ԹԻՈԻՆԴԻԳՈ, գ. (քիմ.): Օրգանական սինթետիկ ներկանյութ:

ԹԻՈՄԻԶԱՆՅՈՒԹ, գ. (քիմ.): Օրգանական միացություն, միզանյութի ծծմբային նմանակը:

ԹԻՈՖԵՆ, գ. (քիմ.): Ծծումբ, օրգանական միացություն. բենզոլի հոտով անգույն հեղուկ է:

ԹՈՐԱԿՈՏՈՄԻԱ [< торакотомия < հուն. thōra (thōrakos) կրծքավանդակ + tomē հատում], գ. (բժշկ.): Կրծքավանդակի հատում (վիրաբուժական եղանակով)՝ այնտեղ գտնվող օրգաններին հասնելու համար:

ԹՈՔ ՇՈՈՒ [< ток-шоу < անգլ. talk show < talk զրույց + show հանդիսություն, ներկայացում], գ. (խսկց.): Հեռուստատեսային հարցազրույց որևէ ճանաչված գործչի հետ (քաղաքական, հասարակական ևն):

ԹՎԻՍՏ(Թ) [< твист < անգլ. twist, բառացի՝ պտտում, կորացում], գ. (արվ.): Ամերիկյան պարի տեսակ, որը լայն տարածում ուներ XX դ. 60-ական թթ.:

ԹՐԱՖԻԿ(Ք) [< трафик < անգլ. traffic շարժում], գ. (խսկց.): 1. (ինֆորմ.): Տեղեկատվության հոսքը կապի համակարգերում: 2. (առևտր.): Ապրանքափոխություն, ապրանքափոխական գործարքներ:

ԹՐԱՖԻՔԻՆԳ [< траффикинг < անգլ. trafficking], գ. (քղք.): Շահույթ ստանալու նպատակով մարդկանց (հատկապես կանանց և երեխաների) ապօրինի վաճառք:

ԹՐԻԼԵՐ [< триллер < անգլ. thriller < thrill դողալ], գ. (կինո.): Կլանող հետաքրքրական կինոնկար կամ գրական ստեղծագործություն:

ԹՐՈՄԲ [< тромб < հուն. thrombos մակարդուկ, մակարդախցան], գ. (կզմխս.): Արյան մակարդուկ. առաջանում է արյան անոթների լուսանցքում կամ սրտի խոռոչում:

ԹՐՈՄԲԻՆ [< тромбин < հուն.], գ. (կենսբ.): Հիդրոլազների խմբի ֆերմենտ: Կարևոր գործոն է մարդու և կենդանիների արյան մակարդման գործընթացում:

ԹՐՈՄԲՈՑԻՏՆԵՐ [< тромбоциты < հուն. thrombos + kytos բջիջ], գ. (կենսբ.): Արյան թիթեղիկներ՝ մարդու և ողնաշարավոր կենդանիների արյան ձևավոր տարրեր:

ԹՐՈՄԲՈՖԼԵԲԻՏ [< тромбофлебит < հուն. thrombos + phlebos երակ], գ. (բժշկ.): Երակի պատի բորբոքում՝ լուսանցքը փակող թրոմբի առաջացմամբ:

ԹՈՒԹՈՒՆ [< тютюн < թուրք. tütün ծխախոտ], գ. (խսկց.): Ցածրորակ ծխախոտ, քթախոտ:

ԹՈՒՆԵԼ [< туннель, тоннель < անգլ. tunnel խողովակ], գ. Գետնի տակ կամ լեռների մեջ փորված անցք՝ հաղորդակցության, ջրի անցման ևն համար, ստորգետնյա անցուղի՝ ճանապարհ:

ԹՈՒՆԵԼԱԽՈՐՇ, գ. Խորշ՝ անցք, որտեղից սկսում են փորել թունելի մասերը, թունելի տարբեր մասերի բացվածքներից յուրաքանչյուրը:

Թ(Յ)ՈՒՐՔԻԶՄ [< тюркизм < թուրք. türk + ism ածանց], գ. (լեզվբ.): Թ(յ)ուրքիզմ՝ թուրքական լեզուներից փոխառված բառ կամ արտահայտություն:

Թ(Յ)ՈՒՐՔՈԼՈԳԻԱ [< тюркология < թուրք.], գ. (գիտ.): Թ(յ)ուրքագիտություն՝ գիտությունների խումբ, որն ուսումնասիրում է թուրքական լեզուները, գրականությունը և պատմությունը:

Ժ

ԺԱԲՈ [< жабо < ֆր. jabot], գ. (հնց.): Ժանեկազարդ՝ ժանյակի զարդ տղամարդու շապիկի օձիքին և կրծքին, որը տարածված էր XVIII դարում, այժմ ժանյակի զարդ կանանց վերնաշապիկի կամ զգեստի վրա:

ԺԱԴԵԻՏ [< жадеит < ֆր. jadeite < jade խիթաքար], գ. (հնք.): Միներալ՝ սպիտակ, կանաչավուն: Հանդիպում է ցածր ջերմաստիճանային մետամորֆային ապարներում: Կիսաթանկարժեք քար է:

ԺԱԼՅՈՒԶՆԵՐ [< жалюзи < ֆր. jalousie], գ. 1. Վարագույրի մի տեսակ՝ (փայտե կամ այլ նյութից) շերտիկներից պատրաստված, շերտավարագույր: 2. (տեխ.): Մեքենայի ռադիատորի առջևում գտնվող սարք, որի շերտերի բացելուց և փակելուց կարգավորվում է օդի հոսքը դեպի ռադիատոր:

ԺԱԿԵՏ [< жакет < անգլ. jacket], գ. (խսկց.): Կանացի կարճ վերնազգեստ:

ԺԱԿԵՐԻԱ [< жакерия < ֆր. Jacquerie < Jacques Bonhomme հումորով տրված անուն ֆրանսիացի մեծահարուստների կողմից գյուղացիներին], գ. (պատմ.): Ֆրանսիայում գյուղացիական ապստամբություն 1358 թ., որն ուղղված էր ֆեոդալների դեմ. այն մեծ տարածում ստացավ, բայց դաժանորեն ճնշվեց: Ժակերիա բառը ֆրանսիացիների համար խորհրդանշվում էր որպես գյուղացիական ապստամբություններ:

ԺԱԿՈ [< жако < ֆր. jacquot], գ. (կենդբ.): Աֆրիկյան մոխրագույն թութակ:

ԺԱՆԳԼՅՈՐ, ԺՈՆԳԼՅՈՐ [< жонглёр < ֆր. jongleur < լատ. joculator կատակաբան], գ. 1. (պատմ.): Միջին դարերում Ֆրանսիայում, Իսպանիայում ևն թափառական երաժիշտ, երգիչ, երբեմն նաև՝ բանաստեղծ: 2. (հնց.): Ձեռնածու՝ կրկեսային ևն արտիստ, որը ճարպկորեն վեր է նետում և բռնում տարբեր իրեր, կատարում անհավատալի թվացող այլ վարժություններ:

ԺԱՆԴԱՐՄ [< жандарм < ֆր. gendarm], գ. Ոստիկան:

ԺԱՆԴԱՐՄԵՐԻԱ [< жандармерия < ֆր. gendarmerie], գ. Ոստիկանություն՝ քաղաքական պահպանության ու հետախուզության ոստիկանական հատուկ զորքեր որոշ երկրներում:

ԺԱՆՐ [< жанр < ֆր. genre տեսակ], գ. (արվ. գրկն.): 1. Արվեստի և գրականության երկի տեսակ, որ բնութագրվում է բովանդակային և ոճական որոշակի յուրահատկություններով, տեսակ, սեռ: 2. Կենցաղային գեղանկարչություն: 3. Արվեստագետի՝ դերասանի ևն ստեղծագործության ոճին համապատասխանող ստեղծագործական բնագավառ:

ԺԱՍՄԻՆ [< жасмин < ֆր. jasmin], գ. (բսբ.): Հասմիկ (պարտեզային թուփ՝ սպիտակ ծաղիկներով):

ԺԱՐԳՈՆ [< жаргон < ֆր. jargon], գ. (լեզվբ.): Հասարակության որևէ խմբի անդամների խոսվածքը, որը պարունակում է մեծ թվով յուրահատկություններ. չունի իր սեփական քերականական կառուցվածքը և բառապաշարը. հիմնվում է ընդհանուր գրական լեզվի վրա:

ԺԱՐԳՈՆԻԶՄ [< жаргонизм < ֆր. jargon + ism ածանց], գ. (լեզվբ.): Ժարգոնային բառ կամ արտահայտություն:

ԺԵԼԱՏԻՆ [< желатин < ֆր. gélatine < լատ. gelatus սառչող, պնդացող], գ. (խոհր.): Դոնդող՝ կենդանական ծագումով սպիտակուցային նյութ, որի լուծույթը սառելուց վերածվում է կակուղ խյուսի:

ԺԵԼԵ [< желе < ֆր. gelée], գ. (խսկց.): 1. (խոհր.): Դոնդողակ՝ դոնդողից ու զանազան պտղահյութերից պատրաստվող մածուցիկ թանձր ու կակուղ քաղցրահամ ուտելիք: 2. Ոսկրից ևն կենդանական նյութերից պատրաստված սոսնձանյութ: 3. (խոհր.): Ձկան կամ մսի դոնդող:

ԺԵՆՇԵՆ [< женьшень < չին. renshēn], գ. (բսբ.): 1. Հեռավոր արևելյան երկրներում աճող խոտաբույս, որի արմատը օգտագործվում է բժշկության մեջ, լոշտակ: 2. Այդ բույսի արմատից պատրաստված դեղաթուրմ:

ԺԵՈԴ [< жеода < ֆր. géode < հուն. geōdēs հողային, ցամաքային], գ. (հնք.): Կլորավուն կամ էլիպսաձև միներալային սեկրեցիաներ, որոնց միջուկը սովորաբար դատարկ է, իսկ պատերի վրա աճում են բյուրեղիկների դրուզներ:

ԺԵՍՏ [< жест < ֆր. geste < լատ. gestus], գ. (խսկց.): 1. Մարմնի՝ առավելապես ձեռքի զանազան շարժումներ խոսելու ժամանակ՝ խոսքի արտահայտչականությունն ուժեղացնելու, խոսքը տպավորիչ դարձնելու համար կամ ի նշան որևէ բանի, շարժանք: 2. Առհասարակ՝ մարմնի շարժումներ, շարժմունք: 3. *փխբ.* Որևէ նպատակով կամ ի նշան որևէ բանի կատարվող արարք, վարքագիծ, վարմունք, քայլ:

ԺԵՍՏԻԿՈՒԼՅԱՑԻԱ [< жестикуляция < լատ. gesticulare], գ. (խսկց.): 1. Շարժանքով խոսելը: 2. Ձեռքերի (ինչպես և մարմնի) զանազան շարժումներ՝ որևէ բան արտահայտելու համար, շարժասություն:

ԺԵՏՈՆ [< жетон < ֆր. jeton], գ. (խսկց.): 1. Մետաղյա կրծքանշան: 2. Մետաղանիշ: 3. Մետաղյա (կամ այլ նյութից) խաղանիշ:

ԺԵՐՄԻՆԱԼ [< жерминаль < ֆր. germinal < լատ. germen ընձյուղ, պտուղ], գ. (պատմ.): Ֆրանսիական հանրապետության օրացույցի յոթերորդ ամիսը՝ 21-22 մարտից մինչև 19-20 ապրիլ: Այս օրացույցը գործել է 1793-1805 թթ.:

ԺԻԳԱ [< жига < անգլ. jig], գ. (արվ.): Անգլիական ժողովրդական դինամիկ պարի տեսակ:

ԺԻԼԵՏ [< жилет < ֆր. gilet], գ. (խսկց.): Բաճկոնակ՝ տղամարդու կարճ հագուստ՝ առանց օձիքի և թևքերի, որ հագնում են պիջակի տակից:

ԺԻԿԼՅՈՐ [< жиклёр < ֆր. gicleur], գ. (տեխ.): Ցիլինդրային ձևի դետալ ճշգրիտ կտրվածքով, որը կարգավորում (չափավորում) է վառելանյութի (բենզին, գազ ևն) ծախսը:

ԺԻՐԱՆԴՈԼ [< жирандоль < ֆր. giran dole < իտլ. Girandole < girand կրակի՝ լույսի խուրձ՝ փունջ], գ. (հնց.): Քանդակավոր բազմաճյուղ մոմակալ, շքեղ աշտանակ:

ԺԻՐԱՆՏ [< жирант < իտլ. girante], գ. (ֆին.): Փոխանցորդ՝ մուրհակի դարձերեսին փոխանցման մակագրություն կատարող անձ:

ԺԻՐԱՏ [< жират < իտլ. girare], գ. (ֆին.): Փոխանցագիր ընդունող: Անձ, որին փոխանցվում է մուրհակը:

ԺԻՐՈ [< жиро < իտլ. giro], գ. (ֆին.): Փոխադրագիր բանկատոմսի՝ մուրհակի ևն փոխանցման՝ ուրիշին հանձնելու գրություն՝ մակագրություն և ստորագրություն:

ԺԻՐՈՆԴԻՍՏՆԵՐ [< жирондисты < անվանումը Ֆրանսիայի Ժիրոնդա (Gironde) դեպարտամենտից], գ. (պատմ.): Քաղաքական խմբավորում (փաստորեն կուսակցություն) ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ: Ներկայացնում էին առևտրաարդյունաբերական և հողատեր, գլխավորապես գավառական բուրժուազիան: 1792 թ. անցան իշխանության գլուխ՝ աշխատելով արգելակել հեղափոխության հետագա զարգացումը: 1793 թ. տապալվեց նրանց իշխանությունը՝ դառնալով հակահեղափոխության ամենամարտնչող ուժը: 2. *փխբ.* Հակահեղափոխական կուսակցություն:

ԺՅՈՒՐԻ [< жюри < ֆր. jury < jurer երդվել], գ. 1. Մասնագետների խումբ՝ հանձնաժողով, որը որոշում է մրցանակների կամ պարգևների շնորհումը մրցույթներում, ցուցահանդեսներում ևն, մրցատյան: 2. Երդվյալ դատավոր (Անգլիայում և Ամերիկայում):

ԺՈԿԵՅ [< жокей < անգլ. jockey], գ. (սպորտ.): Ձիարշավի հեծնորդ:

ԺՈՒՌՆԱԼ [< журнал < ֆր. journal օրագիր < jour օր], գ. (խսկց.): 1. Հանդես՝ ամսագիր, երկամսօրյակ, եռամսօրյակ ևն: 2. Օրագիր:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ [< журналист < ֆր.], գ. Լրագրող՝ լրագրությամբ զբաղվող պրոֆեսիոնալ գրական աշխատող:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ [< журналистика < ֆր.], գ. Զանգվածային հաղորդակցության միջոցներով (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, կինո ևն) հրատապ տեղեկատվություն հավաքող, մշակող և պարբերաբար տարածող հասարակական գործունեության տեսակ, լրագրություն:

Ի

ԻԱԼԱ [< ИАЛА < ֆր. IALA հապավում], (լեզվբ.): Արհեստական լեզու, որ հորինվել է 1947 թ. Փարիզում Սորբոնի համալսարանի դասախոս Մարտինեի կողմից:

ԻԲԼԻՍ [< иблис < արաբ.], գ. (կրոն.): Սատանայի անվանումը մահմեդականների կրոնում:

ԻԲԻՍ [< ибис < հուն. ibis < եգիպ.], գ. (կենդբ.): Քաջահավ՝ եգիպտահավերի ընտանիքին պատկանող բարձրասրունք և երկարակտուց թռչուն:

ԻԲՆ [< ибн < արաբ. ibn որդի], գ. Որդի՝ արաբախոս լեզուներում. դրվում է հայրանունից առաջ. օրինակ՝ Ահմեդ իբն Աբդուլլա՝ Ահմեդ որդի Աբդուլլայի:

ԻԳԼՈՒ [< иглу < էսկիմոսերեն igdlu], գ. (հզվդ.): Կանադական էսկիմոսների գմբեթաձև տնակ՝ կառուցված սառցե մեծ աղյուսներով:

ԻԳՐԵԿ [< игрек < ֆր. i grec հունական «ի»], գ. 1. Լատինական այբուբենի նախավերջին տառը (y): 2. (մաթ.): Այդ տառով նշանակվող անհայտ մեծություն (x, z տառերի շարքում): 3. *փխբ.* Անհայտ կամ դիտավորյալ կերպով ծածուկ պահվող անձի պայմանական նշան և անվանում:

ԻԳՈՒԱՆՆԵՐ [< игуана < իսպ. iguana], գ. (կենդբ.): Մողեսների կարգի սողունների ընտանիք.տարածված են արևմտյան կիսագնդում.ապրում են անտառներում՝ ծառերի վրա, անապատներում, լեռներում, որոշ մասը կիսաջրային կյանք է վարում:

ԻԳՈՒՄԵՆ [< игумен < հուն. ēgumenos առաջնորդող], գ. (կրոն.): Ուղղափառ եկեղեցու վանահայր:

ԻԴԱՆԵՐ [< иды < լատ. idus], գ. (պատմ.): Հին հռոմեական օրացույցում՝ մարտի, մայիսի, հուլիսի, հոկտեմբերի 15-ը, մյուս ամիսների՝ 13-ը:

ԻԴԵԱ [< идея < հուն. idea հասկացություն, գաղափար], գ. Գաղափար՝ 1. (փիլ.): Հասկացություն՝ պատկերացում, որ մարդու գիտակցության մեջ արտացոլում է իրականությունը և արտահայտում է նրա վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ: 2. Որևէ բանի հիմնական միտք՝ գաղափար: 3. Աշխարհայացքի հիմնական՝ գլխավոր սկզբունք: 4. Առհասարակ՝ գաղափար:

ԻԴԵԱԼ [< идеал < ֆր. idéal < հուն. idea գաղափար], գ. 1. Բարձրագույն նպատակ, որին ձգտում են մարդիկ և որով ղեկավարվում են իրենց գործունեության մեջ: 2. Տիպար՝ որևէ բանի կատարյալ օրինակ: 3. Մեկի համար որոշ հատկությունների՝ արժանիքների մարմնացումը հանդիսացող անձ:

ԻԴԵԱԼԻԶՄ [< идеализм < ֆր. idéalisme < հուն.], գ. 1. (փիլ.): Փիլիսոփայական ուղղություն, որը ամեն ինչի գոյության հիմքն է համարում ոգին՝ գիտակցությունը՝ իդեան: 2. Բարոյական բարձր իդեալների հետևելը (իր գործունեության մեջ), ի-

դեալներով առաջնորդվելը, գաղափարականություն: 3. Իրականությունը իդեալականացնելը:

ԻԴԵԱԼԻՍՏ [< идеалист < ֆր. idéaliste < հուն.], գ. ած. 1. Իդեալիստական փիլիսոփայության հետևորդ: 2. Որևէ գաղափարի նվիրված և անշահասեր կերպով նրան ծառայող մարդ: 3. Իրականությունը իդեալականացնող՝ միայն լավ կողմերով տեսնող ու ներկայացնող մարդ, երազող, ոչ գործնական մարդ:

ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑԻԱ [< идентификация < միջին լատ. identificare], գ. Նույնականացում, նույնացում:

ԻԴԵՈԳՐԱՄ(Ա) [< идеограмма < հուն. idea + gramma], գ. Գաղափարագիր՝ 1. գ. (լեզվբ.): Պայմանական գրային նշան, որով նշանակվում է ամբողջական հասկացություն՝ միտք: 2. ած. Այդպիսի նշաններով գրված:

ԻԴԵՈԳՐԱՖԻԱ [< идеография < հուն. idea + graphō գրում եմ], գ. (լեզվբ.): Գաղափարագրություն՝ 1. Գաղափարագրերի համակարգը: 2. Գաղափարագրերով գրելը:

ԻԴԵՈԼՈԳ [< идеолог < հուն.], գ. Գաղափարախոս, գաղափարաբան:

ԻԴԵՈԼՈԳԻԱ [< идеология < հուն. idea + logos ուսմունք], գ. (հնց.): Գաղափարախոսություն՝ հասարակական գիտակցության տարբեր ձևերի՝ փիլիսոփայության, քաղաքականության, իրավունքի, արվեստի ևն մեջ արտահայտվող հասկացությունների՝ պատկերացումների՝ սկզբունքների ամբողջությունը՝ որպես գաղափարների համակարգ:

ԻԴԵՖԻՔՍ [< идефикс < ֆր. idee fixe], գ. 1. Արմատավորված՝ փայփայված միտք՝ գաղափար: 2. Սևեռուն միտք՝ գաղափար:

ԻԴԻԼԻԱ [< идиллия < հուն. eidyllion փոքր բանաստեղծություն], գ. (գրկն.): 1. Հովվերգություն՝ բանաստեղծական ժանր, որին բնորոշ է հովվական և ընդհանրապես գյուղական խաղաղ կյանքի իդեալականացումը՝ նրա ներքին հակասությունների սքողումով: 2. Անդորր՝ ոչնչով չխռովվող երջանիկ կյանք՝ գոյություն:

ԻԴԻՈԱԴԱՊՏԱՑԻԱ [< идиоадаптация < հուն. idios յուրահատուկ + աղապտացիա], գ. (կենսբ.): Օրգանիզմների փոփոխությունը զարգացման գործընթացում՝ կախված իրենց գոյության պայմաններից:

ԻԴԻՈՄ [< идиом < ֆր. idiome լեզու, բարբառ < հուն. idiōma յուրահատուկ արտահայտություն], գ. (լեզվբ.): Հատկաբանություն՝ տվյալ լեզվին հատուկ դարձված, որի իմաստը չի նույնանում իր բաղադրիչների՝ անկախորեն ունեցած իմաստների հետ, առանձնահատուկ արտահայտություն:

ԻԴԻՈՄԱՏԻԿԱ [< идиоматика < ֆր.], գ. (լեզվբ.): 1. Ուսմունք իդիոմների մասին: 2. Տվյալ լեզվի իդիոմների ամբողջությունը:

ԻԴԻՈՄՈՐՖԻԶՄ [< идиоморфизм < հուն. idios սեփական, յուրահատուկ + morphē ձև], գ. (հնք.): Միներալների ունակությունը բյուրեղային նյութում առաջացնելու իրենց յուրահատուկ բյուրեղագիտական ձևը՝ կախված նյութի բյուրեղացման հատկությունից:

ԻԴԻՇ [< идиш < իդիշ yidisch < վերին գերմ. jüdisch հրեական, գերմաներեն < Jüde հրեա], գ. (լեզվբ.): Ամերիկայում, Հարավային Աֆրիկայում և Իսրայելում ևն ապրող հրեաների մի մասի լեզուն. պատկանում է գերմանական լեզուների խմբին: Կազմավորվել է XII-XIII դդ. վերին գերմ. բարբառների հիմքի վրա սեմական, մասամբ սլավոնական տարրերով:

ԻԴԻՈՍԻՆԿՐԱԶԻԱ [< идиосинкразия < հուն. idios + synkrasis խախտում], գ. (կենսբ.): Օրգանիզմի հիվանդագին ռեակցիա այնպիսի գրգռիչների հանդեպ,

որոնք մարդկանց մեծ մասի մոտ ախտաբանական երևույթներ չեն առաջացնում:

ԻԴԻՈՏ [< идиот < հուն. idiōtes], ած. գ. (խսկց.): 1. (ախտ.): Իդիոտիզմով տառապող մարդ, ապուշ: 2. (հյիյնք.): Ապուշ, հիմար, տխմար:

ԻԴԻՈՏԻԶՄ [< идиотизм < հուն. idiōteia], գ. 1. (բժշկ.): Թուլամտություն՝ հոգեկան տհասություն, ապուշություն: 2. Հիմարություն, տխմարություն:

ԻԴՈ [< идо < էսպերանտո ido ժառանգ], գ. (լեզվբ.): Էսպերանտոյի մասնակի նմանությամբ ստեղծված արհեստական լեզու:

ԻԴՈԼ [< идол < գերմ. Idol < լատ. idolum < հուն. eidolon], գ. (հնց.): 1. Կուռք (հեթանոսների մոտ): 2. *փխբ.* Կուռք, պաշտամունքի՝ երկրպագության առարկան (դերասան, երգիչ ևն):

ԻԵՆ [< иен < ճապ.], գ. (ֆին.): Ճապոնիայի դրամական միավորը:

ԻԶԱԲԵԼԱ [< изабелла < իսպ. Isabel հատուկ անունից], գ. (բսբ.): Սև պտուղներով խաղողի տեսակ և նաև դրանցից ստացված գինին:

ԻԶԱՖԵՏ [< изафет < պարսկ., արաբ.], գ. (լեզվբ.): Որոշչի և որոշյալի կապակցության յուրահատուկ եղանակ արաբերենում, պարսկերենում և այլ լեզուներում:

ԻԶԻԴԱ [< Изида < հուն.], գ. (դից.): Պտղաբերության, մայրության, հետագայում՝ նաև ծովագնացության աստվածուհին Հին Եգիպտոսում:

ԻԶՈ... [< изо... < հուն. isos հավասար, միատեսակ, նման] Բարդ բառերի սկզբնամաս, որ արտահայտում է հավասարություն, նմանություն՝ ըստ ձևի կամ նշանակության:

ԻԶՈԲԱՐ [< изобары < իզո...+ հուն. baros ծանրություն, կշիռ], գ. (ֆիզ.): Միջուկներ՝ միևնույն զանգվածի թիվ (+), բայց տարբեր կարգաթվեր (Z) ունեցող միջուկներ:

ԻԶՈԳԼՈՍ [< изоглос < իզո...+ հուն. glōssa լեզու], գ. (լեզվբ.): Նույնաբանություն, զուգաբանություն՝ գիծ բարբառագիտական քարտեզի վրա, որ ցույց է տալիս առանձին լեզվական երևույթի տարածման սահմանը:

ԻԶՈԳՐԱՖ [< изограф < իզո...+ հուն. graphō գրում եմ], գ. (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն գծերը, որոնք ցույց են տալիս բառապաշարային, ձևաբանական, հնչյունական, հնչական, շարահյուսական և այլ հատկանիշների զուգահեռություններն ու ընդհանրությունները: 2. (պատմ.): Գրիչ, (գեղա)նկարիչ (սրբապատկերի):

ԻԶՈԴՐՈՄ [< изодром < իզո... + հուն. dromos վազք], գ. (տեխ.): Կարգավորիչներում ճկուն հետադարձ կապ ապահովող սարք:

ԻԶՈԷՆԹԱԼՊԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑ [< изоэнтальпический (< իզո...+ հուն. enthalpō տաքացնում եմ) процесс] - (ֆիզ.): Թերմոդինամիկական գործընթաց, որի ընթացքում համակարգի էնթալպիան անփոփոխ է մնում. այդպիսի օրինակ է Ջոուլ-Թոմսոնի էֆեկտը:

ԻԶՈԷՆՏՐՈՊԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑ [< изоэнтропический (< իզո...+ en ներս + tropē շրջադարձ) процесс] - (ֆիզ.): Թերմոդինամիկական գործընթաց, որի

ընթացքում համակարգի էնտրոպիան անփոփոխ է մնում. այդպիսի օրինակ է շրջելի ադիաբատ գործընթացը:

ԻԶՈԹԵՐՄ ԳՈՐԾԸՆԹԱՑ [< изотермический (< իզո…+ հուն. thermē ջերմություն) процесс] - 1. (ֆիզ.): Հաստատուն ջերմաստիճանի պայմաններում ընթացող թերմոդինամիկական գործընթաց: 2. (աշխգր.): Համանման միջին ջերմությամբ գոտիները միացնող գիծ քարտեզի վրա:

ԻԶՈԼԵՅՑԻՆ [< изолейцин < իզո…+ հուն. leukos սպիտակ], գ. (քիմ.): Մարդկանց, կենդանիների ևն համար անփոխարինելի ամինաթթու, որն աննշան քանակությամբ պարունակվում է սպիտակուցներում:

ԻԶՈԼԵՔՍԻԿ ԳԾԵՐ [< изолексические (< իզո...+ հուն. lexis բառ) линии] - (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն իզոգրաֆները, որոնք միացնում են լեզվի բառապաշարային նույն հատկանիշներն ունեցող բնակչության բնակության վայրերը:

ԻԶՈԼՅԱՏՈՐ [< изолятор < ֆր. isolateur], գ. (հգ.): 1. (տեխ.): Մեկուսիչ՝ մեկուսացնող հատկություն ունեցող նյութ: 2. Մեկուսարան՝ մեկուսացնելու տեղ, մեկուսաբանտ:

ԻԶՈԼՅԱՑԻԱ [< изоляция < ֆր. isolation], գ. (հնց.): Մեկուսացում՝ մեկուսանալը, մեկուսացնելը, մեկուսացվելը:

ԻԶՈԼՅԱՑԻՈՆԻԶՄ [< изоляционизм < ֆր. անգլ. isolation մեկուսացում], գ. (քղք.): Պետական ինքնամփոփման՝ մեկուսացման քաղաքականություն, քաղաքական հոսանք ԱՄՆ-ում, որ սկիզբ է առել XIX դարում և զարգացել է եվրոպական գործերին չմիջամտելու՝ չխառնվելու նշանաբանով:

ԻԶՈԽՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑ [< изохорный (< իզո…+ հուն. chōra տարածություն) процесс]– (ֆիզ.): Թերմոդինամիկական գործընթաց, որն ընթանում է առանց համակարգի ծավալի փոփոխության:

ԻԶՈԽՐՈՆԻԶՄ [< изохронизм < իզո…+ հուն. chronos ժամանակ], գ. (լեզվբ.): Համատևություն՝ հավասարատև վանկեր, դրանց բաժանումը ռիթմիկ մասերի, որոնք հավասար են արտասանության համար անհրաժեշտ ժամանակով:

ԻԶՈԿԼԻՆՆԵՐ [< изоклины < իզո… + հուն. klinō խոնարհում եմ], գ. Ծալք՝ ծալ, որի թևերը և առանցքի մակերևույթը զուգահեռ են միմյանց և անկում են նույն ուղղությամբ՝ գրեթե նույն անկյան տակ:

ԻԶՈՄԵՐԻԱ [< изомерия < իզո…+ հուն. meros բաժին, մաս], գ. (քիմ.): Իզոմերների գոյությունը՝ որպես քիմիական երևույթ:

ԻԶՈՄԵՐՆԵՐ [< изомеры < հուն.], գ. (քիմ.): Միևնույն տարրական (քիմիական) բաղադրությունն ունեցող, բայց մոլեկուլների մեջ ատոմների կամ դրանց խմբերի տարբեր դասավորությամբ միմյանցից քիմիական և ֆիզիկական հատկություններով տարբերվող նյութեր:

ԻԶՈՄՈՐՖ [< изоморфный < հուն.], ած. Նմանաձև, ձևով իրար նման:

ԻԶՈՄՈՐՖԻԶՄ [< изоморфизм < իզո… + հուն. morphē ձև], գ. (քիմ.): 1. Քիմիական բաղադրությամբ և բյուրեղային ձևով իրար նման նյութերի՝ խառը տիպի բյուրեղներ կազմելու հատկությունը: 2. Որևէ կարգի տարրերի ամբողջության՝ կառուցվածքի միանմանությունը՝ բացարձակապես անկախ այդ տարրերի բնույթից:

ԻԶՈՄՈՐՖԻԿ ԳԾԵՐ [< изоморфные (< իզո... + հուն. morphē ձև) линии] - (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն իզոգրաֆները, որոնք միացնում են լեզվի քերականական նույն ձևերն ունեցող բնակչության բնակության վայրերը:

ԻԶՈՊՐԵՆ [< изопрен < հուն.], գ. (քիմ.): Ալիֆատիվ շարքի չհագեցած ածխաջրածին:

ԻԶՈՊՐԵՆԱՅԻՆ ԿԱՈՒՉՈՒԿՆԵՐ - Սինթետիկ կաուչուկներ, ստացվում են իզոպրենի պոլիմերացումից:

ԻԶՈՍԻՆՏԱԳՄԱՏԻԿ ԳԾԵՐ [< изосинтагматические (< իզո...+ հուն. syntagma ինչ-որ միացած բան) линии] - (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն իզոգրաֆները, որոնք միացնում են լեզվի շարահյուսական նույն առանձնահատկություններն ունեցող բնակչության բնակության վայրերը:

ԻԶՈՍՏԱԶԻԱ [< изостазия < իզո…+ հուն. stasis վիճակ, հավասարակշռություն], գ. (երկրբ.): Երկրակեղևի առավել կայուն հավասարակշռության վիճակը: Ժամանակակից տվյալներով երկրակեղևը գտնվում է նվազագույն ազատ էներգիայով օժտված իզոստատիկ վիճակում, որի դեպքում լիթոսֆերայի խոշոր բեկորները և ասթենոսֆերայի կիսահեղուկ զանգվածները միմյանց հետ փոխազդեցության մեջ են մտնում Արքիմեդի օրենքի համաձայն:

ԻԶՈՏԻՊ [< изотип < իզո...+ հուն. typē դրոշմ, օրինակ], գ. (քրտզգր.): Ոչ հնչյունական պայմանական նշանների ընդհանուր համակարգ, որը օգտագործվում է քարտեզագրության մեջ՝ գետերը, հաղորդակցության ճանապարհները, բնակավայրերը նն նշելու համար:

ԻԶՈՏՈՆԻԿ ԳԾԵՐ [< изотонические (< իզո...+ հուն. tonos լարում, շեշտ) линии] - (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն իզոգրաֆները, որոնք միացնում են խոսքի տոնային նույն առանձնահատկություններն ունեցող բնակչության բնակության վայրերը:

ԻԶՈՏՈՆՆԵՐ [< изотоны < իզո…+ հուն. tonos լարում], գ. (ֆիզ.): Միևնույն թվով նեյտրոններ ունեցող միջուկներով ատոմներ:

ԻԶՈՏՈՊ(ՆԵՐ) [< изотоп(ы) < իզո…+ հուն. topos տեղ], գ. (քիմ.): Միևնույն քիմիական տարրի ատոմների տարատեսակները, որոնք միմյանցից տարբերվում են իրենց ատոմային կշռով և ռադիոակտիվությամբ:

ԻԶՈՏՐՈՊԻԱ [< изотропия < իզո…+ հուն. tropos ուղղություն], գ. (ֆիզ.): Իզոտրոպություն՝ մարմնի կամ տարածության ֆիզիկական հատկությունների միատեսակությունը բոլոր ուղղություններով:

ԻԶՈՖՈՆԻԿ ԳԾԵՐ [< изофонические (< իզո...+ հուն. phonē ձայն) линии] - (լեզվբ.): Լեզվաբանական քարտեզի այն իզոգրաֆները, որոնք միացնում են նույն հնչյութներն ունեցող բնակչության բնակության վայրերը:

ԻԼՅՈՒԶԻԱ [< иллюзия < լատ. illusio սխալ], գ. 1. Պատրանք՝ արտաքնապես ճիշտ թվացող ներշնչում, զգայարանների սխալանք, մտախաբկանք: 2. (*փխբ.*) Անիրական երազանք՝ տենչ:

ԻԼՅՈՒԶԻՈՆԻԶՄ [< иллюзионизм < ֆր. illusionnisme < լատ.], գ. 1. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիստական տեսություն, որի համաձայն նյութական աշխարհը երևութական է՝ պատրանք: 2. Կրկեսային արվեստի մի տեսակը, որը հիմնված է արտիստի կողմից հատուկ գործիքների օգնությամբ հանդիսականների մոտ տեսողական պատրանքներ առաջացնելու վրա:

ԻԼՅՈՒԶԻՈՆԻՍՏ [< иллюзонист < ֆր.], ած. 1. Իլյուզիոնիզմի հետևորդ: 2. Իլյուզիոնիզմին (2) տիրապետող կրկեսային արտիստ:

ԻԼՅՈՒՄԻՆԱՏՈՐ [< иллюминатор < լատ. illuminator լուսավորող], գ. (տեխ.): 1. Լուսանցույց՝ կլոր լուսամուտ՝ հաստ ապակիներով նավի, օդանավի ևն վրա: 2. Հրավառիչ՝ հրավառություն կատարող:

ԻԼՅՈՒՄԻՆԱՑԻԱ [< иллюминация < լատ. illuminatio լուսավորություն], գ. Հրավառություն՝ որոշակի առիթների ժամանակ պայծառ լուսավորություն. օգտագործվում են գունավոր լույսեր և լուսային բազմազան էֆեկտներ:

ԻԼՅՈՒՍՏՐԱՏԻՎ [< иллюстративный < լատ.], ած. 1. Նկարազարդ, պատկերազարդ: 2. Ցուցադրական:

ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ [< иллюстрация < լատ. illustratio], գ. 1. Պատկերազարդում՝ տպագրվող շարադրանքը (գիրք, հոդված ևն)՝ բովանդակության լուսաբանող կամ ցուցադրող նկարներով օժտելը. նկարազարդում: 2. Այդպիսի պատկեր գրքի՝ հոդվածի ևն մեջ: 3. Ցայտուն օրինակով բացատրելը, որևէ բանի ցուցադրությամբ լուսաբանելը: 4. *փխբ.* Որևէ բանի ցայտուն օրինակ:

ԻԽԹԻՈ... [< ихтио... < հուն. ichthys ձուկ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս դրանց իմաստի կապը ձկների հետ:

ԻԽԹԻՈԶԱՎՐ [< ихтиозавр < հուն. ichthys ձուկ + sauros մողես], գ. (հնէաբ.): Ձկնամողես՝ բրածո ծովային հսկայական սողուն, մեզոզոյի մահացած սողունների ենթադաս: Ամենից ավելի տարածվել են յուրայի ժամանակաշրջանում:

ԻԽԹԻՈԼ [< ихтиол < հուն. ichthys + լատ. oleum յուղ], գ. Մուգ շագանակագույն հականեխիչ նյութ, որ ստացվում է ձկների մնացորդներ պարունակող հերձաքարերի ձյութից, ձկնեղ:

ԻԽԹԻՈԼՈԳԻԱ [< ихтиология < գերմ. Ichthyologie < հուն.], գ. (գիտ.): Ձկնաբանություն:

ԻԽՆՈԼՈԳԻԱ [< ихнология < հուն. ichnos հետք + logōs գիտություն], գ. (գիտ.): Հնէաբանության բաժին, որն ուսումնասիրում է հնագույն բրածո կենդանիների հետքերը և տեղափոխությունները, հետքաբանություն, հետքագիտություն:

ԻԿԱՐ [< Икар < հուն. Ikaros], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ Դեդալի որդին, որը փախավ գերությունից՝ թռչելով հոր հետ Դեդալի պատրաստած փետուրե թևերով. թռավ դեպի արևը, սակայն այրվեցին նրա թևերը, և նա զոհվեց ծովում: 2. *փխբ.* Սխրանք գործող, քաջ մարդ:

ԻԿԵԲԱՆԱ [< икебана < ճապ.], գ. Ծաղկեփնջեր կազմելու արվեստը և այդ կանոններով կազմված ծաղկեփնջերը նույնպես.բնօրրանը՝ Ճապոնիան:

ԻԿՈՆ [< икон < հուն. eikōn պատկեր], գ. (արվ.): Սրբապատկեր՝ սրբի պատկերները՝ նկարված տախտակի վրա:

ԻԿՈՆԱԳՐԱՖԻԱ [< иконография < հուն. eikōn + graphō գրում եմ], գ. (նկարչ.): Սրբապատկերագրություն:

ԻԿՈՆՈՍԿՈՊ [< иконоскоп < հուն. eikōn + հուն. skopeō քննում եմ, հետազոտում եմ], գ. (տեխ.): Հեռուստատեսային առաջին հաղորդիչ խողովակը, որն օպտիկական պատկերը փոխակերպում է հեռուստատեսային ազդանշանների:

ԻԿՈՍԱԷԴՐ [< икосаэдр < հուն. eikosi քսան + hedra հիմք], գ. (երկրչ.): Հինգ կանոնավոր բազմանիստերից մեկը. ունի 20 եռանկյուն նիստ, 30 կող, 12 գագաթ (յուրաքանչյուր գագաթից ելնում է 5 կող):

ԻԿՐԱ [< ռուս. икра], գ. 1. (կենդբ.): Ձկնկիթ, ձկան ձու, խավիար: 2. (խոհր.): Բադրիջանի աղացած զանգվածից պատրաստվող ուտեստ:

ԻՄԱԺԻՆԻԶՄ [< имажинизм < ֆր.. image կերպար], գ. (գրկն.): XX դարի սկիզբների անկումային ուղղություն, որը ժխտում էր ստեղծագործության գաղափարականությունը և այն հանգեցնում էր զարդարուն ու միմյանց հետ մտքով չկապակցված բառային պատկերների կերտմանը:

ԻՄԱԺԻՆԻՍՏ [< имажинист < ֆր.], գ. Իմաժինիզմի հետևորդ:

ԻՄԱՄ [< имам < արաբ. imam առաջը կանգնած], գ. 1. Մահմեդականների հոգևոր առաջնորդ (սկզբից այդպիսին էր Մուհամմեդը, հետո արաբների մոտ՝ խալիֆները, թուրքերի մոտ՝ սուլթանները, պարսիկների մոտ՝ Ալիի ժառանգները): 2. Մզկիթների մոտ ընդհանուր աղոթքն ու արարողություններն անցկացնող մոլլա:

ԻՄԱՆԵՆՏ [< имманентный < լատ. immanens (immanentis) հատուկ], ած. Ներունակ՝ 1. Ներքին ունակությամբ՝ կարողությամբ օժտված, ներքուստ ունակ՝ կարող: 2. Ներուժ՝ ունակություն՝ կարողություն ունեցող: 3. Ներքին հոգեկան ուժ՝ կարողություն ունեցող: 4. Բնորոշ, բնությունից, բուն տեսությունից բխող:

ԻՄԲԻՐ [< имбирь < գերմ. Ingber, Ingwer < սանսկրիտ], գ. (բսբ.): Կոճապղպեղ՝ կոճապղպեղազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս, որ գործածվում է որպես համեմունք և բժշկության մեջ՝ որպես դեղանյութ:

ԻՄԵՅԼ [< имейл < անգլ. e-mail < e(lectronic) էլեկտրոնային + mail փոստ], գ. (հմկրգչ.):Էլ.փոստ՝էլեկտրոնային կապի միջոց, որն իրականացվում է՝ համացանցին միանալով (ժամանակակից հայերենում «իմեյլ» ձևը խոսակցական է, գրավոր տարբերակում գործածական է անգլերենը՝ e-mail):

ԻՄԻԳՐԱՑԻԱ [< иммиграция < լատ. immigrare], գ. Ներգաղթ:

ԻՄԻՋ [< имидж < անգլ. image < լատ. imago կերպար], գ. (խսկց.): Ինչ-որ անձի (երևույթի, առարկայի ևն) կերպարի նպատակամղված ձևավորում՝ հասարակության վրա հուզահոգեբանական ներգործություն ունենալու համար, կերպար:

ԻՄԻՋՄԵՅՔԵՐ [< имиджмейкер < անգլ. imagemaker], գ. Մասնագետ, որը ստեղծում է ինչ-որ անձի (երևույթի, առարկայի ևն) կերպարը, կերպարարար:

ԻՄԻՏԱՏՈՐ [< имитатор < լատ.], գ. (հնց.): Նմանակող:

ԻՄԻՏԱՑԻԱ [< имитация < լատ. imitatio], գ. (խսկց.): 1. Նմանակում: 2. Արհեստական նմանակ, որևէ բանի նմանեցված իր՝ առարկա: 3. (երժշտ.): Երաժշտական մոտիվի կրկնությունը ուրիշ՝ ավելի բարձր կամ ցածր ձայնով:

ԻՄՈՐՏԵԼ [< иммортель < ֆր. immortel < լատ. immortalis անմահ], գ. (հզվդ.): Ֆրանսիական ակադեմիայի անդամ, որն ընտրվում է ցմահ:

ԻՄՊԵԴԱՆՍ [< импеданс < անգլ. impedance < գերմ. Impedanz < լատ. impedire խոչընդոտել], գ. 1. (էլեկտր.): Սինուսոիդային լարումների և հոսանքների դեպքում էլեկտրական ցանկացած բարդ գծային շղթայի լրիվ դիմադրության ներկայումս քիչ օգտագործվող անվանումը: 2. Տարբեր միջավայրերում և ձայնագիտական համակարգերում ձայնային դաշտը բնորոշող կոմպլեքս դիմադրություն:

ԻՄՊԵՐԱՏԻՎ [< императив < լատ. imperativus հրամայական],ած. գ. 1. (փիլ.): Կարգադրություն,կարգադրական՝ կտրական պահանջ, թելադրանք: 2. (լեզվբ.): Հրամայական եղանակ՝ բայի եղանակներից մեկը:

ԻՄՊԵՐԱՏՈՐ [< император < լատ. imperator տիրակալ, զորապետ], գ. (հնց.): Հանրապետական Հռոմում՝ զորապետի պատվավոր տիտղոսը, իսկ Օգոստոսի ժամանակներից պետության ղեկավարի տիտղոսը, հետագայում՝ խոշոր կայսրությունների ղեկավարի տիտղոսը:

ԻՄՊԵՐԻԱ [< империя < լատ. imperium իշխանություն], գ. (հնց.): 1. Կայսրություն՝ կայսրի գլխավորությամբ միապետություն, ինչպես նաև այդ միապետությանը ենթարկվող երկրները: 2. Տվյալ կայսրի՝ թագավորի տիրապետության ժամանակաշրջանը:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ [< империализм < լատ. imperium իշխանություն], գ. (քղք.): Կապիտալիզմի բարձրագույն աստիճանը:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏ [< империалист < լատ.], գ. Իմպերիալիզմի քաղաքականություն վարող խոշոր կապիտալիստ:

ԻՄՊԵՐՖԵԿՏ [< имперфект < լատ. imperfectum],ած. գ. (լեզվբ.): Անցյալ անկատար՝ անցյալում ընթացքի մեջ եղող գործողություն:

ԻՄՊԻՉՄԵՆՏ [< импичмент < անգլ. impeachment < impeach մեղադրել], գ. (իրավբ. քղք.): Դատավարության կարգ, ըստ որի պատասխանատվության է ենթարկվում պետության հանցագործություն կամ զանցանք կատարած նախագահը (կամ բարձրաստիճան պաշտոնյան):

ԻՄՊԼԱՆՏ [< имплантат < գերմ. Implantat < լատ.], գ. (բժշկ.): Որևէ օրգանի արհեստական փոխարինիչ:

ԻՄՊԼԱՆՏԱՑԻԱ [< имплантация < լատ. im < in մեջ + plantare տնկել], գ. (բժշկ.): Վիրահատական եղանակով արհեստական կամ բնական (մարդու մարմնից վերցրած) փոխարինիչի պատվաստում:

ԻՄՊԼԻԿԱՑԻԱ [< импликация < լատ. implicatio միահյուսում], գ. (տրամբ. լեզվբ.): Տրամաբանական գործողություն. բնական լեզվի «եթե…, ապա…» շաղկապի ձևայնացված արտահայտությունը, որի միջոցով կազմվում է նոր, պայմանական ասույթ:

ԻՄՊՈՏԵՆՏ [< импотент < լատ. impotens (impotentis) անուժ], ած.գ.(բժշկ.): Շուշտանդամ՝ սեռական անկարողությամբ տառապող (մարդ):

ԻՄՊՈՏԵՆՑԻԱ [< импотенция < լատ. impotentia], գ. (բժշկ.): Շուշտանդամություն՝ սեռական անկարողություն:

ԻՄՊՈՐՏ [< импорт < անգլ. import < լատ. importare], գ. (տնտսգ.): Ներմուծում՝ արտասահմանյան ապրանքների ներմուծում երկիր:

ԻՄՊՈՐՏՅՈՐ [< импортёр < ֆր. importeur < լատ.], գ. (տնտսգ.): Ներմուծող՝ իրավաբանական և ֆիզիկական անձ, որ զբաղվում է ներմուծմամբ:

ԻՄՊՐԵՍԱՐԻՈ [< импресарио < իտլ. impresario], գ. (արվ.): 1. Մասնավոր ձեռնարկու, համերգների ու ներկայացումների պրոֆեսիոնալ կազմակերպիչ: 2. Որևէ արտիստի հյուրախաղերը կազմակերպող և նրա անունից հանդես եկող գործակալ:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ [< импрессионизм < ֆր. impressionnisme < impression տպավորություն], գ. (արվ.): XIX դարի երկրորդ կեսում արվեստի մեջ երևան եկած ուղղություն, որը նպատակ էր դնում ստեղծագործության մեջ արտահայտել հեղինակի սուբյեկտիվ նրբագույն ու անցողիկ տրամադրություններն ու տպավորությունները՝ իրականությունից, հասարակական կյանքից անկախ:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻՍՏ [< импрессионист < ֆր.], գ. Իմպրեսիոնիզմի հետևորդ:

ԻՄՊՐՈՎԻԶԱՏՈՐ [< импровизатор < ֆր. improvisateur < լատ. improvisus անսպասելի, հանկարծակի], գ. Հանկարծաստեղծ՝ անձ, որ կարող է հանպատրաստից ստեղծել բանաստեղծություն, երաժշտություն, ելույթ ևն՝ առանց նախապես պատրաստվելու:

ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱ [< импровизация < ֆր. improvisation < լատ. improvisus անսպասելի,հանկարծակի],գ.Հանկարծաստեղծություն՝1.Հանպատրաստից ստեղծագործելը: 2. Հանպատրաստից ստեղծագործություն:

ԻՄՊՈՒԼՍ [< импульс < լատ. impulsus հարված, հրում], գ. 1. (կենսբ.): Մղանք՝ դրդիչ խթան, ներքին ազդակ: 2. (ֆիզ.): Մարմնի զանգվածի և նրա արագության արտադրյալին հավասար շարժումների քանակ: 3. (էլեկտր.): Էլեկտրական լարման կամ հոսանքի ուժի կարճատև փոփոխություն: 4. Գազային կամ հեղուկ

միջավայրի սահմանափակ ծավալում ճնշման կամ ջերմաստիճանի հանկարծակի և արագ անհետացող աճ, որի հետևանքով առաջանում է ճնշման կարճատև աճի ալիք: 5. Ուժի իմպուլս՝ որոշ ժամանակահատվածում մարմնի վրա ուժի ազդեցությունը բնութագրող մեծություն:

ԻՄՈՒՆԻՏԵՏ [< иммунитет < լատ. immunitas (immunitatis) ազատվել, փրկվել ինչ-որ բանից], գ. 1. (բժշկ.): Անընկալունակություն՝ օրգանիզմի անընկալունակությունը վարակիչ գործոնների և հակածինային բնույթի օտար նյութերի հանդեպ:

ԻՄՈՒՆՈ... [< иммуно... < լատ. immunis ազատ, անարատ. ձեռք չտված] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս երևույթներ և գործընթացներ՝ կապված իմունիտետի հետ:

ԻՄՈՒՆՈԼՈԳԻԱ [< иммунология < լատ. immunis + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն օրգանիզմի պաշտպանական ռեակցիաների մասին, որոնք առաջանում են օրգանիզմի կառուցվածքային և ֆունկցիոնալ ամբողջականությունն ու կենսաբանական անհատականությունը պահպանելու համար:

ԻՆԱՈՒԳՈՒՐԱՑԻԱ [< инаугурация < անգլ. inauguration հանդիսություն՝ պարտավորությունների կատարման անցնելու կապակցությամբ < լատ. inaugurare սրբագործել տեղը կամ տաճարը թռչնահմայությունից հետո], գ. (քղք.): Երկրի նախագահի (պրեզիդենտի) երդման արարողությունը, հանդիսությունը իր պարտականություններին անցնելու կապակցությամբ, ձեռնադրում:

ԻՆԲՐԻԴԻՆԳ [< инбридинг < անգլ. inbreeding < in ներս + breeding բուժել], գ. (կենսբ.): Օրգանիզմների մեկ պոպուլյացիայի սահմաններում ազգակցական ձևերի տրամախաչում: Բուսաբուծության մեջ հայտնի է ինցուխտ [< инцухт < գերմ. Inzucht] անունով: Բնության մեջ ինցուխտի առավել ակնառու ձևն ինքնափոշոտումն է:

ԻՆԳՐԵԴԻԵՆՏ [< ингредиент < ֆր. ingredient < լատ. ingrediens (ingredientis) մտնող], գ. (հնց.): Բաղադրամաս, բաղադրիչ:

ԻՆԳՐԵՍԻԱ [< ингрессия < լատ. ingressia ներխուժում], գ. (երկրբ.): Ծովի ներխուժումը պլատֆորմային տիպի ցամաք, որն ունի հարթավայրային ռելիեֆ և կազմված է հորիզոնական տեղադրված նստվածքներից:

ԻՆԴԵՊԵՆԴԵՆՏՆԵՐ [< индепенденты < անգլ. independent անկախ, ինքնուրույն], գ. (պատմ.): Պուրիտանության ուղղություններից մեկի ներկայացուցիչներ: XVII դ. անգլիական բուրժուական հեղափոխության շրջանում խմբավորում, որն արտահայտում էր բուրժուազիայի և նոր բուրժուականացած ազնվականության արմատական թևի շահերը. ղեկավարն էր Օ. Կրոմվելը:

ԻՆԴԵՏԵՐՄԻՆԻԶՄ [< индетерминизм < լատ. in ժխտական մասնիկ + determinare որոշել], գ. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայական ուսմունք, որ ժխտում է բնության ու հասարակության երևույթների օրինաչափ բնույթն ու պատճառականությունը և դրանք բացատրում պատահականությամբ ու կամայականությամբ:

ԻՆԴԵՏԵՐՄԻՆԻՍՏ [< индетерминист < լատ.], գ. Ինդետերմինիզմի հետևորդ:

ԻՆԴԵՔՍ [< индекс < լատ. index ցուցիչ, ցուցակ], գ. 1. Ցուցակ՝ որևէ բանի ցանկ: 2. (տնտսգ.): Ցուցանիշ՝ թվանշանային ցուցիչ, որ տոկոսներով արտահայտում է որևէ տնտեսական երևույթի հաջորդական փոփոխությունը: 3. (բժշկ.): Թվանշային ցուցիչ, որ արտահայտում է մարմնի զանազան մասերի միջև եղած հարաբերությունը: 4. (մաթ.): Թվային կամ տառային ցուցիչ, որը դնում են աջից թվանշանի կամ տառի կողքին: 5. (գրդր.): Ցուցիչ՝ դասակարգման աղյուսակների համար

նշան՝ բաժնի կամ ենթաբաժնի տառային, թվային կամ խառը նշում, որը համապատասխանում է նկարագրված երկի բովանդակությանը:

ԻՆԴԻԳՈ, ԻՆԴԻԿՈ [< индиго < իսպ. indigo < լատ. indicus հնդկական], գ. 1. Լեղակ՝ կապույտ գույնի նյութ, որը ստանում են բնական և քիմիական եղանակով: 2. Մուգ կապույտ գույնի բրդե գործվածք:

ԻՆԴԻԿԱՏԻՎ [< индикатив < լատ. indicativus (modus)], ած. գ. (լեզվբ.): Սահմանական եղանակ՝ բայի եղանակներից մեկը:

ԻՆԴԻԿԱՏՈՐ [< индикатор < լատ. indicator ցուցիչ], գ. Ցուցիչ՝ 1. (տեխ.): Արագության, ծանրության և նման այլ բաներ չափելու գործիք: 2. (քիմ.): Քիմիական ռեակտիվ:

ԻՆԴԻՈՆ [< индий < լատ. Indium], գ. (քիմ.): Թեթև և դյուրահալ սպիտակ քիմիական տարր:

ԻՆԴԻՎԻԴ [< индивидуум < լատ. individuum չբաժանվող], ած. գ. 1. (կենսբ.): Ինքնուրույն գոյություն ունեցող յուրաքանչյուր առանձին օրգանիզմ: 2. Անհատ՝ յուրաքանչյուրը, առանձին՝ եզակի մարդը որպես հասարակության անդամ:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ [< индивидуальный < լատ.], ած. Անհատական, անձնական:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶԱՑԻԱ [< индивидуализация < լատ.], գ. Անհատականացում:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ [< индивидуализм < լատ.], գ. (փիլ.): Անհատապաշտություն՝ 1. Անհատի շահերը հասարակության շահերից վեր դասելը: 2. Իր անձի գերազանցությունն ու հանրությունից անկախ լինելը ցուցադրելու, շեշտելու ձգտում՝ վարքագիծ: 3. Հայեցակետ, որի համաձայն հասարակական երևույթները պայմանավորված են անհատի գործունեությամբ:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏ [< индивидуалист < լատ.], գ. (փիլ.): Անհատապաշտ՝ գործունեության և հայացքների մեջ անհատապաշտության սկզբունքներով առաջնորդվող անձ:

ԻՆԴՈՍԱՄԵՆՏ [< индоссамент < գերմ. Indossament լատ. < dorsum մեջք], գ. (ֆին.): Փոխանցագիր՝ արժեթղթի հակառակ կողմի վրա փոխանցման մակագրություն, որը հաստատում է փաստաթղթի իրավունքի փոխանցումը ուրիշ անձի:

ԻՆԴՈՍԱՆՏ [< индоссант < գերմ. Indossant], գ. (ֆին.): Տե՛ս Ժիրանտ:

ԻՆԴՈՍԱՏ [< индоссат < գերմ. Indossat], գ. (ֆին.): Տե՛ս Ժիրատ:

ԻՆԴՈՒԼԳԵՆՑԻԱ [< индульгенция < լատ. indulgere ողորմություն ցուցաբերել], գ. (եկեղ.): Պապական հրովարտակ մեղքերի թողության մասին, որ փողով վաճառվում էր հավատացյալներին:

ԻՆԴՈՒԿՏԻՎ [< индуктивный < լատ.], ած. 1. Ինդուկցիայի վրա հիմնված, մակածական: 2. (ֆիզ.): Ինդուկցիայով առաջացող՝ առաջացած, ինդուկցիայի առաջ բերած:

ԻՆԴՈՒԿՏՈՐ [< индуктор < լատ. inductor], գ. (տեխ.): 1. Տաքացնող ինդուկտոր՝ ինդուկցիոն տաքացման համար նախատեսված էլեկտրամագնիսական հարմարանք: 2. Հեռախոսային ինդուկտոր՝ ձեռքի շարժաբերով մագնիսաէլեկտրական մեքենա: 3. Հաստատուն հոսանքի մեքենայի գրգռման մագնիսական համակարգի՝ գործածությունից դուրս եկած անվանում:

ԻՆԴՈՒԿՑԻԱ [< индукция < լատ. inductio մակածում, դրդում], գ. 1. (տրամբ.): Մակածություն՝ մասնավոր՝ առանձին փաստերից ու դրույթներից ընդհանուր եզրակացությունների՝ ընդհանրացումների հանգելը: 2. (ֆիզ.): Էլեկտրական հոսանքի առաջացումը մագնիսական դաշտի ազդեցությամբ կամ լիցքային էլեկտրական մարմնի մոտեցմամբ: 3. (բնխս.): Գրգռման ու արգելակման գործընթացների փոխազդեցությունը նյարդային համակարգում, որի ժամանակ մեկ գործընթացի

առաջացումը պայմանավորում է նաև մյուսի՝ հակառակ գործընթացի երևան գալը:

ԻՆԴՈՒԿՑԻՈՆ [< индукционный < լատ.], ած. Ինդուկցիայով (2) առաջացող՝ առաջացած, ինդուկտիվ (2):

ԻՆԴՈՒՍՏՐԻԱ [< индустрия < լատ. industria ջանք, գործունեություն], գ. (տնտսգ.): Արդյունաբերություն՝ տնտեսության այն ճյուղը, որ միավորում է երկրի ընդերքի հանույթի և հումքի վերամշակման ձեռնարկությունները:

ԻՆԵՐՏ [< инертный < լատ. iners (inertis) անգործունյա], ած. 1. Իներցիայով հորդող՝ շարժվող, սեփական շարժում չունեցող: 2. *փխբ.* Մտավոր և բարոյական գործունեությունից զուրկ, անգործունյա, անտարբեր:

ԻՆԵՐՑԻԱ [< инерция < լատ. inertia անգործություն], գ. 1. (ֆիզ.): Մարմնի հատկությունը՝ հանգստի վիճակը պահպանելու կամ ուղղագիծ համաչափ շարժման վիճակը շարունակելու, քանի դեռ որևէ արտաքին ուժ այդ վիճակից նրան չի հանում: 2. *փխբ.* Մտավոր կամ բարոյական գործունեության՝ եռանդի բացակայություն, թուլություն: 3. մկ. (գործ. հոլով): Ըստ սովորության, առանց գործուն միջամտության, մեքենայորեն:

ԻՆԺԵԿՏՈՐ [< инжектор < ֆր. injecteur < լատ. injectare ներս նետել], գ. (տեխ.): Ներարկիչ՝ շիթային պոմպ. նախատեսված է գազերը, շոգին սեղմելու, հեղուկ վառելանյութը ռեզերվուարների և զանազան ապարատների մեջ մղելու համար:

ԻՆԺԵՆԵՐ [< инженер < ֆր. ingenieur], գ. Տեխնիկայի որևէ բնագավառի՝ բարձրագույն տեխնիկական կրթություն ստացած մասնագետ, ճարտարագետ:

ԻՆԺԻՆԻՐԻՆԳ [< инжиниринг < անգլ. engineering], գ. (տնտսգ.): Գործունեության այնպիսի ոլորտ, որն ընդգրկում է տնտեսության ճյուղերի ենթակառուցվածքային օբյեկտների ստեղծման հարցերի մշակումը՝ ինժեներախորհրդատվական վճարովի ծառայություններ մատուցելու միջոցով:

ԻՆԻՑԻԱԼՆԵՐ [< инициалы < լատ. initialis սկզբնական], գ. (խսկց.): Սկզբնատառք՝ անվան, հայրանվան և երբեմն ազգանվան սկզբնատառերը:

ԻՆԻՑԻԱՏԻՎԱ [< инициатива < ֆր. initiative < լատ. initiare սկսել], գ. (խսկց.): Նախաձեռնություն՝ 1. Որևէ բան սկսելու՝ ձեռնարկելու ներքին դրդում՝ եռանդ՝ մղում: 2. Ղեկավար դեր որևէ կարգի գործունեության մեջ: 3. Ինքնուրույն գործունեություն ու գործողություններ ձեռնարկելու կարողություն, ձեռներեցություն: 4. Նախաձեռնած գործը:

ԻՆԿ(ԵՐ) [< инка < իսպ. inca], գ. (ազգգր.): Սկզբում (XI-XIII դդ.) Պերուում բնակվող կեչուա լեզվախմբի հնդկացիների ցեղ, հետագայում տիրող դաս՝ ցեղային միավորմամբ կազմավորված պետության մեջ:

ԻՆԿԱՍԱՏՈՐ [< инкассатор < իտլ. incassare դնել արկղի մեջ], գ. (ֆին.): Գանձիչ՝ դրամն ստացող և հասցնող (սովորաբար հիմնարկից դուրս):

ԻՆԿԱՍԱՑԻԱ [< инкассация < իտլ.], գ. (ֆին.): Դրամագանձում՝ կանխիկ գումարի բանկային գանձում կամ կանխիկ միջոցների տեղափոխման հատուկ ծառայություն:

ԻՆԿԱՍՈ [< инкассо < իտլ. incasso], գ. (բանկ.): Բանկային գործառնություն, երբ բանկը մատակարարի հանձնարարությամբ իր վրա է վերցնում գնորդից վճարման ենթակա դրամական գումարների գանձումը՝ դրամական, ապրանքային կամ հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

ԻՆԿԱՐՆԱՑԻԱ [< инкарнация < լատ. incarnatio մարմնավորում], գ. (կրոն.): Մարմնավորում, մարմնացում (ոգու՝ հոգու արտահայտությունը մարմնում):

ԻՆԿՈԳՆԻՏՈ [< инкогнито < լատ. incognitus անհայտ], մկ. Ծածուկ՝ գաղտնի՝ անհայտ մնալով:

ԻՆԿՈՐՊՈՐԱՑԻԱ [< инкорпорация < լատ. incorporatio ներառում], գ. 1. (լեզվբ.): Ներմարմնավորում՝ քերականական հարաբերությունների արտահայտման եղանակ, որի ժամանակ մեկ բառի մեջ միավորվում են բազմաթիվ արմատներ ու նրանց քերականական հարաբերություններն արտահայտող միավորները և կազմում նախադասության անդամների որևէ խումբը կամ ամբողջ նախադասությունը: 2. (իրավբ.): Միավորում՝ օրենքների համակարգում, որը վերաբերում է իրավունքի որևէ բնագավառի: 3. (քղբ.): Միացում:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐ [< инквизитор < լատ.], գ. 1. (պատմ.): Ինկվիզիցիայի դատավոր, հավատաքննիչ: 2. *փխբ.* Ուրիշներին մարմնական կտտանքների՝ տանջանքների ենթարկող մարդ: 3. *փխբ.* Առհասարակ՝ ուրիշներին տանջել՝ չարչարել սիրող մարդ:

ԻՆԿՎԻԶԻՑԻԱ [< инквизиция < լատ. inquisitio քննություն], գ. (հնց.): 1. Հավատաքննություն՝ կրոնաքննություն: 2. Կաթոլիկ եկեղեցուն կից կազմակերպություն 13-րդ դարից անհավատների դեմ պայքարելու համար: 3. *փխբ.* Բռնակալություն, բռնապետություն: 4. *փխբ.* Կեղեքում:

ԻՆԿՐՈՒՍՏԱՑԻԱ [< инкрустация < լատ. incrustatio < incrusto ծածկել շերտով, կեղևով, մակազարդել մարմարով], գ. (ճարտ.): Ընդելուզում՝ տարբեր գույնի մարմարի կտորներով, խեցեղենով, փայտով, գաղտագուրով ևն առարկաների և շենքերի (ճակատը և ինտերիերը) մակերեսի փորվածքներում տեղադրելով զարդարելու տեսակ:

ԻՆԿՈՒԲԱՏՈՐ [< инкубатор < լատ. incubare], գ. (գղտնտ.): Թխսամեքենա՝ 1. Արհեստական եղանակով ճտեր հանելու ապարատ: 2. Հատուկ սարքավորված տեղ՝ ինկուբացիայի համար:

ԻՆԿՈՒԲԱՑԻԱ [< инкубация < լատ. incubatio], գ. 1. (բժշկ.): Հիվանդության թաքուն շրջանը՝ վարակվելուց մինչև առաջին ախտանիշների երևան գալը: 2. (գղտնտ.): Արհեստական եղանակով ճտեր հանելը:

ԻՆԿՈՒԲԱՑԻՈՆ [< инкубационный < լատ.], ած. Ինկուբացիային հատուկ՝ վերաբերող:

ԻՆԿՈՒՆԱԲՈՒԼԱՆԵՐ [< инкунабулы < լատ. incunabula վաղ մանկություն, խանձարուր, օրորան], գ. (պատմ.): Սկզբնատիպ, խանձարուրային գրքեր՝ պատրաստված շարվածքների ձևով, մինչև 1501 թ.: Արտաքին տեսքով հիշեցնում են ձեռագիր գրքերը:

ԻՆՀԱԼՅԱՑԻԱ [< ингаляция < լատ. inhalare ներշնչել], գ. (բժշկ.): Բուժական նպատակով գոլորշի, գազեր և եռացող հեղուկներ ներշնչելը:

ԻՆՀԻԲԻՏՈՐՆԵՐ [< ингибиторы < լատ. inhibere կանգնեցնել, զսպել], գ. (քիմ.): Քիմիական արգելակիչներ, բնական կամ սինթետիկ նյութեր, որոնք արգելակում կամ դադարեցնում են որևէ քիմիական կամ կենսաբանական գործընթաց:

ԻՆՅԵԿՑԻԱ [< иньекция < լատ. injectio], գ. (բժշկ.): Ներարկում՝ մարմնի մեջ սրսկիչով դեղ՝ արյուն ևն մուծել, լցնել, ներսրսկել:

ԻՆՆՈՎԱՑԻԱ [< инновация < լատ. in + novatio], գ. (գիտ.): Գիտության, տեխնիկայի, ղեկավարման, աշխատանքի կազմակերպման ոլորտներում արվող նորարարություն:

ԻՆՈԶԻՏ [< инозит < հուն. ines մկաններ], գ. (կենսբ.): Ցիկլավոր վեցոտանի սպիրտ: Որոշ միկրոօրգանիզմների աճման անհրաժեշտ գործոն է:

ԻՆՈՑԵՐԱՄՆԵՐ [< иноцерамы < հուն. հատուկ անուն Ino + ceramos կոմինդր], գ. (կենդբ. հնէաբ.): Մահացած երկփեղկանի փափկամորթների ընտանիք.ապրել են յուրայի և կավճի ժամանակաշրջանների ծովերում:

ԻՆՉ [< инч < անգլ. inch], գ. Չափման միավոր Անգլիայում, որը հավասար է 25,4 մմ:

ԻՆՍԱՅԴԵՐ [< инсайдер < անգլ. insider], գ. (տնտսգ.): Ներքնանձ՝ յուրային անձ, որն աշխատում է ընկերության ներսում կամ ունի ավելի քան 10 % քվեաձայն, ուստի տիրապետում է ներքին տեղեկատվությանը, որը հասու չէ հասարակության լայն զանգվածներին: Մարդ, որը տվյալ տեղեկատվության համար կատարում է շահութաբեր գործարքներ:

ԻՆՍԵԿՏԱՐԻՈՒՄ [< инсектарий < լատ. insecta միջատ], գ. Միջատների պահպանման և բազմացման տեղ գիտական նպատակներով:

ԻՆՍԵԿՏԱՑԻԴՆԵՐ [< инсектациды < լատ. insecta + caedere սպանել], գ. (քիմ.): Միջատասպաններ՝ միջատներ ոչնչացնող նյութեր՝ թունաքիմիկատներ:

ԻՆՍԻԳՆԻԱ [< инсигния < լատ. insignire նշել, առանձնացնել], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ բարձրագույն իշխանության խորհրդանիշ՝ նշան:

ԻՆՍԻՆՈՒԱՑԻԱ [< инсинуация < լատ. insinuatio շողոքորթություն, փաղաքշություն], գ. (հզվդ.): Անվանարկություն՝ չարամիտ ակնարկություն, կողմնակիորեն ասված վարկաբեկիչ արտահայտություն, անուղղակի զրպարտություն:

ԻՆՍՈԼՅԱՑԻԱ [< инсоляция < լատ. insolatio < insolare արևի տալ], գ. (ֆիզ.): Երկրի մակերևույթի ճառագայթահարում՝ արեգակնային ուղիղ կամ գումարային ճառագայթմամբ:

ԻՆՍՊԵԿՏՈՐ [< инспектор < լատ. inspector], գ. Տեսուչ՝ 1. Ստորադաս մարմինների կամ պաշտոնյաների գործունեության ստուգումն ու հսկողությունն իրականացնող պաշտոնյա: 2. (խսկց.): Ուստիկանության աշխատող, որը վերահսկում է ճանապարհային երթևեկության կանոնները:

ԻՆՍՊԵԿՑԻԱ [< инспекция < լատ. inspectio], գ. (իրավբ.): Տեսչություն՝ 1. Մեկի՝ մի բանի գործունեությունն ստուգող ու հրահանգավորող մարմին՝ հիմնարկություն: 2. Հսկողություն: 3. Հաստատության տեսչական կազմը: 4. Տեսչական ստուգում:

ԻՆՍՊԻՐԱՑԻԱ [< инспирация < լատ. inspiratio ներշնչանք], գ. 1. Ներշնչանք, դրդում: 2. (կզմխս.): Ներշնչելը՝ շնչելով օդը ներս առնել՝ թոքերը տանել:

ԻՆՍՏԱԼՅԱՑԻԱ [< инсталяция < գերմ. Installation, ֆր., անգլ. installation, բառացի՝ տեղադրում, տեղադրելը], գ. (հմկրգչ.): Որևէ ծրագրի տեղադրումը համակարգչում:

ԻՆՍՏԱՆՑԻԱ [< инстанция < լատ. instans (instantis)], գ. (խսկց.): 1. Աստիճանակարգություն՝ իրար ենթարկվող օրգանների հաջորդական աստիճանը: 2. Ատյան՝ խորհրդակցական մարմին, խորհրդակցությամբ վճիռ ներկայացնող մարմին (դատարան, պալատական խորհուրդ):

ԻՆՍՏԻԼՅԱՑԻԱ [< инстилляция < ֆր. instillation < լատ. instillation կաթիլ-կաթիլ ներարկել < in մեջ + stillare կաթիլ], գ. (բժշկ.): Կաթիլային ներարկում:

ԻՆՍՏԻՆԿՏ [< инстинкт < լատ. instinctus բնազդ], գ. (կզմխս.): Բնազդ՝ 1. Կեն-

դանի օրգանիզմների անգիտակից, բայց նպատակահարմար գործողություններ կատարելու բնածին հատկությունը: 2. Անգիտակցական և անդիմադրելի մղում՝ դրդում:

ԻՆՍՏԻՏՈՒՏ [< институт < լատ. institutum որոշում], գ. 1. Ոչ համալսարանական տիպի բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական հիմնարկների անվանում: 2. Միջնակարգ իգական դպրոց մինչհեղափոխական Ռուսաստանում: 3. (իրավ.): Հաստատություն, հասարակական հարաբերությունների այս կամ այն բնագավառի իրավունքի նորմաների ամբողջությունը:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄ [< институционализм < լատ. institutio հրահանգ, հորդոր], գ. 1. XX դարի պետականագիտության ուղղություն: Հասարակության, պետության և իրավունքի խնդիրների քննարկման հիմքը համարում է որոշակի նպատակով միավորված մարդկանց կայուն խումբը (ընտանիք, կուսակցություն, տրեստ, եկեղեցի, արհմիություն, պետություն նն): 2. (տնտսգ.): Հոսանք XX դ. ամերիկյան քաղաքատնտեսության մեջ. հիմնվում է տնտեսական գործընթացների էության և շարժիչ ուժերի, առավելապես արտատնտեսական մեկնաբանման վրա:

ԻՆՍՏՐՈՒԿՏՈՐ [< инструктор < լատ. instructor կազմակերպիչ], գ. (խսկց.): Հրահանգիչ՝ 1. Հրահանգներ տվող: 2. (հնց.): Խորհրդային պետական, կուսակցական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության պաշտոնական անձ, որ ստուգում է տվյալ մարմնին ենթակա կազմակերպությունների ու պաշտոնյաների գործունեությունը և ցուցումներ տալիս աշխատանքի դրվածքի մասին: 3. Մարզիչ՝ մի բան վարժեցնող, սովորեցնող:

ԻՆՍՏՐՈՒԿՑԻԱ [< инструкция < լատ. instructio հրահանգ], գ. (խսկց.): Հրահանգ՝ 1. Որևէ բան իրագործելու կարգն ու միջոցները սահմանող կանոնների ամբողջությունը, ղեկավար ցուցումներ: 2. Պաշտոնական գրություն վերադաս մարմնից ստորադասներին՝ որևէ բան կատարելու մասին, կարգադրություն: 3. (ռազմ. սպորտ.): Շարային և մարմնամարզական վարժությունների ժամանակ տրվող հրաման:

ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏ [< инструмент < լատ. instrumentum գործիք], գ. (խսկց.): Գործիք՝ 1. Աշխատանք կատարելու միջոց: 2. Երաժշտական գործիք՝ դաշնամուր, կլարնետ նն:

ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼԻԶՄ [< инструментализм < լատ.], գ. (փիլ.): Պրագմատիզմի տարբերակը՝ Ջ. Դյուիի ուսմունքը, ըստ որի ճանաչողությունը խնդիրների լուծում է կոնկրետ իրավիճակներում, իսկ ճանաչողության միջոցները՝ ընդհուպ մինչև վերացական մտակառուցումները, խնդիրների լուծման համար պատմականորեն ձևավորված գործիքներ՝ «ինստրումենտներ»:

ԻՆՍՈՒԼԻՆ [< инсулин < լատ. insulinum < insula կղզի], գ. (կենսբ.): Ենթաստամոքսային գեղձի սպիտակուցային բնույթի հորմոն, որ իբրև դեղ օգտագործվում է շաքարախտի և մի քանի այլ հիվանդությունների դեմ:

ԻՆՍՈՒԼՏ [< инсульт < լատ. insultare թռչկոտել], գ. (բժշկ.): Կաթված՝ ուղեղի կաթված՝ գիտակցության և շարժունակության կորստով:

ԻՆՍՈՒՐԳԵՆՏ [< инсургент < գերմ. Insurgent < լատ. insurgens (insurgentis) ապստամբ], գ. (պատմ.): Ապստամբ, ապստամբության մասնակից:

ԻՆՎԱԶԻԱ [< инвазия < լատ. invasio հարձակում, ներխուժում], գ. (կենսբ.): Կենդանիների և բույսերի վարակումը կենդանական մակաբույծներով (նախակենդանիներ, որդեր, տզեր, միջատներ են):

ԻՆՎԱԼԻԴ [< инвалид < լատ. invalidus ծույլ, անուժ], ած. գ. (խսկց.): Հաշմանդամ՝ աշխատունակությունը կորցրած մարդ:

ԻՆՎԱԼՅՈՒՏԱ [< инвалюта < լատ. in + իտլ. valuta], գ. (ֆին.): Արտարժույթ:

ԻՆՎԱՐԻԱՆՏ [< инвариант < ֆր. invariant չփոփոխվող], ած. Անայլակ: 1. (լեզվբ.): Լեզվի արժութային միավոր (հնչույթ, ձևույթ են), անփոփոխակ: 2. (մաթ.): Թվերը, խմբերը և այն մաթեմատիկական մեծություններն ու օբյեկտները, որոնք չեն փոխվում, երբ որոշակի (հակադարձելի) ձևափոխությունների է ենթարկվում կամ օբյեկտն ինքը, կամ այն կոորդինատային համակարգը, որում նկարագրվում է օբյեկտը:

ԻՆՎԱՐԻԱՆՏՈՒԹՅՈՒՆ [< инвариантность < լատ. invarians (invariantis) չփոփոխվող], գ. (մաթ.): Որոշակի պայմանների փոփոխման և ձևափոխությունների ժամանակ մաթեմատիկական և ֆիզիկական մեծությունների անփոփոխ մնալու հատկությունը:

ԻՆՎԵՆՏԱՐ [< инвентарь < լատ. inventarium], գ. (տնտսգ.): 1. Գույք՝ հիմնարկության՝ ձեռնարկության կազմակերպության են ունեցվածքի մեջ մտնող առարկաների ամբողջությունը: 2. Գույքացուցակ՝ նշված ունեցվածքի ճշգրիտ ցուցակը:

ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱ [< инвентаризация < լատ. inventarium], գ. Գույքագրում՝ հիմնարկության՝ ձեռնարկության են գույքի ցուցակագրում:

ԻՆՎԵՆՑԻԱ [< инвенция < լատ. inventio գյուտ, հնարանք], գ. (երժշտ.): Ոչ մեծ երաժշտական պիեսի անվանում, որ նշում է նրանում հնարանքի դերը ինչպես մեղեդու, այնպես էլ երաժշտական զարգացման ձևի մեջ:

ԻՆՎԵՍՏԻՏՈՒՐԱ [< инвеститура < լատ. investire հանդերձավորել < ուշ լատ. investitura], գ. (պատմ.): 1. Միջնադարում (Արևմտյան Եվրոպայում) վասալային կախվածությունն ամրապնդող ֆեոդի, պաշտոնի, աստիճանի հանձնման իրավաբանական ակտ, որն ուղեկցվել է արարողությամբ. վասալին սենյորը հանձնել է իշխանություն խորհրդանշող մի ափ հող, ձեռնոց, սուսեր, գայիսոն, դրոշ են: 2. Եկեղեցական պաշտոնի (եպիսկոպոս, աբբահայր) շնորհման արարողություն:

ԻՆՎԵՍՏԻՑԻԱ [< инвестиция < գերմ. Investition < լատ. investire], գ. (տնտսգ.): Ներդրում՝ կապիտալի երկարատև ներդրում, ներդրված կապիտալից շահույթ ստանալու նպատակով:

ԻՆՎԵՍՏՈՐ [< инвестор < անգլ. investor < լատ.], գ. (տնտսգ.): Ներդրող՝ անձ, որը կապիտալ է ներդնում տնտեսության մեջ:

ԻՆՎԵՐՍԻԱ [< инверсия < լատ. inversio տեղափոխություն, շրջում], գ. 1. (լեզվբ. գրկն.): Շրջադասություն՝ նախադասության անդամների սովորական շարադասության շրջում՝ փոփոխում՝ որևէ բառի կամ ամբողջ ասույթի տրամաբանական նշանակությունը ավելի ցայտուն դարձնելու կամ ամբողջ նախադասությանը որոշակի ոճաբանական երանգ տալու նպատակով: 2. (քիմ.): Ցիկլավոր մոլեկուլի ձևի փոփոխություն, որի պատճառով փոխվում է տեղակալիչի դիրքորոշումն օղակի նկատմամբ: 3. (մաթ.): Տեղափոխությունում երկու տարրերի կարգի խանգարում: 4. (երկբշխ.): Գեոսինկլինալի զարգացման կարևոր փուլը:

ԻՆՎԵՐՏԱԶ [< инвертаза, инвертин < լատ. invertere դարձնել], գ. Տե՛ս Սախարազ:

ԻՆՏԵԳՐԱԼ [< интеграл < լատ. integer ամբողջական, վերականգնված], ած. գ. (մաթ.): 1. գ. Ամբողջ մեծություն, որը դիտվում է որպես իր անվերջորեն փոքր մասերի գումարը: 2. ած. Այդպիսի մեծությանը հատուկ՝ վերաբերող, ինտեգրալի:

ԻՆՏԵԳՐԱՑԻԱ [< интеграция < լատ. integratio վերականգնում < integer ամբողջ], գ. 1. Մասերի ամբողջացում, ներգրավում: 2. (տնտսգ.): Տնտեսության ամբողջականացում և միասնական տնտեսական քաղաքականության իրականացում:

ԻՆՏԵԼԵԿՏ [< интеллект < լատ. intellectus], գ. (խսկց.): Խելք, բանականություն, միտք, մտածողական ընդունակություն:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ [< интеллектуал < լատ.], գ. ած. 1. Բանականությամբ օժտված, բանականություն ունեցող (մարդ): 2. Ինտելեկտուալ խաղեր՝ բանականությամբ, մտածողական ընդունակություններով իրականացվող, իրագործվող խաղեր:

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ [< интеллигент < լատ.], ած. գ. (խսկց.): Մտավորական՝ մտավոր աշխատանքով զբաղվող, գիտության՝ տեխնիկական և մշակույթի բնագավառներից մեկի անհրաժեշտ գիտելիքներ և կրթություն ունեցող (անձ):

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ [< интеллигенция < լատ. intelligens (intelligentis) հասկացող, բանական], գ. (խսկց.): Մտավորականություն՝ մտավոր աշխատանքով զբաղվող, գիտության՝ տեխնիկայի և մշակույթի բնագավառներից մեկի անհրաժեշտ գիտելիքներ և կրթություն ունեցող մարդկանց ամբողջությունը:

ԻՆՏԵՆԴԱՆՏ [< интендант < ֆր. intendant], գ. (ռազմ.): Համբարակ՝ զինված ուժերի ամեն կարգի (սննդամթերք, հագուստ ևն) մատակարարումների գործն իրականացնող զինծառայող:

ԻՆՏԵՆՍԻՎ [< интенсивный < ֆր. intensif < լատ. intensio լարում՝ ուժեղացում], ած. (խսկց): 1. Բուռն՝ եռանդային, եռուն, լարված: 2. Արդյունավետ, արդյունք տվող, արտադրողական:

ԻՆՏԵՆՍԻՎԱՑՈՒՄ, գ. 1. Լարվածություն, բուռն՝ եռուն դարձնելը: 2. Արդյունավետ՝ արտադրողական դարձնել:

ԻՆՏԵՆՑԻԱ [< интенция < ֆր. intention, գերմ. Intention < լատ. intendēre մտադրվել, ծրագրել], գ. (հնց.): Մտադրություն, ծրագրում, ծրագրելը:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՐՑՈՒՄ [< интерактивный (< լատ. inter մեջ + activus գործնական) опрос] - Գործնական հարցում՝ ճշտելու հասարակության լայն զանգվածների վերաբերմունքը, կարծիքը որոշակի հարցի վերաբերյալ:

ԻՆՏԵՐԳԼՈՍՍԱ [< интерглосса < լատ. inter մեջ+ հուն. glōssa լեզու], գ. (լեզվբ.): Արհեստական լեզու, որ կազմել է Հոգբենը (Hogben)՝ օգտագործելով հունարենի և լատիներենի արմատները և չինարենի քերականությունը:

ԻՆՏԵՐԴԻԿՏ [< интердикт < լատ. interdictum արգելում], գ. (պատմ.): Հռոմեական իրավունքում՝ պրետորի հրաման, որն արգելում էր վիճող կողմերից որևէ մեկին գործողություն իրականացնելը:

ԻՆՏԵՐԻԵՐ [< интерьер < ֆր. intérieur ներքին], գ. (ճարտ.): 1. Շենքի ներսի ճարտարապետական և գեղարվեստական ձևավորումը: 2. Շենքի ներսի պատկերումը: 3. (կենդբ.): Ներքնակազմ՝ կենդանի օրգանիզմի ներքին կառուցվածքը:

ԻՆՏԵՐԼԻՆԳՎԱ [< интерлингва < լատ. inter + lingua լեզու], գ. (լեզվբ.): Արհեստական լեզու. նման է լատիներենին, բայց առանց թեքույթների: Ստեղծել է Ջ. Պեանոն (Giuseppe Peano) 1930 թ.:

ԻՆՏԵՐԼԻՆԳՎԻՍՏԻԿԱ [< интерлингвистика < ֆր. interlinguistique, անգլ. interlinguistics, գերմ. Interlinguistik], գ. (լեզվբ.): Լեզվաբանական գիտակարգ, որը զբաղվում էր արհեստական լեզուների ստեղծմամբ՝ որպես միջազգային հաղորդակցման միջոց:

ԻՆՏԵՐԼԻՆՅԱԺ [< интерлиньяж < ֆր. interlignage < interligne տողերի արանք], գ. (տպգր.): Երկու տողերի միջև եղած հեռավորությունը՝ տարածությունը տպագիր տեքստում:

ԻՆՏԵՐԼՅՈՒԴԻԱ [< интерлюдия < լատ. inter մեջ + ludus խաղ], գ. 1. (երժշտ.): Միջերգանք՝ փոքրիկ երկ կամ հատված, որը կապող օղակ է հանդիսանում երաժշտական ստեղծագործության երկու ուրիշ մասերի միջև: 2. Դրամատիկական ստեղծագործության տեսակ Անգլիայում միջին դարերի վերջերին և Վերածննդի սկզբին:

ԻՆՏԵՐԿԻՆԵԶ [< интеркинез < լատ. inter + հուն. kinēsis շարժում], գ. (կենսբ.): Նույնն է՝ Ինտերֆազ:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ [< интермедия < լատ. intermedius միջանկյալ], գ. 1. (թատր.): Միջախաղ՝ ծիծաղաշարժ փոքր պիես, որ սովորաբար կատարվում է դրամատիկական ներկայացման երկու գործողությունների միջև: 2. Ֆուգայի թեմայի առանձին անցումների միջև ընթացող միջանկյալ դրվագ. անվանվում է նաև ինտերլյուդիա:

ԻՆՏԵՐՄԵՑՑՈ [< интермеццо < իտալ. intermezzo ընդմիջում], գ. (երժշտ.): 1. Ազատ ձևի գործիքային ոչ մեծ երաժշտական հատված, երբեմն նվագախմբի համար, որ կատարվում է օպերայի տարբեր համարների միջև: 2. Բազմամաս ստեղծագործության երկու առավել կարևոր մասերի կամ մեկ մասի կոմպոզիցիայի հիմնական բաժինների միջև տեղ գրավող գործիքային պիես: 3. Նույնն է, ինչ որ ինտերմեդիան (1):

ԻՆՏԵՐՆԱՏ [< интернат < լատ. internus ներքին], գ. (խսկց.): 1. Գիշերօթիկ դպրոց: 2. Այդպիսի դպրոցի սովորողների կացարան:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ [< интернационал < լատ. inter + natio (nationis) ժողովուրդ, ազգ], գ. 1. (պատմ.): Պրոլետարիատի միջազգային միավորում: 2. Միջազգային պրոլետարիատի և ԽՄԿԿ-ի հիմնի անունը: 3. ած. Ինտերնացիոնալիզմի սկզբունքներին համապատասխանող, դրա վրա հիմնված: 4. Միջազգային:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ [< интернационализм < լատ.], գ. (քղք.): 1. (հնց.): Պրոլետարիատի միջազգային միասնությունն ու համերաշխությունը կապիտալիստական կարգերի տապալման և կոմունիզմի զարգացման համար մղվող պայքարում, պրոլետարական ինտերնացիոնալիզմ: 2. Բոլոր ժողովուրդների ազատության ու հավասարության սկզբունքը և դրա վրա հիմնված քաղաքականությունը, որ ուղեկցվում է պայքարով՝ հանուն ժողովուրդների բարեկամության ու համագործակցության:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ [< интернационалист < լատ.], գ. ած. Ինտերնացիոնալիզմի կողմնակից, ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության և քաղաքականության կողմնակից և դրանց սկզբունքները գործնականորեն կիրառող:

ԻՆՏԵՐՆԵՏ [< интернет < լատ. inter մեջ + անգլ. net ցանց], գ. (ինֆորմ.): Համակարգչային կապի տեղեկատվության միջոց, համացանց:

ԻՆՏԵՐՊԵԼՅԱՑԻԱ [< интерпелляция < ֆր. interpellation < լատ. interpellation < interpellare ընդհատել, բողոքարկել], գ. (իրավբ. քղք.): Պատգամավորի հարցում կառավարությանը կամ առանձին նախարարին, որի պատասխանը կարող է քննարկվել խորհրդարանում, պառլամենտում ևն:

ԻՆՏԵՐՊՈԼ [< Интерпол < ֆր. Interpol համառոտագրություն՝ Organisation internationale de police criminelle], գ. Միջազգային ոստիկանական կազմակերպություն, որը զբաղվում է փնտրվող հանցագործների հայտնաբերմամբ, միջազգային տեռորիզմի և հարցերով:

ԻՆՏԵՐՊՈԼՅԱՑԻԱ [< интерполяция < լատ. interpolatio նորոգում, փոփոխում, աղավաղում], գ. Միջարկում՝ 1. (լեզվբ.): Բառեր և բառակապակցություններ, որոնք դրվում են տեքստի մեջ արտագրման կամ խմբագրման ժամանակ: 2. (մաթ.): Ֆունկցիայի միջանկյալ նշանակությունների՝ արժեքների գտնելը նրա մի քանի հայտնի արժեքների հիման վրա:

ԻՆՏԵՐՊՐԵՏԱՑԻԱ [< интерпретация < լատ. interpretatio], գ. (հնց.): Մեկնաբանություն՝ 1. Ինչ-որ բանի բացատրություն, պարզաբանում, որևէ տեքստի վերլուծություն: 2. Բացատրական՝ լուսաբանող ու քննադատական դատողություններ որևէ բանի մասին:

ԻՆՏԵՐՍԵՔՍ [< интерсекс < գերմ. Intersex < լատ. inter + sexus սեռ], գ. (կենսբ.): Մարդ կամ կենդանի, որն ունի արական և իգական սեռի էակներին բնորոշ նշաններ:

ԻՆՏԵՐՎԱԼ [< интервал < լատ. intervallum միջոց, տարածություն], գ. (խսկց.): 1. Տարածություն՝ միջոց, արանք երկու առարկաների միջև: 2. Ընդմիջում: 3. (երժշտ.): Միաժամանակ կամ հաջորդաբար միմյանցից հետո հանած հնչյունների բարձրության տաբերությունը:

ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ [< интервенция < լատ. interventus միջամտություն], գ. (ռազմ. քղք.): Ներխուժում, միջամտություն՝ մեկ կամ մի քանի երկրների բռնի (հաճախ զինված) միջամտությունը ուրիշ երկրի ներքին գործերին (տերիտորիայի գրավման, հեղափոխական, ազատագրական շարժումների ճնշման նպատակով):

ԻՆՏԵՐՎՅՈՒ [< интервью < անգլ. interview], գ. (լրգ.): Հարցազրույց՝ մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի համար նախատեսված զրույց լրագրողի և մեկ այլ անձի միջև:

ԻՆՏԵՐՖԱԶ [< интерфаза < լատ. inter + հուն. phasis առաջացում, հայտնվելը], գ. (կենսբ.): Ինտերկինեզ՝ բջջի միտոտիկ բաժանման փուլ:

ԻՆՏԵՐՖԵՐԵՆՑԻԱ [< интерференция < լատ. iner + ferens (ferentis) տանող], գ. (ֆիզ.): Լուսային, հնչյունային ալիքների փոխադարձ ուժեղացում կամ թուլացում նրանց՝ իրար վրա գալու, իրար վրա բերվելու ժամանակ:

ԻՆՏԵՐՖԵՐՈՄԵՏՐ [< интерферометр < լատ. interfe(rens) + հուն. metreō], գ. (տեխ.): Չափիչ սարք, որի աշխատանքի հիմքում ընկած է ալիքների ինտերֆերենցիայի երևույթը:

ԻՆՏԵՐՖԵՐՈՆ[< интерферон < լատ. interferens], գ. (կենսբ.): Պաշտպանական սպիտակուց, որն արտադրվում է կաթնասունների և թռչունների օրգանիզմում, ինչպես նաև վիրուսներով վարակված բջջային կուլտուրաներում: Ճնշում է վիրուսների բազմացումը բջջում:

ԻՆՏԻՄ [< интимный < ֆր. intime < լատ. intimus ամենախոր], ած. 1. Խորապես անձնական բնույթ կրող, միայն իրեն վերաբերող, ուրիշներին անմատչելի՝ գաղտնի: 2. Զգացմունքները շոշափող, սիրային: 3. Մտերմական, մտերմություն արտահայտող՝ պարունակող, մտերմության վրա հիմնված:

ԻՆՏԻՖԱԴ(Ա) [< интифада < արաբ. intifado ապստամբություն], գ. (քղք.): Արաբների պայքարը Իսրայելի դեմ վերջինիս կողմից գրավյալ տարածքներում:

ԻՆՏՈԿՍԻԿԱՑԻԱ [< интоксикация < լատ. in մեջ + հուն. toxikon թույն], գ. (բշժկ.): Թունավորում՝ օրգանիզմի թունավորումը տարբեր նյութերով:

ԻՆՏՈՆԱՑԻԱ [< интонация < լատ. intonare բարձր արտահայտել], գ. 1. Առոգանություն, հնչերանգ՝ խոսքի առոգանության եղանակը, որ արտահայտում է խոսողի զգացմունքը, ապրումները, նրա վերաբերմունքը խոսքի առարկային, նրա հոգեկան կերտվածքի առանձնահատկությունները: 2. (լեզվբ.): Ելևէջավորում՝ խոսքի ռիթմային՝ մեղեդիական կառուցվածքը, խոսքի ձայնային ելևէջավորման ու շեշտավորման կառուցվածքը, ձայնատվություն: 3. (երժշտ.): Երգվող կամ նվագվող երաժշտական հնչյունների կատարման ճշտությունը (բարձրության տեսակետից), երգածի կամ նվագածի տոնի ճշգրտությունը:

ԻՆՏՐԻԳ [< интрига < ֆր. intrigue < լատ. intricare խճճել, խառնել], գ. (խսկց.): 1. Բանսարկություն՝ խառնակություն, չարակամություն: 2. (գրկն.): Հանգույց՝ իրադարձություն, որից զարգանում է գեղարվեստական երկի սյուժեն: 3. Անցողիկ սիրային կապ՝ հարաբերություն:

ԻՆՏՐԻԳԱՆ [< интриган < ֆր. intrigant], գ. (խսկց.): Բանսարկու՝ չարախոսությամբ, զրպարտությամբ, խառնակությամբ զբաղվող անձ:

ԻՆՏՐՈԴՈՒԿՑԻԱ [< интродукция < լատ. introductio ներածություն], գ. (երժշտ.): Նախերգանք՝ 1. Գործիքային երկի կամ նրա որևէ մասի կարճ ներածություն: 2. Օպերային կամ բալետային նախերգանքի տեսակ (սովորաբար կարճ և ազատ կառուցվածքով): 3. Վոկալ անսամբլ կամ խմբերգային տեսարան օպերայում, որը հաջորդում է նախերգանքին:

ԻՆՏՐՈՍՊԵԿՑԻԱ [< интроспекция < լատ. introspectare ներս նայել], գ. (հոգեբ.): Ինքնադիտում՝ սեփական ներհոգեկան վիճակները, գիտակցության ոլորտի բովանդակություններն ու գործողությունները դիտելու և ներքին ուշադրության միջոցով արտացոլելու երևույթը:

ԻՆՏՐՈՎԵՐՍԻԱ [< интроверсия < լատ. intro ներս + versere ուղղված լինել], գ. (գիտ. հոգեբ.): Անհատի կենտրոնացումը իր հույզերի, մտքերի, զգացումների, ներքին աշխարհի վրա, ինչն ուղեկցվում է շրջապատողների հետ շփումների թուլացմամբ:

ԻՆՏՐՈՎԵՐՏ [< интроверт < գերմ. Introvert < լատ.], գ. (հոգեբ.): Սեփական ապրումների, հույզերի ևն վրա կենտրոնացած անձ, որը համարյա չի շփվում իրեն շրջապատողների հետ:

ԻՆՏՐՈՒՑԻԱ [< интрузия < լատ. intrutio ներդրում], գ. (երկրբ.): 1. Երկրակեղևի խորքում մագմայի մարմին, որը ձևավորվել է Երկրի խոր հորիզոններում մագմայի ներդրման և պնդացման հետևանքով:

ԻՆՏՈՒԲԱՑԻԱ [< интубация < լատ. in մեջ + tuba խողովակ], գ. (բժշկ.): Ռետինե հատուկ խողովակի անցկացում բերանից կերակրափողով դեպի ստամոքս՝ որոշակի նպատակներով, ինչպես նաև հատուկ պլաստմասե խողովակի անցկացում շնչափողով դեպի թոքեր՝ արհեստական շնչառությունը ապահովելու համար:

ԻՆՏՈՒԻՏԻՎ [< интуитивный < լատ.], ած. (հոգեբ.): Ներըմբռնողական՝ ներըմբռնման վրա հիմնված:

ԻՆՏՈՒԻՏԻՎԻԶՄ [< интуитивизм < լատ.], գ. (փիլ.): Փիլիսոփայական ուսմունք, որն ինտուիցիան համարում է իմացության կարևորագույն աղբյուրն ու միջոցը, առանձնապես փիլիսոփայության համար:

ԻՆՏՈՒԻՑԻԱ [< интуиция < լատ. intueri ակնդետ, ուշադիր նայել], գ. Ներըմբռնում՝ փորձի հիման վրա տարերային, բնազդական զգացում, որ թելադրում՝

ներշնչում է ճիշտ ըմբռնում՝ կողմնորոշում՝ կռահում:

ԻՆՏՈՒԻՑԻՈՆԻԶՄ [< интуиционизм < լատ.], գ. (փիլ.): Փիլիսոփայական ուղղություն մաթեմատիկայի և տրամաբանության մեջ, որը հրաժարվում է ակտուալ անվերջության վերացարկումից և մաթեմատիկայի ու տրամաբանության հիմքը համարում է ինտուիտիվ համոզվածությունը՝ ինտուիցիան:

ԻՆՑԵՍՏ [< инцест < ֆր. inceste < լատ. incestus հանցագործ, մեղավոր], գ. (բժշկ. ազգգր.): Սեռական կապը ամենամոտ հարազատների միջև (ծնողների և երեխաների, եղբայրների և քույրերի):

ԻՆՑԻԴԵՆՏ [< инцидент < լատ. incidens (incidentis) պատահող], գ. (խսկց.): 1. Միջադեպ՝ կյանքի առանձին դեպք՝ պատահար՝ դիպված: 2. Կարճատև պատահական, կողմնակի իրողություն՝ հանգամանք: 3. (գրկն.): Գեղարվեստական երկի՝ որոշ ինքնուրույնություն ու ավարտվածություն ունեցող հատված՝ պատկեր, էպիզոդ:

ԻՆՈՒԼԻՆ [< инулин < լատ. inula կղմուխ], գ. (քիմ.): Բազմաշաքարների խմբի օրգանական նյութ, D-ֆրուկտոզի պոլիմեր: Պարունակվում է որոշ բույսերի մեջ, օգտագործվում է բժշկության մեջ:

ԻՆՖԱՆՏԻԼԻԶՄ [< инфантилизм < լատ. infantilis երեխայական], գ. (բժշկ.): Մանկայնություն՝ օրգանիզմի զարգացման կասեցում, որի դեպքում հասուն տարիքում մարդու մոտ պահպանվում են ֆիզիկական և հոգեկան զարգացման մանկական գծերը:

ԻՆՖԱՐԿՏ [< инфаркт < լատ. infarctus լիուլի], գ. (բժշկ.): Ծայրային զարկերակների խցանումից կամ կծկունքի հետևանքով հյուսվածքի կամ օրգանի մեջ գոյացող մահացած տեղամաս:

ԻՆՖԱՈՒՆԱ [< инфауна < անգլ. infauna < լատ. in + Fauna], գ. (կենսբ.): Ջրային օրգանիզմներ, որոնք ապրում են ջրավազանների հատակների նստվածքային շերտերում:

ԻՆՖԵԿՑԻԱ [< инфекция < լատ. inficere փչացնել, թույնել], գ. (բժշկ.): Վարակ՝ 1. Հիվանդությունների հարուցիչներ՝ մանրէներ: 2. Հիվանդություն հարուցող մանրէների ներթափանցումը մարմնի մեջ, վարակելը, վարակվելը:

ԻՆՖԻԼՏՐԱՏ [< инфильтрат < լատ. in ներս + filtratus քամվածք], գ. (կենսբ.): Օրգանիզմի հյուսվածքներում բջջային տարրերի կուտակումը ախտահարված օջախի շուրջը:

ԻՆՖԻՆԻՏԻՎ [< инфинитив < լատ. infinitivus], ած. գ. (լեզվբ.): Անորոշ դերբայ:

ԻՆՖԼՅԱՑԻԱ [< инфляция < լատ. inflatio ուռցնել], գ. (տնտսգ.): Թղթադրամի արժեզրկում՝ ապրանքաշրջանառության պահանջները գերազանցող չափերով թողարկվելու և շրջանառության մեջ մտցնելու հետևանքով, սղաճ, գնաճ:

ԻՆՖԼՅՈՒԱՑԻԱ [< инфлюация < լատ. influere ներս հոսել], գ. (երկրբ.): Մակերեսային ջրերի ներթափանցումը երկրի ընդերքի (տարբեր ճաքերի, անցքերի ևնի) մեջ:

ԻՆՖԼՈՒԵՆՑԱ [< инфлуэнца, инфлюэнца < իտլ. influenza], գ. (բժշկ.): Գրիպ՝ սուր վարակիչ հիվանդություն, որ արտահայտվում է շնչառական գործարանների բորբոքումով ու ջերմության բարձրացումով:

ԻՆՖՈՐՄԱՆՏ [< информант < լատ.], գ. (գիտ.): Մարդը (լեզվաբանության, հոգեբանության մեջ և այլ գիտություններում)՝ որպես որոշակի տեղեկատվության աղբյուր:

ԻՆՖՈՐՄԱՏԻԶԱՑԻԱ [< информатизация < լատ. informare տեղեկացնել,

պատկերել], գ. Տեղեկատվական համակարգերով համալրելը:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ [< информатика < լատ.], գ. (գիտ.): Գիտական ինֆորմացիայի կառուցվածքը և ընդհանուր հատկությունները, ինչպես նաև ստեղծման, փոխակերպման, հաղորդման և մարդկային գործունեության տարբեր ոլորտներում կիրառման օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ:

ԻՆՖՈՐՄԱՏՈՐ [< информатор < լատ.], ած. գ. (խսկց.): Իրազեկիչ՝ տեղեկատվություն տվող, իրազեկող:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ [< информация < լատ. informare], գ. (խսկց.): Տեղեկատվություն՝ 1. Տեղեկատվություն, հաղորդում որևէ բանի մասին: 2. Տեղեկատվություն՝ հաղորդում շրջապատի, նրա մեջ տեղի ունեցող երևույթների ևն մասին, որ ընկալում՝ ընդունում են կենդանի օրգանիզմը, ղեկավարող մեքենաները և այլ ինֆորմացիոն սիստեմները կենսագործունեության ու բանելու ընթացքում, իրազեկում:

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ [< информационный < լատ.], ած. Ինֆորմացիա(ներ) պարունակող՝ հաղորդող՝ տվող, տեղեկատվական:

ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ [< инфра ... < լատ. infra … ցածր, ենթա…], գ. (տնտսգ.): Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությանը սպասարկող տնտեսության ճյուղերի (խճուղիների, ջրանցքների, ջրամբարների, կամուրջների ևն) համակարգ:

ԻՆՖՐԱԿԱՐՄԻՐ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ – (ֆիզ.): Անտեսանելի ճառագայթներ, որոնք ներկայացնում են սպեկտրի տեսանելի հատվածի կարմիր ծայրից այն կողմ տարածվող մասը:

ԻՆՖՐԱԿԱՐՄԻՐ ՏԵԽՆԻԿԱ - (ֆիզ.): Կիրառական ֆիզիկայի և տեխնիկայի բաժին. զբաղվում է ինֆրակարմիր ճառագայթների ֆիզիկական հատկությունների հիման վրա գործող սարքերի մշակման և դրանք գիտական հետազոտություններում, արդյունաբերության մեջ, ռազմական գործում և այլ նպատակներով օգտագործելու հարցերով:

ԻՆՖՐԱԿՑԻԱ [< инфракция < լատ. in + fractio], գ. (տնտսգ.): Պարտավորագրում ամրագրված պայմաններից որևէ մեկի խախտումը:

ԻՆՖՐԱՁԱՅՆ, գ. Լսելի հաճախականությունների տիրույթից ցածր հաճախականություն ունեցող ձայնային նման առաձգական տատանումներ:

ԻՆՖՐԱՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ [< инфраструктура < լատ. infra + structura], գ. (տնտսգ.): Տնտեսության ենթակառուցվածք՝ ենթակառույց: Տե՛ս Ինֆրակառուցվածք:

ԻՆՖՈՒԶՈՐԻԱ [< инфузория < լատ. infuses ինչ-որ տեղ լցված՝ թափված], գ. (կենդբ.): Հողաթափիկ՝ միաբջիջ կենդանի, որն ապրում է խմելու կամ աղի ջրերում. նախակենդանիների կատարելագործված դաս:

ԻՇԵՄԻԱ [< ишемия < հուն. ischō կասեցնում եմ + haima արյուն], գ. (բժշկ.): Տեղային սակավարունություն՝ օրգանում կամ հյուսվածքում արյան ոչ բավարար քանակություն, որն արդյունք է երակի լուսանցքի մասնակի կամ լրիվ սեղմման:

ԻՇԻԱՍ [< ишиас < հուն. ischias կոնքի ցավ < ischion կոնք], գ. (բժշկ.): Նստուկի ջիղի՝ նստանյարդի ցավ:

ԻՈՆ [< ион < հուն. iōn գնացող], գ. (ֆիզ.): Էլեկտրականորեն լիցքավորված մասնիկ, որ գոյանում է ատոմի կամ ատոմական խմբի մեջ էլեկտրոնների ավելանալուց կամ պակասելուց:

ԻՈՆԻՏՆԵՐ, գ. (ֆիզ.): Իոնափոխանակիչներ՝ պինդ ջրում և օրգանական լուծիչներում գործնականորեն չլուծվող, բնական կամ սինթետիկ նյութեր, որոնք ընդու-

նակ են իոնափոխանակման:

ԻՈՆՈԼՈՐՏ, գ. (ֆիզ.): Մթնոլորտի վերին շերտը, որ պարունակում է մեծ քանակությամբ իոններ և ազատ էլեկտրոններ. գտնվում է Երկրի մակերևույթից 50 կմ-ից բարձր:

ԻՈՆՈՍՖԵՐԱ [< ионосфера < իոն + հուն. sphaire գունդ], գ. Տե՛ս Իոնոլորտ:

ԻՊՈՏԵԿԱ [< ипотека < հուն. hypothēkē գրավ], գ. (ֆին.): Տե՛ս Հիպոթեկա:

ԻՊՐԻՏ [< иприт < բելգիական Իպր քաղաքի անունից, որտեղ առաջին անգամ կիրառվել է գերմանացիների կողմից], գ. (քիմ.): Մարտական թունավոր գազ՝ մանանեխի գազ:

ԻՌԱՑԻՈՆԱԼ [< иррациональный < լատ. irrationalis ոչ բնական], ած. 1. (փիլ.): Օրինաչափությունից զուրկ և դրա հետևանքով էլ բանականության անհասանելի, տրամաբանական դատողությանը չբռնող՝ չհարմարվող, տրամաբանորեն չբացատրվող: 2. (մաթ.): Միավորով չչափվող և այդ պատճառով էլ ամբողջ կամ կոտորակային ռացիոնալ թվերով անարտահայտելի: 3. Բացի չորս հիմնական թվաբանական գործողություններից նաև արմատի հանում պարունակող:

ԻՌԱՑԻՈՆԱԼԻԶՄ [< иррационализм < լատ.], գ. (փիլ.): Փիլիսոփայական ուղղություն, որ իրականություն համարում է իռացիոնալ (1) և ժխտում գիտական տրամաբանական իմացությունը:

ԻՌԱՑԻՈՆԱԼԻՍՏ [< иррационалист < լատ.], գ. (փիլ.): Իռացիոնալիզմի կողմնակից՝ հետևորդ:

ԻՌԵԳՈՒԼՅԱՐ [< иррегулярный < լատ. irregularis], ած. (հնց.): 1. Անկանոն: 2. Անկազմակերպ:

ԻՌԵԴԵՆՏԻԶՄ [< ирредентизм < իտլ. irredento չազատագրված, ուրիշի տիրապետության տակ գտնվող], գ. (պատմ.): Հասարակական-քաղաքական հոսանք Իտալիայում XIX դ. վերջին XX դ. սկզբին՝ իտալացի բնակչություն ունեցող սահմանային հողերը (Տրիեստը, Տրենտինոն ևն) Իտալիային միացնելու համար:

ԻՌԻԳԱՑԻԱ [< ирригация < լատ. irrigatio], գ. 1. (գղտնտ.): Ոռոգում՝ դաշտերի ոռոգելը: 2. (բժշկ.): Լվացում՝ վերքի ևն լվանալը:

ԻՍԼԱՄ [< ислам < արաբ. islam հնազանդություն], գ. 1. (կրոն.): Մահմեդական կրոնը: 2. Մահմեդական կրոնը դավանող, մուսուլման: 3. (հվք.): Մահմեդականների ամբողջությունը, մահմեդականություն:

ԻՍԿ [< ռուս. иск], գ. (իրավք.): Բողոք՝ հայց՝ հայցադիմում, որը իրավական հիմունքով ներկայացվում է բողոքարկողի կողմից՝ պայմանագրի պայմանները խախտելու դեպքում:

ԻՍՏԵԲԼԻՇՄԵՆՏ [< истеблишмент < անգլ. establishment < լատ. stabilire կայունացնել], գ. (քղք. հզվդ.): Հասարակության վերնախավը:

ԻՎԱՍԻ [< иваси < ճապ. ivasi], գ. (կենդբ.): Ծովատառեխ (հեռավորարևելյան):

ԻՎՐԻՏ [< иврит < գերմ Iwrith < հուն. Ebraios < արամերեն ibhray < ibhri, բառացի՝ Իսրայելի զավակներ < հնագույն ժողովրդի անունից, որոնք ապրել են Միջերկրական ծովի հարավարևելյան մասում], գ. (լեզվբ.): Ժամանակակից Իսրայելի պետական լեզուն, հին հրեերենի խոսակցական տարբերակը, որով մասամբ գրված են Հին կտակարանի որոշ գրքեր. պատկանում է սեմական լեզուների հյուսիսային ճյուղին:

ԻՏԵՐԲԻՈՒՄ [< иттербий < Շվեդական Իտերբի քաղաքի անունից, որտեղ այն հայտնաբերվել է], գ. (քիմ.): Y6, պարբերական համակարգի III խմբի քիմիական տարր, լանթանիդ:

ԻՏՐԻՈՒՄ [< иттрий < Շվեդական Իտերբի քաղաքի անունից], գ. (քիմ.): Y, պարբերական համակարգի V պարբերության III խմբի քիմիական տարր. կիրառվում է միջուկային տեխնիկայում, իսկ այլումինի հետ համաձուլվածքը՝ ինքնաթիռաշինության մեջ:

ԻՐԻՍ [< ирис < հուն. iris ծիածան], գ. 1. (բսբ.): Հիրիկազգիների ընտանիքին պատկանող գեղազարդային ծաղկաբույս՝ մեծ, գեղեցիկ ծաղիկներով: 2. (կզմխս.): Աչքի ծիածանագույն թաղանթը:

ԻՐՈԿԵԶ [< ирокез < հնդկց.], գ. (ազգգր.): Ցեղակից լեզուներով խոսող հնդկացիական ցեղերի խումբ Հյուսիսային Ամերիկայում:

ԻՐՈՆԻԱ [< ирония < հուն. eirōneia], գ. (խսկց.): Հեգնանք՝ 1. Նուրբ՝ սքողված ծաղր: 2. Հեգնական՝ ծաղրական խոսք՝ արտահայտություն՝ վերաբերմունք, ծաղրանք: 3. (գրկն.): Ոճական հնար, երբ որևէ երևույթ ծաղրվում է արտաքուստ գովաբանելու միջոցով: Կոչվում է նաև անտիֆրազիս:

ԻՔՍ [< икс < լատ. x տառ], գ. 1. Լատիներեն այբուբենի նախավերջընթեր (վերջից երրորդ) տառի անունը (x): 2. (մաթ.): Այդ տառով նշանակվող անհայտ մեծություն: 3. Անհայտ կամ մտացածին անձի անուն, որը չեն ուզում տալ:

Լ

ԼԱԲԻԼՈՒԹՅՈՒՆ [< лабильность < լատ. labilis անհաստատ, անկայուն], գ. (կզմխս.): Ֆունկցիոնալ շարժունություն՝ նյարդային և մկանային հյուսվածքների ֆունկցիոնալ ակտիվությունն ուղեկցող տարրական ռեակցիաների արագությունը:

ԼԱԲԻՐԻՆԹՈՍ [< лабиринт < հուն. labyrinthos], գ. Բավիղ՝ 1. (դից.): Ըստ հին հունական ավանդության՝ Կրետե կղզում Դեդալոսի կառուցած պալատը՝ բազմաթիվ շենքերով ու խճճված միջանցքներով, որի մեջ մտնողը մոլորվում էր և չէր կարողանում դուրս գալ: 2. (կզմխս.): Մարդու և ողնաշարավոր կենդանիների ներքին ականջը, որ կատարում է լսողության և հավասարակշռության ֆունկցիա: 3. *փխբ.* Խճճված ու խառնաշփոթ վիճակ: 4. Խճճված՝ միմյանց խաչավորվող, միահյուսվող ճանապարհների անցուղի:

ԼԱԲԻՐԻՆԹԱԲՈՐԲ, գ. (բժշկ.): Ներքին ականջի հիվանդություն:

ԼԱԲԻՐՆԹԱԿԵՐՊ, ԼԱԲԻՐԻՆԹԱՁԵՎ, ԼԱԲԻՐԻՆԹԱՆՄԱՆ, ած. Լաբիրինթոսի ձև ունեցող, լաբիրինթոսի տպավորություն թողնող, լաբիրինթոսի նման:

ԼԱԲՈՐԱՆՏ [< лаборант < լատ. laborans (laborantis) աշխատող], գ. 1. Գիտական հիմնարկության կամ ուսումնական հաստատության լաբորատորային աշխատակից: 2. Պրոֆեսորի կամ դասախոսի լաբորատոր աշխատանքների համար անհրաժեշտ սարքերը՝ նյութերը նն պատրաստող աշխատակից:

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ [< лаборатория < լատ. laboratorium < laborare աշխատել], գ. 1. Հիմնարկության՝ ձեռնարկության նն բաժին, որ զբաղվում է արտադրանքի, նյութերի նն վերլուծումով ու փորձարկումով: 2. Շենք կամ շենքի բաժանմունք, որտեղ կատարվում են փորձառական ու փորձարկման աշխատանքներ, ինչպես և դրանց համար անհրաժեշտ կահավորանքն ու սարքավորումը: 3. *փխբ.* Որևէ գործունեության ներքին կառուցվածքը՝ պայմանները նն: 4. Աշխատանոց:

ԼԱԲՐԱԴՈՐ [< лабрадор < Կանադայի Լաբրադոր թերակղզու անվանումից], գ. 1. (հնք.): Դաշտային ապարի մի տեսակը՝ մուգ մոխրագույն: 2. (կենդբ.): Ճառայողական խոշոր շան տեսակ:

ԼԱԲՐԱԴՈՐԻՏ [< лабрадорит < հատուկ անունից], գ. (հնք.): Ամբողջապես լաբրադորից կազմված ապար, լաբրադորաքար:

ԼԱԳ [< лаг < հոլանդ., անգլ. log], գ. (ծով.): Նավի ընթացքի արագությունը կամ անցած տարածությունը չափելու սարք:

ԼԱԳԹԻՆԳ [< лагтинг < նորվեգ. lagting], գ. (քղք.): Նորվեգական պառլամենտի վերին պալատը:

ԼԱԴ [< հին սլավ. лад համաձայնեցվածություն, կարգավորվածություն], գ. (երժշտ.): Երաժշտական հնչյունաշարքի կառուցման եղանակը, հնչյունների դասավորությունը, երաժշտական երկի տոնայնությունը՝ կառուցվածքը:

ԼԱԶԱՐԵԹ [< лазарет < ֆր. lazaret < իտլ. lazzaretto], գ. (հնց.): Ջորամասին, արշավախմբին կամ որևէ հանրակացարանին կից հիվանդանոց:

ԼԱԶԵՐ [< лазер < անգլ. laser, հմռտգ. Light Amplification by Stimulated Emission of Radiation լույսի ուժեղացում ստիպողական ճառագայթման հետևանքով], գ. (ֆիզ.): Սարք, որում իրագործվում է օպտիկական տիրույթի մեներանգ էլեկտրամագնիսական ալիքների գրգռում՝ ստիպողական ճառագայթման հետևանքով:

ԼԱԶՈՒՐ [< лазурь < արաբ.], գ. 1. Բաց կապույտ գույն: 2. Երկնքի՝ ծովի գույնը: 3. Բաց կապույտ գույնի ներկ: 4. ած. Երկնագույն: 5. (բնստղծ.): Ջինջ, հստակ, մաքուր:

ԼԱԶՈՒՐԻՏ [< лазурит < արաբ. lazaward < ուշ լատ. lasur կապույտ քար], գ. (հնք.): Լաջվարդ՝ մուգ կապույտ գույնի միներալ՝ լապիս-լազուր, հանդիպում է Արևելյան Սիբիրում, Պամիրում են:

ԼԱԿ [< лак < հնդկ. lakh], գ. (ֆին.): Հարյուր հազար հնդկական ռուպի:

ԼԱԿԵՅ [< лакей < ֆր. laquais], գ. (հնց.): 1. Սպասավոր՝ տնային ծառա: 2. *փխբ.* Ստրկամիտ՝ ծառայամիտ՝ ստորաքարշ մարդ:

ԼԱԿՄՈՒՍ [< лакмус < հոլանդ. lakmoes], գ. (քիմ.): Ծովային քարաքոսներից ստացվող ներկ՝ թթուներ և հիմքեր հայտնաբերող և զատորոշող ռեակտիվ:

ԼԱԿՄՈՒՍԱԹՈՒՂԹ, գ. Լակմուսի լուծույթով տոգորված թուղթ, որ թթուների ազդեցությամբ կարմիր, իսկ հիմքերի ազդեցությամբ կապույտ գույն է ստանում:

ԼԱԿՇՄԻ [< лакшми < հնդկ.], գ. (դից.): Երջանկության և գեղեցկության աստվածուհին բրահմայական կրոնում:

ԼԱԿՈԼԻԹ [< лакколит < հուն. lakkos փոս + lithos քար], գ. (երկրբ.): Սնկաձև ինտրուզիվ մարմին, որի հատակը և տանիքը ներդաշնակ են պարփակող ապարների շերտավորությանը:

ԼԱԿՈՆԻԶՄ [< лаконизм < հուն. lakōnismos հակիրճություն], գ. Կարճաբանություն՝ կարճ ու կտրուկություն, մտքի կարճառոտություն, ոչ երկարաբանություն, որով աչքի էին ընկնում հին Լակոնիայի բնակիչները՝ սպարտացիները:

ԼԱԿՈՆԻԿ [< лаконический < հուն.], ած. 1. Կարճառոտ, ոչ երկարաբան: 2. Կարճ ու կտրուկ:

ԼԱԿՏԱՄՆԵՐ [< лактамы < հուն.] գ. (քիմ.): Ամինաթթուների ներքին ցիկլավոր ամիդներ:

ԼԱԿՏԱՑԻԱ [< лактация < լատ. lactare կաթ տալ], գ. 1. Դիեցում՝ ձագին՝ երեխային կաթ տալը: 2. (կզմխս.): Կաթնատվություն՝ կրծքի կաթնարտադրություն:

ԼԱԿՏՈ... [< лакто... < լատ. lac(lactis) կաթ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերի կապը կաթի հետ:

ԼԱԿՏՈԲԱՑԻԼԻՆ [< лактобациллин < լատ. lac կաթ + bacillum փայտիկ], գ. 1. (կենսբ.): Հատուկ սնկիկ, որ մակարդում է կաթը և նրան բուժական հատկություններ տալիս: 2. Այդ սնկիկով պատրաստած մածուն:

ԼԱԿՏՈԶ [< лактоза < լատ. lac (lactis) կաթ], գ. (կենսբ.): Կաթնաշաքար:

ԼԱԿՏՈՄԵՏՐ, գ. (տեխ.): Կաթի խտությունը չափող սարք, կաթնաչափ:

ԼԱԿՏՈՆՆԵՐ, գ. (տեխ.): Օքսիթթուների ներքին ցիկլավոր էսթերներ:

ԼԱԿՐԻՄԱՏՈՐ [< лакриматор < լատ. lacrima արցունք], գ. (տեխ.): Արցունքաբեր թունավոր նյութ:

ԼԱԿՐԻՄՈԶԱ [< лакримоза < լատ. lacrimosus լաց լինելու աստիճանի հասնող < lacrima արցունք], գ. (երժշտ.): Ռեքվիեմի մաս:

ԼԱԿՈՒՆԱ [< лакуна < ֆր. lacune < լատ. lacuna խորություն, անդունդ], գ. 1. (կզմխս.): Փոքրիկ փոս: 2. (լեզվբ.): Բաց թողնված տեղ, բացատ, բաց (ձեռագրերում):

ԼԱՀՄԱՋՈ [< лагмаджо < արաբ. la'ahmajin < la'ahm միս + ajin խմոր], գ. (խոհր.): Արևելյան ուտեստ՝խմորի բարակ շերտերով, որոնք պատում են համեմված ծեծած մսով:

ԼԱՄԱ I [< лама < իսպ. llama < կեչուա լեզվից], գ. (կենդբ.): Ուղտայծ՝ ուղտերի ընտանիքին պատկանող հարավամերիկյան բեռնակիր կենդանի. միսը համեղ կերակուր է, իսկ բուրդը օգտագործվում է գործվածքագործության մեջ:

ԼԱՄԱ II [< лама < տիբեթ. blama բարձրագույն, երկնային], գ. (կրոն.): Բուդդայական կրոնավոր՝ Տիբեթում և Մոնղոլիայում:

ԼԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. 1. Բուդդայականության մահայանա ուղղության տարատեսակ: 2. Լամայական լինելը:

ԼԱՄԱԻԶՄ [< ламаизм < ֆր. lamaïsme < տիբեթ.], գ. (կրոն.): Տիբեթում VII դ. բուդդայականության ձև, որը XVI-XVIII դդ. լայն տարածում ուներ Մոնղոլիայում:

ԼԱՄԱՐԿԻԶՄ [< ламаркизм < ֆրանսիացի բնագետ Ժ. Բ. Լամարկի (1744-1829թթ.) անունից], գ. Առաջին էվոլյուցիոն ամբողջական տեսությունը կենդանի բնության զարգացման մասին, որի հիմնական գաղափարները շարադրված են Ժ. Բ. Լամարկի «Կենդանաբանության փիլիսոփայություն» աշխատության մեջ:

ԼԱՄԲԱԴԱ [< ламбада < պորտ. lambada, բառացի՝ ճիպոտի՝ մտրակի հարված], գ. (արվ.): Լատինաամերիկյան զուգապար (կոնքերի յուրահատուկ շարժումներով) և դրա երաժշտությունը:

ԼԱՄԲԵՐՏ [< ламберт < գերմ. գիտնական Յո. Հ. Լամբերտի (J. H. Lambert 1728-1777թթ.) անունից], գ. Պայծառության արտահամակարգային միավոր. կիրառվում է գլխավորապես ԱՄՆ-ում:

ԼԱՄԵՆՏԱՑԻԱ [< ламентация < լատ. lamentatio բողոք], գ. (հզվդ.): Տրտունջ, վայնասուն, բողոք, գանգատ:

ԼԱՄԻՆԱՐ ՀՈՍԱՆՔ [< ламинарное (< լատ. lamina շերտ, թիթեղ) движение] - Հեղուկի կամ գազի կարգավորված հոսանք, երբ հեղուկը (գազը) տեղաշարժվում է հոսանքի ուղղությանը զուգահեռ շերտերով:

ԼԱՄԻՆԱՑԻԱ [< ламинация < լատ. lamina շերտ, թիթեղ], գ. (տեխ.): Թափանցիկ պաշտպանական թաղանթի անցկացնելը գրքի կազմի, փաստաթղթերի ենի վրա:

ԼԱՄՊ [< лампа < անգլ. lamp], գ. 1. Զանազան ձևերի և հորինվածքների սարք՝ բնակարանները լուսավորելու համար, ճրագ: 2. Էլեկտրալամպ՝ զանազան ձևի ու հորինվածքի սարք՝ էլեկտրական լուսավորման համար: 3. Հատուկ նպատակի ծառայող նույնպիսի սարք, որ օգտագործվում է արտադրության զանազան ճյուղերում:

ԼԱՄՊԱԳՈՐԾ, ած. գ. Լամպերի արտադրության աշխատող:

ԼԱՄՊԱԴԱ [< лампада < միջին հուն. lampada < հուն. lampas (lampados)], գ. 1. (եկեղ. հնց.): Կանթեղ: 2. (բնստղծ.): Ճրագ, լապտեր:

ԼԱՄՊԱՍ [< лампас < ֆր. lampas], գ. Շքերիզ՝ համազգեստային տաբատի արտաքին կարի վրա կարվող գունավոր երիզ՝ ժապավեն:

ԼԱՄՊԻՈՆ[< лампион < ֆր. lampion], գ. (մանգ.): Գունավոր թղթից կամ ապակուց պատրաստված փոքրիկ լապտեր՝ հրավառության համար:

ԼԱՄՊՐՈՖԻՐ [< лампрофир < հուն. lampros փայլուն + porphyreos ծիրանագույն], գ. (հնք.): Մելանոկրատ երակային մագմատիկ ապար:

ԼԱՅՆԵՐ [< лайнер < անգլ. liner < line գիծ], գ. Հանրանավ, գծանավ՝ որոշակի երթուղիով երթևեկող ծովային կամ օվկիանոսային խոշոր նավ (մարդատար կամ ապրանքատար) կամ ինքնաթիռ:

ԼԱՅՆՍՄԵՆ [< лайнсмен < ամերիկյան անգլ. linesman < անգլ. line գիծ + man մարդ], գ. (սպորտ. հզվդ.): Ֆուտբոլում, հոկեյում՝ կողային մրցավար, ով օգնում է գլխավորին:

ԼԱՆԳ-ԲԼՈ [< ланг-бло < ֆր. langue-bleu], գ. (լեզվբ.): Արհեստական լեզու՝ վոլապյուկի ձևափոխությունը.հնարել է Բոլլաքը (Bollack) 1899 թ. Փարիզում:

ԼԱՆԳԵՏ [< лангет < ֆր. langette լեզվակ], գ. (խոհր.): Թակածո՝ մսով կերակուր. պատրաստվում է թակածո մսի նեղ շերտով:

ԼԱՆԳՈՒՍՏ [< лангуст < ֆր. langouste], գ. (կենդբ.): Ուտելի ծովային խեցգետին:

ԼԱՆԴՇԱՖՏ [< ландшафт < գերմ. Landschaft], գ. 1. Բնանկար: 2. (երկրբ.): Բնատեսարան՝ տեղանքի ընդհանուր տեսարանը: 3. (աշխգր.): Երկրի մակերևույթի տարածություն՝ տեղամաս, որին բնորոշ է ռելիեֆի, կլիմայի, հողի, բուսական ու կենդանական աշխարհի որոշ համակցություն:

ԼԱՆԴՈ [< ландо < ֆր. landau < գերմ. Landau < Բավարիայի Լանդաու (Landau) տարածքի անունից], գ. (խսկց.): 1. Չորստեղանի բաց կառք: 2. Մարդատար ավտոմեքենայի տեսակ, որի ծածկը բացվում է միայն հետին նստատեղերի մասում:

ԼԱՆԴՍԿՆԵԽՏ [< ландскнехт < գերմ. Landsknech < Land երկիր + Knecht վարձու աշխատող], գ. 1. (պատմ.): XV-XVII դդ. վարձու զինվոր, վարձկան (Արևմտյան Եվրոպայում, նախապես՝ Գերմանիայում): 2. *փխբ.* (արհմրհ.): Վարձկան:

ԼԱՆԴՍՏԻՆԳ [< ландстинг < դան. և շվեդ. landsting], գ. (քղք.): 1. Պառլամենտի անվանումը Ալանդյան կղզիներում: 2. Մարզային ինքնավարության ներկայացուցչական մարմիններ Շվեդիայում: 3. Մինչև 1953 թ. պառլամենտի Վերին պալատի անվանումը Դանիայում:

ԼԱՆԴՎԵՐ [< ландвер < գերմ. Landwehr], գ. (պատմ.): 1. Աշխարհազորայիններ Պրուսիայում՝ Նապոլեոնի դեմ կռվի ժամանակ: 2. Գերմանիայում XIX դարի վերջում XX դարի սկզբում զինվորական արտահերթ կազմավորումներ:

ԼԱՆԴՏԱԳ [< ландтаг < գերմ. Landtag < Land երկիր + Tag ժողով], գ. (պատմ.): 1. Դասային ներկայացուցչական մարմիններ միջնադարյան գերմանական պետություններում: 2. Ընտրովի ներկայացուցչական, օրենսդրական մարմիններ Ֆեդերատիվ Գերմանիայում և Ավստրիայում: 3. Պառլամենտը Լիխտենշտեյնում:

ԼԱՆԴՐԱՍ [< ландрас < դան. Landrace < land երկիր + race ցեղ], գ. (կենդբ.): Դանիայում բուծած բեկոնային խոզերի ցեղ և այդ ցեղի խոզ:

ԼԱՆԹԱՆ [< лантан < հուն. lanthanō թաքնվում եմ], գ. (քիմ.): Պարզ մետաղային քիմիական տարր La: Կիրառվում է չժանգոտող և ջերմակայուն պողպատներ, թուջ, մանգանի և այլումինի համաձուլվածքներ ստանալու համար:

ԼԱՆԹԱՆԻԴՆԵՐ [< лантаниды < լանթան + հուն. eidos տեսակ, կերպար], գ. (քիմ.): Լանթանից հետո 58-ից մինչև 71 կարգահամարով 14 քիմիական տարրե-

րից կազմված ընտանիք, որոնք տեղաբաշխված են պարբերական համակարգի VI պարբերության մեջ:

ԼԱՆՈԼԻՆ [< ланолин < լատ. lana բուրդ + ol(eum) յուղ], գ. (կենսբ.): Բրդաճարպ՝ դեղին գույնի յուղ, որը ստանում են ոչխարի բուրդը լվանալիս, օգտագործվում է օճառի, քսուքների, օծանելիքների արտադրության մեջ:

ԼԱՆՉ [< ланч, ленч < անգլ. lunch < luncheon < բարբառային lunch, բառացի՝ կերակրի կույտ], գ. (խսկց.): Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում՝ երկրորդ, ավելի ուշ նախաճաշ:

ԼԱՆՑԵՏ [< ланцет < գերմ. Lanzett < լատ. lancea նիզակ], գ. (խսկց.): Նշտար՝ վիրաբուժական սուր դանակ:

ԼԱՉՈՒԳԱ [< лачуга < թուրք. alaču, alačyk վրան], գ. (խսկց.): Հյուղ, աղքատ խրճիթ:

ԼԱՊԻԼՆԵՐ [< лапилли < լատ. lapillus մանր քար], գ. (հնք.): Հրաբխային օջախի պատերից պոկված հին լավաների և ապարների բեկորներ, որոնք դուրս են նետվում ժայթքման ժամանակ:

ԼԱՊՇԱ [< ռուս. лапша], գ. (խսկց.): 1. Ցորենի ալյուրից պատրաստված մթերք՝ փոքրիկ շերտիկների ձևով՝ դդմաճի (արիշտայի) նման: 2. Դրանով պատրաստած ջրիկ կերակուր:

ԼԱՊՍՈՒՍ, ԼՅԱՊՍՈՒՍ [< ляпсус < լատ. lapsus սխալ քայլ, սայթաքում], գ. Սայթաքում, կոպիտ, անմիտ սխալանք:

ԼԱՊՏՈՊ [< лаптоп < անգլ. to laptop < lap ծնկների վրա պահել], գ. (տեխ.): Ինքնավար սնուցմամբ դյուրակիր համակարգիչ:

ԼԱՍՍՈ [< лассо < ֆր. lasso < իսպ. lazo], գ. Օղապարան՝ պարան, որը օգտագործում են ամերիկյան ձիավոր հովիվները՝ կենդանիներ որսալու համար:

ԼԱՍՏ [< ласт < գերմ. Last ծանրություն, բեռ], գ. 1. Մասսայի միավոր մինչև 2000 կգ, օգտագործվում է մի շարք մերձբալթյան երկրներում՝ նավերով տեղափոխվող բեռների համար: 2. Կողք կողքի իրար կապված գերաններ, որ ջրով փոխադրում են մի տեղից մի ուրիշ տեղ: 3. Այդ ձևով ստեղծված նավակ՝ ջրով մարդ կամ բեռներ փոխադրելու համար: 4. Գերանակապ կամուրջ:

ԼԱՎԱ [< лава < իտլ. lava], գ. 1. (երկրբ.): Հրաբխից ժայթքող հրահեղուկ զանգված: 2. *փխբ.* Հոծ՝ զանգվածեղ բազմություն: 3. *փխբ.* Որևէ բանի բուռն ու հավաքական միասնություն կազմող դրսևորում՝ ժայթքում: 4. *փխբ.* Հոսող՝ տարածվող և ամեն ինչ լափող՝ ոչնչացնող բան:

ԼԱՎԱՆԴԱ [< лаванда < լատ. lavanda, lavandula], գ. (բսբ.): Նարդոս՝ շրթնածաղիկների ընտանիքին պատկանող թուփ, փաղանգամուշկ, հուսամ. բազմացվում է Պրովանսում, Ղրիմում, Կուբանում և Մոլդովայում, ծաղիկներից ստանում են հոտավետ յուղ, որն օգտագործվում է օծանելիքների արտադրության մեջ:

ԼԱՎԻՆԱ [< лавина < գերմ. Lawine], գ. (խսկց.): 1. Հուսին՝ ձյան մեծ զանգվածակույտ: 2. *փխբ.* Հեղեղ, սրընթաց հոծ զանգված:

ԼԱՎՍԱՆ [< ռուս. ла(боратория) в(ысших молекулярных) с(оединений)

А(кадемии) Н(аук) բառերի հապավումը], գ. 1. Արհեստական՝ սինթետիկ բուրդ: 2. Դրանից պատրաստված գործվածք, զգեստ ևն:

ԼԱՎՍԱՆԱԹԱՂԱՆԹ, 1. գ. Լավսանից պատրաստված թաղանթ: 2. ած. Այդպիսի թաղանթով պատված, լավսանե թաղանթ ունեցող:

ԼԱՏԵՔՍ [< латекс < լատ. latex հեղուկ], գ. (քիմ.): Պոլիմերների ջրային դիսպերսներ: Ամենաշատը տարածված են կաուչուկների լատեքսները: Բնական լատեքսը կաուչուկատու բույսերի (բրազիլական հեվեայի) կաթնահյութերն են. պարունակում է 34-37% կաուչուկ, 52-60% ջուր, ինչպես նաև քիչ քանակությամբ սպիտակուցներ, խեժեր, շաքարներ և հանքային նյութեր:

ԼԱՏԻՆԻԶՄ [< латинизм < լատ. latinus], գ. (լեզվբ.): Լատինաբանություն՝ բառ, բառաձև ևն, որը հատուկ է լատիներենին:

ԼԱՏԻՖՈՒՆԴԻԱ [< латифундия < լատ. latifundium < latus ընդարձակ + fundus կալվածք], գ. (պատմ.): Խոշոր հողային մասնավոր տիրույթ. առաջացել է Հին Հռոմում մ.թ.ա. II դարում:

ԼԱՏՈՒՆ [< латунь < գերմ. Latun], գ. (արտդր.): Արույր՝ պղնձի համաձուլվածք ցինկի, երբեմն նաև ուրիշ մետաղների (երկաթ, կապար ևն) խառնուրդով:

ԼԱՐԳԵՏՈ [< ларгетто < իտլ. larghetto], գ. (երժշտ.): 1. Չափավոր դանդաղ տեմպ՝ անդանտեին մոտ: 2. Այդպիսի տեմպով գրված երաժշտական երկ:

ԼԱՐԳՈ [< ларго < իտլ. largo լայն], գ. (երժշտ.): Երաժշտական ամենադանդաղ տեմպը. այս տեմպով են գրվում սովորաբար հանդիսավոր-դրամատիկական բնույթի կամ թախծոտ երկերը:

ԼԱՐԻՆԳԻՏ [< ларингит < հուն. larynx (laryngos) կոկորդ], գ. (բժշկ.): Կոկորդաբորբ՝ կոկորդի լորձաթաղանթի և առանձնապես նշագեղձերի բորբոքում:

ԼԱՐԻՆԳՈԼՈԳ [< ларинголог < հուն.], գ. (բժշկ.): Կոկորդաբան՝ լարինգոլոգիայի մասնագետ:

ԼԱՐԻՆԳՈԼՈԳԻԱ [< ларингология < հուն.], գ. (բժշկ.): Կոկորդաբանություն՝ գիտություն կոկորդի հիվանդությունների մասին:

ԼԱՐԻՆԳՈՍԿՈՊ [< ларингоскоп < հուն. larynx (laryngos) + skopeō նայում եմ], գ. (տեխ.): Կոկորդադիտակ՝ կոկորդը ուսումնասիրելու գործիք:

ԼԱՐԻՆԳՈՍԿՈՊԻԱ [< ларингоскопия < հուն.], գ. (բժշկ.): Կոկորդադիտում՝ զանազան գործիքների միջոցով կոկորդը հետազոտելու մեթոդ:

ԼԱՐԻՆԳՈՖՈՆ [< ларингофон < հուն. larynx + phōnē հնչյուն, ձայն, աղմուկ, խոսք, բառ], գ. (տեխ.): Ձայնալարերի և կոճիկների մեխանիկական տատանումները էլեկտրականի փոխակերպող հատուկ կառուցվածքի միկրոֆոն: Կիպ հպում են կոկորդին: Օգտագործվում է գերաղմկաշատ պայմաններում՝ հեռախոսային կապ իրականացնելու համար:

ԼԱՈՒՏԱՐ [< лэутар < ռում. lautar], գ. (պատմ.): Ռումինական, մոլդավական թափառական երաժիշտ-երգիչ:

ԼԱՈՒՐԵԱՏ [< лауреат < լատ. laureatus դափնեպսակավոր], ած. գ. (խսկց.): 1. Դափնեկիր՝ դափնեպսակ կրող (մարդ): 2. *փխբ.* Որևէ մրցանակի արժանացած, մրցանակակիր:

ԼԱՔ [< лак < գերմ. Lack սկզբնաղբյուրը՝ սանսկրիտ laksha], գ. (քիմ.): 1. Խեժի կամ նիտրոցելյուլոզի լուծույթ, որ հեղուկ վիճակում բարակ շերտով քսում են առարկայի մակերեսին՝ փայլ տալու, փչացումից պաշտպանելու նև համար: 2. Առարկայի մակերեսին չորացած և նրան փայլ տվող այդ հեղուկի շերտը:

ԼԱՖԵՏ [< лафет < ֆր. lafette], գ. (ռազմ.): Հրետասայլ՝ հրետանային զենքի հաստոց:

ԼԵԳԱԼ [< легальный < լատ. legalis օրինական], ած. (իրավք.): 1. Օրինական՝ օրինականացված, օրենքով ճանաչված՝ թույլատրված: 2. Օրենքով պահվող հնարավորություններից օգտվող, այդ հնարավորություններն օգտագործելու վրա հիմնված:

ԼԵԳԱԼԻԶԱՑԻԱ [< легализация < լատ.], գ. (իրավք. քղք.): Լեգալացում՝ օրինականացում՝ իրավական մարմինների կողմից կազմակերպության օրինական գործունեության ճանաչումը:

ԼԵԳԱՎԻ [< легавый < լեհ. legawy pies < ֆր. թարգմանություն chien couchant, բառացի՝ պառկած շուն], գ. 1. (կենդբ.): Որսկան, որսի շուն: 2. (արհմրհ.): Խուզարկու, գաղտնի ոստիկան, մատնիչ:

ԼԵԳԱՏ [< легат < լատ. legatus առաքված, դեսպան], գ. 1. (պատմ.): Հանրապետական շրջանի Հռոմում՝ ծայրամասերի կառավարիչներին կցված պաշտոնական անձ: 2. Հռոմի պապի դիվանագիտական ներկայացուցիչ:

ԼԵԳԱՏԻՍԻՄՈ [< легатиссимо < իտլ. legatissimo], մկ. (երժշտ.): Լեգատոյի ամբողջական, կատարյալ կատարումը:

ԼԵԳԱՏՈ [< легато < իտլ. legato կապված], մկ. (երժշտ.): Սահուն ու կապակցված առանց ընդհատումի՝ մեկ հնչյունից մյուսին անցնելով:

ԼԵԳԵՆԴ [< легенда < լատ. legenda այն, ինչ պետք է կարդացվի], գ. Ավանդազրույց՝ 1. (գրկն.): Բանավոր ավանդույթների վրա հիմնված բանաստեղծական պատմություն՝ ասք որևէ պատմական կամ մտացածին անձի կամ դեպքի մասին: 2. Մտացածին պատմություն որևէ անձի կամ դեպքի մասին: 3. *փխբ.* Հնարովի բան, անիրական՝ մտածած խոսք՝ զրույց, առասպել: 4. Քարտեզի լեգենդ՝ քարտեզում գործածված նշանների համակարգ:

ԼԵԳԵՆԴԱՐ [< легендарный < լատ.], ած. 1. Լեգենդ հանդիսացող: 2. Իր արտասովոր՝ արտակարգ լինելով (ուժով ևն) լեգենդների առարկա՝ նյութ դարձած, արտասովոր, առասպելական:

ԼԵԳԵՈՆ [< легион < լատ. legio (legionis) < lego հավաքում եմ], գ. 1. (պատմ.): Զորային խոշոր միավորում Հին Հռոմում: 2. *փխբ.* Մեծ բազմություն, բանակ:

ԼԵԳԵՈՆԱԿԱՆ, ած. գ. Լեգեոնի զինվոր:

ԼԵԳԵՈՆԵՐ [< легионер < լատ. legionarius], գ. 1. (ռազմ.): Լեգեոնի զինվոր: 2. Վարձու զինվոր: 3. (սպորտ.): Վարձու մարզիկ:

ԼԵԳԻՍԼԱՏՈՒՐԱ [< легислатура < լատ. lex (legis) օրենք + latus սահմանված], գ. (իրավք.): 1. Իրավադատություն՝ որոշ երկրներում՝ մեկ գումարման օրենսդրական մարմնի գործունեության ժամանակաշրջանը: 2. Օրենսդրական մարմինների ամբողջություն (Անգլիայում, ԱՄՆ-ի մի քանի նահանգներում և այլ երկրներում):

ԼԵԳԻՍՏՆԵՐ [< легисты < լատ. legistae < lex (legis) օրենք], գ. (պատմ.): 1. Միջնադարյան իրավաբաններ, որոնք նպաստել են հռոմեական իրավունքի տարածմանը Արևմտյան Եվրոպայում: Հատկապես մեծ ազդեցություն ունեցան XIII դարում Ֆրանսիայում, որտեղ պայքարում էին թագավորական իշխանության հաստատման օգտին:

ԼԵԳԻՏԻՄ, ած. Օրինական:

ԼԵԳԻՏԻՄԱՑԻԱ [< легитимация < լատ. legitimus օրինական], գ. (իրավք.): Օրինականացում՝ օրենքով հաստատելը, օրինական դարձնելը:

ԼԵԳԻՏԻՄԻԶՄ [< легитимизм < ֆր. légitimisme < լատ.], գ. (իրավք.): Որևէ հաստատության ժառանգական իշխանության իրավունքը՝ որպես պետական կառուցվածքի գլխավոր սկզբունք ընդունող քաղաքական հոսանք Արևմտյան Եվրոպայում XIX-XX դարերում, օրինականություն:

ԼԵԳԻՏԻՄԻՍՏ [< легитимист < ֆր.], գ. Լեգիտիմիզմի կողմնակից՝ հետևորդ:

ԼԵԳԻՐՈՒՄ [< легирование < գերմ. legieren միահալել < լատ. ligo կապում եմ, միացնում եմ], գ. (արտդր.): Որակավորել. մետաղական համաձուլվածքների մեջ լեգիրող տարրեր մտցնելը՝ նրանց որոշակի ֆիզիկական, քիմիական կամ մեխանիկական հատկություններով օժտելու նպատակով:

ԼԵԳՀՈՌՆ [< леггорн < իտալական Լիվորնո նավահանգստի անունից], գ. (կենդբ.): Ձվատու հավերի ցեղ. ստացվել է XIX դարում ԱՄՆ-ում իտալական սպիտակ հավերի և մինորկաների, իսպանական հավերի, կռվանների և այլ ցեղերի տրամախաչումից:

ԼԵԳՈ [< лего < լատ. lego հավաքում եմ], գ. (խսկց.): Մանկական խաղալիքի մի տեսակ, երբ տարբեր մասերից կարելի է մի ամբողջական կառույց հավաքել՝ միմյանց կցելով:

ԼԵԴԵՐԻՆ [< ледерин < գերմ. Leder կաշի], գ. (տպգր.): Գրքի կազմի համար օգտագործվող արհեստական կաշի:

ԼԵԴԻ [< леди, лэди < անգլ. lady], գ. 1. Լորդուհի՝ լորդի կամ բարոնետի կին: 2. Տիկին՝ բարձր խավի ամուսնացած կին Անգլիայում:

ԼԵԹԱՐԳԻԱ [< летаргия < հուն. lēthargia < lēthē մոռացություն], գ. (բժշկ.): Հիվանդագին, քնի նման վիճակ, որ բնորոշվում է անշարժությամբ, արտաքին գրգիռների նկատմամբ հակազդեցությունների բացակայությամբ, մահաքուն, քնախտ:

ԼԵԿ [< лек < ալբ.], գ. (ֆին.): Հիմնական դրամական միավոր Ալբանիայում:

ԼԵԿՏՈՐ [< лектор < լատ. lector կարդացող], գ. (հնց.): Դասախոս՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների պաշտոնյա, որ ավանդում է որևէ առարկայի դասընթաց:

ԼԵԿՑԻԱ [< лекция < լատ. lectio ընթերցում], գ. (խսկց.): Դասախոսություն՝ 1. Դասախոսելը: 2. Դասախոսի կողմից առարկայի պատմելը՝ բացատրելը բուհում: 3. Քաղաքական կամ գիտական գիտելիքների մասին հրապարակային զեկուցում: 4. Ուսումնական դասընթացի կամ հրապարակային զեկուցման տպագրված շարադրանք: 5. Բուհական ուսումնական պարապմունք, որի ժամանակ դասախոսը պատմում է առարկայի մասին, դասախոսում է:

ԼԵՄՄԱ [< лемма < հուն. lēmma], գ. 1. (մաթ.) Օժանդակ թեորեմ, որ անհրաժեշտ է թեորեմ(ներ) ապացուցելու համար: 2. Բնագրի մեկնվող հատված:

ԼԵՄՈՒՐ(ՆԵՐ) [< лемуры < լատ. lemures նախնիների մեռած հոգիներ], գ. 1. (դից.): Հին Հռոմեական դիցաբանության մեջ մեռածների հոգիներ: 2. Կիսակապիկներ, որոնք ապրում են Մադագասկարի անտառներում, նաև Աֆրիկայում, Հարավարևելյան Ասիայում:

ԼԵՅ [< лей < ռում. leu], գ. (ֆին.): Հիմնական դրամական միավոր Ռումինիայում. հավասար է 100 բանիի:

ԼԵՅԲ... [< лейб... < գերմ. Leib մարմին] Բարդ բառերի առաջին արմատ «միապետական», «արքայական» իմաստով:

ԼԵՅԲ-ԳՎԱՐԴԻԱ [< лейб-гвардия < գերմ. Leib-garde], գ. (ռազմ.): Արտոնյալ զորք՝ մի քանի միապետական պետություններում, որի նպատակն է պաշտպանել միապետական և պետական շենքերը:

ԼԵՅԲՈՐԻՍՏ [< лейборист < անգլ. labourist < labour աշխատանք], գ. (քղք.): Անգլիայի բանվորական կուսակցության անդամ:

ԼԵՅԿԵՄԻԱ [< лейкемия < հուն. leukos սպիտակ + haima արյուն], գ. (բժշկ.): Նույնն է՝ Լեյկոզ:

ԼԵՅԿՈԴԵՐՄԱ [< лейкодерма < հուն. leukos + derma մաշկ, կաշի], գ. (բժշկ.): Մաշկի պիգմենտի քանակի նվազում կամ անհետացում մի շարք մաշկային հիվանդությունների դեպքում՝ (սիֆիլիս), որոշ դեղամիջոցների ընդունման ժամանակ:

ԼԵՅԿՈԶ [< лейкоз < հուն.], գ. (բժշկ.): Սպիտակարյունություն՝ արյունաստեղծ հյուսվածքի համակարգային, ուռուցքային հիվանդություն:

ԼԵՅԿՈՄԱ [< лейкома < հուն. leukoma < leukos + …oma ուռուցք իմաստով վերջածանց], գ. (բժշկ.): Աչքի հատ. աչքի հիվանդության տեսակ:

ԼԵՅԿՈՊԵՆԻԱ [< лейкопения < հուն. leukos + penia աղքատություն], գ. (բժշկ.): Լեյկոցիտների բացարձակ քանակի նվազումը շրջանառու արյան մեջ:

ԼԵՅԿՈՊԼԱՍՏ [< лейкопласты < հուն. leukos + plastos ծեփված], գ. (բսբ.): Բուսական բջիջների պրոտոպլազմայի մեջ գտնվող անգույն մասնիկներ:

ԼԵՅԿՈՊԼԱՍՏԻՐ [< лейкопластырь < հուն. leukos սպիտակ + միջին լատ. plastrum գիպս], գ. (բժշկ.): Հականեխիչ սպեղանի (խիտ գործվածքի տեսքով)՝ ներծծված հատուկ նյութով, որը խթանում է լեյկոցիտների գործունեությունը:

ԼԵՅԿՈՑԻՏՆԵՐ [< лейкоциты < հուն. leukos + kytos բջիջ], գ. (բնխս.) Լանիկ՝ արյան բաղադրիչ մասը կազմող սպիտակ գնդիկներ, լանագնդիկ:

ԼԵՅԿՈՑԻՏՈԶ [< лейкоцитоз < հուն.], գ. (բժշկ.): Լեյկոցիտների բացարձակ քանակի ավելացումը շրջանառու արյան մեջ:

ԼԵՅՇՄԱՆԻՈԶ [< лейшманиоз < անգլիացի բժիշկ Լեյշմանի (Leishman 1856-1926թթ.) անունից], գ. (բժշկ.): Մարդկանց և որոշ կենդանիների վարակիչ հիվանդությունների խումբ, որոնք ընթանում են մաշկի, լորձաթաղանթների խոցոտումներով կամ ներքին օրգանների ծանր ախտահարումներով:

ԼԵՅՏԵՆԱՆՏ [< лейтенант < ֆր. lieutenant < լատ locum tenens կուսակալ], գ. (ռազմ.): 1. Բանակի և նավատորմիղի հրամանատարական կոչում, որ հաջորդում է կրտսեր լեյտենանտի կոչմանը: 2. Այդ կոչումն ունեցող մարդ:

ԼԵՅՏՄՈՏԻՎ [< лейтмотив < գերմ. Leitmotiv առաջատար մոտիվ], գ. 1. Ամբողջ երաժշտական և գրական ստեղծագործության մեջ կրկնվող հիմնական մոտիվ: 2. *փխբ.* Հիմնական միտք՝ սկզբունք՝ դրույթ, որ հաճախ կրկնվում և ընդգծվում է:

ԼԵՅՑԻՆ [< лейцин < հուն. leukos], գ. (կենսբ.): Ամինաիզոկապրոնաթթու, անփոխարինելի ամինաթթու է. որոշ ամինաթթուների հետ միասին կիրառվում է լյարդի հիվանդությունները, սակավարյունությունը ևն բուժելու համար:

ԼԵՅՑԻՏ [< лейцит < հուն. leukos], գ. (հնք.): Սպիտակ, մոխրավուն միներալ. հանդիպում է սիլիկահողով չհագեցած թթու հրաբխածին ապարներում:

ԼԵՆ I [< лен I < գերմ. Lehen], գ. (պատմ.): Ժառանգական հողային տիրույթ՝ ֆեոդալիզմի շրջանում Արևմտյան Եվրոպայում:

ԼԵՆ II [< лен II < շվեդ. län], գ. (քղք.): Վարչատարածքային հիմնական միավորը Շվեդիայում:

ԼԵՆԴԼԵՐ [< лендлер < gերմ. Ländler], գ. (պատմ.): Ավստրոգերմանական ծագումով գեղջկական զուգապար, որը հետագայում դարձավ վալսի նախատիպը:

ԼԵՆԴ-ԼԻԶ [< ленд-лиз < անգլ. lend-lease < lend փոխարինաբար տալ + lease վարձակալության տալ], գ. (պատմ.): ԱՄՆ-ի կողմից 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակիցներին սպառազինություն, ռազմամթերք,

պարեն են վարձով տրամադրելու օրենքը (կոնգրեսն ընդունել է 1942 թ.):

ԼԵՆԴԼՈՐԴ [< лендлорд < անգլ. landlord հողային լորդ], գ. (պատմ.): Ֆեոդալական խոշոր հողատեր միջնադարյան Անգլիայում, լորդ: Կապիտալիստական ագրարային հարաբերությունների զարգացմամբ՝ հողային ռենտա ստացող:

ԼԵՆԻՆԻԶՄ [< ռուս. ленинизм Վ. Ի. Լենինի անունից], գ. (պատմ.): Լենինի ուսմունքը, որ ներկայացնում է մարքսիզմի հետագա զարգացումն ու կոնկրետացումը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի պայմաններում:

ԼԵՆԻՆՅԱՆ, ած. (պատմ.):1.Վ. Ի. Լենինի կյանքի ու գործունեության հետ կապված՝ վերաբերող: 2. Վ. Ի. Լենինին հատուկ, ինչպես Վ. Ի. Լենինին էր հատուկ: 3. Վ. Ի. Լենինի հիշատակին նվիրված, Լենինի անունով կոչված: 4. Վ. Ի. Լենինի ստեղծած՝ հիմնադրած: 5. գ. Լենինիզմի հետևորդ:

ԼԵՆՏՈ [< ленто < իտլ. lento],մկ.,գ. (երժշտ.): 1. մկ. Ծանր, դանդաղ: 2. գ. Այդ տեմպով գրված երաժշտական երկ:

ԼԵՈՊԱՐԴ [< леопард < հուն. leopardos], գ. (կենդբ.): Ընձառյուծ՝ կատվազգիների ցեղի գիշատիչ կենդանի, ապրում է Ասիայում, Աֆրիկայում, Հեռավոր Արևելքում են:

ԼԵՉՈ [< лечо < բուլղ. lecho], գ. (խոհր.): Լոլիկով, համեմունքներով պահածոյացված տաքդեղ:

ԼԵՊԻԴՈԴԵՆԴՐՈՆ [< лепидодендрон < հուն. lepis (lepidos) թեփուկ + dendron ծառ], գ. (բսբ. հնց.): Թեփուկածառ՝ ծառակերպ գետնամամռանման բույսերի մահացած սեռ:

ԼԵՊԻԴՈԼԻԹ [< лепидолит < հուն. lepis (lepidos) + lithos քար], գ. (հնք.): Միներալ փայլարների խմբից: Գույնը՝ սպիտակ, վարդագույն, գունատ մանուշակագույն, հանդիպում է գրանիտներում, պեգմատիտներում:

ԼԵՊՅՈՇԿԱ [< ռուս. лепёшка < лепить ծեփելով կերտել], գ. (խսկց. հնց.): Բլիթ:

ԼԵՊՏՈՆՆԵՐ [< лептоны < հուն. leptos նուրբ, բարակ], գ. (ֆիզ.): Տարրական մասնիկների խումբ, որի մեջ մտնում են էլեկտրոնը, պոզիտրոնը են:

ԼԵՊՏՈՍՊԻՐՈԶ [< лептоспироз < հուն. leptos նեղ + speira գանգուր, խոպոպ], գ. (բժշկ.): Սուր վարակիչ հիվանդություններ, որոնց հարուցիչները լեպտոսպիրներն են:

ԼԵՍԲԻԱԿԱՆ [< лесбийская < հին հունական Լեսբոս կղզու անունից], ած. Լեսբիական սեր՝ ոչ բնական սեռական հակում՝ կնոջ սերը կնոջ նկատմամբ:

ԼԵՍՈՒՄ [< лессирование < գերմ. lasieren], գ. (նկարչ.): Գունաթափանցում՝ գեղանկարչության մեջ ներկերի նուրբ թափանցիկ կամ կիսաթափանցիկ շերտեր, որոնցով ծածկվում են նկարի չորացած կամ կիսաչոր ներկաշերտերը՝ գունային տոնները փոխելու՝ ուժեղացնելու կամ թուլացնելու, կոլորիտը հարստացնելու, նրա ներդաշնակությանն ու միասնությանը հասնելու նպատակով:

ԼԵՎ [< лев < բուլղ.], գ. (ֆին.): Դրամական միավոր Բուլղարիայում. հավասար է 100 ստոտիկի:

ԼԵՎԱՆՏ [< левант < ֆր. Levant < իտլ. Levante արևելք], գ. Միջերկրական ծովի արևելյան մասի երկրների ընդհանուր, ավելի նեղ իմաստով՝ Սիրիայի և Լիբանանի անվանումը:

ԼԵՎԵԼԵՐՆԵՐ [< левеллеры < անգլ. levellers հավասարարներ], գ. (պատմ.): Հավասարարներ՝ Անգլիայում XVII դարի բուրժուական հեղափոխության դարաշրջանի արմատական-դեմոկրատական կուսակցություն, որ ձգտում էր հանրապետության ստեղծման և առաջ էր քաշում ընդհանուր ընտրական իրավունքի

հաստատման անհրաժեշտությունը, բայց ազգարային հատուկ ծրագիր չուներ և պահպանում էր մասնավոր սեփականությունը:

ԼԵՎԻԱՖԱՆ [< левиафан < հատուկ անուն հին հրեերենում], գ. (կրոն.): Ըստ Աստվածաշնչի ավանդության՝ վիթխարի ծովային հրեշ կամ թռչող վիշապ: 2. *փխբ.* Հրեշավոր՝ ահռելի վիթխարի բան:

ԼԵՎԻՏԱՑԻԱ [< левитация < ֆր. lévitation < լատ. levitas (levitatis) թեթևություն, շարժունակություն], գ. (մսնգ.): Մարդու հնարավոր կարողությունը՝ երկրի ձգողական ուժը հաղթահարելու և օդում ժամանակավորապես թռչելու՝ ճախրելու:

ԼԵՎԻՐԱՏ [< левират < լատ. levir տեգր], գ. (ազգգր.): Տեգրամուսնություն՝ ամուսնական սովորույթ, որի համաձայն այրին պարտավոր է կամ իրավունք ունի ամուսնանալու մահացած ամուսնու եղբոր հետ:

ԼԵՎՈՒԼՈԶ [< левулёза < լատ. laevus ձախ], գ. (քիմ.): Նույնն է՝ ֆրուկտոզ՝ պտղաշաքար՝ մրգաշաքար՝ միաշարքային խմբի ածխաջուր, գլյուկոզի իզոմերը:

ԼԵՑԻՏԻՆԱԶՆԵՐ, գ. (քիմ.): Ֆոսֆոլիպոզներ՝ ֆերմենտներ, որոնք կատալիզում են լեցիտինների և կեֆալինների եթերային կապերի ճեղքումը:

ԼԵՏԱԼ [< летальный < գերմ. letal, ֆր. létal < լատ. letalis մահացու, մահաբեր], ած. (բժշկ.): Մահացու, մահվամբ վերջացող, մահաբեր:

ԼԵՏԿԱ-ԵՆԿԱ [< летка-енка < ֆին. letkajenkka < letkah-della շորորվել + jenkka պար], գ. (արվ.): Ֆիննական երիտասարդական պար, որը լայն տարածում ուներ XX դ. 60-ական թթ.:

ԼԵՑԻՏԻՆՆԵՐ [< лецитины < հուն. lekithos ձվի դեղնուց], գ. (քիմ.): Խոլինֆոսֆատիդներ՝ ֆոսֆոլիպիդների հիմնական ֆրակցիաներից մեկը: Առաջանում են գլիցերինի, ճարպաթթուների, ֆոսֆորաթթվի և խոլինի մնացորդներից:

ԼԵՔՍԵՄԱ [< лексема < հուն. lexis բառ, արտահայտություն], գ. (լեզվբ. հնց.): Բառույթ՝ բառը որպես ձևաբանական միավոր:

ԼԵՔՍԻԿԱ [< лексика < հուն. lexikos], գ. (լեզվբ. հնց.): Բառապաշար՝ 1. Լեզվի ունեցած բոլոր բառերի ամբողջությունը, բառային կազմը: 2. Որևէ գրքի պարունակած բառերի քանակը: 3. Որևէ մարդու՝ հեղինակի իմացած ու գործածած բառերի քանակը:

ԼԵՔՍԻԿՈԳՐԱՖԻԱ [< лексикография < հուն. lexikon բառարան + graphō գրում եմ], գ. (լեզվբ. հնց.): Բառարանագրություն՝ բառարաններ կազմելը և դրա տեսությունը:

ԼԵՔՍԻԿՈԼՈԳԻԱ [< лексикология < հուն. lexikon + logos գիտություն], գ. (լեզվբ. հնց.): Բառագիտություն՝ լեզվաբանության այն ճյուղը, որ զբաղվում է բառապաշարի, բառերի ծագման ու զարգացման և բառիմաստի ուսումնասիրությամբ:

ԼԵՔՍԻԿՈՆ [< лексикон < հուն. lexikon], գ. (լեզվբ. հնց.): 1. Բառարան: 2. Բառապաշար:

ԼԻ [< ли < չին.], գ. 1. Երկարության չինական չափման միավոր՝ 576 մ: 2. Տարածության չափման միավոր Չինաստանում՝ 6 մ^2, Վիետնամում՝ 0.04 մ^2: 3. Կշռի չափման միավոր՝ 30-40 մգ:

ԼԻԱՆՆԵՐ [< лианы < ֆր. lianes < lier կապել], գ. (բսբ.): Բույսեր, որոնց ցողուններն ընդունակ չեն ինքնուրույն պահպանել կանգուն դիրքը և որպես հենարան օգտագործում են այլ բույսեր, ցանկապատներ, քարաժայռեր. հայտնի է ավելի քան 2500 տեսակ, որոնք աճում են խոնավ արևադարձային և մերձարևադարձային անտառներում:

ԼԻԲԵՐԱԼ [< либерал < լատ.], ած. գ. 1. Լիբերալիզմի կողմնակից, լիբերալ կուսակցության անդամ: 2. Ազատամիտ: 3. Լիբերալություն անող, վնասակար բարյացակամություն ցուցաբերող, ոչ պահանջկոտ, ավելորդ չափով ներողամիտ:

ԼԻԲԵՐԱԼԻԶԱՑԻԱ [< либерализация < լատ.], գ. Ազատականացում:

ԼԻԲԵՐԱԼԻԶՄ [< либерализм < լատ. liberalis ազատությանը վերաբերող], գ. 1. Ազատականություն: 2. Ազատամտություն: 3. Ավելորդ բարյացակամություն, անհարկի ներողամտություն:

ԼԻԲԵՐՈ [< либеро < իտլ. libero ազատ], գ. (սպորտ.): Ֆուտբոլում՝ ազատ պաշտպան, որը պաշտպանության գոտում չունի հատուկ խաղային դիրք և գործում է գոտու ամբողջ ճակատով:

ԼԻԲԻԴՈ [< либидо < լատ. libido հակում, ցանկություն, կիրք, ձգտում], գ. 1. Սեռական հակում: 2. Զ. Ֆրեյդի հոգեվերլուծական ուսմունքի հիմնական հասկացություններից. սեռական բնույթի առավելապես անգիտակից հակում:

ԼԻԲՐԱՑԻԱ [< либрация < լատ. librare ճոճել, տատանել], գ. (աստղգ.): Լուսնի լիբրացիա՝ լուսնի տեսանելի պարբերական տատանումներն իր կենտրոնի շուրջը:

ԼԻԲՐԵՏԻՍՏ [< либреттист < իտլ. librettista], գ. Լիբրետո գրող, լիբրետոյի հեղինակ:

ԼԻԲՐԵՏՈ [< либретто < իտլ. libretto գրքույկ], գ. (թատր.): 1. Երաժշտական-ձայնային մեծ երկի, գլխավորապես օպերայի գրական տեքստը: 2. Կատարվող օպերայի՝ պիեսի բովանդակության համառոտ շարադրանք, որ սովորաբար զետեղվում է թատերական ծրագրի մեջ: 3. Սցենարիստի այուժետային պլանը՝ սխեման բալետի կամ կինոֆիլմի համար:

ԼԻԳԱ I [< лига I < ֆր. lique < լատ. ligare կապել], գ. (քղք.): Միություն՝ հասարակական-քաղաքական միավորում՝ միջազգային բնույթի:

ԼԻԳԱ II [< лига II < իտլ. liga կապ], գ. (երժշտ.): Նոտագրության մեջ աղեղաձև նշան, որի օգնությամբ նշում են՝ լեգատո կատարումը, միևնույն բարձրության հարևան նոտաները մեկ տևողության մեջ միավորելը (ձայնակապ), տևողությունների հատուկ բաժանումը (դուոլ, տրիոլ) և ֆրազավորումը:

ԼԻԳԱՏՈՒՐԱ [< лигатура < լատ. ligatura < ligare կապել, միացնել], գ. 1. (մանգ.): Պղնձի կամ անագի խառնուրդ ոսկու կամ արծաթի մեջ: 2. (բժշկ.): Անոթակապ: 3. Կցագիր, փակագիր ՝ œ:

ԼԻԳՆԻՆ [< лигнин < լատ. lignum (ligni) ծառ], գ. 1. (կենսբ.): Ածխածնով հարուստ նյութ բնափայտի մեջ: 2. (դղգրծ.): Փայտաբամբակ. ունի ներծծման մեծ կարողություն:

ԼԻԳՆԻՏ [< лигнит < լատ. lignum (ligni) ծառ], գ. (հնք.): Գորշագույն ցածրորակ ածուխ՝ 65-78 % ածխածնով:

ԼԻԳՐՈԻՆ [< лигроин < լատ. lignum], գ. (արտդր.): Նավթաթորումից ստացվող հեղուկ նյութ, ծանր բենզին:

ԼԻԴԵՐ [< лидер < անգլ. leader ղեկավարող], գ. (խսկց.): 1. Առաջնորդ, կուսակցության՝ միության, շարժման ևն պարագլուխ, ղեկավար: 2. (սպորտ.): Առաջատար՝ մրցության առաջավոր, մրցությունը գլխավորող, առաջին տեղում ընթացող:

ԼԻԶ..., ...ԼԻԶ [< лиз..., ...лиз < հուն. lysis, լուծում, քայքայում] Բարդ բառերի առաջին կամ վերջին բաղադրիչ. ցույց է տալիս այդ բառերի կապը նյութերի լուծման, քայքայման հետ:

ԼԻԶԻՆ [< лизин < հուն. lysis], գ. (քիմ.): Դիամինակապրոնաթթու, անփոխարինելի ամինաթթու. պարունակվում է բուսական և կենդանական ծագում ունեցող համարյա բոլոր սպիտակուցներում:

ԼԻԶԻՆԳ [< лизинг < անգլ. leasing], գ. (տնտսգ.): Վարձակալություն՝ արտադրական կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների երկարաժամկետ վարձակալություն :

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ, ած. Վարձակալմանը վերաբերող՝ հատուկ:

ԼԻԶԻՍ [< лизис < հուն. lysis], գ. (կենսբ.): Բջջային համակարգի, բջջի քայքայում ֆերմենտների ենի ազդեցությամբ:

ԼԻԶՈԳԵՆԻԱ [< лизогения < հուն. lysis + genea ծագում], գ. (քիմ.): Բակտերիաների լիզիսի ենթարկվելու ընդունակություն, որն ուղեկցվում է բակտերիաֆագի անջատումով:

ԼԻԶՈՍՈՄՆԵՐ [< лизосомы < հուն. lysis + soma մարմին], գ. (կենսբ.): Բուսական և կենդանական օրգանիզմների ներբջջային կառուցվածքներ, որոնք պարունակվում են 40-ից ավելի ֆերմենտներ:

ԼԻԶՈՑԻՄ [< лизоцим < հուն. lysis + zyme խմորում, թթվեցում], գ. (քիմ.): Մուրամիդազա, հիդրոլազների խմբի ֆերմենտ, քայքայում է բակտերային բջջի պատը և առաջացնում լիզիս:

...ԼԻԹ [< ...лит < հուն. lihtos քար] Բարդ բառի մաս, որ իր իմաստով համապատասխանում է քար, ապար բառերին:

ԼԻԹԻՈՒՄ [< литий < հուն. lithos], գ. (քիմ.): Պարբերական համակարգի I խմբի քիմիական տարր (Li): Թեթև, սպիտակ-արծաթափայլ մետաղ է: Հիմնականում կիրառվում է միջուկային էներգետիկայում:

ԼԻԹՈ... [< лито... < հուն. lithos] Բարդ բառի մաս, որն իր իմաստով համապատասխանում է քար, ապար բառերին:

ԼԻԹՈԳԵՆԵԶ [< литогенез < լիթո...+ հուն. genesis], գ. (երկրբ.): Նստվածքային ապարների առաջացման և հետագա փոփոխությունների բնական գործընթացների ամբողջություն:

ԼԻԹՈԳՐԱՖԻԱ [< литография < հուն. lithos + graphō գրում եմ], գ. 1. (տպգր.): Հարթ տպագրության եղանակ, որի ժամանակ տպագրությունը կատարվում է՝ հարթ քարի մակերեսին պատկերված նկարը արտատպելով: 2. Այդ եղանակով տպագրված գործ (պատկեր, գծագրություն ևն): 3. Վիմագրի՝ վիմագրիչի արհեստը:

ԼԻԹՈԹՐԻՊՍԻԱ [< литотрипсия < հուն. lithos քար + thrypsis ջարդելը, մանրելը], գ. (բժշկ.): Երիկամներից քարերի հեռացում՝ դրանք մանրացնելու, փշրելու մեթոդով:

ԼԻԹՈԼՈԳԻԱ [< литология < լիթո... + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն նստվածքային ապարների (այդ թվում և՝ հանքանյութերի) կազմություն, կառուցվածքի և ծագման մասին:

ԼԻԹՈՊՈՆ [< литопон < հուն. lithos], գ. (հնք.): Սպիտակ գույնի հանքային պիգմենտ: Կիրառվում է ներկանյութերի, մոմլաքների ու մուշկալաքների արտադրություններում:

ԼԻԹՈՍՖԵՐԱ [< литосфера < հուն. lithos + sphaira գունդ], գ. (երկրբ.): Երկրակեղև՝ երկրագնդի արտաքին պատյանը՝ կեղևը:

ԼԻԹՈՐԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ [< литоральный (< լատ. litoralis առափնյա, ափային) отложения]- (երկրբ.): Նստվածքներ և ապարներ, որոնք առաջանում են ծովի մակընթացության ու տեղատվության սահմանների միջև գտնվող լիթորալ մասում:

ԼԻԹՈՒՐԳԻԱ [< литургия < հուն. leiturgia], գ. 1. (պատմ.): Բնամթերքային և դրամական զանազան պարհակներ Հին Հունաստանում և Բյուզանդիայում: 2. (կրոն.): Քրիստոնեական եկեղեցական արարողություն՝ պատարագ: Կաթոլիկների մոտ սա կոչվում է մեսսա:

ԼԻԼԻՊՈՒՏ [< лилипут < Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը» գրքից՝ հորինված Լիլիպուտիա երկրի գաճաճ բնակիչների անունից], գ. Գաճաճ՝ խիստ ցածրահասակ մարդ, թզուկ:

ԼԻԼՅԱ [< лилия < լատ. lilium], գ. (բսբ.): Շուշան:

ԼԻԽԵՆՈԼՈԳԻԱ [< лихенология < լատ. lichen քարաքոս + հուն. logos գիտություն], գ. (բսբ.): Գիտություն քարաքոսերի մասին, բուսաբանության բաժիններից մեկը, քարաքոսագիտություն:

ԼԻԽՏԵՐ [< лихтер < հոլանդ. lichter < lichten բեռնաթափել], գ. (ծով.): Նավահանգստի տարածքում բեռնափոխադրումներ իրականացնող բեռնանավ:

ԼԻԿՅՈՐ [< ликер < ֆր. liqueur], գ. Քաղցր, ոգելից ըմպելիք:

ԼԻԿՎԻԴԱՏՈՐ [< ликвидатор < լատ.], գ. 1. (հնց.): Որևէ բանի լուծարումով զբաղվող մարդ, լուծարող: 2. (պատմ.): Ռեակցիայի տարիներին (1907-1910թթ.) ՌՍԴԲԿ-ում առաջացած ռևիզիոնիստական, օպորտունիստական ուղղության ներկայացուցիչ, կողմնակից: 3. Չերնոբիլի վթարի հետևանքները վերացնող մասնագետ:

ԼԻԿՎԻԴԱՑԻԱ [< ликвидация < ֆր. liquidation < լատ.], գ. (հնց.): 1. Լուծարում՝ որևէ ձեռնարկության ևն լուծարք: 2. Կազմալուծում: 3. Ոչնչացում, վերացում: 4. (ֆին.): Պարտքերի մարում՝ փակում:

ԼԻՄԱՆ [< лиман < հուն. limenas ծովախորշ], գ. (երկրբն.): Գետաբերանի ծովախորշ:

ԼԻՄԲ [< лимб < լատ. limbus եզր], գ. 1. (տեխ.): Բաժնօղակ: 2. Որևէ բանի նեղ եզրաշերտ:

ԼԻՄԵՐԻԿ [< лимерик < անգլ. limerick < Իռլանդիայի Լիմերիկ (Limerick) քաղաքի անունից], գ. (գրկն.): 1. Իռլանդական ժողովրդական, այնուհետև նաև անգլիական պոեզիայի ժանր: 2. Հումորային հինգտողանի բանաստեղծություն:

ԼԻՄԻՏ [< лимит < լատ. limes (limitis) սահման], գ. Վերջնասահման՝ չափ՝ նորմա, որի սահմաններում թույլատրված է ծախսումներ կատարել՝ օգտվել մի բանից՝ ունենալ մի բան ևն, չափաբաժին, սահմանային քանակ, սահմանափակում:

ԼԻՄԻՏԱՑԻԱ [< лимитация < լատ. limes (limitis) սահման], գ. Սահմանափակում՝ որոշակի չափի՝ նորմայի տակ դնելը, որոշ շրջանակներ սահմանելը:

ԼԻՄՆՈԼՈԳԻԱ [< лимнология < հուն. limnē լիճ + logos գիտություն], գ. (երկրբ.): Լճագիտություն՝ գիտություն դանդաղ ջրափոխանակություն ունեցող ցամաքային ջրավազանների (լճեր, ջրամբարներ) և նրանցում կատարվող ֆիզիկական, քիմիական, կենսաբանական գործընթացների փոխադարձ կապերի ողջ համալիրի մասին:

ԼԻՄՈՆ [< лимон < անգլ. lemon], գ. (բսբ.): Կիտրոն՝ մերձարևադարձային ծառ և դրա պտուղը:

ԼԻՄՈՆԱԳՈՒՅՆ, ած. Լիմոնի գույնի, բաց դեղին:

ԼԻՄՈՆԱԴ [< лимонад < ֆր. limonade], գ. Մրգահյութից պատրաստած քաղցրահամ զովացուցիչ ըմպելիք:

ԼԻՄՈՆԻՏ [< лимонит < հուն. leimōn մարգագետին], գ. (հնք.): Գորշ երկաթաքար, բակլայանման կամ ճմային ճահճային հանքաքար:

ԼԻՄՈՒԶԻՆ [< лимузин < ֆր. limousine], գ. Փակ ծածկով մարդատար ավտոմեքենա:

ԼԻՄՖԱ [< лимфа < լատ. lympha խոնավություն], գ. (բնխս.): Ավիշ՝ անգույն հեղուկ, որ լցնում է միջհյուսվածքային տարածությունները և լվանում բոլոր հյուսվածքներն ու բջիջները մարդու և ողնաշարավոր կենդանիների մարմնում:

ԼԻՄՖԱԴԵՆԻՏ [< лимфаденит < լիմֆա + հուն. adēn գեղձ], գ. (բժշկ.): Ավշահանգույցի բորբոքում:

ԼԻՄՖԱՆԳԻՏ [< лимфангит < լիմֆա + հուն. angeion անոթ], գ. (բժշկ.): Ավշային անոթների բորբոքում:

ԼԻՄՖԱՏԻԶՄ [< лимфатизм < լատ.], գ. (բժշկ.): Ավշագարություն:

ԼԻՄՖՈՑԻՏՆԵՐ [< лимфоциты < լիմֆա +հուն. kytos], գ. (կենսբ.): Լեյկոցիտների ձևերից մեկը:

ԼԻՆԳԱՖՈՆ [< лингафон < լատ. lingua լեզու + հուն. phōnē հնչյուն], գ. (տեխ.): Սկավառակների կամ ձայներիզների հավաքածու, որոնց վրա ձայնագրված է որևէ լեզվի ամբողջական կուրսը:

ԼԻՆԳԱՖՈՆԱՅԻՆ ԿԱԲԻՆԵՏ - Կահավորված լսարան լեզու սովորելու հատուկ սարքավորումներով:

ԼԻՆԳՎԻՍՏ [< лингвист < լատ. lingua լեզու], գ. (հնց.): Լեզվաբան՝ լեզվաբանության մասնագետ:

ԼԻՆԳՎԻՍՏԻԿԱ [< лингвистика < ֆր. linguistique < լատ. lingua լեզու], գ. (գիտ.): Լեզվաբանություն՝ գիտություն լեզվի, նրա գոյության ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին:

ԼԻՆԵԱՐԻԶՄ [< линеаризм < լատ. linearis գծային], գ. (երժշտ.): Երաժշտության ստեղծման սկզբունք:

ԼԻՆԶԱ [< линза < գերմ. Linse], գ. Ոսպնապակի՝ 1. (ֆիզ.): Թափանցիկ մարմին, որը սահմանափակված է երկու այնպիսի կորագիծ մակերեսներով, որոնք փոխում են նրա միջով անցնող լուսային ճառագայթների զուգամիտությունը: 2. (կզմխս.): Ոսպնյակ՝ աչքի ծիածանաթաղանթի հետևում գտնվող երկուռուցիկ ոստանման թափանցիկ մարմին:

ԼԻՆԿՐՈՒՍՏ [< линкруст < լատ. linum կտավ + crusta կեղև], գ. (հնք.): Դրվագման փաթթոցային շինանյութ:

ԼԻՆԿՈՍ [< линкос < լատ. lingua + հուն. kosmos տիեզերք], գ. (լեզվբ.): Հոլանդացի մաթեմատիկոս Ֆրեյդենդալի ստեղծած արհեստական լեզուն՝ այլմոլորակայինների հետ հաղորդակցվելու համար:

ԼԻՆԿՈՐ [< линкор < անգլ. line գիծ], գ. (ռազմ.): Գծանավ՝ ռազմական ամենամեծ տիպի նավ:

ԼԻՆՈԳՐԱՎՅՈՒՐԱ [< линогравюра < լինոլեում + ֆր. gravure], գ. Լինոփորագրություն՝ լինոլեումի և պլաստիկպոլիմերային նյութերի վրա ուռուցիկ փորագրություն, որ տեխնիկայով մոտ է փայտագրությանը:

ԼԻՆՈԼԵՈՒՄ [< линолеум < լատ. linum կտավ + oleum յուղ], գ. Հաստ մոմլաթ, հատուկ բաղադրությամբ նյութով տոգորված հաստ կտոր՝ հատակները ծածկելու և պատերը պաստառելու համար:

ԼԻՆՈՏԻՊ [< линотип < լատ. linea գիծ + հուն. typos], գ. (տպգր.): Տողատիպ՝

տպագրական շարող մեքենա, որ ձուլում է շարվածքն ամբողջ տողով:

ԼԻՆՉ [< линч < XVIII դ. գնդապետ Չ. Լինչի անունից], միայն՝ *ԼԻՆՉԻ ԴԱՏԱՍՏԱՆ, ԼԻՆՉԻ ՕՐԵՆՔ* – (քղք.): Ամբոխի ինքնադատաստան, որ գործադրվել է ԱՄՆ-ում նեգրերի և առաջավոր գործիչների նկատմամբ:

ԼԻՈՖԻԼ [< лиофильность < հուն. lyō լուծում եմ] և **ԼԻՈՖՈԲ** [< лиофобность < հուն. lyō + phobos սարսափ], գ. (կենսբ.): Կոլոիդներ, կոլոիդ համակարգեր. տարբերվում են դիսպերս ֆազի և հեղուկ դիսպերս միջավայրի նյութերի մոլեկուլային փոխազդեցության ուժեղությամբ: Լիոֆիլ կոլոիդներում դիսպերս ֆազի մասնիկները ուժեղ փոխազդում են շրջապատող միջավայրի (հեղուկի) մոլեկուլների հետ: Լիոֆոբ կոլոիդներում դիսպերս ֆազի մասնիկները թույլ փոխազդման մեջ են շրջապատող միջավայրի հետ:

ԼԻՊԱԶԱ [< липаза < հուն. lipos ճարպ], գ. (կենսբ.): Ֆերմենտ, որ ճեղքում է ճարպը գլիցերինի և ճարպաթթուների:

ԼԻՊԱՐԻՏ [< липарит < իտալացի Լիպարյան կղզիների անվանումից], գ. (հնք.): Կայնոտիպ հրաբխածին ապար. համարվում է գրանիտների էֆուզիվ նմանակը:

ԼԻՊԻԴՆԵՐ [< липиды < հուն. lipos ճարպ], գ. (կենսբ.): Լիպոիդներ՝ ճարպանման նյութեր, որոնք մտնում են բոլոր կենդանի բջիջների բաղադրության մեջ և կարևոր դեր են խաղում օրգանիզմի կենսագործունեության գործընթացում:

ԼԻՊՈԻԴՆԵՐ [< липоиды < հուն. lipos ճարպ + eidos տեսակ], գ. (կենսբ.): Տե՛ս Լիպիդներ:

ԼԻՊՈԿՍԻՆ [< липоксин < հուն. lipos ճարպ + kaiō այրում եմ], գ. Հորմոնային պատրաստուկ, որն ստացվում է խոշոր եղջերավոր անասունների ենթաստամոքսային գեղձից: Մասնակցում է լյարդում ճարպային փոխանակության կարգավորմանը, խթանում ֆոսֆոլիպիդների փոխանակությունը, բարձրամոլեկուլային ճարպաթթուների օքսիդացումը:

ԼԻՊՈՄԱ [< липома < հուն. lipos ճարպ], գ. (բժշկ.): Ճարպուռուցք՝ ճարպից կազմված բարորակ ուռուցք:

ԼԻՊՈՊՐՈՏԵԻԴՆԵՐ [< липопротеиды < հուն. lipos ճարպ + prōtos առաջին], գ. (կենսբ.): Սպիտակուցների և լիպիդների համալիրներ:

ԼԻՍՏԻՆԳ [< листинг < անգլ. listing], գ. (տնտսգ.): Ցուցակում՝ բաժնետոմսերի իրավական գրանցումը բորսայում, ինչը թույլ է տալիս նրանց շրջանառությունը: 2. (հմկրգչ.): Համակարգչից ստացված տվյալներ՝ տպագրված բնագրի տեսքով:

ԼԻՎՈՆՅԱՆ ՕՐԴԵՆ [< ливонский (< ուշ լատ. domus sancta Maria Theutonicorum in Lyvonia < գերմ. Dutscher orden to Lyffland) орден] - (պատմ.): Տևտոնական օրդենի ասպետների կաթոլիկական և ռազմաքաղաքական կազմակերպությունը, որը XIII-XVI դդ. ֆեոդալական պետականություն ստեղծեց Արևելյան Մերձբալթիկայում:

ԼԻՏԱՎՐ [< литавра < հուն. (po) ly բազմաթիվ + tauera թմբուկ], գ. (երժշտ.): Արևելյան ծագում ունեցող հնագույն հարվածային երաժշտական գործիք: XVII դ. ընդգրկվել է նվագախմբերի կազմի մեջ:

ԼԻՏԵՐ I [< литер < լատ. lit(t)era տառ], գ. 1. (տպգր.): Տպատառ՝ տպագրական տառ՝ ուղղանկյան հատվածքով մետաղյա ձողիկ, որի գլխիկին կա տառի կամ նիշի հակառակ (հայելային) ցցուն պատկեր: 2. Տառ:

ԼԻՏԵՐ II [< литер < լատ. lit(t)era տառ], գ. Երկաթուղային և հաղորդակցության մյուս կարգի ճանապարհներով արտոնյալ (ձրի կամ զեղչով) երթևեկության արտոնման փաստաթուղթ:

ԼԻՏԵՐԱՏՈՒՐԱ [< литература < լատ. lit(t)eratura], գ. (հնց.): Գրականություն՝ 1. Գիտական, գեղարվեստական ևն երկերի ամբողջությունը: 2. Արվեստի այն ճյուղը, որ բնորոշվում է խոսքի՝ լեզվի միջոցով կերպարներ կերտելով, գեղարվեստական գրականություն: 3. Որևէ բնագավառի՝ ճյուղի ևն տպագիր գրքերի ամբողջությունը:

ԼԻՏՈՏԱ [< литота < հուն. litotes պարզություն], գ. (գրկն.): Նվազաբերություն, փոքրացում՝ գեղարվեստական լեզվի պատկերավորման միջոց, որում առարկան պատկերվում է փոքրացված, նվազեցված չափերով:

ԼԻՏՐ [< литр < ֆր. litre < հուն. litra], գ. 1. Հեղուկների չափ = 1 դմ^3 = 0,001մ^3: 2. Այդքան տարողությամբ անոթ՝ աման:

ԼԻՏՐԱԺ [< литраж < ֆր. litrage], գ. Լիտրատարողություն՝ որևէ ամանի տարողությունը լիտրերով:

ԼԻՐ(Ա) I [< лира < իտլ. lira], գ. (ֆին.): Դրամի միավոր Իտալիայում և Թուրքիայում: Իտալիայում հավասար է 100 չենտեզիմոյի, Թուրքիայում՝ 100 ղուրուշի:

ԼԻՐԱ II [< лира < հուն. lyra], գ. Քնար՝ 1. (երժշտ.): Հին հունական լարավոր երաժշտական գործիք, որ նվագում էին մատներով կամ փոքրիկ փղոսկրյա փայտիկով: 2. (աստղգ.): Հյուսիսային երկնակամարի համաստեղություններից մեկը, որի մեջ է մտնում Վեգա պայծառ աստղը: 3. (կենդբ.): Ավստրալիական թռչուն՝ քնարի նման պոչով, քնարահավ:

ԼԻՐԻԶՄ [< лиризм < հուն. lyrikos զգայական], գ. 1. Քնարականություն: 2. Քնարական տրամադրություն:

ԼԻՐԻԿԱ [< лирика < հուն. lyrikos], գ. (գրկն.): 1. Քնարերգություն՝ գեղարվեստական գրականության երեք հիմնական սեռերից մեկը, որ արտացոլում է կյանքը՝ նկարագրելով մարդու անձնական ապրումները, նրա մտքերն ու զգացմունքները, որոնք առաջացել են կյանքի այս կամ այն հանգամանքներից: 2. Որևէ հեղինակի՝ ժողովածուի՝ դարաշրջանի քնարական ստեղծագործությունների ամբողջությունը: 3. *փխբ.* Զգացմունքայնություն:

ԼԻՑԵՅ [< лицей < հուն. Lykeion Աթենքի մոտ գտնվող պուրակի անունը], գ. (պատմ.): 1. Միջնակարգ կամ բարձրագույն արտոնյալ արական դպրոց մինչհեղափոխական Ռուսաստանում: 2. Միջնակարգ ուսումնական հաստատություն Արևմտյան Եվրոպայում:

ԼԻՑԵՆԶԻԱ [< лицензия < լատ. licentia ազատություն, իրավունք], գ. (տնտսգ.): Արտոնագիր, թույլատրագիր, թույլտուք, թույլտվություն՝ 1. Ապրանքներ արտահանելու կամ ներմուծելու իրավունք, թույլտվություն: 2. Որևէ բանից զեղչով կամ ձրիաբար օգտվելու իրավունք:

ԼԻՔՎԱՑԻԱ [< ликвация < լատ. liquatio ջրիկացում, հալում], գ. (մետղգ.): Համաձուլվածքների քիմիական բաղադրության անհամասեռություն, որն առաջանում է դրանց բյուրեղացման ժամանակ:

ԼԻՔՎԱՑԻՈՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ – (հնք.): Առաջանում են ջերմության նվազման պայմաններում նախնական համասեռ մագմատիկ հալոցքի երկու չխառնվող՝ սիլիկատային և հանքային հեղուկների բաժանման հետևանքով:

ԼԻՖՏ [< лифт < անգլ. to lift բարձրացնել], գ. (խսկց.): Վերելակ՝ բազմահարկ շենքերում, հանքահորերում ևն մարդկանց ու բեռները ուղղահայաց գծով դեպի վեր բարձրացնելու վերամբարձ մեքենա:

ԼԻՖՏԻՆԳ, ԼԻՖԹԻՆԳ [< лифтинг < անգլ. lifting < to lift բարձրացնել], գ. (բժշկ.): Դեմքի մաշկի ձգում (կնճիռների վերացում ևն) երիտասարդացման նպատակով (պլաստիկ վիրաբուժության մեթոդով):

ԼԻՖՏՅՈՐ [< лифтёр < ֆր. liftier < անգլ. lift], գ. (խսկց.): Վերելակավար:

ԼՅԱՊԻՍ [< ляпис < լատ. lapis (infernalis) (դժոխային) քար], գ. (բժշկ.): Դժոխաքար՝ անգույն, թափանցիկ բյուրեղային փոշի՝ արծաթի նիտրատ. օգտագործվում է բժշկության մեջ հակաբորբոքային միջոցներ պատրաստելու համար:

ԼՅՈՍ [< лёсс < գերմ. Löß < lose ոչ կարծր, փխրուն], գ. (հնք.): Ոչ շերտավոր, միատարր կրաքարային նստվածքային ապար՝ բաց դեղին գույնի: Ունի նուրբ փոսիկներ, որոնք բուսական մնացորդների հետքեր են:

ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< лютеранство < գերմանացի ռեֆորմացիայի առաջնորդ Մ. Լյութերի անունից], գ. (պատմ.): Քրիստոնեական բողոքական դավանություններից մեկը, որ ծագել է Գերմանիայում՝ XVI դ. Ռեֆորմացիայի ընթացքում՝ Մ. Լյութերի ու նրա հետևորդների (Ֆ. Մելանխթոն և ուրիշներ) ուսմունքի հիման վրա և տարածվել այլ երկրներում:

ԼՅՈՒԻԶԻՏ [< люизит < ամերիկացի քիմիկոս Ու. Լ. Լյուիսի (W. L. Lewis 1878-1943թթ.) անունից], գ. (ռազմ.): Մարտական թունավոր նյութ: Առաջին անգամ ստացվել է առաջին համաշխարհային պատերազմի վերջում, բայց չի կիրառվել:

ԼՅՈՒԿ [< люк < հոլանդ. luik], գ. (խսկց.): 1. Մտոց՝ կափարիչով փակվող անցք՝ ներքև՝ մի բանի ներսն իջնելու համար: 2. Դիտանցք, դիտահոր: 3. Իջանցք:

ԼՅՈՒՄԲԱԳՈ [< люмбаго < լատ. lumbago < lumbus գոտկատեղ + agere անհանգստացնել, տանջել], գ. (բժշկ.): Գոտկացավ (ֆիզիկական աշխատանքից, ցրտահարությունից են):

ԼՅՈՒՄԵՆ [< люмен < լատ. lumen լույս], գ. (գիտ.): Լուսային հոսքի միավորը միավորների միջազգային համակարգում (լմ, lm):

ԼՅՈՒՄԻՆԱՖՈՐՆԵՐ [< люминофоры < լատ. lumen + հուն. phornos կրող], գ. Լուսային, ռենտգենյան, α, β, γ ճառագայթների, էլեկտրոնների փնջի կամ այլ ազդակների ներգործությամբ լուսարձակող արհեստական նյութեր:

ԼՅՈՒՄԻՆԵՍՑԵՆՏՈՒՄ [< люминесценция < լատ. lumen + escent վերջածանց՝ թույլ ազդեցություն նշանակությամբ], գ. (ֆիզ.): Տվյալ ջերմաստիճանում մարմնի ջերմային ճառագայթման նկատմամբ ավելցուկային լուսարձակում, որի տևողությունը զգալիորեն գերազանցում է լուսային ալիքի պարբերությանը:

ԼՅՈՒՄՊԵՆԻԶԱՑԻԱ [< люмпенизация < գերմ.], գ. (քղք.): Ունեզրկում, աղքատացում, անվճարունակացում:

ԼՅՈՒՄՊԵՆ-ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ [< люмпен-пролетариат < գերմ. Lumpenproletariat < Lumpen ցնցոտի], գ. Ապաղասակարգայնացած մարդկանց խավը երկրներում՝ մուրացկաններ, շրջմոլիկներ են:

ԼՅՈՒՆԵՏ [< люнет < ֆր. lunette], գ. 1. (ռազմ. հնց.): Ամրամահիկ, դաշտային ամրություն՝ բաղկացած երկու հողապատնեշից, որոնց առջև կա մի խանդակ: 2. (տեխ.): Հենամահիկ (հաստոցի): 3. (ճարտ.): Կամարամահիկ:

ԼՅՈՒՊՈՒՍ [< люпус < լատ. lupus գայլ], գ. (բժշկ.): Գայլախտ՝ մաշկի պալարախտ՝ տուբերկուլյոզ:

ԼՅՈՒՍՏՐԱ [< люстра < ֆր. lustre], գ. (խսկց.): Ջահ՝ լուսավորության համար նախատեսված զանազան տիպերի սարքեր:

ԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ [< люстрация < լատ. lustratio < lustrare շրջայց կատարել], գ. (ֆին.): Պետական ունեցվածքի պարբերական ցուցակագրում (եկամուտների հաշվառման նպատակով):

ԼՅՈՒՏԵՑԻՈՒՄ [< лютеций < Փարիզի լատիներեն անվանումից Lutecia], գ. (քիմ.): Lu, պարբերական համակարգի III խմբի քիմիական տարր. լանթանիդ է,

սպիտակ-արծաթափայլ մետաղ:

ԼՅՈՒՏՆՅԱ [< лютня < լեհ. lutnia < արաբ.], գ. (երժշտ.): Լարավոր կսմիթային երաժշտական գործիք. առաջացել է արաբահիրանական ուդ նվագարանից:

ԼՅՈՒՑԻՖԵՐ [< люцифер < լատ. lux (lucis) լույս + ferre տանել], գ. (դից.): Քրիստոնեական դիցաբանության մեջ՝ սատանա՝ դժոխքի տիրակալը:

ԼՅՈՒՔՍ I [< люкс < լատ. lux լույս], գ. (ֆիզ.): Մակերևույթի լուսավորության միավորը Միավորների միջազգային համակարգում (լք, lx):

ԼՅՈՒՔՍ II [< люкс < ֆր. luxe < լատ. luxus շքեղ], գ. ած. (խսկց.) Շքեղ՝ առաջնակարգ՝ մի շարք շքեղ իրեր, խանութներ, ճեպընթացներ:

ԼՅՈՒՖՏ [< люфт < գերմ. Luft օդ], գ. (տեխ.): Իրար մեջ կցված մանրակների՝ դետալների միջև առաջացած ճեղք, բացվածք:

ԼՈԲԲԻ, ԼՈԲԲԻԶՄ [< лобби < անգլ. lobby կուլուար], գ. (քղք.): ԱՄՆ-ում և այլ երկրներում օրենսդրական մարմիններին կից գրասենյակների և գործակալությունների համակարգ, որն ուղղակի ճնշում է գործադրում օրենսդիրների և պետական աստիճանավորների վրա՝ հանուն որոշակի շահերի, շահախումբ:

ԼՈԲԲԻՆԳ [< лоббинг < անգլ. lobbing], գ. (քղք.): Օրենսդիր և պետական մարմինների վրա տարբեր ճնշումների գործադրումը՝ որևէ շահավետ որոշում ակնկալելու համար:

ԼՈԲԵԼԻԱ [< лобелия < հատուկ անունից], գ. (բսբ.): Միամյա խոտաբույս, որն աճում է Ամերիկայի և Աֆրիկայի արևադարձային և մերձարևադարձային շրջաններում. աճեցվում է նաև այլ վայրերում՝ որպես դեղամիջոց կամ դեկորատիվ բույս:

ԼՈԲԵԼԻՆ [< лобелин < հատուկ անունից], գ. (դղգրծ.): Շնչառական կենտրոնը խթանող դեղանյութ. պարունակվում է լոբելիա ցեղի միամյա խոտաբույսերում:

ԼՈԲԶԻԿ [< лобзик < գերմ. Laubsäge < Laub շեղբ + Säge սղոց], գ. (տեխ.): Նրբասղոց (ձևավոր սղոցում կատարելու համար):

ԼՈԲԻՈ [< лобио < վրաց. lobio], գ. (խոհր.): Վրացական ուտեստ (խաշած լոբի՝ կծու համեմունքներով):

ԼՈԲՈՏՈՄԻԱ [< лоботомия < հուն. lobōs մասնաբաժին + tomē հատում], գ. (բժշկ.): Վիրաբուժական մեթոդով գլխուղեղի մասնահատվածի հեռացում որոշ հոգեկան հիվանդությունների դեպքում:

...ԼՈԳ [< ... лог < հուն. logos] Բարդ բառերի երկրորդ բաղադրիչ՝ 1. մարդ, որը զբաղվում է առաջին բաղադրիչում նշված գիտությամբ: 2. Համապատասխանում է «բառ», «խոսք» բառերի իմաստներին:

ԼՈԳԱՐԻԹՄ [< логарифм < հուն. logos + arithmos թիվ], գ. (մաթ.): Աստիճանացույց, որով պետք է աստիճան բարձրացնել իբրև հիմք ընդունված թիվը՝ տվյալ թիվն ստանալու համար:

...ԼՈԳԻԱ [< ...логия < հուն. logos] Բարդ բառի մաս, նշանակում է՝ ուսմունք, գիտելիք, գիտություն:

ԼՈԳԻԿԱ [< логика < հուն. logikē], գ. (տրամբ.): Տրամաբանություն՝ 1. Գիտություն մտածողության օրենքների և ձևերի մասին: 2. Դատողությունների՝ մտահանգումների ընթացքը՝ եղանակը: 3. Խելացի՝ ճիշտ մտածելակերպ, առողջ դատողություն: 4. Մարդու կարողությունը՝ դատողություն անելու, ճիշտ մտածելու, եղած փաստերից ճիշտ՝ բանական եզրակացություն հանելու: 5. *փխբ.* Ներքին օրինաչափություն:

ԼՈԳԻՍՏԻԿԱ [< логистика < հուն.], գ. 1. Տերմին, որ հին հույները գործածել են հաշիվների և երկրաչափական չափումների «արվեստի» նշանակությամբ: 2. Գ.

Վ. Լայբնիցի ուսմունքում մտահանգումների հաշվման հոմանիշ: 3. ա. Գործածվում է որպես մաթեմատիկական տրամաբանության հոմանիշ, բ. մաթեմատիկական տրամաբանության զարգացման շրջանի անվանում, կապված Բ. Ռասելի տրամաբանական աշխատանքների և նրա դպրոցի հետ:

ԼՈԳԻՑԻԶՄ [< логицизм < հուն.], գ. (մաթ.): Մաթեմատիկայի հիմնավորման հիմնական ուղղություններից, որը ձգտում է ողջ մաթեմատիկան հանգեցնել տրամաբանությանը, այսինքն՝ նրա ելակետային հասկացությունները սահմանել տրամաբանության տերմիններով, դրույթները ձևակերպել և ապացուցել մաթեմատիկական տրամաբանության միջոցներով:

ԼՈԳՈԳՐԱՄ [< логограмма < հուն.], գ. (լեզվբ.): Նշան կամ տառ, որը համառոտագրության մեջ փոխարինում է մեկ կամ մի քանի բառերի:

ԼՈԳՈԳՐԱՖՆԵՐ [< логографы < հուն. logos+ graphō գրում եմ], գ. (պատմ.): Հին հունական պատմական արձակի առաջին հեղինակները:

ԼՈԳՈԳՐԻՖ [< логогриф < հուն. logōs բառ + griphōs հանելուկ], գ. (մանգ.): Բառահանելուկ, տառահանելուկ՝ որ հիմնվում է բառի կազմի մեջ եղած հնչյունների կամ տառերի տեղափոխության կամ որևէ հնչյուն հանելու վրա (օր.՝ հայերենում սարք-սար, տամ-մատ, ռուսերենում՝ целое-публичное сообщение, без одной буквы - жалованье, без двух - спрятанные ценности, без трёх - согласие, без четырёх - невыносимые условия (доклад - оклад - клад - лад-ад):

ԼՈԳՈՄԵՏՐ [< логометр < հուն. logos հարաբերություն + metron չափ], գ. (տեխ.): Երկու էլեկտրական հոսանքների ուժերի հարաբերությունը չափող սարք:

ԼՈԳՈՊԱՏ(Թ)ԻԱ [< логопатия < հուն. logos + pathos հիվանդություն], գ. (բժշկ.): Խոսքի հիվանդային խանգարում, որը բնորոշվում է վանկերի ջղաձգական կրկնումներով, որոշ հնչյունների կամ հնչյունախմբերի արտաբերման հանկարծակի արգելակումով են:

ԼՈԳՈՊԵԴ [< логопед < հուն.], գ. (բժշկ.): Լոգոպեդիայի մասնագետ:

ԼՈԳՈՊԵԴԻԱ [< логопедия < հուն. logos բառ + paideia դաստիարակություն], գ. (բժշկ.): Խոսքախանգարումների ու նրանց բուժման հարցերով զբաղվող գիտություն:

ԼՈԳՈՍ [< логос < հուն. logos բան, բառ, ուսմունք, գիտություն], գ. (պատմ.): Հին հունական փիլիսոփայության մեջ (Հերակլիտ)՝ համընդհանուր օրինաչափություն, հետագայում (Պլատոնից սկսած)՝ հոգևոր սկիզբ, աստվածային բանականություն են:

ԼՈԳՈՏԻՊ [< логотип < հուն. logos + typos], գ. (տնտսգ.): Տվյալ ֆիրմայի կամ այդ ֆիրմայի արտադրանքի դրոշմանիշը:

ԼՈԴՐ [< ռուս. лодырь], գ. ած. (խսկց.): Ծույլ՝ անբան, գործից փախչող, գլուխ պահող անձ:

ԼՈԶՈՒՆԳ [< лозунг < գերմ. Losung], գ. 1. Որևէ բանի ղեկավար սկզբունքը՝ գլխավոր խնդիրը կամ քաղաքական պահանջները հակիրճ ձևով արտահայտող կոչ: 2. Այդպիսի կոչով ցուցանակատառ: 3. *փխբ.* Ղեկավար՝ ուղենիշ սկզբունք, նշանաբան: 4. (հնց.): Հնում զորքերի պահակակետում կիրառվող պայմանական գաղտնի բառ՝ նշանաբան:

ԼՈԺԱ [< ложа < ֆր. loge], գ. 1. (թատր.): Օթյակ՝ թատերական՝ համերգային են հանդիսասրահներում՝ առանձնացած պատշգամբի նման տեղ՝ մի քանի հանդիսատեսների համար: 2. (պատմ.): Մասոնական ժողովարան գաղտնի հանդիպումների համար՝ քաղաքական կամ կրոնական նպատակներով:

ԼՈԼԱՐԴ(ՆԵՐ) [< лолларды < անգլ. lollards < միջին հոլանդ. lollard մռմռացող < lollen մռմռալ (աղոթք)], գ. (պատմ.): Հակակաթոլիկական շարժման մասնակից (գյուղացի) XIV-XVI դդ., բողոքի շարժումը սկզբնավորվել է Հոլանդիայում և տարածվել Արևմտյան Եվրոպայի որոշ երկրներում (հատկապես Անգլիայում);

ԼՈԿԱԼ [< локальный < լատ. localis տեղային], ած. Տեղային՝ որոշակի տեղի՝ շրջանի հատուկ՝ վերաբերող, տվյալ տեղի: 2. Միայն տվյալ շրջանը կամ առանձին շրջաններ ընդգրկող, տվյալ կամ առանձին տեղ(եր)ում կատարվող:

ԼՈԿԱԼԻԶԱՑԻԱ [< локализация < լատ.], գ. Տեղայնացում, մեկուսացում, տեղափակում:

ԼՈԿԱՏԻՎ [< локатив < լատ. (casus) locativus], ած. գ. (քեր.): Տեղային հոլով:

ԼՈԿԱՏՈՐ [< локатор < լատ. locare տեղադրել], գ. (տեխ.): Զանազան բաների (սավառնակի, հրթիռի ևն) գտնվելու տեղը որոշելու սարք:

ԼՈԿԱՅԱԹԱ [< локаята < սանսկրիտ lokajata աշխարհիկ գործեր], գ. (պատմ.): Մատերիալիստական ուսմունքը Հին Հնդկաստանում. որոշ տեքստերում այն անվանում էին չարվակա:

ԼՈԿԱՑԻԱ [< локация < գերմ. Lokation < լատ. locatio տեղադրում], գ. (տեխ.): Որևէ առարկայի գտնվելու տեղի որոշումը այդ առարկայից արձակված (կամ անդրադարձված) ազդանշանի միջոցով:

ԼՈԿԱՈՒՏ [< локаут < անգլ. lock-out դուռը փակել ինչ-որ մեկի առաջ], գ. (պատմ.): Բանվորների զանգվածային ազատումը և ձեռնարկության փակումը որպես բանվոր դասակարգի դեմ ուղղված գործարանատերերի պայքարի ձևերից մեկը:

ԼՈԿՈ [< локо < իտալ. loco], գ. (տնտսգ.): 1. Գործարքի պայման, ըստ որի վաճառողի կողմից ապրանքի համար նշանակված գինը չի ընդգրկում ապրանքի հետագա փոխադրման հետ կապված ծախսերը: 2. Արտասահմանյան արժույթների կամ արժեթղթերի առք ու վաճառքի գործարքը, որի հաշվարկը կանխիկ փողով իրականացվում է բորսայում:

ԼՈԿՈՄՈԲԻԼ [< локомобиль < ֆր. locomobile շարժվող < լատ. locus տեղ + mobilis շարժվող], գ. (տեխ.): Շոգեշարժ՝ շոգիով շարժվող մեքենա, որը բաղկացած է շոգեկաթսայից, շոգեշարժից և օժանդակ հարմարանքներից:

ԼՈԿՈՄՈՏԻՎ [< локомотив < ֆր. locomotive < լատ. locus տեղ + motio շարժում], գ. Գնացքաքարշ՝ երկաթուղային գնացքը քաշող շոգեշարժ մեքենա:

ԼՈԿՈՆ [< локон < գերմ. Locke խոպոպ, գանգուր], գ. (խսկց.): Խոպոպ, խոպոպիկ:

ԼՈԿՈՒՍ [< локус < լատ. locus տեղ], գ. (կենսբ.): Քրոմոսոմի մեջ այս կամ այն գենի գտնվելու տեղը:

ԼՈՄ [< ռուս. лом], գ. (խսկց.): Լինգ՝ մեկ կամ երկու կողմից սրված ծայրով մետաղյա ձող, որով քանդում, վարում են կամ ծանրություններ բարձրացնելու համար օգտագործում որպես լծակ:

ԼՈՄԲԱՐԴ [< ломбард < իտալական Լոմբարդիա մարզի անունից, որի վաշխառուները հիմնել են գրավատուն Ֆրանսիայում Լյուդովիկոս XI օրոք], գ. Գրավատուն՝ մասնավոր կամ պետական հիմնարկ, որտեղ շարժական իրեր գրավ դնելով՝ պարտք են վերցնում:

ԼՈՄԲՐՈԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< ломброзианство < իտալացի դատական հոգեբույժ և մարդաբան Չ. Լոմբրոզոյի (Lombroso 1835-1909թթ.) անունից], գ. (իրավբ.): Քրեական իրավունքի մարդաբանական դպրոցի հիմնադիր.

հանցագործությունը համարել է բնական երևույթ, հիմնադրել է «բնածին հանցագործներին» բնութագրող հատկանիշների համակարգը, ըստ որի՝ հանցագործներ ոչ թե դառնում, այլ ծնվում են, կարևորել է նաև հանցագործության սոցիալական պատճառները:

ԼՈՅԱԼ [< лояльный < անգլ. loyal հավատարիմ], ած. 1. Օրինապահ՝ արտաքնապես հավատարիմ է օրենքներին կամ գոնե ցույց է տալիս: 2. Վարվեցողություն՝ կոռեկտ, տակտով:

ԼՈՆԳԵՏ [< лонгет < ֆր. longuette < long երկար], գ. (բժշկ.): Ոսկորի կոտրված մասը պաշտպանող գիպսապատ բինտաշերտեր (լայն, երկար):

ԼՈՆԺԵՐՈՆ [< лонжерон < ֆր. longeron], գ. (տեխ.): Մեքենայի, ինքնաթիռի առաջամասի մանրակ:

ԼՈՊՈԼԻԹ [< лополит < հուն. lopos թույլ + lithos քար], գ. Խոշոր ոսպնյակաձև ինտրուզիվ մարմին. նման է քարե թասի կամ պնակի:

ԼՈՋԻԱ [< лоджия < իտալ. loggia], գ. (ճարտ.): Կառույցի ծավալի մեջ, մեկ կողմից բաց պատշգամբ կամ նախամուտք:

ԼՈՌՆԵՏ [< лорнет < ֆր. lorgnette < lorgner թաքուն նայել], գ. Կոթավոր ակնոց:

ԼՈՍՅՈՆ [< лосьон < ֆր. lotion < լատ. lotio (lotionis) լվացում], գ. Մաշկի խնամքի համար նախատեսված կոսմետիկ հեղուկ:

ԼՈՏ I [< лот < գերմ. Lot < հոլանդ. lood], գ. (ծով. տեխ.): Նավից ծովի խորությունը չափելու սարք:

ԼՈՏ II [< лот < անգլ. lot շահում, վիճակ], գ. (տնտսգ.): Ապրանքի որոշակի քանակ, որը մատակարարվում կամ վաճառվում է ըստ պայմանագրի:

ԼՈՏԵՐԵԱ [< лоторея < ֆր. loterie < lot շահում, վիճակ], գ. (հնց.): Վիճակախաղ՝ իրերի կամ դրամի խաղարկություն՝ նախօրոք պատրաստված տոմսերով: 2. Բախտախաղ: 3. *փխբ.* Մարդու կամքից անկախ՝ իր վիճակի փոփոխականություն, վիճակախաղի նման պատահականության վրա հիմնված փոփոխականություն:

ԼՈՏՈ [< лото < ֆր. loto < իտալ. lotto], գ. 1. Խաղ, որի ժամանակ խաղացողները ծածկում են խաղաքարտի այն համարները, որոնք հայտարարվում են, և հաղթում է նա, ում խաղաքարտի որևէ հորիզոնականի բոլոր թվերը առաջինն է ծածկվում: 2. Այդ խաղի պարագաները:

ԼՈՏՈՍ [< лотос < հուն. lōtos], գ. (բսբ.): Հարսնամատազգիների ընտանիքին պատկանող ջրային բույս՝ գեղեցիկ ծաղիկներով և ուտելի պտուղներով:

ԼՈՐԴ [< лорд < անգլ. lord], գ. 1. Բարձր ազնվականության ժառանգական տիտղոս Անգլիայում, ինչպես և այդ տիտղոսը կրող անձը: 2. Մի քանի բարձր պաշտոնների հետ կապված տիտղոս, ինչպես և դրա կրողը (օր. ՝ լորդ-կանցլեր, լորդ-մեր ևն):

ԼՈՐՈ [< лоро < իտալ. loro conto իրենց հաշվին], գ. (բանկ.): Բանկի կողմից իր թղթակից բանկերի համար բացվող հաշիվներ, որոնցում արտացոլվում են նրանց հանձնարարություններով կատարված բոլոր գործառնությունները:

ԼՈՑԻԱ [< лоция < հոլանդ. loodsen նավը վարել], գ. 1. (ծով.): Նավավարության բաժին, ուսումնասիրում է ջրավազանների առանձնահատկությունները նավարկության պայմանների տեսակետից և քարտեզների ու նավագնացության ձեռնարկների օգտագործման սկզբունքը: 2. Ձեռնարկներ, որոնք պարունակում են ջրավազանների (ափերի, հատակի ռելիեֆի, ջրաբանական և օդերևութաբանական պայմաններ), լողալու կանոնների, նավագնացության սարքավորումների ևնի մանրակրկիտ նկարագրությունը:

ԼՈՑՄԱՆ [< лоцман < հոլանդ. loodsman], գ. (ծով.): Նավի ուղղությունը վարող մասնագետ նավաստի, նավատար:

ԼՈՈՒՐԵՆՍԻՈՒՄ [< лоуренсий < լատ. Laurencium], գ. (քիմ.): Lr, պարբերական համակարգի III խմբի քիմիական տարր. ակտինիդ է:

ԼՈՔՍՈԴՐՈՄԻԱ [< локсодромия, локсодрома < հուն. loxos թեք + dromos վազք, ճանապարհ], գ. (երկրբշխ.): Գիծ պտտման ոլորտի կամ պտտման այլ մակերևույթի վրա, որը բոլոր միջօրեականները հատում է հաստատուն անկյան տակ:

ԼՈՒԴԻՏՆԵՐ [< луддиты < անգլ. Luddites առասպելական ենթավարպետ Նեդ Լուդի անունից, որն առաջինն է ջարդել դազգահը՝ բողոքելով տիրոջ դեմ], գ. (պատմ.): Մեծ Բրիտանիայում մեքենաների ներդրման և կապիտալիստական շահագործման դեմ բանվորների առաջին տարերային ելույթների (XVIII-XIX դդ.) մասնակիցների ընդունված անվանումը գրականության մեջ:

ԼՈՒԴՈՄԱՆԻԱ [< лудомания < լատ. ludere խաղալ + հուն. mania կիրք], գ. (բժշկ.): Մոլեխաղերի նկատմամբ հիվանդագին հակում՝ ձգտում (մոլուցք):

ԼՈՒԶԱ [< луза < լեհ. luza], գ. (խսկց.): Բիլիարդի գնդապարկ:

ԼՈՒԻԴՈՐ [< луидор < ֆր. louis d'or < louis Լյուդովիկոս + or ոսկի], գ. (պատմ.): Հին ֆրանսիական ոսկեդրամ Լյուդովիկոս XIII-ի ժամանակից ի վեր:

ԼՈՒԿՈՒԼՈՍՅԱՆ [< лукуллов < հին հռոմեական զորավար Լուկուլուսի (Lucullus) անունից] խնջույք - *փխբ.* Արտակարգ ճոխ՝ շքեղ՝ զեխ խնջույք:

ԼՈՒՆԱ ՊԱՐԿ [< луна-парк < գերմ. Luna-Park], գ. (խսկց.): Քաղաքային այգի՝ կարուսելներով և ատրակցիոններով:

ԼՈՒՆԱՏԻԿ [< лунатик < լատ. luna լուսին], ած. գ. (խսկց.): Լուսնոտ՝ գիշերները շրջող, լուսնոտությամբ տառապող հիվանդ, քնի մեջ զանազան կարգի անգիտակցական գործողություններ կատարող՝ ման եկող, սողացող:

ԼՈՒՊԱ [< лупа < ֆր. loupe], գ. (տեխ.): Խոշորացույց (օգտագործում են ոսկերիչները նն):

Խ

ԽԱԼԱԹ [< халат < թուրք. chilat < արաբ. hil'át հանդիսավոր, պատվավոր զգեստ], գ. 1. Զգեստ, որով արևելքում իշխողները պարգևատրում էին մեկին՝ ի նշան իրենց գոհունակության: 2. Տանը կամ աշխատանքի ժամանակ հագնելու երկար ու լայն վերնազգեստ, արտահագուստ: 3. (ժղ.): Նորահարսին տրվող նվեր:

ԽԱԼԻՖ(Ա) [< халиф, калиф < արաբ. xalīfa], գ. (պատմ.): 1. Արաբների ամիրապետի տիտղոսը: 2. Մուսուլմանների գերագույն գլխավորը, որ համատեղում էր աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, ինչպես և նրա տիտղոսը: 3. Եգիպտական, իսկ հետո նաև թուրքական սուլթանի՝ որպես բոլոր մուսուլմանների հոգևոր առաջնորդի տիտղոսը: 4. Քրիստոնեական կաթողիկոսի տիտղոսը՝ մահմեդականների հորջորջումով:

ԽԱԼԻՖԱԹ [< халифат, калифат < արաբ.], գ. (պատմ.): 1. Կրոնապետական իշխանությամբ պետական կառուցվածքի համակարգ ֆեոդալական մուսուլ-

մանական երկրներում: 2. Արաբական նվաճումների հետևանքով կազմված ֆեոդալական պետություն, որի գլուխն էր կանգնած խալիֆը (2):

ԽԱԼՏՈՒՐԱ [< ռուս. халтура, հնարավոր է < լատ. chartularium քահանայի կողմից հայտարարվող մահացածների ցուցակ], գ. (խսկց.): 1. Անփույթ՝ անբարեխիղճ գործ, որ արվում է առանց գործի անհրաժեշտ իմացության: 2. Այդպիսի գործի արդյունքը: 3. Խոտան:

ԽԱԿԻ [< хаки < հնդկերեն khaki ցեխի գույն < պարսկ. khak հող, ցեխ], 1. ած. Կանաչավուն-հողագույն, կանաչին տվող բաց դեղին: 2. գ. Նույն գույնի կտոր, նաև՝ զգեստ (առավել. զինվորական):

ԽԱՃԱՊՈՒՐԻ, ԽԱՉԱՊՈՒՐԻ [< хачапури < վրաց. chačapuri < chača լոռ, շոռ + puri հաց], գ. (խոհր.): Լոռով, շոռով, պանրով թխված ուտեստ (հաց), լոռահաց, շոռահաց:

ԽԱՆ [< хан < թուրք. խաքանից՝ միապետ, իշխող], գ. Ավատական իշխանների, կառավարիչների, ինքնակալների տիտղոս միջնադարյան Արևելքում, ինչպես և այդ տիտղոսը կրող անձը:

ԽԱՆԱԿԱ [< ханака < պարս.], գ. Մերձավոր Արևելքում, Միջին Ասիայում, Ադրբեջանում (խանեգա) հյուրատան տիպ, որը բաղկացած էր խուցերից և մզկիթից:

ԽԱՌԱԿԻՐԻ [< харакири < ճապ.], գ. Ինքնասպանության միջոց սամուրայների մոտ՝ թրով փորը խողխողելով:

ԽԱՐԻԶՄԱ [< харизма < ֆր. charisma < հուն. charisma աստվածային շնորհ՝ ողորմություն], գ. Չափազանց օժտվածություն, անհատականություն, բացառիկություն՝ ինտելեկտուալ, հոգևոր ևն առումներով:

ԽԱՐՉՈ [< харчо < վրաց. harčo], գ. (խոհր.): Կովկասյան ուտեստ՝ ապուր՝ ոչխարի մսով, բրնձով, կծու համեմունքներով:

ԽԱՐՏԻԱ [< хартия < հուն. chartion < chartēs թուղթ], գ. Պատմական մեծ արժեք ունեցող փաստաթուղթ:

ԽԵԿ [< хек < անգլ. hake], գ. (կենդբ.): Ծովային մի ձկան տեսակ:

ԽԻԱԶՄ [< хиазм < հուն. chiasmos < հուն. χ տառի անունից], գ. (լեզվբ. հնց.): Շրջուն շարադասություն, շրջադասություն:

ԽԻՆԻՆ [< хинин < իսպ., իտալ. china < կեչուա լեզվից kinakina արմատ], գ. (դեղագրդ.): Քինաքինա (մալարիայի բուժման դեղամիջոց):

ԽԻՆԿԱԼԻ [< хинкали < վրաց. hinkali], գ. (խոհր.): Կովկասի ժողովուրդների մոտ՝ աղացած մսով և համեմունքներով լցոնած (եփած) խմորի գնդիկներ:

ԽԻՏԻՆ [< хитин < հուն. chitin ծածկոց], գ. 1. (քիմ.): Ածխաջրերի խմբի օրգանական նյութ: Ազոտ պարունակող միակ բնական բարդ բազմաշաքարն է: 2. (կենդբ.): Միջատների ևն մարմնի կարծր ծածկոց:

ԽԻՐՈՄԱՆՏԻԱ [< хиромантия < հուն. cheir ձեռք + manteia գուշակություն], գ. (հզվդ.): Ձեռնագուշակություն՝ ապագայի կանխատեսում և մարդու բնավորության բացահայտում ձեռքի ափի գծերի և ծալքերի միջոցով:

ԽԻՐՈՒՐԳ [< хирург < գերմ. Chirurg < հուն.], գ. (մանգ.): Վիրաբույժ:

ԽԻՐՈՒՐԳԻԱ [< хирургия < գերմ. Chirurgia < հուն. cheir ձեռք + ergon գործ], գ. (բժշկ.): 1. Վիրաբուժություն, վիրահատություն՝ վիրահատական մեթոդներով բուժման եղանակ: 2. (խսկց.): Հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունք:

ԽԼԱՄԻԴՈՄՈՆԱԴ [< хламидомонада < լատ. Chlamydomonas], գ. (բսբ.): Վոլվոքսայինների կարգի կանաչ, միաբջիջ ջրիմուռ.տարածված է քաղցրահամ, հատկապես ազոտային միացություններով հարուստ փոքր ջրամբարներում:

ԽՆԱ [< хна < արաբ.], գ. 1. Որոշ բույսերի անվանում, որից ստանում էին դեղնա-

կարմիր ներկ, որով Աֆրիկայի և Ասիայի բնիկները ներկում էին մազերը, եղունգները, նաև մարմինը: 2. (խսկց.): Մազերի ներկի տեսակ, հինա:

Խ(Հ)ՈԼ [< холл < անգլ. hall դահլիճ], գ. (խսկց.): 1. Դահլիճ, սրահ: 2. Նախասրահ (համեմատաբար մեծ) քաղաքային բնակարանում: 3. Հարմարավետ տարածն բազմոց և բազկաթոռներ:

ԽՈԼԵՍԹԵՐԻՆ [< холестерин < հուն. cholē լեղի + stereos պինդ], գ. (քիմ.): Սթերինների խմբի օրգանական միացություն. սինթեզվում է կենդանի օրգանիզմում: Սրա փոխանակության խանգարումը կարող է հասցնել քարերի առաջացմանը, լեղածորանների խցանմանը և նպաստել աթերոսկլերոզի զարգացմանը:

ԽՈԼԵՐԱ [< холера < լատ. cholera < հուն. cholē լեղի], գ. (բժշկ.): Սուր վարակիչ հիվանդություն, որն ուղեկցվում է փսխումներով և լուծով, մաղձահոսություն, աղեհոսություն:

ԽՈԼԵՐԻԿ [< холерик < լատ. cholericus < հուն. cholē լեղի], ած. գ. (գիտ.): Դյուրագրգիռ՝ մեծ եռանդով, արագաշարժությամբ, ապրումների ու հուզմունքների խորությամբ և դրանց անդրադարձումների անմիջականությամբ բնութագրվող (անձ):

ԽՈԽՄԱ [< хохма < իդիշ chochme կատակ, հումորային դիտողություն < հին հրեերեն hoxmāh իմաստություն], գ. (ժրգ.): Ծիծաղելի բան, կատակ:

ԽՈՆԴՐԻՏ [< хондрит < հուն. chondros կռճիկ], գ. (բժշկ.): Կռճիկի բորբոքում:

ԽՈՐ [< хор < հուն. choros խմբակային պար], գ. (երժշտ.): Երգչախումբ՝ երգիչների՝ երգչական խումբ:

ԽՈՐԱԼ [< хорал < միջին լատ. choralis < հուն. choros երգչախումբ], գ. (երժշտ.): Բազմաձայն օրհներգ (կաթոլիկ և բողոքական եկեղեցիներում):

ԽՈՐԵԱ [< хорея < հուն. choreia պար], գ. (բժշկ.): Նյարդային համակարգի հիվանդություն. բնորոշվում է ակամա, անկանոն, ջղաձիգ շարժումներով (հիպերկինեզ), որոնք պայմանավորված են ըստ ֆունկցիայի և տեղադրության տարբեր մկանախմբերի ոչ ռիթմիկ կծկումներով:

ԽՈՐԵՈԳՐԱՖԻԱ [< хореография < հուն. choreia պար + graphō գրում եմ], գ. (արվ. հնց.): Պարարվեստ:

ԽՈՐՈԼՈԳԻԱ [< хорология < հուն. chōros տեղ, վայր, տարածություն + logōs գիտություն], գ. (գիտ.): Կենդանի օրգանիզմների և բույսերի տեղաբաշխումը տարածության մեջ:

ԽՐՈՄ [< хром < հուն. chroma գույն], գ. Քրոմի աղերով աղաղումով մշակվող փափուկ նուրբ կաշի:

ԽՐՈՄԱԿԱՇԻ, Նույնն է՝ Խրոմ:

ԽՐՈՆԻԿԱ [< хроника < հուն. chronikos], գ. (խսկց.): 1. Տեղական առօրյա կյանքին ու դեպքերին վերաբերող հակիրճ հաղորդում՝ տեղեկություն: 2. Այդպիսի հաղորդումների բաժին (թերթի, հանդեսի, ռադիո-հեռուստատեսային հաղորդման): 3. Իրադարձությունները՝ դեպքերը ժամանակագրորեն վերարտադրող վավերագրական կինոնկար:

ԽՐՈՆՈԼՈԳԻԱ [< хронология < հուն. chronos ժամանակ + logōs գիտություն], գ. (հնց.): 1. Ժամանակագրություն: 2. Ժամանակագիտություն:

ԽՐՈՆՈՄԵՏՐ [< хронометр < հուն.], գ. (տեխ.): Ժամանակաչափ, աստղագիտական ժամացույց:

ԽՐՈՆՈՄԵՏՐԱԺ [< хронометраж < հուն. chronos ժամանակ + metreō չափում եմ], գ. (հնց.): Ժամանակաչափում՝ աշխատանքի նորմավորման նպատակով արտադրական կամ այլ գործընթացների ժամանակային ծավալի որոշումը՝ նրանց

առանձին մասերի տևողություն, ինչպես և բանվորական ժամանակի ծախսումը չափելու միջոցով:

ԽՐՈՆՈՍԿՈՊ [< хроноскоп < հուն. chronos + skopeo], գ. (տեխ.): Ժամանակադիտակ, շատ փոքր ժամանակներ չափող գործիք:

ԽՐՈՒՍՏԱԼ [< хрусталь < հուն. krystallos], գ. (խսկց.): գ. Բյուրեղապակի՝ 1. Յուրահատուկ փայլով՝ ճառագայթաբեկ հատկությամբ բարձրորակ ապակի: 2. (հվք.): Այդ ապակուց պատրաստված իրեր:

ԽՈՒՆԽՈՒԶ [< хун-хуз < չին. hung-hutzu, բառացի՝ կարմրամորուք], գ. (պատմ.): Չինված հրոսակախմբի անդամ հյուսիսարևելյան Չինաստանում XIX դ. կեսերից մինչև 1949 թ.:

ԽՈՒՆՎԵՅԲԻՆՆԵՐ [< хунвэйбины < չին. կարմիր պահապաններ, կարմիրգվարդիականներ], գ. (պատմ.): 1966 թ. Չինաստանում դպրոցականներից և ուսանողներից կազմված ջոկատների անդամներ, որոնց ցզաոֆանների (խռովարարների) հետ օգտագործել է Մաո Ցզե Դունը՝ հակառակորդների դեմ պայքարելու համար:

ԽՈՒՆՏԱ [< хунта < իսպ. junta ժողով], գ. (քղք.): Հասարակական-քաղաքական կազմակերպության անվանում Իսպանիայում կամ Լատինական Ամերիկայի իսպանական երկրներում:

ԽՈՒՐԱԼ [< хурал < մոնղ. qural ժողով, խորհուրդ], գ. (քղք.): Ժամանակակից Մոնղոլիայի պետական օրգանների անունը:

ԽՈՒՐՄԱ [< хурма < պարս.], գ. (բսբ.): 1. Էբենազգիների ընտանիքին պատկանող հարավային կլիմայի պտղատու ծառ կամ թուփ, արմավենի: 2. Այդ ծառի (թփի) ուտելի քաղցրահամ պտուղը, արմավ:

ԽՈՒՏՈՐ [< рус. хутор], գ. (պատմ.): Մեկուսի առաջացած կալվածք՝ հողամաս՝ տիրոջ տնտեսության և բնակության շինություններով (Ռուսաստանում), ագարակ:

Կ

ԿԱԲԱԼՅԵՐՈ [< кабальеро < իսպ. caballero], գ., Իսպանիայում՝ պարոն, ազնվական:

ԿԱԲԱՐԵ [< кабаре′ < ֆր. cabaret, բառացի՝ փոքր գինետուն], գ. Փոքրիկ ռեստորան՝ բեմահարթակով:

ԿԱԲԵԼ [< кабель < հոլանդ. kabel ճոպան], գ. (տեխ.): Մեկուսացված հաղորդալար ստորերկրյա և ստորջրյա գծերով՝ էլեկտրաէներգիայի, կապի, ազդանշանների ևն հաղորդման համար, մետաղամալուխ, մալուխ:

ԿԱԲԵԼԱԳՈՐԾ, գ. Կաբելի արտադրության մեջ աշխատող կամ կաբելի գծեր անցկացնող մասնագետ՝ բանվոր, մալուխագործ:

ԿԱԲԵԼՏՈՎ [< кабельтов < հոլանդ. kabeltouw], գ. (ծով.): 1. Ծովային չափման միավոր

= 185,2 մ: 2. 150-300 մմ հաստության հատուկ գործված ճոպան:

ԿԱԲԵՐՆԵ [< каберне < ֆր. cabernet], բ. Խաղողի կարմիր գինու տեսակ:

ԿԱԲԻՆԱ [< кабина < ֆր. cabine], գ. (խսկց.): Խցիկ (տարբեր նպատակների ծառայող):

ԿԱԲԻՆԵՏ [< кабинет < ֆր. cabinet], գ. 1. Աշխատանք կատարելու սենյակ՝ աշխատասենյակ: 2. Հիմնարկության մեջ՝ պատասխանատու աշխատողի պաշտոնատարության սենյակ, պաշտոնյայի առանձնասենյակ: 3. Սենյակ՝ տեղ, որ սահմանված է հատուկ պարապմունքների և դրանց անհրաժեշտ պիտույքների համար: 4. Հատուկ սարքավորված սենյակ, որտեղ կատարվում են գիտական, բուժական, դպրոցական և այլ աշխատանքներ: 5. Ռեստորանում առանձին սենյակ՝ ընդհանուր դահլիճում տեղավորվել չցանկացողների համար: 6. (քղք.) Մի շարք երկրներում՝ գործադիր կառավարման մարմին, մինիստրների կամ նախարարների խորհուրդ:

ԿԱԲՐԻՈԼԵՏ [кабриолет < ֆր. cabriolet], գ. (խսկց.): Թեթև, արագաշարժ երկանվանի կառք:

ԿԱԲՈՒԿԻ [< кабуки < ճապ. < kabuki, բառացի՝ երգ ու պարի արվեստ], գ. (թատր.): Դասական թատրոնի տեսակ Ճապոնիայում, որը ձևավորվել է XVII դարի վերջերին (թատրոնի հիմքում երաժշտությունն ու պարն է):

ԿԱԳՈՐ [< кагор < ֆր.], գ. Դեսերտային կարմիր գինու տեսակ (ֆրանսիական Կագոր քաղաքի անունից):

ԿԱԳՈՒԼՅԱՐ [< кагуляр < ֆր. cagoulard < cagoule], գ. (պատմ.): Ֆաշիստական գաղտնի կազմակերպության անդամ Ֆրանսիայում XX դարի 30-ական թթ.:

ԿԱԴԱՆՍ [< каданс < ֆր. cadence], գ. (երժշտ. տղչփ.): 1. Ներդաշնակ շրջադարձում, որով ավարտվում է երաժշտական ստեղծագործությունը կամ նրա մասը, ընդգրկում է ստեղծագործության կոմպոզիցիոն ազդանշանը: 2. Հնչյունների ռիթմական հետևողականությունը: 3. Պարի, երաժշտական ստեղծագործություն կամ ոտանավորի ռիթմը:

ԿԱԴԱՍՏՐ [< кадастр < ֆր. cadastre < միջին հուն. katastichon թերթ, ցուցակ], գ. 1. Մատյան, որը տեղեկություններ է ներառում օբյեկտների (հողերի, տների, ձեռնարկությունների) գնահատման և միջին եկամտաբերության մասին, որոնք օգտագործվում են համապատասխան իրական հարկերի հաշվարկման համար: 2. (պատմ.): Հարկատուների ցուցակ Հին Հռոմում:

ԿԱԴԵՆՑԻԱ [< каденция < իտլ. cadenza], գ. 1. Տե՛ս Կադանս (1): 2. Համերգների ժամանակ նվագախմբի (օրկեստրի) ուղեկցությամբ որևէ գործիքի համար ճարտար բնույթի՝ մեներգիչի կողմից կատարվող դրվագ:

ԿԱԴԵՏ I [< кадет < ֆր. cadet], գ. (պատմ.): Ցարական Ռուսաստանում՝ ռազմական միջնակարգ դպրոցի սան:

ԿԱԴԵՏ II [< ռուս. кадет < ка (< конституционный) + дет (демократ)], գ. (պատմ.): Սահմանադրական դեմոկրատ, կադետական կուսակցության անդամ:

ԿԱԴՄԻՈՒՄ [< кадмий < լատ. cadmium], գ. (քիմ.): 1. Քիմիական տարր, արծաթասպիտակավուն, փայլուն, փափուկ մետաղ, որ պարունակվում է ցինկի հանքաքարի մեջ: 2. Այդ մետաղից ստացվող կարմիր ներկ:

ԿԱԴՐ I [< кадр < ֆր. cadre], գ. (կինո.): Առանձին նկար կինոժապավենի կամ ֆոտոժապավենի վրա: 2. Կինոնկարի առանձին տեսարան կամ դրվագ:

ԿԱԴՐ II [< кадры < ֆր. cadres անձնակազմ], գ. 1. Արտադրության, հիմնարկության, գիտության կամ կյանքի որևէ բնագավառի համար պատրաստված, ան-

հրաժեշտ տվյալներ ունեցող աշխատողներից յուրաքանչյուրը: 2. Այդպիսի աշխատողների ընդհանուր կազմը: 3. Զորամասերի այն կայուն կազմը, որ խաղաղ պայմաններում չի զորացրվում:

ԿԱԴՐԻԼ [< кадриль < ֆր. quadrille < իսպ. cuadrilla, բառացի՝ չորս մարդուց բաղկացած խումբ], գ. (արվ.): Վեց ձևավոր մասերից բաղկացած պար՝ իրար հանդիպակաց զույգերի կատարմամբ և համապատասխան երաժշտությամբ:

ԿԱԶԱՐՄԱ [< казарма < իտլ. caserma], գ. (ռազմ. հնց.): Զորանոց՝ զինվորների բնակության համար նախատեսված շենք՝ շինություն:

ԿԱԶԵՄԱՏ [< каземат < ֆր. casemate < իտլ. casamatta], գ. 1. (ռազմ.): Պաշտպանական (վերգետնյա կամ ստորգետնյա) կառույց՝ շինություն: 2. Հրետանախուց (ռազմական նավի վրա): 3. (հնց.): Բանտ, մենախուց, բանտախուց:

ԿԱԶԻՆՈ [< казино < իտլ. casino տնակ], գ. Խաղատուն:

ԿԱԶՈՒԱՐ[< казуар < ֆր. casoar < մալայերենից kasuvari], գ. (կենդբ.): Արագավազ, սև մազանման փետուրով խոշոր, ջայլամանման թռչուն (Նոր Գվինեայում և Ավստրալիայում):

ԿԱԶՈՒՍ [< казус < լատ. casus], գ. 1. (իրավբ.): Դատական խճճված գործ: 2. (խսկց.): Արտասովոր դիպված՝ իրադարձություն, դեպք:

ԿԱԹԱՐՆԵՐ [< катары < հուն. katharos մաքուր], գ. (կրոն.): XI-XIII դդ. Եվրոպայում (գլխավորապես Իտալիայում, Ֆլանդրիայում, հարավային Ֆրանսիայում) տարածված աղանդավորներ:

ԿԱԹ(Տ)ԵՏԵՐ [< катетер < հուն. katheter զոնդ], գ. (բժշկ.) Ջողախողովակ (օգտագործվում է հետազոտության և այլ նպատակներով):

ԿԱԹՈԼԻԿ [< католик < հուն. katholikos ընդհանրական, տիեզերական], ած. (եկեղ.): 1. ած. Հռոմեական եկեղեցուն պատկանող: 2. գ. Հռոմեական եկեղեցուն պատկանող անձ:

ԿԱԹՈՂԻԿՈՍ [< католикос < հուն. katholikos ընդհանրական], գ. (կրոն.): Հայկական լուսավորչական, ինչպես նաև վրացական եկեղեցու պետը և նրա բարձրագույն հոգևոր տիտղոսը, ծայրագույն պատրիարք, հայրապետ:

ԿԱԼԱՆ [< ռուս. калан], գ. (կենդբ.): Կամչատկայի կուղբ:

ԿԱԼԱՆԴՐ [< каландр < ֆր. calandre գլանել, գլոցել], գ. (տեխ.): Գլոցիչ, փայլարդիչ:

ԿԱԼԱՄԲՈՒՐ [< каламбур < ֆր. calembour], գ. (գրկն. լեզվբ.): Բառախաղ, հանգախաղ:

ԿԱԼԴԵՐԱ [< калдера < պորտ. caldera կաթսա. տերմինը ծագել է Պալմա կղզու (Կանայան կղզիներ) հրաբխի վիթխարի խառնարանի անունից], գ. (երկրբ.): Կաթսայաձև կամ կրկեսանման փլվածքային ծագում ունեցող իջվածք:

ԿԱԼԵՅԴՈՍԿՈՊ [< калейдоскоп < հուն. kalos կարմիր + eidos ձև + skopeō դիտում եմ], գ. (տեխ.): 1. Գեղադիտակ: 2. *փխբ.* Արագափոխություն, արագ հաջորդափոխություն:

ԿԱԼԵՆԴԱՐ [< календарь < լատ. calendarium < Calendae ամսվա առաջին օրը], գ. (խսկց.): Օրացույց:

ԿԱԼԵՆԴՆԵՐ [< календы < լատ. Calendae, Kalendae] գ. Ամսվա առաջին օրը (միայն հռոմեացիների մոտ):

ԿԱԼԻԲՐ [< калибр < ֆր. calibre], գ. 1. (ռազմ.): Տրամաչափ: 2. (հնց.): Չափ, ձև, մեծություն: 3. *փխբ.* Մեծություն, հասակ: 4. (տեխ.): Կալիբրաչափիչ, տրամաչափիչ:

ԿԱԼԻԳՐԱՖԻԱ [< каллиграфия < հուն. kalligraphia, բառացի՝ գեղեցիկ ձեռագիր], գ. (լեզվբ.): Գեղեցիկ և հստակ ձեռագրով գրելու արվեստ, գեղագրություն, վայելչագրություն:

ԿԱԼԻՈՒՄ [< калий < արաբ. [al-]qali սոդա], գ. (քիմ.): Քիմիական տարր, արծաթասպիտակագույն փափուկ դյուրահալ մետաղ:

ԿԱԼԿԱ [< калька < ֆր. calque], գ. 1. Թափանցիկ թուղթ, որ օգտագործվում է գծագրելիս, յուղաթուղթ: 2. (լեզվբ.): Բառապատճենում՝ օտար լեզուների օրինաչափություններով բառեր կազմելը՝ պատճենելը:

ԿԱԼԿՈՒԼՅԱՏՈՐ [< калкулятор < լատ.], գ. (տեխ.): 1. Կալկուլյացիայի մասնագետ: 2. Հաշվարկիչ, արժեքհաշվիչ, հաշվիչ:

ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻԱ [< калькуляция < լատ. calculatio հաշվում, հաշվարկում], գ. (տնտսգ.): Ապրանքի՝ արտադրանքի ևն ինքնարժեքի՝ առքի և վաճառքի գնի՝ ծախսումների հաշվարկում, արժեհաշվում:

ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻՈՆ [< калькуляционный < լատ.], ած. 1. Կալկուլյացիային վերաբերող՝ հատուկ հաշվարկային: 2. Կալկուլյացիայով նախագծված՝ սահմանված՝ որոշված:

ԿԱԼՈՄԵԼ [< каломель < հուն. kalos գեղեցիկ + melas սև], գ. (քիմ.): Քլորասնդիկ (գործածվում է տեխնիկայում և բժշկության մեջ):

ԿԱԼՈՆԳ [< калонг < հնդկ.], գ. (կենդբ.): Չղջիկների կարգին պատկանող թռչուն, չղջիկներից ամենամեծը. ապրում է Հնդկաստանում ևն:

ԿԱԼՈՐԻԱ [< калория < լատ. calor ջերմություն], գ. (ֆիզ.): Ջերմության քանակը չափելու՝ որոշելու միավոր, ջերմամիավոր:

ԿԱԼՈՐԻՄԵՏՐ [< калориметр < լատ. calor ջերմություն + հուն. metron չափ], գ. (տեխ.): Կալորիաչափ:

ԿԱԼՈՐԻՖԵՐ [< калорифер < լատ. color + fero բերում եմ, տանում եմ], գ. (տեխ.): Օդը՝ սենյակը տաքացնելու սարք, տաքացուցիչ:

ԿԱԼՍՈՆ [< кальсоны < ֆր. caleŭon < իտլ. calzoni անդրավարտիք], գ. (խսկց. հնց.): Վարտիք, փոխան:

ԿԱԼՎԻՆԻԶՄ [< кальвинизм], գ. (եկեղ.): Քրիստոնեական եկեղեցու բողոքական դավանաբանության ուսմունքներից մեկը, որ ծագել է XVI դարում Շվեյցարիայում և լայն տարածում է գտել Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Անգլիայում և մի քանի այլ երկրներում (Ժան Կալվինի (1509-1564թթ.) անունից):

ԿԱԼՎԻՆԻՍՏ [< кальвинист < հատուկ անունից], գ. ած. Կալվինական ուսմունքի հետևորդ, կալվինական:

ԿԱԼՑԵՔՍ [< кальцекс < լատ.], գ. (բժշկ.): Ուրոտրոպինի և կալցիումի քլորի աղ, որը օգտագործվում է իբրև դեղամիջոց՝ գրիպի դեմ:

ԿԱԼՑԻՏ [< кальцит < լատ. calx (calcis) կիր], գ. (քիմ.): Միներալ. կրաքարային ապար՝ $CaCO_3$, հանդիպում է զանազան բյուրեղների ձևով, անգույն է կամ ունի կաթի սպիտակ գույն: Օգտագործվում է օպտիկական արդյունաբերության մեջ:

ԿԱԼՑԻՈՒՄ [< кальций < calx (calcis) կիր], գ. (քիմ.): Կրային՝ քիմիական տարր. սպիտակարծաթագույն մետաղ, որ պարունակվում է կրաքարի, մարմարի ևն մեջ:

ԿԱԼՈՒՍ [< каллюс < լատ. callus հաստ մաշկ, կոշտուկ], գ. (բսբ.): Հյուսվածք, որն առաջանում է բույսերի վնասված մակերևույթի (ճեղքեր, կտրվածքներ, պատվաստման ժամանակ պատվաստակալի և պատվաստացուի միակցման տեղեր) վրա և նպաստում ապաքինմանը:

ԿԱԿԱԴՈՒ [< какаду < գերմ. Kakadu < մալայերեն], գ. (կենդբ.): Թութակների

տեսակ, որը տարածված է Ավստրալիայում:

ԿԱԿԱՈ [< какао < իսպ. cacao], գ. 1. (բսբ.): Արևադարձային ծառ, որի սերմերից շոկոլադ են պատրաստում, շոկոլադի ծառ: 2. (խոհր.): Դրա սերմերի փոշուց պատրաստված ըմպելիք:

ԿԱԿՈՖՈՆԻԱ [< какофония < հուն. kakophonia < kakos վատ, տհաճ + phōnē հնչյուն], գ. (ֆիզ.): Ականջ ծակող՝ միմյանց հետ չներդաշնակվող խառնաձայն հնչյունների աղմուկ, հնչյունների անհներդաշնակություն, անբարեհնչություն:

ԿԱԿՏՈՒՍ [< кактус < լատ. cactus < հուն. kaktos], գ. (բուս.): Կակտուսազգիների ընտանիքին պատկանող անտերև փշալից, մսեղ ցողուններով բույս, մեծածաղիկ. կղզի:

ԿԱԿՏՈՒՍԱԶԳԻ, ած. Կակտուսազգիների ընտանիքին պատկանող:

ԿԱՄԱՐԻԼԻԱ [< камарилья < իսպ. camarilla, camara միապետի պալատ, արքունիք], գ. (պատմ.): Ազդեցիկ պալատականների խումբ. տերմինը գործածության մեջ է մտել իսպ. թագավոր Ֆերդինանդ VII-ի օրոք (1814-33 թթ.), երբ թագավորի մերձավորները, որոնք փաստորեն կառավարում էին երկիրը, սկսեցին նիստեր գումարել արքունիքի մի փոքր սենյակում:

ԿԱՄԲԻՈ [< камбио < իտլ. cambio փոխառնված], գ. (բանկ.): Փոխատվական մուրհակ:

ԿԱՄԵԼԻԱ [< камелия < ֆր. camélia], գ. 1. (բսբ.): Թեյազգիների ընտանիքին պատկանող խոշոր ու գեղեցիկ ծաղիկներով բույս: 2. Այդ բույսի ծաղիկը: 3. *փխբ.* Թեթևաբարո կին:

ԿԱՄԵԼԻԱԶԱՐԴ, ած. Կամելիաներով զարդարված, կամելիայի ծաղիկներ կրող:

ԿԱՄԵՐ [< камер < գերմ. եզակի թվով՝ Kam, բառացի՝ կատար], գ. (երկրբ.): Անթրոպոգենի սառցապատման շրջաններում տարածված թմբեր և բլրաշարեր:

ԿԱՄԵՐԱ [< камера < ուշ լատ. camera սենյակ], գ. (խսկց.): 1. Սենյակ, խուց. հատուկ նշանակության տեղ որոշ հիմնարկություններում: 2. (մսնգ.): Փակ՝ դատարկ տարածություն որևէ սարքի՝ գործիքի մեջ: 3. Ավտոմեքենայի անվադողի, ինչպես նաև գնդակի ռետինե ներդիր: 4. (ռազմ.): Լցարան:

ԿԱՄԵՐՏՈՆ [< камертон < գերմ. Kammerton], գ. (երժշտ.): Ողղպատի եղանաձև գործիք, որը պինդ մարմնի հարվածից՝ որոշակի բարձրության ձայն է հանում, երկմատնյակ:

ԿԱՄԶՈԼ [< камзол < ֆր. camisole], գ. (հնց.): Կարճ անթև զգեստ, ժիլետ, բաճկոնակ:

ԿԱՄԻԶԱՐՆԵՐ [< камизары < ֆր. camisards, լանգեդոկյան բարբառում camiso շապիկ], գ. (պատմ.): Լանգեդոկի (հարավային Ֆրանսիա) 1702-05 թթ.-ի գյուղացիապլեբեյական հակաֆեոդալական ապստամբության մասնակիցներ: Այդպես են կոչվել սպիտակ շապիկ հագնելու համար:

ԿԱՄԻՆ [< камин < հուն. kaminos վառարան], գ. (խսկց.): Սենյակային՝ յուրահատուկ, ուղիղ ծխնելույզով վառարան, բուխարի:

ԿԱՄԻԿԱԶԵ [< камикадзе < ճապ. kamikaze աստվածային քամի], գ. (պատմ.):

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ թշնամու նավերը խորտակող մահապարտ օդաչու:

ԿԱՄՈՐԱ [< каморра < ֆր. camorra ավազակախումբ], գ. (պատմ.): Բանդիտական գաղտնի կազմակերպություն Իտալիայում XVIII-XIX դդ.:

ԿԱՄՊԱՆԻԱ [< кампания < ֆր. campagne արշավ < իտլ. campagna դաշտ, մարտադաշտ], գ. 1. Հասարակական – քաղաքական ու տնտեսական կարևոր նշանակություն ունեցող համընդհանուր բնույթի միջոցառում՝ աշխատանք: 2. (ռազմ.): Ռազմարշավ, ընդհանուր ստրատեգիական նպատակ հետապնդող գործողությունները՝ ամբողջությամբ:

ԿԱՄՊԱՆԻՈՆ [< кампанион < ֆր.], գ. Գործընկեր՝ միևնույն գործով զբաղվող, միասին շահույթ ստացող:

ԿԱՄՊՈՒՍ [< кампус < անգլ. campus < լատ. campus դաշտ, հարթավայր], գ. (խսկց.): ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում՝ համալսարանական՝ ուսանողական կամ դպրոցական թաղամաս:

ԿԱՄՖՈՐԱ [< камфора < ուշ լատ. camphora < արաբ. kāфūr < հնդկ.], գ. Քափուր՝ ամուր բյուրեղային թափանցիկ և սպիտակ նյութ, ջրից թեթև, խիստ հոտով և դառն համով, որ ստացվում է մի քանի տասնյակ ծառերից և գործ է ածվում բժշկության, ջրաներկի արտադրության մեջ և միջատացեցի դեմ:

ԿԱՄՈՒՖԼԵՏ [< камуфлет < ֆր. camouflet, նախնական՝ ծխի քուլա], գ. (ռազմ. հնց.): 1. Արկի ստորերկրյա պայթեցում: 2. *փխբ.* (խսկց.): Տակնահանություն, նենգություն, նենգ հարված, դավ, խարդավանք, անակնկալություն:

ԿԱՄՈՒՖԼՅԱԺ [< камуфляж < ֆր. camouflage < camoufler քողարկել], գ. (մսնգ.): Ներքողարկում, քողարկաներկում, քողարկում:

ԿԱՅԶԵՐ [< кайзер < գերմ. Kaiser < լատ. caesar կեսար], գ. ած. Միապետ՝ գերմանական նախկին միապետների անվանումը:

ԿԱՅԶԵՐԱԿԱՆ, ած. Միապետական:

ԿԱՅԼԱ(Ռ) [< кайла, кайло < գերմ. Keil], գ. (երկրբ. տեխ.): Բրիչ:

ԿԱՅՈՒՏ(Ա) [< каюта < հոլանդ. kajuta հանրություն], գ. (ծով. հնց.): Նավախցիկ, նավասենյակ, առանձին տեղ նավում՝ անձնակազմի, ուղևորների և ծառայական այլ նպատակների համար:

ԿԱՅՖ [< кейф, кайф < արաբ.], գ. (ժրգ.): 1. Անգործ վիճակ, հանգիստ վիճակ: 2. Խմիչքի կամ թմրանյութի ազդեցության տակ գտնվելը:

ԿԱՆԱԼ [< канал < լատ. canalis խողովակ, ջրհորդան, ջրանցք], գ. 1. Ջրանցք՝ արհեստական լայն առու՝ ջուրը մի տեղից մյուսը տանելու համար՝ ոռոգման և այլ նպատակներով: 2. Ծովերը կամ գետերը իրար միացնող արհեստական ջրային նեղ տարածություն. նեղուց: 3. (կզմխս.): Մարմնի սնամեջ անոթ՝ փող: 4. Մղանցք՝ մղելով որևէ բան դուրս թափելու անցք: 5. (տեխ.): Հեռուստահաղորդման տարբեր կայանների ալիքային բնութագիրը և դրա պայմանական անվանումը: 6. *փխբ.* Մի բան իրականացնելու՝ անելու միջոց՝ ուղի՝ ճանապարհ՝ հնարավորություն:

ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ [< канализация < լատ. canalis խողովակ], գ. (խսկց.): Կոյուղի՝ կեղտաջրերը հեռացնելու, խողովակների՝ ստորգետնյա ուղիների և սանիտարա-տեխնիկական այլ կառույցների համակարգ, ցանց:

ԿԱՆԱՐԵՅԿԱ [< канарейка < ֆր. canari < իսպ. canaria < նոր լատ. avis Canaria թռչուն Կանարյան կղզիներից], գ. (կենդբ. խսկց.): Դեղձանիկ (վառ դեղին փետուրներով փոքր թռչուն):

ԿԱՆԴԱԼ(ՆԵՐ) [< кандалы < արաբ. qajdani < qajd կապ], գ. (խսկց.): Երկաթե

կապանքներ՝ կալանդներ՝ շղթաներ:

ԿԱՆԴԵԼՅԱԲՐ [< канделябр < ֆր. candilabre < լատ. candela մոմ], գ. (հնց.): Ճյուղավոր աշտանակ՝ մոմակալ:

ԿԱՆԴԻԴԱՏ [< кандидат < ֆր. candidate < լատ. candidatus սպիտակ հագած < Հին Հռոմում պետական պաշտոնների հայցորդները սպիտակ տոգա էին հագնում], գ. (խսկց.): 1. Թեկնածու (տարբեր նշանակություններով): 2. Գիտությունների թեկնածու (գիտական աստիճան):

ԿԱՆԵԼՅՈՒՐՆԵՐ [< каннелюры < ֆր. cannelure], գ. (ճարտ.): Մատնեք՝ ճարտարապետության մեջ օրդերի սյան (մույթի) բնի վրա արվող ուղղաձիգ (կտրվածքում կորագիծ) ակոսները:

ԿԱՆԻԲԱԼ [< каннибал < ֆր. cannibale < իսպ. cannibal < Caribal Կարիբյան ծովի կղզիների բնակիչ], գ. 1. Մարդակեր: 2. *փխբ.* Չափից դուրս դաժան մարդ, վայրենի:

ԿԱՆԻԲԱԼԻԶՄ [< каннибализм < ֆր. cannibalisme], գ. 1. Մարդակերություն: 2. *փխբ.* Վայրենություն, գազանություն, դաժանություն:

ԿԱՆԻ(Յ)ՈՆ [< каньон < իսպ. cañon խողովակ, կիրճ], գ. Խոր գետահովիտ՝ խիստ զառիթափ լանջերով, նեղ հատակով: Սովորաբար ամբողջությամբ զբաղեցված է լինում գետի հունով:

ԿԱՆԻՍՏՐ [< канистра < անգլ. canister < լատ. canistrum զամբյուղ], գ. (խսկց.): Տարբեր հեղուկների համար նախատեսված հերմետիկ փականով տարա՝ բաք:

ԿԱՆԻՏԵԼ [< канитель < ֆր. cannetille], գ. 1. (մանգ.): Նուրբ մետաղաթել (ասեղնագործության համար), մետաղե կարաթել, բարակ ոսկեթել՝ արծաթաթել: 2. *փխբ.* (խսկց.): Ժամավաճառություն, քաշքշուկ, տաղտկալի գործ: 3. *փխբ.* (խսկց.): Գլխացավանք, հոգս, անտեղի չարչարանք:

ԿԱՆԻՖԱՍ [< канифас < հոլանդ. kannefac, գերմ. Kanevas < լատ. cannabis կանեփ], գ. (մանգ.): 1. Հաստ շերտավոր պարուսինի տեսակ: 2. Ռելիեֆ զարդանկարով բամբակե թեթև գործվածք:

ԿԱՆԻՖՈԼ [< канифоль < հուն. Kolophōnia < hētinē Կոլոֆոնի խեժ < Փոքր Ասիայի Կոլոֆոն հնագույն քաղաքի անունից], գ. (մանգ.): Բևեկնախեժ՝ փշատերև ծառերի խեժանյութերի կարծր մաս, որը ստացվում է բևեկնայուղի թորումից:

ԿԱՆԿԱՆ [< канкан < ֆր. cancan], գ. (արվ.): Ֆրանսիական էստրադային կանացի պար (ոտքերը բարձր վեր պարզելով):

ԿԱՆՈԵ [< каноэ < իսպ. canoa մակույկ < հնդկց.], գ. (սպորտ.): Կարճ թիակներով թեթև մարզական նավակ:

ԿԱՆՈՆ [< канон < հուն. kanōn եղեգի ցողուն, ուղիղ ձող, քանոն, օրենք, տիպար], գ. 1. Լայն առումով՝ այն ամենը, ինչ մեկընդմիշտ հաստատված է. դարձել է մշտական: 2. (կրոն.): Եկեղեցական բարձրագույն մարմինների, մասնավորապես եկեղեցական ժողովների որոշումները եկեղեցու կազմակերպման, դավանաբանության, ծիսակատարության, բարոյականության, պաշտամունքի վերաբերյալ: 3. Սաղմոսների ութ բաժանումներից յուրաքանչյուրը: 4. Սահմանված շարականներ այս կամ այն տոնի համար: 5. (երժշտ.): Բազմաձայն պոլիֆոնիկ երաժշտություն, որի բոլոր ձայները կամ դրանց մի մասը հաջորդաբար շարադրում են միևնույն մեղեդին՝ կատարելով անընդմեջ նմանակում: 6. Կանոն բառով հայերենում ստեղծվել են բազմաթիվ բառեր, ինչպես՝ կանոնագետ, կանոնագիտական, կանոնագիր, կանոնագիրք, կանոնադրություն, կանոնացանց, կանոնազուրկ, կանոնական, կանոնաշար, կանոնաչափ, կանոնապահ, կանոնավոր, կանոնարկել ևն:

ԿԱՆՈՆԱԴԱ [< канонада < գերմ. Kanonade < ֆր. canonnade < canon թնդանոթ], գ. (ռազմ. հնց.): Թնդանոթաձգություն, ռմբակոծություն:

ԿԱՆՈՆԻԿ [< каноник < միջին լատ. canonicus], գ. (եկեղ.): Կանոնիկոս՝ կաթոլիկ եպիսկոպոսին կից խորհրդակցական մարմնի անդամ:

ԿԱՆՈՆԻՐ [< канонир < գերմ. Kanonier < ֆր. canon թնդանոթ], գ. (ռազմ. հնց.): Հրետաձիգ, թնդանոթաձիգ:

ԿԱՆՎԱ [< канва < ֆր. canevas], գ. 1. Հենք՝ թելերով հյուսված գործվածք: 2. Որևէ բանի հիմքը՝ հիմնախարիսխը: 3. Ցանցալաթ:

ԿԱՆՏԱԲԻԼԵ [< кантабиле < իտալ. cantabile, բառացի՝ երգուն], գ. (երժշտ.): Մեղեդու, նաև երաժշտական կատարման երգայնությունը:

ԿԱՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< кантианство < գերմ. փիլիսոփա Ի. Կանտի (1724-1804թթ.) անունով], գ. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայության ուղղություն, որը ստեղծել են գերմ. փիլիսոփա Ի. Կանտը և նրա հետևորդները:

ԿԱՆՏԱՏ (Ա) [< кантата < իտալ. cantata < լատ. cantare], գ. 1. (երժշտ.): Հանդիսավոր, գովերգական երաժշտական մեծ ստեղծագործություն՝ մեներգչի, երգեցիկ խմբի և նվագախմբի համար: 2. (գրկն.): Քնարական բանաստեղծության տեսակ:

ԿԱՆՏԻԼԵՆԱ [< кантилена < լատ. cantilena երգեցողություն], գ. (երժշտ.): 1. Երգուն մեղեդի (վոկալ կամ գործիքային): 2. Երաժշտության, նրա կատարման, ինչպես նաև երգչի ձայնի երգեցիկությունը: 3. (պատմ.): Քնարական-էպիկական բնույթի միաձայն և բազմաձայն աշխարհիկ վոկալ գործեր և պարերգեր՝ XIII-XV դդ. Արևմտյան Եվրոպայում: 4. Վոկալ բազմաձայն յուրաքանչյուր երկ XVI-XVII դդ.: 5. Երգ, ինչպես և երգուն մեղեդի ունեցող ստեղծագործություն XVII դ. վերջից:

ԿԱՆՏՈՆ [< кантон < ֆր. canton շրջան, մարզ], գ. (քղք.): 1. Շվեյցարիայում տարածքային-դաշնային միավոր՝ իր սահմանադրությամբ, օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններով: 2. Ֆրանսիայում և Բելգիայում վարչատարածքային միավոր:

ԿԱՆՏՈՐ [< кантор < լատ. cantor երգիչ], գ. (եկեղ.): Երգիչ (կաթոլիկական եկեղեցական երգչախմբում, հրեական սինագոգում):

ԿԱՆՑԵԼՅԱՐԻԶՄ [< канцеляризм < անգլ. canceling < to cancel չեղյալ հայտարարել], գ. (լեզվբ. հնց.): Գրասենեկաբանություն՝ գրասենյակային գործառական ենթաոճի բառ կամ արտահայտություն:

ԿԱՆՑԵՐ, ՔԱՆՍԵՐ [< канцер < լատ. cancer], գ. (բժշկ.): Քաղցկեղ, չարորակ ուռուցք:

ԿԱՆՑԼԵՐ [< канцлер < գերմ. Kanzler], գ. 1. (քղք.): Գերմանիայում՝ կառավարության գլխավոր, վարչապետ: 2. (պատմ.): Որոշ երկրներում, ինչպես և ցարական Ռուսաստանում՝ պետական պաշտոնյաներին տրված բարձրագույն աստիճան:

ԿԱՆՑՈՆ(Ա) [< канцона < իտալ. canzone երգ], գ. (գրկն.): Ֆրանսիական և իտալական միջնադարյան բանաստեղծության տեսակներից մեկը՝ երեք, հինգ կամ յոթ տներից բաղկացած ոտանավոր, որտեղ առաջին տան հանգերը պարտադիր էին մյուս բոլոր տների համար:

ԿԱՇԱԼՈՏ [< кашалот < ֆր. cachalot < պորտ. cachalotte մեծ գլխով ձուկ], գ. (կենդբ.): Կետերի ցեղին պատկանող ծովային կաթնասուն կենդանի:

ԿԱՇՆԵ [< кашне < ֆր. cache-nez < cacher ծածկել, թաքցնել + nez քիթը], գ. Վզկապ թաշկինակ, վզին փաթաթելու շարֆ:

ԿԱՇՏԱՆ [< каштан < լատ. castanea], գ. (բսբ.): Շագանակ՝ 1. Հաճարենիների

ազգին պատկանող ծառ՝ շագանակենի, որ խոշոր ընկույզի չափով պտուղներ է տալիս: 2. Այդ ծառի ուտելի պտուղը:

ԿԱՈԼԻՆ [< каолин < Չինաստանի Կաո-Լին լեռնաշղթայի անվամբ], գ. Ճենակավ՝ կավի տեսակ, որ կիրառվում է արդյունաբերության և բժշկության տարբեր բնագավառներում:

ԿԱՊԵԼԼԱ [< капелла < լատ. capella], գ. Երգեցիկ խումբ նաև՝ 1. (երժշտ.): Երգչախումբ՝ երգիչներից և նվագողներից կազմված անսամբլ: 2. (եկեղ.): Կաթոլիկական մատուռ կամ աղոթարան՝ առանձին աղոթատեղ՝ կաթոլիկ եկեղեցում:

ԿԱՊԵԼԼԱՆ [< капеллан < ուշ լատ. capellanus], գ. (եկեղ.): Կաթոլիկ քահանա (տնային եկեղեցում, բանակում):

ԿԱՊԵԼՄԱՅՍՏԵՐ [< капельмейстер < գերմ. Kapellmeister < Kapell երգչախումբ, նվագախումբ + Meister վարպետ, ղեկավար], գ. (երժշտ.): XVI-XVIII դդ. երգեցիկ կամ գործիքային կապելլայի ղեկավար, XIX դ. թատերական, սիմֆոնիկ նվագախմբերի դիրիժոր, խմբավար:

ԿԱՊԻԼՅԱՐ [< капилляр < գերմ. Kapillare < լատ. capillaris մազե], գ. 1. (կենսբ.): Մազանոթ: 2. (տեխ.): Մազախողովակ, շատ նեղ խողովակ:

ԿԱՊԻՇՈՆ [< капюшон < ֆր. capuchon], գ. (խսկց.): Հետ գցովի գլխարկ՝ միացված վերնազգեստին, կնգուղ:

ԿԱՊԻՏԱԼ [< капитал < ֆր. անգլ. capital < լատ. capitalis գլխավոր], գ. 1. (տնտսգ.): Մեծ քանակությամբ փող, դրամագլուխ: 2. *փխբ.* Գույք, ինչք, սեփականություն: 3. *փխբ.* Հարստություն: 4. Շատ թանկագին բան: 5. Գլխավոր, հիմնական, կարևորագույն, արմատական:

ԿԱՊԻՏԱԼԻԶԱՑԻԱ [< капитализация < լատ.], գ. Կապիտալացում:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ [< капиталист < լատ.], գ. ած. 1. (պատմ.): Կապիտալիստական հասարակարգի ներկայացուցիչ, որը հավելյալ արժեք է ստանում վարձու աշխատանքի շահագործումով: 2. Մեծ հարստություն՝ փող ունեցող անձ, խոշոր դրամատեր:

ԿԱՊԻՏԱՆ [< капитан < ֆր. capitaine < լատ. caput (capitis) գլուխ], գ. 1. (ռազմ.): Զինվորական սպայական կոչում՝ ավագ լեյտենանտի և մայորի միջև, ինչպես նաև այդ կոչումը կրող անձը: 2. Նավապետ՝ նավի հրամանատար: 3. (սպորտ.): Սպորտային թիմի ավագ:

ԿԱՊԻՏՈՒԼ [< капитул < լատ. capitulum], գ. 1. (կրոն.): Կաթոլիկ եպիսկոպոսին կից խորհրդական մարմին: 2. (պատմ.): Ասպետական կամ վանականների օրդենի ղեկավար մարմին: 3. (պատմ.): Շքանշաններով պարգևատրություն կատարող հիմնարկ ցարական Ռուսաստանում:

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՆՏ [< капитулянт < капитул < լատ. capitulum գլուխ, օրենքի հոդված], գ. (հզվդ.): Դժվարություններից դավաճանորեն նահանջող, անձնատուր լինելու՝ թշնամուն հանձնվելու պատրաստ մարդ:

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՐՆԵՐ [< капитулярий < ուշ լատ. capitularia < լատ. capitula գլուխ], գ. (պատմ.): Կարոլինգների դինաստիայի թագավորների օրենքներն ու կարգադրությունները:

ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱ [< капитуляция < լատ. capitulatio], գ. (ռազմ.): Պատերազմում հաղթող կողմի առաջադրած պայմաններով պարտվող պետության, ինչպես նաև նրա զինված ուժերի անձնատուր լինելը:

ԿԱՊՈՏ I [< капот < ֆր. capote], գ. Կանացի տնային զգեստ:

ԿԱՊՈՏ II [< капот < ֆր. capote], գ. (տեխ. խսկց.): Ճալովի կափարիչ, ծալովի ծածկոց (մեքենայի ևն):

ԿԱՊՈՏԱԺ [< капотаж < ֆր. capotage], գ. (հզվդ.): Վթարի տեսակ՝ ինքնաթիռի վայրէջքի կամ թռիչքի ժամանակ մեջքի վրա շուռ գալը՝ գլխամասի վրայով:

ԿԱՊՈՐ [< капор < հոլանդ. kaper], գ. (հզվդ.): Կանացի կամ մանկական գլխարկ:

ԿԱՊՍՅՈՒԼ [< капсюль < ֆր. capsule < լատ. capsula արկղիկ], գ. (տեխ. հնց.): Հրապատիճ, պատիճ, պիստոն:

ԿԱՊՍՈՒԼ(Ա) [< капсула < լատ. capsula < capsa տարա, արկղ], գ. (դեղագր.): Դեղապատիճ:

ԿԱՊՏԱԺ [< каптаж < ֆր. captage < լատ. capto բուրում եմ], գ. (տեխ.): Աղբյուրակապում (ստորերկրյա աղբյուրի ամփոփումը խողովակների, հորի և նման կառուցվածքների մեջ):

ԿԱՊՏԵՆԱՐՄՈՒՍ [< каптенармус < ֆր. capitaine d'armes բանակային կապիտան], գ. (ռազմ. հնց.): Մթերապահ (որոշ երկրների բանակներում՝ այդ թվում ԽՍՀՄ-ի մինչև XX դարի 50-ական թթ.):

ԿԱՊՐԱԼ [< капрал < ֆր. caporal], գ. (ռազմ.): Ցածր սպայակազմի զինվորական կոչում՝ որոշ զորամիավորումներում:

ԿԱՊՐԻԶ [< каприз < ֆր. caprice], գ. (խսկց.): 1. Քմահաճույք, քմայք, ինքնահաճություն: 2. Այս կամ այն բանում հանդես բերվող ինքնահաճություն:

ԿԱՊՐԻՉՉԻՈ [< каприччио < իտլ. capriccio քմահաճություն], գ. (երժշտ.): Փայլուն վիրտուալ գործիքային պիես:

ԿԱՊՐՈՆ [< ռուս капрон], գ. 1. (մանգ.): Արհեստական թելի մի տեսակը: 2. Այդ թելի գործվածքից պատրաստված տրիկոտաժեղեն:

ԿԱՊՈՒՉԻՆՈ [< капучино < իտլ. capuchino], գ. (խոհր.): Սուրճի մի տեսակ:

ԿԱՊՈՒՏ [< капут < գերմ. kaputt ջարդված, զոհված], գ. (խսկց.): Վախճան, մահ, կործանում:

ԿԱՊՈՒՑԻՆ [< капуцин < իտլ. cappuccino < cappuccio կնգուղ, գլխանոց], գ. 1. (եկեղ.): Կնգուղակիր կաթոլիկ վանական: 2. (խսկց.): Դիմակահանդեսի թիկնոց՝ կնգուղով: 3. (բսբ.): Ախրիզան, հնդկոտեմ: 4. (կենդբ.): Կապիկի տեսակ:

ԿԱՌ [< кар < անգլ. car < լատ. carrus սայլ], գ. (տեխ.): Էլեկտրաշարժիչով ինքնագնաց (սովորաբար օգտագործվում է արտադրական մեծ գործարաններում):

ԿԱՌ(Ր)ՅԵՐ I [< карьер I < իտլ. carriera < վազք]. գ. Ձիու սրարշավ վազք:

ԿԱՌ(Ր)ՅԵՐ II [< карьер II < ֆր. carrière < քարհանք], գ. (երկրբ.): Ակոսներ մի քանի մետրից և ավելի խորությամբ, բաց հանք:

ԿԱՌՆԱԼԻՏ [< карналит < գերմ. երկրաբան Ռ. Կառնալի (R. Von Carnal) ազգանվամբ], գ. (հնք.): Միներալ՝ ռոմբային համակարգով. անգույն է, դեղինից մինչև զմուռսի կարմիր: Կալիումական աղի հանքավայրերի գլխավոր միներալներից է:

ԿԱՌՆԱՎԱԼ [< карнавал < ֆր. carnaval < իտլ. carnavale], գ. (խսկց.): Դիմակահանդես՝ 1. Գարնանատոն Իտալիայում, ավելի ուշ Ֆրանսիայում, Գերմանիայում, Լատինական Ամերիկայում՝ ուղեկցվող փողոցային երթերով, դիմակներով: 2. (պատմ.): Ժողովրդական զբոսարան-դիմակահանդես (Ռուսաստանում):

ԿԱՌՆԻԶ [< карниз < հուն. koronis ավարտում, բոլորում], գ. (խսկց.): 1. Քիվ՝ շենքի կտուրի կամ պատուհանի երկարացած մասը, հորիզոնական ելուստ, որ դուրս է ձգվում պատի վերին մասից կամ պատուհանի ու դռների վերևից: 2. Վարագույրը կախելու ձող, վարագուրաձող:

ԿԱՌՆՈՏԻՏ [< карнотит < ֆր. քիմիկոս Ա. Կառնոյի (A. Carnot) ազգանունից], գ. (հնք.): Միներալ ուրանային խմբից՝ մոնոկլինային համակարգով: Ուրանի և վանադիումի արժեքավոր հանքանյութ է:

ԿԱՍԱՑԻԱ [< кассация < ֆր. cassation, գերմ. Kassation < լատ. cassatio բեկանում, ոչնչացում], գ. 1. (իրավք.): Վճռաբեկություն, վճռաբեկում, բեկանում: 2. (խսկց.): Վճռաբեկության գանգատ:

ԿԱՍԵՏ(Ա) [< кассета < ֆր. cassette արկղիկ], գ. (խսկց.): 1. Լուսանկարման՝ տեսանկարահանման ժապավենի տուփ, տեսաերիզ: 2. Տափակ տուփ ձայնարկիչի ժապավենի համար, ձայներիզ: 3. (ճարտ.): Կեսոն՝ առաստաղի խոր ընկած ճարտարապետական զարդ:

ԿԱՍԻՐ [< кассир < գերմ. Kassier < Kassierer < իտլ. cassa < լատ. capsa արկղ], գ. (խսկց.): Գանձապահ:

ԿԱՍԿԱ [< каска < ֆր. casque], գ. (խսկց.): Մետաղյա սաղավարտ:

ԿԱՍԿԱԴ [< каскад < ֆր. cascade < իտլ. cascata], գ. 1. Սանդղաջրվեժ: 2. *փխբ.* Հաջորդաբար կառուցված էլեկտրակայանների շարք: 3. *փխբ.* Հեղեղ, սրընթաց՝ առատ թափվող բան: 4. Օպերետում՝ երգով ուղեկցվող սրընթաց պար:

ԿԱՍԿԱԴՅՈՐ [< каскадёр < ֆր. cascadeur < cascade սանդղաջրվեժ], գ. (կինո.): Բարդ հնարքներ իրագործող՝ կատարող վարպետ դերասան:

ԿԱՍԿՈ [< каско < իտլ. casco], գ. (բանկ.): Փոխադրամիջոցների ապահովագրում:

ԿԱՍՍԱ [< касса < իտլ. cassa], գ. (խսկց.): Դրամարկղ, գանձարկղ:

ԿԱՍՍԻՈՊԵԱ [< Кассиопея < հուն. Kassiopeia Եթիոպիայի առասպելական թագուհու անունից],գ. (աստղգ.): Երկնքի հյուսիսային կիսագնդի համաստեղություն:

ԿԱՍՏԱ [< каста < պորտ. casta ցեղ, սերունդ], գ. 1. Հնդկաստանում և Արևելյան երկրներում հասարակական խավ՝ դաս, որ առանձնացված էր իր անդամների ծագումով և իրավական դրությամբ: 2. Միայն իր խմբակային շահերը պաշտպանող ներփակված խումբ՝ խմբավորում, որի մեջ մուտք գործելը անհնարին է կամ խիստ դժվար:

ԿԱՍՏԱՆԵՏ, ԿԱՍՏԱՆՅԵՏ [< кастаньета < իսպ. castañetas], գ. Պարելիս մատներով չխչխկացնելու գործիք, չխկան:

ԿԱՍՏԵԼՅԱՆ [< кастелян < գերմ. Kastellan < իտլ. castellano < լատ. castellanus < castellum ամրոց], գ. (պատմ.): 1. Ամրոցատեր (միջնադարյան Ֆրանսիայում): 2. Ապարանապահ, բերդապահ (միջնադարյան Եվրոպայի որոշ երկրներում):

ԿԱՍՏԵՏ [< кастет < ֆր. casse-tête < casser կոտրել + tête գլուխ], գ. (հզվդ.): Կռփազենք (ձեռքի մատներին հագցվող ձևավոր երկաթ):

ԿԱՍՏՈՐ [< кастор < ֆր. castor], գ. (մնծգր.): Մահուդի մի տեսակ:

ԿԱՍՏՐԱՑԻԱ [< кастрация < լատ. castratio], գ. Ամորձատում, կրտում, ներքինացում:

ԿԱՎԱԼԵՐ I [< кавалер < իտլ. cavaliere], գ. (խսկց.): Շքանշանակիր անձ:

ԿԱՎԱԼԵՐ II [< кавалер < ֆր. cavalier հեծյալ], գ. (խսկց.): 1. Պարակից տղամարդ: 2. Տղամարդ, որ զբաղեցնում է կնոջը հասարակության մեջ: 3. Սիրատածու, երկրպագու:

ԿԱՎԱԼԵՐԳԱՐԴ [< кавалергард < ֆր. cavalier հեծյալ + garde պահակախումբ], գ. (պատմ.): Հեծյալ գվարդիական զինվոր կամ սպա:

ԿԱՎԱԼԵՐԻԱ [< кавалерия < իտլ. cavalleria], գ. (պատմ.): Հեծելազոր:

ԿԱՎԱԼԿԱԴԱ [< кавалькада < ֆր. cavalcade < իտլ. cavalcata < cavalcare ձիավարել], գ. (պատմ.): 1. Հեծելախումբ, ձիավորների խառնախումբ: 2. Ձիավորների զբոսախումբ, ձիերով խմբական զբոսանք:

ԿԱՎԱՍԱԿԻ [< кавсаки < ճապ. kawasaki], գ. (ծով.): Առագաստամոտորային ձկնորսական նավ (Հեռավոր Արևելքում):

ԿԱՎԱՏԻՆԱ [< каватина < իտլ. cavatina], գ. (երժշտ.): Քնարական փոքրիկ մեներգ օպերայում:

ԿԱՎԵՐՆԱ [< каверна < լատ. caverna խորշ], գ. 1. (բժշկ.): Խոռոչ, դատարկություն: 2. (երկրբ.): Լեռնախորշ, խոռոչ:

ԿԱՎԻՏԱՑԻԱ [< кавитация < լատ. cavitas (cavitatis) խորություն], գ. (գիտ.): Անընդհատության խախտումը հեղուկի ներսում. կաթիլավոր հեղուկում գազով, գոլորշիով կամ դրանց խառնուրդով լցված խոռոչների գոյացումը:

ԿԱՏԱԳԵՆԵԶ [< катагенез < հուն. kata ներքև + genesis ծագում], գ. (երկրբ.): Երկրակեղևում ցածր ջերմության ու ճնշման պայմաններում ընթացող քիմիական ու ֆիզիկաքիմիական գործընթացների գենետիկական տիպ:

ԿԱՏԱԼԱԶ [< каталаз < հուն. katalysis քայքայել], գ. (քիմ.): Հիդրոպերօքսիդալ խմբի ֆերմենտ. կատալիզում է երկու մոլեկուլ ջրածնի պերօքսիդից ջրի և մոլեկուլային թթվածնի առաջացման օքսիդավերականգնման ռեակցիան: Տարածված է կենդանական և բուսական բջիջներում, միկրոօրգանիզմներում:

ԿԱՏԱԼԵԿՏԻԿԱ [< каталектика < հուն. katalektikos վերջնական], գ. (տոչփ.): Ուսմունք տողի վերջավորության մասին:

ԿԱՏԱԼԵՊՍԻԱ [< каталепсия < հուն. katalepsis կարկամում, բռնում], գ. (բժշկ.): «Մոմի ճկունության» երևույթ, որը նկատվում է կատատոնիայի կամ հիպնոտիկ քնի ժամանակ, բնորոշվում է մկանային տոնուսի բարձրացմամբ և հետագա փայտացմամբ:

ԿԱՏԱԼԻԶ [< катализ < հուն. katalysis], գ. (քիմ.): Քիմիական ռեակցիայի արտադրության առաջացումը կամ փոփոխությունը կատալիզատորի ազդեցությամբ:

ԿԱՏԱԼԻԶԱՏՈՐ [катализатор < հուն. katalysis լուծարում], գ. (քիմ.): Քիմիական ռեակցիան արագացնող կամ դանդաղեցնող նյութ:

ԿԱՏԱԼՈԳ [< каталог < հուն. katalogos ցուցակ, թվարկում], գ. (գրդր.): 1. Գրքերի ցուցակ՝ յուրաքանչյուր գրքի համար առանձին քարտերով, գրացուցակ, գրացանկ: 2. Ցուցակ (նկարների, թանգարանային իրերի ևն):

ԿԱՏԱԿԼԻԶՄ [< катаклизм < հուն. kataklysmos հեղեղում, հեղեղ], գ. Հանկարծակի՝ կտրուկ կործանարար շրջադարձ բնության՝ հասարակության մեջ. համակործանում, համաղետ:

ԿԱՏԱԿՈՄԲԱ [< катакомба < իտլ. catacomba < ուշ լատ. catacumba ստորգետնյա դամբարան < հուն.], գ. 1. (պատմ.): Առավելապես հոգնակի՝ ստորերկրյա միջանցքներ, որոնք քրիստոնեության նախնական շրջանում ծառայում էին որպես աղոթատեղի, գերեզմանոց ևն: 2. *փխբ.* Ստորերկրյա միջանցք: 3. (ճարտ.): Ստո-

ներկրյա ընտանեկան դամբարան:

ԿԱՏԱՄԱՐԱՆ [< катамаран < անգլ. catamaran < թամիլերեն kattumaram, բառացի՝ կապված գերաններ], գ. (ծով.): Նավ, որ ունի երկու մարմին՝ կմախք, որոնք իրար են միացված ընդհանուր տախտակամածով:

ԿԱՏԱՊՈՒԼՏ [< катапульта < լատ. catapulta < հուն. katapeltēs], գ. 1. (տեխ.): Ինքնաձետիչ, սավառնակաձետ: 2. (պատմ.): Բաբան՝ պաշարողական ռազմական գործիք՝ ամրությունների վրա քարեր նետելու կամ ուղղակի հարվածներ հասցնելու համար:

ԿԱՏԱՌ [катар < հուն. katarrhoos հոսք], գ. (ախտ.): Լորձաթաղանթի բորբոքում՝ լորձի ուժեղ արտադրումով, դում:

ԿԱՏԱՍՏՐՈՖ(Ա) [< катастрофа < հուն. katastrophē հեղաշրջում, ոչնչացում], գ. (խսկց.): 1. Հանկարծահաս մեծ դժբախտություն, ողբերգական հետևանքներով աղետ: 2. Մեծ փոփոխություն, ցնցում, որին անձնական և հասարակական կյանքում հետևում է կտրուկ շրջադարձ, ողբերգություն:

ԿԱՏԱՏՈՆԻԱ [< кататония < հուն. katatonos ձգված, լարված, ընկճված], գ. (բժշկ.): Հոգեկան խանգարման վիճակ, շարժողական ֆունկցիայի խանգարման գերակշռություն:

ԿԱՏԱՐԱԿՏ [< катаракта < հուն. katarrhaktēs բացովի դուռ], գ. (բժշկ.): Ոսպնյակի մթագնում:

ԿԱՏԱՐՍԻՍ [< катарсис < հուն. katharsis քավություն], գ. (գիտ.): Բարոյափիլիսոփայական և գեղագիտական հասկացություն՝ մաքրագործում, ապաքինում, ֆիզիկական ցավի կամ հոգեկան տառապանքի թոթափում: Տերմինը օգտագործվել է հին հունական փիլիսոփա Արիստոտելի կողմից:

ԿԱՏԱՖԱԼԿ(Ա) [< катафалк < ֆր. catafalque < իտլ. catafalco], գ. (խսկց.): Դիակառք՝ դին տեղափոխելու մեքենա (հարմարանք):

ԿԱՏԵԳՈՐԻԱ [< категория < հուն. katēgoria դատողություն, ասույթ, կարծիք], գ. (փիլ.): 1. Կարգ՝ հասկացություն, որն արտահայտում է նյութական աշխարհի երևույթների ամենաընդհանուր հատկանիշներն ու կապերը, ստորոգություն: 2. (գիտ.): Գիտական տերմինաբանության մեջ՝ սեռային հասկացություն, որ ցույց է տալիս առարկաների այլևայլ իրողությունների կարգը կամ դրանց ամենաընդհանուր հատկանիշները: 3. Միատեսակ առարկաների կամ անձնավորությունների կարգ:

ԿԱՏԵԳՈՐԻԿ [< категорический < հուն.], ած. 1. Վճռական, կտրական, կտրուկ: 2. Առանց առարկության, առանց հակաճառության:

ԿԱՏԵԽԻԶԻՍ [< катехизис < հուն. katēchēsis բանավոր խորհուրդ, խրատ], գ. 1. (կրոն.): Քրիստոնեական դավանանքի համառոտ շարադրանք՝ հարց ու պատասխանի ձևով: 2. *փխբ.* Որևէ ուղղության՝ ուսմունքի հիմնական սկզբունքների շարադրանք:

ԿԱՏԵՆԱՉԻՈ [< катеначчио < իտլ. catenaccio], գ. (սպորտ.): Իտալական ֆուտբոլում ընդունված շղթայաձև պաշտպանություն:

ԿԱՏԵՊՍԻՆՆԵՐ [< катепсины < հուն.], գ. (կենսբ.): Հիդրոլազների խմբի ներբջջային սպիրտալուծիչ ֆերմենտ:

ԿԱՏԵՐ [< катер < անգլ. cutter], գ. 1. (ծով.): Թիավարվող՝ մոտորային կամ ջերմատար փոքր նավ՝ կարճ անցումների համար, մոտորանավակ: 2. (ռազմ.): Հատուկ կամ օժանդակ նշանակության փոքր ռազմանավ:

ԿԱՏԻՈՆ [< катион < հուն. kata վար + iōn գնացող], գ. (ֆիզ.): Դրական լիցքով իոն:

ԿԱՏՅՈՒՇԱ [< рус. катюша], գ. (ռազմ.): Հատուկ կառուցվածքով հրանոթ, ռեակտիվ ականանետ:

ԿԱՏՈԴ [< катод < հուն. kathodos ուղի դեպի ներքև, վայրէջք], գ. (ֆիզ.): Բացասական լիցք ունեցող էլեկտրոդ (ի հակադրություն անոդի):

ԿԱՐԱԲԻՆ [< карабин < ֆր. carabine], գ. 1. (ռազմ.): Կարճափող հրացան: 2. Զսպանակեռիկ (ակնոցի, կարթի ևն):

ԿԱՐԱԲԻՆԵՐ [< карабинер < ֆր. carabinier], գ. 1. (ռազմ. հնց.): Կարաբինակիր, հատուկ զինվորական մասի պատկանող կարաբինակիր զինվոր (Արևմտյան Եվրոպայի երկրների և Ռուսաստանի բանակներում XIX դարի կեսերում): 2. Ոստիկան (Իտալիայում):

ԿԱՐԱԿՈՒԼ [< каракуль < Ուզբեկստանի համանուն տեղանվանումից], գ. (կենդբ.): Միջինասիական կարակուլյան դասի ոչխարների թանկարժեք մորթի:

ԿԱՐԱԿՈՒԼՆԵՐ [< каракули < թուրք. kara սև + kul ձեռք], գ. (հնց.): Խզբզոց, ագռավի չանչեր:

ԿԱՐԱԿՈՒԼՉԱ [< каракульча < թուրք.], գ. (կենդբ.): Արգանդային գառան մորթի (սև գույնի, թանկարժեք):

ԿԱՐԱՄԲՈԼԻՆ(Ա) [< карамболина < ֆր. carambole գնդաքար], գ. (սպորտ.): 1. Բիլիարդի խաղի տեսակ (5 գնդաքարով): 2. Դեղին գնդաքարը բիլիարդում:

ԿԱՐԱՄԵԼ [< карамель < ֆր. caramel], գ. (խոհր.): 1. Շաքարի, մաթի (սիրոպի) և անուշաբույր ներկանյութերի խառնուրդից պատրաստվող կոնֆետի կոշտ տեսակ: 2. Թխվածքներին գույն տալու համար կիրառվող խարկած շաքար: 3. Գարեջրին գույն տալու համար կիրառվող խարկած ածիկ:

ԿԱՐԱՆՏԻՆ [< карантин < ֆր. quarantaine քառասուն օր], գ. (բժշկ.): 1. Վարակիչ հիվանդությունների (համաճարակների) տարածումը կանխելու նպատակով հիվանդների և նրանց հետ շփում ունեցած անձանց ժամանակավոր մեկուսացումը: 2. Բուժական կետ՝ համաճարակ տարածված վայրից եկած մարդկանց, նավերը, ապրանքները ևն ստուգելու՝ զննելու համար, մեկուսարան:

ԿԱՐԱՏ [< карат < գերմ. Karat < արաբ. kirāt < իտլ. carato], գ. Թանկագին քարերի (մարգարիտ, գոհար ևն) կշռաչափ = 0.2 գրամի:

ԿԱՐԱՏԵ [< каратэ < ճապ.], գ. Առանց զենքի ինքնապաշտպանության ճապոնական եղանակ:

ԿԱՐԱՈԿԵ [< караоке < ճապ. karaoke դատարկ անսամբլ], գ. (երժշտ.): Տեխնիկական համակարգ, որը ուղեկցվում է երաժշտությամբ. բառերը, հայտնվելով էկրանի վրա, կատարվում են երգչի կողմից:

ԿԱՐԲԻԴ [< карбид < լատ. carbo ածուխ], (քիմ.): Մետաղի կամ մետաղակերպների և ածխածնի միացություն:

ԿԱՐԲՅՈՒՐԱՏՈՐ [< карбюратор < ֆր. carburateur], գ. (մեխ.): Սարք՝ հարմարանք, որով ներքին այրման շարժիչներում հեղուկ վառելիքը վեր է ածվում օդի զանազան խառնուրդների, գազարար, գազատու:

ԿԱՐԲՅՈՒՐԱՑԻԱ [< карбюрация < ֆր. carburation], գ. (մսնգ.): Ներքին այրման շարժիչներում հեղուկ վառելիքից և օդից կիզանուտ խառնուրդի գոյացում, գազացում:

ԿԱՐԲՅՈՒՐԱՑՆԵԼ, չբ. (տեխ.): Խտացած օդի հոսանքով վառելիքը փոշիացնել՝ նրա լրիվ և հավասարաչափ այրման համար:

ԿԱՐԲՈՆԱՐ [< карбонарий < իտլ. carbonaro, բառացի՝ ածխագործ, ածխահար], գ. (պատմ.): Գաղտնի հեղափոխական՝ կուսակցության անդամ Իտալիայում XIX դարի սկզբին:

ԿԱՐԲՈՆԱՏ [< карбонат < լատ. carbo (carbonis) ածուխ], գ. 1. (քիմ.): Ածխաթթվային բաղադրություն ունեցող աղեր (կալաքար, պոտաշ ևն): 2. (հնք.): Տարբեր մետաղների ածխաթթվային միացություններ ներկայացնող հանքատեսակների անվանումը, որոնցից բնության մեջ տարածված են կալցիները և դոլոմիտները: 3. (մանգ.): Մանրահատիկային կազմություն ունեցող սև ալմաստ, որ օգտագործվում է հորատման՝ հղկման ևն համար:

ԿԱՐԲՈՆԱՑՈՒՄ, գ. (մանգ.): 1. Լուծույթի կամ հեղուկի հագեցումը ածխաթթվային գազով: 2. Կիր պարունակող շինանյութերի ամրացում ածխաթթվային գազով մշակման ենթարկելու միջոցով:

ԿԱՐԲՈՆԻԶԱՑԻԱ [< карбонизация < լատ. carbo (carbonis) ածուխ], գ. Տե՛ս Կարբոնացում:

ԿԱՐԲՈՆԻՏ [< карбонит < լատ. carbo (carbonis) ածուխ], գ. Պայթուցիկ նյութ, դինամիտ:

ԿԱՐԲՈՐՈՒՆԴ [< карборунд < լատ. carbo ածուխ + գերմ. (Ko)rund սուտակ], գ. (հնք.): Կայծքարի և ածխածնի միացություն, որի կարծր բյուրեղներն օգտագործվում են որպես հղկիչ:

ԿԱՐԲՕՔՍԻԼ[< карбоксил < карбо < լատ. carbo (carbonis) ածուխ + հուն. oxys թթու], գ. (քիմ.): COOH միատոմային խումբ, որ բնորոշում է օրգանական, այսպես կոչված, ածխային ածխաթթուներ (карбоновые кислоты), ինչպես նաև CH_2COOH քացախային ածխաթթուն:

ԿԱՐԳՈ [< карго < իսպ. cargo բեռնում], գ. (տնտսգ.): 1. Նավով տեղափոխվող ապրանքները՝ բեռը: 2. Նավով տեղափոխվող բեռների ապահովագրումը, բեռնապահովագրում:

ԿԱՐԴԱՄՈՆ [< кардамон < գերմ. Kardamon < լատ. cardamomum < հուն. kardamomon], գ. (բսբ.): Հիլ (օգտագործվում է որպես համեմունք):

ԿԱՐԴԱՆ [< кардан < իտլ. cardano < իտալացի մաթեմատիկոս Ջ. Կարդանոյի (Cardano) անունից], գ. (տեխ.): 1. Կախոց (կախված իրն անշարժ պահող հարմարանք): 2. Կախոց (ավտոմեքենայի, տրակտորի ևն):

ԿԱՐԴԻՆԱԼ I [< кардинал < լատ. cardinalis գլխավոր], գ. (եկեղ.): Կաթոլիկական եկեղեցու ամենաբարձր տիտղոսը պապից հետո, ինչպես նաև այդ տիտղոսը կրող անձը, ծիրանավոր:

ԿԱՐԴԻՆԱԼ II [< кардинал < լատ. cardinalis], գ. (կենդբ.): Կարմրասարեկ՝ սերինոսազգիների ընտանիքին պատկանող երգեցիկ թռչուն (ապրում է Հյուսիսային և Հարավային Ամերիկայում):

ԿԱՐԴԻՆԱԼ III [< кардинально < լատ.], մկ. (խսկց.): Հիմնովին, կարդինալ կերպով:

ԿԱՐԴԻՈ... [< кардио... < հուն. kardia սիրտ] Բարդ բառերում որպես բաղադրիչ օգտագործելիս ցույց է տալիս դրանց կապը սրտի հետ:

ԿԱՐԴԻՈԳՐԱՄ(Ա) [< кардиограмма < կարդիո... + հուն. gramma], գ. (բժշկ.): Սրտի աշխատանքի գրանցման եղանակ:

ԿԱՐԴԻՈԳՐԱՖ [< кардиограф < կարդիո... + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Սրտի աշխատանքը գրանցող սարք:

ԿԱՐԴԻՈԳՐԱՖԻԱ [< кардиография < կարդիո... + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Հատուկ սարքով սրտի աշխատանքի գրանցումը:

ԿԱՐԴԻՈԼՈԳԻԱ [< кардиология < կարդիո... + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Սրտաբանություն:

ԿԱՐԴԻՏ [< кардит < կարդիո...], գ. (բժշկ.): Սրտաբորբ:

ԿԱՐԴԻՈՍԿԼԵՐՈԶ [< кардиосклероз < կարդիո... + հուն. sklērosis], գ. (բժշկ.): Սրտամկանի ախտաբանական վիճակ. պայմանավորված է սրտամկանում շարակցական հյուսվածքի գերաճումով, որով փոխարինվում է ֆունկցիոնալ մկանային հյուսվածքը:

ԿԱՐԴՈ ԵՎ ԴԵԿՈՒՄԱՆՈ [< кардо и декумано < լատ. cardo առանցք և decumanus տասնորդական], գ. (պատմ.): Հին հռոմեական կանոնավոր հատակագծված քաղաքի երկու փոխուղղահայաց մայրուղիների անվանումները. կարդոն՝ հյուսիսային-հարավային, դեկումանոն՝ արևելյան-արևմտյան:

ԿԱՐԵՏ(Ա) [< карета < իտլ. carreta < լատ. carrus սայլ], գ. (հնց.): Ծածկակառք:

ԿԱՐԻԱՏԻԴ [< кариатида < հուն. karyatides, բառացի՝ Հին Հունաստանի Կարիա երկրում Արտեմիսի տաճարի քրմուհիներ], գ. (ճարտ.): Սյունարձան՝ կանգնած կնոջ կերպարանքով:

ԿԱՐԻԵՍ [< кариес < լատ. caries փտում, փտանք], գ. (բժշկ.): Ոսկրափուտ, ոսկրի խրոնիկական քայքայում, որը խոռոչ է առաջացնում նրա մեջ, ոսկրափտախտ:

ԿԱՐԻԵՐԱ [< карьера < ֆր. carriere], գ. Առաջխաղացում ծառայական կամ այլ գործունեության բնագավառում, հայտնի դառնալը, փառքի ևն ձեռք բերելը:

ԿԱՐԻԵՐԻԶՄ [< карьеризм < ֆր.], գ. Կարիերայի՝ պաշտոնի ձգտում, գործի հասարակական շահերը հաշվի չառնելով սեփական բարեկեցություն ստեղծելու և բարձր դիրքի հասնելու ձգտում՝ վարքագիծ՝ գործելակերպ:

ԿԱՐԻԵՐԻՍՏ [карьерист < ֆր.], գ. Առանց հասարակական շահերը հաշվի առնելու միայն իր անձնական հաջողությունների մասին հոգացող, միայն իր համար դիրք՝ կարիերա ստեղծելու ձգտող մարդ, կարիերամոլ:

ԿԱՐԻԿԱՏՈՒՐԱ [< карикатура < իտլ. caricatura], գ. Ծաղրանկար՝ 1. Առարկան՝ անձը ևն ծաղրական գծերով և ցցուն դարձրած բնորոշ գծերով ընդհանուր նմանությամբ պատկերող նկարշարժ: 2. Բնորդի կամ բնանկարի համեմատությամբ աղավաղված նկար: 3. (գրկն.): Կերպարի ծաղրական թերությունները և ծաղրելի գծերը ցցուն կերպով ներկայացնող բնութագիր: 4. Այդպիսի բնութագրությամբ ներկայացված հերոս՝ գործող անձ: 5. *փխբ.* Չափազանց ծիծաղաշարժ կերպար գեղարվեստական երկում: 6. *փխբ.* Որևէ բանի անհաջող նմանություն՝ վերարտադրություն, որևէ բանի թույլ՝ անհաջող՝ աղավաղված արտահայտություն՝ դրսևորում:

ԿԱՐԻԿԱՏՈՒՐԻՍՏ [< карикатурист < իտլ.], գ. Ծաղրանկարիչ, երգիծանկարիչ:

ԿԱՐԻՈԼՈԳԻԱ [< кариологоия < հուն. karyon + logos գիտություն, ուսմունք], գ. (գիտ.): Ցիտոլոգիայի բաժին, որն ուսումնասիրում է բջջակորիզը:

ԿԱՐԻՈԿԻՆԵԶ [< кариокинез < հուն. karyon կորիզ + kinesis շարժում], գ. (գիտ.): Տե՛ս Միտոզ:

ԿԱՐԻՈՊԼԱԶՄԱ [< кариоплазма < հուն. karyon + plasma ստեղծված], գ. (գիտ.): Կորիզահյութ, բջջակորիզի պրոտապլազմա, որը շրջապատող ցիտոպլազմայից սահմանազատված է կորիզաթաղանթով:

ԿԱՐԿԱՍ [< каркас < իտլ. carcassa], գ. 1. (տեխ.): Հիմնակմախք: 2. (ռազմ. հնց.): Հրակմախք: 3. (մսնգ.): Ավտոդողի հիմնական մասը, հիմնամաս:

ԿԱՐՄԱԶԻՆ [< кармазин < գերմ. Karmesin < արաբ. germez որդան կարմիր], գ. (մնծգր.): Մուգ կարմիր, նուրբ մահուդ, ղրմզին:

ԿԱՐՄԻՆ [< кармин < ֆր. carmin < արաբ. germasi վառ կարմիր], գ. (քիմ.): Կար-

միր ներկանյութ. ստացվում է կարմինաթթուն պաղլեղներով մշակելիս:

ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐ [< каролинги < ուշ. լատ. Carolingi, ֆր. Carolingiens, գերմ. Karolinger], գ. (պատմ.): Թագավորական և կայսերական դինաստիա ֆրանկական պետությունում. անվանումը՝ Կարլոս Մեծի (Carolus) անունից: Իշխել են VIII-X դդ.:

ԿԱՐՈՏԱԺ [< каротаж < ֆր. carottage < carotte հորատակեռն, բառացի՝ գազար], գ. (գիտ.): Հորատանցքների երկրաֆիզիկական հետազոտություններ, որոնք տարվում են երկրաբանական կտրվածքներ ուսումնասիրելու և օգտակար հանածոներ հայտնաբերելու նպատակով:

ԿԱՐՈՏԻՆ [< каротин < լատ. carota գազար], գ. (կենսբ.): Գազարի, ձվադեղնուցի, կաթի ևն մեջ գտնվող դեղնանարնջագույն պիգմենտ:

ԿԱՐՈՏԻՆՈՒԴՆԵՐ [< каротинуды < լատ. carota], գ. (կենսբ.): Դեղին, նարնջագույն կամ կարմիր պիգմենտներ, սինթեզվում են բակտերիաների, սնկերի ու բարձրակարգ բույսերի կողմից:

ԿԱՐՊՈԼՈԳԻԱ [< карпология < գերմ. Karpologie < հուն. karpos պտուղ + logos գիտություն], գ. (գիտ. բսբ.): Պտղագիտություն, սերմնագիտություն:

ԿԱՐՍՏ [< карст < գերմ. Karst Հարավսլավիայի Կարստ կամ Կրաս սարավանդի անունից], գ. (գիտ.): Երևույթներ, որոնք առաջանում են լուծվող ապարներում՝ կապված ջրի և քիմիական գործընթացների հետ: Բնութագրվում է մակերեսային և ստորերկրյա ձևերի համալիրով, գետային ցանցի, լճերի և ստորերկրյա ջրերի յուրահատուկ շրջանառությամբ ու ռեժիմով:

ԿԱՐՏ (ՔԱՐԹ) [< карт < անգլ. cart < հին նորվեգ. kartr սայլ, սայլակառք], գ. (տեխ.): Առանց ծածկի, ցածրլիտրաժային մրցարշավային ավտոմոբիլ:

ԿԱՐՏ-ԲԼԱՆՇ, ՔԱՐՏ-ԲԼԱՆՇ [< карт-бланш < ֆր. carte blanche], գ. Գործելու անսահմանափակ ազատություն՝ իրավասություն:

ԿԱՐՏԵԼ [< картель < ֆր. cartel < իտլ. cartello], գ. 1. (տնտսգ.): Խոշոր արդյունաբերական ձեռնարկություն՝ շուկայական մենաշնորհի հասնելու համար:

ԿԱՐՏԵՉ [< картечь < լեհ. kartecza], գ. (ռազմ.): 1. Մանրագնդակի արկ, մանրագնդակով հրետախումբ: 2. Խոշոր կոտորակ՝ որսորդական հրացանի համար:

ԿԱՐՏԵՐ [< картер < անգլ. carter], գ. (տեխ.): Մետաղյա մաս՝ փակ տուփով, որում տեղավորվում են շարժիչի գործող մեխանիզմները:

ԿԱՐՏԻՆԳ, ՔԱՐԹԻՆԳ [< картинг < անգլ. carting < անգլ. cart < հին նորվեգ. kartr սայլ], գ. (սպորտ.): Մրցարշավ՝ կարտ (քարթ) հատուկ տեսակի ավտոմոբիլներով:

ԿԱՐՏՈԳՐԱՖԻԱ [< картография < գերմ. Kartographie < Karte քարտեզ+ հուն. graphō գրում եմ, գծագրում եմ], գ. (գիտ. հնց.): Քարտեզագրություն, քարտեզագրում:

ԿԱՐՏՈԼ, գ. (խսկց.): Տե՛ս Կարտոֆիլ:

ԿԱՐՏՈՆ [< картон < իտլ. cartone ավելացնել, մեծացնել < carta թուղթ], գ. (խսկց.): 1. Ստվարաթուղթ, խավաքարտ: 2. (հնց.): Խավաքարտի տուփ: 3. (խսկց.): Նկարի կամ նրա որևէ մասի սկզբնական ուրվագիծ:

ԿԱՐՏՈՆԱԺ [< картонаж < գերմ. Kartonage, ֆր. cartonnage < ֆր. carton ստվարաթուղթ], գ. (խսկց.): Կարտոնե՝ ստվարաթղթե իրեր:

ԿԱՐՏՈՏ(Թ)ԵԿԱ [< картотека < գերմ. Kartothek, ֆր. cartothèque քարտեզների պահեստարան < հուն. chartes թուղթ + théké արկղ], գ. (հնց.): 1. Քարտարան: 2. Քարտարկղ:

ԿԱՐՏՈՖԻԼ [< картофель < գերմ. Kartoffel], գ. (բսբ.): 1. Մորմազգիների ընտանիքին պատկանող բանջարաբույս: 2. Այդ բույսի արմատապտուղը, կարտոֆիլապալար:

ԿԱՐՏՈՒԶ [< картуз < հոլանդ. kardoes], գ. (խսկց.): Տղամարդու հովարավոր գլխարկ:

ԿԱՐՏՈՒՇ [< картуш < ֆր. cartouche], գ. (մսնգ.): Զարդատախտակ (շենքի մուտքի վրա):

ԿԱՐՑԵՐ [< карцер < լատ. carcer խավարան, բանտ], գ. (ռազմ.): Պատժախուց, մենախուց:

ԿԱՐՑԻՆՈԼՈԳԻԱ [< карцинология < հուն. karkinos խեցգետին + logōs գիտություն], գ. (կենդբ.): Կենդանաբանության բաժին, որ ուսումնասիրում է խեցգետնանմաններին:

ԿԱՐՑԻՆՈՄԱ [< карцинома < հուն.], գ. (բժշկ.): Չարորակ ուռուցքի տեսակ:

ԿԱՐՈՒՍԵԼ [< карусель < ֆր. carrousel < իտլ. carosello], գ. 1. Նավակի, ձիու և ձևով նստելատեղերով պտտվող հարմարանք հասարակական վայրերում՝ մանկական զվարճախաղերի համար: 2. *փխբ.* Սրընթաց շրջապտույտ :

ԿԱՈՒՉՈՒԿ [< каучук < անգլ. caoutchouc < իսպ. caucho < պերուական հնդկացիների լեզվից], գ. Մի քանի արևադարձային բույսերի կաթնահյութից ստացվող կամ արհեստական՝ գործարանային՝ քիմիական եղանակով պատրաստվող առաձգական նյութ:

ԿԱՈՒՉՈՒԿԵՆԻ, գ. Թզենու ծառատեսակներից մեկը, որ կաուչուկային կաթնահյութ է արտադրում:

ԿԱՈՒՊԵՐ [< каупер < անգլիացի ինժեներ և գյուտարար Կաուպերի անունով], գ. (տեխ.): Հրահալոցներում օդը տաքացնելու հարմարանք:

ԿԱՈՒՍՏԻԿ [< каустический < հուն. kaustikos այրիչ], ած. 1. Այրեցական: 2. Կծու նատրիումի տեխնիկական անվանումը:

ԿԱՈՒՍՏՈԲԻՈԼԻԹՆԵՐ [< каустобиолиты < հուն. kaustikos այրվող + bios կյանք + lithos քար], գ. (գիտ.): Օրգանական ծագմամբ այրվող հանածոներ:

ԿԱՖԵ [< кафе < ֆր. café < արաբ. qahwa սուրճ], գ. (խսկց.): Սրճարան՝ փոքր ռեստորան, որտեղ սուրճ, թեյ, նախաճաշ և են մատուցում:

ԿԱՖԵԴՐԱ [< кафедра < հուն. kathedra աթոռ, բազկաթոռ], գ. (խսկց.): Ամբիոն՝ զանազան նշանակություններով:

ԿԱՖԵԼ [< кафель < գերմ. Kachel], գ. (խսկց.): Հախճասալ, հախճաղյուս:

ԿԱՖԵՇԱՆՏԱՆ [< кафешантан < ֆր. café + chantant երգող], գ. Զվարճարան. բաց համերգային բեմով սրճարան երբեմն անպարկեշտ բնույթի ելույթների համար:

ԿԵԲ [< кеб < անգլ. cab], գ. (պատմ.): Միաձի կառք (Անգլիայում):

ԿԵԳԻԼ, ԿԵԳԼ [< кегль < գերմ. Kegel], գ. (տպգր.): Տպատառի մեծություն, տպագրական տառատեսակի չափս:

ԿԵԳԼԻ [< кегли < գերմ. Kegel, բառացի՝ կոնաձև մարմին], գ. (սպորտ.): 1. Տաշած փայտի սյունիկ՝ խաղի համար: 2. Տե՛ս Կեգլախաղ, բոուլինգ:

ԿԵԳԼԱԽԱՂ, գ. (սպորտ.): Կեգլիներով խաղ:

ԿԵԼՏՈԼՈԳԻԱ [< кельтилогия < գերմ. Kelt < անգլ. Celt + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Կելտագիտություն, կելտաբանություն՝ գիտություն կելտերի մշակույթի և լեզվի մասին:

ԿԵՄՊԻՆԳ, Տե՛ս ՔԵՄՓԻՆԳ:

ԿԵՆԳՈՒՐՈՒ [< кенгуру < անգլ. kangaroo < ավստրալ. բնիկների լեզվից], գ. (կենդբ.): Իր ձագին փորի տակ գտնվող պարկի մեջ կրող ավստրալիական կաթնասուն կենդանի, ագեվազ:

ԿԵՆՈՏԱՖ [< кенотаф < հուն. kenotaphos դատարկ գերեզման], գ. (պատմ. ճարտ.): Մահարձան (Հին Հռոմում, Հունաստանում, Եգիպտոսում ևն), որի տակ ամփոփված չէր մեռածի աճյունը:

ԿԵՆՈՏՐՈՆ [< кенотрон < հուն. kenos դատարկ + էլեկտրոն], գ. (ռադ.): Էլեկտրավակուումային դիոդ. նախատեսված է գլխավորապես արդյունաբերական հաճախականության փոփոխական հոսանքի համուղղման համար:

ԿԵՆՏԱՎՐ(ՈՍ) [< кентавр < հուն. Kentauros], գ. (դից.): Դիցաբանական հերոս հին հույների մոտ՝ կիսամարդ, կիսաձի:

ԿԵՊԻ [< кепи < ֆր. kepi], գ. (խակց.): Տղամարդու հովարավոր գլխարկ:

ԿԵՊԿԱ [< ռուս. кепка], գ. Նույնն է՝ Կեպի:

ԿԵՌՆ [< керн < գերմ. Körner միջուկ], գ. (երկրբ.): Ապարի գլանաձև այունակ, որը ստացվում է այունակային հորատման միջոցով:

ԿԵՍԱՐ [< кесарь < լատ. Caesar], գ. (պատմ.): Հռոմի միապետների անվանումը:

ԿԵՍԱՐՅԱՆ ՀԱՏՈՒՄ[< кесарское || кесарево сечение < լատ. sectio ceasarea] - (բժշկ.): Ծննդաբերության անհնարինության դեպքում մոր որովայնախոռոչի և արգանդի վիրահատություն՝ երեխային դուրս հանելու համար:

ԿԵՍՈՆ [< кессон < ֆր. caisson < լատ. capsa արկղ], գ. 1. (ճարտ.): Սովորաբար քառանիստ կամ բազմանիստ արկղաձև խորացում առաստաղի, թաղք, կամարի, գմբեթի մակերեսին: 2. (տեխ.): Զանգակաձև սարք ստորջրյա աշխատանքների համար:

ԿԵՏՉՈՒՊ [< кетчуп < անգլ. ketchup < չին. ke-tsiap կծու սոուս ձկան համար], գ. (խոհր.): Մսային ևն կերակրատեսակների հետ մատուցվող՝ լոլիկից ևնից պատրաստված համեմունք՝ սոուս:

ԿԵՐԱՄԻԿԱ [< керамика < հուն. keramikos կավե], գ. 1. Խեցեգործություն: 2. (հվք.): Խեցեղեն: 3. Զանգված, որից խեցեղեն առարկաներ՝ իրեր են պատրաստում:

ԿԵՐԱՏԻՆ [< кератин < հուն. keras, keratos], գ. (կենսբ.): Կենդանիների եղջյուրների՝ սմբակների ևն մեջ պարունակվող սպիտակուցային նյութ:

ԿԵՐԱՏԻՏ [< кератит < keras (keratos) եղջյուր], գ. (բժշկ.): Աչքի եղջերաթաղանթի բորբոքում:

ԿԵՐԱՏՈՖԻՐ [< кератофир < հուն.], գ. (երկրբ.): Էֆուզիվ, երբեմն մերձհրաբխային նատրիումով հարուստ պալեոտիպ ապար:

ԿԵՐԱՐԳԻՐԻՏ [< кераргирит < հուն. keres + argyros արծաթ], գ. (հնք.): Քլորարգիրիտ, միներալ: Խառնուրդների ձևով պարունակում է բրոմ, սակավ՝ սնդիկ: Հանդիպում է արծաթի հանքավայրերի օքսիդացման գոտում:

ԿԵՐՆԵՐ, ԿԵՌՆԵՐ [< кернер < գերմ. Körner], գ. (տեխ.): Խառատի սրածայր գործիք՝ պինդ մակերեսի վրա փոսեր անելու համար:

ԿԵՐՈՍԻՆ [< керосин < անգլ. kerosene], գ. Թորած նավթ, նավթի թորումից ստացված այրվող հեղուկ:

ԿԵՐՈՍԻՆԿԱ [< ռուս. керосинка < անգլ.], գ. (խսկց.): Նավթավառ՝ նավթով վառվող պատրույգավոր հարմարանք՝ կերակուր եփելու, ջուր տաքացնելու կամ եռացնելու ևն համար:

ԿԵՔՍ [< кекс < անգլ. հոգն. cakes], գ. (խոհր.): Մի տեսակ քաղցրահամ խմորեղեն:

ԿԵՖԱԼ [< кефаль < հուն. kephalē], գ. (կենդբ.): Երկայնաձուկ:

ԿԵՖԻՐ [< ռուս. кефир < օսեթերեն k'æpy], գ. (խոհր.): Կաթից կաթնաթթվային և սպիրտային խմորումով ստացվող մածնի տեսակ, գերմակարդված կաթ:

ԿԻ(Յ) [< кий < լեհ. kij փայտիկ, չորակ], գ. (սպորտ.): Բիլիարդ խաղալու համար երկար ձող:

ԿԻԲԵՌՆԵՏԻԿ [< кибернетик < հուն.], գ. ած. 1. Կիբեռնետիկայի մասնագետ: 2. Կիբեռնետիկական՝ կիբեռնետիկին հատուկ՝ վերաբերող:

ԿԻԲԵՌՆԵՏԻԿԱ [< кибернетика < հուն. kybernētika ղեկավարելու, ղեկակալելու արվեստ], գ. (գիտ.): Գիտություն կազմակերպված համակարգերում (մեքենաներում, կենդանի օրգանիզմներում և հասարակության մեջ) կառավարման և կապի գործընթացների ընդհանուր օրինաչափությունների մասին:

ԿԻԲՈՒՑ [< кибуц < իվրիտ qibbuts կոլեկտիվ, հանրություն], գ. (հզվդ.): Գյուղական հանրային տնտեսության ձև Իսրայելում:

ԿԻԼԵԿՏՈՐ [< килектор < հոլանդ. kiellechter < kiel հեծան + lichter բեռնանավ], գ. (ծով.): Հզոր բեռնաբարձ հարմարանքներ ունեցող բեռնանավ:

ԿԻԼԵՐ, ՔԻԼԵՐ [< киллер < անգլ. to kill < killer սպանող], գ. (խսկց.): Վարձու մարդասպան:

ԿԻԼԿԱ [< килька < էստ. kilu], գ. (կենդբ.): Ծովատառեխների ընտանիքին պատկանող արդյունագործական փոքր ձուկ:

ԿԻԼՈ... [< кило... < ֆր. kilo... < հուն. chilioi հազար] Ելակետային միավորից 1000 անգամ մեծ միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց: Կրճատ նշանակվում է կ:

ԿԻԼՈԲԱՅԹ [< килобайт < կիլո... + բայթ], գ. (հմկրգչ.): Համակարգչի հիշողության ծավալի չափման միավոր. հավասար է 1024 բայթի,կբ:

ԿԻԼՈԳՐԱՄ [< килограмм < ֆր. kilogramme < կիլո... + գրամ], գ. Ծանրության չափման միավոր. հավասար է 1000 գրամի,կգ:

ԿԻԼՈՄԵՏՐ [< километр < ֆր. kilometre < կիլո... + մետր I], գ. Երկարության չափման միավոր. հավասար է 1000 մետրի,կմ:

ԿԻԼՈՄԵՏՐԱԺ [< километраж < ֆր. kilometrage < հուն.], գ. Կիլոմետրերով չափված տարածություն:

ԿԻԼՈՎԱՏՏ [< киловатт < կիլո... + վատտ՝ ֆիզիկոս Վատտի (1736-1819թթ.) անունից], գ. (էլեկտր.): Էլեկտրական հոսանքի հզորության չափման միավոր = 1000 վատտի:

ԿԻԼՈՎԱՏՏ – ԺԱՄ, գ. (էլեկտր.) Էլեկտրական հոսանքի ուժի չափման միավոր = մեկ ժամում մեկ կիլովատտով կատարվող աշխատանքի:

ԿԻԼՈՎՈԼՏ [< киловольт < կիլո... + վոլտ՝ իտալացի ֆիզիկոս Ալեքսանդր Վոլտի (1745-1827թթ.) անունից], գ. Հազար վոլտ:

ԿԻԼՎԱՏՐ [< кильватер < հոլանդ. kielwater < kiel նավի ողնափայտ + water ջուր], գ. (ծով.): 1. Շարժվող նավի ջրահետքը: 2. Ուղիղ գծով իրար հետևից շարժվող նավերի քարավան:

ԿԻԿԼՈՊ [< циклоп < հուն. kyklōps], գ. (դից.): Հին հունական դիցաբանության

մեջ՝ ճակատի մեջտեղում մեկ աչք ունեցող հսկա հրեշ, ցիկլոպ:

ԿԻՄՈԳՐԱՖ [< кимограф < հուն. kyma ալիք + graphō գրում եմ], գ. (մանգ.): Զանազան բնախոսական գործընթացների կորագծերը գրանցող գործիք:

ԿԻՄՈՆՈ [< кимоно < ճապ.], գ. Ճապոնական խալաթանման վերնազգեստ:

ԿԻՆԵՄԱՏԻԿԱ [< кинематика < հուն. kinēma (kinēmatos) շարժում], գ, (տեխ.): Տեսական մեխանիկայի մի բաժինը, որն ուսումնասիրում է մարմինների շարժումը երկրաչափական տեսանկյունից՝ գործող ուժերից անկախ, շարժագիտություն:

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖ [< кинематограф < հուն. kinēma շարժում + graphō գրում եմ], գ. (տեխ.): Լուսազգայուն ժապավենի վրա շարժման մեջ գտնվող օբյեկտների, ինչպես նաև էկրանի վրա շարժական պատկերներ ստանալու գործիք:

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱ [< кинематография < հուն. kinēma (kinēmatos) շարժում + graphō գրում եմ], գ. 1. (կինո.): Կինոարվեստ: 2. Կինոնկարների նկարահանումն ու ցուցադրումը:

ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻՍՏ [< кинематографический < հուն.], գ. ած. Կինեմատոգրաֆիայի աշխատող:

ԿԻՆԵՍԿՈՊ [< кинескоп < հուն. kineō շարժում + skopeō նայում եմ], գ. (տեխ.): Էլեկտրոնաճառագայթային խողովակ, որ կիրառվում է հեռուստատեսության մեջ:

ԿԻՆԵՏԻԿԱ [< кинетика < հուն. kinētikos շարժման մեջ դնող, շարժող], գ. (ֆիզ.): Մեխանիկայի հիմնական բաժին. միավորում է դինամիկան և ստատիկան:

ԿԻՆԵՏՈԳՐԱՖԻԱ [< кинетография < հուն. kinēma + graphō գրում եմ], գ. (արվ.): Պարագրություն՝ պարի, լայն առումով՝ շարժման գրանցում:

ԿԻՆԻԿՆԵՐ [< киники < հուն. < լատ. cynici], գ. (պատմ.): Սոկրատեսյան փիլիսոփայական դպրոց Հին Հունաստանում:

ԿԻՆՈ [< кино < հուն. kineō շարժել], գ. 1. Նույնն է՝ Կինեմատոգրաֆիա՝ կինոարվեստ: 2. Կինոնկարներ ցուցադրելու շենք, կինոթատրոն: 3. (խսկց.): Կինոնկար:

ԿԻՆՈԼՈԳ [< кинолог < հուն.], գ. Շնաբան, շների մասնագետ:

ԿԻՆՈԼՈԳԻԱ [< кинология < հուն. kyōn (kynos) շուն + logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն շների մասին, շնաբանություն:

ԿԻՇԼԱԿ [< кишлак < թուրք. Kyšlak < kyš ձմեռ, ձմեռում], գ. (խսկց. հնց.): Գյուղ, բնակավայր, դշլաղ (Միջին Ասիայում, Աֆղանստանում, Իրանում):

ԿԻՈՍԿ [< киоск < ֆր. kiosque < թուրք. kōšk տաղավար], գ. (խսկց.): Կրպակ, տաղավար. փոքր շինվածք՝ խանութ մանր առևտրի համար:

ԿԻՊԱՐԻՍ [кипарис < հուն. kyparissos], գ. (բսբ.): Նոճի՝ հարավային մշտականաչ փշատերև ծառ:

ԿԻՍԵԼ [< ռուս. кисель < кислый թթու], գ. (խոհր.): Կարտոֆիլի ալյուրից և զանազան մրգերի հյութերից պատրաստված թանձրահեղուկ՝ դոնդողանման խմիչք, անուշապուր:

ԿԻՍՏԱ [< киста < հուն. kistē արկղ], գ. (բժշկ.): Ուռուցքային գոյացություն:

ԿԻՎԵՐ [< кивер < լեհ. kiwior], գ. (ռազմ.): Բարձրադիր զինվորական գլխարկ՝ փետուրներով զարդարված::

ԿԻՎԻ [< киви < անգլ. kiwi < մալայերեն], գ. 1. (բսբ.): Մերձարևադարձային ծառի տեսակ: 2. Այդ ծառի պտուղը:

ԿԻՏԵԼ [< китель < գերմ. Kittel], գ. (խսկց.): Զինվորական (նաև քաղաքացիական)՝ լանջերը բաց բաճկոնակ: 3. (կենդբ.): Թռչնատեսակ (չզարգացած թևիկներով)

ԿԻՐԶԱ [< кирза < գերմ. Kirsei < անգլ. kersey], գ. (մնծգր.): Կաշվին փոխարինող բազմաշերտ և հատուկ բաղադրությամբ տոգորված գործվածք:

ԿԻՔՍ, ԿԻԿՍ [< кикс < անգլ. kicks], գ. 1. (սպորտ.): Բիլիարդային տերմին, որով անվանում են կիով անհաջող հարվածը խաղագնդին: 2. (կինո.): Վրիպումներ՝ սխալներ կինոնկարում:

ԿԼԱՆ [< клан < կելտ. clann], գ. 1. (պատմ.): Տոհմային համայնք (կելտերի և այլ ժողովուրդների մոտ): 2. (քղբ.): Քաղաքական, նյութական և այլ շահերով իրար հետ կապված մարդկանց խումբ:

ԿԼԱՊԱՆ [< клапан < գերմ. Klappe փական], գ. (տեխ. խսկց.): Մեքենայի նևի մեջ դետալ, որը կանոնավորում է գազի կամ հեղուկ վառելիքի, օդի նևի հոսքը, կափույր, փական:

ԿԼԱՌՆԵՏ [< кларнет < ֆր. clarinette < հին. ֆր. clarine զանգակիկ], գ. (երժշտ.): Փայտե փողային երաժշտական գործիք:

ԿԼԱՌՆԵՏԱՀԱՐ, գ. ած. Կլառնետ նվագող:

ԿԼԱՌՆԵՏԻՍՏ [< кларнетист < ֆր.], գ. ած. Կլառնետ նվագող երաժիշտ:

ԿԼԱՍԻԿ [< классический < լատ. classicus օրինակելի], գ. ած. Դասական՝ 1. Գրականության, գիտության, արվեստի նշանավոր՝ օրինակելի, առաջատար գործիչ: 2. Կլասիցիզմի (տե՛ս) հիմնադիր կամ ներկայացուցիչ: 3. գ. Դասական բանասիրության (հին հունական և լատինական լեզուների ու գրականության) մասնագետ:

ԿԼԱՍԻԿԱ [< классика < լատ. classis կարգ, դաս], գ. (հվք.): Գրականության և արվեստի դասական՝ օրինակելի ստեղծագործությունների ամբողջություն:

ԿԼԱՍԻՑԻԶՄ [< классицизм < գերմ. Klassizismus], գ. Դասականություն՝ անտիկ արվեստն ու գրականությունն ընդօրինակող և ուսումնասիրող հոսանք՝ արվեստի և գրականության մեջ (XVII-XIX դարի սկիզբը):

ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱ [< классификация < ֆր. classification < լատ. classis դաս, խումբ, կարգ], գ. (գիտ. հնց.): 1. Դասդասում, դասդասելը, դասակարգում, դասակարգելը: 2. Դասակարգություն:

ԿԼԱՎԵՍԻՆ [< клавесин < ֆր. clavecin], գ. (երժշտ.): Ստեղնավոր հնագույն երաժշտական գործիք, որը նախորդել է դաշնամուրին:

ԿԼԱՎԻԱՏՈՒՐԱ [< клавиатура < գերմ. Klaviatur < լատ. clavis բանալի], գ. (երժշտ.): Ստեղնաշար:

ԿԼԱՎԻԿՈՐԴ [< клавикорд(ы) < ֆր. clavicorde], գ. (երժշտ.): Ստեղնաշարային հարվածային երաժշտական գործիք, տարածված էր Եվրոպայի երկրներում:

ԿԼԱՎԻՐ [< клавир < գերմ. Klavier], գ. (երժշտ.): 1. Ստեղնավոր լարային երաժշտական գործիքների ընդհանուր անունը: 2. Դաշնամուրի համար մշակված երաժշտություն:

ԿԼԱՈՒԶՈՒԼԱ [< клаузула < լատ. clausula եզրափակում, վերջավորություն], գ. 1. (տոչփ.): Բանաստեղծական տողի վերջավորությունը՝ սկսած վերջին շեշտված վանկից: 2. (իրավք.): Հատուկ պայման (վերապահված): 3. (հռետ.): Ճռի եզրափակիչ մասը:

ԿԼԱՈՒՍՏՐՈՖՈԲԻԱ [< клаустрофобия < լատ. claustrum փակ տարածություն + հուն. phobos վախ], գ. (բժշկ.): Հոգեկան խանգարման տեսակ՝ վախ փակ տարածություններից:

ԿԼԵՅ [< ռուս. клей], գ. (խսկց.): Սոսինձ՝ թուղթ են միմյանց ամրացնելու միջոց:

ԿԼԵՅՍՏՈԳԱՄԻԱ [< клейстогамия < հուն. kleistos փակ + gamos ամուսնություն], գ. (բսբ.): Բույսերի ինքնափոշոտումը և ինքնաբեղմնավորումը կլեյստոգամ ծաղիկներում, որոնք սովորաբար չբացվող են, մանր, աննշան:

ԿԼԵՐԿ, ՔԼԵՐՔ [< клерк < ֆր. clerc < անգլ. clerk], գ. (խսկց.): Ծառայող Անգլիայում, ԱՄՆ-ում:

ԿԼԻԵՆՏ [< клиент < լատ. cliens (clientis) հլու], գ. (խսկց.): 1. Հաճախորդ: 2. Պատվիրատու: 3. Պաշտպանյալ:

ԿԼԻԵՆՏՈՒՐԱ [< клиентура < լատ. cliens (clientis)], գ. (խսկց.հվք.): Կլիենտներ, կլիենտների ամբողջություն:

ԿԼԻԶՄԱ [< клизма < հուն. klysma լվացում], գ. (բժշկ.): 1. Հոգնա՝ աղիքների մեջ հեղուկ ներարկելու հարմարանք: 2. Այդ հարմարանքով աղիքների մեջ հեղուկ ներարկել:

ԿԼԻԿ [< клика < ֆր. clique ավազակախումբ, բանդա], գ. Չար՝ ստոր՝ հանցավոր շահադիտական նպատակներով գործող անձանց խումբ, հանցախումբ:

ԿԼԻՄԱ [< климат < հուն. klima (klimatos) կլիմայական գոտի], գ. (երկրբ.): Տվյալ տեղին՝ աշխարհագրական գոտուն հատուկ մթնոլորտային՝ օդերևութաբանական ամբողջությունը, եղանակ:

ԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱ [< климатология < գերմ. Klimatologie < հուն. klima եղանակ + logōs գիտություն], գ. (գիտ.): Կլիմայաբանություն, կլիմայագիտություն:

ԿԼԻՄԱՔՍ [< климакс < հուն. klimax սանդուղքի աստիճան, սանդղաստիճան], գ. (բժշկ.): Դաշտանադադար՝ անցումային շրջան սեռական հասունությունից դեպի ծերություն:

ԿԼԻՆԻԿԱ [< клиника < հուն. klinikos անկողնային < kline անկողին], գ. (բժշկ.): Բուժական հիմնարկ, որտեղ կատարվում են բուժում, ուսուցում և գիտահետազոտական աշխատանքներ:

ԿԼԻՆԿԵՐ [< клинкер < գերմ. Klinker < անգլ. clinker], գ. (արտ.): 1. Դժվարահալ եռակալված զանգված: 2. Բարձր ջերմաստիճանում թրծված մեծ ամրության աղյուս: 3. Մինչև եռակալումը թրծված հումքային խառնուրդ, օգտագործվում է ցեմենտի պատրաստման համար:

ԿԼԻՆՉ [< клинч < անգլ. clinch ճնշում, սեղմում], գ. (սպորտ.): Բռնցքամարտում արգելված հնարք, երբ մարզիկները, իրար մոտենալով, բռնում են միմյանց և ոչ մի գործողություն չեն իրականացնում:

ԿԼԻՇԵ [< клише < ֆր. chiché], գ. (տպգր.): Մետաղյա կամ փայտյա տպագրական վերարտադրական ձև (նկար, գծագիր ևն)՝ տպագրող ցցուն տարրերով:

ԿԼԻՈ [< Клио < հուն. Kleiō], գ. (դից.): Հունական դիցաբանության մեջ՝ ինը մուսաներից մեկը՝ պատմության հովանավորը:

ԿԼԻՊ, ՔԼԻՊ [< клип < անգլ. clip կտրել], գ. (կինո.): Կարճ ֆիլմ կամ տեսաֆիլմ, որը նկարահանվել է հիմնականում երաժշտության կամ գովազդի այուժեով, տեսահոլովակ:

ԿԼԻՊԵՐ [< клипер < клиппер < անգլ. clipper], գ. (ծով.): Ծովային արագընթաց առագաստանավ: Ունի ձգված ձև, 3-4 կայմ և զարգացած առագաստային համակարգ:

Կ(Ք)ԼԻՊՄԵՅՔԵՐ [< клипмейкер < անգլ. clipmaker], գ. (կինո.): Տեսահոլովակ նկարահանող:

ԿԼԻՊՍ(ՆԵՐ) [< клипс(ы) < անգլ. clips < to clip սեղմել], գ. (խսկց.): Ականջաբլթակին ամրացվող զարդարանք (առանց բլթակը ծակելու):

ԿԼԻՍՏՐՈՆ [< клистрон < հուն.], գ. (տեխ.): Գերբարձր հաճախականության էլեկտրավակուումային սարք:

ԿԼԻՎԱԺ [< кливаж < անգլ. cleavage ճեղքում], գ. (երկրբ.): Ապարների ճեղքումը նուրբ շերտիկների: Դիտվում է երկրակեղևի շերտերի գծային ծալքերի տարածման մարզերում:

ԿԼՅԱՍԵՐ [< кляссер < լատ. classis կարգ], գ. (խսկց.): Ֆիլատելիստական հատուկ ալբոմ՝ դրոշմանիշեր պահելու՝ հավաքելու համար, դրոշմանիշերի ալբոմ:

ԿԼՅԱՈՒԶԱ [< кляуза < լատ. clausula վերապահություն, լրացուցիչ հոդված], գ. (խսկց.): Զրպարտանք, բանսարկություն, անհիմն մեղադրանք: 2. Մանր բծախնդրական հայց, դատական սուր գանգատ:

ԿԼՅԱՈՒԶՆԻԿ [< кляузник < լատ.], գ. ած. (խսկց.): Զրպարտիչ, կլյաուզայով զբաղվող (անձ), բանսարկու:

ԿԼՈՆ [< клон < հուն. klōn ճյուղ, ոստ], գ. (գիտ.): Գենետիկորեն համասեռ ժառանգություն՝ ժառանգորդ (բույսի, կենդանու ևն):

ԿԼՈՒՆ [< клоун < անգլ. clown], գ. ած. (խսկց.): Կրկեսի կատակաբան՝ կատակերգու՝ ծաղրածու, խեղկատակ:

ԿԼՈՒԲ [< клуб < անգլ. club], գ. (խսկց.): Ակումբ:

ԿԼՈՒՄԲԱ [< клумба < անգլ. clump ծառերի, թփերի խումբ], գ. (խսկց.): Թումբ, ծաղկաթումբ (որոշակի ձևով՝ պատկերով):

ԿՅՈՐԼԻՆԳ [< кёрлинг < անգլ. curling < curl պտտել], գ. (սպորտ.): Սառույցի վրա՝ մականով խաղի տեսակ:

ԿՅՈՒՎԵՏ [< кювет < ֆր. cuvette], գ. 1. (ռազմ. տեխ.): Խրամառու: 2. Ճամփեզրի ջրատար առու:

ԿՅՈՒՐԵ [< кюре < ֆր. curé < լատ. curare խնամել], գ. (կրոն.): Կաթոլիկ քահանա (Ֆրանսիայում, Բելգիայում և որոշ այլ երկրներում):

ԿՅՈՒՐԻ [< кюри < կոչվել է ֆր. ֆիզիկոսներ Պ. Կյուրի և Մ. Սկլոդովսկայա-Կյուրիի անունից], գ. (ֆիզ.): Ռադիոակտիվ աղբյուրում նուկլիդի (իզոտոպի) ակտիվության արտահամակարգային միավոր: Նշանակվում է կյուրի, Ci:

ԿՆԵՍԵՏ [< кнессет < հին հրեերեն knesset ժողով], գ. (քղք.): Իսրայելի խորհրդարանը՝ պառլամենտը:

ԿՆՈՊԿԱ [< кнопка < հոլանդ. knoop կոճակ], գ. (խսկց.): 1. Սեղմակ, սեղմակ: 2. Կոճգամ, կոճակ: 3. (էլեկտր. տեխ.): Կոճակ, կոճակիկ:

ԿՈԱԳՈՒԼԱՑՈՒՄ [< коагуляция < լատ. coagulatio թանձրացում, մակարդում], գ. (գիտ.): Մակարդում՝ դիսպերս համակարգերի և հատկապես կոլոիդների համակարգերի մասնիկների միաձուլում՝ դրանց բախումների ժամանակ:

ԿՈԱԼԱ [< коала < ավստրալ. բնիկների լեզվից, բառացի՝ շխմող], գ. (կենդբ.): Պարկավոր կենդանի, որ ապրում է Արևելյան Ավստրալիայի անտառներում, պարկավոր արջ:

ԿՈԱԼԵՍՑԵՆՏՈՒՄ [< коалесценция < լատ. coalescentio կպչում, սերտաճում, միացում], գ. (գիտ.): Գազային միջավայրում (մառախուղ) կամ հեղուկում (էմուլսիա) գազի բշտիկների կամ հեղուկի կաթիլների (գոլորշի) միաձուլումը մոլեկուլային ուժերի ազդեցության տակ:

ԿՈԱԼԻՑԻԱ [< коалиция < լատ. coalitus միացյալ], գ. (քղք.): Պետությունների՝ կուսակցությունների միավորում՝ ընդհանուր նպատակների հասնելու համար:

ԿՈԱԼԻՑԻՈՆ [< коалиционный < լատ.], ած. 1. Կոալիցիային վերաբերող՝ հատուկ: 2. Կոալիցիայի սկզբունքներով կազմած:

ԿՈԱՑԵՐՎԱՑԻԱ [< коацервация < լատ. coacervatio կուտակում], գ. (գիտ.): Բարձրամոլեկուլային միացությունների լուծույթում՝ լուծված նյութով հագեցած կաթիլների առաջացումը:

ԿՈԱՔՍԻԱԼ ՄԱԼՈՒԽ [< коаксиальный (< լատ. co (cum) համատեղ + axis առանցք) провод] - (տեխ.): Մեկ կամ մի քանի (մինչև 20) կոաքսիալ զույգերից կազմված մալուխ, որոնցում երկու հաղորդալարերը օդային-պոլիէթիլենային մեկուսացումով անջատված համառանցք գլաններ են: Օգտագործվում է ռադիոտեխնիկայում:

ԿՈԲԱԼՏ [< кобальт < գերմ. Kobalt], գ. 1. (քիմ.): Արծաթասպիտակագույն կարծր դժվարահալ ռադիոակտիվ մետաղ: 2. Մուգկապտագույն ներկ, որի բաղադրության մեջ մտնում է այդ մետաղը:

ԿՈԲԱԼՏԻՆ [< кобальтин < գերմ.], գ. (քիմ.): Կոբալտային փայլ, միներալ: Կոբալտի ստացման գլխավոր հանքային միներալներից է:

ԿՈԲՈԼ [< КОБОЛ < հպվ. COBOL < անգլ. CO (mmon) B(usiness) O(riented) L(anguage)], գ. (գիտ.): Ծրագրավորման լեզու՝ տնտեսական, հաշվառման և հատկապես առևտրական խնդիրների լուծման ալգորիթմները նկարագրելու համար:

ԿՈԲՐԱ [< кобра < պորտ. cobra օձ], գ. (կենդբ.): Թունավոր օձ՝ նայա, որն ապրում է տաք երկրներում:

ԿՈԳՆԻՏԻՎ [< когнитивный < գերմ. kognitiv, ֆր. cognitif < լատ. cognoscere հասկանալ, գիտակցել], ած. (հոգեբ.) Գիտակցությանը՝ մտածողությանը հատուկ՝ վերաբերող:

ԿՈԴ [< код < ֆր. code], գ. 1. Պայմանական նշանների համակարգ, որ գործածվում է կապային հաղորդման, տարբեր ինֆորմացիաների մշակման ու պահպանման համար: 2. Պայմանական նշանների կամ ազդանշանների համակարգ՝ հեռախոսով, հեռագրով, ռադիոյով ևն տեղեկությունների հաղորդման համար:

ԿՈԴԱ [< кода < իտլ. coda պոչ, հավելում < լատ. cauda], գ. 1. (տոչփ.): Տողերի կայուն քանակ ունեցող բանաստեղծության (սոնետ, ռոնդո ևն) մեջ լրացուցիչ վերջատող, որն ամփոփում է ստեղծագործության իմաստը: 2. (երժշտ.): Որևէ երաժշտական ամբողջական պիեսի լրացուցիչ, ավարտական բաժինը:

ԿՈԴԵԻՆ [< кодеин < հուն. kodia կակաչի գլխիկ՝ կակաչագլխիկ], գ. (դեղագրդ.): Սպիտակ բյուրեղային դեղափոշի (օգտագործվում է հազի դեմ):

ԿՈԴԵՔՍ [< кодекс < լատ. codex (codicis) գիրք], գ. 1. Ձեռագիր մատյան: 2. (իրավք.): Իրավունքի որևէ բնագավառին վերաբերող օրենքների համակարգված ժողովածու, օրենսգիրք: 3. *փխբ.* Սովորույթների, համոզմունքների, վարվելու ևն կանոնների ամբողջությունը: 4. Որևէ գիտության՝ գիտակարգին ևն հիմնական, որպես ուղեցույց, հանդիսացող սկզբունքները մարմնավորող աշխատություն:

ԿՈԴԻՖԻԿԱՑԻԱ [< кодификация < լատ. codex գիրք + facere անել], գ. (իրավք.): Իրավունքի տարբեր բնագավառների օրենքների միավորումը՝ մեկ միասնական ամբողջականության՝ կոդեքսի վերածումը:

ԿՈԵՖԻՑԻԵՆՏ [< коэффициент < լատ. coefficiens (coefficientis) օժանդակող, աջակցող], գ. 1. (ֆիզ. մաթ.): Գործակից: 2. (տնտսգ.): Ապահովագրողի կողմից կրած վնասների ու ստացված պարգևավճարների հարաբերակցությունը մեկ տարվա ընթացքում:

«ԿՈԶԱ ՆՈՍՏՐԱ» [< "Коза ностра" < իտլ. «Cosa nostra» «Մեր գործը»] - ԱՄՆ-ում կազմակերպված հանցագործ խմբավորման (մաֆիական կազմակերպության) անվանում:

ԿՈԼԱԳԵՆ [< коллаген < հուն. kolla սոսինձ + genos], գ. (գիտ.): Սկլերոպրոտեինների խմբի ֆիբրիլային սպիտակուց. կենդանիների շարակցական հյուսվածքի կոլագենային թելիկների հիմնական մասն է:

ԿՈԼԱԺ [< коллаж < ֆր. collage սոսնձում], գ. (նկարչ.): Տեխնիկական հնարք կերպարվեստում, հիմնաշերտի վրա տարբեր գույներ և ֆակտուրաներ ունեցող նյութեր փակցնելը:

ԿՈԼԱՊՍ [< коллапс < լատ. collapsus թուլացած], գ. (բժշկ.): Սրտի գործունեության հանկարծակի անկում՝ նվազանք:

ԿՈԼԲԱ [< колба < գերմ. Kolben, բառացի՝ մահակ, դագանակ], գ. (խսկց.): (քիմ.): Փորձանոթ՝ ապակյա երկար վզիկով (բերանով) անոթ՝ քիմիական աշխատանքների համար:

ԿՈԼԳՈՏԿԱ [< колготки < չեխ. punčoškovy kalvoty, բառացի՝ գուլպայատաբատ], գ. (խսկց.): Զուգագուլպա:

ԿՈԼԵԳԱ [< коллега < լատ. collega ընկեր], գ. (խսկց.): Համանման աշխատանքի՝ գիտության ընկեր, միևնույն մասնագիտությունը՝ կոչումը ևն ունեցողները միմյանց նկատմամբ, պաշտոնակից, ընկերակից, գործընկեր:

ԿՈԼԵԳԻԱ [< коллегия < լատ. collegium], գ. 1. Վարչական, խորհրդակցական կամ կառավարչական մարմին կազմող պաշտոնական անձանց խումբ: 2. Որոշ մասնագիտություններով զբաղվող մարդկանց միավորում:

ԿՈԼԵԳԻԱԼ [< коллегиальный < լատ. collega], ած. Կոլեգիայի՝ պաշտոնակիցների՝ անդամների մասնակցությամբ կատարվող, համատեղ:

ԿՈԼԵԿՏԻՎ [< коллектив < լատ. collectivus հավաքական], գ. ած. 1. Մի կազմակերպության՝ ձեռնարկության՝ համայնքի ևն կազմի մեջ մտնող մշտական համատեղ աշխատանքով և շահերով կապված մարդկանց խումբ: 2. (հնց.): Կոլեկտիվ տնտեսություն՝ կոլտնտեսություն: 3. Հավաքական ուժերով կատարվող, միասնական, միավորված: 4. Կոլեկտիվին սպասարկող, կոլեկտիվի համար նախատեսված:

ԿՈԼԵԿՏԻՎԻԶՄ [< коллективизм < լատ.], գ. 1. Անձնական շահը գիտակցաբար հասարակականին ենթարկելու վրա հիմնված գիտակցությունը: 2. Այդպիսի գիտակցության գաղափարը՝ մտայնությունը՝ հոգեբանությունը:

ԿՈԼԵԿՏԻՎԻՍՏ [< коллективист < լատ.], գ. ած. Կոլեկտիվիզմի կողմնակից, կոլեկտիվիզմի հոգեբանություն՝ մտայնություն ունեցող:

ԿՈԼԵԿՏՈՐ [< коллектор < լատ. collector հավաքիչ], գ. (տեխ.): 1. Հավաքիչ, ամբարիչ՝ լայն խողովակ կամ ջրանցք՝ այլ խողովակներից ու ջրանցքներից հավաքվող գազերի ու հեղուկների միացման համար: 2. Ջրաբաշխիչ: 3. Ստորանցք:

ԿՈԼԵԿՑԻԱ [< коллекция < լատ. collectio հավաքածու], գ. (խսկց.): Միատեսակ

առարկաների համակարգված հավաքածու, որ ներկայացնում է գիտական, գեղարվեստական, պատմական հետաքրքրություն, հավաքածու, նմուշանք:

ԿՈԼԵԿՑԻՈՆԵՐ [< коллекционер < լատ.], գ. Կոլեկցիա կազմող՝ հավաքող մարդ:

ԿՈԼԵՆԿՈՐ [< коленкор < ֆր. calencar բամբակյա ներկված նյութի՝ գործվածքի], գ. (խսկց.): Սոսինձով տոգորված բամբակե գործվածքի մի տեսակ. սոսնձալաթ:

ԿՈԼԻԲՐԻ [< колибри < իսպ. colibri], գ. (կենդբ.): Շատ փոքր թռչնակ՝ վառ կարմիր փետուրով (տարածված է Ամերիկայում):

ԿՈԼԻԶԵՈՒՄ [< Колизей < լատ. colosseus հսկայական, վիթխարի], գ. (արվ.): Հին հռոմեական ճարտարապետության հուշարձան, Փլավիոսների ամֆիթատրոնը:

ԿՈԼԻԶԻԱ [< коллизия < լատ. collisio], գ. Հակադիր շահերի՝ ձգտումների՝ հայացքների բախում՝ ընդհարում: 2. (գրկն.): Կենսական (կյանքի) կոնֆլիկտների և պայքարի պատկերումը գեղարվեստական գրականության մեջ:

ԿՈԼԻՄԱՏՈՐ [< коллиматор < լատ. collineo ուղղում եմ ուղիղ գծով], գ. (տեխ.): Զուգահեռ ճառագայթների փունջ ստանալու օպտիկական սարք:

ԿՈԼԼԱԲՈՐԱՑԻՈՆԻԶՄ [< коллаборационизм < ֆր. collaboreation համագործակցություն], գ. (պատմ.): Կոլլաբորացիոնիստների ներկայացուցչական համագործակցությունը զավթիչների հետ:

ԿՈԼԼԱԲՈՐԱՑԻՈՆԻՍՏ [< коллаборационист < ֆր.], գ. ած. (պատմ.): Թշնամուն աջակցող, դավաճան, որ գործակցում էր ֆաշիստ-զավթիչների հետ Արևմտյան Եվրոպայի կողմից օկուպացված երկրներում՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

ԿՈԼԽՈԶ [< ռուս. колхоз < коллективное хозяйство], գ. (պատմ.): ԽՍՀՄ-ում՝ գյուղացիական տնտեսության ձև՝ կոլտնտեսություն՝ կոլեկտիվ տնտեսություն:

ԿՈԼՅ(Ի)Ե [< колье < ֆր. collier < լատ. collare < collum պարանոց], գ. (խսկց.): Մանյակ:

ԿՈԼՈԻԴ [< коллоиды < հուն. kolla սոսինձ + eidos ձև, կերպ], գ. (քիմ.): Բյուրեղացման չենթարկվող նյութ (սպիտակուց, օսլա, սոսինձ ևն), որի լուծույթները չեն թափանցում կենդանական և բուսական թաղանթների մեջ:

ԿՈԼՈՆԱԴԱ [< колоннада < ֆր. colonnade], գ. (ճարտ.): Սյունաշար:

ԿՈԼՈՆԻԱ [< колония < գերմ. Kolonie < լատ. colonia], գ. (քղք. հնց.): 1. Գաղութ: 2. Գաղթավայր: 3. Համաբնակություն, գաղութ: 4. Գաղութաբնակություն, հայրենակցություն:

ԿՈԼՈՆԻԶԱՑԻԱ [< колонизация < գերմ. Kolonisation, ֆր. colonisation < լատ. colonia բնակատեղի], գ. (քղք. հնց.): 1. Գաղութացում, գաղութների զավթում: 2. Գաղութաբնակեցում:

ԿՈԼՈՆԿԱ [< ռուս. колонка], գ. (տեխ. խսկց.): (տեխ.) 1. Սյունակաթսա, որ սովորաբար ծառայեցվում է ջրի, ինչ-որ հեղուկի, գազի ևն բացթողման համար: 2. Ամբարասյուն: 3. Գազաջեռուցիչ:

ԿՈԼՈՐԱՏՈՒՐԱ [< колоратура < իտլ. coloratura գունավորում], գ. (երժշտ.): 1. Գեղգեղաձայնություն: 2. Գեղգեղաձայն:

ԿՈԼՈՐԻՄԵՏՐԻԱ [< колориметрия < լատ. color գույն + metreō չափում եմ], գ. (նկարչ.): Գունաչափություն:

ԿՈԼՈՐԻՍՏ [< колорист < ֆր. coloriste < լատ. color գույն], գ. (արվ.): 1. Երանգան-

կարիչ, գունագեղիչ, գունանկարիչ: 2. Գործվածքներ զարդարելու մասնագետ:

ԿՈԼՈՐԻՏ [< колорит < իտլ. colorito < լատ. color գույն], գ. 1. Գույների ներդաշնակություն՝ հարադրակցություն, որ ստեղծում է նկարի որոշակի միասնություն, երանգավորում: 2. *փիխբ.* Որևէ բանի յուրահատկությունը՝ բնորոշ գիծը, առանձնահատկությունների ամբողջություն, երանգ, գունավորում, երանգավորում, միջավայր:

Կ(Ք)ՈԼՈՔՎԻՈՒՄ [< коллоквиум < լատ. colloquium խոսակցություն, զրույց], գ. Հարցազրույց, ուսումնազրույց՝ 1. Կրթական համակարգում ուսումնական պարապմունք, որը ընթանում է ազատ զրույցի ձևով: 2. Գիտաժողով, որտեղ լսվում և քննարկվում են զեկուցումներ:

ԿՈԼՏ [< Кольт < ամերիկացի գյուտարար Ս. Կոլտի (Colt) անունով], (ռազմ.): Ատրճանակի տեսակ:

ԿՈԼՈՒՄԲԱՐԻՈՒՄ [< колумбарий < լատ. columbarium աղավնատուն], գ. (պատմ.): Աճյունասափորների զետեղարան Հին Հռոմում:

ԿՈԼՈՒՄԲԻՏ [< колумбит < լատ. columbium նիոբիումի ԱՄՆ-ում օգտագործվող անունը], գ. (հնք.): Միներալ կոլումբիտ-տանտալիտ խմբից: Նիոբիումի ստացման հանքանյութ է:

ԿՈԿ [< кок < հոլանդ. kok], գ. (ծով.): Նավի խոհարար:

ԿՈԿԱ [< кока < իսպ. coca], գ. (բսբ.): Կոկաինի թուփ, կոկաենի:

ԿՈԿԱԻՆ [< кокаин < իսպ. cocaina], գ. (բժշկ.): Կոկաենու տերևներից պատրաստվող թմրեցուցիչ դեղանյութ:

ԿՈԿԱԻՆԱՄՈԼ, գ. ած. (ախտ.): Կոկաինի նկատմամբ հիվանդագին հակում ունեցող (մարդ):

ԿՈԿԱ-ԿՈԼԱ [< кока-кола < անգլ. coca-cola], գ. Ոչ ալկոհոլային, տոնուսը բարձրացնող ըմպելիք, որ տարածված է ամբողջ աշխարհում:

ԿՈԿԱՐԴ [< кокарда < ֆր. cocarde], գ. (հնց.): Գլխարկի վրա փակցվող մետաղի կլոր կամ ձվաձև նշան՝ գդականիշ, որ կրում էին գլխավորապես զինվորականները և պետական պաշտոնյաները:

ԿՈԿԵՏ [< кокетливый < ֆր. coquette], ած. (խսկց.): Արտաքին այլևայլ ձևերով ու միջոցներով դուր գալ ցանկացող, սեթևեթող, կոտրատվող, պչրվող:

ԿՈԿԵՏՈՒՀԻ [< кокетка < ֆր. coquette], գ. (խսկց.): Արտաքին այլևայլ ձևերով ու միջոցներով (վարմունքով, շարժուձևով, հագուստով) տղամարդկանց դուր գալ ցանկացող՝ կոտրատվող՝ սեթևեթող կին՝ աղջիկ:

ԿՈԿՈՍ [< кокос < իսպ. cocos], գ. (բսբ.): 1. Օղակաձև բնով, փետրաձև տերևներով բարձր արմավենի: 2. Կոկոսյան արմավենու հյութալի պտուղը՝ ընկույզը, հնդկընկույզը:

ԿՈԿՏԵՅԼ [< коктейл < անգլ. cocktail, բառացի՝ աքաղաղի

պոչ], գ. (խոհր.): Համեմունքներով պատրաստված քաղցրահամ խմիչքախառնուրդ:

ԿՈԿՑԻԴԻՈԶ [< кокцидиоз < լատ. coccinus վառ կարմիր], գ. (ախտ.): Կենդանիների, հազվադեպ՝ նաև մարդկանց հիվանդություն: Հարուցիչը կոկցիդիաներն են (միաբջիջ մակաբույծ կենդանիներ):

ԿՈԿՑԻԴՆԵՐ [< кокциды < լատ.], գ. (կենսբ.): Միաբջիջ մակաբույծ կենդանիներ. կոկցիդիոզ հիվանդության հարուցիչ:

ԿՈՀԵՐԵՆՏՈՒԹՅՈՒՆ [< когерентность < լատ. cohaerentia կապ], գ. (ֆիզ.): Համաձայնեցումը մեկից ավելի աղբյուրների առաջացրած տատանումները բնութագրող միևնույն մեծությունների (օր.՝ փուլերի) միջև ժամանակի որևէ պահին կամ միևնույն աղբյուրի առաջացրած տատանումները բնութագրող տարբեր մեծությունների միջև՝ ժամանակի տարբեր պահերին:

ԿՈՀՈՐՏ [< когорта < լատ. cohors], գ. 1. (պատմ.): Լեգեոնի 1/10 մասը, հետևակի միավորում: 2. Համախոհներ:

ԿՈՄԱ [< кома < հուն. coma խոր քուն, քնածություն], գ. (բժշկ.): Թմբիր, քնափություն:

ԿՈՄԱՆԴԱ [< команда < ֆր. commande], գ. (խսկց.): 1. Զորահրաման, հրաման, կարգադրություն: 2. Հրամանատարություն: 3. Անձնախումբ, անձնակազմ, խումբ: 4. (սպորտ.): Խումբ, թիմ:

ԿՈՄԱՆԴԱՐՄ [< ռուս. командарм < команд (+ ир) + арм (армией)], գ. (գրք.): Բանակի հրամանատար:

ԿՈՄԱՆԴԻՐ [< командир < անգլ. commander], գ. (ռազմ. հնց.): Հրամանատար:

ԿՈՄԱՆԴՈՍ [< коммандос < անգլ. commandos], գ. 1. (պատմ.): Բուրերի ռազմական ջոկատները 1899-1902 թթ. անգլաբուրական պատերազմում: 2. ԱՄՆ-ի և Անգլիայի դեսանտային ընտիր զորամիավորումներ: 3. *փխբ.* Ընտիր զինվորական պատրաստություն ստացած և ծայրահեղ դաժանությամբ գործող (վարձու) մարտիկներ և մարտախմբեր:

ԿՈՄԱՆԴՈՐ [< командор < ֆր. commandeur], գ. 1. (պատմ.): Կրոնաասպետական ուխտի բարձրագույն կոչում միջնադարում, ինչպես նաև այն անձը, որ կրում է այդ կոչումը: 2. Սպորտային արշավների ղեկավար: 3. (հնց.): Ծովակալին նախորդող կոչում:

ԿՈՄԲԱՅՆ [< комбайн < անգլ. combine], գ. (տեխ.): 1. Մի շարք հերթագայող գործողություններ կատարող զանազան բարդ մեքենաների ամբողջություն կազմող ագրեգատ: 2. Բերքահավաք, հատկապես հունձք կատարող մեքենա:

ԿՈՄԲԱՏ [< ком(андир) + бат(альона)], գ. (ռազմ.): Գումարտակի հրամանատար:

ԿՈՄԲԱՏԱՆՏՆԵՐ [< комбатанты < ֆր. combattant ռազմիկ, զինվոր], գ. (իրավբ.): Միջազգային իրավունքում՝ անձինք, որոնք ընդգրկված են պատերազմող կողմերի զինված ուժերի կազմում և անմիջականորեն մասնակցում են ռազմական գործողություններին:

ԿՈՄԲԻՆԱՏ [< комбинат < ուշ լատ. combinatus միավորված], գ. (տնտսգ.): 1. Արդյունաբերական խոշոր ձեռնարկություն, որ միավորում է տեխնոլոգիական գործընթացներով իրար հետ կապված մի քանի ձեռնարկություններ: 2. Տեխնոլոգիապես իրար հետ կապ չունեցող՝ արդյունաբերության մի ճյուղի ձեռնարկությունների վարչական միավորում: 3. Տեղական արդյունաբերության մեջ մանր արտադրությունների կամ կենցաղսպասարկման ձեռնարկությունների միավորում: 4. Գործարաններին և ձեռնարկություններին կից՝ տարբեր ուսումնական

հաստատությունների միավորում:

ԿՈՄԲԻՆԱՏՈՐ [< комбинатор < լատ. combinare միահյուսել, միավորել], գ. Կոմբինացիաներ հորինող խորամանկ մարդ, աֆերիստ:

ԿՈՄԲԻՆԱՏՈՐԻԿԱ [< комбинаторика < լատ. combinare], գ. (գիտ.): Մաթեմատիկայի բաժին, որի կենտրոնական խնդիրն է վերջավոր թվով օբյեկտների զուգակցությունների, երկրաչափական պատկերների դասավորությունների նի ուսումնասիրությունը, համակցաբանություն:

ԿՈՄԲԻՆԱՑԻԱ [< комбинция < լատ. combinatio], գ. 1. Որևէ բանի փոխադարձաբար պայմանավորված դասավորություն, համակցություն, միակցություն, զուգակցություն: 2. *փիխբ.* Որևէ նպատակի հասնելու համար բարդ մտահղացում: 3. Գործարք, հնարքների և խորամանկ գործողությունների վրա հիմնված արարք: 4. (սպորտ.): Հաղթանակի՝ գերազանցության հասնելու համար ընդհանուր մտահղացմամբ իրար հետ կապակցված արարքների ամբողջություն, համակցություն: 5. (խսկց.): Կանացի զգեստի տակից անմիջապես հագնվող բարակ շապիկ:

ԿՈՄԲԻՆԱՑԻՈՆ [< комбинационный < լատ.], ած. Համակցական:

ԿՈՄԲԻՆԵԶՈՆ [< комбинезон < ֆր. comibinaison], գ. Օդաչուների՝ տրակտորիստների ևն աշխատանքային արտահագուստ՝ շապիկն ու տաբատը միասին կարված:

ԿՈՄԵԴԻԱՆՏ [< комедиант < իտլ. commediante], գ. (հնց.): Կատակերգակ՝ կատակերգության հեղինակ:

ԿՈՄԵԴԻԱ ԴԵԼԼ' ԱՐՏԵ [< профессиональная комедия < իտլ. commedia dell'arte], գ. (թատր.): Իտալական ուշ միջնադարյան ժողովրդական թատրոն:

ԿՈՄԵԴԻԱ [< комедия < լատ. comedia < հուն. komodia], գ. (արվ.): Կատակերգություն:

ԿՈՄԵՆԴԱՆՏ [< комендант < ֆր. commandant < լատ. commandare հանձնարարել, վստահել], գ. (խսկց.): Պարետ՝ 1. Կայազորային և պահակային ծառայության ճշգրիտ կառավարման, հասարակական վայրերում զինծառայողների կարգապահության ևն հսկողության գործը վարող զինվորական պետ: 2. Ամրոցի կամ ամրությունների ամբողջ շրջանի բոլոր զորքերի պետ: 3. Զինծառայողների և զինամթերքների փոխանցելուն և զորքի շարժման ճշտությանը հետևող զինվորական: 4. Հասարակական շենքի՝ հիմնարկ-ձեռնարկության՝ գործարանի ևն շենքերի հսկողությունն ու պահպանությունն իրականացնող պաշտոնյա:

ԿՈՄԵՆԴԱՏՈՒՐԱ [< комендатура < գերմ. Kommandatur < լատ.], գ. (խսկց.): 1. Պարետատուն, պարետանոց: 2. Պարետություն:

ԿՈՄԵՆԴՈՐ [< комендор < անգլ. commander ղեկավար, հրամանատար], գ. (ծով.): Թնդանոթաձիգ նավաստի:

ԿՈՄԵՆՏԱՏՈՐ [< коментатор < լատ. commentator մեկնաբան], գ. (խսկց.): Մեկնաբան՝ մեկնիչ՝ որևէ բանի մեկնաբանություն տվող:

ԿՈՄԵՆՏԱՐ(ԻԱ) [< комментарий < լատ. commentarius գրառումներ], գ. Մեկնաբանություն՝ 1. Որևէ տեքստի, բնագրի մեկնաբանում, պարզաբանում՝ բացատրություն: 2. Բացատրություն՝ լուսաբանող ու քննադատական դիտողություններ որևէ բանի մասին:

ԿՈՄԵՏԱ [< комета < հուն. kometes (aster) գիսավոր (աստղ)], գ. (աստղգ.): Գիսաստղ, գիսավոր աստղ:

ԿՈՄԵՐՍԱՆՏ [< коммерсант < ֆր. commercant < լատ. comercium առևտուր], գ. ած. 1. Առևտրական, վաճառական: 2. Անձ, որը զբաղվում է մասնավոր ձեռնարկությամբ:

ԿՈՄԵՐՑԻԱ [< коммерция < լատ. commercium առևտուր], գ. 1. (խսկց.): Առևտուր: 2. Ձեռնարկչական գործունեություն:

ԿՈՄԻԶՄ [< комизм < հուն.], գ. Կոմիկ, կոմիկական՝ ծիծաղաշարժ վիճակ՝ իրադրություն:

ԿՈՄԻԿ [< комик < հուն. komikos], գ. ած. 1. (արվ.): Կոմիկական դեր կատարող դերասան, կատակերգակ: 2. (խսկց.): Զվարճախոս, կատակաբան:

ԿՈՄԻՆՏԵՐՆ [< ռուս. коминтерн < Коммунистический Интернационал], գ. (պատմ.) Կոմունիստական ինտերնացիոնալ:

ԿՈՄԻՍԱՐ [< комиссар < ֆր. commissiae < ուշ լատ. commissarius լիազոր], գ. 1. Զանազան երկրներում պետության կողմից հատուկ և մեծ լիազորություններով օժտված պաշտոնյա: 2. (պատմ.): Նախկինում՝ ԽՍՀՄ-ում զինվորական կոմիսարիատի պետ: 3. (պատմ.): Կարմիր բանակի քաղաշխատողների կոչում և պաշտոն (1935-1942 թթ.): 4. Ժողովրդական կոմիսար:

ԿՈՄԻՍԱՐԻԱՏ [< комиссариат < ֆր. commissariat < միջին լատ.], գ. (քղք.): Պետական և վարչական մի շարք մարմինների անվանում:

ԿՈՄԻՍԻԱ [< комиссия < լատ. commissio հանձնարարություն], գ. 1. Հանձնաժողով: 2. (առևտր.): Առուծախի կոմիսիա: 3. (իրավք.): Պայմանագիր, որով մեկ կողմը՝ հանձնակատարը, պարտավորվում է վարձատրությամբ, մյուս կողմի հանձնարարությամբ և նրա օգտին իր անունից երրորդ անձի հետ կնքել գործարքներ:

ԿՈՄԻՍԻՈՆ [< комиссионный < լատ.], ած. 1. Հանձնաժողովային: 2. (առևտր.): Հանձնակատարական՝ վաճառք կամ գնումը միջնորդ օղակի միջոցով որոշակի վարձատրությամբ կատարող: 3. Միջնորդավճարային՝ անշարժ գույքի առք ու վաճառքի գնի որոշակի տոկոսաչափ, որը վճարվում է անշարժ գույքի միջնորդին:

ԿՈՄԻՍԻՈՆԵՐ [< комиссионер < ֆր. commissionnaire < լատ. commissio հանձնարարություն], գ. Առևտրական միջնորդ՝ միջնորդարար, առևտրական հանձնակատար:

ԿՈՄԻՎՈՅԱԺԵՐ [< коммивояжер < ֆր. commis voyageur < commis ծառայող + voyageur ճանապարհորդ], գ. (տնտսգ.): Շրջավաճառ՝ միջնորդ վաճառող, որը ֆիրմայի միջնորդությամբ փնտրում է գնորդներ՝ առաջարկելով ապրանքի նմուշներ:

ԿՈՄԻՏԵ [< комитет < ֆր. comité < լատ. committere հանձնարարել], գ. 1. Ընտրովի ղեկավար մարմին: 2. Որոշակի գործերի՝ պետական կառավարման մարմին:

ԿՈՄԻՑԻԱՆԵՐ [< комиции < լատ. comitia], գ. (պատմ.): Ժողովրդական ժողովներ Հին Հռոմում: Լուծել են խաղաղության և պատերազմի հարցեր, ընտրել պաշտոնյաներ, ընդունել օրենքներ:

ԿՈՄԻՔՍ [< комикс < անգլ. comics < comic strip թերթի այունակ՝ երգիծական նկարներով], գ. Երգիծական նկարների շարք՝ համառոտ տեքստով, կամ երգիծական նկարներով գիրք:

ԿՈՄՄԱ [< комма < հուն. kóma հատված], գ. (երժշտ.): Երաժշտական ձայնաբանության մեջ՝ փոքր ինտերվալ՝ հավասար ամբողջ տոնի 1/9-1/10 մասին:

ԿՈՄՅՈՒՆԻԿԵ [< коммюнике < ֆր. communique], գ. (դվնգ.): Կառավարական պաշտոնական հաղորդագրություն միջազգային նշանակություն ունեցող հարցերի մասին:

ԿՈՄՈԴ [< комод < ֆր. commode], գ. Հեշիդարան, ցածր շարժվող արկղիկներով պահարանի տեսակ:

ԿՈՄՈԴՈՐ [< коммодор < գերմ. Kommodore < անգլ. commodore < լատ. commodare ծառայություն մատուցել], գ. (ռազմ.): Որոշ օտարերկրյա նավատորմներում՝ նավերի միավորման հրամանատար, որը չունի ադմիրալի կոչում:

ԿՈՄՈՆԵՐ [< коммонер < անգլ. commoner], գ. (քղք.): Պառլամենտի ստորին (համայնքների) պալատի անդամ Մեծ Բրիտանիայում:

ԿՈՄՊԱԿՏ [< компактный < լատ. compactus], ած. 1. Խիտ, հոծ, պարփակ: 2. (տպգր.): Խտաշար:

ԿՈՄՊԱԿՏ ԴԻՍԿ [< компакт-диск < անգլ. compact-disc < compact հավաք, հոծ, խիտ + disc սկավառակ], գ. (տեխ.): Խտասկավառակ:

ԿՈՄՊԱԿՏ ԿԱՍԵՏ(Ա) [< компакт-кассета < անգլ. compact cassette, գերմ. Kompaktkassette < լատ. compactus հավաք, հոծ, խիտ + capsa պատյան, տուփ], գ. (տեխ.): Ձայներիզ, ձայներիզի տուփ:

ԿՈՄՊԱՆԻԱ [< компания < ֆր. compagnie], գ. 1. Ընկերախումբ: 2. (տնտսգ.): Ընկերակցություն, ընկերություն՝ իրավական և ֆիզիկական անձանց, գործարար մարդկանց միավորում, որը զբաղվում է տնտեսական գործունեությամբ:

ԿՈՄՊԱՆՅՈՆ, ԿՈՄՊԱՆԻՈՆ [< компаньон < ֆր. compagnon], ած. գ. 1. Ընկերակից, գործակից, համագործակից: 2. Առևտրական կամ արդյունաբերական գործակցության անդամ:

ԿՈՄՊԱՍ [< компас < գերմ. Kompass < իտլ. compassare քայլերով չափել], գ. (տեխ. հնց.): Կողմնացույց:

ԿՈՄՊԱՐՏԻԱ [< компартия < ռուս. коммунистическая партия], գ. (քղք.): Կոմկուսակցություն՝ կոմունիստական կուսակցություն:

ԿՈՄՊԱՐԱՏԻՎ [< компаратив լատ. comparativus], ած. (լեզվբ. հնց.): Համեմատական:

ԿՈՄՊԱՐԱՏԻՎԻԶՄ [< компаративизм < լատ. comparativus համեմատական], գ. (լեզվբ.): Համեմատական լեզվաբանություն, որը զբաղվում է ցեղակից լեզուների համեմատական ուսումնասիրությամբ:

ԿՈՄՊԱՐԱՏԻՎԻՍՏԻԿԱ [< компаративистика < գերմ. Komparativistik < լատ. comparativus համեմատական], գ. (լեզվբ. հնց.): Պատմահամեմատական լեզվաբանություն:

ԿՈՄՊԱՐԱՏՈՐ [< компаратор < լատ. comparator], գ. (տեխ.): Համեմատիչ:

ԿՈՄՊԵՆԴԻՈՒՄ [< компендиум < լատ. compendium խնայողություն, համառոտում, կրճատում], գ. (գիտ.): Համառոտություն (որևէ գիտության):

ԿՈՄՊԵՆՍԱՏՈՐ [< компенсатор < լատ. compensare հավասարակշռել, հավասարեցնել], գ. (տեխ.): Գործիքի տեսակ:

ԿՈՄՊԵՆՍԱՑԻԱ[< компенсация < լատ. compensare հավասարակշռել, փոխհատուցել], գ. 1. Փոխհատուցում: 2. (բժշկ.): Հավասարակշռում, համակշռում: 3. (տեխ.): Արտաքին (ջրի, օդի ևն) ազդեցությունների վերացում՝ չեզոքացում:

ԿՈՄՊԵՆՍԱՑԻՈՆ [< компенсационный < լատ.], ած. 1. Կոմպենսացիային հատուկ՝ վերաբերող, կոմպենսացիայի ծառայող: 2. Չեզոքիչ:

ԿՈՄՊԵՏԵՆՏ [< компетентный < լատ. competens (competentis) ունակ, ընդունակ], ած. 1. Ձեռնահաս, կարող: 2. Իրազեկ, գիտակ: 3. Հեղինակավոր, ծանրակշիռ: 4. (իրավք.): Իրավասու, լիիրավ:

ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ [< компетенция < լատ.], գ. 1. (իրավք.): Օրենքներին, կանոնադրությանը, փաստաթղթերին մարդկանց իրազեկ լինելը: 2. Իրավասություն, իրավություն:

ԿՈՄՊԻԼՅԱՏԻՎ [< компилятивный < լատ.], ած. 1. Բանաքաղական՝ բանաքաղին՝ բանաքաղությանը՝ հատուկ՝ վերաբերող: 2. Բանաքաղությամբ կազմած՝ կազմված: 3. Իրազեկություն, բանիմացություն, գիտակություն:

ԿՈՄՊԻԼՅԱՏՈՐ [< компилятор < լատ.], ած. գ. Կոմպիլյացիայով՝ բանաքաղությամբ զբաղվող, կոմպիլյացիայի՝ բանաքաղության հեղինակ:

ԿՈՄՊԻԼՅԱՑԻԱ [< компиляция < լատ. compilatio < compilare կողոպտել], գ. Բանաքաղություն՝ 1. Առանց ինքնուրույն հետազոտության ու վերամշակման՝ ուրիշի աղբյուրներից քաղվածքներ անելով՝ գիրք՝ հոդված կազմելը: 2. Այդ եղանակով կազմված աշխատություն:

ԿՈՄՊԼԵԿՏ [< комплект < լատ. completus լրիվ, լի], գ. Համալիր՝ զանազան իրերի՝ առարկաների՝ պիտույքների ևն լրիվ կազմը՝ ամբողջություն, լրակազմ, ամբողջական հավաքածու (ապրանքների ևն):

ԿՈՄՊԼԵԿՑԻԱ [< комплекция < լատ. complexio], գ. Մարմնակազմ, կազմվածք:

ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՐ [< комплементарный < ֆր. complement], ած. (քղք.): Համահավասար:

ԿՈՄՊԼԵՄԵՆՏԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - (քղք.): Համահավասար քաղաքականություն, որի պարագայում բոլոր կողմերի հանդեպ ցուցադրվում է նույնական մոտեցում՝ առանց որևէ մեկին առավելություն տալու:

ԿՈՄՊԼԵՔՍ [< комплекс < լատ. complexus կապ], գ. 1. Առարկաների՝ երևույթների՝ հատկանիշների ևն միասնություն կազմող ամբողջություն: 2. Բարդույթ:

ԿՈՄՊԼԻՄԵՆՏ [< комплимент < ֆր. compliment], գ. (խսկց.): Հաճոյախոսություն:

ԿՈՄՊՅՈՒՏԵՐ [< компьютер < անգլ. computer < լատ. computare հաշվել], գ. 1. Համակարգիչ: 2. Էլեկտրահաշվիչ մեքենայի անվանումներից մեկը:

ԿՈՄՊՅՈՒՏԵՐԻԶԱՑԻԱ [< компьютеризация < լատ.], գ. (տնտսգ.): Տնտեսության տարբեր ոլորտներում համակարգիչների զանգվածային գործածության գործընթացը:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ [< композитор < լատ. compositor հորինիչ, կազմիչ], գ. 1. (մսնգ.): Երաժշտական երկեր ստեղծագործող հեղինակ, երգահան: 2. (սպորտ.): Շախմատի կամ շաշկիի խնդիրներ ու էտյուդներ կազմող մասնագետ:

ԿՈՄՊՈԶԻՑԻԱ [< композиция < լատ. compositio շարահարում, միացում, կապ], գ. 1. Կառուցվածք, հորինվածք: 2. (երժշտ.): Երաժշտական երկերի կազմության տեսություն: 3. (ճարտ.): Ճարտարապետության տեսության մի բաժինը: 4. (արվ. գիտ.): Արվեստի՝ գրական ստեղծագործության կամ գիտական աշխատության կառուցվածք՝ բաղադրիչ մասերի դասավորություն և հստակություն: 5. Թեմայով ու բովանդակությամբ միավորված գրական՝ երաժշտական ստեղծագործությունների կամ նրանց մասերի համադրություն: 6. Որոշակի կառուցվածք՝ բաղադրիչ տարրերի միասնական ամբողջություն կազմող նկարչական կամ քանդակագործական ստեղծագործություն:

ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ [< композиционный < լատ.], ած. Կոմպոզիցիային հատուկ՝ վերաբերող, կոմպոզիցիա ներկայացնող՝ հանդիսացող:

ԿՈՄՊՈՆԵՆՏ [< компонент < լատ. componens (componentis) բաղադրող, բաղադրիչ], գ. (խսկց.): Ինչ-որ բանի բաղադրիչ մաս, բաղադրիչ, բաղադրատարր:

ԿՈՄՊՈՍՏ [< компост < անգլ. compost], գ. (գղտնտ.): Բուսական, հանքային և կենդանական նյութերի թափոններից հողի կամ տորֆի խառնուրդով պատրաստվող օրգանական պարարտանյութ:

ԿՈՄՊՈՏ [< компот < ֆր. compote], գ. (խոհր. խսկց.): Քաղցրաջուր, մրգաջուր, խոշապ, չամչարակ:

ԿՈՄՊՐԱԴՈՐ [< компрадор < իսպ. comprador գնորդ], գ. (առևտր.): Առևտրական միջնորդ՝ օտար կապիտալի և տեղական շուկայի միջև հետամնաց երկրներում:

ԿՈՄՊՐԵՍ [< компресс < ֆր. compresse < լատ.], գ. (բժշկ.): Թրջոց՝ ջրով կամ դեղորայքով թրջված լաթ, որ դրվում է ցավացող՝ հիվանդոտ տեղի վրա:

ԿՈՄՊՐԵՍԻԱ [< компрессия < ֆր. compression < լատ. compressio սեղմում], գ. (տեխ.): Խտացում, սեղմում:

ԿՈՄՊՐԵՍՈՐ [< компрессор < լատ. compressus սեղմում], գ. 1. (տեխ.): Ճնշակ՝ խտուցիչ մեքենա: 2. (բժշկ.): Ճնշակ, սեղմիչ:

ԿՈՄՊՐԻՄԱՐԻՈ [< компримарио < իտլ. comprimario], գ. (արվ.): Երկրորդական դերերգեր կատարող օպերային երգիչ:

ԿՈՄՊՐՈՄԱՏ [< компромат < ֆր. compromettre], գ. (խսկց.): Հեղինակության, վարկանիշի անկմանը բերող տեղեկություններ (օր.՝ կոմպրոմատ հավաքել ինչ-որ մեկի վերաբերյալ):

ԿՈՄՊՐՈՄԻՍ [< компромисс < լատ. compromissum], գ. Փոխադարձ զիջումներով կայացած համաձայնություն, փոխզիջում:

ԿՈՄՍ [< граф < լատ. comes, ֆր. comte, անգլ. earl, գերմ. Graf], գ. (պատմ.): Թագավորական պաշտոնյա վաղ միջնադարյան Արևմտյան Եվրոպայում:

ԿՈՄՍՈՄՈԼ [< комсомол < հպվ. коммунистический союз молодежи], գ. ած. 1. (պատմ.): Կոմերիտական՝ կոմունիստական երիտասարդական միության անդամ: 2. Կոմերիտմիություն, կոմունիստական երիտասարդական միություն:

ԿՈՄՈՒՆԱ [< коммуна < ֆր. commune համայնք < լատ. commuins ընդհանուր], գ. 1. Աշխատանքի և ունեցվածքի հանրության վրա համատեղ կյանք վարելու համար միավորված մարդկանց կոլեկտիվ: 2. (պատմ.): Համայնք: 3. Վարչատարածքային ստորին միավոր Ֆրանսիայում և այլ երկրներում:

ԿՈՄՈՒՆԱԼ [< коммунальный < ֆր. communal < լատ.], ած. Բնակավայրի (քաղաքի, գյուղի ևն) տնտեսությանը հատուկ՝ վերաբերող:

ԿՈՄՈՒՆԱՐ [< коммунар < ֆր. communard], գ. 1. (պատմ.): Փարիզյան կոմունայի (1871 թ.) մասնակից: 2. Կոմունայի անդամ:

ԿՈՄՈՒՆԱՐԿԱ [< коммунарка < ֆր.], գ. (պատմ.): Սրածայր զինվորական գլխարկ, որ կրում էին կարմիրբանակայինները:

ԿՈՄՈՒՆԻԶՄ [< коммунизм < ֆր. communisme < լատ. communis ընդհանուր, համընդհանուր], գ. (պատմ): Ուսմունք, որ պահանջում է հասարակական և տնտեսական հավասարություն:

ԿՈՄՈՒՆԻԿԱԲԵԼՈՒԹՅՈՒՆ [< коммуникабельность < լատ. communicatio հաղորդում], գ. (խսկց.): Մարդկանց՝ միմյանց միջև արագ գործնական հարաբերություն, կապեր հաստատելու ունակություն:

ԿՈՄՈՒՆԻԿԱՏԻՎ [< коммуникативный < լատ.], ած. Հաղորդակցական, հաղորդակցման:

ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱ [< коммуникация < լատ. communicatio], գ. 1. Հաղորդակցության միջոցներ: 2. Հաղորդակցում: 3. Հաղորդակցության ճանապարհ:

ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ [< коммуникационный < լատ.], ած. Հաղորդակցական, հաղորդակցությանը հատուկ՝ վերաբերող:

ԿՈՄՈՒՆԻՍՏ [< коммунист < լատ.], գ. Կոմունիստական կուսակցության անդամ:

ԿՈՄՈՒՏԱՏՈՐ [< коммутатор < լատ. commutare փոխել, վերափոխել], գ. 1. (ֆիզ. տեխ.): Փոխարկիչ, բաշխիչ սարքավորում, որը էլեկտրական շղթաների միացման, անջատման, փոխարկման միջոցով ապահովում է պահանջվող ելքի շղթայի ընտրությունը և դրա միացումը մուտքի շղթային: 2. Հեռախոսային ապարատների հոսանքին միացնող սարք:

ԿՈՄՈՒՏԱՑԻԱ [< коммутация < լատ. commutatio փոփոխություն], գ. (էլեկտր. տեխ.) Հոսանաղարձում՝ փոփոխական հոսանքի վերածումը հաստատունի:

ԿՈՄՖՈՐՏ [< комфорт < անգլ. comfort], գ. (խսկց.): 1. Հարմարավետություն, բարեհարմարություն, դյուրահարմարություն, լիահարմարություն: 2. Հարմարակեցություն՝ բոլոր հարմարություններով օժտված կեցություն:

ԿՈՅԿԱ [< койка < հոլանդ. kooi], գ. (խսկց.): Հասարակ կառուցվածքով մահճակալ (հիվանդանոցում, հանրակացարանում ևն):

ԿՈՅՆԵ [< койне < հուն. choinē ընդհանուր], գ. (լեզվբ.): Որևէ բարբառի կամ բարբառների հիման վրա գոյացած ընդհանուր լեզու: 2. Հելլենիստական դարաշրջանի հին հունարենը՝ որպես միջազգային, «համընդհանուր» լեզու:

ԿՈՅՈՏ [< койот < անգլ. coyote < մեքսիկացի ացտեկների լեզվից coyotl], գ. (կենդբ.): Հյուսիսամերիկյան դաշտային գայլ:

ԿՈՆԳԼՈՄԵՐԱՏ [< конгломерат < լատ. conglomertus խառնահավաք], գ. 1. Որևէ բանի մեխանիկական միացություն: 2. (հնք.): Խառնահանք, շեղջաքար:

ԿՈՆԳՐԵԳԱՑԻԱ [< конгрегация < լատ. congregatio միացություն], գ. (եկեղ.): 1. Միաբանություն (կաթոլիկական): 2. Հռոմի պապին կից վարչական մարմին:

ԿՈՆԳՐԵՍ [< конгресс < լատ. congressus հանդիպում, հավաքույթ], գ. 1. Լայն կազմով համագումար, վեհաժողով, համաժողով: 2. (քղք.): Պառլամենտի անվանումը ԱՄՆ-ում և Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում:

ԿՈՆԳՐԵՍՄԵՆ [< конгрессмен < անգլ. congressman], գ. (քղք.): Կոնգրեսի անդամ՝ կոնգրեսական:

ԿՈՆԴԵՆՍԱՏՈՐ [< конденсатор < լատ. condensare թանձրացնել, խտացնել], գ. (էլեկտր.): Էլեկտրականությունը կուտակող սարք, էլեկտրակուտակիչ: 2. Խտարար՝ շոգեխտարար. գոլորշին սառեցնելու և հեղուկի վերածելու ապարատ:

ԿՈՆԴԵՆՍԱՑԻԱ [< конденсация < լատ. condensatio], գ. Նույնն է՝ կոնդենսացում:

ԿՈՆԴԵՆՍԱՑԻՈՆ [< конденсационный < լատ.], ած. (մսնգ.): 1. Կոնդենսացնելուն հատուկ՝ ծառայող: 2. Կոնդենսացնելու միջոցով ստացված:

ԿՈՆԴԵՆՍԱՑՆԵԼ, նբ. 1. Կուտակել (էլեկտրականություն): 2. Գոլորշին կամ գազը խտացնելով՝ հեղուկ վիճակի վերածել:

ԿՈՆԴԵՆՍԱՑՎԵԼ, կբ. չբ. *Կոնդենսացնել*-ի:

ԿՈՆԴԵՆՍԱՑՈՒՄ, գ. Կոնդենսացնելը, կոնդենսացվելը:

ԿՈՆԴԵՆՍՈՐ [< конденсор < լատ. condensare թանձրացնել, խտացնել], գ. Լուսահավաք ապակի:

ԿՈՆԴԻԼՈՄԱ [< кондилома < հուն. kondyloma, պալար, ուռուցք], գ. (կզմխս.): Մարդու մաշկի և լորձաթաղանթների սահմանափակ պտկիկային գերաճումներ, որոնք ունեն բորբոքային բնույթ: Առաջանում են մարմնի մշտական գրգռման և շփման ենթարկվող հատվածներում:

ԿՈՆԴԻՏԵՐ [< кондитер < լատ. conditor], գ. (խսկց.): Հրուշակագործ՝ 1. Հրուշակ պատրաստող: 2. Հրուշակի արտադրության աշխատող:

ԿՈՆԴԻՑԻԱ [< кондиция < լատ. conditio վիճակ, պայման], գ. 1. (տնտսգ.): Պահանջվող որակ, որականիշ՝ ապրանքի որակի չափանիշ, որին պետք է համապատասխանի ապրանքը կամ արտադրանքը: 2. (հնց.): Համաձայնության պայման, պայմանագրություն:

ԿՈՆԴԻՑԻՈՆԵՐ [< кондиционер < լատ. conditio պայման], գ. (տեխ. խսկց.): Օդափոխության համակարգում ապարատ, որը մշակում, խառնում է օդը տաք կամ սառը հոսանքով՝ հովացնելով կամ տաքացնելով որոշակի փակ տարածք, օդափոխիչ:

ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄ [< кондоминиум < լատ. con միասին + dominium տիրույթ], գ. Համատիրություն՝ սեփականատերերի՝ համընդհանուր սեփականության միասին ղեկավարման ձև: 2. (իրավք.): Միջազգային իրավունքում՝ տվյալ տարածքում երկու կամ ավելի պետությունների պետական իշխանության համատեղ իրականացումը:

ԿՈՆԴՈՏԻԵՐ [< кондотьер < իտլ. condottiere վարձկան], գ. (պատմ.): 1. Վարձկան զորախմբի պետ (միջնադարյան Իտալիայում): 2. Վարձկան զինվոր:

ԿՈՆԴՈՒԿՏՈՐ I [< кондуктор < լատ. conductor ուղեկցող], գ. (խսկց.): 1. Ուղեկցորդ՝ երկաթուղային գնացքների՝ տրամվայների և տրանսպորտային այլ տեսակների ուղեկցող պաշտոնյա: 2. Վագոնավար:

ԿՈՆԴՈՒԿՏՈՐ II [< кондуктор < լատ. conductor ուղեկցող, ուղեկից], գ. Էկեկտրահաղորդիչ՝ 1. գ. (տեխ.): Էլեկտրական մեքենայի մաս, որ էլեկտրահոսանքը էլեկտրականության աղբյուրից փոխանցում է մեքենային: 2. ած. Էլեկտրականություն հաղորդող, էլեկտրահաղորդ:

ԿՈՆԻԴԻՈՒՄՆԵՐ [< конидиум < հուն. konia փոշի + eidos տեսակ], գ. (բսբ.): Անսեռ բազմացման սպորներ. գոյանում են սնկերի հատուկ ճյուղերի՝ կոնիդիակիրների վրա:

ԿՈՆԿԻՍՏԱԴՈՐՆԵՐ [< конкистадоры < իսպ. conquistador նվաճող], գ. (պատմ.): XV-XVI դդ. Հարավային և Կենտրոնական Ամերիկայում իսպանական նվաճողական արշավանքների մասնակիցներ:

ԿՈՆԿԼԱՎ [< конклав < լատ. conclave կողպված սենյակ], գ. (եկեղ.): Կարդինալների հավաք. հրավիրվում է Հռոմի պապի մահվանից 10 օր հետո՝ նոր պապ ընտրելու համար:

ԿՈՆԿՈՐԴ [< конкорд < լատ. concordare համաձայն լինել], գ. (քղք.): Համաձայնագիր, դաշնագիր:

ԿՈՆԿՈՐԴԱՆՍ [< конкорданс < գերմ. Konkordanz < լատ. concordare համաձայնեց-վել], գ. (լեզվբ. հնց.): Համաբարբառ՝ տվյալ երկում գործածված բոլոր բառերի այբբենական կարգով դասավորությունը՝ իրենց համապատասխան նշանակությամբ, համատեքստով, սկզբնաղբյուրի նշումով:

ԿՈՆԿՈՐԴԱՏ [< конкордат < ուշ լատ. concordatum համաձայնություն], գ. Համաձայնագիր Հռոմի պապի և որևէ պետության միջև, որով կարգավորվում է կաթոլիկ եկեղեցու վիճակը տվյալ երկրում, դաշնագիր:

ԿՈՆԿՐԵՏ [< конкретный < լատ. concretus խիտ, թանձր], ած. 1. Իրապես գոյություն ունեցող, իրական: 2. Առարկայական, շոշափելի: 3. Որոշակի, վճռական:

4. Հակիրճ, ամփոփ, բայց բովանդակալից:

ԿՈՆԿՈՒՐԵՆՏ [< конкурент < լատ. concurriens մրցակցող < concurrere բախվել, իրար զարնվել], գ. ած. (խսկց.): 1. Մրցակից, մրցորդ: 2. (հնց.): Կոնկուրսին՝ մրցույթին մասնակցող:

ԿՈՆԿՈՒՐԵՆՑԻԱ [< конкуренция < լատ. concurrere բախվել, իրար զարնվել], գ. 1. Մրցակցություն: 2. Մրցություն:

ԿՈՆԿՈՒՐՍ [< конкурс < լատ. concursus բախում, խռնում], գ. Մրցույթ՝ 1. Մրցություն՝ մասնակիցներից առավել արժանավոր(ներ)ին ընտրելու համար: 2. Մրցանակաբաշխություն՝ մրցանակների բաշխելը, մրցանակի արժանանալու որոշման ընդունումը:

ԿՈՆՅԱԿ [< коньяк < ֆր. Cognac քաղաք Ֆրանսիայի արևմուտքում՝ Շարանտա դեպարտամենտում], գ. Խաղողի գինու թորումով և հնեցումով ստացվող թունդ խմիչք, բարկօղի:

ԿՈՆՅԱԿԱԳՈՐԾ, գ. ած. 1. Կոնյակի արտադրության աշխատող: 2. Կոնյակ պատրաստող մասնագետ՝ վարպետ:

ԿՈՆՅՈՒԳԱՑԻԱ [< конъюгация < լատ. conjugatio], գ. (կենսբ.): Հարակցում՝ սեռակա,ն գործընթացի ձև. հատուկ է բուսական և կենդանական որոշ օրգանիզմների՝ ջրիմուռների, ստորակարգ սնկերի, ինֆուզորիաների:

ԿՈՆՅՈՒՆԿՏՈՒՐԱ [< конъюнктура < ֆր. conjungere < լատ. conjungere միահյուսել], գ. Համավիճակ՝ 1. Իրերի որոշ դրություն, որ բնորոշվում է մի քանի արտաքին նշաններով, իրադրություն, իրավիճակ: 2. (տնտսգ.): Այն հատկանիշների ամբողջությունը, որով բնորոշվում է ապրանքային տնտեսության վիճակը:

ԿՈՆՅՈՒՆԿՑԻԱ [< конъюнкция < լատ. conjunctio միություն, կապ], գ. (տրամբ.): Տրամաբանական գործողություն. բովանդակային մտածողության մեջ կիրառվող «և» շաղկապի ձևական արտահայտությունը:

ԿՈՆՈՏԱՑԻԱ [< коннотация < միջին լատ. connotare լրացուցիչ իմաստ ունենալ], գ. (լեզվբ.): Հարանշանակություն՝ հարակից նշանակություն՝ գնահատողական արժեքով:

ԿՈՆՍԱԼԹԻՆԳ [< консалтинг < անգլ. consulting], գ. (քղք.): Խորհրդատվական ընկերությունների գործունեություն:

ԿՈՆՍԵՆՍՈՒՍ [< консенсус < լատ. consensus միակարծիքություն, համաձայնություն], գ. (քղք.): Պառլամենտներում, խորհրդակցություններում որոշումների ընդունումը առանց մասնակիցների քվեարկության, համընդհանուր համաձայնությամբ պայմանավորված, համաձայնություն:

ԿՈՆՍԵՐՎԱ [< консервы < ֆր. conserves < լատ. conservare պահպանել], գ. (խսկց.): Պահածո՝ 1. Հատուկ մշակումով (եփելով, աղ դնելով ևն) պատրաստվող և տուփերի մեջ պահվող մթերք՝ միրգ՝ բանջարեղեն ևն: 2. ած. Պահած, պահված: 3. Պահածոյացրած, պահածոյացված:

ԿՈՆՍԵՐՎԱՏԻԶՄ [< консерватизм < ֆր. conservatisme < լատ. conservare պահել, պահպանել], գ. Պահպանողականություն:

ԿՈՆՍԵՐՎԱՏԻՎ [< консервативный < լատ. conservativus պահպանական], ած. Պահպանողական:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐ [< консерватор < լատ. conservator պահպանիչ], գ. ած. Պահպանողական:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ [< консерватория < իտլ. conservatorio < նախապետ, հյուրանոց], գ. Երաժշտական բարձրագույն ուսումնական հաստատություն, երաժշտանոց:

ԿՈՆՍԵՐՎԱՑԻԱ [< консервация < լատ. conservatio պահպանում], գ. 1. Պահածոյացում, պահածո դարձնելը՝ պատրաստելը: 2. Պահպանում: 3. Ժամանակավոր դադարեցում՝ կասեցում:

ԿՈՆՍԻԳՆԱՑԻԱ [< консигнация < լատ. consignatio փաստաթուղթ], գ. (տնտսգ.): Վաճառատվություն՝ ապրանքների կոմիսիոն վաճառք:

ԿՈՆՍԻԼԻՈՒՄ [< консилиум < լատ. consilium], գ. (բժշկ.): Նույն կամ տարբեր մասնագիտությունների բժիշկների խորհուրդ՝ խորհրդակցություն հիվանդների վիճակի քննարկման, հիվանդության բնույթի ճշտման և բուժման եղանակների համար:

ԿՈՆՍԻՍՏԵՆՑԻԱ [< консистенция < լատ. consistere գտնվել], գ. (մսնգ.): 1. Կազմություն, համակազմվածք: 2. Խտության՝ կարծրության՝ թանձրության աստիճան:

ԿՈՆՍԻՍՏՈՐ [< консисторский < լատ.], գ. (հնց.): Թեմական հոգևոր մարմնի պետ, որն օժտված էր վարչական և դատական լիազորություններով:

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱ [< консистория < լատ. consistorium ժողովատեղի, խորհրդի տեղ], (եկեղ.): Թեմական հոգևոր մարմին՝ վարչական և դատական գործառույթներով:

ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱ [< консолидация < լատ. consolidatio > ֆր. consolidation], գ. 1. (տնտսգ.): Կարճաժամկետ պարտքերի երկարաձգում, ժամկետի երկարաձգումը: 2. Համախմբում, ամրացում, ամրապնդում, կայունացում, միաբերում:

ԿՈՆՍՈՄԵ [< консоме < ֆր. concommé], գ. (խոհ.): Թանձր մսաջուր:

ԿՈՆՍՈՆԱՆՍ [< консонанс < ֆր. consonance], գ. (երժշտ.): Համահնչունություն, համահնչություն, բարեհնչյունություն:

ԿՈՆՍՈՆԱՆՏ [< консонант < ֆր. consonant < լատ.], գ. (լեզվբ. հնց.): Բաղաձայն:

ԿՈՆՍՈՆԱՆՏԻԶՄ [< консонантизм < լատ. consonans (consonantis) բաղաձայն հնչյուն], գ. (լեզվբ.): Լեզվի բաղաձայնական համակարգը:

ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ [< консорциум < լատ. consortio համամասնակից, ընկերակցություն], գ. (տնտսգ.): Համախումբ՝ ժամանակավոր համաձայնություն մի քանի խոշոր բանկերի և կազմակերպությունների, ֆիրմաների միջև՝ ֆինանսական մեծ գործընթացները համատեղ կատարելու համար:

ԿՈՆՍՊԵԿՏ [< конспект < լատ. conspectus դիտում], գ. Ձեկուցման՝ դասախոսության՝ գրքերի ևն բովանդակության համառոտ շարադրանք:

ԿՈՆՍՊԻՐԱՏԻՎ [< конспиративный < ֆր. conspiratif < լատ. conspiratio դավադրություն], ած. Իշխանություններից գաղտնի, ընդհատակյա:

ԿՈՆՍՊԻՐԱՏՈՐ [< конспиратор < լատ. conspirator դավադիր], գ. ած. 1. Կոնսպիրացիայի մասնակից: 2. Դավադիր:

ԿՈՆՍՊԻՐԱՑԻԱ [< конспирация < լատ. conspiratio դավադրություն], գ. (քղք.): 1. Հակակառավարական գաղտնի գործունեություն և դրա մեթոդները: 2. Դավադրություն:

ԿՈՆՍՏԱՆՏ(Ա) [< константа < լատ. constans (constantis) կայուն], գ. (ֆիզ. քիմ.): Հաստատուն մեծություն՝ փոփոխականների շարքում:

ԿՈՆՍՏԱՆՏԱՆ [< константан < լատ. constans (constantis) հաստատուն, անփոփոխ], գ. (հնք.): Պղնձի համաձուլվածքը 40% նիկելի և 1.5% մանգանի հետ:

ԿՈՆՍՏԱՏԱՑԻԱ [< костатация < ֆր. constatation], գ. Հավաստում, հաստատում, արձանագրում, փաստում:

ԿՈՆՍՏԵԲԼ [< констебль < անգլ. constable < ֆր. connétable], գ. 1. (պատմ.): Պալատական աստիճան միջին դարերում (Անգլիայում, Շոտլանդիայում): 2. Մեծ Բրիտանիայում ամրոցի՝ պալատի պարեկ: 3. Ոստիկանության ցածրաստիճան սպա (Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում):

ԿՈՆՍՏԻՏՈՒԱՆՏԱ [< конституанта < ֆր. Assemblée constituante Սահմանադիր ժողով], գ. (քղք.): Սահմանադիր ժողով (Ֆրանսիայում և մի շարք այլ երկրներում):

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ [< конституция < լատ. constitutio սահմանում, հաստատում], գ. Սահմանադրություն՝ 1. Պետության հիմնական օրենքը, որ սահմանում է նրա հասարակական ու պետական կառուցվածքը, ընտրական համակարգը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտավորությունները: 2. (հնց.): Սահմանված կոդ:

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆ [< конституционный < լատ.], ած. Սահմանադրական:

ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ [< конструктивный < լատ.], ած. 1. (տեխ.): Կոնստրուկցիային՝ կառուցվածքին հատուկ՝ վերաբերող: 2. *փխբ.* Որևէ բանի իրական հիմք հանդիսացող, գործնական, արդյունավետ, օգտակար:

ԿՈՆՍՐՈՒԿՏԻՎԻԶՄ [< конструктивизм < լատ. constructio կառուցում], գ. (արվ.): Ճայրահեղ ձևապաշտության ու տեխնիցիզմի արտահայտությունը հանդիսացող և արվեստի գաղափարական բովանդակությունը մերժող հոսանք՝ ուղղություն արվեստի տարբեր ճյուղերում (ճարտարապետություն, գրականություն ևն):

ԿՈՆՍՐՈՒԿՏԻՎԻՍՏ [< конструктивист < լատ.], գ. Կոնստրուկտիվիզմի հետևորդ:

ԿՈՆՍՐՈՒԿՏՈՐ [< конструктор < լատ.], գ. 1. Զանազան կոնստրուկցիաների՝ մեխանիզմների հորինվածքի գյուտարար-հեղինակ: 2. Մասերի հավաքածու, որից երեխաները զանազան բաներ են պատրաստում:

ԿՈՆՍՐՈՒԿՑԻԱ [< конструкция < լատ. constructio], գ. (տեխ.): Որևէ կառուցվածքի՝ շինության՝ մեքենայի մասերի փոխադարձ դասավորությունը. հորինվածք:

ԿՈՆՍՈՒԼ [< консул < ֆր. consul < լատ. consul], գ. 1. (քղք.): Պաշտոնյա, որը ներկայացնում ու պաշտպանում է իր պետության և նրա քաղաքացիների իրավական և տնտեսական շահերը այլ պետության մեջ, հյուպատոս: 2. (պատմ.): Հյուպատոս՝ բարձրագույն կառավարական պաշտոնյաների անվանումը Հին Հռոմում: 3. Տիտղոս այն երկրի անձերի, որոնք գործադիր իշխանությամբ են օժտված Ֆրանսիայում՝ կոնսուլության՝ հյուպատոսության շրջանում:

ԿՈՆՍՈՒԼԱՏ [< консулат < լատ.], գ. 1. Հյուպատոսարան՝ հյուպատոսի պաշտոնատունը: 2. Հյուպատոսություն, կոնսուլություն:

ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏ [< консультант < լատ. consultans (consultantis) խորհրդատու], գ. 1. Խորհրդատվություն կատարող անձ: 2. Խորհրդատու:

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱ [< консультация < ֆր. consultation < լատ. consultatio խորհրդակցություն], գ. 1. Մասնագետների ներկայացուցիչների խորհրդակցություն որևէ խնդրի մասին: 2. Դասախոսի՝ դասատուի ևն կողմից սովորողներին ցույց տրվող օգնություն՝ դասախոսությունից դուրս և այդ օգնություններին նվիրված պարապմունքը, խորհրդատվություն: 3. Որևէ հարցի մասին տրվող մասնագի-

տական գրավոր և բանավոր պարզաբանում ու խորհուրդ: 4. Այն հիմնարկը, որտեղ մասնագետների խորհուրդներով օգնություն է տրվում տարբեր հարցերի վերաբերյալ:

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻՈՆ [< консультационный < լատ.], ած. Կոնսուլտացիոն բնույթ կրող, կոնսուլտացիային հատուկ՝ վերաբերող, խորհրդատվական:

ԿՈՆՍՈՒՄԱՑԻԱ [< консумация < ֆր. consmer ժամանակ ծախսել], գ. (խսկց.): Ռեստորանի, խաղատան նևի հաճախորդների հաղորդակցումը՝ շփումը հատուկ նպատակով վարձված աղջիկների հետ՝ այդ հաստատություններում շատ գումարներ ծախսելու նպատակով, ինչը այդ հաստատությունների տերերին հնարավորություն է տալիս մեծ գումարներ վաստակելու:

ԿՈՆՎԵԿՑԻԱ [< конвекция < լատ. convectio բերել-հասցնելը, մատուցելը], գ. 1. (գիտ.): Ջերմության փոխանցում հեղուկներում, գազերում կամ սորուն միջավայրերում՝ նյութի տեղաշարժի հետևանքով: 2. Կոնվեկցիա մթնոլորտում՝ հիդրոստատիկ ուժով պայմանավորված՝ մինչև 30 մ/վրկ. արագություն ունեցող օդային զանգվածների ուղղաձիգ տեղաշարժեր (տաք, նոսր օդի բարձրացում, սառը, խիտ օդի իջեցում), որոնց հետևանքով առաջանում են օդի վերընթաց և վարընթաց հոսանքներ:

ԿՈՆՎԵՅԵՐ [< конвейер < անգլ. conveyer], գ. (տեխ.): Մշակվող նյութը մի բանվորից անմիջապես մյուսին փոխանցվող, ինչպես և բեռների անընդմեջ փոխադրությունն ապահովող հարմարանք՝ մեքենա, հարահոս:

ԿՈՆՎԵՆՏ [< конвент < լատ. conventus հավաքույթ, ժողով], գ. (պատմ.): Պատգամավորների՝ դեպուտատների ժողով Ֆրանսիայում:

ԿՈՆՎԵՆՑԻԱ [< конвенция < լատ. conventio > ֆր. convention համաձայնություն], գ. (դվնգ.): Հատուկ հարցերի վերաբերող պայմանագիր պետությունների միջև, համաձայնագիր:

ԿՈՆՎԵՆՑԻՈՆ [< конвенционный > լատ.], ած. Համաձայնագրով սահմանված՝ հաստատված:

ԿՈՆՎԵՆՑԻՈՆԱԼԻԶՄ [< конвенционализм < լատ. conventio համաձայնություն], գ. (փիլ.): Իմացաբանական ողղություն, որը հատկապես դրսևորվել է գիտության փիլիսոփայության մեջ:

ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱ [< конвергенция < լատ. convergere նմանվել], գ. (կենսբ.): Օրգանիզմների արտաքին կամ ներքին կառուցվածքի հատկանիշների միանմանությունը, որը հիմնված է ոչ թե ծագման միասնություն, այլ գոյության նման պայմաններին հարմարվելու վրա:

ԿՈՆՎԵՐՍԻԱ [< конверсия < conversio փոփոխում, փոխարկում], գ. Փոխարկ՝ 1. (ֆին.): Պետական փոխառության սկզբնական պայմանների փոփոխում՝ տոկոսի իջեցում, մարման ժամկետների ու եղանակների վերանայում: 2. (տնտսգ.): Ռազմական գործարանների վերափոխում քաղաքացիական արտադրություն:

ԿՈՆՎԵՐՏ [< конверт < ֆր. convert], գ. (խսկց. հնց.): Ծրար՝ 1. Հատուկ ձևով կտրած ու չորս կողմից անկյուններով իրար վրա բերված թղթի փոքրիկ տոպրակ, որի մեջ դնում են նամակ՝ փաստաթուղթ՝ փոստային առաքման համար: 2. Առհասարակ թղթի մեջ փաթաթած կապոց, փաթեթ:

ԿՈՆՎԵՐՏԱՑԻԱ [< конвертация < անգլ. convertation < լատ. convertere փոխարկել], գ. (ինֆորմ.): Համակարգչի հիշողության մեջ պահպանվող տեղեկատվության փոխարկումը մի ձևից մյուսը:

ԿՈՆՎԵՐՏԵՐ [< конвертер, конвертор < լատ. converto փոխել < անգլ. conver-

ter], գ. (տնտսգ.): Մետալուրգիական ագրեգատ՝ թթվածին կամ օդ ներփչելով՝ հալված թուջից պողպատ, ինչպես նաև՝ օդ ներփչելով՝ շտեյններից թերապատրաստ պղինձ կամ մաքուր շտեյն ստանալու համար:

ԿՈՆՎՈՅ [< конвой < հոլանդ. konvooi, ֆր. convoi < լատ. conviare < via ուղի, ճանապարհ], գ. 1. (ռազմ.): Ուղեկցորդ պահակախումբ: 2. (ծով.): Պահականավախումբ

ԿՈՆՎՈՒԼՍԻԱ [< конвульсия < գերմ. Konvulsion, ֆր. convulsion < լատ. convulsio < convellere ճոճել, սասանել], գ. (բժշկ.): Ուժեղ ջղաձգություն ամբողջ մարմնով:

ԿՈՆՎՈԻՐ [< конвоир < հոլանդ. konvooier, ֆր. convoyeur < լատ. conviare ուղեկցել], գ. 1. (ռազմ.): Ուղեկցորդ պահակ: 2. (ծով.): Պահականավ:

ԿՈՆՏԱԿՏ [< контакт < ֆր. contact < լատ. contactus շփում, առնչում], գ. 1. Շփում, սերտ հաղորդակցություն: 2. (տեխ.): Երկու հաղորդիչների շփում, որի հետևանքով էլեկտրական հոսանքը մի հաղորդիչից մյուսին է անցնում, ինչպես և այդ շփման տեղը: 3. Այդպիսի շփումն ապահովող հարմարանք: 4. (երկրբ.): Հրաբխային և նստվածքային ապարների շփման տեղը: 5. *փխբ.* Սերտ հարաբերություն՝ աշխատանքային՝ ստեղծագործական նն համագործակցություն:

ԿՈՆՏԱՄԻՆԱՑԻԱ [< контаминация < գերմ. Kontamination < լատ. contaminatio խառնում], գ. 1. (լեզվբ.): Բաղարկություն, բաղարկում (երկու բառերի միացումից առաջացած նոր բառաձև): 2. (գրկն.): Պատումի մեջ մեկ այլ գրական ստեղծագործությունից իրադարձությունների ներմուծում կամ բանաստեղծության մեջ մեկ այլ բանաստեղծության հատվածի ներմուծում:

ԿՈՆՏԵՅՆԵՐ [< контейнер < անգլ. container], գ. 1. Բեռնարկղ՝ որոշ չափերի ու կառուցվածքի արկղ՝ բեռներն առանց փաթեթավորման տեղափոխելու համար: 2. Բաք:

ԿՈՆՏԵՔՍՏ [< контекст < լատ. contextus համահյուսված, ներհյուսված], գ. 1. Համատեքստ: 2. Որևէ բառի կամ բառակապակցության բնագրային շրջապատը: 3. *փխբ.* Որևէ երևույթի (պատմական) միջավայրը:

ԿՈՆՏԻՆԳԵՆՏ [< контингент < ֆր. contingent < լատ. contingens (contingentis) կից, առնչակից], գ. 1. Միանման կարգի պատկանող մարդկանց ամբողջ խումբը, քանակակազմ, հավաքակազմ: 2. (մսնգ.): Որոշակի նպատակի՝ չափի նն համար սահմանված որոշակի քանակ, քանակավորում, քանակություն:

ԿՈՆՏԻՆՈՒՈՒՄ [< континуум < լատ. continuum անընդհատ], գ. 1. (մաթ.): Բոլոր իրական թվերի բազմության հզորությունը: 2. (գիտ.): Անընդհատություն (օր.՝ միջերկրածովյան գրաֆիկական կոնտինիում):

ԿՈՆՏՈՐԱ [< контора < գերմ. Kontor < ֆր. comptoir < compter հաշվել < computare հաշվել], գ. (խսկց. հնց.): Գրասենյակ:

ԿՈՆՏՐ... [< контр... < լատ. contra դեմ, ընդդեմ] Բաղադրյալ բառերի բաղադրիչ հակառակ իմաստով:

ԿՈՆՏՐԱԲԱՆԴ(Ա) [< контрбанда < իտլ. contrabando < contra դեմ, ընդդեմ + bando կառավարական հրաման], գ. 1. (տնտսգ.): Մաքսանենգություն՝ մաքսի ենթակա կամ արգելված ապրանքների փոխադրումը արտասահմանից առանց մաքս վճարելու: 2. *փխբ.* (հնց.): Անթույլատրելի մտքերի՝ հայացքների քողարկված այլաձևում:

ԿՈՆՏՐԱԲԱՆԴԻՍՏ [< контрабандист < իտլ. contrabandista], գ. Կոնտրաբան-

դայով՝ մաքսանենգությամբ զբաղվող անձ, մաքսանենգ:

ԿՈՆՏՐԱԲԱՍ [< контрабас < իտլ. contrabasso], գ. (երժշտ.): Ծավալով ամենամեծ և ձայնածավալով ամենացածր կնտնտոցավոր լարային երաժշտական գործիք:

ԿՈՆՏՐԱԳ(Հ)ԵՆՏ [< контрагент < գերմ. Kontrahent < լատ. contrahens (contrahentis) համաձայնություն կնքող], գ. (առևտր.): Պայմանադիր կողմ:

ԿՈՆՏՐԱԴԻԿՏՈՐ [< контрадикторный < լատ. contradictorius հակադիր], գ. (տրամբ.): Հարաբերություն՝ հակասող երկու դատողությունների (ասույթների) միջև, որոնցից միաժամանակ ճշմարիտ է միայն մեկը, մյուսը կեղծ է:

ԿՈՆՏՐԱԴՄԻՐԱԼ [< контр-адмирал < լատ. contre դեմ + հոլանդ. admiral ծովակալ], գ. (ռազմ.): Փոխծովակալ (անձը և կոչումը):

ԿՈՆՏՐԱԼՏՈ [< контральто < իտլ. contralto], գ. (երժշտ.): Կանացի ամենացածր ձայնը (փոքր ութնյակի մի-ից մինչև 2-րդ ութնյակի ֆա-ն):

ԿՈՆՏՐԱԿՏ [< контракт < լատ. contractus գործարք], գ. Պայմանագիր, պարտավորագիր:

ԿՈՆՏՐԱԿՏԱՆՏ [< контрактант < լատ.], գ. (տնտսգ.): Պայմանագրորդ՝ անձ կամ կազմակերպություն, որ ստանձնում է որոշակի պարտականություններ կոնտրակտի համապատասխան:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱ [< контрактация < լատ.] գ. (տնտսգ.): Որոշակի ժամկետներով ու պայմաններով որևէ բան ձեռք բերելու կամ օգտագործելու պայմանագրի կնքում:

ԿՈՆՏՐԱԿՏԱՑՈՒՄ, գ. (պատմ.): Գյուղատնտեսական ապրանքների պետական գնման միասնական ձև ԽՍՀՄ-ում:

ԿՈՆՏՐԱԿՑԻԱ [< контракция < լատ. contractio սեղմում, կրճատում], գ. 1. (երկրբ.): Սեղմում, սեղմվելը (ապարների): 2. (ֆիզ.): Հեղուկի շիթի մղվելը անոթի բերանից դուրս գալու ժամանակ:

ԿՈՆՏՐԱՄԱՐԿԱ [< контрамарка < ֆր. contremarque], գ. Փոխտոմս, որով թատրոն, կինո ևն անվճար այցելելու իրավունք է տրվում:

ԿՈՆՏՐԱՊՈՍՏ [< контрапост < իտլ. contraposto հակադրություն], գ. (նկարչ.): Հակադիրք՝ մարմնի պատկերման եղանակ, երբ նրա մի մասի դիրքը հակադրվում է մեկ ուրիշ մասի:

ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ [< контрапункт < գերմ. Kontrapunkt], գ. (երժշտ.): Ձայնակարգություն:

ԿՈՆՏՐԱՍՏ [< контраст < ֆր. contraste], գ. 1. Հակադրություն: 2. (արվ.): Առարկաների գույնի կամ պայծառության խիստ հակադրություն:

ԿՈՆՏՐԱՖԱԳՈՏ [< контрафагот < իտլ. contrafagotto], գ. (երժշտ.): Փողային երաժշտական գործիք: Ֆագոտի տարատեսակը՝ ավելի ցածր հնչեղությամբ:

ԿՈՆՏՐԻԲՈՒՑԻԱ [< контрибуция < լատ. contributio], գ. Ռազմատուգանք:

ԿՈՆՏՐԻԲՈՒՑԻՈՆ [< контрибуционный < լատ.], ած. Ռազմատուգանքային:

ԿՈՆՏՐՈԼ [< контроль < ֆր. controle], գ. (խսկց.): 1. Վերահսկողություն, վերահսկում: 2. Ստուգում: 3. ած. Ստուգիչ, ստուգողական:

ԿՈՆՏՐՈԼ(Յ)ԵՐ [< контроллёр < անգլ. controller կառավարիչ], գ. (տեխ.): Տրամվայի՝ էլեկտրաքարշի՝ վերելակի ևն շարժումը ղեկավարող սարք:

ԿՈՆՏՐՖՈՐՍ [< контрфорс < ֆր. contreforce հակազդող ուժ], գ. (ճարտ.): Որմնահեց՝ որմնամույթի, առանձին կանգնած մույթի, ընդլայնական որմի ևն ձևով լրացուցիչ ամրություն, որն իր վրա կրելով հիմնականում հորիզոնական

հրող ուժերը՝ ուժեղացնում է հիմնական կրող կառուցվածքը:

ԿՈՆՏՈՒԶԻԱ [< контузия < լատ. contusio], գ. (բժշկ.): Մարմնի ընդհանուր կամ մասնակի վնասվածք՝ ճմլվածք՝ առանց արտաքին երևույթի (հատկապես ուժեղ պայթյունի դեպքում):

ԿՈՆՏՈՒՐ [< контур < ֆր. contour], գ. 1. Ուրվագիծ, եզրագիծ: 2. (էլեկտր.): Հաղորդիչների փակ շղթա:

ԿՈՆՑԵՆՏՐԱՏ [< концентрат < լատ.], գ. (հնց.): 1. Համակենտրոնացված՝ հարստացված հանքանյութ: 2. (գաստրոն.): Խտացրած կեր: 3. Խտածո, չոր՝ խտացրած ու մամլած սննդամթերք:

ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱ [< концентрация < լատ. concentratio], գ. 1. Համակենտրոնացում: 2. (քիմ.): Որոշակի քանակությամբ լուծույթի մեջ պարունակվող լուծված նյութի քանակություն:

ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻՈՆ [< концентрационный < լատ.], ած. Համակենտրոնական, համակենտրոնացման:

ԿՈՆՑԵՊՏՈՒԱԼԻԶՄ [< концептуализм < լատ. conceptus միտք, հասկացություն], գ. (գիտ.): Ընդհանուր հասկացությունների (կոնցեպտների) գոյության ձևի մասին ուսմունք: Ի տարբերություն ռեալիզմի և ծայրահեղ նոմինալիզմի՝ այն ընդունում է, որ ընդհանուրը գոյություն ունի մարդու մտքում:

ԿՈՆՑԵՊՑԻԱ [< концепция < լատ. conceptio ըմբռնում > ֆր. conception], գ. Հայեցակարգ՝ 1. Հայացքների համակարգ: 2. Ստեղծագործության հիմնական միտքը:

ԿՈՆՑԵՌՆ [< концерн < անգլ. concern], գ. (տնտսգ.): Մի շարք առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների խոշոր միավորում ընդհանուր ֆինանսական ղեկավարության ներքո:

ԿՈՆՑԵՍԻԱ [< концессия < լատ. concessio զիջում], գ. (տնտսգ.): 1. Պայմանագիր, որով պետությանը պատկանող հողը՝ ընդերքի հարստությունը՝ ձեռնարկությունը նն հանձնվում է շահագործման: 2. Այդպիսի պայմանագրի համաձայն գործող ձեռնարկություն:

ԿՈՆՑԵՍԻՍՏԵՐ, գ. Կոնցեսիա (2) ունեցող, կոնցեսիայի տեր:

ԿՈՆՑԵՍԻՈՆԵՐ [< концессионер < լատ.], Տե՛ս Կոնցեսիատեր:

ԿՈՆՑԵՐՏ [< концерт < ֆր. concert], գ. (խսկց. հնց.): Համերգ, նվագահանդես:

ԿՈՆՑԵՐՏԻՆ [< концертино < իտլ. concertina], գ. (երժշտ.): 1. Օդհունչ երաժշտական գործիք, քրոմատիկ հնչյունաշարով (սակայն առանց պատրաստի ակորդների) հարմոն: 2. Մենակատարի և նվագախմբի համար գրված փոքր ստեղծագործություն:

ԿՈՆՑԵՐՏՄԱՅՍՏԵՐ [< концертмейстер < գերմ. Konzertmeister], գ. (երժշտ.): 1. Նվագախմբի առաջին ջութակահարը, որը կատարում է ջութակի մենանվագը և երբեմն փորձերի ժամանակ փոխարինում դիրիժորին: 2. Նվագախմբի լարային խմբերից մեկի առաջին կատարողը: 3. Դաշնակահարը, որ համերգների ժամանակ նվագակցում է երգիչներին և օգնում դերերգը սերտելիս:

ԿՈՆՈՒՆԳ [< конунг < հին սկանդ. konungr], գ. (պատմ): Ռազմական առաջնորդ, տոհմական ավագանու ներկայացուցիչ վաղ միջնադարյան սկանդինավների մոտ:

ԿՈՆՈՒՍ [< конус < հուն. kōnos], գ. Կոն՝ 1. (երկրչ.): Երկրաչափական մարմին, որ ստացվում է ուղղանկյուն եռանկյան էջերից՝ ուղիղ անկյան դիմացի կողմերից մեկի շուրջը պտտելով: 2. *փխբ.* Կոնաձև շինվածք՝ հարմարանք (լուսամուտ փակելու, մեքենայի մաս նն):

ԿՈՆՈՒՐԲԱՑԻԱ [< конурбация < գերմ. Konurbation < լատ. con իրար հետ, միասին + urbs քաղաք], գ. (ազգգր.): Միմյանց հետ տնտեսական, մշակութային, տարածական ևն միասնություն կազմող քաղաքախումբ:

ԿՈՆՖԵԴԵՐԱՏԻՎ [< конфедеративный > ֆր. confédération < լատ.], ած. Կոնֆեդերացիային վերաբերող՝ հատուկ, կոնֆեդերացիայի մեջ մտնող:

ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ [< конфедерация < լատ. confoederatio > ֆր. confédération], գ. (քղք.): Համադաշնակցություն, համադաշնություն, դաշնություն՝ միություն պետությունների՝ կազմակերպությունների միջև:

ԿՈՆՖԵՍԻԱ [< конфессия < լատ. confessio հավատ], գ. (կրոն.): Դավանություն, հավատ, կրոն:

ԿՈՆՖԵՏ [< конфета < իտլ. confetto < լատ. confectum պատրաստում, հմմտ. գերմ. Konfect], գ. (խոհր.): Փոքրիկ կտորների՝ սալիկների ևն ձևով զանազան մթերքներից ու համեմունքներից շաքարի մեջ եփած քաղցրեղեն՝ հրուշակեղեն:

ԿՈՆՖԵՏԵՂԵՆ, գ. (հվք.): Զանազան տեսակների կոնֆետները որպես ամբողջություն:

ԿՈՆՖԵՐԱՆՍ [< конферанс < ֆր. conference], գ. 1. Պարզաբանություն՝ բացատրություն, որ տալիս է կոնֆերանսիեն: 2. Տե՛ս Կոնֆերենցիա:

ԿՈՆՖԵՐԱՆՍՅԵ [< конферансье < ֆր. conférensier], գ. Էստրադային ներկայացումը կամ համերգը վարող դերասան, համերգավար, հանդիսավար:

ԿՈՆՖԵՐԵՆՑ-ԴԱՀԼԻՃ [< конференц–зал < գերմ. Konferenzsaal], գ. Հանդիսասրահ, դահլիճ՝ հանդիսավոր նիստերի, կոնֆերանսների համար:

ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱ [< конференция < լատ. conferentia > ֆր. conférence], գ. Կոնֆերանս՝ պետական մարմինների՝ հասարակական՝ կուսակցական՝ գիտական ևն կազմակերպությունների ներկայացուցիչների ժողով՝ զանազան հարցեր քննարկելու և լուծելու համար:

ԿՈՆՖԻԳՈՒՐԱՑԻԱ [< конфигурация < լատ. configuratio], գ. 1. Որևէ բանի ընդհանուր տեսքը՝ ձևը՝ գծագրությունը: 2. Առարկաների փոխադարձ հարաբերակցությունը՝ տեղադրությունը:

ԿՈՆՖԻԴԵՆՑԻԱԼ [< конфиденциальный < լատ. confidentia վստահություն], ած. Գաղտնի, խորհրդապահական:

ԿՈՆՖԻՍԿԱՑԻԱ [< конфискация < լատ. confiscatio], գ. (իրավք.): Պետական իշխանության որոշմամբ՝ ունեցվածքի առանց հատուցման բռնի կերպով գրավելը, բռնագրավում:

ԿՈՆՖԻՏՅՈՒՐ [< конфитюр < ֆր. confiture < confire շաքարով եփել], գ. (խոհր.): Պահածոյացված (քաղցրի մեջ եփված) միրգ:

ԿՈՆՖԻՐՄԱՑԻԱ [< конфирмация < լատ. confirmatio հաստատում], գ. 1. Բարձրագույն պետական իշխանությունների կողմից դատավճիռների հաստատում: 2. (եկեղ.): Բողոքականների մոտ՝ պատանիներին ու աղջիկներին եկեղեցական հավատքի մեջ ընդունելը, կաթոլիկների մոտ՝ դրոշմ, մյուռոնով օծելու խորհուրդ, նախահաղորդություն:

ԿՈՆՖԼԻԿՏ [< конфликт < լատ. conflictus], գ. 1. Հակադիր շահերի՝ ձգտումների՝ հայացքների ևն բախում՝ ընդհարում: 2. Վեճ, տարաձայնություն: 3. Միջազգային հարաբերությունների բախում, որ երբեմն զինված ընդհարման է հանգեցնում: 4. (գրք.): Գեղարվեստական երկում գործող անձանց, երևույթների ևն ներքին հակասություն:

ԿՈՆՖՈՐՄԱՑԻԱ [< конформация < լատ. conformatio ձև, կառուցվածք, դասավորություն], գ. (գիտ.): Մոլեկուլի երկրաչափական ձև, որը կարող է ընդունել օր-

գանական միացության մոլեկուլը պարզ կապի շուրջն ատոմների կամ ատոմական խմբերի պտտման ժամանակ:

ԿՈՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՆԱԼԻԶ - (քիմ.): Ստերեոքիմիայի բաժին, որն ուսումնասիրում է մոլեկուլի կոնֆորմացիաները և դրանց կապը նյութի ֆիզիկական և քիմիական հատկությունների հետ:

ԿՈՆՖՈՐՄԻԶՄ [< конформизм < ուշ լատ. conformis նման, նույնպիսի], գ. (հնց.): Հարմարվողականություն՝ համակերպվել պայմաններին՝ հանգամանքներին, համապատասխան դիրք բռնել հակառակ իր համոզմունքներին:

ԿՈՆՖՐՈՆՏԱՑԻԱ [< конфронтация < լատ. con դեմ + frons (frontis) ճակատ], գ. (հնց.): Հակամարտություն:

ԿՈՆՖՈՒԶ [< конфуз < լատ. confusio անկարգություն, շփոթ], գ. (խսկց.): Անհարմար դրություն, շփոթություն:

ԿՈՆՖՈՒՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< конфуцианство < հին չինական մտածող Կոնֆուցիոս, Կուն ֆու Ցզիի (մ.թ.ա. 551-479) անունից], գ. (փիլ.): Բարոյաքաղաքական ուսմունք, որը ծագել է հին Չինաստանում և 2000 տարուց ավելի մեծ ազդեցություն է ունեցել Չինաստանի հոգևոր մշակույթի, քաղաքական կյանքի և հասարակարգի վրա:

ԿՈՇՄԱՐ [< кошмар < ֆր. couchemar < լատ. calcare սեղմել + հին վերին գերմ. mara խեղդուկ], գ. (խսկց. հնց.): Մղձավանջ (*ուղիղ և փխբ.*):

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ [< кооперативный < լատ. cooperatio համագործակցություն], ած. գ.1. Կոոպերացիային հատուկ՝ վերաբերող: 2. Կոոպերացիայի սկզբունքի վրա հիմնված: 3. Նույնն է՝ Կոոպերացիա: 4. Կոոպերատիվ խանութ: 5. Կոոպերատիվ տնտեսություն:

ԿՈՈՊԵՐԱՏՈՐ [< кооператор < լատ.], գ. Կոոպերացիայի բնագավառի աշխատող՝ գործիչ:

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ [< кооперация < լատ. cooperatio համագործակցություն], գ. (տնտսգ.): 1. Աշխատանքի կազմակերպման ձևերից մեկը, որի ժամանակ մարդիկ միասին զբաղվում են աշխատանքի միևնույն կամ տարբեր, բայց իրար հետ կապված գործընթացով: 2. Իր անդամների՝ փայատերերի միջոցներով կազմակերպված հանրային արտադրամաս, առևտրական ևն միավորում:

ԿՈՈՊՏԱՑԻԱ [< кооптация < լատ. cooptatio լրացուցիչ ընտրություն], գ. Ընտրովի օրգանի՝ մարմնի կազմի համալրում՝ առանց ընտրության դիմելու, ինքնահամալրում:

ԿՈՈՐԴԻՆԱՏ [< координат < լատ. co(n) միասին + ordinatus կարգավորված՝ կանոնավորված], գ. 1. (գիտ.): Հարթության կամ տարածության մեջ կետի դիրքը որոշող մեծություն: 2. *փխբ.* (խսկց.): Մեկի կամ մի բանի գտնվելու տեղը՝ գնացած ուղղությունը ևն որոշող տվյալների ամբողջությունը:

ԿՈՈՐԴԻՆԱՏՈՐ [< координатор < լատ.], գ. 1. Կոորդինացիայի ենթարկող մարդ: 2. Ավտոմատ գործիք, որ օդաչուին ցույց է տալիս ինքնաթիռի գտնվելու տեղը:

ԿՈՈՐԴԻՆԱՑԻԱ [< координация < լատ. co(n) հետ, միասին + ordinatio կարգով դասավորություն], գ. Համադասություն, համաձայնեցում:

ԿՈՈՐԴԻՆԱՑԻՈՆ [< координационный < լատ.], ած. Համադասիչ, համաձայնեցնող:

ԿՈՊԱԼ [< копал < իսպ. copal], գ. (հնք.): Փայտային ծագում ունեցող դեղին կամ կարմրավուն հանածո խեժ՝ լաքերի պատրաստման համար:

ԿՈՊԵԿ [< ռուս. копейка < копье նիզակ, գեղարդ], գ. 1. (հնց.): Դրամական

միավոր =1/100 ռուբլու: 2. *փխբ.* Դրամ, փող:

ԿՈՊԻԱ [< копия < լատ. copia առատություն, շատություն], գ. (խսկց.): Պատճեն, ընդօրինակություն:

ԿՈՊՐՈԼԻԹ(Տ) [< копролит < հուն. kopros կեղտ, կղկղանք + lithos քար], գ. (հնէաբ.): Հնագույն բրածո կենդանիների քարացած կեղտը՝ կղկղանքը:

ԿՈՊՈՒԼՅԱՑԻԱ [< копуляция < գերմ. Kopulation < լատ. copulatio միացում, միություն], գ. (կենսբ.): Զուգավորում (ստորակարգ էակների):

ԿՈՌԱԶԻԱ [< корразия < լատ. corrasio տաշում, հղկում], գ. (երկրբ.): Ապարների տաշման, հղկման, ողորկման, շաղափման գործընթաց, որ կատարվում է ջրի, քամու, սառույցի միջոցով փոխադրվող բեկորային նյութի ներգործման շնորհիվ:

ԿՈՌԵԼՅԱՑԻԱ [< корреляция < ուշ լատ. correlatio հարաբերակցություն], գ. (գիտ.): 1. (կենսբ.): Օրգանիզմի բջիջների, հյուսվածքների, օրգանների և համակարգերի ֆունկցիայի ու կառուցվածքի փոխադարձ կախվածություն, որն արտահայտվում է զարգացման և կենսագործունեության գործընթացում: 2. (մաթ.): Երկու պատահական մեծությունների միջև հավանական կախվածություն, որը չունի ֆունկցիոնալ բնույթ, հարաբերակցություն:

ԿՈՌԵԿՏ [< корректный < լատ. correctus ճիշտ, ճշտված, շտկված], ած. (խսկց.): Բարեկիրթ, բարեզուսպ, քաղաքավարի, պատշաճ վարվելակերպ:

ԿՈՌԵԿՏՈՐ [< корректор < լատ. corrector ուղղող], գ. (տպգր. մսնգ.): Սրբագրիչ:

ԿՈՌԵԿՑԻԱ [< коррекция < լատ. correctio], գ. 1. Շտկում: 2. Անհրաժեշտ ուղղությամբ գործընթացի շեղում:

ԿՈՌՆԵՏ [< корнет < ֆր. cornet եղջյուրիկ, պոզիկ], գ. 1. (երժշտ.): Պղնձե փողային եղջյուրիկանման երաժշտական գործիք: 2. (պատմ.): Զինվորական ցածր կոչում Ռուսաստանում:

ԿՈՌՆԵՏԱՀԱՐ, գ. ած. Կոռնետ նվագող:

ԿՈՌՈԶԻԱ [< коррозия < լատ. corrosio կրծված, փշրված դարձնելը կամ լինելը], գ. 1. Մետաղների քայքայում՝ քիմիական գործընթացների հետևանքով: 2. (երկրբ.): Լեռնապարների փոփոխություն՝ քամու և ջրի ներգործությամբ:

ԿՈՌՈՒՊՑԻԱ [< коррупция < լատ. corruptio վնաս հասցնել, *փխբ.* գայթակղել, փչացնել, կործանել], գ. 1. Կաշառում, կաշառակերություն: 2. Պաշտոնյա անձանց և հասարակական գործիչների կողմից իրենց պաշտոնական իրավունքների չարաշահումը՝ անձնական հարստացման նպատակով:

ԿՈՍԵԿԱՆՍ [< косеканс < լատ. co(n) միասին + secans հատող], գ. (մաթ.): Եռանկյունաչափության մեջ՝ լրացուցիչ անկյան սեկանս:

ԿՈՍԻՆՈՒՍ [< косинус < լատ. co(n) միասին + sinus գալար, պտույտ, ծռվածք], գ. (մաթ.): Եռանկյունաչափության մեջ՝ լրացուցիչ անկյան սինուս:

ԿՈՍՄԵՏԻԿ, Տե՛ս Կոսմետիկական:

ԿՈՍՄԵՏԻԿԱ [< косметика < հուն. kosmetike զարդարվելու արվեստ], գ. 1. Մարդու դեմքը՝ մաշկը թարմացնելու՝ խնամելու նպատակով կիրառվող միջոցների ամբողջությունը, մաշկին՝ դեմքին արհեստականորեն թարմություն՝ գեղեցկություն տալը, մարմնահարդարում, դիմահարդարում: 2. Այն նյութերը, որոնք ծառայում են այդ նպատակին:

ԿՈՍՄՈ... [< космо... < հուն. kosmos տիեզերք] Բաղադրյալ բառերի բաղադրիչ, որը ցույց է տալիս դրանց կապը տիեզերքին կամ տիեզերական մարմիններին:

ԿՈՍՄՈԳՈՆԻԱ [< космогония < հուն. kosmogonia < kosmos տիեզերական + gonia ծնունդ, երկնքի՝ աշխարհի ծագումը], գ. (գիտ.): Աստղագիտության մի բա-

ժինը, որը զբաղվում է երկնային մարմինների և նրանց համակարգերի ծագման ու զարգացման ուսումնասիրությամբ, տիեզերագոյացություն:

ԿՈՍՄՈԳՐԱՖԻԱ [< космография < հուն. kosmos տիեզերք + graphō գրում եմ], գ. 1. (գիտ.): Տիեզերագրություն: 2. Ուսումնական առարկա, որը տեղեկություններ է տալիս աստղագիտության և ֆիզիկական աշխարհագրության մասին:

ԿՈՍՄՈԴՐՈՄ [< космодром < հուն. kosmos տիեզերք + drómos վազքուղի, տեղ՝ վազքի համար], գ. (հնց.): Տիեզերական կայան, որտեղից տիեզերանավ է արձակվում դեպի երկինք, տիեզերակայան:

ԿՈՍՄՈԼՈԳԻԱ [< космология < հուն. kosmos տիեզերք + logos ուսմունք], գ. 1. (գիտ.): Տիեզերագիտություն՝ տիեզերքի՝ որպես միասնական ամբողջության մասին: 2. Աստղագիտության մի բաժինը, որ նվիրված է այդ գիտությանը:

ԿՈՍՄՈՆԱՎՏ [< космонавт < հուն. cosmos + naut լողացող անձ], գ. (հնց.): Այն անձը, որ թռիչք է կատարում դեպի տիեզերք՝ կոսմիկական տեխնիկայի փորձարկման և գիտական դիտարկումների կիրառման՝ գործարկման նպատակով, տիեզերագնաց, աստղանավորդ:

ԿՈՍՄՈՊՈԼԻՏ [< космополит < հուն. kosmopolites երկրի՝ աշխարհի քաղաքացի], գ. ած. Աշխարհաքաղաքացի, համաշխարհաքաղաքացի:

ԿՈՍՄՈՊՈԼԻՏԻԶՄ [< космополитизм < հուն.], գ. Կոսմոպոլիտություն՝ աշխարհաքաղաքացիություն, համաշխարհաքաղաքացիություն:

ԿՈՍՄՈՍ [< космос < հուն. kosmos զարդ, կարգ, աշխարհ], գ. (հնց.): Տիեզերք՝ երկնային անհուն տարածությունը՝ մոլորակներով, արեգակնային և աստղային համակարգերով:

ԿՈՍՏՅՈՒՄ[< костюм < ֆր. costume], գ. Տղամարդու կամ կանացի համալիր զգեստ (օր.՝ պիջակը տաբատի հետ միասին):

ԿՈՍՏՈՒՄԲՐԻԶՄ [< костумбризм < իսպ. costumbrismo < costumbre բարք, սովորույթ], գ. (գրկն.): Ուղղություն XIX դ. Իսպանիայի և Լատինական Ամերիկայի գրականության մեջ ու արվեստում: Այն արտահայտում էր ազգային ինքնագիտակցության վերելքը, ժողովրդի կյանքի առանձնահատկությունները վերարտադրելու ձգտումը՝ հաճախ նահապետական բարքերի ու սովորույթների իդեալականացումով:

ԿՈՎԲՈՅ [< ковбой < անգլ. cowboy < cow կով + boy տղա], գ. (խսկց.): ԱՄՆ-ի արևմտյան նահանգներում՝ հեծյալ նախրապան:

ԿՈՏԱՆԳԵՆՍ [< котангенс < գերմ. Kotangens < լատ. co(n) + tangens շփվող], գ. (մաթ.): Եռանկյունաչափության մեջ՝ լրացուցիչ անկյան տանգենս:

ԿՈՏԵՐԻԱ [< котерия < ֆր. coterie խմբակ], գ. (պատմ.): Արևմտյան Եվրոպայում միջին դարերում՝ վարձկանների զինված ջոկատ:

ԿՈՏԻՐՈՎԿԱ [< котировка < ֆր. se coter], գ. (տնտսգ.): Արժենշում, սակմունք՝ օտարերկրյա արժույթների, արժեթղթերի կուրսի կամ ապրանքի գների սահմանումը բորսաներում (սակարաններում):

ԿՈՏԼԵՏ [< котлета < ֆր. côtelette], գ. (խոհր.): Աղացած կամ ծեծած մսի տապակած երկարավուն կամ կլորաձև կտոր, կողիկ:

ԿՈՐԴԵԲԱԼԵՏ [< кордебалет < ֆր. corps de ballet], գ. (արվ.): Բալետախումբ՝ բալետի այն արտիստները, որոնք մասսայական և խմբային պարեր են կատարում:

ԿՈՐԴԵԼԻԵՐՆԵՐ [< кордельеры < ֆր. cordeliers < corde պարան], գ. (պատմ.): Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքական ակումբի

անդամներ (պաշտոնական անվանումն էր «Մարդու և քաղաքացու իրավունքների ընկերության»):

ԿՈՐԵՍՊՈՆԴԵՆՑԻԱ [< корреспонденция < ֆր. correspondence < լատ. co(n) միասին, հետ + respondere պատասխանել], գ. (հնց.): 1. Նամակագրություն: 2. Գրագրություն, նամակներ, փոստային առաքումներ, փոստ: 3. Թղթակցություն, հոդված: 4. Համապատասխանություն, հարաբերակցություն:

ԿՈՐԻԴԱ [< коррида < իսպ. corrida (de toros) ցուլերի վազք], գ. Ցլամարտ, որ տարածված է Իսպանիայում, Պորտուգալիայում, հարավային Ֆրանսիայում, Լատինական Ամերիկայում:

ԿՈՐԻԴՈՐ [< коридор < գերմ. Korridor < ֆր. corridor < լատ. currere վազել], գ. (հնց.): Միջանցք:

ԿՈՐԻՖԵՅ [< корифей < հուն. koryphaios առաջնորդ, ղեկավար], գ. 1. Գիտության և արվեստի ականավոր գործիչ՝ վարպետ: 2. (պատմ.): Երգի և պարի ղեկավար հունական ողբերգություններում:

ԿՈՐՈՆԱՑԻԱ [< коронация < լատ.], գ. (հնց.): Թագադրման արարողություն, թագադրում:

ԿՈՐՈՆՈԳՐԱՖԻԱ [< коронография < լատ. corona պսակ + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Սրտի հետազոտման եղանակ:

ԿՈՐՊՈՐԱՑԻԱ [< корпорация < լատ. corporatio միավորում], գ. (տնտսգ.): Մասնատիրություն՝ ընդհանուր շահերով համախմբված մարդկանց միավորում:

ԿՈՐՊՈՒՍ [< корпус < լատ. corpus մարմին], գ. 1. (ռազմ.): Զորաբանակ, զորային խոշոր միավորում, որի մեջ մտնում են մի քանի դիվիզիաներ կամ բրիգադներ: 2. Մարմին, մարդու կամ կենդանու իրանը: 3. Մեքենաների՝ մեխանիզմների, սարքերի, ապարատների հիմքը՝ ատաղձը՝ թաղանթը: 4. Նավի, շինվածքի ենի կմախքը: 5. Մասնաշենք, մեծ շինության մի մասը: 6. (տպգր.): Տասը պունկտանոց տառատեսակ: 7. Ստեղծագործությունների՝ արձանագրությունների ենի լիավարտ ժողովածու: 8. (պատմ.): Միջնակարգ ռազմական փակ դպրոց՝ մինչհեղափոխական Ռուսաստանում:

ԿՈՐՊՈՒՍԿՈՒԼ [< корпускула < լատ. corpusculum մարմնիկ], գ. (ֆիզ.): Նյութի՝ մատերիայի փոքր մասնիկ:

ԿՈՐՍԱԺ [< корсаж < ֆր. corsage], գ. Կանացի յուրահատուկ զգեստ՝ իրանակալ:

ԿՈՐՍԵՏ [< корсет < ֆր. corset], գ. Սեղմիրան՝ լայն առաձգական գոտի, որ կապում են հագուստի տակից իրանը սեղմելու և կազմվածքին սլացիկություն տալու համար:

ԿՈՐՎԵՏ [< корвет < ֆր. corvette], գ. (ծով.): Հետախուզական ռազմանավ:

ԿՈՐՏ [< корт < անգլ. court], գ. (սպորտ.): Սպորտային հրապարակ՝ մեծ թենիս խաղալու համար, թենիսահարթակ, թենիսահրապարակ:

ԿՈՐՏԵԺ [< кортёж < ֆր. cortège], գ. (խսկց.): 1. Թափոր, մահվան թափոր: 2. Շքերթ՝ հանդիսավոր ընթացք:

ԿՈՐՏԵՍՆԵՐ [< кортесы < իսպ. cortes < corte արժանիք], գ. (պատմ.): Միջնադարյան Իսպանիայում և Պորտուգալիայում՝ դասային ներկայացուցչական ժողովներ, հետագայում՝ պառլամենտներ:

ԿՈՐՈՒՆԴ [< корунд < գերմ. Korund սուտակ], գ. (հնք.): Շատ կարծր հանքաքար, որի տարատեսակներն են սուտակը, շափյուղան են:

ԿՈՔՍ [< кокс < գերմ. Koks], գ. Քարածխից՝ տորֆից են առանց օդի ներթափանցման բարձր ջերմությամբ շիկացնելով ստացվող կարծր վառելանյութ:

ԿՈՖԵ [< кофе < հոլանդ. coffie < արաբ.], գ. (խսկց.): Սուրճ:

ԿՈՖԵԻՆ [< кофеин < լատ. coffeinum], գ. (դղգրծ.): Կոֆեի՝ սուրճի սերմերից, թեյի տերևներից և ստացվող դեղ, որ գործածվում է նյարդային համակարգի և սրտի գործունեությունը խթանելու համար:

ԿՈՖՏԱ [< ռուս. кофта], գ. Կանացի կարճ (սովորաբար մինչև գոտկատեղը հասնող) վերնազգեստ, բաճկոնակ:

ԿՌԱՆ I [< кран < հոլանդ. kraan], գ. (խսկց. հնց.): Ծորակ:

ԿՌԱՆ II [< кран < գերմ. Kran], գ. (խսկց. հնց.): Կռունկ, ամբարձիչ:

ԿՌԻՍ(Ա) [< ռուս. крыса], գ. (խսկց.): Շիկամուկ՝ վնասակար, մկանման կրծող կենդանի, առնետ:

ԿՎԱԴՐԱՆՏ [< квадрант < լատ. quadrans (quadrantis) չորրորդ մաս, քառորդ], գ. 1. (մաթ.): Քառորդակ, քառորդամաս: 2. (ռազմ.): Անկյունաչափ՝ փակ դիրքերում գնդացրի և ականանետի նշանառությունը ճշտելու համար: 3. (տեխ.): Մանվածքի կշեռք:

ԿՎԱԴՐԱՏ [< квадрат < լատ. quadratus քառանկյուն], գ. 1. (երկրչ.): Քառակուսի՝ չորս հավասար կողմ և չորս ուղիղ անկյուն ունեցող երկրաչափական ձև կամ մարմին: 2. (տպգր.): Շարվածքային նյութի և շարվածքի ֆորմատի մեծությունը չափելու միավոր = 48 պունկտի կամ 18 մմ-ի: 3. Տպագրական բացատային նյութ, որը հավասար է տվյալ տառատեսակի կեգելին, իսկ լայնությամբ՝ 4.36 կամ 24 պունկտի:

ԿՎԱԴՐԻԼԻՈՆ [< квадрильон < ֆր. quadrillion], գ. (մաթ.): Միլիոնի 4-րդ աստիճանը (միավոր և 24 զրո), քառիլիոն:

ԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱ [< квалификация < լատ. qualis ի՞նչ որակի + facere անել], գ. (խսկց. գրք.): 1. Որակավորում, որակավորելը, որակում, գնահատում: 2. Որակ, պատրաստության աստիճան: 3. Մասնագիտություն:

ԿՎԱՍ [< ռուս. квас], գ. Հացից կամ տարեկանի ալյուրից պատրաստվող թթվահամ ըմպելիք:

ԿՎԱՏՐՈՉԵՆՏՈ, Տե՛ս ՔՎԱՏՐՈՉԵՆՏՈ:

ԿՎԱՐՏ [< кварта < լատ. quarta չորրորդ], գ. 1. Սորուն և հեղուկ մարմինների զանազան մեծության չափ մի շարք երկրներում: 2. (երժշտ.): Դիատոնիկ գամմայի չորրորդ աստիճանը: 3. (սպորտ.): Սրամարտ հաջորդական դիրքերից մեկը:

ԿՎԱՐՏԱԼ [< квартал < quartal < լատ. quartus չորրորդ], գ. 1. Եռամսյակ՝ տարվա չորրորդ մասը: 2. Թաղամաս:

ԿՎԱՐՏԵՏ [< квартет < իտլ. quartetto], գ. 1. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործություն չորս նվագարանի կամ չորս ձայնի համար, քառերգ, քառանվագ: 2. Չորս հոգուց բաղկացած երաժշտախումբ, քառյակ:

ԿՎԱՐՑ [< кварц < գերմ. Quarz.], գ. (հնք.): Որձաքար:

ԿՎԵՍՏՈՐ, Տե՛ս Քվեստոր:

ԿՎԻՆՏԵՏ [< квинтет < իտլ. quintetto], գ. (երժշտ.): 1. Երաժշտական ստեղծագործություն հինգ գործիքի կամ հինգ ձայնի համար, հնգանվագ, հնգերգ: 2. Հինգ անձից բաղկացած երաժշտախումբ:

ԿՎԻՆՏ-ԷՍԵՆՑԻԱ [< квинтэссенция < լատ. quinta essentia հինգերորդ էություն (անտիկ՝ հին և միջնադարյան փիլիսոփայության մեջ՝ իրերի հիմնական էությունը)], գ. Բուն էություն, որևէ բանի ուղնուծուծը:

ԿՎԻՆՏԻԼԻՈՆ [< квинтильон < ֆր. quintillion], գ. (մաթ.): Հազար կվադրիլիոն:

ԿՎԻՏԱՆՑԻԱ [< квитанция < հոլանդ. kvitantie ստացական], գ. (խսկց.): Անդորրագիր:

ԿՐԱԲ [< краб < հոլանդ. crabe], գ. (կենդբ. խսկց.): Ծովախեցգետին:

ԿՐԱԽ [< крах < գերմ. Krach], գ. 1. Սնանկացում, սնանկություն: 2. Լիակատար սնանկություն՝ կործանում՝ տապալում՝ փլուզում:

ԿՐԱԽՄԱԼ [< крахмал < գերմ. Kraftmehl], գ. Մի քանի բույսերից ստացվող սպիտակ անհամ փոշի, որը օգտագործվում է սննդի, քիմիական, տեքստիլ ևն արդյունաբերության մեջ:

ԿՐԱԿՈՎՅԱԿ [< краковяк < լեհ. krakowiak < Կրակով քաղաքի անունից], գ. (արվ.): Լեհական արագ տեմպերով ազգային պար և դրա երաժշտությունը:

ԿՐԱՆԻՈԼՈԳԻԱ [< краниология < գերմ. Kraniologie, ֆր. craniologie < հուն. kranion գանգ + logōs գիտություն], գ. (գիտ.): Գանգաբանություն:

ԿՐԱՆԻՈՄԵՏՐԻԱ [< краниометрия < գերմ. Kraniometrie < հուն. kranion + metreō չափում եմ], գ. (գիտ.): Գանգաչափություն:

ԿՐԱՆԻՈՍԿՈՊԻԱ [< краниоскопия < հուն. kranion + skepeō դիտում եմ], գ. (գիտ.): Գանգի տեսողական քննություն:

ԿՐԱՏԵՐ [< кратер < հուն. kratḗr մեծ թաս], գ. (երկրբ.): Խառնարան՝ հրաբխային լեռան բացվածք, որտեղից ժայթքում է լավան:

ԿՐԵԱՏԻՆ [< креатин < ֆր. creatine], գ. (քիմ): N-մեթիլ-գուանիդինքացախաթթու, օրգանական նյութ: Լուծվում է տաք ջրում, քիչ քանակությամբ նաև սպիրտում: Հիմնային միջավայրում քայքայվում է միզանյութի և մեթիլգլիցինի:

ԿՐԵԱՏԻՎ [< креативный < անգլ. to create ստեղծել, արարել], ած. (խսկց.): Ստեղծագործ, նախաձեռնող:

ԿՐԵԱՏՈՒՐԱ [< креатура < ֆր. creature, գերմ. Kreatur < լատ. creātura ստեղծում, կերտում], գ. (հնց.): Ինչ-որ մեկի կողմից դրված անձ, դրածո:

ԿՐԵԱՑԻՈՆԻԶՄ [< креационизм < լատ. creatio ստեղծում, արարում], գ. Ոչ գիտական կոնցեպցիա, ըստ որի՝ օրգանական աշխարհի տեսակների բազմազանությունը Աստծու արարաչագործության արդյունք է:

ԿՐԵԴԻՏ I [< кредит < լատ. credit նա հավատում է], գ. (հաշվ.) Պահանջ՝ հաշվապահական հաշվի երկկողմանի աղյուսակի աջ կողմը:

ԿՐԵԴԻՏ II [< кредит < լատ. creditum պարտք], գ. 1. Վարկ, փոխառության իրավունք, պարտք: 2. (ֆին.): Որոշակի ծախսումների համար բացթողնվող փողային գումար (ներ):

ԿՐԵԴԻՏՈՐ [< кредитор < կրեդիտ II], գ. Վարկատու՝ վարկ տվող՝ հատկացնող:

ԿՐԵԴՈ [< кредо < լատ. credo հավատում եմ], գ. 1. (եկեղ. գրք.): «Հավատամք», հավատահանգանակ: 2. *փխբ.* Աշխարհայացքի հիմունքներ, համոզմունքներ, հայացքներ:

ԿՐԵԿԵՐ [< крекер < անգլ. cracker], գ. (խոհր.): 1. Քաղցրավենիքի մի տեսակ: 2. Եփած կարտոֆիլի բարակ ձողիկներ:

ԿՐԵԿԻՆԳ [< крекинг < անգլ. creacking], գ. 1. Նավթաթորում: 2. (տեխ.): Նավթաթորման հարմարանք:

ԿՐԵՄ [< крем < ֆր. crême < լատ. chrisma քսուք < հուն. chrio շփում եմ], գ. 1. (խոհր.): Սերուցքից կամ կաթից, կարագից, ձվից և մրգահյութերից կամ շոկոլադից պատրաստվող քաղցր զանգված՝ թխվածքների համար: 2. Դիմահարդարման քսուք: 3. Կոշիկի քսուք:

ԿՐԵՄԱՏՈՐԻԱ [< крематорий < լատ.], գ. Դիակիզարան՝ շինություն և սարք՝ դիակներ կիզելու՝ այրելու համար:

ԿՐԵՄԱՑԻԱ [< кремация < լատ. crematio կիզում, այրում], գ. Դիակիզում, դիակների կիզումը՝ այրումը բարձր ջերմությամբ հատուկ վառարաններում:

ԿՐԵՄ-ՍՈԴԱ [< крем-сода < անգլ. cream-soda < cream փրփուր + soda գազավորված ջուր], գ. (խոհր.): Զովացուցիչ քաղցր ջուր:

ԿՐԵՅՍԵՐ [< крейсер < հոլանդ. kruiser], գ. (ռազմ.): Հածանավ, արագընթաց մարտական նավ:

ԿՐԵՆԴԵԼ [< крендель < գերմ. Krengel], գ. (խոհր.): Ոլորուն քաղցրահաց:

ԿՐԵՈԼ [< креол < ֆր. créole < իսպ. criollo], գ. 1. Եվրոպական առաջին գաղութարարների՝ Հարավային Ամերիկայում ծնված հետնորդ: 2. Եվրոպացի գաղութաբնակների և տեղաբնակների խառնածին զավակ:

ԿՐԵՈԼԻԶԱՑԻԱ [< креолизация < ֆր. créolisation < իսպ. criolla], գ. (լեզվբ.): Որոշակի տարածքում երկու կամ ավելի լեզուների փոխներգործության արդյունքում նոր լեզվի ձևավորումը:

ԿՐԵՊ [< креп < ֆր. crépe], գ. (մնծգր.): 1. Մետաքսե կամ բրդե անհարթ մակերեսով գործվածք: 2. Սև գույնի թափանցիկ նուրբ կտոր:

ԿՐԵՊԴԵՇԻՆ [< крепдешин < ֆր. crépe de Chine չինական կրեպ], գ.(մնծգր.): Մետաքսե ամուր և նուրբ անփայլ կտոր, չինական կրեպ:

ԿՐԵՎԵՏԿԱ [< креветка < ֆր. crevette < chevrette այծիկ], գ. (կենդբ. հնց.): Մանր ծովախեցգետին:

ԿՐԵՏԻՆ [< кретин < ֆր. crétin], գ. ած. 1. (բժշկ. հնց.): Ապուշ: 2. (հյիյնք.): Ապուշ, տխմար, բթամիտ:

ԿՐԵՏԻՆԻԶՄ [< кретинизм < ֆր. crétinisme], գ. 1. (բժշկ.): Ապուշություն: 2. *փխբ.* Բթամտություն, ապուշության առավել ծայրահեղ արտահայտություն:

ԿՐԻԶ [< криз < ֆր. crise], գ. (բժշկ. խսկց.): Խիստ ցավերի նոպա:

ԿՐԻԶԻՍ [< кризис < հուն. krisis վճիռ, որոշում, վճռորոշ ելք, դատավճիռ], գ. 1. Ճգնաժամ, տագնապ: 2. Կտրուկ փոփոխություն, ընթացիկ ծանր վիճակ, ծանր կացություն: 3. (տնտսգ.): Ապրանքների սուր պակաս:

ԿՐԻԿԵՏ, ԿՐԻՔԵՏ [< крикет < անգլ. cricket], գ. (սպորտ.): Երկու թիմերի միջև տարվող գնդակախաղի մի տեսակ, որը հիշեցնում է բեյսբոլ:

ԿՐԻՄԻՆԱԼ [< криминал < լատ. criminalis հանցավոր], գ. (խսկց.): Քրեական գործ, քրեական հանցանք, ոճիր, ոճրագործություն:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏ [< криминалист < լատ. criminalis հանցավոր], գ. (իրավբ.): Քրեագետ՝ քրեագիտության մասնագետ:

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ [< криминалистика < լատ.], գ. (իրավբ.): Քրեագիտություն՝ գիտություն, որը մշակում է դատական ապացույցների ձեռքբերման, հետազոտման, գնահատման հատուկ եղանակների, մեթոդների միջոցների համակարգ:

ԿՐԻՄԻՆՈԼՈԳԻԱ [< криминология < գերմ. Kriminologie < լատ. crimen հանցանք + հուն. logōs գիտություն], գ. (իրավբ.): Քրեաբանություն, քրեագիտություն՝ գիտություն հանցագործության պատճառների և դրանց դեմ պայքարի մեթոդների մասին:

ԿՐԻՇՆԱ [< Кришна < սանսկրիտ krishna, բառացի՝ մուգ, սև], գ. (կրոն.): Հինդուիզմի մեջ՝ Վիշնա աստծու մարմնացումներից մեկը:

ԿՐԻՈԼԻԹ [< криолит < հուն. kryos սառը, ցուրտ + lithos քար], գ. (հնք.): Հանքանյութ, որից ալյումինիում է ստացվում:

ԿՐԻՈՍԿՈՊԻԱ [< криоскопия < հուն. kryos ցուրտ, սառույց + skopeō դիտում եմ], գ. (գիտ.): Ֆիզիկաքիմիական հետազոտության մեթոդ. հիմնված է մաքուր լուծիչի և լուծույթի սառեցման ջերմաստիճանների տարբերության չափման վրա:

ԿՐԻՈՍՏԱՏ [< криостат < հուն. kryos + statos կանգուն, անշարժ], գ. (տեխ.): 0^0 C-ից ցածր ջերմաստիճանների համար նախատեսված թերմոստատ:

ԿՐԻՊՏԱ [< крипта < հուն. kryptē նվիրական տեղ, գաղտնարան], գ. (պատմ.): 1. Հին Հռոմում՝ առհասարակ ստորգետնյա թաղածածկ սենյակ՝ տարբեր նպատակների համար: Նույնատիպ միջանցքները անվանվում էին կրիպտապորտիկներ, որոնք վերևից ունեին լուսանցույց երդիկներ: 2. Վաղ քրիստոնեական կատակոմբաներ և ստորգետնյա աղոթարաններ: 3. (ճարտ.): Արևմտաեվրոպական, հիմնականում՝ ռոմանական ճարտարապետություն, կաթոլիկ եկեղեցիներում ստորգետնյա խորան, գլխավորապես տեղադրված ավագ խորանի տակ՝ պատվավոր թաղումների համար:

ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԱ [< криптография < գերմ. Kryptographie, ֆր. cryptographie < հուն. kryptōs գաղտնի, ծածուկ + graphō գրում եմ], գ. (գիտ.): Ծածկագրություն, գաղտնագրություն:

ԿՐԻՊՏՈՆ [< криптон < հուն. kryptos թաքնված, անվանվում է՝ դժվար ստացվելու համար], գ. (քիմ.): Kr, պարբերական համակարգի VIII խմբի քիմիական տարր: Իներտ գազ՝ օգտագործվում է գովազդային լամպերում: Ունի մաքուր սպիտակ գույն:

ԿՐԻՍՏԱԼ [< кристалл < լատ. crystallus < հուն. krystallos], գ. (հնց.): Բյուրեղ:

ԿՐԻՍՏԱԼԻԶԱՑԻԱ [< кристаллизация < գերմ. Kristallisation, ֆր. cristallisation < հուն.], գ. (տեխ.): Բյուրեղացում:

ԿՐԻՍՏՈԲԱԼԻՏ [< кристобалит < Մեքսիկայի Սան Կրիստոբալ (San Cristobal) հանքավայրի անունով], գ. (հնք.): Միներալ՝ SiO_2: Հանդիպում է էֆուզիվ ապարներում, ինչպես նաև թերմալ-մետամորֆացված ավազաքարերում, մագնեզիտի երակներում:

ԿՐԻՏԵՐԻԱ [< критерий < հուն. kritērion դատողություն, որոշման միջոց], գ. 1. (գրք.): Չափանիշ՝ հոգեկան են արժեքները որոշելու՝ գնահատելու: 2. (տնտսգ.): Ցուցանիշ, որի վրա ձևավորվում է տնտեսական օբյեկտի, տնտեսական գործընթացի գնահատումը:

ԿՐԻՏԵՐԻՈՒՄ [< հուն.],գ. Տե՛ս Կրիտերիա:

ԿՐԻՏԻԿ [< критик < հուն. kritikos], գ. 1. (գրկն. հնց.): Քննադատ՝ գրական քննադատությամբ զբաղվող մարդ՝ գրականագետ: 2. Որևէ բանի քննադատությամբ զբաղվող՝ հանդես եկող մարդ:

ԿՐԻՏԻԿԱ [< критика < հուն. kritikē], գ. (գրկն.): Քննադատություն:

ԿՐԻՏԻՑԻԶՄ [< критицизм < հուն.], գ. (գրկն.): 1. Քննադատություն, քննադատական վերաբերմունք որևէ բանի նկատմամբ: 2. (փիլ.): Գիտանվանում, որով գերմանացի փիլիսոփա Կանտը բնութագրել է իր փիլիսոփայությունը:

ԿՐՅՈՒՇՈՆ [< крюшон < ֆր. cruchon փոքր կուժ], գ. (խոհր.): Սեղանի սպիտակ գինու և ռոմի (նաև կոնյակի) խառնուրդ, որին ավելացվում են թարմ մրգեր, շաքար, երբեմն շամպայն:

ԿՐՈԼ [< кроль < անգլ. crawl սողալը], գ. (սպորտ.): Սպորտային լողի տեսակ:

ԿՐՈԼԻԿ [< кролик < լեհ. krolik, բառացի՝ փոքր թագավոր < լատ. cuniculus], գ. 1. (կենդբ. հնց.): 1. Ճագար: 2. Ճագարենի, ճագարի մորթի:

ԿՐՈՆ [< крона < գերմ. Krone], գ. (ֆին.): Դրամի միավոր արևմտաեվրոպական որոշ երկրներում:

ԿՐՈՆՇՏԵՅՆ [< кронштейн < գերմ. Kragstein], գ. (տեխ.): Բարձակ, կալունակ, նեցուկ, թաթ (պատշգամբը, քիվը, դարակը են պահելու համար):

ԿՐՈՍ [< кросс < անգլ. cross կտրել-անցնել], գ. (սպորտ.): Վազք, քայլք դահուկներով, երթ՝ հեծանիվով, մոտոցիկլով, ավտոմոբիլով՝ բնական կտրտված տեղանքով: Կազմում է ժամանակակից հնգամարտի բաղկացուցիչ մասը:

ԿՐՈՍՎՈՐԴ [< кроссворд < անգլ. crossword], գ. (խսկց.): Խաչբառ՝ խաղաառաջադրանք, որի մեջ քառակուսիների բաժանված ձևը պետք է լրացնել այնպիսի տառերով, որ հորիզոնական և ուղղահայաց գծերի մեջ ստացվեն մի շարք որոշակի բառեր:

ԿՐՈՔԵՏ [< крокет < անգլ. և ֆր. croquet < crook կեռիկ], գ. (սպորտ.): Սպորտային խաղ, որի ժամանակ խաղացողները ձգտում են փայտե մուրճի հարվածներով գնդակը որքան հնարավոր է արագ անցկացնել որոշակի կարգով դասավորված մետաղալարե դարպասներով և հասցնել նպատակին՝ հակառակորդի ցցիկը, և հետ վերադարձնել դեպի սեփական ցցիկը:

ԿՐՈՒԶԵՅՐՈ [< крузейро < պորտ. cruzeiro], գ. (ֆին.): Բրազիլիայի դրամական միավորը:

ԿՐՈՒԻԶ [< круиз < անգլ. cruise], գ. Ջրային (ծովային) ճանապարհորդություն, զբոսաշրջության տեսակ:

ԿՐՈՒՊ I [< круп I < անգլ. croup], գ. (բժշկ.): Խռիչ, խռնակ, խռուկ, աքլորախեղդ:

ԿՐՈՒՊ II [< круп II < ֆր. croupe], գ. (կենդբ.): Ձիու գավակ:

ԿՐՈՒՊՅԵ [< крупье < ֆր. croupier], գ. (խսկց.): Խաղաբանկ դնող, բանկ բռնող, մոլախաղի կարգադրիչ:

ԿՈՒԲ I [< ռուս. куб < հուն. kybos], գ. ած. 1. Խորանարդ: 2. (մաթ.): Խորանարդ աստիճան: 3. (խսկց.): Խորանարդ մետր:

ԿՈՒԲ II [< ռուս. куб], գ. (խսկց.): Կաթսա՝ փակ մետաղյա անոթ՝ ջուր պահելու կամ ջրից շոգի ստանալու համար:

ԿՈՒԲԻԶՄ [< кубизм < ֆր. cubisme < cube խորանարդ < հուն.], գ. (արվ.): XX դարի առաջին քառորդում կերպարվեստի մեջ ծագած ուղղություն, որ առարկաները, մարդկանց նն պատկերում է երկրաչափական խորանարդների զանազան համակցություններով:

ԿՈՒԲՈԿ [< ռուս. кубок], գ. (խսկց.): Գավաթ:

ԿՈՒԵՍՏՆԵՐ [< куесты < իսպ. cuesta թեքություն, սարալանջ], գ. (երկրբ.): Անհամաչափ լանջերով թմբաշարեր և սարավանդներ ռելիեֆում:

ԿՈՒԶՈՎ [< ռուս. кузов], գ. (խսկց.): Թափք:

ԿՈՒԼԱԿ [< ռուս. кулак.], գ. ած. (պատմ.): Չքավորներին շահագործող հարուստ սեփականատեր, ունևոր գյուղացի:

ԿՈՒԼԲԻՏ [< кульбит < ֆր. culbite գլուխկոնծի տալը], գ. (սպորտ.): Ակրոբատիկայում (սպորտային մարմնամարզության մեջ)՝ հնարքի տեսակ:

ԿՈՒԼԻՆԱՐ [< кулинар < լատ.], գ. ած. (խսկց.): Վարպետ խոհարար՝ ճաշեր և այլ ուտեստներ պատրաստող մասնագետ:

ԿՈՒԼԻՆԱՐԻԱ [< кулинария < լատ. culinarius խոհանոցային < culina խոհանոց] , գ. (խսկց.): 1. Խոհարարություն՝ խոհարարի մասնագիտությունը, խոհարարական արվեստը, խոհարարագիտություն: 2. (հվք.): Կերակուրներ, կերակրեղեն:

ԿՈՒԼԻՍ [< кулиса < ֆր. coulisse], գ. (գրք.): 1. Բեմի այն մասը, որ ծածկված է հանդիսատեսի տեսողությունից. անդրաբեմ, հետնաբեմ: 2. Առավելապես հոգնակի *փխբ.* Թատերական՝ դերասանական միջավայր: 3. *փխբ.* Գաղտնի, պաշտոնական հայտնի իրադրություններից՝ գործունեություններից՝ բանակցություններից դուրս:

ԿՈՒԼՄԻՆԱՑԻԱ [< кульминация < լատ. culmen (culminis) գագաթ], գ. 1. Որևէ բանի զարգացման՝ լարման գերագույն կետ՝ աստիճան, գագաթնակետ: 2. (աստղգ.): Լուսատուի անցումը երկնային միջօրեականով, այսինքն՝ լուսատուի ամենաբարձր կամ ամենացածր դիրքը երկնքում:

ԿՈՒԼՄԻՆԱՑԻՈՆ [< кульминационный < լատ.], ած. Բարձրագույն, գագաթնակետային:

ԿՈՒԼՈՆ I [< кулон < XVIII դարի ֆրանսիացի ֆիզիկոս Շ. Կուլոնի անունից], գ. (ֆիզ.): Էլեկտրահոսանքի չափի միավոր:

ԿՈՒԼՈՆ II [< кулон < ֆր. coulant], գ. (խսկց.): Շղթայիկով մանյակից կախված թանկագին քար:

ԿՈՒԼՏ [< культ < լատ. cultus հոգածություն, հարգում, պատվում], գ. Պաշտամունք՝ 1. Աստծուն պաշտելու կրոնական արարողությունների ամբողջությունը: 2. *փխբ.* Որևէ մեկի՝ մի բանի նկատմամբ ունեցած անսահման՝ անձնուրացության հասնող սեր:

ԿՈՒԼՏԻՎԱՏՈՐ [< культиватор < ֆր. cultivateur], գ. (գղտնտ.): Վարած հողը փխրեցնելու՝ միջշարային տարածությունները մշակելու՝ մոլախոտերը քաղհանելու ևն գյուղատնտեսական գործիք:

ԿՈՒԼՏԻՎԱՑԻԱ [< культивация < ֆր.], գ. (գղտնտ.): Կուլտիվատորով հողը մշակելը:

ԿՈՒԼՏԻՎԱՑՆԵԼ, նբ. (գղտնտ.): 1. Կուլտիվատորով հողը մշակել: 2. Աճեցնել (բույս, ծիլ ևն):

ԿՈՒԼՏՈՒՐԱ [< культура < լատ. cultura մշակում], գ. 1. Մշակույթ: 2. Կրթվածություն, դաստիարակություն, լուսավորվածություն, կարդացածություն: 3. Մշակվածություն, մշակվածության մակարդակ: 4. Զարգացման աստիճան, կատարելություն: 5. Աճեցում, բուծում, մշակում: 6. Մշակում (հողի): 7. Մշակվող բույս, մշակաբույս (հաճախ հոգն.):

ԿՈՒԼՏՈՒՐԻԶՄ [< культъуризм < ֆր. culturisme, անգլ. physical culture մարմնի կուլտուրա], գ. (սպորտ.): Տարբեր ծանրություններով ֆիզիկական վարժությունների համակարգ. նպատակը մարդու մկանների զարգացումն է:

ԿՈՒԼՈՒԱՐ [< кулуары < ֆր. couloirs], գ. 1. Կողասրահ: 2. *փխբ.* (առավելապես *հոգնակի*): Պառլամենտական միջավայր:

ԿՈՒԽՆՅԱ [< кухня < լեհ. kuchnia < չեխ. kuchynē < լատ. coquina խոհանոց], գ. (խսկց. հնց.): 1. Խոհանոց (սենյակ): 2. (խոհր.): Կերակուրներ, խոհանոց: 3. *փխբ.*

(արիմրհ.): Ինտրիգներ, մութ գործեր, ինտրիգների խոհանոց:

ԿՈՒ-ԿԼՈՒԿՍ-ԿԼԱՆ [< Ку-Клукс-Клан < անգլ. Ku-Klux-Klan], գ. (քղք.): Ռասիստական տեռորիստական գաղտնի կազմակերպություն ԱՄՆ-ում:

ԿՈՒԿՐԻՆԻԿՍՆԵՐ [< ռուս. Кукрыниксы < ազգանունների առաջին տառերից կազմված կեղծանուն], գ. (պատմ.): Ռուս սովետական նկարիչների ստեղծագործական խումբ՝ Կուպրինով Մ. Վ., Կռիլով Պ. Ն., Սոկոլով Ն. Ա.:

ԿՈՒԿԼԱ [< ռուս. кукла], գ. (խսկց.): 1. Տիկնիկ: 2. *փխբ.* Տիկնիկ (պճնված և անհոգի կնոջ մասին): 3. Խաղատիկնիկ, խամաճիկ:

ԿՈՒՄԱՐԻՆ [< кумарин < ֆր. coumarine], գ. (քիմ.): Նոր հնձած խոտի հոտով անգույն բյուրեղային նյութ, որը կիրառվում է որպես հոտավետ նյութ ծխախոտի և օծանելիքի արտադրության մեջ:

ԿՈՒՄԻՍ [< кумыс < թուրք. кымиз], գ. Ձիու (հազվադեպ՝ ուղտի) կաթից պատրաստված սննդարար ըմպելիք:

ԿՈՒՄՈՒԼՅԱՑՎԱԾ ԿԱՊԵՐ [< кумулятивные (< լատ. cumulatio հավաքել, կուտակել) связи] - (գիտ.): Կապերի համակարգ, որի առնվազն ատոմներից մեկը կրկնակի կապերով միացած է հարևան երկու ատոմներին:

ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ԷՖԵԿՏ - (ռազմ.): Պայթյունի ազդեցության կենտրոնացում՝ որոշակի ուղղությամբ:

ԿՈՒՆԱԿ [< кунак < թուրք. konak, kunak հյուր], գ.(հզվդ.):Կովկասի լեռնաբնակների մոտ՝ ընկեր, բարեկամ, մտերիմ:

ԿՈՒԾ [< куш < ֆր. couche < coucher դնել, պառկել], գ. (խսկց.): Մեծ խաղագումար (սկզբում՝ թղթախաղում), մեծ գումար:

ԿՈՒԾԱԿ [< кушак < թուրք., թաթարերեն kuŠak], գ. (պատմ.): Լայն գոտի, լայնագոտի, լաթագոտի:

ԿՈՒԾԵՏԿԱ [< кушетка < ֆր. couchette], գ. (խսկց.): Օթոց, թախտ, առանց թիկնակի թախտի տեսակ:

ԿՈՒՊԱԺ [< купаж < ֆր. coupage < couper ջրիկացնել, խտությունը թուլացնել, անոսրացնել], գ. (մսնգ.): Տարբեր գինիների խառնումը (համապատասխան չափով) դրանց որակի բարձրացման, նոր տեսակի գինիներ ստանալու նպատակով:

ԿՈՒՊԱՏԻ [< купаты < վրաց. kupati], գ. (խոհր.): Վրացական խոհանոցի կերակրատեսակ՝ աղիքի մեջ լցոնած աղացած միս (տավարի, խոզի) զանազան համեմունքներով եփած:

ԿՈՒՊԵ [< купе < ֆր. coupé], գ. (երկթղ.): Վագոնի առանձին բաժանմունք՝ մի քանի ուղևորների համար, վագոնի խցիկ:

ԿՈՒՊԼԵՏ [< куплет < ֆր. couplet], գ. (հնց.): 1. Բանաստեղծական տուն: 2. Սովորաբար կրկնվող հանգերգով կենցաղային կամ քաղաքական բովանդակությամբ զավեշտական երգ:

ԿՈՒՊԼԵՏԻՍՏ [< ռուս. куплетист < ֆր.], գ. Քառյակասաց երգիչ:

ԿՈՒՊՅՈՒՐ(Ա) [< купюра < ֆր. coupure < couper կտրել], գ. (խսկց.): 1. Կրճատում՝ գրական կամ երաժշտական տեքստից: 2. (ֆին.): Պարտատոմսի կամ թղթադրամի անվանական արժեքը, արժեթուղթ:

ԿՈՒՊՈԼ [< купол < գերմ. Kuppel, ֆր. coupole < իտալ. Cupola < լատ. cup(p)ula ոչ մեծ տակառ], գ. (խսկց. հնց.): Գմբեթ:

ԿՈՒՊՈՆ [< купон < ֆր. coupon], գ. 1. (տնտսգ.): Կտրոն: 2. (հնց.): Օթյակի տեղատոմս: 3. Հատոն՝ զգեստի ձևած կտոր:

ԿՈՒՊՐԻՏ [< куприт < լատ. cuprum պղինձ], գ. (երկրբ.): Կարմիր պղնձահանք:

ԿՈՒՏԻԿՈՒԼԱ [< кутикула < լատ. cuticula նրբամաշկ], գ. 1. (կենդբ.): Հաստ պաշտպանական գոյակցություն՝ հյուսվածքի բջիջների մակերևույթին:

ԿՈՒՏՅՈՒՄՆԵՐ [< кутюмы < ֆր. coutume սովորույթ], գ. (պատմ.): Ֆեոդալական Ֆրանսիայի առանձին գավառների, շրջանների ու քաղաքների իրավական սովորույթներ:

ԿՈՒՐԱԺ [< кураж < ֆր. courage համարձակություն], գ. (խսկց.): 1. Համարձակություն, սրտապնդություն: 2. Անպարկեշտություն, անկաշկանդություն:

ԿՈՒՐԱՆՏ(ՆԵՐ) [< куранты < ֆր. courant], գ. 1. Աշտարակային կամ սենյակային մեծ ժամացույցներ, որոնք որոշակի ժամերը ազդարարում են երաժշտությամբ:2. Կրեմլի աշտարակի ժամացույցը:

ԿՈՒՐԱՏՈՐ [< куратор < լատ. curator խնամակալ], գ. Խնամարկու՝ 1. Խնամակալ, հոգաբարձու (ուսումնական հաստատություններում): 2. (բժշկ.): Հիվանդին կցված՝ հիվանդության ընթացքին հետևող խնամարկու ուսանող կլինիկայում: 3. (տնտսգ.): Սնանկացած պարտապանի վրա նշանակված հատուկ հանձնաժողովի անդամ:

ԿՈՒՐԱՐԵ [< курарe < իսպ. curare < ամերիկյան հնդկացիների լեզվից], գ. (հզվդ.): Հարավային Ամերիկայում աճող որոշ բույսերից ստացվող թույն (նետերի ծայրերին քսելու համար):

ԿՈՒՐԲԵՏ [< курбет < ֆր. courbette], գ. (սպորտ.): 1. Ձիացատկի տեսակ: 2. Ակրոբատիկայում (սպորտային մարմնամարզության մեջ)՝ ցատկի տեսակ: 3. *փխբ.* Տարօրինակություն, անսպասելի արարք: 4. (խսկց.): Պարացատկ:

ԿՈՒՐԳԱՆ [< курган < թուրք.], գ. 1. Գերեզմանաբլուր, դամբանաթումբ: 2. Բլուր, լեռնիկ: 3. (պատմ.): Պահակային հողաթումբ, սահմանաթումբ:

ԿՈՒՐԻԱ [< курия < լատ. curia], գ. (պատմ.): 1. Մի քանի պատրիկ տոհմերի միավորում (Հին Հռոմում): 2. Վասալներից բաղկացած խորհուրդ և դատարան՝ ֆեոդալական սինյորին առընթեր:

ԿՈՒՐՅԵՐ [< курьер < ֆր. courier < courir վազել < լատ. currare վազել, արագ տեղափոխվել], գ. (մանգ. խսկց.): Ցրիչ, թղթատար, սուրհանդակ:

ԿՈՒՐՅՈԶ [< курьез < ֆր. curieux, curieuse զվարճալի, ծիծաղելի, հետաքրքիր], գ. (խսկց.): 1. Տարօրինակ՝ ծիծաղաշարժ՝ անհեթեթ՝ զվարճալի բան, անհեթեթ՝ զվարճալի անցք, դեպք: 2. Հազվագյուտ, տարօրինակ առարկա՝ իր:

ԿՈՒՐՈՐՏ [< курорт < գերմ. Kurort < Kur բուժում + Ort վայրատեղ, բուժավայր, բուժվելու տեղ], գ. Բուժավայր, բնակլիմայական պայմաններով որոշ հիվանդությունների համար բուժիչ հատկություններ ու միջոցներ ունեցող վայր:

ԿՈՒՐՈՐՏՈԼՈԳԻԱ [< курортология < գերմ. Kurort < հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Կուրորտաբանության՝ բժշկագիտության մասնաճյուղ. ուսումնասիրում է բնական գործոնների բուժիչ հատկությունները, մարդու օրգանիզմի վրա դրանց ազդեցությունը, օգտագործումը բուժկանխարգելիչ նպատակով և մշակում առողջարանաբուժավայրային հիմնարկների սոցիալ-հիգիենային պայմանները:

ԿՈՒՐՍ [< курс < լատ. cursus վազք, ընթացք], գ. 1. Ընդհանրապես՝ ընթացք, ուղղություն: 2. Ընթացքի՝ շարժման ուղղություն (նավի, սավառնակի ևն): 3. *փխբ.* Քաղաքականության, քաղաքական՝ տնտեսական գործունեության ուղղություն: 4. Դասընթաց: 5. Ուսուցման ամբողջական լրիվ ընթացք, դասընթացք: 6. Բարձրագույն ուսումնական հաստատության հաջորդական դասարաններից ու տարիներից յուրաքանչյուրը, ինչպես և դրանց ուսանողները: 7. (բժշկ.): Հիվանդին բուժելու մեկ շրջանում՝ ժամկետում իրագործվող բուժական միջոցառումների ամ-

բողջությունը: 8. (ֆին.): Դրամի՝ ապրանքի արժեքին:
ԿՈՒՐՍԱԿԻՑ, գ. Միևնույն կուրսի ուսանող:
ԿՈՒՐՍԱՆՏ [< курсант < լատ. cursus], գ. 1. Դասընթացի ուսանող, դասընթացներում սովորող: 2. Զինվորական դպրոցի սան:
ԿՈՒՐՍՈՎԿԱ [< ռուս. курсовка < հմմտ. լատ. cursus], գ. (խսկց.): Փաստաթուղթ, որով իրավունք է տրվում առողջարանից (հանգստյան տնից) դուրս բուժավայրում բուժվելու և սնվելու համար:
ԿՈՒՐՍՈՐ [< курсор < անգլ. cursor < լատ. corsorîus արագավազ], գ. (հմկրգչ.): Համակարգչի էկրանի վրա շարժվող նշան, որը ցույց է տալիս էկրանի աշխատող մասը:
ԿՈՒՐՏԻԶԱՆՈՒՀԻ [< куртизанка < ֆր. courtisane], գ. (հնց.): Բարձր խավերի միջավայրում՝ թեթևաբարո կին:
ԿՈՒՐՏԿԱ [< куртка < լեհ. kurta, kurtka < լատ. curtus կարճեցված], գ. Տղամարդու կարճ վերնազգեստ:
ԿՈՒՐՈՒԼԹԱՅ [< курултай < թուրք.], գ. (քղք.): Ընդհանուր ժողով, համագումար, պառլամենտ (թուրք-մոնղոլական ժողովուրդների մոտ):
ԿՈՒՐՖՅՈՒՐՍՏ [< курфюрст < գերմ. Kurfürst], (պատմ.): Կայսր ընտրելու իրավունք ունեցող՝ կայսրընտիր իշխան Գերմանիայում (մինչև 1806 թ.):

Հ

ՀԱԲԱՆԵՐԱ [< хабанера < իսպ. habanera < Habana Հավանա], գ. (արվ.): Կուբայական պար և երգ. առավել հայտնի է «դանսա» անվանումով:
ՀԱԲԻՏՈՒՍ [< габитус < լատ. habitus տեսք, կերպ], գ. (կենսբ. բժշկ.): Արտաքին տեսք (կենդանու, բույսի և անգամ մարդու):
ՀԱԴԵՍ [< Гадес < հուն. Haidēs], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ ստորգետնյա աշխարհի և ննջեցյալների թագավորության տիրակալը՝ Քրոնոսի և Հռեայի որդին, Զևսի, Պոսեյդոնի և Դեմետրայի եղբայրը:
ՀԱԴՐՈԶԱՎՐ [< гадрозавр < հուն. hadros հսկա + ... զավր], գ. (հնէաբ.): Երկոտանի բուսակեր հսկա դինոզավր՝ 12 մ հասակով:
ՀԱԴՐՈՆՆԵՐ [< гадроны < հուն. hadros ուժեղ, հզոր], գ. (գիտ.): Ուժեղ փոխազդեցությունների մասնակցող տարրական մասնիկների ընդհանուր անվանումը: Հադրոնների դասին են պատկանում պրոտոնը, նեյտրոնը, հիպերոնները, մեզոնները, ինչպես նաև բոլոր ռեզոնանսային մասնիկները:
ՀԱԼԻՆԳ [< галлинг < նորվեգ. halling < Halling dal հովտի անվանում Նորվեգիայի հարավ-արևմուտքում], գ. (արվ.): Նորվեգացի տղամարդկանց պար (հիմնականում մենապար): Հալինգը մշակել է Է. Գրիգը:
ՀԱԼԻՏ [< галит < հուն. hals աղ], գ. (հնք.): Քարաղ, միներալ: Քիմիական կազմը՝ NaCl: ՀՀ-ում տարածված է Ավանի աղի հանքում:
ՀԱԼՅՈՒՑԻՆԱՑԻԱ [< галлюцинация < լատ. hallucinatio զառանցանք], գ. (ախտ.): Զգայապատրանք, զգայախաբություն:
ՀԱԼՈ... [< гало... < հուն. hals (halos) աղ] Բաղադրյալ բառերում գործածվելիս ցույց է տալիս այդ բառերի կապը աղին:
ՀԱԼՈԳԵՆՆԵՐ [< галогены < հալո... + հուն. genos ծին], գ. (քիմ.): Աղածիններ, պարբերական համակարգի VII խմբի գլխավոր ենթախմբի քիմիական տարրեր՝

ֆտոր, քլոր, բրոմ, յոդ և աստատին:

ՀԱԼՈԻԴ(ՆԵՐ) [< галоиды < հալո... + հուն. eidos կերպ], գ. (քիմ.): Աղակերպ(ներ):

ՀԱԼՈՖԻՏՆԵՐ [< галофиты < հալո... + հուն. phytos բույս], գ. (բսբ.): Աղաբույսեր՝ խիստ աղակալած հողերում և ծովափերում աճող բույսեր, որոնք օժտված են մեծ քանակությամբ աղեր կլանելու (մի մասը նաև կուտակելու) ունակությամբ:

ՀԱԼՎԱ [< халва < արաբ. halva քաղցրավենիք], գ. (խոհր.): Ճզմած ընկույզով, արևածաղկով և կարամելի խառնուրդով հրուշակեղեն:

ՀԱԼՈՒՐԳԻԱ [< галургия < հալո... + հուն. ergon աշխատանք], գ. (քիմ. գիտ.): Աղագործություն՝ քիմիական տեխնոլոգիայի բաժին, որը զբաղվում է հանքային աղերի արտադրությամբ: Նեղ իմաստով այն բնական աղերի վերամշակումն է:

ՀԱՄԱԿ [< гамак < ֆր. hamac], գ. (հնց.): Ցանցաճոճ, լանտիկ:

ՀԱՄԲԱԼ [< амбал < արաբ. hammal բեռնակիր], գ. (խսկց.): 1. Տարատեսակ (ծանր ու ոչ պատվաբեր) աշխատանքներ կատարող բանվոր: 2. *փխբ.* Հիմար, տգետ:

ՀԱՄԲՈՒՐԳԵՐ [< гамбургер < գերմանական Համբուրգ քաղաքի անունից], գ. (խոհր.): Բրդուճ՝ հացի մեջ դրված մսամթերք և զանազան բանջարեղեններ, նաև պանիր:

ՀԱՅԴՈՒԿ [< гайдук < հունգ. hajdúk հետևակ < բուլղ. hayduk ավազակ], գ. (պատմ.): 1. Ապստամբ պարտիզան Բալկաններում և Հունգարիայում՝ թուրքական բռնապետության ժամանակ: 2. Թուրքական բարբարոսների դեմ կռվող հայ պարտիզան՝ հայկական ջարդերի ժամանակ:

ՀԱՅՄՈՐԻՏ [< гайморит < կենսաբան Հայմորի (Highmore) անունից], գ. (բժշկ.): Քթի խոռոչին և վերին քիմքին հարակից լորձաթաղանթի բորբոքում:

ՀԱՅՋԵՔԵՐ [< хайджекер < անգլ. hijacker], գ. (խսկց.): Օդահեն՝ ինքնաթիռներ առևանգող և դրանց ուղևորներին պատանդ պահող տեռորիստ:

ՀԱՅՎԵՅ [< хайвей < անգլ. highway հիմնական ճանապարհ], գ. (խսկց.): Արագընթաց միակողմանի մայրուղի (հիմնականում արտերկրում):

ՀԱՆԴԲՈԼ [< гандбол < անգլ. hand ձեռք + ball գնդակ], գ. (սպորտ.): Ձեռքի գնդակ՝ թիմային սպորտային խաղ՝ գնդակով: Հայրենիքը Դանիան է, խաղը ստեղծել է Խ. Նելսենը 1898 թ.: Թիմերը ձգտում են ձեռքով գնդակը նետել դարպասի մեջ, որը պաշտպանում է դարպասապահը:

ՀԱՆԴԻԿԱՊ [< гандикап < անգլ. handicap], գ. (սպորտ.): 1. Մրցության ձև (վազքի ևն), երբ թույլ մրցակցին սկզբից խաղամիավորներ (որոշակի տարածություն) է զիջվում: 2. Ձիասպորտում՝ մրցություն, որին մասնակցում են տարբեր տարիքի և արժանավորության՝հարգի ձիեր:

ՀԱՆՇԻՆ [< ханшин < չին.], գ. Չինական հացողի:

ՀԱՆՍՎՈՒՐՍՏ [< гансвурст < գերմ. Hanswurst, բառացի՝ Հանսերշիկ], գ. (թատր.): Գերմանական ժողովրդական թատրոնի կատակերգական գործող անձ:

ՀԱՆՏԵԼ [< гантель < գերմ. Hantel], գ. (սպորտ.): Մարզագունդ:

ՀԱԿԵՐ [< хакер < անգլ. hacker], գ. Համակարգչի և համակարգչային ցանցի միջոցով (կոդերը ջարդելով) հանցագործություն կատարող անձ:

ՀԱՇԻՇ [< гашиш < արաբ.], գ. Հնդկական կանեփից ստացվող թմրեցնող ու հարբեցնող նյութ, թմրադեղ:

ՀԱՇԻՇԱՄՈԼ, ած. գ. Հաշիշամոլությամբ տառապող (մարդ):

ՀԱՊԼՈԻԴ [< гаплоид < հուն. haploos պարզ + eidos տեսակ], գ. (կենսբ.): Օրգանիզմ, որը մարմնական (սոմատիկ) բջիջներում ունի քրոմոսոմների ոչ կրկնակի հավաք:

ՀԱՋԻ [< хаджи < արաբ. hağği], գ. (կրոն.): 1. Մահմեդականի պատվավոր տիտղոս, որը տրվում է Մեքքա ուխտագնացություն կատարողին: 2. Ուխտագնացություն կատարած անձ:

ՀԱՐԱԿԻՐԻ, Տե՛ս Խառակիրի:

ՀԱՐԵՄ [< гарем < արաբ. haram արգելված], գ. 1. Կանանոց (կանանց բնակվելու տեղը մահմեդականների տներում): 2. Հարեմում ապրող կանայք:

ՀԱՐՄԱՏԱՆ [< гарматан < իսպ. harmatan < արաբ.], գ. (երկրբ.): Աֆրիկայից (Գվինեյան ափից) փչող չոր և սաստիկ տաք քամի, որը Սահարայի անապատից բերում է կարմիր փոշի:

ՀԱՐՄՈՆ [гармоника < հուն., հմմտ. հարմոնիա], գ. (երժշտ.): Ստեղնավոր գործիքների տիպի օդահունչ երաժշտական գործիք:

ՀԱՐՄՈՆԱՀԱՐ, գ. ած. (երժշտ.): Հարմոն նվագող:

ՀԱՐՄՈՆԻԱ [< гармония < հուն. harmonia կապ, համաչափություն, ներդաշնակություն], գ. 1. Ներդաշնակություն, ներդաշնակ լինելը: 2. (երժշտ.): Ուսմունք երաժշտական ստեղծագործության մեջ ներդաշնակության ճիշտ կատարման մասին:

ՀԱՐՄՈՆԻԶԱՑԻԱ [< гармонизация < հուն.], գ. (երժշտ.): Մեղեդու ակորդային (կամ բազմաձայն) նվագակցության կամ ձայնակցության կառուցումը հարմոնիայի կանոններով, ներդաշնակում:

ՀԱՐՊԻԱ [< гарпия < հուն. Harpyia, բառացի՝ առևանգող կին], գ. (կենդբ.): 1. Հարավամերիկյան արծիվ: 2. Հարավասիական մեծ չղջիկ: 3. (դից.): Գիշատիչ թռչուն՝ կնոջ գլխով (հին հունական առասպելաբանության մեջ):

ՀԱՐՊԻՈՒՍ [< гарпиус < հոլանդ. harpius], գ. (տեխ.): Բևեկնախեժ (մուգ տեսակի):

ՀԱՐՊՈՒՆ [< гарпун < հոլանդ. harpoen], գ. Սուր ծայրով մետաղյա տեգ՝ նիզակ, որը հետևից ամրացված է երկար պարանով.օգտագործվում է հատկապես ծովային կենդանիներ, մեծ ձկներ որսալու համար:

ՀԱՐՈՒՍ [< гарус < լեհ. Harus < գերմ. Harras < ֆրանսիայի Արրաս (Arras) քաղաքի անունից], գ. (խսկց.): Բրդե փափուկ ոլորաթելի տեսակ:

ՀԱՐՈՒՍՊԻԿՆԵՐ [< гаруспики < լատ. haruspex < hirae փորոտիք + specere դիտել, դիտարկել], գ. (պատմ.): Քուրմեր Հին Հռոմում, ովքեր գուշակություններ էին անում զոհաբերված կենդանիների փորոտիքով և մեկնաբանում բնության երևույթները:

ՀԱՈՒԲԻՑ [< гаубица < գերմ. Haubitze < չեխ. houfnice, նախապես՝ քար նետելու գործիք], գ. (ռազմ.): Հրետանային հրազեն՝ նախատեսված թաքնված օբյեկտները կախովի հրաձգությամբ խոցելու համար:

ՀԱՈՒԼԵՅՏԵՐ [< гаулейтер < գերմ. Gauleiter շրջանի ղեկավար], գ. (պատմ.): Հիտլերյան Գերմանիայում՝ շրջանի և շրջանի ֆաշիստական կազմակերպության ղեկավար:

ՀԱՈՒՊՏՎԱԽՏԱ [< гауптвахта < գերմ. Hauptwache գլխավոր պահակ, պահապան], գ. 1. (ռազմ.): Զինվորական կալանատուն: 2. (հնց.): Պահականոց (զինվորական):

ՀԵԲԵՖՐԵՆԻԱ [< гебефрения < հուն. hēbē պատանեկություն, սեռական հա-

սունություն + phrēn սիրտ, հոգի, խելք], գ. (բժշկ.): Շիզոֆրենիայի դրսևորումը երիտասարդ տարիքում, որը արտահայտվում է մանկամտությամբ, անիմաստ հումորով, անընդհատ ծիծաղելով են:

ՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< гегельянство < գերմ. փիլիսոփա Գ. Հեգելի անունից], գ. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայական այն հոսանքների անվանումը, որոնք ծագել են գերմանացի փիլիսոփա Գ. Հեգելի ուսմունքից և զարգացրել նրա գաղափարները:

ՀԵԳԵՄՈՆ [< гегемон < հուն.], գ. ած. 1. Առաջնորդ, ղեկավար: 2. Գլխավոր, գերիշխող, ղեկավարող:

ՀԵԳԵՄՈՆԻԱ [< гегемония < հուն. hēgemonia տիրապետություն], գ. (քղք.): Գերիշխանություն, ազդեցության ուժի գերակշռություն՝ տիրապետություն:

ՀԵԴԵՐ [< хедер < հին հրեերեն hedher, բառացի՝ սենյակ], գ. (հնց.): Հրեաների արական կրոնական դպրոց:

ՀԵԴՈՆԻԶՄ [< гедонизм < հուն. Hēdonē հաճույք], գ. (փիլ.): Իդեալիստական ուղղություն բարոյագիտության մեջ, որ դավանում է, թե հաճույքը կյանքի ամենամեծ բարիքն է, գերագույն նպատակը:

ՀԵԹ Տ(Թ)ՐԻԿ [< хет-трик < անգլ. hat trick < hat գլխարկ + trick ձեռնածություն], գ. (սպորտ.): Երեք գոլ, որ խփվում է մարզիկի կողմից մեկ խաղում՝ ֆուտբոլում, հոկեյում են:

ՀԵԼԻՈ... [< гелио... < հուն. Hēlios արև] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերի առնչությունը Արեգակի, արեգակնային էներգիայի հետ:

ՀԵԼԻՈԵՐԿՐԱՖԻԶԻԿԱ, գ. (գիտ.): Գիտության բնագավառ, որն ուսումնասիրում է Արեգակի վրա տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը երկրաֆիզիկական երևույթների վրա:

ՀԵԼԻՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Կենսաֆիզիկայի բաժին. ուսումնասիրում է Արեգակի ակտիվության փոփոխությունների ազդեցությունը երկրային օրգանիզմների վրա:

ՀԵԼԻՈՄԵՏՐ, գ. (գիտ.): Աստղերի անկյունային հեռավորությունները չափելու սարք:

ՀԵԼԻՈՍ [< гелио < հուն.], գ. (դից.): Արևի Աստվածը՝ հին հունական դիցաբանության մեջ:

ՀԵԼԻՈՏԵԽՆԻԿԱ [< гелиотехника < հելիո... + տեխնիկա], գ. (գիտ.): Տեխնիկայի ճյուղ, որն ուսումնասիրում է արեգակնային ռադիացիայի էներգիայի փոխակերպումը գործնական օգտագործման համար էներգիայի այլ տեսակների:

ՀԵԼԻՈՒՄ [< гелий < հուն. Hēlios], գ. (քիմ.): He, պարբերական համակարգի VIII խմբի քիմիական տարր, իներտ գազ է:

ՀԵԼԼԵՆԻԶՄ [< эллинизм < հուն. hellen], գ. 1. (պատմ.): Արևելյան միջերկրածովյան, Առաջավոր Ասիայի և Մերձծովյան երկրների պատմություն՝ Ալ. Մակեդոնացու (մ. թ. ա. 334-324 թթ.) ժամանակից մինչև մ. թ. 30 թ. ընկած շրջանի պայմանական անվանումը: 2. (լեզվբ.): Այդ դարաշրջանի հունարեն լեզվից փոխառված բառ կամ արտահայտություն:

ՀԵԼՄԻՆԹՈԶՆԵՐ [< гельминтозы < հուն. helmins (helminthos) ճիճու, որդ], գ. (բժշկ.): Ճիճվային հիվանդություններ՝ մարդկային օրգանիզմներ ճիճուների (որդերի) ներթափանցման պատճառով:

ՀԵԼՄԻՆԹՈԼՈԳԻԱ [< гельминтология < հուն. helmins + logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն մակաբույծ որդերի՝ մարդու, կենդանիների ու բույսերի օրգանիզմում դրանց առաջացրած ճիճվային հիվանդությունների մասին:

ՀԵԼՈՏՆԵՐ [< гелоты < հուն.], գ. (պատմ.): Հին Սպարտայում՝ դորիացիների նվաճած երկրագործ բնակչությունը:

ՀԵԿԱՏՈՄԲ [< гекатомба < հուն. hekatombē], գ. 1. (պատմ.): Հին հույների մոտ՝ նախապես հարյուր եզան կամ այլ կենդանիների զոհաբերություն, հետագայում՝ առհասարակ ամեն մի նշանակալից զոհաբերություն: 2. *փխբ.* Մարդկանց զանգվածային անողոք կոտորած՝ ոչնչացում:

ՀԵԿԶԱՄԵՏՐ, ՀԵՔԶԱՄԵՏՐ [< гекзаметр < հուն. hex վեց + metron չափ, չափամետր], գ. (տոչփ.): Վեցաչափ՝ հին հունական և լատինական վեցոտնյա տաղաչափական ձև:

ՀԵԿՍՈԴ, ՀԵՔՍՈԴ [< гексод < հուն. hex վեց + էլեկտրոդ], գ. (էլեկտր.): Էլեկտրոնային լամպ 6 էլեկտրոդով՝ կատոդ, անոդ և 4 ցանց (2 կառավարող և 2 էկրանող):

ՀԵԿՏԱՐ [< гектар < հուն.], գ. ած. Մետրական սիստեմով՝ գետնի մակերեսի չափ = 100 արի, այսինքն՝ 10 000 քառ. մետրի:

ՀԵԿՏԱՐԱՉԱՓ, ած. Մեկ հեկտարի չափ մակերես ունեցող:

ՀԵԿՏՈ... [< гекто... < հուն. hekaton հարյուր] Չափման միավորների հարյուրապատկումը ցույց տվող նախածանց, կրճատ նշանակվում է **h**, գրվում է սկզբնական միավորի հետ միասին:

ՀԵԿՏՈԳՐԱՄ [< гектограмм < հեկտո... + ֆր. gramme < հուն. gramma], գ. Հարյուր գրամ:

ՀԵԿՏՈԳՐԱՖ [< гектограф < հեկտո... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Պարզ տպագրական սարած՝ մեքենագիր կամ ձեռագիր տեքստի բազմացման համար:

ՀԵԿՏՈԳՐԱՖԻԱ [< гектография < հուն.], գ. Հեկտոգրաֆով տեքստերի բազմացում:

ՀԵԿՏՈԼԻՏՐ [< гектолитр < ֆր. hectolitre < հուն.], գ. Հարյուր լիտր:

ՀԵԿՏՈՄԵՏՐ [< гектометр < ֆր. hectometre < հուն.], գ. Մետրական համակարգի մեջ՝ երկարության չափ, հավասար՝ հարյուր մետրի, հարյուր մետր:

ՀԵԿՏՈՎԱՏՏ [< гектоватт < հեկտո... + անգլ. watt], գ. Հզորության չափ, որ հավասար է 100 վատտի, հարյուր վատտ:

ՀԵՄ [< гем < հուն. haima (haimatos) արյուն], գ. (գիտ.): Հեմոգլոբինի ոչ սպիտակուցային, գունավորող մասը:

ՀԵՄԱԳԼՈՒՏԻՆԱՑԻԱ [< гемаглютинация < հուն. haima + լատ. agglutinatio սոսնձում], գ. (կզմխս.): Արյունազանգվածում՝ արյան էրիթրոցիտների սոսնձման և նստման գործընթաց. առաջանում է էրիթրոցիտների մակերեսին ադսորբվելու հատկությամբ օժտված ագենտներով՝ հեմագլուտինիններով, բակտերիաներով և վիրուսներով:

ՀԵՄԱՏԻՏ [< гематит < հուն. haima], գ. (հնք.): Երկաթի փայլ, կարմիր երկաթաքար, երկաթի լայնորեն տարածված միներալ՝ Fe_2O_3, որը պարունակում է մինչև 70% երկաթ:

ՀԵՄԱՏՈԼՈԳԻԱ [< гематология < հուն. haima + logos գիտություն], գ. (բժշկ.): Արյան բաղադրությունը, կազմությունը, հիվանդությունները ուսումնասիրող գիտություն:

ՀԵՄԱՏՈՄԱ [< гематома < հուն. haima + ōma վերջածանց ուռուցք իմաստով], գ. (բժշկ.): Արյունից կազմված ուռուցք, որն առաջանում է արյան անոթների վնասման պատճառով:

ՀԵՄԱՏՈՄԻԵԼԻԱ [< гематомиелия < հուն. haima + myelos ողնուղեղ], գ. (բժշկ.): Արյունազեղում ողնուղեղի հյուսվածքներով:

ՀԵՄԱՏՈՒՐԻԱ [< гематурия < հուն. haima + uron մեզ], գ. (բժշկ.): Մեզի հետ արյան խառնվելը և դուրս գալը, արյունով խառնված մեզ:

ՀԵՄԵՐԱԼՈՊԻԱ [< гемералопиа < հուն. hēmera օր + alaos կույր + ōpsis տեսողություն], գ. (բժշկ.): Տեսողության վնասվում, հավկուրություն, որն արտահայտվում է թույլ լուսավորության պայմաններում (մթնշաղ, գիշեր)՝ առարկաները տեսնելու ընդունակության թուլացմամբ կամ կորստով:

ՀԵՄՈ..., ՀԵՄԱՏՈ... [< гемо..., гемато... < հուն. haima (haimatos) արյուն] Բարդ բառերի սկզբնամաս, օգտագործվում է արյանը առնչվող տերմիններում:

ՀԵՄՈԳԼՈԲԻՆ [< гемоглобин < հեմո... + լատ. globus գունդ], գ. (կզմխս.): Արյան կարմիր գնդիկների բաղադրության մեջ մտնող գունանյութ, որի դերն է թթվածնի և ածխաթթվի փոխանակությունը մարմնի մեջ:

ՀԵՄՈԳԼՈԲԻՆԵՄԻԱ [< гемоглобинемия < հուն., լատ.], գ. (կզմխս.): Հեմոգլոբինի առկայությունը արյան պլազմայում.առաջանում է էրիթրոցիտների ներանոթային զանգվածային քայքայման դեպքում:

ՀԵՄՈԳԼՈԲԻՆՈՒՐԻԱ [< гемоглобинурия < հեմոգլոբին + uron մեզ], գ. (կզմխս.): Հեմոգլոբինի առկայությունը մեզում: Առաջանում է անհամատեղելի արյան փոխներարկման, քիմիական և կենսաբանական որոշ թույների, դեղորայքների ազդեցության, վարակիչ հիվանդությունների ենի դեպքում:

ՀԵՄՈԼԻԶ [< гемолиз < հեմո... + հուն. lysis քայքայում, լուծում], գ. (կզմխս.): Արյունալուծում, էրիթրոցիտոլիզ՝ էրիթրոցիտների քայքայման և դրանցից հեմոգլոբինի անջատման գործընթաց:

ՀԵՄՈՐՈՅ [< геморрой < գերմ. Hämorrhöe < լատ. haemorrhois < հուն. haimorrois արյունահոսություն], գ. (բժշկ.): Թութք:

ՀԵՄՈՖԻԼԻԱ [< гемофилия < հեմո... + հուն. phileō սիրում եմ], գ. (բժշկ.): Ժառանգական հիվանդություն, որն արտահայտվում է հյուսվածքների բարձր արյունահոսելիությամբ:

ՀԵՊԱՏԻՏ [< гепатит < հուն. hepar (hepatos) լյարդ], գ. (բժշկ.): Լյարդի բորբոքում:

ՀԵՊԱՐԴ [< гепард < ֆր. guépard < իտլ. gatto-pardo, բառացի՝ կատու-ընձառյուծ], գ. (կենդբ.): Վագրակատու:

ՀԵՊԱՐԻՆ [< гепарин < հուն. hepar լյարդ], գ. (բժշկ.): Արյան մակարդումը ուղղակի ազդեցությամբ կանխող նյութ: Սինթեզվում է լյարդի, թոքերի, մկանների պարարտ բջիջներում:

ՀԵՊՏ..., ՀԵՊՏԱ... [< гепта... < հուն. hepta յոթ] Բարդ բառերում նշանակում է յոթ:

ՀԵՊՏՈԴ [< гептод < հեպտ... + էլեկտրոդ], գ. (էլեկտր.): Էլեկտրոնային լամպ. բաղկացած է 7 էլեկտրոդից՝ կատոդ, անոդ և 5 ցանց՝ 2 կառավարող, 2 էկրանող, 1 պաշտպանական:

ՀԵՋԻՆԳ [< хеджирование < անգլ. hedging], գ. (տնտսգ.): Կրկնագործարք, պատնեշում:

ՀԵՏԵՐԱ [< гетера < հուն. hetaria, բառացի՝ ընկերուհի, սիրուհի], գ. 1. (պատմ.): Հին Հունաստանում՝ ազատ կյանք վարող չամուսնացած կին: 2. Թեթևաբարո կին, տարփուհի:

ՀԵՏԵՐԻԶՄ [< гетеризм < հուն.], գ. (գիտ.): Հասկացություն, որ գիտության մեջ է մտցրել Ի. Յա. Բախոֆենը՝ սեռերի միջև նախնական համակեցության ձևը, չկարգավորված սեռական հարաբերություններն ու դրանց փոխարինող խմբամուսնությունը բնորոշելու համար (ժամանակակից գիտության մեջ՝ խառնամուսնություն):

ՀԵՏԵՐՈԳԱՄԻԱ [< гетерогамия < հուն. heteros այլ + gamos ամուսնություն], գ. (բսբ.): 1. Սեռական գործընթացի ձև, երբ բեղմնավորման ժամանակ միաձուլվող երկու գամետները միմյանցից տարբերվում են արտաքին տեսքով: 2. Արական և իգական ծաղիկների ֆունկցիայի կամ բույսի վրա նրանց տեղադրության փոփո-

խություն (որպես անոմալիա):

ՀԵՏԵՐՈԳԵՆ [< гетерогенный < հուն. heteros այլ + genes այլածին], ած. Տարասեռ, տարակազմ, այլատարր:

ՀԵՏԵՐՈԴԻՆ [< гетеродин < հուն. heteros այլ + dynamis ուժ], գ. (տեխ.): Օժանդակ ռադիոտեխնիկական սարած, որ ստեղծում է տարբեր հաճախականությամբ էլեկտրական տատանումներ:

ՀԵՏԵՐՈԶԻԳՈՏՈՒԹՅՈՒՆ [< гетерозиготность < հուն. heterozygōtos], գ. (գիտ.): Հիբրիդային օրգանիզմին բնորոշ վիճակ, երբ հոմոլոգ քրոմոսոմները կրում են այս կամ այն գենի տարբեր ալելներ: Տերմինն առաջարկել է անգլիացի գենետիկ Ու. Բեյթսոնը 1902 թ.:

ՀԵՏԵՐՈԶԻՍ [< гетерозис < հուն. heteroiōsis փոփոխություն, փոխակերպում], գ. (կենսբ.): Կենսաբանական երևույթ, որի դեպքում առաջին սերունդը կամ հիբրիդը կենսաբանական մեկ կամ մի շարք հատկանիշներով գերազանցում է ծնողական ձևերին:

ՀԵՏԵՐՈՆՈՄ [< гетерономный < հուն. heteros այլ + nomos օրենք], գ. (գիտ.): Բարոյագիտական տեսություն. ի տարբերություն ավտոնոմ բարոյագիտության, որը ժխտում է բարոյականության արտաքին դետերմինացիան և այն անմիջականորեն բխեցնում սուբյեկտի անհատական որակներից:

ՀԵՏԵՐՈՍՏԻԼԻԱ [< гетеростилия < հուն. heteros այլ + stylos սյուն], գ. (բսբ.): Տարասռնակություն՝ տարբեր երկարության սռնակների առկայությունը միևնույն տեսակի առանձին բույսերում:

ՀԵՏԵՐՈՏՐՈՖ [< гетеротрофный < հուն. heteros այլ + trophē սնունդ], գ. (կենսբ.) Տարասուն օրգանիզմներ, որոնք սնվում են պատրաստի օրգանական նյութերով:

ՀԵՏԵՐՈՑԻԿԼԱՅԻՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ [< гетероциклические (< հուն. heteros այլ + kyklos շրջան) соединения] – (կենսբ.): Ցիկլիկ կառուցվածքով օրգանական նյութեր, որոնց օղակների կմախքը կազմված է ածխածնի և այլ տարրերի ատոմներից:

ՀԵՏՄԱՆ [< гетман < լեհ. hetman < գերմ. Hauptmann պետ], գ. (պատմ.): Կազակական զորքերի ընդհանուր հրամանատար:

ՀԵՐԱ [< Гера < հուն. Hēra], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ աստվածների թագուհին՝ Զևսի կինը (ամուսնությունների և ծնունդների հովանավորը):

ՀԵՐԱԼԴԻԿԱ [< геральдика < լատ. heraldus], գ. (գիտ.): Գերբագիտություն՝ զինանշանների կազմություն, քննություն և մեկնություն:

ՀԵՐԱԿԼ(ԵՍ) [< Геракл < հուն. Hēraklēs, լատ. Hercules], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանական հերոս: Զևսի և մահկանացու կին Ալկմենեի որդին, մեծ ուժի տեր և սխրագործություններ գործած հերոս: 2. *փխբ.* Ուժեղ, հզոր մարդ: 3. (աստղգ.): Համաստեղություն երկնքի հյուսիսային կիսագնդում:

ՀԵՐԲԱՐԻԶԱՑԻԱ [< гербаризация < լատ.], գ. (բսբ.): Բույսերի նախապատրաստումը հերբարիումի համար:

ՀԵՐԲԱՐԻՈՒՄ [< гербарии < լատ. herbarius խոտային], գ. (բսբ.): Բուսարան, չորացած բույսերի հավաքածու:

ՀԵՐԲԻՑԻԴՆԵՐ[< гербисиды, гербициды < լատ. herba խոտ + caedere սպանել], գ. (քիմ.): Քիմիական նյութեր՝ անհրաժեշտության դեպքում բուսականությունը ոչնչացնելու համար:

ՀԵՐԵՏԻԿՈՍ [< еретик < հուն. hairetikós հերձվածող], գ. (եկեղ.): Եկեղեցու ընդունած դավանության հակառակ դավանություն ունեցող մարդ, հերձվածող, աղանդավոր:

ՀԵՐՄԱ [< Герма < հուն. Hermēs], գ. (պատմ.): Դիմաքանդակով ավարտվող քառանիստ սյուն՝ սկզբում Հերմես աստծու, հետագայում՝ այլ աստվածների, իսկ մ.թ.ա. V դարից՝ նաև պետական գործիչների, փիլիսոփաների ևն պատկերներով: Ծառայել է որպես սահմանանիշ, ճանապարհների նշաձող ևն:

ՀԵՐՄԱՖՐՈԴԻՏ [< гермафродит < հուն. Hermophroditos], ած. գ. 1. (գիտ.): Արուէգ, որձէգ: 2. (բսբ.): Երկսեռ (Հունական դիցաբանության մեջ այդպիսին է կոչվել Հերմեսի և Աֆրոդիտեի որդին՝ նրանց իսկ անուններով):

ՀԵՐՄԱՖՐՈԴԻՏԻԶՄ [< гермафродитизм < հուն.], գ. 1. Արուէգություն, որձէգություն: 2. Երկսեռություն:

ՀԵՐՄԵՍ [< Гермес < հուն. Hermēs], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ նախապես խաշնարածների ու անասնապահների աստված: Ավելի ուշ պաշտվել է՝ իբրև Օլիմպոսի աստվածների սուրհանդակ, որը հոր՝ Զևսի նվիրած թռչող սանդալներով մտքի արագությամբ սուրում էր տիեզերքի զանազան կողմերը:

ՀԵՐՄԵՏԻԿԱԿԱՆ, ՀԵՐՄԵՏԻԿ [< герметический < եգիպտական լիգոդատ իմաստունի՝ Հերմես Տրիսմեգիստի անունով], ած. Այնպիսին, որի մեջ օդ չի թափանցում, անթափանցելիորեն փակվող, փակված:

ՀԵՐՄԵՏԻԿԱՑՈՒՄ, գ. 1. Արտադրական շենքերի և սարքավորման հերմետիկ դարձնելը՝ վնասակար կամ պայթուցիկ նյութերի տարածումն արգելելու նպատակով: 2. Հերմետիկանալը, հերմետիկացնելը, հերմետիկացվելը:

ՀԵՐՈԼԴ [< герольд < գերմ. Herold < միջին լատ. heraldus], գ. (պատմ.): 1. Մունետիկ: 2. Ասպետական զինախաղերի կամ տոնակատարությունների կարգադրիչ:

ՀԵՐՈՍ [< герой < հուն. heros], գ. ած. 1. Սխրանքներ՝ սխրագործություններ կատարող մարդ: 2. Որևէ բանով աչքի ընկած՝ անուն հանած մարդ: 3. *փխբ.* Իր դարաշրջանի՝ միջավայրի բնորոշ գծերը մարմնացնող մարդ: 4. (գրկն.): Գրական երկի (վեպի, պիեսի ևն) գլխավոր գործող անձ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ [< Герострат < հուն. *Hērostratos*], գ. 1. Հույն, որն այրեց Արտեմիդի տաճարը մ. թ. ա. 356 թ., որպեսզի ինչ-որ ձևով հավերժացնի իր անունը: 2. *փխբ.* Փառամոլ, փառասեր (անձ):

ՀԵՐՊԵՍ [< герпес < լատ. herpēs թարախային ցան], գ. (բժշկ.): Մաշկի, շուրթերի,

աչքերի ևնի հիվանդություն՝ արտահայտված պղպջակավոր դուրսթափուկներով:

ՀԵՐՑ [< герц < գերմանացի ֆիզիկոս Հ. Հերցի անունով], գ. (ֆիզ.): Պարբերական տատանումների հաճախականության միավոր = մեկ տատանման մեկ վայրկյանում:

ՀԵՐՑՈԳ [< герцог < գերմ. Herzog], գ. (պատմ.): 1. Բարձր ազնվական տիտղոս Արևմտյան Եվրոպայում: 2. Այդ տիտղոսն ունեցող ազնվական, դուքս:

ՀԵՓԵՍՏՈՍ [< Гефест < հուն. Hēphaistos], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ կրակի և դարբնության աստվածը:

ՀԵՔՍԱ... [< гекса... < հուն. hex վեց] Բարդ բառերում նշանակում է վեց:

ՀԵՔՍԱԳՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ [< гексагонная (< հեքսա... + հուն. gonia անկյուն) система] - Բյուրեղագիտական համակարգ, որն ընդգրկում է համաչափության հինգ տեսակ, որոնք բնորոշվում են վեցերորդ կարգի մեկ առանցքի և երկրաչափական հաստատունների առկայությամբ:

ՀԵՔՍՈԶՆԵՐ [< гексозы < հեքսա...], գ. (քիմ.): Ածխաջրեր:

ՀԻԱՏՈՒՍ [< хиатус < լատ. hiatus բացվածք], գ. (լեզվբ. հնց.): Հորանջ՝ մի քանի ձայնավոր հնչյունների միմյանց կողքի լինելը (օր.՝ ռուսերենում **Иоа**нн):

ՀԻԱՑԻՆՏ (Թ) [< гиацинт < գերմ. Hyazinthe < Hyakinthos առասպելական հերոսի անունից, որը ծաղիկ դարձավ], գ. (բսբ.): Հակինթ:

ՀԻԲԵՐՆԱՑԻԱ [< гибернация < գերմ. Hibernation < լատ. hibernus ձմեռային, ցուրտ], գ. 1. (բժշկ. կենսբ.): Օրգանիզմի կենսագործունեության դանդաղընթաց զարգացման վիճակի ապահովում (վիրաբուժական միջամտությունների շնորհիվ): 2. (հմկրգչ.): Համակարգիչն անջատելու եղանակ:

ՀԻԲՐԻԴ [< гибрид < լատ. hibrida խառնածին], գ. 1. (կենսբ.): Տարբեր տեսակների՝ ցեղերի ևն պատկանող կենդանիների կամ բույսերի խաչավորումով ստացված օրգանիզմ: 2. ած. Խառնածին:

ՀԻԳԻԵՆԱ [< гигиена < հուն. hygieinos բուժիչ, առողջարար], գ. (բժշկ.): Առողջապահություն, առողջագիտություն, առողջաբանություն:

ՀԻԳԻԵՆԻՍՏ [< гигиенист < հուն.], գ. (խսկց.): Առողջարանի, հիգիենայի մասնագետ:

ՀԻԳՐՈ... [< гигро... < հուն. hygros խոնավ] Բարդ բառերում գործածվելիս ցույց է տալիս դրանց առնչությունը խոնավությանը:

ՀԻԳՐՈՖԻՏՆԵՐ [< гигрофиты < հիգրո... + հուն. phyton բույս], գ. (բսբ.): Խոնավ վայրերում ապրող բույսեր:

ՀԻԴԱԼԳՈ [< гидалго < իսպ. hidalgo], գ. (պատմ.): Մանր և միջին ազնվականության ներկայացուցիչ միջնադարյան Իսպանիայում:

ՀԻԴՐԱ [< гидра < հուն. hydra օձաձուկ < hydor ջուր], գ. 1. (դից.): Բազմագլխանի առասպելական վիշապ: 2. (կենսբ.): Աղեխորշավորների տիպին պատկանող պարզագույն կենդանի: 3. *փխբ.* Հրեշ, հրեշավոր մարդ: 4. (աստղգ.): Համաստեղություն երկնքի հարավային կիսագնդում:

ՀԻԴՐԱԶԻՆ [< гидразин < հուն. hydōr ջուր], գ. (քիմ.): Երկամիդ՝ H_2N-NH_2, անգույն, խոնավածուծ, օդում ծխացող հեղուկ: Կիրառվում է օրգանական սինթեզում, պլաստմասաների, ռետինի, միջատասպան և պայթուցիկ նյութերի արտադրության մեջ:

ՀԻԴՐԱՎԼԻԿԱ [< гидравлика < հուն. hydraulikos ջրային], գ. (գիտ.): Գիտություն հեղուկների հավասարակշռության ու շարժման օրենքների և դրանց գործնական կիրառության մասին:

ՀԻԴՐԱՏ [< гидрат < հուն. hydōr ջուր], գ. (քիմ.): Մետաղաթթուների քիմիական միացությունը ջրի հետ, ջրօքսիդ:

ՀԻԴՐԻՏՆԵՐ [< гидриты < հուն. hydōr ջուր + eidos տեսակ], գ. (քիմ.): Քիմիական տարրերի ջրածնական միացություններ, որոնցում ջրածինը ունի բացասական օքսիդացման աստիճան:

ՀԻԴՐՈ... [< гидро... < հուն. hydōr ջուր, խոնավություն] Բարդ բառերում ցույց է տալիս դրանց կապը ջրի հետ:

ՀԻԴՐՈԱԿՈՒՍՏԻԿԱ [< гидроакустика < հիդրո... + հուն. akustikos լսողական], գ. (գիտ.): Ձայնագիտության մի բաժինը, որը ուսումնասիրում է հեղուկի մեջ ձայնային ալիքների տարածման, կլանման և անդրադարձման օրենքները:

ՀԻԴՐՈԱՎԻԱՑԻԱ [< гидроавиация < հիդրո...+ ֆր. aviation], գ. (տեխ.): Ջրային մակերևույթից թռչելուն և ջրի վրա վայրէջք կատարելուն հարմարեցված թռչող մեքենաների ընդհանուր անունը:

ՀԻԴՐՈԲԻՈԼՈԳԻԱ [< гидробиология < հիդրո... + բիոլոգիա], գ. (գիտ.): Ջրակենսաբանություն՝ կենսաբանության բաժին, որն ուսումնասիրում է ջրային օրգանիզմները:

ՀԻԴՐՈԳԵՆԱՑՈՒՄ [< гидрогенизация < լատ. hidrogenium ջրածին], գ. (քիմ.): Քիմիական տարրերին և միացություններին ջրածնի միացման կատալիտիկ ռեակցիա:

ՀԻԴՐՈԳԵՆԵՐԱՏՈՐ [< гидрогенератор < հիդրո... + գեներատոր], գ. (տեխ.): Հիդրավլիկական տուրբինով պտտման մեջ դրվող սինխրոն գեներատոր:

ՀԻԴՐՈԳԵՈԼՈԳ [< гидрогеолог < հիդրո... + հուն. geo երկիր + logos ուսմունք], գ. (գիտ.): Հիդրոերկրաբան, հիդրոերկրաբանության մասնագետ:

ՀԻԴՐՈԳԵՈԼՈԳԻԱ [< гидрогеология < հուն.], գ. (գիտ.): Հիդրոերկրաբանություն՝ գիտություն ստորերկրյա ջրերի մասին:

ՀԻԴՐՈԳՐԱՖ [< гидрограф < հիդրո... + հուն. graphō գրում եմ], գ. (հնց.): 1. Հիդրոգրաֆիայի՝ ջրագրության մասնագետ, ջրագետ: 2. (տեխ.): Գործիք, որով չափում են հոսող ջրի արագությունը:

ՀԻԴՐՈԳՐԱՖԻԱ [< гидрография < հուն.], գ. (գիտ.): Ջրագրություն՝ հիդրոբանության այն բաժինը, որ զբաղվում է վերգետնյա ջրերի ուսումնասիրությամբ ու նկարագրությամբ:

ՀԻԴՐՈԴԻՆԱՄԻԿԱ [< гидродинамика < հիդրո... + հուն. dynamikos գործող], գ. (գիտ.): Հիդրոմեխանիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է հեղուկների, ինչպես և նրանց մեջ լիովին կամ մասամբ ընկղմված պինդ մարմինների շարժման օրենքները՝ կապված նրանց վրա ներգործող ուժերի հետ, ջրադինամիկա, ջրուժաբանություն:

ՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆ, գ. Հիդրոերկրաբանության մասնագետ:

ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ (ՀԷԿ), գ. Ջրի հոսանքի էներգիան էլեկտրական էներգիայի փոխակերպող կառույցների և սաքավորումների համալիր:

ՀԻԴՐՈԷԼԵՎԱՏՈՐ [< гидроэлеватор < հիդրո... + էլևատոր], գ. (տեխ.): Շիթային պոմպ, որը նախատեսված է հեղուկները և հիդրոխառնուրդները խողովակաշարով բարձրացնելու և տեղափոխելու համար:

ՀԻԴՐՈԷՆԵՐԳԵՏԻԿԱ [< гидроэнергетика < հիդրո... + էներգետիկա], գ. (գիտ.): Ջրաէներգետիկա՝ էներգետիկայի մի բաժինը, որը զբաղվում է ջրային էներգիայի՝ որպես էլեկտրականության աղբյուրի օգտագործման հարցերով:

ՀԻԴՐՈԷՆԵՐԳԻԱ [< гидроэнергия < հիդրո... + energia գործունեություն], գ. Ջրային էներգիա:

ՀԻԴՐՈԹԵՐԱՊԻԱ [< гидротерапия < հիդրո... + հուն. therapeia], գ. (բժշկ.): Ջրաբուժություն, բուժում ջրային զանազան միջոցներով:

ՀԻԴՐՈԹԵՐՄԱԼ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ [< гидротермальные (< հիդրո... + հուն. thermos տաք) месторождения] - (երկրբ.): Հանքավայրեր, որոնք մտնում են հետմագմատիկ խմբի մեջ և ձևավորվել են հրային ապարների սառեցման ու բյուրեղացման ընթացքում առաջացած գերտաքացած ջրային լուծույթների նստվածքներից:

ՀԻԴՐՈԻԴՆԵՐ [< гидроиды < հիդրո... + լատ. eidos], գ. (կենդբ.): Աղեխորշավորների տիպի ջրային անողնաշարավոր կենդանիների դաս:

ՀԻԴՐՈԻՆՔՆԱԹԻՌ, գ. (տեխ.): Ջրի վրա վերելք-վայրէջք կատարող ինքնաթիռ:

ՀԻԴՐՈԼԱԶՆԵՐ [< гидролазы < հուն.], գ. (քիմ.): Ֆերմենտների դաս. կատալիզում են ներմոլեկուլային քիմիական կապերի հիդրոլիտիկ ճեղքման ռեակցիաները:

ՀԻԴՐՈԼԻԶ [< гидролиз < հիդրո... + հուն. lysis տարրալուծում], գ. (քիմ.): Բաղադրյալ նյութի տարրալուծումը ջրի մեջ:

ՀԻԴՐՈԼՈԳԻԱ [< гидрология < հուն.], գ. (գիտ.): Ջրաբանություն՝ զբաղվում է բնական ջրերի և նրանցում ընթացող երևույթների ու գործընթացների ուսումնասիրությամբ:

ՀԻԴՐՈԼՈԿԱՏՈՐ [< гидролокатор < հիդրո... + լատ. loco տեղավորում եմ], գ. (տեխ.): Հիդրոլոկացիոն կայան, հիդրոձայնային կայան՝ ջրի մեջ սուզված կամ կիսասուզված օբյեկտների (սուզակ, նավ, ձկների վտառ) հայտնաբերման և կոորդինատների որոշման համար:

ՀԻԴՐՈԼՈԿԱՑԻԱ [< гидролокация < հիդրո... + լատ. localis տեղական], գ. (տեխ.): Մարմնի տեղադրության որոշումը ջրի տակ՝ նրանից արտացոլվող հնչյունական ազդանշանների կամ հնչյունների միջոցով:

ՀԻԴՐՈՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Ձայնագիտության բաժին, որ ստորջրյա լոկացիայի և կապի նպատակներով ուսումնասիրում է ձայնային ալիքների տարածումները իրական ջրային միջավայրում:

ՀԻԴՐՈՄԵԼԻՈՐԱՑԻԱ [< гидромелиорация < հիդրո... + լատ. melioratio լավացում, բարելավում], գ. Ջրով, ջրերի միջոցով հողերի արմատական բարելավում:

ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԶԱՑԻԱ [< гидромеханизация < հիդրո... + հուն. mechanē], գ. Հողի շերտը կամ ապարը քայքայող ճնշումային հոսանքաշիթն օգտագործող մեխանիզմների օգնությամբ հողային և լեռնահանքային աշխատանքների կատարման եղանակ:

ՀԻԴՐՈՄԵԽԱՆԻԿԱ [< гидромеханика < հիդրո... + mechanike < mēchanē գործիք], գ. (գիտ.): Ջրաբանության մի բաժինը, որն ուսումնասիրում է հեղուկների հավասարակշռությունն ու շարժումը, ինչպես նաև հեղուկների ու նրանց մեջ լիովին կամ մասամբ ընկղմված պինդ մարմինների փոխադարձ ներգործությունը:

ՀԻԴՐՈՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ [< гидрометаллургия < հիդրո... + հուն. ergon աշխատանք], գ. (գիտ.): Հանքաքարերից, հարստանյութերից կամ տարբեր արդյունաբերական թափոններից մետաղների կորզում՝ քիմիական ռեագենտների ջրային լուծույթներում լուծելու և այդ լուծույթներից մետաղները կամ դրանց միացությունները անջատելու եղանակով:

ՀԻԴՐՈՄԵՏԵՈՐՈԼԱԳԻԱ [< гидрометеорология < հիդրո... + մետեո... + հուն logos գիտություն], գ. (գիտ.): Սահմանային միջգիտակարգ՝ հիդրոլոգիայի և մթնոլորտաբանության միջև:

ՀԻԴՐՈՄԵՏԵՈՐՈԼՈԳԻԱՅԻ, գ. Հիդրոմետեորոլոգիայի և բնական միջավայրի վերահսկողության հայկական հանրապետական վարչություն:

ՀԻԴՐՈՄԵՏՐԻԱ [< гидромертрия < հիդրո... + metron չափ, metreō չափում եմ], գ. (գիտ.): Ջրաչափություն՝ քաղցր ջրերի մեջ պարունակած աղերի չափումը վերլուծության միջոցով:

ՀԻԴՐՈՊԼԱՆ [< гидроплан < հիդրո... + լատ. planus հարթ, ողորկ < հուն. hydorplane], գ. (տեխ.): Հիդրոինքնաթիռ:

ՀԻԴՐՈՊՈՆԻԿ [< гидропонический < հուն.], ած. 1. Հիդրոպոնիկային հատուկ՝ վերաբերող: 2. Հիդրոպոնիկայի եղանակով կատարվող՝ վարվող:

ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱ [< гидропоника < հիդրո... + հուն. ponos աշխատանք], գ. (գիտ.): Բույսերի անհող՝ սննդական լուծույթներով մշակություն:

ՀԻԴՐՈՊՈՒԼՏ[< гидропульт < հիդրո... + գերմ. Pult < լատ. (cata) pulta նետիչ մեքենա], գ. (տեխ.): Հրդեհ մարելու, փողոցներն ու պարտեզները ջրելու և շենքերը ախտահանելու ձեռքի պոմպավոր դույլ:

ՀԻԴՐՈՌԵՍՈՒՐՍ (ՆԵՐ) [< гидроресурсы < հիդրո... + ֆր. ressources], գ. Ջրային պաշար(ներ)՝ միջոց(ներ):

ՀԻԴՐՈՍՏԱՏԻԿԱ [< гидростатика < հիդրո... + հուն. statos կանգուն], գ. (գիտ.): Հիդրոմեխանիկայի մի բաժինը, որ ուսումնասիրում է հեղուկների, ինչպես և նրանց մեջ լիովին կամ մասամբ ընկղմված պինդ մարմինների հավասարակշռության օրենքները:

ՀԻԴՐՈՍՈՒԼՖԻՏ [< гидросульфит < հիդրո... + լատ. sulphur ծծումբ], գ. (քիմ.): Քիմիական նյութ՝ ծծմբաթթվի աղ:

ՀԻԴՐՈՍՖԵՐԱ [< гидросфера < հիդրո... + հուն. sphaira գունդ], գ. (երկրբ.): Ջրոլորտ՝ երկրի ջրային թաղանթը:

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱ [< гидротехника < հիդրո... + հուն. technikē հմուտ, վարպետ < technē արվեստ, վարպետություն], գ. 1. (գիտ.): Գիտություն ջրային ռեսուրսների օգտագործման և ջրային տարերքի վնասակար ազդեցության դեմ պայքարելու մասին: 2. Տեխնիկայի այն մասը, որ իրագործում է այդ խնդիրները հատուկ կառուցումների օգնությամբ:

ՀԻԴՐՈՏՈՐՖ [< гидроторф < հիդրո... + գերմ. Torf < արաբ. turab հող, գետին], գ. Ջրաշիթով հանվող տորֆ:

ՀԻԴՐՈՏՈՒՐԲԻՆ [< гидротурбина < հիդրո... + գերմ. Turbine < լատ. turbineus պտտաձև], գ. (տեխ.): Ջրատուրբին՝ ջրով աշխատեցվող տուրբին:

ՀԻԴՐՈՔԻՄԻԱ [< гидрохимия < հիդրո... + լատ. chimia], գ. (գիտ.): Ջրաքիմիա՝ գիտություն, որը զբաղվում է ջրի քիմիական բաղադրության ուսումնասիրությամբ:

ՀԻԴՐՈՖԻԶԻԿԱ [< гидрофизика < հիդրո... + physike < physis բնություն], գ. (գիտ.): Ջրի ֆիզիկա, ուսումնասիրում է բնական պայմաններում ջրային զանգվածների մեջ տեղի ունեցող ֆիզիկական գործընթացները:

ՀԻԴՐՈՖԻԼԻԱ [< гидрофилия < հիդրո... + հուն. phileō սիրում եմ], գ. (գիտ.): Հիդրոֆիլություն, ջրասիրություն՝ ջրի նկատմամբ նյութի խնամակցությանը բնորոշ հատկություններ, որոնք պայմանավորված են նյութի և ջրի միջմոլեկուլային փոխազդեցության ուժերով:

ՀԻԴՐՈՖԻՏՆԵՐ [< гидрофиты < հիդրո... + հուն. phyton բույս], գ. (բսբ.): Ջրային բույսեր, որոնք ստորին մասով ընկղմված են ջրի մեջ:

ՀԻԴՐՈՖՈԲՈՒԹՅՈՒՆ [< гидрофобия < հիդրո... + հուն. phobos վախ], գ. (գիտ.):

Հիդրոֆոբություն, ջրավախություն:

ՀԻԴՐՈՖՈՆ [< гидрофон < հիդրո... + հուն. phōnē ձայն, հնչյուն], գ. (տեխ.): Էլեկտրաձայնային փոխակերպիչ, որը կիրառվում է հիդրոձայնագիտության մեջ՝ ստորջրյա աղմուկներն ու ազդանշանները լսելու, չափումներ կատարելու համար:

ՀԻԴՐՕՔՍԻԼ ԽՈՒՄԲ [< гидроксильная (< հիդրո... + հուն. oxys թթու) группа] – (քիմ.): OH միարժեք խումբ, մտնում է քիմիական շատ միացությունների՝ ջրի, հիմքերի,թթվածնավոր թթուների, սպիրտների ևն նյութերի մոլեկուլների բաղադրության մեջ:

ՀԻԵՐԱՐԽԻԱ [< иерархия < հուն. hierarchia], գ. Պաշտոնների և կոչումների հաջորդական կարգը՝ ցածից դեպի վեր, ստորակարգություն:

ՀԻԵՐԱՐԽԻԿ [< иерархический < հուն.], ած. Հիերարխիային հատուկ, ըստ հիերարխիայի որոշվող՝ ստորակարգվող:

ՀԻԵՐՈԳԼԻՖ [< иероглиф < հուն. hieroglyphoi սուրբ գրեր], գ. (լեզվբ.): Գաղափարագրական գրային համակարգի մեջ՝ պատկերային գրանշան, որ նշանակում է հասկացություն, վանկ կամ հնչյուն:

ՀԻԹ [< хит < անգլ. hit սեզոնի մեխը], գ. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործություն (սովորաբար էստրադային), որը մեծ մասսայականություն է վայելում տվյալ ժամանակահատվածում:

ՀԻԼՈՏ [< илот < հուն. heilos (heilōtes)], գ. 1. (պատմ.): Հին Սպարտայում՝ հողագործ (սրանք համարվում էին պետության սեփականությունը և համարյա ոչնչով չէին տարբերվում ստրուկներից): 2. *փխբ.* (հնց.): Իրավազուրկ մարդ:

ՀԻՄՆ [< гимн < hymnos օրհներգ], գ. Հանդիսավոր երգ, որ ընդունված է իբրև պետական, ազգային կամ սոցիալական միասնության խորհրդանիշ, օրհներգ:

ՀԻՆԴԻ [< Хинди < անգլ. Hindi < հինդի Hindi < Hind Հնդկաստան], գ. (լեզվբ.): Ժամանակակից Հնդկաստանի պետական լեզուներից մեկը:

ՀԻՆԴՈՒԻԶՄ [< индуизм < հատուկ անունից], գ. (կրոն.): Հնդուիզմ, հնդուականություն՝ աշխարհում տարածված կրոններից մեկը: Հետևորդների մոտ 95% ապրում է Հնդկաստանում: Բազմաստվածային կրոն, պաշտում է աստվածային երրորդությունը՝ Բրահման, հատկապես՝ Վիշնուն և Շիվան: Հինդուիզմի սուրբ գրքերն են Վեդաները, «Մահաբհարաթա» և «Ռամայանա» էպոսները ևն:

ՀԻՊԱՐԽ [< гиппарх < հուն. hipparchos < hippos ձի + archē սկիզբ], գ. (պատմ.): Հեծելազորի հրամանատար Հին Հունաստանում:

ՀԻՊԵՐ... [< гипер... < հուն. hyper վրա, վերև] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս վերևում գտնվելը կամ բնականոնին գերազանցելը:

ՀԻՊԵՐԲՈԼ(Ա) [< гипербола < հուն. hyperbolē չափազանցում], 1. (գրկն.): Չափազանցություն: 2. (երկրչ.): Չփակված կոր գիծ, որն ստացվում է կոնը հարթությամբ հատելուց:

ՀԻՊԵՐԲՈԼԻԿ [< гиперболический < հուն.], ած. Չափազանցական:

ՀԻՊԵՐԲՈԼՈԻԴ [< гиперболоид < հիպեր... + հուն. eidos տեսակ], գ. (երկրչ.): Հիպերբոլի շրջելով ստացվող մակերեսը:

ՀԻՊԵՐԳԵՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ [< гипергенные (< հիպեր... + հուն. genos ծագում) процессы] - (երկրբ.): Միներալային նյութի քիմիական և ֆիզիկական վերափոխման գործընթացներ՝ երկրակեղևի վերին հորիզոններում և մակերևույթում՝ մթնոլորտի, ջրոլորտի ու կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ ցածր ջերմաստիճանների դեպքում:

ՀԻՊԵՐԳԼԻԿԵՄԻԱ [< гипергликемия < հիպեր... + հուն. glykys քաղցր + haima արյուն], գ. (կզմխս.): (կզմխս.): Գերշաքարարյունություն՝ արյան մեջ շաքարի պարունակության ավելացումը 120 մգ%-ից բարձր:

ՀԻՊԵՐԹԵՐՄԻԱ [< гипертермия < հիպեր... + հուն. thermē տաքություն], գ. (գիտ.): Գերջերմություն՝ մարդու և կենդանիների օրգանիզմում ավելցուկային ջերմության կուտակումը և մարմնի ջերմաստիճանի բարձրացումը:

ՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՑԻԱ [< гиперинфляция < հիպեր... + լատ. inflatio], գ. (տնտսգ.): Գների մակարդակի կտրուկ աճ:

ՀԻՊԵՐԼԻՑՔ, գ. (գիտ.): Ուժեղ փոխազդող տարրական մասնիկների՝ հադրոնների բնութագրերից մեկը, որ հավասար է բարիոնային լիցքի և տարօրինակության գումարին:

ՀԻՊԵՐՁԱՅՆ, գ. (գիտ.): 10^9-ից մինչև 10^{12}-10^{13} հց հաճախականության առաձգական ալիքներ (դրանց սպեկտորի բարձրահաճախային մասը):

ՀԻՊԵՐՄԱՐԿԵՏ [< гипермаркет < հիպեր... + անգլ. market], գ. (առևտր.): Չափազանց մեծ տարածություն զբաղեցնող խանութ, որտեղ վաճառվում են ամենատարբեր ապրանքներ:

ՀԻՊԵՐՈՆՆԵՐ [< гипероны < հուն.], գ. (ֆիզ.): Անկայուն տարրական մասնիկներ, որոնց զանգվածը մեծ է նուկլոնի զանգվածից: Հայտնաբերել են անգլիացի ֆիզիկոսներ Գ. Ռոչեստերը և Կ. Բատլերը 1947 թ. տիեզերական ճառագայթներում:

ՀԻՊԵՐՊԼԱԶԻԱ [< гиперплазия < հիպեր... + հուն. plasis ստեղծում, գոյացում], գ. (կենսբ.): Հյուսվածքների և օրգանների կառուցվածքային տարրերի թվի ավելացում: Նկատվում է հյուսվածքների ախտաբանական գերաճումների, ռեգեներացիայի և հիպերտրոֆիայի դեպքերում:

ՀԻՊԵՐՍԹԵՆ [< гиперстен < հիպեր... + հուն. stenos ուժ, ամրություն], գ. (հնք.): Միներալ պիրոքսենների խմբից: Պարունակում է ավելի քան 14% FeO:

ՀԻՊԵՐՏՈՆԻԱ [< гипертония < հիպեր... + հուն. tonos լարում, լարվածություն], գ. (բժշկ.): Գերլարվածություն՝ արյան բարձր ճնշման հիվանդություն, գերաճնշություն:

ՀԻՊԵՐՏՐԻԽՈԶ [< гипертрихоз < հիպեր... + հուն. thrix (thrichos) մազ], գ. (կզմխս.): Մարդու մազածածկույթների չափից ավելի զարգացումը մարմնի այն մասերում, ուր սովորաբար աճում են միայն աղվամազեր:

ՀԻՊԵՐՏՐՈՖԻԱ [< гипертрофия < հիպեր... + հուն. trophē սնուցում, սնունդ], գ. (կզմխս.): Օրգանի կամ նրա առանձին մասի ծավալի մեծացում:

ՀԻՊԻ [< хиппи < անգլ. hippie < hip ազդր, զիստ], գ. (խսկց.): 1. Ըմբոստ երիտասարդության ներկայացուցիչ, որը արտահայտում է իր բողոքը իրականության և հասարակարգում ընդունված բարոյական նորմերի դեմ՝ քաղաքակրթությունից, ընտանեկան հարաբերություններից ևն հեռանալով (տարբերվում էին ազատ հագուկապով և երկար մազերով): 2. *փխբ.* Թափթփված հագնված, հանդուգն երիտասարդ:

ՀԻՊՆՈՊԵԴԻԱ [< гипнопедия < հուն. hypnos քուն + paideia ուսուցում, դաստիարակություն], գ. (գիտ.): Ուսուցում բնական քնի ժամանակ:

ՀԻՊՆՈՍ [< гипноз < հուն. hypnos քուն], գ. 1. Կենդանիների և մարդու մասնակի քնի վիճակ, որ առաջ է բերվում ներշնչումով: 2. (բժշկ.): Ներշնչման ազդեցությամբ քնեցնելը և քնողի կամքի վրա ներգործելը (սովորաբար բուժական նպատակներով), հիպնոսացնելը: 3. (դից.): Քնի աստվածը հին հունական դիցաբանությունում:

ՀԻՊՆՈՍԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. (բժշկ.): Բուժում՝ բժշկություն հիպնոսի միջոցով:

ՀԻՊՆՈՏԻԶՄ [< гипнотизм < ֆր. hypnotisme < հուն.], գ. 1. Ուսմունք հիպնոսի երևույթների մասին: 2. Այն երևույթները, որոնք տեղի են ունենում հիպնոսի ժամանակ: 3. Հիպնոսելու կարողություն:

ՀԻՊՆՈՏԻԶՅՈՐ [< гипнотизёр < ֆր. hypnotiseur < հուն.], գ. ած. Հիպնոսարար, հիպնոսի ենթարկող:

ՀԻՊՈ... [< гипо... < հուն. hypo տակ, ներքև] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս ներքևում գտնվելը, ինչպես նաև բնականոնից նվազելը:

ՀԻՊՈԳԵՆԵԶԻԱ [< гипогенезия < հիպո... + հուն genesis], գ. Տե՛ս Հիպոպլազիա:

ՀԻՊՈԳԵՆ ՄԻՆԵՐԱԼՆԵՐ [< гипогенные (< հիպո... + հուն. genesis ծագում) минералы] - (հնք.): Միներալներ, որոնք առաջանում են երկրակեղևի խոր հորիզոններում:

ՀԻՊՈԳԼԻԿԵՄԻԱ [< гипогликемия < հիպո... + հուն. glykys քաղցր + haima արյուն], գ. (կզմխս. հնց.): Թերշաքարարյունություն՝ արյան շաքարի քանակության նվազումը 80-70 մգ %-ից ցածր:

ՀԻՊՈԴՐՈՄ [< гипподром < հուն. hippodromos < hippos ձի + dromos վազելու տեղ, վազք], գ. Վազրաձիերի, հեծելաձիերի փորձարկման և ձիասպորտի մրցումների վայր՝ ձիարշավարան:

ՀԻՊՈԹԱԼԱՄՈՒՍ [< гипоталамус < հուն. hypothalamus], գ. (կզմխս.): Ենթատեսաթումբ՝ գլխուղեղի բաժին, տեղադրված է տեսաթմբերի տակ, մտնում է միջանկյալ ուղեղի կազմի մեջ, գոյացնում է 3-րդ փորոքի պատերը և հատակը:

ՀԻՊՈԹԵԶ [< гипотеза < հուն. hypothesis ենթադրություն], գ. 1. Իբրև որևէ բանի բացատրություն առաջ քաշվող գիտական ենթադրություն, որի ստույգությունը դեռևս փաստով կամ փաստերով չի ապացուցվել: 2. Վարկած՝ կասկածելի՝ վստահություն չներշնչող կարծիք՝ ենթադրություն:

ՀԻՊՈԹԵԿԱ [< гипотек < հուն.], գ. (ֆին.): Գրավադրում՝ արժեքավոր ապրանքի կամ առարկայի (հաճախ անշարժ գույքի) հանձնումը վարկատուին՝ որպես ստացված վարկի երաշխիք:

ՀԻՊՈԹԵՐՄԻԱ [< гипотермия < հիպո... + հուն. thermē ջերմություն], գ. (հնց.): Թերջերմություն՝ տաքարյուն կենդանիների և մարդու մարմնի ջերմության նվազումը, երբ ջերմատվության գործընթացները գերազանցում են ջերմարտադրությունը:

ՀԻՊՈԼՈԳԻԱ [< гиппология < հուն.], գ. (գիտ.): Ձիաբանություն:

ՀԻՊՈՊԼԱԶԻԱ [< гипоплазия < հիպո... + հուն. plasis ստեղծում, առաջացում], գ. (կզմխս.): Հիպոգենեզիա՝ հյուսվածքի, օրգանի, մարմնի մասի կամ ամբողջ օրգանիզմի թերզարգացում:

ՀԻՊՈՍՈՒԼՖԻՏ [< гипосульфит < հիպո... + սուլֆիտ], գ. (քիմ.): Նատրիումի թիոսուլֆատ: Օգտագործվում է քիմիական արտադրության մեջ:

ՀԻՊՈՏՈՆԻԱ [< гипотония < հիպո... + հուն. tonos լարում], գ. (կզմխս.): Հյուսվածքի, օրգանի կամ համակարգի տոնուսի նվազում:

ՀԻՊՈՑԻԿԼՈԻԴՆԵՐ [< гипоциклоиды < հիպո... + հուն. kykloeidēs շրջանաձև], գ. (երկրչ.): Կորեր, որոնք գծվում են շրջանագծի որևէ կետով, երբ այդ շրջանագիծը առանց սահքի գլորվում է մեկ այլ՝ անշարժ շրջանագծով:

ՀԻՊՈՖԻԶ [< гипофиз < հիպո... + հուն. physis ելուստ], գ. (կզմխս.): Ստորին մակուղեղ՝ մարդու և ողնաշարավոր կենդանիների ներզատիչ գեղձ, որը կարևոր դեր է խաղում հորմոնային կարգավորման գործընթացում:

ՀԻՊՍՈՄԵՏՐԻԱ [< гипсометрия < հուն. hypsos բարձրություն, գագաթ + metreō չափում եմ], գ. (աշխգր.): Աշխարհագրական քարտեզների վրա երկրի մակե-

ընույթի ռելիեֆի արտահայտումը հորիզոնականների օգնությամբ:

ՀԻՊՕՔՍԻԱ [< гипоксия < հիպո... + լատ. oxygenium թթվածին], գ. (բժշկ.): Թթվածնային քաղց. թթվածնային անբավարարություն՝ թթվածնի պարունակության նվազումը օրգանիզմի հյուսվածքներում:

ՀԻՍՏԱՄԻՆ [< гистамин < հուն. histos հյուսվածք], գ. (կենդբ.): Հյուսվածքային հորմոն. առաջանում է հիստիդինից՝ դեկարբոքսիլացման միջոցով:

ՀԻՍՏԵՐԵԶԻՍ [< гистерезис < հուն. hysteresis ուշանալ, հետ մնալ], գ. (կզմխս.): Մարմնի վիճակը բնութագրող ֆիզիկական մեծության ոչ միարժեք կախումը արտաքին ներգործությունից, որը պայմանավորված է նախորդող նույնպիսի ներգործության առկայությամբ:

ՀԻՍՏԵՐԻԱ [< истерия < հուն. hysterikos արգանդային], գ. 1. (բժշկ.): Նյարդահոգեկան ֆունկցիոնալ հիվանդություն, որ արտահայտվում է ճիչերով, ցնցումներով, զգայարանների գերգրգռվածությամբ և հոգեկան, զգայական, շարժողական նն գործունեության բազմազան խանգարումներով: 2. *փխբ.* Ծայրահեղորեն լարված՝ տենդագին գործունեություն որևէ նպատակով, մոլեգին՝ խուճապային գործողություններ:

ՀԻՍՏԵՐԻԿ [< истерический < հուն.], ած. 1. Հիստերիայով տառապող, հիստերիայի վիճակում գտնվող: 2. Հիստերիային հատուկ, հիստերիայից առաջացող: 3. *փխբ.* Չափազանց դյուրագրգիռ, ջղային: 4. *փխբ.* (խսկց.): Լաչառ: 5. *փխբ.* Տեղի-անտեղի խոսող, ճղճղան, աղմկարար:

ՀԻՍՏԵՐԻԿԱ [< истерика < հուն.], գ. 1. Հիստերիայի նոպա: 2. *փխբ.* Աղմուկ-աղաղակ, իրարանցում, խուճապ: 3. *փխբ.* Անզուսպ ջղայնություն, լաչառություն:

ՀԻՍՏԻԴԻՆ [< гистидин < հուն. histion], գ. (կենսբ.): Հիմնային հատկություններով օժտված ամինաթթու: Հյուսվածքներում կարևոր դեր ունի:

ՀԻՍՏԻՈ..., ՀԻՍՏՈ... [< гистио..., гисто... < հուն. histos հյուսվածք] Բարդ բառերի բաղադրամաս. ցույց է տալիս դրանց կապը մարմնի հյուսվածքներին:

ՀԻՍՏՈՆՆԵՐ [< гистоны < հուն.], գ. (կենսբ.): Թույլ հիմնային հատկություններով օժտված պարզ սպիտակուցային խումբ:

ՀԻՍՏՐԻՈՆ [< гистрион < լատ. histrion], գ. (պատմ.): 1. Դերասան Հին Հռոմում. մեծ մասամբ ազատ արձակված ստրուկներ էին: 2. Վաղ միջնադարի (IX-XIII դդ.) թափառաշրջիկ դերասան:

ՀԻՐՈՒԴԻՆ [< гирудин < լատ. hirudo տզրուկ], գ. (քիմ.): Արյան մակարդումը դանդաղեցնող նյութ, որը արտադրվում է բժշկական տզրուկների թքագեղձերից:

ՀԻՖԵՐ [< гифы < հուն. hyphē հյուսվածք], գ. (բսբ.): Սնկերի պարզ կամ առատ ճյուղավորված մանրադիտակային թելիկներ, որոնցից գոյանում են վեգետատիվ օրգաններն ու պտղամարմինները:

ՀՈԲԲԻ [< хобби < անգլ. hobby, բառացի՝ քուռկիկ], գ. Իր համար սիրելի զբաղմունք, նախասիրություն:

ՀՈԲԵԼՅԱՆ [< юбилей < լատ. iubilaeus annus հոբելյանական տարի < հին հրեերեն jôbêl ոչխարի եղջյուր < հանդիսավոր ձայն, որը հնչում է եղջյուրից], գ. 1. Տարեդարձ: 2. Տարեդարձի տոնումը՝ տոնելը:

ՀՈԲԵԼՅԱՐ [< юбиляр < լատ. < հին հրեերեն], գ. Հոբելյան՝ տարեդարձ նշող անձ:

ՀՈԴՈԳՐԱՖ [< годограф < հուն. hodos ճանապարհ + graphō գրում եմ], գ. 1. (մաթ.): Փոփոխական վեկտորի ծայրակետերի երկրաչափական տեղը ներկա-

յացնող կոր (վեկտորի արժեքները ժամանակի տարբեր պահերին տեղադրված են ընդհանուր սկզբնակետից): 2. (ծով.): Էլեկտրամագնիսական սարք, որը ավտոմատ պատկերում է քարտեզի վրա նավի անցած ուղին:

ՀՈԹԵԼ [< отель < ֆր. hôtel < hôte հյուր], գ. (խսկց.): Հյուրանոց:

ՀՈԹ ԴՈԳ [< хот-дог < ամերիկյան անգլ. hot dog < անգլ. hot տաք + dog շուն], գ. (խոհր.): Փոքր հաց՝ մեջը եփած նրբերշիկ դրած:

ՀՈԼԴԻՆԳ [< холдинг < անգլ. holding տիրապետող, ունեցող], գ. (տնտսգ.): Տիրապետող (գլխամասային) ընկերություն. ձեռնարկատիրության տեսակ, որն իրականացնում է իր գործունեությունը տարբեր ընկերությունների բաժնետոմսերի հսկիչ ծրարների ձեռքբերման միջոցով՝ ընկերությունների գործունեության վրա հսկողություն սահմանելու նպատակով:

ՀՈԼՈԳՐԱՖԻԱ [< голография < գերմ. Holographie < հուն. holos կշիռ + graphō գրում եմ], գ. (տեխ.): Առարկայի ծավալային պատկերի ստացման մեթոդ, որը հիմնված է լույսի երկու ճառագայթների (մեկը՝ աղբյուրի, մյուսը՝ արտացոլանքի) ներթափանցման վրա:

ՀՈԼՈՔՈՍՏ(Թ) [< холокост < անգլ. holocaust < հուն. holokauston < holos համընդհանուր + kaustos այրող], գ. (պատմ.): Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ հրեաների մասսայական ոչնչացումը Արևմտյան Եվրոպայում:

ՀՈԿԵՅ [< хоккей < անգլ. hockey], գ. (սպորտ.): Թիմային խաղ՝ գնդակով կամ տափօղակով՝ սառույցի կամ կանաչ դաշտի վրա, մականախաղ:

ՀՈՄԵՈ... [< гомео... < հուն. homoios նման, միատեսակ] Բարդ բառերի սկզբնամաս, նշանակում է նման, միատեսակ:

ՀՈՄԵՈՄՈՐՖԻԶՄ [< гомеоморфизм < հոմեո... + հուն. motphē ձև], գ. (գիտ.): Երկու տոպոլոգիական տարածությունների կետերի միջև փոխմիարժեք համապատասխանություն, որով որոշվող արտապատկերումը և դրան հակադարձ արտապատկերումն անընդհատ են:

ՀՈՄԵՈՊԱԹԻԱ [< гомеопатия < հոմեո... + հուն. pathos հիվանդություն], գ. (բժշկ.): Հիվանդությունները դեղամիջոցներով բուժելու եղանակ, որի ժամանակ հիվանդին տալիս են փոքր քանակությամբ այնպիսի դեղեր, որոնք մեծ քանակով տրվելու դեպքում առաջ են բերում հիվանդի ունեցած հիվանդությունը, նմանաբուժություն:

ՀՈՄԵՈՍՏԱԶ [< гомеостаз < հոմեո... + լատ. status վիճակ], գ. (կզմխս.): Մարդու, կենդանիների և բուսական օրգանիզմների հիմնական ֆիզիոլոգիական գործառույթների կայունություն, ներքին միջավայրի բաղադրության և հատկությունների հարաբերական հաստատունության պահպանում:

ՀՈՄԵՈՍՏԱՏ [< гомеостат < հոմեո... + հուն. statos կանգնած, անշարժ], գ. (կզմխս.): Ինքնակազմակերպվող համակարգ, որը մոդելում է կենդանի օրգանիզմների ֆիզիոլոգիական որոշ մեծություններ (օր.՝ մարմնի ջերմաստիճանը) թույլատրելի սահմաններում պահպանելու հատկությունը:

ՀՈՄՈ... [< гомо... < հուն. homos հավասար, միանման, միատեսակ] Բարդ բառերի սկզբնամաս. նշանակում է միասեռություն, հավասարություն, միասնություն:

ՀՈՄՈԳԵՆ [< гомогенный < հուն. homogenēs], ած. Նույն կազմությունն ունեցող՝ համասեռ:

ՀՈՄՈԳԵՆԱՑՈՒՄ [< гомогенизация < հուն. homogenēs համասեռ], գ. (գիտ.): Համասեռ խառնուրդ ստեղծելը:

ՀՈՄՈԶԻԳՈՏՈՒԹՅՈՒՆ [< гомозиготность < հոմո... + հուն. zygōtos)], գ.

(կենսբ.): Օրգանիզմի ժառանգական ապարատի վիճակ, երբ հոմոլոգ քրոմոսոմների համապատասխան բևեռներում գտնվում են համանման ալելներ:

ՀՈՄՈԼՈԳԻԱ [< гомология < հուն. homologia համապատասխանություն], գ. (կենսբ.): Կառուցվածքով և ծագմամբ իրար համապատասխանող օրգանների նմանություն: Տերմինն առաջարկել է անգլիացի Ռ. Օուենը 1843 թ.:

ՀՈՄՈՄՈՐՖԻԶՄ [< гомоморфизм < հոմո... + հուն. morphē ձև], գ. (մաթ.): Երկու հանրահաշվական համակարգերի (խմբեր, օղակներ ևն) միջև սահմանվող հարաբերություն:

ՀՈՄՈՅՈԹԵՐՄ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ [< гомойотермные (< հուն. homoios հավասար, միևնույն + thermē տաքություն) организмы] - (կենդբ.): Տաքարյուն օրգանիզմներ. սրանց մարմինն ունի մշտական ջերմաստիճան և կախված չեն շրջապատող միջավայրից:

ՀՈՄՈՍԵՔՍՈՒԱԼ [< гомосексуальный < հոմո... + լատ. sexualis սեռային], ած. Համասեռամոլ, միասեռամոլ:

ՀՈՄՈՍԵՔՍՈՒԱԼԻԶՄ [< гомосексуализм < հոմո... + լատ. sexualis սեռային], գ. Համասեռամոլություն՝ սեռական այլասերվածություն, որը բնորոշվում է նույն սեռի հանդեպ սեռական հակումներով, միասեռամոլություն:

ՀՈՄՈՍԵՔՍՈՒԱԼԻՍՏ [< гомосексуалист < հոմո... + լատ.], ած. գ. Համասեռամոլական, միասեռամոլական:

ՀՈՄՈՏՈՊԻԱ [< гомотопия < հուն.], գ. (մաթ.): Հանրահաշվական տոպոլոգիայի հիմնական հասկացություններից է:

ՀՈՄՈՖՈՆԻԱ [< гомофония < հուն. homophonia], գ. (երժշտ.): Բազմաձայնության տեսակ, որը բնորոշվում է ձայներից մեկի առաջատար նշանակությամբ, մյուս ձայները երկրորդական են, լրացուցիչ, ուղեկցող: Հասկացությունը ծագել է Հին Հունաստանում:

ՀՈՄՍՏԵԴԱԿՏ [< гомстед-акт < անգլ. homestead տնամերձ հողակտոր], գ. (պատմ.): Հողաբաժինների մասին օրենք՝ ընդունված ԱՄՆ-ում 1862 թ. մայիսին:

ՀՈՄՐՈՒԼ [< гомруль < անգլ. home rule, բառացի՝ ինքնավարություն], գ. (պատմ.): Իռլանդիայի ինքնավարության ծրագրի իրականացման համար պաքարը XIX դ. 70-ական թթ. և XX դ. սկզբին:

ՀՈՆԻՆԳՈՒՄ [< гонинг < անգլ. honing], գ. (տեխ.): Նախապատվաստուկների մակերևույթների վերջնամշակում մանրահատիկ հեսաններ ունեցող հատուկ գործիքով՝ հոնով:

ՀՈՆՈՐԱՐ [< гонорар < լատ. honorarum վարձատրություն ծառայության համար], գ. 1. Աշխատանքի պայմանագրային դրամական վարձատրություն արվեստի և գրականության գործիչներին, իրավաբաններին, բժիշկներին ևն: 2. Գրքի, հոդվածի ևն համար տրվող դրամավճար:

ՀՈՆՎԵԴ [< гонвед < հուն·. honvéd, բառացի՝ հայրենիքի պաշտպան], գ. (պատմ.): 1. Միջին դարերում հունգարական հետևակը: 2. XIX-XX դդ. մինչև 1949 թ. հունգարական ազգային բանակը:

ՀՈՊԼԻՏ [< гоплит < հուն. hoplites], գ. (պատմ.): Ծանր սպառազինված հետևակազորային (Հին Հունաստանում):

ՀՈՍՊԻՏԱԼ [< госпиталь < գերմ. Hospital < լատ. hospitalis հյուրասեր], գ. Զինվորական հիվանդանոց:

ՀՈՍՏ(Թ)ԻՆԳ [< хостинг < անգլ. hosting գլխավոր համակարգիչ < to host տիրոջ դերում լինել < host տեր], գ. (հմկրգչ.): 1. Համացանցում տարածքի տրամադրում

որոշակի կայքերի տեղադրման համար: 2. Սերվեր, որը այսպիսի տարածք է տրամադրում:

ՀՈՐԴԱ [< орда < թուրք., մոնղ. ճամբար], գ. 1. (պատմ.): Չինգիզ խանի տերության մասնատումով կազմակերպված առանձին տերություններից յուրաքանչյուրի անվանումը: 2. *փխբ.* Չինված խաժամուժ զորք, հրոսակախումբ: 3. Մարդկանց անկազմակերպ խումբ:

ՀՈՐԻԶՈՆ [< горизонт < հուն. horizōn սահմանորոշիչ < ֆր. horizon], գ. (երկրբ. շին.): 1. Երկնքի և երկրի (ցամաքի կամ ջրի) թվացող միացման՝ շփման գիծը: 2. Երկնքի այն մասը, որ տեսանելիորեն մոտ է երկրին, երկնքի տեսանելի հատվածը: 3. *փխբ.* Տեսանելի՝ հայացքով ընդգրկվող տարածություն: 4. *փխբ.* Մտահորիզոն: 5. *փխբ.* Հեռանկար, գործունեության ասպարեզ՝ ոլորտ: 6. (աստղգ.): Մեծ շրջան, որ գունդը բաժանում է երկու հավասար մասի՝ վերին և ներքին կիսագնդերի:

ՀՈՐԻԶՈՆԱԳԻԾ, գ. 1. (գիտ.): Հորիզոնի հարթությանը զուգահեռ գիծ: 2. (երկրբշխ.): Միևնույն բարձրության վրա գտնվող կետերը քարտեզի վրա միացնող կորագիծը: 3. Հորիզոնական գիծ: 4. ած. Հորիզոնական գիծ ունեցող՝ կազմող:

ՀՈՐՄՈՆ [< гормон < հուն. hormaō շարժում եմ], գ. (բնխս.): Ներքին արտամղման գեղձերից արյան մեջ արտազատվող նյութ:

ՀՈՐՈՍԿՈՊ [< гороскоп < հուն. hōros ժամանակ + skopeo նայում եմ, դիտում եմ], գ. (հնց.): Բախտացույց, աստղերի դասավորության աղյուսակ (գուշակության համար), աստղագուշակ:

ՀՈՒԳԵՆՈՏՆԵՐ [< гугеноты < ֆր. huguenots], գ. (պատմ.): Կալվինականներ Ֆրանսիայում XVI-XVIII դդ.: Պայքարել են կաթոլիկ եկեղեցու և բացարձակ միապետության դեմ:

ՀՈՒԼԻՍ [< июль < հուն. Julius mensis < Հուլիոս Կեսարի անունից], գ. Օրացուցային տարվա յոթերորդ ամիսը:

ՀՈՒՄԱՆԻԶՄ [< гуманизм < լատ. humanus մարդկային], գ. 1. Վերածնության դարաշրջանում ծագած շարժում, որ հռչակում էր մարդկային անհատականության ազատ զարգացման և ֆեոդալական ու կաթոլիկական կաշկանդումներից մարդու ազատագրման սկզբունքը: 2. Մարդասիրություն:

ՀՈՒՄԱՆԻՍՏ [< гуманист < հուն.], գ. 1. Հումանիզմի կողմնակից՝ հետևորդ: 2. Մարդասեր:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ [< гуманитарный < լատ. humanitas], ած. 1. Հասարակագիտական, հասարակությանը՝ հասարակական երևույթներին ու մշակույթին հատուկ՝ վերաբերող: 2. (հնց.): Հասարակագետ՝ հասարակագիտության մասնագետ:

ՀՈՒՄԱՆՈԻԴ [< гуманоид < լատ. humanus մարդկային + հուն. eidos տեսակ], գ. Մարդանման՝ մարդակերպ էակ:

ՀՈՒՄՈՐ [< юмор < անգլ. humour < լատ. humor խոնավություն], գ. 1. Երգիծանք: 2. Մեղմ ծաղր, զավեշտ:

ՀՈՒՄՈՐԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ [< гуморальное (< լատ. humor հեղուկ) урегулирование] - (կենսբ.): Կենսագործունեության գործընթացների կարգավորման մեխանիզմներից մեկը, որն իրականացվում է օրգանիզմի հեղուկ միջավայրի (արյուն, ավիշ, հյուսվածքային հեղուկ) միջոցով:

ՀՈՒՄՈՐԵՍԿ [< юмореск < անգլ. humour < լատ. humor խոնավություն], գ. (երժշտ.): Կատակային, երբեմն քնարական բնույթի երաժշտական պիես: Դաշնամուրային երաժշտության մեջ պիեսի այդ տիպը ստեղծել է Ռ. Շումանը:

ՀՈՒՄՈՐԻՍՏ [< юморист < անգլ. humour < լատ. humor խոնավություն], գ. ած. 1. Զավեշտաբան, զավեշտագիր: 2. *փխբ.* Կատակասեր, զավեշտասեր անձ:

ՀՈՒՄՈՐԻՍՏԻԿԱ [< юмористика < անգլ. humour < լատ. humor խոնավություն], գ. 1. Զավեշտաբանություն, զավեշտական երկերի ամբողջություն: 2. Զավեշտ, կատակ:

ՀՈՒՄՈՒՍ [< гумус < լատ. humus հող], գ. 1. (երկրբ.): Հողի օրգանական, սովորաբար մուգ գունավորված մասը. ձևավորվել է բուսական և կենդանական մնացորդների կենսաքիմիական փոփոխություններից: 2. Բարձր բերքատու հող:

ՀՈՒՍԱՐ [< гусар < հունգ. huszár], գ. (պատմ.) 1. Հունգարական զորքի հեծյալ զինվոր: 2. Ցարական Ռուսաստանի և մի քանի ուրիշ երկրների բանակներում՝ հունգարական ձևի տարազով թեթև հեծելազորի զինվորական:

ՀՈՒՔ [< хук < անգլ. hook, բառացի՝ կեռման, կեռ], գ. (սպորտ.): Բռնցքամարտում՝ կողային կարճ հարված:

Ձ

ՁԱՅԲԱՅՈՒ[< дзайбац < ճապ.],գ.(տնտսգ.):Ճապոնական ֆինանսատնտեսական խոշորագույն ընկերությունների միավորում:

ՁՅՈՒԴՈ [< дзюдо < ճապ. judo < jū ազնվական, նուրբ + do արվեստ], գ. (սպորտ.): Մարտասվեստի տարատեսակ:

Ղ

ՂԱԶԱՆ [< казан < թուրք., թաթարերեն kazan], գ. (խսկց. հնց.): Կաթսա:

ՂՈՒՐԱՆ [< коран < արաբ. al'koran < qur'an ընթերցում], գ. (կրոն.): Մահմեդականների սուրբ գիրքը:

Ճ

ՃԻԶՎԻՏ [< иезуит < ֆր. jesuite é < լատ. Jesus Հիսուս], գ. (կրոն.): Նույնն է՝ Եզվիտ:

Մ

ՄԱԳԻԱ [< магия < լատ. magia < հուն. mageia], գ. (խսկց.): Հրաշագործություն, կախարդանք, մոգություն:

ՄԱԳԻՍՏՐ(ՈՍ) [< магистр < լատ. magister ուսուցիչ], գ. 1.Գիտական աստիճան որոշ երկրներում և մինչհեղափոխական Ռուսաստանում: 2.Կրթական համակարգի երկրորդ աստիճան ունեցող անձ:

ՄԱԳԻՍՏՐԱԼ [< магистраль < լատ. magistralis գլխավոր, ուղենշող], գ. 1. (հնց.) Մայրուղի: 2. Հեռագրական՝ հեռախոսային ևն ցանցի գլխավոր հաղորդագիծ:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ [< магистратура < լատ. magistratus բարձր պաշտոնյա], գ. 1. (պատմ.): Բարձրագույն պետական պաշտոններ Հին Հռոմում: 2. (իվք.): Դատական պաշտոններ գրավող պաշտոնյաներ մի քանի երկրներում և մինչհեղափոխական Ռուսաստանում: 3. Կրթական համակարգի երկրորդ աստիճանը որոշ երկրներում:

ՄԱԳՄԱ [< магма < հուն. mágma թանձր քսուք, խմոր], գ. (երկրբ.): Երկրի ընդերքում գոյացող հրահեղուկ զանգված:

ՄԱԳՆԱՏ [< магнат < լատ. magnatus անվանի, նշանավոր մարդիկ], գ. 1. (պատմ.) Քաղաքական մեծ ազդեցություն ունեցող հարուստ Հին Հռոմում: 2. Խոշոր ֆեոդալ եվրոպական երկրներում (հատկապես՝ Լեհաստանում և Հունգարիայում): 3. Խոշոր արդյունաբերական և ֆինանսական կապիտալի տեր, տնօրինող:

ՄԱԳՆԵԶԻԱ [< магнезия < ուշ լատ. magnesia], գ. (քիմ.): Մագնեզիումի օքսիդ, սպիտակ փոշի, որ գործածվում է բժշկության մեջ:

ՄԱԳՆԵԶԻՏ [< магнезит < ուշ լատ.], գ. (հնք.): Մագնեզիումի ածխաթթվային աղը հանդիսացող սպիտակ կամ դեղին միներալ՝ հանք:

ՄԱԳՆԵԶԻՈՒՄ [< магнезиум < լատ.], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթագույն, սպիտակ, թեթև կռելի մետաղ, որ վառվելիս պայծառ, սպիտակ լույս է արձակում:

ՄԱԳՆԵՏԻԶՄ [< магнетизм < ֆր. magnétisme], գ. (ֆիզ.): 1. Մագնիսականություն, մագնիսական հատկություն: 2. Մագնիսական երևույթների մասին ուսմունք: 3. (հնց.): Հիպնոսականություն:

ՄԱԳՆԵՏԻՏ [< магнетит < լատ.], գ. (հնք.): Մագնիսական երկաթաքար, միներալ: Քիմիական բաղադրությունը Fe_2O_4 կամ Fe_3O_4: Երկաթի կարևոր հանքանյութ է:

ՄԱԳՆԵՏՈ [< магнето < անգլ. magneto], գ. (էլեկտր.): Փոփոխական հոսանքի մագնիսաէլեկտրական գեներատոր (սովորաբար ինդուկցիոն կոճի հետ համակցված), որը նախատեսված է բռնկիչ մոմի էլեկտրոդների միջև էլեկտրական պարպումներ առաջացնելու համար:

ՄԱԳՆԵՏՈՆ [< магнетон < անգլ. magneton], գ. (ֆիզ.): Ատոմային և միջուկային ֆիզիկայում մագնիսական մոմենտի չափման միավոր:

ՄԱԳՆԵՏՐՈՆ [< магнетрон < հուն. magnētis + էլեկտրոն], գ. (ռադ.) Էլեկտրոնային լամպ, որի մեջ էլեկտրոնների փոխազդեցությունը բարձր հաճախականության էլեկտրական դաշտի հետ տեղի է ունենում միմյանց խաչաձևող հաստատուն էլեկտրական և մագնիսական դաշտերում:

ՄԱԳՆԻՍ [< магнит < հուն. magnētis lithos, բառացի՝ Մագնեսիայի (հնագույն քաղաք Փոքր Ասիայում) քար], գ. (տեխ.): Մագնիսացվածությամբ օժտված, այսինքն՝ մագնիսական

դաշտ ստեղծող մարմին, որն ընդունակ է ձգելու երկաթը, նիկելը ևն:

ՄԱԳՆԻՍԱՍՏՐԻԿՑԻԱ [< магнитострикция < մագնիս + լատ. strictio սեղմում, ձգում], գ. (ֆիզ.): Մարմնի ձևի և չափերի փոփոխությունը մագնիսացման ժամանակ: Երևույթը հայտնաբերել է Ջ. Ջոուլը 1842 թ.:

ՄԱԳՆԻՍԱՔԻՄԻԱ, գ. (գիտ.): Ֆիզիկական քիմիայի բաժին, որն ուսումնասիրում է՝ 1. Նյութի կառուցվածքի և հատկությունների կապը: 2. Մագնիսական դաշտի ազդեցությունը քիմիական փոխարկումների վրա:

ՄԱԳՆԻՍԱՕՊՏԻԿԱ, գ. (գիտ.): Ֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է մագնիսական դաշտի ազդեցությունը միջավայրի օպտիկական հատկությունների վրա:

ՄԱԳՆԻՏՈՖՈՆ [< магнитофон < հուն. magnetis մագնիս + phōnē հնչյուն], գ. (տեխ. հնց.): Ձայնագրիչ՝ էլեկտրամագնիսական եղանակով ձայն գրանցող և վերարտադրող գործիք, ձայնագիր գործիք, ձայնարկիչ:

ՄԱԳՆԻՏՈՒԴԱ (ԵՐԿՐԱՇԱՐԺԻ) [< магнитуда (< լատ. magnitudo մեծություն < magnus մեծ)] - Պայմանական մեծություն, որը բնութագրում է երկրաշարժերի կամ պայթյունների հետևանքով առաջ եկող առաձգական տատանումների ընդհանուր էներգիան:

ՄԱԳՆԻՈՒՄ, գ. Նույնն է՝ Մագնեզիում:

ՄԱԳՆՈԼԻԱ [< магнолия < լատ. magnolia], գ. (բսբ.): Մագնոլիազգիների ընտանիքի մշտադալար կամ տերևաթափ ծառերի, հազվադեպ թփերի ցեղ, կղբի: Հայտնի է շուրջ 80 տեսակ, տարածված է Արևելյան և Հարավարևելյան Ասիայում, Ամերիկայում:

ՄԱԳՈ [< маго < ֆր. magot], գ. (կենդբ.): Անպոչ կապիկների մի տեսակը (մակակա):

ՄԱԴԱՄ [< мадам < ֆր. madame], գ. ած. (խսկց.): Ամուսնացած կնոջ անվանումը ֆրանսերեն, որ իբրև օտարաբանություն գործածվում է գրականության մեջ՝ զանազան ոճական նպատակներով, տիկին:

ՄԱԴԱՊՈԼԱՄ [< мадаполам < ֆր. madapolam], գ. (մնծգր.): Բամբակյա սպիտակ խիտ գործվածք, որ առավելապես գործածվում է սպիտակեղենի համար:

ՄԱԴԵՐԱ [< мадера < ֆր. madere < պորտ. medera Մադեյրա կղզու անունից], գ. (խոհր.): Խաղողից պատրաստված թունդ գինու մի տեսակ:

ՄԱԴՄՈՒԱԶԵԼ [< мадемуазель < ֆր. mademoiselle < ma demoiselle իմ օրիորդ], գ. ած. Ամուսնացած աղջկա անվանումը ֆրանսերեն, որ զանազան ոճական նպատակներով և օրիորդ նշանակությամբ գործածվում է գրականության մեջ:

ՄԱԴՈՆՆԱ [< мадонна < իտլ. madonna իմ տիկին], գ. 1. Կաթոլիկ եկեղեցում՝ տիրամայր: 2. Տիրամոր պատկերը (գեղանկարչական կամ քանդակագործական):

ՄԱԴՐԻԳԱԼ [< мадригал < ֆր. madrigal], գ. 1. (գրկն.): Սիրային կատակախառն բանաստեղծություն (սովորաբար կանանց ձոնված): 2. *փխբ.* Կեղծ գովեստ՝ մեծարանք:

ՄԱԵՍՏՐՈ [< маэстро < իտլ. maestro վարպետ, ուսուցիչ], գ. ած. 1. Վարպետ: 2. Նվագախմբի ղեկավար:

ՄԱԶԱՐ [< мазар < թուրք. mazar շիրիմ, գերեզման < արաբ.], գ. (հզվդ.): Մահմեդականների կողմից սուրբ համարվող վայր (սովորաբար՝ գերեզմանը՝ իր կառույցներով):

ՄԱԶԴԱԿԻԶՄ [< маздакизм < պարսկ. քուրմ Մազդակի անունից], գ. (պատմ.): V-VI դդ. Իրանում և մի շարք այլ երկրներում՝ կրոնափիլիսոփայական ուսմունք, որը քարոզում էր սոցիալական անհավասարության վերացում:

ՄԱԶԴԵԻԶՄ [< маздеизм < ֆր. mazdeisme < Ահուրամազդայի (զրադաշտակա-

նության գերագույն աստծու) անունից], գ. (կրոն.): Մազդեզականություն, մազդեզական կրոն, որը մոտ է զրադաշտական կրոնին:

ՄԱԶՈԽԻԶՄ [< мазохизм < ավստրիացի գրող Զախեր-Մազոխի անունից], գ. Ավստրիացի վիպասան Լ. Զախեր-Մազոխի կողմից նկարագրված սեռական ալյասերման՝ այլասերվածության տեսակ: Հեշտանքի զգացումը (օրգազմ) հիվանդի մոտ, որն առաջանում է սեռական զուգակցի կողմից տանջանքների և ստորացման ենթարկվելու միջոցով:

ՄԱԶՈՒԹ [< мазут < թուրք.], գ. (արտ.): Այն յուղային մնացորդները, որ ստացվում են նավթից կերոսինը, բենզինը թորելուց հետո:

ՄԱԶՈՒԹԱԽԱՌՆ, ած. Մազութի հետ խառն:

ՄԱԶՈՒՐԿԱ [< мазурка < լեհ. mazurek], գ. 1. Լեհական ազգային պարի տեսակ: 2. (երժշտ.): Այդ պարի տակտով գրված երաժշտություն:

ՄԱԹԵՄԱՏԻԿ [< математик < հուն.],գ. Տե՛ս Մաթեմատիկոս:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ [< математика < հուն. mathēmatikē < mathēma իմացություն, գիտություն], գ. (գիտ.): Ամբողջությունն այն գիտությունների, որոնք ուսումնասիրում են իրական աշխարհի քանակական հարաբերություններն ու տարածական ձևերը:

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ [< математик < հուն. mathēmatikōs], գ. Մաթեմատիկայի մասնագետ:

ՄԱԺՈՐ [< мажор < ֆր. majeur < իտլ. maggiore ավելի մեծ < լատ. major], գ. ած. (երժշտ.): Երաժշտական գամմա, որի մեջ երրորդից չորրորդ և յոթերորդից ութերորդ աստիճանները կիսաձայն են, մյուսները՝ մեկ ձայն:

ՄԱԺՈՐԻՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳ [< мажоритарная (< ֆր. majoritaire < majorité մեծամասնություն < լատ. major ավելի մեծ) система] - (իրավ.): Ընտրությունների համակարգ մի շարք երկրներում, որի ժամանակ հաշվի են առնված տվյալ տեղամասում մեծամասնություն ստացած կուսակցությունների թեկնածուներին տրված ձայները միայն:

ՄԱԼԱԳԱ [< малага < իսպ. málaga < Իսպանիայի Մալագա (Malaga) նահանգի անունից], գ. Քաղցր գինու մի տեսակ:

ՄԱԼԱԽԻՏ, ՄԱԼԱՔԻՏ [< малахит < հուն. malachitēs < malachē մոլոշաքար], գ. 1. (հնք.): Դահանակ՝ մուգ կանաչ գույնի հանքաքար, որից պղինձ է ստացվում: 2. Այդ հանքից պատրաստված թանկագին քար:

ՄԱԼԱԿԱՆ, գ. (խսկց.): Տե՛ս Մոլոկան:

ՄԱԼԱՐԻԱ [< малария < ֆր. malaria < իտլ. malaria վատ օդ], գ. (բժշկ.): Ժանտատենդ, ճահճատենդ:

ՄԱԼԹՈԶ [< мальтоза < անգլ. malt ածխիկ], գ. (քիմ.): Ածիկաշաքար՝ $C_{12}H_{22}O_{11}$, բնական երկշաքար, որի մոլեկուլը կազմված է խաղողաշաքարի մոլեկուլի մնացորդներից:

ՄԱԼԹՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< мальтузианство < անգլիացի տնտեսագետ, քահանա Թ. Ռ. Մալթուսի (1766-1834թթ.) անունից], գ. (ազգգր.): Ազգաբնակչության մասին տեսություն, ըստ որի՝ հասարակության դրությունը որոշվում է ոչ թե սոցիալական պայմաններով, այլ բնության «մշտնջենական» օրենքներով (իբր՝ գոյամիջոցների աճը հետ է մնում ազգաբնակչության աճից): Այդ ավելորդ բնակչությունը անհրաժեշտ է վերացնել սովի, պատերազմների, համաճարակների միջոցով:

ՄԱԼՅԱՐ [< рուս., ուկր. маляр < հին վերին գերմ. mâlaxa նկարիչ], գ. ած. (խսկց.): Ներկարար:

ՄԱԽԻԶՄ [< махизм < ավստրիացի փիլիսոփա Է. Մախի (Mach) անունից], գ. (փիլ.): Տե՛ս Էմպիրիոկրիտիցիզմ:

ՄԱԽԻՆԱ [< махина < լեհ. machina < լատ. machina մեքենա], գ. (խսկց. հնց.): Չափազանց մեծ՝ հսկա իր:

ՄԱԽԻՆԱՑԻԱ [< махинация < լատ. machinatio խորամանկություն], գ. (խսկց.): Մեքենայություն, նենգություն, նենգ՝ խարդախ արարք:

ՄԱԽՈՐԿԱ [< ռուս. махорка], գ. 1. (բսբ.): Ծխախոտաբույսի մի տեսակը: 2. Այդ բույսի ցողունից ու տերևներից մանրացնելով պատրաստվելիք ծխելիք, ցածրորակ ծխախոտ:

ՄԱԿԱԿԱ [< макаки < լատ. macaca], գ. (կենդբ.): Անպոչ կապիկների մի տեսակ, որը տարածված է Աֆրիկայում, Հարավային Ասիայում, Հարավարևմտյան Եվրոպայում:

ՄԱԿԱՈ [< макао < պորտ. Macao < չինական գաղութի անունից], գ. 1. (թղթխդ.): Թղթախաղի տեսակ: 2. (կենդբ.): Թութակի ցեղ և այդ ցեղի թութակ:

ՄԱԿԱՐՈՆ [< макароны < իտլ. maccherone նախնական՝ պանրով կարկանդակ < հուն. mataria ապուր գարու ալյուրից], գ. (խոհր.): 1. Անալի խմորից բարակ ու երկար խողովակների ձևով չորացրած սննդամթերք: 2. Այդ սննդամթերքից պատրաստված կերակուր:

ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆ, գ. (հվք.): Մակարոնի և մակարոնանման սննդամթերքների ընդհանուր անվանումը:

ՄԱԿԱՐՈՆԻԶՄ [< ֆր. macaronisme < իտլ. maccherone կատակախոս, զվարճախոս անձ], գ. (լեզվբ.): Մեքենաբար կատարվող բառափոխառություն, երբ պահպանվում է փոխատու լեզվի ձևը:

ՄԱԿԵՏ [< макет < ֆր. maquette < լատ. maculo բիծ, պուտ], գ. (ճարտ.): Կառույցի՝ շինվածքի՝ առարկայի փոքրացրած նմուշ, նախանմուշ, մանրակերտ:

ՄԱԿԻՅԱԺ [< макияж < ֆր. maquillage], գ. (խսկց.): 1. Կոսմետիկական միջոցներով դեմքի շպարում, դիմահարդարում: 2. Շպարման գործընթացը:

ՄԱԿԻՆՏ(Թ)ՈՇ [< макинтош < անգլ. makintosh շոտլանդացի քիմիկոս Չ. Մակինտ(թ)ոշի անվամբ], գ. Անջրանցիկ վերարկու:

ՄԱԿԼԵՐ [< маклер < գերմ. Makler], գ. 1. Առևտրական ու բորսայական գործարքների միջնորդ: 2. (խսկց.): Բանսարկու, խոսք տանող-բերող:

ՄԱԿՐԱՄԵ [< макраме < ֆր. macramé], գ. 1. Ձեռագործ դեկորատիվ աշխատանք՝ հիմնականում հյուսված քուղերով: 2. Այդպիսի աշխատանքի տեխնիկան:

ՄԱԿՐՈ... [< макро... < հուն. makros երկար, մեծ] Բարդությունների սկզբնաբաղադրիչ, որ ցույց է տալիս որևէ բանի խոշոր չափերը (ի հակադրություն միկրո... նախածանցի):

ՄԱԿՐՈԿԼԻՄԱ [< макроклимат < մակրո... + հուն. klima], գ. (երկրբ.): Մեծակլիմա, մեծատարածությունների կլիմա:

ՄԱԿՐՈԿՈՍՄՈՍ [< макрокосмос < մակրո... + հուն. kōsmos երկիր], գ. (գիտ.): Տիեզերք:

ՄԱԿՐՈՌԵԼԻԵՖ [< макрорельеф < մակրո... + ֆր. relief < իտլ. rilievo], գ. (երկրբ.): Ցամաքի, օվկիանոսների, ծովերի հատակի ռելիեֆի խոշոր ձևեր, բարձրությունների մի քանի հարյուր մ-ից մինչև մի քանի հազար մետր տատանումներով (լեռնաշղթաներ, դաշտավայրեր են):

ՄԱԿՐՈՍԿՈՊԻԿ [< макроскопический < մակրո... + հուն. skopeō նայում եմ, զննում եմ, դիտում եմ], ած. Անզեն աչքով տեսանելի, մեծադիտական:

ՄԱԿՐՈՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ [< макроструктура < մակրո... + լատ. structura կառուցվածք], գ. (մանգ.): Պինդ նյութերի այնպիսի կառուցվածք, որ բացահայտվում է անզեն աչքով դիտելիս:

ՄԱԿՐՈՖԱԳԵՐ [< макрофаги < մակրո... + հուն. phagos խժռող, լափող], գ. (կզմխս.): Կենդանական օրգանիզմի բջիջներ, որոնք ընդունակ են ակտիվորեն բռնել ու մարսել բակտերիաները, մահացած բջիջների մնացորդները և օրգանիզմի համար թունավոր ու օտար այլ մասնիկներ:

ՄԱԿՐՈՖԱՈՒՆԱ [< макрофауна < մակրո... + լատ. Fauna], գ. (երկրբ.): Երկրաբանության մեջ կենդանական աշխարհի այն բրածո մնացորդների ամբողջությունը, որոնց համակարգային պատկանելությունը որոշելու համար չի պահանջվում օգտագործել օպտիկական միջոցներ:

ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱ [< макулатура < գերմ. Makulatur < լատ. maculare կեղտոտել, աղտոտել], գ. 1. Փչացած՝ տպագրության համար անպետք թուղթ, որ օգտագործվում է իբրև փաթեթաթուղթ կամ վերամշակվում թղթի գործարանում: 2. *փխբ.* Անպետք, արժեք չունեցող գրական երկ՝ աշխատանք:

ՄԱՀԱԹՄԱ [< махатма < սանսկրիտ mahatma, բառացի՝ մեծ ոգի], գ. 1. (կրոն.): Հինդուիզմում համաշխարհային ոգու անվանումներից մեկը: 2. (քղք.): Ժամանակակից Հնդկաստանում՝ հարգական տիտղոս, որը կցվում է՝ ավելացվում է առավել հարգված հասարակական գործիչների անվանը:

ՄԱՀԱՌԱՆԻ [< магарани < սանսկրիտ], գ. Մահառաջայի կին:

ՄԱՀԱՌԱՋԱ [< магараджа, махараджа < սանսկրիտ mahārājā, բառացի՝ մեծ կառավարիչ՝ իշխան], գ. (պատմ): Հնդկաստանում միջին դարերում անկախ իշխանությունների կառավարիչների տիտղոս, որը պահպանվել է նոր և նորագույն շրջանում: 1956 թ. այս և այլ տիտղոսը կրող իշխանները զրկվել են քաղաքական իշխանությունից:

ՄԱՄԲՈ [< мамбо < իսպ. mambo < ամերիկյան հնդկացիների լեզվից mambo կախարդուհի], գ. (արվ.): Լատինաամերիկյան զուգապար:

ՄԱՄԼՈՒՔՆԵՐ [< мамлюки, мамелюки < արաբ. mamlûk ստրուկ], գ. (պատմ.): Վաղ հասակում գերված կամ գնված, մահմեդականացված և ռազմական գործին վարժեցված սպիտակամորթ ստրուկներ: Եգիպտոսի Էյուբյանները XIII դ. սկզբին մամլուքներից ստեղծեցին հատուկ զինվորական ընտրանի:

ՄԱՄՄՈԳՐԱՖԻԱ [< маммография < լատ. mamma կաթնագեղձ + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Կրծքագեղձի ռենտգենյան հետազոտության մեթոդ (առանց կոնտրաստային նյութերի կիրառման):

ՄԱՄՈՆԱ [< мамон // мамона < հուն. mammōnas հարստություն], գ. 1. (կրոն.): Հարստության աստվածը մի քանի ժողովուրդների մոտ: 2. *փխբ.* Հարստություն, փող: 3. *փխբ.* Ագահություն, շահասիրություն:

ՄԱՄՈՆԱՊԱՇՏ, ած. գ. (հնց.): Փողապաշտ, ագահ:

ՄԱՄՈՆՏ [< мамонт < լատ. Mammuthus, հնարավոր է՝ էստ. maa հող + mutt խլուրդ], գ. (հնէաբ.): Արտաքին տեսքով փղի նմանություն ունեցող երկարամազ ու կորաձև ժանիքներով կենդանի, որ ապրել է սառցային դարաշրջանում:

ՄԱՅԻՍ [< май < լատ. maius < Maja դիցուհու անունից], գ. Օրացուցային տարվա հինգերորդ ամիսը:

ՄԱՅԿԱ [< ռուս. майка < հավանաբար՝ май-ից], գ. (խսկց.): Տրիկոտաժե անթև շապիկ:

ՄԱՅՆԱ [< майна < իտլ. maina հավաքի՛ր, բա՛ց թող], ձայն. (խսկց.):

Շինարարների բացականչություն՝ բա՛ց թող, իջեցրո՛ւ, ներքև՛:

ՄԱՅՈԼԻԿԱ [< майолика < իտլ. maiolica < Majolica կղզու հին անվանումից, որի վրայով Իտալիա էր բերվում իսպանամավրիտանական խեցեղեն], գ. (պատմ.): 1. XV-XVII դդ. գունավոր ծակոտկեն մակերեսով և հում, անթափանցիկ կապարե ջնարակի վրա կատարված, ուղղումներ չվերցնող, այուժետային զարդանկարով իտալական խեցեղեն իրեր: 2. Գունավոր թրծված կավե իրեր, ջնարակապուտ, խոշոր ծակոտկեն մակերեսով: Տարածված էր Հին Արևելքի երկրներում՝ Եգիպտոս, Բաբելոն, Իրան, Հայաստան:

ՄԱՅՈՆԵԶ [< майонез < ֆր. mayonnaise < Պորտ-Մահոն (Port-Mahon) քաղաքի անունից, որը գրավվել է ֆրանսիացիների կողմից 1756 թ.], գ. (խոհ.): 1. Բուսական յուղից, ձվի դեղնուցից, քացախից, մանանեխից ու զանազան համեմունքներից պատրաստվող սոուս: 2. Ձկան, թռչնի մսի կամ բանջարեղենի սառեցրած կերակուր՝ վրան այդպիսի սոուս լցրած:

ՄԱՅՈՐ [< майор < լատ. major մեծ, ավագ], գ. (ռազմ.): Բանակի սպայական կոչում, որ հաջորդում է կապիտանի կոչմանը, ինչպես նաև այդ կոչումն ունեցող անձը:

ՄԱՅՈՐԱՏ [< майорат < լատ majoratus < major], գ. (պատմ.): Ավագության իրավունք, ըստ որի՝ ընտանիքի անշարժ գույքի ժառանգման իրավունքը արտոնվում է ավագ որդուն:

ՄԱՅՈՐԴՈՄ [< майордом < ուշ լատ. major domus տան ավագ], գ. (պատմ.): Վաղ միջնադարում արքունիքի կառավարիչ Գերմանիայում, Ֆրանսիայում և Իսպանիայում:

ՄԱՅՍՏԵՐԶԻՆԳԵՐ [< мейстерзингер < գերմ. Meinstersinger, բառացի՝ վարպետ երգիչ], գ. (պատմ.): Միջնադարյան գերմանական գուսանական պոեզիայի ներկայացուցիչ:

ՄԱՅՈՒՍԿՈՒԼԱ [< маюскула < լատ. majuscula մի քիչ մեծ], գ. (մանգ.): Մեծատառ (լատինական և հունական հին ձեռագրերում):

...ՄԱՆ [< ... ман < հուն. mania կիրք] Բարդ բառերի վերջին բաղադրիչ «մոլ» իմաստով:

ՄԱՆԳԱՆ [< манган < լատ. manganum], գ. (քիմ.): Mn, տարրերի պարբերական համակարգի IV պարբերության, VII խմբի քիմիական տարր: Մանգանի միացություններն օգտագործվում են ապակու, ներկարարական, տպագրական արդյունաբերություններում, գյուղատնտեսության և բժշկության մեջ:

ՄԱՆԳԱՆԻՆ [< манганин < գերմ. Mangan], գ. (հնք.): Պղնձի համաձուլվածքը 11-13,5% մանգանի և 2.5-3.5% նիկելի հետ: Ունի բարձր էլեկտրական դիմադրություն:

ՄԱՆԳԱՆԻՏ [< манганит < գերմ.], գ. (հնք.): Միներալ. խառնուրդների ձևով պարունակում է SiO_2, Fe_2O_3 ևն: Մանգանի կարևոր հանքանյութ է:

ՄԱՆԳՈ [< манго < ֆր. mango < մալայերեն Mangā], գ. 1. (բսբ.): Արևադարձային պտղատու ծառ: 2. Այդ ծառի դեղնականաչավուն պտուղը:

ՄԱՆԳՈՒՍՏՆԵՐ [< мангуста < ֆր. mangouste < հնդկ.], գ. (կենդբ.): Վիվերների ընտանիքի գիշատիչ կաթնասունների սեռ: Հայտնի է 17 տեսակ, որից 6-ը տարածված է Աֆրիկայում, 10-ը՝ Հարավային Ասիայում, 1-ը՝ Եվրոպայում: Որոշ տեսակներ օգտակար են, ոչնչացնում են թունավոր օձերին:

ՄԱՆԴԱՏ [< мандат < լատ. mandatum հանձնարարություն], գ. 1. (քղք.): Հանձնագիր: 2. Հանձնարարագիր: 3. Կառավարման իրավունք գաղութների կամ այլ կարգի նվաճված երկրների նկատմամբ: 4. (իրավք.): Հանձնարարություն: 5. Ներ-

կայացնողի այս կամ այն կարգի իրավունքները հաստատող փաստաթուղթ:

ՄԱՆԴԱՐԻՆ I [< мандарин < ֆր. mandarine < իսպ. naranja mandarina], գ. 1. (բսբ.): Հարավային մշտականաչ պտղատու ցիտրուսային ծառ: 2. Այդ ծառի քաղցր, անուշահոտ, նրբաթաղանթ պտուղը:

ՄԱՆԴԱՐԻՆ II [< мандарин < պորտ. mandarin < սանսկրիտ mantrin խորհրդատու], գ. (պատմ.): Հին ֆեոդալական Չինաստանում՝ պետական աստիճանավորների՝ բարձրաստիճան պաշտոնյաների եվրոպական անվանումը:

ՄԱՆԴՈԼԻՆ(Ա) [< мандолина < իտալ. mandolino], գ. (երժշտ.): Լարավոր կսմիթային երաժշտական գործիք՝ ուռուցիկ, ձվաձև իրանով և չորս զույգ լարերով:

ՄԱՆԵԺ [< манеж < ֆր. manège], գ. 1. Ձիամարզարան: 2. Կրկեսի հրապարակ՝ ասպարեզ:

ՄԱՆԵԿԵՆ [< манекен < ֆր. mannequin < ֆլամանդերեն menekin մարդ], գ. 1. Մարդապատկեր՝ զգեստներ ցուցադրելու կամ չափս փորձելու համար: 2. Տիկնիկամարդ (նկարիչների համար): 3. *փխբ.* Խրտվիլակ, կամազուրկ մարդ:

ՄԱՆԵՎՐ [< манёвр < ֆր. manœuvres], գ. 1. (ռազմ.): Զորավարժություն: 2. Զորաշարք: 3. Նավի կամ սավառնակի ընթացքի փոփոխություն: 4. (երկթղ.): Երկաթուղային կայարաններում շոգեքարշի ետ ու առաջ շարժումը՝ վագոններն իրար կցելու՝ կառաշարք կազմելու նպատակով: 5. *փխբ.* Գործելու՝ գործելակերպի հնարք՝ եղանակ:

ՄԱՆԵՎՐՈՒՆԱԿ, ած. Մանևրելու ընդունակ, հեշտությամբ տեղաշարժերի ենթարկվելու՝ ընթացքի ուղղությունը փոխելու հատկություն ունեցող:

ՄԱՆԺԵՏ [< манжета < ֆր. manchette < manche թևք, թեզանիք], (խսկց.): գ. 1. Բազկապատ, թեզանիք, թևքածալ, թեզներերան: 2. (տեխ.): Մխոցավոր պոմպերի կաշվե օղակաձև հարմարանք, թեզանօղ:

ՄԱՆԻԱ [< мания < հուն. mania խելագարություն, կիրք], գ. 1. (բժշկ.): Մոլագարություն, ցնորամտություն, մտամոլություն: 2. *փխբ.* Մոլություն, մոլուցք:

ՄԱՆԻԱԿ [< маньяк < ֆր. maniaque հուն.], գ. ած. (խսկց.): 1. Մոլագար,մտագար՝ մոլագարությամբ հիվանդ՝ տառապող մարդ: 2. Որևէ մոլուցքի անձնատուր եղած մարդ: 3. Անզուսպ, մոլեգին, կատաղի:

ՄԱՆԻԵՐԱ [< манера < ֆր. manière], գ. 1. (հնց.): Շարժուձև: 2. Վարվելակերպ: 3. Ոճ, եղանակ (գրելու, նկարելու ևն):

ՄԱՆԻԵՐԻԶՄ [< маниеризм < իտալ. manierismo < maniera ոճ, եղանակ], գ. (արվ. պատմ.): Ուղղություն XVI դարի եվրոպական արվեստում, որն արտացոլում է Բարձր Վերածննդի հումանիստական մշակույթի ճգնաժամը:

ՄԱՆԻՆԻԼ [< манинил < լատ.], գ. (դղգրծ.): Հակաշաքարախտային սուլֆանիլմիզանյութի ածանցյալ, դեղանյութ:

ՄԱՆԻԿՅՈՒՐ [< маникюр < ֆր. manicure < լատ. manus ձեռք + curare հոգալ], գ. (խսկց.): Մատնահարդարում, ձեռքերի եղունգների մաքրում, ներկում ու հարդարում:

ՄԱՆԻՊՈՒԼ(Ա) [< манипула < լատ. manipulus, բառացի՝ բուռ, ափ], գ. (պատմ.): Լեգեոնի մեկ երեսուներորդ մասը՝ երկու ցենտուրիաներից (հարյուրյակ) բաղկացած (Հին Հռոմում):

ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏՈՐ [< манипулятор < ֆր. manipulateur], գ. 1. (տեխ.): Հեռագրական բանալի կամ ավելի բարդ հարմարանք՝ հեռագրային ազդանշանները հաղորդելու համար: 2. Բարդ արտադրական և ստուգիչ գործընթացը կարգավորող սարք: 3. Ձեռնածու:

ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ [< манипуляция < ֆր. manipulation], գ. 1. Բարդ գործողություններ կատարելու ձեռքի շարժումներ: 2. Ձեռնածություն: 3. *փխբ.* հոգն. Մեքենայություններ, աճպարարություններ: 4. (բանկ.): Նենգափոխում, կեղծում՝ արժեթղթի առք ու վաճառք, որը նպատակ ունի ակտիվ առևտրի կեղծ պատկեր ստեղծել՝ ազդելով այլ ներդրողների կողմից բաժնետոմսերի սակարկությունների վրա:

ՄԱՆԻՖԵՍՏ [< манифест < լատ. manifestare ակներև դարձնել, ցույց տալ], գ. 1. (քղք.): Գերագույն իշխանության գրավոր դիմումը բնակչությանը՝ որևէ արտակարգ կարևորություն ունեցող իրադարձության առթիվ: 2. Որևէ գրական, գիտական կամ քաղաքական խմբի՝ հոսանքի սկզբունքների գրավոր շարադրանք, գրական՝ գիտական՝ քաղաքական ծրագրային դրույթների շարադրանք, հռչակագիր: 3. (պատմ.): Հրովարտակ:

ՄԱՆՂԱԼ [< мангал < թուրք. mangal բով, բովարան], գ. (խսկց.): Ոտքերով բովարան՝ խորոված պատրաստելու համար:

ՄԱՆՈՄԵՏՐ [< манометр < հուն. manōs նոսր + metreō չափում եմ], գ. (տեխ. ֆիզ.): Ճնշաչափ:

ՄԱՆՍԱՐԴ [< мансарда < ֆր. mansarde], գ. (ճարտ.): Սենյակ (հիմնականում՝ բնակելի) շենքի ձեղնահարկում, որի տանիքի լանջերը երկթեք են:

ՄԱՆՏԻԿԱ [< мантика < հուն. mantika < mantis գուշակ, մարգարե], գ. (հզվդ.): Գուշակության արվեստը, մարգարեություն:

ՄԱՆՏԻՍ [< мантисса < լատ. mantissa հավելում, ավելացած մաս], գ. (մաթ.): Տասական լոգարիթմի կոտորակային մասը:

ՄԱՆՏՈ [< манто < ֆր. manteau < լատ. mantellum < mantus ծածկոց], գ. Կանացի լայն վերարկու (սովորաբար մորթեղենից):

ՄԱՆՑԻՊԱՑԻԱ [< манципатия < լատ. mancipatio], գ. (պատմ.): Հին հռոմեական իրավունքում՝ սեփականության իրավունքի հանդիսավոր փոխանցումը:

ՄԱՆՈՒԱԼ [< мануальный < լատ. manualis], ած. Ձեռքի, ձեռքին հատուկ՝ վերաբերող, ձեռքով կատարվող, օր.՝ մանուալ թերապիա:

ՄԱՆՈՒՍԿՐԻՊՏ [< манускрипт < լատ. manuscriptum ձեռքով գրված], գ. Ձեռագիր, հատկապես հին, հին ժամանակներում կատարված:

ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱ [< мануфактура < լատ. manufactura < manus ձեռք + facere անել], գ. 1. Խոշոր մեքենական արդյունաբերությանը նախորդած կապիտալիստական արտադրության ձև: 2. (հնց.): Մանածագործական արտադրություն: 3. Գործվածքեղեն:

ՄԱՈԻԶՄ [< маоизм < չինական հեղափոխության առաջնորդ Մաո Զեդունի անունից], գ. (քղք.): Չինական պետական գաղափարախոսությունը Մաո Զեդունի կառավարման տարիներին:

ՄԱՉԵՏԵ [< мачете < իսպ. machete], գ. (հզվդ.): Շաքարեղեգն հատելու՝ կտրելու մեծ դանակ:

ՄԱՉՈ[< мачо < իսպ. macho], գ. (խսկց.):Գեղեցիկ արտաքինով, սրտակեր տղամարդ:

ՄԱՌԼՅԱ [< марля < ֆր. marli], գ. Շղարշ՝ թափանցիկ ցանցկեն նուրբ գործվածք, որ մեծ մասամբ իբրև վիրակապ է գործածվում, թանզիֆ:

ՄԱՍԱԺ [< массаж < ֆր. massage], գ. (խսկց.): Մերսում:

ՄԱՍԱԺԻՍՏ [< массажист < ֆր.], գ. Մասաժ՝ մերսում՝ անող մարդ, մերսող:

ՄԱՍԿԱ [< маска < ֆր. masque], գ. (խսկց.): Դիմակ:

ՄԱՍԿԱՐԱԴ [< маскарад < ֆր. mascarade < իտլ. mascherata], գ. (հնց.): 1. Դիմակահանդես: 2. Զգեստափոխություն: 3. *փխբ.* Դիմակախաղ, կեղծ ձևացում:

ՄԱՍԿՈՒԼԻՆԻԶԱՑԻԱ [< маскулинизация < լատ. masculinus արական], գ. (կենսբ.): Արականացում՝ էգ կենդանիների կամ կանանց օրգանիզմում արական սեռին հատուկ հատկանիշների առաջացումը:

ՄԱՍՇՏԱԲ [< масштаб < գերմ. Maßstab < Maß չափ + Stab փայտիկ, գավազան], գ. 1. (քրտզգր.): Գծագրի՝ քարտեզի ևն վրայի գծի հարաբերությունը գծի իրական երկարությանը: 2. *փխբ.* Որևէ բանի հարաբերական մեծությունը, չափանիշ, չափ, աստիճան, ընդգրկում:

ՄԱՍՈՆ [< масоны < ֆր. (franc) maçons (ազատ) քարտաշ], գ. Ֆրանկմասոն՝ ֆարմասոն՝ 1. Ֆարմասոնության հետևորդ՝ կողմնակից, ֆարմասոնական կուսակցության անդամ: 2. *փխբ.* Նորելուկ ու տարօրինակ գաղափարներով ու բարքերով ընդհանուրի համար խորթացած մարդ:

ՄԱՍՍԱ [< масса < լատ. massa գունդ, կտոր, զանգված], գ. 1. (ֆիզ.): Զանգված: 2. Խյուս, զանգված: 3. Հոծ բազմություն, հոծություն, շատություն, մեծ քանակություն: 4. Ամբողջություն, կույտ:

ՄԱՍՍԻՎ [< массив < ֆր. massif ծանրամարմին < լատ. massa գունդ, կտոր, զանգված], գ. (խսկց.): 1. Զանգվածակույտ, լեռնազանգված, լեռնակույտ: 2. Որևէ կարգի աշխարհագրական հատկանիշով մեկ ընդհանրություն կազմող ընդարձակ տարածություն: 3. *փխբ.* Ճարտարապետական ընդհանուր միասնությամբ բնութագրվող բնակելի տարածություն՝ թաղ՝ թաղամաս:

ՄԱՍՍ ՄԵԴԻԱ [< масс медиа < անգլ. mass media], (լրգ.): Զանգվածային լրատվամիջոց:

ՄԱՍՍՈՎԻԿ [< массовик < լատ. massa], գ.: 1. Մասսայական միջոցառումներ (խաղեր, զվարճություններ) կազմակերպող՝ անցկացնող: 2. (պատմ.): Ժողովրդական զանգվածների մեջ աշխատող, մասսայական ագիտատոր՝ քարոզիչ:

ՄԱՍՏԵՐ ԿԼԱՍ [< мастер-класс < անգլ. master-class ասպիրանտուրա (կոնսերվատորիան ավարտելուց հետո)], գ. (խսկց.): Արվեստի, սպորտի տվյալ ճյուղի՝ մարզի հանրաճանաչ, հեղինակավոր մասնագետի անցկացրած պարապմունքները երաժիշտների, պարողների, մարզիկների նևի հետ:

ՄԱՍՏԻԿԱ [< мастика < հուն. mastika < mastichē ձյուք], գ. Հատակին քսելու և փայլեցնելու թանձր զանգված, մոմածեփ:

ՄԱՍՏԻԿԱՊԱՏ, ած. Մաստիկայով՝ մաստիկայի բարակ շերտով պատված:

ՄԱՍՏԻՏ [< мастит < հուն. mastos կուրծք], գ. (բժշկ.): Ստինքաբորբ՝ կրծքագեղձի բորբոքում:

ՄԱՍՏՈԴՈՆՏ [< мастодонт < հուն. mastos կուրծք + odus ատամ], գ. (հնէաբ.): Փղանման վիթխարի կենդանի՝ դեպի ներքև ուղղված ժանիքներով (ապրել է երրորդական շրջանում):

ՄԱՍՏՈՊԱՏ(Թ)ԻԱ [< мастопатия < գերմ. Mastopathie < հուն. mastos կուրծք + pathos հիվանդություն], գ. (բժշկ.): Կրծքագեղձի հիվանդությունների խումբ:

ՄԱՍՏՈՒՐԲԱՑԻԱ [< мастурбация < ֆր. masturbation < նոր լատ. masturbation < լատ. manus ձեռք + sturpare պղծել, փչացնել], գ. (բժշկ.): Ձեռնաշարժություն, տե՛ս օնանիզմ:

ՄԱՎԶՈԼԵՅ [< мавзолей < գերմ. Mausoleum, ֆր. mausolée < լատ. mausoleum < հուն. Mausoleion Կարիայի թագավոր Մավզոլի (մ. թ. ա. IV դ.) դամբարանի անունից], գ. (խսկց.): Դամբարան:

ՄԱՎՐԵՐ [< мавры < հուն. mauros մուգ, սև], գ. (պատմ.): Մավրիտանիայի հիմնական բնակչությանը հնում հռոմեացիների տված անվանումը, հետագայում նաև անունը տարածվեց երկիրը գրաված արաբների վրա:

ՄԱՏ [< мат < պարսկ. mât մեռավ], գ. (սպորտ.): 1. Շախմատային խաղի ժամանակ՝ թագավորի անելանելի դրություն, երբ հակառակորդը ստիպված հանձնվում է: 2. Մարմնամարզության մեջ՝ ներքնակ:

ՄԱՏԱԴՈՐ [< матадор < իսպ. matador < matar սպանել], գ. Ցլամարտիկ՝ ցլամարտի գլխավոր մարտիկը, որ սուսերով մահացու հարված է հասցնում ցլին:

ՄԱՏԵՐԻԱ [< материя < լատ. materia], գ. 1. (փիլ.): Օբյեկտիվ իրողություն, որ գոյություն ունի մարդկային գիտակցությունից դուրս և նրանից անկախ: 2. Ֆիզիկական մարմնի բաղկացուցիչ տարր, նյութ:

ՄԱՏԵՐԻԱԼ [< материал < լատ. materialis իրական, իրային, առարկայական], գ. (խսկց.): 1. Նյութ, որից շինվում է որևէ բան: 2. *փխբ.* Ինչը որ իբրև հիմք կամ աղբյուր է ծառայում որևէ բան ստեղծագործելու համար: 3. *փխբ.* (խսկց.): Ամբաստանագիր, զրպարտագիր, բամբասագիր:

ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ [< материализм < ֆր. matérialisme < լատ. materialis իրային, առարկայական], գ. 1. (փիլ.): Փիլիսոփայական ուսմունք, որ, հակառակ իդեալիզմի, ընդունում է մատերիայի առաջնությունը հոգու՝ գիտակցության՝ մտածողության հանդեպ, օբյեկտիվ իրականությունը գիտակցությունից անկախ, աշխարհի և նրա օրինաչափությունների ճանաչելիությունը: 2. *փխբ.* Նյութապաշտություն:

ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏ [< материалист < լատ.], ած. գ. 1. Մատերիալիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. Նյութապաշտ՝ նյութամոլ:

ՄԱՏՉ [< матч < անգլ. match], գ. (խսկց): Մրցամարտ:

ՄԱՏՉԲՈԼ [< матчбол < անգլ. match-ball < match մրցամարտ + ball գնդակ], գ. (սպորտ.): Թենիսում և մի շարք այլ սպորտային խաղերում՝ խաղի վերջին մրցափուլում խաղարկվող միավորը (դրանից հետո խաղն ավարտվում է):

ՄԱՏՉ ՌԵՎԱՆՇ [< матч-реванш < անգլ. match + ֆր. revanche], գ. (սպորտ.): Երկու թիմերի, մարզիկների մրցամարտ, որում մի կողմը նպատակադրվում է ռևանշ վերցնել նախորդ մրցության ժամանակ կրած պարտության համար:

ՄԱՏՉ ՏՈՒՐՆԻՐ [< матч-турнир < անգլ. match + ֆր. tournoi, գերմ. Turnier], գ. (սպորտ.): Շախմատում, շաշկիում և մի շարք այլ սպորտաձևերում՝ մրցամարտ, երբ բոլոր մասնակիցները միմյանց հետ մրցում են մեկից ավելի անգամ:

ՄԱՏՉՓՈՅՆԹ [< матчпойнт < անգլ. match-point < match մրցամարտ + point միավոր], գ. (սպորտ.): Տե՛ս Մատչբոլ:

ՄԱՏՐԱՍ [< матрас // матрац < գերմ. Matratze], գ. (խսկց.): 1. Հաստ ու փափուկ ներքնակ: 2. Մահճակալի կամ բազմոցի զսպանակավոր դնովի մասը, որի վրա նստում են կամ պառկում:

ՄԱՏՐԻԱՐԽԱՏ [< матриархат < լատ. mater (matris) մայր + հուն. archē իշխանություն], գ. (պատմ.): Մայրիշխանություն՝ նախնադարյան կարգերի ժամանակ հայրիշխանությանը նախորդող շրջան, որը բնութագրվում էր կնոջ դերի առաջնայնությամբ ընտանիքում, տնտեսության մեջ և հասարակական կյանքում:

ՄԱՏՐԻՑ(Ա) [< матрица < լատ. matrix (matricis) աղբյուր, սկիզբ], գ. 1. (տպգր.): Տառամայր: 2. Ստվարաթղթից, մեղրամոմից կամ կապտաթղթից տպագրական ամբողջական էջի կաղապար՝ տպագրելի նյութը բազմացնելու համար:

ՄԱՏՐՈՍԿԱ [< матроска < матрос < հոլանդ. matroos], գ. (խսկց.): Տղամարդու վերնաշապիկի մի տեսակ:

ՄԱՐԱԶՄ [< маразм < հուն. marasmos ուժասպառություն], գ. 1. (բժշկ.): Հյուծանք, ծյուրանք, չքմություն՝ մարդու հոգեկան գործունեության համարյա լրիվ ընդհատում, որը պայմանավորված է գլխուղեղի կեղևի ապաճմամբ և ուղեկցվում է օրգանիզմի ընդհանուր հյուծմամբ: 2. *փխբ.* Զառամախտ, լիակատար քայքայվածություն:

ՄԱՐԱԹՈՆ [< марафон < հուն. Մարաթոն գյուղի անունից], գ. Նույնն է՝ Մարաթոնյան վազք:

ՄԱՐԱԹՈՆՅԱՆ ՎԱԶՔ - 1. Վազքային մրցում՝ 42 կմ 195 մ տարածությամբ: 2. *փխբ.* Լարված ու տևական մրցախաղ:

ՄԱՐԱԼ [< марал < մոնղ. maral եղնիկ], գ. (կենդբ.): Սիբիրյան եղնիկ:

ՄԱՐԳԱՐԻՆ [< маргарин < լատ. margaros սադափ < ֆր. margarine], գ. Ճարպի, բուսական յուղի և մի քանի այլ նյութերի խառնուրդից պատրաստվող արհեստական յուղ:

ՄԱՐԳԻՆԱԼ(ՆԵՐ) [< маргиналы < լատ. marginalis եզրային], գ. Մարդիկ, ովքեր դուրս են մնացել հասարակական հարաբերություններից և կյանքից:

ՄԱՐԵՆԳՈ [< маренго < իտլ. marengo], գ. (մնծգր.): Սև գույնի մի տեսակ գործվածք՝ սպիտակ թելերով:

ՄԱՐԺԱ [< маржа < ֆր. marge եզր], գ. 1. (առևտր.): Ապրանքների առք ու վաճառքի գների տարբերությունը: 2. Արժեթղթերի կուրսի տարբերությունը գործարքը կնքելու, կատարելու օրերին, ինչպես նաև գնողի և վաճառողի գների տարբերությունը: 3. (բանկ.): Ներգրավվող և տրամադրվող վարկերի դրույքների, ապահովման գումարի միջև եղած տարբերությունը:

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ [< марихуана < անգլ. marihuana < իսպ. mariguana մեքսիկական կանեփի տեսակի անունից], գ. (խսկց.): Ուժեղ թմրամիջոց:

ՄԱՐԻՆԱԴ [< маринад < ֆր. marinade < mariner աղաջրել], գ. (խոհր.): 1. Թթվեցրած, թթու: 2. Թթվաջուր:

ՄԱՐԻՆԻՍՏ [< маринист < իտլ. marinista < լատ. marinus ծովային], գ. (արվ.): Ծովանկարիչ:

ՄԱՐԻՈՆԵՏ [< марионетка < ֆր. Marionnete սկզբնապես ոչ մեծ ֆիգուրների անվանումը կույս Մարիամի տիկնիկներով ներկայացնող միջնադարյան միստերիաներում], գ. 1. Խաղատիկնիկ, խամաճիկ: 2. *փխբ.* Ուրիշի կամքը կուրորեն կա-

տարող գործիչ կամ պետություն, խաղալիք:

ՄԱՐԻՈՆԵՏԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ – (քղք.): Ինքնուրույնությունից զուրկ՝ օտար պետության հլու հպատակ և նրա ցուցումներով գործող կառավարություն:

ՄԱՐԻՈՆԵՏԿԱ, գ. Տե՛ս Մարիոնետ:

ՄԱՐԿ [< марка < գերմ. Mark < ֆին. markka], գ. (ֆին.): Դրամական միավոր Գերմանիայում և Ֆինլանդիայում:

ՄԱՐԿԱ [< марка < գերմ. Marke], գ. (հնց.): 1. Նամականիշ: 2. Դրոշմանիշ: 3. Ապրանքանիշ, պիտակ: 4. Որակ, տեսակ (ապրանքների): 5. *փխբ.* Հեղինակություն, վարկ:

ՄԱՐԿԱԶԻՏ [< марказит < ուշ լատ. marcasita], գ. (հնք.): Ճառագայթող հրաքար, միներալ, բնական ծծմբային երկաթի (FeS_2) բազմաձև տարբերակը: Օգտագործվում է ծծմբաթթու ստանալու համար:

ՄԱՐԿԵԹԻՆԳ, ՄԱՐՔԵԹԻՆԳ [< маркетинг < անգլ. marketing < market շուկա], գ. (տնտսգ.): Ձեռնարկության կառավարման ու կազմակերպման համակարգ, երբ տնտեսական հարցերի (նոր արտադրատեսակների մշակում, թողարկում, իրացում, ծառայություններ) լուծման համար օգտագործում են շուկայական գործընթացների համալիր հաշվառման տվյալներ, շուկայագիտություն, շուկայավարում:

ՄԱՐԿԵՐ [< маркер < անգլ. marker < to mark նշում կատարել], գ. (տեխ.): Գրիչ, որով ընդգծում են գրավոր խոսքի որևէ հատված:

ՄԱՐԿԻԶ [< маркиз < ֆր. marquis], գ. Ազնվականական տիտղոս Արևմտյան Եվրոպայի մի քանի երկրներում՝ կոմսի և հերցոգի միջինը:

ՄԱՐԿՇԵՅԴԵՐ [< маркшейдер < գերմ. Markscheider < Mark սահման + scheiden բանանել] գ. (հնք.): Ինժեներ, որն օգտագործում է երկրի մակերևույթի վրա և հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները տեխնիկական խնդիրների լուծման, օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման և շահագործման ժամանակ:

ՄԱՐՄԱՐ [< мрамор < լատ. marmor < հուն. marmaros, փայլող], գ. (հնք.): Բյուրեղային սպիտակ ապար, որը լայն տարածում ունի շինարարության և արձանագործության մեջ:

ՄԱՐՄԵԼԱԴ [< мармелад < ֆր. marmelade < պորտ.], գ. (խոհր.): Քաղցրեղեն՝ հրուշակեղեն, որ պատրաստվում է պտուղների հյութից, կարտոֆիլի ալյուրից և շաքարից, մրգանուշ:

ՄԱՐՅԱԺ [< марьяж < ֆր. mariage], 1. (խսկց.): Ամուսնություն: 2. (թղթխդ.): Համագույն խաղաթղթի թագավորը՝ դամայի (աղջկա) հետ մի խաղացողի ձեռքում:

ՄԱՐՇ [< марш < ֆր. marche], գ. (խսկց.): 1. Շարքով քայլելը: 2. Քայլերգ: 3. Քայլելու հրաման: 4. Մեկին հեռացնելու՝ վանելու բացականչություն:

ՄԱՐՇԱԼ [< маршал < ֆր. maréchal], գ. ած. (ռազմ.): Զինվորական ամենաբարձր կոչումը և այդ կոչումն ունեցող անձը:

ՄԱՐՇՐՈՒՏ [< маршрут < գերմ. Marschrute < ֆր. marche առաջ շարժում + route ուղի], գ. (խսկց.): Երթուղի՝ ընթացքի՝ շարժման՝ երթևեկության նախապես սահմանված ուղի՝ որոշակի կանոններով:

ՄԱՐՈԴՅՈՐ [< мародёр < ֆր. maraudeur], գ. (խսկց.): 1. Դիակապուտ, մեռել կողոպտող: 2. *փխբ.* Ավազակ, կողոպտիչ:

ՄԱՐՈԿԵՆ [< марокен < ֆր. marogain], գ. (մեծգր.): Արհեստական մետաքսի խիտ գործվածք:

ՄԱՐՍ I [< марс < հոլանդ. mars], գ. (ծով.): Կայմահարթակ՝ ոչ մեծ կիսակլոր հարթակ՝ նավի կայմի վրա (դիտելու, ազդանշան հաղորդելու, մարտական ղեկավարման նն նպատակով):

ՄԱՐՍ II [< марс < լատ. Mars (Martis)], 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ պատերազմի աստվածը, որը հին հունականում Արեսն է: 2. (աստղգ.): Հրատ՝ տարածությամբ չորրորդը՝ Արեգակնային համակարգի Արև մոլորակից:

ՄԱՐՍԵԼՅՈԶ [< марсельеза < ֆր. Marseillaise], գ. Հեղափոխական երգ, որ հորինեց Ռուժե դը Լիլը 1792 թ., և որը հետո դարձավ Ֆրանսիայի ազգային հիմնը:

ՄԱՐՏ [< март < լատ. martius < Mars (Martis) Մարս աստծու անունից], գ. Օրացույցային տարվա երրորդ ամիսը:

ՄԱՐՏԵՆՅԱՆ ՎԱՌԱՐԱՆ [< мартеновская (< ֆրանսիացի մետաղագործ Մարտենի (1824-1915 թթ.) անունից) печь] - (արտդր.): Վառարան, որի մեջ որպես ելանյութ օգտագործելով պողպատի ջարդոնը և թուջը (հեղուկ կամ պինդ վիճակում), ստանում են լեգիրված պողպատ:

ՄԱՐՏԵՆՅԱՆ ՊՈՂՊԱՏ - (արտդր.): Մարտենյան վառարանում ստացվող պողպատ:

ՄԱՐՔԻԶ, Տե՛ս Մարկիզ:

ՄԱՐՔՍԻԶՄ [< марксизм < համանուն ուսմունքի հիմնադիր Կ. Մարքսի անունից], գ. Կ. Մարքսի և Ֆր. Էնգելսի ուսմունքը բնության և հասարակության առավել ընդհանուր օրենքների մասին:

ՄԱՐՔՍԻՍՏ [< марксист < հատուկ անունից], գ. Մարքսիզմի հետևորդ:

ՄԱՈՒԶԵՐ [< маузер < գերմանացի ինժեներներ Մաուզեր եղբայրների անունից], գ. (ռազմ.): Ավտոմատ ատրճանակի մի տեսակ:

ՄԱՈՒԶԵՐԻՍՏ [< маузерист < հատուկ անունից], գ. 1. Մաուզերով զինված մարդ: 2. *փխբ.* Զենքի ուժով ապօրինի գործողություններ՝ հափշտակություններ՝ սպանություններ կատարող:

ՄԱՈՒՆԹԲԱՅՔ [< маунтбайк < անգլ. to mount սար բարձրանալ + bike հեծանիվ], գ. (սպորտ.): Հեծանվային սպորտի տեսակ, երբ հեծանիվով հաղթահարվում է տարածության լեռնային հատվածը:

ՄԱՔԻ [< маки < маси < ֆր. maquis մշտադալար փշոտ, դժվարանցանելի թփուտներ], գ. (պատմ.): 1939-45 թթ. երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ ֆրանսիական ջոկատների անվանումներից:

ՄԱՔԻԱՎԵԼԻԶՄ [< макиавеллизм < իտալ. Machiavellismo < իտալացի քաղաքական գործիչ Նիկոլո Մաքիավելլիի (Machiavelli) անունից], գ. 1. (քղք.): Կոպիտ ուժի վրա հիմնված քաղաքականություն (բարոյական նորմերը արհամարհող): 2. *փխբ.* Խարդավանք, նենգություն, երդմնազանցություն, ուխտադրժություն:

ՄԱՔՍԻ [< макси < լատ. maximum], գ. (խսկց.): Կանացի երկար շրջազգեստ և կիսաշրջազգեստ:

ՄԱՔՍԻՄ [< максим < անգլ. maxim ամերիկացի ինժեներ Խ. Մաքսիմի անունից], գ. (ռազմ.): Հաստոցավոր գնդացրի մի տեսակ:

ՄԱՔՍԻՄԱԼ [< максимальный < լատ. maximum առավելագույն, առավելապես], ած. (խսկց.): Առավելագույն, մեծագույն, չափազանց:

ՄԱՔՍԻՄԱԼԻԶՄ [< максимализм < լատ.], գ. Ինչ-որ պահանջների հասցնումը մինչև ամենավերջը, առավելամոլություն:

ՄԱՔՍԻՄԱԼԻՍՏ [< максималист < լատ.], գ. Մաքսիմալիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՄԱՔՍԻՄՈՒՄ [< максимум < լատ.], 1. գ. (խսկց.): Որևէ բանի առավելագույն աստիճանը: 2. ած. Առավել, առավելագույն:

ՄԱՖԻԱ [< мафия < իտլ. maf(f)ia], գ. Հանցագործ մարդկանց, գողերի՝ ավազակների՝ կողոպտիչների խումբ, հանցախումբ: Մաֆիական առաջին կազմակերպությունները ձևավորվել են Իտալիայի Սիցիլիա կղզում XVIII դ., այնուհետև այդպես անվանվեցին XX դ. ԱՄՆ-ի կազմակերպված հանցագործ խմբերը, ապա այլ երկրների:

ՄԱՖԻՈԶ(Ի) [< мафиози < իտլ. maffiosi], գ. (խսկց.): Մաֆիայի անդամ:

ՄԵԱՆԴՐ [< меандр < Փոքր Ասիայի ոլորապտույտ Մեանդր (այժմ՝ Մեծ Մենդերես) գետի անունից], գ. (ճարտ.): Երկրաչափական զարդապատկերի տարածված տիպ. ունի ուղիղ անկյունով բեկված գծի տեսք: Լայնորեն կիրառվել է Հին Հունաստանում:

ՄԵԳԱԲԱՅԹ [< мегабайт < մեգա... + բայթ], գ. (հմկրգչ.): Համակարգչի հիշողության ծավալի չափման միավոր, հավասար է 1024 կիլոբայթի:

ՄԵԳԱԼԻԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ [< мегалитические (< մեգա... + հուն. lithos քար) строение] - (պատմ.): Դամբարանային, մեմորիալ կամ պաշտամունքային հնագույն կառույցներ՝ կերտված անմշակ կամ կոպիտ մշակված մակերեսով մեծածավալ քարերից:

ՄԵԳԱ(ԼՈ)... [< мегало... < հուն. megas (megalē) մեծ] 1. Բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս որևէ բանի մեծ, հսկայական չափերը: 2. Եվակետային միավորից 10^6 անգամ մեծ միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց: Կրճատ նշանակվում է Մ (միջազգային նշանակումը՝ M):

ՄԵԳԱԼՈԶԱՎՐ [< мегалозавр < մեգալո... + հուն. sauros], գ. (հնէաբ.): Խոշոր գիշատիչ դինոզավր մեզոզոյան դարաշրջանում: Հայտնի է, որ ապրել է Եվրոպայում:

ՄԵԳԱԼՈՄԱՆԻԱ [< мегаломания < մեգալո... + հուն. mania կիրք], գ. (հոգեբ.): Վեհության մոլուցք:

ՄԵԳԱԼՈՊՈԼԻՍ [< мегалополис < մեգալո... + հուն. polis քաղաք], գ. (ճարտ.): Քաղաքների վիթխարի կուտակում, գերիշխող ագլոմերացիա: Տերմինն առաջացել է Հին Հունաստանի Արկադիա նահանգի ավելի քան 35 բնակավայրերի միաձուլումից գոյացած Մեգալոպոլիս քաղաքի անունից:

ՄԵԳԱՆՏՐՈՊ [< мегантроп < մեգա... + հուն. anthrōpos մարդ], գ. (հնէաբ.): Բրածո մարդանման կապիկ: Հայտնաբերվել է Ճավա կղզում և Արևելյան Աֆրիկայում:

ՄԵԳԱՊՈԼԻՍ [< мегаполис < մեգա... + հուն. polis քաղաք], գ. (ճարտ.): Տե՛ս Մեգալոպոլիս:

ՄԵԳԱՍՊՈՐՆԵՐ [< мегаспоры < մեգա... + սպորներ], գ. (բսբ.): Մակրոսպորներ՝ խոշոր սպորներ, որոնցից զարգանում են բարձրակարգ բույսերի իգական նախածիլերը:

ՄԵԳԱՖՈՆ [< мегафон < մեգա... + հուն. phonē հնչյուն], գ. (խսկց.): Բարձրախոս, որ խոսողը պահում է իր բերանին մոտ՝ ձայնը ուժեղացնելու, այսինքն՝ ուղած ուղղությամբ կենտրոնացնելու համար:

ՄԵԳԵՐԱ [< мегера < հուն. Megaira], գ. 1. (դից.): Հունական դիցաբանության մեջ՝

վրիժառության երեք աստվածուհիներից մեկը: 2. *փխբ.* Կատաղի բնավորությամբ կին:

ՄԵԴԱԼ [< медаль < ֆր. médaille < միջին լատ. metallia (moneta) մետաղա(դրամ)], գ. (խսկց.): Շքանշան՝ 1. Ոսկուց, արծաթից կամ պղնձից կտրած շքադրամ՝ քանդակապատկերով ու մակագրությամբ, որ իբրև պարգև տրվում է հատուկ ծառայությունների, աշխատանքային կամ մարտական սխրագործությունների համար: 2. Նույնպիսի շքադրամ, որ տրվում է գերազանց առաջադիմությամբ դպրոցն ավարտողներին: 3. Մարզական մրցումներում, արվեստի փառատոներին ևն մրցանակ շահողներին տրվող նույնպիսի շքադրամ: 4. Որևէ նշանավոր դեպքի կամ անձի հիշատակին կտրած շքադրամ:

ՄԵԴԱԼԱԿԻՐ, գ. ած. 1. Մեդալ կրող, մեդալով զարդարված: 2. Միջնակարգ դպրոցը մեդալով ավարտած շրջանավարտ:

ՄԵԴԱԼՅՈՆ, ՄԵԴԱԼԻՈՆ [< медальон < ֆր. médaillon], գ. Ոսկուց կամ այլ մետաղից պատրաստած փոքրիկ, կլոր կամ ձվաձև (նաև սրտաձև) զարդ, որը կախում են պարանոցից:

ՄԵԴԻԱ [< медиа < անգլ. media], գ. (լրգ.): Լրատվամիջոց՝ լրատվական միջոց՝ լրագիր, ռադիո և հեռուստատեսային հաղորդում:

ՄԵԴԻԱՆՏ [< медиант < լատ. medians (mediantis) կիսող], գ. (երժշտ): Մաժոր և մինոր լադերում գլխավոր աստիճանների՝ տոնիկայի ու դոմինանտի և տոնիկայի ու ստորին սուբդոմինանտի կվինտային տարածությունները «կիսող» III և IV աստիճանները և նրանց վրա կառուցվող եռահնչյունները:

ՄԵԴԻԱՏՈՐ [< медиатор < լատ. mediator միջնորդ], գ. (երժշտ.): Հարիչ, կնտնտոց, կսմիթ:

ՄԵԴԻԱՏՈՐՆԵՐ [< медиаторы < լատ. mediator], գ. (քիմ.): Միջնորդանյութեր՝ քիմիական նյութեր, որոնց մոլեկուլները փոխազդվում են բջջային թաղանթի հատուկ ռեցեպտորների հետ և, փոխելով որոշակի իոնների թափանցելիությունը, թաղանթում առաջացնում գործողության ներուժ:

ՄԵԴԻԵՎԻՍՏԻԿԱ [< медиевистика < գերմ. Mediävistik < ֆր. médiéval միջնադարյան < լատ. medius aevum Միջնադար], գ. (գիտ.): Պատմագիտության բաժին, որն ուսումնասիրում է Միջին դարերի պատմությունը:

ՄԵԴԻՏԱՑԻԱ [< медитация < լատ. meditatio խորհրդածություն], գ. (հոգեբ.): Մտածական գործունեություն, որի նպատակն է մարդու հոգեկան վիճակը դարձնել ավելի կենտրոնացած և խորաթափանց:

ՄԵԴԻՈՒՄ [< медиум < լատ. medius միջին], գ. Մարդը, որ ոգեհարցության փորձերի ժամանակ միջնորդ է հանդիսանում մարդկանց և ոգիների մեջ:

ՄԵԴՐԵՍԵ [< медресе < արաբ. madrasa դպրոց, ուսումնարան], գ. (մսնգ.): Կրոնական միջնակարգ (հազվադեպ բարձրագույն) դպրոց (մահմեդականների համար):

ՄԵԴՈՒԶԱ [< медуза < հուն. Medusa հին հունական դիցաբանության մեջ՝

թևավոր հրեշի անունով, որ պատկերանում է մազերը օձերի փոխարկված կնոջ կերպարանքով], գ. (կենդբ.): Ծովամայր՝ դոնդողային մարմնով և շոշափուկներ ունեցող ծովային կենդանի:

ՄԵԶԱԼՅԱՆՍ [< мезальянс < ֆր. mésalliance], գ. (հնց.): Սոցիալապես անհավասար ամուսնություն:

ՄԵԶԵՆՔԻՄ [< мезенхима < մեզո...+ հուն. enchyma լցված, այստեղ՝ հյուսվածք], գ. (կենսբ.): Բազմաբջիջ կենդանիների մեծամասնության և մարդու սաղմնային շարակցական հյուսվածք: Զարգանում է առաջնային սաղմնային թերթիկներից անջատված բջիջներից:

ՄԵԶՈ..., ՄԵԶ... [< мез(о)... < հուն. mesos միջին, միջանկյալ] Բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս միջին մեծություն կամ որևէ բանի միջանկյալ դիրքը:

ՄԵԶՈԴԵՐՄ [< мезодерма < մեզո... + հուն. derma մաշկ], գ. (կենդբ.): Բազմաբջիջ կենդանիների (բացի սպունգներից և աղեխորշավորներից) և մարդու սաղմնային միջին թերթիկ: Գտնվում է էկտոդերմի և էնդոդերմի միջև:

ՄԵԶՈԶՈՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ [< мезозойская (< մեզո... + հուն. zōē կյանք) эра] - (երկրբ.): Երկրի շերտագրական սանդղակի նախավերջին խումբը և երկրաբանական պատմության նրան համապատասխանող դարաշրջանը: Ընդգրկում է 230-ից մինչև 67 մլն տարի մ.թ.ա.: Այն առաջին անգամ առանձնացրել է Ջ. Ֆիլիպսը 1841 թ.:

ՄԵԶՈԼԻԹ [< мезолит < մեզո... + հուն. lithos քար], գ. (երկրբ.): Միջին քարի դար, քարի դարի միջին՝ պալեոլիթի և նեոլիթի միջև ընկած ժամանակահատվածը:

ՄԵԶՈՄԵՐԻԱ [< мезомерия < մեզո... + հուն. merios մաս], գ. (քիմ. ֆիզ.): Մոլեկուլներում քիմիական կապերի և ատոմների լիցքերի մասնակի ապատեղայնացման երևույթ:

ՄԵԶՈՆԻՆ [< мезонин < իտալ. mezzanino կիսահարկ], գ. (շին.): Վերնակառույց՝ բնակելի (սովորաբար ոչ մեծ) տան միջնամասի վրա: Հաճախ ունենում է պատշգամբ:

ՄԵԶՈՆՆԵՐ [< мезон < հուն. մեզո... + էլեկտրոն], գ. (ֆիզ.): Ուժեղ փոխազդող անկայուն տարրական մասնիկներ:

ՄԵԶՈՍՖԵՐԱ [< мезосфера < մեզո... + հուն. sphaira], գ. (երկրբ.): Մթնոլորտի շերտ՝ երկրի մակերևույթից 40-50-ից մինչև 80-85 կմ բարձրության վրա:

ՄԵԶՈՖԻՏՆԵՐ [< мезофиты < մեզո... + հուն. phyton բույս], գ. (բսբ.): Բույսեր, որոնք աճում են բավարար խոնավություն ունեցող հողերում:

ՄԵԹԱՆ [< метан < ֆր. méthane < հուն.], գ. (քիմ.): Անգույն գազ, որ ջրածնի և ածխածնի միասնություն է, ճահճագազ:

ՄԵԹԻԼ [< метил < ֆր. méthyle < հուն.], գ. (քիմ.): Մեկ ատոմ ածխածնից և երեք ատոմ ջրածնից բաղկացած խումբ, որ մտնում է մի շարք օրգանական միացությունների մեջ:

ՄԵԹՈԴ [< метод < հուն. methodos հետազոտում, հետազոտություն], գ. 1. (գիտ.): Բնության և հասարակական կյանքի ուսումնասիրության ու ճանաչողության եղանակ: 2. Գործունեության՝ գործողությունների եղանակ՝ կերպ:

ՄԵԹՈԴԻԿԱ [< методика < հուն. methodikē], գ. 1. (գիտ.): Ուսմունք այս կամ այն առարկայի դասավանդման մեթոդների մասին: 2. Որևէ բան գործնականորեն կատարելու կանոնների համակարգ:

ՄԵԹՈԴՈԼՈԳ [< методолог < հուն. methodos + logos գիտություն], գ. ած. (հնց.): Մեթոդաբան, մեթոդաբանության մասնագետ:

ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ [< методология < հուն.], գ. (գիտ.): Մեթոդաբանություն՝ ուսմունք ընդհանրապես գիտական ճանաչողության մեթոդի և առանձին գիտությունների մեթոդների մասին:

ՄԵԹՈԼ [< метол < ֆր. metol < հուն.], գ. (քիմ.): Օրգանական նյութ, որը հեշտությամբ լուծվում է ջրում: Օգտագործվում է որպես լուսանկարչական հայտածիչ նյութ:

ՄԵԼԱՆ [< мелан < հուն. melas (melanos) սև], գ. Թանաք:

ՄԵԼԱՆԺԻ ԳՈՐԾՎԱԾՔ [< мелажевая (< ֆր. melange խառնուրդ) пряжа] (մնծգր.): Տարբեր գույների ներկած թելերի խառնուրդ՝ հյուսվածքի՝ մելանժի միաթել կամ ոլորված մանվածքից պատրաստված գործվածք:

ՄԵԼԱՆԻՆՆԵՐ[< меланины < հուն. melas (melanos) սև], գ. (կենսբ.): Ջրում չլուծվող, դարչնագույն, սև կամ դեղին պիգմենտներ: Լայնորեն տարածված են կենդանական և բուսական հյուսվածքներում:

ՄԵԼԱՆԻՏ [< меланит < հուն. mélanite], գ. (հնք.): 1. Նռնաքար, սևաքար: 2. Սևագույն ներկ, սևաներկ:

ՄԵԼԱՆԽՈԼԻԱ [< меланхолия < հուն. melas (melanos) սև + cholē մաղձ], գ. (հոգեբ.): Մելամաղձություն՝ հոգեկան խանգարում, բնորոշվում է տրամադրության անկմամբ, հոգեկան գործընթացների դանդաղումով:

ՄԵԼԱՆԽՈԼԻԿ [< меланхолик < հուն.], ած. գ. (հոգեբ.): Մելամաղձիկ, մելամաղձոտ մարդ:

ՄԵԼԱՆՈՄԱ [< меланома < հուն. melas (melanos) + ōma ուռուցք նշանակող վերջածանց], գ. (բժշկ.): Մելանիններ արտադրող բջիջների չարորակ ուռուցք: Պատճառները վնասվածքներն ու հորմոնային խթանումներն են՝ հատկապես սեռական հասունացման շրջանում:

ՄԵԼԻԶՄՆԵՐ [< мелизмы < հուն. melos երգ, եղանակ, մեղեդի], գ. 1. (պատմ. երժշտ.): Միջին դարերում մելիզմներ են անվանել վոկալ ստեղծագործության մեջ խոսքերի մեկ վանկով երգվող, հանպատրաստից գոյացող մեղեդիական դարձվածքները: 2. Զարդահնչյուններ:

ՄԵԼԻՆԻՏ [< мелинит < հուն. melinos դեղին, դեղնավուն], գ. Պայթուցիկ քիմիական նյութ:

ՄԵԼԻՈՐԱՆՏ [< мелиорант < լատ.], գ. Հողաբարելավման ծառայող միջոց կամ նյութ:

ՄԵԼԻՈՐԱՏԻՎ [< мелиоративный < լատ.], ած. Հողաբարելավմանը հատուկ:

ՄԵԼԻՈՐԱՏՈՐ [< мелиоратор < լատ.], գ. Մելիորացիայի մասնագետ:

ՄԵԼԻՈՐԱՑԻԱ [< мелиорация < լատ. melioratio բարելավում], գ. (գղտնտ.): Հողերի բնական անբարենպաստ պայմանները բարելավելու միջոցառումների ամբողջությունը, հողաբարելավում:

ՄԵԼԽ(Ք)ԻՈՐ [< мельхиор < գերմ. Melchior < ֆրանսիացի գյուտարարներ Մայոյի (Maillot) և Շորյեի (Chorier) անունից], գ. 30% նիկելի, 0,8 % երկաթի և 1% մանգանի և պղնձի համաձուլվածք, որը ունի չժանգոտելու հատկություն: Օգտագործվում է կենցաղային իրերի, դրամի ևնի արտադրության մեջ:

ՄԵԼՈ... [< мело... < հուն. melos երգ, մեղեդի] Բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս կապը երաժշտության հետ:

ՄԵԼՈԴԵԿԼԱՄԱՑԻԱ [< мелодекламация < մելո... + լատ. declamatio արտասանություն], գ. (պատմ.): Բեմական արվեստի տեսակ, որ առաջացել է Հին Հռոմում I-II դդ.՝ որպես բանաստեղծական և դրամատիկական երկերի պալատական

ընթերցման եղանակ՝ տավիղի նվագակցությամբ:

ՄԵԼՈԴԻԱ [< мелодия < հուն. melodia երգ], գ. 1. Մեղեդի՝ քաղցրալուր երգ, երաժշտություն: 2. (երժշտ.): Ձայնի աստիճանական բարձրացում և իջեցում:

ՄԵԼՈԴԻԿԱ [< мелодика < հուն. melōdikos մեղեդիական], գ. 1. Ուսմունք մելոդիայի՝ մելոդայնության մասին: 2. Բարեհնչյունություն, բարեհնչություն, մեղեդիականություն:

ՄԵԼՈԴՐԱՄ(Ա) [< мелодрама < մելո... + հուն. drama գործողություն], գ. 1. (թատր.): Գործողությունների չափազանց լարվածությամբ ու արտաքին տպավորություններով բնորոշվող դրամատիկական ժանր: 2. Երաժշտության ու երգի հետ միահյուսված դրամա:

ՄԵԼՈԴՐԱՄԱՏԻԶՄ [< мелодраматизм < հուն.], գ. 1. Ավելորդ՝ չափազանց զգացմունքայնություն: 2. Մելոդրամային հատուկ՝ զգացմունքայնության անբնականություն:

ՄԵԼՈԴՐԱՄԱՏԻԿ [< мелодраматический < հուն.],ած. Տե՛ս Մելոդրամատիկական:

ՄԵԼՈԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ, ած. 1. Մելոդրամային հատուկ: 2. Մելոդրամատիզմին հատուկ:

ՄԵԼՈՄԱՆ [< меломан < մելո... + հուն mania կիրք], գ. ած. Երգի, երաժշտության կրքոտ սիրահար:

ՄԵԼՈՄԱՆԻԱ [< меломания < մելո... + հուն. mania], գ. Երաժշտության նկատմամբ կրքոտ սեր:

ՄԵԼՊՈՄԵՆԵ [< мельпомена < հուն. Melpomenē], գ. 1. (դից.): Հունական դիցաբանության մեջ՝ երգը և ողբերգությունը հովանավորող ինը մուսաներից մեկը: 2. *փխբ.* Թատերարվեստի խորհրդանիշ:

ՄԵԽԱՆԻԶԱՏՈՐ [< механизатор < հուն.], գ. ած. (խսկց.): 1. Մեքենայացման՝ մեխանիզացիայի մասնագետ: 2. Մեքենաների ու մեքենայացված սարքերի գործարկման՝ աշխատեցման մասնագետ:

ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱ [< механизация < հուն.], գ. Մեքենայացում:

ՄԵԽԱՆԻԶՄ [< механизм < հուն. mēchanē մեքենա, գործիք], գ. 1. Մեքենայի՝ գործիքի՝ ապարատի ևն շարժման մեջ դնող ներքին կառուցվածք: 2. Մեքենա, սարքավորում: 3. *փխբ.* Որևէ բանի ներքին կառուցվածքը՝ համակարգը: 4. *փխբ.* Այն վիճակների ամբողջությունը, որոնցից գոյանում՝ բաղադրվում է այս կամ այն ֆիզիկական, քիմիական, բնախոսական ևն երևույթը:

ՄԵԽԱՆԻԿ [< механик < հուն.], գ. 1. Մեխանիկայի մասնագետ: 2. Մեքենայի աշխատանքը հսկող անձ:

ՄԵԽԱՆԻԿԱ [< механика < հուն. mēchanikē < mēchanē գիտություն մեքենաների մասին], գ. 1. (գիտ.): Ֆիզիկայի այն բաժինը, որն ուսումնասիրում է տարածության մեջ մարմինների շարժման օրենքները: 2. Տեխնիկայի մի բնագավառը, որն զբաղվում է շարժման և ուժերի գործնական կիրառման հարցերով: 3. *փխբ.* Որևէ բանի թաքնված՝ ներքին բարդ կառուցվածքը:

ՄԵԽԱՆԻՍՏ [< механист < հուն.], գ. ած. (փիլ.): Մեխանիցիզմի հետևորդ:

ՄԵԽԱՆԻՑԻԶՄ [< механицизм < հուն.], գ. (փիլ.): Հակադիալեկտիկական փիլիսոփայական ուսմունք, որ աշխարհի բոլոր բարդ որակական երևույթները հանգեցնում է մատերիայի միատեսակ մասնիկների մեխանիկական շարժմանը, իսկ զարգացման բարդ օրինաչափությունները մեխանիկական պարզ օրենքներին:

ՄԵԽԱՆՈԹԵՐԱՊԻԱ [< механотерапия < հուն. mēchanē + թերապիա], գ. (բժշկ.):

Մեքենաբուժություն՝ բուժման մեթոդ. նպատակն է առանձին հոդերում շարժումների զարգացումը՝ հատուկ սարքերով ֆիզիկական վարժությունների կատարմամբ:

ՄԵԿԵՆԱՍ [< мекенас < Օգոստոս կայսեր ժամանակ ապրող հռոմեացի ազնվական Մեկենասի հատուկ անունից], գ. Գիտությունների և արվեստների հովանավոր, արվեստի աշխատողներին, գրողներին, գիտնականներին դրամով օգնող՝ խրախուսող՝ նրանց գրվածքները հրապարակող:

ՄԵՄԲՐԱՆ [< мембрана < լատ. membrana նրբամաշկ, թաղանթ], գ. (ֆիզ.): Առաձգական նյութից պատրաստված նուրբ թաղանթ՝ ձայնային ալիքները որսալու և վերարտադրելու համար:

ՄԵՄՈՐԱՆԴՈՒՄ [< меморандум < լատ. memorandum ինչ պետք է հիշել], գ. (քաղ. իրավք.): 1. Հուշագիր: 2. Հուշաթուղթ:

ՄԵՄՈՐԻԱԼ [< мемориал < իտալ. memoriale < լատ. memorialis հուշագիր], գ. (գրք.): 1. Հուշատետր: 2. Հուշամատյան: 3. Հուշարձան, կոթող: 4. Հուշարձանախումբ: 5. Հուշամրցում:

ՄԵՄՈՒԱՐ(ՆԵՐ) [< мемуары < ֆր. mémoires հիշողություններ, վերհուշեր], գ. (գրկն.): Հուշագրություն(ներ), հուշեր, հուշիկներ:

ՄԵՄՈՒԱՐԻՍՏ [< мемуарист < ֆր.], գ. Մեմուարների հեղինակ:

ՄԵՅՈԶ [< мейоз < հուն. meiōsis նվազում, պակասում], գ. (կենսբ.): Ռեդուկցիոն բաժանում, սեռական բջիջների բաժանման ձև, որի հետևանքով տվյալ օրգանիզմի բջիջների քրոմոսոմների թիվը նվազում է երկու անգամ, և մեկ դիպլոիդ բջջից առաջանում է չորս հապլոիդ բջիջ:

ՄԵՅՔ ԱՓ [< мейк-ап < անգլ. make-up գրիմ, կոսմետիկա], գ. (խսկց.): Դիմահարդարանքի միջոցներ և պարագաներ:

ՄԵՆԴԵԼԻԶՄ [< менделизм < Գ. Մենդելի անունից], գ. (կենսբ.): Ուսմունք ժառանգականության օրինաչափությունների մասին, որը գենետիկայի հիմքը հանդիսացավ: Սրա առաջացումը կապում են 1900թ.-ին Խ. դե Ֆրիզի, Կ. Կորենսի և Է. Չերմակի կողմից Գ. Մենդելի «Փորձեր բուսական հիբրիդների հետ» (1866թ.) մոռացված աշխատանքի հայտնաբերման և հաստատման հետ:

ՄԵՆԵՋԵՐ [< менеджер < անգլ. manager], գ. (տնտսգ.): Կառավարիչ՝ վարձված կառավարիչ, որը կազմակերպում է որևէ ֆիրմայի կամ արտադրության գործունեությունը:

ՄԵՆԵՋՄԵՆԹ [< менеджмент < անգլ. manager կառավարող], գ. (տնտսգ.): Կառավարում՝ ֆիրմայի կամ արտադրական գործունեության կառավարումը, որի նպատակն է աշխատանքային արդյունավետության բարձրացումը և շահույթի ավելացումը՝ օգտագործելով ձեռնարկության, ֆիրմայի նն հնարավորությունները:

ՄԵՆԵՍՏՐԵԼ [< менестрель < ֆր. ménestrel], գ. (պատմ.): Միջնադարյան Ֆրանսիայում և Անգլիայում՝ շրջիկ երգիչ՝ երաժիշտ՝ դերասան, հաճախ նաև բանաստեղծ, որ ոչ միայն իր, այլև այլ հեղինակների գործերն էր կատարում:

ՄԵՆԶՈՒԼ [< мензула < լատ. mensula սեղանիկ], գ. (տեխ.): Տեղագրական չափագործիք:

ՄԵՆԹՈԼ [< ментол < լատ. mentha անանուխ, դաղձ + ol (eum) յուղ], գ. (քիմ.): Անանուխի հոտով թափանցիկ բյուրեղային նյութ:

ՄԵՆԻՆԳԻՏ [< менингит < հուն. mēninx (mēningos) ուղեղի թաղանթ], գ. (բժշկ.): Գլխուղեղի թաղանթի բորբոքում:

ՄԵՆԻՍԿ [< мениск < հուն. mēniskos կիսալուսին], գ. (կզմխս.): Հեղուկի ազատ կոր մակերևույթը՝ պինդ մարմնի մակերևույթի հետ հպման տեղում: Առաջանում է

անոթների պատերի միջև, հեղուկով ներծծված ծակոտկեն մարմինների անցուղի-ծակոտիներում:

ՄԵՆՀԻՐՆԵՐ [< менгиры < կելտերեն menhir], գ. (հնէաբ.): Նախնադարյան համայնական դարաշրջանի պաշտամունքային հուշակոթողներ՝ նվիրված նախնյաց հիշատակին: Սրանք ուղղահայաց դիրքով կանգնեցված հսկա քարեր են՝ 3-20մ բարձրությամբ և մինչև 300 տ քաշով:

ՄԵՆՅՈՒ [< меню < ֆր. menu մանր, մանրամասն], գ. (խսկց.): Ռեստորանի, ճաշարանի ևն ճաշացուցակ:

ՄԵՆՇԵՎԻԶՄ [< ռուս. меньшевизм < меньше փոքր], գ. (քղք. պատմ.): Գլխավոր օպորտունիստական հոսանք ՌՍԴԲԿ-ի մեջ, միջազգային օպորտունիզմի տարատեսակ:

ՄԵՆՇԵՎԻԿ [< ռուս. меньшевик], գ. ած. (պատմ.): Մենշևիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՄԵՆՍՏՐՈՒԱՑԻԱ [< менструация < գերմ. Menstruation < լատ. mēnstruus ամենամսյա], գ. (բժշկ.): Դաշտան:

ՄԵՆՏԱԼԻՏԵՏ, ՄԵՆԹԱԼԻՏԵՏ [< менталитет < լատ. mens (mentis) միտք], գ. (խսկց.): 1. Մտածելակերպ, աշխարհայացք,հոգեկերտվածք: 2. Խելք: 3. Ազգային լեզվամտածողություն:

ՄԵՆՏՈՐ [< Ментор < հուն. Mentōr, հատուկ անուն՝ Ոդիսևսի բարեկամի և նրա որդու՝ Տելեմաքի հմուտ դաստիարակչի], գ. 1. Հմուտ՝ փորձված ղեկավար, առաջնորդ, դաստիարակ: 2. *փխբ.* Հովանավոր:

ՄԵՆՈՒԵՏ [< менуэт < ֆր. mašĩ'aẖ < menu < փոքր, մանր], գ. (պատմ.): Ֆրանսիական պար, որն առաջացել է Պուատու գավառի ժողովրդական պարերգերից: XVII դ. դարձել է պալատական պարահանդեսների հիմնական պարերից մեկը:

ՄԵՋԼԻՍ [< меджлис < արաբ. madğlis խորհուրդ], գ. (քղք.): Մահմեդական որոշ երկրների պառլամենտների անունը:

ՄԵՍԻԱ [< Мессия < հին հրեերեն mašiah օծյալ], գ. (կրոն.): 1. Ըստ հրեական ավանդության՝ փրկիչ, որ պետք է գա հրեաներին փրկելու օտարների տիրապետությունից: 2. (հնց.): Քրիստոնյաների մոտ՝ Քրիստոսի մականունը:

ՄԵՍՍԱ [< messa < ֆր. messe], գ. 1. (եկեղ.): Կաթոլիկական պատարագ: 2. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործություն պատարագի համար:

ՄԵՏԱ... [< мета... < հուն. meta... դուրս, հետո, միջև] Բարդ բառերի սկզբնամաս, որն արտահայտում է ինչ-որ բանին հաջորդելը, անցումը ինչ-որ այլ բանի, վիճակի փոփոխություն:

ՄԵՏԱԲԱԶԻՍ [< метабазис < հուն. metabasis անցում], գ. (փիլ.): Վեճի մեջ սոփեստական հնարք (քննարկվող հարցի փոխարինումը մեկ այլ հարցով):

ՄԵՏԱԲԱԶԻՏ [< метабазит < հուն.], գ. (հնք.): Մետամորֆային ապար. առաջացել է հիմքային մագմատիկ ապարների մետամորֆիզմի հետևանքով:

ՄԵՏԱԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Բարոյագիտության զուտ ձևական նեոպոզիտիվիստական տեսություն:

ՄԵՏԱԲՈԼԻԶՄ [< метаболизм < հուն. metabolē փոփոխություն], գ. (գիտ.): 1. Նյութափոխանակություն՝ օրգանիզմում նյութափոխանակությանը ուղեկցող գործընթացները, երևույթները: 2. Ճարտարապետության և քաղաքաշինության ուղղություն, որ առաջացել է 1960-ական թթ. Ճապոնիայում:

ՄԵՏԱԲՈԼԻՏՆԵՐ [< метаболиты < հուն.], գ. (կենսբ.): Նյութափոխանակության արգասիքներ՝ նյութափոխանակության ժամանակ օրգանիզմում առաջացած նյութեր:

ՄԵՏԱԳԱԼԱԿՏԻԿԱ [< метагалактика < մետա... + գալակտիկա], գ. (աստղգ.): Գալակտիկաների և նրանց խմբերի հսկայական համակարգ, որի մասն են կազմում ժամանակակից խոշորագույն աստղադիտակների համար մատչելի բոլոր գալակտիկաները:

ՄԵՏԱԳԵՆԵԶ [< метагенез < մետա... + հուն. genesis ծագում], գ. (կենսբ.): Սերունդների հաջորդականություն՝ կենդանիների մոտ սերունդների հաջորդականության տեսակ, երբ սեռական սերունդները փոխվում են անսեռականներով:

ՄԵՏԱԹԵԶ [< метатеза < հուն. metathesis տեղափոխություն], գ. (լեզվբ. հնց.): Դրափոխություն:

ՄԵՏԱԼԵԶՈՒ, գ. (լեզվբ.): Միջանկյալ լեզու, որն օգտագործվում է որոշ դասի լեզուների ուսումնասիրության ու նկարագրության համար: Այն որոշակի կանոններով սահմանափակված բնական լեզվի համակարգ է, որտեղ բացակայում են բազմիմաստությունը, փոխանունությունը ևն:

ՄԵՏԱԼՈԿԵՐԱՄԻԿԱ [< металлокерамика < հուն. metallon + keramikē], գ. 1. Բարձր ջերմաստիճանի և ճնշման տակ երկաթի փոշուց և ոչ երկաթային նյութերից պինդ համաձուլվածքների ստացումը: 2. Այդ եղանակով ստացված համաձուլվածք:

ՄԵՏԱԼՈՒԴՆԵՐ [< металлуды < լատ. metallum < հուն. metallon + eidos ձև, տեսք], գ. (տեխ.): Ոչ մետաղներ:

ՄԵՏԱԼՈՒՐԳ [< металлург < հուն.], գ. (հնց.): Մետաղագործ՝ 1. Մետաղագործության բնագավառի աշխատող: 2. Մետաղարդյունաբերության բնագավառի աշխատող:

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ [< металлургия < հուն. metallon մետաղ + ergon աշխատանք], գ. (հնց.): Մետաղագործություն՝ 1. Ծանր արդյունաբերության մի ճյուղը, որը զբաղվում է հանքերից մետաղ ստանալով և մետաղների նախնական մշակությամբ: 2. Մետաղների արդյունաբերական արտադրության և նախնական մշակման միջոցների ու եղանակների ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն:

ՄԵՏԱՄԵՐԻԱ [< метамерия < մետա.. + հուն. meros մաս], գ. (կենսբ.): Մարմնահատվածավորություն՝ բազմաթիվ երկկողմանի սիմետրիկ կենդանիների մարմնի մասնատվածությունը երևակայական առանցքով դասավորված մասերի՝ մետամերների:

ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐ - (երկրբ.):Ապարներ, որոնք մետամորֆիզմի ներգործության հետևանքով ենթարկվել են քիչ թե շատ փոփոխման:

ՄԵՏԱՄՈՐՖԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ - (երկրբ.):Հանքավայրեր, որոնք առաջանում են գոյություն ունեցածների հաշվին. բուն մետամորֆիզմի, այսինքն՝ ձևափոխումների գործընթացում:

ՄԵՏԱՄՈՐՖԻԶՄ [< метаморфизм < հուն. metamorphō ենթարկվում եմ փոխակերպման], գ. (երկրբ.): Փոխակերպականություն, փոխակերպություն:

ՄԵՏԱՄՈՐՖՈԶ [< метаморфоз // метаморфоза < հուն. metamorphōsis փոխարկում], գ. 1. (գիտ.): Կերպարանափոխություն, փոխակերպություն: 2. Վերափոխություն:

ՄԵՏԱՊԼԱԶԻԱ [< метаплазиа < հուն. metaplasis վերափոխություն], գ. (կենսբ.): Հյուսվածքափոխություն՝ հյուսվածքի մի տարատեսակի վերափոխումը այլ տեսակի, որը նախորդից տարբերվում է մորֆոլոգիապես և գործառույթով՝ պահպանելով

տեսակային պատկանելությունը: Տերմինն առաջարկել է Ռ. Վիրխովը 1884 թ.:

ՄԵՏԱՍՈՄԱՏԻԿ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ - (երկրբ.): Հանքավայրեր, որոնք առաջանում են մետասոմատոզի գործընթացների հետևանքով:

ՄԵՏԱՍՈՄԱՏՈԶ, ՄԵՏԱՍՈՄԱՏԻԶՄ [< метасоматоз, метасоматизм < մետա... + հուն. sōma (sōmatos) մարմին], գ. (երկրբ.): Հասկացություն, որ անցյալ դարի կեսերին մտցրել է Նումանը՝ տեղակալվող միներալի հետ լուծույթի քիմիական փոխներգործության պայմաններում ընթացող պսևդոմորֆիզմի տարատեսակը որակելու համար:

ՄԵՏԱՍՏԱԲԻԼ [< метастабильный < մետա... + լատ. stabilis կայուն], գ. (ֆիզ.): Միջանկյալ վիճակ, համակարգի հարաբերական կայուն վիճակ, որից այն ինքնակամ (ներքին ֆլուկտուացիաների հետևանքով) կամ արտաքին գրգռիչի ազդեցությամբ կարող է անցնել ավելի կայուն վիճակի:

ՄԵՏԱՍՏԱԶ [< метастаз < հուն. metastasis տեղափոխում], գ. (բժշկ.): Վարակում, փոխակայում. հիվանդության տարածումը մարմնի այլ տեղեր:

ՄԵՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Տեսություն, որն ուսումնասիրում է մեկ այլ, այսպես կոչված, առարկայական տեսության (օբյեկտ, տեսական համակարգ) կառուցվածքը, նրա մեթոդներն ու հատկությունները:

ՄԵՏԱՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (տրամբ.): Ժամանակակից տրամաբանության բնագավառ, որն ուսումնասիրում է տրամաբանական տեսությունների կառուցվածքն ու հատկությունները:

ՄԵՏԱՖԱԶ [< метафаза < մետա... + հուն. phasis], գ. (կենսբ.): Տե՛ս Միտոզ:

ՄԵՏԱՖԻԶԻԿ [< метафизик//метафизический < հուն.], գ. ած. 1. Բնազանցագետ: 2. Բնազանցական:

ՄԵՏԱՖԻԶԻԿԱ [< метафизика < ՛՛Meta ta physika՛՛ «Ֆիզիկայից հետո», Արիստոտելի ստեղծագործության անվանումը, որը հաջորդում է «Ֆիզիկային»], գ. Բնազանցություն:

ՄԵՏԱՖՐԱԶ [< метафраза < հուն. metaphrasis], գ. (գրկն.): Վերապատում, տառացի թարգմանություն:

ՄԵՏԱՖՈՐ [< метафора < հուն. metaphora փոխաբերություն], գ. (գրկն.): Փոխաբերություն:

ՄԵՏԵՈ... [< метео... < հուն. meteōros օդում ճախրող] Բարդ բառերի բաղադրամաս, որը ցույց է տալիս դրանց կապը օդերևութաբանության հետ:

ՄԵՏԵՈՐ [< метеор < հուն. meteōros սավառնող օդում], գ. 1. Օդերևույթ: 2. Ասուպ, երկնաքար:

ՄԵՏԵՈՐԻՏ [< метеорит < հուն.], գ. (աստղգ.): Վայր ընկնող աստղ, օդաքար, ասուպ, երկնաքար:

ՄԵՏԵՈՐՈԳՐԱՖ [< метеорограф < հուն. meteōr մթնոլորտային երևույթներ + graphō գրում եմ], գ. ած. Օդերևութագիր:

ՄԵՏԵՈՐՈԼՈԳ [< метеоролог < հուն.], գ. ած. Օդերևութաբան:

ՄԵՏԵՈՐՈԼՈԳԻԱ [< метеорология < հուն. meteōrologia], գ. Օդերևութաբանություն:

ՄԵՏԻՍ [< метис < ֆր. métis], գ. 1. (կենսբ.): Երկու տարբեր ցեղերի խաչասերումից առաջ եկած կենդանի կամ բույս: 2. (ազգգր.): Տարբեր ցեղերի պատկանող տղամարդու և կնոջ ամուսնությունից ծնված զավակ, խառնածին:

ՄԵՏԻՍԱՅՈՒՄ, գ. (կենսբ.): Խաչաձևում, խաչավորում:

ՄԵՏԼԱԽ [< метлах < գերմանական Մետլախ քաղաքի անունից], գ. Կավագործական յուրատեսակ սալիկ և նրա անվանումը, հախճասալ:

ՄԵՏՈՆԻՄԻԱ [< метонимия < հուն. metōnymia վերանվանում], գ. (գրկն.): Փոխանունություն:

...ՄԵՏՐ [< ...метр < հուն. metron չափ] Բարդ բառերի վերջնամաս, որ նշանակում է՝ 1. չափիչ սարք (օր.՝ ամպերմետր, բարոմետր): 2. Երկարության չափ՝ մետրական համակարգում (օր.՝ դեցիմետր, կիլոմետր):

ՄԵՏՐ I [< метр < ֆր. mètre < հուն. metron չափ], գ. Չափի մետրական համակարգի միավոր =100 սմ:

ՄԵՏՐ II [< метр < հուն.], գ. (երժշտ.): Երաժշտության ռիթմի կազմակերպման համակարգը: Գոյանում է ժամանակի շեշտված և անշեշտ մասերի ցիկլային հավասարաչափ պուլսացիայից:

ՄԵՏՐ III [< метр < ֆր. maître], գ. 1. Ուսուցիչ, գիտական ղեկավար: 2. Շնորհաշատ, գիտության մեջ մեծ հաջողությունների հասած մարդուն տրվող մականուն:

ՄԵՏՐԱԺ [< метраж < ֆր. métrage], գ. Որևէ բանի երկարությունը կամ տարածությունը մետրերով:

... ՄԵՏՐԻԱ [< метрия < հուն. metron չափ, metreō չափում եմ] Բարդ բառերի մաս, որ համապատասխանում է հայկական «... չափություն» մասին:

ՄԵՏՐԻԿԱ I [< метрика < հուն. metrikē < metron], գ. (գրկն.): Տաղաչափություն:

ՄԵՏՐԻԿԱ II [< метрика < լեհ. metryka < matricule ցուցակ], գ. (հնց.): Ծննդյան վկայական:

ՄԵՏՐՈ [< метро < ֆր. métropolitain կրճատված ձևը], գ. (տրանս.): Ուղևորներ փոխադրող քաղաքային ստորգետնյա էլեկտրական փոխադրամիջոց:

ՄԵՏՐՈՆՈՄ [< метроном < հուն. metron չափ + nomos օրենք], գ. (երժշտ.): Չափահար՝ երաժշտության կատարման արագությունը ճշգրիտ որոշելու և վերարտադրելու գործիք: Բաղկացած է ճոճանակից և մեկ րոպեում նրա տատանումների քանակը ցույց տվող սանդղակից:

ՄԵՏՐՈՊՈԼԻԱ [< метрополия < հուն. mētropolis < meter մայր + polis քաղաք], գ. Մայր երկիր՝ իր գաղութներով:

ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ [< метрополитен < ֆր. métropolitain], գ. (տրանս.): Ստորերկրյա ներքաղաքային էլեկտրական երկաթուղու համակարգ:

ՄԵՐ [< мэр < ֆր. maire], գ. Տեղական կառավարման համակարգի ղեկավար որոշ երկրներում, քաղաքապետ:

ՄԵՐԻԱ [< мэрия < ֆր. mairie], գ. Քաղաքային ղեկավարություն, նաև մունիցիպալ ղեկավարության շենքը:

ՄԵՐԻԴԻԱՆ [< меридиан < լատ. meridianus կեսօրվա], գ. (աշխրգր. հնց.): 1. Միջօրեական, միջօրեագիծ: 2. (աստղգ.): Երկնային միջօրեագիծ, միջօրեական:

ՄԵՐԻՆՈՍ [< меринос < իսպ. merinos հոգն.], 1. (կենդբ.): Մետաքսանման փափուկ բրդով ոչխար: 2. Այդ ոչխարի բուրդը:

ՄԵՐԻՍԹԵՄԱ [< меристема < հուն. meristēs բաժանելի], գ. (բսբ.): Բույսերի հյուսվածք, որը երկար ժամանակ պահպանում է կիսվելու և նոր բջիջներ առաջացնելու ունակությունը:

ՄԵՐԿԱՆՏԻԼ [< ռուս. меркантильный < ֆր. mercantile], ած. 1. Մերկանտիլիզմին հատուկ: 2. *փխբ.* Շահամոլական, շահախնդրական:

ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄ [< меркантилизм < ֆր. mercantilisme < իտլ. mercante առևտրական], գ. 1. (տնտսգ. պատմ.): XVI-XVII դարերի տնտեսական ուսմունք և տնտեսական քաղաքականություն Եվրոպայում, որը հիմնված է այն սկզբունքի վրա, թե իբր երկրի բարեկեցությունը պայմանավորված է ներմուծման նկատմամբ արտահանման գերակշռությամբ և դրամական կապիտալի կուտակումով: 2. *փխբ.* Շահախնդրություն, շահամոլություն:

ՄԵՐԿԱՆՏԻԼԻՍՏ [< меркантилист < ֆր.], գ. ած. Մերկանտիլիզմի հետևորդ:

ՄԵՐԿՈՒՐՈՌԵԴՈՒԿՏՈՄԵՏՐԻԱ [< меркуроредуктометрия < լատ. mercurius սնդիկ + eductio վերականգնում, վերադարձ + ...մետրիա], գ. (քիմ.): Սնդիկաչափություն՝ քիմիական անալիզի տիտրաչափական եղանակ:

ՄԵՐՈՄՈՐՖ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ [< мероморфические (< հուն. meros մաս + morphē ձև, տեսք) функции] - (մաթ.): Սրանք տրված G տիրույթում (մասնավորաբար վերջավոր կոմպլեքս հարթության մեջ) կարող են ներկայացվել երկու միարժեք անալիտիկ (ամբողջ) ֆունկցիաների հարաբերության տեսքով:

ՄԵՐՍԻ [< мерси < ֆր. merçi], եղնկ. բառ, (խսկց.): Շնորհակալություն:

ՄԵՑՑՈ-ՍՈՊՐԱՆՈ [< меццо-сопрано < իտլ. mezzosoprano < mezzo միջին], գ. (երժշտ.): Կանացի երգչական ձայն, սոպրանոյի և կոնտրալտոյի նկատմամբ միջին դիրքում:

ՄԵՑՑՈ-ՏԻՆՏՈ [< меццо-тинто < իտլ. mezzo + tinto գունավորված, երանգավորված], գ. (տեխ.): Մետաղի վրա փորագրության տեսակ, որն առնչվում է խորը տպագրությանը:

ՄԵՖԻՍՏՈՖԵԼ [< Мефистофель < հուն. Mephistopheles], գ. Տարբեր երկրների ու ժողովուրդների բանահյուսությունն ու գեղարվեստական գրականությունը հաճախ են օգտագործել դևի՝ չարության ոգու և մարդու դաշինքի մոտիվը: Յո. Գյոթեի «Ֆաուստ» փիլիսոփայական ողբերգությունում Մեֆիստոֆելը գայթակղիչ է և Ֆաուստի ախոյանը:

ՄԹՆՈԼՈՐՏԻ ՍՏՐԱՏԻՖԻԿԱՑԻԱ [< стратификация < լատ. stratum շերտ + facio անել, կատարել] – (երկրբ.): Մթնոլորտի ջերմային ստրատիֆիկացիա՝ օդի ջերմաստիճանի բաշխումն ըստ բարձրության:

ՄԻ [< ми < լատ. mi], գ. (երժշտ.): Մի (նոտա):

ՄԻԳՐԱՑԻԱ [< миграция < լատ. migratio վերաբնակեցում, գաղթ], գ. (գիտ.): Գաղթ, արտագաղթ, տեղափոխություն:

ՄԻԳՐԵՆ [< мигрень < ֆր. migraine < հուն. hēmikrania գանգի կես], գ. (բժշկ.): Նյարդային հիվանդություն, որ արտահայտվում է ուժեղ ցավի նոպաներով՝ սովորաբար գլխի մեկ կողմում:

ՄԻԴԻ [< миди < անգլ. middle միջին], գ. (խսկց.): Ծնկներից մի քիչ ներքև հասնող կնոջ շրջազգեստ, կիսաշրջազգեստ կամ վերարկու:

ՄԻԵԼԻՏ [< миелит < հուն. myelos (ոսկրյա) ուղեղ], գ. (բժշկ.): Ողնուղեղի բորբոքում:

ՄԻԵԼՈՄԱ [< миелома < հուն. myelos + oma ուռուցքների անվանման վերջածանց], գ. (բժշկ.): Միելոմային հիվանդություն, միելոմատոզ, լեյկոզների խմբի արյան հիվանդություն:

ՄԻԶԱՆՍՑԵՆ [< мизансцена < ֆր. mise en scène], գ. (թատր.): Դերասանների դասավորումը (դասավորությունը) բեմում ներկայացման այս կամ այն պահին:

ՄԻԶԱՆՏՐՈՊ [< мизантроп < հուն. misanthrōpos], գ. ած. Մարդատյաց:

ՄԻԶԱՆՏՐՈՊԻԱ [< мизантропия < հուն. misanthrōpia], գ. Մարդատյացություն:

ՄԻԼԵԴԻ [< миледи < ֆր. milady < անգլ. my + lady = իմ տիկին], գ. Նշանավոր, ամուսնացած կամ լորդի կնոջ անվանումը Անգլիայում:

ՄԻԼԵՆԻՈՒՄ [< миллениум < լատ. mille հազար + annus տարի], գ. 1. (կրոն.): Քրիստոսի «երկրային թագավորության» միստիկական հավատ, որը սկսվելու է նրա երկրորդ հայտնությունից հետո՝ աշխարհի կործանումից առաջ: 2. Հազարամյակ

ՄԻԼԻ... [< милли... < լատ. mille հազար] Ելակետային միավորից հազար անգամ փոքր միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց:

ՄԻԼԻԱՐԴ [< миллиард < ֆր. milliard], թվ. Հազար միլիոն:

ՄԻԼԻԱՐԴԵՐ [< миллиардер < ֆր. milliardaire < լատ.], գ. (խսկց.): Միլիարդատեր:

ՄԻԼԻԳՐԱՄ [< миллиграмм < միլի... + ֆր. gramme < հուն. gramma քաշի փոքր չափ], գ. Գրամի մեկ հազարերորդ մասը:

ՄԻԼԻՄԵՏՐ [< миллиметр < միլի... + ֆր. metre < հուն. metron չափ], գ. Մետրի մեկ հազարերորդ մասը:

ՄԻԼԻՄԻԿՐՈՆ [< миллимикрон < միլի... + հուն. mikros փոքր], գ. Միկրոնի մեկ հազարերորդ մասը:

ՄԻԼԻՈՆ [< миллион < ֆր. million], թվ. Հազար անգամ հազար (=1000 000):

ՄԻԼԻՈՆԵՐ [< миллионер < ֆր. millionnaire < լատ.], գ. (խսկց.): Միլիոնատեր:

ՄԻԼԻՏԱՐԻԶԱՑԻԱ [< милитаризация < լատ. militaris ռազմական, զինվորական], գ. Ռազմականացում:

ՄԻԼԻՏԱՐԻԶՄ [< милитаризм < լատ. militaris ռազմական], գ. (քղք.): Ռազմամոլություն՝ պետության ռազմական հզորությունը մեծացնելու քաղաքականություն:

ՄԻԼԻՏԱՐԻՍՏ [< милитарист < լատ.], գ. (քղք.): Ռազմամոլ:

ՄԻԼԻՑԻԱ [< милиция < լատ. militia զորք], գ. 1. Պետական կարգը և հասարակական անվտանգությունը ապահովող վարչական մարմին, ոստիկանություն: 2. Միլբաժանմունք: 3. (խսկց.): Միլիցիոներ, ոստիկան:

ՄԻԼԻՑԻՈՆԵՐ [< милиционер < լատ.], գ. Միլիցիայի աշխատող, որ հսկում է հասարակական կարգի պահպանությունը ոստիկան:

ՄԻԼՈՆԻՏ [< милонит < հուն.], գ. (հնք.): Ճմլված, փշրված ապար. առաջանում է խզումնային խախտումների, հատկապես վրաշարժերի և վերնետվածքների գոտիներում:

ՄԻԼՈՐԴ [< милорд < անգլ. milord < my իմ + lord տեր], գ. Հարգական կոչում, որով Անգլիայում դիմում են լորդերին և լորդերի պալատի անդամներին:

ՄԻԿԱԴՈ [< микадо < ճապ. mikado վեհապանծ դուռ], գ. 1. Ճապոնական կայսրի տիտղոսը: 2. (խոհր.): Խմորեղենի տեսակ:

ՄԻԿՈԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ [< микобактерии < հուն. mykēs սունկ + բակտերիաներ], գ. (կենսբ.): Բակտերիաների ցեղ, որոնք ախտածին են և առաջացնում են ծանր հիվանդություններ՝ տուբերկուլյոզ, բոր ևն:

ՄԻԿՈԼՈԳԻԱ [< микология < գերմ. Mykologie < հուն. mykēs սունկ + logos գիտություն], գ. (բսբ.): Սնկագիտություն, սնկաբանություն:

ՄԻԿՈՌԻԶ [< микориза < հուն. mykēs + rhiza արմատ], գ. (բսբ.): Սնկարմատ՝ սնկարմատի և բարձրակարգ բույսի արմատի փոխշահավետ համակեցություն:

ՄԻԿՐՈ... [< микро... < հուն. mikros շատ փոքրիկ, մանր] 1. Բարդ բառերի բաղադրիչ մաս, որ ցույց է տալիս որևէ բանի փոքր չափերը: 2. Եվակետային միավորից միլիոն անգամ փոքր միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց:

ՄԻԿՐՈԱՇԽԱՐՀ, գ. Տարրական մասնիկների աշխարհ:

ՄԻԿՐՈԲ [< микроб < հուն. mikros + bios կյանք], գ. (կենսբ.): Մանրէ:

ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳ [< микробиолог < հուն. mikros + bios կյանք + logos ուսմունք], գ. ած. (կենսբ.): Մանրէակենսաբան:

ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱ [< микробиология < հուն. mikros + bios կյանք + logos ուսմունք], գ. (գիտ.): Մանրէակենսաբանություն:

ՄԻԿՐՈԿ(Ց)ԵՖԱԼԻԱ [< микрок(ц)ефалия < հուն. mikros փոքր + kephalē գլուխ], գ. (բժշկ.) : Փոքրագանգություն:

ՄԻԿՐՈԿԼԻՄԱ [< микроклима < միկրո... + կլիմա], գ. 1. (երկրբ.): Օդի գետնամերձ փոքր շրջանի կամ տեղամասի կլիմա: 2. Փակ շինություններում ստեղծվող կլիմա, արտաքին անբարենպաստ ներգործությունից պաշտպանվելու և հարմարավետության գոտի ստեղծելու համար:

ՄԻԿՐՈԿՈՍՄՈՍ [< микрокосмос < հուն. mikrokosmos < mikros մանր + kosmos աշխարհ], գ. 1. (փիլ.): Մանրաշխարհ, տիեզերքի ամփոփումը փոքր բանի՝ մարդու մեջ (ըստ հին փիլիսոփաների): 2. (բնգ.): Նյութի տարրական մասնիկների՝ ատոմների և էլեկտրոնների աշխարհը, միկրոտիեզերք:

ՄԻԿՐՈՄԵՏՐ [< микрометр < հուն. mikros + ֆր. métre < հուն. metron], գ. Գծային մեծությունները ճշգրտորեն չափելու գործիք:

ՄԻԿՐՈՆ [< микрон < հուն. mikron փոքր, քիչ], գ. Միլիմետրի մեկ հազարերորդական մասը:

ՄԻԿՐՈՊԻԼԵ [< микропиле < միկրո... + հուն. pylē դարպաս, անցք], գ. 1. (կենդբ.): Միջատների, սարդակերպերի, որոշ փափկամորթների, ձկների թաղանթի վրա գտնվող մեկ կամ մի քանի անցք, որոնց միջով սպերմատոզոիդը թափանցում է ձվաբջջի մեջ: 2. (բսբ.): Փոշեմուտք, սերմնամուտք՝ բարձրակարգ սերմնավոր բույսերի սերմնաբողբոջների գագաթնային անցք, որով փոշոտման ժամանակ ներս է մտնում փոշեխողովակը:

ՄԻԿՐՈՌԵԼԻԵՖ [< микрорельеф < միկրո... + ռելիեֆ], գ. (երկրբ.): Ռելիեֆի ձևեր, որոնք հանդիսանում են Երկրի տարբեր տեղամասերի մակերևույթի խոշոր ձևերի մանրամասները, որոնց հարաբերական բարձրությունը չի անցնում մի քանի մետրից (օր.՝ բլուրներ, փոքր ձագարներ, ավազաթմբեր, տափաստանային ափսեներ ևն):

ՄԻԿՐՈՍԿՈՊ [< микроскоп < հուն. mikrōs + skopeō նայում եմ, դիտում եմ], գ. (հնց.): Մանրադիտակ՝ խիստ խոշորացնող ապակիների համակարգով տեսողական գործիք՝ անզեն աչքով անտեսանելի առարկաներ՝ մասնիկներ, մարմիններ տեսնելու համար:

ՄԻԿՐՈՍՈՄՆԵՐ [< микросомы < միկրո... + հուն. sōma մարմին], գ. (կենսբ.): Էնդոպլազմային ցանցի հատվածներ (մինչև 1000Å տրամագծով բշտիկներ). առաջանում են բույսերի և կենդանիների հյուսվածքների հոմոգենացման գործընթացում բջիջների քայքայումից:

ՄԻԿՐՈՍՈՑԻՈԼՈԳԻԱ [< микросоциология < միկրո... + լատ. soci (etas) հասա-

ռակություն + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): XX դարում ձևավորված սոցիոլոգիայի ուղղության, որն ուսումնասիրում է սոցիալական փոքր խմբերի (ընտանիք, դասարան, խումբ են) կառուցվածքը և գործառույթները:

ՄԻԿՐՈՍՊՈՐՆԵՐ [< микроспоры < միկրո... + հուն. spora սերմ], գ. (բսբ.): Բարձրակարգ տարասպոր բույսերի (պտերաանմաններ, սերմնավորներ) մանր սպորներ:

ՄԻԿՐՈՏԱՐՐԵՐ, գ. (կենսբ.): Օրգանիզմներում փոքր (սովորաբար տոկոսի հազարերորդական մասեր) քանակներով պարունակվող և դրանց բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ քիմիական տարրեր:

ՄԻԿՐՈՏՐՈՆ [< микротрон < միկրո... + էլեկ(տրոն)], գ. (տեխ.): Էլեկտրոնային ցիկլոտրոն՝ թեթև տարրական մասնիկների ցիկլիկ ռեզոնանսային արագացուցիչ: Աշխատանքի հիմքում ընկած է խորհրդային ֆիզիկոս Վ. Հ. Վեքսլերի գաղափարը:

ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄ [< микроорганизм < հուն. mikros + միջին լատ. organismus < հուն. organon գործիք], գ. (կենդբ.): Անզեն աչքով անտեսանելի կենդանական կամ բուսական օրգանիզմ:

ՄԻԿՐՈՖԱԳԵՐ [< микрофаги < միկրո... + հուն. phagos խժռող], գ. (կենդբ.): Ողնաշարավոր կենդանիների և մարդու արյան սպիտակ գնդիկների՝ լեյկոցիտների ձևերից մեկը:

ՄԻԿՐՈՖԱՈՒՆԱ [< микрофауна < միկրո... + ֆաունա], գ. (երկրբ.): Երկրաբանության մեջ՝ կենդանական աշխարհի մանրադիտակային և մանր օրգանիզմների մնացորդների ամբողջություն, որոնց համակարգային պատկանելությունը որոշելու համար պահանջվում է օգտագործել օպտիկական միջոցներ՝ մանրադիտակ, բինոկուլյար ևն:

ՄԻԿՐՈՖԼՈՐԱ [< микрофлора < միկրո... + ֆլորա], գ. (կենսբ.): Բնական միջավայրերում՝ հողում, օդում, ջրում, սննդանյութերում, մարդու և կենդանիների, բույսերի օրգանիզմում գտնվող միկրոօրգանիզմների ամբողջություն:

ՄԻԿՐՈՖՈՆ [< микрофон < հուն. mikrōs + phonē հնչյուն], գ. (տեխ.): Ձայնային տատանումները էլեկտրականի փոխարկող սարք, մանրաձայն, խոսափող:

ՄԻՄԱՆՍԱ [< миманса < սանսկրիտ mimansa հետազոտում, ներթափանցում, բանավեճ], գ. (փիլ. պատմ.): Հին հնդկական վեց ուղղափառ փիլիսոփայական ուսմունքներից հինգերորդը, որն զբաղվում էր վեդաների մեկնությամբ:

ՄԻՄԵՍԻՍ [< мимесис < հուն. mimētēs նմանակող], գ. (գիտ.): Գեղագիտության մեջ ուսմունք, որը գեղարվեստական ստեղծագործությունը և մարդկային իմացությունը համարում է իրականության նմանեցում և վերարտադրում:

ՄԻՄԵՏԻԶՄ [< миметизм < հուն.], գ. (կենսբ.): Մի տեսակի կենդանիների (իմիտատոր) նմանությունը թշնամիներից ինչ-որ ձևով պաշտպանված այլ տեսակի (մոդել) հետ: Միմիկրիայի մասնավոր դեպքն է:

ՄԻՄԻԿԱ [< мимика < հուն. mimikos նմանական, նմանողական], գ. Երեսի մկանների շարժումը, որ արտահայտում է հոգեկան ապրումները, վերաբերմունքը ևն,

դիմախաղ, դիմաշարժություն:

ՄԻՄԻԿՐԻԱ [< мимикрия < անգլ. mimicry նմանողականություն], գ. (կենսբ.): Հովանավորող, պաշտպանող գունավորում, ընդօրինակում:

ՄԻՄՈԶԱ [< мимоза < հուն. mimos նմանորդ, օրինակող], գ. (բսբ.): Թիթեռածաղիկների ընտանիքին պատկանող ծաղկաբույս, պատկառուկ:

ՄԻՄՈՍ [< հուն. mimos], գ. (հնց. խսկց.): Ճաղրածու, խեղկատակ:

ՄԻՆԱՐԵԹ [< минарет < թուրք. minarä < արաբ. manâra փարոս], գ. (կրոն. ճարտ.): Մզկիթի բարձր աշտարակ, որտեղից մոեձինը կանչում է մահմեդականներին աղոթքի:

ՄԻՆԵՏ [< минет < ֆր. minette կատվիկ], գ. Սեռական հարաբերության տեսակ, երբ կինը բերանով գրգռում է տղամարդու սեռական օրգանը:

ՄԻՆԵՐԱԳՐԱՖԻԱ [< минераграфия < ուշ լատ. minera հանքանյութ + հուն. graphō գրում եմ], գ. (հնք.): Հանքաբանության բաժին, որն ուսումնասիրում է հանքանյութերի և հանքային միներալների բաղադրությունն ու կառուցվածքը մի շարք յուրահատուկ մեթոդների (ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ) օգնությամբ:

ՄԻՆԵՐԱԼ [< минерал < ֆր. minéral < լատ. minera հանք], գ. (հնք.): Հանք:

ՄԻՆԵՐԱԼԻԶԱՏՈՐՆԵՐ[< минерализаторы < ֆր.], գ. (երկրբ.): Մագմայում և հիդրոթերմալ լուծույթներում լուծված դյուրացնդող ու քիմիապես բավական ակտիվ (հատկապես բարձր ջերմաստիճաններում) նյութեր:

ՄԻՆԵՐԱԼՈԳ [< минералог < ֆր. minéral + հուն. logos ուսմունք], գ. ած. (հնք.): Հանքաբանության մասնագետ, հանքաբան՝ հանքագետ:

ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱ [< минералогия < ֆր. minéral + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Հանքաբանություն, հանքագիտություն:

ՄԻՆԻ [< мини < լատ. minimus ամենափոքր], գ. (խսկց.): Ծնկներից վերև հասնող կնոջ շրջազգեստ կամ կիսաշրջազգեստ:

ՄԻՆԻԱՏՅՈՒՐ [< миниатюра < իտլ. miniatura], գ. ած. 1. (նկարչ.): Մանրանկար: 2. Շատ փոքր, փոքրագույն:

ՄԻՆԻՄԱԼ [< минимальный < լատ. minimus ամենափոքր, փոքրագույն], ած. (խսկց.): Նվազագույն, ամենաքիչ:

ՄԻՆԻՄԱԼԻԶՄ [< минимализм < լատ. minimus ամենափոքր, փոքրագույն], գ. Պահանջների ծայրահեղ նվազեցում, պահանջները նվազագույնին հասցնելը:

ՄԻՆԻՄԱԼԻՍՏ [< минималист < լատ.], գ. Մինիմալիզմի կողմնակից:

ՄԻՆԻՄԵՏՐ [< миниметр < լատ. minimus փոքրագույն + հուն. metrōn չափ], գ. (տեխ.): Գծային չափերի չափման սարք, որում փոխակերպիչ մեխանիզմ է ծառայում դանակավոր հենարանների վրա տեղադրված տարրերով անհավասարաչափ բազուկ լծակը:

ՄԻՆԻՄՈՒՄ [< минимум < լատ. minimum նվազագույն], գ. ած. (խսկց.): 1. Նվազագույն չափ՝ աստիճան: 2. Նվազագույն գիտելիք՝ ձեռնարկում:

ՄԻՆԻՍՏՐ [< министр < ֆր. ministre < լատ. ministerium ծառայություն, պաշտոն < minister regis թագավորի ծառա], գ. (հնց.): Նախարար՝ կառավարության անդամ, որ ղեկավարում է որևէ մինիստրություն՝ նախարարություն:

ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ, գ. (հնց.): 1. Կենտրոնական կառավարական հիմնարկություն, որ վարում է պետական կառավարական որևէ ճյուղ, նախարարություն: 2. Այդ հիմնարկության շենքը: 3. Որևէ կառավարության ամբողջական կազմը որոշ երկրներում:

ՄԻՆՆԵԶԻՆԳԵՐ [< миннезингер < գերմ. Minnesinger], գ. (պատմ): Պալատական երգիչ-բանաստեղծ միջնադարյան Գերմանիայում:

ՄԻՆՈՏԱՎՐՈՍ [< минотавр < հուն. minōtauros], գ. (դից.): Հունական դիցաբանական հրեշ՝ մարդու մարմնով և ցուլի գլխով: Բնակվել է Դեդալոսի կառուցած լաբիրինթոսում, սնվել է Աթենքից ամեն տարի ուղարկվող պատանիների ու աղջիկների մարմիններով: Հրեշին սպանել է Թեսևս դյուցազնը:

ՄԻՆՈՐ [< минор < իտլ. minore < լատ. minor ավելի քիչ՝ փոքր՝ նվազ], գ. 1. (երժշտ.): Եվրոպական երաժշտության մեջ՝ այն գամման, որի մեջ բարձրանալիս երկրորդից երրորդ և հինգերորդից վեցերորդ աստիճանները կիսաձայն են, իսկ վեցերորդից յոթերորդ աստիճանը՝ մեկուկես ձայն: 2. Թախծալի, մեղմ տոն:

ՄԻՆՈՒՍ [< минус < լատ. minus ավելի փոքր, ամենափոքր], 1. գ. (մաթ.): Թվաբանական նշան, որ ցույց է տալիս, թե տվյալ թիվը հանվելու է մյուս թվից (գրվում է – նշանով): 2. (ֆիզ.): Բացասական հոսանք՝ լիցք: 3. (մաթ.): Բացասական մեծու-թյուն: 4. Ջերմաստիճաններ նշանակելիս՝ զրոյից ցածր աստիճան: 5. *փխբ.* Պակասություն, թերություն: 6. Դպրոցական գնահատականների աջ կողմից դրված՝ պակաս, ոչ լրիվ:

ՄԻՆՈՒՍԿՈՒԼԱ [< минускула < լատ. minuscula շատ փոքրիկ], գ. (լեզվբ.): Փոքրատառ (լատինական և հունական հին ձեռագրերում):

ՄԻՈ... [< мио... < հուն. mys (myos) մկան] Բարդ բառերի սկզբնամաս. օգտագործվում է մկաններին առնչվող տերմիններում:

ՄԻՈԳԼՈԲԻՆ [< миоглобин < միո... + լատ. globus], գ. (կենսբ.): Մկանագլոբին՝ գլոբուլինային սպիտակուց, որն իրականացնում է մկաններում մոլեկուլային թթվածնի պահեստավորումը և այն հասցնում բջիջների օքսիդացնող համակարգին:

ՄԻՈԶԻՆ [< миозин < միո...], գ. (կենսբ.): Թելիկային սպիտակուց՝ մկանների կծկողական թելիկների հիմնական բաղադրամասերից մեկը. կազմում է մկանային սպիտակուցների ընդհանուր քանակի 40-60 %-ը:

ՄԻՈԼՈԳԻԱ [< миология < միո... + հուն. logōs գիտություն], գ. (կենսբ.): Մկանաբանություն, մկանագիտություն:

ՄԻՈԿԱՐԴ [< миокард < միո... + հուն. kardia սիրտ], գ. (կզմխս.): Սրտամկան:

ՄԻՈԿԱՐԴԻՈԴԻՍՏՐՈՖԻԱ [< миокардиодистрофия < միո... + kardia սիրտ + strophia խանգարում], գ. (բժշկ.): Սրտամկանի սնուցախանգարում:

ՄԻՈԿԱՐԴԻՏ [< миокардит < միո...+ հուն. kardia], գ. (բժշկ.): Սրտամկանի բորբոքում:

ՄԻՈՄԱ [< миома < միո... + հուն. ...ōma վերջավորություն ուռուցք իմաստով], գ. (բժշկ.): Մկանային ուռուցք:

ՄԻՈՆԵՄՆԵՐ [< мионемы < միո... + հուն. nema թել], գ. (կենսբ.): Նախակենդա-

նիների ցիտոպլազմայում, մարմնի մակերևութային շերտերում գտնվող սպիտակուցային թելիկներ:

ՄԻՈՊԻԱ [< миопия < ֆր. myopie < հուն. myōps (myopos) կարճատես], գ. (բժշկ.): Կարճատեսություն:

ՄԻՈՑԵՆ [< миоцен < միո... + հուն. kainos նոր], գ. (երկրբ.): Նեոգենի ստորին բաժինը: Ստորաբաժանվում է երեք ենթաբաժինների: Առանձնացրել է անգլիացի երկրաբան Չ. Լայելը 1841թ.:

ՄԻՉՄԱՆ [< мичман < անգլ. midshipman], գ. 1. Ավագների կազմի բարձրագույն կոչում՝ ռազմածովային նավատորմում, ինչպես և այդ կոչումով անձը: 2. Նավատորմի առաջին սպայական աստիճանը ցարական Ռուսաստանում, ինչպես նաև այդ կոչումով անձը:

ՄԻՍԻԱ [< миссия < լատ. missio առաքում, ուղարկում < mittere առաքել], գ. (քղք.): 1. Ժամանակավոր պատվիրակություն՝ հանձնարարություն կատարելու համար: 2. Պետության մշտական ներկայացուցչություն ուրիշ պետության մեջ: 3. Հատուկ նպատակով մի պետության կողմից մի այլ տերություն ուղարկված ներկայացուցիչների խումբ: 4. Առաքելություն, նախասահմանված գործ՝ մեծ դեր, կոչում:

ՄԻՍԻՈՆԵՐ [< миссионер < ֆր. missionnaire < լատ. missio հանձնարարություն], գ. (կրոն.): Քրիստոնյա քարոզիչ, որ ուղարկվում է այլ երկրներ՝ կրոնական քարոզչության և մարդկանց քրիստոնեական կրոնին դարձնելու համար, առաքյալ:

ՄԻՍԻՍ [< миссис < անգլ. mistress], գ. Ամուսնացած կնոջ հորջորջումը Անգլիայում և Ամերիկայում, տիկին:

ՄԻՍՍ [< мисс < անգլ. miss], գ. Չամուսնացած աղջկա հորջորջումը Անգլիայում և Ամերիկայում, օրիորդ:

ՄԻՍՏԵՐ [< мистер < անգլ. mister], գ. Տղամարդու հորջորջումը Անգլիայում և Ամերիկայում, պարոն:

ՄԻՍՏԵՐԻԱ [< мистерия < հուն. mystērion գաղտնիք], գ. 1. Խորհրդավոր ծիսակատարություն Հին աշխարհում, որին մասնակցում էին միայն նվիրյալները: 2. (թատր.): Միջնադարյան կրոնական դրամա՝ աստվածաշնչյան թեմաներով:

ՄԻՍՏԻԿ [< мистик < հուն.], ած. գ. 1. Միստիցիզմի հետևորդ, խորհրդապաշտ: 2. Միստիկայի հետևորդ: 3. Միստիկական:

ՄԻՍՏԻԿԱ [< мистика < հուն. mystika գաղտնիություն], գ. 1. (կրոն.): Կրոնական հավատ՝ այսպես կոչված անդրշիրիմյան հաղորդակցության հնարավորության մասին, խորհրդազգացություն, խորհրդապաշտություն: 2. Խորհրդավոր՝ անբացատրելի՝ անիմանալի բան:

ՄԻՍՏԻՑԻԶՄ [< мистицизм < հուն.] գ. (կրոն.): Միստիկայի վրա հիմնված կրոնական իդեալիստական աշխարհայացք, խորհրդազգացություն, խորհրդապաշտություն:

ՄԻՍՏԻՖԻԿԱՑԻԱ [< мистификация < ֆր. mystification < հուն. mystēs գաղտնիք իմացող + լատ. facere անել], գ. Դիտավորյալ մոլորեցում՝ խաբկանք՝ խաբեություն:

ՄԻՍՏՐԱԼ [< мистраль < ֆր. mistral], գ. (երկրբ.): Հյուսիսարևմտյան ուժեղ և սառը քամի, երբեմն փչում է դեպի Ֆրանսիայի միջերկրածովյան ափը՝ բերելով ձմռանը ցուրտ եղանակ:

ՄԻՏԵԼՇՊԻԼ [< миттельшпиль < գերմ. Mittelspiel, բառացի՝ խաղի միջնամաս], գ. (սպորտ.): Շախմատում և շաշկիում՝ խաղի միջնամաս:

ՄԻՏԻՆԳ [< митинг < անգլ. meeting հանդիպում], գ. (խսկց.): Հրապարակային

ժողով՝ նվիրված որևէ հրատապ, առավելապես քաղաքական հարցի՝ իրադարձության նն:

ՄԻՏՈԶ [< митоз < հուն. mitos թել], գ. (կենսբ.): Կարիոկինեզ, անուղղակի բաժանում, բջջի կիսման եղանակ. ապահովում է մայր բջջի գենետիկական նյութի համաչափ բաշխումը երկու դուստր բջիջներում և քրոմոսոմների հաջորդականությունը բջջի մի շարք սերունդներում:

ՄԻՏՈՔՈՆԴՐԻԱՆԵՐ [< митохондрии < հուն. mitos + chondros հատիկ], գ. (կենսբ.): Քոնդրիոսոմներ՝ բուսական և կենդանական բջջի կարևորագույն և մշտապես գոյություն ունեցող օրգանոիդներ, որոնք ապահովում են բջջի շնչառությունը:

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ [< митрополит < հուն. mētropolitēs], գ. (եկեղ.): Ուղղափառ և կաթոլիկ եկեղեցու բարձրագույն կոչումը, ինչպես և այդ կոչումը կրող անձը:

ՄԻՐԱԲ [< мираб < արաբ. mir տեր + պարսկ. ab ջուր], գ. (պատմ.): Հասարակական ոռոգման ջրերի ավագ կարգադրիչ:

ՄԻՐԱԲԵԼ [< мирабель < ֆր. mirabelle], գ. (բսբ.): Մանր ու դեղին քաղցրահամ սալորի մի տեսակ:

ՄԻՐԱԲԻԼԻՏ [< мирабилит < լատ. mirabilis զարմանահրաշ. անվանումը տվել է գերմանացի քիմիկոս Ի. Ռ. Գլաուբերը], գ. (քիմ.): Գլաուբերյան աղ. միներալ սուլֆատների դասից: Օգտագործվում է հիմնականում քիմիական արդյունաբերության բնագավառում սոդայի և կծու նատրիումի ստացման համար, ինչպես նաև բժշկության մեջ՝ որպես լուծողական:

ՄԻՐԱԺ [< мираж < ֆր. mirage < mirer նայել, դիտել], գ. (խսկց.): Օդատեսիլ՝ 1. Տեսողական երևույթ, որ տեղի է ունենում շոգ կլիմաներում, մանավանդ ավազոտ անապատներում, երբ հորիզոնից դուրս գտնվող առարկաները կամ երկնքի մի մասը երևում են օդի մեջ, օդատեսիլ: 2. *փխբ.* Խաբուսիկ՝ ցնորական երևույթ, պատրանք, խաբկանք:

ՄԻՐԱԿԼ [< миракль < ֆր. miracle < լատ. miraculum հրաշք], գ. (պատմ.): Կրոնադրամատիկական ներկայացում միջնադարում:

ՄԻՖ [< миф < հուն. mythos առասպել, ասք, պատում, ավանդություն], գ. Առասպել՝ 1. Հին ժողովրդական զրույց աստվածների ու դիցաբանական հերոսների և աշխարհի ու կյանքի ծագման մասին: 2. *փխբ.* Չիրականացած՝ իբրև առասպել հիշվող բան: 3. *փխբ.* Անհավատալի՝ չափազանցված՝ մտացածին բան: 4. (հնց.): Առակ: 5. (հնց.): Առած:

ՄԻՖՈԼՈԳԻԱ [< мифология < հուն. mythologia], գ. 1. Դիցաբանություն: 2. Առասպելաբանություն:

ՄՅՈՒԶԵՏ [< мюзетт < ֆր. musette], գ. (երժշտ.): 1. Պարկապզուկի տարատեսակ: XVII-XVIII դդ. տարածված է եղել Ֆրանսիայում, կիրառվել է օպերային նվագախմբում: 2. Փողային գործիք՝ հոբոյի տարատեսակ: 3. Ֆրանսիական ժողովրդական արագ պար՝ երկմաս չափով:

ՄՅՈՒԶԻՔԼ [< мюзикль < անգլ. musical < musical comedy], գ. (երժշտ.): Երաժշտական բեմական ստեղծագործություն՝ առավելապես կատակերգական բնույթի, ուր օգտագործվում են էստրադային և կենցաղային երաժշտության, օպերայի և օպերետի, խորեոգրաֆիայի արտահայտչամիջոցներ:

ՄՅՈՒԶԻՔ-ՀՈԼԼ [< мюзик-холл < անգլ. music-hall համերգային դահլիճ], գ. (թատր.): Էստրադային թատրոնի տեսակ:

ՄՆԵՄՈՆԻԿԱ [< мнемоника < հուն. mnēmonikos լավ հիշողություն ունեցող < mnēma հիշողություն], գ. (գիտ.): Հուշամարզություն:

ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ [< мобилизация < ֆր. mobilisation < լատ. mobilis շարժուն, շարժական], գ. (ռազմ.): 1. Պատերազմի համար կատարվող զորահավաք: 2. Ռազմական ուժերը խաղաղ իրադրության վիճակից պատերազմական վիճակի բերելը՝ փոխադրելը: 3. *փխբ.* Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը ռազմական դրության համապատասխանեցնելը: 4. *փխբ.* Մեկին, մի բան գործուն վիճակի մեջ դնելը՝ որոշ նպատակի համար: 5. *փխբ.* Որևէ մեկին այս կամ այն աշխատանքին՝ պաշտոնին ուղարկելը (անկախ իր ցանկությունից): 6. *փխբ.* Լարելը, համապատասխանեցնելը, կենտրոնացնելը: 7. *փխբ.* Ներքին միջոցների ակտիվացում:

ՄՈԲԻԼԻԶՄ [< мобилизм < լատ. mobilis շարժուն], գ. (երկրբ.): Հիպոթեզ, որը ենթադրում է երկրակեղևի մայրցամաքային խոշոր բեկորների հորիզոնական զգալի տեղաշարժերը միմյանց և բևեռների նկատմամբ՝ երկրաբանական ժամանակի ընթացքում:

ՄՈԴԱ [< мода < ֆր. mode < լատ. modus չափ, կերպար, եղանակ, կանոն], գ. 1. Որոշակի հասարակական միջավայրում տվյալ ժամանակում տիրող զգեստավորման, նիստուկացի և նորմաների ամբողջությունը: 2. Զգեստի՝ հարդարանքի և տարազ, նորաձևություն:

ՄՈԴԱԼ [< модальный < ֆր. modal < լատ. modus չափ, եղանակ], ած. (լեզվբ.): Եղանակավորող:

ՄՈԴԵԼ [< модель < ֆր. modéle < իտլ. modello < լատ. modulus կերպար, տիպար, նմուշ], գ. 1. Որևէ շինվածքի՝ գործվածքի և օրինակելի տիպար, նմուշ: 2. Որևէ բանի (կառույցի, մեքենայի և ն) փոքրացրած վերարտադրությունը՝ օրինակը կամ սխեման: 3. Կառուցվածքի տիպ՝ ձև՝ տեսակ: 4. (նկարչ.): Բնօրինակ: 5. Կաղապար: 6. Նկարչական գծագրություն, սխեմա, որով բացատրում են որևէ ֆիզիկական երևույթ կամ գործընթաց: 7. Նախանմուշ, նախօրինակ:

ՄՈԴԵԼԱԳՈՐԾ, գ. ած. Մոդելներ պատրաստող մասնագետ:

ՄՈԴԵԼՅՈՐ [< модельер < ֆր. modeleur], գ. (խսկց.): Մոդելներ (օր.՝ հագուստի) պատրաստող մասնագետ:

ՄՈԴԵՄ [< модем < լատ. modulatio ձևականացում], գ. (հմկրգչ.): Մանրակ, որի միջոցով համակարգիչը միացվում է հեռախոսակապին՝ հեռակա ինֆորմացիա փոխանցելու նպատակով:

ՄՈԴԵՌՆ [< модерн < ֆր. moderne նորագույն, ժամանակակից], ած. Արդիական, ժամանակակից:

ՄՈԴԵՌՆԻԶԱՑԻԱ [< модернизация < ֆր.], գ. Արդիականացում:

ՄՈԴԵՌՆԻԶՄ [< модернизм < ֆր. modernisme], գ. (արվ.): XIX-XX դդ. գրականության և արվեստի մեջ նորագույն հոսանքների ընդհանուր անվանումը:

ՄՈԴԵՌՆԻՍՏ [< модернист < ֆր.], գ. Մոդեռնիզմի հետևորդ:

ՄՈԴԻՖԻԿԱՏՈՐ [< модификатор < լատ.], գ. (տեխ.): Ձևափոխիչ հարմարանք, նաև անձ:

ՄՈԴԻՖԻԿԱՑԻԱ [< модификация < ֆր. modification < լատ. modificatio], գ. 1. Ձևափոխություն՝ կերպարանափոխություն: 2. (կենսբ.): Օրգանիզմի խիստ շեղում ծնողական ձևերից:

ՄՈԴՈՒԼ [< модуль < լատ. modulus չափ], գ. 1. (ֆիզ.): Գործակից: 2. (ճարտ.): Համաչափական միավոր: 3. (մաթ.): Բացարձակ մեծություն:

ՄՈԴՈՒԼԱՑՈՒՄ [< модуляция < լատ. modulatio], գ. (երժշտ.): Երաժշտական երկի մեջ անցումը մեկ տոնայնությունից մյուսը, որ ծառայում է երաժշտական մտքի զարգացմանը:

ՄՈԴՈՒԼՅԱՏՈՐ [< модулятор < լատ. modulator], գ. (տեխ.): Ելևէջիչ:

ՄՈԴՈՒԼՅԱՑԻԱ [< модуляция < լատ. modulatio չափականություն], գ. 1. Ելևէջում: 2. (տեխ.): Էլեկտրական հոսանքի փոփոխում: 3. (ֆիզ.): Էլեկտրական տատանումների փոխակերպում:

ՄՈԴՈՒՍ [< модус < լատ. modus չափ, եղանակ], գ. 1. Անցողիկ այլատեսակություն: 2. Նորմա, սահմանված չափ, քանակաչափ: 3. Պայմանատեսակ, ձևատեսակ: 4. (քեր.): Եղանակ:

ՄՈԴՈՒՍ ՊՐՈՍԵԴԵՆԴԻ [< модус проседенди < լատ. modus procedendi գործողության եղանակ], (դվնգ.): Դիվանագիտական տերմին, որը կիրառվում է այս կամ այն պարտավորության կամ գործողությունների կատարման պայմանների ու կարգի վերաբերյալ համաձայնությունը նշելու համար:

ՄՈԴՈՒՍ ՎԻՎԵՆԴԻ [< модус вивенди < լատ. modus vivendi գոյության միջոց], (դվնգ.): Դիվանագիտական տերմին, որով մատնանշվում է ժամանակավոր կամ նախնական համաձայնագրի կնքումը, երբ անբավարար են մշտական կամ մանրամասն համաձայնագիր կնքելու պայմանները:

ՄՈԶԱԻԿ [< мозаичный < իտլ.], ած. գ. 1. Խճանկարային, խայտանկարչական: 2. Խճանկար:

ՄՈԶԱԻԿԱ [< мозаика < ֆր. mosaïque < իտլ. mosaico], գ. 1. Խճանկար, բազմագույն նյութերով (ապակի, մարմար, գունաքար ևն) շինված նկար, խայտանկար: 2. Խճանկարչություն: 3. *փխբ.* Խայտաբղետություն: 4. Բույսերի հիվանդություն:

ՄՈԹԵԼ [< мотель < անգլ. motel < motorist's hotel-ի կրճատում], գ. (խսկց.): Հյուրանոց ավտոտուրիստների համար:

ՄՈԼԱՍՆԵՐ [< молласы < ֆր. mollase < լատ. molls], գ. (երկրբ.): Հզոր նստվածքային ապարների շերտախումբ, որը հիմնականում կազմված է կոնգլոմերատներից, ավազաքարերից, ալևրոլիտներից, կավերից:

ՄՈԼԵԿՈՒԼ [< молекула < ֆր. molecule < լատ. moles զանգված, մասսա + cula փոքրացուցիչ վերջածանցով], գ. (քիմ.): Նյութի ամենափոքր մասնիկ, որ օժտված է տվյալ նյութի բոլոր հիմնական հատկություններով:

ՄՈԼԻԲԴԵՆ [< молибден < հուն. molybdos արճիճ, կապար], գ. (հնք.): Քիմիական տարր. արծաթավուն սպիտակ փայլով մետաղ, կապարարծաթ:

ՄՈԼԻԲԴԵՆԻՏ [< молибденит < հուն.], գ. (հնք.): Մոլիբդենային հանքանյութերի կարևորագույն միներալ:

ՄՈԼՈԿԱՆ [< ռուս. молокан], գ. Կրոնական աղանդ Ռուսաստանում: Ծագել է XVIII դ. 2-րդ կեսին Տամբովի գավառում: Անվանումը կապում են ավետարանական «հոգևոր կաթի» (словесное молоко)՝ իրենց քարոզած Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուսմունքի, ինչպես նաև պասի օրերին կաթ խմելու սովորույթի հետ:

ՄՈԿԿՈ [< мокко < Կարմիր ծովի ափին գտնվող Մոկկա նավահանգստի անունից], գ. (բսբ.): Սուրճի ընտիր՝ արժեքավոր տեսակ:

ՄՈՀԻԿԱՆ [< могикане < անգլ. Mohican < հյուսիսամերիկյան հնդկացիների լեզվից], գ. 1. (ազգգր.): Հյուսիսամերիկյան հնդկացիների ցեղեր, որոնք ապրում էին Գուդզոն գետի ափին: 2. *փխբ.* Ինչ-որ բանի՝ մեկի վերջին ներկայացուցիչը:

ՄՈՄԵՆՏ [< момент < լատ. momentum < movere շարժել], գ. (խսկց.): 1. Պահ: 2. Հանգամանք, պարագա: 3. Կողմ, գիծ, բնույթ, գործոն:

ՄՈՆԱԴ [< монада < հուն. monas (monados) միավոր, անբաժանելի], գ. (փիլ.): Հասկացություն, որ նշանակում է կեցության պարզագույն հիմնատարր, անբաժանելի

մաս: Մոնաղի մասին ամբողջական ուսմունք (մոնաղաբանություն) է մշակել Գ. Լայբնիցը:

ՄՈՆԱՐԽԻԱ [< монархия < հուն. monarchia միապետություն], գ. (քղք.): Պետական կառավարման համակարգ, երբ պետության մեջ բարձրագույն իշխանությունը մեկ անձի՝ միապետի ձեռքում է, միապետություն:

ՄՈՆԱՐԽԻԶՄ [< монархизм < հուն.], գ. (քղք.): Միապետականություն:

ՄՈՆԱՐԽԻՍՏ [< монархист < հուն.], գ. Միապետության կողմնակից:

ՄՈՆԱՑԻՏ [< монацит < գերմ. Monazit < հուն.], գ. (հնք.): Միներալ, հազվագյուտ տարրերի՝ հիմնականում ցերիումի խմբի ֆոսֆատ: Հումք է ցերիում և թորիում ստանալու համար:

ՄՈՆԵՏԱՐԻԶՄ [< монетаризм < ֆր. monétarisme < monétaire դրամային, ֆինանսական], գ. (տնտգ.): Տնտեսագիտական տեսություն, ըստ որի դրամական մասսան, որ գտնվում է շրջանառության մեջ, վճռական դեր է խաղում պետական տնտեսական քաղաքականության մեջ:

ՄՈՆԻԶՄ [< монизм < հուն. monos մեկ], գ. (փիլ.): Փիլիսոփայական համակարգ, որ գոյության նախապատճառ է համարում միայն մեկ սկիզբ՝ կամ մատերիան կամ հոգին:

ՄՈՆԻՍՏ [< монист < հուն. monos], գ. ած. Մոնիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՄՈՆԻՏՈՐ [< монитор < անգլ. monitor < լատ. monitor], գ. 1. Գետային զրահանավ՝ վրան ծանր հրետանի: 2. Ջրանետ մեքենա, ջրանետիչ: 3. (տեխ.): Համակարգչում պահպանված ինֆորմացիան՝ էկրանի վրա տեսանելի արտացոլող սարք: 4. Դիտորդ:

ՄՈՆԻՏ(Թ)ՈՐԻՆԳ [< мониторинг < անգլ. monitoring], գ. 1. (քղք.): Ինչ-որ գործընթացի կամ վիճակի հետևելը: 2. (տնտսգ.): Դիտորդում՝ անընդմեջ վերահսկողություն տնտեսական գործընթացների նկատմամբ:

ՄՈՆՈ... [< моно... < հուն. monos մեկ, միակ] Բարդ բառերի սկզբնամաս, որ նշանակում է մեկ:

ՄՈՆՈԳԱՄԻԱ [< моногамия < մոնո... + հուն. gamos ամուսնություն], գ. (ազգգր.): Մենամուսնություն:

ՄՈՆՈԳԵՆԻԶՄ [< моногенизм < հուն. monos մեկ, միակ + genōs ցեղ, ծագում], գ. (կենսբ.): Միածնության տեսություն (մարդկային ցեղի ծագման մասին):

ՄՈՆՈԳԻՆԻԱ [< моногиния < մոնո... + հուն. gynē կին, կին ամուսին], գ. (կենսբ.): Միակնություն:

ՄՈՆՈԳՐԱՄ [< монограмма < հուն. monos + gramma տառ], գ. (մանգ.): Միացագիր:

ՄՈՆՈԳՐԱՖԻԱ [< монография < մոնո... + հուն. graphō գրում եմ], գ. (հնց.): Մենագրություն:

ՄՈՆՈԴԻԱ [< монодия < հուն. monōdia], գ. (երժշտ. պատմ): Հին Հունաստանում մեկ երգչի երգեցողությունը ավլոսի, կիթառի կամ քնարի նվագակցությամբ:

ՄՈՆՈԹԵԻԶՄ [< монотеизм < մոնո... + թեիզմ], գ. (կրոն.): Միաստվածություն:

ՄՈՆՈԹԵԻՍՏ [< монотеист < հուն.], գ. Միաստված:

ՄՈՆՈԹԵՄԱՏԻԶՄ [< монотематизм < մոնո... + հուն. thema այն, ինչ ընկած է հիմքում], գ. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործության կառուցման սկզբունք, որ հիմնված է միայն մեկ թեմայի կամ թեմաների միայն մեկ ամբողջության բազմակողմանի մեկնաբանման վրա:

ՄՈՆՈԼԻԹ [< монолит < հուն. monos + lithos քար < monolithos շինված ամբող-

ջական քարից], գ. 1. Մեկ ամբողջական միակտոր քար: 2. Այդպիսի քարի կերտվածք: 3. ած. *փխբ.* Միաձույլ, սերտ:

ՄՈՆՈԼՈԳ [< монолог < մոնո... + հուն. logos խոսք], գ. (հնց.): Մենախոսություն:

ՄՈՆՈԽՈՐԴ [< монохорд < մոնո... + հուն. chordē լուր], գ. (երժշտ.): 1. Հին հունական միլարանի կսմիթային երաժշտական գործիք: 2. Երաժշտական-ակուստիկական ուսումնասիրությունների համար նախատեսված սարք: 3. Հարմարանք դաշնամուրի մեջ, որի միջոցով մուրճիկը հարվածում է մեկ հնչյունի լարախմբի 2-3 լարերից միայն մեկին: 4. (պատմ.): Մինչև XVIII դ. կլավիկորդի անվանումը:

ՄՈՆՈԿԱՐՊ ԲՈՒՅՍԵՐ [< монокарпические (< մոնո... + հուն. karpos պտուղ) растение] - (բսբ.): Միապտղաբեր բույսեր:

ՄՈՆՈԿԼ [< монокль < ֆր. monocle < մոնո... + լատ. oculus աչք], գ. Մենակնոց՝ մի աչքի ակնոց:

ՄՈՆՈԿԼԻՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ [< моноклинная (< մոնո... + հուն. klinō խոնարհում եմ) система] - (քիմ.): Բյուրեղագիտական համակարգ, որն ընդգրկում է համաչափության երեք տեսակ կամ բյուրեղների երեք դաս:

ՄՈՆՈԿՈՒԼՏՈՒՐԱ [< монокультура < մոնո... + կուլտուրա], գ. (տնտսգ.): 1. Տնտեսությունում մշակվող գյուղատնտեսական միակ կուլտուրա: 2. Մեկ տեսակ կուլտուրայի երկարատև, անընդհատ աճեցումը միևնույն հողամասում՝ առանց ցանքաշրջանառության պահպանման:

ՄՈՆՈՄԵՏԱԼԻԶՄ [< монометаллизм < մոնո... + հուն. metallon մետաղ], գ. (ֆին.): Դրամական համակարգ, երբ ընդհանուր համարժեք և դրամաշրջանառության հիմք է ծառայում որևէ մետաղ: Կարող է լինել պղնձե, արծաթե, ոսկե:

ՄՈՆՈՄԵՐՆԵՐ [< мономеры < մոնո... + հուն. meros մաս], գ. (կենսբ.): Ցածրամոլեկուլային նյութեր, որոնց մոլեկուլները ռեակցիայի մեջ են մտնում իրար կամ այլ մոլեկուլների հետ և առաջացնում պոլիմերներ:

ՄՈՆՈՊԼԱՆ [< моноплан < ֆր. monoplan < մոնո... + լատ. planum մակերես, հարթություն], գ. Մեկ քաշող հարթություն (մեկ թև) ունեցող օդանավ:

ՄՈՆՈՊՈԼ, Տե՛ս Մոնոպոլիա:

ՄՈՆՈՊՈԼԻԱ [< монополия < մոնո... + հուն. pōleō վաճառում եմ], գ. (տնտսգ.): 1. Մենաշնորհ՝ շուկայում գերիշխող դիրք ունեցող: 2. Կապիտալի համակենտրոնացման վրա հիմնված խոշոր միավորում՝ որևէ բնագավառում բացարձակ գերիշխանության և առավելագույն շահույթի հասնելու նպատակով:

ՄՈՆՈՊՈԼԻԶԱՑԻԱ [< монополизация < հուն.], գ. (տնտսգ.): Մոնոպոլացում:

ՄՈՆՈՊՈԼԻՍՏ [< монополист < հուն.], գ. 1. Մենաշնորհատեր: 2. Մոնոպոլիստական կապիտալի ներկայացուցիչ:

ՄՈՆՈՍՏԻԽ [< моностих < մոնո... + հուն. stichos], գ. (տոչփ.): Մեկ տողից բաղկացած և իմաստային ավարտունություն ունեցող բանաստեղծություն:

ՄՈՆՈՍՏՐՈՖ [< монострофа < հուն. monostrophos], գ. (տոչփ.): Մեկ տնից բաղկացած և փակ կառուցվածք ունեցող բանաստեղծություն:

ՄՈՆՈՏԻՊ [< монотип < մոնո... + հուն. typos տպահետք], գ. (տեխ.): Տառաձուլման ավտոմատ մեքենա:

ՄՈՆՈՏՈՆ [< монотонный < մոնո... + հուն. tonos շեշտ], ած. Միալար, միապաղաղ:

ՄՈՆՈՔՐՈՄԱՏԻԿ ԼՈՒՅՍ [< монохроматические (< մոնո... + հուն. chrōmatikos) лучи] – (ֆիզ.): Մեներանգ լույս՝ աչքով անմիջականորեն ընկալելի հաճա-

խականությունների տիրույթի մեջ մտնող որոշակի և խիստ հաստատուն հաճախականության էլեկտրամագնիսական ալիք:

ՄՈՆՈՖԱԳ [< монофаг < մոնո... + հուն. phagos ուտող], գ. (կենդբ.): Կենդանի, որը մի տեսակի կեր է ուտում:

ՄՈՆՈՖԻԼԻԱ [< монофилия < մոնո... + հուն. phylon ցեղ, տեսակ], գ. (կենդբ.): Տեսություն՝ ժամանակակից մարդու տարբեր ռասաների ծագումը մեկ ընդհանուր մարդակերպ նախնուց:

ՄՈՆՈՖԹՈՆԳ [< монофтонг < մոնո... + հուն. phthongos հնչյուն], գ. (լեզվբ. հնց.): Միաբարբառ:

ՄՈՆՊԱՍ [< монпансье < ֆր. montpensier], գ. (խոհր.): Մրգերից պատրաստվող վանաշաքարի մի տեսակ:

ՄՈՆՏԱԺ [< монтаж < ֆր. montage վերհանում, տեղակայում, հավաքում], գ. 1. Մեքենայի, շենքի, կառուցվածքների մասերի հավաքումն ու տեսորոշումը՝ որոշակի նախագծի կամ գծագրի համաձայն: 2. Որևէ ստեղծագործության (պիեսի, երաժշտական կամ գիտական երկի ևն) առանձին մասերի ընտրությունը և նրանց միացումը իբրև մեկ ամբողջություն: 3. Այդ ձևով կազմված կինոնկար՝ գրական կամ երաժշտական ստեղծագործություն:

ՄՈՆՏՅՈՐ [< монтёр < ֆր. monteur], գ. (էլեկտր.): 1. Մեքենայի մասերը հավաքող: 2. Էլեկտրական սարքավորումներն ու լարերը տեղադրող մասնագետ, էլեկտրիկ:

ՄՈՆՈՒՄԵՆՏ [< монумент < լատ. monumentum < monere հիշեցնել], գ. (խսկց.): Հուշարձան, կոթող:

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ [< монументальный < լատ. monumentalis], ած. 1. Կոթողային: 2. Հոյակապ, փառահեղ: 3. Վիթխարի, հսկայական: 4. *փխբ.* Հիմնավոր, ծանրակշիռ:

ՄՈՊԵԴ [< ռուս. мо(тоцикл) մոտոցիկլետ + (велоси)пед հեծանիվ], գ. (տեխ.): Մինչև 49.8 սմ^3 աշխատանքային ծավալ ունեցող ներքին այրման շարժիչով ու հետևի անիվի ոտնակային շղթայական հաղորդակով երկանիվ փոխադրամիջոց:

ՄՈՋԱՀԵԴ [< моджахед < պարսկ. modžahäd հավատի զինվոր], գ. Աֆղանական ընդդիմության զինվոր:

ՄՈՏԵՏ [< мотет < ֆր. motet < mot բառ, ասույթ, պատվիրան], գ. (երժշտ.): Բազմաձայն վոկալ երաժշտության ժանր:

ՄՈՏԻՎ I [< мотив < ֆր. motif], գ. 1. (երժշտ.): Եղանակ, մեղեդի: 2. Արվեստի երկի թեմայի բաղադրիչ տարր:

ՄՈՏԻՎ II [< мотив < գերմ. Motive], գ. 1. Պատճառ, դրդապատճառ, շարժառիթ: 2. Պատճառաբանություն, փաստարկ, հիմնավորում:

ՄՈՏԻՎԱՑԻԱ [< мотивация < գերմ.], գ. Տե՛ս Մոտիվ II:

ՄՈՏՈ... [< мото... < լատ. motor շարժման մեջ դնող] Բարդ բառերի սկզբնամաս, որն իմաստով համապատասխանում է մոտորային, մոտորացված, մոտոցիկլետային բառերին:

ՄՈՏՈԲՈԼ [< мотобол < մոտո... + անգլ. ball գնդակ], գ. (սպորտ.): Ֆուտբոլ մոտոցիկլետներով:

ՄՈՏՈՌՈԼԼԵՐ [< мотороллер < մոտո... + գերմ. rollen գլորել], գ. (տեխ.): Մոտոցիկլետի տարատեսակ, որը տարբերվում է բարձր հարմարավետությամբ, սակայն անցունակությամբ զիջում է մոտոցիկլետին:

ՄՈՏՈՐ [< мотор < լատ. motor շարժիչ], գ. (տեխ.): Շարժիչ (էլեկտրական կամ ներքին այրման):

ՄՈՏՈՐԻՍՏ [< моторист < լատ. motor], գ. (մսնգ.): Մոտորավար, մոտորների, շարժիչների մասնագետ:

ՄՈՏՈՑԻԿԼ [< мотоцикл < լատ. motor + հուն. kyklos շրջան, անիվ], գ. Ներքին այրման շարժիչով աշխատող երկանիվ կամ եռանիվ անռելս փոխադրամեքենա:

ՄՈՏՈՑԻԿԼԵՏ [< мотоциклет < ֆր. motocyclette], Նույնն է՝ Մոտոցիկլ:

ՄՈՏՏՈ [< мотто < իտլ. motto բառ, խոսք, սրախոսություն], գ. (գրք.): Բնաբան, ասացվածք-բնաբան:

ՄՈՐԱ [< мора < լատ. mora], գ. (տղչփ.): Հին հունական տաղաչափության մեջ՝ ամենակարճ ժամանակամիջոցը, որ անհրաժեշտ էր պարզ (կարճ) վանկի արտասանության համար:

ՄՈՐԱԼ [< мораль < ֆր. morale բարոյականություն < լատ. moralis բարոյական], գ. 1. Բարոյականություն: 2. Բարոյագիտություն, բարոյախոսություն: 3. Բարք, վարք:

ՄՈՐԱԼԻՍՏ [< моралист < ֆր. moraliste < լատ.], գ. 1. Բարոյագետ: 2. Բարոյախոս, բարոյականություն քարոզող:

ՄՈՐԱԼԻՏԵ [< моралите < ֆր. moralité < լատ. moralis բարոյական], գ. (թատր. պատմ.): XV-XVI դարերի արևմտաեվրոպական դրամատիկական ժանր՝ ձևով այլաբանական, բովանդակությամբ բարոյախրատական:

ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄ [< мораторий < լատ. moratorius ուշացող, հապաղող], գ. (քղք.): Տարկետում՝ պետության կողմից վճարման դադարեցում որոշակի ժամանակով ծայրահեղ իրադրության պատճառով:

ՄՈՐԳ I [< морг < լեհ. morg], գ. Հին հողային չափ (մոտ 0.5 հեկտար) Լեհաստանում և Լիտվայում:

ՄՈՐԳ II [< морг < ֆր. morgue], գ. Դիահերձարան՝ դի պահելու և հերձելու շենք:

ՄՈՐԶԵ [< морзе < հատուկ անունից], գ. (տեխ.): Ինքնագրող էլեկտրամագնիսական հաղորդող և ընդունող հեռագրական ապարատ, որ հայտնագործել է ֆիզիկոս Մորզեն 1837 թ.:

ՄՈՐԶԵԻ ԱՅԲՈՒԲԵՆ - Տառերի և թվերի պայմանական նշանների համակարգ:

ՄՈՐՄՈՆ [< мормон < անգլ. mormon < IV դ. սկզբում ապրած Մորմոն (Mormon) մարգարեի անունից], գ. (կրոն.): Հետևորդ կրոնական աղանդի, որը ստեղծվել է 1830 թ. ԱՄՆ-ում Ջ. Սմիթի կողմից (նա իրեն հռչակել էր նոր Մորմոն մարգարե):

ՄՈՐՓԵՈՍ [< Морфей < հուն. Morpheios], գ. (դից.): Քնի և երազի աստվածը հին հունական դիցաբանության մեջ, քնի աստված Հիպնոսի որդին:

ՄՈՐՖԵՄԱ [< морфема < հուն. morphē ձև], գ. (քեր. հնց.): Ձևույթ:

ՄՈՐՖԻՆ [< морфин < հին հունական Մորփեոս աստծո անունից], գ. (քիմ.): 1. Ափիոնի գլխավոր բաղադրիչը, որ գործածվում է իբր քնաբեր և ցավամոք դեղ: 2. Նույնը՝ որպես թմրադեղ:

ՄՈՐՖԻՆԻԶՄ [< морфинизм < հուն.], գ. (բժշկ.): Մորֆինամոլություն:

ՄՈՐՖՈԼՈԳԻԱ [< морфология < հուն. morphē ձև + logos ուսմունք], գ. 1. (լեզվբ. հնց.): Ձևաբանության՝ քերականության բաժին, որ զբաղվում է լեզվի ձևաբանական հատկությունների ու համակարգի ուսումնասիրությամբ: 2. (կենսբ.): Կազմաբանություն:

ՄՈՐՖՈՄԵՏՐԻԱ [< морфометрия < հուն. morphē ձև + մետրիա], գ. (երկրբ.): Երկրի մակերևույթի ռելիեֆի քանակական բնութագիրը:

ՄՈՐՖՈՆՈԼՈԳԻԱ [< морфонология < հուն.], գ. (լեզվբ. հնց.): Ձևահնչույթաբանություն՝ լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է հնչույթները՝ որպես բառաձևեր ու ձևույթներ կազմող տարրեր. ի՞նչ հնչույթային կաղապար կարող է ունենալ

ձևույթը, նրա սկիզբը կամ վերջը, ձևույթային տարբերակները (ենթաձևույթները) հնչույթային ինչ հարաբերակցություններ ունեն (հմմտ. *կատու // կատվ*ախաղ):

ՄՈՒԶԱ [< ռուս. муза], Տե՛ս Մուսա:

ՄՈՒԺԻԿ [< ռուս. мужик], գ. ած. 1. Ռուս գյուղացի, գեղջուկ: 2. (հնց.): Կոպիտ՝ անկիրթ՝ անբան մարդ: 3. (խսկց.): Տղամարդ, մարդ, այր: 4. *փխբ.* Ամուսին, մարդ:

ՄՈՒԼԱՏ [< мулат < իսպ. mulato], գ. (ազգգր.): Սպիտակամորթի և սևամորթի՝ նեգրի խառնածին:

ՄՈՒԼԻՆԵ [< мулине < ֆր. moulinet], գ. (մեծգր.): Ոլորած գունավոր թել:

ՄՈՒԼԻՏ [< муллит < Շոտլանդիայի Մուլ (Mull) կղզու անունով], գ. (հնք.): Միներալ սիլիկատների դասից: Հրակայուն նյութ:

ՄՈՒԼՉԱՑՈՒՄ [< мульчация < անգլ. mulch ծղոտով, գոմաղբով ծածկել], գ. (գղտնտ.): Հողի համատարած կամ միջշարքերի ծածկումը մուլչով: Կիրառվում է բանջարանային, պտղատու ևն բույսերի աճեցման ժամանակ:

ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ [< мультимедия < անգլ. multimedia < multi շատ + media միջոցներ], գ. (ինֆորմ.): ԶԼՄ-ների (զանգվածային լրատվության միջոցների) խոշոր միավորում, որն ընդգրկում է և՛ տպագիր (թերթեր, ամսագրեր), և՛ էլեկտրոնային (ռադիո, հեռուստատեսություն), և՛ համացանցային (ինտերնետ-կայքեր) լրտվամիջոցներ:

ՄՈՒԼՏԻՄԻԼԻՈՆԵՐ [< мультимиллионер < ֆր. multimillionnaire], գ. Մի քանի միլիոն գումար ունեցող անձ:

ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՏՈՐ [< мультипликатор < լատ. multiplicator բազմացնող], գ. 1. (կինո.): Մուլտիպլիկացիոն կինոնկարներ ստեղծող: 2. (ֆիզ.): Նկարների բազմապատկիչ սարք, բազմալուսանկարիչ ապարատ, բազմարկիչ: 3. Բազմապատկող: 4. (տնտսգ.): Բազմապատկիչ՝ տնտեսական ցուցիչ, որով բնութագրվում է տնտեսության աճը՝ կապված ներդրումների ծավալների հետ:

ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՑԻԱ [< мультипликация < լատ. multiplicatio բազմացում, բազմապատկում], գ. (կինո.): Առանձին՝ իրար հաջորդող առարկաների շարժումների աստիճանաբար փոփոխվող գծագրերի նկարահանում, հաջորդապատկեր նկարահանում:

ՄՈՒԼՏԻՊՈԼ [< мультипол < լատ. multum շատ + հուն. polos բևեռ], գ. (ֆիզ.): Բազմաբևեռ՝ որոշակի սիմետրիա ունեցող էլեկտրական լիցքերի («բևեռների») համակարգի բնութագիր:

ՄՈՒԼՏԻՎԻԲՐԱՏՈՐ [< мультивибратор < լատ. multum + vibro տատանել], գ. (տեխ.): Խզվող էլեկտրական տատանումների ռելաքսացիոն գեներատոր:

ՄՈՒԼՅԱԺ [< муляж < ֆր. moulage < mouler ձև տալ], գ. (տեխ.): Կաղապար, կաղապարվածք (մոմից, գիպսից ևն):

ՄՈՒՄԻԱ I [< мумия < արաբ. mūmija < պարսկ. mum մոմ], գ. 1. Զմռսելու միջոցով քայքայումից պահպանված դիակ: 2. *փխբ.* Համր, պապանձված, ոչինչ չասող մարդ: 3. *փխբ.* Չափազանց նիհար՝ վտիտ մարդ:

ՄՈՒՄԻԱ II [< мумия < արաբ. mūmija], գ. Սուսր, հանքային ներկ՝ տարբեր ծաղիկներից փոշու տեսքով:

ՄՈՒՆԴԻԱԼ [< мундиал < իսպ. mundial համաշխարհային, աշխարհի], ած. գ. (սպորտ.): 1. ած. Համաշխարհային: 2. գ. Մրցամարտ, որին մասնակցում են աշխարհի ուժեղագույն թիմերը, ֆուտբոլի աշխարհի առաջնություն:

ՄՈՒՆԴԻՐ [< мундир < ֆր. monture], գ. (հնց.): Զինվորական կամ քաղաքացիական հատուկ ձևի համազգեստ:

ՄՈՒՆԴՇՏՈՒԿ [< мундштук < գերմ. Mundstück < Mund բերան + Stück մաս, կտոր], գ. (հնց.): 1. Ծխափող, մուշտուկ, ծխամորճ, ծխաքարշ: 2. Ծվան, ծայրոց, փողածայրոց (փողային երաժշտական գործիքների):

ՄՈՒՆԻՑԻՊԱԼ [< муниципальный < լատ.], ած. 1. Մունիցիպալիստներին հատուկ: 2. Քաղաքային կամ գյուղական համայնքին հատուկ՝ վերաբերող:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՑՈՒՄ, գ. 1. (իրավ.): Պետության կողմից մասնավոր անձանց անշարժ գույքը (շենքերը և հողերը) տեղական ինքնավարության մարմիններին հանձնելը, մունիցիպալիզացիա: 2. Մունիցիպալացնելը, մունիցիպալացվելը:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻԶԱՑԻԱ [< муниципализация < ֆր. municipalisation], գ. (իրավ.): Նույնն է՝ Մունիցիպալացում:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ [< муниципалитет < գերմ. Munizipalität], գ. (քղք.): Տեղական իշխանություն՝ քաղաքային կամ գյուղական ինքնավարության մարմնի անվանումը մի քանի երկրներում, ինչպես և այդ մարմնի շենքը:

ՄՈՒՇԿԵՏ [< мушкет < ֆր. mousquet], գ. (ռազմ.): Հրացան, խոշոր տրամաչափի հին պատրույգավոր զենք:

ՄՈՒՍԱ [< муза < հուն. Musa], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ գիտության և արվեստի հովանավոր աստվածուհի: 2. *փխբ.* Ստեղծագործական ներշնչանք: 3. *փխբ.* Ստեղծագործական ներշնչման աղբյուր:

ՄՈՒՍԹԱՆԳ [< мустанг < անգլ. mustang < իսպ. mestengo], գ. (կենդբ.): Վայրի ձի (հանդիպում է Հյուսիսային Ամերիկայում):

ՄՈՒՍԼԻՆ [< муслин < ֆր. mousseline], գ. (մեծգր.): Բամբակյա, մետաքսե կամ բրդյա նուրբ ու թեթև գործվածք:

ՄՈՒՍԿԱՏ [< мускат < ֆր. muscat < լատ. muscus], գ. (բսբ.): 1. Մշկախաղող: 2. Մշկընկույզ՝ արևադարձային մշտադալար ծառ, որի պտուղներն ու ծաղիկները գործածվում են որպես համեմունք: 3. Մշկախաղողի գինի:

ՄՈՒՍԿՈՒԼ [< мускул < լատ. musculus, բառացի՝ մկան ճուտ], գ. (խսկց.): Մկան:

ՄՈՒՍՍՈՆ [< муссоны < ֆր. mousson], գ. (աշխգր.): Սեզոնային կայուն քամիներ արևադարձային լայնություններում, գլխավորապես Հնդկական օվկիանոսի ավազանում, որոնք տարին երկու անգամ փոխում են իրենց ուղղությունը (դառնում հակադիր կամ հակադիրին մոտ):

ՄՈՒՏԱՌՈՏԱՑԻԱ [< мутаротация < լատ. moto փոփոխում եմ + rotatio պտտում], գ. (ֆիզ.): Միաշաքարների և այլ նյութերի թարմ լուծույթների օպտիկական ակտիվության աստիճանական փոփոխության երևույթ:

ՄՈՒՏԱՑԻԱ [< мутация < լատ. mutatio փոփոխություն], գ. 1. (գիտ.): Թռիչքաձև փոփոխություն: 2. (կենսբ.): Որևէ կենսաբանական նոր հատկանիշի երևան գալը կենդանիների կամ բույսերի մեջ:

ՄՈՒՖԵԼԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆ [< муфельная (< գերմ. Muffel) печь] - (տեխ.): Արդյունաբերական տաքացման բոցային կամ էլեկտրական վառարան, որտեղ տաքացվող շինվածքը գտնվում է փակ նրբապատ խցի՝ մուֆելի ներսում:

ՄՈՒՖԼՈՆ [< муфлон < ֆր. mouflon < իտլ. muflone], գ. (կենդբ.): Երկկճղակավորների կարգի սնամեջ եղջերավորների ընտանիքի վայրի ոչխար:

Յ

ՅԱԳՈՒԱՐ [< ягуар < տուպի - գուարանի լեզվով jagoara], գ. 1. (կենդբ.): Կատուների ընտանիքին պատկանող գիշատիչ կենդանի՝ ամերիկյան հովազ (լինում է Հարավային և Կենտրոնական Ամերիկայում): 2. Մարդատար ավտոմեքենայի տեսակ:

ՅԱԹԱՂԱՆ [< ятаган < թարք. yatagăn], գ. (խսկց.): Կոր կարճ թուր՝ սուր Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների մոտ:

ՅԱԽՏԱ [< яхта < անգլ. yacht], գ. (հնց. սպորտ.): Զբոսանավ, սպորտանավ:

ՅԱԿ [< як < տիբեթ.], գ. (կենդբ.): Կենտրոնական Ասիայի բարձրալեռնային շրջաններում ապրող որոճող խոշոր եղջերավոր կենդանի, որ օգտագործվում է իբրև բեռնակիր, հեծնելի, երբեմն նաև մսատու ու կաթնատու կենդանի:

ՅԱԿՈԲԻՆՅԱՆՆԵՐ [< якобинцы], գ. (պատմ.): Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ Յակոբինյան ակումբի անդամներ, որոնք արտահայտում էին գյուղացիության և քաղաքային չքավորության հետ դաշնակցած հեղափոխական-դեմոկրատական բուրժուազիայի շահերը: Նրանց առաջնորդներն էին՝ Մ. Ռոբեսպիերը, Ժ. Մարատը, Ժ. Դանտոնը, Լ. Սեն Ժյուստը:

ՅԱԿՈՒՁԱ [< якудза < ճապ. yakudza], գ. (հզվդ.): Ճապոնական մաֆիան և դրա անդամները:

ՅԱՄԲ [< ямб < հուն. iambos], գ. 1. (տղչփ.): Չափածո ստեղծագործության երկվանկ ոտք՝ երկրորդ վանկի շեշտումով, մեծավերջ: 2. (գրկն.): Գրական ժանր հին հունական պոեզիայում (երգիծական բնույթի):

ՅԱՆԿԻ [< янки < անգլ. yankee], գ. Ամերիկայի Միացյալ Նահանգների բնիկ ամերիկացիների մականունը եվրոպացիների լեզվում:

ՅԱՆՍԵՆԻԶՄ [< янсенизм < հոլանդացի աստվածաբան Յանսենի անունից], գ. (կրոն.): Կաթոլիկության մեջ կրոնական ուղղություն, որը էությամբ մոտ է կալվինիզմին:

ՅԱՆՈՒՍ [< янус < լատ. Janus], գ. 1. (դից.): Հռոմեական դիցաբանության մեջ՝ հակառակ կողմեր նայող երկերեսանի աստված: 2. *փխբ.* Երկերեսանի՝ կեղծավոր մարդ:

ՅԱՌԼԻԿ [< ярлик < թուրք. jarlek հրաման, կարգադրություն], գ. 1. (պատմ.): Ոսկե հորդայի խաների դիվանագիտական փաստաթղթերը, արտոնագրերը իրենց իշ-խանության տակ գտնվող աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին, հողային տարածքների և կալվածքների տիրելու, նաև հարկերից ազատելու համար: 2. (խսկց.): Պիտակ, որ փակցվում է ապրանքի վրա՝ նրա մասին այս կամ այն տեղեկությունը տալու համար:

ՅԱՏՐՈԳԵՆԻԱ [< ятрогения < հուն. iatros բժիշկ + gennaō ծնունդ եմ տալիս], գ. (բժշկ.): Հիվանդություն, որն առաջանում է բժշկի կողմից բժշկական տերմինների (նաև հիվանդությանը) սխալ մեկնաբանության պատճառով:

ՅԱՐՄԱՐԿԱ [< ярмарка < գերմ. Jahramarkt], գ. (խսկց.): Տոնավաճառ:

ՅԱՐԴ [< ярд < անգլ. yard, սկզբնական նշանակությունը՝ փայտ, ձող], գ. Երկարության չափ միավորների անգլիական համակարգերում: Հավասար է 0.91 մ:

ՅԱՐՈՒՍ [< ярус], գ. Օթյակների կամ բազկաթոռների միմյանց վրա բարձրացող շարք, հարկաբաժին:

ՅԱՓՆՋԻ [< епанпа < թարք. japunža], գ. (հնց.): Այծենակաճ:

ՅՈԳ [< йог, йога < սանսկրիտ yōga միավորում, մտքերի համակենտրոնացում], գ. ած. Յոգիզմի հետևորդ:

ՅՈԳԻԶՄ [< иогизм < սանսկրիտ], գ. (կրոն. փիլ.): Հնդկական կրոնափիլիսոփայական ուսմունք, որի համաձայն ինքնահայեցման, ինքնասուզման և ինքնաձաղկման միջոցով կարելի է տիրապետել գերբնական ուժերին և օրգանիզմին, յոգա:

ՅՈԳՈՒՐՏ [< иогурт < անգլ. yoghurt < թուրք. yogurt], գ. (խոհր.): Քիչթթվային կաթնային արտադրանք (մածունանման)՝ մրգային համերով:

ՅՈԴ [< йод < հուն. iōdēs մանուշակագույն], գ. (քիմ.): Քիմիական տարր. մետաղային փայլով սևագորշ բյուրեղային նյութ, որ ստացվում է գլխավորապես ծովային ջրիմուռներից, մանիշ: 2. (բժշկ.): Այդ նյութի սպիրտային լուծույթը, որ գործածվում է բժշկության մեջ:

ՅՈԴԱԽԱՌՆ, ած. Յոդի հետ խառն, հետը յոդ խառնած:

ՅՈԴՈՖՈՐՄ [< иодоформ < հուն. iōdēs + լատ. forma], գ. (բժշկ.): Յոդի պատրաստուկ, որ գործածվում է որպես ախտահանիչ միջոց:

ՅՈՐՔՇԻՐ [< йоркшир < Անգլիայի Յորքշիր (Yorkshire) դքսություն անունից], գ. (կենդբ.): Խոզերի մսատու ցեղ (նաև արագ բազմացող):

ՅՈՒԱՆ [< юань < չին. yuan, բառացի՝ ինչ-որ կլոր բան], գ. (ֆին.): ՉԺՀ դրամական միավորը, հավասար է 10 ցզյաոյի կամ 100 ֆինյայի:

ՅՈՒԲԻԼՅԱՑԻԱ [< юбиляция < լատ. jubilatio ցնծություն], գ. (կրոն.): Պաշտամունքային երաժշտության մեջ ցնծություն արտահայտող զարդահնչյուն իմպրովիզացիաներ, որոնք երգում են մեներգիչները երգչախմբով Գրիգորյան խորալը կատարելիս «ալելուիա» բառի վերջին վանկի վրա:

ՅՈՒԿԱ [< юкка < նոր լատ. Jucca], գ. (բսբ.): Մշտադալար բույսերի տեսակ, որը տարածված է Կենտրոնական և Հարավային Ամերիկայում:

ՅՈՒՄՈՐ, Տե՛ս Հումոր:

ՅՈՒՆԵՍԿՕ [< юнеско < *հպվ.* անգլերեն UNESCO - United Nations Educational Scientific and Cultural Organization] - Միավորված ազգերի՝ կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն:

ՅՈՒՆԳԱ [< юнга < գերմ. Junge տղա], գ. (ծով.): Նավի վրա ծառայող պատանի, որը պատրաստվում է դառնալ նավաստի:

ՅՈՒՆԿԵՐ [< юнкер < գերմ. Junker], գ. 1. (պատմ.): Ռազմական դպրոցի սան նախահեղափոխական Ռուսաստանում: 2. Հողատեր-ազնվական (ֆեոդալական Պրուսիայում):

ՅՈՒՆՈՆԱ [< Юнона < Լատ. Juno (Junonis)], գ. 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ աստվածների թագուհին՝ Յուպիտերի կինը՝ ծննդաբերության և ամուսնության հովանավորը, նույնը ինչ հին հունական դիցաբանության մեջ՝ Հերան: 2. (աստղգ.): Մոլորակ 247 կմ տրամագծով:

ՅՈՒՊԻՏԵՐ [< Юпитер < լատ. Jupiter], գ. 1. (տեխ.): Էլեկտրական լուսավորության հզոր սարք: 2. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ երկնքի գերագույն աստվածը, նույնը ինչ հին հունական դիցաբանության մեջ՝ Զևսը: 3. (աստղգ.): Արևից տարածությամբ հինգերորդ, արեգակնային համակարգի ամենամեծ մոլորակը, Լուսնթագ:

ՅՈՒՍՏԻՑԻԱ [< юстиция < լատ. justitia արդարություն, օրինականություն], գ. (իրավք. հնց.): 1. Արդարադատություն: 2. Դատաիրավական հիմնարկների համակարգ:

ՅՈՒՎԵԼԻՐ [< ювелир < հոլանդ. juwelier < juweel թանկագին քար], գ. (հնց.): 1. Ոսկերիչ, ակնագործ: 2. Ակնավաճառ, ոսկերչական իրեր վաճառող:

ՅՈՒՐԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ [< юра, юрская (< Ֆրանսիայի և Շվեյցարիայի Յուրայի (Jure) լեռներից) эра] - (երկրբ.): Մեզոզոյան խմբի երկրորդ համակարգը, որը համապատասխանում է Երկրի պատմության մեզոզոյան դարաշրջանի երկրորդ ժամանակաշրջանին. տևողությունը՝ 55-58 մլն տարի:

ՅՈՒՐԴ [< юрта < թուրք. jurt բնակատեղի, բնակավայր], գ. Վաչկավրան, թաղեվրան՝ (վաչկատուն ժողովուրդների մոտ բնակավրան՝ Կենտրոնական և Միջին Ասիայում), ուրթ:

ՅՈՒՐԻՍԴԻԿՑԻԱ [< юрисдикция < լատ. iurisdictio], գ. (իրավբ.): 1. Ենթադատություն, դատազորություն: 2. Իրավասություն, իրավազորություն:

ՅՈՒՐԻՍՊՐՈՒԴԵՆՑԻԱ [< юриспруденция < լատ. iurisprudentia], գ. (իրավբ.): Իրավաբանություն, իրավագիտություն:

ՅՈՒՐԻՍՏ [< юрист < գերմ. Jurist], գ. ած. (խսկց.): Իրավաբան:

Ն

ՆԱԳԱՆ [< наган < բելգիացի զինագործ ինժեներ Նագանի (Nagant) անունից], գ. (ռազմ.): Պտտվող թմբուկով յուրատեսակ տիպի ատրճանակ:

ՆԱԴԻՐ [< надир < արաբ. nazir < nazara նայել], գ. 1. (աստղգ.): Երկրագնդի այն կետը, որ գտնվում է դիտողի ուղիղ ոտքերի տակը և հակադիր է զենիթին: 2. *փխբ.* Ցածրագույն աստիճան՝ դիրք:

ՆԱԴՖԻԼ [< надфиль < գերմ. Nadelfeile], գ. (տեխ.): Փոքրիկ խարտոց՝ նուրբ գործերի համար:

ՆԱԶԱԼԻԶԱՑԻԱ [< назализация < ֆր. nasalization < nasal քթի < լատ. nasus քիթ], գ. (լեզվբ. հնց.): Ռնգայնացում, ռնգայնանալը:

ՆԱԺԴԱԿ [< наждак < թուրք. nadžak մահակ, դագանակ], գ. (երկրբ.): Մանրհատիկային լեռնային ապար, որը կորունդ է պարունակում, զմռնիդ. սրանից պատրաստում են հղկաքարեր, հղկաթղթեր:

ՆԱԻՎ [< наивный < ֆր. naive], ած. (խսկց.): 1. Միամիտ, պարզամիտ, դյուրահավատ (մարդ): 2. Միամիտ, անխարդախ, անմեղ, պարզունակ:

ՆԱԼՈԳ [< ռուս. налог], գ. (խսկց.): Հարկ:

ՆԱԽԱԼ [< ռուս. нахал], գ. ած. (խսկց.): Անպատկառ՝ անամոթ՝ լկտի՝ ժպիրհ:

ՆԱՄԱԶ [< намаз < թուրք. namaz, պարսկ. nemaz աղոթք], գ. (կրոն.): Մահմեդականների առօրյա աղոթքը.կատարվում է օրական 5 անգամ (լուսաբացին, կեսօրին, օրվա երկրորդ կեսին, մայրամուտին, գիշերվանից առաջ):

ՆԱՅԱԴՆԵՐ [< наяды < հուն. naias (naiadas) < naō հոսել], գ. (դից.): Հունահռոմեական դիցաբանության մեջ՝ հավերժահարսեր:

ՆԱՅԼՈՆ [< найлон < անգլ. nylon], գ. Պոլիամիդային մանրաթելերի՝ արտասահմանում տարածված առևտրական անվանումը:

ՆԱՆԻԶՄ [< нанизм < ֆր.nanisme < հուն.nannos գաճաճ],գ.(բժշկ.): Թզուկազարմություն, թզուկություն, գաճաճություն (տղամարդիկ 130 սմ-ից ցածր, կանայք 120 սմ հասակով):

ՆԱՆՍՈՒԿ [< нансук < ֆր. nansouk], գ. (մնծգր.): Նուրբ բամբակյա

սպիտակեղենի գործվածք:

ՆԱՊԱԼՄ [< напалм < անգլ. napalm], գ. (քիմ.): Այրվող նյութ: Ստացվում է նավթային հեղուկ վառելանյութերին նավթենաթթվի, պալմիտինաթթվի ևն ալյումինական աղեր (5-11%) ավելացնելով:

ՆԱՊՈԼԵՈՆ [< Наполеон < ֆր. Napoleon Նապոլեոն Բոնապարտի անունից], գ. 1. (խոհ.): Շերտավոր խմորեղենի տեսակ: 2. Տե՛ս Նապոլեոնդոր:

ՆԱՊՈԼԵՈՆԴՈՐ [< наполеондор < ֆր. napoléon d'or], գ. (ֆին.): Նապոլեոն I և III-ի ժամանակ քսանֆրանկանոց ոսկե մետաղադրամ, որը շրջանառվում էր Ֆրանսիայում:

«ՆԱՍԱ» [< НАСА < *հպվ.* անգլ. National Aeronautics and Space Administration], գ. Օդագնացության և տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչություն ԱՄՆ-ում:

ՆԱՎԻԳԱՑԻԱ [< навигация < լատ. navigatio ծովագնացություն], գ. 1. (հնց.): Նավագնացություն, նավարկություն, ծովագնացություն: 2. (գիտ. հնց.): Գիտություն նավագնացության մասին, նավագնացության արվեստը:

ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ [< натюрморт < ֆր. nature morte, բառացի՝ «մեռյալ՝ մեռած բնություն»], գ. 1. Անկենդան բնություն: 2. (կերպր.): Բնության առարկաների խմբանկար:

ՆԱՏՐԻՈՒՄ [< натрий < միջին լատ. natrium], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթասպիտակավուն փափուկ հիմնային մետաղ:

ՆԱՏՈՒՐԱ [< натура < լատ. natura], գ. (հնց.): 1. Բնություն: 2. Բնավորություն, մարդու խառնվածքը: 3. Բնօրինակ: 4. Բնամթերք, որը կարող է վճարամիջոց ծառայել փողի փոխարեն:

ՆԱՏՈՒՐԱԼ [< натуральный < լատ. naturalis], ած. 1. (հնց.): Բնական, բնությանը վերաբերող: 2. Բնական, իրական, իսկական, իրականությանը համապատասխան: 3. Բնական, իսկական, ոչ արհեստական: 4. Բնամթերային:

ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ [< натурализм < ֆր. naturalisme < լատ. naturalis բնական], գ. 1. (գիտ.): Մատերիալիստական ուսմունք, որը հասարակության և հասարակական երևույթների զարգացման օրենքները նույնացնում է բնության երևույթների հետ, բնության օրինաչափությունները մեխանիկորեն տարածում հասարակության և հասարակական օրենքների վրա: 2. Ժամանակակից ամերիկյան փիլիսոփայության մեջ այս անունով են կոչվում այն ուղղությունները, որոնք ժխտում են գերբնական ուժերի գոյությունը, անկախ այն բանից, թե տվյալ ուղղությունը մատերիալիստակա՞ն է, իդեալիստակա՞ն, թե՞ դուալիստական: 3. (արվ. գրկն.): Գրականության և արվեստի բնագավառում XIX դարի վաթսունական թվականներին ծագած ուղղություն, որը հասարակության զարգացման օրենքները նույնացնում էր բնության օրենքների հետ և ձգտում էր իրականության ճշգրիտ վերարտադրմանը:

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՏ [< натуралист < լատ. natura բնություն], գ. ած. 1. Նատուրալիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. Բնագետ:

ՆԱՏՈՒՐԻԶՄ [< натуризм < ֆր. naturisme < լատ. natura բնություն], գ. Տե՛ս Նուդիզմ:

ՆԱՏՈՒՐՈՊԱՏ(Թ) [< натуропат < ֆր. naturopathe < լատ. natura բնություն + հուն. pathōs տանջանք, հիվանդություն], գ. (բժշկ.): Բնաբույժ՝ բուսաբույժ բնական միջոցներով (ոչ քիմիական դեղերով, թուրմերով) բուժող բժիշկ:

ՆԱՏՕ [< НАТО < *հպվ.* անգլ. North Atlantic Treaty Organization], (քղք.): Հյուսիսատլանտյան եռյակ միություն՝ պակտ (1949 թ.):

ՆԱՐԱՏԻՎ [< нарративный < լատ. narratio պատմվածք], ած. (լեզվբ. գրկն. հնց.): Պատմողական:

ՆԱՐԳԻԼԵ [< наргиле < պարսկ. nargil կոկոս], գ. Ծխելու արևելյան հատուկ սարք:

ՆԱՐԴԻ [< нарды < միջին պարսկ. nēwardaxšīr, բառացի՝ խիզախ Արդաշիր՝ սասանյան թագավոր III դ.-ում մ. թ. ա., ում թագավորության տարիներին հայտնաբերվել է այս խաղը], գ. 1. (սպորտ.): Զառերով ու տասնհինգական քարերով երկու հոգով խաղացվող խաղ: 2. Այդ խաղի տախտակը, քարերը և զառերը:

ՆԱՐԶԱՆ [< ռուս. нарзан < Կիսլովոդսկում՝ հանքային ջրի աղբյուրի անվամբ], գ. Ածխաթթվային բուժական հանքաջուր:

ՆԱՐԿՈԶ [< наркоз < ֆր. narcose < հուն. narkōsis ընդարմացում, անզգայացում], գ. (բժշկ.): Մարմնի որևէ օրգանի արհեստականորեն առաջ բերած անզգայության կամ հիվանդի քնեցում՝ գիտակցության ու զգացողության լիակատար կորուստով, թմրաքուն:

ՆԱՐԿՈԼՈԳԻԱ [< наркология < հուն. narke թմրում, ընդարմացում +logōs գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որը ուսումնասիրում է թմրանյութերի ազդեցությունը օրգանիզմի վրա և դրանցից կախվածության բուժման մեթոդները:

ՆԱՐԿՈՄԱՆ [< наркоман < հուն.], գ. ած. (բժշկ.): Թմրամոլ:

ՆԱՐԿՈՄԱՆԻԱ [< наркомания < հուն. narkē անզգայացում, թմրեցում + mania կիրք], գ. Թմրադեղամոլություն, հաշիշամոլություն, թմրամոլություն:

ՆԱՐԿՈՏԻԿ [< наркотики < հուն. narkotikos թմրեցուցիչ], գ. ած. 1. Թմրադեղ: 2. Թմրադեղային:

ՆԱՐՈԴՆԻԿ [< ռուս. народник], գ. ած. (պատմ.): Նարոդնիկության հետևորդ:

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): Ռուսաստանի մանրբուրժուական մտավորականության հասարակական-քաղաքական շարժում (XIX դարի երկրորդ կեսում), որն իդեալականացնում էր գյուղացիական համայնքը և ժխտում բանվոր դասակարգի ղեկավար դերը հեղափոխության մեջ:

ՆԱՐՎԱԼ [< нарвал < ֆր. narval < շվեդ.], գ. (կենդբ.): Դելֆինների ցեղին պատկանող ծովային կաթնասուն կենդանի:

ՆԱՐՑԻՍԻԶՄ [< нарциссизм < ֆր. narcissisme < հուն. Narkissos Նարգիզ], գ. Ինքնասիրահարվածություն, սեփական գեղեցկությամբ զմայլվելը (սովորաբար տղամարդկանց մասին):

ՆԱՑԻԶՄ [< нацизм < լատ. natio ժողովուրդ], գ. (քղք. պատմ.): Գերմանական ֆաշիզմ:

ՆԱՑԻՈՆԱԼ [< национальный < լատ.], ած. (հնց.): 1. Ազգային՝ ազգին՝ ազգու-

թյանը վերաբերող: 2. Պետական, տվյալ երկրին՝ պետությանը վերաբերող:

ՆԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱ [< национализация < ֆր. անգլ. nationalisation], գ. 1. (հնց.): Ազգայնացում՝ ազգայնացնելը, ազգայնացվելը (մասնավոր սեփականության, հողերի, բանկերի ևն): 2. Պետականացում, պետական դարձնելը:

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ [< национализм < ֆր. nationalisme < լատ.], գ. (հնց.): Ազգայնամոլություն, ազգայնականություն:

ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ [< националист < լատ.], գ. ած. (հնց.): Ազգայնամոլ, ազգայնական:

ՆԱՑԻՍՏ [< нацист < լատ.], գ. ած. 1. (պատմ.): Գերմանական ֆաշիստական կուսակցության անդամ: 2. Նացիզմի կողմնակից, նացիստական հայացքների՝ քաղաքական դիրքորոշում և գործունեություն ունեցող մարդ:

ՆԱՖԹԱԼԻՆ [< нафталин < հուն. naptha նավթ], գ. (քիմ.): Սպիտակ գույնի պինդ նյութ՝ սուր հոտով: Օգտագործվում է մորթիների և բրդյա գործվածքների պահպանման համար:

ՆԵԱՆԴԵՐԹԵԼՅԱՆ ՄԱՐԴ [< неандертальский (< գերմանական Նեանդերթալ հովիտի անվանումից՝ Դյուսելդորֆի մոտ) человек] - (հնէաբ.): Հնագույն պեղածո մարդ, հնամարդ: Ապրել է 200-35 հազար տարի առաջ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

ՆԵԳԱՏԻՎ [< негатив < լատ. negativus ժխտական, ժխտողական], ած. գ. 1. (հնց.): Ժխտական, բացասական: 2. (լանկրչ.): Ժխտանկար, սևանկար:

ՆԵԳԱՏԻՎԻԶՄ [< негативизм < լատ.], գ. 1. Բացասականություն: 2. Բացասագարություն:

ՆԵԳԱՏՈՐ ՀԱՅՑ [< негаторный (< լատ. negatorius մերժողական, ժխտողական) иск] - (իրավք.): Քաղաքացիական դատավարությունում գույքի տնօրինման և օգտագործման իրավունքի խախտումը վերացնելու սեփականատիրոջ հայցային պահանջը:

ՆԵԳՐ(ԵՐ) [< негр(ы) < լատ. niger սև], գ. (ազգգր.): Նեգրոիդ ռասայի ներկայացուցիչների՝ շատ լեզուներում ընդունված անվանումը, սևամորթ:

ՆԵԿՏԱՐ [< нектар < հուն. nektar], գ. 1. (դից.) Հունական դիցաբանության մեջ՝ անմահություն պարգևող խմիչք, որ խմում էին Օլիմպոսում ապրող աստվածները: 2. (բսբ.): Շաքարային հյութ, որ արտադրում է բույսերի նեկտարանոցը: 3. *փխբ.* Շատ համեղ՝ քաղցր՝ ընտիր խմիչք: 4. *փխբ.* Առհասարակ՝ շատ քաղցր՝ հաճելի բան, չափազանց հաճելի զգացում առաջացնող բան:

ՆԵԿՏՈՆ [< нектон < հուն. nekton լողացող], գ. (կենդբ.): Ակտիվ լողացող պելագիկ կենդանիների խումբ, որոնք ընդունակ են դիմակայել հոսանքի ուժին և տեղաշարժվել զգալի տարածություններ: Նեկտոններ են ձկները, կաղամարները, կետանմանները, թիոտանիները, կրիաները, պինգվինները:

ՆԵԿՐՈԲԻՈԶ [< некробиоз < հուն. nekros մահացած + bios կյանք], գ. (կենսբ.): Մահվանը նախորդող փոփոխություններ բջիջում:

ՆԵԿՐՈԶ [< некроз < հուն. nekros մեռած], գ. (կենսբ.): Օրգանիզմի որևէ մասի մեռնելը (բջջի, հյուսվածքի, օրգանի):

ՆԵԿՐՈԼՈԳ [< некролог < ֆր. nécrologe < հուն. nekros մեռած + logos բառ], գ. (խսկց.): Մահախոսական, դամբանական:

ՆԵԿՐՈՊՈԼ [< некрополь < հուն. nekropolis < nekros մահացած + polis քաղաք], գ. Գերեզմանատուն, որտեղ թաղված են հայտնի մարդիկ:

ՆԵՄԱՏՈԴՆԵՐ [< нематоды < հուն. nēma (nēmatos) թել], գ. (կենդբ.): Կլոր որդեր:

ՆԵՄԵՐՏԻՆՆԵՐ [< немертины < հուն. Nēmertēs], գ. (կենդբ.): Անողնաշարավոր կենդանիների տիպ՝ գերազանցապես ծովային, ազատ ապրող, գիշատիչ, հազվադեպ մակաբույծ կենդանիներ: Տարածված են բոլոր ծովերում ու օվկիանոսներում, մոտ 50 տեսակ՝ քաղցրահամ ջրերում, 10-ը ցամաքում:

ՆԵՅԼՈՆ, գ.Տե՛ս Նայլոն:

ՆԵՅՏՐԱԼԻԶԱՑԻԱ [< нейтрализация < ֆր. neutralization < լատ. neutralis չեզոք], գ. (հնց.): 1. Չեզոքացում, չեզոքացնելը: 2. Վտանգազերծում, վտանգազերծելը: 3. Չեզոք դարձնելը, չեզոքականացում, չեզոքացում:

ՆԵՅՏՐԱԼԻԶՄ [< нейтрализм < ֆր. neutralisme < լատ. neuter], գ. (քղք. հնց.): Չեզոքություն, չեզոքության պահպանում, պետական քաղաքականության ձև:

ՆԵՅՏՐԱԼԻՏԵՏ [< нейтралитет < ֆր. neutralite < լատ.], գ. (հնց.): 1. (քղք.): Չեզոքություն՝ այլ պետությունների միջև ծագած պատերազմին չմասնակցելը կամ խաղաղ ժամանակ սառը պատերազմին չմասնակցելը: 2. *փխբ.* Չեզոքություն պահպանելը, ուրիշների վեճերին, հակամարտություններին նն չմասնակցելը:

ՆԵՅՏՐԻՆՈ [< нейтрино < իտլ. neutrino, neutrono նեյտրոնի նվազականը], գ. (ֆիզ.): Լեպտոնների դասի տարրական մասնիկ, նշանը՝ *ν*: Լիցքավորված չէ, ունի շատ փոքր հանգստի զանգված:

ՆԵՅՏՐՈՆ [< нейтрон < լատ. neutrum ոչ այս, ոչ այն], գ. (ֆիզ.): Չեզոք տարրական մասնիկ, ատոմի միջուկի էլեկտրականորեն չեզոք մասնիկ:

ՆԵՅՏՐՈՆՈԳՐԱՖԻԱ [< нейтронография < նեյտրոն + հուն. graphō], (ֆիզ.): Նեյտրոնների փնջի ցրման միջոցով մոլեկուլների, բյուրեղների և հեղուկների կառուցվածքի ուսումնասիրման մեթոդ:

ՆԵՅՏՐՈՖԻԼՆԵՐ [< нейтрофилы < լատ. neutrum ոչ այս, ոչ այն + հուն. phileō սիրում եմ], գ. (կենսբ.): Միկրոֆագեր՝ մարդու և ողնաշարավոր կենդանիների արյան լեյկոցիտների տեսակներից: Տրամագիծը 9-12 մկմ է: Կազմում են բոլոր լեյկոցիտների 60-70%-ը:

ՆԵՅՐՈ..., ՆԵՎՐ..., ՆԵՎՐՈ... [< невро..., невр... < հուն. neuron ջիղ, նյարդ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս դրանց վերաբերելը նյարդային համակարգին: Համապատասխանում է հայերեն նյարդա... բաղադրիչին բարդ բառերում:

ՆԵՅՐՈԼԵՊՏԻԿ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ [< невролептические (< նեյրո... + հուն. leptikos) лекарства] - (կզմխս.): Նյարդային համակարգի գործունեությունն ընկճող դեղանյութերի խումբ: Օժտված են ընդհանուր հանգստացնող ազդեցությամբ:

ՆԵՅՐՈԽԻՐՈՒՐԳԻԱ [< нейрохирургия < նեյրո... + հուն. cheir ձեռք + ergon աշխատանք], գ. (բժշկ.): Նյարդավիրաբուժություն:

ՆԵՅՐՈՆ [< нейрон < նեյրո...], գ. (կզմխս.): Ջղաղեղ, նյարդաբջիջ՝ նյարդային համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ հիմնական միավոր:

ՆԵՈ... [< нео... < հուն. neos նոր] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս երևույթի ձևափոխում, նոր մեկնաբանում, զարգացման համեմատականորեն բարձր աստիճան: Համապատասխանում է հայերեն նոր..., նորա... բաղադրիչներին բարդ բառերում:

ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. Զարգացող սուվերեն երկրներին որոշ պետությունների կողմից պարտադրվող անհավասար տնտեսական և քաղաքական

հարաբերությունների համակարգ, որի նպատակն է պահպանել այդ երկրների ժողովուրդների շահագործումն ու կախյալ վիճակը:

ՆԵՈԳԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ [< неогеновый (< նեո... + հուն. genos ծնունդ, հասակ) период] - (երկրբ.): Ապարների շերտախումբ, որ առաջացել է Երկրի երկրաբանական պատմության նախավերջին ժամանակաշրջանում. այն մտնում է կայնոզոյի դարաշրջանի մեջ և ունի 28 մլն տարի տևողություն:

ՆԵՈԴԱՐՎԻՆԻԶՄ [< неодарвинизм < նեո... + դարվինիզմ], գ. (գիտ.): Էվոլյուցիոն կոնցեպցիա, ստեղծել է XIX դ. 80-90-ական թթ. Ա. Վայսմանը, որի հիմքում ընկած են նրա հիպոթեզները «անընդհատ», «անմահ» սաղմնային պլազմայի գոյության (որի փոփոխությունները հնարավոր են հիմնականում ծնողական սաղմերի խառնման ժամանակ) և սաղմնային ընտրության մասին:

ՆԵՈԴԻՄ [< неодим < նեո... + հուն. (di)dymos կրկնակ, երկվորյակ], գ. (քիմ.): Nd, տարրերի պարբերական համակարգի VI պարբերության III խմբի քիմիական տարր: Հազվագյուտ հողային տարր է, պատկանում է լանթանիդներին:

ՆԵՈԹՈՄԻԶՄ [< неотомизм < նեո... + թոմիզմ], գ. (փիլ.): Կաթոլիկական պաշտոնական փիլիսոփայությունը, արդիականացված թոմիզմ: 1879թ.-ին Լևոն XIII պապի էնցիկլիկայով նեոթոմիզմը հռչակվել է միակ ճշմարիտ և քրիստոնեության դոգմաներին համապատասխանող փիլիսոփայություն:

ՆԵՈԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ [< неоимпрессионизм < ֆր. néoimpressionnisme < նեո... + իմպրեսիոնիզմ], գ. (գեղն.): Գեղանկարչական ուղղություն, որն առաջացել է մոտ 1885 թ. Ֆրանսիայում (գլխավոր ներկայացուցիչներն են՝ Ժ. Սյորան և Պ. Սինյակը) և տարածվել Բելգիայում (Թ. վան Ռեյսելբերգե), Իտալիայում (Ջ. Սեգանտինի) ևն:

ՆԵՈԼԱՄԱՐԿԻԶՄ [< неоламаркизм < նեո... + լամարկիզմ], գ. (գիտ.): Տարբեր ուղղությունների համախումբ էվոլյոցիոն ուսմունքում, առաջացել է XIX դ. II կեսին՝ կապված լամարկիզմի առանձին դրույթների զարգացման հետ: Նույնն է Պսիխոլամարկիզմ:

ՆԵՈԼԻԹ [< неолит < նեո... + հուն. lithos քար], գ. (երկրբ.): Քարե դարի վերջին շրջանը, նոր քարե դար:

ՆԵՈԼՈԳԻԶՄ [< неологизм < նեո... + հուն. logos բառ], գ. (լեզվբ.): Նորաբանություն:

ՆԵՈԿԱՆՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< неокантианство < նեո... + կանտականություն], գ. (փիլ.): Նորկանտականություն՝ սուբյեկտիվ իդեալիստական դպրոցների շարք: Ծագել է XIX դ. 2-րդ կեսին Գերմանիայում «հետ դեպի Կանտը» լոզունգի ներքո, որին բնորոշ է Ի. Կանտի փիլ. ուսմունքի մեկնաբանումը մատերիալիզմի տարրերից հրաժարման ոգով՝ գլխավորապես կապված «ինքնին իրի» մեկնաբանման հետ:

ՆԵՈԿԼԱՍԻՑԻԶՄ [< неоклассицизм < նեո... + կլասիցիզմ], գ. (արվ.գրկն.): Արվեստագիտության և մասամբ գրականագիտության մեջ ընդունված տերմին, որով նշվում են սոցիալական ուղղվածությամբ և գաղափարական բովանդակությամբ տարբեր XIX դ. վերջի և XX դ. գեղարվեստական երևույթները, որոնց ներհատուկ է դասական արվեստի, Վերածննդի դարաշրջանի կամ կլասիցիզմի արվեստների ավանդույթներին դիմելը:

ՆԵՈՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< неогегельянство < նեո... + հեգելականություն], գ. (փիլ.): Նորհեգելականություն՝ XIX դ. վերջի XX դ. սկզբի իդեալիստական փիլիսոփայության տարասեռ հոսանք, որը Գ. Հեգելի ուսմունքի նորացված մեկնաբանության հիման վրա ձգտել է ստեղծել ամբողջական աշխարհայացք:

ՆԵՈՆ [< неон < նեո...], գ. (քիմ.): Քիմիական տարր՝ անհոտ և անգույն իներտ գազ, որ պարունակվում է օդի բաղադրության մեջ (օգտագործվում է էլեկտրա-

լամպերը լցնելու համար՝ ազդանշանային, գովազդային և լուսավորության սարքերի ու հարմարանքների մեջ):

ՆԵՈՆԱՑԻԶՄ [< неонацизм < նեո... + նացիզմ], գ. (քղք.): Երկրորդ համաշխարհային պատերազմում նացիզմի ջախջախումից հետո զանազան երկրներում վերածնվող արդի նացիզմը:

ՆԵՈՆԱՑԻՍՏ [< неонацист < նեո... + նացիստ], գ. Նեոնացիզմի հետևորդ՝ ներկայացուցիչ:

ՆԵՈՊԼԱՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< неоплатонизм < նեո... + պլատոնականություն], գ. (փիլ.): Նորպլատոնականություն՝ անտիկ փիլիսոփայության վերջին խոշոր ուղղությունը՝ ստրկատիրության քայքայման և ֆեոդալիզմի սկզբնավորման դարաշրջանի (III-IV դդ.) իդեալիստական հոսանք. սրանք պլատոնականությանը հաղորդել են միստիկական բնույթ՝ միախառնելով դրան Արիստոտելի, ստոիցիզմի, պյութագորականության և Արևելքի խորհրդապաշտական ուսմունքների մի շարք գաղափարներ:

ՆԵՈՊՈԶԻՏԻՎԻԶՄ [< неопозитивизм < նեո... + պոզիտիվիզմ], գ. (փիլ.): Ժամանակակից իդեալիստական փիլիսոփայության առավել տարածված ուղղություններից մեկը, որը շարունակում է մախիստական հոսանքը և ձգտում է ժամանակակից բնագիտության և մաթեմատիկական տրամաբանության նվաճումների սուբյեկտիվ-իդեալիստական մեկնաբանությանը:

ՆԵՈՊՈԶԻՏԻՎԻՍՏ [< неопозитивист < նեո... + պոզիտիվիստ], գ. Նեոպոզիտիվիզմի հետևորդ, կողմնակից:

ՆԵՈՊՈՊՈՒԼԻԶՄ [< неопопулизм < նեո... + պոպուլիզմ], գ. (քղք.): Նոր տեսակի ամբոխավարություն:

ՆԵՈՌԵԱԼԻԶՄ [< неореализм < նեո... + ռեալիզմ], գ. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիզմի տեսակներից մեկը, որ տարածված է ժամանակակից անգլոամերիկյան փիլիսոփայության մեջ:

ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄ [< неоромантизм < նեո... + ռոմանտիզմ], գ. (գրկն.): XX դարասկզբի արվեստի և գրականության մեջ ռոմանտիզմի որոշ սկզբունքների վերածնման հիման վրա ձևավորված հոսանք, որը հաճախ միաձուլվում էր սիմվոլիզմի ու ուրիշ դպրոցների հետ:

ՆԵՈՍԽՈԼԱՍՏԻԿԱ [< неосхоластика < նեո... + սխոլաստիկա], գ. (փիլ.): Նորսխոլաստիկա՝ սխոլաստիկայի վերականգնմանը ձգտող կաթոլիկական փիլիսոփայության զանազան հոսանքների հավաքական անվանումը. ձևավորվել է XIX դ. սկզբին Իտալիայում, Իսպանիայում, լայն տարածում ստացել հատկապես նեոթոմիզմի հռչակումից հետո:

ՆԵՈՏԵԿՏՈՆԻԿԱ [< неотектоника < նեո... + տեկտոնիկա], գ. (գիտ.): Նորագույն տեկտոնիկա. գեոտեկտոնիկայի բաժին, որն ուսումնասիրում է երկրակեղևի նորագույն դեֆորմացիաները և տեղաշարժերը:

ՆԵՈՖԱՇԻԶՄ [< неофашизм < նեո... + ֆաշիզմ], գ. Նույնն է՝ Նեոնացիզմ:

ՆԵՈՖԱՇԻՍՏ [< неофашист < նեո...+ ֆաշիստ], գ. Նույնն է՝ Նեոնացիստ:

ՆԵՈՖՐԵՅԴԻԶՄ [< неофрейдизм < նեո... + ֆրեյդիզմ], գ. (փիլ.): Նեոֆրեյդիզմ՝ ուղղություն ժամանակակից փիլիսոփայության և հոգեբանության մեջ, տարածում է ստացել գլխավորապես ԱՄՆ-ում: Նրանք, անփոփոխ թողնելով Զ. Ֆրեյդի հիմնական իդեալիստական գիծը, հրաժարվում են մարդկային կյանքի բոլոր երևույթներում սեռական բնազդ տեսնելու միտումից և որոշ մեթոդաբանական ոչ էական առանձնահատկություններից:

ՆԵՊՏՈՒՆ [< нептун < լատ. Neptunus], գ. 1. (դից.): Ջրերի աստվածություն հին իտալիկների պաշտամունքում: Նեպտունի պատվին սահմանված տոները՝ Նեպտունալիաները, նշվել են հունիսի 23-ին: 2. (աստղգ.): Արեգակնային համակարգի մոլորակ 8-րդը՝ ըստ Արեգակից ունեցած հեռավորության:

ՆԵՊՏՈՒՆԻԶՄ [< нептунизм < լատ.], գ. (երկրբ.): XVIII դ. վերջում XIX դ. սկզբում տարածված ուսմունք՝ ջրից նստվածք տալու միջոցով ապարների (այդ թվում՝ հրային) ծագման մասին:

ՆԵՊՏՈՒՆԻՈՒՄ [< нептуний < լատ. Neptunium], գ. (քիմ.): NP, պարբերական համակարգի VI պարբերության, III խմբի ռադիոակտիվ տարր:

ՆԵՍԹՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< несторство < հատուկ անունից], գ. (կրոն.): Հոսանք քրիստոնեության մեջ: Հիմնադիրն է Կոստանդնուպոլսի պատրիարք Նես(տ)թորը: Նեսթորյան քննադատության առարկան եղել է «աստվածամարդ» խորհրդապաշտական հասկացությունը:

ՆԵՎՄԵՐ [< невмы < միջին լատ. neuma շնչառություն], գ. (երժշտ. պատմ.): Նոտագրության նշաններ, որ կիրառվել են եվրոպական երաժշտական արվեստում միջին դարերի սկզբում, հիմնականում՝ կաթոլիկական երգեցողության մեջ (Գրիգորյան խորալ):

ՆԵՎՐԱՍԹԵՆԻԱ [< неврастения < հուն. neuron ջիղ, նյարդ + astheneia անզորություն, թուլություն], գ. (բժշկ.) Նյարդագարություն՝ նյարդային համակարգի խախտում, որ արտահայտվում է գերհոգնածության զգացումով, գլխացավով, գրգռականությամբ ևն:

ՆԵՎՐԱՍԹԵՆԻԿ [< неврастеник < հուն.], ած. գ. 1. Նյարդագար, ջղաթուլագար անձ: 2. Նյարդագարական:

ՆԵՎՐՈԶ [< невроз < հուն. neuron ջիղ, նյարդ], գ. (բժշկ.): Նյարդային-հոգեկան ֆունկցիոնալ հիվանդություն, որ առաջանում է տևական ծանր ապրումներից, գերծանրաբեռնվածությունից ևն:

ՆԵՎՐՈԼՈԳԻԱ [< неврология < հուն.], գ. (բժշկ.): Նյարդաբանություն՝ ուսումնասիրում է նյարդային համակարգի կառուցվածքն ու գործառույթները:

ՆԵՎՐՈՊԱԹՈԼՈԳ[< невропатолог < հուն.], գ. Նեվրոպաթոլոգիայի մասնագետ բժիշկ:

ՆԵՎՐՈՊԱԹՈԼՈԳԻԱ [< невропатология < հուն. neuron նյարդ + pathos տառապանք + logos ուսմունք], գ. Ուսմունք նյարդային համակարգի հիվանդությունների մասին:

...**ՆԵՏ** [< ...нет < անգլ. net ցանց] Բարդ բառերի երկրորդ բաղադրիչ, որը ցույց է տալիս այդ բառերի կապը համակարգչային ինֆորմացիոն ցանցերին:

ՆԵՏՏՈ [< нетто < իտալ. netto, բառացի՝ մաքուր], ած. (առևտր.): 1. Մաքուր, առանց տարայի (քաշի մասին), զտաքաշ: 2. Ձեղչերը հանած (ապրանքի գնի մասին): 3. Բոլոր ծախսերը հանած (եկամտի մասին):

ՆԵՐՎ [< нерв < լատ. nervus], գ. (առավել. խսկց. կզմխս.): Նյարդ:

ՆԵՐՎԻԶՄ [< нервизм < լատ. nervus], գ. (կենսբ.): Ֆիզիոլոգիական ուղղություն, որն ընդունում է մարդու և կենդանիների օրգանիզմներում կենսական գործընթացների և գործառույթների կարգավորման մեխանիզմում նյարդային համակարգի գերադասելի նշանակությունը:

ՆԵՐՎՅՈՒՐ [< нервюра < ֆր. nervure < լատ. nervus ջիղ, նյարդ], գ. (ճարտ.): Ջլաղեղ:

ՆԵՖԵԼԱՄԵՏՐԻԱ [< нефелометрия < հուն. nephelē ամպ + մետրիա], գ. (գիտ.): Պղտորաչափություն:

ՆԵՖԵԼԻՆ [< нефелин < հուն. nephelē ամպ, թուխպ], գ. (հնք.): Հանքանյութ, որից ալյումին է ստացվում:

ՆԵՖՐԻՏ I [< нефрит < հուն.], գ. (հնք.): Կանաչավուն կամ կաթնասպիտակավուն հանք, որ օգտագործվում է զարդեր, այուների նախշազարդեր ևն անելու համար:

ՆԵՖՐԻՏ II [< нефрит < հուն. nephos երիկամ], գ. (բժշկ.): Երիկամների բորբոքում, երիկամաբորբ:

ՆԵՖՐՈԶ [< нефроз < հուն. nephros երիկամ], գ. (բժշկ.): Նեֆրոտիկ սինդրոմի անվանումը:

ՆԵՖՐՈԼՈԳԻԱ [< нефрология < հուն. nephros + logōs գիտություն], գ. (բժշկ.): Ներքին հիվանդությունների բաժին. ուսումնասիրում է երիկամների (բուն հյուսվածքի) հիվանդությունների պատճառագիտությունը, ախտածնությունը, կլինիկան, բուժումը և կանխարգելումը:

ՆԷՊ [< НЭП < *հպվ.* ռուս. Новая экономическая политика], գ. (պատմ.): Նոր տնտեսական քաղաքականություն, որ իրագործում էր Խորհրդային կառավարությունը 1921թ. մինչև 30-ական թթ. կեսերը:

ՆԷՊՄԱՆ [< НЭПман < (нов. эк. пол.) + գերմ. Mann մարդ], գ. (պատմ.): Նէպի շրջանի մասնավոր ձեռնարկու՝ առևտրական՝ ձեռնարկատեր ևն:

ՆԻԿԵ [< Ника < հուն. Nike], գ. 1. (դից.): Հաղթանակի (պատերազմում, մրցությունում) աստվածը Հին Հունաստանում: 2. (սպորտ.): Ֆուտբոլի աշխարհի առաջնությունում հաղթողին տրվող մրցանակ:

ՆԻԿԵԼ [< никель < Купферникель (հանքի անվանում) > գերմ. Kupfer պղինձ + Nickel լեռնային չար ոգի], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթագույն սպիտակ գույնի դժվարահալ մետաղ:

ՆԻԿԵԼԻՆ [< никелин < գերմ.], գ. (տեխ.): 1. Պղնձի, նիկելի և ցինկի միաձուլվածք: 2. (հնք.): Նիկելի կարմիր հրաքար, նիկելահանք:

ՆԻԿՈՏԻՆ [< никотин < ֆր. nicotine 1560 թ. առաջին անգամ ծխախոտը Ֆրանսիա ներմուծած ֆրանսիական դիվանագետ Ժ. Նիկո (J. Nicot)-ի անունով], գ. Ծխախոտի մեջ պարունակվող թմրաբեր թունավոր նյութ:

ՆԻԿՈՏԻՆԱԹԹՈՒ, գ. (քիմ.): Բ խմբի ջրում լուծվող վիտամին:

ՆԻԿՈՏԻՆԱՄԻԴԱԴԵՆԻՆԵՐԿՆՈՒԿԼԵՈՏԻԴ (ՆԱԵ), գ. (կզմխս.): Կոֆերմենտ, գտնվում է բոլոր կենդանի բջիջներում. մտնում է դեհիդրոգենազների խմբի ֆերմենտների կազմի մեջ:

ՆԻՀԻԼԻԶՄ [< нигилизм < լատ. nihil ոչինչ < ֆր. nihilisme], գ. 1. Ամեն բանի բացարձակ ժխտում՝ մերժում, ժխտողականություն: 2. (պատմ.): XIX դարի վաթսունական թվականներին ռուսական ռազնոչին մտավորականության շրջանում ծագած ուղղություն, որ ժխտողաբեր էր վերաբերվում ազնվականական կարգերին, ավանդույթներին և ճորտատիրությանը:

ՆԻՀԻԼԻՍՏ [< нигилист < լատ. nihil], գ. ած. 1. Նիհիլիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. Ամեն ինչի ժխտողաբար վերաբերվող, ամեն ինչ ժխտող՝ բացասող (մարդ):

ՆԻՄԲ [< нимб < ֆր. nimbe < լատ. nimbus],գ. (հնց.): 1. (եկեղ.): Սրբապատկերների լուսապսակ: 2. *փխբ.* Լուսապսակ:

ՆԻՄՓԱՆՆԵՐ [< нимфы < հուն. nymphē հարս, դեռատի կույսեր], գ. (դից.): Բնության ուժեր, երևույթներ խորհրդավորող դիցուհիներ ու ոգիներ: Հին հույները

հավերժահարսերին համարել են Զևսի երկարակյաց, բայց մահկանացու դուստրերը:

ՆԻՄՖՈՄԱՆԻԱ [< нимфомания < հուն. nymphē երիտասարդ կին + mania կիրք, խելահեղություն], գ. (բժշկ.): Հեշտամոլություն՝ կնոջ հիվանդագին հակումը սեռական հարաբերության, վավաշոտություն, ցանկասիրություն:

ՆԻՆԶՅԱ [< ниндзя < ճապ. nindzia, բառացի՝ լրտես], գ. Լրտեսական ցանցի չափազանց մարզված անդամ (Ճապոնիայում միջնադարից ի վեր), որ կատարում էր ամենադժվար հանձնարարությունները:

ՆԻՇԱ [< ниша < ֆր. niche], գ. (ճարտ.): Փոս ընկած տարածք պատի մեջ, որմնախորշ:

ՆԻՈԲԻՈՒՄ [< ниобий < հին հունական դիցաբանության մեջ Տանտալոսի դուստր Նիոբեի անունով], գ. (քիմ.): Nb, տարրերի պարբերական համակարգի V պարբերության V խմբի տարր, հայտնաբերել է անգլիացի գիտնական Չ. Հատչետը 1801 թ.:

ՆԻՊԵԼ [< ниппель < անգլ. nipple], գ. (տեխ.): 1. Պտուկ: 2. Ներագույց:

ՆԻՎԵԼԻՐ [< нивелир < ֆր. niveler հարթեցնել], գ. (տեխ.): Հարթաչափ:

ՆԻՏ [< нит < լատ. nitere փայլել, շողշողալ], գ. Միավորների միջազգային համակարգում պայծառության միավորի (կդ/մ^2) հնացած անվանումը, որը 1951թ.-ին ընդունել է լուսավորության հարցերի միջազգային հանձնաժողովը:

ՆԻՏՐ... [< нитр(о).. . < հուն. nitron, լատ. nitrum սկզբնապես՝ բնական սոդա, մ.թ. VII դարից՝ բորակ] Բարդ բառերի սկզբնամաս, քիմիայում, կենսաբանության մեջ օգտագործվում է ազոտին (նոր լատիներեն nitrogenium) վերաբերող տերմիններում:

ՆԻՏՐԱԲԵՆԶՈԼ [< нитробензол < նիտր... + բենզոլ], գ. (քիմ.): $C_6H_5NO_2$, պարզագույն արոմատիկ նիտրամիացություն: Բաց դեղնավուն, դառը նշի հոտով յուղանման հեղուկ է:

ՆԻՏՐԱԳԼԻԿՈԼ [< нитрогликол < հուն.], գ. (քիմ.): Պայթուցիկ նյութ, էթիլենգլիկոլի և ազոտական թթվի էսթեր:

ՆԻՏՐԱԳԼԻՑԵՐԻՆ [< нитроглицерин < հուն.], գ. (քիմ.): Գլիցերինի և ազոտական թթվի լրիվ էսթերը:

ՆԻՏՐԱԶԱՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գ. (քիմ.): Օրգանական միացություններ, որոնց մոլեկուլում ածխածնի ատոմին միացած է նիտրազախումբ՝ NO:

ՆԻՏՐԱԼԱՔԵՐ, գ. (քիմ.): Թաղանթանյութի նիտրատներ (սովորաբար կոլոքսիլին) պարունակող լաքեր:

ՆԻՏՐԱՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, գ. (քիմ.): Օրգանական միացություններ, որոնց մոլեկուլները պարունակում են ածխածնի ատոմներին միացած մեկ կամ մի քանի նիտրախմբեր՝ NO_2:

ՆԻՏՐԱՄԻՆՆԵՐ, գ. (քիմ.): Ամիններ, որոնց մոլեկուլում ազոտին միացած ջրածնի ատոմը տեղակալված է նիտրախմբով:

ՆԻՏՐԱՆԱՎԹԱԼԻՆՆԵՐ, գ. (քիմ.): Նավթալինի ածանցյալներ.կիրառվում են ազոներկանյութերի և ծծմբային ներկանյութերի արտադրության մեջ:

ՆԻՏՐԱՆԵՐԿԵՐ, գ. (քիմ.): Ներկվող մակերևույթի վրա փայլուն, անփայլ, չեչոտ, ճաքճքված և այլ դեկորատիվ գունավոր կամ սպիտակ թաղանթներ առաջացնող ներկեր:

ՆԻՏՐԱՉԱՓ, գ. (տեխ.): Լուծույթներում ազոտական և ազոտային թթուների և նրանց աղերի քանակական պարունակությունը որոշելու սարք:

ՆԻՏՐԱՏՆԵՐ [< нитраты < հուն.], գ. (քիմ.): Մետաղների, ազոտական թթվի աղեր. բյուրեղական, ջրում լուծելի, մեծ մասամբ անգույն նյութեր են:

ՆԻՏՐԱՏՈԼՈՒՈԼՆԵՐ, գ. (քիմ.): Տոլուոլի նիտրամիացությունները, որոնց մոլեկուլներում նիտրախմբերը տեղակալել են բենզոլային օղակի ջրածնային ատոմներից մեկը կամ մի քանիսը:

ՆԻՏՐԻԴՆԵՐ, գ. (քիմ.): Ազոտի միացությունները ավելի էլեկտրադրական տարրերի, հիմնականում մետաղների հետ: Ըստ հատկությունների՝ քիմ. կապի բնույթի և կառուցվածքի տարբերում են աղակերպ, կովալենտային և մետաղանման նիտրիդներ:

ՆԻՏՐԻԼՆԵՐ, գ. (քիմ.): Ցիանաջրածնական թթվի օրգանական ածանցյալներն են: Պարզագույն ներկայացուցիչը ցիանաջրածինն է՝ HCN:

ՆԻՏՐԻՏՆԵՐ, գ. (քիմ.): Ազոտային թթվի աղերը. ջրում լուծելի, բյուրեղային նյութեր են, մեծ մասամբ անգույն:

ՆԻՏՐԻՖԻԿԱՑՈՒՄ [< нитрификация < նիտր... + լատ. facere կատարել], գ. (քիմ.): Նիտրացում, նիտրացնող բակտերիաներով հողում, ջրամբարների ջրում պարունակվող ամոնիումային աղերի վերածումը բույսերի կողմից յուրացվող նիտրատների:

ՆԻՐՎԱՆԱ [< нирвана < սանսկրիտ nirvāna անշնչություն, մարում], գ. (կրոն.): Բուդդայականության և ջայնիզմի կրոնական փիլիսոփայության կենտրոնական հասկացությունը, որը ցույց է տալիս մարդու հոգևոր զարգացման բարձրագույն վիճակը, վերջնական նպատակը:

ՆՅՈՒԱՆՍ [< нюанс < ֆր. nuance], գ. (խսկց.): Նրբերանգ, նրբերանգություն:

ՆՅՈՒՀԵՄՓՇԻՐ [< ньюгемпшир < անգլ. newhampshire < ԱՄՆ-ի նահանգի անունից], գ. (կենդբ.): 1. Բարձր ճվատվություն և մսատվություն ունեցող հավերի ցեղ: 2. Այդ ցեղի հավ:

ՆՅՈՒՍՄԵՅՔԵՐ [< ньюсмейкер < անգլ. newsmaker < news նորություն + to make կատարել, պատրաստել], գ. (մանգ.): Քաղաքական գործիչ, դերասան, մարզիկ են, որն այս կամ այն պահին դառնում է լրագրողների ուշադրության թիրախը:

ՆՅՈՒՖԱՈՒՆԴԼԵՆԴ [< ньюфаундленд < անգլ. Newfoundland < ԱՄՆ-ի Նյուֆաունդլենդ կղզու անունից], գ. (կենդբ.): Շների ցեղ և այդ ցեղի շուն (սկզբում այդ շների օգնությամբ դուրս էին քաշում ձկնորսական նավակները, հետո դրանց օգնությամբ փրկում էին խեղդվողների):

ՆՈ(Ո) [< ноо < ճապ.], գ. (թատր.): Ճապոնական թատրոնի տեսակ, որն իր մեջ ներառում է երաժշտություն, պար, դրամա:

ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ [< нобелевская (< շվեդ գյուտարար Ա. Նոբելի անունով) премия] - Ամենամյա մրցանակ, որը շնորհվում է գիտության, տեխնիկայի, արվեստի ևն բնագավառներում առավել աչքի ընկած գիտնականներին և հասարակական գործիչներին:

ՆՈԲԻԼԻՏԵՏ [< нобилитет < լատ. nobilitas ավագանի], գ. (պատմ.): Արտոնյալ խավ Հին Հռոմում՝ հանրապետության ժամանակաշրջանում:

ՆՈՉԵՄԱՏՈՉ [< нозематоз < հուն. nosos + eidos], գ. (կենդբ.): Մեղուների վարակիչ լուծ, մեղվաընտանիքի ինֆեկցիոն հիվանդություն. հարուցիչները նոզեմա սեռի միաբջիջ մակաբույծներն են:

ՆՈՉՈԼՈԳԻԱ [< нозология < հուն. nosos հիվանդություն+ logōs գիտություն], գ. (ախտ.): Ախտաբանության բաժին, որն ընդգրկում է հիվանդությունների վերաբերյալ ուսմունքը, պատճառների ուսումնասիրությունը, առաջացման մեխանիզմները և առանձին հիվանդությունների կլինիկական առանձնահատկությունները, հիվանդությունների դասակարգումն ու անվանակարգը:

ՆՈԿԱՈՒՏ [< нокаут < անգլ. knock-out < knock հարվածել + out դուրս], գ. (սպորտ.): Բռնցքամարտի մեջ ուժեղ հարվածից առաջացած այնպիսի վիճակ, որի հետևանքով մրցակիցն ընկնում է հատակին և տասը վայրկյանի ընթացքում ոտքի կանգնել և մարտը շարունակել չկարողանալով՝ համարվում է պարտված:

ՆՈԿԴԱՈՒՆ [< нокдаун < անգլ. knock-down < knock հարվածել + down ցած], գ. (սպորտ.): Բռնցքամարտի մեջ հարվածից առաջացող այնպիսի վիճակ, երբ մրցակիցը հատակին է ընկնում, բայց տասը վայրկյանի ընթացքում կարողանում է ոտքի կանգնել և մարտը շարունակել:

ՆՈԿՏՅՈՒՐՆ [< ноктюрн < ֆր. nocturne, բառացի՝ գիշերային], գ. 1. (երժշտ.): Քնարական բնույթի փոքրիկ երաժշտական ստեղծագործություն՝ գործիքային կատարման համար, ցայգերգ: 2. (գրկն.): Ցայգերգ:

ՆՈՄԵՆԿԼԱՏՈՒՐԱ [< номенклатура < լատ. nomenclatura ցուցակ, թվարկ], գ. 1. (պշտն.): Անվանակարգ: 2. Հաշվեցուցակ:

ՆՈՄԵՐ [< номер < լատ. numerus թիվ], գ. (խսկց.): 1. Համար, թիվ: 2. Համար, համարանիշ:

ՆՈՄԻՆԱԼ [< номинал < լատ. nominalis անվանական, անձնական], ած. Անվանական:

ՆՈՄԻՆԱԼԻԶՄ [< номинализм < ֆր. nominalisme < լատ. nomina կոչում, անվանում], գ. (փիլ.): Միջնադարյան փիլիսոփայական ուղղություն, ըստ որի՝ ընդհանուր հասկացությունները առանձնակի առարկաներից դուրս գոյություն չունեն և միայն վերջիններիս անվանումներն են:

ՆՈՄԻՆԱԼԻՍՏ [< номиналист < լատ. nomina], գ. Նոմինալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՆՈՄԻՆԱՑԻԱ [< номинация < լատ. nominatio], գ. 1. Անվանում, անվանակարգ: 2. Կարգ, որով գնահատվում են մրցույթում ներկայացվող աշխատանքները, օր.՝ տարվա լավագույն դերասանը ևն:

ՆՈՄՈԳՐԱՄՄԱ [< номограмма < հուն.], գ. (մաթ.): Նոմոգրաման բաղկացած է մի քանի գծերից (կամ կետերից), որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է ֆունկցիոնալ հարաբերությամբ կապված փոփոխական մեծություններից որևէ մեկին:

ՆՈՄՈԳՐԱՖԻԱ [< номография < հուն. nomos օրենք + graphō գրում եմ], գ. (մաթ.): Մաթեմատիկայի բաժին, որը միավորում է ֆունկցիոնալ հարաբերություններ պատկերող հատուկ գծագրերի՝ նոմոգրամների կառուցման տեսությունը և գործնական մեթոդները:

ՆՈՆԱ [< нона < լատ. nona իններորդ], գ. (երժշտ.): Դիատոնիկ շարքում որևէ աստիճանի և նրանից հաշված իններորդ աստիճանի հարաբերակցությունը:

ՆՈՆՊԱՐԵԼ [< нонпарель < ֆր. nonpareille], գ. (տպգր.): Կեգել՝ տպագրական տառաձև:

ՆՈՆՍԵՆՍ [< нонсенс < անգլ. nonsense < լատ. non ոչ + sensus միտք, իմաստ], գ. (խսկց.): Անիմաստություն, անհեթեթություն:

ՆՈՍՏԱԼԳԻԱ [< ностальгия < հուն. nostos վերադարձ տուն + algos ցավ, տառապանք], գ. Հայրենաբաղձություն՝ հայրենիք վերադառնալու մեծ ցանկություն՝ բաղձանք, կարոտաբաղձություն:

ՆՈՎԱՏՈՐ [< новатор < լատ. novator վերականգնիչ, նորոգիչ], գ. (խսկց.): Նորարար:

ՆՈՎԱՑԻԱ [< новация < լատ. novatio], գ. (հնց.): Նորարարություն:

ՆՈՎԵԼ [< новелла < իտլ. novella նորույթ], գ. (գրկն.): Նորավեպ՝ գրական ժանր, փոքր ծավալի արձակ ստեղծագործություն, որն ունի լարված, հետաքրքրաշարժ սյուժե:

ՆՈՎԵԼԻՍՏ [< новелист < իտլ. novellista], գ. ած. (գրկն.): 1. Նովելներ գրող հեղինակ: 2. Նովելագիր:

ՆՈՎԵԼՆԵՐ [< новеллы < լատ. novellae leges նոր օրենքներ], գ. (իրավք.): Նոր օրենք, գործող օրենսդրության հավելված, որը լրացնում կամ փոփոխում էր այն: Նովելներ են կոչվել Հուստինիանոսի օրենսգրքում ներառված 168 նոր օրենքները՝ կազմելով նրա վերջին մասը:

ՆՈՎՈԿԱԻՆ [< новокаин < լատ. novus նոր + կո (կաին)], գ. (դեղագրդ.): Բուժական և ցավամոք քիմիական դեղամիջոց:

ՆՈՏԱ I [< нота < լատ. nota նշան], գ. (երժշտ.): 1. Երաժշտական հնչյունի պայմանական գրային նշան, ձայնանիշ: 2. Այդ նշանով արտահայտվող երաժշտական հնչյունը՝ ձայնը: 3. Ձայնագրված երաժշտական ստեղծագործություն: 4. *փխբ.* Ձայներանգ, խոսքի ձայնային երանգ, հնչերանգ:

ՆՈՏԱ II [< нота < լատ. nota նշան, նշում, նկատում], գ. (դվնգ.): Հայտագիր՝ մի կառավարության դիմումը մի ուրիշ կառավարության իր ներկայացուցչի միջոցով:

ՆՈՏԱԲԵՆԵ [< нотабене, нотабена < լատ. nota bene ուշադի՛ր եղիր] (գիտ.): NB
նշան լատինատառ տեքստերին կից մասերում, որը կարդացողի ուշադրությունը նորից է հրավիրում որևէ քերականական կամ այլ փաստի վրա:

ՆՈՏԱՐ [< нотариус < լատ. notarius գրագիր, քարտուղար], գ. ած. (իրավք.): Նոտարական գործառություններ վարող պաշտոնական անձ:

ՆՈՏԱՐԱԿԱՆ, ած. (իրավք.): 1. Իրավական փաստաթղթերի՝ ստորագրությունների իսկության հաստատման համար, պատճենների և այլ կարգի փաստաթղթերի իրավական վավերացման հետ կապված, փաստաթղթերի իրավաբանական հաստատմանը վերաբերող: 2. Նոտարի կողմից հաստատված՝ վավերացված: 3. Նոտարի գործունեության հետ կապված, նոտարին հատուկ:

ՆՈՏԱՐԻԱՏ [< нотариат < լատ. notarius], գ. (իրավք.): Նոտարական գործողություններ վարող մարմին:

ՆՈՏԻՖԻԿԱՑԻԱ [< нотификация < ֆր. notification < լատ. notificatio], գ. 1. (իրավք.): Միջազգային իրավունքում՝ մի պետության կողմից մյուսին միջազգային այս կամ այն հարցի վերաբերյալ սեփական մոտեցումների մասին տեղեկացնելը: 2. (ֆին.): Ճանուցագրում (մուրհակը բողոքարկման ուղարկելու մասին): 3. (դվնգ.): Հայտագրում, հայտագրով հայտնելը:

ՆՈՐԴ [< норд < հոլանդ. noord], գ. (ծով. օդերև.): 1. Հյուսիս: 2. Հյուսիսային քամի:

ՆՈՐԴ - ՎԵՍՏ [< норд-вест < հոլանդ. noord-west],գ. (ծով. օդերև.): 1. Հյուսիս-արևմուտք: 2. Հյուսիսարևմտյան քամի:

ՆՈՐԴ-ՕՍՏ [< норд-ост < հոլանդ. noordoost], գ. (ծով. օդերև.): 1. Հյուսիս-արևելք:

2. Հյուսիսարևելյան քամի: 3. Մոսկվայում գործող մյուզիքլի անվանում, որի շենքը գրավվեց չեչեն գրոհայինների կողմից 2002 թ.:

ՆՈՏԱՐԻՈՒՍ [< нотариус < լատ.],գ. Տե՛ս Նոտար:

ՆՈՏԱՑԻԱ [< нотация < լատ. notatio նշանակություն], գ. (խսկց.): Հորդոր, հանդիմանություն:

ՆՈՐԻՏ [< норит < նորվեգ. norit, Norge Նորվեգիա], գ. (երկրբ.): Գաբբրոյի խմբի լրիվ բյուրեղային հիմքային մագմատիկ ապար:

ՆՈՐՄ(Ա) [< норма < լատ. norma առաջնորդող սկզբունք], գ. (խսկց.): 1. Օրինականացված որոշում՝ կանոն, կանոնակարգ: 2. Ընդհանուր ճանաչում գտած կանոն՝ կարգ՝ սովորույթ նն: 3. Որևէ բանի սահմանված չափ՝ քանակ: 4. *փխբ.* Որևէ կարգի հարաբերություն՝ համեմատություն ցույց տվող մեծություն: 5. Մամլանիշ: 6. (լեզվբ.): Կանոն:

ՆՈՐՄԱԼ I [< нормальный < լատ. normalis ուղղագիծ], ած. 1. Նորմային համապատասխանող: 2. Կանոնավոր, կարգ ու կանոնի մեջ գտնվող, կարգ ու կանոնի ենթարկված: 3. Բնականոն, բնական, օրինաչափ: 4. Կարգին, խելքը գլխին, հոգե*պ*ես և ֆիզիկապես առողջ, ոչ պակասավոր: 5. Առողջ դատողության վրա հիմնված, բանական, խելացի, խելամիտ:

ՆՈՐՄԱԼ II [< нормаль < լատ. normalis], գ. 1. (երկրչ.): Ուղղահայաց գիծ: 2. (տեխ.): Գործարանի սահմանած ձևի մանրակ:

ՆՈՐՄԱՏԻՎ [< норматив < լատ. normativo կարգավորող], 1. գ. Նորմաների ցուցանիշ՝ չափանիշ, չափորոշիչ, արտադրվող կամ սպառվող նյութերի՝ մթերքների նն քանակը, որ ընկնում է մեկ միավորին: 2. ած. Նորմաներ՝ կանոններ սահմանող: 3. Գոյություն ունեցող նորմաները արձանագրող՝ նկարագրող:

ՆՈՈՒԹԲՈՒՔ [< ноутбук < անգլ. notebook բառացի՝ նոթատետր. գրառումների տետր], գ. (տեխ.): Փոքր չափերի անհատական համակարգիչ՝ տափակ, հարթ էկրանով:

ՆՈՈՒ-ՀԱՈՒ [< ноу-хау < անգլ. know-how, բառացի՝ գիտեմ ինչպես], գ. 1. Տեխնիկական գիտելիքներ, փորձ, արտադրության գաղտնիքներ, հմտություններ, որոնք հնարավորություն են տալիս կարգավորել արտադրական գործընթացները: 2. *փխբ* .Արդիական՝ ժամանակակից գործելաոճ նն:

ՆՈՈՒՄԵՆ [< ноумен < գերմ. Noumenon < հուն. noumenon մտացածին], գ. (փիլ.): Ի. Կանտի փիլիսոփայության մեջ՝ անճանաչելի «բան իր մեջ»:

ՆՈՒԳԱ [< нуга < ֆր. nougat < լատ. nux ընկույզ], գ. (խոհր.): Քաղցրավենիք (կոնֆետի տեսակ) ընկույզից և շաքարից:

ՆՈՒԴԻԶՄ [< нудизм < լատ. nudus մերկ], գ. (փիլ.): Բարոյագիտական հոսանք Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում, որը քարոզում է մերկ մարմնի պաշտամունքը:

ՆՈՒԴԻՍՏ [< нудист < լատ. nudus մերկ], գ. Ծովափում մերկ լողացող և արևային լոգանք ընդունող անձ:

ՆՈՒԼԻՖԻԿԱՑԻԱ [< нуллификация < լատ. nullificatio արհամարհում, ոչնչացում < nullus ոչ մի, գոյություն չունեցող + facio կատարել, անել], գ. (ֆին.): Խիստ արժեզրկված թղթադրամի չեղյալ հայտարարում պետության կողմից:

ՆՈՒԿԼԵԱԶՆԵՐ [< нуклеазы < լատ. nucleus միջուկ], գ. (քիմ.): Նուկլեինաթթուները մինչև միա- և սակավանուկլեոտիդների ճեղքող ֆերմենտներ:

ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆԵՐ, գ. (քիմ.): Բնության մեջ ունիվերսալ տարածում ունեցող կենսաբանորեն ակտիվ կարևորագույն կենսապոլիմերներ:

ՆՈՒԿԼԵՈԶԻԴՆԵՐ, գ. (քիմ.): Ազոտային հիմքի մնացորդից և ածխաջրից՝

ռիբոզից կամ դեզօքսիռիբոզից կազմված միացություններ:

ՆՈՒԿԼԵՈՊՐՈՏԵԻԴՆԵՐ, գ. (քիմ.): Նուկլեինաթթուների և սպիտակուցների կոմպլեքս միացություններ:

ՆՈՒԿԼԵՈՏԻԴՆԵՐ, գ. (քիմ.): Նուկլեոզիդների ֆոսֆորաթթվական էսթերներ: Կազմված են ազոտային հիմքից, ածխաջրից և ֆոսֆորական թթվի մնացորդից:

ՆՈՒԿԼՈՆ [< нуклон < լատ. nucleus միջուկ], գ. (ֆիզ.): Ատոմային միջուկները կազմող տարրական մասնիկների՝ պրոտոնի և նեյտրոնի ընդհանուր անվանումը:

ՆՈՒՄԵՐԱՑԻԱ [< нумерация < լատ. numeratio թվագրում, հաշիվ], գ. 1. (մաթ.): Թվարկություն, համրանք: 2. (գիտ.): Թվագրություն, թվերը գրելու և անվանելու մասին ուսմունք (թվաբանության բաժին): 3. Համարակալում, համարագրում: 4. Համարակալություն, համարադրություն, թվագրություն, թվարկություն:

ՆՈՒՄԻԶՄԱՏԻԿԱ [< нумизматика < լատ. numisma], գ. (ֆին.): Դրամագիտություն՝ գիտություն դրամի և մեդալների մասին՝ որպես մշակույթի պատմություն:

ՆՈՒՄՈՒԼԻՏՆԵՐ [< нуммулиты < լատ. nummulus մանր մետաղադրամ], գ. (կենսբ.): Ֆորամինիֆերների ենթախմբի մահացած միաբջիջ օրգանիզմների սեռ:

ՆՈՒՆՉԱԿԻ [< нунчаки < ճապ. nunchaku], գ. (սպորտ.): Մարտական զենքի տեսակ՝ երկու կարճ փայտիկներ՝ ծայրերից միացված շղթայով կամ գոտիով. օգտագործվում է արևելյան որոշ մարզաձևերում՝ կարատեում են:

ՆՈՒՆՑԻՈՒՄ [< нунций < լատ. nuntius լրաբեր, սուրհանդակ], գ. (դվնգ.): Հռոմի պապի դիվանագիտական մշտական ներկայացուցիչը այլ պետություններում, նվիրակ:

ՆՈՒՍ [< нус < հուն. νόος միտք, խելք, բանականություն], գ. (փիլ.): Անտիկ փիլիսոփայության կատեգորիա, որն արտահայտում է իրականության օրինաչափությունների ընդհանրացված ըմբռնումը:

ՆՈՒՎԻՍՏՈՐ [< нувистор < իտալ. nuovo նոր + vista տեսակ], գ. (տեխ.): Մետաղախեցեղեն մանրանրբին ընդունիչ-ուժեղացուցիչ լամպ: Օգտագործվում է ռադիոէլեկտրոնիկայում:

ՆՈՒՏԱԼԻՈԶ [< нуталиоз < լատ.], գ. (կենդբ.): Միասմբակավորների (առավելապես ձիերի) պրոտոզոային հիվանդություն:

ՆՈՒՏԱՑԻԱ [< нутация < լատ. nutatio տատանում], գ. 1. (ֆիզ.): Պինդ մարմնի շարժում, տեղի է ունենում պրեցեսիայի հետ միաժամանակ և ուղեկցվում է մարմնի սեփական պտույտի առանցքով և պրեցեսիայի առանցքով կազմված անկյան փոփոխությամբ: 2. (բսբ.): Աճող օրգանների գագաթների պտտական շարժումներ. առավել հստակ արտահայտվում է փաթաթվող բույսերի նուտացիա:

ՆՈՒՏՐԻԱ [< нутрия < իսպ. nutria], գ. (կենդբ.): Կրծողների կարգին պատկանող թանկարժեք մորթիով կենդանի, որ Հայաստան է բերված Հարավային Ամերիկայից, ճահճակուղբ:

ՆՈՒՑԵԼՈՒՍ [< нуцелус < լատ. nucella ընկուզիկ], գ. (բսբ.): Սերմնավոր բույսերի սերմնաբողբոջի կենտրոնական մասը (կորիզը). համապատասխանում է պտերանմանների մեգասպորանգիումին:

Շ

ՇԱԲԱՇ [< шабаш < իդիշ Scabbes շաբաթ < հին հրեերեն šabbath շաբաթ], գ. 1. (հզվդ.): Շաբաթօրյա հանգիստ (հրեական): 2. (պատմ.): Միջնադարյան հավատալիքներում՝ վհուկների գիշերաժողով: 3. (ստորոգական նշան): Բավական է, վերջ: 4. (հնց.): Դադար, ընդմիջում: 5. (խսկց.): Որևէ երգի կամ պարի կատարման համար տրվող գումար:

ՇԱԲԼՈՆ [< шаблон < գերմ. Schablone < ֆր. échantillon օրինակ], գ. 1. Ձևով՝ չափսով ևն միատեսակ արտադրանքի՝ շինվածքի նմուշ, ձևանմուշ: 2. Գործիք՝ հարմարանք, որով ստուգում են պատրաստի շինվածքի՝ արտադրանքի ևն ձևը: 3. *փխբ.* Սովորական դարձած կարգ՝ օրինակ որին կուրորեն հետևում են:

ՇԱԳՐԵՆ [< шагрень < ֆր. chagrin], գ. 1. Փափուկ կաշի՝ հատուկ պատկերով: 2. Այդպիսի պատկերով թուղթ, գործվածք:

ՇԱԼԱՆԴԱ [< шаланда < ֆր. chaland < ուշ հուն. chelandion նավակ], գ. 1. (ծով.): Տափակ գետանավ (բեռներ տեխափոխելու ևն համար), սպասարկու նավ: 2. (խսկց.): Երկար, մեծ քանակով բեռներ փոխադրող բեռնատար:

ՇԱԼՖԵՅ [< шалфей < լատ. salvus առողջ, ուժեղ], գ. (բսբ.): Եղեսպակ (տերևները դեղաբույս են, իսկ յուղը օգտագործում են օծանելիքի արտադրության մեջ):

ՇԱԽ [< шах < պարսկ. šāh տիրակալ], գ. 1. (հնց.): Շահ՝ միապետի տիտղոս Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, Հնդկաստանում: 2. (սպորտ.): Շախմատում այն քայլը, որով սպառնում են հակառակորդի արքային:

ՇԱԽԻԴ [< шахид < պարսկ. šāh տիրակալ], գ. (կրոն.): Մահմեդականների մոտ՝ կրոնական մոլեռանդ անձ, ով կարող է իրեն զոհաբերել հանուն ընդհանուր նպատակի:

ՇԱԽՄԱՏ [< шахматы < պարսկ. šāhmāt մահ արքային], գ. (սպորտ.): Երկու մրցակցի խաղ՝ հատուկ ֆիգուրներով 64 վանդականի տախտակի վրա:

ՇԱԽՍԵՅ-ՎԱԽՍԵՅ [< шахсей-вахсей < պարսկ. շա՛հ Հուսեյն, վա՛խ Հուսեյն ողբից], 1. գ. Շիա մահմեդականների մոլեռանդ ողբահանդես՝ նվիրված Հուսեյն իմամի հիշատակին: 2. (ձայն.): Տնին ուղեկցող ձայնարկություն:

ՇԱԽՏ(Ա) [< шахта < գերմ. Schacht], գ. (խսկց.): 1. Հանքահոր: 2. Հորան: 3. Հանքավայր, հանքատեղ, հանքարան:

ՇԱԽՏՅՈՐ [< шахтёр < գերմ.], գ. ած. (խսկց.): 1. Հանքագործ, հանքափոր, հանքաբանվոր: 2. Ածխահատ:

ՇԱԿԱԼ [< шакал < գերմ. Schakal < նոր պարսկ. šaγāl)], գ. 1. (կենդբ.): Շնագայլ: 2. *փխբ.* Անազնիվ, կեղծ, ստոր անձ:

ՇԱՄԱՆ [< шаман < էվենկերեն shaman, saman գրգռված, մոլեգնած մարդ], գ. (կրոն.): Պաշտամունքի սպասավոր՝ կախարդ հյուսիսային ժողովուրդների մոտ: Տարածված է եղել նաև Աֆրիկայում:

ՇԱՄՈՏ [< шамот < գերմ. shamotte], գ. (երկրբ.): Հրակավ:

ՇԱՄՊԱՅՆ [< ռուս шампанское < Ֆրանսիայի Champagne գավառի անունից], գ. Ածխաթթվական գազով հագեցած փրփրուն ընտիր գինի, փրփրագինի:

ՇԱՄՊԱՆԻԱ, գ.Տե՛ս Շամպայն:

ՇԱՄՊԻՆԻ(Յ)ՈՆ [< шампиньон < ֆր. champignon սունկ], գ. (բսբ.): Ագարիկոն՝ գլխարկավոր սնկերի տեսակ:

ՇԱՄՊՈՒՆ [< шампунь < անգլ. shampoo], գ. Օճառի հոտավետ հեղուկ կամ փոշի՝ գլուխ ևն լվանալու համար, օճառահեղուկ:

ՇԱՅԲԱ [< шайба < գերմ. Scheibe], գ. 1. (խսկց. սպորտ.): Տափօղակ (ռետինե)՝ հոկեյ խաղալու համար: 2. (տեխ.): Տափօղակ, մեջդիր:

ՇԱՅԿԱ [< шайка < թուրք šaika նավ, նավակ], գ. (խսկց.): Հրոսակախումբ, ավազակության, հանցավոր գործունեության նպատակով միավորված մարդկանց խումբ:

ՇԱՆՍ [< шанс < ֆր. chance հաջողություն], գ. (խսկց.): Հաջողության հավանականություն՝ հույս՝ տվյալ՝ նախադրյալ, հնարավորություն:

ՇԱՆՍՈՆ [< шансон < ֆր. chanson < chanter երգել < լատ. cantare երգել], գ. (երժշտ.): 1. Ֆրանսիական ժողովրդական երգ: 2. Ժամանակակից էստրադային երգ:

ՇԱՆՍՈՆԵՏԿԱ [< шансонетка < ֆր. chansonnette < chanson երգ], գ. (երժշտ.): Զվարթ, հաճախ թեթևամիտ բովանդակությամբ ոչ մեծ երգեր կատարող երգչուհի:

ՇԱՆՍՈՆԻԵ [< шансонье < ֆր. chansonier], գ. (երժշտ.): Շանսոններ երգող, շանսոններ կատարող երգիչ:

ՇԱՆՏԱԺ [< шантаж < ֆր. chantage], գ. (խսկց.): Վարկաբեկող տվյալների՝ տեղեկությունների հրապարակման սպառնանք՝ որևէ նպատակի հասնելու համար, մեկին ահաբեկելը՝ նրա մասին ունեցած վարկաբեկիչ փաստեր՝ տվյալներ հրապարակելու սպառնալիքով:

ՇԱՆՏԱԺԻՍՏ [< шантажист < ֆր.], գ. Շանտաժի դիմող՝ շանտաժ գործադրող մարդ:

ՇԱՇԼԻԿ [< шашлык < թուրք. šišlif < šiš շամփուր], գ. (խոհր. խսկց.): Խորոված:

ՇԱՇԿԻ [< ռուս. шашки < պարսկ. šaški], գ. (սպորտ.): Երկու հոգով խաղացվող խաղ՝ մեկընդմեջ մուգ և բաց գույնի վանդակներով քառակուսի տախտակի վրա՝ որոշակի թվով սև և սպիտակ քարերով. նպատակն է ոչնչացնել մրցակցի քարերը կամ ստեղծել այնպիսի վիճակ, որ դրանք զրկվեն քայլ կատարելու հնարավորությունից:

ՇԱՊԻՏՈ [< шапито < ֆր. chapiteau, բառացի՝ խոյակ, գդակ], գ. Շրջիկ կրկեսային ներկայացումների համար նախատեսված շինություն (հավաքովի):

ՇԱՊԿԱ [< ռուս. шапка], գ.1. (խսկց.): Գլխարկ: 2. (խսկց.): Հեռուստատեսային կամ ռադիոհաղորդման ձևավորված, մշտապես կրկնվող սկիզբն ու վերջը:

ՇԱՌԼԱՏԱՆ [< шарлатан < ֆր. charlatan], գ. ած. Միամիտ մարդկանց հավատը՝ վստահությունը չարաշահող խաբեբա:

ՇԱՍՍԻ [< шасси < ֆր. châssis], գ. (տեխ.): 1. Զանազան մեքենաների, մեխանիզմնե-

րի ու սարածների շրջանակ կամ պատվանդան: 2. Ինքնաթիռի մաս, որ ծառայում է օդանավակայանում գետնի վրայով նրա շարժվելուն՝ թռիչքի և վայրէջքի ժամանակ:

ՇԱՐԲԱԹ [< шербет < թուրք. šärbät], գ. (խոհ.): 1. Շարբաթ, օշարակ (զովացուցիչ մրգահյութ): 2. (խսկց.): Քաղցր շաքարաջուր:

ՇԱՐԺ [< шарж < ֆր. charge, բառացի՝ ծանրություն], գ. 1. Ծաղրապատկերում, զավեշտավոր պատկերման եղանակ: 2. Ծաղրանկար, զավեշտանկար:

ՇԱՐԻԱԹ [< шариат < արաբ. sharia ճշմարիտ ուղի, գործելակերպ], գ. (կրոն.): Իսլամի կրոնականը իրավական նորմերի ժողովածու. մշակվել է Արաբական խալիֆայությունում VII-XII դդ.:

ՇԱՐԻԱԺ [< шариаж < ֆր. charriage], գ. (երկրբ.): Տեկտոնական ծածկույթ:

ՇԱՐՄ [< шарм < ֆր. charme], գ. (խսկց.): Հմայք:

ՇԱՐՄԱՆԿԱ [< шарманка < գերմ. Scharmate Katharine հմայիչ Կատարինե. այդ գործիքով կատարվող երգի առաջին բառերից], գ. (երժշտ.): Փոքր երգեհոն, երգեհոնիկ:

ՇԱՐՆԻՐ [< шарнир < գերմ. Scharnier], գ. (տեխ.): Հոդակապ, ծխնի, կրունկ:

ՇԱՐՖ [< шарф < ֆր. écharpe], գ. (խսկց.): 1. Վզնոց, վզարկու:

ՇԱՖՐԱՆ [< шафран < արաբ. za'farân], գ. (բսբ.): 1. Զաֆրան, քրքում: 2. Խնձորի տեսակ:

ՇԵԴԵՎՐ [< шедевр < ֆր. chef d'oeuvre < chef գլխավոր + oeuvre գործ], գ. (խսկց.): Գլուխգործոց (եզակի, աննախադեպ հաջողված ստեղծագործություն):

ՇԵԵԼԻՏ [< шеелит < հատուկ անունից], գ. (հնք.): Միներալ վոլֆրամատների դասից Կ. Վ. Շեելեի անունով: Վոլֆրամի կարևոր հանքանյութ է:

ՇԵԶԼՈՆԳ [< шезлонг < ֆր. chaise longue], գ. Պառկելաթոռ, յուրատեսակ շարժական բազկաթոռ:

ՇԵԼՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ [< шелльская культура < հատուկ անունից] – (երկրբ.): Վաղ հին քարի դարի հնագիտական մշակույթ Եվրոպայում, Աֆրիկայում, Հայաստանում, Ասիայում: Ունի 800–300 հազար տարվա վաղեմություն: Առաջինը հայտնագործել է Ֆրանսիայի հնագետ Բյուշե դը Պերտը 1846 թ. Շել քաղաքի մոտ՝ Փարիզի մերձակայքում:

ՇԵԼՖ [< шельф < անգլ. shelf ելուստ, կարկառ], գ. (երկրբ.): Մայրցամաքային ծանծաղուտ:

ՇԵՅԹԱՆ [< шейтан < թուրք. šaitan < արաբ. šaitân դև], գ. 1. (դից.): Մահմեդականների դիցաբանության մեջ՝ չար ոգի, դև, հրեշ: 2. (հյիյնք.): Սատանա:

ՇԵՅԽ [< шейх < արաբ. šaiḫ ծերունի, ցեղապետ], գ. 1. Արաբների մոտ՝ ցեղապետ: 2. (կրոն.): Մահմեդական հոգևորականության առաջնորդ, աստվածաբան, իրավագետ:

ՇԵՅԿ (ՇԵՅՔ) [< шейк < անգլ. shake տարուբերվել], գ. (արվ.): Անգլիական ծագումով պարահանդեսային պար՝ մարմնի և ուսերի բնորոշ, հանպատրաստից շարժումներով:

ՇԵՅԿ(Ք)ԵՐ [< шейкер < անգլ. shaker < to shake թափահարել], գ. (տեխ.): Թափահարիչ՝ կոկտեյլ պատրաստելու հատուկ անոթ:

ՇԵՅՓԻՆԳ [< шейпинг < անգլ. shaping], գ. Երաժշտության տակ կատարվող մարմնամարզական վարժությունների համալիր՝ մարմնին նրբագեղություն հաղորդելու համար:

ՇԵՎԱԼԻԵ [< шевалье < ֆր. chevalier ասպետ], գ. (պատմ.): Ազնվական կոչում ֆեոդալական Ֆրանսիայում:

ՇԵՎԵՐ [< шейвер < անգլ. shaver < shave քերել, մաքրել], գ. (տեխ.): Ատամնամշակման գործիքներ:

ՇԵՎՐՈ [< шевро < ֆր. chovreau, բառացի՝ ուլ], գ. Բարձրորակ կաշի այծի մաշկից, որը օգտագործում են որպես կոշիկի երեսացու:

ՇԵՎՐԵՏ [< шервет < chevrette], գ. Ոչխարի մաշկից քրոմային դաբաղմամբ ստացված կաշի:

ՇԵՐԻՖ [< шериф < անգլ. sheriff], գ. Բարձր պաշտոնյա (վարչական և դատական) Անգլիայում և ԱՄՆ-ում:

ՇԵՖ [< шеф < ֆր. chef], գ. (խսկց.): 1. Գլխավոր, ղեկավար, պետ: 2. Շեֆություն ստանձնած կազմակերպություն՝ կոլեկտիվ հիմնարկություն:

ՇԻԶՈՖՐԵՆԻԱ [< шизофрения < հուն. schizō շիկացնում եմ + phrēn սիրտ, հոգի, խելք], գ. (բժշկ.): Մտագարություն՝ հոգեկան հիվանդություն, որը բնորոշվում է անձի յուրահատուկ փոփոխություններով՝ ինքնամփոփությամբ, զգացմունքների աղավաղումով և աղքատացմամբ, ակտիվության նվազումով են և ուղեկցվում է հոգեախտաբանական բազմազան խանգարումներով:

ՇԻԶՈՖՐԵՆԻԿ [< шизофреник < հուն.], ած. (բժշկ.): Շիզոֆրենիայով՝ մտագարությամբ հիվանդ:

ՇԻԻԶՄ [< шиизм < արաբ. šī'a համախոհներ, հետևորդներ], գ. (կրոն.): Իսլամի երկու հիմնական ուղղություններից մեկը, որը ճանաչում է միայն Ղուրանը:

ՇԻԼԻՆԳ [< шиллинг < անգլ. shilling], գ. (ֆին.): Անգլիական մետաղադրամ, որ հավասար է ստեռլինգի 1/20-ին:

ՇԻԿ [< шик < ֆր. chic], գ. (խսկց.): 1. Ցուցադրական շքեղություն՝ ճոխություն, փայլ, շուք, պերճանք: 2. ած. Շքեղ, պերճ:

ՇԻՄՊԱՆԶԵ [< шимпанзе < ֆր. chimpanzé < աֆրիկյան լեզուներից], գ. (կենդբ.): Աֆրիկյան անտառներում ապրող մարդանման կապիկ:

ՇԻՆԵԼ [< шинель < ֆր. chenille տղամարդու առավոտյան կոստյում], գ. (խսկց.): Վերարկուի տեսակ. հագնում են զինվորականները նև:

ՇԻՆՅՈՆ [< шиньон < ֆր. chignon], գ. 1. Կանացի (մազերը ծոծրակին կիտված) սանրվածք: 2. Կեղծամով շինյոն սանրվածք:

ՇԻՆՇԻԼԱ [< шиншилла < ֆր. chinchilla < իսպ.], գ. (կենդբ.): Կրծողների կարգի շինշիլանմանների ընտանիքի կենդանիների սեռ: Ունի շատ արժեքավոր մորթի:

ՇԻՆՖԵՅՆԵՐՆԵՐ [< шинфейнеры < իռլանդերեն Sinn Fein, բառացի՝ մենք ինքներս], գ. (քղբ.): 1905 թ. ստեղծված Շին Ֆեյն իռլանդական քաղաքական կազմակերպության անդամներ, 1977 թ.՝ «Բանվորական կուսակցություն»:

ՇԻՐՄԱ [< ширма < գերմ. Schirm], գ. 1. Ճալովի շրջանակով ծածկոց, որ դրվում է մահճակալի՝ սենյակի՝ խոհանոցի նև առջև, առաջակալ: 2. *փխբ.* Որևէ արարք՝ գործողություն՝ մտադրություն նև թաքցնելու՝ քողարկելու միջոց, քող, վարագույր, ծածկույթ:

ՇԻՖԵՐ [< шифер < գերմ. Schiefer], գ. (խսկց.): 1. Հերձաքար, թերթաքար: 2. Հերձաքարի սալիկ:

ՇԻՖՈՆ [< шифон < ֆր. chiffon լաթ, հնաշոր], գ. (մնծգր.): Բամբակյա կամ մետաքսյա նուրբ գործվածք:

ՇԻՖՐ [< шифр < ֆր. chiffre թվանշան, թվացուցակ], գ. 1. Ծածկագիր, գաղտնագիր: 2. (հնց.): Անվան սկզբանատառերի փակագետ: 3. (գրդր.): Գրանիշ:

ՇԻՖՐԱՏՈՐ [< шифратор < ֆր. chiffre թվանշան], գ. (տեխ.): Կապի, հեռուստամեխանիկայի, ռադիոլոկացիայի ազդանշանները կոդավորող սարք:

ՇԼԱԳԵՐ [< шлягер < գերմ. Schlager], գ. (երժշտ.): 1. Էստրադային երգ՝ սովորաբար սիրային-քնարական ուղղվածությամբ՝ իմաստով: 2. Մեծ, բայց կարճատև հեղինակություն վայելող երգ:

ՇԼԱԳԲԱՈՒՄ [< шлагбаум < գերմ. Schlagbaum], գ. (խսկց.): Ուղեփակոց՝ շարժական ձող, որով փակում են ճանապարհը, անցարգել:

ՇԼԱԿ [< шлаки < գերմ. Schlacke], գ. (արտդր.): Խարամ՝ 1. Մետաղաձուլական տարբեր գործընթացների ժամանակ ստացվող կողմնակի նյութ՝ խառնուրդների, մոխրի, արագացուցիչների հալված կամ սառած զանգվածի ձևով: 2. Մետաղի հանքանյութի մեջ գտնվող կողմնակի նյութերի ամբողջությունը: 3. Քարածխի այրման հետևանքով ստացվող մնացորդը: 4. Հանքանյութ, որ օգտագործվում է շինարարական շաղախի համար: 5. *փխբ.* Անպետքություն, ավելորդություն, անպետք՝ ավելորդ բան:

ՇԼԱՄ [< шлам < գերմ. Schlamm], գ. (տեխ.): Նստվածքահանք, մանրահանք (սովորաբար ազնիվ մետաղներ պարունակող). փոշենման նյութ, որ գոյանում է իբրև նստվածք՝ մի քանի մետաղների էլեկտրոլիզի ժամանակ:

ՇԼԱՆԳ [< шланг < գերմ. Schlange], գ. (խսկց.): Կաշվե՝ ռետինե և ճկուն խողովակ՝ հեղուկների, գազերի, սորուն նյութերի՝ մի տեղից մի այլ տեղ լցնելու՝ թափելու և համար, կաշեփողրակ, կաշեփող, փողրակ:

ՇԼԵՅՖ [< шлейф < գերմ. Schleppe], գ. Քղանցատուտ, փեշատուտ, երկայնափեշ:

ՇԼԻՌ [< шлира < գերմ. Schliere], գ. (տեխ.): Ապակու մակերեսի թերություն:

ՇԼԻՑԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄ [< шлицовое (< գերմ. Schlitz ճեղք, ակոս) соединение] - (տեխ.): Ատամնավոր՝ ակոսավոր միացում՝ ակոսներ և ելուստներ ունեցող երկու դետալների շարժ կամ շարժական նստեցվածքով միացում:

ՇԼԻՖ [< шлиф < գերմ. Schliff], գ. (տեխ.): Հղկուկ:

ՇԼԻՖՈՎԿԱ [< шлифовка < գերմ.], գ. (տեխ.): Հղկում, հարթեցում:

ՇԼՅԱԳԵՐ [< шлягер < գերմ. Schlager], գ. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործություն (սովորաբար էստրադային երգ), որը ինչ-որ ժամանակ մեծ ժողովրդականություն է վայելում:

ՇԼՅԱԽՏԱ [< шляхта < լեհ. szlachta < հին վերին գերմ. Stahta ցեղ, տոհմ], գ. (պատմ.): Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրներում (հատկապես՝ Լեհաստանում, Լիտվայում) իշխող ֆեոդալական դասակարգի հիմնական մասի անվանումը:

ՇԼՅԱԽՏԻՉ [< шляхтич < լեհ.], գ. (պատմ.): Լեհական մանրակալվածքի ազնվական, շլախտորդի:

ՇԼՅԱՊԱ [< ռուս. шляпа], գ. Ծալովի կանացի կամ տղամարդու գլխարկ՝ սովորաբար բարձր գագաթամասով:

ՇԼՅՈՒԶ [< шлюз < գերմ. Schleuse], գ. (տեխ.): 1. Հիդրոտեխնիկական կառուցում, որ հնարավորություն է տալիս նավերը տարբեր մակարդակներ ունեցող ջրային տարածություններով անցկացնել, սահանադուռ, սահանափակ: 2. Ջրարգելակ: 3. Անցախուց:

ՇԼՅՈՒՊ [< шлюп < հոլանդ. sloep], գ. (ծով.): 1. Առագաստանավի տեսակ, երկառագաստավոր միակայմ նավ: 2. Դանդաղընթաց պահականավ: 3. (հնց.): Եռակայմ առագաստանավ:

ՇԽԵՐՆԵՐ [< шхеры < շվեդերեն skär ժայռ], գ. (երկրբ.): Ոչ մեծ, գերազանցապես ժայռոտ կղզիներ՝ ծովերի ու լճերի խիստ մասնատված ափերի մոտ:

ՇԿԻՊԵՐ [< шкипер < հոլանդ. Schipper < schip նավ], գ. (ծով.): 1. (հնց.): Նավապետ (առևտրական նավի): 2. Նավագույքապետ:

ՇԿԻՎ [< шкив < հոլանդ. schijf, բառացի՝ շրջան], գ. (տեխ.): Ճախրանվակ, շարժանվակ, փոկանիվ:

ՇՄՈՆ [< шмон < իդիշ shmon], գ. (ժրգ.): Խուզարկություն:

ՇՆԱՓՍ [< шнапс < գերմ. Schnaps < schnap կուլ տալ], գ. Գերմանական օղի:

ՇՆԻՑԵԼ [< шницель < գերմ. Schnitzel], գ. (խոհր.): Թակածո բարակ կոտլետ:

ՇՆՈՒՐ [< шнур < գերմ. Schnur], գ. (խսկց.): 1. Քուղ, առասան: 2. Լար, չափալար (քարագործների): 3. (էլեկտր.): Էլեկտրաքուղ, էլեկտրալար:

ՇՈԿ [< шок < ֆր. choc, բառացի՝ հրում, հարված], գ. (խսկց.): Մարդու կյանքին սպառնացող վիճակ, որ ծագում է օրգանիզմի հետ կատարված զանազան ռեակցիաների (կոտրվածքի, այրվածքի, վիրահատության ևն) հետևանքով: Ցնցակաթված, օրգանիզմի բոլոր ֆունկցիաների ծանր խանգարում:

ՇՈԿՈԼԱԴ [< шоколад < իսպ. chocolate ացտեկերեն՝ chocolatl կակաոյի սերմերից պատրաստված ըմպելիք], գ. 1. Կակաոյից և շաքարից պատրաստվող քաղցրավենիք: 2. Շոկոլադի փոշուց կաթով պատրաստված քաղցր ըմպելիք:

ՇՈՄՊՈԼ [< шомпол < գերմ. Stempel մխոց], գ. (ռազմ.): Հրացանի շամփուր (փողը մաքրելու և յուղելու համար):

ՇՈՍՍԵ [< шоссе < ֆր. chaussée], գ. (խսկց.): Խճուղի՝ ուղի:

ՇՈՎԻՆԻԶՄ [< шовинизм < ֆր. chauvinisme], գ. 1. (քղք.): Ծայրահեղորեն ռեակցիոն ազգայնականություն, որ ազգային թշնամանք է սերմանում, ազգայնամոլություն: 2. Շովինիստական քաղաքականություն՝ գաղափարախոսություն՝ մտայնություն:

ՇՈՎԻՆԻՍՏ [< шовинист], գ. (քղք.): Շովինիզմի հետևորդ՝ կողմնակից, ազգամոլ, ազգայնամոլ:

ՇՈՐՏ(ԵՐ) [< шорты < անգլ. shorts < short կարճ], գ. Կարճ անդրավարտիքի տեսակ, կիսատաբատ:

ՇՈՈՒ [< шоу < անգլ. show], գ. Բեմական շքեղ տեսարան՝ հանդես՝ էստրադայի, կրկեսի, սպորտի ևն «աստղերի» մասնակցությամբ:

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ [< шоу-бизнес < անգլ. show ներկայացում + business ձեռներեցություն], գ. Ներկայացումների, համերգների, թատերականացված ներկայացումների ևն կազմակերպման բիզնես:

ՇՈՈՒՄԵՆ [< шоумен < անգլ. showman < show ներկայացում + man մարդ], գ. (խսկց.): Հանդիսավար, շոուի կազմակերպիչ, վարող անձ:

ՇՈՓԻՆԳ [< шопинг < անգլ. shopping < to shop գնումներ կատարել], գ. (խսկց.): Գնումներ կատարելը:

ՇՈՓ-ՏՈՒՐ [< шоп-тур < անգլ. shop խանութ + tour զբոսանք], գ. (առևտր.): Կազմակերպված արտասահմանյան ուղևորություն, որի նպատակն է ձեռք բերել լայն սպառման ապրանքներ:

ՇՉԻ [< ռուս. щи], գ. (խոհր.): Կտրտած կաղամբից (նաև՝ թրթնջուկից, սպանախից ևն) պատրաստվող ջրիկ կերակուր:

ՇՊԱԳԱՏ [< шпагат < գերմ. Spagat < իտլ. spaghetto բարակ պարան], գ. 1. (տեխ.): Առասանակ, առատուկ, լարան: 2. (սպորտ.): Մարմնամարզության մեջ՝ երկու ոտքերը լայն բացած՝ մի գծի վրա պահած դիրքը:

ՇՊԱԼԵՐ [< шпалеры < գերմ. Spalier < իտլ.], գ. 1. Թղթի ծաղկուն պաստառ, որ փակցնում են սենյակների պատերին: 2. Ձորքի երկու շարք, որ կանգնում են մեկի անցնելու ճանապարհի երկու կողմից:

ՇՊԱԿ [< шпак < լեհ. szpak ճարպիկ մարդ], գ. (հնց.): Զինվորականի արհամարհական անվանում:

ՇՊԵՅԶԱ (ՇՊԱՅԶԱ) [< шпейза < գերմ. Speise, բառացի՝ կերակուր], գ. (տեխ.): Որոշ գունավոր մետաղների արտադրության ընթացքում ստացվող կողմնակի կամ միջանկյալ արտադրանք:

ՇՊԻԼԿԱ [< шпилька < լեհ. Szpilka < միջին վերին գերմ. Spille ասեղ], գ. (խսկց.): 1. Հերակալ, ծամկալ: 2. Վարսոց (կոշկակարի հատուկ տեսակի մանր մեխ): 3. (տեխ.): Գամասեղ: 4. Կցասեղ (գլխարկների): 5. *փխբ.* Խայթոց, կծու խոսք:

ՇՊԻԼՄԱՆ [< шпильман < գերմ. Spielman < spielen խաղալ, նվագել + Mann մարդ], գ. (պատմ.): Միջնադարյան շրջիկ դերասան-երաժիշտ Գերմանիայում, Ավստրիայում:

ՇՊԻՆԳԱԼԵՏ [< шпингалет < ֆր. espagnolette < espagnol իսպանական], գ. (տեխ.): Մղլակ (դռան, լուսամուտի):

ՇՊԻՆԵԼՆԵՐ [< шпинель < գերմ. Spinell], գ. (հնք.): Շպինելիդներ՝ բարդ օքսիդների կարգի միներալների խումբ A (A, B)$_{O4}$ ընդհանուր բանաձևով: Կիրառվում են խեցեգործության, հրակայուն իրերի, ջերմակայուն ներկերի արտադրության մեջ:

ՇՊԻՈՆ [< шпион < գերմ. Spion], գ. ած. (խսկց.): Լրտես, գաղտնի գործակալ:

ՇՊՈՆ [< шпон < գերմ. Spon, Span տաշեղ], գ. 1. Տողանջատ՝ մետաղե չորսուիկ: 2. Փայտանյութի նուրբ թերթեր, որոնք ստացվում են ծառի բնի կոճղերի ծլեպման և ռանդման միջոցով:

ՇՊՈՐ [< шпора < գերմ. Sporn], գ. (խսկց.): 1. Խթան, կոշկախթան: 2. Բիր (աքաղաղի): 3. Դոշաբութակ, անվաբութակ (տրակտորի անիվի կամ թրթուրի վրա):

ՇՊՐԻՑ [< шприц < գերմ. Spritze], գ. (հնց.): Ներարկիչ, սրսկոց:

ՇՊՐՈՏ [< шпроты < գերմ. Sprotten], գ. 1. (կենդբ.): Ծովային մանր ձուկ: 2. Այդ ձկից (նաև ուրիշ մանր ձկներից) պատրաստվող պահածո:

ՇՊՈՒՐ [< шпур < գերմ. Spur], գ. (երկրբ.): Պայթանցք:

ՇՎԵԼԵՐ [< швеллер < գերմ. Schweller քառակող գերան], գ. (տեխ.): Քառակող երկաթյա ձող:

ՇՎԱԲՐ [< швабра < գերմ. Schwabber], գ. (խսկց.): Հատակ մաքրելու և լվանալու փայտե երկար կոթով հարմարանք:

ՇՎԵՅՑԱՐ [< швейцар < գերմ. Schweizer], գ. (խսկց.): Բարապան, դռնապան:

ՇՏԱԲ [< штаб < գերմ. Stab], գ. (ռազմ.): 1. Զորամասերում, զորամիավորումներում և բոլոր կարգի ռազմական ուժերի միացյալ ընդհանրություններում (բանակում)՝ զորքերի ղեկավարման մարմին, ինչպես և դրա գտնվելու տեղը: 2. Այդ ռազմական մարմնի անձնակազմը: 3. *փխբ.* Որևէ կազմակերպության՝ շարժման ևն ղեկավար մարմին՝ կենտրոն:

ՇՏԱԲՍ-ԿԱՊԻՏԱՆ, գ. (պատմ): Մինչհեղափոխական Ռուսաստանում և մի քանի արտասահմանյան երկրներում՝ պարուչիկի կոչմանը հաջորդող զինվորական կոչում, ինչպես և այդ կոչումն ունեցող զինվորական:

ՇՏԱՄ [< штамм < գերմ. Stamm, բառացի՝ բան, հիմք], գ. (կենսբ.): Միկրոօրգանիզմների որոշակի տեսակի անվանում:

ՇՏԱՄՊ [< штамп < Stampfe < իտլ. stampa կնիք], գ. 1. Դրոշմակնիք՝ հիմնարկի՝ կազմակերպության ևն անունը կրող կնիք՝ դրոշմ, որ դնում են գրության՝ փաստաթղթի սովորաբար ձախ կողմում՝ վերևից: 2. Այդ կնիքի դրոշմված պատճենը թղթի վրա: 3. Մետաղյա դրոշմ՝ զանազան առարկաներ դրոշմելով՝ հատելով ևն պատ-

ռաստելու համար: 4. *փխբ.* Ընդունված՝ շատ տարածում գտած արտահայտություն՝ սովորույթ՝ դրույթ են, որին կուրորեն հետևում են կամ որը շարունակ կրկնում են, շաբլոն:

ՇՏԱՆԳԱ [< штанга < գերմ. Stange], գ. (խսկց.): 1. (սպորտ.): Ճանրաձող, սկավառակաձող: 2. (սպորտ.): Դարպասի վերնագերան: 3. Մետաղաձող, երկաթաձող:

ՇՏԱՆԳԵՆՑԻՐԿՈՒԼ [< штангенциркуль < գերմ. Stangenzirkel < Stange ձող + Zirkel կարկին], գ. (տեխ.): Ձողակարկին, չափակարկին:

ՇՏԱՆԳԻՍՏ [< штангист < գերմ.], գ. (խսկց.): Ճանրորդ, ծանրաձողի մարզիկ:

ՇՏԱՊԵԼ [< штапель < գերմ. Stapel], գ. 1. Արհեստական կամ սինթետիկ մանրաթելի մի տեսակ: 2. Այդ մանրաթելից պատրաստված գործվածք:

ՇՏԱՏ I [< штат < լատ. status վիճակ, դրություն], գ. (խսկց.): 1. Հաստիք՝ պաշտոնի՝ ծառայողի հաստատուն տեղ, դրույք: 2. Տվյալ հիմնարկությունում՝ ձեռնարկությունում բոլոր աշխատողների հաստատուն՝ մշտական կազմը:

ՇՏԱՏ II [< штат < գերմ. Staat պետություն], գ. (խսկց.): Նահանգ, պետական տարածքային վարչական մարմին :

ՇՏԵՅՆ (ՇՏԱՅՆ) [< штеин < գերմ. Stein, բառացի՝ քար], գ. (տեխ.): Որոշ գունավոր մետաղների (պղինձ, նիկել, կապար ևն) արտադրության միջանկյալ արտադրանք (արդյունք)՝ երկաթի սուլֆիդի և ստացվող մետաղի սուլֆիդի համաձուլվածք::

ՇՏԵՊՍԵԼ [< штепсель < գերմ. Stöpsel խցան, խցկան], գ. (խսկց.): Եղանիկ, խրոցակ. մետաղյա եղանիկ, որի միջոցով նրա հետ կիրառվող էլեկտրական սարքերը միացվում են ցանցին, վարդակ:

ՇՏԵՊՍԵԼԱՅԻՆ, ած. Շտեպսելին հատուկ:

ՇՏԻԿ [< штык < լեհ. sztych սուր ծայր], գ. (խսկց.): Սվին:

ՇՏՈՖ [< штоф < գերմ. Stof], գ. (հնց.): 1. Հին ռուսական չափ խմիչքեղենի (առավել. գինու և օղու) համար, որ հավասար էր դույլի 1/10-ին: 2. Այդպիսի ծավալով մեծ շիշ (խմիչքների):

ՇՏՐԱՖ [< штраф < գերմ. Strafe պատիժ], գ. (խսկց.): Տուգանք՝ վճար, որը գանձվում է պարտավորությունը չկատարելու կամ օրենքի պահանջները խախտելու համար:

ՇՏՐԵԿ [< штрек < գերմ. Strecke], գ. (երկրբ.): Դեպի երկրի մակերևույթ ելք չունեցող ստորգետնյա հորիզոնական հանքափորվածք, որ սովորաբար փորվում է օգտակար հանածոյի տարածման ուղղությամբ կամ ապարների միջով:

ՇՏՐԵՅԿԲՐԵԽԵՐ [< штрейкбрехер < գերմ. Streikbrecher < Streik գործադուլ + brechen կոտրել], գ. 1. Գործադուլի ժամանակ ձեռնարկությունում աշխատող և գործադուլը վիժեցնող մարդ, գործադուլաբեկ: 2. *փխբ.* Դավաճան:

ՇՏՈՒՐՄ [< штурм < գերմ. Sturm], գ. (խսկց.): 1. Գրոհ: 2. Գրոհում՝ ուժեղ հարձակում:

ՇՏՈՒՐՄԱՆ [< штурман < հոլանդ. stuurman], գ. (ծով.):Ղեկապետ:

ՇՐԱՊՆԵԼ [< шрапнель < անգլ. Shrapnel հատուկ անունից], գ. (ռազմ.): Կոտորակառումբ. կլոր գնդակներով լցված հրետանային ռումբ:

ՇՐԻՖՏ [< шрифт < գերմ. Schrift], գ. (տպգր.): Տողատառ, տառատեսակ:

ՇՈՒԼԵՐ [< шулер < լեհ. szuler], գ. ած. 1. (խսկց.): Խաղանենգ՝ խաղի մեջ խարդախություն անող: 2. Խաբեբա, սրիկա, խարդախ անձ:

ՇՈՒՆՏ [< шунт < անգլ. shunt ճյուղավորում], գ. 1. (տեխ.): Էլեկտրական կամ մագնիսական շղթային զուգահեռ միացվող էլեկտրական հաղորդիչ կամ մագնիս-

ալար՝ էլեկտրական հոսանքի կամ մագնիսական հոսանքի ճյուղավորման համար: 2. (բժշկ.): Անոթին (սրտի ևն) զուգահեռ միացվող անոթ՝ արյան շրջանառությունը բարելավելու համար:

Ո

ՈԴԻՍԱԿԱՆ [< Одиссея < հուն. Odysseia, Հոմերոսի «Ոդիսական» պոեմի անունից], գ. *փխբ.* Դժվարագույն արկածներով լի կյանք և պատմություն դրա մասին (բարեհաջող վերջաբանով):

ՈԴԻՍԵՎՍ [< Одиссей < հուն. Odysseys, Odysseios < odites թափառական, ճանապարհորդ], գ. (պատմ.): Իթաքեի թագավոր, Տրոյայի պաշարման մասնակից (XIII դար մ. թ. ա.), Հոմերոսի «Ոդիսական» պոեմի հերոս, ով երկար թափառումներից (արկածներից) հետո վերադարձավ հայրենիք:

Չ

ՉԱԴՐԱ [< чадра < պարսկ. chador], գ. Սպիտակ, կապույտ, երբեմն՝ սև ծածկոց, որով մահմեդական կանայք տնից դուրս գնալիս պարուրվում են ոտքից գլուխ՝ բաց թողնելով միայն աչքերը:

ՉԱԹ [< чат < անգլ. chat անկաշկանդ զրույց], գ. (հմկրգչ. խսկց.): Համակարգչային կայքում երկխոսություն՝ զրույց:

ՉԱԼՄԱ [< чалма < թուրք.], գ. Մահմեդականների գլխի փաթթոց:

ՉԱԿՈՆԱ [< чакона < իսպ. chacona], գ. Հինավուրց իսպանական պար: Հայտնի է XVI դարից:

ՉԱՅ [< чай < հյուսիսային չին. čhā], գ. (խսկց.): Թեյ:

ՉԱՅԽԱՆԱ [< чайхана < թուրք. čaihana < չին. čha + պարսկ. hāne շենք], գ. (խսկց.): Թեյարան Միջին Ասիայում և Իրանում:

ՉԱՆ [< ռուս. чан], գ. Մեծ տարա՝ անոթ:

ՉԱՍՏՈՒՇԿԱ [< ռուս. частушка], գ. (արվ.): Ռուսական ժողովրդական բանահյուսական-երաժշտական ստեղծագործություն, որ արծարծում է ժողովրդի կենցաղի, աշխատանքային, սոցիալական կյանքի տարբեր կողմերը:

ՉԱՐԴԱՇ [< чардаш < հունգարերեն csárdás պանդոկ], գ. (արվ.): Հունգարական ժողովրդական պա. երևան է եկել XIX դարի կեսին:

ՉԱՐԼ(Ե)ՍՏՈՆ [< чарльстон < անգլ. charleston ԱՄՆ-ի Չարլեստոն քաղաքի անունից], գ. (արվ.): Շատ տարածված պարի տեսակ:

ՉԱՐՏԵՐ [< чартер < անգլ. charter], գ. (տնտսգ.): Վարձերթ՝ միջազգային առևտրական ծովագնացությունում, օդային տրանսպորտում՝ բեռների ծովային և օդային փոխադրման պայմանագիր, որը կնքվում է վարձակալողի և նավատիրոջ (կամ ինքնաթիռի տիրոջ) միջև: Չարտերի ձևերը բազմազան են (օր.՝ որոշակի ժամանակահատվածում նախատեսվող փոխադրումների համար

կնքվող պայմանագիրը կոչվում է *թայմ-շարտեր*):

ՉԱՐՏԻԶՄ [< чартизм < անգլ. chartism], գ. (պատմ.): Բանվորների հեղափոխական շարժում Անգլիայում՝ XIX դարի 30-40-ական թթ. հանուն քաղաքական իրավունքների նվաճման և տնտեսական պայմանների բարելավման:

ՉԱՐՏԻՍՏ [< чартист < անգլ.], գ. (պատմ.): Չարտիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՉԱՈՒ-ՉԱՈՒ [< чау-чау < անգլ. chow-chow < աղավաղված անգլերենով chinese չինական բառից], գ. (կենդբ.): Սենյակային դեկորատիվ շների ցեղ (արջի նման դնչով) և այդ ցեղի շուն:

ՉԵԲՈՒՐԵԿ(Ի) [< чебурек < Ղրիմի թաթարների լեզվից čyg միս + börak կարկանդակ], գ. (խոհր. խսկց.): Ոչխարի մսով կարկանդակ (լայն):

ՉԵԼԵՍՏԱ [< челеста < իտալ. celesta < լատ. caelestis երկնային], գ. (երժշտ.): Երաժշտական ստեղնային (դաշնամուրի նման) գործիք՝ նուրբ, զանգականման ձայնով:

ՉԵԿ [< чек < անգլ. cheque, check], գ. (խսկց.): 1. Թերթիկ՝ փաստաթուղթ, որով ավանդատերը պատվիրում է բանկին որոշ գումար վճարելու ներկայացնողին կամ փոխանցելու նրա հաշվին, վճարագիր: 2. Խանութներում ապրանքի արժեքը մուծելու դրամարկղային թերթիկ: 3. Օրդեր՝ որևէ բան տալու՝ բաց թողնելու՝ վճարելու կամ ընդունելու՝ ստանալու գրավոր փաստաթուղթ:

ՉԵԿԱ [< ռուս. чека < черезвычайная комиссия], գ. (պատմ.): Հակահեղափոխության, սաբոտաժի և սպեկուլյացիայի դեմ պայքարելու արտակարգ հանձնաժողով, որ կազմակերպվել է 1918 թ. և գոյություն է ունեցել մինչև 1922 թ.:

ՉԵԿԻՍՏ [< ռուս. чекист], գ. Չեկայի աշխատող:

ՉԵՄՈԴԱՆ [< чемодан < պարսկ. žāmedān], գ. (խսկց.): Ճամպրուկ:

ՉԵՄՊԻՈՆ [< чемпион < անգլ. champion < ուշ լատ. campio մարտիկ], գ. (սպորտ.): Մարզական որոշակի մրցության մեջ հաղթանակ տանող՝ տարած մարզիկ:

ՉԵՄՊԻՈՆԱՏ [< чемпионат < անգլ. champion], գ. (խսկց.): Մրցություն տվյալ մարզաձևի չեմպիոնի կոչման համար, առաջնություն:

ՉԵՍՈՒՉԱ [< чесуча < չին.], գ. (մնծգր.): Կտավի հյուսվածքով մետաքսե գործվածք:

ՉԵՐՎՈՆԵՑ [< червонец < լեհ. czerwonj կարմիր, ոսկյա], գ. (պատմ.): 1. Տասը ռուբլու արժողությամբ թղթադրամ, որ շրջանառության մեջ է եղել ԽՍՀՄ-ում 1922-1947 թթ.: 2. Հին Ռուսաստանում՝ հինգ կամ տասը ռուբլիանոց ոսկեդրամ:

ՉԻԶԲՈՒՐԳԵՐ [< чизбургер < անգլ. cheeseburger < cheese պանիր + (ham) burger համբուրգեր], գ. (խոհր.): Հաց՝ պանրով և որոշ համեմունքներով (կիսած, դրանք մեջը դրված):

ՉԻԽԻՐ [< чихирь < թուրք. čakyr, čaγyr], գ. Կովկասյան ոչ թունդ կարմիր գինի (տանը պատրաստված):

ՉԻՆՈՎՆԻԿ [< ռուս. чиновник], գ. (խսկց.): 1. (մինչհ.): Աստիճանավոր, պետական պաշտոնյա: 2. *փխբ.* Ձևական բծախնդրությամբ՝ առանց իր գործի էության մեջ թափանցելու աշխատող պաշտոնյա, բյուրոկրատ:

ՉԻՊ(Փ) [< чип < անգլ. chip], գ. (տեխ.): Էլեկտրոնիկայում կիրառվող միկրոհամակարգեր՝ միկրոսխեմաներ:

ՉԻՊՍ [< чупс < անգլ. chips], գ. (խոհր.): Ձեթի մեջ պատրաստված (դաղված)՝ տապակված կարտոֆիլ:

ՉԻՖԻՐ [< ռուս. чифирь < чихирь բառի աղավաղված ձևը], գ. (խսկց.): Շատ թունդ թեյ:

ՉՈՄՊԻ [< чомпи < իտլ. ciompi], գ. (պատմ.): Գզրարներ և մահուդագործական ձեռնարկությունների այլ վարձու բանվորներ՝ Ֆլորենցիայում և Իտալիայի մի շարք քաղաքներում XIVդ:

ՉՈՒԳՈՒՆ [< ռուս. чугун], գ. 1. (արտդր.): Երկաթի և ածխածնի միահալույթ, թուջ: 2. ած. *փխբ.* Շատ ամուր՝ կարծր:

ՉՈՒԳՈՒՆԱԳՈՐԾ, գ. ած. 1. Չուգունի արտադրության աշխատող: 2. Չուգունե իրեր պատրաստող վարպետ՝ արհեստավոր:

ՉՈՒԼԱՆ [< чулан < թաթ. čölän, մառանիկ], գ. (խսկց.): Խորդանոց:

Պ

ՊԱ [< па < ֆր. pas < լատ. passus բառացի՝ քայլ], գ. (արվ.): Քայլ՝ տերմին, որ օգտագործվում է բալետում և բալետային պարի առնչությամբ:

ՊԱԳԻՆԱՑԻԱ [< пагинация < ֆր. pagination < լատ. pagina էջ], գ. (տպգր.): Էջակարգություն, էջերի համարակալում:

ՊԱԳՈԴԱ [< пагода < պորտ. pagoda < մալայերեն], գ. (կրոն.): Մեհյան (բուդդայական)՝ հնդկական, ճապոնական, չինական և այլ երկրների մեհյանների անվանումը:

ՊԱ ԴԵ ԲԱՍԿ [< падебаск < ֆր. pas de basque, բառացի՝ բասկի քայլ], գ. (արվ.): Պարի շարժում, օդում՝ թռիչքի ժամանակ ոտքերի դիրքի հանկարծակի փոփոխում:

ՊԱ ԴԵ ԳՐԱՍ [< падеграс < ֆր. pas քայլ + grace նրբագեղություն], գ. (արվ.): Ռուսական պարահանդեսային զուգապար, որին հատուկ է նրբագեղ քայլվածքի ու կքանստելու հաջորդական փոփոխությունը և դիրքերի ամրակայումը:

ՊԱ ԴԵ ԴԵ [< па-де-де < ֆր. pas de deux, բառացի՝ երկուսի քայլ], գ. (արվ.): 1. Դասական բալետում՝ երկու կատարողների պար, բալետային զուգապար: 2. Բալետային երաժշտության հիմնական տարատեսակներից մեկը:

ՊԱ ԴԵ ԿԱՏՐ [< падекатр < ֆր. pas de quatre, բառացի՝ չորսի քայլ], գ. (արվ.): 1. Դասական բալետում՝ չորս կատարողների պար:2.Ռուսական պարահանդեսային զուգապար. բաղկացած է վալսի պարից և սահող քայլերից:

ՊԱ ԴԵ ՊԱՏԻՆԵՐ [< падепатинер < ֆր. pas de patineur, բառացի՝ չմշկորդի սահք], գ. (արվ.): Ռուսական պարահանդեսային զուգապար. պարողների շարժումները (քայլերը են) հիշեցնում են չմշկորդի շարժումներ:

ՊԱ ԴԵ ՍՊԱՆ [< падеспань < ֆր. pas d'Espagne իսպանական քայլ], գ. (արվ.): Ռուսական պարահանդեսային զուգապար. նման է իսպանական բեմական պարին:

ՊԱ ԴԵ ՏՐՈՒԱ [< па-де-труа < ֆր. pas de trois, բառացի՝ երեքի քայլ], գ. (արվ.): 1. Դասական բալետում՝ երեք կատարողների պար: 2. Ռուսական պարահանդեսային զուգապար. բաղկացած է վալսի, մազուրկայի, մենուետի պարային տարրերից:

ՊԱԴՐԵ [< падре < իտլ., իսպ.padre հայր], գ. (կրոն.): Իտալիայում և Իսպանիա-

յում՝ կաթոլիկ հոգևորականին դիմելու ձև:

ՊԱԴՈՇ [< ռուս. подошва], գ. (խսկց.): Կոշկատակ, ներբան:

ՊԱԴՎԱԼ [< ռուս. подвал], գ. (խսկց.): 1. Նկուղ՝ շինության ներքնահարկ: 2. Մառանաշտեմարան: 3. Գինետուն:

ՊԱԶԻԳՐԱՖԻԱ [< пазиграфия < գերմ. Pasigraphie < հուն. pas զանազան, ամեն տեսակի + graphō գրում եմ], գ. (լեզվբ.): Գրի համակարգ, երբ իմաստն արտահայտվում է բոլորին կամ շատերին ծանոթ նշաններով (օր.՝ նոտագրություն, արաբական թվեր են):

ՊԱԹԵՏԻԿ [< патетический < հուն. pathētikos], ած. 1. Սրտաճմլիկ, սրտառուչ, սիրտ շարժող: 2. Հուզական, հուզումնալից, խանդավառ:

ՊԱԹՈԼՈԳ [< патолог < հուն.], գ. ած. (բժշկ.): Ախտաբան, ախտաբանության մասնագետ-բժիշկ:

ՊԱԹՈԼՈԳԻԱ [< патология < հուն. pathos տառապանք, ցավ, ախտ + logos ուսմունք], գ. 1. (բժշկ.): Ախտաբանություն: 2. *փխբ.* Այլանդակ աննորմալություն, այլանդակություն:

ՊԱԹՈՍ [< пафос < հուն.], գ. Խանդավառություն, ոգևորություն, ներշնչանք:

ՊԱԺ [< паж < ֆր. page < իտլ. paggio երիտասարդ ծառա], գ. (պատմ.): 1. Մանկլավիկ: 2. (պատմ.): Դրանիկ, պալատական ստորին պաշտոնյա: 3. *փխբ.* Կնոջ երկրպագու: 4. (հնց.): Նախահեղափոխական Ռուսաստանում պաժական դպրոցի սան:

ՊԱԼԱԴԻՆ [< паладин < ֆր. paladin < միջին լատ. palatinus պալատական], գ. (պատմ.): 1. Քաջարի՝ աննկուն՝ խիզախ ասպետ: 2. Անձնվեր՝ երկրպագու ասպետ: 3. (հնց.): Անձնվեր ու անշահախնդիր արբանյակ՝ սպասավոր:

ՊԱԼԱԴԻՈՒՄ [< палладий < լատ. palladium < հուն. palladion], գ. (քիմ.): Քիմիական տարր, արծաթագույն փափուկ կռելի մետաղ:

ՊԱԼԱՆԿԻՆ [< паланкин < գերմ. Palankin < պորտ. palanquim < սանսկրիտ], գ. (պատմ.): Դեսպակ, գահավորակ:

ՊԱԼԱՇ [< палаш < հունգ. pallos], գ. (ռազմ.): Թրադաշույն:

ՊԱԼԱՏ [< палата < լատ. palatium], գ. 1. Արքունի կամ իշխանական տուն, ապարանք: Սկզբնապես միայն տիրակալի գահանիստը, հետագայում՝ նաև հասարակության բարձր խավերի ներկայացուցիչների ապարանքները, XIII-XV դդ.՝ պետական կարևոր հիմնարկությունները, իսկ XIX դարից՝ կարևոր նշանակություն ունեցող տարբեր հասարակական շենքեր (արդարադատության պալատ, մշակույթի պալատ, սպորտի պալատ են): 2. (խսկց.): Հիվանդասենյակ:

ՊԱԼԱՏԱԼԻԶԱՑԻԱ [< палатализация < լատ. palatum քիմք], գ. (լեզվբ. հնց.): Քմայնացում՝ բաղաձայնների քմային արտասանություն, ինչպես՝ ռուսերենում ма*т*ь, шес*т*ь, հայերենում՝ մա*տ*յան են:

ՊԱԼԱՑՈ [< палаццо < իտլ. palazzo < լատ. palatium պալատ], գ. (հզվդ.): Իտալիայում՝ տուն-դղյակ՝ պալատ:

ՊԱԼԵՈ... [< палео... < հուն. palaios հին] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերով արտահայտված հասկացությունների կապը հնության հետ:

ՊԱԼԵՈԳԵՆ [< палеоген, палеогеновый < պալեո... + հուն. genos ծնունդ], գ. (երկրբ.): Կայնոզոյի խմբի ամենահին համակարգն է, որը համապատասխանում է Երկրի զարգացման կայնոզոյան դարաշրջանի առաջին փուլին:

ՊԱԼԵՈԳՐԱՖ [< палеограф < հուն.], գ. ած. Հնագիր, հնագրագետ:

ՊԱԼԵՈԳՐԱՖԻԱ [< палеография < պալեո... + հուն. graphō գրում եմ], գ. Հնագրություն, հնագրագիտություն:

ՊԱԼԵՈԶ [< палеозой < պալեո... + հուն. zēo կյանք], գ. (երկրբ.): Հնակենդանաշրջան:

ՊԱԼԵՈԶՈՅԱՆ [< палеозойский < հուն.], ած. (երկրբ.): Հնակենդանաշրջանին վերաբերող՝ հատուկ՝ պատկանող:

ՊԱԼԵՈԼԻԹ(Տ) [< палеолит < պալեո... + հուն. lithos քար], գ. Հին քարե դար:

ՊԱԼԵՈՆՏ(Թ)ՈԼՈԳ [< палеонтолог < պալեո... + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Հնէաբան:

ՊԱԼԵՈՆՏ(Թ)ՈԼՈԳԻԱ [< палеонтология < պալեո... + հուն. on(ontos) գոյ + logos գիտություն], գ. (գիտ.): Հնէաբանություն՝ գիտություն պեղումներով հայտնաբերվող մեռած կենդանիների և բույսերի մասին:

ՊԱԼԵՈՑԵՆ [< палеоцен < պալեո... + հուն. kainos նոր], գ. (երկրբ.): Պալեոցենյան բաժին, պալեոգենի ստորին մասը: Անունը առաջարկել է գերմանացի հնէաբուսաբան Վ. Շիմպերը 1874 թ.:

ՊԱԼԵՍՏՐԱ [< палестра < հուն. palaistra], գ. (պատմ.): Մարմնամարզական մասնավոր դպրոց Հին Հունաստանում (տղաների համար):

ՊԱԼԻ [< пали < սանսկրիտ pali], գ. (լեզվբ.): Միջին հնդկական լեզուներից մեկը, որը դարձավ Հնդկաստանի հարավում բնակվող բուդդայականների սրբազան գիրը:

ՊԱԼԻԱՏԻՎ [< паллиатив < ֆր. palliatif], գ. 1. Ամոքիչ, բայց չբուժող դեղ: 2. *փխբ.* Կիսամիջոց:

ՊԱԼԻՄՊՍԵՍՏ [< палимпсест < հուն. palimpseston biblion նորից վրայից քերված գիրք], գ. (լեզվբ.): Կրկնագիր մագաղաթ:

ՊԱԼԻՆԴՐՈՄ [< палиндром < ֆր. palindrome < հուն. palin հետ + dromos ճանապարհ], գ. (լեզվբ.): Հետուառաջ կարդացվող բառ կամ բառակապակցություն (օր.՝ պապ, տատ, քաղաք, կատակ):

ՊԱԼԻՆՈԴԻԱ [< палинодия < հուն. palinodia կրկնություն, կնկներգ], գ. (գրկն.): Ապաշխարական բանաստեղծություն:

ՊԱԼԻՆՈԼՈԳԻԱ [< палинология < հուն. palynō լցնում եմ + logos գիտություն], գ. (բսբ.): Բուսաբանության բաժին, որը ուսումնասիրում է ծաղկափոշին և սպորները , ինչպես նաև նրանց ձևը, կառուցվածքն ու զարգացումը, ցրումն ու օգտագործումը:

ՊՈԼԻՇ [< полиш < անգլ. polish], գ. (խսկց.): Ավտոմեքենայի թափքը շփելով փայլեցնելու նյութերի տեսականի:

ՊԱԼԻՏՐԱ [< палитра < ֆր. palette], գ. (հնց): 1. Ներկապնակ: 2. *փխբ.* Գունաբույլք, գունակազմություն, համերանգություն:

ՊԱԼՄԱ [< пальма < լատ. palma], գ. 1. (բսբ.): Մերձարևադարձային և արևադարձային ծառատեսակ արմավենի. կա 1200 տեսակ: 2. *փխբ.* Մրցության մեջ առաջինը համարվող:

ՊԱՄՊԱՍ(ՆԵՐ) [< пампас(ы) < իտլ. pampas < կեչուա լեզվից], գ. (աշխգր.): Պամպասներ (հարավամերիկյան խոտառատ հարթ տափաստան):

ՊԱԼՊԱՑԻԱ [< пальпация < լատ. palpatio շոյելը, շոյում], գ. (բժշկ.): Շոշափում, շոշափելը (որպես հետազոտության մեթոդ):

ՊԱՄՊԵՐՍ(ՆԵՐ) [< памперсы < անգլ. pumpers < to pump դուրս քաշել՝ հանել], գ. (խսկց.): Վարտիքի նման հիգիենիկ բազմաշերտ միջադիրներ՝ տաքդիրներ՝

տարբեր չափերի. օգտագործում են փոքր երեխաները և միզապահության խնդիրներ ունեցող հիվանդները:

ՊԱԼՏՈ [< пальто < ֆր. paletot], գ. (խսկց.): 1. Կոստյումի, զգեստի վրայից հագնելու երկար (սովորաբար մինչև ծնկները հասնող) հագուստ, վերարկու: 2. Այծենակաճ, յափնջի: 3. (հնց.): Թիկնոց:

ՊԱԼՏՈՒՍ [< палтус < սաամերեն paldes], գ. (կենդբ.): Վահանաձուկ, տափակաձուկ (հյուսիսային):

ՊԱԽԻԴԵՐՄԻԱ [< пахидермия < հուն. pachydermia կարծրամաշկություն], գ. (բժշկ.): Կարծրամաշկություն, թանձրամաշկություն (հիվանդություն):

ՊԱԽԻԿ(Ց)ԵՖԱԼԻԱ [< пахикефалия, пахицефалия < հուն. pachys գեր, խիտ + kephalē գլուխ], գ. (բժշկ.): Պարանոցի ուժեղ կարծրացում (հիվանդություն):

ՊԱԽԻՄԵՆԻՆԳԻՏ [< пахименингит < հուն. pachys գեր, խիտ + մենինգիտ], գ. (բժշկ.): Գլխուղեղի կարծր թաղանթի բորբոքում:

ՊԱԿԵՏ [< пакет < ֆր. paquet], գ. (խսկց.): 1. Ծրար: 2. Փաթեթ, կապոց: 3. Թղթից տոպրակ

ՊԱԿՏ [< пакт < լատ. pactum պայմանագիր], գ. (դվնգ.): Միջազգային (սովորաբար քաղաքական լուրջ նշանակություն ունեցող խնդրին վերաբերող) համաձայնագիր:

ՊԱԿՏԱ ՍՈՒՆՏ ՍԵՐՎԱՆԴԱ [< пакта сунт серванда < լատ.pacta sunt servanda պայմանագրերը պետք է պահպանվեն], գ. (դվնգ. իրավբ.): Միջազգային իրավունքում և դիվանագիտության մեջ կիրառվող սկզբունք, ըստ որի՝ կողմերը պարտավորվում են բարեխղճորեն կատարել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

ՊԱՄՖԼԵՏ [< памфлет < անգլ. pamphlet], գ. (գրկն.): Պարսավագիր, հրապարակախոսական երկ, որը բնութագրվում է որևէ անձի, քաղաքական-հասարակական երևույթի՝ հասարակական կարգի սուր ծաղրով:

ՊԱՄՖԼԵՏԱԳԻՐ, գ. ած. Պարսավական երկ գրող, պարսավական ստեղծագործության հեղինակ:

ՊԱՄՖԼԵՏԻՍՏ [< памфлетист < անգլ.], գ. Պամֆլետագիր, պամֆլետ՝ պամֆլետական երկ գրող:

ՊԱՆ [< Пан < հուն. Pan], գ. (դից.): Անտառների ու արոտավայրերի աստվածը, հովիվների, որսորդների, մեղվապահների ու ձկնորսների հովանավորը հին հունական դիցաբանության մեջ:

ՊԱՆ... [< пан... < հուն. pan ամբողջ, բոլոր], Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս երևույթի համընդհանրականությունը: Համապատասխանում է հայերեն համ..., համա..., համայնա... մասնիկներին:

ՊԱՆԱՄԱ [< панама < ֆր. panama Կենտրոնական Ամերիկայի Պանամա հանրապետության անունից], գ. (խսկց.): Ծղոտե լայնեզր գլխարկ:

ՊԱՆԱՄԵՐԻԿԱՆԻԶՄ [< панамериканизм < պան... + ամերիկանիզմ], գ. (քղք.): Համաամերիկանություն՝ քաղաքական ուսմունք, որի հիմքում ընկած է այն գաղափարը, թե իբր ԱՄՆ-ն և ամերիկյան մայրցամաքի մյուս երկրներն ունեն պատմական ճակատագրի, տնտեսության և մշակույթի ընդհանրություն:

ՊԱՆԱՄԵՐԻԿՅԱՆ, ած. Համաամերիկյան:

ՊԱՆԱՐՄԵՆԻԶՄ [< панарменизм < պան... + արմեն (հայկական ցեղամիության անվանում)], գ. Համահայկականություն:

ՊԱՆԱՑԵԱ [< панацея < լատ. panacea < հուն. Panakeia Պանացեա (բոլորին՝

ամեն ինչ բուժող) հին հունական աստվածուհու անունից], գ. (հզվդ.): Համադարման (սկզբում որպես դեղամիջոց) կյանքի բոլոր չարիքների դեմ:

ՊԱՆԳԵՆԵԶԻՍ [< пангенезис < պան... + հուն. genos], գ. (գիտ.): Ժառանգականության և զարգացման մտահայեցողական վարկած, որը առաջ է քաշել Չ. Դարվինը 1868 թ.:

ՊԱՆԳԵՐՄԱՆԱԿԱՆ [< пангерманизм < պան... + գերմանական], ած. Համագերմանական:

ՊԱՆԳԵՐՄԱՆԻԶՄ [< пангерманизм < պան... + գերմանիզմ], գ. (քղք.): Համագերմանականություն՝ քաղաքական ուսմունք, որն արտահայտել է Գերմանիայի ագրեսիվ ձգտումները՝ գերմանացիների համաշխարհային տիրապետությունը հաստատելու քաղաքականությունը:

ՊԱՆԴԱ [< панда < տիբեթ. panda], գ. (կենդբ.): Ջրարջի ընտանիքին պատկանող կաթնասուն կենդանի, որը բնակվում են հիմնականում Հիմալայներում:

ՊԱՆԴԱԿՏԻԼԻՏ [< пандактилит < հուն. pan ամեն ինչ + daktylas մատ], գ. (բժշկ.): Մատների բոլոր հյուսվածքների նեխում:

ՊԱՆԴՈՒՍ [< пандус < ֆր. pente douce թեքույթ], գ. (տեխ.): Թեքամուտք, թեթևաթեք հարթակ (սանդուղքների փոխարեն):

ՊԱՆԵԳԻՐԻԿ [< панегирик < հուն. logos panēgyrikos հանդիսավոր, տոնական ճառ], գ. 1. (հռետ.): Ներբող, ներբողական՝ գովասանական ճառ, գովերգություն: 2. ած. Ներբողյան, ներբողին հատուկ:

ՊԱՆԵԳԻՐԻՍՏ [< панегирист < հուն.], գ. ած. Ներբողիչ, գովերգու, գովերգիչ:

ՊԱՆԴԵԿՏԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ [< пандектное (< գերմ. Pandektenrecht < ուշ լատ. modernus pandectarum) право] – (իրավք. պատմ.): Մասնավոր իրավունք, որը կիրառվել է Գերմանիայում XVI-XVIII դդ.: Անվանումը ստացել է պանդեկտներից:

ՊԱՆԴԵԿՏՆԵՐ [< пандекты < լատ. pandectae < հուն. pandektēs համապարփակ, հանրագիտական տեղեկատու], գ. (պատմ.): Հին Հռոմում օրենքներից և իրավաբանների դասական երկերից քաղվածաբար կազմված ժողովածուներ:

ՊԱՆԴԵՄԻԱ [< пандемия < հուն. pandēmia ամբողջ ժողովուրդ], գ. (բժշկ.): Համաճարակ. բնորոշվում է վարակիչ հիվանդությունների խիստ տարածմամբ ողջ երկրում, սահմանակից պետությունների տարածքում, երբեմն՝ աշխարհի բազմաթիվ երկրներում:

ՊԱՆԴՈՐԱ [< Пандора < հուն. Pandōra], գ. (դից.): Ըստ հին հունական դիցաբանության՝ Զևսի հրամանով ստեղծված կին: Զևսից նա ստացել է մի տուփ, որը հետաքրքրությունից բացել է, և երկրի վրա թափվել են ամեն տեսակ հիվանդություններ, վշտեր, դժբախտություններ:

ՊԱՆԵԼ [< панель < գերմ. Paneel], գ. (խսկց.): Երկաթբետոնե կամ փայտյա սալ՝ հավաքովի շինարարության համար:

ՊԱՆԵՆԹԵԻԶՄ [< панентеизм < պան... + հուն. en մեջ + թեիզմ], գ. (կրոն.): Կրոնափիլիսոփայական ուսմունք, ըստ որի՝ աշխարհն աստծու մեջ է: Սա պանթեիզմի և թեիզմի որոշ գաղափարների համադրությունն է:

ՊԱՆԶՈՈՏԻԱ [< панзоотия < պան... + հուն. zōon կենդանի], (բժշկ.): Համաճարակի զարգացման բարձրագույն աստիճան, նաև համաճարակային գործընթացների ինտենսիվության (լարվածության) քանակական դրսևորում. երկրում կամ մի քանի երկրներում, մայրցամաքում կենդանիների վարակիչ հիվանդությունների լայն տարածում:

ՊԱՆԹԵԻԶՄ [< пантеизм < պան... + theos աստված], գ.(կրոն.): Կրոնափիլիսոփայական աշխարհայացք, որը բնությունը նույնացնում է Աստծու հետ և բնությունը դիտում է որպես Աստծու մարմնացում, համաստվածություն:

ՊԱՆԹԵԻՍՏ [< пантеист < հուն.], գ. ած. Պանթեիզմի հետևորդ:

ՊԱՆԹԵՈՆ [< пантеон < պան... + theos աստված < լատ. Pantheon համադիցարան], գ. 1. Հին Հունաստանում և Հռոմում՝ բոլոր աստվածներին նվիրված տաճար: 2. Որևէ կրոնի բոլոր աստվածների ամբողջությունը: 3. Նշանավոր գործիչների թաղման վայր:

ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄ [< пантюркизм < պան... + թյուրքիզմ], գ. (քղք.): Համաթյուրքականություն՝ ծայրահեղ ազգայնական գաղափարախոսություն, որի հիմքում ընկած է թյուրքալեզու ժողովուրդների մեկ ազգ լինելու և թուրքերի գլխավորությամբ նրանց մեկ պետության մեջ միավորելու գաղափարը:

ՊԱՆԻ [< пани < լեհ. pani], գ. Լեհաստանում՝ կնոջը դիմելու ձև կամ նրա հարգական հիշատակումը:

ՊԱՆԻԽԻԴԱ [< панихида < միջին հուն. pannychida < pannychis ամբողջ գիշեր տևող], գ. (եկեղ. խսկց.): Հոգեհանգիստ:

ՊԱՆԻԿԱ [< паника < հուն. panikon հին հունական աստված Պանի անունից], գ. 1. Խուճապ, սարսափ, որ հանկարծակի համակում է մարդուն կամ մարդկանց: 2. (ֆին.): Խուճապ՝ ֆինանսական շուկաների հանդեպ հասարակության վստահության անսպասելի կորուստ, որը բնութագրվում է նվազող գներով և գործարարության ձախողմամբ:

ՊԱՆԻԿԱԴԻԼՈ [< паникадило < հուն. polykandēlon բազմաթիվ աշտանակներից կազմված], գ. (եկեղ.): Բազմաճյուղ կանթեղ, ջահ (եկեղեցիներում):

ՊԱՆԻԿՅՈՐ [< паникер < հուն.], գ. ած. (խսկց.): Խուճապարար, խուճապարկու:

ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄ [< панисламизм < պան... + իսլամիզմ], գ. (քղք.): Համաիսլամականության՝ գաղափարախոսություն:

ՊԱՆԻՐԱՆԻԶՄ [< паниранизм < պան... + իրանիզմ], գ. (քղք.): Համաիրանականություն՝ ծայրահեղ ազգայնական գաղափարախոսություն Իրանում, որի հիմքում ընկած է իրանալեզու բոլոր ժողովուրդների «իրանական միասնական ազգ» լինելու, «Մեծ Իրան» ստեղծելու գաղափարը:

ՊԱՆԼՈԳԻԶՄ [< панлогизм < պան... + հուն. logos գիտություն], գ. (փիլ.): Իդեալիստական և ռացիոնալիստական հայեցակետ, ըստ որի՝ կեցությունը տրամաբանականի, գաղափարի մարմնավորումն է, և կեցության օրենքները որոշվում են տրամաբանական օրենքներով:

Պ(Փ)ԱՆԿ [< панк < անգլ. punk անփորձ, բառացի՝ փտած ծառ], գ. (խսկց.): Ժամանակակից երիտասարդության ներկայացուցիչ, որը իրեն հակադրում է հասարակությանը իր բարոյական, գաղափարական հայացքներով, պահվածքով և արտաքին տեսքով (հատկապես սանրվածքով):

ՊԱՆԿՐԱՏԻՈՆ [< панкратион < հուն. pankration], գ. (պատմ.): Հին Հունաստանում՝ ըմբշամարտի և բռնցքամարտի հնարքներով իրականացվող մրցություն:

ՊԱՆԿՐԵԱՏԻՏ [< панкреатит < հուն. pankreas ենթաստամոքսային գեղձ], գ. (բժշկ.): Ենթաստամոքսային գեղձի բորբոքում:

ՊԱՆՆՈ [< панно < ֆր. panneau], գ. 1. (արվ.): Մեծանկար, մեծ չափերի նկար քաթանի վրա: 2. Առաստաղի կամ պատերի քանդակազարդ կամ նկարազարդ մեծ մակերես:

ՊԱՆՈՊՏԻԿՈՒՄ [< паноптикум < հուն. pan ամեն ինչ + optikos տեսողական], գ.

(մանգ.): Հազվագյուտ իրերի եզակի հավաքածու:

ՊԱՆՈՐԱՄԱ [< панорама < պան... + հուն. horama տեսք, տեսարան, տեսիլ], գ. 1. Համայնապատկեր: 2. Համացույց:

ՊԱՆՉ [< панч < անգլ. punch], գ. (թատր. պատմ.): Անգլիական ժողովրդական տիկնիկային կիսապրոֆեսիոնալ թատրոնի գործող անձ. երևան է եկել 1662 թ. իտալական տիկնիկային թատրոնում:

ՊԱՆՍԻՈՆ [< пансион < ֆր. pension < լատ. pensio վճարում], գ. 1. (պատմ.): Փակ ուսումնադաստիարակչական հաստատություն, որտեղ սովորողներն ստանում էին ապրուստի բոլոր միջոցները: 2. (պատմ.): Մինչհեղափոխական Ռուսաստանի մի քանի միջնակարգ դպրոցներում՝ վճարովի հանրակացարան: 3. Արտասահմանյան երկրներում հյուրանոց, որտեղ կենվորներին տրվում է նաև սնունդը՝ սենյակի վարձի հաշվին: 4. Որևէ մեկի մոտ ապրող կենվորի լրիվ խնամքը (սնունդ ևն): 5. Տե՛ս Պանսիոնատ:

ՊԱՆՍԻՈՆԱՏ [< пансионат < ֆր. pensionnat], գ. 1. Գիշերօթիկ դպրոց: 2. Կենսօթևան, հյուրանոց, որ կենվորներին գիշերելու տեղի հետ տրամադրում է նաև ավտոմոբիլ(ներ)ի տեղ, սնունդ ևն:

ՊԱՆՍԻՈՆԵՐ [< пансионер < ֆր. pensionnaire], գ. Պանսիոնի կենվոր կամ սովորող:

ՊԱՆՍՊԵՐՄԻԱ [< панспермия < հուն. pan ամեն ինչ + sperma ընտանիք], գ. (փիլ. կենսբ.): Երկրի վրա կյանքի առաջացման հիպոթեզ, ըստ որի՝ կյանքը Երկիր մոլորակի վրա առաջացել է այլ մոլորակներից կյանքի սաղմերի փոխադրումով:

ՊԱՆՏԱԼՈՆ [< панталоны < իտլ. pantaloni], գ. (խսկց.): Վարտիք, անդրավարտիք՝ ծնկից փոքր-ինչ ներքև իջնող:

ՊԱՆՏԵՐ [< панты < նանայերեն pynty], գ. (հզվդ.): Ջահել եղջերուների եղջյուրներ:

ՊԱՆՏԵՐԱ [< пантера < հուն. panthera], գ. (կենդբ.): Հովազ, հովազառյուծ:

ՊԱՆՏՈԳՐԱՖ [< пантограф < պան... + հուն. graphō գրում եմ], գ. Պատճեններ հանելու գործիք:

ՊԱՆՏՈՄԻՄ [< пантомим < հուն. pantomimos ամբողջը, բոլորը, որ առաջ է գալիս, ստեղծվում է նմանությամբ], գ. 1. Հին Հռոմում՝ պարային տեսարան, որտեղ գեղարվեստական կերպարը ստեղծվում էր մնջախաղի միջոցով: 2. Մնջախաղի դերասան:

ՊԱՆՏՈՄԻՄԱ [< пантомима < հուն.], գ. (թատր.): Մնջակատակ, մնջակատակություն, մնջախաղ՝ առանց բառերի թատերական ներկայացում, որտեղ գործող անձանց զգացումներն ու մտքերը արտահայտվում են դիմախաղով, շարժումներով:

ՊԱՆՑԻՐ [< панцирь < գերմ. Panzer], գ. (հնց.): 1. (ռազմ. պատմ.): Հնում՝ զրահ (սառը զենքից պաշտպանվելու համար): 2. (կենդբ.): Վահան, տաշտ, կոտ, զրահ:

ՊԱՆՓՍԻԽԻԶՄ [< панпсихизм < հուն. pan ամեն ինչ + psychē հոգի, ոգի], գ. (փիլ.): Փիլիսոփայական տեսություն, ըստ որի՝ աշխարհում ամեն ինչ (նաև բնությունը) շնչավոր է:

ՓԱՇԱ [< паша < թուրք paša], գ. (պատմ.): Բարձրաստիճան պաշտոնյա, մեծատոհմիկ՝ ազնվազարմ անձ, գեներալ Թուրքիայում և Հին Եգիպտոսում, ինչպես նաև նրանց տիտղոսը:

ՊԱՇՏԵՏ [< паштет < գերմ. Pastete < միջին լատ. pastata խմորով փաթաթված

մսային ուտեստ], գ. (խոհր.): 1. Մսատրորվածք (թռչունի, տավարի մսից, լյարդից են): 2. (հնց.): Մսակարկանդակ:

ՊԱՊ [< papa < լատ. papa < հուն. pappas հայր], գ. (կրոն.): Հռոմի կաթոլիկական եկեղեցու և Վատիկանի գլխավորը:

ՊԱՊԱՐԱՑԻ [< папарацци < իտլ. Paparazzi < իտալացի ֆոտոթղթակից Պապարացոյի (Paparazzo) անունից (Ֆ. Ֆելինիի «Քաղցր կյանք» կինոնկարի հերոսը)], գ. (խսկց.): Աներես՝ պնդերես ֆոտոթղթակից, որը ձգտում է ներթափանցել հայտնի մարդկանց անձնական կյանքի մեջ սենսացիոն լուսանկարներ անելու համար:

ՊԱՊԻԼՈՄԱ [< папиллома < լատ. papilla պտուկ], գ. (բժշկ.): Մարմնի մաշկի բարորակ ուռուցք (պտուկի ձևով):

ՊԱՊԻԼՅՈՏԿԱ [< папильотка < ֆր. papillote], գ. (մանգ.): Խոպոպաթուղթ (մազերը խոպոպելու համար):

ՊԱՊԻՐՈԼՈԳԻԱ [< папирология < հուն. papyros պապիրուս + logōs գիտություն], գ. (գիտ.): Պապիրուսաբանություն, պապիրուսագիտություն:

ՊԱՊԻՐՈՍ [< папироса < գերմ. Papier թուղթ], գ. (խսկց.): Ծխախոտ՝ ծխախոտով գլանակ, թութունով գլանակ ծխելու համար:

ՊԱՊԻՐՈՒՍ [< папирус < հուն. papyros], գ. 1. (բսբ.): Բոշխազգիների ընտանիքի բազմամյա խոտաբույս: 2. Այդ բույսի կեղևից պատրաստվող գրելու թուղթ, որ գործածում էին Հին Եգիպտոսում:

ՊԱՊԿԱ [< папка < գերմ. Pappe ստվարաթուղթ], գ. 1. (խսկց.): Թղթապանակ: 2. (տպգր.): Ստվարաթղթե կազմ, կարտոնակազմ:

ՊԱՊՈՒԼԱ [< папула < լատ. papula բշտիկ], գ. (կզմխս. բժշկ.): Մաշկի մակերևույթից բարձր, անխոռոչ հանգույցիկ, մաշկային ցանի տարր: Առաջանում է մաշկի և լորձաթաղանթների տարբեր ախտահարումներից:

ՊԱՌԼԱՄԵՆՏ [< парламент < գերմ. Parlament < անգլ. parliament < ֆր. parlement < parler խոսել, ասել], գ. (քղք.): Լիակատար կամ մասնակի կերպով ընտրական սկզբունքի վրա հիմնված ներկայացուցչական բարձրագույն օրենսդրական մարմին, խորհրդարան:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ, ած. 1. Պառլամենտին հատուկ՝ վերաբերող: 2. Պառլամենտական համակարգի ջատագով կողմնակից: 3. Պառլամենտ ունեցող: 4. գ. Պառլամենտի անդամ, պատգամավոր:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ [< парламентаризм < տե՛ս Պառլամենտ], գ. Պառլամենտականություն:

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻՍՏ [< парламентарист < տե՛ս Պառլամենտ], գ. Պառլամենտարիզմի կողմնակից, պառլամենտական (2):

ՊԱՌԼԱՄԵՆՏՅՈՐ [< парламентёр < ֆր. parlamentaire < parler ասել, խոսել], գ. Բանագնաց:

ՊԱՌՆԱՍ [< Парнас < հուն. Parnassos], գ. 1. (դից.): Ապոլոնի և ինը մուսաների

բնակավայրը (Պառնաս լեռան անունից): 2. *փխբ.* Բանաստեղծների՝ արվեստագետների կաճառ:

ՊԱՍ [< пас < անգլ. pass < to pass փոխանցել], գ. (սպորտ. խսկց.): Որոշ սպորտաձևերում՝ գնդակի (տափօղակի) փոխանցումը թիմակցին, փոխանցում:

ՊԱՍԱԺ [< пассаж < ֆր. passage անցում], գ. Երկու կողմերից զետեղված խանութներ կամ վաճառասեղաններ և սրանքով հաճախորդների անցնելու միջանցք ունեցող ծածկված երկար շինություն, առանձին ելք ու մուտքով սրահ, վաճառաշարք:

ՊԱՍԱԺԻՐ [< пассажир < ֆր. passager < passer փոխադրամիջոցով երթևեկել], գ. (խսկց.): Ուղևոր:

ՊԱՍԵԻԶՄ [< пассеизм < ֆր. passéisme < passé անցյալ], գ. Կրքոտ սեր՝ վերաբերմունք անցյալի նկատմամբ, ներկային թշնամաբար վերաբերվելը, պահպանողականություն:

ՊԱՍԵՔ, Տե՛ս Պասքա:

ՊԱՍԿՎԻԼ [< пасквиль < գերմ. Pasquill, Pasquino հին հռոմեական արձանի մարմնաքանդակի անվանումը], գ. (գրկն. քղք.): Պարսավագիր, ծանուցագիր, անարգագիր, ծանակագիր:

ՊԱՍՅԱՆՍ [< пасьянс < ֆր. patience, բառացի՝ համբերություն], գ. Խաղաթղթերով բախտ բացելը, գուշակելը:

ՊԱՍՊԱՐՏՈՒ [< паспарту < ֆր. passe-partout], գ. Ստվարաթղթե շրջանակ կամ սոսնձվածք՝ նկարի, փորագրության, պատկերազարդարումների ևն համար:

ՊԱՍՊՈՐՏ [< паспорт < ֆր. passeport], գ. 1. (խսկց.): Անձնագիր՝ անձը հաստատող՝ նշող փաստաթուղթ: 2. Տեղեկատու գիր: 3. Փոխադրամիջոցի գրանցման փաստաթուղթ, տրանսպորտի յուրաքանչյուր միավորի հաշվառման տվյալները պարունակող վկայական:

ՊԱՍՍԱԿԱԼԻԱ [< пассакалия < իտլ. passacaglia < իսպ. passacalle], գ. 1. (պատմ.): Իսպանական հնագույն պար՝ վեհաշուք, երբեմն ողբերգական բնույթի, որ տարածում է գտել արևմտաեվրոպական երկրներում XVII-XVIII դդ.: 2. (երժշտ.): Basso ostinato-ի վրա հիմնված գործիքային պիես (ավելի հաճախ երգեհոնի կամ կլավեսինի համար)՝ գրված պոլիֆոնիկ վարիացիաների ձևով:

ՊԱՍՍԱՏ [< пассат < գերմ. Passat < հոլանդ. Passaat], գ. (աշխգր.): Կայուն քամու տեսակ:

ՊԱՍՍԵԻԶՄ [< пассеизм < ֆր. passéisme < passé անցյալ], գ. (փիլ.): Անցյալի իդեալականացում (ներկայի վատաբանում):

ՊԱՍՍԻՎ [< пассив < լատ. passivus կրավորական], 1. ած. Ոչ գործունյա, ոչ եռանդուն: 2. Ոչ արդյունավետ: 3. Պարտքերին ու պարտավորություններին վերաբերող: 4. (քեր.) Կրավորական՝սեռ: 5. գ. Հիմնարկի՝ ձեռնարկության պարտքերի և պարտավորությունների ամբողջությունը:

ՊԱՍՏԱ [< паста < իտլ. pasta խմոր], գ. (խսկց.): Մածուկ, քսուք:

ՊԱՍՏԵԼ [< пастель < ֆր. pastel < իտլ. pastello < pasta խմոր], գ. (նկարչ.): 1. Գունամատիտ, կավճաներկ: 2. Գունամատիտանկար: 3. ած. Գունամատիտներով նկարազարդված:

ՊԱՍՏԵՐԵԼՈԶ [< пастерелоз < հատուկ անունից], գ. (բժշկ.): Արյունահոսային սեպտիցեմիա՝ մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություն: Բնորոշվում է սեպտիցեմիայով և շնչառական ուղիների ու աղիների լորձաթաղանթի բորբոքային գործընթացներով, այտուցներով:

ՊԱՍՏԵՐԻԶԱՏՈՐ [< пастеризатор < ֆրանսիացի մանրէաբան Լ. Պաստերի անունից], գ. (տեխ.): Պաստերիզացիայի ենթարկող գործիք, պաստերիզացիայի ապարատ:

ՊԱՍՏԵՐԻԶԱՑԻԱ [< пастеризация < հատուկ անունից], գ. Կենսամթերքների վարակազերծում մինչև 100° տաքացնելու միջոցով, պաստերացում:

ՊԱՍՏՈԶԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ [< пастозный (< լատ. pastosus < իտլ. pastoso խմորակերպ) стиль] - (նկարչ.): Գունանկարչական տեխնիկայում՝ ներկաշերտի որակ, որն առաջանում է հիմնաներկը թանձր ներկաքսուքով անհամաչափ ծածկելով:

ՊԱՍՏՈՐ [< пастор < գերմ. Pastor < լատ. pastor հովիվ], գ. (եկեղ.): Բողոքական եկեղեցու ծխատեր քահանա:

ՊԱՍՏՈՐԱԼ [< пастораль < ֆր. pastorale < լատ. pastoralis հովվական], գ. (երժշտ.): 1. Օպերա, մնջախաղ կամ բալետ, որոնց այուժեն կապված է գեղջկական կյանքի իդեալականացված պատկերմանը: 2. Բնության կամ գեղջկական կյանքի տեսարաններ պատկերող վոկալ կամ գործիքային ստեղծագործություն:

ՊԱՍՏՈՐԵԼ [< пасторель < պրովանս. pastorelle], գ. (գրկն.): Միջնադարյան բանաստեղծություն՝ ասպետի (կամ հովվի) և հովվուհու երկխոսության ձևով:

ՊԱՍՔԱ [< пасха < հին եբր. pēsah], գ. (կրոն.): 1. Հրեական գարնանային կրոնական տոն: 2. Քրիստոնեական տոն՝ նվիրված քրիստոնեության հիմնադիր Քրիստոսի խաչմանը: 3. Քրիստոնեական տոնի առթիվ պատրաստված քաղցր ուտելիք:

ՊԱՎԻԱՆ [< павиан < գերմ. Pavian], գ. (կենդբ.): Երկար դնչով շնանման խոշոր ամարմին կապիկ (Աֆրիկայում և Արաբիայում):

ՊԱՎԻԼԻՈՆ [< павильон < ֆր. pavillon < լատ. papilio վրան], գ. (հնց.): Տաղավար:

ՊԱՏ [< пат < ֆր. pat], գ. 1. (սպորտ.): Շախմատի խաղում ստեղծվող դրություն, որի ժամանակ հակառակորդը չի կարող որևէ քայլ անել առանց թագավորին հարվածի տակ դնելու, որով և խաղը համարվում է ոչ-ոքի: 2. *փխբ.* Հավասար վիճակ վիճաբանության՝ հակաճառության ևն ժամանակ:

ՊԱՏԵՆՏ[< патент < լատ. patens (patentis) ակնհայտ, բացահայտ], գ.: Արտոնագիր՝ 1. Փաստաթուղթ, որը վկայում է գյուտի տեխնիկական լուծման պետական ճանաչումը և ամրագրումն այն անձին, որին տրված է այդ գյուտի բացառիկ իրավունքը: 2. Փաստաթուղթ, որը վկայում է որևէ արհեստագործությամբ զբաղվելու մասին:

ՊԱՏԵՐ [< патер < լատ. pater հայր], գ. (կրոն.): Կաթոլիկ վանական:

ՊԱՏԵՐԻԿ [< патерик < հուն. paterikon], գ. (կրոն.): «Վարք սրբոց», «Վարք հարանց»:

ՊԱՏԵՖՈՆ [< патефон < ֆր. Piatē ֆիրմայի անունից + հուն. phōnē հնչյուն], գ. (հնց.): Ձայնապնակի վրա գրանցվածը վերարտադրող երաժշտական մեխանիկական սարք:

ՊԱՏՐԻԱՐԽԱՏ [< патриархат < հուն. patēr (patros) հայր + archē իշխանություն], գ. (պատմ.): Նախնադարյան տոհմատիրական դարաշրջանում մայրիշխանությանը հաջորդող ժամանա-

կաշրջան, որի ժամանակ տղամարդը ընտանիքում, տնտեսության մեջ և հասարակական կյանքում մեծ դեր է ստանձնում, հայրիշխանություն:

ՊԱՏՐԻԿՆԵՐ [< патриций < լատ. patricii < pater հայր], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ սկզբնապես տոհմական համայնքի մեջ մտնող ամբողջ բնիկ բնակչությունը, որը կազմում էր հռոմեական ժողովուրդը և հակադրվում էր պլեբեյներին. տոհմական համայնքից երևելի ընտանիքների առանձնանալուց հետո՝ տոհմական ազնվականությունը:

ՊԱՏՐԻՄՈՆԻՈՒՄ [< патримониум < լատ. patrimonium], գ. (պատմ.): Հայրենական՝ տոհմային ժառանգության գույք՝ ստացվածք:

ՊԱՏՐԻՈՏ [< патриот < հուն. patriōtēs հայրենակից], գ. ած. (խսկց.): 1. Հայրենասեր: 2. Որևէ բանի նվիրված անձ:

ՊԱՏՐԻՈՏԻԶՄ [< патриотизм < հուն. patris հայրենիք], գ. Հայրենասիրություն:

ՊԱՏՐԻՍՏԻԿԱ [< патристика < հուն. patēr (patros) հայր], գ. (կրոն.): Հայրաբանություն՝ եկեղեցու հայրերի աստվածաբանությունը և փիլիսոփայությունը: Ձևավորվել է II-III դդ. քրիստոնյաների դեմ հալածանքների պայմաններում:

ՊԱՏՐԻՑԱ [< патрица < գերմ. Patrize < հուն. pater (patros) հայր], գ. (տպգր.): Տառահայր:

ՊԱՏՐՈԼՈԳԻԱ [< патрология < գերմ. Patrologie < հուն. pater (patros) հայր + logōs գիտություն], գ. (եկեղ.): Աստվածաբանության բաժին, որը ուսումնասիրում է «եկեղեցական հայրերի» կյանքն ու գործունեությունը:

ՊԱՏՐՈՆ I [< патрон < լատ. patronus պաշտպան, հովանավոր], գ. 1. (պատմ.): Որևէ բանի գլխավոր՝ տնօրեն: 2. (եկեղ.): Որևէ եկեղեցի կառուցող կամ որևէ եկեղեցու հովանավոր: 3. *փխբ.* Տեր, պետ:

ՊԱՏՐՈՆ II [< патрон < գերմ. Patrone < ֆր. patron], գ. (խսկց.): Փամփուշտ՝ ագուցված գնդակով (կամ մեջը լցված մանրագնդակով), բռնկվող լիցքով ու հրապատիճով, փամփշտապարկուճ:

ՊԱՏՐՈՆԱԺ [< патронаж < ֆր. patronage հովանավորչություն], գ. Խնամակալություն, հոգաբարձություն:

ՊԱՏՐՈՆԴ(Տ)ԱՇ [< патронташ < գերմ. Patrontasche] գ. (խսկց.): Փամփշտակալ՝ 1. Ժապավենաձև լայն գոտի՝ վրան կարած գրպանիկներով, որոնց մեջ դնում են հրազենի փամփուշտները և ուսընդանուք կախում: 2. Գոտուն կապելու փոքրիկ պայուսակ՝ հրացանի կամ ատրճանակի փամփուշտների համար: 3. Փամփշտանոց՝ հրազենի փողանցքի այն մասը, որտեղ դրվում է փամփուշտը՝ կրակելու համար:

ՊԱՏՐՈՆԻՄԻԱ [< патронимия < հուն. patēr հայր + ōnyma անուն], գ. (պատմ.): Նահապետական-տոհմական կարգերին բնորոշ, հաճախ նաև դասակարգային հասարակություններում մինչև կապիտալիզմի դարաշրջանը պահպանված հասարակական կազմակերպության ձև:

ՊԱՏՐՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): Հին Իտալիայում հովանավորության հատուկ ձև, որը ոչ լիիրավ կամ աղքատ քաղաքացիներին կախման մեջ էր դնում ունևոր քաղաքացիներից՝ պատրոններից:

ՊԱՏՐՈՒԼ [< патруль < ֆր. patrouille], գ. (ռազմ. խսկց.): Զինված պահակախումբ՝ հաստատված ուղերթով շարժվող ոչ մեծ զինված մարդկանց խումբ՝ հետիոտն կամ մեքենաներով, տեղանքի զննման, հսկման, պահակային ծառայություն կատարելու համար, պարեկ:

ՊԱՏՈՒԱ [< патуа < ֆր. patois], գ. (լեզվբ.): Ֆրանսիայում՝ բնակչության որոշակի խմբերի (հիմնականում գյուղացիների) լեզվի տարբերակային ձև:

ՊԱՐԱ... [< пара... < հուն. para մոտ, կողքին, դուրս] Բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակում է՝ 1. Մոտ գտնվելը: 2. Շեղում, խանգարում:

ՊԱՐԱԲԵԼՈՒՄ [< парабеллум < լատ. para bellum պատրաստվի՛ր պատերազմի], գ. (ռազմ.): Հատուկ համակարգով ավտոմատ ատրճանակ:

ՊԱՐԱԲԻՈԶ [< парабиоз < պարա... + հուն. biōsis կյանք], (կենսբ.): 1. Հյուսվածքի կայուն, չտատանվող, ալիքաձև չտարածվող, տեղային դրդման հատուկ վիճակ. առաջանում է որոշակի ուժի և տևականության գրգռիչների ազդեցությամբ և բնորոշվում նրա հիմնական հատկությունների՝ դրդելիության ու հաղորդելության դարձելի փոփոխություններով: Ուսումնասիրել և տեսությունը մշակել է Ն. Վլեդենսկին 1901 թ.: 2. Արյունատար և ավշային համակարգերի միջոցով երկու (կամ մի քանի) օրգանիզմների արհեստական միակցման մեթոդ:

ՊԱՐԱԲՈԼ [< парабола < հուն. parabolē], գ. (երկրչ.): Շրջանային կոնի և այդ կոնի որևէ շոշափող հարթությանը զուգահեռ հարթության հատման գիծը:

ՊԱՐԱԲՈԼՈԻԴՆԵՐ [< параболоиды < պարաբոլ + հուն. eidos տեսք, կերպ], գ. (երկրչ.): Կենտրոն չունեցող երկրորդ կարգի մակերևույթներ:

ՊԱՐԱԳՐԱՄԱ [< параграмма < հուն. paragramma ավելացում], գ. (լեզվբ.): 1. Մեկ տառի կամ բառի փոխարինումը մյուսով: 2. Բառախաղ:

ՊԱՐԱԳՐԱՖ [< параграф < հուն. paragraphē նոր բաժնի նշան], գ. 1. Գրքի մասի՝ գլխի կամ առանձին հոդվածի՝ որոշման մեջ ինքնուրույն նշանակություն ունեցող մաս՝ հատված, որ սովորաբար նշանակվում է § նշանով և համարակալվում, ենթագլուխ: 2. Այդ կարգի հատվածի առջև դրվող նշանը՝ (§):

ՊԱՐԱԳԵՆԵԶԻՍ [< парагенезис < պարա... + հուն. genesis ծագում], գ. (հնք. երկրբ.): Երկրակեղևում միներալների համատեղ գոյակցություն՝ կապված միաժամանակ կամ հաջորդականորեն առաջանալու հետ:

ՊԱՐԱԴ [< парад < ֆր. parade], գ. (խսկց.): 1. Շքերթ, զորահանդես, շքահանդես: 2. Տոնակատարություն, տոնահանդիսություն:

ՊԱՐԱԴԻԳՄԱ [< парадигма < հուն. paradeigma օրինակ, կերպար], գ. (լեզվբ.): Հարացույց՝ բառի հոլովման կամ խոնարհման համակարգերը:

ՊԱՐԱԴԻԶ [< парадиз < ֆր. paradis < հուն. paradeisos այգի, պուրակ], գ. 1. Դրախտ: 2. (հնց.): Վերնասրահ՝ թատրոնում, թատրոնի վերնասրահ:

ՊԱՐԱԴՈՔՍ [< парадокс < հուն. paradoxos անսովոր, տարօրինակ], գ. 1. Սովորական՝ ընդհանուրի կողմից ընդունված կարծիքից խիստ կերպով տարբերվող կարծիք՝ դատողություն, որ (երբեմն միայն առաջին հայացքից) հակասում է առողջ բանականությանը, հարակարծություն, տարամտություն: 2. *փիլ.* Գիտության սովորական պատկերացումներին չհամապատասխանող անակնկալ՝ արտասովոր երևույթ:

ՊԱՐԱԴՈՔՍԱՅԻՆ, ՊԱՐԱԴՈՔՍԱԼ, ած. 1. Պարադոքսին հատուկ, պարադոքսի: 2. Պարադոքսի բնույթ ունեցող:

ՊԱՐԱԶԻՏ [< паразит < հուն. parasitos ճրիակեր], գ. ած. (խսկց.): 1. Մակաբույծ: 2. Պորտաբույծ:

ՊԱՐԱԶԻՏԱԲԱՆ(ՈՒԹՅՈՒՆ), գ. Մակաբուծաբան(ություն):

ՊԱՐԱԶԻՏԻԶՄ [< паразитизм < հուն.], գ. 1. Մակաբուծություն: 2. *փիլ.* Պորտաբուծություն:

ՊԱՐԱԶԻՏՈԼՈԳԻԱ [< паразитология < պարազիտ + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Մակաբուծաբանություն՝ կենսաբանական համալիր գիտություն, որը բազմակողմանիորեն ուսումնասիրում է մակաբուծության երևույթները:

ՊԱՐԱԼԱՔՍ [< параллакс < հուն. parallaxis շեղում], գ. (աստղգ.): Տեղազանու-

թյուն՝ լուսատուի տեսանելի տեղափոխությունը չափող անկյուն, երբ դիտողը տարածության մի կետից մյուսն է անցնում:

ՊԱՐԱԼԵԼ [< параллель < ֆր. parallèle < հուն.], գ. ած. 1. (երկրբ.): Զուգահեռական: 2. (աշխրգ.): Զուգահեռ, զուգահեռագիծ: 3. Համեմատություն, համադրություն: 4. Զուգահեռություն:

ՊԱՐԱԼԵԼԵՊԻՊԵԴ [< параллелепипед < հուն. parrallelos զուգահեռ + epipedor հարթություն], գ. (մաթ.): Զուգահեռանիստ:

ՊԱՐԱԼԵԼԻԶՄ [< параллелизм < ֆր. parallélisme < հուն.], գ. (մաթ. գրկն.): Զուգահեռականություն, զուգահեռություն:

ՊԱՐԱԼԵԼՈԳՐԱՄ [< параллелограмм < հուն. parrallelogrammon], գ. (մաթ.): Զուգահեռակողմ քառանկյունի:

ՊԱՐԱԼԻՆԳՎԻՍՏԻԿԱ [< паралингвистика < պարա... + լինգվիստիկա], գ. (լեզվբ.): Լեզվաբանության գիտակարգ, որը ուսումնասիրում է լեզվի հարակից միջոցների (ժեստեր, միմիկա ևն) գործածությունը խոսքային գործընթացում:

ՊԱՐԱԼԻՉ [< паралич < հուն. paralysis տկարացում, թուլացում], գ. (բժշկ.խսկց.): Կաթված, կաթվածահարություն:

ՊԱՐԱԼՈԳԻԶՄ [< паралогизм < հուն. paralogismos], գ. (տրամբ.): Ոչ կանխամտածված տրամաբանական սխալ, որը կշռադատությունը զրկում է ապացուցման ուժից և հանգեցնում կեղծ եզրակացությունների:

ՊԱՐԱԽՈՐ [< парахор < պարա... + հուն. choros վայր, տարածություն], գ. (քիմ.): Մաքուր չասոցված հեղուկների (ածխաջրածիններ, եթերներ ևն) մոլեկուլային զանգվածի, խտության և մակերևութային լարվածության կապն արտահայտող մեծություն:

ՊԱՐԱԽՐՈՆԻԶՄ [< парахронизм < պարա... + chronos ժամանակ], գ. Ժամանակագրական սխալ, որևէ իրադրության հատկացումը ավելի ուշ ժամանակահատվածի, քան այն կատարվել է:

ՊԱՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< парамагнитность < պարա... + մագնիսականություն], գ. (ֆիզ.): Հարամագնիսականություն՝ արտաքին մագնիսական դաշտի ուղղությամբ մարմինների մագնիսացման հատկություն:

ՊԱՐԱՄԵՏՐ [< параметр < հուն. parametron համաչափում եմ], գ. 1. (մաթ.) Մաթեմատիկական բանաձևի մեջ մտնող մեծություն, որն իր հաստատուն արժեքը պահպանում է միայն տվյալ խնդրի պայմաններում: 2. (ֆիզ. տեխ.): Որևէ առարկայի՝ երևույթի ևն հիմնական հատկությունները՝ հատկանիշները բնութագրող մեծություն կամ մեծությունները, չափանիշ:

ՊԱՐԱՄԵՏՐԻՏ [< параметрит < պարա... + հուն. mētra արգանդ], գ. (բժշկ.): Արգանդաբորբ՝ արգանդը շրջապատող ճարպաշարակցական բջջանքի բորբոքում:

ՊԱՐԱՄՆԵԶԻԱ [< парамнезия < պարա... + հուն. mnēsis հիշողություն], գ. (բժշկ.): Կեղծ հիշողություններ, հիշողության կորուստ՝ խաթարում, երբ կատարվող դեպքերը թվում են մի անգամ արդեն տեղի ունեցած:

ՊԱՐԱՆԹԵԶ [< парантез < հուն. paranthesis ընդմիջարկություն], գ. (տպգր.): Ձևավոր փակագիծ:

ՊԱՐԱՆՈՅԱ [< паранойя < հուն. paranoia խելացնորություն], գ. (բժշկ.): Խելացնորություն:

ՊԱՐԱՆՈՅԻԿ [< параноик < հուն.], գ., ած. (բժշկ.): Խելացնոր, խելացնորական:

ՊԱՐԱՇՅՈՒՏ [< парашют < ֆր. parachute < հուն. para դեմ + chute անկում], գ. (օդգնց.): Օդի մեջ հովանոցի ձևով բացվող հարմարանք՝ թռչող մեքենաներից

մարդու ցած նետվելու և բեռներ իջեցնելու համար, անկարգել:

ՊԱՐԱՇՅՈՒՏԻՍՏ [< парашютист < ֆր.], գ. Պարաշյուտով վայրէջք կատարելուն վարժված անձ՝ զինվոր ևն:

ՊԱՐԱՊԵՏ [< парапет < ֆր. parapet < իտլ. parapetto < parare պաշտպանել + petto կուրծք], գ. (ճարտ.): Ճաղաշար, ցածրիկ եզրապատ՝ կամրջին ևնին կից:

ՊԱՐԱՊԼԱՆ [< параплан < ֆր. para (chute) անկարգել + planer սահասավառնել], գ. (տեխ.): Հատուկ անկարգել սահասավառնելու համար:

ՊԱՐԱՊԼԵԳԻԱ [< параплегия < հուն. para կից, մոտ, շուրջ + plēgē հարված], գ. (բժշկ.): Մարդու ևն վերին (ձեռքերի) կամ ստորին (ոտքերի) զույգ վերջույթների միաժամանակյա կաթվածահարում:

ՊԱՐԱՊՍԻԽՈԼՈԳԻԱ [< парапсихология < պարա... + հուն. psychē հոգի + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Պարահոգեբանություն՝ գիտության զարգացման տվյալ փուլում անբացատրելի հոգեֆիզիոլոգիական-ֆիզիկական որոշ գործընթացների մեկնաբանումը որպես՝ ա) արտազգայական ընկալում, բ) արտաքին ֆիզիկական երևույթների, օբյեկտների, ինչպես նաև իրադարձությունների վրա մտովի ներգործություն:

ՊԱՐԱՊՐՈԿՏԻՏ [< парапроктит < պարա... + հուն. proktos], գ. (բժշկ.): Ուղիղ աղիքը շրջապատող ճարպաշարակցական բջջանքի թարախային բորբոքում:

ՊԱՐԱՏԻՖ [< паратиф < պարա... < հուն. typhos գիտակցության մթագնում], գ. (բժշկ.): Որովայնատիֆի հարուցիչների նման հարուցիչներից առաջացող սուր վարակիչ հիվանդություն:

ՊԱՐԱՖ [< параф < ֆր. paraphe < լատ. paragraphus < հուն. paragraphos], գ. (մանգ.): 1. Ստորագրության ոլորագիծ: 2. Կրճատ ստորագրություն (անվան և ազգանվան սկզբնատառերով):

ՊԱՐԱՖԻՆ [< парафин Ֆր. paraffine < լատ. parum քիչ + affinis ազգակից, նման՝ կոչված քիմ. հակազդակների մեծ մասի նկատմամբ չեզոքայնության պատճառով], գ. (տեխ.): Նավթից կամ տորֆի ու քարածխի չոր թորումից ստացվող մոմանման սպիտակ կամ դեղնավուն նյութ:

ՊԱՐԱՖԻՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. (բժշկ.): Հալած պարաֆինի օգտագործումը բուժիչ նպատակով:

ՊԱՐԱՖՐԱԶ(Ա) [< парафраз(а) < հուն. paraphrasis նկարագրություն], գ. 1. (գրկն.): Հարասություն, ընդարձակաբանություն: 2. (երժշտ.): Ուրիշի երաժշտական ստեղծագործության ինքնատիպ մշակում:

ՊԱՐԴՈՆ [< пардон < ֆր. pardon < pardonner ներել], ձայն. (խսկց.): Կներեք, ներողություն, ներեցե՛ք:

ՊԱՐԵԶ [< парез < հուն. paresis թուլություն], գ. (բժշկ.): Կամային շարժումների թուլացում, ոչ լրիվ լուծանք (կիսալուծանք):

ՊԱՐԵՅԱԶԱՎՐ [< парейазевр < հուն. pareia այտ + sauros մողես], գ. (հնէաբ.): Մինչև 2.5 մ երկարության բրածո՝ կատիլոզավրերի դասից:

ՊԱՐԵՆՔԻՄ [< паренхима < պարա... + enchyma լցրած], գ. 1. (բսբ.): Բույսերի հիմնական հյուսվածք. իրականացնում է ասիմիլյացիոն, արտաթորության ևն գործառույթներ: 2. (կենդբ.): Իսկական հյուսվածքի ֆիլոգենետիկական նախորդը երբեմն նաև՝ լյարդի, փայծաղի, թոքերի, գեղձերի ևն հիմնական ֆունկցիոնալ հյուսվածքը:

ՊԱՐԵՍԹԵԶԻԱ [< парестезия < հուն. paraisthesis կեղծ զգացում], գ. (բժշկ.): Տարազգայություն (նյարդային հիվանդությունների ժամանակ դրսևորվող քորի ևն զգացողություններ):

ՊԱՐԹԵՆՈԳԵՆԵԶ [< партеногенез < հուն. parthenos օրիորդ + genesis], գ. (բսբ.): Կուսածնություն:

ՊԱՐԹԵՆՈԿԱՐՊԻԱ [< партенокарпия < հուն. parthenos + karpos պտուղ], գ. (բսբ.): Կուսապտղություն՝ բույսի վրա սովորաբար անսերմ պտուղների առաջացումն առանց բեղմնավորման:

ՊԱՐԻ [< пари < ֆր.pari], գ. (խսկց.): Գրազ՝ պայման, որի դեպքում պարտվողը պետք է ինչ-որ բան անի:

ՊԱՐԻԱ [< пария < հնդկ.], գ. «Անձեռնմխելի»՝ ամենաստորին մարդկանց խավը Հնդկաստանում, որը չունի ոչ մի իրավունք:

ՊԱՐԻԿ [< парик < հուն. paroikos], գ. (խսկց.): Կեղծամ:

ՊԱՐԻԿՄԱԽԵՐ [< парикмахер < գերմ. Perückenmacher, բառացի՝ կեղծամներ պատրաստող], գ. (հնց.): Վարսավիր, սափրիչ:

ՊԱՐԻԿՈՍ [< парикос < հուն. paroikos հարևան, նորաբնակ, եկվոր], գ. (պատմ.): Կախյալ գյուղացիների դաս Բյուզանդիայում IX –XV դդ.:

ՊԱՐԻՏԵՏ [< паритет < լատ. paritas (paritatis) հավասարություն], գ. 1. (իրավք.): Հավասարություն, հավասարիրավություն: 2. (տնտսգ.): Տարբեր երկրների դրամական միավորների փոխհարաբերությունը ոսկով:

ՊԱՐԿ I [< парк < անգլ. park], գ. (հնց.): Պարտեզ, զբոսայգի, պուրակ, հանգստապուրակ:

ՊԱՐԿ II [< парк < անգլ. park], գ. 1. (ռազմ.): Շարժապահեստ, ռազմամթերապահեստ: 2. (տրանս.): Շարժակազմ, գործիքակազմ, առկա շարժակազմի կամ գործիքակազմի ամբողջություն, համակազմ: 3. Շարժակազմի կայան, որտեղ նորոգվում են տրանսպորտային միջոցները, նորոգակայան:

ՊԱՐԿԵՏ [< паркет < ֆր. parquet], գ. (շին.): 1. Հատակը տախտակամածելու մանր ու հարթ (սովորաբար երկար քառանկյունների ձևով) տախտակներ, մանրատախտակ: 2. Դրանցից որոշ երկրաչափական պատկերների ձևով սարքած տախտակամած հատակ:

ՊԱՐԿԵՏԱԳՈՐԾ, գ. ած. 1. Պարկետի արտադրության աշխատող: 2. Պարկետ (2) պատրաստող, պարկետից հատակ սարքող:

ՊԱՐՈԴԻԱ [< пародия < հուն. parōdia, բառացի՝ ծաղրափոխում], գ. 1. (գրկն.): Ծաղրաբանություն, ծաղրերգություն: 2. Ծաղրանմանում, ծաղրանմանություն, նմանակում:

ՊԱՐՈԴՈՆՏՈԶ [< пародонтоз < հուն. para մոտ, շուրջ, կից + odus (odontos) ատամ], գ. (բժշկ.): Ատամների հիվանդության մի տեսակ, երբ ատամի ու լնդի միջև խոռոչ է առաջանում:

ՊԱՐՈԼ [< пароль < ֆր. parole բառ, խոսք], գ. (խսկց.): Անցաբառ, նշանաբառ, պայմանաբառ, պայմանախոսք, նշանաբան:

ՊԱՐՈԿՍԻԶՄ [< пароксизм < հուն. paroxysmos ջղայնություն, գրգռություն], գ. 1. (բժշկ.): Հանկարծակի նոպա, բռնկում: 2. *փխբ.* Մոլուցք, բռնկում, զայրույթի հանկարծահաս բռնկում:

ՊԱՐՈՄ [< рուս. паром], գ. (հնց.): Լաստ, լաստանավ:

ՊԱՐՈՆԻԽԻԱ [< паронихия < հուն. para մոտ, շուրջ, կից + onyx (onychos) եղունգ], գ. (բժշկ.): Եղունգների թմբիկների բորբոքում:

ՊԱՐՈՆԻՄ [< пароним < հուն. para կից + onoma, ōnyma անուն], գ. (լեզվք.):

Հարանուն՝ իմաստով և հնչյունական կազմով առնչակից բառ, ինչպես՝ ցուցում - ցուցմունք, վերաբերել – վերաբերվել են:

ՊԱՐՈՆԻՄԻԱ [< паронимиа < հուն.], գ. (լեզվբ.): Հարանունություն:

ՊԱՐՈՆՈՄԱԶԻԱ [< парономазия < հուն. paronomasia < para մոտ, շուրջ, կից + onomazō անվանում եմ], գ. (գրկն.): Անտիկ ճարտասանության մեջ՝ բառերի հնչյունների վրա հիմնված ցանկացած խաղ՝ բառախաղ:

ՊԱՐՈՏԻՏ [< паротит < հուն. para մոտ, շուրջ, կից + us (ōtos) ականջ], գ. (բժշկ.): Հարականջային գեղձի բորբոքում:

ՊԱՐՍԵԿ [< парсек < պար(ալաքս) + լատ. secunda (divisio) երկրորդ բաժանում (աստիճանի, ժամի) վայրկյան], գ. (աստղգ.): Հեռավորության (երկարության) չափման միավոր աստղագիտության մեջ:

ՊԱՐՍԻԶՄ [< парсизм < անգլ. parseeism < Parsee պարս՝ զրադաշտականության հետևորդ], գ. (կրոն.): Զրադաշտական կրոնի ժամանակակից անվանումը Հնդկաստանում:

ՊԱՐՏԵՐ [< партер < ֆր. parterre < գետնին], գ. (թատր.): Թատերասրահի ստորին հարկը կամ բեմին մոտ կարգերի ամբողջությունը:

ՊԱՐՏԻԱ I [< партиа < ֆր. parti < գերմ. Partei < անգլ. party < լատ. pars (partis) մաս, խումբ], գ. (հնց.): Կուսակցություն՝ քաղաքական կազմակերպություն, որը արտահայտվում է այս կամ այն դասակարգի կամ սոցիալական շերտի ընդհանուր, հիմնական հետաքրքրությունները և զբաղվում է նրանց քաղաքական գործունեությամբ:

ՊԱՐՏԻԱ II [< партия < լատ. pars (partis) մաս, խումբ], գ. 1. (մարզ.): Մեկ ամբողջական խաղ սկզբից մինչև վերջ (շախմատում են): 2. (խսկց.): Ապարանքների որոշ (սովորաբար մեծ) քանակություն: 3. (երժշտ.): Բազմաձայն երաժշտական ստեղծագործության առանձին մաս, որ կատարվում է մեկ նվագարանով կամ մեկ երգչի կողմից, երգամաս, նվագամաս: 4. Դերերգ:

ՊԱՐՏԻԶԱՆ [< партизан < ֆր. partisan], գ. 1. (ռազմ.): Պարտիզանական պայքարի մասնակից, պարտիզանական ջոկատի անդամ: 2. *փխբ.* Ինքն իր նախաձեռնությամբ (նաև որոշ կամայականությամբ) գործող մարդ:

ՊԱՐՏԻԿՈՒԼՅԱՐԻԶՄ [< партикуляризм < ֆր. particularisme < լատ. particularis մասնակի], գ. (քղք. հնց.): Անջատողականություն (երկրի որևէ տարածքի՝ շրջանի անջատման քաղաքականություն):

ՊԱՐՏԻՏ [< партит < իտլ. partita, բառացի՝ մասերի բաժանված, լատ. partire բաժանել, բաշխել], գ. (երժշտ. հնց.): XVII-XVIII դդ. երաժշտության մեջ՝ խորալային մեղեդու երգեհոնային վարիացիաների տեսակ. նաև պարային պիեսներից կազմված գործիքային սյուիտի տարատեսակ:

ՊԱՐՏԻՏՈՒՐԱ [< партутра < իտլ. partitura], գ. (երժշտ.) 1. Ձայնալիր՝ երաժշտական ստեղծագործության բոլոր պարտիաների ամբողջությունը: 2. Այդպիսի ստեղծագործության բոլոր պարտիաները պարունակող նոտաների գիրք:

ՊԱՐՏՆՅՈՐ [< партнёр < անգլ. partner], գ. (խսկց.): Խաղընկեր, խաղակից՝ ինչոր խաղի (սպորտային), դերակատարության (թատրոնում են) մասնակից, նույն խնդրով զբաղվող:

ՊԱՐՑԵԼԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ [< парцелльное, парцеллярное (< ֆր. parcelle, բառացի՝ մաս, մասնիկ) хозяйство] - (պատմ.): Ընտանեկան-անհատական գյուղացիական տնտեսություն ստրկատիրական և ֆեոդալական հասարա-

կարգերում, որը գյուղատնտեսական արտադրության վարման հիմնական եղանակն էր, ուներ բնասպառողական բնույթ:

ՊԱՐՑԻԱԼ ՃՆՇՈՒՄ [< парциальное (< ուշ լատ. partialis մասնակի < լատ. pars (partis) մաս) давление] - (ֆիզ.): Մասնական ճնշում, որը կունենար գազային խառնուրդի կազմի մեջ մտնող գազը, եթե այն զբաղեցներ խառնուրդի ծավալին հավասար ծավալ նույն ջերմաստիճանում:

ՊԱՐՈՒՍԻՆ [< ռուս. парусина], գ. (խսկց.): Կանեփաթելի ամուր, կոպիտ գործվածք՝ առագաստալաթ:

ՊԱՐՕԴՈՆՏՈԶ [< пародонтоз < հուն. par(a) շուրջ, մոտ + odus (odontos) ատամ], գ. (բժշկ.): Ալվեոլային թարախահոսություն՝ հարատամային հյուսվածքի ախտահարում. արտահայտվում է ալվեոլային ելուստների առաջընթաց ապաճումով: Պատճառները լրիվ ճշտված չեն:

ՊԱՐՖՅՈՒՄԵՐԻԱ [< парфюмерия < ֆր. parfumerie < parfum լավ հոտ], գ. (խսկց.): Հոտավետ և կոսմետիկ ապրանքներ՝ օծանելիք, շպարման միջոցներ են:

ՊԱՑԻԵՆՏ [< пациент < լատ. patiens (patientis) տառապող], գ. (խսկց.): Բուժվող հիվանդ, խնամառու, խնամյալ:

ՊԱՑԻՖԻԶՄ [< пацифизм < լատ. pacificus խաղաղարար], գ. (քղք.): Ամեն կարգի պատերազմներից, այդ թվում նաև ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումներից հրաժարվելու կեղծ խաղաղասիրական քաղաքականություն և դրա գաղափարախոսությունը, կեղծ խաղաղասիրություն:

ՊԱՑԻՖԻԿԱՑԻԱ [< пацификация < ֆր. pacification < լատ. pacification < pax խաղաղություն + facere անել], գ. (քղք.): Խաղաղեցում, հնազանդեցում, զսպում (պատժիչ միջոցներով):

ՊԱՑԻՖԻՍՏ [< пацифист < ֆր. pacifiste < լատ.], գ. Պացիֆիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՊԱՈՒԶԱ [< пауза < լատ. pausa < հուն. pausis դադարեցում], գ. (խսկց.): 1. Դադար: 2. Ընդմիջում, ընդհատում:

ՊԱՈՒՇԱԼ [< паушальный < գերմ. pauschal], ած. (ֆին.): Ամբողջությամբ վերցրած, ամբողջական (օր.՝ ամբողջական գումար):

ՊԱՈՒՊԵՐ [< паупер < լատ. pauper աղքատ], գ. ած. Գոյության միջոցներից զուրկ, աղքատ, ընչազուրկ:

ՊԱՈՒՊԵՐԱՑՈՒՄ, գ. 1. Պաուպերանալը, պաուպերացնելը, պաուպերացվելը: 2. Աշխատավորության զանգվածային աղքատացումն ու ունեզրկումը:

ՊԱՈՒՊԵՐԻԶԱՑԻԱ [< пауперизация < լատ.], գ. Նույնն է՝ Պաուպերացում (2):

ՊԱՈՒՊԵՐԻԶՄ [< пауперизм < լատ.], գ. Աշխատավորական զանգվածների աղքատություն և ունեզրկություն:

ՊԵԳԱՍ [< пегас < հուն. Pēgasos < pēgē աղբյուր], գ. 1. (դից.): Առասպելական թևավոր նժույգ (հունական դիցաբանության մեջ): 2. (աստղգ.): Համաստեղություն: 3. Պեգասին թամբել՝ *փխբ.* բանաստեղծ դառնալ:

ՊԵԳՄԱՏԻՏՆԵՐ [< пегматиты < հուն. pēgma (pēgmatos) ամուր կապ], (հնք.): Խոշորահատիկ ապարներ՝ տեղադրված ոսպնյակների, բների կամ երակների և շտոկների ձևով:

ՊԵԴԱԳՈԳ [< педагог < հուն. paidagōgos < pais (paidos) երեխա, տղա + agō տանում, դաստիարակում եմ], գ. (հնց.): Ուսուցիչ(ուհի), մանկավարժ:

ՊԵԴԱԳՈԳԻԱ [< педагогия < հուն. paidagōgia], գ. (հնց.): Մանկավարժություն՝ երեխաների դաստիարակություն և կրթություն:

ՊԵԴԱԳՈԳԻԿԱ [< педагогика < հուն. paidagōgikē], գ. (գիտ. հնց.): Մանկավարժություն:

ՊԵԴԱԼ [< педаль < ֆր. pédale < լատ. pes (pedis) ոտք], գ. (խսկց.): Ոտնակ:

ՊԵԴԱՆՏ [< педант < ֆր. pe'dant < իտլ. pedante, բառացի՝ մանկավարժ, ուսուցիչ], ած. գ. 1. Ճայրահեղորեն բծախնդիր (մարդ): 2. Մանրախնդիր, ճշտակատար, մանրախույզ:

ՊԵԴԱՆՏՈՒԹՅՈՒՆ, գ. 1. Պեդանտ լինելը: 2. Պեդանտի վերաբերմունք՝ վարքագիծ: 3. Մանրախնդիր ճշտակատարություն, ծայրահեղ բծախնդրություն:

ՊԵԴԵԼ [< педель < գերմ. Pedell], գ. (պատմ.): Արևմտյան Եվրոպայում միջին դարերում՝ դատարանի ծառայող:

ՊԵԴԵՐԱՍՏԻԱ [< педерастия < հուն. paiderastia < (paides) տղա + ereskō սիրում եմ], գ. (խսկց.): Սեռական այլասերվածություն՝ արվամոլություն, արվագիտություն:

ՊԵԴԻԱՏՐ [< педиатр < հուն.], գ. (բժշկ.): Մանկաբույժ՝ մանկաբուժության մասնագետ:

ՊԵԴԻԱՏՐԻԱ [< педиатрия < հուն. pais (paidos) երեխա + iatreia բուժում], գ. (բժշկ.): Մանկաբուժություն՝ գիտություն երեխաների համակողմանի բուժման և հիվանդությունների կանխարգելման մեթոդների մասին:

ՊԵԴԻԿՅՈՒՐ [< педикюр < ֆր. pédicure < լատ. pes (pedis) ոտք + cura հոգ տանելը], գ. (խսկց.): Ոտքերի մատները հարդարելը

ՊԵԴԻԿՈՒԼՅՈԶ [< педикулёз < ֆր. pidiculose < լատ. pēdiculus ոջիլ], գ. (բժշկ.): Ոջլոտություն:

ՊԵԴՈԼՈԳԻԱ [< педология < անգլ. paedology < հուն. pais (paidos) երեխա + logōs գիտություն], գ. (գիտ.): Մանկաբանություն. ծագել է ԱՄՆ-ում XIX դ., ապա տարածվել է Արևմտյան Եվրոպայում. մանկաբանության հիմքում ընկած են՝ երեխայի ճակատագրի պայմանավորվածությունը կենսաբանական և հասարակական կանխադրույթներով, ժառանգականության գործոնով, իրեն շրջապատող միջավայրի անփոփոխությամբ են:

ՊԵԴՈՑԵՆՏՐԻԶՄ [< педоцентризм < հուն. paids երեխա, մանուկ + լատ. centrum կենտրոն], գ. (մանկ.): Հայացքների համակարգ մանկավարժության մեջ, որի կողմնակիցներն ուսուցման բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, հատկապես տարրական դպրոցում, պայմանավորում են երեխաների անմիջական, ինքնաբերական հետաքրքրություններով ու պահանջմունքով և ոչ թե հասարակության սոցիալ-տնտեսական պայմաններով:

ՊԵԴՈՖԻԼԻԱ [< педофилия < գերմ. Pädophilic < հուն. pais (paidos) երեխա + phileō սիրում եմ], գ. Սեռական այլասերվածության դրսևորման ձև՝ տղամարդու սեռական հակումը երեխաների նկատմամբ:

ՊԵԼԱԳԻԿ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ [< пелагические (< հուն. pelagikos) отлажения] - (երկրբ.): Խոր և բաց ծովերի աբիսալ զոնաների օրգանածին և ոչ օրգանածին նստվածքներ: Ձևավորվում են օվկիանոսի հատակին՝ ափերից շատ հեռու (300-500 կմ) և մեծ խորություններում (3-9 կմ):

ՊԵԼԱԳՐԱ [< пеллагра < իտլ. pelle agra կոպիտ, անհարթ մաշկ], գ. (բժշկ.): Ավիտամինոզների խմբի հիվանդություն, պայմանավորված է օրգանիզմում PP վիտամինի անբավարարությամբ:

ՊԵԼԵՆԳ [< пеленг < հոլանդ. peiling], գ. (գիտ.): Կողմնացույցի սլաքի և առարկայի երևալու կամ ձայնը լսվելու ուղղության կազմած անկյունը:

ՊԵԼԵՆԳԱՏՈՐ [< пеленгатор < հոլանդ.], գ. Պելենգելու հարմարանք՝ սարք:

ՊԵԼԻՏՆԵՐ [< пелиты < հուն. pēlos կավ], գ. (հնք.): Նրբահատիկ բեկորային, նստվածքային ապարներ:

ՊԵԼՄԵՆԻ [< пельмени < կոմի, ուդմ. pel' ńań < pel' ականջ + ńań հաց], գ. (խոհր.): Մսով լցոնված, մանրիկ խաշած խմոր:

ՊԵԼՈԹԵՐԱՊԻԱ [< пелотерапия < հուն. pēlos ցեխ + թերապիա], գ. (բժշկ.): Ցեխաբուժություն:

ՊԵԿ [< пек < անգլ. peck խեժ], գ. Ձյութերի կամ խեժերի թորումից որպես մնացորդ ստացվող կարծր կամ մածուցիկ սև նյութ. ստանում են պինդ վառելիքի ջերմային վերամշակման կամ նավթի ջերմաքայքայման միջոցով (նավթային պեկ):

ՊԵԿՏԻՆՆԵՐ [< пектины < հուն. pēktos սառած], գ. (բսբ.): Բարձրամոլեկուլային բազմաշաքարներ. պարունակվում են ցամաքային բույսերում (հատկապես հաղարջենու, գետնամորու, խնձորենու պտուղներում):

ՊԵԿՈՒԼԻՈՒՄ [< пекулий < լատ. peculium ունեցվածք, սեփականություն], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ շարժական և անշարժ ունեցվածք, որը հայտնի պայմաններով ստրկատերը տալիս էր իր որդիներին, իրենից կախում ունեցող այլ մարդկանց օգտագործելու՝ պահպանելով սեփականության իրավունքը ունեցվածքի նկատմամբ:

ՊԵՄԶԱ [< пемза < անգլ. pumice < լատ. pumex փրփուր], գ. (հնք.): Թեթև հրաբխային ապար, որ օգտագործվում է զանազան առարկաներ հղկելու՝ կոկելու ևն համար, չեչաքար, սնկաքար:

ՊԵՄԶԱԲԵՏՈՆ [< пемзабетон < պեմզա + ֆր. béton < լատ. bitumen լեռնային խեժ, ձյութ], գ. (շին.): Պեմզայի մանրուքից ու ցեմենտից պատրաստվող բետոնային խառնուրդ:

ՊԵՄԶԱԲԼՈԿ [< пемзаблок < պեմզա + անգլ. block], գ. (շին.): Պեմզայից և ցեմենտից պատրաստվող բլոկ՝ սալիկ (որպես շինանյութ):

ՊԵՄՖԻԳՈՒՍ [< пемфигус < գերմ. Pemphigus < հուն. pamphix (pemphigos) պղպջակ], գ. (բժշկ.): Մաշկային ծանր հիվանդություն, որը բնութագրվում է մաշկի վրա պղպջակների և լորձաթաղանթների առաջացմամբ:

ՊԵՅԶԱԺ [< пейзаж < ֆր. paysage < pays վայր, տեղ, երկիր], գ. (խսկց.): 1. Բնանկար, դաշտանկար: 2. Բնապատկեր, բնատեսարան:

ՊԵՅԶԱԺԻՍՏ [< пайзажист < ֆր. paysagiste], գ. (արվ.): Բնանկարիչ:

ՊԵՆԱԼ [< пенальти < անգլ. penalty, բառացի՝ պատիժ, տուգանք], գ. (խսկց. սպորտ.): Տուգանային հարված՝ ոչ մեծ տարածությունից դարպասին (ֆուտբոլ, հոկեյ ևն խաղերում) կատարվող հարված:

ՊԵՆԱԼ(ՏԻ) [< пенальти < անգլ. penalty, բառացի՝ պատիժ, տուգանք], գ. (սպորտ. խսկց.): Ֆուտբոլում՝ տասնմեկ մետրանոց տուգանային հարված:

ՊԵՆԱՏՆԵՐ [< Пенаты < լատ. Penates], գ. 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ ընտանիքի և օջախի, պետության բարեկեցությունը պահպանող աստվածներ: 2. *փխբ.* (հնց.): Տուն, օջախ, հայրենի տուն:

ՊԵՆԵԼՈՊԵ [< Пенелопа < հուն. Pēnelopē], գ. 1. (դից.): Հոմերոսի «Ոդիսական» դյուցազներգության հերոսուհի՝ Ոդիսևսի կինը, Տելեմաքոսի մայրը: Ամուսնու քսանամյա բացակայության ընթացքում մերժել է իր ձեռքը խնդրող բոլոր փեսացուներին: 2. *փխբ.* Հավատարիմ կին:

ՊԵՆԵՊԼԵՆ [< пенеплен < ֆր. pénéplaine, բառացի՝ համարյա հարթավայր], գ. (երկրբ.): Դենուդացիոն հարթավայր՝ առաջացած քայքայված լեռների տեղում

խոնավ կլիմայի պայմաններում:

ՊԵՆԻՑԻԼԻՆ [< пенициллин < լատ. Penicillinum], գ. (բժշկ.): Մի քանի տեսակի բորբոսասնկերից պատրաստվող բուժական պատրաստուկ:

ՊԵՆՆԻ [< пенни < անգլ. penny < ֆին. penni], գ. 1. (ֆին.): Նույնն է՝ Պենս: 2. Ֆիննական մանրադրամ = 1/100 ֆրանկի:

ՊԵՆՈԼՈԳԻԱ [< пенология < լատ. poena պատիժ + հուն. logōs գիտություն], գ. (իրավք.): Որոշ երկրների իրավունքում՝ գիտություն պատժի մասին, պատժագիտություն:

ՊԵՆՍ [< пенс < անգլ. pence < penny հոգ. թվից], գ. (ֆին.): Անգլիական մանրադրամ =1/12 շիլինգի:

ՊԵՆՍԻԱ [< пенсия < ֆր. pension < լատ. pensio վճարում], գ. (խսկց.): Թոշակ, կենսաթոշակ (տարիքային, հաշմանդամային):

ՊԵՆՍԻՈՆԵՐ [< пенсионер < ֆր. pensionnaire < լատ. pensio վճարում], գ. (խսկց.): Թոշակառու, կենսաթոշակառու:

ՊԵՆՄՆԵ [< пенсне < ֆր. pince - nez < pincer ճզմել, սեղմել + իտլ. nez քիթ], գ. Առանց ականջներին հենվող եղջերիկների ակնոց, որ քթի վրա ամրանում ու պահվում է զսպանակավոր սեղմիչներով, քթակնոց:

ՊԵՆՏԱ... [< пента... < հուն. pente հինգ] Բարդ բառերի առաջին բաղադրիչ «հինգ» նշանակությամբ:

ՊԵՆՏԱԳՈՆ [< Пентагон < հուն. pentagōnon], գ. 1. (երկրչ.): Հնգանկյուն: 2. (ռազմ.): ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության հնգանկյուն շենքը Վաշինգտոնում:

ՊԵՆՏԱՄԵՏՐ [< пентаметр < հուն. pentametros], գ. (տղչփ.): Հնգաչափ՝ բանաստեղծական չափ՝ հեկզամետրի հետ զուգակցվող:

ՊԵՆՏԱՏՈՆԻԿԱ [< пентатоника < պենտա... + հուն. tonos տոն], գ. (երժշտ.): Հնգատոն՝ հինգ աստիճանից բաղկացած անկիսատոն օկտավային լադ, որի հնչյունները կարող են դասավորվել հաջորդական մաքուր կվինտաներով:

ՊԵՆՏՈԴ [< пентод < պենտա... + (էլեկտր)ոդ], գ. (էլեկտր.): Էլեկտրոնային լամպ 2 էլեկտրոդով՝ կատոդ, անոդ և 3 ցանց (կառավարող, էկրանող, հակադինատրոնային):

ՊԵՆՏՈԶՆԵՐ [< пентозы < հուն.], գ. (քիմ.): Պարզ ածխաջրեր, որոնց մոլեկուլը բաղկացած է հինգ ատոմից:

ՊԵՆՈՒԱՐ, ՊԵՆՅՈՒԱՐ [< пеньюар < ֆր. peignoir], գ. Կանացի առավոտյան զգեստ, այգազգեստ:

ՊԵՈՆ [< пеон < հուն. paiēōn հիմն՝ ձոնված գլխավորապես Ապոլլոնին], գ. (տղչփ.): Տաղաչափական հասկացություն. քառավանկ բանաստեղծական ոտք: Անտիկ պոեզիայում ուներ մեկ երկար (շարժուն դրությամբ) և երեք կարճ վանկեր:

ՊԵՊԼՈՒՄ [< пеплум < լատ. peplum], գ. (պատմ.): Կանացի վերնազգեստ, որ գործածվել է Հին Հունաստանում և Հին Հռոմում:

ՊԵՊՍԻ ԿՈԼԱ [< пепси-кола < անգլ. pepsi-cola < հուն. pepsis մարսողություն + նոր լատ. Cola կոլա], գ. (խոհր.): Տոնիկ զովացուցիչ խմիչք:

ՊԵՊՍԻՆ [< пепсин < հուն. pepsis մարսում, մարսողություն], գ. 1. (կենսբ.): Ստամոքսահյութի՝ սպիտակուցներ լուծող և սննդի մարսողության համար անհրաժեշտ հյութ՝ ֆերմենտ: 2. (դղգրծ.): Այդ ֆերմենտներից պատրաստվող դեղամիջոց:

ՊԵՊՏԻԴՆԵՐ [< пептиды < հուն. peptos], գ. (քիմ.): Օրգանական նյութեր, որոնք

կազմված են պեպտիդային կապերով իրար միացած ամինաթթվային մնացորդներից:

ՊԵՊՏՈՆ [< пептон < հուն. peptos մարսական], գ. (կենսբ.): Մարսողության ընթացքում ստամոքսային ֆերմենտի (պեպսինի) ազդեցությամբ լուծված սպիտակուցը:

ՊԵՌԼԻՏ [< перлит < ֆր. perlite], գ. 1. (հնք.): Պողպատի և թուջի կառուցվածքային բաղադրիչներից մեկը՝ երկաթի և երկաթ-կարբիդի խառնուրդը: 2. (շին.): Ջերմամեկուսիչ նյութ, որ ստացվում է ապակեկերպ հրաբխային ապարների (գլխավորապես օպսիդիանի) թրծումով (օգտագործվում է շինարարական կառուցվածքների և ջերմային կայանքների մեջ):

ՊԵՍԵՏ [< песета < իսպ. peseta], գ. (ֆին.): Իսպանիայի դրամական միավորը:

ՊԵՍԻՄԻԶՄ [< пессимизм < լատ. pessimus վատթարագույն], գ. (խսկց.): Հոռետեսություն:

ՊԵՍԻՄԻՍՏ [< пессимист < լատ.], գ. ած. (խսկց.): Հոռետես, պեսիմիզմի հետևորդ՝ ներկայացուցիչ:

ՊԵՍՈ [< песо < իսպ. peso], գ. 1. (ֆին.): Փողի միավոր Մեքսիկայում, Կուբայում, Չիլիում և մի շարք այլ երկրներում: 2. (պատմ.): Իսպանական հին արծաթադրամ:

ՊԵՍՏԻՑԻԴ(ՆԵՐ) [< пестициды < գերմ. Pestiziden < լատ pestis վարակ + caedere սպանել], գ. (քիմ.): Բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ կիրառվող միջոցներ:

ՊԵՏԱՐԴ(Ա) [< петарда < գերմ. Petarde < ֆր. pétard], գ. 1. Ճայթռուկ: 2. (հնց.): Ռումբ: 3. Վառոդով լցված թղթե արկ:

ՊԵՏԵԽԻԱ [< петехия < իտլ. petecchie բիծ, ցան], գ. (բժշկ.): Մաշկի կամ լորձաթաղանթի վրա կետային արյան զեղում:

ՊԵՏԻՆԳ [< петтинг < անգլ. petting < to pet գուրգուրվել], գ. (բժշկ.): Զուգընկերների՝ սեռական բավարարվածության հասնելը փոխադարձ գուրգուրանքի միջոցով (առանց սեռական ակտի):

ՊԵՏԻՏ [< петит < ֆր. petit փոքրիկ], գ. (տպգր.): Մանրատառ:

ՊԵՏԻՑԻԱ [< петиция < լատ. petitio], գ. (գրք.): 1. Խնդրագիր: 2. Համախոսական, հանրագետ:

ՊԵՏՐԻՖԻԿԱՑԻԱ [< петрификация < հուն. petra քար, ժայռ + լատ. facere անել], գ. (երկրբ.): Քարացում:

ՊԵՏՐՈԳՐԱՖ [< петрограф < հուն. petra քար ժայռ + graphō գրում եմ], գ. Քարագետ՝ քարագիտության մասնագետ:

ՊԵՏՐՈԳՐԱՖԻԱ [< петрография < հուն. petrographia], գ. (գիտ.): Քարագիտություն՝ գիտություն ապարների, նրանց միներալային և քիմիական կազմի, ստրուկտուրաների և տեքստուրաների, երկրակեղևում և Երկրի մակերևույթին տեղադրման ու տեղաբաշխման պայմանների, առաջացման ու փոփոխությունների մասին:

ՊԵՏՐՈԼՈԳ [< петролог < петро < հուն. petra + logōs գիտություն], գ. Տե՛ս Պետրոգրաֆ:

ՊԵՏՐՈԼՈԳԻԱ [< петрология < հուն.], գ. (գիտ.): Տե՛ս Պետրոգրաֆիա:

ՊԵՐԳԱՄԵՆՏ [< пергамент < հուն. pergamēnos < Pergamos քաղաք (Պերգամ) Փոքր Ասիայում], գ. Մագաղաթ՝ կենդանու (առավելապես հորթի, այծի ևն) հատուկ եղանակով մշակվող մորթի, որ գործածվում է գրելու համար որպես թուղթ:

ՊԵՐԳԱՄԻՆ [< пергамин < հուն. pergamēnos], գ. 1. Փաթթոցային ջրամեկուսիչ

նյութ, որը ստացվում է՝ ծածկի ստվարաթուղթը թեթև նավթային բիտումներով տոգորելով: 2. Առանց լցանյութի սպիտակեցրած թաղանթանյութից պատրաստված կիսաթափանցիկ սոսնձած թուղթ:

ՊԵՐԳՈԼԱ [< пергола < իտլ. pérgola], գ. Բուսակամար՝ կանաչապատ զրուցարան կամ թեթև այուներով, ճաղակամարներով պատուտաճաղ միջանցք: Ծառայում է որպես հովանոց՝ շոգից պատսպարվելու համար:

ՊԵՐԵՍՏՐՈՅԿԱ [< ռուս. перестройка], գ. (քղք. հնց..): Վերակառուցում:

ՊԵՐԻ... [< пери... < հուն. peri...շուրջը, մոտ, կողքին] Բարդ բառերի մաս, որը նշանակում է շուրջը, մոտ:

ՊԵՐԻԳԵՅ, ՊԵՐԻՀԵՅ [< перигей < пери < հուն. peri շուրջ + gē հող, գետին], գ. (աստղգ.): Մերձակետ՝ Լուսնի ուղեծրի՝ Երկրին ամենամոտ կետը:

ՊԵՐԻԴԵՐՄ [< перидерма < պերի... + derma մաշկ], գ. (կենսբ. բսբ.): Բազմամյա (հազվադեպ միամյա) բույսերի ընձյուղների, արմատների, պալարների և կճղարմատների ծածկող հյուսվածք:

ՊԵՐԻԴՈՏԻՏ [< перидотит < ֆր. péridot պերիդոտ կամ օլիվին], գ. (հնք.): Խորքային ալտրահիմքային ապար՝ կազմված գլխավորապես օլիվինից (70-30%) և պիրոքսեններից (30-70%), երբեմն հոռնբլենդից:

ՊԵՐԻԼԱ [< ռուս. перила], գ. (խսկց.): Բազրիք, ճաղաշարք:

ՊԵՐԻԿԱՐԴ [< перикард < պերի... + հուն. kardia սիրտ], գ. (կզմխս.): Սրտապարկ:

ՊԵՐԻԿԱՐԴԻՏ [< перикардит < հուն.], գ. (բժշկ.): Սրտապարկի բորբոքում:

ՊԵՐԻԿԱՐՊԻՈՒՄ [< перикарпий < հուն. peri շուրջ, կից, մոտ + karpos պտուղ], գ. (բսբ.): Պտղապատ:

ՊԵՐԻՄԵՏՐ [< периметр < գերմ. Perimeter < հուն. peri շուրջ, կից, մոտ + metreō չափում եմ], գ. (մաթ.): Պարագիծ:

ՊԵՐԻՈԴ [< период < հուն. periodos շրջան], գ. (խսկց.): Շրջան, ժամանակամիջոց, փուլ, ժամանակահատված:

ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱ [< периодизация < հուն.], գ. (հնց.): Պարբերացում, շրջանաբաժանում՝ պատմական հաջորդական փուլերի բաժանումը:

ՊԵՐԻՈԴՈՆՏԻՏ [< периодонтит < հուն. peri + edus (odontos) ատամ], գ. (բժշկ.): Ատամի արմատին կից թաղանթի բորբոքում:

ՊԵՐԻՈՍՏԻՏ [< периостит < գերմ. Periostitis < հուն. peri + osteon ոսկոր], գ. (բժշկ.): Վերնոսկրի բորբոքում:

ՊԵՐԻՊԱՏԵՏԻԿ [< перипатетик < հուն. peripatētikos զբոսնող], ած. գ. Արիստոտելի ուսմունքի հետևորդ (ըստ ավանդության՝ Արիստոտելը փիլիսոփայություն էր ավանդում իր աշակերտներին զբոսանքի ժամանակ):

ՊԵՐԻՊՏԵՐ(ՈՍ) [< периптер < հուն. peripteron], գ. (ճարտ.): Հին հունական տաճարի տիպ, որը ուղղանկյուն հատակագծով, չորս կողմից այունաշարով շրջափակված կառույց է:

ՊԵՐԻՍԿՈՊ [< перископ < հուն. periskopeō նայում եմ շուրջս], գ. 1. Թաքստոցներից, տանկերից, սուզանավերից դիտումների համար նախատեսված օպտիկական սարք:

ՊԵՐԻՍՏԻԼ [< перистиль < հուն. peristylon], գ. (ճարտ.): Ուղղանկյուն բակ և այգի, հրապարակ, դահլիճ, որ չորս կողմից շրջափակված է ծածկված այունաշարով:

ՊԵՐԻՏԵԿՏԻԿԱ [< перитектика < հուն.], գ. (ֆիզ.): Հեղուկ, որը հաստատուն ճնշման տակ հավասարակշռված է բաղադրիչների քանակին հավասար թվով

բյուրեղական ֆազերի հետ, և ջերմաստիճանն իջնելիս բյուրեղական ֆազերի թիվը պակասում է մեկով:

ՊԵՐԻՏՈՆԻՏ [< перитонит < հուն. peritonaion որովայնաթաղանթ], գ. (բժշկ.): Որովայնաթաղանթի բորբոքում:

ՊԵՐԻՑԵՄԵՆՏԻՏ [< перицементит < հուն. peri + ցեմենտ], գ. (բժշկ.): Տե՛ս Պերիոդոնտիտ:

ՊԵՐԻՕԴՈՆԻՏ [< периодонит < պերի... + հուն. odontos ատամ], գ. (բժշկ.): Ատամնային թաղանթի (շրջոսկր) և դրան հարակից հյուսվածքների բորբոքում:

ՊԵՐԻՖԵՐԻԱ [< периферия < հուն. periphereia շրջագիծ], գ. Ծայրամաս, ծայրագավառ:

ՊԵՐԻՖՐԱԶ [< перифраза < ֆր. pérіphrase < հուն. peri շուրջը + phrasō խոսում եմ, ասում եմ], գ. (լեզվբ. գրկն.): Շրջասություն՝ նախադասության իմաստի արտահայտումը այլ բառերով:

ՊԵՐԼԱՄՈՒՏՐ [< перламутр < գերմ. Perlmutter], գ. 1. (կենսբ.): Գաղտակուրի մաս կազմող նյութ, որն օգտագործում են զարդեղենի, կոճակների արտադրության մեջ: 2. (տեխ.): Ավտոմեքենաների ներկի տեսակ:

ՊԵՐԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ [< перлюстрация < լատ. perlustratio ծանոթանալ (դիտելով, կարդալով)], գ. Գաղտնընթերցում նամակների ևն (պետական մարմինների կողմից):

ՊԵՐԿԱԼ [< перкаль < ֆր. percale < պարս.], գ. Նուրբ, ամուր, հարթ բամբակյա կտավ:

ՊԵՐԿՈՒՍԻԱ [< перкуссия < լատ. percussio բախում], գ. (բժշկ.): Ընդբախում՝ մուրճիկի կամ մատների հարվածներով օրգանիզմի (մարմնի) վիճակի ուսումնասիրության մեթոդ:

ՊԵՐՀԻԴՐՈԼ [< пергидроль < լատ. per վեր + հուն. hydōr ջուր], գ. (քիմ.): Ջրածնի պերօքսիդ:

ՊԵՐՀԻԴՐՕՔՍԻԼ [< пергидроксиль < լատ. por + հուն. hydōr ջուր + oxys թթու], գ. (քիմ.): Գերհիդրօքսիլ՝ HO_2, ջրածնի վերգերօքսիդային միջանկյալ մասնիկ, որը առաջանում է այրման, թթվածնով և ջրածնի գերօքսիդով օքսիդացման երևույթների ժամանակ:

ՊԵՐՄԱԼՈՅ [< пермаллой < ֆր. < անգլ. permalloy], գ. (քիմ.): Երկաթի հետ նիկելի համաձուլվածքների խմբի ընդհանուր անվանումը, որոնք բնութագրվում են մեծ մագնիսական թափանցելիությամբ: Օգտագործվում են ռադիոտեխնիկայում, կապի տեխնիկայում և թույլ հոսանքների կիրառման այլ բնագավառներում:

ՊԵՐՄԱՆԵՆՏ [< перманент < ֆր. permanent < լատ. permanens (permanentis) մշտական, անընդմեջ], 1. ած. Անընդհատորեն շարունակվող, անընդհատական: 2. գ. ած. Կանանց մազերի հարդարանքի ձև՝ եղանակ:

ՊԵՐՄԵԱՄԵՏՐ [< пермеаметр < լատ. permeare անցնել միջով+ հուն. metreō չափում եմ], գ. (ֆիզ.): Ֆերոմագնիսական նյութերի մագնիսային բնութագրումների չափման սարք՝ հարմարանք:

ՊԵՐՇ [< перш < ֆր. perche], գ. Լանգառք, լարախաղացի ձող:

ՊԵՐՊԵՆԴԻԿՈՒԼՅԱՐ [< перпендикуляр < լատ. perpendicularis], գ. ած. (մաթ.): Ուղղահայաց:

ՊԵՐՊԵՏՈՒՈՒՄ ՄՈԲԻԼ(Ե) [< перпетуум — мобиле < լատ. perpetuum mobile հավերժ շարժվող], 1. (երժշտ.): «Հավերժական շարժում»՝ վիրտուոզ բնույթի գործիքային պիեսի անվանում, որ հանդիպում է XIX դ.: Լայնորեն ճանաչված են Ֆ.

Մենդելսոն-Բարտոլդիի, Ն. Պագանինիի այդ անվանումով պիեսները: 2. (տեխ.): Հավերժական շարժիչ:

ՊԵՐՍԵՊՏՐՈՆ [< персептрон < անգլ. perceptron, գերմ. Perzeptron < լատ. perceptio ճանաչում, ընկալում], գ. (տեխ.): Ընկալումը մոդելավորող սարք:

ՊԵՐՍԵՎԵՐԱՑԻԱ [< персеверация < լատ. perseveratio համառություն], գ. (բժշկ. հոգեբ.): Ախտաբանական հոգեվիճակ, որն արտահայտվում է բառի, նախադասության, շարժման, գործողության համառ և աննպատակ կրկնությամբ՝ գիտակցված կամ չգիտակցված:

ՊԵՐՍՈՆ(Ա) [< персона < լատ. persona անձ, անձնավորություն], գ. (խսկց.): 1. Գործող անձ (գործածվում է գեղարվեստական գրականության մեջ՝ ոճական նպատակով): 2. Առհասարակ՝ անձ, անձնավորություն:

ՊԵՐՍՈՆԱ ԳՐԱՏԱ [< персона грата < լատ. persona grata, բառացի՝ հաճելի՝ ցանկալի անձնավորություն], գ. (դվնգ.): Անձ, որի թեկնածությունը որևէ պետության դիվանագետի պաշտոնում հովանավորված է այդ պետության կողմից:

ՊԵՐՍՈՆԱԺ [< персонаж < լատ. persona անհատականություն, անձ], գ. (հնց.): Գործող անձ (դրամայի կամ վեպի մեջ):

ՊԵՐՍՈՆԱԼ [< персонал < լատ. personalis անձնական], (հնց.): 1. ած. Անձնական, անհատական: 2. գ. Անձ: 3. Անձնակազմ:

ՊԵՐՍՈՆԱԼԻԶՄ [< персонализм < լատ. persona], գ. (փիլ.): Ժամանակակից փիլիսոփայական ուղղություն, որը ձևավորվել է XIX դ. վերջին ԱՄՆ-ում. նրա գոյաբանական հիմնադրույթը իդեալիստական պլյուրալիզմն է՝ բազմաթիվ անձնավորությունների, կամքերի, գիտակցությունների անկախ և ինքնաբավ գոյության ընդունումը:

ՊԵՐՍՈՆԱ ՆՈՆ ԳՐԱՏԱ [< персона нон грата < լատ. persona non grata անցանկալի անձնավորություն], գ. (դվնգ.): Անձ, որի թեկնածությունը որևէ պետության դիվանագետի պաշտոնում մերժված է այդ պետության կողմից:

ՊԵՐՍՊԵԿՏԻՎ(Ա) [< перспектива < ֆր. perspective < լատ. perspicere նայել միջից՝ միջով], գ. (խսկց.): Հեռանկար:

ՊԵՐՎԵՐՍԻԱ [< перверсия < լատ. perversio, բառացի՝ շրջում], գ. (բժշկ.): Սեռական հարաբերությունների նորմաներից շեղվելը, սեռական այլասերվածություն:

ՊԵՐՐՈՆ [< перрон < ֆր. perron], գ. (հնց.): Կառամատույց:

ՊԵՐՑԵՊՑԻԱ [< перцепция < լատ. peceptio ընկալում], գ. (փիլ.): Ընկալում, ըմբռնում:

ՊԵՐՕՔՍԻԴ [< пероксид < հուն. per +oxys թթու], գ. (քիմ.): Քիմիական տարրի օքսիդացման ծայրահեղ աստիճանը, գերօքսիդ:

ՊԵՐՖԵԿՏ [< перфект < լատ. perfectum կատարյալ], գ. (քեր.): Կատարյալ կերպի ժամանակ, անցյալ կատարյալ:

ՊԵՐՖՈՐԱՏՈՐ [< перфоратор < լատ. perforare ծակոտել, հորատել], գ. (տեխ.): 1. Հորատամեքենա: 2. Հորատիչ, գայլիկոնիչ:

ՊԵՐՖՈՐԱՑԻԱ [< перфорация < լատ. perforare ծակոտել, հորատել], գ. 1. (երկրբ.): Հորատում: 2. (բժշկ.): Խոռոչ: 3. (գիտ.): Սորատում, սորատավորում:

ՊԵՐՖՈՒԶԻԱ [< перфузия < լատ. perfusio ցնցուղում, լվացում], գ. (բժշկ.): 1. Հեղուկի (օր.՝ արյան) ներմղումը մարմնի մասերի, արյունատար անոթների կամ ամբողջ մարմնի տարածքով բուժական կամ փորձարարական նպատակներով: 2. Հատուկ սարքերի օգնությամբ (սրտի ամբողջական կամ մասնակի փոխարինմամբ) արյան շրջանառություն, արյան արհեստական շրջանառություն:

ՊԻ [< пи < հունարեն այբուբենի π տառը], (մաթ.): Մաթեմատիկական նշան, որն օգտագործվում է որոշակի թիվ՝ շրջանագծի և դրա տրամագծի երկարությունների հարաբերությունը նշանակելու համար (π = 3.14159): Առաջին անգամ օգտագործել է անգլ. մաթեմատիկոս Ու. Ջոնսոնը:

ՊԻԱՆԻՆՈ [< пианино < իտլ. pianino], գ. (հնց. խսկց.): Դաշնամուր:

ՊԻԱՆՈ [< пиано < իտլ. piano, բառացի՝ մեղմ, կրճատ գրվում է՝ P], գ. (երժշտ.): Դինամիկայի հիմնական նշումներից մեկը, p: Հակադիր է ֆորտեին:

ՊԻԱՆԻՍՍԻՄՈ [< пианиссимо < իտլ. pianissimo], գ. (երժշտ.): pp՝ շատ մեղմ:

ՊԻԱՐ (ՓԻԱՌ) [< пиар < անգլ. PR՝ public relations հասարակական հարաբերություններ], գ. (քղք.): Հասարակության մեջ որևէ անձի կամ կազմակերպության վերաբերյալ վերաբերմունքի ձևավորում. *սև պիար (փիառ)՝* բացասական վերաբերմունքի ձևավորում:

ՊԻԳՄԵՆՏ [< пигменты < լատ. pigmentum ներկ], գ. (կենսբ.): Գունակ, գունանյութ՝ օրգանիզմների հյուսվածքների կազմության մեջ մտնող գունավոր նյութեր:

ՊԻԳՄԵՆՏԱՑԻԱ [< пигментация < լատ.], գ. (կենսբ.): Գունավորում, գունառում:

ՊԻԵԶԱ [< пиеза < հուն. piezō ճնշում եմ, սեղմում եմ], գ. (ֆիզ.): Ճնշման և մեխանիկական լարման միավորը՝ մետր-տոննա-վայրկյան (ՄՏՎ) հնացած համակարգում:

ՊԻԵԼԱԳՐԱՖԻԱ [< пиелография < հուն. pyelos ավազան + graphō գրում եմ], գ. (բժշկ.): Երիկամների ավազանների և սկահակների ռենտգենյան հետազոտման մեթոդ:

ՊԻԵՍ [< пьеса < ֆր. pièce], գ. 1. (թատր.): Թատերական գրվածք՝ երկ: 2. (երժշտ.): Երաշժտական գործիքային փոքր ստեղծագործություն:

ՊԻԹԵԿԱՆԹՐՈՊՈՍ [< питекантроп < հուն. pithēkos կապիկ + anthrōpos մարդ], գ. (հնէաբ.): Հնագույն մարդկանց ներկայացուցիչ, որի ոսկորները գտնվել են Ճավա կղզում, հայտնաբերել է հոլանդ. գիտնական Է. Դյուբուան 1890-92 թթ.:

ՊԻԺԱՄԱ [< пижама < անգլ. pyjamas < ուրդու լեզվից], գ. (խսկց.): Շապկից և վարտիքից բաղկացած գիշերային կամ առհասարակ տնային, ինչպես և հիվանդանոցային թեթև զգեստ, ննջազգեստ:

ՊԻԺՈՆ [< пижон < ֆր. pigeon աղավնի], գ. ած. (ժրգ.): Իր հարդարանքին ու նորաձևություններին բծախնդրությամբ հետևող երիտասարդ, պճնամոլ:

ՊԻԼԻԳՐԻՄ [< пилигрим < հին վերին գերմ. piligrīm < լատ. peregrinus օտարական], գ. 1. (կրոն.): Ուխտավոր, թափառական կրոնավոր: 2. (խսկց.): Թափառական:

ՊԻԼՅԱՍՏՐ [< пилястра < ֆր. pilastre < իտլ. pilastro], գ. (ճարտ.): Պատի ելուստի՝ նրա մեջ կառուցված քառանկյունի սյունի ձևով հարթ որմնասյուն:

ՊԻԼՅՈՒԼԱ [< пилюля < լատ. pilula ունդ], գ. (բժշկ. խսկց.): Գնդաձև դեղահաբ:

ՊԻԼՈՏ [< пилот < ֆր. pilote], գ. (խսկց.): Օդաչու, օդանավորդ:

ՊԻԼՈՏԱԺ [< пилотаж < ֆր. pilotage], գ. (խսկց.): Սավառնորդություն:

ՊԻԼՈՏԿԱ [< ռուս. пилотка], գ. (խսկց.): Զինծառայողների ամառային գլխարկ (նախապես՝ միայն օդաչուների):

ՊԻԿ [< пик < ֆր. pic], գ. (խսկց.): 1. Սարի, լեռի սրածայր գագաթը: 2. Ինչ-որ բանի զարգացման ամենաբարձր աստիճանը, բարձրակետ:

ՊԻԿԱԴՈՐ [< пикадор < իսպ. picador], գ. Ցլամարտում՝ հեծյալը, որը պիկայի (նիզակի) միջոցով ծակելով կատաղեցնում է ցուլին:

ՊԻԿԱՆՏ [< пикантный < ֆր. piquant], ած. (գրք.): 1. Կծու, կծվահամ: 2. *փխբ.* Իր անսովորությամբ՝ արտակարգությամբ ևն մեծ հետաքրքրություն առաջացնող: 3. *փխբ.* Ոչ բոլորովին պատշաճ՝ վայելուչ: 4. *փխբ.* Հրապուրիչ, զգացմունք շարժող:

ՊԻԿԱՊ [< пикап < անգլ. pick-up < to pick up բարձրացնել], գ. (տեխ.): Ոչ մեծ ավտոմեքենա, սովորաբար բաց թափքով՝ ուղևորներ և բեռներ տեղափոխելու համար:

ՊԻԿԵՏ [< пикет < ֆր. piquet], գ. 1. (թղթխղ.) Թղթախաղի մի տեսակ: 2. Ուղեկալ: 3. Պահակախումբ, դիտախումբ: 4. (երկրբ.): Համարակալված նշանաձող, ցցանիչ (հողաչափական աշխատանքների համար): 5. (պատմ.) ԽՍՀՄ-ում՝ երկաթուղային գծերի չափման միավորը = 100 մ:

ՊԻԿՆԻԿ [< пикник < անգլ. picnic], գ. Խմբով կազմակերպված զբոսանք (խրախճանք)՝ քաղաքից դուրս, զբոսախնջույք:

ՊԻԿՏՈԳՐԱՄԱ [< пиктограмма < լատ. pictus գույներով գրված, նկարված + հուն. gramma գիր, գիծ], գ. Տե՛ս Պիկտոգրաֆիա:

ՊԻԿՏՈԳՐԱՖԻԱ [< пиктография < լատ. pictus գույներով գրված՝ նկարված + հուն. graphō գրում եմ], գ. Պատկերագրության՝ գրության համակարգ, որ հիմնված է գծագրությունների և պայմանանշանների (պիկտոգրամաների) միջոցով խոսքի բովանդակության հաղորդման վրա:

ՊԻԿՐԻՏ [< пикрит < հուն.], գ. (հնք.): Տիպիկ՝ լրիվ բյուրեղային, հրային ապար:

ՊԻԿՈՒԼԻ [< пикули < անգլ. pickles], գ. (խոհր.): Թթվեցրած, մանր կտրատված բանջարեղեններ:

ՊԻՆԳ-ՊՈՆԳ [< пинг-понг < անգլ. ping-pong], գ. (սպորտ.): Սեղանի թենիս՝ սպորտային խաղի հնացած անունը:

ՊԻՆԳՎԻՆ [< пингвин < ֆր. pingouin, pinguin < լատ. pinguis ճարպոտ, գեր], գ. (կենդբ.): Կարճ թևերով արկտիկական ծովային թռչուն, թանձրահավ:

ՊԻՆԻԱ [< пиния < լատ. pinus սոճի], գ. (բսբ.): Իտալական սոճի:

ՊԻՆՉԵՐ [< пинчер < անգլ. pincher], գ. (կենդբ.): Ոչ մեծ՝ կարճ մազով և երկար ականջներով շների տեսակ՝ ցեղ:

ՊԻՆՉ ԷՖԵԿՏ [< пинч эффект < անգլ. pinch նեղացում, սեղմում] - (էլեկտր.): Պարպման ինքնասեղմման էֆեկտ, պարպման սեղմումը իր միջով անցնող հոսանքի ազդեցությամբ, որը տեղի է ունենում բավական մեծ հոսանքի ուժի դեպքում:

ՊԻՆՏԱ [< пинта < ֆր. pinte], գ. Հեղուկների չափ = 0.9 լիտրի Ֆրանսիայում (հնց.), իսկ Անգլիայում՝ 0.5 լիտրի:

ՊԻՆՑԵՏ [< пинцет < ֆր. pincette], գ. (խսկց.): Նրբունելի:

ՊԻՋԱԿ [< пиджак < անգլ. peajacket], գ. (խսկց.): Տղամարդու կոստյումի վերևի մասը, ինչպես և առանձին հագնելու կիսաբաճկոն, բաճկոն:

ՊԻՈՆ [< пион < լատ. Paeonia], գ. (բսբ.): Քաջվարդ՝ գորտնուկազգիների ընտանիքին պատկանող ծաղկաբույս, մեծածաղիկ:

ՊԻՈՆԵՐ I [< пионер < ֆր. pionnier առաջնեկ, ռահվիրա, հիմնադիր], գ. 1. (հնց.): Առաջին անգամ երկիր թափանցած և այնտեղ բնակություն հաստատած մարդ: 2. *փխբ.* Որևէ բնագավառում նոր ուղղություն սկզբնավորող՝ նոր ուղղություններ կամ մեթոդներ հիմնադրող մարդ, հիմնադիր, ռահվիրա:

ՊԻՈՆԵՐ II [< пионер < ֆր. pionnier], գ. (ռազմ. հնց.): Սակրավոր զինվոր:

ՊԻՈՆԵՐ III [< пионер < ֆր. pionnier], գ. (պատմ.): ԽՍՀՄ-ում կամավոր մանկական կազմակերպության անդամ:

ՊԻՈՐ(Ռ)ԵԱ [< пиорея < հուն. pyon թարախ + rheō հոսում եմ], գ. (բժշկ.):

Թարախածորանք (լնդերի հիվանդություն):

ՊԻՊԵՏԿԱ [< пипетка < ֆր. pipette խողովակիկ], գ. (բժշկ. տեխ.): Ապակյա անոթ՝ հեղուկների ծավալը ստույգ որոշելու համար. օգտագործվում է նաև աչքի, քթի, ականջի մեջ հեղուկ դեղորայք կաթեցնելու համար:

ՊԻՌՀԻՔՈՍ [< пиррихий < հուն. pyrrichios < pyrrichē մարտական պար], գ. (տղչփ.): 1. Անտիկ տաղաչափության մեջ՝ երկու կարճ վանկերից բաղկացած խումբ: 2. Շեշտանկում (յամբական կամ քորեյական ոտանավորում՝ երկու իրար հաջորդող անշեշտ վանկեր):

ՊԻՍՏՈԼ [< пистол < ֆր. pistole, իտլ. pistola], գ. (պատմ.): Հին ոսկեդրամ (Իսպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում ևն):

ՊԻՍՏՈԼԵՏ [< пистолет < ֆր. pistolet], գ. (ռազմ. խսկց.): Ատրճանակ:

ՊԻՍՏՈՆ [< пистон < ֆր. piston], գ. (խսկց.): Հրապատիճ:

ՊԻՍՈՒԱՐ [< писсуар < ֆր. pissoir < pisser միզել], գ. (խսկց.): Միզարան:

ՊԻՐԱՄԻԴ [< пирамида < հուն. pyramis (pyramidos)], գ. (խսկց.): Բուրգ (տարբեր նշանակություններով):

ՊԻՐԱՄԻԴՈՆ [< пирамидон < հուն. pyr կրակ + ամիդ թթուների քիմիական անվանումը], գ. (դղգրծ.): Ջերմիջեցնող և ցավամոք դեղամիջոց:

ՊԻՐԱՏ [< пират < լատ. pirata], գ. (խսկց.): Ծովահեն:

ՊԻՐԱՐԳԻՐԻՏ [< пираргирит < հուն. pyr կրակ + agryros արծաթ], գ. (քիմ.): Արծաթի հանքանյութ:

ՊԻՐԻԴԻՆ [< пиридин < հուն.], գ. (քիմ.): Թույլ հիմք է, թթուների հետ առաջացնում է աղեր: Լայնորեն օգտագործվում է (որպես լուծիչ) ներկանյութերի, պեստիցիդների, դեղանյութերի օրգանական սինթեզում, նաև կաուչուկների արտադրությունում:

ՊԻՐԻՏ [< пирит < հուն. piritēs], գ. (քիմ.): Ծծմբային կոլչեդան, հրաքար: Ծծմբի, ծծմբական թթվի և երկաթի արջասպի ելանյութ:

ՊԻՐՈԳԱԼԱԹԹՈՒ [< пирогалловая кислота < հուն. pyr + լատ. galla], գ. (քիմ.): Եռատոմ ֆենոլ: Օդում արագ մգացող, անհոտ բյուրեղային նյութ, որը օգտագործվում է լուսանկարչության մեջ, ներկանյութերի սինթեզի համար:

ՊԻՐՈԷԼԵԿՏՐԻԿՆԵՐ [< пироэлектрики < հուն. pyr հուր + էլեկտրիկներ], գ. (էլեկտր.): Բյուրեղային դիէլեկտրիկներ, որոնց հատուկ է ինքնակամ բևեռացումը, այսինքն՝ բևեռացում առանց արտաքին ներգործությունների:

ՊԻՐՈԹԵՐԱՊԻԱ [< пиротерапия < պիրո... + թերապիա], գ. (բժշկ.): Որոշ հիվանդություններից բուժման մեթոդների ամբողջությունը՝ մարմնի ջերմության արհեստական բարձրացման միջոցով:

ՊԻՐՈԼ [< пиррол < հուն. pyrrhos հրագույն + լատ. ol(eum) յուղ], գ. (քիմ.): Բենզոլի էլեկտրոնային նմանակն է՝ թույլ արոմատիկ բնույթով: Օգտագործվում է դեղանյութեր ստանալու համար:

ՊԻՐՈԼԻԶ [< пиролиз < հուն. pyr հուր + lysis քայքայում], գ. (ֆիզ.): Բարձր ջերմաստիճաններում օրգանական միացությունների դեստրուկցիայով ուղեկցվող փոխարկումները:

ՊԻՐՈԼԱՏՐԻԱ [< пиролатрия < հուն. pyr + latreia պաշտամունք], գ. (կրոն.): Կրակապաշտություն:

ՊԻՐՈԼՅՈՒԶԻՏ [< пиролюзит < հուն. pyr + lysis < ֆր. pyrolusite], գ. (քիմ.): Պոլիանիտ, միներալ: Գույնը մոխրագույն կամ սև, փայլը՝ կիսամետաղական: Օգտագործվում է ֆեռոմանգանի համաձուլվածք ստանալու համար:

ՊԻՐՈՄԵՏՐ [< пирометр < հուն. pyr + metreō չափում եմ], գ. (տեխ.): Հրաչափ՝ ջերմաստիճանը անկոնտակտ մեթոդով չափող սարք, որի չափման սահմանները 600° C-ից բարձր է: Գործողությունը հիմնված է տաքացված մարմինների սեփական ջերմային ճառագայթման օգտագործման վրա:

ՊԻՐՈՄԵՏՐԻԱ [< пирометрия < հուն. pyr + metreō չափում եմ], գ. (ֆիզ.): Հրաչափություն՝ բարձր ջերմաստիճանի չափման մեթոդների խումբ:

ՊԻՐՈՏԵԽՆԻԿԱ [< пиротехника < հուն. pyr + technikē], գ. (գիտ. տեխ.): Հրատեխնիկա՝ տեխնիկայի բաժին, որն զբաղվում է հրկիզվող բաղադրությունների, նրանցով լիցքավորված իրերի և սարքերի արտադրությամբ ու կիրառմամբ (լուսավորող, ծրագրող, ազդանշանային նյութեր):

ՊԻՐՈՏԻՆ [< пирротин, пирротит < հուն. pyrrhos հրագույն], գ. (հնք.): Միներալ, մագնիսային կոլչեդան, որը պարունակում է Ni, Co խառնուրդներ:

ՊԻՐՈՔՍԵՆՆԵՐ [< пироксены < հուն. pyr + xenos օտար], գ. (հնք.): Մագնեզիում և երկաթ պարունակող գլխավոր ապար կազմող միներալների խումբ: Անվանումը մտցրել է 1796 թ. ֆր. հանքաբան և բյուրեղագետ Ռ. Ժ. Այուին (1743-1822թթ.):

ՊԻՐՈՒԵՏ [< пируэт < ֆր. pirouette], գ. (արվ.): 1. Պարի ժամանակ ոտքի ծայրի վրա հենվելով՝ մարմնի պտույտ: 2. (սպորտ.): Ձիասպորտի մեջ՝ ձիու պտույտը հետևի ոտքերի վրա: 3. Ձևավոր չմշկասահքում՝ մարմնի արագ պտույտը սեփական առանցքի շուրջը:

ՊԻՐՕՔՍԻԼԻՆ [< пироксилин < հուն. pyr կրակ + oxys թթու], գ. (քիմ.): Բամբակից և այլ բուսական նյութերից պատրաստվող պայթուցիկ նյութ:

ՊԻՑՑԱ [< пицца < իտալ. pizza < pizzicare կծու լինել], գ. (խոհր.): Իտալական ավանդական ուտեստ՝ խմորի բարակ շերտի վրա համեմված սոուսով եփված մսով, պանրով, բանջարեղենով ևն:

ՊԻՑՑԵՐԻԱ [< пиццерия < իտալ. pizzeria < pizza պիցցա], գ. Պիցցայարան:

ՊԻՑՑԻԿԱՏՈ [< пиццикато < իտալ. pizzicato < pizzicare կսմթել], գ. (երժշտ.): 1. Լարային աղեղնավոր նվագարանից ձայնարտաբերման հնարք: 2. Գործիքային պիես, որ կատարվում է վերոհիշյալ հնարքով:

ՊԼԱԳԻԱՏ [< плагиат < լատ. plagiatus գողացված, հափշտակված], գ. (խսկց.): 1. Գրագող՝ այլ հեղինակության յուրացնող, բանագող: 2. Գրագողություն:

ՊԼԱԳԻՈԿԼԱԶՆԵՐ [< плагиоклазы < հուն. plagios շեղ + klasis կոտրվածք], գ. (հնք.): Լայն տարածում ունեցող ապար առաջացնող միներալներ՝ դաշտային ապարների խմբից, որոնք նատրիում-կալցիումային ալյումասիլիկատների՝ ալբիտի և անորթիտի անընդհատ իզոմորֆ շարք են:

ՊԼԱԳԻՈՏՐՈՊԻԶՄ [< плагиотропизм < հուն. plagios շեղ + tropos շրջադարձ, ուղղություն], գ. (բսբ.): Բույսի օրգանների աճելը գրգռիչի (ծանրության ուժ, լույսի աղբյուր ևն) ուղղության նկատմամբ որևէ անկյան տակ: Պլագիոտրոպ են կողքային ընձյուղները և արմատները, կոճղարմատները, տերևները:

ՊԼԱԶՄԱ [< плазма < հուն. plasma ծեփած պատկերում, քանդակագործական պատկեր], գ. 1. (կենսբ.): Արյան հեղուկային մասը՝ բաղադրությունը: 2. Պրոտո-

պլազմա (տե՛ս): 3. (ֆիզ.): Նյութի ֆիզիկական, չորրորդ, ագրեգատային վիճակը:

ՊԼԱԶՄԱՏՐՈՆ [< плазматрон < պլազմա + (էլեկ)տրոն], գ. (տեխ.): Ցածրջերմաստիճանային կամ «սառը» պլազմայի շիթեր ստանալու գազապարպումային սարք, որ կիրառվում է պլազմաքիմիական տեխնոլոգիայում, պլազմային մետալուրգիայում:

ՊԼԱԶՄՈԴԵՍՄՆԵՐ [< плазмодесмы < պլազմա + հուն. desmos կապ], գ. (կենսբ.): Բուսական հարևան բջիջների պրոտոպլաստները միմյանց կապող բջջապլազմային թելիկներ: Ապահովում են գրգիռների հաղորդումը և նյութերի տեղափոխումը բջջից բջիջ:

ՊԼԱԶՄՈԴԻՈՒՄ [< плазмодий < լատ. plasmodium], գ. (կենսբ.): Հեմոսպորիդների կարգի մակաբույծ նախակենդանիների ավելի քան 60 տեսակ. դրանց թվին է պատկանում մալարիայի հարուցիչը:

ՊԼԱԶՄՈԼԻԶ [< плазмолиз < պլազմա + հուն. lysis քայքայում], գ. (բսբ.): Պրոտոպլաստի (բջջի պարունակություն) անջատումը բջջաթաղանթի հիպերտոնիկ լուծույթում. բնորոշ է հիմնականում բուսական բջիջներին:

ՊԼԱԶՄՈՆ [< плазмон < հուն. plasma], գ. (ֆիզ.): Պլազմայի խտության տատանումների քվանտ:

ՊԼԱԿԱՏ [< плакат < գերմ. Plakat < ֆր. placard հայտարարություն, ազդագիր < plaquer սոսնձել], գ. Համառոտ տեքստով պատկեր, որ փակցվում է պատերին, փողոցներում կամ հասարակական վայրերում՝ քարոզչական, իրազեկային կամ գովազդային նպատակներով, ցուցապաստառ:

ՊԼԱԿԱՏԻՍՏ [< плакатист < գերմ., ֆր.], գ. ած. Պլակատներ նկարող ու գրող նկարիչ:

ՊԼԱՆ [< план < լատ. planus ողորկ, հարթ], գ. (խսկց.): 1. Հատակագիծ: 2. Ընդհանուր նպատակադրումով միավորված աշխատանքների՝ գործունեության ևն իրականացման նախապես նշվող միջոցառումների համակարգ ներկայացնող ծրագիր, որի մեջ նախատեսվում են կատարման ժամկետները, կարգը, հաջորդականությունը: 3. Որևէ գործի նախնական ծրագիր: 4. Որևէ կարգի շարադրանքի՝ հաղորդման ևն նյութի տարբեր մասերի հաջորդականությունը և դասակարգումը: 5. Առարկայի հեռավորությունը՝ տեղում դիտողի տեսադաշտից ձգվող ուղղությամբ: 6. *փխբ.* Մեկի՝ մի բանի դիրքը, տեղը, աստիճանը՝ նրա կարևորության՝ նշանակալիության ևն տեսակետից:

ՊԼԱՆԵՏԱՐԻՈՒՄ [< планетарий < նոր լատ. planetarium < ուշ լատ. planeta մոլորակ], գ. (տեխ.): Աստղացուցարան՝ երկնային մարմինների՝ անզեն աչքով ոչ տեսանելի շարժումը արհեստականորեն ցուցադրող սարք: Այսպիսի առաջին սարքը կառուցվել է Մյունխենում 1925 թ.:

ՊԼԱՆԵՐ [< планер < ֆր. planeur < planer ճախրել], գ. (օդգնց.): Ճախրասավառնակ՝ սահասավառնակ, ճախրաթիռ:

ՊԼԱՆԵՐԻԶՄ [< планеризм < ֆր.], գ. Պլաներներով թռչելու արվեստ և դրանով զբաղվելը՝ որպես մարզական զբաղմունքի ձև:

ՊԼԱՆԵՐԻՍՏ [< планерист < ֆր. planeuriste], գ. ած. Պլաներիզմով զբաղվող մարզիկ-օդաչու:

ՊԼԱՆԿՏՈՆ [< планктон < հուն. plankton թափառող], գ. (կենսբ.): Ջրերում ապրող և դրանց հոսանքով տարվող բուսական ու կենդանական օրգանիզմների ամբողջությունը:

ՊԼԱՆՇԵՏ [< планшет < ֆր. planchette տախտակիկ], գ. Թափանցիկ մակերեսով

պայուսակ՝ գծագրեր, քարտեզներ են պահելու համար:

ՊԼԱՆՇԻՐ [< планшир < անգլ. plankshеer], գ. (ծով.) Նավեզրի գերան, եզրագերան:

ՊԼԱՆՈՎԻԿ [< ռուս. плановик < լատ.], գ. ած. (խսկց.): Պլանավորող՝ պլաններ կազմող մասնագետ:

ՊԼԱՆՏԱԺ [< плантаж < ֆր. plantage < լատ. plantare տնկել], գ. Խորափոր, խորափորում, խոր փորելը, տնկափոր, հիմնաշրջում:

ՊԼԱՆՏԱՏՈՐ [< плантатор < լատ.], գ. Պլանտացիայի տեր:

ՊԼԱՆՏԱՑԻԱ [< плантация < լատ. plantatio բուսատնկում], գ. 1. Որևէ կարգի հատուկ գյուղատնտեսական մշակույթով զբաղվող խոշոր ձեռնարկություն: 2. Հատուկ գյուղատնտեսական մշակությամբ զբաղեցրած հողային խոշոր տարածություն:

ՊԼԱՇՉ [< ռուս. плащ], գ. (խսկց.): Անձրևանոց, թիկնոց:

ՊԼԱՍՏԻԴՆԵՐ [< пластиды < հուն. plastos], գ. (բսբ.): Բույսերի ցիտոպլազմայի ներբջջային օրգանելներ: Հաճախ պարունակում են պիգմենտներ և կատարում օրգանական նյութերի սինթեզ:

ՊԼԱՍՏԻԼԻՆ [< пластилин < իտլ. plastilina < հուն. plastos ծեփուն, ծեփված], գ. Կավի, մոմի և զանազան յուղերի չորացող պլաստիկ զանգված, որ օգտագործվում է ծեփելով զանազան բաներ պատրաստելու՝ կերտելու համար, ծեփոն:

ՊԼԱՍՏԻԿ [< пластик < հուն.], ած. 1. Նրբագեղ ու սահուն, բարեձև և արտահայտիչ: 2. Ճկուն, դյուրաթեք:

ՊԼԱՍՏԻԿԱ [< пластика < հուն. plastikē ծեփակերտում, անդրի], գ. (արվ.): 1. Քանդակագործություն, կերպարվեստ, արձանագործություն, կերտողական արվեստ: 2. Նրբագեղ ու սահուն շարժումների, մարմնի և նրա մասերի ռիթմիկ շարժումների արվեստ, արվեստաշնորհ շարժումներ:

ՊԼԱՍՏԻԿԱՏ [< пластикат < հուն.], գ. Պլաստիկական (կերպարանվող) զանգվածի մի տեսակը:

ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ [< пластиковая карточка < հուն. plastos + անգլ. card], գ. (բանկ.): Բանկային քարտ՝ անկանխիկ վճարումների համար:

ՊԼԱՍՏԻՆԿԱ [< пластинка < հուն. plastos] գ. (հնց.): Ձայնապնակ՝ սկավառակ:

ՊԼԱՍՏԻՐ [< пластырь < միջին լատ. plastrum գիպս], գ. (բժշկ.): Խիտ գործվածք (կամ այլ նյութ)՝ կպչուն սպեղանիով (ամրացվում է մաշկին):

ՊԼԱՍՏԻՖԻԿԱՏՈՐՆԵՐ [< пластификаторы < հուն. plastēs դյուրամշակ, ծեփելի, դյուրաթեկ + լատ. facere անել, դարձնել], գ. (տեխ.): Պոլիմերների փափկեցուցիչներ. նյութեր, որոնք պոլիմերներին ավելացնելիս մեծացնում են նրանց պլաստիկությունը և առաձգականությունը:

ՊԼԱՍՏՄԱՍՍԱ [< пластмассы < հուն. plastos + լատ. massa կտոր, գուղձ], գ. Զանազան նյութերի պլաստիկ զանգված՝ մասսա, կարծրախեժ:

ՊԼԱՏԱ [< плата < անգլ. plate < հուն. platys հարթ], գ. (էլեկտր.): Էլեկտրամեկուսիչ հարթաթիթեղ, որի վրա ամրացվում են էլեկտրական և ռադիոէլեմենտներ:

ՊԼԱՏԱՆ [< платан < լատ. platanus < հուն. platanos < platys լայն, ընդարձակ], գ. (բսբ.): Սոսի՝ սոսազգիների ընտանիքին պատկանող ծառ, չինարի:

ՊԼԱՏԻԿ(Ց)ԵՖԱԼԻԱ [< платик(ц)ефалия < հուն. platys հարթ + kephalē գլուխ], գ. (բժշկ.): Հարթագանգություն, հարթագլխություն:

ՊԼԱՏԻՆ [< платина < իսպ. platina < plata արծաթ], գ. (քիմ.): Քիմիական տարր. մոխրասպիտակավուն, կռելի և շատ ծանր ազնիվ մետաղ:

ՊԼԱՏՈՆԻԶՄ [< платонизм < հույն փիլ. Պլատոնի անունից], գ. (փիլ.): Պլատոնականություն՝ հին հունական փիլիսոփա Պլատոնի (427-347 թթ.) և նրա հետևորդների իդեալիստական փիլիսոփայությունը:

ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՍԵՐ - Ցանկասիրությունից զերծ, ոչ մարմնական, զուտ հոգևոր սեր:

ՊԼԱՏՖՈՐՄ [< платформа < ֆր. platē-forme, բառացի՝ հարթ՝ ողորկ ձև], գ. (երկթղ.): 1. Կառամատույց: 2. Հենահարթակ: 3. Տախտակամած: 4. Առանց ծածկի և պատերի ապրանքատար վագոն՝ քար, ավազ, փայտ ևն փոխադրելու համար: 5. (քղք.): Կուսակցության՝ որևէ խմբավորման և այլ քաղաքական հայացքների՝ համոզմունքների՝ դիրքորոշման համակարգ, քաղաքական-գաղափարական դիրքորոշում: 6. (քղք.): Գործունեության ծրագիր:

ՊԼԱՑ [< плац < գերմ. Platz < հուն. platys լայն, հարթ], գ. (խսկց.): Շարահրապարակ՝ զինվորների շարային վարժություններ, երթեր կազմակերպելու հրապարակ:

ՊԼԱՑԴԱՐՄ [< плацдарм < ֆր. place d'armes, բառացի՝ հրապարակ զորքերի համար], գ. (ռազմ.): 1. Զինադաշտ: 2. Մեկի դեմ պատերազմական գործողություններ սկսելու համար որպես ելման կետ՝ ծառայող տարածություն:

ՊԼԱՑԵՆՏԱ [< плацента < գերմ. Plazenta < լատ. placenta բլիթ], գ. (կզմխս.): Ընկերք:

ՊԼԱՑՔԱՐՏ, ՊԼԱՑԿԱՐՏ [< плацкарта < գերմ. Platzkarte < Platz տեղ + Karte տոմս], գ. (երկթղ.): Երկաթուղային լրացուցիչ տոմս կամ անդորրագիր, որի վրա նշված է ուղևորի տեղը վագոնում, նաև տեղը պլացկարտային վագոնում:

ՊԼԱՖՈՆ [< плафон < ֆր. plafond առաստաղ], գ. 1. Պատկերազարդ կամ դրվագազարդ առաստաղ: 2. Առհասարակ՝ առաստաղ: 3. Առաստաղը զարդարող պատկերը կամ դրվագը: 4. Կիսակլոր փակ լուսամփոփ՝ սովորաբար առաստաղից կախելու համար:

ՊԼԵԱԴ(Ա) [< плеяда < հուն. Pleias (Pleiados) հին հունական բանաստեղծողբերգակների խմբի անվանումը], գ. Գիտության՝ արվեստի՝ գրականության ևն բնագավառում միևնույն ժամանակում հանդես եկած նշանակավոր գործիչների խումբ:

ՊԼԵԲԵՅ [< плебей < լատ. plebejus < plebs հասարակ ժողովուրդ], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ ստորին դասի ներկայացուցիչ, որ թեև անձնապես ազատ էր, բայց նախապես զուրկ էր քաղաքական իրավունքներից: 2. *փխբ.* Ոչ ազնվական ծագում ունեցող՝ ստորին խավերից ծագող քաղաքացիների արհամարհական անվանումը:

ՊԼԵԲԻՍՑԻՏ [< плебисцит < լատ. plebiscitum ժողովրդի վճիռ՝ որոշում], գ. (քղք.): Հանրաքվե, համաժողովրդական ձայնաքվեարկություն:

ՊԼԵԴ [< плед < անգլ. plaid], գ. (հնց.): Տղամարդկանց ուսերին գցելու բրդյա հաստ քառանկյունի կտոր:

ՊԼԵՅՍՏՈՑԵՆ [< плейстоцен < հուն. pleistos խոշորագույն, ամենատևական + kainos նոր], գ. (երկրբ.): Չորրորդական ժամանակաշրջանի ստորին՝ ամենատևական փուլը, որն ընդգրկում է բոլոր սառցադաշտային և միջսառցադաշտային դարաշրջանները, ստորաբաժանվում է ստորին, միջին և վերին պլեյստոցենի:

ՊԼԵՆԱՐ [< пленарный < միջին լատ. plenarius լրիվ], ած. Տվյալ կազմակերպության ընտրական մարմնի բոլոր անդամների ներկայությամբ՝ մասնակցությամբ տեղի ունեցող, լիագումար:

ՊԼԵՆԵՐ [< пленэр < ֆր. plein air, բառացի՝ բաց օդ, բացօթյա], գ. (գեղն.): Տերմին, որով նշվում է արևի լույսի և մթնոլորտի ազդեցությամբ պայմանավորված գունային փոփոխությունների ողջ հարստության վերարտադրումը նկարում:

ՊԼԵՆՈՒՄ [< пленум < լատ. plenum լի], գ. (քղք.): 1. Որևէ կարգի կուսակցական՝ հասարակական՝ պետական կազմակերպության ընտրովի ղեկավար մարմնի ժողով՝ բոլոր անդամների մասնակցությամբ: 2. Կուսակցական՝ հասարակական ևն կազմակերպության ընտրովի ղեկավար մարմին:

ՊԼԵՈՔՐՈԻԶՄ [< плеохроизм < հուն. pleōn առավել, ավելի շատ + chrōs գույն], գ. (ֆիզ.): Բազմագունություն՝ նյութերի գունավորման փոփոխությունը դրանցով անցնող լույսի ազդեցությամբ՝ կախված վերջինիս տարածման ուղղությունից և բևեռացումից: Առաջինը դիտել են Ժ. Բ. Բիոն և գերմանացի ֆիզիկոս Թ. Զեեբեկը 1816 թ.:

ՊԼԵՎՐԱ [< плевра < հուն. pleura կող], գ. (կզմխս.): Թոքամիզ, լանջաթաղանթ:

ՊԼԵՎՐԻՏ [< плеврит < հուն.], գ. (բժշկ.): Թոքամիզի, պլևրայի բորբոքում:

ՊԼԵՔՍԻԳԼԱՍ [< плексиглас < անգլ. plexus հյուսում + glass ապակի], գ. Թափանցիկ պլաստմասսա:

ՊԼԻՆԹՈՒՍ [< плинтус < լատ. plinthus < հուն. plinthos սալ, սալիկ], գ. 1. (շին.): Շրիշակ (պատի և հատակի արանքի ծածկոց): 2. (ճարտ.): Պլինթ (արտաքին ելուստ՝ ցցվածք շինության ներքևի հատվածում):

ՊԼԻՈՑԵՆՅԱՆ ԲԱԺԻՆ [< плиоценийский (< հուն. pleiōn մեծ + kainos) период] - (երկրբ.): Պլիոցեն՝ նեոգենյան համակարգի վերին բաժինը: Ընդգրկել է 2 - 7 մլն տարի առաջ ընկած ժամանակահատվածը:

ՊԼԻՍ [< плис < լատ. pilus մազ], գ. (հնց.): Բամբակե թավիշ. հասարակ թավիշ:

ՊԼԻՍԵ [< плиссе < ֆր. plissé], 1. գ. Զուգահեռ մանրածալքեր, մանրածալվածքներ: 2. ած. Մանրածալքավոր:

ՊԼԻՏԱ [< ռուս. плита], գ. (խսկց.): Սալօջախ՝ խոհանոցային (նաև ջեռուցման) վառարան՝ ամանը, կաթսան ևն դնելու հարմարանքով:

ՊԼՅԱԺ [< пляж < ֆր. plage ծովափ], գ. (խսկց.): Լողափ:

ՊԼՅՈՒՇ [< плюш < գերմ. Plüsch < լատ. pilus մազ], գ. (մնծգր.): Թավշանման գործվածք՝ երեսի կողմում ավելի երկար ու նոսր խավով, քան թավշինն է:

ՊԼՅՈՒՍ [< плюс < լատ. plus ավելի], գ. 1. (մաթ.): Գումարման նշան: 2. Գումարած: 3. *փխբ.* Առավելություն: 4. Գործածվում է զրոյից բարձր ջերմաստիճան ցույց տալու համար:

ՊԼՅՈՒՍՔՎԱՄՊԵՐՖԵԿՏ [< плюсквамперфект < գերմ. Plusquamperfekt < լատ. plusquamperfectum],ած. գ. (լեզվբ. հնց.): Վաղակատար անցյալ ժամանակ (լատիներենում ևն):

ՊԼՅՈՒՐԱԼԻԶՄ [< плюрализм < լատ. pluralis բազմակի, հոգնակի], գ. (փիլ.): Աշխարհայացքային-փիլիսոփայական սկզբունք, ըստ որի՝ իրականությունը բաղկացած է բազում ինքնուրույն, ինքնաբավ, որևէ մեկ-միասնական նախասկզբի չհանգող գոյացություններից (Գ. Լայբնիցի մոնադաբանությունը, Ու. Ջեյմսի պլյուրալիստական տիեզերքը, Բ. Ռասելի և Լ. Վիտգենշտայնի տրամաբանական ատոմիզմը ևն), բազմակարծություն:

ՊԼՈՄԲ [< пломба < ֆր. plomb արճիճ], գ. 1. (բժշկ.): Ատամալիցք: 2. Արճիճե կամ այլ պլաստիկ նյութի փոքրիկ կտոր՝ որևէ դրոշմվածքով (կնիք, պատկեր ևն), որ կպցնում են փակ դռներին, ծրարներին, ապրանքների փաթեթներին ևն,

այնպես որ առանց դա պոկելու հնարավոր չլինի բացել դուռը, ծրարը ևն, կապակնիք:

ՊԼՈՄԲԻՐ [< пломбир < ֆր. plombières ֆրանսիական Պլոմբիր քաղաքի անունով], գ. (խոհր.): Սերուցքից պատրաստվող և սովորաբար մրգահյութերի կամ զանազան համեմունքների հյութով պատրաստված բարձրորակ պաղպաղակ:

ՊԼՈՒՏՈԿՐԱՏ [< плутократ < հուն.], գ. Տիրող դասակարգի առավել ազդեցիկ վերնախավին պատկանող մարդ, որ մեծ իշխանության է հասել իր հարստության շնորհիվ:

ՊԼՈՒՏՈԿՐԱՏԻԱ [< плутократия < հուն. plutokratia < plutos հարստություն + kratos իշխանություն, հզորություն], գ. (քղք.): 1. Պետության քաղաքական կառուցվածք, որի ժամանակ պետությունը ղեկավարվում է մեծ հարստություն ունեցող անձանց կողմից: 2. (հվք.): Պլուտոկրատներ:

ՊԼՈՒՏՈՆ [< плутон < հուն. Pluton < plutos հարստություն], գ. (աստղգ.): Արեգակնային համակարգության ամենահեռավոր մոլորակը, որը հայտնաբերվել է 1930 թ.: 2. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ ստորերկրյա թագավորության աստվածը:

ՊԼՈՒՏՈՆԻԶՄ [< плутонизм < հուն. Pluton Պլուտոն՝ ստորերկրյա թագավորության աստված], գ. (երկրբ. պատմ.): XVIII դ. վերջին – XIX դ. սկզբին տարածված ուսմունք երկրաբանական պատմության ընթացքում Երկրի ներքին ուժերի առաջատար նշանակության մասին. առաջարկել է Ջ. Հատտոնը (J. Hutton 1726-1797թթ.) 1788 թ.:

ՊԼՈՒՏՈՆԻՈՒՄ [< плутоний < լատ. plutonium Պլուտոն մոլորակի անվամբ], գ. (քիմ.): Ռադիոակտիվ հատկություն ունեցող արհեստական, քիմիական տարր:

ՊՅՈՒԹՈՆ [< питон < հուն. Pythōn առասպելական օձ՝ սպանված Ապոլոնի կողմից], գ. (կենդբ.): Աֆրիկայում, Արևելյան Հնդկաստանում և Ամերիկայում ապրող անթույների ընտանիքին պատկանող օձերի ընդհանուր անվանումը:

ՊՅՈՒՐԵ [< пюре < ֆր. purée], գ. (խոհր. խսկց.): Խյուս՝ տրորելով պատրաստվող մրգերի կամ բանջարեղենի խառնուրդ, որ գործածում են որպես ուտելիք կամ համեմունք:

ՊՆԵՎՄԱԱՎՏՈՄԱՏԻԿԱ [< пневмаавтоматика < հուն. pneuma շունչ + ավտոմատիկա], գ. (տեխ.): Ավտոմատ կառավարման համակարգերում կիրառվող տեխնիկական միջոցների համալիր, որոնցում տեղեկատվությունը ներկայացվում և հաղորդվում է գազի, սովորաբար օդի ճնշումով կամ ծախսով (պնևմաազդանշաններով). ավտոմատիկայի բաժին, որի ուսումնասիրման օբյեկտը ավտոմատացման այդ միջոցներն են:

ՊՆԵՎՄԱԳՈՐԾԻՔՆԵՐ, գ. (տեխ.): Պնևմատիկ շարժիչով ձեռքի մեքենաներ: Նախատեսված են շինարարության, մեքենաշինության, մետաղամշակման մեջ, լեռնային արդյունաբերությունում և տրանսպորտում ձեռքի աշխատանքի մեքենայացման համար:

ՊՆԵՎՄԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ, գ. (տեխ.): Ավտոմատ կարգավորիչ, որում աշխատանքային միջավայրը սեղմած օդն է:

ՊՆԵՎՄԱՏԻԿ [< пневматический < հուն.] ած. Սեղմած օդով գործող:

ՊՆԵՎՄԱՏՈԼԻԶ [< пневматолиз < հուն. pneuma + lysis լուծում, տարրալուծում], գ. (երկրբ.): Միներալառաջացման գործընթաց՝ ապարների պարունակության վրա մագմայից անջատվող ցնդող միացությունների ազդեցությամբ:

ՊՆԵՎՄԱՏՈՖՈՐՆԵՐ [< пневмофоры < հուն. pneuma + phoros տանող, կրող],

գ. 1. (բսբ.): Որոշ արևադարձային բույսերի վերգետնյա արմատներ՝ մակընթացության գոտում աճող բույսերի ստորգետնյա մասերին: 2. (կենդբ.): Գաղութային աղեխորշավորների հիդրոստատիկ հավասարակշռության օրգաններ, որոնց միջոցով դրանք կարողանում են փոխել իրենց տեսակարար զանգվածը և ուղղաձիգ տեղաշարժեր կատարել:

ՊՆԵՎՄԱՔԻՄԻԱ [< пневмохимия < հուն.], գ. (գիտ.): Գազերի քիմիայի անվանումը, որը օգտագործվել է XVIII դ. վերջերից մինչև XIX դ. սկիզբը:

ՊՆԵՎՄՈԿՈԿՆԵՐ [< пневмококки < հուն. pneumōn թոքեր + kokkos հատիկ], գ. (կենսբ.): Ոչ սպորակիր բակտերիաներ՝ թոքերի կրուպոզային բորբոքման հարուցիչներ:

ՊՆԵՎՄՈՆԻԱ [< пневмония < հուն. pneumōn թոքեր], գ. (բժշկ.) Թոքերի բորբոքում:

ՊՆԵՎՄՈՆԻԿԱ [< пневмоника < հուն.], գ. (գիտ.): Պնևմաավտոմատիկայի ճյուղ, որտեղ կիրառվող սարքերի աշխատանքի հիմքում ընկած է աերոդինամիկական տարբեր էֆեկտների օգտագործումը:

«ՊՈԲԵԴԱ» [< ռուս. "Победа"], գ. «Գազ» ավտոմեքենայի մակնիշ, որը արտադրվում էր Գորկու ավտոգործարանում:

ՊՈԲԵԴԻՏ [< ռուս. победит], գ. (տեխ.): Եռակալված կարծր համաձուլվածք, որը ստացվում է փոշեմետալուրգիայի մեթոդով՝ վոլֆրամի մոնոկարբիդից (մոտ 90%) և կոբալտից (մոտ 10%): Ստեղծվել է ԽՍՀՄ-ում 1929 թ.: Կիրառվում է կտրող գործիքներ պատրաստման համար:

ՊՈԳՈՆՈՖՈՐՆԵՐ [< погонофоры < հուն. pogonophora], գ. (կենդբ.): Մորուքակիրներ՝ ծովային անողնաշարավոր կենդանիների տիպ, որոնք ապրում են երկու ծայրը բաց խիտինե պաշտպանիչ խողովակներում. հայտնի է մոտ 150 տեսակ:

ՊՈԴԱԳՐԱ [< подагра < հուն. podagra < pus (podos) ոտք + agra գոհ, որս], գ. (բժշկ.): Հոդատապ՝ հոդերի խրոնիկական հիվանդություն:

ՊՈԴԻՈՒՄ [< подиум < լատ. podium], գ. (ճարտ.): 1. Բարձր, սովորաբար ուղղանկյուն հարթակ, որի մի կողմը աստիճաններով է, իսկ մյուսները՝ ուղղաձիգ: Սրա վրա կառուցվում էին հռոմեական և էտրուսկյան տաճարները: 2. Բեմահարթակ:

ՊՈԵԶԻԱ [< поэзия < հուն. poiēsis ստեղծագործություն], գ. 1. Գեղարվեստական գրականության մի ճյուղը՝ չափածո պատկերավոր խոսքով հույզեր՝ մտքեր արտահայտելու և կերպարներ կերտելու արվեստը, քնարերգություն: 2. Գեղարվեստական ստեղծագործությունների ամբողջությունը (որևէ ժողովրդի, դարաշրջանի ևն): 3. Առանձին չափական ստեղծագործություն, բանաստեղծություն: 4. *փխբ.* Զգացմունքների ու երևակայության վրա ազդող՝ ներգործող որևէ վսեմ՝ գեղեցիկ ներդաշնակություն, գեղեցկություն:

ՊՈԵՄ [< поэма < հուն. poiēma ստեղծում, հորինում], գ. 1. (գրկն.): Չափածո պատմողական ստեղծագործություն: 2. (երշժտ.): Երաժշտական ազատ ձևի, սովորաբար քնարական կամ ծրագրային բնույթի ստեղծագործություն:

ՊՈԵՏ [< поэт < հուն. poiētēs], գ. Բանաստեղծ:

ՊՈԵՏԻԿԱ [< поэтика < հուն. poiētikē], գ. (գրկն.): 1. Պոետիկական՝ բանաստեղծական արվեստ: 2. Որևէ ստեղծագործության գեղարվեստական միջոցների համակարգը:

ՊՈԶԱ [< поза < ֆր. pose], գ. (խսկց.): 1. Դիրք, կեցվածք: 2. *փխբ.* Կեղծ կեցվածք՝ դիրք՝ վարք:

ՊՈԶԻՏԻՎ [< позитив < լատ. positivus դրական] ած. 1. (հնց.): Դրական: 2. Փորձի՝ փաստի վրա հիմնված: 3. (նկարչ.): Պոզիտիվին հատուկ, պոզիտիվ հանդիսացող: 4. գ. (լանկրչ.): Ժխտանկարից հանված լուսանկար՝ արտապատկեր, որի վրա լույսն ու ստվերը բաշխված են իրականին համապատասխան:

ՊՈԶԻՏԻՎԻԶՄ [< позитивизм < ֆր. positivisme < լատ. positivus դրական], գ. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայության ուղղություն, որը ժխտում է օբյեկտիվ իրականության և առարկաների էության ճանաչելիությունը, աղավաղված կերպով փորձը բնութագրում է որպես սուբյեկտիվ գոյության պատկերացումների ամբողջություն, սահմանափակում է գիտության դերը փաստերի և երևույթների նկարագրությամբ՝ բացասելով նրանց բացատրության հնարավորությունը:

ՊՈԶԻՏԻՎԻՍՏ [< позитивист < լատ.], գ. Պոզիտիվիզմի հետևորդ:

ՊՈԶԻՏՐՈՆ [< позитрон < լատ. positivus դրական + էլեկտրոն], գ. (ֆիզ.): Նյութական մասնիկ, որ էլեկտրոնի զանգված (մասսա) ունի և դրական լիցք, որ բացարձակ մեծությամբ հավասար է էլեկտրոնի լիցքին:

ՊՈԶԻՑԻԱ [< позиция < լատ. positio (positionis) վիճակ, դիրք], գ. (ռազմ. հնց.): 1. Դիրք, դիրքավորում: 2. Մարտադիրք, մարտատեղ, մարտագիծ: 3. Դիրքեր, ռազմական գործողությունների շրջան: 4. *փխբ.* Տեսակետ, դիրքորոշում: 5. Կեցվածք:

ՊՈԼԵՄԻԿԱ [< полемика < ֆր. polémique < հուն. polemikos թշնամական], գ. (խսկց.): Բանակռիվ, բանավեճ:

ՊՈԼԻ... [< поли... < հուն. poly բազում, բազմաթիվ, լայնատարած] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս բազմություն, համակողմանի ընդգրկում կամ բազմազան կողմեր:

ՊՈԼԻԱԿՐԻԼԱՏՆԵՐ, գ. (քիմ.): Ակրիլաթթվի և մետակրիլաթթվի էսթերների պոլիմերները: Օգտագործվում են մետաղական կառուցվածքները կոռոզիայից պաշտպանելու, լուսարձակող ծածկույթներ ստանալու, ավտոմեքենաները և սարքերը ներկապատելու համար:

ՊՈԼԻԱԿՐԻԼԱՆԻՏՐԻԼ, գ. (քիմ.): Ակրիլանիտրիլի գծային պոլիմերը, որը սպիտակ, ամորֆ նյութ է: Կիրառվում է մանրաթելեր արտադրելու համար, որոնք մեխանիկական հատկություններով նման են բրդին: Օգտագործվում է գորգեր, արտահագուստ, սպիտակեղեն նն արտադրելու համար:

ՊՈԼԻԱՄԻԴՆԵՐ, գ. (քիմ.): Սինթետիկ պոլիմերներ, որոնք մակրոմոլեկուլի շղթայում պարունակում են ալիֆատիկ և արոմատիկ ռադիկալներին միացած մանրաթելեր. օգտագործվում են գործվածքեղենի, ավտոդողերի, ռադիոտեխնիկական իրերի, ցանցերի նն արտադրության համար:

ՊՈԼԻԱՆԴՐԻԱ [< полиандрия < պոլի... + հուն. anēr (andros) տղամարդ, ամուսին], գ. Բազմամուսնություն՝ խմբակային ամուսնության հնացած ձև, որի ժամանակ մեկ կինը ունի մի քանի ամուսին:

ՊՈԼԻԱՐԹՐԻՏ [< полиартрит < պոլի... + հուն. arthron հոդ], գ. (բժշկ.): Բազմահոդաբորբ՝ հոդերի բազմաքանակ բորբոքում:

ՊՈԼԻԳԱՄԻԱ [< полигамия < պոլի... + հուն. gamos ամուսնություն], գ. 1. Բազմամուսնություն կամ բազմակնություն. տերմինը ավելի հաճախ գործածվում է բազմակնություն իմաստով: 2. (կենդբ.): Արուների և էգերի միջև հարաբերություն, երբ արուն որոշակի ժամանակամիջոցում զուգակցում է մի քանի էգերի հետ:

ՊՈԼԻԳԻՆԻԱ [< полигиния < պոլի... + հուն. gynē կին], գ. Բազմակնություն, երբ մեկ տղամարդը մի քանի կին կարող է ունենալ:

ՊՈԼԻԳԼՈՏ [< полиглот < հուն. polyglōttos, պոլի... + հուն. glōtta լեզու], գ. ած.

Բազմալեզվագետ, շատ լեզուներ իմացող (անձ):

ՊՈԼԻԳՈՆ [< полигон < հուն. polygōnos < poly շատ, բազում + gōnia անկյուն], գ. 1. Բազմանկյուն: 2. (ռազմ.): Հրաձգարան: 3. Զանազան ռազմական զենքերի փորձարկման ընդարձակ դաշտ:

ՊՈԼԻԳՐԱՖ [< полиграфический < հուն.], ած. Նույնն է՝ Պոլիգրաֆիկ:

ՊՈԼԻԳՐԱՖԻԱ [< полиграфия < հուն. polygraphia բազմանկարագրություն], գ. Տեխնիկայի մի ճյուղը, որ ընդգրկում է տպագիր արտադրության և տպագրական գործի բոլոր բնագավառները:

ՊՈԼԻԳՐԱՖԻԿ [< полиграфический < հուն.], ած. 1. Պոլիգրաֆիային հատուկ՝ վերաբերող: 2. Տպագրական՝ տպագրելու տեխնիկային հատուկ՝ վերաբերող:

ՊՈԼԻԳՐԱՖԻՍՏ [< полиграфист < հուն.], գ. ած. 1. Պոլիգրաֆ արդյունաբերության աշխատող: 2. Պոլիգրաֆիայի մասնագետ:

ՊՈԼԻԷԴՐ [< полиэдр < պոլի... + հուն. hedra հարթություն], գ. (երկրչ.): 1. Բազմանիստ: 2. Երկրաչափական պատկեր, որը վերջավոր թվով ուռուցիկ բազմանիստների միավորում (գումար) է:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆ [< полиэтилен < պոլի... + էթիլեն], գ. (քիմ.): Էթիլենի պոլիմերմամբ ստացվող սպիտակ, ջերմապլաստիկ նյութ, որի սինթեզն իրականացվում է բարձր և ցածր ճնշումների տակ: Արտադրվող ամենաէժան պոլիմերներից է և վերամշակվում է ջերմապլաստիկների համար հայտնի բոլոր եղանակներով:

ՊՈԼԻԹԵԻԶՄ [< политеизм < պոլի... + հուն. theos աստված], գ. (կրոն.): Բազմաստվածություն:

ՊՈԼԻԽՐՈՄԻԱ [< полихромия < ֆր. polychromie < հուն. poly շատ + chrōma գույն], գ. 1. (տեխ.): Բազմագունություն (բազմագույն նյութերի մասին, որոնք օգտագործվում են ճարտարապետության, քանդակագործության մեջ և կիրառական արվեստներում): 2. (տպգր.): Տպագրություն՝ մի քանի գույնով:

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ [< поликлиника < պոլի... + հուն. klinikē անկողնային հիվանդների բուժում], գ. Բոլոր կամ գրեթե բոլոր հիվանդությունների գծով բնակչության ինչպես ամբուլատորային, այնպես էլ տնային բժշկական օգնություն ցույց տվող բուժական հիմնարկություն:

ՊՈԼԻԿՈՆԴԵՆՍԱՑՈՒՄ [< поликонденсация < պոլի... + կոնդենսացում], գ. (քիմ.): Բազմաֆունկցիոնալ մոնոմերային միացություններից պոլիմերների ստացման գործընթաց, որն ուղեկցվում է ցածր մոլեկուլային կողմնակի միացության առաջացմամբ:

ՊՈԼԻՀԻՄՆԻԱ [< Полигимния < լատ. Polyhymnia < հուն. Polymnia], գ. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ ինը մուսաներից մեկը՝ հովանավորը հիմների և մնջախաղի, մնջկատակի:

ՊՈԼԻՄԵՐ(ՆԵՐ) [< полимеры < հուն. polymerēs շատ մասերից կազմված, բազմակազմ], գ. (քիմ.): Քիմիական նյութեր, որոնք կազմվում են մի քանի, երբեմն շատ, միատեսակ մոլեկուլներից՝ առանց նրանց կառուցվածքի էական փոփոխությունների:

ՊՈԼԻՄԵՐԻԶԱՑԻԱ [< полимеризация < հուն.], գ. (քիմ.): Բարձրամոլեկուլյար օրգանական միացություններ բաղադրելը ցածրամոլեկուլյար միացություններից:

ՊՈԼԻՄՈՐՖԻԶՄ [< полиморфизм < պոլի... + morphē ձև], գ. 1. (կենսբ.): Բազմաձևություն, բազմակերպություն: 2. (քիմ.): Բազմաբյուրեղականություն:

ՊՈԼԻՆԵՎՐԻՏ [< полиневрит < պոլի... + հուն. neuron մկան], գ. (բժշկ.): Բազմանյարդաբորբ՝ նյարդերի բազմաքանակ բորբոքում:

ՊՈԼԻՆՈԶ [< поллиноз < լատ. pollen (pollinis) փոշի], գ. (բժշկ.): Ալերգիկ հիվանդություն (ծաղկափոշուց են):

ՊՈԼԻՇԻՆԵԼ [< полишинель < ֆր. polichinelle < իտալ. pulcinella], գ. (թատր.): Ֆրանսիական ժողովրդական տիկնիկային թատրոնի գործող անձ, որը երևան է եկել XVI դ. վերջին տոնավաճառային թատրոնում: Մոտ է իտալական կոմեդիա դել՝ արտեի Պուլչինելլային: Նա սապատավոր է, կատակաբան, նման է Պետրուշկային, Պանչին:

ՊՈԼԻՈԷՆՑԵՖԱԼԻՏ [< полиоэнцефалит < պոլի... + հուն. enkephalos ուղեղ], գ. (բժշկ.): Սուր վարակիչ հիվանդություն, պայմանավորված է գլխուղեղի գորշ նյութի բորբոքումով:

ՊՈԼԻՈՄԻԵԼԻՏ [< полиомиелит < պոլի... + հուն. myelos ողնուղեղ], գ. (բժշկ.): Սուր վարակիչ հիվանդություն, պայմանավորված է ողնուղեղի գորշ նյութի բորբոքումով:

ՊՈԼԻՊ [< полип < հուն. polypus < պոլի... + pus ոտք], գ. 1. (կենդբ): Աղեխորշավորների տիպին պատկանող կենդանի, որ մարմնի մի ծայրով կպչում է որևէ անշարժ առարկայի, իսկ մյուս ծայրով՝ բերանի անցքով՝ սնունդ ընդունում: 2. (բժշկ.): Լորձաթաղանթների բարորակ ուռուցքի տեսակ:

ՊՈԼԻՊԵՊՏԻԴՆԵՐ [< полипептиды < պոլի... + հուն. peptos],գ. (կենսբ.): Բազմաթիվ (6-ից մինչև 90) ամինաթթվային մնացորդներից բաղկացած օրգանական նյութեր:

ՊՈԼԻՊԼՈԻԴԻԱ [< полиплоидия < հուն. polyplēthia բազում], գ. (կենսբ.): Բույսերի կամ կենդանիների բջիջներում քրոմոսոմների թվի բազմապատիկ մեծացում: Լայնորեն տարածված է բուսական աշխարհում, բաժանասեռ կենդանիների մոտ հազվադեպ է:

ՊՈԼԻՍ I [< полис < ֆր. police, իտալ. polizza ստորագրություն, անդորրագիր], գ. Վկայական, որը տրվում է ապահովագրական ընկերության կողմից անձին կամ հաստատությանը, որը ինչ-որ բան է ապահովագրել, և պարունակում է ապահովագրության պայմանները:

ՊՈԼԻՍ II [< полис < հուն. polis], գ. (պատմ.): Քաղաք-պետություններ Հին աշխարհում (Հին Հռոմ, Հին Հունաստան):

ՊՈԼԻՍԻԼԼՈԳԻԶՄ [< полисиллогизм < պոլի... + սիլլոգիզմ], գ. (տրամբ.): Բազմասիլլոգիզմ՝ բարդ սիլլոգիզմ, որը լրիվ արտահայտվում է երկու կամ ավելի պարզ սիլլոգիզմների միացությամբ, որտեղ մեկի եզրակացությունը դառնում է մյուսի նախադրյալը:

ՊՈԼԻՍՄԵՆ, ՓՈԼԻՍՄԵՆ [< полисмен < անգլ. policeman], գ. (խսկց.): Ոստիկան (Անգլիայում, ԱՄՆ-ում և որոշ այլ երկրներում):

ՊՈԼԻՍՊԵՐՄԻԱ [< полиспермия < պոլի... + հուն. sperma ընտանիք], գ. (բսբ. կենդբ.): Բազմասաղմություն:

ՊՈԼԻՍՏԻՐՈԼ, գ. (քիմ.): Ստիրոլի գծային պոլիմերը, որը ապակենման, թափանցիկ նյութ է:

ՊՈԼԻՍՈՒԼՖԻԴՆԵՐ, գ. (քիմ.): H_2Sx-ի ածանցյալներ, որտեղ x-ը կարող է լինել 2-9-ը. տհաճ, սուր հոտով, բաց դեղնավունից մինչև դարչնակարմրավուն պինդ նյութեր են: Օգտագործվում են գյուղատնտեսության մեջ՝ վնասատուների դեմ պայքարի համար, ներկերի, կաուչուկների արտադրության մեջ:

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԵՏԱԼՆԵՐ, գ. (քիմ.): Պոլիացետալներ, պոլիվինիլպիրտի ացետալներ: Անգույն, ամորֆ, պինդ նյութեր, լուծվում են արոմատիկ ածխաջրածիններ-

րում: Սրանից ստացվող նյութերը օգտագործվում են էլեկտրամեկուսիչ լաքեր, փայտը, ռետինը կպցնող սոսինձներ, անբեկոր ապակի են պատրաստելու համար:

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԵՏԱՏ, գ. (քիմ.): Վինիլացետատի պոլիմերն է, որը անգույն, պինդ նյութ է և թունավոր չէ: Օգտագործվում է ներքին և արտաքին հարդարման ներկեր, թղթի, կաշվի, փայտի, գործվածքի սոսինձներ, մաստակ ստանալու համար:

ՊՈԼԻՎԻՆԻԼՔԼՈՐԻԴ, գ. (քիմ.): Վինիլքլորիդի հիմնականում գծային պոլիմերն է, ջերմապլաստիկ, սպիտակ, կենսաբանորեն պասսիվ նյութ է: Ստանում են կարծր և պլաստիֆիկատորներ պարունակող փափուկ կամ կիսափափուկ պոլիվինիլքլորիդային պլաստմասսաներ, որոնցից պատրաստում են արհեստական կաշի, թաղանթներ, խողովակներ, ձայնապնակներ, կենցաղային իրեր, ստանում են մանրաթելեր, լաքեր են: Ամենաշատ արտադրվող պոլիմերներից է:

ՊՈԼԻՏԵԽՆԻԶՄ [< политехнизм < պոլի... + հուն. technē արվեստ, բազմարվեստություն], գ. Ուսուցման համակարգ, որի ժամանակ տեսականորեն ու գործնականորեն ծանոթանում են արտադրության գլխավոր ճյուղերին և ձեռք բերում հիմնական գիտելիքներ:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿ [< политехник < հուն.], ած. (խսկց.): Ճարտարագիտական:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ած. 1. Տեխնիկայի զանազան ճյուղերի ուսուցման՝ ուսումնասիրության հետ կապված: 2. Տեխնիկայի գլխավոր ճյուղերն ընդգրկող՝ ներառող: 3. Պոլիտեխնիզմին հատուկ՝ վերաբերող:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ [< политехникум < հուն.], գ. Միջնակարգ պոլիտեխնիկական ուսումնական հաստատություն:

ՊՈԼԻՏԻԿԱ [< политика < հուն. politikē պետություն կառավարելու արվեստ], գ. (հնց.): 1. Քաղաքականություն: 2. Քաղաքագիտություն: 3. *փխբ.* Նուրբ վարվեցողություն, դիվանագիտական մոտեցում:

ՊՈԼԻՏԻԿԱՆ [< политикан < ֆր. politiguante < հուն.], գ. ած. (հնց.): 1. Քաղաքագետ: 2. *փխբ.* (արհմրհ.): Անսկզբունք քաղաքագետ, շահադիտական նպատակներով գործունեություն ծավալող անձ:

ՊՈԼԻՏԻԿՈՍ [< հուն.], գ. ած. (հնց.): Քաղաքագետ:

ՊՈԼԻՏՈԼՈԳ [< политолог < հուն.], գ. (խսկց.): Քաղաքագետ:

ՊՈԼԻՏՈԼՈԳԻԱ [< политология < հուն. politikē պետության կառավարման արվեստ + logōs գիտություն], գ. (գիտ. խսկց.): Քաղաքագիտություն:

ՊՈԼԻՑԱՅ [< полицай < գերմ. Polizei ոստիկանություն], գ. (պատմ. արհմրհ.): Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գերմանացիների գրաված տարածքներում՝ տեղացիների միջից դավաճան ոստիկան (նաև ոստիկանի պաշտոնը):

ՊՈԼԻՑԻԱ [< полиция < գերմ. Polizei < հուն. politeia քաղաքային իշխանություն], գ. (խսկց.): Ոստիկանություն:

ՊՈԼԻՖԱԳԻԱ [< полифагия < պոլի... + հուն. phagein ուտել, խժռել], գ. Շատակերություն՝ սննդանյութերի չափից ավելի օգտագործումը:

ՊՈԼԻՖԹՈՆԳ [< полифтонг < պոլի... + հուն. phthongos հնչյուն, ձայն], գ. (լեզվբ. հնց.): Բազմաբարբառ:

ՊՈԼԻՖԻԼԻԱ [< полифилия < գերմ. Polyphylie < հուն. poly շատ + phylon ցեղ, տեսակ], գ. 1. (կենսբ.): Կենդանիների և բույսերի տեսակների ծագման տեսություն՝ բազմաթիվ նախնական ձևերից: 2. (մարդբ.): Ժամանակակից մարդկային ռասաների ծագման տեսություն՝ տարբեր մարդակերպ նախնիներից:

ՊՈԼԻՖՈՆԻԱ [< полифония < հուն. polyphōnia], գ. (երժշտ.): 1. Բազմաձայնություն: 2. Բազմաձայն ստեղծագործություն:

ՊՈԼԿ [< ռուս. полк], գ. (խսկց.): 1. (ռազմ. հնց.): Գունդ, զորագունդ: 2. *փխբ.* Բազմություն, ամբոխ, մեծ խումբ, զորք:

ՊՈԼԿԱ [< полька < չեխ. polka], գ. (արվ.): Լեհական ազգային պար և դրա երաժշտությունը:

ՊՈԼՅԱՐՈԳՐԱՖԻԱ [< полярография < հուն. polos բևեռ + graphō գրում եմ], գ. (քիմ.): Բևեռագրություն՝ քիմիական վերլուծություն (քանակական և որակական) և քիմիական երևույթների գենետիկայի ուսումնասիրման էլեկտրաքիմիական եղանակ:

ՊՈԼՅՈՒԴԻԵ [< ռուս. люди < մարդիկ], գ. (պատմ.): Տուրք Կիևյան Ռուսիայում, որը հավաքել են իշխանն ու իր դրուժինան՝ ենթակա մարզերի բնակիչներից ամենամյա շրջայցի ժամանակ:

ՊՈԼՅՈՒՑԻԱ [< поллюция < գերմ. Pollution < լատ. pollutio < polluere կեղտոտել, աղտոտել], գ. (բժշկ.): Երազախաբություն:

ՊՈԼՈՆԵԶ [< полонез < ֆր. polonaise < լեհական], գ. (արվ.): Լեհական պար, որը զարգացել է հանդիսավոր բնույթի ժողովրդական երթ-պարի հիման վրա:

ՊՈԼՈՆԻԶՄ [< полонизм < միջին լատ. polonius լեհ], գ. (լեզվբ.): Լեհերենից փոխառված բառ կամ արտահայտություն (այլ լեզուներում), լեհաբանություն:

ՊՈԼՈՆԻՍՏԻԿԱ [< полонистика < միջին լատ.], գ. (լեզվբ.): Գիտություն լեհերենի մասին, լեհագիտություն:

ՊՈԼՈՆԻՈՒՄ [< полоний < միջին լատ. Polonia Լեհաստան], գ. (քիմ.): Քիմիական տարր՝ Po, տարրերի պարբերական համակարգի VI պարբերության VI խմբի տարր, կարգահամարը՝ 84, ատոմային կշիռը՝ 210: Հայտնաբերել են Պ. Կյուրի և Մ. Կյուրի ամուսինները 1898 թ. ուրանի խեժահանքում և անվանել Մ. Կյուրիի հայրենիքի՝ Լեհաստանի պատվին:

Պ(Փ)ՈԿԵՐ [< покер < անգլ. poker], գ. (թղթխղ.): Թղթախաղի մի տեսակ:

ՊՈՄԱԴԱ [< помада < գերմ. Pomade < լատ. pomum պտուղ], գ. (խսկց. հնց.): Շրթներկ:

ՊՈՄԻԴՈՐ [< помидор < իտալ. pomidoro ոսկյա խնձոր(ներ)], գ. (բսբ.): 1. Մորմազգիների ընտանիքին պատկանող բանջարանոցային բույս: 2. Այդ բույսի կորաձև կարմիր (նաև դեղնավուն) պտուղը, լոլիկ:

ՊՈՄՈԼՈԳԻԱ [< помология < լատ. pomum պտուղ + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Պտղասորտագիտություն՝ գյուղատնտեսական գիտություն, որը զբաղվում է պտղատու և հատապտղատու բույսերի տեսակների ուսումնասիրությամբ՝ լավագույնները ընտրելու, տարբեր շրջաններում աճեցնելու, այգիների տեսակային կազմը ու առանձին տեսակները բարելավելու և դրանք արդյունավետ օգտագործելու նպատակով:

ՊՈՄՊ [< помпа < ֆր. pompe], գ. (տեխ.): Հեղուկներ կամ գազեր ներքաշելու կամ արտամղելու մեքենա:

ՊՈՄՊԱԴՈՒՐ [< помпадур < ֆր. pompadour < Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XV-ի սիրուհու՝ մարկիզուհի դե Պոմպադուրի անունից], գ. 1. (արվ.): Գեղարվեստական ոճ XVIII դ. (պաճուճազարդ, ճոխ): 2. (արհմրհ.): Քմահաճ վարչարար:

ՊՈՅԿԻԼՈԹԵՐՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ [< пойкилотермные (< հուն. poikilos տարբեր, բազմազան + thermē ջերմություն) животные]– (կենդբ.): Սառնարյուն կենդանիներ, որոնք չունեն մարմնի հաստատուն ջերմաստիճան. այն պայմանավորված է շրջապատի ջերմաստիճանով:

ՊՈՆԻ [< пони < անգլ. pony], գ. (կենդբ.): Փոքր (80-140 սմ բարձրությամբ) ձի: Հայտնի է պոնիների 20 տեսակ:

ՊՈՆՉԻԿ [< пончик < լեհ. paczek], գ. (խսկց.): 1. Տապակած կլոր կարկանդակ, փքաբլիթ: 2. *փխբ.* Գիրուկ և փափլիկ, թմբլիկ (առավելապես երեխաների և կանանց մասին):

ՊՈՆՉՈ [< пончо < իսպ. poncho], գ. Հարավամերիկյան անձրևանոցի տեսակ՝ չորս կողմերից մարմնի վրա թափվող, մեջտեղում անցք՝ գլխի համար:

ՊՈՆՏՅՈՐ [< понтёр < ֆր. ponte], գ. (թղթխղ.): Թղթախաղում՝ բանկ բռնողի դեմ խաղացող:

ՊՈՆՏՈՆ [< понтон < ֆր. ponton < լատ. pons (pontis) կամուրջ], գ. (ծով.): Կամրջանավ:

ՊՈՇԼԻՆԱ [< ռուս. пошлина], գ. (հնց.): Մաքս, մաքսատուրք՝ ներմուծվող, արտահանվող և տարանցիկ ապրանքներից գանձվող գումար:

ՊՈՉՏԱ [< почта < իտլ. posta], գ. (խսկց. հնց.): 1. Փոստ, փոստային կապ, փոստային հիմնարկների ամբողջություն: 2. Փոստ, փոստառաքումներ, նամակագրություններ: 3. Փոստատուն, փոստ:

ՊՈՉՏԱԼՅՈՆ [< почтальон < իտլ. postiglione], գ. (խսկց. հնց.): Փոստատար:

ՊՈՉՏԱՄՏ [< почтамт < գերմ. Postamt], գ. (խսկց.): Քաղաքի գլխավոր փոստատուն:

ՊՈՊ ԱՐՏ (ՓՈՓ ԱՐՏ) [< поп-арт < անգլ. pop art < pop ընդմիջվող հնչյուն, թեթև հարված, բառացի՝ արվեստ, որ առաջացնում է անակնկալ, շփոթեցնող տպավորություն. մեկնաբանվում է նաև որպես անգլ. popular art-ի՝ հանրամատչելի արվեստի կրճատ ձև], g. (արվ.): Նեոավանգարդիստական ուղղություն կերպարվեստում: Լինելով աբստրակտ արվեստի յուրօրինակ հակազդեցություն և միաժամանակ կապ ունենալով դադաիզմի և սյուռեալիզմի հետ՝ այն տարածում է գտել 1950-ական թթ. 2-րդ կեսից ԱՄՆ-ում (Ջ. Ռոզենկվիստ, Ջ. Ջոնս, Ջ. Դայն, ուղղության հիմնադիր՝ Ռ. Ռաուշենբերգ):

ՊՈՊԼԻՆ [< поплин < ֆր. popeline], գ. (մնծգր.) Ընդլայնական նուրբ մակաշերտով մետաքսյա, կիսամետաքսյա կամ բամբակե գործվածք:

ՊՈՊՈՒԼՅԱՐ [< популярный < լատ. popularis ժողովրդական], ած. (խսկց.): 1. Հանրամատչելի: 2. Հանրահռչակ, հանրաճանաչ:

ՊՈՊՈՒԼՅԱՐՆԵՐ [< популяры < լատ. popularis], գ. (պատմ.): Գաղափարաքաղաքական հոսանք Հռոմեական հանրապետությունում մ.թ.ա. II – I դդ., որն արտահայտել է գյուղական և քաղաքային պլեբեյների շահերը:

ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱ [< популяция < ֆր. population], գ. (կենսբ.): Երկար ժամանակ որոշակի տարածություն զբաղեցնող և մեծ թվով սերունդների ընթացքում ինքնավերարտադրվող միևնույն տեսակի առանձնյակների ամբողջություն:

ՊՈՊՈՒԼԻԶՄ, գ. (քղք.): Ամբոխավարություն:

ՊՈՊՈՒՐԻ [< попурри < ֆր. pot-pourri, բառացի՝ մսի և կանաչեղենի զանազան տեսակներից կերակուր], գ. (երժշտ.): Զանազան երաժշտական ստեղծագործու-

թյունների (օպերային հատվածների, ժողովրդական երգերի, պարեղանակների ևն) կտորներից կազմած երաժշտական ստեղծագործություն:

ՊՈՌՆՈԳՐԱՖԻԱ [< порнография < հուն. pornē պոռնիկ + graphō գրում եմ], գ. Պոռնկագրություն՝ արվեստի՝ գրականության, կինոյի, կերպարվեստի ևն մեջ սեռական կյանքի գռեհիկ-նատուրալիստական, անվայելուչ պատկերում:

ՊՈՍԵՅԴՈՆ, ՊՈՍԻԴՈՆ [< Посейдон < հուն. Poseidōn], գ. (դից.): Ծովերի, օվկիանոսների, ջրերի աստվածը հին հունական դիցաբանության մեջ:

ՊՈՍԻԲԻԼԱԿԱՆՆԵՐ [< поссибилисты < լատ. possibilis հնարավոր], գ. (պատմ. քղք.): Հոսանք ֆրանսիական բանվորական շարժման մեջ XIX դ. 80-ական թթ. – XX դ. սկզբին: Սկզբնապես կազմել են բանվորական կուսակցության ռեֆորմիստական մանրբուրժուական թևը: Պայքարել են հեղափոխական մարքսիզմի դեմ, հակված էին «հնարավորությունների քաղաքականությանը» (“La politique des possibilités” այստեղից էլ անվանումը):

ՊՈՍՏ [< пост < ֆր. poste], գ. (հնց.): 1. Պահակետ, դիրք, կետ: 2. Պահակախումբ, պահակազոր: 3. Պաշտոն (սովորաբար պատասխանատու):

ՊՈՍՏ... [< пост... < լատ. post հետո] Բարդ բառերի սկզբնամաս հետ-, հետո նշանակությամբ:

ՊՈՍՏԱՄԵՆՏ [< постамент < միջին լատ. postamentum < լատ. ponere դնել, տեղադրել], գ. (ճարտ. հնց.): Պատվանդան (արձանի, սյան ևն):

ՊՈՍՏԳԼՈՍԱՏՈՐՆԵՐ [< постглоссаторы < լատ. post հետո + հուն. glossēma բացատրություն պահանջող հնացած կամ հազվադեպ բառ], գ. (պատմ.): Իրավունքի դպրոց Իտալիայում, որը XIII դ. հաջորդել է գլոսատորներին (Բոլոնիայի համալսարանում ծագած դպրոց XI-XIII դդ.), որի ներկայացուցիչները դիտողությունները նշում էին ուսումնասիրվող տեքստի տողերի արանքում կամ լուսանցքներում:

ՊՈՍՏԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ [< постимпрессионизм < լատ. post+ իմպրեսիոնիզմ], գ. (արվ.): XIX դ. վերջի XX դ. սկզբի ֆրանսիական գեղանկարչության մեջ իմպրեսիոնիզմին հաջորդած հիմնական ուղղությունների հավաքական պայմանական անվանումը. նրա ներկայացուցիչներն էին Պ. Սեզանը, Վ. Վան Գոգը, Պ. Գոգենը, Ա. Թուլուզ-Լոտրեկը:

ՊՈՍՏՍԿՐԻՊՏՈՒՄ [< постскриптум < լատ. post scriptum հետգրություն], գ. (գրք.): Հետգրություն՝ գրությանը կցված լրացում, որը սկսվում է P.S. լատիներեն տառերով կամ հայերեն՝ Հ.Գ.:

ՊՈՍՏՈՒԼԱՏ [< постулат < լատ. postulatum պահանջվող], գ. (գիտ.): Կանխադրույթ:

ՊՈՍՏՖԱԿՏՈՒՄ [< постфактум < լատ. post factum արվածից հետո], գ. Ինչ-որ բանի կատարվելուց հետո:

ՊՈՎԻԴԼՈ [< повидло < լեհ. powidla], գ. (խոհր.): Տրորած պտուղներից՝ շաքարով եփելով պատրաստվող քաղցրահամ թանձր ուտելիք:

ՊՈՏԱՇ [< поташ < անգլ. potash < pot աման + ash(es) մոխիր], գ. (քիմ.): Կալիումի կարբոնատ, հիմնային հատկություններով սպիտակ փոշեհատիկների ձևով նյութ, որ ստացվում է փայտանյութի մոխրից, կալիումի քլորիդից:

ՊՈՏԵՆՑԻԱ [< потенция < լատ. potentia ուժ], գ. Ներուժ՝ թաքնված վիճակում գտնվող և որոշակի պայմաններում դրսևորվելու հնարավորություն ունեցող կարողություն՝ զորություն՝ ունակություն, ներուժություն:

ՊՈՏԵՆՑԱՉԱՓ, գ. 1. Էլեկտրաշարժի, ուժի և լարվածության չափման սարք: 2. Լարվածությունը սահունորեն փոփոխելու սարք (պոտենցիոմետր):

ՊՈՏԵՆՑԻԱԼ [< потенциал < լատ. potentia ուժ, զորություն], 1. գ. Որևէ բանի

հզորության չափի աստիճանը, որևէ նպատակով օգտագործվող և օգտագործիչի հնարավորությունների՝ կարողությունների ամբողջությունը, ներուժ: 2. ած. Պոտենցիայի վիճակում գտնվող, ներամփոփ, ներունակ:

ՊՈՏԵՆՑԻՈՄԵՏՐ [< потенциометр < լատ. potentia ուժ + մետր], գ. (տեխ.): 1. Շարժական կոնտակտով (շարժակով), կարգավորվող ռեզիստոր, որը կիրառվում է էլեկտրական լարումը կարգավորելու համար: 2. Կոնդենսատոր՝ չափման կոմպենսացիոն մեթոդով էլշուն կամ լարումը որոշող սարք:

ՊՈՏԵՆՑԻՈՒՄ [< потенцирование < գերմ. potenzieren աստիճան բարձրացնել < Potenz (մաթ.) աստիճան], գ. (մաթ.): Տրված թվի լոգարիթմով այդ թիվը գտնելու գործողությունը:

ՊՈՐՏԻԵ [< портье < ֆր. portier < porte դուռ], գ. Դռնապան՝ հյուրանոցի աշխատող:

ՊՈՐՏԼԱՆԴՑԵՄԵՆՏ [< портландцемент < անգլ. Portland Մեծ Բրիտանիայի հարավում գտնվող թերակղզու անվանում], գ. (հնք.): Հիմնականում կալցիումի սիլիկատներից բաղկացած հիդրավլիկական կապակցանյութ: Օգտագործվում է խողովակների, բետոնի արտադրության ևնի համար:

ՊՈՐՏՄԱՆ [< портмоне < ֆր. porte-monnaie], գ. (խսկց.): Դրամապանակ:

ՊՈՐՏՍԻԳԱՐ [< портсигар < ֆր. porte-cigares], գ. Ծխախոտատուփ, գլանատուփ:

ՊՈՐՏՎԵՅՆ [< портвейн < գերմ. Portwein < Պորտուգալիայի Պորտո քաղաքի անունից], գ. Ընտիր կարմիր գինու մի տեսակ:

ՊՈՐՏՐԵ(Տ) [< портрет < ֆր. portrait], գ. 1. Դիմանկար, պատկեր, նկար: 2. (գրք.): Կերպար, պատկեր: 3. Նկարագիր, բնութագիր:

ՊՈՐՏՈՒԼԱԿ [< портулак < լատ. Portulaca], գ. (բսբ.): Դանդուռ, փրփրեմ:

ՊՈՐՏՖԵԼ [< портфель < ֆր. portefeuille < porter կրել + feuille թերթ], գ. 1. (հնց.): Թղթապանակ, թղթապայուսակ, արժեպանակ, փաստաթղթերի փաթեթ: 2. Մինիստրի՝ նախարարի պաշտոն:

ՊՈՐՈՒՉԻԿ [< ռուս. поручик], գ. (պատմ.): Ցարական բանակի կոչում և աստիճան, ինչպես նաև այդ կոչումն ունեցող զինվորական:

ՊՈՐՖԻՐ [< порфир < հուն. porphyros ծիրանագույն], գ. (հնք.): Հրաբխային լեռնապար, որի մեջ առանձին խոշոր բյուրեղներ իրենց մեծությամբ կամ գույնով առանձնանում են հիմնական ընդհանուր զանգվածից:

ՊՍԵՎԴՈՆԻՄ [< псевдоним < հուն. pseudōnymos մտացածին անուն կրող], գ. (խսկց.): Կեղծանուն:

ՊՍԻԽԱՍԹԵՆԻԱ [< психастения < պսիխո... + հուն. astheneia թուլություն], գ. (բժշկ.): Անձի ախտաբանական յուրահատուկ կերտվածք, պսիխոպաթիայի ձևերից: Նկարագրել է ֆրանսիացի հոգեբույժ Պ. Ժանեն 1903 թ.:

ՊՍԻԽԻԿԱ [< психика < հուն. psychikos հոգեկան], գ. (խսկց.): Հոգեկերտվածք, հոգեկան կառուցվածք, հոգի:

ՊՍԻԽՈ... [< психо... < հուն. psychē հոգի] Բարդ բառերի սկզբնամաս, որն օգտագործվում է հոգեկանին առնչվող տերմիններում:

ՊՍԻԽՈԱՆԱԼԻԶ [< психоанализ < հուն.], գ. Հոգեվերլուծություն՝ հոգեբուժական մեթոդ (հիմքում ընկած է անձի հոգեկան երևույթների հետազոտման և հիվանդին բուժելու տեխնիկան) և հոգեբանական ուսմունք, այդ տեխնիկայի կիրառումից ստացված փաստերն ընհանրացնող տեսությունների ամբողջություն:

ՊՍԻԽՈԳԵՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ - (բժշկ.): Նյարդահոգեկան խանգարումներ, առաջանում են ծանր ու հանկարծակի կամ համեմատաբար թույլ, բայց երկարատև հոգեկան ապրումներից:

ՊՍԻԽՈԶ [< психоз < հուն. psychē հոգի], գ. 1. (բժշկ.): Գլխուղեղի վնասման հետ կապված հոգեկան հիվանդագին վիճակ՝ հոգեկան հիվանդություն: 2. (քղք.): Որևէ տեսակետից խուճապային իրարանցում ներկայացնող վիճակ, տագնապալից՝ հուզումնալից քաղաքական-հասարակական վիճակ, քաղաքական-հասարակական կյանքում ստեղծված մոլագարություն: 3. *փխբ.* Մարդու այս կամ այն տարօրինակությունը:

ՊՍԻԽՈԹԵՐԱՊԻԱ [< психотерапия < պսիխո... + թերապիա], գ. (բժշկ.): Բուժման նպատակով հիվանդի վրա հոգեկան ներգործությունների համակարգ: Հիմնականը խոսքի միջոցով կատարվող ներշնչումն է:

ՊՍԻԽՈԼԱՄԱՐԿԻԶՄ, գ. (գիտ.): Նեոլամարկիզմ:

ՊՍԻԽՈԼՈԳԻԱ [< психология < պսիխո... + հուն. logia], գ. (գիտ. հնց.): Հոգեբանություն:

ՊՍԻԽՈԼՈԳԻԶՄ [< психологизм < հուն.], գ. 1. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիզմի տեսակետներից մեկը, որը օբյեկտիվ իրականությունը հանգեցնում է զգայությունների ամբողջությանը՝ փիլիսոփայությունը հիմնում է հոգեբանության, իսկ տրամաբանությունն ու իմացությունը՝ ներքին փորձի վրա: 2. (գիտ.): Հասարակության ու հասարակական երևույթների և նրանց պատմության իդեալիստական ըմբռնման տարատեսակներից մեկը, որը հասարակական կեցությունը բացատրում է մարդկանց հոգեբանությամբ:

ՊՍԻԽՈՀԻԳԻԵՆԱ [< психогигиена < հուն.], գ. (գիտ.): Հիգիենայի բաժին, որը զբաղվում է մարդու հոգեկան առողջության պահպանման ու կոփման միջոցառումների հարցերով:

ՊՍԻԽՈՊԱԹԻԱ [< психопатия < պսիխո... + հուն. pathos տառապանք, հիվանդություն], գ. (բժշկ.): Հոգեկան հիվանդությունների խումբ, որը վերաբերում է փոքր կամ սահմանային հոգեբուժությանը. բնորոշվում է անձի (հատկապես զգացմունքակամային ոլորտի) աններդաշնակ զարգացմամբ:

ՊՍԻԽՈՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ [< психопрофилактика < պսիխո... + հուն. prophilaktikos կանխարգելիչ], գ. (գիտ.): Գիտություն, որը զբաղվում է հոգեկան հիվանդությունների կանխարգելման հարցերով:

ՊՍԻԽՈՏԵԽՆԻԿԱ [< психотехника < պսիխո... + տեխնիկա], գ. (գիտ.): Հոգեբանության բնագավառ, որի առարկան է մարդու աշխատանքի հետ կապված գործնական հարցերի լուծումը հոգեբանության օգնությամբ:

ՊՍԻԽՈՏՐՈՊ ՆՅՈՒԹԵՐ [< психотропические (< պսիխո... + հուն. tropos ուղղություն) вещества] – (բժշկ.): Դեղանյութերի խումբ, որոնք օժտված են հոգեկան գործունեության խանգարումները կարգավորող հատկությամբ:

ՊՍԻԽՈՖԱՐՄԱԿՈԼՈԳԻԱ [< психофармакология < պսիխո... + հուն. pharmakon դեղամիջոց, դեղ + logos գիտություն], գ. (բժշկ.): Հոգեդեղաբանություն՝ կլինիկական և տեսական բժշկության համալիր բաժին, որն ուսումնասիրում է մարդու հոգեկան տարբեր ոլորտների վրա պսիխոտրոպ նյութերի ազդեցության մեխանիզմները, կլինիկական արդյունաբերությունը և նոր պատրաստուկների սինթեզման հարցերը:

ՊՍԻԽՈՖԻԶԻԿԱ [< психофизика < պսիխո... + հուն. physikē], գ. (գիտ.): Հոգեֆիզիկա՝ հոգեբանության բնագավառ, որն ուսումնասիրում է ֆիզիկական գրգռիչ-

ների և համապատասխան զգայությունների միջև առաջացող հարաբերակցությունները, որոնք արտահայտվում են քանակական չափումներով:

ՊՍԻԽՈՖԻԶԻՈԼՈԳԻԱ [< психофизиология < պսիխո... + հուն. physis բնություն+ logos գիտություն], գ. (գիտ.): Հոգեֆիզիոլոգիա՝ հոգեբանության բնագավառ, որի խնդիրն է բացահայտել հոգեկան գործընթացների, հատկանիշների և վիճակների ֆիզիոլոգիական ընդհանուր նախադրյալները, մեխանիզմները, ինչպես նաև դրանց հիմքում եղած նյարդաֆիզիոլոգիական և էլեկտրաֆիզիոլոգիական օրինաչափությունները:

ՊՍՈՐԻԱԶ [< псориаз < հուն. psōriasis], գ. (բժշկ.): Մաշկի խրոնիկ բորբոքման տեսակ, որը վարակիչ չէ:

ՊՏԵՐՈԶԱՎՐ [< птерозавр < հուն. pteron թև + sauros մողես], գ. (հնէաբ.): Բրածո (թռչող) կենդանի:

ՊՐԱԳՄԱՏԻԶՄ [< прагматизм < հուն. pragma գործ, գործողություն], գ. (փիլ.): 1. Հոսանք փիլիսոփայության մեջ, որը ճիշտ է համարում ոչ թե այն, ինչ համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը, այլ այն, ինչ որ տալիս է գործնականորեն օգտակար, ցանկալի արդյունք: 2. Պատմական գիտության մեջ դրսևորվող հոսանք, որ սահմանափակվում է պատմական իրադարձությունների նկարագրմամբ՝ նրանց արտաքին կապերի ու հաջորդականության շարադրանքով, առանց պատմական զարգացման ներքին օրինաչափությունները բացահայտելու:

ՊՐԱԳՄԱՏԻԿ [< прагматик, прагматический < հուն.], գ. ած. 1. Պրագմատիզմի հետևորդ, պրագմատիստ՝ իրատես. այն անհատը, որը տեսնում է տեղի ունեցող իրադարձությունների և նրանցից բխող հետևանքների միջև եղած կապը: 2. Պրագմատիզմին հատուկ, պրագմատիզմի վրա հիմնված, իրատեսական:

ՊՐԱԳՄԱՏԻՍՏ [< прагматист < հուն.], գ. ած. Պրագմատիզմի հետևորդ:

ՊՐԱԶԵՈԴԻՄ [< празеодим < հուն. prasinos բաց կանաչ + (di) dymos կրկնակ, երկվորյակ], գ. (քիմ.): Pr, տարրերի պարբերական համակարգի VI պարբերության III խմբի տարր: Պատկանում է լանթանիդների ընտանիքին, կարգահամարը՝ 59, ատոմական զանգվածը՝ 140.91:

ՊՐԱԿՏԻԿ [< практичный, практик < հուն.], ած. 1. (խսկց.): Գործնական: 2. Գործնական գիտելիքներ ունեցող և գործարար:

ՊՐԱԿՏԻԿԱ [< практика < հուն. praktikos գործունյա], գ. 1. (փիլ.): Հասարակության գոյության անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ուղղված՝ մարդկանց ողջ գործունեության ամբողջությունը: 2. Կյանքը՝ իրականությունը՝ որպես որևէ կարգի գիտելիքների, եզրահանգումների կիրառման ու ստուգման բնագավառ: 3. Որևէ կարգի գիտելիքների գործնական կիրառումը՝ անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար, որևէ բնագավառում հմտություն ձեռք բերելու համակարգված վարժությունների ամբողջությունը: 4. Տեսական գիտելիքների (ուսանողների, սովորողների ևն) գործնական կիրառումը՝ որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս: 5. Գործունեության որևէ բնագավառի աշխատանքի եղանակների ու հմտությունների ամբողջությունը: 6. (խսկց.): Զբաղմունքի որևէ բնագավառի գործունեություն՝ ըստ մասնագիտության (առավել. իրավաբանների և բժիշկների մասին):

ՊՐԱԿՏԻԿԱՆՏ [< практикант < հուն.], գ. 1. Պրակտիկա՝ գործնական աշխատանք անցկացնող՝ պրակտիկայի մեջ գտնվող մարդ (ուսանող, կուրսանտ ևն): 2. Սովորելու՝ գործնական գիտելիքներ ու հմտություն ստանալու համար որևէ

հիմնարկ՝ արտադրական ձեռնարկություն գործուղված բանվոր կամ մասնագետ:

ՊՐԱԿՏԻԿՈՒՄ [< практикум < հուն. praktikos գործունյա], գ. Որևէ ուսումնական առարկայի գործնական պարապմունքների դասընթաց:

ՊՐԱԿՏԻՑԻԶՄ [< практицизм < հուն.], գ. 1. Գործնական աշխատանքներին՝ գործունեությանն առավելություն տալը՝ տեսական գիտելիքների նշանակության թերագնահատումով: 2. Գործնականություն, գործարար մոտեցում:

ՊՐԱԿՐԻՏՆԵՐ [< пракриты < հնդկ.], գ. (լեզվբ.): Միջին հնդկական լեզուներ ու բարբառներ, որոնք շարունակում են հնդեվրոպական բարբառների զարգացման հին հնդկական փուլը և ընկած են նոր հնդկական լեզուների հիմքում:

ՊՐԵԱՄԲՈՒԼԱ [< преамбула < ֆր. préambule նախաբան < լատ. praeambulus առջևից գնացող], գ. (իրավբ.): Օրենսդրական կամ այլ իրավական ակտի, ինչպես նաև դեկլարացիայի կամ միջազգային պայմանագրի ներածական մաս, որտեղ շարադրվում են տվյալ ակտի նպատակներն ու խնդիրները, այն շարժառիթները, պայմաններն ու հանգամանքները, որոնք ակտն ընդունելու պատճառ են դարձել:

ՊՐԵԴԻԿԱՏ [< предикат < լատ. praedicatum], գ. (քեր. հնց.): 1. Ստորոգյալ: 2. Տրամաբանական ստորոգյալ՝ այն, որով դատողություն է արտահայտվում առարկայի՝ գործողություն կատարողի (սուբյեկտի) մասին:

ՊՐԵԶԵՆՍ [< презенс < լատ. praesens], գ. (քեր. հնց.): Ներկա ժամանակ:

ՊՐԵԶԵՆՏ [< презент < ֆր. présent], գ. (խսկց.): Նվեր:

ՊՐԵԶԵՆՏԱՑԻԱ [< презентация < լատ. praesentatio], գ. (խսկց.): Շնորհանդես՝ ինչ-որ նոր բանի ներկայացում, հասարակությանը ներկայացնելը:

ՊՐԵԶԵՐՎԱՏԻՎ [< презерватив < լատ. praeservare պաշտպանել], գ. (խսկց.): Պահպանակ՝ սեռական ակտերի ժամանակ զանազան վեներական հիվանդություններից, նաև հղիությունից պահպանիչ միջոց:

ՊՐԵԶԻԴԵՆՏ [< президент < լատ. praesidens (praesidentis), բառացի՝ առջևում նստող], գ. (խսկց.): 1. Ընկերությունների՝ գիտական հիմնարկների ևն նախագահ: 2. Հանրապետական կառավարության որոշակի ժամկետով ընտրված ղեկավար:

ՊՐԵԶԻԴԻՈՒՄ [< президиум < լատ. preasidire նստել առջևում, նախագահել], գ. (հնց.): Նախագահություն:

ՊՐԵԶՈՒՄՊՑԻԱ [< презумпция < լատ. praesumptio], գ. 1. Ենթադրություն, որը հենվում է հավանականության վրա: 2. (իրավբ.): Փաստի ճանաչումը՝ որպես հավաստի, քանի դեռ չի ապացուցվել հակառակը (օր.՝ անմեղության կանխավարկած):

ՊՐԵԼԱՏ [< прелат < լատ. praelatus նախամեծար, նախապատիվ], գ. (եկեղ.): Բարձրագույն հոգևոր տիտղոսը՝ կաթոլիկ և անգլիական եկեղեցիներում:

ՊՐԵԼԻՄԻՆԱՐԻԱ [< прелиминарий < ֆր. préliminaires < լատ. prae առաջ + limen (limines) սկիզբ], գ. (դվնգ.): Նախնական բանակցություններ, նախնական համաձայնություն (երկու պետությունների միջև):

ՊՐԵԼՅՈՒԴ [< прелюдия < լատ. praeludium < prae նախքան + ludus խաղ, նվագ], գ. (երժշտ.): Նախանվագ՝ որևէ պիեսի նախորդող ներածական ստեղծագործություն, հետագայում՝ ոչ մեծ ծավալի գործիքային պիես:

ՊՐԵՄԻԱ [< премия < լատ. praemium պարգև], գ. (խսկց.): 1. Մրցանակ՝ մրցության մեջ հաղթողին տրվող պարգև: 2. Պարգևատրություն, դրամական կամ նյութական խրախուսանք:

ՊՐԵՄԻԱԼ [< премиальный < լատ.], ած. Պարգևատրական:

ՊՐԵՄԻԵՐ [< премьер < ֆր. premier առաջին], Տե՛ս Պրեմիեր մինիստր:

ՊՐԵՄԻԵՐԱ [< премьера < ֆր. première, բառացի՝ առաջին], գ. Թատերական ներկայացման, կինոնկարի ևն առաջին ցուցադրումը, բեմել:

ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱ [< премьер лига < անգլ. prime league], գ. (սպորտ.): Անգլիայի ֆուտբոլի առաջնության բարձրագույն լիգան:

ՊՐԵՄԻԵՐ ՄԻՆԻՍՏՐ [< премьер-министр < ֆր. premier ministre], գ. Կառավարության գլուխ, մինիստրների խորհրդի կամ կաբինետի նախագահ, վարչապետ:

ՊՐԵՄԻԵՐՈ [< премьеро < իսպ. premiero], գ. (սպորտ.): Իսպանիայի ֆուտբոլի առաջնության լիգան:

ՊՐԵՅՍԿՈՒՐԱՆՏ [< прейскурант < գերմ. Preiskurant < ֆր. prix-courant < prix գին + courant ընթացիկ], գ. (խսկց.): Գնացուցակ:

ՊՐԵՊԱՐԱՏ [< препарат < լատ. praeparatus պատրաստած], գ. (բժշկ.): Պատրաստուկ՝ լաբորատորային միջոցներով կամ գործարանային արտադրմամբ պատրաստվող դեղագործական կամ քիմիական նյութ:

ՊՐԵՊՈԶԻՑԻԱ [< препозиция < լատ. prae առջև, առաջ + positio դիրք], գ. (լեզվբ.): Նախադասություն, առաջադասություն, նախադաս լինելը:

ՊՐԵՌԱՖԱՅԵԼԻՏՆԵՐ [< прерафаэлиты < լատ. prae նախա + Ռաֆայել], գ. (արվ.): XIX դ. 2-րդ կեսի անգլիացի նկարիչներ և գրողներ, որոնց նպատակն էր վերածնել միջին դարերի և Վաղ Վերածննդի («մինչև Ռաֆայելը») արվեստի «անկեղծությունը» ու «միամիտ կրոնականությունը»: 1848 թ. հիմնադրել են բանաստեղծ և գեղանկարիչ Դ. Գ. Ռոսսետտին, գեղանկարիչներ Ջ. Է. Միլեսը և Հ. Հանտը:

ՊՐԵՌՈԳԱՏԻՎԱ [< прерогатива < լատ. praerogativa < praerogare առաջինը հարցնել], գ. (իրավբ. հնց.): Արտոնություն, առանձնաշնորհություն, առանձնաշնորհ, որը պատկանում է որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի:

ՊՐԵՍ [< пресс < ֆր. presse < լատ. pressare ճնշել, մամլել], գ. (տեխ.): Մամլիչ, ճնշամամլիչ:

ՊՐԵՍ... [< пресс... < пресса բառի կրճատ ձևը < ֆր. presse] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս բառերի կապը մամուլին, մամուլի աշխատողներին և հաստատություններին:

ՊՐԵՍԲ(Վ)ԻՏԵՐԱԿԱՆՆԵՐ [< пресвитериане < հուն. presbyteros ավագ երեց], գ. (պատմ.): 1. Երեցականներ՝ կալվինականության հետևորդներ Շոտլանդիայում, XVI դ.: Պուրիտանական կուսակցություն XVII դ. անգլիական հեղափոխության շրջանում: Հիմնադիրը Ժ. Կալվինի աշակերտ Ջ. Նոքսն է:

ՊՐԵՍ-ԲՅՈՒՐՈ [< пресс- бюро < անգլ. press-bureau < ֆր.] գ. 1. Լրագրողների՝ համագումարներում, կոնգրեսներում, փառատոներում, մարզական մրցումներում ևն տեղեկատվական և կազմակերպական ծառայության բաժին: 2. Նշանավոր թերթերի խմբագրություններին, մամուլի գործակալություններին ևն կից հաղորդագրության (ինֆորմացիայի) մարմին, մամուլի բյուրո:

ՊՐԵՍԻՆԳ [< прессинг < անգլ. pressing ճնշում], գ. (սպորտ.): Մի շարք սպորտային խաղաձևերում (ֆուտբոլ, հոկեյ, բասկետբոլ ևն)՝ ակտիվ պաշտպանության ձևերից մեկը:

ՊՐԵՍ-ԿՈՆՖԵՐԱՆՍ [< пресс-конференция < անգլ. press-conferense < ֆր.], գ. Պետական, քաղաքական, հասարակական և գիտության գործիչների հանդիպում մամուլի ներկայացուցիչների հետ՝ տեղեկատվական բնույթի զրույցի, քաղաքական հարցերի ու իրավիճակների մեկնաբանության ևն նպատակով, մամուլի ասուլիս:

ՊՐԵՍՏԻԺ [< престиж < ֆր. prestige], գ. (խսկց.): Հեղինակություն, ազդեցություն, հարգ, վարկ, որը վայելում է որևէ մեկը:

ՊՐԵՍՏՈ [< престо < իտլ. presto բառացի՝ արագ], գ. (երժշտ.): Երաժշտական արագ տեմպի հիմնական նշումներից: Ավելի արագ, քան ալեգրոն: Պրեստո է կոչվում նաև այդպիսի արագ տեմպով նվագելու համար գրված գործիքային պիեսը:

ՊՐԵՎԵՆՏԻՎ [< превентивный < ֆր. préventif < լատ. praeventus], ած. Նախապաշտպանական, նախազգուշական:

ՊՐԵՏԵՆԴԵՆՏ [< претендент < լատ. praetendens (praetendentis)], գ. ած. (խսկց.): Հավակնորդ:

ՊՐԵՏԵՆԶԻԱ [< претензия < միջին լատ. praetensio], գ. (խսկց.): Բողոք, հայց, պահանջ, առարկում:

ՊՐԵՏԵՐԻՏ [< претерит < լատ. praeteritus անցյալ], գ. (լեզվբ.): Անցյալ ժամանակը այն լեզուներում, որտեղ չեն տարբերակվում անցյալ կատարյալ, անցյալ անկատար և վաղակատար ու հարակատար ժամանակները. սա քերականական անցյալ ժամանակն է ամենաընդհանուր իմաստով:

ՊՐԵՏՈՐ [< претор < լատ. praetor], գ. (պատմ.): Հին Հռոմում սկզբնապես կոնսուլների և դիկտատորների տիտղոսը, հետագայում՝ պաշտոնական անձ, որին պատկանում էր դատական գերագույն իշխանությունը:

ՊՐԵՏՈՐԻՈՒՄ [< преториум < լատ. praetorium], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ զինվորական ճամբարի այն տեղը, որտեղ գտնվում են հրամանատարի վրանը և ռազմական խորհուրդը:

ՊՐԵՏՈՐՅԱՆՆԵՐ [< преторианцы < լատ. praetoriani], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ նախապես հրամանատարի թիկնազորը, հետագայում՝ կայսերական (միապետի) գվարդիան. հետագայում դարձան քաղաքական մեծ ուժ և մասնակցում էին պետական հեղաշրջումներին: 2. *փխբ.* Վարձու զորքեր՝ իշխանությանը նեցուկ:

ՊՐԵՐԻԱՆԵՐ [< прерии < ֆր. prairie մարգագետին], գ. 1. Հյուսիսային Ամերիկայում (Կանադայում և ԱՄՆ-ում) սևահողերի վրա տարածված տափաստանային կամ սավաննային տիպի բարձրախոտ բուսական ֆորմացիաների խումբ: 2. Պրերիա են կոչվում նաև Հյուսիսային Ամերիկայի նոսր ծառային ու խիտ բարձրախոտային բուսածածկույթով հարթավայրերը:

ՊՐԵՑԵԴԵՆՏ [< прецедент < լատ. praecedens (praecedentis) առջևից գնացող], գ. (հնց.): Նախադեպ:

ՊՐԵՑԵՍԻԱ [< прецессия < լատ. praecessio շարժում առջևից], գ. (աստղգ.): Երկրի պտտման առանցքի դանդաղ շարժումը շրջանային կոնով, որի սիմետրիայի առանցքն ուղղահայաց է խավարածրի հարթությանը, առաջընթացության:

ՊՐԵՑԻՊԻՏԱՏ [< преципитат < լատ. praecipitatus ներքև գցված], գ. 1. (քիմ.): Նստվածք: 2. (հնք.): Կալցիումի երկտեղակալված ֆոսֆատի երկհիդրատ, ֆոսֆորական հանքային պարարտանյութ: Սպիտակ կամ բաց մոխրագույն փոշի է, հող մտցնելիս փոշեցնցուղվում է, լավ սփռվում է տուկային շարքացաններով:

ՊՐԵՖԵԿՏ [< префект < լատ. praefectus պետ], գ. Ոստիկանապետ, քաղաքային ոստիկանության պետ որոշ երկրներում:

ՊՐԵՖԵԿՏՈՒՐԱ [< префектура < լատ. praefectura], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ հանրապետության շրջանի մունիցիպիումներ [(լատ. municipium) ինքնավարություն ունեցող քաղաքներ], որոնք կորցրել էին ինքնավարությունն ու գտնվում էին

հռոմեական պրեֆեկտի հսկողության ներքո: 2. Ճապոնիայում՝ հիմնական վարչատերիտորիալ միավորի անվանումը:

ՊՐԵՖԵՐԱՆՍ [< преферанс < ֆր. préférence, բառացի՝ նախապատվություն, գերապատվություն], գ. (թղթխղ.): Թղթախաղի մի տեսակ:

ՊՐԵՖԵՐԵՆՑԻԱ [< преференция < ֆր. préférence < լատ. praeferre գերադասել, նախընտրել], գ. (առևտր.): Արտոնություն, առավելություն, նախապատվություն (միջազգային հարաբերություններում, առևտրում են):

ՊՐԵՖԻՔՍ [< префикс < ֆր. prix fixe < լատ. praefixus առջևում կցված], գ. (լեզվբ. հնց.): Նախածանց:

ՊՐԵՖԻՔՍԱՑԻԱ [< префиксация < լատ.], գ. (լեզվբ. հնց.): Նախածանցում:

ՊՐԵՖՈՐՄԻԶՄ [< преформизм < լատ. praeformare նախաձևավորվել], գ. (կենսբ.): Ուսմունք, ըստ որի՝ օրգանիզմների սեռական բջիջներում կան սաղմի զարգացումը և ձևավորվող օրգանիզմի հատկանիշները կանխորոշող նյութական կառուցվածքներ: Առաջացել է պրեֆորմացիայի մասին XVII-XVIII դդ. տիրապետող պատկերացումներից, որոնց համաձայն ձևավորվող օրգանիզմն իբրև թե ձևավորված վիճակում առկա է ձվում կամ սպերմատոզոիդում:

ՊՐԻԲՈՐ [< ռուս. прибор], գ. (խսկց.): 1. Գործիք, սարք, փորձասարք: 2. Սպասք՝ պարագաներ (սափրվելու են):

ՊՐԻԶ [< приз < ֆր. prix], գ. (խսկց.): Մրցանակ՝ հաղթանակի համար տրվող մրցանակ:

ՊՐԻԶՄԱ [< призма < հուն. prisma, բառացի՝ սղոցվածք], գ. 1. (երկրչ.): Բազմանիստ մարմին, որի խարիսխները հավասար և զուգահեռ բազմանկյուններ են, իսկ կողմնական երեսները՝ զուգահեռագծեր, հատվածակողմ: 2. (ֆիզ.): Թափանցիկ նյութից պատրաստված այդ ձևի եռանիստ առարկա, որ օգտագործվում է լույսը սպեկտրի տարրալուծելու, լույսի ճառագայթների ուղղությունը փոխելու և այլ նպատակներով:

ՊՐԻԶՄԱՏՈԻԴ [< призматоид < հուն. prisma (prismatos) + eidos], գ. (երկրչ.): Հատվածակողմանի բազմանիստ, որի երկու նիստերը զուգահեռ են՝ ընկած են զուգահեռ հարթություններում, իսկ մյուս նիստերը եռանկյուններ կամ սեղաններ են:

ՊՐԻՄԱ [< прима < լատ. prima առաջին], գ. (երժշտ.): 1. Գամմայի առաջին ձայնը: 2. Թավջութակի կամ ջութակի առաջին լարը: 3. Ներդաշնակություն, միաձայն նվագ:

ՊՐԻՄԱԴՈՆՆԱ [< примадонна < իտլ. primadonna, բառացի՝ առաջին տիկին], գ. (թատր.): Օպերայում կամ օպերետայում՝ առաջնակարգ դերերգեր կատարող երգչուհի:

ՊՐԻՄԱՍ [< примас < լատ. primas գլխավոր, առաջնակարգ], գ. (եկեղ.): Գահերեց արքեպիսկոպոս (կաթոլիկական և անգլիական եկեղեցիներում):

ՊՐԻՄԱՏ [< примат < լատ. primatus], գ. (փիլ.): Առաջնություն:

ՊՐԻՄԱՏ(ՆԵՐ) [< приматы < լատ. primates առաջնակարգեր], գ. (կենդբ.): Ամենակազմակերպված կաթնասունների կարգը, որի մեջ մտնում են կիսակապիկները, կապիկները և մարդը (ծագումնաբանական տեսակետից):

ՊՐԻՄԻՏԻՎ [< примитивный < լատ. primitivus առաջին, ամենից վաղ], ած. 1. Մարդկային հասարակության զարգացման նախնական աստիճաններին հատուկ՝ վերաբերող, նախնադարյան, նախնական: 2. Պարզ, հասարակ: 3. Պարզունակ: 4. Մակերեսային, ոչ խոր, ոչ խորիմաստ, պարզամիտ, ոչ խորամիտ:

ՊՐԻՄԻՏԻՎԻԶՄ [< примитивизм < լատ.], գ. 1. Պարզունակ մոտեցում (որևէ խնդրի՝ երևույթի են): 2. (նկարչ.): Պատկերման միջոցների միտումնավոր պար-

զունակացումը և, այսպես կոչված, պրիմիտիվ արվեստի կիրառումը:

ՊՐԻՄՈՒՍ [< примус < լատ. primus առաջին, լավագույն], գ. (խսկց.): Օդը ներս մղելով վառվող նավթավառ:

Պ(Փ)ՐԻՆՏԵՐ [< принтер < անգլ. printer], գ. (տեխ. խսկց.): Տպիչ՝ համակարգչում պահպանվող տեղեկատվությունը, որևէ առարկայի վրա (թուղթ ևն) տեսանելի արտատպող սարք:

ՊՐԻՆՑ [< принц < գերմ. Prinz < ֆր. prince < լատ. princeps առաջին, գլխավոր], գ. (պատմ.): Թագավորական տան անդամի և տիրակալ իշխանի տիտղոս՝ Արևմտյան Եվրոպայում, ինչպես և այդ տիտղոսը կրող անձը, արքայազն:

ՊՐԻՆՑԵՍԱ [< принцесса < գերմ. Prinzessin, ֆր. princesse < լատ.], գ. (պատմ.): Արքայադուստր, արքայորդու կին:

ՊՐԻՆՑԻՊ [< принцип < լատ. principium հիմք, սկիզբ], գ. (խսկց.): Սկզբունք՝ ներքին համոզմունքների՝ տեսակետների ամբողջությունը՝ համակարգը:

ՊՐԻՆՑԻՊԱՏ [< принципат < լատ. principatus < princeps առաջին], գ. (պատմ.): Հին Հռոմում վաղ կայսրության ժամանակաշրջանում (մ.թ.ա. 27- մ.թ. 193) ձևավորված միապետության յուրահատուկ ձևի պայմանական անվանումը

ՊՐԻՆՑԻՊԻԱԼ [< принципиальный < լատ. principalis գլխավոր], ած. (խսկց.): Սկզբունքային:

ՊՐԻՈՄ [< ռուս. приом], գ. (խսկց.): 1. Որևէ բան իրականացնելու միջոց՝ եղանակ: 2. Շարժումների՝ ճարպիկ արարքների հնար: 3. Հնարանք:

ՊՐԻՈՐԻՏԵՏ [< приоритет < գերմ. Priorität < լատ. prior առաջին], գ. (խսկց.): 1. Առաջնություն, առավելություն: 2. Գերակայություն, առաջնահերթություն:

ՊՐԻՍՏԱՎ [< ռուս. пристав], գ. (պատմ. խսկց.): Տեղական ոստիկանության պետ՝ մինչհեղափոխական Ռուսաստանում:

ՊՐԻՎԱՏ-ԴՈՑԵՆՏ [< приват-доцент < գերմ. Privat-dozent < լատ. privatim մասնավոր ձևով + docens ուսուցանող], գ. (պատմ.): Մինչհեղափոխական Ռուսաստանի և մի շարք երկրների համալսարանների կամ բարձրագույն ուս. հաստատությունների արտահաստիքային դասախոսի գիտական կոչում:

ՊՐԻՎԱՏԻԶԱՑԻԱ [< приватизация < լատ. privatus մասնավոր], գ. Մասնավորեցում, սեփականաշնորհում:

ՊՐԻՎԻԼԵԳԻԱ [< привилегия < լատ. privilegium], գ. (խսկց.): 1. Արտոնություն, առանձնաշնորհություն: 2. Առավելություն:

ՊՐՈԲԼԵՄ [< проблема < հուն. problēma խնդիր], գ. 1. Տեսական կամ գործնական լուծում պահանջող հարց, խնդիր, հիմնահարց: 2. Գիտական ուսումնասիրությունների մի շարք կամ բազմաթիվ հարցերի ու թեմաների ամբողջություն:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ, ած. 1. Պրոբլեմին հատուկ: 2. Պրոբլեմ հանդիսացող: 3. Պրոբլեմի բնույթ ունեցող: 4. Չապացուցված, ենթադրական, վեճերի ու տարակարծությունների տեղիք տվող:

ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿ [< проблематический < հուն.], ած. Նույնն է՝ Պրոբլեմային:

ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿԱ [< проблематика < հուն.], գ. Պրոբլեմների ամբողջություն:

ՊՐՈԲՍ [< пробст < գերմ. Probst < լատ. praepositus ղեկավար], գ. (կրոն.): Լյութերականների ավագ քահանա:

ՊՐՈԳԵՍՏԵՐՈՆ [< прогестерон < լատ. pro... նախա... + gestatio հղիություն], գ. (կենսբ.): Ողնաշարավոր կենդանիների և մարդու իգական սեռական ստերոիդային հորմոն:

ՊՐՈԳԻՄՆԱԶԻԱ [< прогимназия < լատ. pro փոխարեն + գիմնազիա], գ. (պատմ.): Ռուսաստանում չորսդասյա ուսումնական հաստատություն, որ համապատասխանում է գիմնազիայի չորս կրտսեր դասարաններին:

ՊՐՈԳՆԱՏ(Թ)ԻԶՄ [< прогнатизм < ֆր. prognathisme < լատ. pro առաջ + հուն. gnathōs ծնոտ], գ. (կզմխս.): Առաջնածնոտություն, վերին ծնոտի առաջ ցցվելը:

ՊՐՈԳՆՈԶ [< прогноз < հուն. prognōsis], գ. (խսկց.): 1. Որոշ գիտական տվյալների հիման վրա որևէ բանի զարգացման ընթացքի առաջիկայում սպասվող ելքի նախագուշակում: 2. (բժշկ.): Հիվանդության ելքի գուշակում՝ եղած տվյալների հաշվառման հիման վրա, նախագիտանք:

ՊՐՈԳՆՈՍՏԻԿԱ [< прогностика < հուն. prognōstikē], գ. (խսկց.): Կանխատեսումների մշակման օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ և մեթոդաբանություն:

ՊՐՈԳՐԱՄԱ [< программа < հուն. programma հայտարարություն, հրաման, կարգադրություն], գ. (հնց.): Ծրագիր (տարբեր նշանակություններով):

ՊՐՈԳՐԱՄԻՍՏ [< программист < հուն.], գ. (ինֆորմ. խսկց.): Ծրագրավորող:

ՊՐՈԳՐԵՍ [< прогресс < լատ. progressus], գ. Առաջադիմություն, առաջընթաց:

ՊՐՈԳՐԵՍԻԱ [< прогрессия < լատ. progressio առաջընթաց շարժում], գ. (մաթ.): Թվերի հաջորդական շարք, որի մեջ յուրաքանչյուր թիվ, սկսած երկրորդից, իր հարևան թվերի միջին թվաբանականն է (թվաբանական պրոգրեսիա) կամ հաստատուն մեծությամբ բազմապատիկը (երկրաչափական պրոգրեսիա), առաջատվություն:

ՊՐՈԳՐԵՍԻՎ [< прогрессивный < լատ.], ած. 1. Առաջադիմական: 2. Հետզհետե աճող՝ զարգացող:

ՊՐՈԳՈՒԼ [< ռուս. прогул], գ. (խսկց.): 1. Պարապուրդ՝ աշխատանքի չնախատեսված դադար: 2. Գործալքում՝ անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը՝ չաշխատելը:

ՊՐՈԳՈՒԼՇՉԻԿ [< ռուս. прогульщик], գ. ած. (խսկց.): Գործալիք:

ՊՐՈԴՈՒԿՏ [< продукт < լատ. productus արտադրողական], գ. (խսկց.): 1. Արդյունք: 2. Արտադրանք: 3. Գյուղատնտեսական արտադրանք: 4. Որևէ արտադրանքի համար որպես հումք ծառայող մթերք՝ արտադրված նյութ:

ՊՐՈԴՈՒԿՑԻԱ [< продукция < լատ. productio < producere արտադրել], գ. Արտադրանք:

ՊՐՈԴՅՈՒՍԵՐ [< продюсер < անգլ. producer < լատ. producere արտադրել, ստեղծել], գ. (կինո.): Կինոընկերության վստահված անձ, որն իրականացնում է նկարահանվող ֆիլմի գեղարվեստական և կազմակերպչական-ֆինանսական վերահսկողությունը:

ՊՐՈԶԱ [< проза < prorsa (oratio) նպատակասլաց (խոսք)], գ. 1. (գրկն.): Արձակ: 2. *փխբ.* Առօրյա՝ սովորական բան:

ՊՐՈԶԱԻԶՄ [< прозаизм < լատ.], գ. 1. (գրկն.): Չափածո ստեղծագործության մեջ գործածված բառ կամ արտահայտություն, որ հատուկ չէ բանաստեղծական խոսքին, չափածո խոսքի համար ոչ սազական բառ կամ արտահայտություն 2 . *փխբ.* Ցանձրալի՝ գլխացավանք պատճառող բան:

ՊՐՈԶԱԻԿ [< прозаик < լատ. prosaicus արձակ], 1. ած. Պրոզայի բնույթ ունեցող, պրոզային հատուկ: 2. գ. (հնց.): Արձակագիր:

ՊՐՈԹԵԶ [< протез < ֆր. prothèse < հուն. prothesis հավելում, ավելացում, միացում, կցում], գ. Մարմնի արհեստական անդամ, փոխադիր:

ՊՐՈԹԵԶԱԳՈՐԾ, գ. Պրոթեզներ պատրաստող մասնագետ, պրոթեզիստ:

ՊՐՈԹԵԶԻՍՏ [< протезист < ֆր.], գ. Տե՛ս Պրոթեզագործ:

ՊՐՈԹՐՈՄԲԻՆ [< протромбин < լատ. pro + թրոմբին], գ. (կենսբ.): Տե՛ս Պրոտրոմբին:

ՊՐՈԺԵԿՏՈՐ [< прожектер < ֆր. projecteur < լատ. projectio առաջ նետում], գ. (խսկց.): Լուսարձակ:

ՊՐՈԼԱԿՏԻՆ [< пролактин < լատ. pro + lac կաթ], գ. (կենսբ.): Լակտոգեն (կաթնածին) հորմոն, կաթնասունների և մարդու օրգանիզմում լակտացիան կարգավորող հորմոն, որը խթանում է կաթնագեղձերի զարգացումը, կաթի առաջացումը և մայրության բնազդի ձևավորումը:

ՊՐՈԼԵԳՈՄԵՆՆԵՐ [< пролегомены < հուն. prolegomena նախաբան], գ. Որևէ բանի հետազոտության վերաբերյալ նախնական դիտողություններ: Հայտնի է, օր.՝ Ի. Կանտի «Պրոլեգոմեններ ...» երկը:

ՊՐՈԼԵՏԱՐ [< пролетарий < լատ. proletarius քաղաքացիների աղքատ շերտին պատկանող՝ Հին Հռոմում], գ. 1. Արտադրության միջոցներից զուրկ վարձու բանվոր: 2. (պատմ.): Ունեզուրկների խավին պատկանող քաղաքացի Հին Հռոմում: 3. ած. Պրոլետարին բնորոշ:

ՊՐՈԼԵՏԱՐԱՑՈՒՄ, գ. 1. Կապիտալիզմի պայմաններում մանր արտադրողին (գյուղացիություն, տնագործություն) անխուսափելի աղքատացումը, ունեզրկումը և վարձու բանվոր դառնալու գործընթացը: 2. Պրոլետարանալը, պրոլետարացնելը, պրոլետարացվելը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ [< пролетариат < լատ.], գ. 1. Կապիտալիստական հասարակարգի երկու հիմնական դասակարգերից մեկը՝ պրոլետարների՝ վարձու բանվորների դասակարգը: 2. (հվք.): Պրոլետարներ:

ՊՐՈԼԵՏԱՐԻԶԱՑԻԱ [< пролетаризация < լատ.], գ. Տե՛ս Պրոլետարացում:

ՊՐՈԼՅՈՒՎԻԱԼ [< пролювий < լատ. proluvium լվացում], ած. (երկրբ.): Ջրաբերուկ:

ՊՐՈԼՅՈՒՎԻԱԼ ՆՍՏՎԱԾՔՆԵՐ - (երկրբ.): Փխրուն գոյացումներ, որոնք առաջանում են ապարների քայքայումից և ջրահոսքերով դուրս բերվում բարձունքների ստորոտներն ու կազմում արտաբերման կոներ:

ՊՐՈԼՈԳ [< пролог < հուն. prologos < pro առաջ + logos բան], գ. 1. (գրկն.): Նախերգանք, նախաբան: 2. (պատմ.): Վարքերի, խրատների ևն ժողովածու հին Ռուսիայում, հայսմավուրք:

ՊՐՈԼՈՆԳԱՑԻԱ [< пролонгация < ֆր. prolongation < լատ. prōlongatio երկարաձգում], գ. (իրավբ. հնց.): Երկարաձգում (պայմանագրի, վարկի ևն):

ՊՐՈԿԱՄԲԻՈՒՄ [< прокамбий < լատ. pro + միջին լատ. cambium], գ. (բսբ.): Բույսի կողքային մերիսթեմա, որից տարբերակվում են առաջնային փոխադրող հյուսվածքները և անցկացնող խրձերը:

ՊՐՈԿԱՏ [< ռուս. прокат], գ. (խսկց.): 1. Շարժական գույքը որոշակի վարձով ժամանակավոր օգտագործման հանձնելը, ինչպես և այդ գույքի օգտագործումը, վարձույթ: 2. Այդ եղանակով գույք ձեռք բերող և օգտագործող հիմնարկություն:

ՊՐՈԿԼԱՄԱՑԻԱ [< прокламация < լատ. proclamatio կոչ, դիմում], գ. 1. Թռուցիկ: 2. Հռչակում, հրապարակում:

ՊՐՈԿԼԻՏԻԿԱ [< проклитика < հուն. proklinō առաջ եմ թեքում], գ. (լեզվբ.): Նախադիր անշեշտ բառ:

ՊՐՈԿՈՆՍՈՒԼ [< проконсул < լատ. proconsul < pro փոխարեն + կոնսուլ], գ. (պատմ.): Պետական պաշտոն Հին Հռոմում. նրանք սկզբում կատարել են զինվո-

ական հանձնարարություններ Հռոմից դուրս, հետագայում նշանակվել են գաղութների կառավարիչ:

ՊՐՈԿՏԻՏ [< проктит < ֆր. proctite < հուն. prōktos ելք], գ. (բժշկ.): Ուղիղ աղիքի լորձաթաղանթի բորբոքում:

ՊՐՈԿՏՈԼՈԳԻԱ [< проктология < հուն. prōktos ելք + logōs գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որը ուսումնասիրում է հաստ (նաև ուղիղ) աղիքի հիվանդությունները և դրանց բուժման մեթոդները:

ՊՐՈԿՈՒՐԱՏՈՒՐԱ [< прокуратура < լատ. prōcurare հոգ տանել], գ. (իրավք. հնց.): 1. Դատախազություն: 2. Դատախազության աշխատակիցներ:

ՊՐՈԿՈՒՐՈՐ [< прокурор < լատ.], գ. (իրավք. հնց.): Դատախազ:

ՊՐՈՄՈՒՏԵՐ, ՓՐՈՄՈՒԹԵՐ [< промоутер < անգլ. promoter < to promote նպաստել, օժանդակել], գ. Անձ, որը նպաստում, օժանդակում է որևէ միջոցառման (սպորտային մրցություն, կինոնկարի նկարահանում ևն) կազմակերպմանը՝ ներգրավելով հովանավորներ, ներդրողներ ևն:

ՊՐՈՄՈՒԼԳԱՑԻԱ [< промульгация < լատ. promulgatio հայտարարություն], գ. (իրավք.): Որևէ օրենքի պաշտոնական տպագրություն՝ հրապարակում:

ՊՐՈՅԵԿՏ [< проект < լատ. projectus առաջանետված], գ. (խսկց.): 1. Նախագիծ: 2. Ծրագիր, հղացում:

ՊՐՈՅԵԿՑԻԱ [< проекция < լատ. projectio առաջանետում, առաջաձգում], գ. 1. Առաջձգություն, էկրանավորում, էկրանի վրա գծագրությունների, լուսանկարների ևն մեծացում: 2. Տարածական պատկերների գծագրումը հարթության վրա:

ՊՐՈՆԱՑԻԱ [< пронация < լատ. pronatio առաջ թեքում], գ. (բժշկ.): Վարիակում, ափը դեպի ներքև դարձնելը:

ՊՐՈՊԱԳԱՆԴԱ [< пропаганда < լատ. propaganda < propagare տարածել, սփռել], գ. (հնց.): 1. Որևէ գաղափարի՝ գաղափարախոսության՝ ուսմունքի՝ գիտելիքների ևն պարզաբանումն ու տարածումը լայն զանգվածների մեջ, քարոզչություն: 2. Քաղաքական նպատակներ հետապնդող գաղափարական ներգործությունը ժողովրդական լայն զանգվածների վրա:

ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏ [< пропагандист < լատ.], գ. Որևէ բանի պրոպագանդայով զբաղվող մարդ, քարոզիչ:

ՊՐՈՊԱՆ, գ. (քիմ.): Անգույն, անհոտ, այրվող գազ: Բուրանի հետ խառնուրդը կենցաղում օգտագործվող գազն է:

ՊՐՈՊԵԴԵՎՏԻԿԱ [< пропедевтика < հուն. propaideuō նախապատրաստել, նախապես ուսուցանել], գ. (գիտ.): Որևէ գիտության ներածություն, սեղմ և պարզ շարադրած նախնական, ներածական դասընթաց:

ՊՐՈՊԵԼ(Լ)ԵՐ [< пропеллер < անգլ. propeller < լատ. propellere հրել, մղել], գ. (տեխ.): Պտուտակ՝ ինքնաթիռի և նավի շարժողական մեխանիզմի մի մասը՝ թիերի ձևով, որ ամրացված է պտտվող գլանին:

ՊՐՈՊԻԼԵՅՆԵՐ [< пропилеи < հուն. propylon, propylaia նախամուտք, մուտք], գ. Հանդիսավոր անցում, դարպաս, որ ձևաստեղծվում է շարժման առանցքին սիմետրիկ տեղադրված պորտիկներով և սյունաշարերով: Սրանք բնորոշ էին Հին Հունաստանի ճարտարապետությանը:

ՊՐՈՊՈԶԻՑԻԱ [< пропозиция < լատ. propositio], գ. (լեզվք. հնց.): Առաջադրություն, առաջում դրված լինելը, նախադրանք:

ՊՐՈՊՈՐՑԻԱ [< пропорция < լատ. proportio], գ. 1. (խսկց.): Համաչափություն, համամասնություն: 2. (մաթ.): Համեմատություն:

ՊՐՈՊՈՐՑԻՈՆԱԼ [< пропорциональный < լատ. proportionalis համաչափ], ած. (խսկց.): 1. Համաչափ, համամասն, համամասնական: 2. Համեմատական:

ՊՐՈՌԵԿՏՈՐ [< проректор < լատ. pro փոխարեն + rector կառավարիչ], գ. Ռեկտորի տեղակալ, փոխռեկտոր:

ՊՐՈՌՈԳԱՑԻԱ [< пророгация < լատ. prorogatio երկարաձգում, հետաձգում], գ. (իրավք.): 1. Պառլամենտի նիստի հետաձգումը պետության ղեկավարի կողմից: 2. Միջազգային իրավունքում՝ ենթադատության (իրավասության) պայմանագրային որոշում:

ՊՐՈՍԿՐԻՊՑԻԱ(ՆԵՐ) [< проскрипции < լատ. proscriptio, բառացի՝ գրավոր հրապարակում], գ. (պատմ.): Օրենքից դուրս հայտարարված անձանց ցուցակներ Հին Հռոմում, որոնցում ընդգրկվածները զրկվել են ունեցվածքից և պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

ՊՐՈՍՈԴԻԱ [< просодия < հուն. prosōdia շեշտ], գ. 1. (գրկն. հնց.): Վանկաչափություն (տվյալ լեզվի, պոեզիայի): 2. (լեզվք. հնց.): Առոգանություն (շեշտված և անշեշտ, կարճ ու երկար վանկերի արտասանությունը տվյալ լեզվում):

ՊՐՈՍՊԵԿՏ [< проспект < լատ. prospectus կերպ, տեսք], գ. (խսկց.): 1. Պողոտա՝ ուղիղ, երկար և լայն փողոց քաղաքում: 2. Պլան, նախագիծ, ուրվագիծ: 3. Առևտրական գնացուցակ: 4. Տեղեկագիր:

ՊՐՈՍՏԱՏԻՏ [< простатит < հուն. prostatēs առջևում կանգնած], գ. (բժշկ.): Շագանակագեղձի բորբոքում:

ՊՐՈՍՏԻԼ [< простил < հուն. prostylos], գ. (ճարտ.): Անտիկ տաճարի տիպ՝ ուղղանկյուն հատակագծով ոչ մեծ շենք, որի գլխավոր ճակատի առջև մեկ տողանի սյունաշար է:

ՊՐՈՍՏԻՏՈՒՏԿԱ [< проститутка < լատ.], գ. (խսկց.): 1. Պոռնիկ, ծախու կին: Նույնն է Պուտանա: 2. *փխբ.* Անբարոյական՝ պոռնկաբարո, ծախու մարդ:

ՊՐՈՍՏԻՏՈՒՑԻԱ [< проституция < լատ. prostitutio պղծում, ապականում], գ. (խսկց.): Պոռնկություն:

ՊՐՈՍՏՐԱՑԻԱ [< прострация < լատ. prostratio ուժասպառություն], գ. (հոգեբ.): Ուժասպառություն, հուսալքում, շրջապատի նկատմամբ լիակատար անտարբերություն:

Պ(Փ)ՐՈՎԱՅԴԵՐ [< провайдер < անգլ. provider < to provide մատակարարել], գ. (ինֆորմ.): Կազմակերպություն, ֆիրմա, որը ապահովում է սպառողների համար էլեկտրոնային - տեղեկատվական համակարգերից օգտվելու հնարավորություն՝ կապ:

ՊՐՈՎԻԶՈՐ [< провизор < լատ. provisor նախապես ինչ-որ բանի համար հոգացող], գ. (գրք.): Դեղագործ:

ՊՐՈՎԻՆՑԻԱ [< провинция < լատ. provincia մարզ], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ զավթված տարածք, որ կառավարվում էր հռոմեացի վերակացուի կողմից: 2. (խսկց.): Մարզ, նահանգ, գավառ: 3. Ծայրագավառ, ծայրամաս:

ՊՐՈՎԻՆՑԻԱԼ [< провинциалный < լատ.], ած. 1. (խսկց.): Ծայրամասային, ծայրագավառային: 2. *փխբ.* Գավառական:

ՊՐՈՎԻՆՑԻԱԼԻԶՄ [< провинциализм < լատ.], գ. (խսկց.): Գավառականություն, գավառացիություն, գավառամտություն:

ՊՐՈՎՈԿԱՏՈՐ [< провокатор < լատ. provocator], գ. (խսկց.): 1. Պրովոկացիաների միջոցով գործող գաղտնի գործակալ, սադրիչ: 2. Պրովոկացիաներ սարքող՝ առաջ բերող գործակալ: 3. Դավաճանական նպատակներով խռովություններ

առաջացնող մարդ, խռովարկու: 4. Մատնիչ:

ՊՐՈՎՈԿԱՑԻԱ [< провокация < լատ. provocatio], գ. 1. Առանձին մարդկանց՝ խմբավորումների՝ կուսակցությունների՝ երկրների ևն դրդելը այնպիսի գործողությունների, որոնք կարող են հանգեցնել նրանց համար ծանր, երբեմն կործանիչ հետևանքների, սադրանք: 2. Ոստիկանության գաղտնի գործակալների դավաճանական գործողությունները և դրանց իրականացման միջոցներն ու եղանակները՝ հեղափոխական կազմակերպությունների գործունեությունը լրտեսելու և կազմակերպությունը քայքայող կամ թուլացնող արարքներ գրգռելու նպատակով: 3. Խռովություն, պրովոկացիոն բնույթի ապստամբություն: 4. (խսկց.): Մատնիչություն:

ՊՐՈՎՈԿԱՑԻՈՆ [< провокационный < լատ.], ած. Պրովոկացիային հատուկ, պրովոկացիա հանդիսացող, պրովոկացիայի բնույթ ունեցող, սադրիչ:

ՊՐՈՏԱԿՏԻՆԻՈՒՄ [< протактиний < հուն.], գ. (քիմ.): Pa, տարրերի պարբերական համակարգի VII պարբերության III խմբի ռադիոակտիվ տարր, ակտինիդ է, կարգահամարը՝ 91, ատոմական զանգվածը՝ 231.04:

ՊՐՈՏԱՄԻՆՆԵՐ [< протамины < հուն. prōtos + ամիններ], գ. (կենսբ.): Ցածրամոլեկուլային սպիտակուցներ. պարունակվում են ձկների և թռչունների սպերմատոզոիդների կորիզներում:

ՊՐՈՏԵԺԵ [< протеже < ֆր. protégé < protéger պաշտպանել, հովանավորել], գ. (խսկց.): Հովանավորյալ:

ՊՐՈՏԵԻԴՆԵՐ [< протеиды < հուն. prōtos առաջին + eidos տեսակ], գ. (կենսբ.): Բարդ սպիտակուցներ, որոնց մեջ սպիտակուցները միավորված են ոչ սպիտակուցային տարրերի հետ, ասենք ածխաջրածնի:

ՊՐՈՏԵԻՆՆԵՐ [< протейны < հուն. prōtos առաջին], գ. (քիմ.): Պարզ սպիտակուցներ,որոնք կազմում են կենդանիների,բույսերի և միկրոօրգանիզմների բջիջների հիմնական մասը:

ՊՐՈՏԵԿՏՈՐ [< протектор < լատ. protector պաշտպան], գ. ած. 1. (խսկց.): Հովանավոր, թևարկու: 2. (քղք.): Խնամակալ: 3. (երկրբ.): Պահպանաշերտ:

ՊՐՈՏԵԿՏՈՐԱՏ [< протекторат < լատ. protector հովանավոր, պաշտպան], գ. (քղք.): Պետությունների կախվածության ժամանակակից ձևերից մեկը, որ հնարավորություն է տալիս առավել ուժեղ պետություններին իրենց ենթարկելու ավելի թույլ պետությունների:

ՊՐՈՏԵԿՑԻԱ [< протекция < լատ. protectio, բառացի՝ պահպանություն, պաշտպանություն], գ. (խսկց.): Հովանավորչություն, պաշտպանություն:

ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻԶՄ [< протекционизм < լատ.], գ. 1. (տնտսգ.): Պետության տնտեսական քաղաքականություն, որ նպատակ ունի է օտար մրցակցությունից նրա ազգային տնտեսությունը զերծ պահելու, պահպանելու: 2. (հնց.): Հովանավորականություն, խնամիականություն:

ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻՍՏ [< протекционист < լատ.], գ. Պրոտեկցիոնիզմի կողմնակից:

ՊՐՈՏԵՍՏ [< протест < լատ. protestari հանդիսավոր հայտարարել, վկայել, դեմ արտահայտվել], գ. (խսկց.): Բողոք:

ՊՐՈՏԵՐՈԶՈՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ [< протерозойская (< հուն. proteros առաջին+ zōē կյանք) эра] - (երկրբ.): Երկրի վրա կյանքի ծագման դարաշրջանը:

ՊՐՈՏԻՍՏՈԼՈԳԻԱ [< հուն. prōtistos ամենաառաջին + logos հասկացություն], գ. (գիտ.): Գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է կենդանական և բուսական միաբջիջ օրգանիզմները:

ՊՐՈՏԻՈՒՄ [< протий < հուն. prōtos], գ. (քիմ.): H, ջրածնի ամենատարածված

(99.98%) կայուն իզոտրոպը, զանգվածի թիվը՝ 1: Պրոտիումի ատոմի միջուկը պրոտոնն է:

ՊՐՈՏՈ... [< прот(о)... < հուն. prōtos առաջին] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս առաջնային լինելը, զարգացման նախորդ փուլը:

ՊՐՈՏՈԿՈԼ [< протокол < հուն. prōtokollon առաջին թերթ՝ ժամանակի և գրողի անվան նշումով], գ. (խսկց.): Արձանագրություն:

ՊՐՈՏՈՆ [< птотон < հուն. prōtos առաջին], գ. (ֆիզ.): Նյութի՝ դրական էլեկտրական լիցք ունեցող տարրական մասնիկ, որ ատոմային միջուկի հիմնական մասն է կազմում:

ՊՐՈՏՈՊԼԱԶՄԱ [< протоплазма < հուն. prōtos + plasma], գ. (կենսբ.): Նախանյութ՝ կենդանի բջջի (ներառյալ կորիզը և ցիտոպլազման) պարունակությունը: Կյանքի նյութական հիմքն է, կենդանի նյութը, որից կազմված են օրգանիզմները:

ՊՐՈՏՈՌԵՆԵՍԱՆՍ [< проторенессансе < պրոտո... + ֆր. renaissance վերածնունդ], գ. (պատմ.): Նախավերածնունդ՝ իտալական մշակույթի պատմական փուլ, որը շատ բանով հող է նախապատրաստել Վերածննդի արվեստի համար: Տերմինն առաջին անգամ կիրառել է շվեյցարացի պատմաբան Յա. Բուրքհարդը:

ՊՐՈՏՈՏԻՊ [< прототип < ֆր. prototype < հուն. prōtos առաջին + typōs տիպ, ձև], գ. (գրկն. լեզվբ.հնց.): Նախատիպ:

ՊՐՈՏՐՈՄԲԻՆ [< протромбин < լատ. pro առաջ, նախ, առջև + հուն. trombos թանձրուկ, մակարդուկ], գ. (կզմխս.): Կարմիր գնդիկների՝ հոմոգլոբինների խմբից սպիտակուց, որ հանդես է գալիս արյան պլազմայի կազմում և վերածվում է տրոմբինի՝ թանձրուկ ֆերմենտի, որը և մասնակցում է արյան մակարդմանը:

ՊՐՈՏՈՒԲԵՐԱՆԵՑ [< протуберанец < գերմ. Protuberanzen < լատ. protuberare], գ. (աստղգ.): Հրավիժակ, ժայթքալեզու (արևի մակերեսի ժայթքումները):

ՊՐՈՐՈԳԱՑԻՈՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ [< пророгационные (< լատ. prorogatia երկարաձգում) соглашение]– (իրավբ.): Համաձայնություններ, որոնցով որոշվում է, թե արտաքին առևտրի գործարքների վերաբերյալ վեճի քննությունը որ պետության դատարանին է ընդդատյա: Պ. Հ. ճանաչվում են պետությունների մեծ մասի օրենսդրություններով:

ՊՐՈՑԵԴՈՒՐԱ [< процедура < լատ. procedere առաջ շարժվել], գ. (խսկց.): 1. Ընթացակարգ, արարողություն, արարողակարգ: 2. Բուժման գործողություն, բուժագործություն:

ՊՐՈՑԵՍ [< процесс < լատ. processus առաջխաղացում], (խսկց.): գ. 1. Որևէ բանի զարգացման ընթացքը, գործընթաց: 2. Որևէ արդյունքի հասնելու համար գործադրվող հաջորդական գործողությունների ամբողջությունը:

ՊՐՈՑԵՍԻԱ [< процессия < լատ. processio], գ. Հանդիսավոր, սովորաբար բազմամարդ երթ,թափոր:

ՊՐՈՑԵՍՈՐ [< процессор < անգլ. processor < լատ. processus առաջխաղացում], գ. (ինֆորմ.): Համակարգչում սարքավորումների համակարգ, որը իրականացնում է տեղեկատվության փոխարկման գործընթացը կամ ղեկավարում այն:

ՊՐՈՖԱԶ [< профаза < հուն. pro նախա + phasis դրսևորում], գ. (բսբ.): Բջջի անուղղակի բաժանման առանձին աստիճանը:

ՊՐՈՖԱՆ [< профан < լատ. profanus աղոտ, մութ], գ. (խսկց.): Տգետ, անգետ, համբակ:

ՊՐՈՖԱՆԱՑԻԱ [< профанация < լատ. profanatio սրբապղծում], գ. 1. Խեղաթյուրում: 2. Գռեհկացում, սրբապղծում:

ՊՐՈՖԱՇԻՍՏ [< профашист < լատ. pro (նախդիր) + իտլ. fascista], գ. ած. (պատմ.): Ֆաշիզմի կողմնակից:

ՊՐՈՖԵՍԻԱ [< профессия < լատ. professio], գ. (խսկց.): Արհեստ, զբաղմունք, մասնագիտություն, մասնագիտական զբաղմունք:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ [< профессионал, профессиональный < լատ.], գ. ած. 1. Որևէ գործ՝ աշխատանք իր պրոֆեսիան դարձրած մարդ, արհեստավարժ: 2. Պրոֆեսիայի՝ զբաղմունքի հետ կապված, պրոֆեսիայով պայմանավորված: 3. Որևէ զբաղմունքի՝ գործունեության նվիրված:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄ [< профессионализм < լատ.], գ. 1. Պրոֆեսիոնալ բնույթ, արհեստավարժություն: 2. Որևէ բանով իբրև հիմնական մասնագիտությամբ զբաղվելը: 3. (լեզվբ.): Այս կամ այն զբաղմունքի մարդկանց շրջանին հատուկ բառ՝ արտահայտություն՝ դարձվածք ևն, ինչպես և դրանց գործածությունը գրական լեզվում:

ՊՐՈՖԵՍՈՐ [< профессор < լատ. professor դաստիարակ, ուսուցիչ], գ. 1. Բարձրագույն ուսումնական հաստատության բարձրորակ դասախոսներին և գիտական հիմնարկների գիտաշխատողներին շնորհվող գիտական կոչում, ինչպես և այդ կոչումն ունեցող անձը, ուսուցչապետ: 2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական պաշտոնի անվանում:

ՊՐՈՖԵՍՈՒՐԱ [< профессура < լատ.], գ. 1. (խսկց.): Պրոֆեսորի կոչում և պաշտոն: 2. (հվք.): Պրոֆեսորների կազմ՝ կոլեկտիվ:

ՊՐՈՖԻ [< профи < գերմ. Profi < professional արհեստավարժ], գ. (խսկց.): 1. (սպորտ.): Պրոֆեսիոնալ մարզիկ (ի տարբերություն սիրողական մարզիկի): 2. Արհեստավարժ, իր գործի վարպետ:

ՊՐՈՖԻԼ [< профиль < ֆր. profil], գ. (խսկց.): 1. Կիսադեմ: 2. Տնտեսությունը՝ արտադրությունը՝ մասնագիտությունը ևն բնորոշող հիմնական գծերի ամբողջությունը, բնույթ: 3. (խսկց.): Մասնագիտություն, ուղղություն:

ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ [< профилактический < հուն. prophylaktikos], ած. Նախապահպանական, նախազգուշական, կանխարգելիչ:

ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ [< профилактика < հուն. prophylaktikos նախապահպանական, նախազգուշացված], գ. (բժշկ. տեխ.): Այն միջոցառումների ամբողջությունը, որոնք ուղղված են առողջության պահպանմանը, մարդու հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, բնակչության ֆիզիկական զարգացման բարելավմանը, աշխատունակության պահպանմանը և երկարակեցության ապահովմանը, ինչպես նաև տարբեր սարքերի վիճակի բարելավմանը:

ՊՐՈՖԻՏ [< профит < ֆր. profit], գ. (հնց.): Հետաքրքրություն, օգուտ, շահույթ:

ՊՐՈՖԻՑԻՏ [< профицит < լատ. proficit], գ. (տնտսգ.): Դեֆիցիտի հակառակ երևույթը՝ եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ:

ՊՐՈՒԴՈՆԻԶՄ [< прудонизм < հատուկ անունից], գ. (գիտ.): Պրուդոնականություն, Պ. Ժ. Պրուդոնի տնտեսագիտական, փիլիսոփայական և սոցիոլոգիական հայացքների վրա հիմնված մանրբուրժուական սոցիալիզմի տարատեսակությունը:

ՊՈՒԱՆՏԻԼԻԶՄ [< пуантиллизм < ֆր. pointillisme < point կետ], գ. 1. (նկարչ.): Նեոիմպրեսիոնիզմի ընդունած կանոնավոր, մանր գունաբծերով նկարելու գեղանկարչական համակարգի անվանումներից մեկը: 2. (երժշտ.): Կոմպոզիցիայի ժամանակակից մեթոդ, երբ երաժշտական միտքը շարադրվում է ինտոնացիոն և ռեգիստրային առումով միմյանցից հեռացված, դադարներով անջատված կար-

ճատև մեկուսի հնչյունների միջոցով:

ՊՈՒԲԼԻԿԱ [< публика < լատ. publicus համընդհանուր, հասարակական], գ. (հնց.): Հասարակություն, ժողովուրդ:

ՊՈՒԲԼԻՑԻՍՏ [< публицист < լատ.], գ. ած. (գրք. հնց.): Հրապարակախոս, հրապարակագիր:

ՊՈՒԲԼԻՑԻՍՏԻԿԱ [< публицистика < լատ. publicus հասարակական], գ. (խսկց.): Հրապարակախոսություն, հրապարակագրություն:

ՊՈՒԴԵԼ [< пудель < գերմ. Pudel], գ. (կենդբ.): Տնային գանգրամազ շուն:

ՊՈՒԴԻՆԳ [< пудинг < անգլ. pudding], գ. (խոհր.): Կաթնաշոռից, մրգերից ևն պատրաստված քաղցր թխվածք, քաղցրակուտապ:

ՊՈՒԴՐԱ [< пудра < ֆր. poudre լատ. pulvis փոշի], գ. (խսկց.): Դիմափոշի:

ՊՈՒԼԵ(Ի)ՄՅՈՏ [< ռուս. пулемёт], գ. (ռազմ. խսկց.): Գնդացիր:

ՊՈՒԼԿԱ [< пулька < ֆր. poule խաղագումար], գ. (թղթխդ.): 1. Խաղադարձ, խաղաշրջան (պրեֆերանսի): 2. Խաղագրանցման սյունակ: 3. Խաղագումար, խաղադրում:

ՊՈՒԼՄԱՆ [< пульман < հատուկ անունից], գ. (խսկց.): Մեծ վագոնի տեսակ:

ՊՈՒԼՈՎԵՐ [< пуловер < անգլ. pull-over], գ. (խսկց.): Անօձիք և անկոճակ բամբակյա ֆուֆայկա:

ՊՈՒԼՉԻՆԵԼԼԱ [< пульчинелла < իտլ. pulcinella], գ. (թատր.): Իտալական կոմեդիա դեպ՝ արտեի հիմնական գործող անձերից: Առաջին անգամ երևան է եկել XVI դ. վերջին Իտալիայի հարավում՝ Նեապոլում, ապա տարածվել ողջ Իտալիայում:

ՊՈՒԼՊԱ [< пульпа < լատ. pulpa փափկամիս], գ. (գրք.): 1. Կակղան, միջուկ (ատամների խորշում): 2. (տեխ.): Ջրախառն մանրացրած հանքաքար, ապարախյուս, խյուս:

ՊՈՒԼՊԻՏ [< пульпит < լատ.], գ. (բժշկ.): Ատամի կակղանի (պուլպա) բորբոքում:

ՊՈՒԼՍ [< пульс < լատ. pulsus հարված, զարնում], գ. (խսկց.): 1. Զարկերակ: 2. Զարկ (սրտի):

ՊՈՒԼՍԱՑԻԱ [< пульсация < գերմ. Pulsation < լատ. pulsatio հարված], գ. (բժշկ.): Բաբախում, երակազարկում:

ՊՈՒԼՍԱՐՆԵՐ [< пульсары < անգլ. pulsars, ”Pulsating Scurces of Kadioemission” (ռադիոճառագայթման բաբախող աղբյուրներ) արտահայտության կրճատ ձևը], գ. (ֆիզ.): Բաբախիչներ՝ իմպուլսային էլեկտրամագնիսական ճառագայթման տիեզերական աղբյուրներ, հայտնաբերվել են 1967 թ.:

ՊՈՒԼՎԵՐԻԶԱՏՈՐ [< пульверизатор < լատ.], գ. (խսկց.): Հեղուկացիր, փոշեցիր:

ՊՈՒԼՎԵՐԻԶԱՑԻԱ [< пульверизация < լատ. pulvis (pulveris) փոշի], գ. (խսկց.): Հեղուկացրում, ջրցանում, ցողացրում:

ՊՈՒԼՏ [< пульт < գերմ. Pult < լատ. pulpìtum հարթակ, ամբիոն], գ. 1. (տեխ.): Հեռակառավարման վահանակ: 2. Կառավարակետ (մեքենաներ ևն կառավարելու համար): 3. Նոտակալ:

ՊՈՒՄԱ [< пума < խապ. puma], գ. 1. (կենդբ.): Կատվազգիների ընտանիքի վայրի գազան: 2. (սպորտ.): Սպորտային համազգեստի և մարզագույքի առաջատար ընկերություն:

ՊՈՒՆԿՏ [< пункт < punctum կետ], գ. 1. (տպգր.): Տպարանական համակարգում չափման միավոր, որ հավասար է 0.376 մմ-ի: 2. (խսկց.): Կետ:

ՊՈՒՆԿՏՈՒԱԼ [< пунктуальный < ֆր. punctuel < լատ. punctum կետ], ած. (խսկց.): Խիստ ճշտապահ՝ ճշգրիտ, ճշտակատար:

ՊՈՒՆԿՑԻԱ [< пункция < լատ. ponctio սրսկում], գ. (բժշկ.): Մարմնախոռոչի ծակում՝ դրանում պարունակվող հեղուկը հեռացնելու համար (բուժական կամ ախտորոշիչ նպատակներով):

ՊՈՒՆՇ, ՓՈՒՆՉ [< пунш < անգլ. punch], գ. (քղք.): Ջերմօղի, փունջ:

ՊՈՒՍՏՈՒԼԱ [< пустула < լատ. pustula բշտիկ], գ. (բժշկ.): Փոքրիկ թարախապալար, թարախակույտ:

ՊՈՒՏԱՆ(Կ)Ա [< путана < ֆր. putain, իտլ. puttana պոռնիկ], գ. (խսկց. արհմրհ.): Տարադրամով վարձատրվող մարմնավաճառ:

ՊՈՒՏՉ [< путч < գերմ. Putsch], գ. (քղք.): Դավադիրների ոչ մեծ խմբի կողմից կատարվող պետական հեղաշրջում, նման հեղաշրջման փորձ. փոքրաթիվ մարդկանց խռովություն:

ՊՈՒՐԻ [< пури < վրաց.], գ. (խոհր.): Երկար ու կլորաձև, բոքոնանման հացի տեսակ:

ՊՈՒՐԻԶՄ [< пуризм < ֆր. purisme < լատ. purus մաքուր], գ. 1. Բարքերի՝ վարքագծի խիստ անբասիրության ձգտում: 2. (լեզվբ.): Մաքրամոլություն:

ՊՈՒՐԻՏԱՆՈՒԹՅՈՒՆ [< пуритане < լատ. purus մաքուր], գ. (կրոն.): Մաքրակրոնություն՝ ռեֆորմիստական շարժում Անգլիայում և Շոտլանդիայում XVI-XVII դդ., կուսակցություն անգլիական եկեղեցու ներսում, որի սկզբնական նպատակն էր «մաքրել» եկեղեցին կաթոլիկության մնացորդներից:

ՊՈՒՐՊՈՒՐ [< пурпур < լատ. purpura], 1. ած. Մուգ կամ բաց կարմիր: 2. գ. (բնստղծ.): Կարմրագույն գործվածք՝ զգեստ ևն: 3. Առհասարակ՝ կարմիր գույն:

ՊՖԵՆԻԳ [< пфенниг < գերմ. Pfennig], գ. (ֆին.): Գերմանական մանրադրամ = 1/100 մարկի:

Ջ

ՋԱԶ [< джаз < անգլ. jazz], գ. (երժշտ.): 1. Երաժշտական արվեստի տեսակ, որը առաջացել է XIX-XX դդ. սահմանագծին ԱՄՆ-ում՝ եվրոպական և՛ աֆրիկական երաժշտական սինթեզի ճանապարհով: 2. Խառը տիպի նվագախումբ, որի մեջ գերակշռում են հարվածային և փողային երաժշտական գործիքները:

ՋԱԶԲԵՆԴ [< джаз-бенд < անգլ. jazz-band], գ. (երժշտ.): Նույնն է՝ Ջազ(2):

ՋԱԶՄԵՆ [< джаз-мен < անգլ. jazzman], գ. (երժշտ.): Ջազ նվագող երաժիշտ:

ՋԱԿՈՒԶԻ [< джакузи < իտլ. jacuzzi ստեղծողի անունից], գ. (տեխ.): Ջրային շիթերով ջրավազան՝ լոգարան՝ տաշտ:

ՋԱՅՆԻԶՄ [< джайнизм < սանսկրիտ], գ. (կրոն.): Ջայնականություն՝ հնդկական կրոնափիլիսոփայական համակարգ, որը դասվում է ոչ ուղղափառ ուղղությունների շարքին. մերժում է Վեդաների հեղինակությունը: Ծագել է կաստայականության կազմավորման շրջանում և վերջնականորեն ձևավորվել մինչև մ.թ.ա. I դ.. սա ժխտում է աստծու գոյությունը և երկրպագում իրենց 24 ուսուցիչներին՝ ջինաներին (սանսկրիտ Jina հաղթող, հաղթահարող), այստեղից էլ՝ ջայնիզմ անվանումը: Ջայնիզմի շատ գաղափարներ ընկած են բուդդայականության հիմքում:

ՋԵԲ [< джеб < անգլ. jab հարված], գ. (սպորտ.): Բոքսում՝ ուղիղ հարված (ուղիղ ձգված) երկարացված ձեռքով:

ՋԵՄ [< джем < անգլ. jam], գ. (խոհր.): Տրորած պտղի կամ հատապտղի եփած քաղցրահամ զանգված, մրգախյուս:

ՋԵՄՊԵՐ, ՋԵՄՊՐ [< джемпер < անգլ. jumper], գ. (խսկց.): Առանց կոճակների և առանց օձիքի հյուսածո շապիկ:

ՋԵՅՐԱՆ [< джейран < ղազախ. žijrän], գ. (կենդբ.): Վիթի տարատեսակ (տարածված է Ասիայի տափաստաններում, Անդրկովկասում և Ղազախստանում):

ՋԵՆԵՐԸԼ ԴԱՅՆԸՄԻՔՍ [< Дженерал Дайнамикс < անգլ. General Dynamices], Ամերիկյան ավիահրթիռաշինական ընկերություն:

ՋԵՆԵՐԸԼ ԷԼԵՔԹՐԻՔ [< Дженерал Электрик < անգլ. General Electric], Ամերիկյան էլեկտրատեխնիկական ընկերություն:

ՋԵՆԵՐԸԼ ՄՈԹՈՐՍ [< Дженерал Моторс < անգլ. General Motors], Ամերիկյան ավտոմոբիլաշինական ընկերություն:

ՋԵՆՏԼՄԵՆ, ՋԵՆԹԵԼՄԵՆ [< джентльмен < անգլ. gentleman < gentle մեղմ + man մարդ], գ. 1. Անգլիայում՝ ազնվականական հասարակության կանոններն ու վարքի նորմերը խստորեն պահպանող մարդ: 2. (խսկց.): Բարեկիրթ, շարժուձևերի գեղեցկությամբ ու հագնվածքի անթերիությամբ աչքի ընկնող մարդ:

ՋԵՍՊԻԼԻԹ [< джеспилит < անգլ. jasper հասպիս + հուն. lithos քար], գ. (հնք.): Երկաթախառն քվարցիտ, խիստ մետամորֆացած նստվածքային կամ հրաբխածին-նստվածքային քվարց-երկաթային ապար:

ՋԵՔ-ՓՈԹ [< джек-пот < անգլ. jack-pot], գ. 1. (թղթխդ.): Խաղաքարտերի այնպիսի դասավորություն, որը հաղթում է: 2. Վիճակախաղում մեծ շահում, որը հաճախ կազմված է կուտակված գումարներից, որոնք մինչ այդ չեն շահել:

ՋԵՐՍԵ [< джерси // джерсе < անգլ. jersey], գ. (մնձգր.): Բրդյա և մետաքսյա գործվածքային նյութ, ինչպես և դրանից պատրաստված զգեստ:

ՋԻԱՐ [< джиар < անգլ. GR՝ Government relations], գ. (քղք.): Հասարակության մեջ կառավարության կամ նրա որևէ անդամի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը:

ՋԻԳԻԹ [< джигит < թուրք. jigit պատանի, երիտասարդ], գ. Ձիարշավորդ, հմուտ ձիավար:

ՋԻՆԳՈ [< джинго < անգլ. jingo], գ. (խսկց.): Մականուն, որը տրվում է Անգլիայում ծայրահեղ շովինիստներին, ինչպես նաև այլ երկրներում՝ անգլիացի նվաճողներին:

ՋԻԽԱԴ [< джихад < արաբ. džihad կռիվ, մարտ], գ. Սրբազան պատերազմ «անհավատների» դեմ (ըստ Ղուրանի):

ՋԻՀԱԴ [< джихад < արաբ., բառացի՝ եռանդ, նկրտում], գ. «Սրբազան պատերազմ», որ, ըստ Ղուրանի որոշ դրույթների, պետք է մղեն մահմեդականները «անհավատների» դեմ:

ՋԻՆ I [< джин < անգլ. gin], գ. Գիհու օղի, թրմօղի, որ գործածվում է ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում:

ՋԻՆ II [< джинн < արաբ. džinn], գ. (դից.): Արաբական և իրանական ժողովուրդների հեքիաթներում տարածված հերոս:

ՋԻՆԳՈՅԻԶՄ [< джингоизм < անգլ. jingoism < jingo ջինգո, անգլ. շովինիստների մականունը], գ. (պատմ.): Ծայրահեղ շովինիստական հայացքներ նշանակող տերմին, շովինիզմի համարժեքը Մեծ Բրիտանիայում: Առաջացել է «բայ ջինգո» (by

jingo < աղավաղված by Jesus՝ երդվում են Հիսուսով) արտահայտությունից, որը եղել է ժամանակի տարածված ռազմաշունչ երգի կրկներգը XIX դարի վերջում:

ՋԻՆՍ [< джинс < անգլ. jeans], գ. Պինդ կտորի տեսակ, որը ստեղծվել էր Ալյասկայի ոսկեխույզների համար և այն ժամանակներից ի վեր մեծ տարածում է գտել աշխարհում:

ՋԻՈՒ-ՋԻՏՍՈՒ [< джиу-джитсу < ճապ. jū նուրբ, ազնվական + jutsu արվեստ], գ. (սպորտ.): Արևելյան մարտարվեստի տեսակ:

ՋԻՓ [< джип < անգլ. jeep], գ. (խսկց.): Ամենագնաց ավտոմեքենա:

ՋՈԲԵՐ [< джоббер < անգլ. jobber < job աշխատանք], գ. (առևտր.): Բորսային միջնորդ, որը կարող է գործարքի մեջ մտնել բորսայի մեկ այլ միջնորդի հետ:

ՋՈԳԻՆԳ [< джоггинг < անգլ. jogging թեթև քայլք՝ վազք], գ. (սպորտ.): Մանրաքայլ վազք՝ ֆիզիկական լավ վիճակ պահպանելու կամ առողջ լինելու համար:

ՋՈԿԵՐ [< джокер < անգլ. joker], գ. (թղթխղ.): Թղթախաղի որոշ տեսակներում՝ քարտ (թուղթ), որը կարող է փոխարինել մնացած խաղաթղթերին:

ՋՈՅՍՏԻԿ [< джойстик < անգլ. joystick ինքնաթիռում կառավարման լծակ], գ. (հմկրգչ.): Դիսպլեյի՝ էկրանի կուրսորի շարժումները ղեկավարող ձեռքի լծակ:

ՋՈՆԿԱ [< джонка < չին. chuanj նավ], գ. (ծով.) : Չինաստանում լայն տարածում ունեցող առագաստային բեռնանավ՝ վերցված նավաքթով:

ՋՈՈՒԼ [< джоуль < անգլ. ֆիզիկոս Ջոուլի (Joule 1818-1884թթ.) անունով], գ. (ֆիզ.): Աշխատանքի և էներգիայի չափման միավորը:

ՋՈՒՆԳԼԻ [< джунгли < անգլ. jungle < հնդկ.] գ. 1. Անանցանելի մացառուտներ կամ ճահճուտ ու շատ խիտ անտառներ: 2. *փխբ.* Անթափանցելի՝ խորհրդավոր ու գաղտնի գործունեության խճճված միջավայր:

ՋՈՒՏ [< джут < անգլ. jute < մոնղ.], գ. (բսբ.): Լորենիների ընտանիքին պատկանող բուսատեսակ:

Ռ

ՌԱ, ՌԵ [< Pa], գ. (դից.): Արևի աստվածը հին եգիպտական դիցաբանության մեջ:

ՌԱԲԲԻ, ՌԱԲԲԻՆ, ՌԱԲԲՈՆ [< рабин < եբրայերեն rabbi, բառացի՝ իմ վարդապետ կամ ուսուցիչ], գ. (կրոն.): Հուդայական պաշտամունքի բարձրաստիճան սպասավոր, համայնքի օրենսգետ, դատավոր, կրոնական, քաղաքական և տնտեսական կյանքի կառավարիչ:

ՌԱԳՈՒ [< рагу < ֆր. ragoût], գ. (խոհր.): Մանր կտրտած մսով ու բանջարեղենով պատրաստվող կերակրատեսակ:

ՌԱԴԱՐ [< радар < անգլ. radar *հպվ.* radio detecting և ranging տարածության բացահայտումը և որոշումը ռադիոյի միջոցով], գ. (տեխ.): 1. Տե՛ս Ռադիոլոկատոր, ռադիոհաղորդիչ: 2. Ռադիոլոկացիայի և ռադիոլոկացիոն սարքերի անվանումը:

ՌԱԴԻԱՆ [< радиан < լատ. radius ճառագայթ, շառավիղ], գ. (մաթ.): Հարթ անկյան միավորը Միավորների միջազգային համակարգում: Նշանակվում է՝ ռադ (rad), որը հավասար է շրջանագծի երկու շառավիղների կազմած այն անկյանը, որին համապատասխանող աղեղի երկարությունը հավասար է շառավղին:

ՌԱԴԻԱՆՏ [< радиант < լատ. radians (radiantis) ճառագայթող], գ (երկբշխ.): Երկնոլորտի կետ, որից, թվում է, սկիզբ են առնում միևնույն ասուպների հոսքին պատկանող ասուպների տեսանելի հետագծերը:

ՌԱԴԻԱՏՈՐ [< радиатор < լատ. radiare ճառագայթներ արձակել], գ. (տեխ.): 1. Ներքին այրման շարժիչների հովացման մարտկոց: 2. Կենտրոնական ջեռուցման մարտկոց:

ՌԱԴԻԱՑԻԱ [< радиация < լատ. radiatio փայլ, ցոլք], գ. (ֆիզ.): Ճառագայթում:

ՌԱԴԻԿԱԼ [< радикал < լատ. radicalis արմատական], 1. ած. (խսկց.): Արմատական: 2. գ. Ռադիկալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՌԱԴԻԿԱԼԻԶՄ [< радикализм < լատ.], գ. 1. Տեսության ու պրակտիկայի խնդիրների լուծման մեջ արմատական՝ վճռական միջոցառումների պաշտպանությունն ու կիրառումը: 2. (քղք.): Քաղաքական հոսանք, որ պահանջում է ժողովրդավարական բարեփոխումների անցկացում բուրժուական պետության շրջանակներում և նրա շահերին համապատասխան, արմատականություն:

ՌԱԴԻԿԱԼԻՍՏ [< радикалист < լատ.], գ. ած. Ռադիկալիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՌԱԴԻԿՈՒԼԻՏ [< радикулит < լատ. radicula արմատիկ], գ. (բժշկ.): Ջղարմատների բորբոքում (առավելապես գոտկաշրջանում):

ՌԱԴԻՈ [< радио < լատ. radiare ճառագայթել, ճառագայթներ արձակել], գ. 1. (ռադ.): Տարածության մեջ առանց հաղորդալարերի տարածվող էլեկտրամագնիսական ալիքների հաղորդումն ու ընդունումը՝ հեռվից ազդանշաններ, պատկերներ ևն հաղորդելու նպատակով: 2. (խսկց.): Նույնն է Ռադիոընդունիչ, ձայնասփյուռ: 3. (խսկց.): Նույնն է՝ Ռադիոհաղորդում:

ՌԱԴԻՈԱԿՏԻՎ [< радиоактивный < լատ. radiare + activus գործուն], ած. 1. (ֆիզ.): Ռադիոակտիվությամբ օժտված, ռադիոակտիվություն ունեցող: 2. Ռադիոակտիվությանը հատուկ, ռադիոակտիվության հետ կապված:

ՌԱԴԻՈԱՆՏԵՆԱ [< радиоантенна < լատ. radiare + antenna առագաստափայտ], գ. (ռադ.): Ռադիոկայմ՝ ռադիոսարքերի օդալարերն ամրացնելու կայմ, ռադիոյի անտենայի՝ ալեհավաքի կայմ:

ՌԱԴԻՈԱՊԱՐԱՏ [< радиоаппарат < լատ. radiare + apparatus], գ. (ռադ.): Ռադիոսարք:

ՌԱԴԻՈԱՊԱՐԱՏՈՒՐԱ [< радиоаппаратура < լատ.], գ. (ռադ.): Ռադիոսարքավորում:

ՌԱԴԻՈԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (ռադ.): Աստղագիտության բաժին, որը ուսումնասիրում է երկնային մարմիններն ըստ դրանց ռադիոճառագայթման:

ՌԱԴԻՈԱՍՏՂԱԴԻՏԱԿ, գ. (ռադ.): Ռադիոդիտակ՝ երկնային մարմինների ռադիոճառագայթումը դիտելու սարք:

ՌԱԴԻՈԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆՆԵՐ, գ. (ռադ.): Գիտական հիմնարկներ, որտեղ ռադիոաստղադիտակների միջոցով կատարվում են երկնային մարմինների ռադիոճառագայթման դիտումներ և այդ մարմինների հետազոտություններ:

ՌԱԴԻՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. (ռադ.): Մեքենաշինության ճյուղ, որը սարքեր ու սարքավորումներ է արտադրում հեռագրական, հեռախոսային, ռադիոկապի, ռադիոհաղորդման, հեռուստատեսության, ռադիոնավագնացության միջոցների, թռչող ապարատների ռադիոկառավարման համակարգերի համար:

ՌԱԴԻՈԱՐՁԱԳԱՆՔ, գ. (ռադ.): Ազդանշանի տարածման ճանապարհին գտնվող օբյեկտից անդրադարձած և ապա դիտման կետում ընդունված էլեկտրամագնիսական ազդանշան:

ՌԱԴԻՈԲԱՐՁՐԱՉԱՓ, գ. (տեխ.): Ռադիոալիքների միջոցով թռչող ապարատի թռիչքի իրական բարձրությունը (երկրի մակերևույթի նկատմամբ) որոշելու սարք:

ՌԱԴԻՈԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ [< радио < լատ. radiare + հուն. galaktikos կաթնային, կաթնանման], գ. (աստղգ.): Գալակտիկաներ, որոնք միջինից շատ ավելի բարձր ճառագայթում ունեն:

ՌԱԴԻՈԳՐԱՄ(ՄԱ) [< радиограмма < radiare + հուն. gramma գրանշան], գ. (ռադ.): Ռադիոգիր՝ ռադիոհեռագրով հաղորդված հեռագիր:

ՌԱԴԻՈԴԵՏԱԼ [< радиодеталь < լատ. radiare + ֆր. détail], գ. (տեխ.): Ռադիոսարքերի մանրակ՝ դետալ:

ՌԱԴԻՈԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (երկրբ.): Միջուկային երկրաբանություն, որն ուսումնասիրում է բոլոր այն երկրաբանական գործընթացները և երևույթները, որոնցում տեղի է ունենում բնական ռադիոակտիվ տրոհման գործընթաց:

ՌԱԴԻՈԶՈՆԴ [< радиозонд < լատ. radiare + ֆր. sonde շոշափոց], գ. (տեխ.): Տարբեր բարձրություններում օդի ճնշումը, խոնավությունը և ջերմությունը չափելու օդերևութաբանական սարք, որ օդ է բարձրացվում փոքրիկ օդապարիկով և չափումներն ավտոմատորեն հաղորդում ռադիոյով:

ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ [< радиоэлектроника < լատ. radiare + էլեկտրոնիկա], գ. (գիտ.): Ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի հիմքի վրա զարգացած զանազան գիտությունների անվանումը:

ՌԱԴԻՈԸՆԴՈՒՆԻՉ, գ. (տեխ.): Սարքավորում, որն ապահովում է անհրաժեշտ ռադիոազդանշանի ընդունումը, ուժեղացումը, փոխակերպումը ցածրհաճախային ազդանշանի և փոխանցումը բարձրհաճախային, էլեկտրոնաճառագայթային խողովակին:

ՌԱԴԻՈԹԵՐԱՊԻԱ [< радиотерапия < radiare + թերապիա], գ. (բժշկ.): Ճառագայթաբուժություն՝ բուժիչ նպատակներով իոնացնող ճառագայթների օգտագործումը:

ՌԱԴԻՈԺՈՒՌՆԱԼ [< радиожурналь < լատ. radiare + ժուռնալ], գ. Ռադիոպարբերագիրք:

ՌԱԴԻՈԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ [< радиожурналистика < լատ. radiare + ժուռնալիստիկա], գ. Ժուռնալիստիկայի՝ լրագրության մի բնագավառը, որ զբաղվում է ռադիոհաղորդումների հրապարակագրությամբ:

ՌԱԴԻՈԻՆՏԵՐՖԵՐՈՄԵՏՐ [< радиоинтерферометр < լատ. radiare + inter միջև + ferens (ferentis) տեղափոխող + հուն. metron չափ], գ. (տեխ.): Ռադիոընդունիչ սարք, որի աշխատանքի հիմքում ընկած է ռադիոալիքների ինտերֆերենցիայի երևույթը:

ՌԱԴԻՈԼ(Ա) [< радиола < լատ.], գ. (տեխ.): Ռադիոընդունիչն ու նվագարկիչը միավորող սարք, նվագարկիչ ունեցող ռադիոընդունիչ:

ՌԱԴԻՈԼԱՄՊ [< радиолампа < լատ. radiare + լամպ], գ. (տեխ.): Ռադիոապարատի լամպ:

ՌԱԴԻՈԼԱՐԻԱՆԵՐ [< радиолярии < լատ. radius ճառագայթ], գ. (կենդբ.): Ճառագայթավորներ՝ միաբջիջ, մեծ մասամբ բնականոն աղիության տաք ջրերի ծովային կենդանիների խումբ՝ 0.3 -1 մմ և ավելի չափերով:

ՌԱԴԻՈԼՈԿԱՏՈՐ [< радиолокатор < լատ.], (տեխ.): Տարածության մեջ զանազան օբյեկտների հայտնաբերման ու տեղորոշման սարք:

ՌԱԴԻՈԼՈԿՑԻԱ [< радиолокация < լատ. radiare + locatio տեղավորում, տեղադրում], գ. (տեխ.): Ռադիոալիքների օգնությամբ զանազան օբյեկտների հայտնաբերման և նրանց հեռավորությունը որոշելու եղանակ:

ՌԱԴԻՈԿԱՊ, գ. Ռադիոալիքներով իրականացվող էլեկտրակապ:

ՌԱԴԻՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Գիտություն, որը ուսումնասիրում է բոլոր տեսակի իոնացող ճառագայթների ազդեցությունը կենդանի օրգանիզմների, նրանց համակեցությունների և ամբողջությամբ կենսոլորտի վրա:

ՌԱԴԻՈԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ, գ. (տեխ.): Ինքնաթիռային ռադիոպելենգատոր, որն ավտոմատ չափում է ինքնաթիռի երկայնական առանցքով և հաղորդող ռադիոկայանի կամ ռադիոփարոսի ուղղությամբ կազմած անկյունը:

ՌԱԴԻՈԿՈԴ [< радиокод < լատ. radiare + ֆր. code], գ. 1. Ճածկագրված ռադիոհաղորդման կոդ: 2. *փխբ.* Ռադիոծածկագիր, ծածկագրված ռադիոհաղորդում:

ՌԱԴԻՈԿՈՄԻՏԵ [< радиокомитет < լատ. radiare + ֆր. comité < լատ. committere հանձնարարել, պատվիրել], գ. Ռադիոհաղորդումները կազմակերպող ու վարող կոմիտե՝ պետական մարմին:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ, գ. (տեխ.): Ռադիոհաճախականությունների տիրույթում մոդուլված էլեկտրական տատանումներ ստանալու և այդ տատանումները որպես էլեկտրամագնիսական ռադիոալիքներ ճառագայթելու սարքավորում:

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄ, գ. Խոսքի, երաժշտության և ձայնային այլ էֆեկտների հաղորդում ռադիոյով՝ անսահմանափակ թվով ունկնդիրների համար:

ՌԱԴԻՈՀԱՅԵԼԻ, գ. (տեխ.): Հայելային մակերևույթի միջոցով ռադիոալիքների ճառագայթումը կամ ընդունումն ապահովող սարք, որը հնարավորություն է տալիս գերկարճալիք տիրույթում ստանալու անհրաժեշտ ուղղվածություն:

ՌԱԴԻՈՀԵՌԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ, գ. Ռադիոալիքների միջոցով հեռավորության չափման մեթոդ, որի հիմքում ընկած է ալիքների անդրադարձման երևույթը:

ՌԱԴԻՈՀԵՌՈՒՍՏԱՄԵԽԱՆԻԿԱ, գ. Հեռուստամեխանիկայի բաժին, որտեղ կառավարման հրամանների և վերահսկիչ տեղեկատվության հաղորդման համար օգտագործում են ռադիոկապի աղիքները:

ՌԱԴԻՈՀԻԴՐՈԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (գիտ.): Հիդրոերկրաբանության բնագավառ, որը զբաղվում է բնական ռադիոակտիվ ջրերի, նրանց ձևավորման ու տարածման պայմանների ուսումնասիրությամբ:

ՌԱԴԻՈՄԵՏՐ [< радиометр < լատ. radiare + հուն. metron չափ], գ. (տեխ.): Ռադիոչափ՝ 1. Ռադիոակտիվ օգտակար հանածոների որոնման ու հետախուզ-

ման սարք: 2. Լուսային ճառագայթների էներգիայի չափման սարք:

ՌԱԴԻՈՆԱՎԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. 1. Նավերի և թռչող ապարատների վարման ժամանակ ռադիոտեխնիկական միջոցների օգնությամբ տարածության մեջ կողմնորոշում: 2. Գիտատեխնիկական բնագավառ, որն ուսումնասիրում է ռադիոտեխնիկական այն միջոցների ստեղծման սկզբունքներն ու դրանց կիրառման մեթոդները, որոնք օգտագործվում են շարժվող օբյեկտների վարման մեջ:

ՌԱԴԻՈՊԵԼԵՆԳԱՏՈՐ [< радиопеленгатор < լատ. radiare + հոլանդ. peiling], գ. (տեխ.): Հաղորդող ռադիոկայանի ուղղությունը (պելենգը) որոշող ռադիոընդունիչ սարք:

ՌԱԴԻՈՍԵՔՍՏԱՆՏ [< радиосекстант < լատ. radiare + sextans (sextantis) 1/6 մաս], գ. (տեխ.): Ըստ Արեգակի ռադիոճառագայթման՝ Արեգակի ուղղությունը ճշգրիտ որոշելու սարք:

ՌԱԴԻՈՍԻՍՏԵՄ [< радиосистема < լատ. radiare + հուն. systema ամբողջը], գ. Ռադիոհաղորդման և ռադիոընդունիչ համակարգ:

ՌԱԴԻՈՍՊԵԿՏՐՈՍԿՈՊԻԱ [< радиоспектроскопия < լատ. radiare + spectrum տեսանելի + հուն. skopeō դիտում եմ, զննում եմ], գ. (ֆիզ.): Նյութի կառուցվածքի, ինչպես նաև նյութում ընթացող ֆիզիկական և քիմիական գործընթացների հետազոտման մեթոդների համախումբ, որոնց հիմքում ընկած է ռադիոալիքների ռեզոնանսային կլանման երևույթը:

ՌԱԴԻՈՍՊՈՐՏ [< радиоспорт < լատ. radiare + անգլ. sport], գ. (սպորտ.): Ռադիոգործը որպես սպորտային զբաղմունք, ռադիոգործի զանազան տեսակները որպես մարզական զբաղմունքի ձև:

ՌԱԴԻՈՏԵԼԵՍԿՈՊ [< радиотелескоп < լատ. radiare + հուն. tele հեռու + skopeō դիտում եմ], գ. Ռադիոհեռադիտակ՝ (աստղգ.): Արտերկրային օբյեկտների ռադիոճառագայթների ընդունման ու գրանցման ռադիոընդունիչ սարք:

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿ [< радиотехник < լատ. radiare + հուն. technikē], գ. Ռադիոտեխնիկայի մասնագետ:

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱ [< радиотехника < լատ. radiare + հուն. technikē հմուտ < technē արվեստ], գ. (գիտ.): 1. Գիտություն բարձր հաճախականության էլեկտրամագնիսական տատանումների և կապի, ռադիոհաղորդումների, նավագնացության, աստղագիտության նն մեջ նրանց գործնական օգտագործման մասին: 2. Տեխնիկայի մի ճյուղ, որ զբաղվում է ռադիոսարքավորումների արտադրությամբ:

ՌԱԴԻՈՏՐԱՆՍԼՅԱՑԻԱ [< радиотрансляция < լատ. radiare + translatio հաղորդում], գ. Ռադիոծրագրերի հաղորդումը ռադիոկապի հաղորդալարերի ցանցով:

ՌԱԴԻՈՓԱՐՈՍ, գ. (տեխ.): Հայտնի աշխարհագրական վայրում կամ շարժվող օբյեկտի վրա տեղադրված հաղորդող ռադիոկայան, որի ազդանշանների միջոցով որոշվում է ինքնաթիռի կամ նավի ուղղությունը (պելենգը):

ՌԱԴԻՈՔԻՄԻԱ [< радиохимия < լատ. radiare միջին լատ. (al) chimia (ալ) քիմիա], գ. (գիտ.): Քիմիայի մի բաժինը, որ ուսումնասիրում է ռադիոակտիվ տարրերի ֆիզիկաքիմիական և քիմիական հատկությունները:

ՌԱԴԻՈՔԻՄԻԿՈՍ [< радиохимик < լատ.], գ. Ռադիոքիմիայի մասնագետ-քիմիկոս:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱ [< радиофизика < լատ. radiare + հուն. physikē < physis բնություն], գ. (գիտ.): Ֆիզիկայի մի բնագավառը, որ ուսումնասիրում է ռադիոտեխնիկայի և դրան հարակից տեխնիկական ճյուղերի ֆիզիկական հիմունքները:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿՈՍ [< радиофизик < լատ. radiare + հուն. physikē], գ. Ռադիոֆիզիկայի մասնագետ-ֆիզիկոս:

ՌԱԴԻՈՖԻԿԱՑԻԱ [< радиофикация < լատ. radiare + facere անել, գործել], գ. 1. Ռադիոտեղակայումների ու ռադիոկայանների ցանցի զարգացումը, ինչպես և բնակչության լայն զանգվածների ընդգրկումը ռադիոունկնդրության մեջ: 2. Որևէ օբյեկտի կահավորումը ռադիոսարքավորումներով:

ՌԱԴԻՍՏ [< радист < լատ. radiare], գ. ած. Ռադիովար՝ ռադիոյով հաղորդվող հնչյունային ազդանշանների ընդունման և հաղորդման մասնագետ, ռադիոհաղորդ:

ՌԱԴԻՈՒՄ [< радиум, радий < լատ. radius ճառագայթ], գ. (քիմ.): Ra, տարրերի պարբերական համակարգի VII պարբերության, II խմբի ռադիոակտիվ տարր: Կարգահամարը՝ 88, ատոմական զանգվածը՝ 226.02:

ՌԱԴԻՈՒՍ [< радиус < լատ. radius ճառագայթ], գ. (հնց.): Շառավիղ:

ՌԱԴՈՆ [< радон < լատ. Radonum, ռադիումի անվանումից], գ. (քիմ.): Rn, տարրերի պարբերական համակարգի VI պարբերության, VIII խմբի ռադիոակտիվ տարր, պատկանում է իներտ գազերի խմբին, ատոմական համարը՝ 86:

ՌԱԼԼԻ [< ралли < անգլ. rally < լատ. religare լծել], գ. (սպորտ.): Բազմօրյա սպորտային մրցումներ (մեքենաներով ևն)՝ հատուկ կանոնների և ժամանակացույցի պահպանմամբ:

ՌԱԽԻՏ [< рахит < հուն. rhachis մեջք, ողնաշար], գ. (բժշկ.): Մարմնի մեջ հանքային նյութափոխանակության խախտման հետևանքով առաջացող մանկական հիվանդություն, որ արտահայտվում է ոսկրային և նյարդային համակարգերի զարգացման խանգարումով:

ՌԱԽԻՏԻԿ [< рахитик < հուն.], ած. Ռախիտավոր՝ ռախիտով հիվանդ:

ՌԱԽԻՏԻԶՄ [< рахитизм < հուն.], գ. (բժշկ.): Ռախիտի հատկանիշների ամբողջությունը:

ՌԱԿ I [< ռուս. рак], գ. (կենդբ.խսկց.): Խեցգետին:

ՌԱԿ II [< ռուս. рак], գ. (բժշկ. խսկց.): Քաղցկեղ:

ՌԱԿԵՏ(Ա) I [< ракета < գերմ. Rakete], գ. (տեխ. խսկց.): Հրթիռ:

ՌԱԿԵՏ II [< ракета < ֆր. raquette < արաբ. rahat ձեռքի ափ], գ. (սպորտ.): Թենճակ՝ թենիսում, բատմինթոնում ևն օգտագործվող մարզագույք:

ՌԱԿՈՒՐՍ [< раккурс < ֆր. raccourcir կրճատել, կարճացնել], գ. (նկարչ.): Պատկերված առարկաների հեռանկարային կրճատումը. ռակուրսները հաճախ կիրառվում են շարժումը և տարածությունը առավել արդյունավետ արտահայտելու համար:

ՌԱՀԱԹ - ԼՈՒԽՈՒՄ[< рахат - лукум < արաբ.rahat փափուկ + lokhum պատառ], գ. (խոհր.):Արևելյան մի տեսակ փափուկ քաղցրավենիք:

ՌԱՄԱԶԱՆ [< рамазан, рамадан < արաբ.], գ. (կրոն.): Մահմեդականների լուսնային օրացույցի իններորդ ամիսը, որի ժամանակ նրանք խիստ պաս են պահում արևածագից մինչև արևամուտ:

ՌԱՄԲՈՒԼԻԵ [< рамбулье < հատուկ անունից], գ. (կենդբ.): Նրբագեղմ բրդամսատու ոչխարների ցեղերի խումբ, առաջին ցեղը ստացվել է XIX դ. Ֆրանսիայում՝ Ռամբուլիեում (այստեղից Rambouillet անվանումը) Իսպանիայից ներմուծված մերինոսների տարբեր տիպերի տրամախաչումից:

ՌԱՄՊԱ [< рампа < ֆր. rampe], գ. 1. (թատր.): Առաջաբեմի երկարությամբ ձգվող ցածր տախտակապատ, որը հանդիսատեսից ծածկում է բեմը լուսավորող պարագաները և լապտերները: 2. Այդ պատը՝ լուսավորության հարմարանքներով հանդերձ: 3. (տեխ.): Մետրոպոլիտենի գնացքների՝ երկրի մակերևույթից թունելի ներսը անցնելուն ծառայող երկաթբետոնե կառուցվածք: 4. Երկու բարձր

մակարդակների միջև բեռնափոխադրումը հեշտացնելուն ծառայող թեք մակերևույթով շարժական կառուցվածք:

ՌԱՅԴԵՐ [< райдер < անգլ. rider < to ride վարել], գ. (սպորտ.): Մարզիկ (հեծանվորդ, մոտոցիկլետիստ ևն), որը մրցարշավի ժամանակ հաղթահարում է բնական և արհեստական արգելքներ:

ՌԱ(Ե)ՅԽ [< рейх < գերմ. Reich պետություն, կայսրություն], գ. (պատմ.): Հիտլերյան Գերմանիայի անվանումը:

ՌԱՅԽՍԿԱՆՑԼԵՐ [< раихсканцлер, рейхсканцлер < գերմ. Reichskanzler], գ. (պատմ.): 1. Համագերմանական միակ մինիստրն ու Բունդեսրատի նախագահը Գերմանական կայսրությունում (1871-1918 թթ.): Նշանակվում էր կայսեր կողմից: 2. Կառավարության գլուխը Վայմարյան հանրապետությունում (1919-1933 թթ.):

ՌԱՅԽՍՏԱԳ [< рейхстаг < գերմ. Reichstag < Reich պետություն, կայսրություն + Tag տեղ՝ ժողով], գ. Գերմանական պառլամենտը 1871 թ. հետո:

ՌԱՅՈՆ [< район < ֆր. rayon շող, ճաճանչ], գ. (խսկց. հնց.): Շրջան, մարզ:

ՌԱՆԴԵՎՈՒ [< рандеву < ֆր. rendez-vous, բառացի՝ գալ, հայտնվել], գ. 1. Հանդիպում, ժամադրություն (հիմնականում սիրային): 2. (ծով.): Նավերի հանդիպման վայրը ծովում (նաև հանդիպումը): 3. (քղք.): Հանդիպում, խորհրդակցություն (պետության ներկայացուցիչների ևն):

ՌԱՆԵՏ, ՌԵՆԵՏ [< ранет // ренет < ֆր. rainette], գ. (բսբ.): Ձմեռային քաղցր խնձորի տեսակ:

ՌԱՆՀՈՈՒՏ [< рангоут < հոլանդ. rondhout, բառացի՝ կլոր փայտ], գ. (ծով.): Նավի սարքավորման վերտախտակամածային փայտե և մետաղե մասերի համախումբ, որը մեխանիկական շարժիչներով ժամանակակից նավերում ծառայում է նավի լույսերի, կապի և դիտակետերի, ռադիոկապի և ռադիոլոկացիոն ալեհավաքների տեղակայման, ազդանշանների բարձրացման համար:

ՌԱՆՉՈ [< ранчо < իսպ. rancho], գ. Անասնաբուծական տնտեսություն Լատինական Ամերիկայում:

ՌԱՆՏՅԵ [< рантье < ֆր. rentier], գ. 1. Վաշխառու՝ վաշխով՝ պարտատերից գանձվող սովորաբար մեծ տոկոսով՝ շահով դրամական կամ այլ կարգի պարտքեր տալը: 2. *փխբ.* Կեղեքիչ, չարաչար շահագործող մարդ: 3. Անձ, որի եկամտի հիմնական աղբյուրը արժեթղթերից գոյացած տոկոսներն են:

ՌԱՊԱԿԻՎԻ [< рапакиви < ֆին. rapakivi նեխած քար], գ. (հնք.): Պորֆիրանման կառուցվածքի գրանիտ՝ վարդագույն օրթոկլազի կլորավուն անջատումներով, որոնք երիզավորված են սպիտակ կամ բաց կանաչ օլիգոկլազով:

ՌԱՊՈՐՏ [< рапорт < ֆր. rapport], գ. (խսկց.): Զեկույց, զեկուցագիր:

ՌԱՊՍՈԴ [< рапсод < հուն. rhapsōdos < rhaptō հյուսում եմ + ōde երգ], գ. (արվ.): 1. Հին Հունաստանում՝ թափառական գուսան-երգիչ: 2. Ժողովրդական բանաստեղծ և երգիչ:

ՌԱՊՍՈԴԻԱ [< рапсодия < հուն. rhapsōdia], գ. (երժշտ.): Ժողովրդական երգերի կամ պարեղանակների թեմաներով գրված երաժշտական ստեղծագործություն:

ՌԱՋԱ [< раджа < սանսկրիտ rājā կայսր], գ. Ազնվական իշխանների և տեղական (նահանգների, երկրամասերի ևն) տիրակալների տիտղոսը Հնդկաստանում:

ՌԱՍԱ [< раса < ֆր. race < իտլ. razza], գ. (մարդբ.): Ծագման ընդհանրությունը և ժառանգական որոշ հատկանիշների (մարմնի կազմվածքի, մաշկի գունավորման,

մազերի գույնի, ձևի են) նմանությամբ կամ նույնությամբ միավորվող մարդկանց պատմականորեն կազմավորված խմբավորում, ցեղ:

ՌԱՍԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Հակագիտական մարդատյաց տեսություն ու քաղաքականություն, որ հիմնված է «բարձր» և «ցածր», «լիարժեք» և «ոչ լիարժեք» ռասաների գոյության սկզբունքի վրա, ռասիզմ, ազգախտրություն:

ՌԱՍԻԶՄ [< расизм < ֆր.], գ. Նույնն է՝ Ռասայականություն:

ՌԱՍԻՍՏ [< расист < ֆր.], գ. Ռասիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՌԱՏԻՆ [< ратин < ֆր. ratine], գ. (մնծգր.): Բրդյա հաստ գործվածք, որի երեսը պատված է խիտ ու կարճ գանգրամազի խավով:

ՌԱՏԻՖԻԿԱՑԻԱ [< ратификация < լատ. ratificatio < ratus վճռված, հաստատված + facere անել, գործել], գ. Վավերացում՝ որևէ բանի վերահաստատում:

ՌԱՏՈՒՇԱ [< ратуша < լեհ. ratusz < գերմ. Rathaus < Rat խորհուրդ + Haus տուն], գ. (պատմ.): 1. Քաղաքային ինքնավարության մարմին Եվրոպայի մի շարք երկրներում և Ռուսաստանում՝ XVIII-XIX դդ. դարերում: 2. Այդ մարմնի շենքը:

ՌԱՑԻԱ [< рация < լատ. rationalis], գ. 1. (խսկց.): Ռադիոկայան: 2. Ռադիոապարատ, սարք:

ՌԱՑԻՈՆԱԼ [< рациональный < լատ. rationalis], ած. 1. Բանական, տրամաբանական: 2. Խելացի, հիմնավորված, նպատակահարմար:

ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ, գ. 1. Որևէ կարգի գործունեության (աշխատանքի, արտադրության են) առավել արդյունավետ ու նպատակահարմար կերպով կազմակերպելը, կատարելագործում, բարելավում: 2. Ռացիոնալանալը, ռացիոնալացնելը, ռացիոնալացվելը:

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐ [< рационализатор < լատ.], գ. Արտադրության և արտադրական գործընթացների ռացիոնալիզացման գործով զբաղվող մարդ (բանվոր, մասնագետ), նորարար:

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱ [< рационализация < լատ. rationalis բանական, խելացի], գ. Ռացիոնալացում:

ՌԱՑԻՈՆԱԼԻԶՄ [< рационализм < լատ. rationalis], գ. (փիլ.): 1. Իմացաբանական ուղղություն, ըստ որի՝ գիտելիքի համընդհանրության և անհրաժեշտության աղբյուրը բանականությունն է, մինչդեռ փորձի ընդհանրացմամբ հնարավոր է հասնել միայն մասնավոր և պատահական ճշմարտությունների: 2. Գոյաբանության այն տարատեսակությունը, որն աշխարհի օրինաչափ կարգը համարում է բանական նախասկիզբը: 3. Ի հակադրություն իռացիոնալիզմի՝ ռացիոնալիզմ է կոչվում այն աշխարհայեցողությունը, որը գիտության, առհասարակ ճանաչողության և գործունեության մեջ ապավինում է բանականությանը: 4. (կրոն.): Ուղղություն, որն ընդունում է միայն բանական հիմնավորում գտնող դոգմաներ:

ՌԱՑԻՈՆԱԼԻՍՏ [< рационалист < լատ.], գ. Ռացիոնալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՌԱՈՒՆԴ [< раунд < անգլ. round], գ. (սպորտ.): Այն ժամանակահատվածը (սովորաբար 3 րոպե), որի ընթացքում տեղի է ունենում բռնցքամարտիկների մեկ հանդիպումը՝ մարտը, հերթամարտ:

ՌԱՖԻՆԱԴ [< рафинад < ֆր. raffinade], գ. Զանազան ձևի կտորներով պատրաստված շաքար:

ՌԱՖԻՆՅՈՐ [< рафинёр < ֆր. raffineur < raffier մաքրել, զտել], գ. (տեխ.): Զտիչ, մաքրիչ (մեքենա):

ՌԱՖԻՆՈԶ, գ. (քիմ.): Չվերականգնվող եռշաքար, որը կազմված է D-գալակտոզի, D-խաղողաշաքարի, D-պտղաշաքարի մնացորդներից: Անգույն, ջրում լուծվող

նյութ է, հալման ջերմաստիճանը՝ 80 °C (պենտահիդրատ) և 119-120° C (անջուր):

ՌԵ [< pe < լատ. re], գ. (երժշտ.): Երաժշտական ձայնաշարի երկրորդ ձայնը և դրա ձայնանիշը:

ՌԵ... [< pe... < լատ. re...] Նախածանց, որը ցույց է տալիս՝ 1. Կրկնվող, նորացվող, վերականգնվող գործողություն: 2. Բառարմատի արտահայտած իմաստին հակառակ գործողություն: 3. Հակազդեցություն:

ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱ [< реабилитация < միջին լատ. rehabilitatio վերականգնում], գ. 1. Նախկին վարքի՝ համբավի՝ բարի անվան վերականգնում, անարդար կերպով մեղադրված կամ հեղինակազրկված անձի պատիվը՝ հեղինակությունը վերականգնելը: 2. Դատարանով կամ վարչական կարգով իրավունքների վերականգնելը: 3. (բժշկ.): Բժշկական, մանկավարժական, մասնագիտական, իրավական միջոցառումների համալիր՝ ֆիզիկական և հոգեկան սահմանափակ հնարավորություններով (հիվանդությունների և վնասվածքների հետևանքով) անձանց առողջությունը և աշխատունակությունը վերականգնելու համար:

ՌԵԱԳԵՆՏ [< реагент < լատ. re... դեմ + actio գործողություն], գ. (քիմ.): Քիմիական հակազդակ (քիմիական ռեակցիաներում):

ՌԵԱԼ I [< реал < իսպ., պորտ. real], գ. (ֆին.): 1. (պատմ.): Իսպանական հին արծաթադրամ: 2. Պարսկաստանի դրամական միավոր:

ՌԵԱԼ II [< реальный < միջին լատ. realis իրական], ած. 1. Իրական, իրականության մեջ գոյություն ունեցող (ունեցած), ոչ մտացածին: 2. Իսկական, ճշմարիտ, ստույգ: 3. Իրականության իսկական պայմանների ու հնարավորությունների հաշվառման ու ըմբռնման վրա հիմնված, իրատեսական: 4. Իրագործելի, կիրառելի, իրականացնելի:

ՌԵԱԼԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ - Ընդհանուր միջնակարգ կրթության համակարգ, որը, ի տարբերություն դասական լեզուների դասավանդմանը, իր գլխավոր ուշադրությունը նվիրում է բնական, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների հիմունքների ու նոր լեզուների ուսուցմանը:

ՌԵԱԼԳԱՐ [< реальгар < ֆր. réalgar], գ. (հնք.): Միներալ, AsS, մկնդեղ ստանալու կարևոր հանքանյութ է:

ՌԵԱԼԻԱ [< реалия < ուշ լատ. realis իրական], գ. (խսկց.): Իրականություն (իրականության մեջ գոյություն ունեցող իր, երևույթ են):

ՌԵԱԼԻԶԱՑԻԱ [< реализация < միջին լատ. realis իրական], գ. 1. (խսկց.): Իրացում: 2. Իրականացում:

ՌԵԱԼԻԶՄ [< реализм < միջին լատ. realis իրական], գ. 1. Իրական պայմանների, հնարավորությունների և ուժերի հարաբերակցական հաշվառում և ըմբռնում: 2. Այդպիսի ըմբռնման ու հաշվառման ունակություն՝ կարողություն: 3. (արվ.): Գեղարվեստական ճանաչողության մեթոդ գրականության ու արվեստի մեջ, որ հիմնվում է իրականությունը ճշմարիտ և տիպական գծերով վերարտադրելու սկզբունքի վրա, իրապաշտություն: 4. (գրկն.): Այդ մեթոդին հետևող ուղղությունը գրականության մեջ: 5. (փիլ.): Միջնադարյան կրոնահիդեալիստական փիլիսոփայության անվանում (գտնում էր, որ ընդհանուր հասկացությունները նախորդում են փորձին և իրական կերպով գոյություն ունեն անկախ իրերից):

ՌԵԱԼԻՍՏ [< реалист < լատ. realis], գ. 1. (արվ.): Ռեալիզմի հետևորդ գրականության և արվեստի մեջ, իրապաշտ: 2. Իր գործունեությունը՝ գործելակերպը ռեալիզմի (1) վրա հիմնող, ռեալիզմով առաջնորդվող մարդ, իրատես:

ՌԵԱԿՏԻՎ [< реактивный < լատ.], ած. 1. (քիմ.): Քիմիական տարրալուծությունների համար որպես ռեակտիվ ծառայող: 2. (բնխս.): Արտաքին ազդակներին՝ ներ-

գործություններին պատասխանելու՝ հակազդելու ունակ՝ ընդունակ: 3. (ֆիզ.): Հետահար ուժի ազդեցությամբ առաջացող՝ ծագող, հետահարման արդյունք հանդիսացող: 4. Այդպիսի ուժ օգտագործող, այդպիսի ուժի օգտագործման վրա հիմնված:

ՌԵԱԿՏՈՐ [< реактор < ֆր. réacteur < անգլ. reactor < լատ. re դեմ, ընդդեմ + actor գործող], գ. 1. (էլեկտր.): Փոփոխական հոսանքի շղթայում կարճ միացման հոսանքների սահմանափակման էլեկտրական սարք: 2. (ֆիզ.): Կայանք՝ տեղակայանք, որի մեջ տեղի է ունենում ատոմային միջուկների տրոհման կառավարվող շղթայական ռեակցիան: 3. (քիմ.): Որոշակի ճնշումների ու ջերմության պայմաններում քիմիական ռեակցիաներ իրականացնող ապարատ:

ՌԵԱԿՏՈՐԱՇԻՆԱԿԱՆ, ած. 1. (տեխ.): Ռեակտորաշինությանը՝ ռեակտորաշինարարին հատուկ: 2. Ռեակտորաշինությամբ զբաղվող:

ՌԵԱԿՏՈՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. (տեխ.): Ռեակտորների արտադրություն:

ՌԵԱԿՑԻԱ I [< реакция < լատ. re դեմ, ընդդեմ, հակառակ + actio գործողություն], գ. 1. Այս կամ այն գործողության՝ ազդակին՝ ներգործության պատասխան գործողություն, հակազդեցություն: 2. (կենսբ.): Մարմնի պատասխանը արտաքին կամ ներքին գրգիռներին, հակազդեցություն: 3. Ինքնազգայության կտրուկ փոփոխություն, մեծ լարվածությունից՝ հուզմունքից ևն հետո տեղի ունեցող ուժերի նվազում, թուլություն: 4. (քիմ.): Երկու կամ ավելի նյութերի քիմիական փոխազդեցություն:

ՌԵԱԿՑԻԱ II [< реакция < լատ. տե՛ս Ռեակցիա (I)], գ. 1. (քղք.): Հեղափոխական շարժումների և ամեն կարգի հասարակական առաջխաղացման անողոք ճնշման քաղաքականություն: 2. Նորի՝ առաջավորի՝ զարգացողի և առաջադիմության ընթացքի ամեն մի հակադրություն և խոչընդոտում, նորին՝ առաջավորին հակազդելու ամեն կարգի փորձ՝ գործունեություն: 4. *փխբ.* (հվք.): Ռեակցիոն քաղաքականության կողմնակիցների ամբողջությունը, ռեակցիոն շարժումներ:

ՌԵԱԿՑԻՈՆ [< реакционный < լատ.], ած. (քղք.): 1. Ռեակցիայի՝ ռեակցիոն շրջանի շահերին համապատասխանող, ռեակցիայի շահերը պաշտպանող: 2. Հետադիմական բնույթ ունեցող, հետադիմական տեսակետներ՝ ձգտումներ՝ քաղաքականություն արտահայտող՝ պարունակող, հետախաղաց: 3. Ռեակցիայի կողմնակից, ռեակցիայի քաղաքականությանը և գաղափարախոսությանը հարող:

ՌԵԱԿՑԻՈՆԵՐ [< реакционер < լատ.], գ. (քղք.): Ռեակցիայի կողմնակից, հետադիմական:

ՌԵԱՆԻՄԱՏՈԼՈԳԻԱ [< реаниматология < ռե... + լատ. animatio կենդանացում + հուն. logos ուսմունք], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որն ուսումնասիրում է մարդու օրգանիզմի ֆունկցիաների մարման և վերականգնման հիմնական օրինաչափությունները:

ՌԵԱՆԻՄԱՑԻԱ [< реанимация < լատ.], գ. (բժշկ.): Օրգանիզմի կենսականորեն կարևոր գործառույթների խանգարումների կամ կորստի վերականգնումը. իրագործվում է կլինիկական մահվան դեպքում:

ՌԵԲՈՒՍ [< ребус < լատ. rebus < res առարկա, իր բառի հոգն. թվի գործիական հոլովից], գ. 1. Հանելուկ, որի մեջ որոնելի բառը կամ կապակցությունը տրված է նկարների, տառերի կամ նշանների համակցությամբ: 2. *փխբ.* Դժվար լուծելի՝ դժվար հասկանալի խնդիր՝ խոսք՝ միտք ևն, հանելուկ, առեղծված:

ՌԵԳԱՏԱ [< регата < իտլ. regate], գ. (սպորտ.): Առագաստային, թիավոր, երբեմն

նաև մոտորային նավերի տարբեր տեսակների խոշոր ավանդական մրցումներ՝ մրցություններ:

ՌԵԳԲԻ [< регби < անգլ. rugby անգլիական Ռեգբի քաղաքի անունից], գ. (սպորտ.): Կաշվե մեծ գնդակով մարզական թիմային խաղ:

ՌԵԳԵՆԵՐԱՏ [< регенерат < լատ. regeneratus վերականգնված], գ. Վերականգնվածք (օգտագործված նյութի):

ՌԵԳԵՆԵՐԱՑԻԱ [< регенерация < լատ. regeneratio վերականգնում, վերածնում], գ. 1. (կենսբ.): Վերածում, վերականգնում (օրգանիզմի կորցրած որևէ մասի, հյուսվածքի, բջիջի): 2. (տեխ.): Վերականգնում (օգտագործված նյութերի): 3. (տեխ.): Օդի և գազի տարածում (այրումից առաջացած նյութերով): 4. (ռադ.): Սեփական ալիքների ճառագայթում:

ՌԵԳԵՆՏ [< регент < լատ. regens (regentis) տիրող, կառավարող], գ. (քղք.): Միապետին փոխարինող ժամանակավոր կառավարիչ:

ՌԵԳԻՈՆ [< регион < անգլ. region < լատ. regio], գ. (խսկց.): Ընդարձակ շրջան, որ համապատասխանում է մեկ կամ մի քանի երկրների մի քանի մարզերի, որոնք միավորվում են տնտեսաաշխարհագրական և այլ հատկություններով, տարածաշրջան:

ՌԵԳԻՈՆԱԼ [< региональный < անգլ. region < լատ. regio], ած. Տեղական, որևէ առանձին գավառի՝ երկրի կամ մի քանի հարևան երկրների վերաբերող, տարածաշրջանային:

ՌԵԳԻՍՏՐ [< регистр < միջին լատ. registrum], գ. 1. Գրանցման մատյան, ցուցակ: 2. (երժշտ.): Երաժշտական գործիքի կամ մարդկային ձայնի դիապազոնի հատված: 3. Ստեղնավոր և լեզվակավոր երաժշտական գործիքների (երգեհոնի, ակորդեոնի ևն) մեջ միևնույն ձայներանգն ունեցող փողերի կամ լեզվակների խումբը: 4. (տեխ.): Մի քանի մեքենաների ու սարքերի մեջ՝ բաշխիչ ու կարգավորիչ մաս: 5. Կառուցվող ու շահագործման մեջ դրվող ծովային և գետային նավերի որակի պետական հսկողության մարմին: 6. (պշտն.): Պետական մարմին, որն իրականացնում է վերահսկողության գործառնություն կառավարման հատուկ ոլորտի նկատմամբ:

ՌԵԳԻՍՏՐԱՏՈՐ [< регистратор < միջին լատ.], գ. 1. Ցուցակագրող, մատենավար: 2. Հաշվառիչ:

ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱ [< регистрация < միջին լատ. registratio < registrum ցուցակ, թվարկցանկ], գ. 1. Ցուցակագրություն: 2. Հաշվառում:

ՌԵԳԼԱՄԵՆՏ [< регламент < լեհ. reglament < ֆր. règlement < régle կանոն < լատ.], գ. 1. Որևէ աշխատանքի՝ գործունեության ևն կարգը սահմանող կանոնների ամբողջությունը, կանոնակարգ, աշխատակարգ: 2. Ժողովների՝ նիստերի ևն վարելու կարգը, ժողովակարգ:

ՌԵԳԼԱՄԵՆՏԱՑԻԱ [< регламентация < ֆր. réglamentation < լատ.], գ. 1. (խսկց.): Կարգավորում, կարգավորելը: 2. Կարգորոշում, կարգորոշելը, կանոնակարգում, կանոնակարգելը:

ՌԵԳՐԵԴԻԵՆՏ [< регредиент < լատ. regrediens (regredientis) հետ դարձող], գ. (իրավբ.): Տե՛ս Ռեգրեսանտ:

ՌԵԳՐԵՍ [< регресс < լատ. regressus վերադարձ, հետընթաց], գ. 1. (հնց.): Հետադիմություն, հետընթաց շարժում, զարգացման անկում: 2. (տնտսգ.): Հետընթաց՝ արտադրության մակարդակի անկում:

ՌԵԳՐԵՍԱՆՏ [< регрессант < լատ. regressus վերադարձ, հետադարձ], գ. (իրավբ.): Հետ պահանջող, հետադարձ պահանջատեր, հետպահանջընկալ:

ՌԵԳՐԵՍԱՏ [< регрессат < լատ.], գ. (իրավք.): Հետադարձ պատասխանող:

ՌԵԳՐԵՍԻԱ [< регрессия < լատ. regressio հակառակ շարժում, հեռացում], գ. (երկրբ.): Ծովի ջրերի նահանջ ափերից:

ՌԵԳՐԵՍԻՎ [< регрессивный < լատ.], ած. Հետընթաց, հետխաղաց, հետադիմական:

ՌԵԳՈՒԼՅԱՏՈՐ [< регулятор < լատ. regulare կարգի բերել], գ. (տեխ.): Կարգավորիչ, կանոնավորիչ:

ՌԵԳՈՒԼՅԱՐ [< регулярный < լատ. regularis], ած. 1. Կանոնավոր: 2. Կարգավորված: 3. Համաչափ:

ՌԵԴԱԿՏՈՐ [< редактор < գերմ. Redaktor < նոր լատ. redactio < redigere կանոնավորել], գ. (հնց.): Խմբագիր, խմբագրող:

ՌԵԴԱՆ [< редан < ֆր. redan խորշ], գ. 1. (ռազմ.): Հակառակորդի կողմն ուղղված 60-120° անկյան տակ գտնվող երկու դիմամասերով բացդաշտային ամրաշինական կառույց: 2. (ծով.): Արագընթաց նավի հատակի փորակ, որը ընթացքի ժամանակ ստեղծում է վերամբարձ ուժ և նավը ջրի երես է բարձրանում՝ սահելով ջրի մակերևույթով:

ՌԵԴԵՄԱՐԿԱՑԻԱ [< редемаркация < ֆր. redemarcation], գ. (իրավք. ռազմ.): Վերասահմանագծում, վերասահմանանշում:

ՌԵԴԻՆԳՈՏ [< редингот < ֆր. redingote < անգլ. riding coat բաճկոն ձիավարության համար], գ. (հնց.): Տղամարդկանց երկար ու լայն վերնազգեստ:

ՌԵԴԻՖ [< редиф < արաբ. բառացի՝ ձիավորի հետևում նստածը], գ. (տոչփ.): Մեկ կամ մի քանի բառերի կրկնությունը տողերի վերջում. կրկնվող բառերին նախորդում հանգը: Տարածված է արևելյան պոեզիայում:

ՌԵԴՈՒԿՏՈՐ [< редуктор < լատ. reductor], գ. (տեխ.): Պտուտական շարժումը մեկ գլանից մյուսին փոխանցող մեխանիզմ:

ՌԵԴՈՒԿՑԻԱ [< редукция < լատ. reductio վերադարձ, հետմղում], գ. 1. (գիտ.): Բարդից պարզին անցնելը: 2. (կենսբ.): Զարգացում, որ տանում է դեպի մարմնի կազմության պարզեցումը: 3. (տեխ.): Նվազեցում: 4. (լեզվբ.): Սղում: 5. (լեզվբ.): Ամփոփում:

ՌԵԴՈՒԿՑԻՈՆ [< редукционный < լատ.], ած. Ռեդուկցիային հատուկ՝ վերաբերող:

ՌԵԴՈՒՊԼԻԿԱՑԻԱ [< редупликация < լատ. reduplicatio կրկնավորում], գ. (լեզվբ. հնց.): Կրկնավոր բարդություն, կրկնության միջոցով բառակազմություն:

ՌԵԴՈՒՏ [< редут < ֆր. redoute], գ. (ռազմ.): Հողապատնեշ:

ՌԵԶԵԿՑԻԱ [< резекция < ֆր. reséction < լատ. resēctio հատում], գ. (բժշկ.): Հատում, հատելով՝ կտրելով հեռացում՝ հեռացնելը, վիրահատում (հիվանդ օրգանի կամ դրա որևէ հատվածի):

ՌԵԶԵՐՎ [< резерв < ֆր. réserve պաշար < լատ. reservare խնայել, պահպանել], գ. 1. Նոր ուժեր՝ միջոցներ հայթայթելու՝ ստանալու աղբյուր, պահեստ: 2. Որևէ բանի պաշար: 3. (ռազմ.): Պահեստազոր: 4. (ռազմ.): Պահեստ:

ՌԵԶԵՐՎԱՑԻԱ [< резервация < լատ. reservare պահպանել], գ. 1. Ռեզերվի համար պահելը, պահեստավորելը: 2. (պատմ.): ԱՄՆ-ում, ՀԱՀ-ում, Կանադայում, Բրազիլիայում, Ավստրալիայում՝ երկրի անդրենածին բնակչությանը բռնի կերպով բնակեցնելու տարածք, ռասսայական խտրության ձև: 3. (կենդբ.): Որոշ կենդանիների ժամանակավոր կուտակման վայր:

ՌԵԶԵՐՎԻՍՏ [< резервист < ֆր. réserviste], գ. (ռազմ. հնց.): Պահեստային,

պահեստազորային (զինապարտի մասին):

ՌԵԶԵՐՎՈՒԱՐ [< резервуар < ֆր. réservoir < լատ. reservare պահել, պահպանել], գ. Հեղուկի պահեստարան, հեղուկներ պահելու աման՝ անոթ:

ՌԵԶԻԴԵՆՏ [< резидент < լատ. residens (residentis) մնացող, կեցող], գ. 1. Լրտեսության գաղտնի ղեկավար օտար տերության մեջ: 2. Լիազոր ներկայացուցիչ: 3. Տարաբնակիչ, օտարահպատակ:

ՌԵԶԻԴԵՆՑԻԱ [< резиденция < լատ. residens (residentis) կեցող, մնացող], գ. (քղք.): Նստավայր, աթոռանիստ:

ՌԵԶԻՆ [< резина < լատ. resina խեժ, ձյութ], գ. (խսկց.): Ռետին:

ՌԵԶԻՍՏՈՐ [< резистор < անգլ. resistor < լատ. resistere դիմադրել], գ. (էլեկտ.): Էլեկտրական շղթայի կառուցվածքային տարր (ավարտուն շինվածքի տեսքով), որի հիմնական գործառույթը հոսանքը և լարումը կարգավորելն է՝ շղթայում հոսանքին որոշակի դիմադրություն ցույց տալու ճանապարհով:

ՌԵԶՅՈՒՄԵ [< резюме < ֆր. résumé], գ. (խսկց.): Ամփոփում, գիտական աշխատության կամ հոդվածի բովանդակության սեղմ շարադրանք:

ՌԵԶՈԼՅՈՒՑԻԱ [< резолюция < լատ. resolutio], գ. 1. Որևէ կոլեգիալ մարմնում՝ ժողովում՝ կոնֆերանսում որևէ հարցի քննարկման արդյունքում ընդունված որոշում: 2. Պաշտոնատար անձի կատարած մակագրությունը փաստաթղթի վրա:

ՌԵԶՈՆ [< резон < ֆր. raison իմաստ, հիմնավորում], գ. (խսկց.): 1. Իմաստ, փաստարկ, խելացի հիմք, իմաստավոր հիմնավորում: 2. (հնց. հոգն.): Փաստարկներ, հիմնավորումներ, պատճառաբանություններ:

ՌԵԶՈՆԱՆՍ [< резонанс < ֆր. résonance < լատ. resonans արձագանք տվող], գ. Արձագանք, արձագանքում:

ՌԵԶՈՆԱՏՈՐ [< резонатор < լատ. resonare արձագանք տալ], գ. Արձագանքարան:

ՌԵԶՈՐԲՑԻԱ [< резорбция < լատ. resorbere ներծծել], գ. (քիմ.): Կրկնակլանում, ներծծում:

ՌԵԶՈՐՑԻՆ [< резорцин < ֆր. résorcine, անգլ. resorcin], գ. (քիմ.): Երկատոմ ֆենոլ, 110,8°C հալման ջերմաստիճանով: Օգտագործվում է հատկապես ներկանյութերի արտադրության մեջ:

ՌԵԶՈՒԼՏԱՏ [< результат < գերմ. Resultat < լատ. resultatum < resultare հետ ցատկել], գ. (հնց.): 1. Հետևանք, արդյունք, արգասիք: 2. (սպորտ.): Ցուցանիշ, արդյունք:

ՌԵԶՈՒՍ [< резус < նոր լատ. (Macacus) rhesus], գ. 1. (կենդբ.): Մակակի ցեղի նեղքիթ կապիկ. տարածված է Հարավարևելյան Ասիայում: 2. (բժշկ.): Տե՛ս Ռեզուս- ֆակտոր:

ՌԵԶՈՒՍ-ՖԱԿՏՈՐ [< резус-фактор < նոր լատ. (Macacus) rhesus + factor անող, արտադրող], գ. (բժշկ.): Հատուկ նյութ, որ կա ռեզուս կապիկների և մարդկանց 85 % -ի արյան մեջ:

ՌԵԷՄԻԳՐԱՑԻԱ[< реэмиграция < ռե..+էմիգրացիա], գ. (ազգգր.): Վտարանդիությունից վերադարձ:

ՌԵԷՎԱԿՈՒԱՑԻԱ [< реэвакуация < ռե... + էվակուացիա], գ. (ազգգր. ռազմ.): Նախկին բնակավայր վերադարձնելը, վերադարձ:

ՌԵԺԻՄ [< режим < ֆր. régime], գ. 1. (քղք.): Կառավարման պետական կարգ, վարչակարգ: 2. (խսկց.): Կյանքի (աշխատանքի, հանգստի, սնվելու (սննդակարգի), քնի ևն) խստորեն սահմանված կարգ: 3. Որևէ նպատակի՝ գործունեության

են համար անհրաժեշտ միջոցառումների, կատարման կարգի են կանոնների ամբողջությունը:

ՌԵԺԻՍՈՐ [< режиссёр < ֆր. régisseur < լատ. regere կառավարել, վարել, ղեկավարել], գ. (թատր. կինո.): Թատերական և կինեմատոգրաֆիական ներկայացումների գեղարվեստական ղեկավար, դերուսույց:

ՌԵԺԻՍՈՒՐԱ [< режиссура < լատ.], գ. (թատր. կինո.): 1. Ռեժիսորություն: 2. (հվք.): Ռեժիսորների կազմը, ռեժիսորներ:

ՌԵԼԱՏԻՎ, ՌԵԼՅԱՏԻՎ [< релятивный < լատ. relativus], ած. Հարաբերական:

ՌԵԼԱՔՍԱՑԻԱ [< релаксация < լատ. relaxatio թուլացում, նվազում], գ. Ֆիզիկական համակարգի՝ արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված անհավասարակշիռ վիճակից հավասարակշռության անցնելու աստիճանական գործընթաց:

ՌԵԼԵ [< реле < ֆր. relais < relayer փոխել, փոխարինել], գ. (տեխ.): Ավտոմատ սարք, որ միակցում կամ անջատում է էլեկտրական շղթաները այն երևույթների դեպքում, որոնց նկատմամբ նա հակազդելու որոշակի օժտվածություն՝ հատկություն ունի:

ՌԵԼԻԳԻԱ [< религия < լատ. religio խղճմտություն], գ. (հնց.): Կրոն:

ՌԵԼԻԵՖ [< рельеф < ֆր. relief < իտլ. rilievo], գ. 1. (արվ.): Բարձրաքանդակ: 2. (աշխգր.): Երկրի մակերևույթի զանազան կարգի անհարթությունների ու ցածրությունների, լեռների ու բարձրավանդակների ամբողջությունը: 3. ած. Վառ, ցցուն, ցայտուն:

ՌԵԼԻԿՎԻԱ [< реликвия < լատ. reliquiae մնացորդներ], գ. (հնց.): 1. (կրոն.): Մասունք, նշխար, սրբություն: 2. (խսկց.): Սուրբ հիշատակի իր, հուշառարկա, նվիրական հուշաիր, սրբություն:

ՌԵԼԻԿՏ [< реликт < լատ. relictus մնացորդ], գ. (գիտ.): Մնացուկ՝ երևույթ կամ առարկա, որը պահպանվել է հնագույն ժամանակներից:

ՌԵԼՅԱՏԻՎԻԶՄ [< релятивизм < լատ. relativus հարաբերական], գ. (փիլ.): Իմացության տեսության իդեալիստական ուղղություն, որ ժխտում է օբյեկտիվ ճշմարտությունը՝ հիմք ընդունելով բոլոր գիտելիքների հարաբերականությունը և փոփոխականությունը:

ՌԵԼՅԱՏԻՎԻՍՏ [< релятивист < լատ.], գ. (փիլ.): Ռելյատիվիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՌԵԼՅԱՑԻԱ [< реляция < լատ. relatio հաղորդում], գ. (ռազմ.): Ռազմազեկույց (ռազմական գործողությունների ընթացքի կամ կատարած ոճրագործությունների մասին):

ՌԵԼՍ [< рельс < անգլ. rails հոգն. սևափայտ], գ. (խսկց.): 1. Պողպատյա նեղ ու երկար ձող, որով սարքում են գնացքի՝ տրամվայի ևն գծերը: 2. Երկաթուղային կամ տրամվայի գիծ:

ՌԵԿԵՏ [< рэкет < անգլ. racket], գ. (խսկց.): Խոշոր դրամաշորթություն, շանտաժ գանգստերների կողմից պատճառվող սարսափով:

ՌԵԿԼԱՄ [< реклама < ֆր. réclame < լատ. reclamare գոչել, բացականչել], գ. (խսկց.): 1. Գովազդ, ազդարք: 2. Հռչակ, համբավ ստեղծելու նպատակով տեղեկությունների տարածում:

ՌԵԿԼԱՄԱՑԻԱ [< рекламация < լատ. reclamatio առարկություն, անհավանություն], գ. 1. Բողոք, դժգոհություն: 2. (առևտր.): Ապրանքի ցածրորակության համար բողոք՝ վնասների հատուցման պահանջով, բողոքագիր:

ՌԵԿՈՄԲԻՆԱՑԻԱ [< рекомбинация < ռե... + միջին լատ. combinatio միացում],

գ. (ֆիզ.): Վերամիավորում՝ իոնացմանը հակառակ երևույթ, այսինքն՝ տարանուն ազատ լիցքակիրների անհետացումը դրանց բախումների ժամանակ:

ՌԵԿՈՄԵՆԴԱՑԻԱ [< рекомендация < միջին լատ. re… + commendatio միացում, միավորում], գ. (խսկց.): 1. Հանձնարարություն, հանձնարարում: 2. Հանձնարարական, երաշխավորագիր:

ՌԵԿՈՆԿԻՍՏԱ [< реконкиста < իսպ. Reconquista < reconquistar հետ նվաճել], գ. (պատմ.): Արաբների զավթած տարածքների հետնվաճումը Պիրենեյան թերակղզու ժողովուրդների կողմից VIII-XV դդ.:

ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ [< реконструкция < գերմ. Rekonstruktion < լատ.], գ. (հնց.): 1. Վերակառուցում, վերակառուցելը: 2. Վերականգնում, վերականգնվելը, վերակերտվածք:

ՌԵԿՈՆՎԵՐՍԻԱ [< реконверсия < re... + լատ. conversio վերադարձ, շրջադարձ], գ. (տնտսգ.): Տնտեսական կառուցվածքային փոփոխություն՝ կապված ռազմական արտադրանքի թողարկումից քաղաքացիականի անցնելու հետ վերափոխադրում:

ՌԵԿՈՐԴ [< рекорд < անգլ. record], գ. 1. (սպորտ.): Մարզական մրցության մեջ ձեռք բերած առավելագույն ցուցանիշ: 2. (տնտսգ.): Աշխատանքի՝ արտադրության՝ տնտեսական գործունեության որևէ բնագավառում նվաճված մեծ հաջողություն՝ բարձր ցուցանիշ: 3. Որևէ բանի բարձրագույն աստիճան:

ՌԵԿՈՐԴԱԿԻՐ, գ. ած. 1. Որևէ մարզաձևում ռեկորդ սահմանած մարզիկ: 2. Արտադրության բնագավառում առավելագույն հաջողությունների հասած մարդ՝ ձեռնարկություն՝ գործարան ևն: Նույնն է Ռեկորդսմեն:

ՌԵԿՈՐԴԻՍՏ [< рекордист < լատ.], գ. ած. 1. Ռեկորդակիր: 2. (գղտնտ.): Որևէ հատկությամբ ռեկորդային ցուցանիշներ ունեցող ընտանի կենդանի:

ՌԵԿՈՐԴՍՄԵՆ [< рекордсмен < անգլ. recordsman], գ. (խսկց.): Ռեկորդակիր, ռեկորդ սահմանած մարդ:

ՌԵԿՎԻԶԻՏ [< реквизит < լատ. requisitum պահանջվող, անհրաժեշտ], գ. 1. (թատր.): Ներկայացման ընթացքում դերասաններին անհրաժեշտ իրերի և բեմահարդարման առարկաների ամբողջությունը: 2. (իրավ.): Վավերապայման: 3. (տնտսգ.): Պայման, նշանատվյալ՝ անհրաժեշտ տվյալներ, փաստեր, հաղորդումներ, որոնք պետք է պարունակի փաստաթուղթը (մուրհակ, պայմանագիր, վճարագիր)՝ իրավական ուժ ստանալու գործարքների իրականացման համար:

ՌԵԿՎԻԶԻՏՈՐ [< реквизитор < լատ.], գ. (թատր.): Ռեկվիզիտի պահպանությամբ և ներկայացումը անհրաժեշտ ռեկվիզիտով ապահովելու գործով զբաղվող աշխատակից:

ՌԵԿՎԻԶԻՑԻԱ [< реквизиция < լատ. requisitio պահանջ], գ. (իրավ.): Բռնագրավում՝ առանձին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գույքի օտարումը պետական օրգանների կողմից (ժամանակավոր) վճարման դիմաց:

ՌԵԿՏԻՖԻԿԱՑՈՒՄ [< ректификация < միջին լատ. rectificatio համուղղում < լատ. rectus ուղիղ + facere կատարել], գ. (քիմ. ֆիզ.): Մի քանի բաղադրիչներից բաղկացած հեղուկ խառնուրդները բաժանելու եղանակ:

ՌԵԿՏՈՐ [< ректор < լատ. rector կառավարող], գ. 1. Բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտոր՝ տնօրեն՝ ղեկավար: 2. (արտսհմ.): Հոգևոր միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատության տնօրեն:

ՌԵԿՏՈՐԱՏ [< ректорат < լատ.], գ. 1. Բարձրագույն ուսումնական հաստատության վարչաուսումնական մարմինը, որ գլխավորում է ռեկտորը: 2. Այն տարած-

քը, որտեղ տեղավորված է այդ մարմինը:

ՌԵԿՐԵԱՑԻԱ [< рекреация < ֆր. récréation < լատ. recreātio վերականգնում], գ. 1. (հնց.): Արձակուրդ կամ դասամիջոց դպրոցում: 2. (հնց.): Հանգստասենյակ (կրթարանում): 3. (բժշկ.): Հանգիստ, մարդու ուժերի վերականգնում (ծանր աշխատանքից հետո):

ՌԵԿՐԵԴԻՏԻՎ [< рекредитив < լատ. re ... + crēditum վստահյալ, հավատարմատար], գ. (դվնգ. հնց.): Փաստաթուղթ, որով պետությունը հետ է կանչում իր դիվանագիտական ներկայացուցչին:

ՌԵԿՈՒՊԵՐԱՑՈՒՄ [< рекуперация < լատ. recuperatio հետստացում, վերադարձ], 1. (տեխ.): Վառարանից կամ շոգեկաթսայից հեռացող այրման գազանման արգասիքների ֆիզիկական ջերմության մի մասի օգտագործումը՝ օդի, գազի, կաթսաները սնուցող ջրի տաքացման համար: 2. (էլեկտր.): Էլեկտրաշարժիչի աշխատանքի ռեժիմ, երբ էլեկտրաշարժիչի ռոտորի մեխանիկական պտտման հետևանքով ստատորում մակածվում է հոսանք, որը վերադառնում է էլեկտրաշարժիչի սնման ցանց: 3. (քիմ.): Օրգանական լուծիչներ որսալու կամ արտադրելու մեթոդ՝ դրանց կրկնակի օգտագործման նպատակով:

ՌԵԿՈՒՐԵՆՏ ԲԱՆԱՁԵՎ [< рекуррентная (< լատ. recurrens (recurrentis) հետ եկող, վերադարձող) формула] - (մաթ.): Անդրադարձ՝ բերման բանաձև, որը որևէ հաջորդականության n-րդ անդամի հաշվումը բերում է նախորդ մի քանի անդամների հաշվմանը:

ՌԵՄԱ [< рема < հուն. rhema պատմություն, խոսք], գ. (լեզվբ.): Թեմայի մասին հաղորդվող նորությունը (տվյալ արտահայտության մեջ), ասույթի միջուկ, նորը:

ՌԵՄԱՐԿ(Ք) [< ремарка < ֆր. remarque ծանոթագրություն], գ. 1. Գրավոր նշում՝ դիտողություն: 2. (թատր.): Հեղինակային նշագրում (պիեսում):

ՌԵՄԻՆԻՍՑԵՆՑԻԱ [< реминисценция < լատ. reminiscentia վերհիշում], գ. 1.(հոգեբ.): Հիշողական պասսիվ գործընթաց, որի ընթացքում որոշ ժամանակ մոռացության տրված և ապա վերհիշված պատկերները, ապրումները, մտքերն ու գիտելիքները չեն ճանաչվում որպես մտապահված ամբողջական երևույթ կամ փաստ: 2. (գրկն.): Այլ գրական ստեղծագործություններից որևէ ծանոթ արտահայտության կամ պատկերի միտումնավոր կամ ինքնաբերաբար կիրառելը:

ՌԵՄԻՍԻԱ [< ремиссия < լատ. remissio նվազում, փոքրացում, թուլացում], գ. 1. (ֆին.): Վճարման գումարի կլորացումը դեպի ստորին նիշը: 2. (բժշկ.): Հիվանդության ժամանակավոր թուլացում՝ նահանջ:

ՌԵՄԻՔՍ [< ремикс < լատ. remixtum խառնում], գ. (երժշտ.): 1. Երաժշտությանը բարձր տեմպ հաղորդելը: 2. Արագացված տեմպով երաժշտություն:

ՌԵՄՈՆՏ [< ремонт < remonte], գ. (խսկց.): Նորոգում, վերանորոգում, վերանորոգություն:

ՌԵՅԴ [< рейд < անգլ. raid], գ. 1. (խսկց.): Ստուգայց՝ որևէ բանի, հիմնարկության գործունեության նն վիճակը ստուգելու նպատակով: 2. (ռազմ.): Թիկունքային արշավ, մարտարշավ, ասպատակություն:

ՌԵՅԴԵՐ [< рейдер < անգլ. raider < to raid արշավել], գ. (ծով.): Ռազմանավ, արշավանավ:

ՌԵՅՆՋԵՐ [< рейнджер < անգլ. ranger դեսանտի զինվոր], գ. (ռազմ.): ԱՄՆ-ի զինված ուժերի կոմանդոս զորամիավորման զինվոր:

ՌԵՅՍ [< рейс < գերմ. Reise ուղևորություն], գ. (խսկց.): Նավի, ինքնաթիռի, ավտոբուսի նն որոշակի երթուղով կատարվող երթևեկություն:

ՌԵՅՍՄՈՒՍ [< рейсмус, рейсмас < գերմ. Reißmaß], գ. (տեխ.): Հյուսնի գործիք, որով զուգահեռ գծեր են արվում չափանշման ժամանակ:

ՌԵՅՎ [< рейв < անգլ. rave զառանցանք, ցնորք], գ. (երժշտ.): Պարային և երաժշտական մշակույթի երիտասարդական ժամանակակից ուղղություն, որը համադրում է և՛ էլեկտրոնային երաժշտության էներգետիկ ռիթմերը, և՛ լուսային էֆեկտները:

ՌԵՅՏԻՆԳ [< рейтинг < անգլ. rating վարկանիշ], գ. Վարկանիշ:

ՌԵՆԵԳԱՏ [< ренегат < լատ. renegare ուրանալ, հրաժարվել], գ. ած. (քղք.): Դավաճան, ուրացող, ուրացյալ:

ՌԵՆԵՍԱՆՍ [< ренессанс < ֆր. renaissance վերածնունդ], գ. (արվ.): Վերածնունդ՝ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների զարգացման՝ միջնադարյան մշակույթից նոր ժամանակի մշակույթին անցնելու դարաշրջան: Ընդգրկել է XIV-XVII դդ.:

ՌԵՆԻՆ [< ренин < լատ. ren երիկամ], գ. (կենսբ.): Մարդու և ողնաշարավոր կենդանիների երիկամում արտադրվող սպիրտալուծիչ ֆերմենտ:

ՌԵՆԻՈՒՄ [< рений < լատ. Rhenium], գ. (քիմ.): Re, տարրերի պարբերական համակարգի VI պարբերության, VII խմբի տարր: Կարգահամարը՝ 75, ատոմական զանգվածը՝ 186.2:

ՌԵՆՏԱ [< рента < գերմ. Rente < ֆր. rente < լատ. reddita հետ տալը], գ. 1. (տնտսգ.): Կապիտալից, գույքից կամ հողից ստացվող կանոնավոր եկամուտ, որ ստացողի հատուկ ձեռնարկողական գործունեություն չի պահանջում: 2. (ֆին.): Պետական անժամկետ փոխառություն, որ մշտական եկամուտ է բերում պարտատոմսի տիրոջը: 3. Վարձավճար՝ տարբերություն եկամտի և այն նվազագույն գումարի միջև, որն անհրաժեշտ է ծառայությունների տվյալ ծավալը ապահովելու համար: Կիրառվում է նաև հողի օգտագործման գինը բնութագրելիս:

ՌԵՆՏԱԲԵԼ(ԱՅԻՆ) [< рентабельный < գերմ. rentabel], ած. Շահութաբեր:

ՌԵՆՏԳԵՆ [< рентген < գերմ. ֆիզիկոս Ռենտգենի (Röntgen, 1845-1923 թթ.) անունով], գ. (ֆիզ.): 1. Ռենտգենյան ճառագայթներ: 2. Ռենտգենյան լուսավորում: 3. Ռենտգենյան ճառագայթներով լուսավորող ապարատ:

ՌԵՆՏԳԵՆԱԲԱՆ, գ. Ռենտգենաբանության մասնագետ:

ՌԵՆՏԳԵՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. (բժշկ.): Ռենտգենյան ճառագայթների բուժական կիրառությունն ու դրա եղանակները:

ՌԵՆՏԳԵՆՈԼՈԳ [< рентгенолог < հատուկ անունից], գ. (բժշկ.): Ռենտգենաբանության մասնագետ:

ՌԵՆՏԳԵՆՈԼՈԳԻԱ [< рентгенология < ռենտգեն + հուն. logia], գ. (բժշկ.): Ռենտգենաբանություն:

ՌԵՆՏԻՆԳ [< рентинг < անգլ. renting], գ. (տնտսգ.): Մեքենաների, սարքավորումների, արտադրական տարածքների կարճաժամկետ վարձակալում:

ՌԵՈԼՈԳԻԱ [< реология < հուն. rheos հոսք, հոսանք + logos գիտություն], գ. (գիտ.): Նյութերի դեֆորմացիաների և հոսունության մասին գիտություն: Տերմինը ներմուծել է ամերիկացի Յու. Բինգրեմը 1929 թ.:

ՌԵՈԽՈՐԴ [< реохорд < հուն. rheos + chordē լար], գ. (տեխ.): Սարք, որը բաղկացած է ամբողջ երկարությամբ միատեսակ կտրվածք ունեցող (տրամաչափված) մետաղալարից (հիմնականում՝ մանգանինե), սանդղակից և մետաղալարով սահող շարժական կոնտակտից (շարժակից):

ՌԵՈՍԿՈՊ [< реоскоп < հուն. zheos + skopeō դիտում եմ], գ. (էլեկտր.):

Հոսանքացույց (էլեկտրական):

ՌԵՈՍՏԱՏ [< реостат < հուն. rheos հեղեղ + statos կանգուն, անշարժ], գ. (էլեկտր.): Էլեկտրական շղթայի մեջ հոսանքի ուժը կամ լարվածությունը կարգավորող ապարատ:

ՌԵՉԻՏԱՏԻՎ [< речитатив < իտալ. recitativo < recitare բարձրաձայն կարդալ, արտասանել], գ. (երժշտ.): Վոկալ երաժշտության տեսակ, որ օգտագործում է խոսքային հնչերանգների արտահայտչականությունը՝ այս կամ այն չափով մոտենալով բնական խոսքին կամ նմանվելով դրան, ասերգ:

ՌԵՉ ՊՈՍՊՈԼԻՏԱ [< Реч Посполита < լեհ. Rzeczpospolita հանրապետություն], գ. Լեհական պետություն (XV դ. վերջ-XVIII դ.), որը սեյմի ընտրած թագավորի գլխավորությամբ դասային միապետության յուրահատուկ ձև էր:

ՌԵՊ [< реп < անգլ. rep], գ. (արվ.): Երաժշտության և պարարվեստի ժամանակակից ուղղություն:

ՌԵՊԱՏՐԻԱՑԻԱ [< репатриация < ռե... + լատ. patria], գ. 1. (քղք.): Գերիների, տարագիրների, փախստականների վերադարձը հայրենիք, հայրենադարձություն: 2. (բանկ.): Արտասահմանյան բանկի կամ ռեզիդենտ բանկի մասնաճյուղի կողմից ֆինանսական ակտիվների վերադարձը հայրենիք:

ՌԵՊԱՐԱՑԻԱ [< репарация < լատ. reparatio վերականգնում], գ. 1. (քղք.): Վնասահատուցում՝ հաղթող երկրին հատուցվող դրամական ու բնամթերային վճարումներ (ի հատուցում պատերազմի հասցրած կորուստների) այն հաղթված երկրի կողմից, որ պատճառ է եղել պատերազմի: 2. (կենսբ.): Բջիջների հատուկ գործառույթ. դեզօքսիռիբոնուկլեինաթթվի մոլեկուլի բնականոն կենսասինթեզի ընթացքում, ինչպես նաև տարբեր ֆիզիկական և քիմիական գործոնների ազդեցությունից առաջացած վնասվածքները և խզումներն ուղղելու ունակությունը:

ՌԵՊԱՐԱՑԻՈՆ [< репарационный < լատ. տե՛ս Ռեպարացիա I], ած. Ռեպարացիային հատուկ, որպես ռեպարացիա գանձվող՝ ստացվող:

ՌԵՊԵՐ [< репер < ֆր. repère նիշ, նշան, ելակետ], գ. 1. (երկրբ.): Հատուկ նշան, որ արվում է քարե շինության պատին կամ գետնին. տեղանքում նշանակվում և սևեռվում է այն կետը, որի բարձրությունը ծովի մակարդակից որոշվում է հարթաչափման միջոցով: 2. (մաթ.): Մի կետից դուրս եկող, որոշակի կարգով վերցված գծայնորեն անկախ վեկտորների համախումբ: 3. (ռազմ.): Նշանակետերի շրջանում հատուկ ընտրված օժանդակ կետ, ըստ որի նշանափորձում են հրետանային կրակը:

ՌԵՊԵՐՏՈՒԱՐ [< репертуар < ֆր. répertoire], գ. (արվ.): 1. Խաղացանկ: 2. Երգացանկ: 3. Համերգացանկ: 4. *փխբ.* Մեկի շարունակ պատմած անեկդոտները՝ սրախոսությունները՝ խոսակցության նյութերը են:

ՌԵՊԵՏԻՏՈՐ [< репетитор < լատ. repetitor նա, ով կրկնում է], գ. (խսկց.): Դասուսույց, անցած նյութը կրկնողությամբ ուսուցանող (անձ), կրկնուսույց:

ՌԵՊԼԻԿ(Ա) [< реплика < ֆր. réplique], գ. 1. Զրուցակցի՝ խոսողի ասածներին որպես արձագանք կամ պատասխան բացականչություն՝ հակիրճ նկատողություն՝ առարկություն են: 2. Ձեկուցողի՝ ելույթ ունեցողի են խոսելու ժամանակ տեղից արվող համառոտ նկատողություն՝ առարկություն՝ բացականչություն են: 3. Թերթային՝ լրագրային փոքրիկ հոդված՝ հակիրճ դիտողություն որևէ բանի մասին (առավել. թերությունների, խախտումների են):

ՌԵՊԼԻԿԱՑԻԱ [< репликация < ուշ լատ. replicatio կրկնություն], գ. (կենսբ.): Բոլոր կենդանիների բջիջներում ընթացող նուկլեինաթթուների, գեների, քրոմոսոմների ինքնավերարտադրման գործընթաց, որի հիմքում ընկած է ԴՆԹ-ի

կամ ՌՆԹ-ի մատրիցային սկզբունքով իրականացող ֆերմենտային սինթեզը:

ՌԵՊՈՐՏԱԺ [< репортаж < ֆր. reportage < անգլ. report հաղորդել], գ. (լրգ.): 1. Օրվա նորությունների՝ դեպքերի ևն ամփոփիչ հաղորդում մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության համար՝ դեպքի վայրից: 2. Այդպիսի ամփոփագրի հաղորդումը, այդպիսի տեղեկություններ պարունակող հոդված կամ ռադիոհեռուստատեսային հաղորդում, լրահաղորդում, տեսալուր:

ՌԵՊՈՐՏՅՈՐ [< репортёр < անգլ. reporter], գ. (լրգ.): Ռեպորտաժներ կազմելով՝ մամուլին կամ ռադիոհեռուստատեսության մարմիններին ներկայացնող հրապարակագիր, լրահաղորդող, լրագրող:

ՌԵՊՐԵՍԱԼԻԱ [< репрессалии < միջին լատ. repressalia], գ. (քղք.): 1. Հարկադրական միջոցառումներ, որ մի երկիրը գործադրում է մեկ այլ երկրի նկատմամբ՝ իբրև պատասխան նրա ոչ օրինական գործողությունների, փոխճնշում: 2. Նույնն է Ռեպրեսիա:

ՌԵՊՐԵՍԻԱ [< репрессия < ուշ լատ. repressio ճնշում, ներգործում], գ. 1. Պատժական միջոցառում, պատիժ: 2. *փխբ.* Հալածանք, ճնշում:

ՌԵՊՐԵՍԻՎ [< репрессивный < ուշ լատ.], ած. 1. Ռեպրեսիայի բնույթ ունեցող, ռեպրեսիա հանդիսացող: 2. Ռեպրեսիայի համար նախաձեռնվող՝ կիրառվող, ռեպրեսիաներ գործադրելու համար կատարված՝ կատարվող, բռնատիրական:

ՌԵՊՐԻԶ [< реприз(а) < ֆր. reprise վերսկսում, կրկնում], գ. (երժշտ.): Երաժշտական որևէ հատվածի անփոփոխ կամ տարբերակային կրկնությունը:

ՌԵՊՐԻՆՏ, ՌԵՓՐԻՆԹ [< репринт < անգլ. reprint < to reprint վերատպել], գ. (տպգր.): Վերատպում՝ նախկինում տպագրված գրքի ևն վերատպում՝ պահպանելով նախկին տպագրության բոլոր ձևավորումները:

ՌԵՊՐԻՎԱՏԻԶԱՑԻԱ [< реприватизация < լատ. re... + privatus մասնավոր], գ. (իրավք.): Ազգայնացված սեփականության վերադարձը նախկին սեփականատիրոջը:

ՌԵՊՐՈԴՈՒԿՏՈՐ [< репродуктор < լատ. re (նախդիր) + լատ. producere արտադրել], գ. (ռադ.): Բարձրախոս (ռադիոյի):

ՌԵՊՐՈԴՈՒԿՑԻԱ [< репродукция < լատ. re + productio արտադրություն], գ. 1. Վերարտադրում, բազմացում (նկարների, գծագրերի ևն): 2. Վերարտադրանկար, վերարտադրություն, վերարտադրում: 3. Վերհուշ, վերհիշում:

ՌԵՊՈՒՏԱՑԻԱ [< репутация < լատ. reputatio], գ. (խսկց.): Վարկ, համբավ:

ՌԵՍՈՐ [< рессора < ֆր. ressort], գ. (տեխ.): 1. Զսպակ, զսպոց, կախոց: 2. Մեղմացուցիչ:

ՌԵՍՊԻՐԱՏՈՐ [< респиратор < լատ.], գ. (տեխ. խսկց.): Շնչադիմակ:

ՌԵՍՊԻՐԱՑԻԱ [< респирация < լատ. respiratio շնչառություն, շունչ], գ. (բժշկ.): Շնչառություն, շունչ:

ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱ [< республика < լատ. res publica հասարակական գործ, պետություն], գ. (հնց.): Հանրապետություն:

ՌԵՍՏ [< рест < անգլ. rest], գ. (բանկ.): Մնացորդ:

ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱ [< реставрация < լատ. restauratio վերականգնում], գ. 1. Վերականգնում: 2. (պատմ.): Ֆրանսիայի 1814-30 թթ. պատմաշրջանը, երբ Բուրբոնները վերականգնեցին իրենց թագավորական իշխանությունը:

ՌԵՍՏԻՏՈՒՑԻԱ [< реституция < լատ. restitutio վերականգնում], գ. (իրավք.): 1. Իրավական, գույքային վիճակի վերականգնում: 2. Պատերազմի ժամանակ անօրինականորեն հակառակորդ պետությունից զավթած և նրա տարածքից արտահանած գույքի վերադարձնելը:

ՌԵՍՏՈՐԱՆ [< ресторан < ֆր. restaurant], գ. 1. Առևտրական հիմնարկություն, որտեղ ուտելիքներ ու խմիչքներ են մատուցում, բարձրակարգ ճաշարան: 2. Այդ հիմնարկության զբաղեցրած շենքը:

ՌԵՍՏՐ [< реестр < միջին լատ. registrum], գ. 1. Ցուցակ, թվացուցակ, թվարկում: 2. Փաստաթղթերի գրանցման գիրք, հաշվեգիրք:

ՌԵՍՈՒՐՍ(ՆԵՐ) [< ресурсы < ֆր. ressources], գ. 1. Միջոց, հնարավորություն: 2. Որևէ բանի, այդ թվում՝ երկրի բնական պաշարներ: 3. Նյութական միջոցներ:

ՌԵՎԱԼՎԱՑԻԱ [< ревалвация < ռե... + լատ. valere նշանակություն, արժեք ունենալ], գ. (ֆին.): Արժեաճ, արժևորում՝ երկրի արժույթի արժևորում այլ արժույթների հետ համեմատած, որը կապ չունի շուկայի տատանումների հետ:

ՌԵՎԱԿՑԻՆԱՑԻԱ [< ревакцинация < լատ. re... կրկին + վակցինացիա], գ. (բժշկ.): Կրկնապատվաստում:

ՌԵՎԱՆՇ [< реванш < ֆր. revanche փոխհատուցում, վարձահատուցում], գ. Փոխվրեժ, փոխադարձ հատուցում:

ՌԵՎԱՆՇԻԶՄ [< реваншизм < ֆր. revanchisme], գ. (քղք.): Ռևանշիստական մտայնություն ու քաղաքականություն:

ՌԵՎԱՆՇԻՍՏ [< реваншист < ֆր.], գ. (խսկց. քղք.): Ռևանշի՝ փոխվրեժի ձգտող, որևէ բանի համար փոխադարձ պատիժ՝ վնաս պատճառելու ձգտող մարդ կամ մարդկանց խումբ:

ՌԵՎԵՐԱՆՍ [< реверанс < ֆր. révérence], գ. Հարգական խոնարհում՝ աջ ոտքի վրա թեթևակի հենվելով:

ՌԵՎԵՐԲԵՐԱՑԻԱ [< реверберация < միջին լատ. reverberatio անդրադարձում < լատ. reverberare հետ շպրտել], գ. (ֆիզ.): Փակ շենքերում (սրահներում) ձայնի աստիճանական մարումը՝ ձայնի աղբյուրն անջատելուց հետո:

ՌԵՎԵՐՍ [< реверс < անգլ. reverse < լատ. reversus հետ դառնալը], գ. (տեխ.): Ռևերսիվ մեխանիզմ, որը նախատեսված է մեքենայի (շարժիչի) կամ մեքենայի առանձին տարրերի շարժման ուղղությունը հակադարձելու համար: Շարժիչներում ռևերսը առավել հաճախ շուռտվիկակուլիսային կամ բռնցքավոր մեխանիզմ է, հաստոցներում՝ լրացուցիչ (միջանկյալ) անիվով ատամնավոր կառչումը:

ՌԵՎԵՐՍԻԱ [< реверсия < լատ. reversio վերադարձ], գ. 1. (իրավք.): Գույքադարձում: 2. (բսք.): Տարբեր գենոտիպային բաղադրամասեր (օրինակ՝ խայտաբղետ տերևներ) ունեցող բույսերի բաղադրամասերից որևէ մեկին համապատասխանող ընձյուղի առաջացումը: 3. (կենսք.): Մուտացիայի ենթարկված գենի վերածումը ելակետային կամ վայրի տիպի գենի:

ՌԵՎԻԶԻԱ [< ревизия < լատ. revisio վերանայում],գ.1.(տնտսգ.): Հաստատության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում: 2. (դվնգ.): Միջազգային պայմանագրի վերանայում: 3. Որևէ տեսության կամ ուսմունքի վերանայում ու փոփոխություն:

ՌԵՎԻԶԻՈՆ[< ревизионный < լատ.],ած. Ռևիզիա կատարող, վերստուգիչ:

ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄ [< ревизионизм < լատ. revisio (revisionis) վերանայում], գ. 1. (քղք. պատմ.): Մարքսիզմի քաղաքական, փիլիսոփայական ու տնտեսագիտական հիմունքները ռևիզիայի ենթարկող, վերանայող գաղափարական - քաղաքական հոսանք: 2. *փխբ.* Որևէ ուսմունք՝ տեսություն նն վերանայելու ու հիմնովին վերափոխելու պահանջ:

ՌԵՎԻԶԻՈՆԻՍՏ [< ревизионист < լատ.], գ. ած. Ռևիզիոնիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՌԵՎԻԶՈՐ [< ревизор < լատ.], գ. Որևէ հաստատության գործունեությունը քննող, վերստուգող անձ:

ՌԵՎՄԱՏԻԶՄ [< ревматизм < հուն. rheumatismos տարիոսում (մարմնով)], գ. (բժշկ.): Հոդացավ, հոդացավություն՝ ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդություն,որը բնորոշվում է շարակցական հյուսվածքի տարածուն ախտահարմամբ:

ՌԵՎՄԱՏԻԿ [< ревматик < հուն.], ած. (բժշկ.խսկց.): Ռևմատիզմով հիվանդ:

ՌԵՎՄԱՏՈԼՈԳԻԱ [< ревматология < ռևմատիզմ + հուն. logos գիտություն], գ. (բժշկ.): Բժշկագիտության բաժին, որը ուսումնասիրում է ռևմատիկ հիվանդությունները՝ շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարումները, հոդաբորբերը, օսթեոարթրոզը և արտահոդային հյուսվածքների ախտահարումները:

ՌԵՎՅՈՒ [< ревю < ֆր. revue, բառացի՝ տեսություն], գ. (թատր.): Թատերական ներկայացում, որն իր մեջ միավորում է օպերետի, բալետի, կաբարե և վարիետե թատրոնների գծեր:

ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱ [< революция < ֆր. révolution], գ. (հնց.): Հեղափոխություն:

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ [< революционный < ֆր.], ած. (հնց.): Հեղափոխական:

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆԵՐ [< революционер < ֆր.], գ. (հնց.): Հեղափոխական, հեղափոխական գործունեությամբ զբաղվող մարդ:

ՌԵՎՈԼՎԵՐ [< револьвер < անգլ. revolver < revolve պտտվել, պտույտ գալ լատ. revolvere], գ. (խսկց.) Ատրճանակի տեսակ:

ՌԵՎՈԿԱՑԻԱ [< ревокация < ֆր. révocation < լատ. revocatio հետկանչում], գ. (մսնգ.): Չեղյալ հայտարարելը, վերացնելը, հետ վերցնելը (հրամանը, տրված հանձնարարությունը, հաշվի կտրոնը): 2. (դվնգ.): Հետ կանչելը (դեսպանի կամ այլ պաշտոնական անձի):

ՌԵՏԱՐԴԱՑԻԱ [< ретардация < լատ. retardatio հապաղում], գ. (գրկն. հնց.): Գրական ստեղծագործության մեջ այուժետային պատումի հապաղման ոճական հնարք, երբ ներմուծվում են բնության նկարագրություններ, փիլիսոփայական խորհրդածություններ են:

ՌԵՏԵՆՑԻԱ [< ретенция < լատ. retentio պահպանում, զսպում], գ. (բժշկ.): Ատամի աճի դանդաղումը բացված խոռոչում:

ՌԵՏՈՐՍԻԱ [< реторсия < միջին լատ. retorsio հետ շրջել, շրջադարձ կատարել], գ. (քղք.): Ազդամիջոց՝ մի պետության կողմից մեկ այլ պետության քաղաքացիների նկատմամբ դրսևորվող անբարեհաճ վերաբերմունք:

ՌԵՏՈՐՏՆԵՐ [< реторта < լատ. retorta, բառացի՝ ծռված, հետ շուռ տված], գ. (տեխ.): Քիմիական աշխատանոցներում օգտագործվող անոթներ, որոնք պատրաստված են դժվարահալ ապակուց, ճենապակուց կամ մետաղից: Օգտագործվում են բարձր ջերմաստիճաններում ընթացող քիմիական ռեակցիաներն իրականացնելու համար:

ՌԵՏՐՈ [< ретро < լատ. retro հետ, հետադարձ], ած. գ. 1. Հինը ամբողջությամբ (մշակույթում, կենցաղում են): 2. Հին, հնագույն, հնաոճ:

ՌԵՏՐՈԱԿՏԻՎ ԱՐԳԵԼԱԿՈՒՄ [< ретроактивные (< լատ. retro հետադարձ, հետ + activus գործուն) торможения]– (հոգեբ.): Մոռացման պատճառ, որի էությունն այն է, որ նոր նյութի յուրացումը դժվարացնում է նախկինում սերտածի վերարտադրությունը:

ՌԵՏՐՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ [< ретроактивность < լատ. retro+activus], գ. (իրավք.): Օրենքի հետադարձ ազդեցություն (գործողություն):

ՌԵՏՐՈՍՊԵԿՏԻՎԱ [< ретроспектива < լատ. retro հետ, հետադարձ + spectare նայել, դիտել], գ. (հնց.): Հետադարձ հայացք, հետահայաց տեսություն, հետահայացություն:

ՌԵՏՈՒՇ [< ретушь < ֆր. retouche], գ. (լանկրչ.): Պատկերի շտկումը լուսանկարչական դրոշմվածքի (պոզիտիվի), ժխտանկարի (նեգատիվի) և տպագրական բոլոր կարգի դրոշմվածքների վրա, ինչպես և ջնջված տեղերի վերականգնումը փորագրական տախտակի վրա:

ՌԵՑԵՆԶԵՆՏ [< рецензент < լատ.], գ. (խսկց.): Գրախոս:

ՌԵՑԵՆԶԻԱ [< рецензия < լատ. recensio հետազոտում, զննում], գ. (խսկց.): Գրախոսություն:

ՌԵՑԵՊՏ [< рецепт < լատ. receptum ստացվածք], գ. (խսկց.): 1. Դեղատոմս, բաղադրատոմս: 2. Բաղադրամաս: 3. *փխբ.* Որևէ նպատակի համար որոշակի ձևով գործելու եղանակ՝ միջոց, որ առաջարկում է մեկը, որևէ բանի միջոց:

ՌԵՑԵՊՏԱՐ [< рецептар < լատ.], գ. (բժշկ.): Դեղագործ, դեղատան աշխատող, որ բժիշկների դեղատոմսերով պատվերներ է ընդունում դեղերի համար:

ՌԵՑԵՊՏՈՐ [< рецептор < լատ. recipere ստանալ], ած. 1. Ընդունող, ընդունիչ: 2. գ. *հոգն.* Զգայական նյարդաթելերի վերջնային գոյացություններ, որոնք ընդունում են գրգիռներ ներքին և արտաքին միջավայրից և դրանց ֆիզիկական կամ քիմիական էներգիան վերածում նյարդային ազդակների:

ՌԵՑԵՊՏՈՒՐԱ [< рецептура < լատ.], գ. 1. Դեղագործություն: 2. Դեղագիտություն:

ՌԵՑԵՍԻՎՈՒԹՅՈՒՆ [< рецессивность < լատ. recessus նահանջ, հեռացում], գ. (կենսբ.): Երկու ալելային գեների փոխհարաբերության ձև, որի դեպքում դրանցից մեկը (ռեցեսիվը) ավելի թույլ է ազդում օրգանիզմի համապատասխան հատկանիշի արտահայտման վրա, քան մյուսը՝ դոմինանտը: Հասկացությունը առաջ է քաշել Գ. Մենդելը:

ՌԵՑԻԴԻՎ [< рецидив < լատ. recidivus վերադարձնող], գ. 1. (բժշկ.): Հիվանդության կրկնությունը թվացող ապաքինումից հետո: 2. Որևէ բանի կրկնումը՝ վերստին երևան գալը: 3. (իրավբ.): Կրկնահանցագործություն:

ՌԵՑԻԴԻՎԻՍՏ [< рецидивист < լատ.], գ. ած. (իրավբ.): Կրկնահանցագործ:

ՌԵՔՎԻԵՄ [< реквием < լատ. requiem, requies հանգիստ, անդորր բառի հայց. հոլովը], գ. 1. (եկեղ.): Եկեղեցական հոգեհանգիստ: 2. (երժշտ.): Սգերգ, սգո երաժշտական ստեղծագործություն, սգո երկ:

ՌԵՖԵՐԱՏ [< реферат < լատ. referre զեկուցել, հաղորդել], գ. 1. Գրքի՝ գիտահետազոտական աշխատանքի՝ հոդվածի ևն բովանդակության համառոտ շարադրանք: 2. Գրական և այլ աղբյուրների վրա հիմնված զեկուցում:

ՌԵՖԵՐԵՆԴՈՒՄ [< референдум < լատ. referendum այն, ինչ պետք է հաղորդվի], գ. (քղք.): Հանրաքվե, հանրավճիռ, համաժողովրդական քվեարկություն պետական կյանքի ինչ-որ կարևոր հարցի վերաբերյալ:

ՌԵՖԵՐԵՆՏ [< референт < լատ. referens (referentis) հաղորդող], գ. 1. Ռեֆերատ ներկայացնող անձ: 2. Որոշակի հարցերի գծով զեկույցներ ներկայացնող ու խորհուրդներ տվող պաշտոնական անձ, զեկուցարար, գործարկու:

ՌԵՖԵՐԻ [< рефери < անգլ. referee], գ. (սպորտ. հզվդ.): Սպորտային մրցության դատավոր, օրինակ՝ բռնցքամարտում, թենիսում ևն:

ՌԵՖԼԵՔՍ [< рефлекс < reflexus արտացոլում], գ. (կենսբ.): Կենդանի մարմնի հակազդեցությունն արտաքին գրգիռներին:

ՌԵՖԼԵՔՍԻԱ [< рефлексия < լատ. reflexio անդրադարձում], գ. (փիլ.): Կշռադատու-

թյուն՝ խորհրդածության տեսակ, որի դեպքում մտածողությունն անդրադառնում է իր սեփական գործունեությանն ու բովանդակությանը, մասնավորապես՝ առարկաների մասին իր պատկերացումներին (մտային օբյեկտներին)՝ ի տարբերություն զգայական հայեցողության, որն ուղղված է դեպքի արտաքին առարկաները:

ՌԵՖԼԵՔՏՈՐ, ՌԵՖԼԵԿՏՈՐ [< рефлектор < լատ. reflectere արտացոլել], գ. (տեխ.):1. Ցոլարձակ՝ արտացոլարձակ: 2.(աստղաֆիզ.): Արտացոլիչ հեռադիտակ: 3. Լույսի արտացոլիչ՝ լուսարձակ: 4. Ջերմարձակ:

ՌԵՖԼՅԱՑԻԱ [< рефляция < լատ. < re ... + inflyacia], գ. (տնտսգ.): Տնտեսության վերակենդանացման նպատակով գնանկման վերացում. իրականացվում է պետության կողմից:

ՌԵՖՈՐՄ [< реформа < ֆր. réforme < լատ. reformare բարեփոխել, վերափոխել], գ. (քղք.): Բարեփոխություն, բարեփոխում, բարենորոգություն, բարենորոգում:

ՌԵՖՈՐՄԱՏՈՐ [< реформатор < լատ. reformator], գ. Բարեփոխիչ, բարենորոգիչ:

ՌԵՖՈՐՄԱՑԻԱ [< реформация < լատ. reformatio բարեփոխություն, բարեփոխում], գ. (պատմ.): Ֆեոդալիզմի դեմ ծավալված շարժում Արևմտյան Եվրոպայում, որ հանդես էր գալիս եկեղեցու և պապական իշխանության դեմ մղվող կրոնական պայքարի ձևով:

ՌԵՖՈՐՄԻԶՄ [< реформизм < լատ.], գ. 1. (քղք. պատմ.): Մարքսիզմին թշնամական հոսանք բանվորական շարժման մեջ, որը ժխտում էր հեղափոխական դասակարգային պայքարն ու պրոլետարիատի դիկտատուրան և ձգտում սահմանափակվել մասնակի սոցիալական ռեֆորմներով՝ առանց կապիտալիզմի հիմքերը խարխլելու: 2. Ռեֆորմներ, բարեփոխումներ իրականացնելու քաղաքականություն (քաղաքական, տնտեսական ևն):

ՌԵՖՈՐՄԻՍՏ [< реформист < լատ.], գ. 1. Ռեֆորմիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. Բարեփոխումներ իրականացնող գործիչ:

ՌԵՖՐԱԿՏՈՄԵՏՐԻԱ [< рефрактометрия < լատ. refractus բեկված + հուն. metreō], գ. (օպտ.): Կիրառական օպտիկայի բաժին, որն զբաղվում է օպտիկակական ճառագայթման սպեկտրի տարբեր տիրույթներում նյութերի բեկման ցուցիչների չափման եղանակների ու միջոցառումների հետազոտությամբ:

ՌԵՖՐԱԿՏՈՐ [< рефрактор < լատ. refractus բեկվող], գ. 1. (տեխ.): Լուսաբեկ: 2. (աստղգ.): Ոսպնյակավոր հեռադիտակ:

ՌԵՖՐԱԿՑԻԱ [< рефракция < ուշ լատ. refractio բեկում], գ. 1. (օպտ.): Բեկունակություն: 2. (աստղգ.): Երկրի մթնոլորտում լույսի բեկում, որի պատճառով լուսատու մարմինը իր իրական դիրքից բարձր է թվում:

ՌԵՖՐԵՆ [< рефрен < ֆր. refrain], գ. 1. (երժշտ.): Կրկներգ, գործիքային կամ վոկալ երկի թեմա, որ կրկնվում է երեք անգամից ոչ պակաս և ամրապնդում նրա կառուցվածքային ամբողջությունը: 2. (գրկն.): Բանաստեղծական տող կամ տուն, որը որոշ հերթականությամբ կրկնվում է ոտանավորի տարբեր մասերում կամ տների վերջին:

ՌԵՖՐԻԺԵՐԱՏՈՐ [< рефрижератор < ֆր. réfrigérateur < լատ. refrigerare սառեցնել], գ. (տեխ.): 1. Սառնոց, սառնարան: 2. Սառնարանային հարմարանքով փոխադրամիջոց (ավտոմեքենա, նավ, գնացք):

ՌԻԳՈՐԻԶՄ [< ригоризм < լատ. rigor խստություն], գ. 1. (փիլ.): Որևէ սկզբունքի խստագույն պահպանումը: 2. Բարոյագիտության մեջ՝ ձևապաշտության տարատեսակ, որը ենթադրում է բարոյական նորմերի անշեղ կատարումը՝ անկախ

կոնկրետ պայմաններից, նույնիսկ հակառակ նպատակահարմարության, մարդկանց և հասարակության շահերի:

ՌԻԶՈԻԴՆԵՐ [< ризоиды < հուն. rhiza արմատ + eidos տեսակ], գ. (բսբ.): Մեկ կամ մի քանի բջիջներից կազմված թելաձև գոյացություններ, որոնք առկա են մամուռներում, քարաքոսներում, որոշ ջրիմուռներում ու սնկերում և կատարում են սուբստրատին ամրանալու, դրանից ջուր, սննդանյութեր կլանելու գործառույթ:

ՌԻԶՈՍՖԵՐԱ [< ризосфера < հուն. rhiza + sphaira գունդ], գ. (բսբ.): Բույսերի արմատների հետ անմիջականորեն շփվող հողի շերտ (2-3 մմ), որտեղ կուտակված են մեծ քանակությամբ միկրոօրգանիզմներ:

ՌԻԹՄ [< ритм < հուն. rhythmos], գ. 1. Չափ, որևէ բանի հաջորդականության՝ պարբերականության դադարների ու կրկնության տևողություն: 2. Որևէ կարգի միավորների (հնչյուններ, վանկեր ևն) համաչափ հերթագայություն: 3. Աշխատանքի՝ գործունեության համաչափություն: 4. Կշռույթ:

ՌԻԹՄԻԿԱ [< ритмика < հուն. rhythmikos ռիթմին վերաբերող], գ. 1. (արվ.): Ուսմունք բանաստեղծական կամ երաժշտական ռիթմի մասին: 2. Որևէ ժողովրդի լեզվի, որևէ բանաստեղծի կամ կոմպոզիտորի ստեղծագործությանը, բանաստեղծական կամ երաժշտական որևէ ժանրին, ոճին բնորոշ ռիթմային ընդհանուր հատկանիշների հավաքականությունը: 3. Ֆիզիկական պլաստիկ վարժությունների համակարգ (սովորաբար՝ երաժշտության ուղեկցությամբ), որ հատկացված է վարժվողի մեջ զարգացնելու ռիթմի զգացումը: Հիմնադրել է 1913 թ. շվեյցարացի կոմպոզիտոր և մանկավարժ Է. Ժակ-Դալկրոզը:

ՌԻԿԵՏՍԻՈԶՆԵՐ [< риккетсиозы < լատ. Rickettsiosis], գ. (ախտ.): Մարդու և կենդանիների հիվանդությունների խումբ, որոնց հարուցիչները բակտերիանման գրամբացասական մանրէներ են՝ ռիկետսիաները (հայտնաբերել է ամերիկացի գիտնական Հ. Ռիկետսը):

ՌԻԿ(Ք)ՇԱ [< рикша < անգլ. rickshaw < ճապ. jin մարդ + riki ուժ + sha սայլակ], գ. 1. (հզվդ.): Մարդատար երկանիվ սայլակ (Հարավարևելյան Ասիայի երկրներում): 2. Այդ սայլակը քաշող մարդ:

ՌԻԿՈՇԵՏ [< рикошет < ֆր. ricochet < ricocher հետ մղվել ինչ-որ բանից], գ. 1. (հնց.): Հետաթռիչք, անդրադարձ թռիչք, անդրադարձում: 2. *փխբ.* Ինչ-որ բանի՝ արարքի՝ գործողության հետադարձումը այդ արարքը կատարողին:

ՌԻԿՍՏԱԳ [< рикстаг < շվեդ. rikstag], գ. Շվեդիայի պառլամենտի անվանումը:

ՌԻՄԵՅՔ [< римейк < անգլ. remake], գ. (երժշտ.): Հնում հայտնի երգի նորացված տարբերակ:

ՌԻՆԳ [< ринг < անգլ. ring], գ. (սպորտ.): Բռնցքամարտի՝ պարաններով շրջափակված հարթակ:

ՌԻՆԻՈՖԻՏՆԵՐ [< риниофиты < հուն. Rhyniophyta], գ. (բսբ. հնէաբ.): Պսիլոֆիտներ (Psilophyta)՝ բարձրակարգ բույսերի հնագույն և ամենապարզ բրածո խումբը (կամ բաժինը), որը տարածված է եղել խոնավ, ճահճոտ վայրերում, մերձափնյա ծանծաղուտներում:

ՌԻՆՈԼՈԳԻԱ [< ринология < հուն. rhis (rhinos) քիթ + logōs գիտություն], գ. (բժշկ.): Քթաբուժություն, քթաբանություն:

ՌԻՍԿ [< риск < ֆր. risque], գ. (խսկց.): 1. Որևէ բանի հնարավոր վտանգ: 2. Ըստ կարելվույն գործ՝ գործունեություն՝ արարք: 3. Հնարավոր վտանգն արհամարհելու խիզախություն՝ հանդգնություն:

ՌԻՍՈՐՋԻՄԵՆՏՈ [< Рисорджименто < իտլ. Risorgimento, բառացի՝ վերա-

ծնունդ], գ. (պատմ.): Իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումն օտարերկրյա (ավստրիական) լծի դեմ՝ հանուն Իտալիայի միավորման և միասնական ազգային պետության ստեղծման: Տեղի է ունեցել XVIII դ. վերջին, երբ Հռոմը միացել է Իտալական թագավորությանը:

ՌԻՏՈՐԻԶՄ [< риторизм < հուն.], գ. (հնց.): 1. Ճարտասանություն, ճարտասանական արվեստ: 2. *փխբ.* Հանդիսավոր ու պերճական, բայց ըստ բովանդակության աղքատիկ ճառ՝ գրվածք:

ՌԻՏՈՐԻԿԱ [< риторика < հուն. rhētorikē], գ. Տե՛ս Ռիտորիզմ:

ՌԻՏՈՒԱԼ [< ритуал < լատ. ritualis], գ. (հնց.): Հանդիսություն, ավանդահանդես, ծիսակարգ, արարողակարգ:

ՌԻՏՈՒՌՆԵԼ [< ритурнель < ֆր. ritournelle < իտլ. ritornello < ritorno վերադարձ], գ. 1. (երժշտ.): XVII-XVIII դդ. սկզբի վոկալ երաժշտության մեջ՝ նախանվագի, ինտերմեդիայի կամ կոդայի դեր կատարող համառոտ գործիքային բաժինները: 2. Պարային երաժշտության մեջ՝ պարի սկզբի և ավարտի նվագը: 3. (տոչփ.): Եռատող տուն, որտեղ առաջին և երկրորդ տողերը հանգավորվում էին, երկրորդը մնում էր անհանգ: Տարածված էր իտալական և ֆրանսիական պոեզիայում:

ՌԻՖՏ [< рифт < անգլ. rift կիրճ, ճեղք], գ. (երկրբ.): Երկրակեղևի մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար կմ գծային բացվածքային ստրուկտուրաներ:

ՌՈԲՈՏ [< робот < չեխ. robot հարկադրական աշխատանք < rob ստրուկ], գ. (տեխ.): Ավտոմատ մեքենա՝ սարք, որը կատարում է մարդկային գործողությունների տպավորություն թողնող բարդ գործառնություններ, մարդ-մեքենա:

ՌՈԴԻՈՒՄ [< родий < հուն. rhodon վարդ < լատ. Rhodium], գ. (քիմ.): Քիմիական տարր, արծաթասպիտակավուն ծանր ու դժվարահալ մետաղ: Կարգահամարը՝ 45, ատոմական զանգվածը՝ 102.90:

ՌՈԴՈՆԻՏ [< родонит < հուն. rhodon վարդ], գ. (հնք.): Սիլիկատների խմբի միներալ, բյուրեղային համակարգը տրիկլինային է: Օգտագործվում է որպես զարդաքար և երեսպատման քար: Հայտնի են Ուրալի հանքավայրերը:

ՌՈԼԼԵՐ [< роллер < անգլ. roller < roll պտտել], գ. Մանկական հրազլոր հեծանիվ:

ՌՈԿԱՅԼ [< рокайль < ֆր. rocaille, բառացի՝ մանրացված քար, խեցիներ], գ. (արվ.): 1. Ռոկոկոյին բնորոշ զարդամոտիվ՝ ոճավորված խեցի: 2. Տերմին, որ երբեմն օգտագործվում է ռոկոկո ոճը նշելու համար:

ՌՈԿԵՐ [< рокер < անգլ. rocker], գ. (խսկց.): Մոտոցիկլետավոր անձ:

ՌՈԿՈԿՈ [< рококо < ֆր. rococo], գ. (արվ.): Ճարտարապետական և զարդարարական արվեստում կիրառվող ոճ, որ ստեղծվել է XVIII դ. և հատկապես Ֆրանսիայում Լյուդովիկոս XV-ի ժամանակ:

ՌՈԿՖՈՐ [< рокфор < ֆր. < աշխարհագրական հատուկ անունից], գ. (խոհր.): Կծվահամ պանրի մի տեսակ:

ՌՈՄ [< ром < անգլ. rum], գ. (խոհր.): Եղեգնաշաքարի մնացուկներից կամ խմորման ենթարկված հյութից պատրաստվող ոգելից խմիչք:

ՌՈՄԱՆ [< роман < ֆր. roman < հին ֆր. romans], գ. 1. (գրկն. հնց.): Վեպ, սիրավեպ: 2. *փխբ.* Սիրային արկած:

ՌՈՄԱՆԱԳԻՐ, գ. ած. (հնց.): Վիպագիր՝ վեպ գրող (հեղինակ), վիպասան:

ՌՈՄԱՆԻՍՏԻԿԱ [< романистика < ֆր. roman ռոմանական < (Roma) Հռոմ քաղաքի անունից], գ. (գիտ.): Ռոմանագիտություն՝ գիտություն ռոմանական

լեզուների և գրականության մասին, ռոմանական բանասիրություն:

ՌՈՄԱՆՍ [< романс < ֆր. romance < roman ռոմանական < լատ. romanus < հռոմեական], գ. 1. (երժշտ.): Քնարական բնույթի երգ-երաժշտություն, սիրերգ: 2. Գործիքային կատարման փոքրիկ քնարական բնույթի երաժշտական ստեղծագործություն: 3. (գրկն.): Փոքրիկ քնարական բանաստեղծություն, որն ունի քնարական բնույթ:

ՌՈՄԱՆՏԻԶՄ [< романтизм < ֆր. romantisme], գ. 1. (արվ. գրկն.): XVIII դ. վերջին - XIX դ. առաջին քառորդում գրականության և արվեստի մեջ ծագած ուղղություն, որ պայքարում էր կլասիցիզմի կանոնականության դեմ՝ առաջ քաշելով անհատի շահերի ու զգացմունքների պատկերման սկզբունքը և ստեղծագործությունների հիմքում դնելով պատմականն ու ժողովրդաբանահյուսական թեմաները: 2. Գրականության և արվեստի մեթոդ, որ տոգորված է լավատեսությամբ և վառ գույներով մարդու կոչման վսեմությունը պատկերելու ձգտումով: 3. *փխբ.* Իրականության իդեալականությամբ՝ գումավորմամբ և երազունակ հայեցողականությամբ տոգորված մտայնություն՝ տրամադրություն: 4. *փխբ.* Իրականության նկատմամբ ոչ իրատեսական մոտեցում:

ՌՈՄԱՆՏԻԿ [< романтический < ֆր.], գ. ած. (արվ. գրկն.): 1. Ռոմանտիզմի հետևորդ՝ ռոմանտիզմին հետևող արվեստագետ՝ գրող: 2. Ռոմանտիկական:

ՌՈՄԱՆՏԻԿԱ [< романтика < ֆր.], գ. 1. Նույնն է՝ Ռոմանտիզմ (3-4): 2. Այն, ինչ որ մարդուն համակում է վսեմ զգացմունքներով՝ խանդավառությամբ՝ ձգտումներով:

ՌՈՄԲ [< ромб < հուն. rhombos], գ. 1. Շեղանկյունի: 2. Շեղանկյուն քառանկյունի: 3. Խորհրդային բանակի բարձր հրամանատարական կազմի ռոմբաձև տարբերանշան (մինչև 1943 թ.):

ՌՈՄԲԱՁԵՎ, ած. Ռոմբի ձև ունեցող, շեղանկյունաձև:

ՌՈՄԻՆԳ [< роминг < անգլ. roming], գ. (տեխ.): Երկար տարածության վրա իրականացվող բջջային հեռախոսակապի ժամանակակից միջոց:

ՌՈՅԱԼ [< рояль < ֆր. royal], գ. (երժշտ.): Դաշնամուրի տեսակ:

ՌՈՅԱԼԻՍՏՆԵՐ [< роялисты < ֆր. royal արքայական, թագավորական], գ. (պատմ.): Միապետականներ՝ թագավորական իշխանության կողմնակիցներ:

ՌՈՆԴՈ I [< ро'ндо < իտլ. rondo], գ. (երժշտ.): Երաժշտական պիես, որում գլխավոր թեման կրկնվում է մի քանի անգամ և դրանով հակադրվում է ինչ-որ չափով կողմնակի՝ երկրորդական թեմաներին:

ՌՈՆԴՈ II [< рондо' < ֆր. rondeau], գ. (գրկն.): Միջնադարյան ֆրանսիական պոեզիայում՝ 8, 13 կամ 15 տողերից բաղկացած ոտանավոր, որը հենվում է որոշ տողերի կրկնության և միայն երկու հանգի օգտագործման վրա:

ՌՈՆԴՈ III [< рондо < ֆր. rondeau], գ. 1. (տպգր.): Հատուկ՝ կլոր ձեռագրային, ինչպես և տպագրական տառատեսակ՝ տպատառ: 2. Լայն վերջնամասով գրչածայր:

ՌՈՍՏԲԻՖ [< ростбиф < անգլ. roast beef], գ. (խոհր.): Տավարի՝ մեծ կտորով տապակած փափուկ միս:

ՌՈՍՏԵՐ [< ростер < անգլ. roaster թավա], գ. (տեխ.): Էլեկտրական սարք միս տապակելու համար:

ՌՈՏԱՏՈՐ [< ротатор < լատ. rotator պտտել, պտույտ գործել ստիպող՝ հարկադրող], գ. (տպգր.): Ձեռագրերի՝ գծագրերի՝ պլակատների բազմացման տպագրական մեքենա:

ՌՈՏԱՑԻԱ [< ротация < լատ. rotatio շրջապտույտ, շուրջանակի շարժում], գ. 1. (տպգր.): Ռոտացիոն մեքենա: 2. (գոտնտ.): Ցանքաժամանակամիջոց, ցանքափոխության ժամանակամիջոց: 3. (քղք.): Փոփոխում:

ՌՈՏԱՑԻՈՆ [< ротационный < լատ. rotatio շրջապտույտ, շուրջանակի շարժում], ած. Պտտվող գլանային տպագրական ֆորմատ ունեցող (մեքենա):

ՌՈՏՄԻՍՏՐ [< ротмистр < լեհ. rotmistrz < գերմ. Rittmeister], գ. (պատմ.): Մի քանի երկրներում, ինչպես և մինչհեղափոխական Ռուսաստանում հեծելազորի սպայական աստիճան (հետևակի ևն զորատեսակների կապիտանին համապատասխան), նաև՝ այդ աստիճանն ունեցող անձը:

ՌՈՏՈՆԴ(Ա) [< ротонда < իտլ. rotonda < լատ. rotundus կլոր, բոլոր, բոլորակ], գ. (ճարտ.): Բոլորակաձև՝ սովորաբար սյուներով գմբեթավոր շինություն (տաղավար, շենք, սրահ ևն):

ՌՈՏՈՊՐԻՆՏ [< ротопринт < լատ. rotare պտտեցնել, պտույտ տալ + անգլ. print տպագրել, տպել], գ. (տպգր.): Ոչ մեծ օֆսեթային տպագրամեքենա՝ համեմատաբար փոքրաքանակ տպաքանակով ծառայողական և պաշտոնական փաստաթղթերի, ռեֆերատների, բյուլետենների ևն բազմացման համար:

ՌՈՏՈՐ [< ротор < լատ. rotare պտտել, պտույտ տալ], գ. (տեխ.): Մեքենայի պտտվող մասը (տուրբինների, էլեկտրաշարժիչների ևն), խարիսխ:

ՌՈՔՆՌՈԼ [< рок-н-ролл < անգլ. rock-and-roll, բառացի՝ տատանվել և պտտվել], (երժշտ.): Ամերիկյան ծագմամբ երաժշտության և պարի մի տարատեսակ, որը հատկապես տարածված էր XX դ. 50-ականներին:

ՌՈՒԲԱՅԻ [< рубаи < արաբ., rubā’īy, բառացի՝ քառապատկված], գ. (գրկն.): Արևելյան և աշուղական պոեզիայում տարածված քառատող բանաստեղծություն՝ քառյակ:

ՌՈՒԲԵՐՈԻԴ [< рубероид < լատ. ruber կարմիր + հուն. eidos տեսակ], գ. Ծածկի հրակայուն նյութ:

ՌՈՒԲԻԴԻՈՒՄ [< рубидий < լատ. ribidus կարմիր, մուգ կարմիր], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթասպիտակավուն փափուկ մետաղ:

ՌՈՒԲԻԿՈՆ [< рубикон < լատ. Rubico, Rubiconos], գ. (պատմ.): Այն գետի հին անվանումը, որ թափվում է Ադրիատիկ ծովը և հակառակ սենատի որոշման Հուլիոս Կեսարը մ.թ.ա. 49 թ. այն անցնում է իր լեգեոններով՝ բացականչելով “Alea jacta est” (վիճակ է գցված). դա քաղաքացիական պատերազմի սկիզբ է դառնում:

ՌՈՒԲԻԿՈՆՆ ԱՆՑՆԵԼ - Անխախտելի վճիռ՝ որոշում ընդունել, վճռական քայլ կատարել (որից հետո կանգնել այլևս հնարավոր չէ):

ՌՈՒԲԻՆ [< рубин < ուշ լատ. rubinus կարմիր], գ. (հնք.): Սուտակ՝ (Al_2O_3) կորունդ միներալի թափանցիկ տարբերակը: Cr_3 իոններով գունավորված է վար-

դագույնից մինչև մուգ կարմիր: Առաջին կարգի թանկարժեք քար է:

ՌՈՒԲԼԻ [< ռուս. рубль], գ. (ֆին.): 1. Ռուսաստանի դրամական միավորը: 2. Այդ արժողությամբ թղթադրամ կամ մետաղադրամ: 3. Նախկին Խորհրդային Միության տարածքում գործող դրամական միավոր:

ՌՈՒԴԻՄԵՆՏ [< рудимент < լատ. rudimentum սնաճիկ, նախաստիճան], գ. (կենսբ.): 1. Թերաճ օրգան: 2. Հետաճուկ, մնացուկ:

ՌՈՒԴԻՄԵՆՏԱՐ [< рудиментарный < լատ.], ած. Հետաճուկային, թերաճուկային:

ՌՈՒԹԵՆԻՈՒՄ [< рутений < միջին լատ. Ruthenia հայտնագործվել է ռուս քիմիկոս Կ. Կլաուսի կողմից], գ. (քիմ.): Քիմիական տարր, արծաթավուն թեթև մետաղ, որից շիկացման լամպերի լարեր են պատրաստում:

ՌՈՒԼ [< руль < հոլանդ. roer], գ. (խսկց.): Ղեկ, ղեկանիվ:

ՌՈՒԼԵՏ [< рулет < ֆր. roulette < rouler փաթաթել, ոլորել], գ. (խոհր.): 1. Կերակրի տեսակ: 2. Անոսկր զիստ:

ՌՈՒԼԵՏԿԱ [< рулетка < ֆր. roulette < rouler փաթաթել, պտտել], գ. (խսկց.): 1. Ոլորակ, չափերիզ: 2. Պողպատից կամ գործվածքից պատրաստված երկար ժապավեն՝ որևէ բանի երկարությունը չափելու համար: 3. Պտուտախաղ:

ՌՈՒՄԲԱ [< румба < իսպ. rumba], գ. (արվ.): Մեքսիկական ծագումով պարահանդեսային պար, որտեղ օգտագործվում են սուր սինկոպացված ռիթմով կուբայական ժողովրդական պարի տարրեր:

ՌՈՒՆԵՐ [< руны < հին սկանդինավերեն rūn գաղտնիք], գ. Ռունագրեր, հնագույն այբուբենի (II դարից մինչև ուշ միջնադար) նշանները, որոնք փորագրվում էին քարի (գլխավորապես տապանաքարերի), մետաղի, փայտի, ոսկրի վրա: Տարածված են եղել Սկանդինավիայում, Իսլանդիայում, Գրենլանդիայում, Անգլիայում նև:

ՌՈՒՊՈՐ [< рупор < հոլանդ. roeper < roepen բղավել], գ. 1. Խոսափող: 2. *փխբ.* Ուրիշի ձայնափող:

ՌՈՒՍՏԻԿ [< рустика < լատ. rusticus պարզ, կոպիտ, բառացի՝ գեղջկական], գ. (ճարտ.): Ընդհանուր իմաստով նշանակում է գեղջկական ոճով կառուցված շենք, շինարարական տեխնիկայի առումով՝ պարագծով ժապավենով երիզված, կոպտատաշ կամ ցցուն ճակատային մակերես ունեցող քարերով (ռուստերով) շարվածք:

ՌՈՒՏԻԼ [< рутил < լատ. rutilus դեղնակարմիր, վառ կարմիր], գ. (հնք.): Միներալ, քիմիական կազմը՝ TiO_2: Անգույն է, սակայն խառնուրդների առկայությամբ ձեռք է բերում տարբեր երանգներ: Կիրառվում է տիտանային պողպատների և կարբիդ-ների արտադրության մեջ և ռադիոտեխնիկայում:

ՌՈՒԼՈՆ [< рулон < ֆր. rouleau], գ. (խսկց.): Գլանաձև փաթեթ (թղթի, կտորի, պաստառի նև), գլանափաթեթ:

ՌՈՒՓԻ [< рупия < սանսկրիտ ռությաղրոշմված արծաթ], գ. (ֆին.): Բութանի, Հնդկաստանի, Նեպալի և մի շարք այլ երկրների դրամական միավորը:

ՌՈՒՓԻՅԱ [< рупия < սանսկրիտ], գ. (ֆին.): Պակիստանի, Ինդոնեզիայի դրամական միավորը:

Ս

ՍԱԲՈ [< сабо < ֆր. sabot], գ. (խսկց.): Փայտե ներբաններով կամ փայտից փորված կոշիկ՝ հետևի կողմից բաց:

ՍԱԲՈՏԱԺ [< саботаж < ֆր. sabotage < saboter կոշիկներով զարկել, չխչխկացնել], գ. 1. Որևէ գործի դիտավորյալ վիժեցում՝ նրան մասնակցելուց խուսափելու կամ դիտավորյալ վատ կատարելու ճանապարհով, նենգադուլ: 2. Որևէ բանի իրագործմանն ուղղված ծածուկ ընդդիմություն:

ՍԱԲՈՏԱԺՆԻԿ [< сабортажник < ֆր. sabotage], գ. Սաբոտաժ անող, սաբոտաժով զբաղվող մարդ:

ՍԱԳԱ [< сага < հին սկանդինավերեն saga], գ. (գրկն.): 1. Հին սկանդինավյան և իռլանդական զրուցավեպ, առասպել: 2. Ասք, դյուցազներգություն:

ՍԱԴԻԶՄ [< садизм < XVIII դարի ֆրանսիացի գրող մարկիզ դը Սադի անունից], գ. 1. Սեռական այլասերվածություն, որ արտահայտվում է մյուս սեռի ներկայացուցչին մարմնական տանջանքներ պատճառելու և դրանով բավարարություն ստանալու եղանակով: 2. *փխբ.* Դաժանություն՝ տանջանքներ պատճառելու մոլուցք, վայրագություն:

ՍԱԴԻՍՏ [< садист < տե՛ս Սադիզմ], գ. ած. 1. Սադիզմով տառապող (մարդ): 2. *փխբ.* Դաժան, վայրագ, տանջարար:

ՍԱԼԱԹ [< салат < իտլ. salato աղի], գ. 1. (խոհր.): Զանազան բանջարեղեններից քացախով, ձիթայուղով ու համեմունքներով պատրաստվող աղցան, նախուտեստ: 2. (բսբ.): Հովանոցավորների ընտանիքին պատկանող բանջարաբույս, որ ուտում են առանց եփելու (առավելապես աղցանի մեջ):

ՍԱԼԱՄԱՆԴՐՆԵՐ [< саламандры < հուն. salamandra], գ. 1. (կենդբ.): Պոչավոր երկկենցաղների ընտանիքը, մարմինը մողեսանման է, պոչը՝ կլորավուն: Հայտնի են 40 տեսակ: 2. (կրոն.): Կրակի «ոգին»: 3. Գերմանիայում արտադրվող կոշիկի տեսակ:

ՍԱԼԴԱՏ [< солдат < գերմ. Soldat < իտլ. Soldato < soldare վարձել, աշխատավարձ վճարել], գ. (խսկց.): 1. Զինվոր: 2. *փխբ.* Զինվորական պահվածք և շարժուձև ունեցող անձ:

ՍԱԼԴՈ [< сальдо < իտլ. saldo], գ. (ֆին.): Հաշվեմնացորդ՝ դրամական մուտքերի և ծախսերի տարբերությունը որոշակի ժամանակահատվածում:

ՍԱԼԻՑԻԼԱԹԹՈՒ [< салициловая кислота < լատ. salix (salicis)], գ. (քիմ.): Պարզագույն արոմատիկ օքսիդաթթու. լայնորեն տարածված է բնության մեջ, հիմնականում գլիկոզիդի ձևով: Օգտագործվում է քսուքների, մածուկների, փոշիների և լուծույթների ձևով՝ մաշկային հիվանդությունների բուժման նպատակով, ինչպես նաև ազոներկերի և հոտավետ նյութերի արտադրության մեջ:

ՍԱԼՄՈՆԵԼՈԶՆԵՐ [< сальмонеллёзы < լատ. Salmoneloses], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների աղիքային սուր վարակիչ հիվանդությունների խումբ: Հարուցիչները Salmonella (ամերիկյան ախտաբան Դ. Է. Սալմոնի (D. E. Salmon) անունից) խմբի բակտերիաներն են:

ՍԱԼՅԱՄԻ [< салями < իտլ. salame < լատ. sal աղ], գ. (խոհր.): Ապխտած երշիկի տարատեսակ (բազմազան համեմունքներով և ճարպի մանր կտորներով):

ՍԱԼՅՈՒՏ [< салют < ֆր. salut < լատ. salus (salutis) առողջության բարեմաղթանք, ողջույն], գ. 1. (խսկց.): Հանդիսավոր զինվորական ողջույն: 2. Ի պատիվ մեկի՝ մի բանի կատարվող հրացանային համազարկ՝ հրավառություն են: 3. Ջերմագին ու

խանդավառ ողջույնի բացականչություն՝:

ՍԱԼՆԻԿ [< ռուս. сальник], գ. (տեխ. խսկց.): Խծծոց, խցուկ:

ՍԱԼՈՆ [< салон < ֆր. salon], գ. 1. Դահլիճ, սրահ, հյուրասենյակ: 2. (արվ.): Ցուցահանդես (առավել. նկարիչների նկարների): 3. Վաճառասրահ (գեղարվեստական իրերի, արվեստի երկերի, զգեստի ևն): 4. *փխբ.* Բուրժուական-ազնվականական բարձր հասարակության միջավայր, բարձրաշխարհիկ միջավայր:

ՍԱԼՊԻՆԳԻՏ [< сальпингит < հուն. salpinx (salpingos) խողովակ], գ. (բժշկ.): Արգանդային փողերի բորբոքում:

ՍԱԼՏՈ, գ. Տե՛ս Սալտո-մորտալե:

ՍԱԼՏՈ-ՄՈՐՏԱԼԵ [< сальто-мортале < իտլ. salto mortale մահացու ցատկ], գ. 1. (սպորտ.): Մարմնամարզիկի ցատկը օդի մեջ, որի ժամանակ նրա մարմինը պտտվում է օդում: 2. *փխբ.* Վճռական քայլ:

ՍԱԽԱՐԱԶ [< сахараз < հուն. sakchar շաքար], գ. (քիմ.): Ինվերտազ, հիդրոլազների խմբի ֆերմենտ. սախարոզը ճեղքում է գլյուկոզի և ֆրուկտոզի: Պարունակվում է աղիքահյութերում, ուղեղում, լեյկոցիտներում, բույսերում և միկրոօրգանիզմներում:

ՍԱԽԱՐԻՆ [< сахарин < հուն.], գ. (քիմ.): Անգույն, քաղցրահամ (շաքարից քաղցր 400-500 անգամ) բյուրեղներ են: Օգտագործում են շաքարախտով հիվանդները շաքարի փոխարեն:

ՍԱԽԱՐՈԶ [< сахароза < հուն.], գ. (քիմ.): Եղեգնաշաքար կամ ճակնդեղաշաքար, կարևորագույն երկշաքարներից է, որը պարունակվում է բոլոր ֆոտոսինթեզող բույսերում: Լայնորեն օգտագործվում է սննդի և մանրէաբանական արդյունաբերության մեջ:

ՍԱԿԵ [< саке < ճապ. sake], գ. Ճապոնական օղի (բրնձից թորված):

ՍԱԿՎՈՅԱԺ [< саквояж < ֆր. sac de voyage < sac պարկ + voyage ճանապարհորդություն], գ. (խսկց.): Ուղեպայուսակ (սովորաբար կաշվից):

ՍԱԿՐԱԼ [< сакральный < լատ. sacer (sacris) սուրբ], ած. (խսկց.): Սրբազան, սուրբ:

ՍԱԿՐԱՄԵՆՏԱԼ [< сакраментальный < ֆր. sacramente < լատ. sacramentum երդում], ած. (խսկց.): 1. Սրբազան, նվիրական: 2. Ծիսական, պաշտամունքային: 3. Խորհրդագործական, սրբազան և ավանդական:

ՍԱԿՐԻՍՏԻԱ [< сакристия < լատ. sacrum սրբություն], գ. (կրոն.): Կաթոլիկ եկեղեցում հատուկ տարածք, որտեղ պահպանվում են սրբազան իրեր՝ մասունքներ:

ՍԱԿՈՒՐԱ [< сакура < ճապ. sakura], գ. (բսբ.): Ճապոնական բալենի (Ճապոնիայի խորհրդանիշն է):

ՍԱՄԲԱ [< самба < պորտ. samba], գ.(արվ.) Բրազիլական ազգային պար:

ՍԱՄԲՈ I [< ռուս. самбо < сам-(оборона) б(ез) о(ружия)], գ. (սպորտ.): Ըմբշամարտի ձևերից մեկը, որի ժամանակ թույլատրվում է ցավ պատճառող ուժային հնարների գործադրումը:

ՍԱՄԲՈ II [< самбо < իսպ. zambo], գ. (ազգգր.): Հնդկացու և նեգրի խառնամուսնությունից ծնված երեխա:

ՍԱՄԻՏ [< саммит < անգլ. summit, բառացի՝ գագաթ], գ. (քղք.): Գագաթնաժողով՝ կառավարությունների, պետությունների ղեկավարների պաշտոնական հանդիպում՝ բանակցություններ:

ՍԱՄՇԻՏ [< самшит < պարսկ. šimšäd հաճարենի, փեկոն], գ. (բսբ.): Շիմշատ, տոսախ (մշտադալար ծառ և նրա փայտը):

ՍԱՄՈՒՄ [< самум < արաբ. samum], գ. 1. Տաք ավազախառն հողմ Ասիայի և

Աֆրիկայի անապատներում, ավազային փոթորիկ: 2. *փխբ.* Որևէ բանի բուռն ընթացք, բուռն իրադարձություն:

ՍԱՄՈՒՐԱՅՆԵՐ [< самураи < ճապ. samurau ծառայել], գ. (պատմ.): Լայն առումով՝ ֆեոդալական Ճապոնիայի աշխարհիկ բոլոր ֆեոդալները, իսկ նեղ և առավել հաճախ օգտագործվող առումով՝ մանր ազնվականների ռազմաֆեոդալական խավը:

ՍԱՅԹ [< сайт < անգլ. sight], գ. (հմկրգչ.): Համակարգչային էջ, տիրույթ, կայք, համացանցի էջի տիրույթ:

ՍԱՆԱՏՈՐԻԱ [< санаторий // санатория < լատ. sanare բուժել, ապաքինել], գ. (խսկց.): Առողջարան, առողջատուն, բուժպրոֆիլակտիկ հիմնարկություն՝ բուժման և հանգստի համար:

ՍԱՆԱՏՈՐԻՈՒՄ, գ. Տե՛ս Սանատորիա:

ՍԱՆԱՑԻԱ [< санация < լատ. sanatio բուժում, առողջացում < sano բուժում եմ], գ. (տնտսգ.): Միջոցառումների համակարգ (նոր բաժնետոմսերի թողարկման կրճատում և դրանց փոխանակում մեծ թվով հին բաժնետոմսերով, վերջիններիս անվանական արժեքի իջեցում, սուբսիդիաների, վարկերի, արտոնյալ փոխառությունների տրամադրում, հարկային արտոնություն, լրիվ կամ մասնակի ազգայնացում են), որ սովորաբար բաժնետիրական ընկերությունների ձև ունեցող ձեռնարկությունների սնանկացումը կանխելու կամ մրցունակությունը բարձրացնելու նպատակով իրականացնում են ձեռնարկությունները կամ ֆինանսապես հզոր բանկերը, ընկերությունները, պետությունը:

ՍԱՆԳԻՆԱ [< сангина < ֆր. sanguine < լատ. sanguineus վառ կարմիր], գ. Տարբեր երանգների կարմրաշագանակագույն մատիտներ (առանց պատյանի): Հայտնի է Վերածննդի դարաշրջանից, մեծ տարածում է գտել XVIII դ.: Սանգինաներով ստվերագծում և նրբագծում են:

ՍԱՆԳՎԻՆԻԿ [< сангвиник < լատ. sanguis (sanguinis) արյուն, կենսական ուժ], գ. (հոգեբ.): Մարդու հոգեբանական տիպ, ժրավյուն անձ, կենսուրախ խառնվածքի տեր անձ:

ՍԱՆԴԱԼ(ՆԵՐ) [< сандалии < հուն. sandalion], գ. (խսկց.): Առանց կրունկի թեթև ոտնաման, որ ոտքին ամրացվում է փոկ(եր)ով:

ՍԱՆԴԱԼԵՏ, ՍԱՆԴԱԼՅԵՏ [< сандальет < հուն.], գ. Նույնն է Սանդալ:

ՍԱՆԴՎԻՉ, ՍԵՆԴՎԻՉ [< сандвич < անգլ. sandwich], գ. (խսկց.): Հացի երկու իրար միացրած շերտ՝ մեջընմիս կամ այլ ուտելիք դրած:

ՍԱՆԻՏԱՐ [< санитар < լատ. sanitas առողջություն], գ. ած. 1. Բուժական հիմնարկությունների՝ կրտսեր բժշկական անձնակազմին պատկանող աշխատակից, որ զբաղվում է հիվանդների խնամքով, շենքի մաքրությամբ նն: 2. Բանակի բժշկական ծառայության շարքային, որի պարտականությունն է վիրավորներին առաջին օգնություն ցույց տալն ու մարտադաշտից հանելը:

ՍԱՆԿՑԻԱ [< санкция < լատ. sanctio խստագույն որոշում, վճիռ], գ. (իրավք.): 1. Բարձրագույն մարմնի կողմից որևէ ակտի հաստատումը, որով այն ստանում է օրենքի ուժ: 2. Իրավախախտումը պատժելու միջոց, խստագույն որոշում: 3. Միջազգային իրավունքի մեջ՝ միջազգային պայմանագրերը խախտող տերության նկատմամբ կիրառվող միջոց: 4. *փխբ.* Վերադաս մարմնի կողմից տրվող հավանություն, որ կարգադրության ուժ ունի:

ՍԱՆՍԿՐԻՏ [< санскрит < սանսկրիտ samskrita արվեստական կատարելության հասցված], գ. (լեզվք.): Հնդիկների հնագույն գրավոր լեզուն. տարբերում են հնա-

գույն շրջանը (վեդայական հնդկերենը) հետագա շրջանի բուն սանսկրիտից, որով գրված է հին հնդկական գեղարվեստական և գիտական գրականությունը:
ՍԱՆՍԿՐԻՏԱԳԵՏ, ած. գ. Սանսկրիտագիտության մասնագետ:
ՍԱՆՏԻ... [< санти... < ֆր. cent, լատ. centum հարյուր] Եվրոպական միավորից հարյուր անգամ փոքր միավորի անվանումը կազմելու համար գործածվող նախածանց: Կրճատ նշանակվում է u (միջազգային նշանակումը c): Կիրառվում է միայն լայն գործածություն ունեցող միավորների անվանումներում:
ՍԱՆՏԻՄ [< сантим < ֆր. centime], գ. 1. (ֆին.): Մանր դրամ, որ հավասար է ֆրանկի մեկ հարյուրերորդական մասին: 2. Սանտիմետր (սրա կրճատված խոսակցական ձևը):
ՍԱՆՏԻՄԵՏՐ [< сантиметр < ֆր. centimètre], գ. 1. Մետրի մեկ հարյուրերորդական մասը, սմ: 2. Մեկ սանտիմետրի երկարությամբ որևէ բան: 3. Մեկ սանտիմետրանոց բաժանմունքների բաժանված ժապավեն՝ քանոն և՝ զանազան չափումների համար:
ՍԱՆՏՈՆԻՆ [< сантонин < լատ. santonica herba], գ. (բժշկ.): Հակաճիճվային դեղամիջոց: Երկցիկլիկ տերպենոիդ, պարունակվում է օշինդրի տերևներում և ծաղկաբույլերում: Օգտագործվում է հաբերի և փոշիների ձևով՝ ասկարիդոզի բուժման նպատակով:
ՍԱՊՅՈՐ [< сапёр < ֆր. sapeur], գ. (ռազմ. հնց.): Սակրավոր, սակր ունեցող զինվոր:
ՍԱՊՈԳ [< ռուս. сапог], գ. (խսկց.): Ճտքավոր՝ երկարաճիտ կոշիկ:
ՍԱՊՈՆ [< мыло < լատ. sapo, (saponis) օճառ], գ. (խսկց.): Օճառ:
ՍԱՊՈՆԻՆ(ՆԵՐ) [< сапонины < լատ. sapo (saponis) օճառ], գ. (առավելապես հոգն.): Մի քանի բույսերի մեջ պարունակվող օրգանական նյութեր, որոնք ջրի հետ տալիս են սապոնափրփուր:
ՍԱՊՐՈ... [< сапро... < հուն. sapros փտած] Բարդ բառերի բաղադրամաս, որը ցույց է տալիս դրանց կապը փտելու, փտածության հետ:
ՍԱՊՐՈՖԱԳ [< сапрофаг < սապրո... + հուն. phagōs ուտող], գ. (կենդբ.): Նեխակեր, փտակեր (այլ կենդանիների դիակներով սնվող կենդանի):
ՍԱՊՐՈՖԻՏՆԵՐ [< сапрофиты < հուն. sapros փտած + phyton բույս], գ. (բսբ.): Մեռած օրգանիզմների օրգանական նյութով կամ կենդանի օրգանիզմների արտաթորումներով սնվող բույսեր:
ՍԱՊՖԻՐ [< сапфир < հուն. sappheiros, sampheiros < հին հրեերեն sappîr < սանսկրիտ çanipriya, բառացի՝ Սատուրնի սիրելի], գ. (հնք.): Շափյուղա (կապույտի տարբեր երանգներով թանկարժեք քար):
ՍԱՎԱՆ [< ռուս. саван], գ. 1. Անկողնու ներքնակի վրա գցելու կամ վերմակի տակի երեսին կարելու լայն ու երկար սպիտակ կտոր: 2. Արևելքում՝ կանանց չադրա:
ՍԱՎԱՆՆԱ [< саванны < իսպ. sabana < հնդկց.], գ. Արևադարձային և մերձարևադարձային բուսականության տիպ, ներկայացված է խոտային ծածկույթով, առանձին ծառերի և մացառուտային թփուտների զուգակցությամբ:
ՍԱՏԱՆԱ [< сатана < հուն. satan, satanas < հին հրեերեն sātān], գ. 1. (խսկց.): Չարք, դև: 2. (արհմրհ.): Սատանա (մարդու մասին):
ՍԱՏԻՆ [< сатин < ֆր. satin ատլաս, կերպաս], գ. (մնծգր.): Բամբակյա՝ փայլուն երեսով խիտ գործվածք:
ՍԱՏԻՐ [< сатир < հուն. satyros], գ. 1. (դից.): Հունահռոմեական դիցաբանության մեջ՝ Դիոնիսոսի (հռոմեական Բաքոսի)՝ գինու և ուրախության աստծու խորա-

մանկ, խրախճասեր և հեշտասեր ուղեկիցը՝ այծի ոտքերով, մորուքով և եղջյուրներով: 2. *փխբ.* Ձվարճախոս՝ զվարճասեր ու հեշտասեր մարդ:

ՍԱՏԻՐԱ [< сатира < լատ. satira < satura (lanx) լեփ-լեցուն ափսե՝ սկուտեղ, շփոթ], գ. 1. Երգիծանք: 2. (գրկն.): Երգիծական ստեղծագործությունների ամբողջությունը:

ՍԱՏԻՐԻԿ [< сатирик < լատ.], գ. Երգիծաբան:

ՍԱՏՐԱՊ [< сатрап < հուն. satrapēs < պարսկ. sitrab], գ. 1. (պատմ.): Հին Միդիայի և Պարսկաստանի ծայրագավառների կառավարիչ, որ օժտված էր անսահմանափակ իրավունքներով: 2. *փխբ.* Ինքնիշխան և բռնակալ ղեկավար՝ պետ՝ բարձրաստիճան պաշտոնյա:

ՍԱՏՈՒՐԱ [< сатура < լատ. satura, բառացի՝ խառնուրդ], գ. (պատմ.): Հին հռոմեական առաջին թատերական ժանրը (երկխոսության, մնջախաղի, երաժշտության և պարի համակցում՝ զուգակցում):

ՍԱՏՈՒՐԱՏՈՐ [< сатуратор < լատ. saturator հագեցուցիչ, լիացուցիչ], գ. (տեխ.): Սատուրացիայի ծառայող սարք:

ՍԱՏՈՒՐԱՑԻԱ [< сатурация < լատ. saturatio հագեցում], գ. (քիմ.): Հեղուկների հագեցումը գազով, գազավորում:

ՍԱՏՈՒՐՆ [< Сатурн < լատ. Saturnus], գ. Երևակ, Լուսնթագ. արեգակնային համակարգի VI մոլորակը:

ՍԱՏՈՒՐՆԱԼԻԱ [< сатурналия < լատ. saturnalia], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ սատուրնատոներ, Սատուրն աստծուն նվիրված ժողովրդական տոներ: 2. *փխբ.* Շվայտություն, կերուխում:

ՍԱՏՈՒՐՆԻԶՄ [< сатурнизм < լատ. Saturnus], գ. (բժշկ.): Կապարագարություն, կապարով թունավորում:

ՍԱՐԱՅ [< сарай < թուրք. sarai տուն, պալատ], գ. (խսկց.): 1. Սրահ: 2. Ցախանոց, ցախատուն (զանազան իրեր պահելու սրահ):

ՍԱՐԱՖԱՆ [< сарафан < թուրք. särapa(i) < պարսկ. serāpā պատվավոր հագուստ], գ. Կանացի անթև վերնազգեստ:

ՍԱՐԴԱՐ [< сардар, сердар < պարսկ. särdar < sīr ղեկավար + dār ջոկատ, խումբ], գ. 1. (պատմ.): Արևելքի մի շարք երկրներում՝ զորքերի գլխավոր հրամանատար: 2. Հնդկաստանում, Աֆղանստանում՝ ցեղի առաջնորդ:

ՍԱՐԴԵԼԿԱ [< рուս. сарделька], գ. (խսկց.): Հաստ ու կարճ նրբերշիկ (երշիկի տեսակ):

ՍԱՐԴԻՆԿԱ, ՍԱՐԴԻՆ [< сардинка, сардина < իտլ. sardina], գ. 1. (կենդբ.): Ծովատառեխների ընտանիքին պատկանող փոքր ծովային ձուկ, սարդինաձուկ: 2. Այդ ձկից պատրաստված պահածո:

ՍԱՐԴՈՆ [< сардоникс < հուն. sardonyx], գ. (հնք.): Օքսիդների կարգին պատկանող դեղնակարմիր գույնի քար:

ՍԱՐԴՈՆԻԿ [< сардонический < հուն. sardonios թունալից, արհամարհական, անարգ], ած. (գրք.): Չարամիտ, ծաղրական, կծու:

ՍԱՐԻ [< сари < հինդի], գ. Հնդկաստանում՝ կանանց հագուստի տեսակ (5-7 մ երկարությամբ գործվածք, որը փաթաթվում է մարմնին, իսկ ծայրը անցկացվում է ուսից այն կողմ կամ գցվում գլխի վրա):

ՍԱՐԿԱԶՄ [< сарказм < հուն. sarkasmos < sarkazō, բառացի՝ պատառոտում եմ միսը], գ. Կծու՝ խիստ՝ ջախջախիչ ծաղր:

ՍԱՐԿԱՍՏԻԿ [< саркастический < հուն.], ած. Սարկազմի բնույթ ունեցող, սարկազմին հատուկ:

ՍԱՐԿՈՄԱ [< саркома < հուն. sarkōma մսի ուռուցք՝ պալար], գ. (կենսբ.) Արագ զարգացող չարորակ ուռուցք, չարուռուցք:

ՍԱՐԿՈՖԱԳ [< саркофаг < հուն. sarkophagos, բառացի՝ մարմին խժռող], գ. Քարատապան, քարադագաղ:

ՍԱՈՒՆԱ [< сауна < ֆին. sauna], գ. Ֆինլանդիայում և այլ երկրներում՝ շոգեբաղնիք:

ՍԱՑԻՎԻ [< сациви < վրաց sazivi], գ (խոհր.): Վրացական ազգային ուտեստ՝ եփած հավի կտորներով, որոնք համեմված են կծու և ընկուզային սոուսով:

ՍԱՈՒՆԴԹՐԵՔ[< саундтрек < անգլ. soundtrack < sound հնչյուն, ձայն + track հետք], գ. (կինո): Որևէ կինոնկարի կամ էստրադային ներկայացման ձայնագրվածք:

ՍԱՔՍՈՖՈՆ [< саксофон < ֆր. saxophone < փողային գործիքների բելգիացի վարպետ Ա. Սաքսի անվան և հուն. phōnē հնչյուն բառի բաղադրմամբ], գ. (երժշտ.): Պղնձյա փողային երաժշտական գործիք:

ՍԱՖԱՐԻ [< сафари < անգլ. safari < արաբ. safora ճանապարհորդ], գ. (խսկց.): 1. Արգելանոց Աֆրիկայում, որտեղ թույլատրվում է վայրի կենդանիների որսը: 2. Որսը այդպիսի արգելանոցներում: 3. Հագուստի տեսակ (թեթև, հարթ գործվածքից, գրպաններով):

ՍԱՖԼՈՐ [< сафлор < հոլանդ. Safflower < անգլ. suffower < արաբ. saf(ra) դեղին + flower ծաղիկ], գ. 1. (բսբ.): Վայրի քրքում, կանջրակ: 2. (տեխ.): Քրքումաներկ:

ՍԱՖՅԱՆ [< сафьян < թուրք. saχtijan < պարսկ. seχtijān < seχt պինդ, կոպիտ], գ Սեկ (այծի կաշի):

ՍԱՖՐԱ [< сафра < իսպ. safra, zafra < արաբ. safra դեղին], գ. 1. Կուբայում՝ շաքարի ճակնդեղի բերքահավաքի ժամանակաշրջանը: 2. Արգենտինայում, Ուրուգվայում՝ ոչխարի խուզի և դրա վաճառքի ժամանակաշրջանը:

ՍԲԻՐ [< сбир < ֆր. sbir < իտլ sbirro < լատ burrus, birrus < հուն pyrrhos կրակագույն], գ. 1. (պատմ.): Ինկվիզիցիայի ստորին ծառայող: 2. (հնց.): Ոստիկանական պահնորդ (Իտալիայում):

ՍԵԱՆՍ [< сеанс < ֆր. séance], գ. 1. (կինո): Ժամանակի որոշակի միջոցում առանց ընդհատման տեղի ունեցող որևէ բանի հրապարակային ցուցադրում: 2. Որոշ ընդմիջումներով տեղի ունեցող այդպիսի ցուցադրումներից յուրաքանչյուրը: 3. Որևէ բանի կատարումը որոշակի ժամանակամիջոցում և որոշ հերթականությամբ՝ պարբերականությամբ:

ՍԵԱՏՕ [< CEATO < անգլ. South-East Asia Treaty Organization Հարավարևելյան Ասիայի պայմանագրի կազմակերպություն], *հպկ.* Ռազմաքաղաքական խմբավորում, որը ձևավորվել է 1954 թ. սեպտեմբերի 8-ին Մանիլայում կնքված պայմանագրով, որին մասնակցում էին ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան (մինչև 1974 թ.), Ավստրալիան, Նոր Զելանդիան, Թաիլանդը, Ֆիլիպինները և Պակիստանը (մինչև 1973 թ.). կազմակերպությունը ինքնալուծարվել է 1977 թ.:

ՍԵԲՈՌԵԱ [< себоррея < լատ. sebum ճարպ + հուն. rheō հոսում եմ], գ. (բժշկ.): Մաշկային հիվանդություն, որը բնորոշվում է ճարպագեղձերի արտազատական ֆունկցիայի խանգարմամբ:

ՍԵԳՄԵՆՏ [< сегмент < լատ. segmentum կտոր, հատված], գ. 1. Հատույթ: 2. Հերձատ: 3. Հատված:

ՍԵԳՄԵՆՏԱՑԻԱ [< сегментация < գերմ. Segmentation < լատ.], գ. (կենսբ.): Մասնակազմություն, հատվածակազմություն:

ՍԵԳՐԵԳԱՑԻԱ [< сегрегация < լատ. segregatio բաժանում], գ. (քղք.): Ռասայական խտրականության ձևերից մեկը, որ արտահայտվում է սևամորթներին սպիտակամորթներից անջատելու՝ մեկուսացնելու եղանակով:

ՍԵԴԱՆ [< седан < ֆր. քաղաքի (Սեդան, Sedan) անունից], գ. Մարդատար ավտոմեքենայի թափքի տեսակ՝ չորս դռներով և երկու կամ երեք շարք նստատեղերով:

ՍԵԴԻՄԵՆՏԱՑԻԱ [< седиментация < լատ. sedimentum նստեցում], գ. (ֆիզ.): Գրավիտացիոն կամ կենտրոնախույս ուժի դաշտում դիսպերս համակարգի շերտավորումը՝ դիսպերսված ֆազի (պինդ մասնիկներ, հեղուկի կաթիլներ, գազի բշտիկներ) անջատումը:

ՍԵՋԱՄ [< сезам < հուն. sesamon < արաբ. simsim], գ. 1. (բսբ.): Քնջութ: 2. *փխբ.* **Սեզա՛մ, բացվի՛ր** արտահայտության մեջ՝ գաղտնի՛ք, բացվի՛ր:

ՍԵՋՈՆ [< сезон < ֆր. saison], գ. (խսկց.): 1. Եղանակ, տարվա չորս եղանակներից յուրաքանչյուրը: 2. Շրջան, որևէ կարգի աշխատանքների՝ գործունեության ևն համար համապատասխան ժամանակաշրջան:

ՍԵԼԵԿՏՈՐ [< селектор < լատ. selector տեսակավորող], գ. (տեխ.): Հաստատուն հոսանքի ազդակների կողային համակցություններին համապատասխան հակազդեցություններ առաջ բերող էլեկտրամագնիսական ապարատ (օգտագործվում է հեռախոսային կապի, հեռուստատեսային ազդանշման, հեռուստակառավարման ևն բնագավառներում):

ՍԵԼԵԿՑԻԱ [< селекция < լատ. selectio ընտրություն], գ. 1. (կենսբ.): Ընտրության միջոցով կենդանիների և բույսերի ցեղային ազնվացում՝ բարելավում՝ ընտրանք: 2. (գիտ.): Կենդանական ու բուսական տեսակների բարելավման ու նոր տեսակների ստացման հարցերով զբաղվող գիտություն:

ՍԵԼԵԿՑԻՈՆԵՐ [< селекционер < լատ.], գ. Սելեկցիայի մասնագետ:

ՍԵԼԵՆ [< селен < հուն. selēnē լուսին], գ. (քիմ.): Քիմիական տարր. մետաղական կառուցվածքով մոխրագույն նյութ:

ՍԵԼԵՆՈ... [< селено... < հուն. selēnē Լուսին] Բարդ բառերի առաջին բաղադրիչ, որը ցույց է տալիս դրանց կապը Լուսնի հետազոտմանը և նկարագրմանը:

ՍԵԼԵՆՈԳՐԱՖԻԱ [< селенография < հուն. selēnē Լուսին + graphō գրում եմ], գ. (աստղգ.): Աստղագիտության բաժին, որը զբաղվում է Լուսնի մակերևույթի ուսումնասիրման խնդիրներով, լուսնագրություն:

ՍԵԼԵՆՈԴԵԶԻԱ [< селенодезия < հուն. selēnē Լուսին + daiō կիսում եմ, բաժանում եմ], գ. (աստղգ.): Աստղագիտության բաժին, որը զբաղվում է Լուսնի ձևի և չափերի հետազոտությամբ:

ՍԵԼԵՆՈԼՈԳԻԱ [< селенология < հուն. selēnē Լուսին + logōs գիտություն], գ. (աստղգ.): Լուսնագիտություն (աստղագիտության բաժին):

ՍԵԼԻՏՐԱ [< селитра < լատ. sal աղ + nitron սոդա], գ. (քիմ.): Բորակ (պարարտանյութ):

ՍԵԼՅՈԴԿԱ [< ռուս. селёдка], գ. (խսկց.): Հարինգ, ծովատառեխ:

ՍԵԼՍԻՆ [< сельсин < անգլ. selsyn], գ. (էլեկտր.): Ինդուկցիոն էլեկտրական մեքենա, որը ծառայում է որևէ սարքի կամ մեխանիզմի (օր.՝ չափիչ սարքի և

մեքենայի լիսեռի)՝ միմյանց հետ մեխանիկորեն չկապված առանցքներին սինխրոն կամ համաֆազ պտույտ հաղորդելու համար:

ՍԵԿԱՄ [< секам < ֆր. *հպվ.* système ciquentiel couleurs à mèmoire արտահայտության սկզբնատառերից, նշանակում է՝ գունավոր հեռուստատեսության հիշող սարքով հաջորդական համակարգ], գ. (տեխ.): Գունավոր հեռուստատեսության համակարգ, որը համատեղված է սև-սպիտակ համակարգի հետ և գունավոր հեռուստատեսության մյուս համակարգերից տարբերվում է պայծառության ազդանշանի անընդհատ հաղորդման դեպքում երկու գունատարբեր ազդանշանների հերթագայող (հաջորդական) հաղորդումով: Սկզբնական տարբերակն առաջարկել է ֆր. գյուտարար Անրի դը Ֆրանսը 1958 թ.:

ՍԵԿԱՆՍ [< секанс < լատ. secans հատող < secāre կտրել, հատել], գ. (մաթ.) Եռանկյունաչափական ֆունկցիա:

ՍԵԿԱՏՈՐ [< секатор < լատ. secāre կտրել], գ. (տեխ.): Էտիչ՝ ճյուղեր (հատկապես խաղողի) կտրելու մեծ մկրատ:

ՍԵԿՎԵՆՑԻԱ [< секвенция < լատ. sequentia ընթանալը, հետևելը], գ. (երժշտ.): Միջնադարյան կրոնական երգասացություն:

ՍԵԿՏԱ [< секта < լատ. secta ուսմունք, ուղղություն, դպրոց], գ. (խսկց.): Աղանդ, հերձված:

ՍԵԿՏՈՐ [< сектор < լատ. sector], գ. 1. (մաթ.): Արտահատ: 2. Բաժին (հիմնարկի ստորաբաժանում): 3. Հատված: 4. (բանկ.): Բաժնետոմսերի որոշակի խումբ արդյունաբերության մեկ ճյուղում, հատված:

ՍԵԿՎԵՍՏՐ [< секвестр < լատ. sequestrum], գ. 1. (իրավք.): Արգելակալանք: 2. (բժշկ.): Որևէ օրգանի (հատկապես ոսկորի) մեռած հատվածը, հյուսվածքամեռուկ:

ՍԵԿՎԵՍՏՐԱՑԻԱ [< секвестрация < լատ. sequestratio], գ. 1. (իրավք.): Արգելակալանքի տակ դնելը: 2. (բժշկ.): Մեռած հատվածի առաջացումը:

ՍԵԿՏԱՆՏ [< сектант < լատ. secta], գ. 1. (կրոն.): Աղանդի անդամ, աղանդավոր, հերձվող: 2. *փխբ.* Թայֆայական անձ:

ՍԵԿՐԵՏ [< секрет < ֆր. secret < լատ. secretus], գ. (խսկց. հնց.): Գաղտնիք (տարբեր իմաստներով):

ՍԵԿՐԵՏԱՐԻԱՏ [< секретариат < ֆր. secretariat < լատ. secretarium առանձնացում, մեկուսացում], գ. (խսկց. հնց.): Քարտուղարություն (նաև դրա անդամները):

ՍԵԿՐԵՏԻՆ [< секретин < լատ. secretio անջատում, արտազատում], գ. (կենսբ.): Մարդու և ողնաշարավոր կենդանիների հորմոն. արտադրվում է բարակ աղիների լորձաթաղանթի բջիջներում և խթանում ենթաստամոքսային գեղձի հյութազատությանը: Հայտնաբերել են անգլ. ֆիզիոլոգներ Ու. Բեյլիսը և Է. Ստարլինգը 1902 թ.:

ՍԵԿՐԵՑԻԱ [< секреция < լատ. secretio բաժին, բաժանմունք], գ. (կենսբ. երկրբ.): Արտազատում, արտազատություն, գեղձազատում:

ՍԵԿՑԻԱ [< секция < լատ. sectio բաժանում], գ. Բաժին, մաս:

ՍԵԿՈՒԼՅԱՐԻԶԱՑԻԱ [< секуляризация < միջին լատ. saecularis աշխարհիկ], գ. 1. Աշխարհիկացում, աշխարհականացում, ապակրոնականացում: 2. Բռնագրավում, պետականացում (եկեղեցապատկան գույքի):

ՍԵԿՈՒՆԴԱ [< секунда < լատ. secundus երկրորդ], գ. (մաթ.): 1. Դիատոնիկ շարքում որևէ աստիճանի և նրանից հաշված երկրորդ աստիճանի հարաբերակցու-

թյունը: 2. (սպորտ.):Իսպանիայի ֆուտբոլի առաջնություն, որի բարձր տեղեր գրված թիմերը տեղափոխվում են բարձրագույն խմբի առաջնություն (պրեմիերա):

ՍԵԿՈՒՆԴԱՆՏ [< секундант < լատ. secundans (secundatis)], գ. 1. (պատմ.): Մենամարտի մասնակիցների միջնորդ կամ վկա: 2. (սպորտ.): Բռնցքամարտի ժամանակ մարզիկին օգնող մարզիչ:

ՍԵՄԱՆՏԻԿ [< семантический < հուն.], գ. ած. 1. Սեմանտիկայի հետևորդ՝ կողմնակից: 2. Իմաստաբանական:

ՍԵՄԱՆՏԻԿԱ [< семантика < հուն. sēmantikos նշանակող], գ. (լեզվբ. հնց.): 1. Իմաստաբանություն: 2. Իմաստ:

ՍԵՄԱՍԻՈԼՈԳԻԱ [< семасиология < հուն. sēmasia իմաստ + logōs գիտություն], գ. (լեզվբ. հնց.): Իմաստաբանություն՝ բառագիտության բաժին, որը ուսումնասիրում է բառիմաստները և դրանց կրած փոփոխությունները (պատմական զարգացումը):

ՍԵՄԱՖՈՐ [< семафор < ֆր. sémaphore < հուն. sēma նշան + phoros կրող, նշանակիր], գ. 1. (երկթղ.): Ազդանշանային հարմարանք երկաթուղային գծերում, որ իր դիրքով կամ լույսերով ցույց է տալիս գծի ազատ կամ փակ լինելը, լուսաֆոր, լուսակիր ազդանշանորդ, լուսազդանշան: 2. (խսկց. ծով.): Ափին տեղադրվող կայմ, որի ազդանշանները թույլատրում են կամ արգելում նավերի երթևեկությունը: 3. Խաչմերուկներում (փողոցների) տեղադրվող երեք լույսից բաղկացած սարք՝ մեքենաների երթևեկությունը կարգավորելու համար:

ՍԵՄԵՍՏՐ [< семестр < լատ. semestris վեցամսյա, կեստարվա sex վեց + mensis ամիս], գ. Ուսումնական կիսամյակ բարձրագույն և մասնագիտական միջնակարգ հաստատություններում:

ՍԵՄԻՆԱՐ [< семинар < seminarium տնկարան, բուծարան], գ. 1. Դասախոսի ղեկավարությամբ վարվող գործնական պարապմունք բարձրագույն ուսումնական հաստատությունում: 2. Քաղաքական-գաղափարական կամ մասնագիտական պատրաստականության մակարդակը բարձրացնելու նպատակով վարվող խմբային պարապմունք:

ՍԵՄԻՆԱՐԱՎԱՐ, գ. Սեմինարը ղեկավարող անձ:

ՍԵՄԻՆԱՐԻԱ [< семинария < լատ. seminarium տնկարան, բուծարան], գ. 1. (պատմ.): Միջնակարգ մանկավարժական ուսումնարան մինչհեղափոխական Ռուսաստանում: 2. (կրոն.): Միջնակարգ հոգևոր ուսումնական հաստատություն:

ՍԵՄԻՆԱՐԻԶՄ [< семинаризм < լատ.], գ. (մինչհ.): Սեմինարիստական հոգեբանություն ու մտայնություն, սեմինարիստի մակարդակ:

ՍԵՄԻՆԱՐԻՍՏ [< семинарист < լատ.], գ. 1. Սեմինարիայի աշակերտ: 2. Սեմինարիայի շրջանավարտ, սեմիանարիայի սան:

ՍԵՄԻՈՏԻԿԱ [< семиотика < հուն. sēmeiōtikē ուսմունք նշանների մասին], գ. (լեզվբ.): Նշանագիտություն՝ գիտություն, որ զբաղվում է նշանային համակարգերի ուսումնասիրությամբ՝ ներառելով նաև լեզուն, որչափով դա կարելի է դիտել որպես նշանային համակարգ:

ՍԵՄԻՏՆԵՐ [< семиты < հուն. Sēm Սեմ], գ. (ազգգր.): Սեմական ժողովուրդներ (բաբելոնացիներ, փյունիկացիներ, հրեաներ, արաբներ ևն):

ՍԵՄԻՏՈԼՈԳԻԱ [< семитология < հուն. Sēm Սեմ՝ Նոյի որդիներից մեկի անունը + logōs գիտություն], գ. (գիտ.): Սեմագիտություն, սեմիտագիտություն՝ գիտություն սեմական լեզուների՝ գրականության և սեմական ժողովուրդների մշակույթի մասին:

ՍԵՅՄ [< сейм < լեհ. sejm], գ. 1. (պատմ.): Մի քանի երկրների դասային-ներկայացուցչական մարմինների անվանումը ֆեոդալական շրջանում: 2. (քղք.): Մի պալատից կազմված խորհրդարանը Լեհաստանում:

ՍԵՅՆԵՐ [< сейнер < անգլ. seiner < seine ցանց՝ ուռկան, զամբյուղացանց], գ. (ծով.): Ծովային ոչ մեծ ձկնորսական նավ:

ՍԵՅՍՄԻԿ [< сейсмический < հուն. seismos երկրաշարժ], ած. (երկրբ.): 1. Երկրաշարժին՝ երկրակեղևի ցնցումներին հատուկ՝ վերաբերող: 2. Երկրակեղևի տատանումների գրանցմանն ու հետազոտմանը ծառայող: 3. Այդպիսի գրանցումներով և ուսումնասիրություններով զբաղվող:

ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ, ած. Իր կառուցվածքի հատուկ ամրության շնորհիվ ստորերկրյա ցնցումների ազդեցությանը դիմակայելու՝ դիմանալու հատկություն ունեցող:

ՍԵՅՍՄՈ... [< сейсмо ... < հուն. seismos երկրաշարժ, տատանում] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերի կապը երկրակեղևի տատանումների հետ:

ՍԵՅՍՄՈԳՐԱՄ [< сейсмограмма < սեյսմո... + հուն. gramma գրառում], գ. Երկրակեղևի տատանումների՝ սեյսմոգրաֆի միջոցով ստացված ավտոմատիկ գրանցում :

ՍԵՅՍՄՈԳՐԱՖ [< сейсмограф < սեյսմո... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Երկրակեղևի տատանումների ավտոմատիկ գրանցման սարք:

ՍԵՅՍՄՈԳՐԱՖԻԱ [< сейсмография < հուն.], գ. 1. Երկրակեղևի տատանումների գրանցում սեյսմոգրաֆի միջոցով: 2. Տե՛ս Սեյսմոլոգիա:

ՍԵՅՍՄՈԼՈԳ [< сейсмолог < սեյսմո.. + հուն. logos ուսմունք], գ. Սեյսմոլոգիայի մասնագետ:

ՍԵՅՍՄՈԼՈԳԻԱ [< сейсмология < հուն.], գ. (գիտ.): Երկրաբանության այն բաժինը, որ զբաղվում է երկրակեղևի տատանումների ուսումնասիրությամբ:

ՍԵՅՍՄՈՄԵՏՐԻԱ [< сейсмометрия < սեյսմո... + հուն. metreō չափում եմ], գ. (երկրբ.): Սեյսմոլոգիայի բաժին, որը զբաղվում է սեյսմիկ ալիքների գրանցման մեթոդների և գրանցող սարքերի մշակմամբ:

ՍԵՅՍՄՈՏԵԿՏՈՆԻԿԱ [< сейсмотектоника < սեյսմո... + տեկտոնիկա], գ. (երկրբ.): Երկրաբանության բաժին, որն ուսումնասիրում է երկրաշարժերի առաջացման պայմանները:

ՍԵՅՎ [< сейв < անգլ. save < to save փրկել], գ. (սպորտ, խսկց.): Խաղային մարզաձևերում՝ դարպասապահի կողմից դարպասի անառիկ պահելը՝ գնդակի ճանապարհի փակելը՝ դարպասից այն հեռացնելը կամ որսալը:

ՍԵՅՖ [< сейф < անգլ. safe], գ. Դրամ և արժեթղթեր, ինչպես և փաստաթղթեր պահելու չհրկիզվող պահարան, գանձապահարան, դրամապահարան, կողպարկղ:

ՍԵՆԱՏ [< сенат < լատ. senatus < senex ծեր, ծերունի], գ. 1. (պատմ.): Ծերակույտ (Հին Հռոմում): 2. (պատմ.): Գերագույն դատարանի գործառույթները և պետական ապարատի հսկողությունը իրականացնող կառավարական մարմին ցարական Ռուսաստանում: 3. Կոնգրեսի բարձրագույն պալատը ԱՄՆ-ում, Բելգիայում, Կանադայում և մի քանի այլ երկրներում: 4. Համալսարանական խորհուրդ մի քանի երկրներում:

ՍԵՆԱՏՈՐ [< сенатор < լատ.], գ. Սենատի անդամ:

ՍԵՆԵՇԱԼ [< сенешаль, сенешал < ֆր. sénéchal], գ. (պատմ.): 1. Պաշտոնական անձ Ֆրանսիայում, որը վարում էր արդարադատության և ռազմական գործերը: 2. Կիլիկյան թագավորության պաշտոնյա:

ՍԵՆՅՈՐ I [< сеньор < լատ. senior ավագ], գ. (պատմ.) Միջնադարյան Եվրոպա-

յում հողի սեփականատեր, որն իրեն պատկանող տարածքում տիրակալի իրավունքներ ուներ:

ՍԵՆՅՈՐ II [< сеньор < իսպ. señor], գ. Պարոն (Իսպանիայում տղամարդուն քաղաքավարի դիմելու ձև):

ՍԵՆՅՈՐԱ [< сеньора < իսպ. señora], գ. Տիկին, պարոնուհի (Իսպանիայում կնոջը դիմելու քաղաքավարի ձև):

ՍԵՆՅՈՐԻՏԱ [< сеньорита < իսպ. señorita], գ. (խսկց.): Օրիորդ (Իսպանիայում աղջկան դիմելու քաղաքավարական ձև):

ՍԵՆՍԱՑԻԱ [< сенсация < լատ. sensatio < լատ. sensus զգացմունք, զգացում], գ. 1. Բուռն՝ շշմեցնող տպավորություն՝ ներգործություն, որ թողնում է մարդկանց վրա որևէ իրադարձություն՝ դեպք՝ լուր ևն: 2. Այդպիսի տպավորություն՝ ներգործություն թողնող դեպք՝ իրողություն՝ լուր ևն:

ՍԵՆՍԱՑԻՈՆ [< сенсационный < լատ.], ած. Սենսացիա առաջացնող, շշմեցնող տպավորություն գործող:

ՍԵՆՍԻԲԻԼԻԶԱՑԻԱ [< сенсибилизация < լատ. sensibilis զգայուն], գ. (կենսբ.): Գերզգայնություն՝ օրգանիզմի զգայունության առանձնահատուկ բարձրացումը օտարածին նյութերի՝ ալերգենների հանդեպ:

ՍԵՆՍԻՄՈՆԻԶՄ [< сенсимонизм < ֆր. saint-simonisme], գ. (փիլ.): Ֆրանսիայի սոցիալիստ-ուտոպիստ Սեն Սիմոնի (1760-1825 թթ.) և նրա ժառանգորդների ստեղծած ուսմունքը:

ՍԵՆՍԻՏՈՄԵՏՐԻԱ [< сенситометрия < ուշ լատ. sensitivus զգայուն + հուն. metron], գ. (լանկրչ.): Տեսություն լուսանկարչական նյութերի հատկությունների չափումների մասին, չափագիտության բաժիններից:

ՍԵՆՍՈՐ [< сенсор < լատ. sensus զգացում, զգացմունք], գ. (տեխ.): Արտաքին երևույթների նկատմամբ բարձր զգացողություն ունեցող սարք. օգտագործվում է պաշտպանական, պահպանական ևն համակարգերի մեջ:

ՍԵՆՍՈՒԱԼԻԶՄ [< сенсуализм < ֆր. sensualisme < լատ. sensus զգացում, զգացմունք], գ. (փիլ.): Փիլիսոփայական ուղղություն, որ ճանաչողության միակ աղբյուրն է համարում զգայությունը:

ՍԵՆՍՈՒԱԼԻՍՏ [< сенсуалист < ֆր. < լատ.], գ. Սենսուալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍԵՆՏԱՎՈ [< сентаво < իսպ. և պորտ. centavo], գ. (ֆին.): Անգոլայի (=1/100 անգոլար), Արգենտինայի, Կուբայի, Մեքսիկայի՝ (=1/100 պեսո) և այլ երկրների դրամական միավորը:

ՍԵՆՏԵՆՑԻԱ [< сентенция < լատ. sententia կարծիք, ասույթ], գ. 1. (գրկն.): Խրատական ասացվածք, ասույթ, աֆորիզմ: 2. (իրավբ. հնց.): Դատավճիռ:

ՍԵՆՏԵՍԻՄՈ [< сентесимо < իսպ. centesimo], գ. (ֆին.): Պանամայի (=1/100 բալբոա) և Ուրուգվայի՝ (=1/100 պեսո) դրամական միավորը:

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼ [< сентиментальный < ֆր. sentimental], ած. Զգացմունքային, գերզգայուն:

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻԶՄ [< сентиментализм < ֆր. sentimentalisme < sentiment զգացում], գ. 1. Զգացմունքայնություն: 2. (գրկն.): XVIII-XIX դդ. գրական ուղղություն, որ բնութագրվում է մարդու հոգեկան աշխարհի և բնության նկատմամբ ունեցած հատուկ ուշադրությամբ և դրա հետ միաժամանակ՝ իրականության իդեալականացումով ու նրա վերարտադրության ծայրահեղ զգացմունքայնությամբ, զգայապաշտություն:

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻՍՏ [< сентименталист < ֆր.], գ. Սենտիմենտալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍԵՆՏԻՄՈ [< сентимо < իսպ. centimo < լատ. centum հարյուր], գ. (ֆին.): Վենեսուելայի (=1/100 բոլիվար), Իսպանիայի՝ (=1/100 պեսո), Կոստա-Ռիկայի՝ (=1/100 կոլոն) և այլն երկրների դրամական միավորը:

ՍԵՆՏՈ [< СЕНТО < անգլ. Cento *հպկ.* Central Treaty Organization], *հպկ.* Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն՝ ռազմաքաղաքական կազմակերպություն:

ՍԵՊԱՐԱՏ [< сепаратный < լատ. separatus անջատ], ած. Անջատ, առանձին, մեկուսի:

ՍԵՊԱՐԱՏԻԶՄ [< сепаратизм < լատ. separatus առանձին, զատ, անջատված], գ. 1. Առանձնանալու՝ անջատվելու՝ մեկուսանալու ձգտում (սովորաբար որևէ հանրությունից, խմբից ևն), անջատվածություն: 2. (քղք.): Պետությունից անջատվելու՝ առանձնանալու՝ առանձին պետություն ունենալու քաղաքական հոսանք՝ շարժում (առավել. ազգային փոքրամասնությունների կողմից): 3. *փխբ.* Առանձնանալու՝ մեկուսանալու՝ ընդհանուրից անջատվելու ձգտում:

ՍԵՊԱՐԱՏԻՍՏ [< сепаратист < լատ.], գ. Սեպարատիզմի կողմնակից:

ՍԵՊԱՐԱՏՈՐ [< сепаратор < լատ. separator զատիչ, անջատիչ], գ. (տեխ.): 1. Զատիչ մեքենա: 2. Սերզատ:

ՍԵՊԱՐԱՑԻԱ [< сепарация < լատ.], գ. (տեխ.): Զատում, զատելը, անջատում, բաժանում, բաժանվելը:

ՍԵՊԻԱ [< сепия < հուն. sēpia թանաքաձուկ], գ. Բաց դարչնագույն ներկանյութ՝ ծովային փափկամորթների թանաքապարկից: Օգտագործել են եվրոպական գեղանկարիչները XVIII դարից:

ՍԵՊՍԻՍ [< сепсис < հուն. sēpsis նեխում, թարախակալում], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների ծանր վարակիչ հիվանդություն, որն առաջանում է արյան և հյուսվածքների մեջ թարախածին մանրէների ու նրանց կենսագործունեությամբ առաջացած թույների ներթափանցման հետևանքով:

ՍԵՊՏԱԿՈՐԴ [< септаккорд < լատ. septem + ակորդ], գ. (երժշտ.): Ակորդ՝ կազմված չորս տարբեր հնչյուններից, որոնք դասավորված են կամ կարող են դասավորվել տերցիաներով:

ՍԵՊՏԵՏ [< септет < լատ. septem յոթ], գ. (երժշտ.): 1. Յոթնյակ՝ յոթ երաժիշտ կատարողներից (նվագողներ կամ երգիչներ) բաղկացած համույթ: 2. Երաժշտական ստեղծագործություն յոթ գործիքի կամ ձայնի համար:

ՍԵՊՏԻԿ [< септик < անգլ. septic], գ. (տեխ.): Ոչ մեծ քանակությամբ (օրական մինչև 25 մ^3) կենցաղային կեղտաջուր մաքրելու կառույց:

ՍԵՊՏԻՄԱ [< септима < լատ. septima յոթերորդ], գ. (երժշտ.): Դիատոնիկ շարքում որևէ աստիճանի և նրանից հաշված յոթերորդ աստիճանի հարաբերակցությունը:

ՍԵՍԻԱ [< сессия < լատ. sessio նիստ], գ. (խսկց.): 1. Նստաշրջան: 2. Քննաշրջան:

ՍԵՍԻՈՆ [< сессионный < լատ.], ած. (խսկց.): Նստաշրջանին կամ քննաշրջանին վերաբերող, նստաշրջան(ներ)ի, քննաշրջան(ներ)ի:

ՍԵՍՏԵՐՑԻԱ [< сестерций < լատ. sēstertius < semis կես + tertius երրորդ], գ. (պատմ.): Հին հռոմեական արծաթադրամ (մինչև մ. թ. ա. III դ.):

ՍԵՎՐՅՈՒԳԱ [< ռուս. севрюга], գ. (կենդբ.): Զաթխի՝ ձկան տեսակ:

ՍԵՏ, ՍԵԹ [< сет < անգլ. set], գ. (խսկց.): Թենիսի մեկ պարտիա:

ՍԵՏԵՐ, ՍԵՏՏԵՐ [< сеттер < անգլ. setter], գ. (կենդբ.): Որսորդական շների մի տեսակ և այդ տեսակի շուն:

ՍԵՏԼՄԵՆՏ [< сеттльмент < անգլ. settlement բնակավայր], գ. (իրավբ.): Անգլոսաքսոնական երկրների քաղաքացիական դատավարությունում կողմերի համաձայնություն, որի հիման վրա մինչև որոշում կայացնելը դատարանը գործը կարճում է:

ՍԵՐԵՆԱԴ(Ա) [< серенада < իտալ. serenata < sereno պարզ, բաց < լատ. sera (hora) ուշ (գիշեր)], գ. (երժշտ.): 1. Գիշերերգ, ցայգերգ: 2. Ցայգանվագ:

ՍԵՐԺԱՆՏ [< сержант < ֆր. sergent < լատ. serviens (servientis) ծառայող], գ. Բանակի և ոստիկանության կրտսեր հրամկազմի կոչում, ինչպես և այդ կոչումը կրող անձը:

ՍԵՐԻԱ [< серия < լատ. series շարք], գ. 1. Մատենաշար: 2. Որևէ տեսակետից միասնություն կազմող՝ միատեսակ առարկաների՝ իրերի ևն շարք՝ հաջորդական խումբ, շարք: 3. Որոշ կարգի գործողությունների՝ վարժությունների ևն հաջորդական շարք: 4. (կինո.): Մեծ կինոֆիլմի՝ մեկ սեանսում ցուցադրվող մասերից յուրաքանչյուրը: 5. Արժեթղթերի (թղթադրամների, փոխառության պարտատոմսերի, վիճակախաղի տոմսերի ևն)՝ փաստաթղթերի կարգը ցույց տվող համարը կամ տառանիշը: 6. Մեկ ստանդարտով պատրաստվող արտադրանքի (իրեր, առարկաներ, մանրակներ ևն) շարք՝ ամբողջություն:

ՍԵՐԻԱԼ [< сериал], գ., ած. 1. Սերիային՝ հաջորդական երևույթներին՝ առարկաներին բնորոշ: 2. (կինո.): Հեռուստատեսային բազմասերիանոց կինոնկար, հեռուստասերիալ:

ՍԵՐՈԹԵՐԱՊԻԱ [< серотерапия < լատ. serum շիճուկ + թերապիա], գ. (բժշկ.): Շիճուկաբուժություն:

ՍԵՐՈԼՈԳԻԱ [< серология < լատ. serum շիճուկ + logos գիտություն], գ. (բժշկ.): Շիճուկաբանություն:

ՍԵՐՊԱՆՏԻՆ [< серпантин < ֆր. serpentine < serpent օձ], գ. (գրք.): Գունավոր թղթաժապավեն:

ՍԵՐՊԵՆՏԻՆ [< серпентин < լատ. serpentinus օձի], գ. (հնք.): Օձաքար՝ լավ հղկելի և օձամորթի գույնի հանքաքար:

ՍԵՐՎԱՆՏ [< сервант < ֆր. servante], գ. (խսկց.): Սպասքապահարան:

ՍԵՐՎԵՐ [< сервер < անգլ. server < to serve ծառայել], գ. (ինֆորմ.): 1. Ծրագիր, որը ղեկավարում է մուտքը հաշվողական համակարգերի տեղեկատվական պաշարներ: 2. Համակարգիչ, որը իրականացնում է օգտագործողների մուտքը հաշվողական համակարգերի տեղեկատվական պաշարներ:

ՍԵՐՎԻԶ [< сервиз < ֆր. service], գ. (խսկց.): Սպասք:

ՍԵՐՎԻՍ [< сервис < անգլ. service], գ. (խսկց.): 1. Տարբեր ծառայությունների մատուցում, սպասարկում: 2. Ավտոտեխսպասարկում:

ՍԵՐՎԻՏՈՒՏ [< сервитут < լատ. servitus (servitutis) ստրկություն, ենթարկվածություն], գ. (իրավբ.): Իրավունքի տեսակ, ըստ որի՝ անձին իրավունք է վերապահվում օգտվելու ուրիշի գույքից որոշակի շրջանակներում կամ սահմանափակել սեփականատիրոջ իրավունքը որոշակի հարաբերություններում: Ձևավորվել է հռոմեական իրավունքում՝ մասնավոր սեփականատերերի հակադարձ շահերը կարգավորելու համար:

ՍԵՐՎՈՄՈՏՈՐ [< сервомотор < լատ. servus ծառա, ստրուկ + motor շարժման

մեջ դնող], գ. (տեխ.): Ավտոմատ կարգավորման համակարգի գործադիր մեխանիզմի ուժային տարր, որն օժանդակ աղբյուրի էներգիան փոխակերպում է կարգավորող օրգանի տեղափոխման մեխանիկական էներգիայի՝ կառավարման ազդանշանին համապատասխան:

ՍԵՐՏԻՖԻԿԱՏ [< сертификат < ֆր. certificat < լատ. certum ճիշտ, ուղիղ + facere անել], գ. (տնտսգ.): 1. Ապրանքի բեռնաթափման վերաբերող վերադիրին կից փաստաթուղթ՝ ապրանքի քանակի, տեսականու, սորտայնության և գների նշումով, հավաստագիր: 2. (ֆին.): Պետության ֆինանսական պարտագրի մի տեսակ: 3. Պետական որոշ փոխառությունների պարտատոմսերի անվանում:

ՍԵՐՈՒՄ [< серум < լատ. serum շիճուկ], գ. (բժշկ.): Արյան շիճուկ:

ՍԵՐՖԻՆԳ [< серфинг < անգլ. surfing < surf ալեբախություն], գ. (սպորտ.): Ջրային մարզաձև. հատուկ տախտակի վրա կանգնած՝ ալիքների վրայով սահելը (նաև այդ տախտակը՝ ալետախտակ), ալետախտակալող:

ՍԵՐՏԻՖԻԿԱՑԻԱ [< сертификация < ֆր. sertification < լատ.], գ. (առևտր.): Հավաստագրում (ապրանքի):

ՍԵՑԵՍԻԱ [< сецессия < լատ. secessio մի կողմ քաշվելը, հեռանալը], գ. 1. (մանգ.): Անջատվելը, առանձնանալը, կազմից հեռանալը, բաժանվելը, ուրացողություն, ուխտադրժություն: 2. (իրավ.): Պետության կողմից դրա մի մասի դուրս գալը:

ՍԵՔԸՆԴ ՀԵՆԴ [< секонд-хенд < անգլ. second hand < second երկրորդ + hand ձեռք], գ. (խսկց.): Ոչ նոր՝ հին իր՝ ապրանք, որը նորից կարելի է գնել և օգտագործել:

ՍԵՔՍ [< секс < լատ. sexus սեռ], գ. (խսկց.): Այն ամենը, ինչ բնորոշում է սեռական կյանքը:

ՍԵՔՍ ԲՈՄԲ [< секс-бомба < անգլ. sex bomb < sex սեռ + bomb ռումբ], գ. (խսկց.): Չափից դուրս սեքսուալ կին:

ՍԵՔՍ ՇՈՓ [< секс-шоп < անգլ. sex shop < sex սեքս, էրոտիկա + shop խանութ], գ. (խսկց.): Սեքս խանութ (վաճառվում են էրոտիկ և սեքսին վերաբերող առարկաներ, գրականություն են):

ՍԵՔՍՈԼՈԳԻԱ [< сексология < սեքս + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Սեռաբանություն՝ սեռական կյանքի մասին գիտական հետազոտությունների և գիտելիքների բնագավառ:

ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳ [< сексопатолог < լատ. + հուն.], գ. (բժշկ.): Սեքսոպաթոլոգիայի մասնագետ:

ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳԻԱ [< сексопатология < սեքս + հուն. pathos տանջանք, չարչարանք + logos ուսմունք], գ. (բժշկ.): Կլինիկական բժշկության ճյուղ, որը զբաղվում է մարդու սեռական ֆունկցիայի խանգարումների ուսումնասիրությամբ, դրանց բուժման, ախտորոշման և կանխարգելման, ինչպես նաև անպտղության հարցերով:

ՍԵՔՍՏԱ [< секста < լատ. sexta վեցերորդ], գ. (երժշտ.): Դիատոնիկ շարքում որևէ աստիճանի և նրանից հաշված վեցերորդ աստիճանի հարաբերակցությունը:

ՍԵՔՍՏԱՆՏ [< секстант < լատ. sextans (sextantis) 1/6 մասը], գ. 1. (աստղգ.): Հասարակածային համաստեղություն, որը գտնվում է Առյուծ, Հիդրա և Թաս համաստեղությունների միջև: 2. (ծով.): Աստղադիտական անկյունաչափ սարք, որն օգտագործվում է հորիզոնի նկատմամբ երկնային լուսատուների, մասնավորապես Արեգակի անկյունային բարձրությունը որոշելու համար:

ՍԵՔՍՏԵՏ [< секстет < գերմ. Sextett < լատ. sextus վեցերորդ], գ. (երժշտ.): Վեց-

յակ՝ 1. Վեց երաժիշտ-կատարողներից (նվագողներ կամ երգիչներ) բաղկացած համույթ: 2. Երաժշտական ստեղծագործություն վեց գործիքի կամ ձայնի համար:

ՍԵՔՍՏԻԼԻՈՆ [< секстиллион < ֆր. sextillion < լատ. sextus], թվ. Միլիոնից հետո վեցերորդ դասի թիվ, որը գրվում է 1-ով և 21 զրոներով:

ՍԵՔՍՈՒԱԼ [< сексуальный < լատ. sexualis սեռային], ած. 1. Սեռային կյանքին պատկանող՝ վերաբերող: 2. Սեռական հմայք ունեցող:

ՍԵՔՎԵՆՑԻԱ [< секвенция < լատ. sequentia հետևում], գ. (երժշտ.): 1. Հարաշար՝ որևէ մեղեդիական մոտիվի կամ ներդաշնակային դարձվածքի ճշգրիտ, նաև այս կամ այն ձևով փոփոխվող կրկնումը տարբեր աստիճանների վրա: 2. Միջնադարյան կաթոլիկական մոնոդիկ երգասացություն, որ կատարվել է պատարագի ընթացքում ալելուիայից հետո:

ՍԸՐ [< сэр < անգլ. sir < լատ. senîor պարոն], 1. (խսկց.): Պարոն (դիմելաձև անգլիախոս երկրներում): 2. Տիտղոս Մեծ Բրիտանիայում:

ՍԻ [< си < լատ. si], գ. (երժշտ.): 1. Երաժշտական գամմայի VII ձայնը: 2. Այդ ձայնի նշանը, ձայնանիշը:

ՍԻԱԼՈԱԴԵՆԻՏ [< сиалоаденит < հուն. sialon թուք + aden գեղձ], գ. (բժշկ.): Թքագեղձերի բորբոքում:

ՍԻԲԻԼՅԱՆՏ(ՆԵՐ) [< сибилянты < լատ. sibilans (sibilantis) սուլական], գ. (լեզվբ. հնց.): Սուլական հնչյուն(ներ):

ՍԻԳ [< ռուս. сиг], գ. (կենդբ.): Սաղմոնազգիների ընտանիքին պատկանող՝ քաղցրահամ ջրերի ձուկ (աճում է նաև Սևանա լճում):

ՍԻԳԱ (սխ.): Տե՛ս Սիգ:

ՍԻԳԱՐ [< сигара < ֆր. cigare < իսպ. cigarro], գ. Գլանակի ձևով փաթաթված ծխախոտի չոր տերևներ՝ ծխելու համար:

ՍԻԳԱՐԵՏ, ՍԻԳԱՐԵԹ [< сигарета < ֆր. cigarette], գ. 1. Առանց խողովակի գլանակ: 2. Բարակ և նուրբ սիգար, ծխախոտագլանակ:

ՍԻԳՆԱԼ [< сигнал < լատ. signum նշան], գ. (խսկց.): 1. Ազդանշան: 2. Շեփոր:

ՍԻԳՆԱԼԻԶԱՑԻԱ [< сигнализация < ֆր. signalisation < լատ.], գ. (խսկց. հնց.): 1. Ազդանշանում, ազդանշանելը, աշդանշան տալը: 2. Ազդանշանիչ, ազդանշանելու՝ ազդանշանի հարմարանք: 3. Ազդանշանների համակարգ:

ՍԻԳՆԱՏՈՒՐԱ [< сигнатура < միջին լատ. signatura < լատ. signare նշել, ցույց տալ], գ. 1. (դրգրծ.): Բժշկի դեղատոմսի պատճենը, որը դեղատան կողմից կցվում է դեղատուփին, դեղացուցում, դեղապիտակ:

ՍԻԴԻ [< компатк-диск < անգլ. compact disc հպվ. CD], *հպվ.* Ինֆորմացիայի կրիչ՝ թվային տեղեկատվության պահպանումը օպտիկական եղանակով խտա-սկավառակ:

ՍԻԴԵՐԻՏ [< сидерит < հուն. sidēros երկաթ], գ. (հնք.): Երկաթի կարբոնատ:

ՍԻԴՐ [< сидр < ֆր. cidre], գ. Մրգահատապտղային թույլ ալկոհոլային գինի, որը ստացվում է խնձորահյութի խմորմամբ:

ՍԻԵՆԻՏ [< сиенит < հուն. Syēnē հին եգիպտական Սուն (այժմ Ասուան) քաղաքի անվանումը], գ. (հնք.): Հատիկավոր կառուցվածքով բյուրեղային լեռնային ապար, որ օգտագործվում է շենքերի երեսպատման համար:

ՍԻԵՍՏԱ [< сиеста < իսպ. siesta], գ. 1. Կեսօրյա հանգիստ մի շարք տաք երկրներում: 2. Օրվա ամենատաք՝ շոգ ժամանակը:

ՍԻԶԻՖՅԱՆ, ՍԻԶԻՓՈՍՅԱՆ [< сизифов < հուն. առասպելական թագավոր Սիզիփոսի (Sisyphos) անունից, որը ծանր քարը բարձրացնում էր լեռը, բայց այդ

նույն պահին այն գլորվում էր ցած] աշխատանք - Խիստ ծանր ու անարդյունք աշխատանք:

ՍԻԼԻԿԱՏ [< силикаты < լատ. silex (silicis) կայծքար], գ. (առավել. հոգն.): Սիլիկատահող պարունակող միներալների ընդհանուր անվանումը, կայծքարատ:

ՍԻԼԻԿՈԶ [< силикоз < լատ. silex կայծքար], գ. (բժշկ.): Հիվանդություն, որն առաջանում է սիլիցիումի ազատ երկօքսիդ պարունակող փոշու երկարատև շնչումից: Փոշեգարությունների խմբի առավել ծանր ընթացող հիվանդություն է, որը հաճախ զուգակցվում է տուբերկուլյոզային գործընթացի և այլ բարդությունների հետ:

ՍԻԼԻՑԻՈՒՄ [< силиций < լատ. silex (silicis) կայծքար], գ. (քիմ.): Քիմիական տարր, որ մտնում է լեռնային ապարների մեծ մասի բաղադրության մեջ:

ՍԻԼԻՑԱՔԱՐ, գ. Կայծքար:

ՍԻԼԼՈԳԻԶՄ [< силлогизм < հուն. syllogismos], գ. (տրամբ.): Հավաքաբանություն, հետևաբանություն:

ՍԻԼՈՍ [< силос < իսպ. silos հոգն.], գ. Մանրացրած կերաբույսերի կանաչ զանգվածը հատուկ շինվածքներում (աշտարակներում, հորերում ևն) թթվեցնելու միջոցով ստացվող հյութալի կեր, թթվաանասնակեր:

ՍԻԼՈՒԵՏ [< силуэт < ֆր. silhouette XVIII դարի ֆրանսիացի մինիստր Է. դե Սիլուետի անունով], գ. 1. Ուրվանկար, ուրվապատկեր: 2. Ուրվագիծ: 3. Ստվերանկար, ստվերապատկեր:

ՍԻԼՈՒՄԻՆ [< силумин < լատ. sil(icium) սիլ(ի-ցիում) + (al)umin(ium) (ալյ)ումին], գ. (քիմ.): Ալյումինի հիմքով ձուլման թեթև համաձուլվածքների խմբի ընդհանուր անվանումը, որը պարունակում է սիլիցիում (մինչև 23%) և այլ տարրեր (պղինձ, մանգան, մագնեզիում): Կիրառվում է ավտո- և ավիաշինության մեջ:

ՍԻԼՖԻԴԱ [< сильфи, сильфиды < ֆր. sylphe, sylphide], գ. (դից.): Միջնադարյան կելտական ու գերմանական դիցաբանության մեջ՝ օդային տարերքը մարմնավորող արական կամ իգական ոգիներ:

ՍԻԼՖՈՆ [< сильфон < անգլ. sylphon ֆիրմային անվանումից], գ. (տեխ.): Ալիքավոր կողմնային մակերևույթով բարակապատ մետաղե խողովակ կամ խցիկ: Պատրաստում են արույրից, ֆոսֆորային ու բերիլիումային բրոնզից և չժանգոտվող պողպատից: Սիլֆոնը լայնորեն կիրառվում է պնևմո- և հիդրոավտոմատիկայում: Սիլֆոնները օգտագործվում են նաև որպես խողովակաշարերի ճկուն միացումներ, ջերմաստիճանային երկարացումների կոմպենսատորներ, միջավայրերի առաձգական բաժանիչներ են:

ՍԻԿԱՏԻՎՆԵՐ [< сиккативы < լատ. siccativus չորացնող], գ. Յուղաներկերի, ալկիդային, էպօքսիէսթերային յուղեր պարունակող լաքաներկանյութերի և օլիֆի բաղադրիչներ, որոնք առաջացնում են թաղանթառաջացումը՝ չորացումը:

ՍԻՄԲԻՈԶ [< симбиоз < հուն. symbiōsis համակեցություն], գ. (բսբ.): Համակեցություն՝ տարբեր տեսակների (անհատների) համակեցության ձև, երբ երկու օրգանիզմներ (սիմբիոտներ) անմիջական փոխազդեցության մեջ են մտնում արտաքին միջավայրի հետ և վերջինիս հետ հարաբերությունների կարգավորումը իրականացնում համատեղ ջանքերով: Տերմինն առաջարկել է գերմանացի բուսաբան Ա. դը Բարին 1879 թ. քարաքոսների համար:

ՍԻՄԵՆԹԱԼ [< симменталы < գերմանական Սիմենթալ (Simmental) հովտի անվանումից], գ. (կենդբ.): Խոշոր եղջերավոր անասունների (կովերի) բարձր կաթնատվությամբ ու մսատվությամբ բնորոշվող ցեղ:

ՍԻՄԵՆՍ I [< Сименс < գերմ. էլեկտրատեխնիկ Է. Վ. Սիմենսի անունից], գ. Արևմտագերմանական էլեկտրատեխնիկական ընկերություն:

ՍԻՄԵՆՍ II [< сименс < հատուկ անունից], գ.(էլեկտր.): Էլեկտրահաղորդականության միավորը Միավորների միջազգային համակարգում: Նշանակվում է սիմ (միջազգային նշանակումը՝ S): Այն հավասար է էլեկտրական շղթայի այն տեղամասի էլեկտրահաղորդականությանը, որի դիմադրությունը 1 օհմ է:

ՍԻՄԵՏՐԻԱ [< симметрия < հուն. symmetria համաչափություն], գ. Համաչափություն՝ որոշակի փոփոխության (ձևափոխության) նկատմամբ օբյեկտի անփոփոխ մնալու հատկությունը:

ՍԻՄԵՏՐԻԿ [< симметрический < հուն.], ած. Համաչափ:

ՍԻՄՊԱՏԻԱ [< симпатия < հուն. sympatheia կարեկցություն], գ. (խսկց.): 1. Համակրանք, համակրություն: 2. Համակրանքի առարկա, համակրելի՝ սիրելի անձ:

ՍԻՄՊՈԶԻՈՒՄ [< симпозиум < լատ. symposium < հուն. symposion խնջույք, խրախճանք], գ. Գիտական որևէ կարգի խնդրի նվիրված միջազգային խորհրդակցություն, գիտաժողով:

ՍԻՄՊՏՈՄ [< симптом < հուն. symptōma համընկնում, հատկանիշ], գ. 1. (խսկց.): Նշան, նախանշան: 2. (բժշկ.): Ախտանիշ:

ՍԻՄՊՏՈՄԱՏԻԿԱ [< симптоматика < հուն.], գ. Ախտանշանաբանություն:

ՍԻՄՎՈԼ [< символ < հուն. symbolon պայմանական նշան, նախանշան], գ. 1. Պայմանական կերպով որևէ հասկացություն՝ գաղափար ևն ներկայացնող նշան՝ առարկա՝ երևույթ, խորհրդանշան, խորհրդանիշ: 2. (գրկն.): Պայմանականորեն որևէ գաղափար՝ ապրում ևն ներկայացնող գեղարվեստական պատկեր կամ կերպար: 3. (գիտ.): Գիտության այս կամ այն բնագավառում ընդունված պայմանական նշանների համակարգի յուրաքանչյուր նշանը:

ՍԻՄՎՈԼԻԶՄ [< символизм < հուն.], գ. 1. (արվ. գրկն.): Մոդեռնիստական ուղղություն XIX դարի վերջերի և XX դարի սկզբի արվեստի ու գրականության մեջ, որ իր գեղարվեստական սկզբունքն էր համարում սիմվոլների՝ խորհրդանշանների միջոցով առարկաների ու երևույթների անճանաչելի էության պատկերումը, խորհրդապաշտություն: 2. Տե՛ս Սիմվոլիկա:

ՍԻՄՎՈԼԻԿ [< символический < հուն.], ած. 1. Սիմվոլի միջոցով արտահայտվող՝ դրսևորվող: 2. Սիմվոլի բնույթ կրող, սիմվոլ հանդիսացող, խորհրդանշական: 3. *փխբ.* Ցուցադրական, որևէ բանի ձևը՝ արտաքին համապատասխանությունը ներկայացնող: 4. *փխբ.* Նշանակալից, բնութագրական, բնորոշ, հատկանշական: 5. (արվ. գրկն.) Սիմվոլիզմին հատուկ՝ բնորոշ, խորհրդապաշտական:

ՍԻՄՎՈԼԻԿԱ [< символика < հուն.], գ. 1. Որևէ բանի վերագրվող սիմվոլիկ նշանակություն: 2. (հվք.): Սիմվոլներ, սիմվոլների՝ պայմանական նշանների ամբողջություն՝ համակարգ:

ՍԻՄՎՈԼԻՍՏ [< символист < հուն.], գ. (արվ. գրկն.) Սիմվոլիզմի հետևորդ, խորհրդապաշտ:

ՍԻՄՈՒԼՅԱՆՏ [< симулянт < լատ. simulans (simulantis)], գ. (խսկց.): Որևէ բան ձևացնելով կեղծող, մի բանից խուսափելու համար կեղծ կերպով իրեն հիվանդ՝ անաշխատունակ ևն ձևացնող մարդ, կեղծակերպիչ:

ՍԻՄՈՒԼՅԱՆՏՈՐԵՆ, մկ. Որպես սիմուլյանտ, սիմուլյանտի նման:

ՍԻՄՈՒԼՅԱՑԻԱ [< симуляция < լատ. simulatio], գ. Կեղծակերպում՝ որևէ բանից խուսափելու նպատակով մի բան ձևացնելը, կեղծակերպություն:

ՍԻՄՖՈՆԻԱ [< симфония < հուն. symphōnia ներդաշնակություն, համահնչունություն], գ. (երժշտ.) Համանվագ՝սիմֆոնիկ նվագախմբի կատարման համար նախատեսված քառամաս երաժշտական ստեղծագործություն:

ՍԻՄՖՈՆԻԵՏ [< симфониетта, симфоньетта < իտալ. sinfonietta փոքր սիմֆոնիա], գ. (երժշտ.): Սիմֆոնիայի տեսակ՝ ցիկլի մասերի ավելի փոքր մասշտաբներով, կատարողների փոքրաթիվ կազմով և համեմատաբար պարզ երաժշտական բովանդակությամբ:

ՍԻՄՖՈՆԻԶՄ [< симфонизм < հուն.], գ. Համանվագայնության՝ համաներդաշնակության արվեստ:

ՍԻՄՖՈՆԻԿ [< симфонический < հուն.], ած. Սիմֆոնիական՝ համանվագային:

ՍԻՆԱԳՈԳ(Ա) [< синагога < հուն. synagōgē ժողով], գ. (կրոն.): Հրեաների աղոթատուն՝ տաճար:

ՍԻՆԱՆԹՐՈՊՈՍ [< синантроп < ուշ լատ. Sina Չինաստան + հուն. anthrōpos մարդ], գ. (հնէաբ.): Պեղածո հնագույն մարդկանց ներկայացուցիչ, որի կմախքի մնացորդներն առաջին անգամ հայտնաբերվել են Չինաստանում 1920-ական թթ. Կոցետանգ քարայրում՝ Պեկինից մոտ 45 կմ հարավ-արևմուտք:

ՍԻՆԱՊՍՆԵՐ [< синапсы < հուն. synapsis միացում, կապ], գ. (կենսբ.): Երկու նեյրոնների կամ նյարդային ու գործադիր օրգանների բջիջների միացման հատվածներ, որոնք ծառայում են ազդանշանների հաղորդման և ձևափոխման համար: Տերմինն օգտագործել է Չ. Շերինգթոնը 1897 թ.՝ նեյրոնների հաղորդակցումը նշելու համար:

ՍԻՆԳԵՆԵՏԻԿ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ [< сингенетические (< հուն. syn միասին, հետ + genetikos ծնված) месторождения] - (երկրբ.): Օգտակար հանածոների հանքավայրեր, որոնք առաջացել են ներփակող ապարների հետ միաժամանակ:

ՍԻՆԳԼ [< сингл < անգլ. single միայնակ, մենակ գործող], գ. (երժշտ.): Մեկ երգչի կամ կատարողի ձայներիզ՝ սկավառակ:

ՍԻՆԳՈՒԼՅԱՐ ԿԵՏ [< сингулярная (< լատ. singularis հատուկ) точка] - (քիմ.): Վիճակի դիագրամում կամ բաղադրություն-հատկություն դիագրամում չդիտցվող քիմիական միացության առաջացմանը համապատասխանող կետ:

ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ [< синдикализм < ֆր. syndicalisme], գ. (պատմ.): Մանրբուրժուական հոսանք բանվորական շարժման մեջ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, որի կողմնակիցները ժխտում էին պրոլետարիատի դասակարգային պայքարի և պրոլետարական դիկտատուրայի ստեղծման անհրաժեշտությունը:

ՍԻՆԴԻԿԱԼԻՍՏ [< синдикалист < ֆր.], գ. Սինդիկալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍԻՆԴԻԿԱՏ [< синдикат < ֆր. syndicat < հուն. syndikos], գ. 1. (տնտսգ.): Ձեռնարկությունների միավորման ձևերից մեկը, որի նպատակն է արտադրանքի վաճառահանման կազմակերպման միջոցով շահույթ ստանալը, և որը բնութագրվում է միավորված ձեռնարկությունների առևտրական ինքնագործունեության կորուստով, բայց արտադրական գործունեության ինքնուրույնության պահպանումով: 2. Արհեստակցական միությունների անվանումը Ֆրանսիայում և մի շարք այլ երկրներում:

ՍԻՆԴՐՈՄ [< синдром < հուն. syndromē միահոսում, շատ բաների միավորում], գ. (ախտն.): Ախտանիշների համակցություն:

ՍԻՆԵԴՐԻՈՆ [< синедрион < հուն. synedrion ժողով, խորհուրդ], գ. (պատմ.): 1. Ծերակույտ Երուսաղեմ քաղաքում մ. թ. ա. III-I դդ.): 2. Դատաժողով (Հին Հրեաստանում մ. թ. ա. I - մ. թ. I դդ. հռոմեական տիրապետության ժամանակ):

ՍԻՆԵԿԴՈԽ(Ա) [< синекдоха < հուն. synekdochē հարաբերակցում], գ. (լեզվբ.

գրկն.): Փոխանունության տեսակ, երբ ամբողջը փոխարինվում է մասով, հոգնակին՝ եզակիով:

ՍԻՆԵԿՈՒՐԱ [< синекура < գերմ. Sinekure < լատ. sine cūra առանց հոգսի], գ. (հզվդ.): Լավ վարձատրվող անաշխատ պաշտոն:

ՍԻՆԵՄԱ [< синема < անգլ. cinema], գ. (խսկց.): Կինո:

ՍԻՆԵՄԱՏՈԳՐԱՖ [< синематограф < ֆր. cinématographe], գ. Տե՛ս Կինեմատոգրաֆ:

ՍԻՆԵՐԱՄԱ [< синерама < անգլ. cinerama], գ. (կինո.): Համայնապատկերավոր կինոյի համակարգերից մեկը:

ՍԻՆԵՐԳԻԱ [< синергия < հուն. synergeia], գ. (տնտսգ.): Երևույթ գործարարության պրակտիկայում, երբ ընդհանուր արդյունքը գերազանցում է առանձին արդյունքների գումարին, օրինակ՝ ընկերությունների միաձուլման արդյունքում ձևավորված արդյունավետության աճը՝ համեմատած նրա առանձին մասերի հետ մինչև միավորումը:

ՍԻՆԹԵԶ [< синтез < հուն. synthesis միահյուսում, միավորում, միակցում], գ. 1. (գիտ.): Գիտական հետազոտության մեթոդ, որ հիմնվում է երևույթն իր մասերի՝ բաղկացուցիչ տարրերի միասնության ու փոխադարձ կապի մեջ ուսումնասիրելու վրա, համադրություն: 2. (փիլ.): Հեգելյան փիլիսոփայության մեջ՝ որևէ բանի զարգացման երրորդ աստիճան, որն իր մեջ ամփոփում է զարգացման նախորդ երկու աստիճանները և լուծում է նրանց ներքին հակասությունները: 3. (քիմ.): Պարզ նյութերի կամ տարրերի միացությամբ բարդ քիմիական նյութերի ստացումը: 4. *փխբ.* Միավորում, միասնացում, համադրություն: 5. (լեզվբ.): Համադրում:

ՍԻՆԹԵՏԻԶՄ [< синтетизм < հուն.], գ. (լեզվբ.): Համադրականություն:

ՍԻՆԹԵՏԻԿ [< синтетический < հուն. synthetikos], ած. 1. Սինթեզին հատուկ, սինթեզի վրա հիմնված: 2. Սինթեզով ստացված, բաղադրական: 3. Իր մեջ առանձին մասերը՝ տարրերը միավորող, համադրական: 4. Ընդհանրացնող, ընդհանրացում ներկայացնող: 5. (լեզվբ.): Սինթետիկ՝ համադրական կառուցվածք ունեցող:

ՍԻՆԹԵՏԻԿԱ [< синтетика < հուն.], գ. 1. (մնծգր.): Սինթետիկ մանրաթելից գործվածքեղեն և դրանից պատրաստված հագուստ: 2. (լեզվբ.): Համադրականություն:

ՍԻՆԽՐՈՆ [< синхронный < հուն. synchronos < syn միասին, միատեղ + chronos ժամանակ], ած. Նույնն է Սինխրոնիկ:

ՍԻՆԽՐՈՆԻԱ [< синхрония < հուն.], գ. 1. Նույնն է՝ Սինխրոնիզմ: 2. (լեզվբ.): Լեզվի տարրերի համակարգն ու հարաբերակցությունը պատմական որևէ հատվածում, համաժամանակություն, համաժամանակայնություն:

ՍԻՆԽՐՈՆԻԶԱՏՈՐ [< синхронизатор < հուն.], գ. (տեխ.): Որոշ կարգի գործընթացների կամ մեխանիզմի աշխատանքների սինխրոնացման սարք:

ՍԻՆԽՐՈՆԻԶՄ [< синхронизм < հուն. synchronismos], գ. 1. Երկու կամ ավելի երևույթների՝ գործընթացների ևն ճշգիրտ համընկնում ըստ ժամանակի, միաժամանակություն, համաժամանակություն: 2. (լեզվբ.): Սինխրոնիկ մեթոդով առաջնորդվող լեզվաբանական ուղղություն: 3. Սինխրոնիկ բնույթ կրող ուսումնասիրություն, սինխրոնիկ մոտեցում:

ՍԻՆԽՐՈՆԻԿ [< синхроничный, синхронический < հուն.], ած. Սինխրոնիզմի բնույթ կրող, համաժամանակյա, միաժամանակյա, նույնաժամանակյա:

ՍԻՆԿԼԻՆԱԼ [< синклиналь < հուն. synkliniai], ած. (երկրբ.): Ապարների շերտերի դեպի ներքև ճկված ծալք: Տարբերում են կոմպենսացիոն, շրջված, թեքված, սնդուկաձև և այլ ծալքեր:

ՍԻՆԿԼԻՆՈՐԻՈՒՄ [< синклинориум < հուն.], գ. (երկրբ.): Խոշոր սինկլինային կառուցվածք, որը բարդացված է մանր ծալքերով և խզումնային խախտումներով:

ՍԻՆԿԼԻՏ [< синклит < հուն. sygkletos, բառացի՝ կանչված, հրավիրված], գ. 1. (պատմ.): Ծերակույտ (Հին Հունաստանում): 2. *փխբ.* Ժողով, խառնաժողով:

ՍԻՆԿՈՊԱ [< синкопа < հուն. synkopē հատում], գ. 1. (լեզվբ. հնց.): Անտիկ քերականության մեջ՝ բառի անշեշտ վանկի կամ ձայնավորի զեղչվելը: 2. (երժշտ.): Տակտի տևողությունների այնպիսի հաջորդականությունը, որի դեպքում ռիթմական շեշտը չի համընկնում մետրականին:

ՍԻՆԿՐԵՏԻԶՄ [< синкретизм < հուն. synkrētismos միավորում, միացում], գ. Միաձուլություն, համաձուլություն, ոչ տարորոշություն, չտարբերակվածություն:

ՍԻՆԿՐԵՏԻՍՏ [< синкретист < հուն.], գ. (կրոն.): Կրոնական սինկրետիզմի հետևորդ:

ՍԻՆՅՈՐ [< синьо′р < իտալ. signor], գ. Պարոն (Իտալիայում տղամարդուն դիմելու քաղաքավարի ձև):

ՍԻՆՅՈՐԱ [< синьора < իտալ. signora], գ. Տիրուհի (Իտալիայում), ամուսնացած կնոջ անվանումը:

ՍԻՆՅՈՐԻՆԱ [< синьорина < իտալ. signorina], գ. Օրիորդ, աղջիկ, չամուսնացած կնոջ անվանումը (Իտալիայում):

ՍԻՆՈԴ [< синод < հուն. synodos ժողով, հավաքույթ], գ. (եկեղ.): 1. Եկեղեցական գործերը վարելու համապետական հոգևոր խորհուրդ, որ կազմվում է բարձրաստիճան հոգևորականներից: 2. Այդ մարմնի շենքը:

ՍԻՆՈԼՈԳԻԱ [< синология < միջին լատ. Sina Չինաստան + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն չինարեն լեզվի և գրականության, Չինաստանի մշակույթի մասին:

ՍԻՆՈՅԿԻԶՄ [< синойкизм < հուն. synoikismos, բառացի՝ համատեղ բնակվել], գ. (պատմ.): Հին պետություններում (Հին Հունաստան, Հին Հռոմ ևն) մեկ պոլիսի մեջ նախկինում ինքնուրույն մի քանի բնակավայրերի կամ քաղաքների տարածայնորեն միաձուլվելու գործընթացը:

ՍԻՆՈՆԻՄ [< синонимы < հուն. synōnymos նույնանուն, համանուն], գ. (լեզվբ.): Հոմանիշ, համանիշ:

ՍԻՆՈՊՍԻՍ [< синопсис < հուն. synopsis դիտում, զննում], գ. (հնց.): Համատեսություն, ընդհանուր տեսություն, ժողովածու, հավաքածու (որևէ հարցի նվիրված նյութերի, հոդվածների):

ՍԻՆՏԱԳՄԱ [< синтагма < հուն. syntagma, բառացի՝ ինչ-որ միավորում՝ փոխկապակցված բան], գ. (լեզվբ.): Շարույթ:

ՍԻՆՏԱԿՍԻՍ [< синтаксис < հուն. syntaxis կցելը, միմյանց միացնելը], գ. (լեզվբ.): Շարահյուսություն:

ՍԻՆՏՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< синтоизм < ճապ. sinto, բառացի՝ աստվածների ուղի (ուսմունք)], գ. (կրոն.): Ճապոնիայի ամենատարածված երկու կրոններից մեկը. 1868-1946 թթ. եղել է Ճապոնիայի պետական կրոնը:

ՍԻՆՈՒՍ [< синус < լատ. sinus գալար, ոլորք, կորագիծ], գ. (մաթ.): Անկյան եռանկյունաչափական ֆունկցիաներից մեկը, որ ուղղանկյուն եռանկյան մեջ հավասար է տվյալ անկյան դիմացի էջի հարաբերությանը ներքնաձիգին:

ՍԻՆՈՒՍՈԻԴ [< синусоида < սինուս + հուն. eidos տեսակ], գ. (մաթ.): y=sinx ֆունկցիայի գրաֆիկը, հարթ կոր, որը ցույց է տալիս սինուսի փոփոխությունը՝ կախված արգումենտի փոփոխությունից:

ՍԻՆՕՊՏԻԿԱ [< синоптика < հուն. synoptikos], գ. (գիտ.): Գիտություն եղանակի և նրա կանխագուշակման մասին, օդերևութաբանության բաժին, եղանակագիտության, օդերևութաբանության:

ՍԻՈՆԻԶՄ [< сионизм < Երուսաղեմի մոտ գտնվող Սիոն լեռան անունից], գ. (քղք.): Հրեական ռեակցիոն ազգայնական շարժում:

ՍԻՈՆԻՍՏ [< сионист < Սիոն անունից], գ. Սիոնիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍԻՍՏԵՄ [< система < հուն. systēma, բառացի՝ ամբողջը, մասերից կազմված, միավորում], գ. 1. Համակարգ: 2. Եղանակ, ձև: 3. Համակարգություն: 4. (քղք.): Հասարակական կարգ՝ կառուցվածք: 5. Որևէ ուսմունքի հիմքը կազմող սկզբունքների ամբողջություն, համակարգ: 6. Որևէ բան կատարելու՝ իրականացնելու մեթոդների՝ եղանակների ամբողջությունը: 7. Իրենց խնդիրներով մեկ ամբողջություն կազմող և կազմակերպչորեն միավորված տնտեսական՝ գիտական ևն կազմակերպությունների՝ հաստատությունների ևն ցանցը: 8. (տեխ.): Փոխադարձաբար իրար հետ կապված և մեկ ընդհանուր նպատակի ծառայող կառույցների՝ մեխանիզմների՝ մեքենաների ևն ամբողջությունը ներկայացնող տեխնիկական կառուցվածք՝ սարած: 9. (տեխ.): Տեխնիկական կառուցվածքի սկզբունք, տիպ, կառուցվածք: 10. Սովորական դարձած կարգ, սովորույթ, սովորություն:

ՍԻՍՏԵՄԱՏԻԶԱՑԻԱ [< систематизация < հուն.] գ. Սիստեմավորում, համակարգում:

ՍԻՍՏԵՄԱՏԻԿ [< систематический < հուն.], ած. 1. Սիստեմային՝ համակարգային: 2. Որոշակի սիստեմի վրա հիմնված՝ հիմնվող, խիստ կարգավորված՝ հետևողական, օրինաչափ: 3. Մշտական, կանոնավոր, պարբերաբար: 4. Սովորական բնույթ կրող, սովորական դարձած:

ՍԻՍՏԵՄԱՏԻԿԱ [< систематика < հուն.], գ. (գիտ.): Բույսերի ու կենդանիների դասակարգման գիտությունը:

ՍԻՍՏՈԼԱ [< систола < հուն. systolē սեղմում, կրճատում], գ. (կզմխս.): Սրտի ռիթմիկ կծկում:

ՍԻՏՈՒԱՑԻԱ [< ситуация < ֆր. situation], գ. (խսկց.): Դրություն, իրադրություն, իրավիճակ:

ՍԻՐԵՆ [< сирень < գերմ. Sirene < լատ. syringa], գ. (բսբ. խսկց.): Յասաման, եղրևանի, շեփորուկ:

ՍԻՐԵՆ(Ա) [< сирена < ֆր. sirène < լատ. sīrēn < հուն. Seirēn], գ. 1. (դից.): Հին հունական դիցաբանության մեջ՝ կիսաթռչուն-կիսակին, ով իր երգով գայթակղում էր նավաստիներին և տանում վտանգավոր և մահացու վայրեր: 2. (կենդբ.): Ծովակով (տարածված էր Բերինգյան ծովում մինչև XVIII դ. երկրորդ կեսը): 3. (տեխ.): Շչակ: 4. (ֆիզ.): Ձայնի ալեչափ:

ՍԻՐՈԿԿՈ [< сирокко < իտլ. sirocco], գ. Հարավային կամ հարավարևելյան ուժեղ քամի, որը նկատվում է Միջերկրական ծովի ավազանում և բերում է Հյուսիսային Աֆրիկայի և Արաբական թերակղզու անապատների չոր ու տաք օդը, խորշակ:

ՍԻՐՈՊ [< ռուս. сироп], գ. (խոհր.): Մրգահյութ, անուշահյութ, օշարակ:

ՍԻՐՏԱԿԻ [< сиртаки < հուն. syrtaki հպում], գ. (արվ.): Հունական խմբային պարի տեսակ:

ՍԻՓԱՅ [< сипай < պարսկ. sipāhi զինվոր < sipah զորք], գ. (պատմ.): Գաղութային

զորքի տեղացի զինվոր Հնդկաստանում (XVIII դ. -ից մինչև 1947 թ.):

ՍԻՖ [< сиф < անգլ. sif < կրճատ ձև coast արժեք + insurance ապահովագրում + freight նավափոխադրավարձ], գ. (առևտր.): Ապրանքի վաճառքի այնպիսի պայման, որի դեպքում ապրանքի արժեքին գումարվում է ապահովագրության վարձը և մինչև վաճառքի վայր փոխադրավարձը:

ՍԻՖԻԼԻԴՈԼՈԳԻԱ [< сифилидология < գերմ. Syphilidologie < սիֆիլիս + հուն. logōs գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որը ուսումնասիրում է սիֆիլիսը, սիֆիլիսագիտություն:

ՍԻՖԻԼԻՍ [< сифилис < ուշ լատ. Syphilus հատուկ անունից՝ գործող անձ իտալացի բժիշկ Ֆրակաստորոյի (1478-1553 թթ.) պոեմում՝ գրված սիֆիլիսին վերաբերող թեմայով], գ. (բժշկ.): Սուր վարակիչ վեներական հիվանդություն:

ՍԻՖԻԼԻՏԻԿ, ած. Սիֆիլիսով հիվանդ:

ՍԻՖՈՆ [< сифон < հուն. siphōn փող, խողովակիկ], գ. 1. Հեղուկը մի ամանից մյուսը փոխադրելու համար գործածվող երկու անհավասար թևքերով խողովակ, ծծափող: 2. Կեղտատար խողովակների կրկնակի կորացրած մասը, որ միշտ լիքն է լինում ջրով, որպեսզի ներքևից գարշահոտը չբարձրանա: 3. Գազային հեղուկներ պահելու աման՝ շիշ:

ՍԻՖՈՆԱՆՄԱՆ, գ. Սիֆոնի նման:

ՍԼԱԼՈՄ [< слалом < նորվեգերեն slalom վայր իջնող հետք], գ. (սպորտ.): Լեռնադահուկային սպորտի ձև, որի ժամանակ մարզիկը դահուկներով վայրէջք է կատարում դարպասներով նշագծված 450-500 մ մրցուղիով՝ հաղթահարելով նաև բնական և արհեստական խոչընդոտներ, ոլորավայրէջք, ոլորասահք:

ՍԼԱՅԴ [< слайд < անգլ. slide], գ. 1. (սպորտ.): Թիանավորդի շարժական նստարան մրցալողային մակույկում (նավակում), որը շարժվում է հետ ու առաջ: 2. (լանկչ.): Գունավոր կամ սև-սպիտակ լուսանկարչական պոզիտիվ պատկերներ՝ թափանցիկ հիմքով (ապակի կամ թաղանթ): Դիտվում է լուսաշերտի դիմաց կամ էկրանի վրա պրոյեկտած:

ՍԼԵՆԳ [< сленг < անգլ. slang], գ. (լեզվբ.): Խոսակցական լեզվի արտահայտչական և հուզական երանգավորում ունեցող բառ, որ շեղվում է ընդունված գրական լեզվի նորմերից: Տերմինն ավելի հաճախ օգտագործվում է՝ կապված Անգլիայում ու ԱՄՆ-ում անգլերենի գործառության հետ:

ՍԼԻՓԵՐ [< слипер < անգլ. to sleep քնել], գ. (հոգեբ.): Անձ, որին հիպնոսով քնեցնում են:

ՍԼՅԱԲԻՆԳ [< слябинг < անգլ. slabbing < slab, բառացի՝ սալ, թիթեղ], գ. (տեխ): Պողպատե խոշոր ձուլակները սլյաբի (մետալուրգիական արտադրության կիսաֆաբրիկատ) վերամշակող շրջասեղմիչ գլոցման հաստոց:

ՍԼՈԳԱՆ [< слоган < անգլ. slogan < to slog ուժեղ հարվածել], գ. (մանգ.): Գովազդային կարճ և դիպուկ, հեշտ հիշվող ասույթ:

ՍԽԵՄԱ [< схема < հուն. schēma կերպ, ձև], գ. 1. Որևէ բանի կառուցվածքը՝ համակարգը կամ մասերի դասավորությունն ու փոխհարաբերությունը ներկայացնող պարզեցրած գծագրական պատկեր, գծապատկեր: 2. Որևէ բանի կազմակերպման՝ իրականացման պլան: 3. Որևէ բանի կառուցվածքն ու հիմնական կետերը ներկայացնող շարադրանք: 4. *փխբ.* Մտածելու՝ դատելու՝ արտահայտելու ընդհանուր և տրաֆարետային բնույթ ստացած եղանակ՝ ձև:

ՍԽԵՄԱՏԻԶՄ [< схематизм < հուն.], գ. 1. Մտածողության՝ շարադրանքի նն պարզունակ սխեմայի բնույթ կրող եղանակ: 2. Այդ եղանակի դրսևորումը՝ արտա-

հայտությունը գրավոր (և բանավոր) խոսքի (գիտական աշխատության և գեղարվեստական երկի ևն) մեջ:

ՍԽԵՄԱՏԻԿ [< схематический < հուն.], ած. 1. Սխեմայով ներկայացված՝ ներկայացվող: 2. Սխեմայի բնույթ կրող: 3. *փխբ.* Պարզունակ, հասարակ:

ՍԽՈԼԱՍՏԻԿ [< схоластик < հուն. scholastikos գիտուն, կրթված, գիտնական], ած. 1. Սխոլաստիկայի հետևորդ՝ կողմնակից: 2. Սխոլաստիկայի բնույթ կրող:

ՍԽՈԼԱՍՏԻԿԱ [< схоластика < լատ. < հուն. scholē դպրոց], գ. 1. (պատմ.): Միջնադարյան փիլիսոփայության մեջ իշխող ուղղություն, որի նպատակն էր եկեղեցական դոգմաների արդարացումն ու հիմնավորումը տրամաբանական փաստարկների օգնությամբ: 2. Կյանքից ու գործնական կիրառությունից կտրված և լոկ վերացական դատողությունների վրա հիմնված գիտելիք՝ գիտություն: 3. Մտահայեցական և ըստ էության անհիմն, բայց արտասովոր՝ ըստ ձևի տրամաբանական թվացող դատողությունների համակարգը:

ՍԿԱԼԴՆԵՐ [< скальды < իսլանդերեն skáld բանաստեղծ], գ. (պատմ.): IX-XIII դդ. նորվեգական և իսլանդական բանաստեղծներ, որոնց բանաստեղծություններում արձանագրված են իրենց ժամանակի փաստերը (վիկինգների ժամանակները), այդ պատճառով էլ դրանք համարվում են պատմական հուսալի սկզբնաղբյուրներ:

ՍԿԱԼՅԱՐ [< скаляр < լատ. scalaris աստիճանաձև, աստիճանական], ած. (մաթ.): Սկալյար մեծություն, որի յուրաքանչյուր արժեքը, ի տարբերություն վեկտորի, կարելի է արտահայտել մեկ (իրական) թվով, և դրա հետևանքով սկալյարի արժեքների համախումբը կարելի է պատկերել գծային սանդղակի վրա:

ՍԿԱՆԵՐ [< сканер < անգլ. scaner], գ. (տեխ.): Պատկերամուտ՝ տեսանելի գրաֆիկական պատկերները համակարգիչ ներմուծող սարք,ծրիչ:

ՍԿԱՆԴԱԼ [< скандал < ֆր. scandale], գ. (խսկց.): 1. Լայնորեն հայտնի դարձած ու մասնակիցներին խայտառակող դեպք՝ իրողություն: 2. Անպատվաբեր՝ դատապարտելի արարք՝ գործողություն: 3. Կռիվ, վեճ ու տուրուդմբոց:

ՍԿԱՆԴԻՈՒՄ [< скандий < հատուկ անուն Scandi (navia)], գ. (քիմ.): SC, տարրերի պարբերական համակարգի IV պարբերության III խմբի քիմական տարր, կարգահամարը՝ 21, ատոմական զանգվածը՝ 44.95:

ՍԿԱՆՎՈՐԴ [< сканворд < անգլ. scanword], գ. Սկանդինավյան խաչբառ. խաչբառի տեսակ, որում հարցերը գրվում են հենց խաչբառի վանդակներում, իսկ բառերն էլ ավելի շատ են տառերով միացած իրար, քան խաչբառի մյուս տեսակներում:

ՍԿԱՌՆԵՐ [< скары < շվեդ. scarn, բառացի՝ ցեխ, թափոններ], գ. (հնք.): Մետասոմատիկ ապարներ, որոնք կազմված են կրամագնեզիումաերկաթախառն սիլիկատներից և այլումինասիլիկատներից:

ՍԿԱՏՈԼ [< скатол < հուն. skōr (skatos) գոմաղբ, կղկղանք], գ. (քիմ.): β-մեթիլինինդոլ, անգույն, գարշահոտ բյուրեղներ: Փոքր քանակներով պարունակվում են

ածխաձյութում, քարածխում:

ՍԿԱՐԼԱՏԻՆ(Ա) [< скарлатина < իտլ. scarlattina], գ. (բժշկ.): Մանկական հասակի սուր վարակիչ հիվանդություն, որն արտահայտվում է բարձր ջերմաստիճանով, ցանով, կոկորդի ցավով:

ՍԿԱՈՒՏ [< скаут < անգլ. scout, բառացի՝ հետախույզ], գ. (քղք.): Ռազմաքաղաքական բնույթի պատանեկան կազմակերպություն:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ, ած. Սկաուտին հատուկ՝ վերաբերող:

ՍԿԱՈՒՏԻԶՄ [< скаутизм < անգլ.], գ. (քղք.): Արտադպրոցական դաստիարակության համակարգ, որի նպատակն է մատաղ սերնդին դաստիարակել տվյալ երկրում գործող հասարակարգի գաղափարներին նվիրվածության ոգով:

ՍԿԱՖԱՆԴՐ [< скафандр < ֆր. scaphandre < հուն. skaphē նավ, նավակ + anēr (andros) մարդ], գ. 1. Ջրասուզորդների հատուկ անջրաթափանց հարմարանք: 2. Ստրատոնավորդների ու տիեզերագնացների հատուկ կոստյում՝ սաղավարտով ու շնչառական հարմարանքով:

ՍԿԵԲ [< скэб < անգլ. scab, բառացի՝ կեղանք (մաշկի վրա)], գ. (հնց.): Շտրեյկբրեխերներին տրվող արհամարհական մականուն Մեծ Բրիտանիայում և այլ անգլիախոս երկրներում:

ՍԿԵՊՏԻԿ [< скептик < հուն. skeptikos], գ. ած. 1. (փիլ.): Սկեպտիցիզմի հետևորդ՝ կողմնակից: 2. (խսկց.): Ամեն ինչի կասկածող՝ ամեն բանի քննադատաբար վերաբերվող մարդ: 3. *փխբ.* Կասկածամիտ մարդ:

ՍԿԵՊՏԻՑԻԶՄ [< скептицизм < հուն. skeptikos նայող, զննող, հետազոտող], գ. 1. (փիլ.): Օբյեկտիվ իրականության ստույգ ճանաչման հնարավորությունը ժխտող փիլիսոփայական ուղղություն: 2. Կասկածամիտ-քննադատական վերաբերմունք, երևույթների՝ իրերի նկատմամբ ծայրահեղ անվստահություն ու կասկածամտություն:

ՍԿԵՏՉ [< скетч < անգլ. sketch], բառացի՝ էսքիզ, ճեպանկար, գ. (թատր.): Երկու, հազվադեպ նաև երեք գործող անձով կարճ պիես: Տարածում է գտել XIX դ. և XX դ. սկզբին՝ հատկապես էստրադայում:

ՍԿԵՐՑՈ [< скерцо < իտլ. scherzo, բառացի՝ կատակ], գ. (երժշտ.): 1. XVI-XVII դդ. Իտալիայում կատակային, կայտառ բնույթի տեքստով միաձայն և բազմաձայն վոկալ պիեսների տարածված անվանում: 2. XVII դ. սկզբից գործիքային պիես, հաճախ գործիքային սյուիտի, իսկ XVIII դ. վերջից սոնատասիմֆոնիկ ցիկլի մասերից մեկը, որպես կանոն՝ երրորդը:

ՍԿԻՆ-ԷՖԵԿՏ [< скин-эффект < անգլ. skin մաշկ, արտաքին շերտ, թաղանթ + էֆեկտ], (էլեկտր.): Մակերևութային էֆեկտ, բարձր հաճախականության էլեկտրամագնիսական դաշտի՝ հաղորդչի միայն արտաքին (մակերևութային) շերտը թափանցելու երևույթը:

ՍԿԻՊ [< скип < անգլ. skip < to skip թռչկոտել], գ. (հնք.): Բեռնամբարձ ինքնաթափ արկղ:

ՍԿԻՖ [< скиф < անգլ. skiff < իտլ. schifo նավ], գ. (սպորտ.): Մրցամակույկ, մրցանավակ:

ՍԿԼԵՐՈԶ [< склероз < հուն. sklērōsis կոշտացում, պնդացում, կարծրացում], գ. (բժշկ.): Ջանազան օրգանների, առավելապես անոթների հիվանդագին կարծրացում ու կրճատում՝ նրանց մեջ եղած այս կամ այն տարրերի նվազման և հյուսվածքներով փոխարինվելու հետևանքով, կարծրախտ:

ՍԿԼԵՐԵՆՔԻՄ [< склеренхима < հուն. sklēros չոր, պինդ + enchyma հյուսվածք],

գ. (բսբ.): Բույսերի (հիմնականում ցողունի և տերևների) մեխանիկական հյուսվածք. բաղկացած է հաստապատ, սովորաբար փայտացած, երկու տիպի բջիջներից:

ՍԿԼԵՐԻՏ [< склерит < հուն. sklēros], գ. (բժշկ.): Աչքի սպիտակապատյանի հիվանդություն:

ՍԿՈԹԼԵՆԴ ՅԱՐԴ [< Скотленд-ярд < անգլ. Scotland Yard], գ. Լոնդոնյան ոստիկանության կենտրոնական վարչություն:

ՍԿՈՐԲՈՒՏ [< скорбут < գերմ. Skorbut], գ. (բժշկ.): Լնդախտ՝ հիվանդություն, որը զարգանում է սննդի մեջ վիտամին C-ի բացակայության պատճառով:

ՍԿՐԱՊ-ՊՐՈՑԵՍ [< скрап-процесс < անգլ. scrap մետաղի ջարդոն + պրոցես], գ. (արտ.): Մարտենյան արտադրության տարատեսակ, երբ բովախառնուրդը հիմնականում բաղկացած է սկրապից (մետալուրգիական արտադրության թափոններ, որոնք օգտագործվում են մետալուրգիական վառարաններում վերահալման համար):

ՍԿՐԵՊԵՐ [< скрепер < անգլ. scraper < scrape քերել], գ. (տեխ.): Կեռաշերեփ՝ ճանապարհներ կառուցելու, խրամատներ, փոսեր փորելու հարմարանք՝ մեքենա:

ՍԿՈՒԱԴՐԱ ԱԴԶՈՒՐԱ [< скуадра адзурра < իտալ. squadra azzurra կապույտ թիմ], (սպորտ.): Իտալիայի ֆուտբոլի հավաքականը:

ՍԿՈՒԴԵՏՈ [< скудетто < իտալ. scudetto վահան], գ. (սպորտ.): Իտալիայի ֆուտբոլի առաջնությունը, մրցամարտ:

ՍԿՈՒՄԲՐԻԱ [< скумбрия < նոր հուն. skumbri], գ. (կենդբ.): Ծովածկան մի տեսակ:

ՍԿՈՒՊՇՉԻՆԱ [< скупщина < սերբ. скупштина < скупни ընդհանուր, միասնական, համատեղ], գ. (քղք.): Նախկին Հարավսլավիայի, այժմ Սերբիայի խորհրդարանը:

ՍԿՈՒՏԵՐ [< скутер < անգլ. scooter < scoot սլանալ], գ. (տեխ.): Կախովի շարժիչով միտեղանի սպորտային նավակ:

ՍՄԱԼԵՑ [< смалец < լեհ. smalec], գ. (խսկց.): Խոզի հալած ճարպ, խոզաճարպ:

ՍՄԱԼՏԱ [< смальта < գերմ. Smalte կամ Schmalte < schmelzen հալել], գ. Գունախիճ՝ գունավոր (այդ թվում ոսկեգույն, արծաթավուն), խորանարդիկների կամ թերթերի տեսքով անթափանցիկ ապակի խճանկարներ ստեղծելու համար:

ՍՄԱԿ [< ռուս. смак], գ. 1. (խսկց.): Ախորժահամություն, ախորժելի համ, համուհոտ: 2. Ռուսական հեռուստատեսային ճանաչված մի հեռուստահաղորդման անվանում: 3. (խսկց.): Խորտկարան, արագ պատրաստվող կերակրի վաճառքի տեղ:

ՍՄԱՅԼ [< смайл < անգլ. smile ժպիտ], գ. (հմկրգչ.): Համացանցում գործածվող նշաններից մեկը, ժպիտ (շրջանագծի մեջ ժպտացող մարդկային դեմք. օգտագործվում է էլեկտրոնային նամակներում՝ իբրև զգացմունքների արտահայտման միջոց):

ՍՄԱՐԹՖՈՆ [< смартфон < անգլ. smart պայծառ, խելացի + հուն. phōne ձայն, հնչյուն], գ. (տեխ.): Բջջային հեռախոսի մի տեսակ՝ բազմաթիվ գործառույթներով:

ՍՄԵՏԱ [< ռուս. смета], գ. (խսկց.): Նախահաշիվ:

ՍՄԵՏԱՆԱ [< ռուս. сметана], գ. (խսկց.): Թթվասեր, հումսեր:

ՍՄՈԳ [< смог < անգլ. smog < smoke ծուխ և fog մառախուղ], գ. Մթնոլորտի խիստ աղտոտվածությունը արդյունաբերական արտանետվածքներով:

ՍՄՈՔԻՆԳ [< смокинг < անգլ. smoking-jachet, բառացի՝ ծխելու բաճկոն], գ. Սև բաճկոնի տեսակ՝ հանդիսությունների համար:

ՍՅՈՒԶԵՐԵՆ [< сюзерен < ֆր. suzerain գերագույն], գ. Գերապետ՝ միջնադարյան Եվրոպայում խոշոր ֆեոդալ, տարածքի գերագույն սեփական (թագավոր, դուքս, կոմս են), որն իր վասալների նկատմամբ ուներ գերիշխանություն:

ՍՅՈՒԺԵ [< сюжет < ֆր. sujet], գ. (արվ. գրկն.) Իրադարձություն կամ միմյանց հետ կապված ու հաջորդաբար զարգացող իրադարձությունների ամբողջություն, որի մեջ բացահայտվում են գործող անձանց բնավորությունները, դիպաշար:

ՍՅՈՒԺԵՏ, գ. Տե՛ս Սյուժե:

ՍՅՈՒԻՏ [< сюита < ֆր. suite], գ. (երժշտ.): Ընդհանուր գեղարվեստական մտահղացումով կամ ծրագրով իրար հետ կապված ու միավորված մի քանի ինքնուրույն մասերի ամբողջություն ներկայացնող երաժշտական ստեղծագործություն:

ՍՅՈՒՐԹՈՒԿ [< сюртук < ֆր. surtout լայն վերնազգեստ], գ. Տղամարդու երկար՝ ներ իրանով երկլանջեզր վերնազգեստ:

ՍՅՈՒՐՊԼՅԱՍ [< сюрпляс < ֆր. surplice < sur վրա + place տեղ], գ. (սպորտ.): Հեծանվային մարզաձևում՝ հեծանվորդի մեկնակային դիրքը:

ՍՅՈՒՐՊՐԻԶ [< сюрприз < ֆր. surprise], գ. (խսկց.): 1. Անսպասելի՝ չնախատեսված նվեր: 2. Անսպասելի դեպք՝ իրողություն, անակնկալ:

ՍՅՈՒՐՌԵԱԼԻԶՄ [< сюрреализм < ֆր. surréalisme, բառացի՝ գերռեալիզմ], գ. (արվ. գրկն.): XX դարի գրականության ու արվեստի ծայրահեղ ձևապաշտական ուղղություններից մեկը:

ՍՅՈՒՐՌԵԱԼԻՍՏ [< сюрреалист < ֆր.], գ.: Սյուրռեալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍՆԱՅՊԵՐ [< снайпер < անգլ. sniper], գ. (հնց.): Նշանառու՝ դիպուկ՝ անվրեպ կրակելու արվեստին հմտորեն տիրապետող հրաձիգ, դիպուկահար:

ՍՆՈԲ [< снob < անգլ. snob], գ. (գրք.): 1. Ազնվականական հասարակության մեջ՝ բարձր խավի հատուկ ճաշակին, սովորություններին ու մոդային հետևելու ձգտող մարդ: 2. Նուրբ և ընտիր ճաշակի, վարվելակերպի և հատկապես հետաքրքիր զբաղմունքի նվիրվելու հավակնորդ:

ՍՆՈԲԻԶՄ [< снобизм < անգլ.], գ. Սնոբի վարքագիծ, սնոբին հատուկ շարժուձև, վարվեցողություն:

ՍՆՈՈՒԲՈՐԴ [< сноуборд < անգլ. snowboard < snow ձյուն + board տախտակ], գ. (սպորտ.): Ձմեռային մարզաձև՝ լեռնային ոլորավայրէջք՝ մեկ կարճ, լայն դահուկով:

ՍՈԴԱ [< сода < իտլ. soda < միջին լատ.], գ. (քիմ.): 1. Ածխաթթվի նատրիումային մի շարք աղերի անվանումը, որոնք օգտագործվում են տեխնիկայի բնագավառում և կենցաղում: 2. Նատրիումի երկկարբոնատ հանդիսացող սպիտակ փոշենման բյուրեղային նյութ, որ օգտագործվում է բժշկության և խոհարարության մեջ:

ՍՈԴԱՅԱՋՈՒՐ, ՍՈԴԱՋՈՒՐ, գ. Մեջը սոդա լուծած ջուր:

ՍՈԴՈՄ [< содом < հին Պաղեստինի քաղաքներից մեկի՝ Սոդոմի անվամբ], գ. 1. *փխբ.* Ժխոր, սաստիկ աղմուկ, իրարանցում, խառնաշփոթություն: 2. (հնց.): Ծայրահեղ անբարոյականություն, անառակություն:

ՍՈԴՈՄ-ԳՈՄՈՐ [< Содом и Гомор < հին Պաղեստինի Սոդոմ և Գոմոր քաղաքների անվամբ], գ. *փխբ.* 1. Անառակության վայր՝ տեղ, անառականոց:

2. *փխբ.* Խառնաշփոթություն, իրարանցում, խառնարարություն:

ՍՈԴՈՄԻՏ [< содомит < տե՛ս Սոդոմ], գ. (խսկց.): 1. Արվագետ, արվամոլ: 2. Անասնապիղծ:

ՍՈԼԴԱՖՈՆ [< солдафон < գերմ. Soldat < իտլ. soldato < soldare վարձել, աշխատավարձ վճարել], գ. (խսկց.): Սահմանափակ ու անտաշ զինվորական, որի հետաքրքրությունները նեղ մասնագիտական գիտելիքներից ու զբաղմունքից այն կողմ չեն անցնում:

ՍՈԼԴՈ [< сольдо < իտլ. soldo], գ. (պատմ.): Իտալական մետաղադրամ (մինչև 1947 թ.):

ՍՈԼԵՆՈԻԴ [< соленоид < հուն. sōlēn փող, խողովակիկ + eidos տեսք, կերպ], գ. (ֆիզ.): Կոճի միջուկի վրա փաթաթված մետաղալարե պարույր, որի շուրջն առաջանում է մագնիսական դաշտ էլեկտրական հոսանք հաղորդելիս:

ՍՈԼԵՑԻԶՄ [< солецизм < ֆր. solécisme < հուն. soloikismos < Փոքր Ասիայում հունական գաղութ հանդիսացող Soloi քաղաքի անունից, որտեղ հունարեն լեզուն կորցրել էր իր մաքրությունը], գ. (մանգ.): Գրական լեզվի, հատկապես շարահյուսության սխալ:

ՍՈԼԻԴ [< солидный < անգլ. solid], գ. (խսկց.): Ամուր, ծանրակշիռ:

ՍՈԼԻԴԱՐԻԶԱՑԻԱ [< солидаризация < լատ. in solido ամբողջապես], գ. (հնց.): Համերաշխում, համերաշխ լինելը (ինչ-որ մեկի՝ գաղափարի ևնի հետ):

ՍՈԼԻԴՈԼ [< солидол < լատ. (solid)us խիտ, պինդ +(ol)eum ձեթ], գ. (քիմ.): Միջին մածուցիկության նավթայուղ, որը ստացվում է կալցիումական օճառներով սինթետիկ կամ բուսական ճարպաթթուների թանձրացմամբ: Օգտագործվում է որպես շփումը փոքրացնող քսայուղ:

ՍՈԼԻՊՍԻԶՄ [< солипсизм < լատ. solus միակ + ipse ինքը], գ. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիզմի ծայրահեղ ձև, ըստ որի իրական գոյություն ունի միայն մտածող սուբյեկտը, իսկ մնացած ամեն ինչ անհատի գիտակցության մեջ է:

ՍՈԼԻՍՏ [< солист < իտլ. solista < լատ. solus մեկ], գ. (երժշտ.): Մենակատար՝ երգը, նվագը կամ պարը մենակ կատարող երգիչ, նվագող, պարող:

ՍՈԼՅԱՐԻԶԱՑԻԱ [< соляризация < գերմ. Solarisation < լատ. solaris արևային], գ. 1. (լանկրչ.): Արևոտում: 2. (բժշկ.): Արևաբուժություն:

ՍՈԼՈ [< соло < իտլ solo, բառացի՝ մեկ, միակ], գ. (երժշտ.): 1. Մեներգ: 2. Մենախաղ: 3. Մենապար: 4. Մենանվագ: 5. *փխբ.* (խսկց.): Միակ, միայնակ, առանձնացած:

ՍՈԼՖԵՋ(Ի)Ո [< сольфеджио, сольфеджо < իտլ. solfeggio], գ. 1. (երժշտ.): Ձայնային վարժություն, ձայնանիշների անվանումները տալով երգելը՝ լսողության և ձայնի մշակման և ձայնանիշները վարժ կարդալու հմտության համար: 2. Ուսումնական առարկա, որի նպատակն է սովորողների լսողության զարգացումը:

ՍՈԿԵՐ [< соккер < անգլ. soccer], գ. (սպորտ.): Ֆուտբոլի տարատեսակ. տարածված է ԱՄՆ-ում և որոշ այլ երկրներում:

ՍՈՄԱ I [< Сома < հին հնդ. sōma մարմին], գ. (դից.): Աստվածային ըմպելիք և դրա (հետագայում նաև լուսնի) աստվածությունը հին հնդկական դիցաբանության մեջ:

ՍՈՄԱ II [< сома < հուն. sōma մարմին], գ. (կենսբ.): Կենդանիների և բույսերի բջիջների (բացառությամբ՝ սեռականի) ընդհանուր անվանումը: Տերմինն առաջարկվել է գերմանացի կենդանաբան Ա. Վայսմանը՝ նշելու համար օրգանիզմի մարմինը՝ ի հակադրություն սեռական բջիջների միջոցով սերնդեսերունդ հաղորդ-

վող սաղմնային ժառանգական նյութի:

ՍՈՄԱՏԻԿ [< соматический < ֆր. somatique < հուն. sōma մարմին], ած. Մարմնական, մարմնին վերաբերող:

ՍՈՄԱՏՈԼՈԳԻԱ [< соматология < գերմ. Somatologie < հուն.], գ. (բժշկ.): Մարմնագիտություն:

ՍՈՄԲՐԵՐՈ [< сомбреро < իսպ. sombrero < sombra ստվեր], գ. Իսպանական լայնեզր գլխարկ:

ՍՈՄԻՏՆԵՐ [< сомиты < հուն. sōma մարմին], գ. (կենդբ.): Առաջնային հատվածներ՝ զույգ մետամեր գոյացություններ որոշ անողնաշարավորների (օղակավոր որդեր, միջատներ), բոլոր քորդավոր կենդանիների և մարդու սաղմում:

ՍՈՄՆԱՄԲՈՒԼԻԶՄ [< сомнамбулизм < գերմ. Somnambulismus < լատ. somnus քուն + ambulare զբոսնել], գ. (բժշկ.): 1. Լուսնոտություն, վերնոտություն: 2. Հիպնոսացածություն, պայծառատեսություն:

ՍՈՄՆՈԼՈԳԻԱ [< сомнология < լատ. somnus քուն + հուն. logōs գիտություն], գ. (մանգ.): Քնագիտություն, երազագիտություն՝ գիտություն քնի և երազների մասին:

ՍՈՅԱ [< соя < ճապ. shoyu], գ. 1. (բսբ.): Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող հատիկաբույս: 2. Այդ բույսի հատիկները, որ լայն գործածություն ունեն սննդարտադրության, ինչպես նաև տեխնիկայի բնագավառում: 3. (խոհր.): Այդ հատիկներից պատրաստված ալյուր:

ՍՈՅՈՒԶ [< ռուս. союз], գ. (հնց.): 1. Միություն: 2. (քեր. հնց.): Շաղկապ: 3. (“Союз") շուրջերկրյա ուղեծրով թռիչքներ կատարելու համար նախատեսված խորհրդային նավերի սերիայի անվանումը:

ՍՈՆԱՆՏ [< сонант < լատ. sonans ձայնեղ, հնչող], գ. ած. (լեզվբ. հնց.): Ձայնորդ, բաղաձայն հնչյունի տեսակ, որի մեջ ձայնը գերազանցում է աղմուկին:

ՍՈՆԱՏ [< соната < իտալ. sonata < լատ. sonare հնչել], գ. (երժշտ.): Տարբեր բնույթի ու տեմպերի՝ երեք կամ չորս մասից բաղկացած երաժշտական ստեղծագործություն:

ՍՈՆԱՏԻՆ(Ա) [< сонатина < իտալ. sonatina], գ. (երժշտ.): Փոքրիկ ու պարզ կառուցվածքով սոնատ:

ՍՈՆԵՏ [< сонет < իտալ. sonetto < պրովանս. sonet < son հնչյուն], գ. (տոչփ.): Տասնչորս տողանի բանաստեղծություն, որ բաղկացած է երկու քառատող և երկու եռատող տներից. առաջացել է XIII դ. իտալական (սիցիլիական) պոեզիայում:

ՍՈՆՈՐ [< сонорный < լատ. sonorus հնչուն, հնչեղ], ած. Ձայնորդային:

ՍՈՊԿԱ [< ռուս. сопка], գ. 1. Կլորավուն գագաթով բլուրների կամ մեկուսացած լեռների ընդհանուր անվանումը Ղազախստանում, Անդրբայկալում են: 2. Հնագիտության մեջ՝ անվանում են դամբանաթմբերը (4 մ և ավելի բարձրությամբ):

ՍՈՊՐԱՆՈ [< сопрано < իտալ. soprano], գ. (երժշտ.): Կանացի ամենաբարձր ձայնը, ինչպես և այդ ձայնը ունեցող երգչուհի:

ՍՈՍԻՍԿԻ [< сосиска < ֆր. saucisse < միջին լատ. salsicia < լատ. salsus աղի, աղ դրած], գ. (խսկց.): Նրբերշիկ:

ՍՈՎԵՏ [< ռուս. совет], գ. (հնց.): 1. Խորհուրդ՝ պետական իշխանության մարմին, որը հանդիսանում էր սոցիալիստական հասարակարգի քաղաքական կազմակերպության ձևը: 2. (խսկց.): Սովետական՝ խորհրդային իշխանություն (արդեն փլուզված): 3. (խսկց.): Սովետական՝ Խորհրդային Միություն (արդեն փլուզված):

ՍՈՎԵՏԱՀԱՅ, գ. ած. (պատմ.): Սովետական (խորհրդային) Հայաստանի հայ: 2. Սովետական (խորհրդային) Հայաստանին հատուկ՝ վերաբերող՝ պատկանող: 3. Հայաստանյան սովետական (խորհրդային) շրջանին հատուկ՝ վերաբերող՝ պատկանող, խորհրդահայ:

ՍՈՎԻՆՖՈՐՄԲՅՈՒՐՈ [< ռուս. советское информационное бюро], գ. *հպվ.* (հնց.): Սովետական տեղեկատվական (ինֆորմացիոն) բյուրո:

ՍՈՎԽՈԶ [< ռուս. совхоз < советское хозяйство], գ. *հպվ.* (հնց.): Սովետական՝ խորհրդային տնտեսություն:

ՍՈՎՆԱՐԿՈՄ [< ռուս. совнарком < совет народных комиссаров], գ. *հպվ.* (հնց.): Ժողկոմխորհ՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ:

ՍՈՐԲԵՆՏՆԵՐ [< сорбенты < լատ. sorben (sorbentis) կլանող], գ. Կլանող նյութեր, շրջապատից գազեր, գոլորշիներ և լուծված նյութեր ընտրողաբար կլանող պինդ կամ հեղուկ նյութեր:

ՍՈՐԲԻՏ I [< сорбит < անգլ. գիտնական Հ. Կ. Սորբիի (H. C. Sorby 1826-1908թթ.) անունից], գ. (մետղգ.): Պողպատի կառուցվածքային բաղադրիչ:

ՍՈՐԲԻՏ II [< сорбит < լատ. sorbus արոսի], գ. (քիմ.): Օրգանական միացություն, ալիֆատիկ շարքի վեցատոմանի սպիրտ: Օգտագործվում է որպես շաքարին փոխարինող նյութ:

ՍՈՐԲՈՆ [< Сорбонна < ֆր. Sorbonne], գ. Փարիզի համալսարան, Ֆրանսիայի խոշորագույն ուսումնական և գիտական կենտրոններից: Հիմնադրվել է 1215 թ. չորս ֆակուլտետներով՝ արվեստների, կանոնական իրավունքի, աստվածաբանության և բժշկության:

ՍՈՐԲՈՒՄ [< сорбия < լատ. sorbere կլանել], գ. (քիմ.): Պինդ կամ հեղուկ նյութի՝ շրջապատում գտնվող գազերի, հեղուկների և լուծված նյութերի մոլեկուլներ կլանելու երևույթը:

ՍՈՐԳՈ [< сорго < իտլ. sorgo], գ. 1. (բսբ.): Հացազգիների ընտանիքին պատկանող բույս, նեգրավարսակ: 2. Այդ բույսի հատիկները, որոնք օգտագործվում են իբրև սննդամթերք, անասնակեր, ինչպես և տեխնիկական նպատակներով:

ՍՈՐԻՏ [< сорит < հուն. sōritēs < sōros կույտ], գ. (տրամբ.): Բարդ-կրճատ սիլլոգիզմ, որն առաջանում է գծային պոլիսիլլոգիզմից, նրանում պրոսիլլոգիզմների եզրակացությունները բաց թողնելու (լեզվական առումով) հետևանքով:

ՍՈՐՈՐԱՏ [< сороват < լատ. soror քույր], գ. Սովորույթ, որի համաձայն տղամարդն ամուսնական հարաբերությունների մեջ էր մտնում մի քանի կանանց՝ հարազատ քույրերի կամ զարմուհիների հետ: Սա դիտվում է իբրև խմբամուսնության մնացուկ:

ՍՈՐՏ [< сорт < ֆր. sorte], գ. (խսկց.): գ. Տեսակ:

ՍՈՐՏԱՄԵՆՏ [< сортамент < աղավաղված ֆր. assortiment], գ. (հնց.): Տեսականի:

ՍՈՐՏԱՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գ. Սորտի փորձարկում, ստացված մշակութային բույսի նոր տեսակի փորձարկում:

ՍՈՐՏԻՄԵՆՏ [< сортимент < աղավաղված ձև ֆր. assortiment], գ. (տեխ. հնց.): Նմուշանի, նմուշների շարք, տեսականի, տեսակաշարք, տեսակակազմ:

ՍՈՑԻԱԼ [< социальный < լատ. socialis հասարակական], Տե՛ս Սոցիալական:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ած. 1. Հասարակությանը հատուկ, հասարակության մեջ մարդկանց հարաբերություններին վերաբերող՝ հատուկ: 2. Հասարակության դասա-

կարգերին հատուկ՝ վերաբերող: 3. Այս կամ այն հասարակարգի՝ հասարակական խմբավորման միջավայրի հետ կապված՝ դրանցով պայմանավորված: 4. Հասարակության արտադրական հարաբերությունների փոփոխմանը՝ հասարակարգի վերակառուցմանը ձգտող՝ հետապնդող:

ՍՈՑԻԱԼԻԶՄ [< социализм < լատ.], գ. 1. (պատմ.): Այնպիսի հասարակարգ, որի արտադրական հարաբերությունների հիմքն է կազմում արտադրամիջոցների հանրային սեփականությունը, համայնավարություն: 2. (գիտ.): Ուսմունք սոցիալիստական հասարակարգի կառուցման մասին:

ՍՈՑԻԱԼԻՍՏ [< социалист < լատ.], գ. ած. (քղք.): 1. Սոցիալիզմի կողմնակից՝ հետևորդ, համայնավար: 2. Սոցիալիստական կուսակցության անդամ:

ՍՈՑԻՈԼՈԳ [< социолог < լատ. + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Սոցիոլոգիայի մասնագետ, հասարակագետ:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ [< социология < լատ. soci(etas) հասարակություն + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Գիտություն հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին, հասարակագիտություն:

ՍՈՑԻՈԼՈԳԻԶՄ [< социологизм < լատ. + հուն.], գ. 1. Երևույթների և դեպքերի հասարակական-պատմական պայմանավորվածության պարզունակ ըմբռնում, որ անտեսում է հասարակական կեցության տարբեր ձևերի յուրահատուկ բնույթը: 2. Գիտության տարբեր բնագավառներում ուսումնասիրվող երևույթները անպայմանորեն հասարակական կյանքի անմիջական արտահայտությունը համարելու մատերիալիստական հայեցակետ: 3. Երևույթներն ու իրողությունները իրենց հասարակական պայմանավորվածության տեսակետից քննության առնելու հայեցակետի հնացած անվանումը:

ՍՈՑԻՈՄԵՏՐԻԱ [< социометрия < լատ. soci(etas) հասարակություն, ընկերություն + հուն. metron], գ. (մանգ.): Փոքր խմբերում միջանձնային հարաբերությունները բացահայտելու և բնութագրելու եղանակ:

ՍՈՑԻՈՒՄ [< социум < լատ. socium ընդհանուր, համատեղ], գ. (փիլ.): Հասարակական, տնտեսական, մշակութային կյանքի ընդհանրություն ունեցող մարդկանց խումբ՝ կոլեկտիվ, հանրույթ:

ՍՈՈՒՍ [< соус < ֆր. sause], գ. (խոհր.): 1. Մսով և որևէ բանջարեղենով պատրաստվող կերակուր: 2. Ալյուրով, քացախով, ձվով և զանազան համեմունքներով պատրաստվող ամոքանք, որ գործածվում է զանազան կերակուրների հետ:

ՍՈՓԵՍՏ [< софист < հուն. sophistēs], գ. ած. 1. Սոփեստություններ անող մարդ: 2. Իմաստակ: 3. (պատմ.): Նույնն է՝ Սոֆիստ:

ՍՈՖԻԶՄ [< софизм < հուն. shophisma], գ. 1. Սոփեստաբանություն, սոփեստություն: 2. (պատմ.): Նույնն է՝ Սոֆիստիկա:

ՍՈՖԻՍՏ [< софист < հուն. sophistēs հմուտ, իմաստուն, հետագայում նաև՝ իմաստուն], գ. (պատմ.): Հունաստանում՝ մ.թ.ա. V-IV դդ. փիլիսոփայական ուսմունքի հետևորդ:

ՍՈՖԻՍՏԻԿԱ [< софистика < հուն.], գ. 1. Սոֆիստների փիլիսոփայական ուսմունքը: 2. Սոփեստաբանություն: 3. Նույնն է՝Սոֆիզմ:

ՍՈՖՈՐԱ [< софора < լատ. Sophora], գ. (բսբ.): Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող բույս:

ՍՊԱԳԵՏԻ [< спагетти < իտլ. spaghetti պարան < spago պարան], գ. (խոհր.): Մակարոնի երկար և բարակ տեսակ:

ՍՊԱԶՄ [< спазм, спазма < հուն. spasma], գ. (բժշկ.): Կծկում, կծկանք:

ՍՊԱԶՄՈՖԻԼԻԱ [< спазмофилия < հուն. spasma + fileō սիրում եմ, հակված եմ], գ. (բժշկ.): Վաղ մանկական տարիքի երեխաների հիվանդություն, որը պայմանավորված է օրգանիզմում կալցիումի փոխանակության խանգարմամբ և բնորոշվում է նյարդային համակարգի գրգռականության բարձրացմամբ ու ջղաձգություններ առաջացնելու հակումով:

ՍՊԱՄ [< спам < անգլ. spam < Spam անվան փոխաբերաբար գործածումից < Spam ֆիրմա, որն արտադրում է երշիկի խճողակ՝ ֆարշ], գ. (ինֆորմ.): Էլեկտրոնային փոստով գովազդային բնույթի տեղեկատվության մասսայական ուղարկում առանց բաժանորդների պահանջի:

ՍՊԱՆԻԵԼ [< спаниель < անգլ. spaniel < իսպ. español իսպանական], գ. (կենդբ.): Որսորդական շների ցեղ և այդ ցեղի շուն (երկար մորթով՝ մարմնով):

ՍՊԱՐԻՆԳ [< спарринг < անգլ. spurring], գ. (սպորտ.): Թեթև, մարզումային մրցամարտ՝ բուն մրցամարտին նախապատրաստվելու համար:

ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ [< спартакиада < հատկանուն Спартак + (олимп)иада], գ. (սպորտ.): Մարզական ընկերությունների ու թիմերի զանգվածային մրցություն՝ զանազան ձևերի առաջնության համար:

ՍՊԱՐՏԱՑԻ(ՆԵՐ) [< спартанец < հատուկ անունից], գ. 1. Հին Հունաստանի Սպարտա քաղաք-պետության քաղաքացի: 2. *փխբ.* Շքեղություն և պերճանք մերժող, խիստ (ժուժկալ) կյանք վարող մարդ:

ՍՊԵԼԵՈԼՈԳԻԱ [< спелеология < հուն. spēlaion անձավ + logos ուսմունք], գ. (գիտ.): Անձավագիտություն՝ գիտություն, որ զբաղվում է անձավների համընդհանուր ուսումնասիրությամբ:

ՍՊԵԿՏՐ [< спектр < լատ. spectrum տեսանելի, տեսնելը], գ. (օպտ.): 1. Բազմագույն շերտ, որ ստացվում է լուսային ճառագայթների՝ որևէ բեկող միջավայրով կամ պրիզմայի միջով անցնելիս, լուսակ: 2. Շիկացած մարմնի՝ նյութի ճառագայթումը հատուկ տեսողական (օպտիկական) սարքերի միջով անցկացնելիս ստացվող և ճառագայթող մարմնի քիմիական բաղադրությունից կախված գլխավոր շերտ կամ գունավոր գծերի ամբողջություն:

ՍՊԵԿՏՐԱԳԻՐ, գ. Լուսակագիր:

ՍՊԵԿՏՐԱԼ [< спектральный < լատ.], ած. (օպտ.): Սպեկտրին հատուկ, սպեկտրի օգնությամբ կատարվող՝ ուսումնասիրվող:

ՍՊԵԿՏՐՈԳՐԱՄՄԱ [< спектрограмма < լատ. spectrum տեսանելի + հուն. gramma], գ. (ֆիզ.): Լուսակագիր:

ՍՊԵԿՏՐՈԳՐԱՖ [< спектрограф < լատ. spectrum տեսանելի + հուն. graphō գրում եմ], գ. (ֆիզ.): Լուսապատկերագիր:

ՍՊԵԿՏՐՈԳՐԱՖԻԱ [< спектрография < լատ. spectrum տեսանելի + հուն. graphō գրում եմ], գ. (ֆիզ.): Լուսակագրություն, լուսապատկերագրություն:

ՍՊԵԿՏՐՈՄԵՏՐ [< спектрометр < լատ. spectrum + հուն. metron չափ], գ. (ֆիզ.) Լուսակաչափ:

ՍՊԵԿՏՐՈՄԵՏՐԻԱ [< спектрометрия < լատ. + հուն.], գ. (ֆիզ.): Լուսապատկերաչափություն:

ՍՊԵԿՏՐՈՍԿՈՊ [< спектроскоп < լատ. spectrum + հուն. skop(eō) նայում եմ, դիտում եմ, զննում եմ], գ. (ֆիզ.) Լուսապատկերադիտակ:

ՍՊԵԿՏՐՈՍԿՈՊԻԱ [< спектроскопия < լատ. + հուն.], գ. (գիտ.): Ֆիզիկայի բաժին, որը զբաղվում է էլեկտրամագնիսական ճառագայթման սպեկտրների ուսումնասիրությամբ:

ՍՊԵԿՏՐՈՍԿՈՊԻԿ [< спектроскопический < լատ. + հուն.], ած. (ֆիզ.): Լուսակաղիտական, լուսակաղիտակային:

ՍՊԵԿՈՒԼՅԱՆՏ [< спекулянт < գերմ. Spekulant լատ.], գ. ած. Սպեկուլյացիայով (տե՛ս) զբաղվող, շահագետ, չարաշահորդ, վերավաճառող:

ՍՊԵԿՈՒԼՅԱՏԻՎ I [< спекулятивный < լատ., տե՛ս Սպեկուլյացիա (I)], ած. Սպեկուլյացիայի վրա հիմնված, սպեկուլյացիա հանդիսացող:

ՍՊԵԿՈՒԼՅԱՏԻՎ II [< спекулятивный < լատ. տե՛ս Սպեկուլյացիա (II)], ած. Սպեկուլյացիա պարունակող, սպեկուլյացիայի վրա հիմնված, մտահայեցական:

ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻԱ I [< спекуляция < լատ. speculatio հետամտում, մանրազնին], գ. 1. Արժեթղթերի գնում և վերավաճառում՝ տատանվող գների տարբերությամբ շահ ստանալու նպատակով, արժեթղթերի գործարք: 2. Մթերքների, լայն սպառման առարկաների ևն գնում ու վերավաճառում՝ առքի և վաճառքի գների տարբերությամբ շահ ստանալու նպատակով, չարաշահություն: 3. *փխբ.* Շահադիտական նպատակներով որևէ բանի օգտագործում՝ չարաշահում, շահարկում:

ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻԱ II [< спекуляция < լատ. speculatio հայեցություն, մտահայեցություն], գ. (փիլ.) Փիլիսոփայական մտահայեցական համակարգ, մտահայեցական ուսմունք:

ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻՈՆ [< спекуляционный < լատ.], ած. Սպեկուլյացիային հատուկ, սպեկուլյացիայի բնույթ կրող, սպեկուլյացիայի վրա հիմնված:

ՍՊԵՐՄԱ [< сперма < հուն. sperma սերմ], գ. (կենսբ.): Սերմնահեղուկ:

ՍՊԵՐՄԱՏՈԳԵՆԵԶ [< сперматогенез < հուն. sperma (spermatos) սերմ + genesis ծագում], գ. (կենսբ.): Սերմնագոյացում՝ կենդանիների և բազմաթիվ բույսերի տարբերակված հապլոիդ սերմնաբջիջների առաջացումը արական սեռական դիպլոիդ բջիջներից:

ՍՊԵՐՄԱՏՈԶՈԻԴ [< сперматозоид < հուն. sperma (spermatos) սերմ + zōon կենդանի + eidos տեսակ, կերպ], գ. (կենսբ.): Սերմնաբջիջ՝ մարդու, կենդանիների և բազմաթիվ բույսերի արական սեռական բջիջ:

ՍՊԵՐՄԱՑԵՏ [< спермацет < հուն. sperma + kētos հսկա ծովային կենդանի՝ կետ], գ. (կենսբ.): Մոմանման նյութ, որը ստացվում է կաշալոտի գլխի մեծ ֆիբրոզային պարկի հեղուկ կենդանական մոմի սառեցումից: Նախկինում սրանից պատրաստել են մոմեր, այժմ այն օգտագործվում է որպես քսանյութ և քսուքների հիմք:

ՍՊԵՐՄԻՆ [< спермин < հուն. sperma], գ. (կենսբ.): Սերմնանյութ:

ՍՊԵՑԻՖԻԶՄ [< специфизм < լատ.], գ. (պատմ.): Հայկական սոցիալ-դեմոկրատական հոսանք, որը ազգայնական նկատառումներով հայ բանվոր դասակարգի պայքարը ձգտում էր խզել պրոլետարիատի ընդհանուր քաղաքական պայքարից:

ՍՊԵՑԻՖԻԿ [< специфический < լատ.], ած. Յուրահատուկ, առանձնահատուկ:

ՍՊԵՑԻՖԻԿԱ [< специфика < լատ. specificus տեսակորոշիչ, տեսակային], գ. Յուրահատկություն, առանձնահատկություն. այն, ինչ հատուկ է հատկապես տվյալ առարկային կամ երևույթին:

ՍՊԻԴ [спид < Синдром приобретенного иммунодефицита < անգլ. AIDS], գ. (բժշկ.. հպվ.): ՁԻԱՀ՝ ձեռքբերովի իմունաանկումային հիվանդություն, որի ընթացքում օրգանիզմը կորցնում է դիմադրողականությունը:

ՍՊԻԴՈՄԵՏՐ [< спидометр < անգլ. speed արագություն+ հուն. metron չափ], գ. (տեխ.): Մեքենայի շարժման արագությունը և անցած տարածությունը ցույց տվող սարք:

ՍՊԻԼԻՏ [< спилит < հուն. spilos բիծ], գ. (հնք.): Հնատիպ բազալտային ապար, որի մեջ դաշտային սպաթը ներկայացված է երկրորդային ալբիտով: Առաջացել է ստորջրյա ժայթքումների հետևանքով:

ՍՊԻԿԵՐ, ՍՊԻՔԵՐ [< спикер < անգլ. speaker, բառացի՝ խոսող], գ. 1. (քղք.): Անգլիական համայնքների պալատի նախագահ: 2. (քղք.): Որևէ երկրի պառլամենտի ղեկավար, խոսնակ: 3. (սպորտ.): Բռնցքամարտի մրցության արդյունքների մասին դատավորների կայացրած որոշումը հանդիսականներին հայտնող անձ:

ՍՊԻՆ [< спин < անգլ. spin պտտվել], գ. (ֆիզ.): Տարրական մասնիկի շարժման քանակի սեփական պահը, որն ունի քվանտային բնույթ և կապված չէ մասնիկի՝ որպես ամբողջության տարածական շարժման հետ:

ՍՊԻՆԻՆԳ [< спиннинг < անգլ. spinning], գ. (սպորտ.): Գիշատիչ ձկներ որսալու մարզական սարք:

ՍՊԻՆՏԱՐԻՍԿՈՊ [< спинтарископ < հուն. spinthēr կայծ + skopēo տեսնում եմ], գ. (ֆիզ.): α- մասնիկների անմիջական դիտման ու հաշվման ցուցադրական սարք:

ՍՊԻՉՐԱՅԹԵՐ [< спичрайтер < անգլ. speech writer < speech խոսք, ելույթ + to write գրել, փոխադրել], գ. (քղք. մսնգ.): Պետական բարձրաստիճան պաշտոնյայի համար ելույթներ գրող՝ կազմող անձ:

ՍՊԻՐԱԼ [< спираль < լատ. spira գալար, ոլորք], գ. (խսկց.): 1. Պարույր, գալար: 2. (մաթ.): Պալարաձև, գալարաձև:

ՍՊԻՐԱԼԱՁԵՎ, ած. Սպիրալի՝ պարույրի ձև ունեցող, պարուրաձև:

ՍՊԻՐԱՆՏ [< спирант < լատ. spirans (spirantis) շնչող], գ. ած. (լեզվբ. հնց.): 1. Հազագային: 2. Շփական (հնչյունների մասին):

ՍՊԻՐԻՏ [< спирит < լատ. spiritus ոգի, հոգի], գ. Սպիրիտիզմով՝ ոգեհարցությամբ զբաղվող անձ, որ հավատում է մեռածների հոգիների հետ հաղորդակցվելու հնարավորությանը:

ՍՊԻՐԻՏԻԶՄ [< спиритизм < լատ. spiritus հոգի, ոգի], գ. Ոգեհարցուկ, ոգեհարցություն, ոգետեսություն, ոգեհմայություն, ոգեկոչություն:

ՍՊԻՐԻՏՈՒԱԼԻԶՄ [< спиритуализм < լատ. spiritualis հոգեկան], գ. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայական ուսմունք, որը աշխարհի էությունն ու նախահիմքն է համարում ոգին և մատերիայի ճանաչողության հնարավորությունը ժխտելով՝ գիտությունը փոխարինում է հավատով:

ՍՊԻՐԻՏՈՒԱԼԻՍՏ [< спиритуалист < լատ.], գ. Սպիրիտուալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՍՊԻՐՈԽԵՏ(ՆԵՐ) [< спирохет(ы) < լատ. spira գալար + հուն. chaitē մազեր], գ. (կենսբ.): Միկրոօրգանիզմներ, որոնց բջիջները նման են բարակ ոլորված թելի (տրամագիծը՝ 0.1-0.6, երկարությունը՝ 5-50 մկմ): Սրանք միջանկյալ տեղ են զբաղեցնում նախակենդանիների և բակտերիաների միջև:

ՍՊԻՐՈԽԵՏՈԶ(ՆԵՐ) [< спирохетоз(ы) < սպիրոխետ + հուն. eidos տեսակ], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների համաճարակագիտական և կլինիկական դրսևորումներով իրարից տարբերվող հիվանդությունների խումբ, որոնց հարուցիչները սպիրոխետներն են:

ՍՊԻՐՏ [< спирт < լատ. spiritus], գ. 1. (խոհ.): Ալկոհոլով հարուստ բռնկվող հեղուկ, որ ստացվում է օսլայով ու շաքարով հարուստ մթերքների թորումով: 2. (քիմ.): Իրենց բաղադրության մեջ թթվածնի ատոմի հետ ջրածնի ատոմի միացում պարունակող օրգանական մի շարք միացությունների անվանումը:

ՍՊՈՆԳԻՈԼԻԹ(Տ) [< спонгиолит < հուն. spongos սպունգ + lithos քար], գ. (հնք.): Կայծքարային ապար. կազմված է օպալից (խալցեդոն) և կայծքարային սպունգների բազմաթիվ սպիկուլներից:

ՍՊՈՆԴԵՅ [< спондей < հուն. spondeios], գ. (տոչփ.): 1. Դաշնաշեշտ՝ անտիկ տաղաչափության մեջ՝ քառաչափ ոտք, որը կազմված էր երկու երկար վանկերից: 2. Այդ չափով գրված բանաստեղծության տեսակ Հին Հունաստանում:

ՍՊՈՆԴԻԼԻՏ [< спондилит < հուն. spondylos ողնաշար], գ. (բժշկ.): Ողնաշարի բորբոքային խրոնիկ հիվանդություն՝ տուբերկուլյոզային բնույթի:

ՍՊՈՆՍՈՐ [< спонсер < անգլ. sponsor հովանավոր], գ. (խսկց.): Հովանավոր (անձ կամ կազմակերպություն), մեկենաս:

ՍՊՈՆՏԱՆ [< спонтанный < լատ. spontaneus ինքնաբեր(ական)], ած. (խսկց.): Ինքնաբերական, ինքնակա, առանց դրսի ազդեցության, ինքն իր մեջ կատարվող:

ՍՊՈՐ [< спора < հուն. spora սերմ], գ. (կենսբ.): 1. Մի քանի բուսական օրգանիզմների (մամուռների, սնկերի, պտերների) մանրադիտական սաղմը, որ ծառայում է ինչպես բազմացման ու տարածման, այնպես էլ պահպանման նպատակին (օր.՝ բակտերիաների սպորները): 2. Սպորավորների դասին պատկանող միաբջիջ պարզագույն կենդանիների սաղմը:

ՍՊՈՐԱՎՈՐ, ած. Սպոր(ներ) ունեցող:

ՍՊՈՐԱՆԳԻՈՒՄ [< спорангий < հուն. spora + angeion անոթ], գ. (կենսբ.): Բույսերի օրգան, որտեղ զարգանում են սպորները:

ՍՊՈՐՏ [< спорт < անգլ. sport], գ. 1. (մարզ.): Մարմնի զարգացմանը և ամրապնդմանը ծառայող զանազան կարգի մարմնամարզությունների, խաղերի ու վարժությունների ընդհանուր անվանումը: 2. *փխբ.* Որևէ բանով զբաղվելը որպես հաճելի ժամանց, մարզանք:

ՍՊՈՐՏԱՅԻՆ, ած. Մարզական:

ՍՊՈՐՏԱՍԵՐ, գ. ած. Մարզասեր:

ՍՊՈՐՏՍՄԵՆ [< спортсмен < անգլ. sportsman], գ. (խսկց.): Մարզիկ, սպորտով՝ մարմնամարզությամբ պարբերաբար զբաղվող մարդ:

ՍՊՈՐՏՍՄԵՆՈՒՀԻ, գ. Մարզիկուհի, մարզուհի:

ՍՊՐԻՆԿԼԵՐ [< спринклер < անգլ. sprinkler < to sprink ցայտացրիվ անել], գ. (տեխ.): Ցայտաջրմուղ (բազմաթիվ անցքերով). օգտագործվում է հրշեջ համակարգերում:

ՍՊՐԻՆՏ [< спринт < անգլ. sprint], գ. (սպորտ.): Թեթև ատլետիկայում, չմշկասահքում, հեծանվավազքում և մի շարք այլ մարզաձևերում՝ մրցության տեսակ (արագությամբ կարճ տարածության հաղթահարում):

ՍՊՐԻՆՏԵՐ [< спринтер < անգլ. sprinter], գ. (սպորտ.): Կարճ տարածություն հաղթահարող մարզիկ (թեթև ատլետիկայում, չմշկավազքում, հեծանվավազքում և մի շարք այլ մարզաձևերում):

ՍՎԱՀԻԼԻ [< суахили < արաբ. swachili, բառացի՝ մերձափնյա], գ. 1. (լեզվբ.): Աֆրիկայում լայն տարածում ունեցող լեզուներից մեկը: 2. Այդ լեզվով խոսող ժողովուրդը:

ՍՎԱՍՏԻԿԱ [< свастика < սանսկրիտ svastika < svasti կենսունակ], գ (պատմ.): Ճանկախաչ, կեռախաչ (գերմանական ֆաշիզմի խորհրդանշանը):

ՍՎԻՆԳԵՐ [< свингер < անգլ. to swing օրորվելով իրար մոտենալ], գ. Ազատ սեքսի կողմնակից ամուսնական զույգ, որը նախընտրում է սեքսով զբաղվել ամուսնական այլ զույգերի հետ միաժամանակ:

ՍՎԻՏԱ [< свита < ֆր. suite < suivre ուղեկցել], գ. 1. (հնց.): Շքախումբ (բարձրաստիճան անձին ուղեկցող մարդկանց խումբ): 2. (երկրբ.): Շերտախումբ:

ՍՎԻՏ(Ե)Ր [< свитер < անգլ. sweater < to sweat քրտնել], գ. (խսկց.): Անկոճակ տաք վերնազգեստ, ֆուֆայկա:

ՍՏԱԲԻԼ [< стабильный < լատ. stabilis], ած. (խսկց.) 1. Կայուն: 2. Մնայուն: 3. Հաստատուն:

ՍՏԱԲԻԼԻԶԱՏՈՐ [< стабилизатор < լատ.], գ. (տեխ.): Կայունացուցիչ, կայունարար:

ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱ [< стабилизация < լատ.], գ. Կայունացում, հաստատունացում:

ՍՏԱԲԻԼԻՏՐՈՆ [< стабилитрон < ստաբիլ + (էլեկ.) տրոն], գ. (ֆիզ.): Իոնային կամ կիսահաղորդչային դիոդ, որի վոլտամպերային բնութագիրն աշխատանքային մասում գրեթե զուգահեռ է հոսանքի առանցքին:

ՍՏԱԳՆԱՑԻԱ [< стагнация < լատ. stagnum կանգնած՝ չհոսող ջուր], գ. (տնտսգ.): Արտադրության լճացում:

ՍՏԱԳՖԼՅԱՑԻԱ [< стагфляция < ստա(գնացիա) + (ին)ֆլյացիա], գ. (տնտսգ.): Լճագնած՝ տնտեսական վիճակ, որը բնութագրվում է արժեզրկման բարձր մակարդակով, արտադրության նվազմամբ և գործազրկության աճով:

ՍՏԱԴԻԱ [< стадия < հուն. stadion երկարության չափ], գ. Որևէ գործընթացի փուլ՝ շրջան կամ աստիճան, որ բնորոշվում է իրեն հատուկ որակական հատկանիշներով, ընթացաշրջան:

ՍՏԱԴԻԱԼ [< стадиальный < հուն.], ած. Ստադիաներով կատարվող՝ տեղի ունեցող:

ՍՏԱԴԻՈՆ [< стадион < հուն. stadion], գ. (խսկց.): Մարզադաշտ: 2. Մրցարան:

ՍՏԱԶ [< стаз < ֆր. stase < հուն. stasis կանգ], գ. (բժշկ.): Մարմնի փողավոր օրգաններում պարունակության՝ հեղուկի (արյան ևն) հոսքի կտրուկ դանդաղում կամ կանգ:

ՍՏԱԺ [< стаж < ֆր. stage], գ. 1. Գործունեության՝ որևէ բնագավառում աշխատելու տևողությունը: 2. Որևէ կարգի հասարակական՝ քաղաքական ևն կազմակերպության շարքերում լինելու տևողությունը: 3. Սովորողի՝ որևէ մասնագիտություն ձեռք բերելու արտադրական պրակտիկա:

ՍՏԱԺՈՐ [< стажёр < ֆր. stagiaire], գ. Փորձնական ստաժ անցկացնող կամ ունեցող անձ:

ՍՏԱԼԱԳՄԻՏ [< сталагмит < հուն. stalagma կաթել], գ. (հնք.): Ցեչաքար, պրկաքար՝ հոսանստվածքային սյունաձև, կոնաձև գոյացումներ, որոնք առաջանում են քարայրերի հատակին՝ բարձրից կաթող կալցիումի կարբոնատով հագեցած ջրային կաթիլներից գազերի հեռացման և դրանց գոլորշիացման հետևանքով նստող աղերից:

ՍՏԱԼԱԿՏԻՏ [< сталактит < հուն. stalaktos կաթացող], գ. (հնք.): Շթաքար՝ շթերից գոյացած կոնաձև կրաքար քարանձավների առաստաղին և հատակին:

ՍՏԱԿԿԱՏՈ [< стаккато < իտլ. staccato < staccāre անջատել, բաժանել], գ. (երժշտ.):

Հստակորեն միմյանցից անջատված հնչյունների կարճ, ընդհատ կատարումը:

ՍՏԱՅԵՐ [< стайер < անգլ. stayer], գ. (սպորտ.): Երկար տարածություններ վազող (հաղթահարող) մարզիկ (թեթև ատլետիկայում, չմշկասահքում, հեծանվավազքում են):

ՍՏԱՆԴԱՐՏ [< стандарт < անգլ. standard to stand կայուն լինել], գ. 1. Որևէ բանի նմուշ՝ օրինակ, որին պիտի համապատասխանի արտադրանքը կամ մշակվածքը իր ձևով, չափով, որակով են, համօրինակ: 2. *փխբ.* Որևէ բանի կազմակերպման՝ իրագործման են միօրինակ բնույթ՝ եղանակ: 3. *փխբ.* Շարունակ կրկնվող միօրինակությունը, անփոփոխ՝ մաշված ու միօրինակ բան, շաբլոն, տրաֆարետ:

ՍՏԱՆԴԱՐՏԻԶԱՑԻԱ [< стандартизация < անգլ.], գ. (մսնգ.): Ստանդարտացում, միօրինակացում, միակաղապարացում:

ՍՏԱՆԻՆ [< станнин < լատ. stannum անագ], գ. (հնք.): Անագային:

ՍՏԱՏԻԿ [< статический < հուն.], ած. 1. Ստատիկային հատուկ, ստատիկայի: 2. Շարժում՝ զարգացում չունեցող, անշարժ, անփոփոխ:

ՍՏԱՏԻԿԱ [< статика < հուն. statos կանգուն], գ. 1. (գիտ.): Մեխանիկայի մի բաժինը, որը ուսումնասիրում է մարմինների հավասարակշռության պայմանները, կայաբանություն: 2. Հավասարակշռության՝ հանգստի՝ դադարի վիճակ: 3. *փխբ.* Կայունություն, անշարժություն, շարժման՝ զարգացման բացակայություն:

ՍՏԱՏԻՍ [< статист < հուն.], գ. (թատր.): Երկրորդական՝ անխոս դեր կատարող դերասան (թատերական ներկայացման մեջ), կացորդ:

ՍՏԱՏԻՍՏԻԿԱ [< статистика < գերմ. Statistik < լատ. status վիճակ], գ. (խսկց.): Վիճակագրություն:

ՍՏԱՏՈՐ [< статор < լատ. stator անշարժ կանգնած], գ. (տեխ.): Էլեկտրական մեքենաների (գեներատորների, շարժիչների են) անշարժ՝ չպտտվող մասը:

ՍՏԱՏՈՒՍ [< статус < լատ. status գործերի վիճակ՝ դրություն], գ. 1. (իրավք.): Միջազգային իրավունքի մեջ՝ դրություն, վիճակ, կարգավիճակ: 2. *փխբ.* Հասարակության մեջ մարդու գրաված տեղը, դիրքը (սոցիալական ստատուս):

ՍՏԱՏՈՒՍ ՔՎՈ [< статус-кво < լատ. status quo, բառացի՝ դրություն], գ. (իրավք.): Միջազգային իրավունքում՝ իրավիճակ, որ գոյություն ունի ինչ-որ կոնկրետ պահի:

ՍՏԱՏՈՒՏ [< статут < միջին լատ. statutum], գ. 1. Կանոնադրություն: 2. (պատմ.): Օրենք, որևէ բանի մասին կառավարական որոշում Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում:

ՍՏԱՐՏ [< старт < անգլ. start], գ. (խսկց.): 1. Մեկնարկ: 2. Մրցասկիզբ: 3. Սկիզբ, որևէ բան սկսելու պահը:

ՍՏԱՐՏԵՐ [< стартер < անգլ. starter], գ. (տեխ.): Ավտոմոբիլի՝ սավառնակի են շարժիչն աշխատեցնելու՝ գործի դնելու մեխանիզմ՝ հարմարանք, մեկնարկիչ:

ՍՏԱՐՏՅՈՐ [< стартёр < անգլ. starter < to start սկսել], գ. (սպորտ. խսկց.): 1. Ազդանշանորդ՝ սպորտային մրցության մեկնարկի ազդանշան տվող անձ: 2. Մարզիկ, ով լավ է մեկնարկում (բարձր արագություն է հավաքում մեկնարկում):

ՍՏԱՑԻՈՆԱՐ [< стационар < լատ. stationarius անշարժ], ած. 1. Մշտական՝ անփոփոխ տեղ՝ տեղադրություն ունեցող, միշտ միևնույն տեղում եղող՝ գտնվող, ոչ շարժական, տեղից տեղ չփոխադրվող: 2. Հիվանդանոցային բուժման ենթարկվող, հիվանդանոցում (ոչ ամբուլատորիայում) բուժվող: 3. Այդպիսի հիվանդների բուժամբ զբաղվող: 4. (մսնգ.): Հաստատուն կերպով ամրակայված, ոչ շարժական, ոչ տեղափոխելի՝ փոխադրելի, անփոփոխ, կայուն, ոչ փոփոխական:

ՍՏԵԱՐԻՆ [< стеарин < ֆր. stearine < հուն. stear ճարպ], գ. (քիմ.): Սպիտակավուն պինդ յուղային նյութ, որ օգտագործվում է մոմերի, օճառի ևն արտադրության մեջ:

ՍՏԵԹ(Տ)ՈՍԿՈՊ [< стетоскоп < հուն. stēthos կուրծք + skopeō դիտում եմ], գ. (բժշկ.): Սրտի տոները, շնչառական աղմուկները, մարդու և կենդանիների օրգանիզմում ծագած բնական այլ հնչյունները լսելու գործիք: Հայտնագործել է Ռ. Լաեննեկը 1816 թ.:

ՍՏԵԼԱ [< стела < հուն. stēlē սյուն], գ. (ճարտ.): Ուղղաձիգ կանգնեցված սալաքար՝ արձանագրությունով կամ հարթաքանդակով: Հին աշխարհում, մասնավորապես Հին Հունաստանում սրանք ծառայում էին որպես մահարձան, հաճախ կատարում էին սահմանաբաժան քարի դեր, կանգնեցվում էին որևէ կարևոր իրադարձություն հավերժացնելու համար:

ՍՏԵԼԱԺ [< стеллаж < գերմ. stellage < հոլանդ. stellen տեղադրել], գ. (խսկց.): Իրար հետ հավաքված դարակներ՝ տարբեր իրեր պահելու համար:

ՍՏԵԽԻԱՄԵՏՐԻԱ [< стехиометрия < հուն. stoicheion նախասկիզբ, տարր + metrēo չափում եմ], գ. (քիմ.): Ուսմունք քիմիական ռեակցիայի մեջ մտնող նյութերի և առաջացած արգասիքների զանգվածների (ծավալների) քանակական հարաբերությունների մասին:

ՍՏԵՆԴ [< стенд < անգլ. stand], գ. (խսկց.): 1. Տախտակյա վահանակ՝ վրան ցուցադրական նյութեր ամրացնելու և ցուցադրելու համար, ցուցատախտակ, ցուցափեղկ: 2. (տեխ.): Պատրաստի մեքենաների փորձարկման վայր գործարանում, փորձատեղ: 3. Սրտի արյունատար անոթերում տեղադրվող փոքր մանրակ, որը վերացնում է անոթի այդ մասի նեղությունը և ապահովում արյան հոսքը:

ՍՏԵՆՈԲԻՈՆՏՆԵՐ [< стенобионты < հուն. stenos նեղ, սահմանափակ + bios ապրող], գ. (կենսբ.): Բույսեր և կենդանիներ, որոնք ընդունակ են ապրելու միայն շրջապատող միջավայրի համեմատաբար կայուն պայմաններում:

ՍՏԵՆՈԶ [< стеноз < հուն. stenos նեղ], գ. (բժշկ.) Նեղացում, անձկացում, նեղվածք՝ որևէ խողովակավոր օրգանի լուսանցքի կամ խոռոչների միջև եղած անցքի նեղացումը:

ՍՏԵՆՈԳՐԱՖԻԱ [< стенография < հուն. stenos նեղ, սեղմ + graphō գրում եմ], գ. (մանգ.): Սղագրություն (հատուկ նշաններով բանավոր խոսքի արագ գրանցում):

ՍՏԵՆՈԹԵՐՄ [< стенотермный < հուն. stenos + thermē ջերմություն] օրգանիզմներ - (կենսբ.): Օրգանիզմներ, որոնք կարող են դիմանալ արտաքին միջավայրի ջերմաստիճանի միայն աննշան տատանումներին:

ՍՏԵՆՈԿԱՐԴԻԱ [< стенокардия < հուն. stenos նեղ + kardia սիրտ], գ. (բժշկ.): Կրծքավանդակի ներսում սրտի ուժեղ ցավեր, սրտի իշեմիկ հիվանդության ձև:

ՍՏԵՆՈՖԱԳ [< стенофаг < հուն. stenos + phagōs ուտող], գ. (կենսբ.): Կենդանի, որ սնվում է միատեսակ սննդով:

ՍՏԵՊ I [< ռուս. степь], գ. (հնց.): Տափաստան:

ՍՏԵՊ II [< степ < անգլ. step], գ. Պարի տեսակ:

ՍՏԵՊԼԵՐ [< степлер < անգլ. stepler], գ. (տեխ.): Թղթերը ամրակներով միմյանց ամրացնելու գործիք:

ՍՏԵՌԱԴԻԱՆ [< стерадиан < հուն. stereos տարածական + լատ. radius ճառագայթ], գ. Մարմնային անկյան չափման միավորը Միավորների միջազգային համակարգում: Կրճատ նշանակվում է ստեռ (միջազգային նշանակումը՝ sr):

ՍՏԵՌԼԻՆԳ [< стерлинг < անգլ. sterling], գ. (ֆին.): 1. Անգլիական ոսկեդրամների և արծաթադրամների օրինական հարգի (պրոբի) ստանդարտը: 2. Տե՛ս Ֆունտ II:

ՍՏԵՐԵՈ... [< стерео... < հուն. stereos կարծր, ծավալային, տարածական] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս՝ 1. Ծավալայնություն կամ տարածական բաշխման առկայություն (օր.՝ ստերեոմետրիա, ստերեոկինո): 2. Կարծրություն, հաստատունություն (օր.՝ ստերեոտիպ):

ՍՏԵՐԵՈԶՈՒՅԳ, գ. Միևնույն օբյեկտի՝ դիտման 2 տարբեր կետերից ստացված երկու հարթ հեռանկարային պատկերի ամբողջությունը:

ՍՏԵՐԵՈԽՈՂՈՎԱԿ, գ. (տեխ.): Երկփող շրջադիտակային օպտիկական սարք: Բաղկացած է օկուլյարներ ունեցող երկու դիտակից, բռնիչից, լիմբից և եռոտանուց:

ՍՏԵՐԵՈԿԻՆՈ, գ. (կինո): Կինեմատոգրաֆի տեսակ, որի տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս էկրանի վրա ստեղծելու պատկերի ծավալայնության պատրանք:

ՍՏԵՐԵՈՄԵՏՐԻԱ [< стереометрия < ստերեո... + հուն. metreō չափում եմ], գ. (գիտ.): Երկրաչափության բաժին:

ՍՏԵՐԵՈՍԿՈՊ [< стереоскоп < ստերեո... + հուն. skopeō դիտում եմ], գ. (տեխ.): Օպտիկական սարք՝ տեղանքի կամ առանձին առարկաների նկարների դիտման համար՝ նրանց ծավալային ընկալմամբ:

ՍՏԵՐԵՈՏԻՊ [< стереотип < ստերեո... + հուն. typos դրոշմ, կնիք], գ. 1. (տպգր.): Տպագրական շարվածքի մետաղյա, պլաստմասսե կամ ռետինե միաձույլ (միակտոր) պատճեն: 2. Նախատիպ:

ՍՏԵՐԵՈՏԻՊԻԱ [< стереотипия < հուն.], գ. Ստերեոտիպավորում՝ բարձր տպագրության տիպաձևերի պատճենների՝ ստերեոտիպերի պատրաստման գործընթաց:

ՍՏԵՐԵՈՔԻՄԻԱ [< стереохимия < ստերեո... + քիմիա], գ. (գիտ.): Տարածական քիմիա:

ՍՏԵՐԵՈՖՈՆԻԱ [< стереофония < ստերեո... + հուն. phōnē ձայն, հնչյուն], գ. (գիտ.): Ձայնի հաղորդման և վերարտադրման այնպիսի եղանակ, որի դեպքում ունկնդիրը ստանում է ձայնի աղբյուրների տարածական դասավորության տպավորություն:

ՍՏԵՐԻԼ [< стерильный < լատ. sterilis անպտուղ], ած. 1. Մանրէազերծ: 2. Ստերջ, ամուլ:

ՍՏԵՐԻԼԱՑՆԵԼ 1. Մանրէաջնջել, մանրէազերծել: 2. Ամլացնել, ստերջացնել:

ՍՏԵՐԻԼԻԶԱՏՈՐ [< стерилизатор < լատ.], գ. (մսնգ.): 1. Մանրէաջինջ՝ մանրէազերծիչ՝ ստերջուցիչ գործիք: 2. Ստերիլիզացիա կատարող մասնագետ:

ՍՏԵՐԻԼԻԶԱՑԻԱ [< стерилизация < լատ.], գ. 1. (բժշկ.): Ստերջացում, ամլացում: 2. (ախտ.): Մանրէաջնջում, մանրէազերծում:

ՍՏԻԳՄԱ [< стигма, стигмат < հուն. stigma դրոշմ, հետք], գ. 1. (պատմ.): Խարան, դրոշմ, աղվեսադրոշմ (Հին Հունաստանում դրվում էր ստրուկների կամ հանցագործների մաշկի վրա): 2. (բժշկ.): Մաշկախոց, բծախոց: 3. (կենդբ.): Ընչաճեղք (մանր միջատների):

ՍՏԻԼ [< стил < հուն. stylos սուր ծայրով փայտիկ մոմատախտակի վրա գրելու համար], գ. (խսկց.): 1. Ոճ: 2. Գործելակերպ, աշխատանքի եղանակ: 3. Գրելակերպ, խոսալաձև, ոճ: 4. *փխբ.* Տարազ, հագնվելու կերպ, ոճ:

ՍՏԻԼԲ [< стильб < հուն. stilbos առկայծող, փայլող], գ. (ֆիզ. հնց.): Ստիլբ (լույսի պայծառության միավոր):

ՍՏԻԼՈԲԱՏ [< стилобат < հուն. stylobatēs < stylos այուն + bainō ամուր կանգնում եմ], գ. (ճարտ.): Հին հունական տաճարի աստիճանավոր պատվանդանի՝ վերին հարթությունը:

ՍՏԻԼՈՄԵՏՐ [< стилометр < անգլ. steel պողպատ + հուն. metron], գ. (տեխ.): Լուսաչափական հարմարանքով սպեկտրային սարք, որը ծառայում է մետաղական համաձուլվածքների և միներալների արագ քանակական սպեկտրային վերլուծություն կատարելու համար:

ՍՏԻԼՈՍԿՈՊ [< стилоскоп < անգլ. steel + հուն. skopeō նայում եմ, դիտում եմ], գ. (տեխ.): Սպեկտրային սարք, որը ծառայում է պողպատների և համաձուլվածքների քիմիական բաղադրության արագ որակական վերլուծություն կատարելու համար դրանց դիտման միջոցով:

ՍՏԻԽ [< стих < հուն. stichos կարգ], գ. (հնց.): 1. Ոտանավորի տող, չափածո տող: 2. (հոգն.): Ոտանավոր, բանաստեղծություն:

ՍՏԻՄՈՒԼ [< стимул < լատ. stimulus, բառացի՝ սրածայր ձող, որով քշել են անասուններին, խթան], գ. (խսկց.): Խթան, շարժառիթ, դրդապատճառ, ազդակ:

ՍՏԻՄՈՒԼՅԱՏՈՐ [< стимулятор < լատ.], գ. 1. (քիմ.): Խթանիչ, ազդիչ նյութ՝ միջոց. օգտագործում են մարզիկները՝ բարձր արդյունքների հասնելու համար: 2. (խսկց.): Որոշ իրադարձություններ են խթանող դեպք են: 3. (բժշկ.): Կարդիոստիմուլյատոր:

ՍՏՅՈՒԱՐԴ [< стюард < անգլ. steward կառավարող, կառավարիչ], գ. Մատուցող (ինքնաթիռում, շոգենավում):

ՍՏՅՈՒԱՐԴԵՍԱ [< стюардесса < անգլ. stewardess], գ. (խսկց.): Ինքնաթիռում ուղևորներին սպասարկող կին, ուղեկցորդուհի:

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ [< стоматология < հուն. stoma (stomatos) բերան, բերանի խոռոչ + logōs գիտություն], գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որը ուսումնասիրում է բերանի խոռոչի օրգանների հիվանդությունները և դրանց բուժման մեթոդները:

ՍՏՈՅԻԿ [< стоик < հուն. stōikos], գ. Ստոյիկականության հետևորդ՝ կողմնակից:

ՍՏՈՅԻԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. 1. (փիլ.): Հին աշխարհի (հունահռոմեական) փիլիսոփայական ուղղություն, որը պահանջում էր մարդու իշխանությունը կրքերի վրա: 2. Ստոյիկյան բնույթ ունենալը, ստոյիկյան բնույթ: 3. *փխբ.* Տոկունություն, ժուժկալություն:

ՍՏՈՅԻԿՅԱՆ, ած. 1. Ստոյիկականությանը հատուկ՝ վերաբերող: 2. Ստոյիկյան փիլիսոփայության հետևորդ՝ կողմնակից: 3. գ. ած. Տոկուն, դիմացկուն, կյանքի փորձություններին ու գայթակղություններին դիմացող:

ՍՏՈՅԻՑԻԶՄ [< стоицизм < Աթենքում Ստոա < Stoa այունազարդ սրահի անունով, որտեղ ուսուցանում էր փիլիսոփա Զենոնը], գ. (փիլ.): Նույնն է՝ Ստոյիկականություն:

ՍՏՈՊ [< стоп < անգլ. stop կանգնեցնել], ձայն. (խսկց.): Կա՛նգ առ, կանգնի՛ր. էլ չշարժվե՛լ, առաջ չգնա՛լ:

ՍՏՈՐՏԻՆԳ [< стортинг < նորվեգ. storting < stōrr մեծ + ting խորհուրդ], գ. (քղք.):

Նորվեգիայի պառլամենտը, որը բաղկացած է **լագտինգից** (վերին պալատ) և **օդելստինգից** (ստորին պալատ):

ՍՏՐԱԲԻԶՄ [< страбизм < հուն. strabismus < strabos շեղ, շիլ], գ. (բժշկ.): Շլություն (աչքերի):

ՍՏՐԱԴԻՎԱՐԻՈՒՍ [< страдивариус, страдиварий < իտալացի ջութակի վարպետ Ստրադիվարիուսի (Stradivari 1644-1737 թթ.) անունից], գ. (երժշտ.): Ջութակ, որ պատրաստել է Ստրադիվարիուսը. աչքի է ընկնում կատարյալ կառուցվածքով և նրբահնչությամբ:

ՍՏՐԱՏԵԳ [< стратег < հուն. stratēgos զորապետ, ռազմավար], գ. ած. (պատմ.): Ռազմագետ, ռազմավար Հին Հռոմում:

ՍՏՐԱՏԵԳԻԱ [< стратегия < հուն. stratēgia < stratos զորք + agō վարում եմ], գ. 1. (ռազմ.):Ռազմավարություն՝ պատերազմական մեծ գործողություններ և առհասարակ՝ պատերազմներ վարելու արվեստը և դրա տեսությունը:2.(քաղ.): Հասարակական-քաղաքական պայքարի ղեկավարման արվեստը:

ՍՏՐԱՏԻԳՐԱՖԻԱ [< стратиграфия < լատ. stratum շերտ + հուն. graphō գրում եմ], գ. (երկրբ.): Երկրաբանության մի բաժինը, որն ուսումնասիրում է լեռնային ապարների նստվածքային շերտավորումների կեղևը և երկրակեղևի շերտերի գոյացման գործընթացը՝ դրանց պատմական հաջորդականությամբ:

ՍՏՐԱՏԻՍՖԵՐԱ [< стратисфера < լատ. stratum շերտ + հուն. sphaira թաղանթ], գ. (երկրբ.): Երկրի թաղանթը, որը հիմնականում կազմված է նստվածքային և նախկին նստվածքային ապարներից:

ՍՏՐԱՏԻՖԻԿԱՑՈՒՄ ՍԵՐՄԵՐԻ [< стратификация (< լատ. stratum + facere անել) семян]– (գոտնտ.): Սերմերի նախացանքային մշակության միջոցառում, որը կատարվում է ծլումն արագացնելու նպատակով:

ՍՏՐԱՏՈՀՐԱԲՈՒԽՆԵՐ, գ. Շերտավոր խառնակազմ հրաբուխներ, որոնց կոները կառուցված են միմյանց հաջորդող կարծրացած լավային հոսքերից և տուֆի փոխակերպված ցեմենտացած լավաբեկորներից:

ՍՏՐԱՏՈՍՏԱՏ [< стратостат < լատ. stratum շերտ + հուն. statos դրված, կանգուն], գ. Վերնոլորտապարիկ՝ մեծ ծավալի (մինչև 100.000 մ^3): Ազատ օդապարիկ, որը նախատեսված է գիտական և սպորտային նպատակներով անձնակազմը և սարքավորումը ստրատոսֆերա բարձրացնելու համար:

ՍՏՐԱՏՈՍՖԵՐԱ [< стратосфера < լատ. stratum շերտ + հուն. sphaira գունդ], գ. Վերնոլորտ՝ մթնոլորտի շերտ երկրի մակերևույթից 8-55 կմ բարձրության վրա:

ՍՏՐԱՈՒՍ [< страус < գերմ. Strauß < հուն. struthos թռչուն], գ. (կենդբ.): Ջայլամ:

ՍՏՐԵԼԵՑՆԵՐ [< ռուս. стрелецы], գ. (պատմ.): XVI-XVIII դդ. սկզբի ռուսական զորատեսակ:

ՍՏՐԵՊՏՈԿՈԿ(ԵՐ) [< стрептококки < հուն. streptos շղթայիկ+ kokkos հատիկ], գ. (կենսբ.): Թարախային բորբոքումներ առաջացնող գնդիկաձև բակտերիաներ:

ՍՏՐԵՊՏՈՄԻՑԻՆ [< стрептомицин < հուն. streptos շղթայիկ + mykēs սունկ], գ. (դեղագ.): Թոքախտի՝ թոքաբորբի և մի շարք ուրիշ հիվանդությունների բուժման համար օգտագործվող հակաբորբոքիչ:

ՍՏՐԵՊՏՈՑԻԴ [< стрептоцид < հուն. streptos + լատ. caedre սպանել], գ. (դեղագ.): Ստրեպտոկոկերի առաջ բերած հիվանդությունների բուժման համար գործածվող դեղ:

ՍՏ(Թ)ՐԵՍ [< стресс < անգլ. stress լարվածություն], գ. Օրգանիզմի ընդհանուր ոչ առանձնահատուկ հարմարվողական ռեակցիան զանազան ազդեցությունների նկատմամբ:

ՍՏՐԻԽՆԻՆ [< стрихнин < հուն. strychnos փսխեցուցիչ ընկուզիկ], գ. (դեղագ.): Արևադարձային չիլիբուխա կոչվող բույսի սերմերից ստացվող ուժեղ թույն (օգտագործվում է բժշկության մեջ):

ՍՏՐԻՊՏԻԶ [< стриптиз < անգլ. striptease < strip հանվել, մերկանալ + tease զայրացնել, բարկացնել], գ. (խսկց.): Գիշերային զվարճարաններում կանանց մերկանալու տեսարան:

ՍՏՐԻՊՏԻԶՈՒՀԻ, գ. Ստրիպտիզով զբաղվող կին:

ՍՏՐՈԲՈՍԿՈՊԻԱԿԱՆ ԷՖԵԿՏ [< стробоскопический (< հուն. strobos պտտում + skopeō դիտում եմ) эффект]– (օպտ.): Տեսողական խաբկանք, որն առաջանում է այն դեպքում, երբ որևէ առարկա կամ պատկեր դիտվում է ոչ թե անընդհատ, այլ ժամանակի առանձին, պարբերաբար հաջորդող միջակայքերի ընթացքում:

ՍՏՐՈՆՑԻՈՒՄ [< стронций < լատ. strontium], գ. (քիմ.): Քիմիական տարր, թեթև արծաթասպիտակավուն մետաղ, որի ռադիոակտիվ իզոտոպները օգտագործվում են գիտական հետազոտությունների ու տեխնիկայի բնագավառում:

ՍՏՐՈՖԱ [< строфа < հուն. strophē շրջապտույտ, շրջադարձ], գ. (տղչփ.): Բանաստեղծական տուն:

ՍՏՐՈՖԻԿԱ [< строфика < հուն.], գ. 1. Ուսմունք բանաստեղծական տների, դրանց կառուցվածքի և հանգավորման մասին: 2. Որևէ բանաստեղծության (պոեմի ևն) տնային կառուցվածքը, տնատման եղանակը:

ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ [< структура < լատ. structura], գ. (խսկց.): Կառուցվածք:

ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱԼԻԶՄ [< структурализм < լատ.], գ. (գիտ.): Ուղղություն հումանիտար գիտություններում, որտեղ մշակույթը (լեզուն, արվեստը, գիտությունը ևն) դիտվում է իբրև նշանային համակարգերի ամբողջություն:

ՍՏՈՒԴԵՆՏ [< студент < գերմ. Student < լատ. studens (studentis) ջանացող], գ. (խսկց.): Ուսանող (բուհի):

ՍՏՈՒԴԻԱ [< студия < իտլ. studio ջանք, ջանում, ուսումնասիրում], գ. 1. Նկարչի կամ քանդակագործի աշխատանոց՝ արհեստանոց: 2. Արվեստի աշխատողներ պատրաստող ուսումնարան: 3. Արվեստի և գրականության ստեղծագործական աշխատանքով զբաղվող կոլեկտիվ՝ հաստատություն՝ հիմնարկություն: 4. Կինոստուդիա: 5. Ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումներ պատրաստող ու կազմակերպող հաստատություն:

ՍՏՈՒՊՈՐ [< ступор < լատ. stupor անշարժություն], գ. Ընդարմացում՝ մարդու կամային գործունեության խանգարում, որն արտահայտվում է շարժողական ոլորտի արգելակմամբ, մկանային տոնուսի բարձրացմամբ:

ՍՑԵՆԱՐ [< сценарий < իտլ. scenario], գ. 1. (կինո.): Դրամատիկական գործողությունների տարրեր և պատմողական տարրեր ընդգրկող գրական ստեղծագործություն, որի հիման վրա ստեղծվում է կինոնկարը, կինոսցենար: 2. (թատր.): Թատերական գրվածքի սյուժետային պլանը: 3. Թատերական ներկայացման մասնակցող դերասանների ելույթների ցանկը և կարգը:

ՍՑԵՆԱՐԻՍՏ [< сценарист < իտլ.], գ. Սցենարի հեղինակ:

ՍՑԻՆՏԻԼՅԱՑԻԱ [< сцинтилляция < լատ. scintillatio առկայծում], գ. (ֆիզ.): Կարճատև լուսային բռնկում (լյումինեսցենցման բռնկում), որն առաջանում է սցինտիլյատորներում՝ իոնացնող ճառագայթների ազդեցությամբ: Առաջինը դիտել է անգլիացի ֆիզիկոս և քիմիկոս Ու. Կրուկսը (Crooks 1832-1919թթ.) 1903 թ.:

ՍՑԻՖՈԶԱ(ՆԵՐ) [< сцифоза < հուն.],գ. Տե՛ս Սցիֆոիդներ:

ՍՑԻՖՈԻԴՆԵՐ [< сцифоиды < հուն. skyphos գավաթ + eidos տեսակ], գ. (կենդբ.): Աղեխորշավորների տիպի ծովային մենակյաց կենդանիների դաս:

ՍՈՒԱՐԵ [< суаре < ֆր. soirée երեկո, երեկույթ], գ. (հնց.): Երեկույթ:

ՍՈՒԲ... [< суб ... < լատ. sub տակ] Բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակում է՝ 1. Ներքևում կամ մոտ գտնվող: 2. Ենթակա: 3. Ոչ գլխավոր, երկրորդական:

ՍՈՒԲԱՐԵՆԴԱ [< субаренда < սուբ... + արենդա], գ. (տնտսգ.): Ենթավարձույթ, երբ վարձակալողը վարձույթով վերցրած ունեցվածքի մի մասը վարձույթով տալիս է մի երրորդ անձի՝ ինքը դառնալով վարձակալ այդ անձի նկատմամբ:

ՍՈՒԲԱՐԿՏԻԿԱ [< субарктика < սուբ... + հուն. arktikos հյուսիսային], գ. (երկրբ.): Հյուսիսային բևեռաշրջան, հյուսիսային ենթաբևեռ:

ՍՈՒԲԼԻՄԱՏ [< сублимат < լատ. sublimatus բարձրացած ի վեր], գ. 1. (քիմ.): Սուբլիմացիայով ստացվող նյութ: 2. (երկրբ.): Հրաբխային գազերի ելքի տեղում առաջացող հանքային գոյացումներ:

ՍՈՒԲԼԻՄԱՑԻԱ [< сублимация < լատ. sublimare վեր բարձրացնել], գ. 1. (քիմ.): Նյութի անմիջապես անցումը կարծր վիճակից գազային վիճակի՝ առանց հեղուկային վիճակի անցնելու: 2. (հոգեբ.): Հոգեբանական գործընթաց, երբ մարդու ներքին մղումների էներգիան ուղղորդվում է հասարակական կամ մշակութային գործունեությանը: Տերմինը ներմուծել է Զ. Ֆրեյդը 1900 թ.:

ՍՈՒԲՄԱՐԻՆ [< субмарина < անգլ. submarine < սուբ... + լատ. marina ծովային], գ. (ռազմ. հնց.): Սուզանավ:

ՍՈՒԲՅԵԿՏ [< субъект < լատ. subjectum], գ. 1. (փիլ.): Մտածող, գործող մարդ՝ անձ: 2. Գործող անձ: 3. (իրավբ.): Իրավազոր անձ: 4. (բժշկ.): Մարդ՝ անձ: 5. Անձ, անձնավորություն: 6. Բացասական հատկություններով մարդ, մութ անձնավորություն: 7. (տրամբ.): Ենթակա, դատողության առարկա: 8. (քեր.): Ենթակա:

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ [< субъективный < լատ.], ած. 1. Միայն անհատին հատուկ՝ վերաբերող: 2. Միայն տվյալ անձին՝ անհատին հատուկ, անձնական, անհատական:

ՍՈՒԲՅԵԿՏԻՎԻԶՄ [< субъективизм < լատ.], գ. 1. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայական ուղղություն, որը մարդու կողմից ընկալվող առարկաներն ու երևույթ-ները համարում է միայն մարդկանց գիտակցության մեջ գոյություն ունեցող կատեգորիաներ և ժխտում է օբյեկտիվ իրականության գոյությունը: 2. Սոցոլոգիական ուղղություն, որը պնդում է, թե հասարակության զարգացումը որոշվում է ոչ թե օբյեկտիվ օրինաչափություններով, այլ անհատական գործոններով(կամքով, առանձին անհատների ձգտումներով, կարողություններով ևն): 3. (խսկց.): Անհատական՝ կանխակալ վերաբերմունք մեկի՝ մի բանի նկատմամբ:

ՍՈՒԲՅԵԿՏԻՎԻՍՏ[< субъективист < լատ.], գ. Սուբյեկտիվիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՍՈՒԲՈՐԴԻՆԱՑԻԱ [< субординация < սուբ... + լատ. ordinatio կարգի բերել], գ. (խսկց.): Ծառայողական համակարգում կրտսեր աշխատակիցների ենթարկումը ավագներին՝ ելնելով ծառայողական կարգուկանոնից:

ՍՈՒԲՌՈԳԱՑԻԱ [< суброгация < լատ. subrogatio], գ. (իրավբ.): Մասնակի ավելացում՝ հավելում հին օրենքի մեջ:

ՍՈՒԲՍԻԴԻԱ [< субсидия < լատ. subsidium օգնություն, աջակցում], գ. (տնտսգ.): Դրամական կամ բնամթերային նպաստ՝ օժանդակություն, լրահատկացում, լրավճար:

ՍՈՒԲՍԻԴԻԶԱՑԻԱ [< субсидизация < լատ.], գ. (տնտսգ.): Նպաստավորում՝ ֆինանսական օժանդակության տրամադրում:

ՍՈՒԲՍՏԱՆՏԻՎԱՑԻԱ [< субстантивация < լատ. substantivum գոյական անուն], գ. (լեզվբ.): Գոյականացում (այլ խոսքի մասերի փոխանցումը գոյականների):

ՍՈՒԲՍՏԱՆՑԻԱ [< субстанция < լատ. substantia էություն], գ. 1. (փիլ.): Անփոփոխ էություն՝ հիմք: 2. (գրք.): Էություն, հիմք:

ՍՈՒԲՍՏԻՏՈՒՑԻԱ [< субституция < լատ. substitutio փոխարինում], գ. (մանգ.): Փոխարինում:

ՍՈՒԲՍՏՐԱՏ [< субстрат < լատ. substratum, բառացի՝ աստառ, տակդիր], գ. 1. (մանգ.): Հիմք: 2. Միջավայր՝ պայմաններ, որոնց մեջ զարգանում են որևէ կարգի օրգանիզմներ: 3. (փիլ.): Միատեսակ երևույթների ընդհանուր հիմք: 4. (լեզվբ.): Ենթաշերտ՝ հիմնացեղի լեզվի տարր, որ խաչավորման հետևանքով անցնում է նոր առաջացած լեզվին:

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ [< субвенция < լատ. subvenire օգնության գալ], գ. (ֆին.): Պետական նպաստ (տեղական մարմիններին՝ որոշակի նպատակներով):

ՍՈՒԲՏԻՏՐ [< субтитр < ֆր. subtitre < սուբ... + լատ. titre մակագրություն], գ. (կինո.): Ենթագիր (կինոկադրի տակի գրեր են):

ՍՈՒԲՏՐՈՊԻԿՆԵՐ [< субтропики < լատ. sub + հուն. tropikos դարձկեն], գ. (աշխգր.): Մերձարևադարձային երկրներ:

ՍՈՒԲՐԵՏԿԱ [< субретка < ֆր. soubrette], գ. (պատմ.): Սուբրետուհի՝ վստահյալ ու ժիր աղախին XVII-XIX դարերում (հիմնականում ֆրանսիական կատակերգություններում):

ՍՈՒԳԵՍՏԻԱ [< суггестия < լատ. suggestio ներշնչում], գ. (բժշկ.): Ներշնչում, ներշնչելը:

ՍՈՒԼԹԱՆ [< султан < թուրք. sultan < արաբ. sultân տիրակալ], գ. 1. (քղք.): Սուլթան՝ միապետի տիտղոսը որոշ մահմեդական երկրներում (նաև միապետը): 2. *փխբ.* Փետրափունջ, ցցունք:

ՍՈՒԼՈՒԳՈՒՆԻ [< сулугуни < վրաց. sulguni], գ. (խոհր.): Կովի կամ այծի կաթից պատրաստված պանրի մի տեսակ (վրացական):

ՍՈՒԼՖԱՏ [< сульфаты < լատ. sulphur ծծումբ], գ. (քիմ.): Ծծմբաթթվի աղերի ընդհանուր անվանումը, ծծմբատ:

ՍՈՒԼՖԻԴԻՆ [< сульфиды < լատ. sulphur ծծումբ], գ. (քիմ.): Ծծմբի միացումը մետաղների հետ:

ՍՈՒԼՖԻՏ [< сульфиты < լատ. sulphur ծծումբ], գ. (քիմ.): Ծծմբաթթվական աղ:

ՍՈՒԽԱՐԻ [< рուս. сухарь], գ. (խոհր.): 1. Կտորներով չորացրած հաց, պաքսիմատ: 2. *փխբ.* Նիհար՝ ոսկորն ու կաշին մնացած մարդ:

ՍՈՒԿՈՒԲԱ [< суккуба < լատ. succuba < succubare ներքևում պառկել], գ. (դից.): Եվրոպական միջնադարյան դիցաբանության մեջ՝ սատանա՝ կնոջ կերպարանքով:

ՍՈՒԿՈՒԼԵՆՏՆԵՐ [< суккуленты < լատ. succulentus հյութալի], գ. (բսբ.): Հյութալի, մսոտ տերևներով (հալվե, ագավաներ) կամ ցողուններով (կակտուսներ են) բազմամյա բույսեր: Աճում են Ամերիկայում և մասամբ Աֆրիկայում:

ՍՈՒՇԻ [< суши < ճապ. sushi], գ. (խոհր.): Ճապոնական խոհանոցի ուտեստ (ծովակաղամբի տերևի մեջ փաթաթած ծովային մթերք կամ բանջարեղեն):

ՍՈՒՄՈ [< сумо < ճապ. sumo], գ. (սպորտ.): Ճապոնական ըմբշամարտ

(ըմբիշները ծանր քաշ ունեն) և պայքարում են միմյանց դեմ յուրատեսակ կանոններով:

ՍՈՒՆՆԻՆԵՐ [< сунниты < արաբ. sunna ավանդություն], գ. (կրոն.): Սուննիներ՝ մահմեդական կրոնական երկու գլխավոր ուղղություններից մեկի հետևորդներ (մյուսինը՝ շիաներ):

ՍՈՒՊ [< суп < ֆր. soupe], գ. (խոհր. խսկց.): Ապուր:

ՍՈՒՊԵՐ... [< супер... < լատ. super վերևից, վրա, գեր..., վեր..., մակա...] Բարդ բառերի սկզբնամաս, որ նշանակում է՝ 1. Վերևից տեղադրված: 2. Որևէ բանի բարձրագույն որակ, բարձրագույն աստիճան: 3. Առաջնություն:

ՍՈՒՊԵՐՀԵՏԵՐՈԴԻՆԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԴՈՒՆԻՉ [< супергетеродинный (< սուպեր... + հուն. (h)odos ճանապարհ) приёмник] – (ռադ.): Ռադիոընդունիչ, որում մինչև ընդունվող ռադիոազդանշանի դետեկտումը կատարվում է նրա կրող հաճախականության՝ մոդուլացման օրենքը չփոխող փոխակերպում (նվազեցում):

ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ [< супермаркет < անգլ. supermarket < սուպեր... + market շուկա], գ. Գերխանութ (հաճախ մթերային ապրանքների մեծ տեսականիով):

ՍՈՒՊԵՐՄԵՆ [< супермен < անգլ. superman, բառացի՝ գերմարդ], գ. 1. (խսկց.): Գերմարդ՝ իրեն բոլորից բարձր և ամենակարող համարող անձ: 2. (կինո.): Արկածային ֆիլմերի, մարտաֆիլմերի ևն անհաղթ հերոս:

ՍՈՒՊԵՐՖՈՍՖԱՏ [< суперфосфат < սուպեր... + հուն.], գ. (քիմ.): Բնական ֆոսֆատներից ստացվող ֆոսֆորային պարարտանյութ, գերֆոսֆատ:

ՍՈՒՊԻՆ [< супин < լատ. supinum], գ. (լեզվբ.): Ապառնի դերբայը՝ բայաձև, որը շարժում ցույց տվող բայերի հետ գործածվելիս արտահայտում է նպատակ:

ՍՈՒՊԼԵՏԻՎԻԶՄ [< суппletивизм < ֆր. supplétif լրացուցիչ], գ. (լեզվբ.): Տարահիմքություն՝ քերականական արտահայտության միջոցներից, որի դեպքում բառաձևերը գոյանում են հիմքի փոփոխությամբ՝ ես-իմ, ուտել- կերա ևն:

ՍՈՒՊՐԵՄԱՏԻԶՄ [< супрематизм < լատ. supremus բարձրագույն], գ. (նկարչ.): Ավանգարդիստական արվեստի ուղղություն, որը ծագել է 1910-ական թթ. առաջին կեսին Ռուսաստանում: Հիմնադիրն է Կ. Ս. Մալևիչը: Այն արտահայտվել է երկրաչափական պարզագույն ուրվագծերով տարբեր գույնի հարթությունների՝ կերպարային իմաստից զուրկ համադրումներով:

ՍՈՒՊՐԵՍԻԱ [< суппрессия < լատ. suppressio ճնշում], գ. (կենսբ.): Ժառանգականորեն ձևափոխված օրգանիզմների (մուտանտների) հատկանիշների մասնակի կամ լրիվ վերականգնումը նոր մուտացիայի հետևանքով:

ՍՈՒՊԵՐՍՏՐԱՏ [< суперстрат < սուպեր... + լատ. stratum], գ. (լեզվբ.): Մակաշերտ, վերաշերտ՝ տեղացիների մեջ ձուլված եկվորների լեզվի տարրերի մնացորդը:

ՍՈՒՌՈԳԱՏ [< суррогат < լատ. surrogatus ուրիշի փոխարեն դրված], գ.1. (գրք.): Փոխարինիչ, որ ունի փոխարինող նյութի՝ մթերքի ևն միայն մի քանի հատկություններ: 2. *փխբ.* Որևէ բանի միայն թվացող նմանություն՝ տպավորություն:

ՍՈՒՍՊԵՆԶԻԱ [< суспензия < լատ. suspensio կախում], գ. (ֆիզ.): Կախույթներ՝ պինդ նյութի մասնիկներից և հեղուկից բաղկացած դիսպերս համակարգեր:

ՍՈՒՎԵՆԻՐ [< сувенир < ֆր. souvenir], գ. (խսկց.): 1. Հիշատակության նվեր, հիշանվեր: 2. Հուշանվեր, հուշահիր:

ՍՈՒՎԵՐԵՆ [< суверен < ֆր. souverain < լատ. suporus բարձրագույն], գ. Գերիշխան, բարձրագույն իշխանություն կրող անձ:

ՍՈՒՎԵՐԵՆԻՏԵՏ [< суверенитет < գերմ. Souveränität < ֆր. souveraineté], գ. (քղք.): Գերիշխանություն, ինքնիշխանություն, անկախություն:

ՍՈՒՏԵՆՅՈՐ [< сутенёр < ֆր. souteneur], գ. (խսկց.): Կավատ՝ անբարոյական գործունեությամբ զբաղվող միջնորդ անձ:

ՍՈՒՐԴՈԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Մատնախոսություն՝ մատներով խոսելը՝ որպես խուլհամրերի հաղորդակցման միջոց, որը գործածության մեջ է դրել մի ֆրանսիացի աբբա:

ՍՈՒՐԴՈՊԵԴԱԳՈԳԻԿԱ [< сурдопедагогика < լատ. surdus խուլ + պեդագոգիկա], գ. (գիտ.): Դեֆեկտոլոգիայի բնագավառ, որը զբաղվում է լսողության խանգարումներով (խուլ, թույլ լսող, ուշ խլացած) երեխաների ուսուցման և դաստիարակության հիմնախնդիրների մշակմամբ:

ՍՈՒՐԻԿ [< сурик < հուն. syrikon սիրիական ներկ], գ. Կարմրանարնջագույն կամ կարմրաշագանակագույն ներկ:

ՍՈՒՖԻԶՄ [< суфизм < արաբ. սուֆ - բուրդ. ճգնավոր սուֆիները կրում էին քուրձ], գ. (կրոն.): Կրոնափիլիսոփայական ուսմունք, որը ծագել է VIII դարում Արաբական խալիֆայության մշակութային կենտրոններում:

ՍՈՒՖԻՔՍ [< суффикс < լատ. suffixus կցում], գ. (լեզվբ.): Վերջածանց:

ՍՈՒՖԻՔՍԱՑԻԱ [< суффиксация < լատ.], գ. (լեզվբ. հնց.): Վերջածանցում:

ՍՈՒՖԼԵ [< суфле < ֆր. souffle, բառացի՝ պերճաշուք, շքեղ], գ. (խոհր.): 1. Հրուշակեղեն՝ հարած ձվի սպիտակուցներով: 2. Շաքարով սեր կամ կաթ՝ պաղպաղակ պատրաստելու համար:

ՍՈՒՖԼՅՈՐ [< суфлёр < ֆր. souffleur], գ. (խսկց. թատր.): Հուշարար:

ՍՈՒՖՈԶԻԱ [< суффозия < լատ. suffosio տակից քանդել, քայքայել], գ. (հնք.): Տարալվացում՝ ապարաշերտերում ծծված ջրով միներալային մանր մասնիկների և լուծվող նյութերի հեռացում:

ՍՓՐԵՅ [< спрей < անգլ. spray < to spray ցողել], գ. (տեխ.): Ցողիչ (անուշահոտ ջրեր, օծանելիք, բուրաջրեր ցողելու հարմարանք):

ՍՔԵՅԹ [< скейт < անգլ. skate < to skate սահել], գ. (խսկց.): Փոքր անիվներով տախտակ սահելու համար, սքեյթբորդի մարզագույք:

ՍՔԵՅԹԱԴՐՈՄ [< скейтадром < անգլ. skate + հուն. dromōs վազելու վայր], գ. (սպորտ.): Հատուկ մարզադաշտ սքեյթով սահելու համար:

ՍՔԵՅԹԲՈՐԴ [< скейтборд < անգլ. skateboard < to skate սահել + board տախտակ], գ. 1. (սպորտ.): Սքեյթով սահելու սպորտաձև: 2. Փոքր անիվներով տախտակ՝ սահելու համար:

ՍՔԵՅԹԵՐ [< скейтер < անգլ. skater], գ. (սպորտ.): Սքեյթբորդով զբաղվող մարզիկ:

ՍՔԻՆՀԵԴ [< скинхед < անգլ. skinhead < skin մաշկ, կաշի + head գլուխ], գ. (խսկց.): Սափրագլուխ՝ երիտասարդական խմբավորման անդամ, որը թշնամաբար է տրամադրված այլ ռասայի կամ ազգության մարդկանց (նրանք տարբերվում են մյուսներից իրենց սափրած գլուխներով):

ՍՔՈԹՉ [< скотч < անգլ. scotch մակակտրվածք], գ. (խսկց.): Կպչուն ժապավենափաթեթ, որից կարելի է հատել հատվածներ և օգտագործել փաթեթավորման նն նպատակներով:

ՍՔՎՈՇ [< сквош < անգլ. squash rackets < squash ռետինե փոքր գնդակ + racket թևճակ], գ. (սպորտ.): Որմնաթենիս:

ՍՔՐԻՆԻՆԳ [< скрининг < անգլ. screening < to screen տեսակավորել], գ. (բժշկ.):

Բնակչության մասսայական բուժզննում որոշակի հիվանդակիրների բացահայտման նպատակով:

ՍՖԱԼԵՐԻՏ [< сфалерит < հուն. sphaleros անկայուն, խաբուսիկ], գ. (քիմ.): Ցինկախաբ՝ սուլֆիդների կարգի միներալ, որը ցինկի հիմնական հանքանյութն է:

ՍՖԵՐԱ [< сфера < հուն. sphaira], գ. (խսկց.) Ոլորտ, բնագավառ:

ՍՖԵՐՈԼԻԹ [< сферолит < հուն. sphaira գունդ + lithos քար], գ. (ֆիզ.): Ռադիալ-ճառագայթային կառուցվածք ունեցող գնդաձև առաջացում, որը կազմված է անորոշելի բյուրեղային նյութի նրբագույն թելիկներից:

ՍՖԻՆՔՍ [< сфинкс < հուն. sphinx], գ. 1. Հին Եգիպտոսում՝ մարդկային գլխով առյուծի քարե քանդակ՝ արձան (որպես փարավոնի ուժի խորհրդանիշ): 2. (դից.): Հին հունական առասպելաբանության մեջ՝ առյուծի մարմնով և կնոջ գլխով ու կրծքով թևավոր էակ, որ կյանքից զրկում է այն բոլոր անցորդներին, որոնք չեն կարողանում լուծել իր առաջարկած առեղծվածը: 3. (կենդբ.): Թիթեռների մի ցեղ: 4. (կենդբ.): Պավիանների ցեղին պատկանող նեղքիթ կապիկ: 5. *փխբ.* Առեղծվածային բան, առեղծված: 6. *փխբ.* Անհասկանալի՝ առեղծվածային բնավորություն՝ հոգի ունեցող մարդ:

ՍՖՐԱԳԻՍՏԻԿԱ [< сфрагистика < հուն. sphrages կնիք], գ. (մանգ.): Կնքագիտություն (կնիքները ուսումնասիրող գիտություն):

Վ

ՎԱ ԲԱՆԿ [< ва-банк < ֆր. va banque < va – 3-րդ դեմք եզ. թիվ aller գնալ բայից + banque դրամատուն],ձայն. (խսկց.): Բացականչություն թղթախաղի ժամանակ, որ նշանակում է՝ բանկում եղած ամբողջ գումարն եմ խաղում:

ՎԱԳԱՆՏՆԵՐ [< ваганты < լատ. vagans (vagantis) < vagare թափառել], գ. (պատմ.): Թափառական ուսանողներ, աշակերտներ, ցածրաստիճան հոգևորականության ներկայացուցիչներ միջնադարյան Արևմտյան Եվրոպայում:

ՎԱԳՈՆ [< вагон < անգլ. wagon], գ. (երկթղ.): 1. Ռելսային գծերով ուղևորներ ու ապրանքներ տեղափոխելու համար կահավորված տրանսպորտային միջոց: 2. Ապրանքային վագոնի տարողությամբ բեռ:

ՎԱԳՈՆԵՏ [< вагонетка], գ. (երկթղ.): Վագոնիկ:

ՎԱԳՐԱՆԿԱ [< вагранка < Ավստրիայի Վագրայն (Wagrain) տեղանվան անունից], գ. (տեխ.): Չուգունահալոց, թուջահալ կամ գունավոր մետաղներ հալող կամ զանազան նյութեր թրծող հնոց, հալոց:

ՎԱԴԻ [< вады եզակի թիվ < արաբ. wādī], գ. Չոր կամ ժամանակավոր ջրահոսքերով հովիտների արաբերեն անվանումը Հյուսիսային Աֆրիկայում և Արաբական թերակղզում:

ՎԱԶ(Ա) [< ваза < ֆր. vase], գ. (խսկց.): Գեղեցիկ ոճավոր անոթ՝ մրգեղենի, ծաղիկների ևն համար, սկահակ, ծաղկաման:

ՎԱԶԱՁԵՎ, ած. Վազի՝ վազայի ձև ունեցող, անոթաձև:

ՎԱԶԵԼԻՆ [< вазелин < ֆր. vaseline], գ. (քիմ.): Նավթից ստացվող յուրատեսակ քսուք, որ օգտագործում են բժշկության և տեխնիկայի բնագավառում:

ՎԱԼԵՆԿԱ [< ռուս. валенки], գ. (խսկց.): Թաղիքե տաք ոտնաման, կաճյակ:

ՎԱԼԵՆՏ(ՈՒԹՅՈՒՆ), ՎԱԼԵՆՏ(ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) [< валентность < valens (valentis) ուժ ունեցող], գ. (քիմ.): Արժեքականություն՝ ատոմի՝ քիմիական կապեր առաջացնելու հատկությունը:

ՎԱԼԵՏ [< валет < ֆր. valet], գ. (թղթխդ.): Խաղաթղթի զինվոր:

ՎԱԼԵՐԻԱՆ [< валерьяна, валериана < լատ. Valeriana], գ. (բսբ.): Խոտաբույս, որի արմատները և կեղևը օգտագործվում են բժշկության մեջ, աղբաղբուկ, կատվախոտ:

ՎԱԼԵՐԻԱՆԿԱ [< валерьянка < լատ.], գ. (դեղրծ.): Վալերիանի կաթիլներ՝ աղբաղբուկից ստացվող դեղաթուրմ, որ օգտագործվում է որպես սրտի լարվածությունը մեղմացնող դեղ:

ՎԱԼԻԴՈԼ [< валидол < լատ. validus ամուր, առողջ + ol(eum) յուղ], գ. (դեղրծ.): Անոթալայնիչ դեղ:

ՎԱԼԻԶԱ [< вализа < ֆր. valise ճամպրուկ], գ. (դվնգ.): Դիվանագիտական սուրհանդակի փոստային տուփ, անձեռնմխելի տոպրակ:

ՎԱԼԿԻՐԻԱ [< валькирия < հին սկանդ. valkyria, բառացի՝ մեռելներին ընտրող], գ. (դից.): Ռազմատենչ կին (առասպելական Օդին աստծու դուստրը):

ՎԱԼՅՈՒՏԱ [< валюта < իտլ. valuta, բառացի՝ գին, արժեք], գ. 1. (տնտսգ.): Որևէ պետության դրամական համակարգի հիմքը հանդիսացող դրամական միավոր, արժույթ: 2. Տվյալ երկրի դրամական համակարգի տեսակը: 3. (հվք.): Օտար պետության դրամներ (թղթադրամ, մետաղադրամ են), որոնք փոխանակելի են ոսկով: 4. Մուրհակի արժույթ: 5. *փխբ.* Որևէ տեսակետից որոշ առավելություն՝ նպաստավոր վիճակ ստեղծող միջոց:

ՎԱԼՈՐԻԶԱՑԻԱ [< валоризация < ֆր. valorisation < valeur գին, արժեք], գ. (ֆին.): 1. Արժեաճեցում, արժևորում՝ ապրանքների, արժեթղթերի ևն գների արհեստական բարձրացում: 2. Տե՛ս Ռևալվացիա:

ՎԱԼՊՈՒՐԳՅԱՆ ԳԻՇԵՐ [< вальпургиева(< գերմ. Walpurgisnacht) ночь] - 1. (կրոն.): Կաթոլիկ սուրբ Վալպուրգի տոնին նախորդող գիշերը: 2. *փխբ.* Վայրի ու աղմկոտ խառնաժողով:

ՎԱԼՍ [< вальс < ֆր. valse], գ. (արվ.): 1. Եվրոպական եռատակտ պար, որ պարում են զույգերով: 2. Այդ պարի համար կամ դրա տակտով գրված երաժշտական ստեղծագործություն:

ՎԱԼՎԱՑԻԱ [< вальвация < անգլ. valuation < լատ. valēre արժենալ], գ. (ֆին.): Օտարերկրյա արժույթի գնի որոշումը տվյալ երկրի դրամով:

ՎԱԼՏԵՐ [< вальтер < գերմ. Walter < գերմանական զենք արտադրող ֆիրմայի անունից], գ. (ռազմ.): Ութփամփուշտանի ինքնաձիգ ատրճանակ (9 մմ տրամաչափի):

ՎԱԼՏՈՐՆ [< валторна < գերմ. Waldhorn որսորդական եղջյուր, փող], գ. (երժշտ.): Պղնձյա երաժշտական գործիք, որ աչքի է ընկնում փափուկ ու լիահունչ ձայնով, գալարափող:

ՎԱԽՄԻՍՏՐ [< вахмистр < գերմ. Wachtmeister], գ. (պատմ.): Հեծելազորի սպայական աստիճան ցարական Ռուսաստանում (համապատասխանում էր հետևակի ֆեդֆեբելին):

ՎԱԿԱՆՍԻԱ [< вакансия < ֆր. vacance < լատ. vacans թափուր, ազատ], գ. (խսկց.): Թափուր աշխատատեղ՝ պաշտոն (առավել. ազատ տեղ ուսումնական հիմնարկում), որի համար հայտատարվում է մրցույթ՝ նոր աշխատող ընդունելու նպատակով:

ՎԱԿՑԻՆԱ [< вакцина < լատ. vaccinus կովի], գ. (բժշկ.): Վարակի հիվանդությունները կանխելու համար սրսկելու պատվաստանյութ:

ՎԱԿՑԻՆԱՑԻԱ [< вакцинация < լատ. vaccinus], գ. Պատվաստանյութը սրսկվելը, վակցինացում:

ՎԱԿՑԻՆՈԹԵՐԱՊԻԱ [< вакцинотерапия < վակցինա + թերապիա], գ. (բժշկ.): Պատվաստանյութերի կիրառումը՝ որպես վարակիչ հիվանդությունների բուժման եղանակ:

ՎԱԿՈՒՈԼ [< вакуол < լատ. vacuus դատարկ], գ. (կենսբ.): Կենդանական ու բուսական բջիջներում գոյացած փոքրիկ խոռոչ, որ լցված է լինում կենսական հեղուկով:

ՎԱԿՈՒՈՒՄ [< вакуум < լատ. vacuum դատարկություն], գ. 1. (ֆիզ.): Գազի մթնոլորտային ճնշումից ցածր ճնշման վիճակ անթափանց անոթում կամ սարքում: 2. *փխբ.* Դատարկություն:

ՎԱԿՖ [< вакф < արաբ. wakf, բառացի՝ կանգ առնել, անշարժանալ], գ. Մահմեդական երկրներում, սկսած արաբական տիրապետության ժամանակաշրջանից, պետության, ֆեոդալների և ունևոր հավատացյալների կողմից մզկիթներին, եկեղեցիներին, ուսումնական հաստատություններին իբրև հավիտյան անօտարելի, ապահարկ սեփականություն նվիրած հողային տիրույթներ ու այլ եկամտաբեր ստացվածքներ:

ՎԱՄՊԻՐ [< вампир < գերմ. Vampir < ֆր. vampire], գ. 1. (հնց.): Մեռել, որ ըստ ժողովրդական սնահավատության գիշերները դուրս է գալիս գերեզմանից՝ կենդանի մարդկանց արյունը ծծելու: 2. *փխբ.* Ուրիշի արյունը ծծող՝ կեղեքող, անգութ կերպով շահագործող: 3. (կենդբ.): Չղջիկների ցեղին պատկանող հարավամերիկյան խոշոր չղջիկ:

ՎԱՆԱԴԻՈՒՄ [< ванадий < սկանդինավյան գեղեցկության աստվածուհի Վանադիսի անունից], գ. (քիմ.): V, պարբերական համակարգի IV պարբերության V խմբի տարր, կարգահամարը՝ 23, ատոմական զանգվածը՝ 50.94: Մաքուր վանադիումը օգտագործվում է ատոմային էներգետիկայում և էլեկտրոնային սարքաշինության մեջ:

ՎԱՆԴԱԼ(ՆԵՐ) [< вандалы < լատ. Vandali < գերմ. Vandalen], 1. գ. ած. *փխբ.* Բարբարոս, վայրենաբարո մարդ, գազան: 2. *փխբ.* Տգետ՝ հետամնաց մարդ: 3. հոգն. Վանդալներ՝ հին գերմանական ցեղ, որ 455 թ. նվաճեց հռոմեական կայսրության մի մասը՝ ավերելով, կողոպտելով և կործանելով Հռոմի արվեստի լավագույն հուշարձանները:

ՎԱՆԴԱԼԻԶՄ [< вандализм, տե՛ս Վանդալ], գ. 1. Վանդալական լինելը, վանդալական բնույթ: 2. Վանդալական արարք՝ գործ, բարբարոսություն:

ՎԱՆԻԼ [< ваниль < ֆր. vanille < իսպ. vainilla], գ. 1. (բսբ.): Արևադարձային բույս՝ երկար նուրբ պտուղներով: 2. Այդ բույսի չորացրած բուրումնավետ պտուղները, որոնք գործածվում են խոհարարության և պարֆյումերիայի մեջ:

ՎԱՆԻԼԻՆ [< ванилин < ֆր., իսպ.], գ. Վանիլի պատիճից ստացվող կամ արհեստականորեն պատրաստվող բուրավետ նյութ:

ՎԱՆՆԱ [< ванна < գերմ. Wanne < լատ. vannus խոր ճաշաման], գ. (խսկց.): 1. Մեծ՝ խոր ու երկարաձև աման, որի մեջ լոգանք են ընդունում կամ լվացք անում, լոգարան: 2. Լոգանք: 3. Լողասենյակ:

ՎԱՆՏ [< ванты < հոլանդ. want], գ. (ծով.): Ճոպան:

ՎԱՍԱԼ [< вассал < ֆր. vassal], գ. (պատմ.): Միջնադարյան Եվրոպայում՝ կալվա-

ծատեր-ֆեոդալ, որ կախման մեջ էր ավելի խոշոր ֆեոդալից: 2. *փխբ.* Ենթարկված՝ կամակատար՝ կախյալ պետություն՝ հասարակական խմբավորում՝ մարդ:

ՎԱՍԱԼԻՏԵՏ [< вассалитет < ֆր. vassalité], գ. (պատմ.): Միջնադարում ֆեոդալների մի մասից (սենյորներ) մյուսների (վասալներ) անձնական կախվածության հարաբերությունների համակարգ:

ՎԱՏԵՐԺԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՌԱՐԱՆ [< ватержакетная (< անգլ. water-jacket, բառացի՝ ջրային շապիկ) печь] - (տեխ.): Հալման հորանաձև հնոց, որի պատերը կազմված են ջրով հովացվող սնամեջ մետաղական տուփերից՝ կեսոններից:

ՎԱՏԵՐՊԱՍ [< ватерпас < հոլանդ. waterpas], գ. (տեխ.): Հարթացույց:

ՎԱՏԵՐՊՈԼ(Ո) [< ватерполо < անգլ. water-polo], գ. (սպորտ. հնց.): Ջրագնդակ՝ սպորտային մարզաձև, երբ երկու թիմեր ջրի մեջ ձգտում են ձեռքով գնդակը նետել հակառակորդի դարպասը:

ՎԱՏԻՆ(Ա) [< ватин < вата < գերմ. Watte բամբակ], գ. Բամբակե նոսր գործվածք՝ աստառի տակ դնելու համար:

ՎԱՏՏ [< ватт < անգլ. watt Ջ. Վատտի անունից], գ. Էլեկտրական հոսանքի հզորությունը չափելու միավոր, վտ:

ՎԱՏՏԱՆՈՑ, ած. Թվականի ցույց տված քանակով վատտերի հզորություն ունեցող:

ՎԱՏՏԱՉԱՓ, գ. Էլեկտրական հոսանքի հզորությունը չափելու սարք:

ՎԱՐԻԱՆՏ [< вариант < ֆր. variante < լատ. varians (variantis) փոփոխվող], գ. (խսկց.): Տարբերակ, տարատեսակ:

ՎԱՐԻԱՑԻԱ [< вариация < լատ. variatio փոփոխություն], գ. 1. Որևէ բանի երկրորդական տարրերի՝ բաղադրիչների՝ մասերի փոխարկում՝ զանազանում (հիմնականի պահպանումով), տարատեսակացում: 2. (կենսբ.): Տարատեսակ, կենդանիների կամ բույսերի հիմնական տեսակի այլաձևությունը՝ տարատեսակությունը: 3. (երժշտ.): Երաժշտական թեմայի վերամշակումը տարբեր ձևափոխություններով:

ՎԱՐԻԱՑԻՈՆ [< вариационный < լատ.], ած. 1. Վարիացիային հատուկ: 2. Վարիացիա ներկայացնող՝ հանդիսացող:

ՎԱՐԻԵՏԵ [< варьете < ֆր. variété], գ. Թեթև ժանրի էստրադային թատրոն:

ՎԱՐԻԿԱՊ [< варикап < անգլ. varicap < vari (able) փոփոխական + cap(acity) ունակություն], գ. (տեխ.): Պարամետրական կիսահաղորդչային դիոդ, որում օգտագործվում է հակադարձ լարումից ունակության կախվածությունը: Կիրառվում է էլեկտրոնային սարքերում:

ՎԱՐԻԿՈԶ [< варикозный < գերմ. varkiös < լատ. varix(varicis) անոթների լայնացում], ած. (բժշկ.): Ընդլայնացմանն ու կարծրացմանը հատուկ՝ վերաբերող:

ՎԱՐԻԿՈՆԴ [< вариконд < անգլ. varicond < vari (able) փոփոխական + cond(enser) կոնդենսատոր], գ. (տեխ.): Սեգնետակերամիկական կոնդենսատոր, որի ունակության կախումը շրջադիրներին կիրառված էլեկտրական լարումից ունի խիստ արտահայտված ոչ գծային բնույթ:

ՎԱՐԻՈԼՈԻԴ [< вариолоид < ուշ լատ. variola ծաղիկ հիվանդություն + հուն. eidos տեսակ], գ. (բժշկ.): Ծաղիկ հիվանդության (ծաղկախտի) թեթև տեսակ:

ՎԱՐԻՈՄԵՏՐ [< вариометр < լատ. variare փոփոխել + մետր], գ. 1. (ռադ.): Փոփոխական ինդուկտիվության կոճ՝ տատանողական օղակը պահանջվող հաճախականությանը հարմարեցնելու համար: 2. (երկրֆիզ.): Սարք, որը ծառայում

է որևէ երկրաֆիզիկական մեծության՝ օրինակ, ժամանակի ընթացքում Երկրի մագնիսական դաշտի լարվածության (մագնիսական Վ.), Երկրի մակերևույթին մոտ հորիզոնական ուղղությամբ ծանրության ուժի (գրավիտացիոն Վ.) փոփոխությունը որոշելու համար: 3. (օդգ.): Ինքնաթիռավարման սարք՝ թռիչքի բարձրության փոփոխման արագությունը որոշելու համար:

ՎԱՐԻՍՏՈՐ [< варистор < անգլ. varistor < vari (able) + (resi)stor ռեզիստոր], գ. (տեխ.): Կիսահաղորդչային ռեզիստոր, որի էլեկտրական դիմադրությունը դրական և բացասական լարման ազդեցությամբ փոփոխվում է ոչ գծային օրենքով:

ՎԱՐՅԱԳՆԵՐ [< ռուս. варяги], գ. (պատմ.): Բյուզանդական ու հին ռուսական անվանումը նորմանների, որոնք IX-X դարերում արշավեցին Արևմտյան և Արևելյան Եվրոպա, ինչպես և ծառայեցին Ռուսիայում և Բյուզանդիայում՝ իբրև վարձու զինվորներ:

ՎԱՐՎԱՐԻԶՄ [< варваризм < հուն. barbarismos], գ. (լեզվբ. հնց.): Օտարաբանություն՝ տվյալ լեզվի լեզվական նորմային չհամապատասխանող օտար բառ:

ՎԱՈՒՉԵՐ [< ռուս. ваучер < անգլ. voucher երաշխավոր], գ.(ֆին.): Արժեթուղթ, հավաստագիր, հավաստատոմս:

ՎԱՔՍ [< вакса < գերմ. Wachs մոմ], գ. Զանազան գույների ու բաղադրությամբ քսուք, որ գործածում են կոշիկների երեսի կաշին փափկացնելու և փայլեցնելու համար:

ՎԱՖԼԻ [< вафля < գերմ. Waffel < Wabe բջիջ], գ. (խոհր.): Երեսին քառակուսաձև դրոշմվածքներ ունեցող բարակ ու չոր թխվածք:

ՎԵԲ... [< веб... < անգլ. web-հապավում Word Wide Web համացանց (ինտերնետի մասին)] Բարդ բառերի սկզբնամաս «համացանցում (ինտերնետում) գտնվող» իմաստով:

ՎԵԳԵՏԱՏԻՎ [< вегетативный < լատ. vegetativus], ած. Բուսական օրգանիզմների աճման, սննդառության ևն ծառայող, աճեցողական, սնուցողական:

ՎԵԳԵՏԱՐՅԱՆ [< вегетарианский < անգլ. vegetarian < ուշ լատ. vegetarium բուսական], ած. գ. Բուսակերական, բուսակերների, բուսակեր (մարդ):

ՎԵԳԵՏԱՑԻԱ [< вегетация < լատ. vegetatio], գ. (բսբ.): Բույսերի կենսագործունեություն՝ աճ, բուսաճություն, աճեցողություն (բույսերի):

ՎԵԳԵՏԱՑԻՈՆ [< вегетационный < լատ.], ած. (բսբ.): Բուսաճական, աճեցողական, վեգետացիային հատուկ:

ՎԵԴԱՆԵՐ [< веды < սանսկրիտ vēda գիտելիք], գ. (պատմ.): Հնդկական բանահյուսության հնագույն հուշարձաններ՝ ստեղծված մ.թ.ա. II հազարամյակի վերջին I հազարամյակի 1-ին կեսին սանսկրիտով:

ՎԵԴԱՆՏԱ [< веданта < սանսկրիտ vēdānta], գ. (պատմ.): Կրոնափիլիսոփայական ազդեցիկ և տարածված ուղղություն մ.թ. VIII-IX դդ.:

ՎԵԴԻԶՄ [< ведизм < սանսկրիտ Vēda գիտելիք], գ. (կրոն.): Վեդայականություն՝ կրոնական հնագույն ուսմունք՝ հիմնված Վեդաներում արտահայտված գաղափարների վրա. տարածված էր հյուսիսային Հնդկաստանում:

ՎԵԴՐՈ [< ռուս. ведро], գ. (խսկց.): Դույլ:

ՎԵԼԴ [< велд < հոլանդ. veld դաշտ.] գ. Չորային սարավանդի անվանումը Հարավային Աֆրիկայում՝ Դրակոնյան լեռներից արևմուտք:

ՎԵԼԻՏ [< велит < լատ. velites հոգնակի vēlēs < vēlōx արագաշարժ, թեթև բառաձևից], գ. (պատմ.): Հին Հռոմում՝ թեթևազեն հետևակազոր:

ՎԵԼՅԱՐԻԶԱՑԻԱ [< веляризация < լատ. velaris < velum վարագույր, քող, ծածկույթ], գ. (լեզվբ. հնց.): Քմայնացում՝ հնչյունների կրած փոփոխությունն արտահայտելու ժամանակ լեզվամեջքի միջին մասը կոշտ քիմքին մոտեցնելու հատկանքով, որից հնչյունները փափկության երանգ են ստանում:

ՎԵԼՅՈՒՐ [< велюр < ֆր. velours թավիշ], գ. 1. Խրոմի դաբաղվածքով, զամշի տեսքով կաշի, որ օգտագործվում է որպես կոշկերեն: 2. Մահուդի՝ թավշի՝ պլյուշի մի քանի տեսակների անվանումը:

ՎԵԼՈ... [< вело... < լատ. vēlōx արագ] Բարդ բառերի առաջին բաղադրիչ՝ «հեծանիվ, հեծանվային» նշանակությամբ:

ՎԵԼՈԴՐՈՄ [< велодром < լատ. velox (velocis) արագ, շուտ + հուն. dromo տեղ վազքի համար], գ. (խսկց.): Հեծանվային մրցավազքերի համար հատուկ վազքուղիներով մարզադաշտ, հեծանվահրապարակ:

ՎԵԼՎԵՏ [< вельвет < անգլ. velvet թավիշ], գ. Բամբակե գործվածք՝ թավշանման խավով:

ՎԵԿՍԵԼ [< вексель < գերմ. Wechsel], գ. (ֆին.): Մուրհակ՝ խիստ սահմանված ձև ունեցող գրավոր պարտավորություն, որը նրա տիրոջը (մուրհակատիրոջը) անվիճելի իրավունք է տալիս ժամկետը լրանալուց հետո պարտապանից պահանջել մուրհակում նշված գումարի վճարումը:

ՎԵԿՏՈՐ [< вектор < լատ. vector կրող, տանող], գ. (մաթ.): Որոշակի ուղղությամբ ձգվող ուղղագիծ հատված, որի սկիզբն է այն կետը, որից ելնում է, և վերջը՝ այն կետը, որին հանգում է:

ՎԵՆԱ [< вена < լատ. vena], գ. (խսկց.): Երակ, արյունատար անոթ:

ՎԵՆԴԵՏԱ [< вендетта < իտլ. vendetta], գ. (գրք.): Վրեժ, սպանված հարազատի փոխարեն արյան վրեժ, որ իբրև սովորություն գոյություն է ունեցել հին ժողովուրդների մեջ, այժմ էլ գոյություն ունի Կորսիկական կղզիների և Սարդինիայի բնակչության որոշ մասի մեջ:

ՎԵՆԵՊՈՒՆԿՑԻԱ [< венепункция < լատ. vena անոթ + punctio ծակոց], գ. (բժշկ.): Անոթի ծակումը ասեղով՝ դեղ սրսկելու և այլ նպատակներով:

ՎԵՆԵՍԵԿՑԻԱ [< венесекция < լատ. vena անոթ + sectio կտրում, կտրելը], գ. (բժշկ.): Անոթի բացում՝ հատում արյան փոխներարկման, դեղամիջոցների ներարկման նպի համար:

ՎԵՆԵՐԱ [< Венера < լատ. Venus (Veneris)], գ. 1. (դից.): Հին հռոմեական դիցաբանության մեջ՝ սիրո և գեղեցկության, նաև գարնան և պտղաբերության աստվածուհին: Համապատասխանում է հունական Աֆրոդիտեին: 2. (աստղգ.): Արուսյակ մոլորակը:

ՎԵՆԵՐԱԽՏ, գ. 1. Վեներական ախտ՝ հիվանդություն: 2. (կզմխս.): Մասնավորապես՝ սիֆիլիս:

ՎԵՆԵՐՈԼՈԳ [< венеролог < լատ. Venus + հուն. logos ուսմունք], գ. (բժշկ.): Վեներոլոգիայի մասնագետ բժիշկ:

ՎԵՆԵՐՈԼՈԳԻԱ [< венерология < լատ. + հուն.] գ. (բժշկ.): Բժշկության բաժին, որ զբաղվում է վեներական հիվանդությունների ուսումնասիրությամբ ու բուժումով:

ՎԵՆԶԵԼ [< вензель < լեհ. węze~ հանգույց], գ. Վարդագրանուն, անվանագիր՝ անվան և ազգանվան սկզբնատառերի ծաղկագիրը:

ՎԵՆՏԻԼ [< вентиль < գերմ. Ventil փական, կափույր], գ. (խսկց.): 1. Հեղուկի՝ գազի՝ շոգու նն հոսանքը կարգավորելու և փակելու կափույր, փական: 2. (երժշտ.):

Երաժշտական փողավոր պղնձե գործիքների հարմարանք ձայնի բարձրությունը փոխելու համար:

ՎԵՆՏԻԼՅԱՏՈՐ [< вентилятор < լատ.], գ. (խսկց.): Օդափոխիչ՝ օդափոխության սարք՝ հարմարանք, քամհար:

ՎԵՆՏԻԼՅԱՑԻԱ [< вентиляция < լատ. ventilatio օդափոխում], գ. (տեխ.): Օդափոխություն՝ փակ միջավայրի (շենքի, սենյակի ևն) օդը դրսի թարմ օդի հոսանքով թարմացնելը, դրսի և ներսի օդի փոխանակություն:

ՎԵՆՏԻԼՅԱՑԻՈՆ [< вентиляционный < լատ.], ած. Օդափոխական, վենտիլյացիային՝ օդափոխությանը վերաբերող:

ՎԵՆՏՐՈԼՈԳ [< вентролог < լատ. venter (ventris) փոր, որովայն + հուն. logōs գիտություն], գ. (բժշկ.): Որովայնախոս՝ որովայնը ուսումնասիրող և դրա հիվանդությունները բուժող բժիշկ:

ՎԵՉԵ [< ռուս. вече], գ. (պատմ.): Հին և միջնադարյան Ռուսիայում՝ ժողովրդական հավաք ընդհանուր գործերի քննարկման համար, որոշ քաղաքներում (Նովգորոդ, Պսկով)՝ իշխանության բարձրագույն մարմին:

ՎԵՍՏԱ [< веста < լատ. Vesta], գ. 1. (դից.): Քաղաքային համայնքի, կուրիայի, տան և սրբազան կրակարանի նաև ընտանեկան կյանքի մաքրության աստվածուհին հին հռոմեական դիցաբանության մեջ: 2. (աստղգ.): Մի փոքրիկ մոլորակի անուն:

ՎԵՍՏԱԼՈՒՀԻ, գ. (պատմ.): 1. Հին Հռոմում՝ Վեստա աստվածությանը սպասարկող քրմուհի, որը պետք է Վեստայի զոհասեղանի կրակը գիշեր-ցերեկ անմար պահեր և 30 տարի պահպաներ կուսությունը: 2. *փխբ.* Պարկեշտ՝ անմատչելի կույս (ասվում է հեգնանքով՝ պառաված աղջիկների մասին):

ՎԵՍՏԵՐՆ [< вестерн < անգլ. western < west արևմուտք], գ. (կինո): Արկածային կինոնկար ամերիկյան Արևմուտքի առաջին նորաբնակիչների կյանքից:

ՎԵՍՏԻԲՅՈՒԼ [< вестибюль < ֆր. vestibule < լատ. vestibulum նախամուտք], գ. (խսկց.): 1. Նախասրահ, շքամուտքի սրահ: 2. Սպասասրահ: 3. Ճեմասրահ:

ՎԵՍՏԻԲՈՒԼՅԱՐ [< вестибулярный < ֆր. vestbulaire < լատ. vestibulum նախամուտք], ած. (կենսբ.): Ողնաշարավոր կենդանիների և մարդու զգայական օրգանների մասին՝ տարածության մեջ գլխի և մարմնի դիրքի փոփոխությունները ընկալող և հավասարակշռության պահպանումն ապահովող:

ՎԵՏԵՐԱՆ [< ветеран < լատ. veteranus < vetus ավագ, փորձառու], գ. (խսկց.): 1. Հին՝ փորձված մարտիկ՝ զորական: 2. *փխբ.* Որևէ բնագավառի (արտադրության, արվեստի, գիտության ևն) հին՝ վաստակավոր՝ երկարամյա ստաժ ունեցող գործիչ:

ՎԵՏԵՐԻՆԱՐ [< ветеринар < ֆր. vétérinaire < լատ. verterīnārius անասունների համար նախատեսված], գ. (հնց.): Անասնաբույժ:

ՎԵՏԵՐԻՆԱՐԻԱ [< ветеринария < ֆր. < լատ.], գ. (հնց.): Անասնաբուժություն:

ՎԵՏՈ [< вето < լատ. veto արգելում եմ], գ. 1. Պետական իրավունքի մեջ՝ պետական մարմնի կողմից մի այլ պետական մարմնի որոշման նկատմամբ դրվող վերջնական կամ պայմանական արգելք: 2. (իրավբ.): Միջազգային իրավունքի մեջ՝ միջազգային կոլեգիալ մարմինների բացառապես միաձայնություն պահանջող հարցերի լուծման ժամանակ որևէ անդամի անհամաձայնություն (սովորաբար քվեարկության միջոցով), որ խախտում, անկարելի է դարձնում որոշման ընդունումը:

ՎԵՏՉԻՆԱ [< ռուս. ветчина], գ. (խսկց.): Խոզի ապխտած միս:

ՎԵՐԱՆԴԱ [< веранда < անգլ. veranda], գ. Շենքին կից բաց կամ ապակեպատ կառույց, ծածկապատշգամբ:

ՎԵՐԲԱԼ [< вербальный < լատ. verbalis < verbum բառ], ած. (հնց.): Բանավոր, բերանացի:

ՎԵՐԴԻԿՏ [< вердикт < լատ. veredictum ճիշտ է ասված], գ. (խսկց.): Դատավճիռ:

ՎԵՐԺԵ [< верже < ֆր. vergé], գ. ած. (տպգր.): Զուգահեռ գծերի երկու համակարգով ստեղծվող՝ գրանիշի նման ցանցաձև նախշով ընտիր թղթի տեսակ:

ՎԵՐԼԻԲՐ [< верлибр < ֆր. vers libre, բառացի՝ ազատ ոտանավոր], գ. (տոչփ.): Ազատ ոտանավոր:

ՎԵՐՄԱԽՏ [< вермахт < գերմ. Wehrmacht], գ. (պատմ.): Ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերը, որին ջախջախեց ԽՍՀՄ բանակը 1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմում:

ՎԵՐՄԻՇԵԼ [< вермишель < իտլ. vermicelli հոգն.], գ. (խոհր.): Գործարանային արտադրության՝ բարակ ու նուրբ խմորաթելի (լապշայի) տեսակ:

ՎԵՐՄՈՒՏ [< вермут < գերմ. Wermut], գ. Որոշ խոտերի թուրմերով խաղողի սպիրտային գինու տեսակ:

ՎԵՐՆԻՍԱԺ [< вернисаж < ֆր. vernissage, բառացի՝ լաքավորում], գ. 1. Գեղարվեստական ցուցահանդեսի բացման օրը: 2. Նկարների ցուցահանդես, վաճառահանդես: 3. (խսկց.): Երևանի մի տարածք, որտեղ վաճառվում են արվեստի գործեր:

ՎԵՐՍԻԱ [< версия < ուշ լատ. versio], գ. 1. (խսկց.): Որևէ փաստի, իրողության կամ իրադարձության իրարից անկախ ու տարբեր պատումներից՝ մեկնաբանություններից յուրաքանչյուրը, մեկնակերպ: 2. Ենթադրություն, կանխատեսում:

ՎԵՐՍՏ [< ռուս. верста], գ. 1. Երկարության ռուսական հին չափ =1.06 կմ: 2. Վերստայուն:

ՎԵՐՏԵԲՐՈԼՈԳԻԱ [< вертебрология < լատ. vertebra ողնաշար + հուն. logōs գիտություն], գ. (բժշկ.): Ողնաշարագիտություն՝ բժշկության բաժին, որն ուսումնասիրում է ողնաշարի հիվանդությունները և մշակում դրանց բուժման մեթոդները:

ՎԵՐՖ [< верфь < հոլանդ. werf], գ. 1. Նավաշինարան: 2. Դիրիժաբլների կառուցման և կայացման համար նախատեսված շինություն:

ՎԻԱԴՈՒԿ [< виадук < ֆր. viadus < via ճանապարհ, ուղի + duco տանում եմ], գ. Խոր ձորակով կամ լեռնային կիրճով անցկացվող կամուրջ. ուղեկամուրջ:

ՎԻԲՐԱՏՈՐ [< вибратор < լատ.], գ. (ֆիզ.): Ալեկազմիչ, թրթռանակ. սարք՝ հարմարանք՝ տատանողական շարժումներ առաջ բերելու համար:

ՎԻԲՐԱՑԻԱ [< вибрация < լատ. vibratio], գ. 1. Առաձգական մարմնի տատանողական շարժում, թրթռում: 2. (երժշտ.): Ձայնի բարձրության արագ ու աննշան տատանում՝ ելևէջում:

ՎԻԲՐԱՑԻՈՆ [< вибрационный < լատ.], ած. Վիբրացիային հատուկ, վիբրացիայի հետ կապված:

ՎԻԲՐԻՈՆ [< вибрион < լատ. vibrion], գ. (կենսբ.): Կորաձև ցուպիկի կամ ստորակետի ձև ունեցող մանրէ, թրթռուկ, կորամանրէ, կորացուպիկ:

ՎԻԲՐՈ... [< вибро... < լատ. vibrare տատանել, թրթռալ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերի կապը տատանումների, թրթռումների հետ:

ՎԻԲՐՈԳՐԱՖ [< виброграф < վիբրո... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Ինքնագիր սարք, որը գրանցում է տատանվող մարմինների կրած փոփոխությունները:

ՎԻԲՐՈՄԵՏՐ [< виброметр < վիբրո... + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.):

էլեկտրամագնիսական սարք տատանումները՝ թրթռումները ուսումնասիրելու համար:

ՎԻԳԻ [< виги < անգլ. whig < We hope in God «Մենք Աստծու վրա ենք հույսը դնում» արտահայտության կրճատումից], գ. (պատմ.): Քաղաքական կուսակցություն Անգլիայում XVIII-XIX դդ. (լեյբորիստների նախորդները):

ՎԻԳՈՆ [< вигонь < ֆր. vigogne < իսպ. vicuña], գ. (կենդբ.): 1. Հարավամերիկյան ուղտայծ՝ նուրբ և փափուկ բրդով: 2. Այդ կենդանու բուրդը և դրանից պատրաստված գործվածք:

ՎԻԳՎԱՄ [< вигвам < հնդկց.] գ. Հյուսիսամերիկյան հնդկացիների ճյուղահյուս (նաև կեղևից հյուսած կամ մորթիներից սարքած) հյուղ՝ խրճիթ:

ՎԻԴԵՈ... [< видео... < լատ. video տեսնում եմ] Բարդ բառերի առաջին բաղադրիչ «տեսա...» նշանակությամբ:

ՎԻԴԵՈԿԱՄԵՐԱ [< видеокамера < վիդեո... + կամերա], գ. (տեխ. խսկց.): Տեսախցիկ:

ՎԻԴԵՈԿԱՍԵՏ [< видеокассета < վիդեո... + կասետ], գ. (տեխ. խսկց.): Տեսաերիզի, տեսաժապավենի տուփ:

ՎԻԴԵՈԿԼԻՊ [< видеоклип < վիդեո... + կլիպ], գ. (խսկց.): Տեսահոլովակ:

ՎԻԴԵՈՄԱԳՆԻՏՈՖՈՆ [< видеомагнитофон < վիդեո... + մագնիտոֆոն], գ. (տեխ. խսկց.): Տեսաձայնագրիչ:

ՎԻԴԵՈՄԱՆ [< видеоман < վիդեո... + ... ման], գ. Տեսաֆիլմերի կրքոտ սիրահար:

ՎԻԴԵՈՍԻԳՆԱԼ [< видеосигнал < վիդեո... + սիգնալ], գ. (տեխ. խսկց.): Տեսաազդանշան:

ՎԻԴԵՈՏԵԼԵՖՈՆ [< видеотелефон < վիդեո... + տելեֆոն], գ. (տեխ. խսկց.): Տեսահեռախոս:

ՎԻԴԵՈՏԵԽՆԻԿԱ [< видеотехника < վիդեո... + տեխնիկա], գ. (տեխ. խսկց.): Տեսասարքավորումներ:

ՎԻԴԵՈՏԵԿԱ [< видеотека < գերմ. Videothek], գ. (տեխ. խսկց.): Տեսաերիզների՝ տեսաժապավենների հավաքածու:

ՎԻԴԵՈՓԼԵՅԵՐ [< видеоплеер < վիդեո...+փլեյեր], գ. (տեխ. խսկց.): Տեսախաղարկիչ:

ՎԻԴԵՈՖԻԼՄ [< видеофильм < վիդեո... + ֆիլմ], գ. (տեխ. խսկց.): Տեսաֆիլմ, տեսակինոնկար:

ՎԻԴԻԿՈՆ [< видикон < լատ. videre նայել, տեսնել + հուն. eikon պատկեր], գ. (տեխ.): Հաղորդիչ հեռուստատեսային խողովակ, որի աշխատանքը հիմնված է լուսային ազդանշաններն էլեկտրականի փոխակերպելու համար լիցքերի կուտակման վրա: Կիրառվում է արդյունաբերական հեռուստատեսության դյուրատար տեղակայանքներում:

ՎԻԶԱ [< виза < լատ. visa], գ. 1. Կառավարական թույլտվության մակագրություն անձնագրի վրա՝ տվյալ երկիրը մտնելու, նրանից հեռանալու կամ նրա միջով անցնելու մասին: 2. Փաստաթղթի վրա դրվող՝ դրոշմվող վավերացում՝ նշան այն մասին, որ այն ներկայացված է ստուգման, հաշվառման ևն համար պատասխանատու պաշտոնական անձին: 3. *փխբ.* Թույլտվություն, կանչ:

ՎԻԶԱԺԻՍՏ [< визажист < ֆր. visagiste < visage դեմք], գ. (հնց.): Դիմահարդարիչ, դիմահարդարող:

ՎԻԶԱՎԻ [< визави < ֆր. vis- à-vis], 1. մկ. Դեմուդեմ, դեմառդեմ, դեմ դիմաց: 2. գ. Դիմացինը, դեմուդեմ գտնվողը:

ՎԻԶԻՐ [< визир < գերմ. Visier < ֆր.], գ. 1. (ռազմ.): Նշանոց: 2. Հայակ, դիտանոց, դիտան: 3. (աստղգ.): Նշանահայակ, դիտասևեռակ:

ՎԻԶՈՒԱԼ [< визуально < լատ. visualis], ած. (խսկց.): Տեսողական:

ՎԻԼԱՅԵԹ [< вилайет < թուրք. vilâyet < արաբ. wilāya(t)], գ. Վարչատարածքային միավոր Թուրքիայում:

ՎԻԼԼԱ [< вилла < լատ. villa], գ. (խսկց.): Շքեղ ամառանոց, պերճատուն:

ՎԻԿ [< ռուս. вика], գ. (բսբ.): Գլուլ, գյուլուլ:

ՎԻԿԱՎԱՐՍԱԿԱՅԻՆ, ած. Վիկի և վարսակի:

ՎԻԿԻՆԳ [< викинг < հին սկանդ. viking], գ. (պատմ.): Հին սկանդինավյան ծովային զինվոր:

ՎԻԿՈՆՏ [< виконт < ֆր. vicomte], գ. Դերկոմս՝ ազնվականական կոչում Արևմտյան Եվրոպայում բարոնի և գրաֆի միջև:

ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱ [< виктимология < լատ. victima զոհ + հուն. logōs գիտություն], գ. (իրավք.): Իրավագիտության բաժին, որն ուսումնասիրում է զոհի և հանցագործի (հանցագործության) հարաբերությունները, կապը, հանգամանքները ևն:

ՎԻԿՏՈՐԻԱ [< виктория < լատ. victoria հաղթանակ], գ. (բսբ.): 1. Ջրաշուշանազգիների ընտանիքին պատկանող բույս: 2. Բանջարանոցային մի քանի բույսերի (ելակի, ռևանդի ևն) անվանումը: 3. (խսկց.): Հաղթանակ:

ՎԻԿՏՈՐԻՆԱ [< ռուս. викторина], գ. Գիտելիքների տարբեր բնագավառների վերաբերյալ հարցերին գրավոր կամ բանավոր պատասխանելու խաղազբաղմունք, հանելուկախաղ:

ՎԻՄՊԵԼ [< вымпел < հոլանդ. wimpel], գ. 1. Նավի պատկանելիությունը ցույց տվող նեղ ու երկար, երկճյուղ ծայրով դրոշակ: 2. Նեղ ու երկար կամ եռանկյունաձև դրոշակ: 3. Վառ գույնի երկար ժապավենով տուփ՝ օդանավից զեկուցագրեր ու զանազան փաստաթղթեր ցած գցելու համար: 4. Սպորտային մրցանակ կամ հուշանվեր, հուշադրոշ:

ՎԻՆԴԻԿԱՑԻԱ [< виндикация < լատ. vindicatio պահպանություն, պաշտպանու-

թյուն], գ. (իրավք.): Սեփականատիրոջ (հայցվորի) կողմի դատական կարգով իր ունեցվածքը հետ ստանալու պահանջը ցանկացած երրորդ անձից, ով առանց որևէ օրինական հիմքի տիրապետում է այդ ունեցվածքին:

ՎԻՆԴՍԵՐՖԵՐ [< виндсёрфер < անգլ. windsurfer], գ. (սպորտ.): Փոքր կայմով և առագաստով հատուկ տախտակ վինդսերֆինգի համար, լողատախտակ, ջրատախտակ:

ՎԻՆԴՍԵՐՖԻՆԳ [< виндсёрфинг < անգլ. windsurfing < wind քամի + surfing ալիքների վրայով սահելը], գ. (սպորտ.): Ջրային մարզաձև. մարզիկը սահում է ջրի վրայով վինդսերֆերի միջոցով:

ՎԻՆՉԵՍՏԵՐ [< винчестер < ամերիկացի գյուտարար Ա. Օ. Վինչեստերի անունից], գ. (ռազմ.): Որսորդական հրացանի տեսակ:

ՎԻՆԵԳՐԵՏ [< винегрет < ֆր. vinaigrette քացախից, յուղից ևն պատրաստված սոուս՝ կերակուր], գ. 1. (խոհ.): Մանր կտրտած բանջարեղենով, յուղով (կամ ձեթով), քացախով և զանազան համեմունքներով պատրաստվող սառը ուտելիք: 2. *փխբ.* Տարասեռ հասկացությունների՝ երևույթների ևն խառնուրդ:

ՎԻՆԵՏԿԱ [< виньетка < ֆր. vignette < vigne խաղող, խաղողի որթ], գ. 1. Գրքի գլխազարդ, գրաղրվագ, դրվագազարդ: 2. (խսկց.): (Ողկուզավոր) խմբանկար (որևէ ուսումնական հաստատություն ավարտելիս):

ՎԻՆՏ [< ռուս. винт], գ. (խսկց.): 1. Պտուտակ՝ պտուտակային պարուրակով գլանաձև ձող(իկ): 2. Թիավարման պտուտակ, թիապտուտակ:

ՎԻՆՏԱԴԱՐՁ, գ. Պտուտակադարձ:

ՎԻՇԿԱ [< ռուս. вышка], գ. (խսկց.): 1. Աշտարակ, դիտանոց: 2. Վերնատուն: 3. Վերնակ:

ՎԻՈԼԱ [< виола < իտլ. viola], գ. (երժշտ.): Միջին դարերում ռոմանական երկրներում տարածված լարային աղեղնավոր գործիքների ընդհանուր անվանումը:

ՎԻՈԼՈՆՉԵԼ [< виолончель < իտլ. violoncello], գ. (երժշտ.): Ջութակի ձև ունեցող, բայց շատ խոշոր երաժշտական քառալար գործիք, թավջութակ:

ՎԻՈԼՈՆՉԵԼԱՀԱՐ, գ. (երժշտ.): Վիոլոնչել նվագող երաժիշտ, թավջութակահար:

ՎԻՈԼՈՆՉԵԼԻՍՏ [< виолончелист < իտլ.], գ. (երժշտ.): Տե՛ս Վիոլոնչելահար:

ՎԻՍԿԻ [< виски < անգլ. whisky], գ. Անգլիական թունդ ոգելից խմիչք:

ՎԻՍԿՈԶ [< вискоза < լատ. viscosus կպչուն, մածուցիկ], գ. Ցելյուլոզի հատուկ մշակումով ստացվող թանձր զանգված, որից պատրաստում են արհեստական մետաքս, կինոժապավեններ ևն:

ՎԻՍԿՈԶԻՆ [< вискозин < լատ.], Մասնակիորեն մաքրված նավթային քսայուղ:

ՎԻՍՏ [< вист < անգլ. whist], գ. (թղթխղ.): 1. Թղթախաղի մի տեսակ: 2. Թղթախաղի որոշ տեսակների մեջ՝ խաղացողների մասնակցությունը ցույց տվող հայտարարություն:

ՎԻՎԱՐԻՈՒՄ [< виварий < լատ. vivarium < vivus կենդանի], գ. Կենդանիներ (փորձեր կատարելու կամ ցուցադրելու) պահելու տեղ՝ շենք, կենդանեկեցարան:

ՎԻՎԱՏ [< виват! < լատ. vivat թող ապրի], գ. (ձայն): Կեցցե՜:

ՎԻՎԱՉԵ [< виваче < իտլ. vivace], գ. (երժշտ.): Շատ արագ, արագ տեմպով:

ՎԻՎԵՐՆԵՐ [< виверры < լատ. Viverra], գ. (կենդբ.): Գիշատիչների կարգի կաթնասուն կենդանիների ընտանիք՝ տաք երկրներում բնակվող (Աֆրիկա, Հարավային Ասիա, Հարավային Եվրոպա):

ՎԻՎԻԱՆԻՏ [< вивианит < անգլ. հանքաբան Ջ. Գ. Վիվիանի (J. G. Vivian) ազգանվամբ], գ. (քիմ.): Անգույն թափանցիկ միներալ մոնոկլինային խմբից: Օգտա-

գործվում է որպես ֆոսֆորական պարարտանյութ և կապույտ ներկ պատրաստելու համար:

ՎԻՎԻՊԱՐԻԱ [< вивипария < լատ. viviparus կենդանածին], գ. (կենդբ.): Կենդանածնություն:

ՎԻՎԻՍԵԿՑԻԱ [< вивисекция < լատ. vivus կենդանի + sectio հատում, կտրում], գ. (կզմխս.): Կենդանահերձություն, կենդանահերձում:

ՎԻՏԱԼԻԶՄ [< витализм < լատ. vitalis կենսական], գ. Կենսաբանության մեջ՝ ուղղություն, որը կենսական գործընթացներն ու կյանքի երևույթները բացատրում է ոչ թե նյութական պատճառով, այլ կենդանի արարքների մեջ գերբնական «կենսուժի» առկայությամբ:

ՎԻՏԱԼԻՍՏ [< виталист < լատ.], գ. ած. Վիտալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՎԻՏԱՄԻՆ [< витамин < լատ. vita կյանք], գ. (կենսբ.): Մարդու և կենդանիների սննդի, նյութափոխանակության ու մարմնի կենսագործունեության համար ոչ մեծ քանակությամբ, բայց անխուսափելիորեն անհրաժեշտ՝ քիմիական տարբեր բաղադրություններով օրգանական նյութերի ընդհանուր անվանումը, կենսանյութ:

ՎԻՏԵՐԻՏ, ՎԻԹԵՐԻՏ [< витерит < անգլ. գիտնական Ու. Վիթերինգի (W. Withering 1741-99թթ.) ազգանվամբ], գ. (քիմ.): Բյուրեղագիտական ռոմբային համակարգով միներալ՝ անգույն, գորշ, դեղին, շագանակագույն գույնի: Օգտագործվում է թղթի և ռետինի արդյունաբերության մեջ բարձրորակ սպիտակ ներկ ստանալու համար:

ՎԻՏՐԱԺ [< витраж < ֆր. vitrage < լատ. vitrum ապակի], գ. (խսկց.): Ապակենկար՝ զարդապատկերային կամ սյուժետային դեկորատիվ կոմպոզիցիա ապակուց կամ լուսաթափանցիկ այլ նյութից:

ՎԻՏՐԻՆ(Ա) [< витрина < ֆր. vitrine], գ. (խսկց.): Ցուցափեղկ՝ 1. Խանութի ապակեպատ մեծ ու լայն պատուհան, որ հարմարված է տարբեր ապրանքների նմուշներ զետեղելու և ցուցադրելու համար: 2. Ցուցատեղ՝ ապակյա կափարիչով արկղ, որի մեջ զետեղվում են ցուցադրելի նյութերը՝ ցուցանմուշները նն:

ՎԻՐ(Ռ)Ա [< вира < իտլ. virare շրջել], ձայն. (խսկց.): Շինարարների մասնագիտական լեզվում՝ բարձրացրո՛ւ (վերև):

ՎԻՐԱԺ [< вираж < ֆր. virage < virer շրջել, շրջվել, երանգափոխել], գ. 1. (խսկց.): Շրջադարձ: 2. Սովորական պիլոտաժի թռիչքաձև, երբ ինքաթիռը հորիզոնական հարթության մեջ կատարում է 360° պտույտ՝ հաստատուն կողաթեքումով և հաստատուն համընթաց ու անկյունային արագություններով: 3. Ավտոմոբիլային ճանապարհի շրջադարձի, ավտոդրոմի, հեծանվահրապարակի կորացման հատված, որն ունի ճանապարհածածկույթի միակողմանի լայնական թեքություն: 4. Սահուն շրջադարձի վրա գտնվող՝ ջրանցքի տեղամաս, որն ունի հատակի լայնական թեքություն: 5. Լուսանկարչական պոզիտիվ պատկերները երանգավորելու լուծույթ:

ՎԻՐԻԼԻԶՄ [< вирилизм < լատ. virilis տղամարդկային, տղամարդու], գ. (կենսբ.): Տղամարդակերպություն՝ կանանց մոտ տղամարդու երկրորդային սեռական հատկանիշների առկայություն (օր.՝ բեղեր, մորուք նն):

ՎԻՐՏՈՒԱԼ [< виртуальный < ուշ լատ. virtualis ուժեղ, ունակ], ած. Հնարավոր, հայտնվող, երևան եկող, բացահայտվող:

ՎԻՐՏՈՒՈԶ [< виртуоз < իտլ. virtuoso < լատ. virtus ուժ, խիզախություն, տաղանդ], գ., ած. (երժշտ.): 1. Տեխնիկական նշանակալից դժվարությունները

փայլուն կերպով հաղթահարող երաժիշտ: 2. Մարդ, որն իր մասնագիտության մեջ բարձրագույն վարպետության է հասել:

ՎԻՐՈՒԼԵՆՏՈՒԹՅՈՒՆ [< вирулентность < լատ. virulentus թունավոր], գ. (կենսբ.): Տվյալ միկրոօրգանիզմի հիվանդության (վարակունակության) աստիճանը:

ՎԻՐՈՒՍ(ՆԵՐ) [< вирусы < լատ. virus թույն], գ. (կենսբ.): 1. Մարդու, կենդանիների և բույսերի վարակիչ հիվանդությունների հարուցիչներ: 2. (տեխ.): Համակարգիչը խափանող ծրագիր:

ՎԻՐՈՒՍՈԼՈԳԻԱ [< вирусология < վիրուս + հուն. logos գիտություն], գ. (գիտ.): Վիրուսաբանություն՝ վիրուսներն ուսումնասիրող գիտություն:

ՎԻՑԵ... [< вице... < լատ. vice] Նախամասնիկ, որը նշանակում է բարձր պաշտոնյայի տեղակալ կամ օգնական:

ՎԻՔԵՆԴ [< уик-энд < անգլ. weekend, բառացի՝ շաբաթվա վերջ], գ. (խսկց.): Հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի, նաև այդ օրերին կազմակերպված միջոցառում՝ ճանապարհորդություն՝ խրախճանք ևն:

ՎՈԲԼԱ [< ռուս. вобла], գ. (կենդբ,): Մի տեսակ ծովային ձուկ, որ ուտում են առավելապես չորացրած և ապխտած վիճակում:

ՎՈԴԵՎԻԼ [< водевиль < ֆր. vaudeville], գ. Թեթև զավեշտական փոքրիկ (սովորաբար 1-2 գործողությամբ) պիես, որի մեջ երկխոսություններին հաջորդում են երգային փոքրիկ հատվածները:

ՎՈԼԱՆ [< волан < ֆր. volant < voler թռչել], գ. (սպորտ. հնց.): Փետրագնդակ (բադմինթոնի):

ՎՈԼԱՊՅՈՒԿ [< волапюк < արհեստական բառակազմություն volapük < անգլ. world աշխարհ, երկիր + speak խոսել], գ. (լեզվբ.): Արհեստական լեզու, որի հորինողները ցանկանում էին այն դարձնել միջազգային հաղորդակցման միջոց:

ՎՈԼԵՅԲՈԼ [< волейбол < անգլ. volleyball], գ. (սպորտ.): Սպորտային խմբական գնդակախաղի մի տեսակ, որի ժամանակ յուրաքանչյուր թիմը աշխատում է գնդակը ցանցի վրայով հակառակորդի հրապարակում գետին գցել:

ՎՈԼԵՅԲՈԼԻՍՏ [< волейболист < անգլ.], գ. ած. (սպորտ.): Վոլեյբոլով զբաղվող (մարզիկ):

ՎՈԼՅՈՒՆՏԱՐԻԶՄ [< волюнтаризм < լատ. voluntarius կամային], գ. 1. (փիլ.): Աշխարհայացք, որը աշխարհի զարգացման գործընթացում վճռական դեր է հատկացնում կամքին, ժխտում է օբյեկտիվ օրինաչափությունները և բնության ու հասարակության անհրաժեշտությունը: 2. (հոգեբ.): Կամայականություն:

ՎՈԼՅՈՒՆՏԱՐԻՍՏ [< волюнтарист < լատ.], գ. Վոլյունտարիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՎՈԼՈՆՏՅՈՐ [< волонтёр < ֆր. volontaire], գ. Կամավորական:

ՎՈԼՈՍՏ [< ռուս. волость], գ. (պատմ. մինչհ.): 1. Գյուղական շրջանի վարչական միավոր, գավառակ: 2. Հին Ռուսաստանում՝ մի իշխանի ենթակա մարդ:

ՎՈԼՏ [< вольт < իտալացի ֆիզիկոս Ա. Վոլտայի անունով], գ. (ֆիզ.): Էլեկտրական հոսանքի չափման միավոր:

ՎՈԼՏ-ԱՄՊԵՐ [< вольт-ампер < вольт + ампер, տե՛ս Վոլտ և Ամպեր], գ. (ֆիզ.): Փոփոխական էլեկտրահոսանքի թվացող հզորությունը չափելու միավոր:

ՎՈԼՏԱՉԱՓ, գ. (ֆիզ.): Էլեկտրական շղթայի երկու կետերի միջև էլեկտրահոսանքի լարվածությունը չափելու գործիք:

ՎՈԼՏՄԵՏՐ [< вольтметр < վոլտ + մետր], գ. Տե՛ս Վոլտաչափ:

ՎՈԼՖՐԱՄ [< вольфрам < գերմ. Wolfram], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթավուն-սպիտակ դժվարահալ մետաղ:

ՎՈԼՖՐԱՄԻՏ [< вольфрамит < գերմ.], գ. Կարծր պողպատի հատուկ տեսակներ պատրաստելու համար օգտագործվող հանք՝ միներալ:

ՎՈԿԱԲՈՒԼԱ [< вокабула < լատ. vocabulum անուն, բառ], գ. (լեզվբ. հնց.): 1. Բառացանկ (թարգմանված բառերի): 2. Բառահոդվածի գլխաբառ:

ՎՈԿԱԼ [< вокальный < ֆր. vocal < լատ. vocalis ձայնային], ած. (երժշտ.): 1. Երգային: 2. Երգեցիկ:

ՎՈԿԱԼԻԶ [< вокализ < ֆր. vocalise < լատ. vocalis ձայնավոր հնչյուն, հնչող, երգող], գ. (երժշտ.): Առանց բառերի՝ ձայնավոր հնչյուններով երգվող ստեղծագործություն:

ՎՈԿԱԼԻԶԱՑԻԱ [< вокализация < ֆր. < լատ.], գ. (երժշտ.): Երգեցողություն առանց խոսքի, լոկ ձայնավոր հնչյուններով:

ՎՈԿԱԼԻՍՏ [< вокалист < լատ.], գ. ած. (երժշտ.): 1. Ձայն մշակող մասնագետ: 2. Իր ձայնին կատարելապես տիրապետող երգիչ

ՎՈՅԱԺ [< вояж < ֆր. voyage ճամփորդություն], գ. (խսկց. հնց.): Ճամփորդություն, ճանապարհորդելը:

«ՎՈՅԱՋԵՐ» [< "Вояджер" < անգլ. "Voyager", բառացի՝ ճանապարհորդ], գ. Յուպիտերի, Սատուրնի, Ուրանի և դրանց արբանյակների ուսումնասիրման ամերիկյան ավտոմատ միջմոլորակային կայանների սերիայի անվանումը:

ՎՈՏՉԻՆԱ [< ռուս. вотчина], գ. (հնց.պատմ.): Ժառանգական հողային տիրույթ հին Ռուսիայում, հայրենական կալվածք:

ՎՈՏՈՒՄ [< вотум < լատ. votum ցանկություն], գ. (իրավբ.): Քվեարկությամբ ընդունված որոշում:

ՎՈՒԼԳԱՐ [< вульгарный < լատ. vulgaris սովորական, հասարակ], ած. Գռեհիկ, կոպիտ, անպատշաճ:

ՎՈՒԼԳԱՐԻԶԱՑԻԱ [< вульгаризация < ֆր. vulgarisation < լատ.], գ. (խսկց.): Գռեհկացում:

ՎՈՒԼԳԱՐԻԶՄ [< вульгаризм < լատ.], գ. (լեզվբ.): Գռեհկաբանություն:

ՎՈՒԼԿԱՆ [< вулкан < լատ. vulcanus կրակ, բոց], գ. 1. (երկրբ.): Հրաբուխ: 2. *փխբ.* Շատրվան, որևէ բանի ուժգին ժայթքում:

ՎՈՒԼԿԱՆԱՅՈՒՄ, գ. (տեխ.): 1. Կաուչուկի՝ գուտապերիչի ևն մշակումը ծծումբով՝ սովորաբար բարձր ջերմությամբ՝ առավել ամրություն ու ճկունություն տալու համար: 2. Վուլկանացնելը, վուլկանացվելը:

ՎՈՒԼԿԱՆԻԶԱՑԻԱ [< вулканизация < լատ.], գ. (տեխ.): 1. Նույնն է՝ Վուլկանացում (1): 2. (խսկց.) Ավտոդողերի վերանորոգման արհեստանոց:

ՎՈՒԼԿԱՆԻԶՄ [< вулканизм < լատ.], գ. (գիտ.): Հրաբխայնություն:

ՎՈՒԼԿԱՆՈԼՈԳԻԱ [< вулканология < վուլկան + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Հրաբխագիտություն:

ՎՈՒՆԴԵՐԿԻՆԴ [< вундеркинд < գերմ. Wunderkind հրաշմանուկ], գ. (խսկց.): Իր տարիքին անհամապատասխան արտակարգ ընդունակություններ ունեցող երեխա, հրաշամանուկ:

Տ

ՏԱԲԱԿ [< табак < գերմ. Tabak < իսպ. tabaco < արավակերեն՝ ամերիկյան հնդկացիների ամենատարածված լեզուներից], գ. (հնց.): 1. (բսբ.): Ծխախոտ, ծխախոտաբույս: 2. Ծխախոտաբույսի չորացրած ու փշրված տերևները՝ որպես ծխելիք, քթախոտ:

ՏԱԲԱԿԵՐԿԱ [< табакерка < լեհ. tabakierka < ֆր. tabatière ծխատուփ], գ. (հնց.): Ծխախոտատուփ, ծխատուփ, քթախոտաման, քթատուփ:

ՏԱԲԵԼ [< табель < գերմ. Tabelle աղյուսակ < լատ. tabella տախտակիկ], գ. (գրաս.): Տախտակ՝ աղյուսակ՝ ցուցակ, որ պարունակում է որոշ կարգի տվյալներ թվարկվող մարդկանց՝ առարկաների ևն մասին, հաշվետախտակ:

ՏԱԲԵԼԱՎԱՐ, գ. ած. Հիմնարկության՝ ձեռնարկության ևն աշխատակիցների աշխատանքի լինելը և բացակայություններն ու ուշացումները տաբելի մեջ գրանցող և հաշվառող պաշտոնյա:

ՏԱԲԼԵՏԿԱ [< таблетка < ֆր. tablette], գ. (խսկց.): Հաբ, դեղահատ:

ՏԱԲԼԻՑԱ [< таблица < լատ. tabula տախտակ], գ. (խսկց.): Աղյուսակ, ցուցակ, ցուցատախտակ:

ՏԱԲԼՈ [< табло < լատ. tabula], գ. (խսկց.): Հայտարարությունների վահանակ:

ՏԱԲՈՐ [< табор < թուրք. tabur], գ. (խսկց.): 1. Գնչուների թափառախումբ՝ իջավայր՝ վաչկաճամբար՝ վրանախումբ: 2. (պատմ.): Ռազմաճամբար, բանակավայր, ամրացված ռազմաճամբար (կոզակների): 3. Ճամբար, թափառախումբ, իջևանավայր:

ՏԱԲՈՒ [< табу < պոլինեզ. tabu արգելք], գ. 1. Նախնադարյան ժողովուրդների մոտ՝ որևէ գործողության՝ բառի՝ առարկայի ևն գործածության արգելք, որի խախտումը, ըստ սնոտիապաշտական պատկերացումների, պատժվում է գերբնական ուժերի կողմից: 2. *փխբ.* Արգելված բան: 3. *փխբ.* Արգելք:

ՏԱԲՈՒԼԱ ՌԱԶԱ [< табула раза < լատ. tabula rasa հարթ, մաքուր տախտակ], (փիլ.): Սենսուալիզմի տերմին. արտահայտում է դեռևս գիտելիք չունեցող մարդու գիտակցության վիճակ՝ պայմանավորված արտաքին զգայական փորձի բացակայությամբ: Տարածվել է շնորհիվ Ջոն Լոկի:

ՏԱԲՈՒԼԱՏՆԵՐ [< табуляты < լատ. tabulata], գ. (հնէաբ.): Մահացած կորալային պոլիպների ենթախումբ: Ապրել են ծովերի ծանծաղ գոնայում:

ՏԱԲՈՒԼՅԱՏՈՐ [< табулятор < լատ. tabula տախտակ], գ. (տեխ.): Հաշվեմեքենա՝ էլեկտրատեխնիկական թվանշանային հաշվողական մեքենա, որն ավտոմատ կերպով ինֆորմացիա է ընթերցում ծակոտաքարտերից:

ՏԱԲՈՒՆ I [< табун < թուրք. tabun], գ. (հնց.): 1. Երամակ (ձիերի ևն), երամ (բաղերի ևն): 3. *փխբ.* Բազմություն, մեծ խումբ:

ՏԱԲՈՒՆ II [< табун < գերմ. Tabun], գ. (քիմ.): Թունավոր նյութ (անգույն հեղուկ):

ՏԱԲՈՒՐԵՏԿԱ [< табуретка < ֆր. tabouret], գ. (խսկց.): Աթոռակ:

ՏԱԼԿ [< тальк < գերմ. Talk < արաբ.], գ. (հնք.): Սպիտակ կամ կանաչավուն փափուկ շերտավոր հանք, որ օգտագործում են տեխնիկայում և բժշկության մեջ (սովորաբար փոշիացած վիճակում):

ՏԱԼՈՆ [< талон < ֆր. talon], գ. (խսկց.): 1. Կտրոն: 2. Փաստաթղթի կրկնօրինակ, որ մնում է չեկային, օրդերային ևն գրքույկի մեջ, կոճղաթերթ:

ՏԱԼՎԵԳ [< тальвег < գերմ. Talweg < Tal հովիտ + Weg ճանապարհ], գ. (երկրբ.):

Հովիտների, ձորակների ու հեղեղատների հատակի առանցքային ամենախոր մասերը միացնող գիծը:

ՏԱԽԻԿԱՐԴԻԱ [< тахикардия < հուն. tachys (tacheos) արագ + kardia սիրտ], գ. (բժշկ.): Սրտի կծկումների՝ զարկերի հաճախանալը, հաճախականություն:

ՏԱԽՈԳԵՆԵՐԱՏՈՐ [< тахогенератор < հուն. tachys (tacheos) արագ, սրընթաց + գեներատոր], գ. (տեխ.): Տախոդինամո, էլեկտրական գեներատոր, որը մեխանիկական պտույտի հաճախականությունը փոխակերպում է էլեկտրական ազդանշանի:

ՏԱԽՈՄԵՏՐ [< тахометр < հուն. tachys (tacheos) + metreō չափում եմ], գ. (տեխ.): Մեքենաների և մեխանիզմների լիսեռների պտտման հաճախականությունը (անկյունային արագությունը) չափելու սարք:

ՏԱԿԵԼԱԺ [< такелаж < գերմ. Takelage < հոլանդ. takelage], գ. (տեխ.): Նավի հանդերձանք, որը նախատեսված է ռանհոուտը պահելու, ազդանշանները բարձրացնելու, նավակները իջեցնելու, բեռնամբարձ աշխատանքներ կատարելու համար:

ՏԱԿ(Ք)ՍԱ [< такса < գերմ. Taxe < լատ. taxare գնահատել], գ. (խսկց.): Դրույքաչափ, սակագին:

ՏԱԿ(Ք)ՍԱՑԻԱ [< таксация < գերմ. Taxation < լատ. taxare գնահատել], գ. 1. (ֆին.): Գնահատում, սակորոշում, սակադրում, գնորոշում: 2. (մանգ.): Որակի ու քանակի որոշում:

ՏԱԿՏ I [< такт < գերմ. Takt < լատ. tactus շփում, զգացում, շոշափում], գ. 1. (երժշտ. և տոչփ.): Երաժշտական և բանաստեղծական ստեղծագործության մեջ՝ ժամանակի միավոր՝ հավասար տևողությամբ փոքր հատվածներից յուրաքանչյուրը, որոնց բաժանվում է ստեղծագործությունը՝ համաձայն չափական շեշտերի քանակի, ամանակ: 2. Որևէ շարժման՝ գործողության հավասարաչափ հատվածներից յուրաքանչյուրը, ռիթմ, զարկ: 3. Երաժշտական գրվածքներում տակտերը իրարից բաժանող գիծ:

ՏԱԿՏ II [< такт < ֆր. tact < լատ. tactus], գ. Չափի՝ չափավորության զգացում, որ թելադրում է առավել ճիշտ՝ առավել բարեպատշաճ վերաբերմունք մեկի կամ մի բանի նկատմամբ:

ՏԱԿՏԻԿԱ [< тактика < հուն. taktika զորքերի դասավորման արվեստ < tassō զորքեր եմ կանգնեցնում], գ. (ռազմ.): 1. Մարտին նախապատրաստվելու և մարտը վարելու արվեստը, մարտը վարելու միջոցների ու եղանակների ամբողջությունը, մարտավարություն: 2. Գիտություն մարտը վարելու եղանակների ու միջոցների մասին: 3. *փխբ.* Հասարակական ու քաղաքական պայքարի միջոցներն ու ձևերը: 4. *փխբ.* Նպատակին հասնելու համար գործադրվող միջոց՝ եղանակ: 5. (սպորտ.): Խաղի՝ պայքարի՝ մրցման մեջ հաղթանակի հասնելու համար գործադրվող միջոցներն ու եղանակները:

ՏԱՄԲՈՒՐ [< тамбур < ֆր. tambour < իտլ. tambur թմբուկ], գ. 1. (ճարտ.): Թմբուկ (գմբեթը պահող): 2. (խսկց.): Նախամուտք, հողմարգել: 3. (երկթղ.): Վագոնի փակ հարթակ, փակ սրահակ:

ՏԱՄՊՈՆ [< тампон < ֆր. tampon, բառացի՝ խցան], գ. (բժշկ.): Արնահոսությունը կասեցնող միջադիր:

ՏԱՄ-ՏԱՄ [< тамтам < հնդկց.], գ. (երժշտ.): Հարվածային գործիքների մի տեսակ:

ՏԱՅԳԱ [< ռուս. тайга < թուրք.], գ. (երկրբ.): Վայրի՝ դժվարանցանելի ընդարձակածավալ փշատերև անտառային գոտի, որ տարածվում է Եվրոպայի հյուսիսում, Ասիայում և Ամերիկայում:

ՏԱՅՄ [< тайм < անգլ. time ժամանակ], գ. (սպորտ. խսկց.): Խաղափուլ (ֆուտբոլում են):

ՏԱՆԳԵՆՍ [< тангенс < լատ. tangens շոշափող], գ. (մաթ.): Սուր անկյան եռանկյունաչափական ֆունկցիաներից մեկը, որը ուղղանկյուն եռանկյան մեջ հավասար է այդ անկյան հակադիր էջի և կից էջի հարաբերությանը, շոշափագիծ:

ՏԱՆԳՈ [< танго < իսպ. tango], գ. (արվ.): Եվրոպական դանդաղ պար, ինչպես և այդ պարի համար գրված երաժշտությունը:

ՏԱՆԴԵՄ [< тандем < անգլ. tandem], գ. 1. Միանման կառուցվածքների դասավորությունը նույն առանցքի վրա: 2. (սպորտ.): Երկթամբ հեծանիվ: 3. Հաջորդաբար դասավորված գլաններով մեքենա:

ՏԱՆԿ [< танк < անգլ. tank], գ. (ռազմ.): Թնդանոթներով ու գնդացիրներով զինված թրթուրավոր զրահամեքենա, որը կարող է անցնել անճանապարհ խորդուբորդ տեղանքով: (արևմտհ.): Հրասայլ:

ՏԱՆԿԵՐ [< танкер < անգլ. tank ջրատակառ, բաք], գ. (ծով.): Հեղուկ բեռը առանց տարայի տեղափոխող նավ:

ՏԱՆԿԵՏԿԱ [< танкетка < անգլ. tank], գ. (խսկց.): Կանացի ոտնամանի մի տեսակ:

ՏԱՆԿԻՍՏ [< танкист < անգլ. tank], գ. 1. Տանկային զորամասի զինվորական ծառայող: 2. Տանկավար՝ տանկի վարորդ:

ՏԱՆՏԱԼ [< тантал < հուն. Tantalos], գ. 1. (դից.): Հունական առասպելաբանության հերոս՝ Լիդիայի թագավորը, որ Զևսի կողմից դատապարտված էր դժոխքում հավիտենապես տանջվելու քաղցից և ծարավից՝ չնայած ջրի և պտուղների մոտիկ լինելուն: 2. (քիմ.): Քիմիական հազվագյուտ տարր. կարծր, դժվարահալ բաց մոխրագույն մետաղ:

ՏԱՍՍ [< ռուս. ТАСС *հպկ.* Телеграфное Агенство Советского Союза Խորհրդային Միության հեռագրական գործակալություն], գ. (պատմ.): ԽՍՀՄ կենտրոնական տեղեկատվական գործակալություն:

ՏԱՎԵՐՆԱ [< таверна < իտալ. taverna խրճիթ], գ. (խսկց.): Խորտկարան Իտալիայում:

ՏԱՎՈՏ [< ռուս. тавот], գ. Թանձր քսայուղ՝ մեքենաների, մեխանիզմների ևն շփվող՝ իրար քսվող մասերի համար:

ՏԱՎՏՈԼՈԳԻԱ [< тавтология < հուն. tauto նույնիսկ, միևնույն + logos բան, բառ], գ. (գիտ.): Արդեն հիշված՝ ձևակերպված մտքի՝ հասկացության ավելորդ կրկնություն, բայց նրա բառերով կամ արտահայտություններով, կրկնաբանություն:

ՏԱՎՐՈ [< тавро < թուրք-մոնղոլ.], գ. (գրք.): 1. Խարան, որ դրվում է գյուղատնտեսական կենդանիների մաշկի վրա կամ եղջյուրներին իբրև տարբերակիչ նշան. խարանադրոշմ: 2. Խարանակնիք, խարանագործիք:

ՏԱՏՈՒ [< тату < անգլ. tattoo < պոլինեզ.], գ. (խսկց.): Դաջվածք:

ՏԱՏՈՒԱԺ [< татуаж < ֆր. tatouage < tatouer դաջել], գ. (մսնգ.): Դաջում, դաջելը:

ՏԱՐԱ [< тара < իտալ. tara < արաբ. tarh թափոններ], գ. 1. Այն, ինչի մեջ պահվում է կամ փոխադրվում է ապրանքը (պարկ, արկղ, ամաններ, թղթի փաթեթներ ևն): 2. Որևէ բան կշռելու ամանի քաշը, աբրա:

ՏԱՐԱԿԱՆ [< таракан < թուրք. tarakan], գ. (կենդբ.): Սև կամ դարչնավուն գույնով, երկար բեղիկներով միջատ, որի առանձին տեսակները լինում են բնակարաններում, ուտիճ, խավարասեր:

ՏԱՐԱՆ [< таран < լեհ. taran < միջին բարձր գերմ. tarant պաշարման սարք], գ. 1. (պատմ.): Հոյ, խոյ (պատերազմական պարսպակործան մեքենա): 2. (ծով.): Խոյահարման կարկառ, նավախոյ (սուզանավերի): 3. (ռազմ.): Հարձակման ձև՝ խոյահարում, խոյահարելը:

ՏԱՐԱՆՏԵԼԼԱ [< тарантелла < իտալ. tarantella], գ. (արվ.): 1. Իտալական ժողովրդական արագ տեմպով կատարվող պար և այդ պարի երաժշտությունը: 2. Այդ պարի տեմպով երաժշտական ստեղծագործություն:

ՏԱՐԻՖ [< тариф < ֆր. tariff արաբ.], գ. (ֆին.): 1. Որևէ բանի հարկադրման կամ վճարման՝ վարձատրման դրույքների ցուցակ, սակացուցակ: 2. Սակագին՝ դրույքների և գանձումների ցուցակ:

ՏԱՐԻՖԱՎՈՐՈՒՄ, գ. 1. Հարկադրման կամ վճարման՝ վարկատրման տարիֆների որոշումը այս կամ այն կարգի դասակարգման հիման վրա: 2. Տարիֆավորելը, տարիֆավորվելը:

ՏԱՐԻՖԻԿԱՑԻԱ [< тарификация < ֆր. tarification], գ. Տե՛ս Տարիֆավորում:

ՏԱՈՒՏՈՄԵՐԻԱ [< таутомерия < հուն. tautos նույն ինքը + meros մաս, բաժին], գ. (ֆիզ.): Շարժուն հավասարակշռություն փոխադարձորեն փոխակերպելի կառուցվածքային տաուտոմերների միջև:

ՏԱՔՍԱ [< такса < գերմ. Dachshund < Dachs փորսուղ + Hund շուն], գ. (կենդբ.): Շների մի ցեղ և այդ ցեղի շուն:

ՏԱՔՍԱՄՈՏՈՐ [< таксомотор < ֆր. taxi + լատ. motor], գ. Նույնն է՝ Տաքսի:

ՏԱՔՍԱՖՈՆ [< таксофон < գերմ Taxe + հուն phōnē ձայն, հնչյուն], գ. (տեխ.): Հեռախոս-ավտոմատ կամ ավտոմատ-հեռախոս:

ՏԱՔՍԻ [< такси < ֆր. taxi], գ. (տրանս.): Բեռնատար կամ մարդատար ավտոմեքենա, որ վարձով բեռներ կամ ուղևորներ է փոխադրում՝ տաքսացույցով որոշվող վճարով:

ՏԱՔՍԻԴԵՐՄԻԱ [< таксидермия < գերմ. Taxidermie < հուն. taxis կառուցվածք, կազմակերպություն + derma կաշի], գ. (մանգ.): Կենդանիների խրտվիլակների պատրաստում:

ՏԱՔՍԻՄԵՏՐ [< таксиметр < ֆր. taxi + մետր], գ. (տեխ.): Ուղեչափիչ, երթաչափիչ, տաքսիով անցած տարածությունը չափող գործիք:

ՏԱՔՍԻՍՏ [< ռուս. таксист < ֆր.], գ. ած. (խսկց.): Տաքսավարորդ:

ՏԱՔՍՈՄԵՏՐ [< таксометр < ֆր. taxi + մետր], գ. (տեխ.): Սակացույց, սակաչափիչ, սակահաշվիչ (տաքսիի):

ՏԵԼԵ... [< теле... < հուն. tēle հեռու] Բարդ բաղադրիչների սկզբնամաս, որը ցույց է տալիս այդ բառերի կապը հեռու տարածությունների հետ:

ՏԵԼԵԳՐԱՖ [< телеграф < տելե... + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Սարք, որը նախատեսված է լուրն արագ հաղորդելու համար հեռու տարածություններ:

ՏԵԼԵՄԵԽԱՆԻԿԱ [< телемеханика < տելե... + հուն. mechanikē < mēchane գործիք, մեքենա], գ. (տեխ.): Հեռուստավարում, հեռուստակառավարում:

ՏԵԼԵՈԼՈԳԻԱ [< телеология < հուն. teleos նպատակ + logos ուսմունք], գ. (փիլ.): Նպատակաբանություն՝ ուսմունք նպատակի օբյեկտիվ գոյության և նրանով պայմանավորված՝ աշխարհի նպատակահարմար կազմակերպվածության և երևույթների նպատակադրության մասին:

ՏԵԼԵՊԱԹԻԱ [< телепатия < տելե... + հուն. pāthos ըմբռնում, զգայություն], գ. Հեռազգայություն՝ մարդկանց միջև մտքերի փոխանակման ձևերից մեկը, երբ ինֆորմացիան ընկալողը առանց զգայարանների և հատուկ սարքերի օգնության պետք է իմանա, թե ինչի մասին է մտածում ինֆորմացիան առաքողը:

ՏԵԼԵՎԻԴԵՆԻԵ [< телевидение < անգլ. television < հուն. tēle հեռու + լատ. visio տեսնելը], գ. (հնց.): Հեռուստատեսություն:

ՏԵԼԵՎԻԶՈՐ [< телевизор < տելե... + լատ. visio տեսիլք], գ. (խսկց.): Հեռուստացույց, հեռատեսիլ:

ՏԵԼԵՏԱՅՊ [< телетайп < անգլ. teletype < հուն. tēle հեռու + typōs դրոշմ, կնիք], գ. (տեխ.): Հեռատիպ:

ՏԵԼԵՖՈՆ [< телефон < տելե... + հուն. phōnē հնչյուն], գ. (խսկց. հնց.): Հեռախոս:

ՏԵԼՈՖԱԶ [< телофаза < հուն. telos ավարտ + phasis արտահայտում], գ. (կենսբ.): Բջջի անուղղակի բաժանման վերջին փուլը:

ՏԵԼՈՒՐ [< теллурий < լատ. tellus (telluris) հող, երկաթ], գ. (քիմ.): Te, պարբերական համակարգի V պարբերության VI խմբի տարր, կարգահամարը՝ 52, ատոմական զանգվածը՝ 127,6: Օգտագործում են ապակու արտադրության մեջ, լուսանկարչության մեջ:

ՏԵԽՆԻԿ [< техник < հուն.], գ. Տեխնիկայի որևէ բնագավառի միջնակարգ տեխնիկական կրթություն ստացած մասնագետ:

ՏԵԽՆԻԿԱ [< техника < հուն. technikē արվեստական < technē արվեստ, վարպետություն], գ. 1. Աշխատանքի գործիքների և միջոցների ամբողջությունը, որն օգտագործվում է հասարակական արտադրության մեջ, նույնպես և մարդկային գործունեության այն բնագավառը, որը կապված է դրանք ուսումնասիրելու, օգտագործելու և կատարելագործելու հետ: 2. (հվք.): Մեքենաներ, մեքենայացված սարքավորումներ: 3. Որևէ գործի՝ զբաղմունքի ևն մեջ կիրառվող գործնական կանոնների՝ եղանակների՝ հնարքների ամբողջությունը: 4. Այդ կանոններին տիրապետելը, հմտությունը՝ վարպետություն որևէ գործի մեջ:

ՏԵԽՆԻԿՈՒՄ [< техникум < հուն.], գ. Միջնակարգ մասնագիտական կրթություն տվող ուսումնական հաստատություն:

ՏԵԽՆԻՑԻԶՄ [< техницизм < հուն.], գ. 1. Որևէ գործի տեխնիկական կազմով շատ տարվելը՝ ի վնաս նրա էության: 2. (գրկն.) Գեղարվեստական գրականության մեջ չափից ավելի տեխնիկա՝ արտադրություն՝ մեքենաներ պատկերելը:

ՏԵԽՆՈԼՈԳ [< технолог < հուն.], գ. ած. Արտադրության որոշակի ճյուղի տեխնոլոգիայի մասնագետ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ [< технология < հուն. technē արվեստ, վարպետություն + logōs գիտություն], գ. Նյութերի՝ արտադրանքի մշակման միջոցների և արտադրական գործընթացների կատարման մեթոդների մասին գիտելիքների ամբողջությունը: 2. Որոշակի միջոցներով, եղանակներով ու հաջորդականությամբ կատարվող այն գործառույթների ամբողջությունը, որոնցից բաղկացած է նյութերի և արտադրանքի մշակության գործընթացը:

ՏԵԽՆՈԿՐԱՏ [< технократ < հուն.], գ. Որակավորված ինժեներատեխնիկական անձնակազմի ներկայացուցիչ:

ՏԵԽՆՈԿՐԱՏԻԱ [< технократия < հուն. technikē + kratos իշխանություն, տիրապետություն], գ. Հասարակական կյանքի տարբեր ոլորտների կազմակերպման և կառավարման ձև, որում վճռորոշ դեր է հատկացվում ինժեներատեխնիկական մտավորականությանը:

ՏԵԿՏՈՆԱԿԱՆ, ած. 1. Երկրակեղևի տեղաշարժերին՝ ձևափոխություններին հատուկ՝ վերաբերող, երկրակեղևի տեղաշարժեր և ձևափոխություններ առաջ բերող: 2. Այդ տեղաշարժերի՝ ձևափոխությունների արդյունքը հանդիսացող, դրանցից առաջացած: 3. Երկրակեղևի կազմավորմանն ու զարգացմանը վերաբերող:

ՏԵԿՏՈՆԱՖԻԶԻԿԱ [< тектонафизика < հուն.], գ. (գիտ.): Տեկտոնիկայի բաժին, որն ուսումնասիրում է ապարների շերտերում տեկտոնական դեֆորմացիաների (ծալքերի, խզումների) առաջացման ֆիզիկական պայմանները:

ՏԵԿՏՈՆԻԿ [< тектонический < հուն.], ած. Նույնն է՝ Տեկտոնական:

ՏԵԿՏՈՆԻԿԱ [< тектоника < հուն. tektonikē շինարարական արվեստ], գ. (երկրբ.): Երկրաբանության այն ճյուղը, որն ուսումնասիրում է երկրակեղևի տեղաշարժերն ու ձևափոխությունները և նրա կառուցվածքային այն առանձնահատկությունները, որ առաջանում են այդ տեղաշարժերից ու ձևափոխություններից:

ՏԵՄԲՐ [< тембр < ֆր. timbre < հուն. tympanon թմբուկ], գ. (կզմխս.):Ենթաձայն, ձայնի երանգ, հնչերանգ:

ՏԵՄՊ [< темп < իտլ. tempo < լատ. tempus ժամանակ], գ. 1. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործությունը կատարելու արագության աստիճանը: 2. (սպորտ.): Համաչափորեն կամ շարունակաբար կատարվող շարժումների՝ գործողությունների արագության աստիճանը: 3. *փխբ.* Որևէ բանի կատարման՝ ընթացքի՝ տեղի ունենալու արագություն՝ թափ: 4. Հաճախականություն, ռիթմ՝ զարգացման ռիթմը, որևէ աշխատանքի իրականացման արագության աստիճանը:

ՏԵՄՊԵՐԱ [< темпера < իտլ. tempera, temperare ներկերը խառնել], գ. (նկարչ.): Գեղանկարչություն այնպիսի ներկերով, որոնցում կապակցանյութը ջրից ու ձվի դեղնուցից ստացված, ինչպես և յուղի (կամ յուղի ու լաքի) հետ խառնված, ջրի մեջ լուծված բուսական կամ կենդանական սոսնձից պատրաստված էմուլսիաներն են:

ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ [< темперамент < լատ. temperamentum համաչափություն, մասերի համապատասխանություն], գ. (հնց.): 1. Մարդու հոգեկան կերտվածքի առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են հուզականության, շարժունության ու կենսական գործունեության մեջ, խառնվածք: 2. Ուժեղ հուզականություն, կենսական ակտիվություն, ներքին թափ, ավյուն, կենսալիություն:

ՏԵՄՊԵՐԱՏՈՒՐԱ [< температура < լատ. temperature < temperatio նորմալ

վիճակ], գ. (հնց.): 1. Ջերմաստիճան: 2. Ջերմություն, տաքություն: 3. Ջերմ, մարմնի տաքության բարձրացում:

ՏԵՄՊԵՐԱՑԻԱ [< температура < լատ. temperatio ճիշտ հարաբերակցություն, համաչափություն], գ. (երժշտ.): Երաժշտական համակարգի՝ լարվածքի տարբեր աստիճանների վրա կառուցվող համանուն ինտերվալների միջև ձայնաբարձրական հարաբերակցությունների հավասարեցումը:

ՏԵՆԱՐԴԻՏ [< тенардит < ֆրանսիացի քիմիկոս Լ. Ժ. Տենարդիտ Թենարի անունից], գ. (քիմ.): Միներալ սուլֆատների դասից՝ Na_2SO_4: Օգտագործվում է որպես հումք սոդայի արդյունաբերության համար և ապակու արտադրության մեջ:

ՏԵՆԴԵՆՑ [< тенденция < գերմ. Tendenz < լատ. tendere ձգտել, ուղղվել], գ. (հնց.): Միտում՝ 1. Հայացքների կամ գործունեության որոշակի ուղղվածություն, մեկին՝ մի բանի հատուկ ձգտումների և հակումների հիմնական ուղղությունը, ձգտում: 2. Որևէ բանի զարգացման կամ շարժման ուղղվածությունը՝ հակումը: 3. Գեղարվեստական երկի հիմքում ընկած և գեղարվեստական միջոցներով ու գեղարվեստական կերպարների զարգացումով արտահայտվող գաղափար (սովորաբար հասարակական մեծ նշանակություն ունեցող): 4. Կանխակալ գաղափար, որ հրամցվում է ընթերցողին, բայց չի բխում երկի գեղարվեստական կերպարների զարգացումից ու երկի ոգուց: 5. Կանխակալ մոտեցում՝ ձգտում՝ կարծիք, դիտավորություն, միտումնավոր վերաբերմունք:

ՏԵՆԴԵՆՑԻԱ [< тенденция < լատ. tendere ուղղվել, ուղղություն վերցնել, սլանալ], գ. (հնց.): 1. Միտում: 2. Գաղափարամիտություն: 3. Միտումնավորություն, կանխակալություն:

ՏԵՆԴԵՆՑԻՈԶ [< тенденциозный < լատ.], ած. (հնց.): 1. Որոշակի տենդենցով առաջնորդվող, գաղափարական ուղղվածություն ունեցող, գաղափարական: 2. Միտումնավոր, որոշ կանխակալ նպատակ՝ միտում հետապնդող:

ՏԵՆԴԵՐ [< тендер < անգլ. tender < tend սպասարկել], գ. 1. Անմիջապես շոգեքարշին կցվող հատուկ կառուցվածքի վագոն, որի մեջ պահում են ջուր և ածուխ: 2. Միակայմ առագաստանավ: 3. (տնտսգ.) Մրցույթ: 4. Մրցառք, առևտրամրցույթ՝ ձեռնարկության առաջարկած գին, որը որոշելիս ելնում են մրցակիցների առաջարկած գներից, այլ ոչ թե ծախքերից կամ ապրանքի պահանջարկի մեծությունից:

ՏԵՆԶՈՄԵՏՐ [< тензометр < լատ. tensus լարված, ձգվում է + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.): Սարք, որը կիրառում են մեքենաների, կառուցվածքների և կառույցների դետալներում, ինչպես նաև նյութերի մեխանիկական փորձարկումների ժամանակ առաջացող դեֆորմացիաների բաշխումն ուսումնասիրելու համար:

ՏԵՆՈՐ [< тенор < իտլ. tenore], գ. 1. Տղամարդու ամենաբարձր ձայնը: 2. Այդպիսի ձայն ունեցող երգիչ:

ՏԵՆՏ, ԹԵՆՏ [< тент < անգլ. tent վրան], գ. (խսկց.): Պարուսինեծածկ (ծովափում, նավի տախտակամածին նն արևից, անձրևից նն պաշտպանվելու համար):

ՏԵՌԱԿՈՏԱ [< терракота < իտլ. terra cotta, բառացի՝ այրված հող], գ. (արվ.): Թրծակավ (գունավոր):

ՏԵՌԱՍ [< терраса < ֆր. terrasse < լատ. terra հող, երկիր], գ. 1. (երկրբ.): Սադղափուլ, դարատափ: 2. Երկարավուն պատշգամբ, հարթակ: 3. Հողահարթակ:

ՏԵՌՈՐ [< террор < լատ. terror ահ, սարսափ], գ. (քղք.): 1. Քաղաքական զանազան կազմակերպությունների՝ կուսակցությունների կողմից իրենց քաղաքական

հակառակորդներին ֆիզիկապես ոչնչացնելը: 2. Քաղաքական հակառակորդների նկատմամբ բռնի ուժ գործադրելը, ահաբեկում: 3. Դաժան և բռնի միջոցների քաղաքականություն՝ տվյալ քաղաքական կարգը պահպանելու համար, ահաբեկում:

ՏԵՌՈՐԻԶՄ [< терроризм < լատ.], գ. (քղք.): Տեռորի քաղաքականություն ու գործելակերպ, ահաբեկչություն:

ՏԵՌՈՐԻՍՏ [< террорист < լատ.], գ. ած. 1. Անհատական տեռոր գործադրելու կողմնակից: 2. Կազմակերպության կողմից որոշված սպանություն կատարող, ահաբեկիչ:

Տ(Թ)ԵՍՏ [< тест < անգլ. test փորձ, փորձարկում, ուսումնասիրություն], գ. 1. (հոգեբ. մանկ.): Ստանդարտացված առաջադրանք, որի կատարման արդյունքները հնարավորություն են տալիս չափելու փորձարկվողի հոգեֆիզիկական ու անհատական բնութագրերը, նրա ստացած գիտելիքները, ունակություններն ու հմտությունները: Առաջինը տեստ կիրառել է Ջ. Ֆիշերը 1864 թ. Մեծ Բրիտանիայում ուսանողների գիտելիքներն ստուգելու նպատակով: 2. (բժշկ.): Օգտագործվում է օրգանիզմի կենսաբանական տարբեր գործընթացների ուսումնասիրման, ինչպես նաև առանձին օրգանների հյուսվածքների և ամբողջ օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի որոշման նպատակով: 3. (տեխ.): Ստեղծվում է հատուկ խնդրի ձևով՝ հաշվողական մեքենաների աշխատանքի, նրա համար կազմված ծրագրի ճշտության ստուգման, ծրագրում թույլ տված սխալների տեղն ու բնույթը պարզելու, ամբողջ ծրագրի կամ դրա առանձին մասերի կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով:

ՏԵՍՏՈՍՏԵՐՈՆ [< тестостерон < լատ. testiculus ամորձի, տղամարդկային ուժ + հուն. stereō ամրացնում եմ], գ. (կենսբ.): Մարդու և բարձրակարգ ողնաշարավորների արական սեռական հորմոն:

ՏԵՏԱՆՈՒՍ [< тетанус < լատ. tetanus < հուն. tetanos լարում], գ. (կենսբ.): Պրկանք՝ մկանի բնականոն տևական կծկումը հաճախակի գերգործող գրգռիչների ազդեցությունից:

ՏԵՏ-Ա-ՏԵՏ [< тет-а-тет < ֆր. tête - à- tête, բառացի՝ գլուխ գլխի],մկ. (խսկց.): Միայն երկուսով, երես երեսի, երես առ երես:

ՏԵՏՐԱ... ՏԵՏՐ... [< тетра... < հուն. tetra չորս, չորրորդ, քառորդ] Բարդ բառերի մաս, որը համապատասխանում է քառամասնիկին:

ՏԵՏՐԱԳՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ [< тетрагональная < (հուն. tetrgōnon քառանկյուն) система] - (երկրչ.): Քառանկյունային համակարգ՝ միջին կարգի բյուրեղագիտական համակարգ, որը բնութագրվում է չորրորդ կարգի մեկ պարզ կամ ինվերսիոն առանցքով:

ՏԵՏՐԱԷԴՐ [< тетраэдр < տետրա... + հուն. hedra հիմք], գ. (երկրչ.): Քառանիստ:

ՏԵՏՐԱԼԻՆ [< тетралин < հուն.], գ. (քիմ.): 1,2,3,4-քառահիդրանավթալին, արոմատիկ ածխաջրածին: Անգույն հեղուկ է, օգտագործվում է որպես լաքաներկերի լուծիչ, ներկանյութերի սինթեզի հումք, յուղազերծող հեղուկների և շարժիչային վառելանյութերի հավելանյութ:

ՏԵՏՐԱԼՈԳԻԱ [< тетралогия < հուն. tetralogie], գ. (արվ.): Գրականության, երաժշտության, կինոարվեստի մեջ՝ նույն հեղինակի չորս ստեղծագործությունները, որոնք կապված են իրար ընդհանուր գաղափարով:

ՏԵՏՐԱԽՈՐԴ [< тетрахорд < հուն. tetrachordon < տետրա... + հուն. chordē լար], գ. (երժշտ.): Քառալար՝ երաժշտության տեսության մեջ չորս հաջորդական աս-

տիճաններով կազմված հնչյունաշարը:

ՏԵՏՐԱՀԻԴՐՈՖՈՒՐԱՆ [< тетрагидрофуран < հուն.], գ. (քիմ.): Քառահիդրաֆուրան, ֆուրանիդին, քառամեթիլենօքսիդ, օքսոլան, ցիկլային եթեր՝ յուրահատուկ հոտով: Անգույն հեղուկ է, որը օգտագործվում է որպես լուծիչ և որոշ կաուչուկների ստացման հումք:

ՏԵՏՐԱՐԽ [< тетрарх < հուն. tetrarches < tetra չորս + arche իշխանություն], գ. (պատմ.): Հին Հունաստանում՝ չորս շրջանների կամ շրջանի 1/4 մասի կառավարիչ:

ՏԵՏՐԱՑԻԿԼԻՆՆԵՐ [< тетрациклин < հուն.], գ. (քիմ.): Քիմիական կառուցվածքով և կենսաբանական ակտիվությամբ իրար շատ մոտ բնական և կիսասինթետիկ անտիբիոտիկների խումբ: Օգտագործվում են շնչառական, ստամոքս-աղիքային համակարգերի, միզուղիների, բծավոր տիֆի և այլ հիվանդությունների բուժման նպատակով:

ՏԵՏՐԻԼ [< тетрил < հուն.], գ. (քիմ.): 2, 4, 6-եռնիտրաֆենիլմեթիլնիտրամին, պայթուցիկ նյութ է, որն օգտագործվում է որպես միջանկյալ դետոնատոր պայթունահարույց պատիճներում:

ՏԵՏՐՈԴ [< тетрод < հուն.], գ. (տեխ.): Քառէլեկտրոդ էլեկտրոնային լամպ. էլեկտրոդներն են ուղղակի կամ անուղղակի շիկացման կատոդը, երկու ցանց (կառավարող և էկրանավորող) և անոդը:

ՏԵՐԱԲԱՅԹ [< терабайт < հուն. teras հրել + բայթ], գ. (ինֆորմ.): Համակարգչի հիշողության ծավալի չափման միավոր = 1024 գիգաբայթի:

ՏԵՐԱՏՈՄԱ [< тератома < հուն. teras (teratos) հրեշ + ōma ուռուցքների անվանման վերջածանց], գ. (կենսբ.): Հրեշ ուռուցք՝ մարդու և կենդանիների ուռուցք, որն առաջանում է հյուսվածքների սաղմնային զարգացման խանգարումներից: Այն կարող է կազմափոխվել քաղցկեղի կամ սարկոմայի:

ՏԵՐԱՐԻՈՒՄ [< террарий, террариум < լատ. terra ցամաք, հող], գ. (կենդբ.): Ցամաքային ոչ մեծ կենդանիների, հիմնականում սողունների և երկկենցաղների, պահպանության տեղ:

ՏԵՐԲԻՈՒՄ [< тербий < շվեյցարական Իտերբի գյուղի անունով], գ. (քիմ.): Tb, պարբերական համակարգի VI պարբերության III խմբի տարր, լանթանիդ, կարգահամարը՝ 65, ատոմական զանգվածը՝ 158, 92: Օգտագործվում է հետազոտական նպատակներով: Օքսիդն ու աղերը օգտագործվում են ռադիոտեխնիկայում՝ որպես լյումինաֆորներ:

ՏԵՐԻՏՈՐԻԱ [< территория < լատ. territorium], գ. (խսկց.): 1. Սահմանագծված՝ սահմանազատված՝ որոշակի սահմաններով առանձնացված հողային տարածություն՝ երկիր՝ երկրամաս: 2. Որևէ երկրի զբաղեցրած տարածությունը: 3. Որևէ նպատակի հատկացված սահմանափակ տարածություն, տարածք:

ՏԵՐԻՏՈՐԻԱԼ [< территориальный < լատ.], ած. Տերիտորիային հատուկ, որոշ տերիտորիայի պատկանող, տարածքային:

ՏԵՐՄԻԴՈՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ [< термидорианский (< ֆր. thermidor < հուն. thermē շոգ) переворот]– (պատմ.): 1794 թ. հակահեղափոխական հեղաշրջում Ֆրանսիայում հուլիսի 27/28 (ըստ հանրապետական օրացույցի՝ IX տարվա տերմիդորի 9-ին), որը տապալեց հեղափոխական դեմոկրատական յակոբինյան դիկտատուրան:

ՏԵՐՄԻՆ [< термин < լատ. terminus սահման, եզր], գ. (լեզվբ.): Գիտության, տեխնիկայի, արվեստի, հասարակական կյանքի որևէ բնագավառի՝ որոշակի

հասկացությունները ճշտորեն արտահայտող բառ կամ բառակապակցություն, եզր, գիտաբառ:

ՏԵՐՄԻՆԱԼ [< терминал < անգլ. terminal < լատ. terminalis վերջին, ծայրի], գ. 1. (ինֆորմ.): Համակարգչի ծայրային հատվածի սարք, որը նախատեսված է տեղեկատվության ներմուծման և մշակումից հետո արտանցման համար: 2. (ծով. օդգն.): Նավահանգստի, օդանավակայանի հատված, որը նախատեսված է կոնտեյներային ևն բեռների մշակման համար: 3. (տեխ.): Տեխնիկական կառույցների և սարքավորումների ամբողջություն գազի կուտակման և հեղուկացման համար:

ՏԵՐՄԻՆԱՏՈՐ [< терминатор < լատ. terminare սահմանափակել], գ. 1. (աստղգ.): Լույսի և ստվերի սահմանը լուսնի, մոլորակի կամ նրա արբանյակի վրա: 2. (կինո.): Ամերիկյան նույնանուն կինոնկարի հերոսը:

ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ [< терминология < լատ. terminus սահմանային նշան + հուն. logōs գիտություն], գ. 1. (լեզվբ.): Տերմինաբանություն, տերմինագիտություն՝ լեզվի տերմինների ամբողջությունը և տեսությունը դրանց մասին: 2. (գիտ.): Որևէ գիտաճյուղում մշակված տերմինների՝ եզրերի ամբողջությունը, եզրագիտություն:

ՏԵՐՄԻՏ I [< термит < լատ. termes (termitis) շաղափուկ], գ. (կենդբ.): Տաք երկրների թաղանթաթև համայնակենցաղ միջատ (փայտանյութի վնասատու), մեծամրջյուն:

ՏԵՐՄԻՏ II [< термит < հուն. thermē տաք, շոգ, ջերմ], գ. (քիմ.): Ալյումինի հետ մի քանի մետաղների թթվուկների խառնուրդից ստացվող փոշենման նյութ, որի այրումից շատ մեծ ջերմություն է ստացվում:

ՏԵՐՑԵՏ [< терцет < իտալ. terzetto < լատ. tertius երրորդ], գ. 1. (երժշտ.): Եռախուսմբ, եռախմբերգ: 2. (գրկն.): Եռատող տուն:

ՏԵՐՑԻՆ(Ա) [< терцина < իտալ. terzina], գ. (տոչփ.): Եռատող տներով բանաստեղծություն, որի մեջ նախընթաց տան միջին տողը հանգ է կազմում հաջորդ տան առաջին և երրորդ տողերի հետ, իսկ վերջին տան միջին տողը՝ մի լրացուցիչ տողի հետ՝ բանաստեղծության վերջում:

ՏԵՔՍՏ [< текст < լատ. textum կապ, միահյուսում, միակցում], գ. Բնագիր՝ 1. Հեղինակային ստեղծագործություն կամ արտահայտություն, ինչպես և պաշտոնական փաստաթղթի գրավոր շարադրանքը, բնագիրը: 2. Գրական որևէ ստեղծագործությունից առանձնացված հատված՝ ուսումնական նպատակների համար: 3. (տպգր.): Շարվածքի հիմնական մասը առանց նշումների, տողատակի ծանոթությունների, նկարների ևն: 4. Երաժշտական ստեղծագործության խոսքը:

ՏԵՔՍՏԻԼ [< текстиль < լատ. textile], գ. ած. 1. Մանածագործվածք: 2. Մանածագործական:

ՏԵՔՍՏՈԼՈԳԻԱ [< текстология < լատ. textum + հուն. logōs գիտություն], գ. (լեզվբ. գրկն. հնց.): Բնագրագիտություն, տեքստաբանություն, տեքստագիտություն:

ՏԵՔՍՏՈՒԱԼ [< текстуальный < լատ.], ած. 1. Նույնն է՝ Տեքստային: 2. *փխբ.* Բառացիորեն հարազատ, բառացի:

ՏԻԼԴԱ [< тильда < իտալ. tilde նշան (~) «n» տառի վրա դրվող նշան՝ փափուկ հնչյուն], գ. (լեզվբ.): Ալիքանշան, փոխնիշ (~):

ՏԻՊ [< тип < հուն. typos դրոշմ, ձև, նմուշ], գ. 1. Կարծր նյութի վրա փորագրված պատկեր կամ նշան, որի արտապատկերը դրոշմվում է կակուղ նյութի վրա՝ սեղմելու, մամլելու միջոցով: 2. Որևէ բանի պատկեր՝ հետք, որ մնում է որևէ

առարկայի վրա՝ ճնշելիս: 3. *փխբ.* Կերպարանք, արտաքին: 4. Նախագաղափարին նման պատկեր, նմանություն: 5. Բնորոշ ֆիզիկական կառուցվածք, մարդու կերպարանք, մարդուն՝ մարդկային որևէ տեսակին՝ ցեղին հատուկ ֆիզիկական և գունային արտաքին առանձնահատկություն: 6. (գրկն.) Որոշ կարգի մարդկանց մտավոր և բարոյական գծերը իր մեջ խտացնող կերպար գեղարվեստական գրականության մեջ: 7. Տարօրինակ կամ բացասական հատկություններ ունեցող մարդ: 8. Մարդու բնորոշ կերպարը՝ կապված նրա սոցիալական կամ պրոֆեսիոնալ պատկանելիության հետ: 9. Կենդանիների և բույսերի դասակարգման մեջ՝ խոշոր ստորաբաժանում, որի մեջ մտնում են ցեղակից դասերը: 10. Ձև, տեսակ: 11. Տիպար: 12. Տպագրություն: 13. (լեզվբ.): Լեզվի կառուցվածքային հատկանիշների որոշ համակարգ, որով բնութագրում են աշխարհի լեզուների տիպաբանական խմբերը:

ՏԻՊԱՐ, գ. 1. Կաղապար: 2. Որևէ արտադրանքի՝ շենքի ևն նմուշ, որ կարելի է ընդօրինակել, կատարելատիպ: 3. Բուն օրինակը, իսկականը: 4. Բնորոշ: 5. Որևէ հատկության կամ ձևի տիպիկ մարմնավորում հանդիսացող անձ, որևէ հատկության կատարելություն հանդիսացող անձ: 6. Տիպ, արտաքին կերպարանք: 7. Բնորոշ ֆիզիկական կառուցվածք, մարդու արտաքին, որով նա դասվում է մարդկային ցեղի որևէ տեսակի շարքում, տիպ:

ՏԻՊԻԿ [< титический < հուն.], ած. 1. Որևէ տեսակի առարկաների՝ անձերի՝ երևույթների բնորոշ առանձնահատկություններն իր մեջ մարմնավորող: 2. Ցայտունորեն արտահայտված, ակներև, բնորոշ:

ՏԻՊՈԳՐԱՖԻԱ [< типография < հուն. typos դրոշմ, հետք, կնիք + graphō գրում եմ], գ. (հնց.): Տպարան:

ՏԻՊՈԼՈԳԻԱ [< типология < հուն. typos + logōs գիտություն], գ. 1. (լեզվբ.): Տիպաբանություն (լեզուների տիպերի ուսումնասիրություն): 2. (գիտ.): Տիպավորում, գիտական դասակարգում:

ՏԻՊՈՄԵՏՐԻԱ [< типометрия < հուն. typos օրինակ + metreō չափում եմ], գ. (տպգր.): Տպաչափություն, տպաչափումների համակարգ:

ՏԻՏԱՆ I [< титан < հուն. հատուկ անունից], գ. (քիմ.): Ti, պարբերական համակարգի IV պարբերության IV խմբի տարր, կարգահամարը՝ 22, ատոմական զանգվածը՝ 47,90: Օգտագործվում է քիմիական արտադրության, ինքնաթիռաշինության, հրթիռաշինության, նավաշինության ևն մեջ:

ՏԻՏԱՆ II [< Титан < հուն. Titan], գ. 1. (դից.): Ուրանոսի և Գեայի զավակներն ու թոռները: 2. (երկրբ.): Սատուրնի ամենամեծ և պայծառ արբանյակը, որը հայտնաբերել է Ք. Հյուգենսը 1955 թ.: 3. *փխբ.* Ուժեղ, հսկայական ուժի տեր մարդ:

ՏԻՏՐ [< титр < ֆր. titre], գ. (քիմ.): 1. Լուծույթի թնդության աստիճան, թնդություն: 2. (կինո.): Մակագիր (կինոնկարների): 3. Մետաղաթելի հաստության չափ:

ՏԻՏՈՒԼ [< титул < լատ. titulus մակագիր], գ. (հնց.): 1. Տիտղոս: 2. Գիտական կոչում, աստիճան: 3. (տպգր.): Վերնագիր, վերտառություն: 4. Տիտղոսաթերթ: 5. (մանգ.): Կապիտալ շինարարության նախահաշվի անվանումը: 6. (իրավբ.): Որևէ իրավունքի հիմունք:

ՏԻՐ [< тир < ֆր. tir], գ. (խսկց.): Հրաձգարան՝ հատուկ կառուցված տեղ հրաձգության համար:

ՏԻՐԱԺ [< тираж < ֆր. tirage], գ. (հնց.): 1. Տպաքանակ (հրատարակվող գրքերի, թերթերի ևն): 2. Պետական փոխառության կամ վիճակախաղի շահումների խաղարկություն:

ՏԻՐԱՆ [< тиран < հուն. tyrannos], գ. 1. (պատմ.): Հին Հունաստանում բռնությամբ

իշխանությունը զավթած և միանձնյա կառավարող անձ, որի իշխանությունը կոչվել է տիրանիա: 2. *փխբ.* Բռնապետ՝ բռնություններ իրագործող իշխանավոր:

ՏԻՐԱՆԻԱ [< тирания < հուն. tyrannia], գ. 1. (պատմ.): Հին Հունաստանում բռնությամբ իշխանությունը զավթած անձի իշխանությունը: 2. *փխբ.* Բռնապետություն:

ՏԻՐԱՆՈԶԱՎՐ [< тираннозавр < հուն. tyrannos + ... զավր], գ. (հնէաբ.): Վերջին հսկա գիշատիչ դինոզավրի տեսակ. ապրել է Հյուսիսային Ամերիկայի տարածքում կավճային դարաշրջանի վերջում:

ՏԻՐԱՏՐՈՆ [< тиратрон < հուն.], գ. (ֆիզ.): Մարմրող պարպման (սառը կատոդով) կամ ոչ ինքնուրույն աղեղային պարպման (տաքացվող կատոդով) իոնային սարք, որն անոդից և կատոդից բացի ունի մեկ կամ մի քանի կառավարվող էլեկտրոդներ (ցանցեր):

ՏԻՐԻՍՏՐ [< тиристр < հուն. thyra դուռ, մուտք + լատ. (res)istor դիմադրել], գ. (տեխ.): Սիլիցիումի հիմքով քառաշերտ կիսահաղորդչային սարք: Կիրառվում են էլեկտրաէներգիայի փոխակերպիչներում, ավտոմատ կառավարման համակարգերում են:

ՏԻՖ [< тиф < հուն. typhos գիտակցության մթագնում՝ թմրեցում], գ. (ախտ.): Մի քանի սուր վարակիչ հիվանդությունների ընդհանուր անվանումը, որոնք ուղեկցվում են բարձր ջերմությամբ:

ՏԻՖԱՀԱՐ, ած. Տիֆից տանջված՝ տառապած:

ՏԻՖԼԻՏ [< тифлит < հուն. typhlos կույր], գ. (բժշկ.): Կույր աղիքի բորբոքում:

ՏԻՖԼՈՊԵԴԱԳՈԳԻԿԱ [< тифлопедагогика < հուն. typhlos կույր + paidagōgikē դաստիարակման արվեստ, մանկավարժություն], գ. (գիտ.): Դեֆեկտոլոգիայի բնագավառ, որը զբաղվում է խանգարված տեսողություն ունեցող երեխաների դաստիարակության, կրթության, ուսուցման և աշխատանքի նախապատրաստման հիմնախնդիրների լուծմամբ:

ՏԻՖՈԶԻ [< тифози < իտալ. tifoso], գ. (սպորտ.): Իտալական ֆուտբոլի մոլի երկրպագուներ, ցավքաշ, ցավորդ:

ՏՅՈՒԲԻԿ [< тюбик < ֆր. tube խողովակ], գ. (խսկց.): Խողովակապատյան, պարկուճ:

ՏՅՈՒԲԻՆԳ [< тюбинг < անգլ. tubing < tube խողովակ], գ. (տեխ.): Կոշավոր սեգմենտների տեսքով թուջե, պողպատե կամ երկաթբետոնե հավաքովի տարրեր, որոնցով երեսպատվում է ստորգետնյա կառույցը: Լայնորեն կիրառվում է մետրոպոլիտենի թունելների և հորանափողերի հորատանցման ժամանակ:

ՏՅՈՒԼ [< тюль < ֆր. tulle], գ. (մնծգծ.): Թեթև, թափանցիկ գործվածք՝ կտոր:

ՏՅՈՒԼՊԱՆ [< тюльпан < ֆր. tulipan < թուրք. tülbend չալմա], գ. (բսբ. խսկց.): Պարտիզակակաչ, վարդակակաչ (միագույն կամ բազմագույն):

ՏՅՈՒԿ [< тюк < թուրք. tük փաթթոց, կապոց], գ. (խսկց.): Հակ:

Տ(Թ)ՅՈՒՆԵՐ [< тюнер < անգլ. tuner < to tune կարգավորել, դնել, լարել], գ. (տեխ.): Ռադիոընդունիչի սարք, որը կարգավորում է ալիքների լարումը, ալիքալարիչ սարք:

Տ(Թ)ՅՈՒՆԻՆԳ [< тюнинг < անգլ. tuning], գ. 1. (ռադիո.): Ալիքավորում, ալիքալարք: 2. (խսկց.): Ավտոմեքենայի սարքավորումների և արտաքին տեսքի լրացուցիչ հարդարում:

ՏՈԳԱ [< тога < լատ. toga < togere ծածկել], գ. (պատմ.): Հին Հռոմի քաղաքացիների վերնահագուստ՝ թիկնոցի տեսակ: Սովորաբար պատրաստել են սպիտակ բրդե գործվածքից:

ՏՈԼ [< толь < ֆր. tôle], գ. (շին.): Տանիքը ծածկելու նյութ, որ պատրաստվում է

ստվարաթուղթը հատուկ բաղադրությամբ նյութով պատելու միջոցով:

Տ(Թ)ՈԼԵՐԱՆՏ [< толерантный < լատ. tolerans (tolerantis) համբերատար տանող՝ հանդուրժող], ած. (խսկց.): Հանդուրժող, տանող, դիմացող:

ՏՈԼԻՆԳ [< толлинг < անգլ. tolling], գ. (առևտր.): Հատուկ մաքսային ռեժիմ, երբ օտարերկրյա կազմակերպությունը երկիր է ներմուծում արտադրական հումք, որը այդ կազմակերպության ֆինանսավորմամբ մշակվում է, այնուհետև ապրանքը արտահանվում է երկրից ավելի ցածր մաքսատուրքով (կամ ընդհանրապես մաքսատուրք չի գանձվում):

ՏՈԼԻՆԳԵՐ [< толлингер < անգլ. tollinger], գ. (առևտր.): Տոլինգի ռեժիմով աշխատող կազմակերպություն:

ՏՈԼՈՒՈԼ [< толуол < Կոլումբիայի Santiago de Tolu քաղաքի անունից + լատ. oleum], գ. (քիմ.): Մեթիլբենզոլ՝ արոմատիկ ածխաջրածին, անգույն, օդում այրվող հեղուկ է, օրգանական լուծիչ: Օգտագործվում է բենզոլի, ներկանյութերի և այլ նյութերի արտադրության համար, նաև որպես պոլիմերների լուծիչ:

ՏՈԿԿԱՏ(Ա) [< токката < իտալ. toccata < toccare ձեռք տալ, դիպչել], գ. (երժշտ.): Ստեղնավոր նվագարանի (դաշնամուր, երգեհոն) համար գրված վիրտուոզ երաժշտական պիես՝ արագ տեմպով, հստակ ռիթմով, սովորաբար հարվածային, ակորդային տեխնիկայի գերակշռությամբ:

ՏՈՄԱՀԱՎԿ [< томагавк < անգլ. tomahawk < Հյուսիսային Ամերիկայի հնդկացիների լեզվից], գ. 1. (պատմ.): Կարմրամորթների մարտական տապար: 2. (ռազմ.): Ամերիկյան հրթիռի մի տեսակ:

ՏՈՄԱՏ [< томат < իսպ. tomate], գ. 1. (խոհր.): Եփած պոմիդորի թանձր հյութ, խյուս, մածուկ, որ օգտագործում են կերակուրների մեջ: 2. (բսբ.): Մորմազգիների ընտանիքին պատկանող բանջարանոցային միամյա բույս, որի պտուղն է պոմիդորը:

ՏՈՄՈԳՐԱՖԻԱ [< томография < հուն. tomos շերտ + graphō գրում եմ], գ. (գիտ.): Շերտագրություն՝ ռենտգենյան հետազոտման մեթոդ, որը հնարավորություն է տալիս ստանալ հետազոտական օբյեկտի որոշակի խորությունում գտնվող շերտի պատկերը: Կատարվում է հատուկ ապարատով՝ տոմոգրաֆով:

ՏՈՆ [< тон < հուն. tonos բարձրացում, ձայնի բարձրացում, շեշտ], գ. 1. Ձայնաստիճան: 2. Արտահայտության՝ խոսքի ձև՝ եղանակ: 3. Խոսքի այս կամ այն երանգը:

ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. 1. (երժշտ.): Այս կամ այն գամման (ելևէջը), որն ընկած է տվյալ երաժշտական ստեղծագործության հիմքում: 2. Հիմնական գերակշռող գույնը՝ ձայնը, երանգների կամ ձայների զուգակցում, որ նպաստում է այս կամ այն հուզական տրամադրության առաջացմանը:

ՏՈՆԱԴԻԼՅԱ [< тонадилья < իսպ. tonadilla, բառացի՝ երգ], գ. (պատմ.): Իսպանական երաժշտական կատակերգություն (XVIII-XIX դդ. սկիզբ):

ՏՈՆԴՈ [< тондо < իտալ. tondo շրջանաձև], գ. (նկարչ.): Շրջանաձև նկար:

ՏՈՆԶԻԼԻՏ [< тонзиллит < լատ. tonsilla նշագեղձ], գ. (բժշկ.): Նշկաբորբ:

ՏՈՆԶՈՒՐԱ [< тонзура < լատ. tonsura մազերի կտրվածք], գ. (եկեղ.): Կուլակ՝ կաթոլիկ հոգևորականների գլխի գագաթի բոլորակաձև ածիլված տեղը:

ՏՈՆԻԿ [< тоник < անգլ. tonic < ֆր. tonique < tonifer տոնուսը բարձրացնել], գ. Օրգանիզմի տոնուսը բարձրացնող նյութ (դեղահաբ ևն) կամ խմիչք (հատուկ պատրաստված):

ՏՈՆԻԿԱ [< тоника < հուն. tonos լարում], գ. (երժշտ.): Մաժորային կամ մինորային գամմայի հիմնատոնը (առաջին աստիճանը) կամ հիմնական ակորդը:

ՏՈՆՄԵՅՍՏԵՐ [< тонмейстер < գերմ. Tonmeister < Ton հնչյուն, ձայն + Meister վարպետ], գ. (տեխ.): Տոնավարպետ, երանգավորող վարպետ (հնչողության մասնագետ), հնչյունային օպերատոր:

ՏՈՆՆԱ [< тонна < ֆր. tonne], գ. Մետրական համակարգի ծանրության չափ = 1000 կգ-ի:

ՏՈՆՆԱԺ [< тоннаж < ֆր. tonnage], գ. Նավի՝ վագոնի և տարողությունը՝ արտահայտված տոննաներով:

ՏՈՆՈՄԵՏՐ [< тонометр < հուն. tonos լարում + metrēo չափում եմ], գ. 1. (բժշկ.): Արյան ճնշումը չափող սարք: 2. Ներաչքային ճնշումը չափող սարք: 3. (երժշտ.): Երկու կամերտոնների տատանումների հաճախությունները համեմատող սարք:

ՏՈՆՈՒՍ [< тонус < լատ. tonus < հուն. tonos լարվածություն], գ. (խսկց.): 1. Լարվածություն, կորովություն: 2. Կենսագործունեություն:

ՏՈՆՖԻԼՄ [< тонфильм < գերմ. Tonfilm < Ton հնչյուն + Film կինոնկար], գ. 1. (կինո.): Հնչյունաժապավեն: 2. (հնց.): Հնչյունային կինոնկար:

ՏՈՊԱԶ [< топаз < ֆր topaze < հուն. topazos], գ. (հնք.): Ռոմբային բյուրեղագիտական համակարգով միներալ, թափանցիկ տոպազները երկրորդ կարգի թանկարժեք քարեր են: Կիրառվում են նաև տեխնիկական նպատակներով՝ բարձր կարծրության շնորհիվ:

ՏՈՊԼԵՍ [< топлесс < անգլ. topless մերկ կուրծք], գ. (հզվդ.): Կուրծքը չփակող կանացի լողազգեստ:

ՏՈՊՈԳՐԱՖԻԱ [< топография < հուն. topos վայր, տեղանք + graphō գրում եմ, գծագրում եմ], գ. (երկրբ.): 1. Տեղագրություն: 2. Տեղագրագիտություն:

ՏՈՊՈԼՈԳԻԱ [< топология < հուն. topos տեղ + logos ուսմունք], գ. (մաթ.): Տեղաբանություն՝ մաթեմատիկայի բնագավառ, որն ուսումնասիրում է երկրաչափական պատկերների այն հատկությունները, որոնք անփոփոխ են մնում փոխմիարժեք և անընդհատ արտապատկերումների ժամանակ:

ՏՈՊՈՆԻՄ [< топоним < հուն. topos վայր, տեղանք + ōnyma անուն], գ. (լեզվբ.): Տեղանուն՝ աշխարհագրական որևէ վայրին տրվող հատուկ անուն:

ՏՈՊՈՆԻՄԻԿԱ [< топонимика < հուն. topos տեղ, վայր + onoma անուն], գ. (լեզվբ.) 1. Տեղանվանաբանություն՝ լեզվաբանության բնագավառ, որն ուսումնասիրում է տեղանվանումները: 2. Որոշակի տեղանքի աշխարհագրական անունների ամբողջությունը:

ՏՈՍՏ [< тост < անգլ. toast], գ. (խսկց.): Բաժակաճառ:

ՏՈՍՏԵՐ [< тостер < անգլ. toaster], գ. (տեխ.): Սարք, որը հացի բարակ կտրած շերտերը չորացնում է և կարմրացնում:

ՏՈՏԱԼ [< тотальный < ֆր. total < լատ. totalis ամբողջ, լրիվ], ած. Համապարփակ՝ համընդհանուր, ամբողջական:

ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐ [< тотализатор < ֆր. totalisateur < totaliser միագումարել], գ. 1. Մեխանիկական հաշվեցույց, որ ցույց է տալիս ձիարշավի այս կամ այն ձիու համար դրված գրազի գումարը, գրազահաշվեցույց: 2. Ձիարշավների և այլ սպորտային մրցումների ժամանակ մրցողների հետ կապված դրամական մոլեխաղ: 3. Այդ խաղերի գրազային գումարներն ընդունող և շահումները վճարող բյուրո:

ՏՈՏԱԼԻԶԱՑԻԱ [< тотализация < ֆր.], գ. (քղք.): Ամբողջատիրություն՝ պետության կողմից հսկողության հաստատումը հասարակության բոլոր ոլորտների նկատմամբ, որը սահմանափակում է սահմանադրական իրավունքը և ազատությունը:

ՏՈՏԱԼԻՏԱՐ [< тоталитарный < ֆր. totalitaire], ած. Բացարձակ տիրապետու-

թյան հասնելու համար բացահայտ տեռորիզմի վրա հիմնված, ամբողջատիրական, բռնապետական:

ՏՈՏԱԼԻՏԱՐԻԶՄ [< тоталитаризм < ֆր.], գ. (քղք.): Տոտալիտար ռեժիմ՝ դիկտատուրա, ամբողջատիրություն, բռնապետություն:

ՏՈՏԵՄ [< тотем < անգլ. totem հնդկացիների լեզվից, որը նշանակում է «նրա ցեղը»], գ. Զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող մի շարք ժողովուրդների հավատալիքներում՝ ցեղի նախահայրն ու հովանավորը համարվող և պաշտամունքի առարկա դարձած կենդանի (երբեմն նաև բույս են):

ՏՈՏԵՄԻԶՄ [< тотемизм < անգլ. < հնդկց.], գ. Զարգացման ցածր աստիճանի վրա գտնվող մի քանի ժողովուրդների մոտ՝ տոտեմի կրոնական պաշտամունք:

ՏՈՏԵՄԻՍՏԱԿԱՆ [< тотемический < անգլ.], ած. Տոտեմիզմին հատուկ՝ վերաբերող:

ՏՈՐԵԱԴՈՐ [< тореадор,тореро < իսպ. toreador < toreo ցուլերի մարտ՝ ցլամարտ], գ. (խսկց.): Ցլամարտ:

ՏՈՐԵՐՈ [< тореро < իսպ. torero], գ. Տե՛ս Տորեադոր:

ՏՈՐԹ [< торт < իտլ. torta < լատ. tortus պտտված], գ. (խոհր.): Ձվով, շաքարով և կարագով պատրաստվող խմորեղեն:

ՏՈՐԻ, ԹՈՐԻ [< тори < անգլ. tory], գ. 1. (քղք. պատմ.): Խոշոր հողատիրական ազնվականների շահերը ներկայացնող քաղաքական կուսակցություն Անգլիայում XVII-XIX դարերում: 2. Անգլիայի պահպանողական կուսակցության կողմնակիցների անվանումը:

ՏՈՐԿՐԵՏՈՒՄ [< торкретирование < լատ. (tec) tor (ium) սվաղ + (con)cret(us) խտացված], գ. (շին.): Բետոնային աշխատանքների մեթոդ, որի դեպքում բետոնապատվող մակերևույթը սեղմված օդի ճնշման ազդեցությամբ շերտ առ շերտ պատվում է բետոնախառնուրդով:

ՏՈՐՆԱԴՈ [< торнадо < իսպ. tornado], գ. Արևադարձային երկրներում մրրիկի տեսակ, պտտահողմ:

ՏՈՐՇԵՐ [< торшер < ֆր. torchère < torche ճրագ], գ. Բարձր ձգվող (կանգնած) լուսավորող հարմարանք՝ լուսամփոփ:

ՏՈՐՊԵԴ [< торпеда < լատ. torpedo էլեկտրական՝ էլեկտրավոր կատվաձուկ], գ. (ռազմ.): Ինքնաշարժ և ինքնակառավարվող ստորջրյա ձկան ձևի արկ:

ՏՈՐՊԵԴԻՍՏ [< торпедист < լատ.], գ. Տորպեդավար:

ՏՈՐՍԻԴԱ [< торсида < իսպ. torcido շեղված], գ. (սպորտ.): Իսպանական ֆուտբոլի մոլի երկրպագուներ, ցավքաշներ:

ՏՈՐՖ [< торф < գերմ. Torf], գ. Ճահճային փտած բույսերից առաջացած ամուր զանգված, կիզահող, որ գործածվում է իբրև վառելիք, պարարտանյութ և տեխնիկական զանազան նպատակների համար:

ՏՈՔՍԻԿՈԶ [< токсикоз < հուն. toxikon թույն], գ. (բժշկ.): Ամբողջ օրգանիզմի վարակումը տոքսինով (թունավոր նյութ), որը արտադրվում է օրգանիզմում:

ՏՈՔՍԻԿՈԼՈԳԻԱ [< токсикология < հուն. toxikon թույն + logōs գիտություն], գ. (բժշկ.): Թունաբանություն, թունագիտություն:

ՏՈՔՍԻՆ [< токсин < հուն. toxikon թույն], գ. (կենսբ. բժշկ.): Թունավոր նյութ, որ արտադրում են որոշ տիպի մանրէներ, ինչպես և որոշ կենդանիներ ու բույսեր:

ՏՐԱԳԵԴԻԱ [< трагедия < հուն. tragōidia], գ. (արվ.): Ողբերգություն:

ՏՐԱԳԻԶՄ [< трагизм < հուն.], գ. Ողբերգականություն:

ՏՐԱԳԻԿ [< трагик < հուն. tragikos], 1. ած.: Ողբերգական: 2. գ. Ողբերգու, ողբերգակ (դերասան, գրող):

ՏՐԱԳԻԿՈՄԵԴԻԱ [< трагикомедия < հուն. tragikos kōmōdia], գ. 1. (արվ.): Ողբերգական և կատակերգական տարրերով միահյուսված դրամատիկական ստեղծագործություն: 2. *փխբ.* Իրողություն՝ վիճակ՝ պատմություն, որի մեջ ցավալին միախառնվում՝ զուգորդվում է ծիծաղելով:

ՏՐԱԳԻԿՈՄԻԿ [< հուն. tragikos + komikos], 1. գ. Ողբերգակատակերգակ: 2. ած. Ողբերգակատակերգական:

ՏՐԱԴԻՑԻԱ [< традиция < լատ. traditio փոխանցում, հանձնում, հաղորդում], գ. (խսկց.): Ավանդույթ:

ՏՐԱԴԻՑԻՈՆ [< традиционный < լատ.], ած. (խսկց.): Ավանդական, ավանդույթային:

ՏՐԱԴԻՑԻՈՆԱԼԻԶՄ [< традиционализм < լատ.], գ. (խսկց.): Ավանդապահություն, հնավանդականություն:

ՏՐԱԼ [< трал < անգլ. trawl], գ. 1. (տեխ.): Կոնաձև ցանցավոր քամիչով ձկնորսական գործիք, որը ջրում բուքսիրվում է հատուկ նավով՝ տրաուլերով: 2. Որոշակի խորության վրա ստորջրյա արգելքները հայտնաբերելու սարք: 3. (ռազմ.): Տրալակիր նավերի և ուղղաթիռների հարմարանք, որը ծառայում է ականները հայտնաբերելու և ոչնչացնելու համար:

ՏՐԱԽԵԱ(ՆԵՐ) [< трахея < հուն. tracheia շնչափող], գ. (կենդբ.): Ցամաքային հողվածոտանիների շնչառական օրգանները:

ՏՐԱԽԵԻԴՆԵՐ [< трахеиды < հուն. tracheia + eidos տեսակ], գ. (բսբ.): Բույսերի մեռած, փայտացած բջիջներ, որոնք ծառայում են ջրի տեղափոխման համար:

ՏՐԱԽԻՏ [< трахит < հուն. trachys անհարթ, խորդուբորդ], գ. (հնք.): Փրփրաքար, որը հանդիպում է Կովկասում, Իտալիայում, Ֆրանսիայում:

ՏՐԱԽՈՄԱ [< трахома < հուն. trachys անհարթ, խորդուբորդ], գ. (բժշկ.): Աչքի շաղկապենու վարակիչ հիվանդություն, խշրուկ:

ՏՐԱԿ [< трак < անգլ. track, բառացի՝ հետք], գ. (տեխ.): Տրակտորի թրթուրի մեկ հատը, թրթուրօղակ, թրթուրահող:

ՏՐԱԿՏ [< тракт < լատ. tractus շերտ, հետք], գ. 1. (հնց.): Փոստուղի, լայն ճանապարհ: 2. (տեխ. բժշկ.): Ուղի, մեծուղի (օր.՝ աղեստամոքսային տրակտ՝ աղեստամոքսային ուղի):

ՏՐԱԿՏԱՏ [< трактат < լատ. tractatus քննարկում, քննում], գ. 1. Որևէ առանձին խնդրի քննությունը՝ հետազոտությունը ներկայացնող գիտական շարադրանք: 2. (դվնգ.): Միջազգային դաշնագրություն:

ՏՐԱԿՏԻՐ [< трактир < լատ. tractoria հրավեր, հրավերք], գ. (հնց.): Պանդոկ (նաև հյուրանոցով):

ՏՐԱԿՏՈՐ [< трактор < անգլ. tractor < լատ. trahere քաշել, քարշ տալ], գ. (տեխ.): Անվավոր կամ թրթուրավոր մեքենա, որ քաշում է իրեն կցված գյուղատնտեսական ճանապարհային մեքենաներն ու գործիքները, քարշակ, քաշան, մղան:

ՏՐԱԿՏՈՐԻՍՏ [< тракторист < լատ.], գ. Տրակտորավար:

ՏՐԱԿՏՐԻՍ [< трактриса < լատ. tractus ձգված], գ. (մաթ.): Հարթ տրասցենդենտ կոր ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում, որի բնորոշ հարթությունն այն է, որ նրա շոշափողի այն հատվածը, որը գտնվում է շոշափման կետի և Ox առանցքի միջև, հաստատուն մեծություն է:

ՏՐԱՄԲԼՅՈՐ [< трамблёр < ֆր. trembleur < trembler դողդողալ, թրթռալ], գ.

(տեխ.): Լուցիչ սարք կարբյուրատորային շարժիչներում:

ՏՐԱՄՊԼԻՆ [< трамплин < ֆր. tramplin], գ. 1. (սպորտ.): Հատուկ հարմարանք՝ թեք տախտակի ձևով, որը ծառայում է որպես հենարան ոստյուն գործելու՝ թռիչքի թափը ուժեղացնելու համար, մեկնալաստ, ցատկատախտակ: 2. *փխբ.* Որևէ գործողության համար որպես հենարան ծառայող տեղ՝ դիրք, ելակետ:

ՏՐԱՄՎԱՅ [< трамвай < անգլ. tramway < tram վագոն+ way ուղի, ճանապարհ], գ. (տրանս.): 1. Քաղաքային երթևեկության էլեկտրական երկաթուղի: 2. Այդ երկաթուղիով երթևեկող գնացք՝ մեկ կամ մի քանի վագոնով:

ՏՐԱՆԶԻՍՏՈՐ [< транзистор < անգլ. transistor < tran(sfer) անցկացնել + (re) sistor դիմադրություն], գ. (տեխ.): Էլեկտրական ազդանշանների ուժեղացմանը ծառայող կիսահաղորդչային սարք:

ՏՐԱՆԶԻՏ [< транзит < լատ. transitus անցում], գ. 1. Ապրանքների կամ ուղևորների փոխադրումը մի պետությունից մյուսը՝ ճանապարհին ընկած մի երրորդ պետության միջոցով կամ մի կետից մյուսը՝ միջանկյալ կետերով: 2. Ապրանքների փոխադրում՝ առանց միջանցիկ ճանապարհներին վերաբերելու:

ՏՐԱՆԺԻՐ [< транжир, транжира < ֆր. trancher կտրել, կտրատել], գ. ած. Վատնիչ՝ վատնող (մարդ):

ՏՐԱՆՇ(Ա) [< транша < ֆր.], գ. Մասնակ, փոխտվություն՝ 1. Փոխառության պարտատոմսերի մաս, որը թողարկվում է կա՛մ ապագայում շուկայական իրավիճակի լավանալու սպասումներով, կա՛մ փոխառությունը տարբեր երկրների փոխատվական շուկաներում տեղաբաշխելու համար: 2.25% բաժին միջազգային արժութային հիմնադրամում:

ՏՐԱՆՇԵՅ [< траншея < ֆր. tranchée], գ. 1. (ռազմ.): Խրամատ: 2. Տարբեր նպատակների համար փորված երկար և որոշակի բարձրություն ունեցող փոս:

ՏՐԱՆՍ... [< транс... < լատ. trans միջով] Բարդ բառերի առաջամաս, որն օգտագործվում է անդր-, միջով իմաստներով:

ՏՐԱՆՍ [< транс < լատ. trans], գ. 1. (բժշկ.): Խոր էքստազ, անբնական ներշնչում, «պայծառատեսության» վիճակ (գուշակողների, հոգեկան հիվանդների մոտ): 2. Ջղային բնազանց վիճակ, իրականության գիտակցման կորուստ:

ՏՐԱՆՍԱԿՑԻԱ [< трансакция < լատ. transactio պայմանագիր], գ. Փոխադարձ զիջումներով կնքված պայմանագիր՝ համաձայնություն:

ՏՐԱՆՍԳՐԵՍԻԱ [< трансгрессия < լատ. transgressio անցում], գ. (երկրբ.): Ծովի ներխուժումը ցամաք՝ երկրակեղևի մայրցամաքային մասի իջեցման հետևանքով:

ՏՐԱՆՍԴՈՒԿՑԻԱ [< трансдукция < լատ. transductio տեղաշարժ], գ. (կենսբ.): Վիրուսի միջոցով գենետիկական նյութի տեղափոխումը մի բջջից մյուսը. հանգեցնում է ընդունող բջջի ժառանգական հատկությունների փոփոխության: Երևույթը հայտնաբերել են ամերիկացի գիտնականներ Ջ. Լեդերբերգը և Ն. Վինդերը 1952 թ.:

ՏՐԱՆՍԵՊՏ [< трансепт < ուշ լատ. transeptum < տրանս... + septum որմածք], գ. (ճարտ.): Բազիլիկ և խաչաձև հատակագծով տաճարների լայնական նավը:

ՏՐԱՆՍԼԻՏԵՐԱՑԻԱ [< транслитерация < տրանս... + լատ. littera տառ], գ. (լեզվբ.): Գրադարձություն՝ մի գրության տառերի ներկայացումը մի այլ գրության տառերի միջոցով:

ՏՐԱՆՍԼՅԱՑԻԱ [< трансляция < լատ. translatio հաղորդում], գ. 1. Խոսքի՝ երաժշտության՝ պատկերի ևն հաղորդումը հեռավորությունից՝ ռադիոյի, հեռուստատեսության կամ հաղորդակցական կապի միջոցով: 2. Այդ միջոցով հաղորդված խոսք՝ երաժշտություն՝ պատկեր ևն: 3. Վերահաղորդում:

ՏՐԱՆՍԼՅԱՑԻՈՆ [< трансляционный < լատ.], ած. 1. Տրանսլյացիային հատուկ: 2. Տրանսլյացիայի ծառայող, տրանսլյացիա կատարող:

ՏՐԱՆՍԿՐԻՊՑԻԱ [< транскрипция < լատ. transcriptio գրափոխանցում], գ. 1. (լեզվբ.): Տառադարձություն, տառադարձում: 2. (երժշտ.): Նվագադարձություն (երաժշտական երկի):

ՏՐԱՆՍՄԻՍԻԱ [< трансмиссия < լատ. transmissio անցում, փոխանցում], գ. (տեխ.): Փոխհաղորդակ՝ հարմարանք, որը ծառայում է մեխանիկական էներգիան շարժիչից մեքենայի գործադիր օրգաններին կամ աշխատանքային այլ մեքենաներին փոխանցելու համար:

ՏՐԱՆՍՄԻՏԵՐ [< трансмиттер < լատ. transmittere հաղորդել, ուղարկել], գ. (տեխ.): Հաղորդիչ հեռագրական հարմարանք, որում հեռագրի տեքստի նշանների կոդային համակցությունները (ծակոտաժապավենի անցքերի տեսքով) ավտոմատորեն փոխակերպվում են էլեկտրական հոսանքի՝ կապի գիծ ուղարկվող իմպուլսների շարքերի:

ՏՐԱՆՍՆԱՑԻՈՆԱԼ [< транснациональный < տրանս... + անգլ. national], գ. (տնտսգ.): Ընկերություն, որն իր գործերի մեծ մասը իրականացնում է երկրի սահմաններից դուրս այլ երկրներում, որտեղ ունի մասնաճյուղեր:

ՏՐԱՆՍՊԱՐԱՆՏ [< транспарант < ֆր. transparant, բառացի՝ թափանցիկ], գ. 1. Շրջանակի մեջ հագցված և վրան որևէ պատկեր կամ տեքստ ունեցող կտավ կամ թուղթ, ցուցապաստառ: 2. Տողաշար, որ գործածվում է ուղիղ գրելու համար:

ՏՐԱՆՍՊԻՐԱՑԻԱ [< транспирация < տրանս... + լատ. spirare շնչել], գ. (բսբ.): Ջրի գոլորշացումը բույսերի կողմից:

ՏՐԱՆՍՊԼԱՆՏԱԼՈԳԻԱ [< трансплантология < լատ. transplantare + հուն. logos], գ. (բժշկ.): Փոխպատվաստագիտություն՝ բժշկագիտության բաժին, որն ուսումնասիրում է փոխպատվաստման խնդիրները:

ՏՐԱՆՍՊԼԱՆՏԱՏ [< трансплантат < լատ.], գ. (բժշկ.): Փոխպատվաստուկ (օրգան կամ հյուսվածք):

ՏՐԱՆՍՊԼԱՆՏԱՑԻԱ [< трансплантация < լատ. transplantare պատվաստել], գ. (բժշկ.): Փոխպատվաստում՝ օրգանների և հյուսվածքների պատվաստում:

ՏՐԱՆՍՊՈԶԻՑԻԱ [< транспозиция < ուշ լատ. transpositio տեղափոխություն], գ. 1. (լեզվբ.): Խոսքիմասային փոխանցում, երբ բառը մի խոսքի մասից փոխանցվում է մեկ այլ խոսքի մասի. որոշ լեզվաբաններ սա բառակազմության տեսակ են համարում: 2. (երժշտ.): Ստեղծագործության կամ դրա որևէ հատվածի փոխադրությունը մեկ տոնայնությունից մի այլ տոնայնության:

ՏՐԱՆՍՊՈՐՏ [< транспорт < տրանս... + լատ. portare տեղափոխել, անցկացնել], գ. (տրանս.): 1. Տնտեսության առանձին ճյուղ, որն սպասարկում է զանազան տիպի փոխադրումներին, հաղորդակցման միջոցների ամբողջությունը որպես տնտեսության բնագավառներից մեկը: 2. Փոխադրական միջոցների այս կամ այն տեսակը: 3. Փոխադրում, տեղափոխություն (բեռների): 4. Գումակ կամ հատուկ ծառայության փոխադրամիջոցների ամբողջությունը: 5. Ռազմական տորմիղի նավ՝ մարդկանց և բեռներ փոխադրելու համար:

ՏՐԱՆՍՊՈՐՏՅՈՐ [< транспортёр < ֆր. transporteur < լատ. transportare տեղափոխել, անցկացնել], գ. 1. Փոխարկիչ: 2. Փոխադրիչ:

ՏՐԱՆՍՍԵՔՍՈՒԱԼ [< транссексуал < լատ. trāns միջով + sexus սեռ], գ. (բժշկ.): Անձ, որը վիրաբուժական եղանակով փոխել է իր սեռը:

ՏՐԱՆՍՍՈՒԴԱՏ [< транссудат < լատ. trāns միջով + sudare ծորել], գ. (բժշկ.):

Ընդմիջածորք:

ՏՐԱՆՍՍՈՒԴԱՑԻԱ [< транссудация < լատ.], գ. (բժշկ.): Ընդմիջածորանք:

ՏՐԱՆՍՎԵՍՏԻՏ [< трансвестит < անգլ. transvestite < to transvest հագնվել հակառակ սեռի նման < լատ. trāns միջով + vestis հագուստ], գ. (բժշկ.): Անձ, որը սեռական գրգռվածություն և բավարարվածություն է զգում՝ հակառակ սեռի հագուստ հագնելով:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏ [< трансцендент < լատ. transcendent այնկողմնային], գ. (փիլ.): Այն, ինչը գտնվում է փորձնական ճանաչողությանը մատչելի աշխարհից այն կողմ՝ իբրև ինքնուրույն և ինքնաբավ (այս իմաստով՝ բացարձակ) էություն, որը կարող է ճանաչվել միայն մտահայեցողական ճանապարհով:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏ ԹՎԵՐ - (մաթ.): Իրական կամ կեղծ թվեր, որոնք ի տարբերություն հանրահաշվական թվերի, չեն բավարարում ամբողջ գործակիցներով ոչ մի հանրահաշվական հավասարման:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ - (մաթ.): Անալիտիկ ֆունկցիաներ, որոնք հանրահաշվական չեն, այսպիսի պարզագույն օրինակներ են ցուցչային ֆունկցիան, եռանկյունաչափական ֆունկցիան, լոգարիթմական ֆունկցիան:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ [< трансцендентальный < լատ. transcendens (transcendentis) սահմաններից դուրս եկող], ած. (փիլ.): Վերազանցական՝ կեցության մետաֆիզիկական-մտահասանելի տեսանկյուններին՝ տրանսցենդենտալիաներին վերաբերող:

ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼԻԱՆԵՐ [< трансценденталии < լատ.], գ. (փիլ.): Միջնադարյան սխոլաստիկական փիլիսոփայության մեջ՝ այն եզրային հասկացությունները, որոնք արտահայտում են ինքնին վերցրած կեցությունն ու նրա էական հատկությունները («միակը», «ճշմարիտը», «բարին» են):

ՏՐԱՆՍՖԵՐ [< трансфер < անգլ. transfer < to transfer փոխանցել < լատ. transferre տեղափոխել, փոխանցել], գ. (սպորտ.): Մարզիկի տեղափոխությունը մի ակումբից մյուսը (սովորաբար օտարերկրյա) պայմանագրային հիմունքներով (նախապես պայմանավորված գումարի չափով):

ՏՐԱՆՍՖԵՐՏ [< трансферт < ֆր. transfert < լատ. transferre փոխադրել], գ. Փոխանցում՝ 1. (ֆին.): Դրամի փոխանցումը մի ֆինանսական կազմակերպությունից մյուսը կամ մի երկրից մյուսը: 2. Արժեթղթերի փոխանցումը մի սեփականատերից մյուսը: 3. (իրավ.): Միջազգային պայմանագրերով՝ բնակիչների տեղափոխություններ պետությունների միջև՝ քաղաքացիության ավտոմատ փոփոխությամբ:

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐ [< трансформатор < լատ. transformare փոխարկել, վերափոխել], գ. (տեխ.): Հատուկ սարք, որ էլեկտրական փոփոխական հոսանքի լարվածությունը ավելացնում կամ թուլացնում է, փոխակերպիչ:

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ [< трансформация < լատ. transformatio փոխարկում, վերափոխում], գ. 1. Փոխակերպություն: 2. Ձևափոխություն: 3. (տնտսգ.): Փոփոխություն, տնտեսական գործունեության փոփոխություն:

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ [< трансформационный < լատ.], ած. Փոխակերպական:

ՏՐԱՆՍՖՈՐՄԻԶՄ [< трансформизм < լատ. transformere փոխակերպել], գ. (կենսբ.): Բուսական և կենդանական օրգանիզմների փոփոխության և փոխակերպման վերաբերյալ պատկերացումների համակարգ, որը նախորդել է էվոլյուցիոն ուսմունքին:

ՏՐԱՆՍՖՈՒԶԻԱ [< трансфузия < լատ. transfusio], գ. (բժշկ.): Արյան փոխներարկում:

ՏՐԱՊ [< трап < հոլանդ. trap], գ. (խսկց.): 1. (ծով.): Նավասանդուղք: 2. Օդանավասանդուղք: 3. Սանդուղք: 4. (տեխ.): Հատականցք (ջրի համար):

ՏՐԱՊԵՁԻԱ [< трапеция < հուն. trapezion], գ. 1. (երկրչ.): Սեղանակերպ, սեղան: 2. (սպորտ.): Ճոճաձող:

ՏՐԱՊԻԶ, ՏՐԱՊԵԶ [< тра′пеза, трапе′за < հուն. trapeza սեղան], գ. (գրք.): 1. (եկեղ.): Սեղանատուն: 2. Սեղան: 3. (հնց.): Ճաշ, ընթրիք, հացկերույթ:

ՏՐԱՊՊ [< трапп < շվեդ. trapp սանդուղք], գ. (հնք.): Կճաքար՝ աստիճանաձև անջատում ունեցող հիմքային մագմատիկ ապարների (դիաբազ, գաբբրո, բազալտ) ընդհանուր անվանումը: Սրանք գրավում են զգալի մակերեսներ՝ տրապպային մարզեր՝ Սիբիրում, Հարավային Աֆրիկայում և Հարավային Ամերիկայում:

ՏՐԱՍ [< трасс < գերմ. Traß], գ. (հնք.): Խիտ, բաց գույնի ապար հրաբխային տուֆերի խմբից: Օգտագործվում է ցեմենտի արտադրության մեջ:

ՏՐԱՍՈԼՈԳԻԱ [< трасология < ֆր. trace հետք + հուն. logōs գիտություն], գ. (իրավք.): Քրեագիտության բաժին, որը ուսումնասիրում է հանցագործի թողած հետքերը, հետքագիտություն, հետքաբանություն:

ՏՐԱՍՍԱ [< трасса < գերմ. Trasse], գ. (խսկց.): 1. Մայրուղի՝ ճանապարհի, ջրանցքի, էլեկտրահաղորդման կամ կապի գծի, խողովակաշարի, ինչպես նաև մեծ երկարության նման այլ կառույցի շարժման ուղին կամ երկայնական առանցքը որոշող գիծ, ջրագիծ, հետագիծ: 2. Ուղեգիծ՝ օդանավակայանների և անհրաժեշտ սարքավորումներով որոշակի կետերի միջև տրանսպորտային ինքնաթիռների կանոնավոր թռիչքների հաստատված երթուղի: 3. (ռազմ.): Ուղի, ճանապարհ, ուղեգիծ: Արկի կամ գնդակի թռիչքի հետագիծը լուսարձակող հետքը: 4. (սպորտ.): Սահուղի:

ՏՐԱՍՏ [< траст < անգլ. trust], գ. (տնտսգ.): Վստահառություն՝ կազմակերպություն, որը սովորաբար համակցվում է առևտրային բանկի հետ և զբաղվում է գույքի, ֆինանսական միջոցների կամ ակտիվների վստահառութային, խնայողական և գործակալային գործունեությամբ անհատների կամ ձեռնարկությունների համար:

ՏՐԱՎԵՍՏԻ [< травести < ֆր. travesti < իտլ. travestire զգեստափոխվել], գ. 1. (թատր.): Դերասանուհու դերի տեսակ և բեմական ամպլուա, որ ենթադրում են պայմանական կերպարանափոխություն՝ տղայի կամ պատանու զգեստով: 2. Հումորային պոեզիայի մի տեսակ:

ՏՐԱՎԵՐՍ I [< траверс < գերմ. Traverse < ֆր. traverse < traverser խանգարել, խոչընդոտել], գ. 1. (ռազմ. տեխ.): Միջաթումբ, լայնակի պաշտպանական հողաթումբ: 2. (տեխ.): Գերամբարտակ (դեպի գետի մեջտեղը գնացող): 3. (ծով.): Լայնակի ձգվող միջնորմ նավի վրա:

ՏՐԱՎԵՐՍ II [< траверс < անգլ. traverse < ֆր. traverser անցնել, գետը անցնել], գ. (սպորտ.): Ալպինիստների երթը լեռնաշղթայի գագաթագծով, անցագիծ, գագաթնաերթ:

ՏՐԱՎԵՐՍԱ [< траверса < ֆր. traverse զուգափայտ], գ. (տեխ.): Շեղագերան, լայնակահեծան, լայնակ (ավտոմեքենայի ևն):

ՏՐԱՎԵՐՏԻՆ [< травертин < իտլ. travertino], գ. (հնք.): Կրաքարային տուֆ, հանքային աղբյուրների կրաքարային նստվածք:

ՏՐԱՎՄԱ [< травма < հուն. trauma], գ. (խսկց.): 1. (բժշկ.): Վնասվածք՝ մարդու և կենդանիների հյուսվածքների, օրգանների ամբողջականության խախտում՝ ար-

տաքին միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով: 2. *փխբ.* Ցնցում, ջղանցում:

ՏՐԱՎՄԱՏԻԶՄ [< травматизм < հուն.], գ. (բժշկ.): Որոշակի ժամանակամիջոցում բնակչության որոշակի խմբերի ստացած վնասվածքների համակարգ:

ՏՐԱՎՄԱՏՈԼՈԳԻԱ [< травматология < հուն. trauma (traumatos) վնասվածք + logos ուսմունք], գ. (բժշկ. խսկց.): Վնասվածքաբանություն՝ ուսմունք օրգանների և հյուսվածքների վնասվածքների, դրանց կանխարգելման ու բուժման մասին (լայն առումով): Վիրաբուժության բաժին է (նեղ առումով):

ՏՐԱՈՒԼԵՐ [< траулер < անգլ. trawler < trawl տրալ, ուռկան], գ. Ձկնորսական նավ, որը նախատեսված է տրալով ձուկ որսալու համար:

ՏՐԱՈՒՐ [< траур < գերմ. Trauer], գ. (խսկց.): 1. Սուգ: 2. Սգազգեստ:

ՏՐԱՖԱՐԵՏ [< трафарет < traforetto, բառացի՝ ծակծկված], գ. 1. Վերարտադրելի զարդերը՝ նկարները՝ տառերը նն վրան կտրտված բարակ թիթեղիկ կամ ստվարաթուղթ, որ պատի՝ տախտակի նն վրա դնելով ներկ են քսում և արտապատկերում, նախշակաղապար: 2. Այդ թիթեղի միջոցով հանված նախշը: 3. *փխբ.* Պատրաստի՝ մեկընդմիշտ ընդունված՝ սովորական դարձած խոսք, արտահայտություն նն, որ գործածում են առանց մտածելու՝ կուրորեն:

ՏՐԱՖԵՅ (սխ.): Տե՛ս Տրոֆեյ:

ՏՐԵԴ-ՅՈՒՆԻՈՆԻԶՄ [< тред-юнионизм < անգլ. trade-unionism], գ. (պատմ.): Բանվորական շարժման ուղղություն, որը պրոլետարական պայքարը սահմանափակում է տնտեսական պահանջներով՝ մի կողմ թողնելով կապիտալիզմի տապալման խնդիրը:

ՏՐԵԴ-ՅՈՒՆԻՈՆՆԵՐ [< тред-юнионы < անգլ. trade արհեստ + union միություն], գ. (պատմ.): Արհեստակցական միությունների անվանումը Անգլիայում և նրա դոմինիոններում:

ՏՐԵԴՅՈՒՆԻՈՆԻՍՏ [< тред-юнионист < անգլ.], գ. (պատմ.): Տրեդյունիոնիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՏՐԵԼ [< трель < իտլ. trillo < trillare գեղգեղել], գ. (երժշտ.): Մեղեդու որևէ հիմնական հնչյունի և նրանից մեկ աստիճան վերև գտնվող օժանդակ հնչյունի արագ և համաչափ կրկնությունը:

ՏՐԵԿ [< трек < անգլ. track], գ. (սպորտ.): Մրցուղի՝ հեծանվային նն մրցարշավների համար որոշակի թեքությամբ սպորտային կառույց:

ՏՐԵՄԱՏՈԴՆԵՐ [< трематоды < հուն. trēmatōdēs < trēma անցք], գ. (կենդբ.): Ծծող որդեր, տափակ որդերի տիպի դաս:

ՏՐԵՄԱՏՈԴՈԶՆԵՐ [< трематодозы < հուն. trēmatōdēs + eidos տեսակ], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների ճիճվային հիվանդություններ, որոնք առաջանում են ծծող տափակ որդերից՝ տրեմատոդներից:

ՏՐԵՄՈԼԻՏ [< тремолит < Շվեյցարիայի հարավում Tremola հովիտի անվամբ], գ. (հնք.): Եղեգնաքար:

ՏՐԵՄՈԼՈ [< тремоло < իտլ. tremolo, բառացի՝ դողացող], գ. (երժշտ.): Որևէ հնչյունի, ինտերվալի, ակորդի, ինչպես նաև միմյանցից տերցիայից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող երկու հնչյունների կամ ձայներից գոնե որևէ մեկում նույնպիսի հարաբերակցություն պարունակող երկու ակորդների արագ և բազմակի կրկնությունը:

ՏՐԵՅԴԵՐ [< трейдер < անգլ. trader < to trade առևտուր անել], գ. (մսնգ.): 1. Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, ով իրավասու է բորսայում

առևտրական գործարքներ կատարելու:2.Առևտրական միջնորդ:3.Սպառողական ապրանքների մեծածախ առևտրական:

ՏՐԵՅԼԵՐ [< трейлер < անգլ. trailer < to trail քաշել], գ. (տեխ.): Բեռնատարի կցիչ՝ ծանր և մեծ քանակությամբ բեռներ փոխադրող:

ՏՐԵՆԱԺ [< тренаж < անգլ. to train մարզվել], գ. (մանգ.): Մարզումային վարժությունների համակարգ (սպորտում, բալետում են):

ՏՐԵՆԱԺՈՐ [< тренажор < անգլ. train վարժեցնել, մարզել], գ. (սպորտ.): Վարժասարք, մարզասարք՝ ուսուցողական-վարժական հարմարանք զանազան ֆիզիկական հմտություններ մշակելու և մարմինը կատարելագործելու համար: Լայնորեն կիրառում են մասնագիտական ուսուցման և սպորտային մարզումների ժամանակ:

ՏՐԵՆԵՐ [< тренер < անգլ. trainer], գ. (սպորտ. հնց.): Մարզիչ՝ մարզիկի մարզումները ղեկավարող անձ որևէ սպորտաձևում:

Տ(Թ)ՐԵՆԻՆԳ [< тренинг < անգլ. training], գ. (սպորտ. խսկց.): Մարզումային ռեժիմ:

ՏՐԵՉԵՆՏՈ [< терченто < իտալ. trecento, բառացի՝ երեք հարյուր], գ. (պատմ.): XIV դարի իտալական (մշակույթի) անվանումը:

ՏՐԵՊԱԿ [< ռուս. трепак], գ. (արվ.): Ռուսական հնագույն պար. տարածված է նաև Ուկրաինայում:

ՏՐԵՊԱՆԱՑԻԱ [< трепанация < ֆր. trépanation < trépaner շաղափել], գ. (բժշկ.): Ոսկրաշաղափում (վիրաբուժական եղանակով):

ՏՐԵՊԱՆԳ [< трепанг < մալայերեն], գ. (կենդբ.): Ծովային անողնաշարավոր ուտելի կենդանի:

ՏՐԵՊԵԼ [< трепел < գերմ. Tripel < ֆր. tripoli Հյուսիսային Աֆրիկայի (Tripoli) Տրիպոլի քաղաքի անունից], գ. (հնք.): Փրփրուն կամ թույլ ցեմենտացված, շատ թեթև նուրբ ծակոտկեն օպալային նստվածքային ապար:

ՏՐԵՍՏ [< трест < անգլ. trust, բառացի՝ վստահություն], գ. (տնտսգ.): 1. Նույն ճյուղի մի քանի ձեռնարկությունների միավորում, ինչպես և այդ միավորման կենտրոնացված կառավարությունը: 2. Մի քանի արդյունաբերական կամ առևտրական ձեռնարկությունների միավորում, որի նպատակն է շահույթի ստացումը՝ արտադրական գործառույթների ու վաճառահանման կենտրոնացումով:

ՏՐԻԱԴԱ [< триада < հուն. trias (triados) երեք, երրորդություն], գ.1. Եռյակ՝ երեք առանձին մասերի՝ անդամներից կազմված ամբողջություն: 2. (փիլ.): Հեգելի փիլիսոփայության մեջ՝ իրականության երևույթների եռաստիճան զարգացումը՝ թեզիս, անտիթեզիս և սինթեզ:

ՏՐԻԱԹԼՈՆ [< триатлон < անգլ. threeathlon < three երեք + հուն. athlon մրցություն], գ. (սպորտ.): Եռամարտ (վազք, լող, հեծանվային մրցարշավ):

ՏՐԻԱՆԳՈՒԼՅԱՑԻԱ [< триангуляция < լատ. triangulum եռանկյուն], գ. (երկրբ.): Եռանկյունավորում՝ գեոդեզիական հենման ցանցի ստեղծման և երկրային մարմինների հեռավորությունների որոշման մեթոդ:

ՏՐԻԱՍ [< триас < հուն. trias երեք, երրորդություն, եռակիություն], գ. (երկրբ.): Երկրագնդի պատմության մեզոզոյան դարաշրջանի երեք շրջաններից առաջինը:

ՏՐԻԲ [< триба < լատ. tribus], գ. (պատմ.): 1. Հին Հռոմի ժամանակաշրջանում՝ երեք ցեղերից (Ռամնա, Տիցիա, Լուցերա) յուրաքանչյուրը, որոնք կազմում էին հռոմեական համայնքը: 2. Վարչական շրջաններից յուրաքանչյուրը, որոնց բաժանված էր Հռոմը:

ՏՐԻԲՈԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ [< трибоэлектричество < հուն. tribō շփում

եմ + էլեկտրականություն], գ. (էլեկտր.): Շփաէլեկտրականություն՝ երկու մարմինների շփման ժամանակ առաջացող էլեկտրական լիցքեր:

ՏՐԻԲՈԼՈԳԻԱ [< трибология < հուն. tribō + logos ուսմունք], գ. (գիտ.): Շփագիտություն՝ գիտություն հպվող մակերևույթների շփման, յուղման և մաշման մասին:

ՏՐԻԲՈՏԵԽՆԻԿԱ [< триботехника < հուն. tribō տրորելով մանրում եմ, շփում եմ + տեխնիկա], գ. (տեխ.): Շփատեխնիկա՝ շփման հանգույցների օպտիմալ աշխատանքն ապահովող տեխնիկական և տեխնոլոգիական միջոցառումների համախումբ:

ՏՐԻԲՈՒՆ [< трибун < լատ. tribunus], գ. (պատմ.): 1. Ժողովրդական տրիբուն (tribunus plebis), Հին Հռոմում բարձրագույն ընտրովի պաշտոնյա (սկսած մ.թ.ա. 494 թ.), որը ընտրվել է պլեյբեյներից: 2. Զինվորական տրիբուն (tribunus mulitum կամ militaris), Հին Հռոմում զինվորական պաշտոն՝ լեգեոնի կամ լեգեոնի որևէ ջոկատի հրամանատար:

ՏՐԻԲՈՒՆԱ [< трибуна < ֆր. tribune < լատ. tribunal], գ. 1. Հանդիսատեսների համար բարձր տեղ՝ նստատեղերով կամ առանց նստատեղերի, բարձրադեմ: 2. Մարդկանց՝ մասնակիցների համար (լրագրողների ևն) տեղ: 3. (խսկց.): Ամբիոն՝ ելույթի համար հատկացված տեղ, հարթակ:

ՏՐԻԲՈՒՆԱԼ [< трибунал < լատ. tribunal դատ, դատարան], գ. 1. Զինվորական և խիստ ծանր քաղաքացիական հանցագործություններին վերաբերող գործերը վարող դատական մարմին: 2. Այդ մարմնի դատավորների կազմը՝ դատական կոլեգիան: 3. Մի քանի բարձրագույն դատական հաստատությունների անվանումը:

ՏՐԻԳԵՐ [< триггер < անգլ. trigger], գ. (տեխ.): Երկու ակտիվ տարր ունեցող գործարկման հարմարանք (գործարկման սխեմա), որը կարող է գտնվել հակադարձ կապերով ապահովվող երկու կայուն վիճակներից մեկում:

ՏՐԻԳԼԻՖ [< триглиф < հուն. triglyphos < tri երեք + glyphō փորում եմ, փորագրում եմ], գ. (ճարտ.): Եռակոսիկ՝ ճարտարապետության մեջ՝ ուղղանկյուն, քիչ վերձիգ համաչափություններով սալ, որի մակերեսը մշակված է միջին մասում՝ երկու, իսկ եզրերում՝ կեսական ուղղաձիգ ակոսներով:

ՏՐԻԳՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ [< тригональная (< լատ. trigonalis եռանկյուն) система] - (հնք.): Միջին կարգի բյուրեղագիտական համակարգ, որը բնութագրվում է երրորդ կարգի (x^3) մեկ առանցքով:

ՏՐԻԵՐ [< триера < հուն. triērēs < ֆր. trier ընտրել, տեսակավորել], գ. (տեխ.): Գյուղատնտեսական մեքենա կամ բարդ հատիկազտիչ մեքենաների աշխատանքային օրգան, որը մաքրում է հիմնական կուլտուրայի սերմերը զանազան խառնուրդներից և սերմերը տեսակավորում ըստ հատիկի երկարության:

ՏՐԻԼԻՈՆ [< триллион < ֆր. trillion], թվ. Հազար միլիարդ՝ միավորով և 12 զրոներով պատկերվող թիվ:

ՏՐԻԼՈԲԻՏՆԵՐ [< трилобиты < հուն. trilobos], գ. (հնէաբ.): Պալեոզոյան ծովային հոդվածոտանիների դաս, որ ուներ կարծրացած ձվաձև ձգված, սեգմենտավոր մարմին՝ երեք մասից կազմված:

ՏՐԻԼՈԳԻԱ [< трилогия < հուն. trilogia], գ. (արվ.): Եռագրություն՝ նույն հեղինակի երեք գրական կամ երաժշտական ստեղծագործությունները, որոնք իրար հետ կապված են ընդհանուր գաղափարով և թեմատիկ հաջորդականությամբ:

ՏՐԻԽԻՆԵԼԱՍԿՈՊԻԱ [< трихинелласкопия < հուն. trichinos + scopeō դիտում

եմ, զննում եմ], գ. (բժշկ.): Մսեղիքի հետազոտման եղանակ, որի նպատակն է հայտնաբերել տրիխինելոզի հարուցիչների թրթուրներ:

ՏՐԻԽԻՆԵԼՈԶ [< трихинеллёз < հուն. trichinos], գ. (բժշկ.): Մարդու և կաթնասուն կենդանիների ճիճվային հիվանդություն:

ՏՐԻԽՈՄՈՆՈԶ, ՏՐԻԽՈՄՈՆԻԱԶ, ՏՐԻԽՈՄՈՆԱԴՈԶ [< трихомоноз, трихомонодоз < հուն.], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների միզասեռական օրգանների բորբոքային հիվանդություն: Հարուցիչը մտրակավորների դասի միաբջիջ օրգանիզմներն են՝ տրիխոմոնասները:

ՏՐԻԽՈՑԵՖԱԼՈԶ [< трихоцефалоз < հուն.], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների ճիճվային հիվանդություն (նեմատոդոզների խմբի):

ՏՐԻԽՈՖԻՏԻԱ [< трихофития < հուն. trichos մազ + phyton բույս], գ. (բժշկ.): Խուզող որքին՝ մարդու և կենդանիների մաշկի սնկային հիվանդություն:

ՏՐԻԿԼԻՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ [< триклинная (< լատ. triclinium < հուն. treis երեք + klinē անկողին) система] – (քիմ.): Ստորին կարգի բյուրեղագիտական համակարգ. բնութագրվում է համաչափության առանցքների և հարթությունների բացակայությամբ:

ՏՐԻԿՈ [< трико < ֆր. trikot], գ. (խսկց.): 1. Նախշավոր գործվածքով բրդյա կտոր, որից հագուստ են կարում: 2. Տրիկոտաժե բեմական կամ սպորտային կոստյում, որը ամուր գրկում է մարմինը: 3. Տրիկոտաժից կարված սպիտակեղեն:

ՏՐԻԿՈԼՈՐ [< триколор < ֆր. tricolore < լատ. tres (tria) երեք + color գույն], գ. (խսկց.): Եռագույն պետական դրոշ:

ՏՐԻԿՈՏԱԺ [< трикотаж < ֆր. tricotage], գ. (մնծգր.): 1. Մեքենայով հյուսված գործվածք: 2. Այդ գործվածքից կարված սպիտակեղեն, հագուստ նն:

Տ(Թ)ՐԻՄԻՆԳ [< триммминг < անգլ. trimming < to trim կարգի բերել], գ. (մսնգ.): Շան մազերի սանրում՝ կտրում՝ հարդարում՝ կարգավորում:

ՏՐԻՈ [< трио < իտլ. trio], գ. 1. Երաժշտական ստեղծագործություն երեք տարբեր գործիքների կամ երեք տարբեր ձայների համար: 2. (երժշտ.): Երեք կատարողներից (երգիչներից կամ նվագողներից) բաղկացած անսամբլ, համույթ: 3. Պարային տիպի երաժշտական ստեղծագործությունների երկրորդ մասը՝ ավելի հանգիստ ու ներդաշնակ, որից հետո կրկնվում է առաջին մասը:

ՏՐԻՈԴ [< триод < հուն. tri երեք (բարդ բառերում) + (էլեկտր)ոդ], գ. (ֆիզ.): Էլեկտրոնային լամպ, որն ունի 3 էլեկտրոդ՝ ջերմաէլեկտրոնային կատոդ (ուղղակի կամ անուղղակի շիկացման), կառավարող ցանց, անոդ:

ՏՐԻՈԼԵՏ [< триолет < ֆր. triolet < իտլ. trio երեքն էլ], գ. (տոչփ.): Ութտողանի բանաստեղծություն, որի 4-րդ և 7-րդ տողերը կրկնում են առաջին, իսկ 8-րդը՝ երկրորդ, տողը, որով ամբողջ բանաստեղծությունն ունենում է երկու հանգ:

ՏՐԻՊԱՆՈՍՈՄՆԵՐ [< трипаносомы < հուն. trypanon + sōma մարմին], գ. (կենդբ.): Մտրակավորների դասի նախակենդանիների սեռ, որոնք մարդու և ողնաշարավոր կենդանիների արյան ու հյուսվածքների մակաբույծներ են:

ՏՐԻՊԱՆՈՍՈՄՈԶՆԵՐ [< трипаносомозы < հուն.], գ. (բժշկ.): Մարդու և կենդանիների հիվանդություն, որի հարուցիցչը տրիպանոսոմներն են:

ՏՐԻՊԵՐ [< триппер < գերմ. Tripper], գ. (բժշկ.): Սուսանակ՝ բացիլային ծագումով վեներական սուր վարակիչ հիվանդություն:

ՏՐԻՊԼԵՏ [< триплет < ֆր. tripler], գ. (կենսբ.): Ժառանգական ինֆորմացիայի ծածկագրման համակարգ նուկլեինաթթուների համակարգում: 1954 թ. ամերիկացի գիտնական Գ. Գամովը առաջարկել է գենետիկական կոդի տրիպլետային

մոդել, որտեղ 1 ամինաթթուն կոդավորվում է 3 նուկլեոտիդների խմբով:

ՏՐԻՊԼԵՔՍ [< триплекс < լատ. triplex եռակի], գ. 1. Անբեկոր ապակի՝ եռաշերտ նյութ, որը բաղկացած է սիլիկատային կամ օրգանական ապակու երկու թիթեղներից և դրանք կապակցող պոլիմերային շերտից: 2. Երեք ինքնուրույն մասերից (տարրերից) բաղկացած որևէ հարմարանք (կամ գործընթաց):

ՏՐԻՊՍԻՆ [< трипсин < հուն. thrypsis], գ. (կենսբ.): Հիդրոլազների դասի ֆերմենտ, որը սինթեզվում է մարդու և կենդանիների ենթաստամոքսային գեղձում:

ՏՐԻՊՍՆԵՐ [< трипсы < հուն. thrips], գ. (կենսբ.): Բշտիկոտներ՝ բշտիկոտն միջատների դաս:

ՏՐԻՊՏԻԽ [< триптих < հուն. triptychos եռակի], գ. (նկարչ.): Եռապատկեր՝ երեք մասից բաղկացած գեղանկարչական պատկեր:

ՏՐԻՊՏՈՖԱՆ [< триптофан < հուն.], գ. (կենսբ.): Կարևորագույն բնական ամինաթթու, որի փոխանակության խանգարումները հանգեցնում են մարդու և կենդանիների ծանր հիվանդությունների՝ տուբերկուլյոզ, քաղցկեղ ևն:

ՏՐԻՏԻՈՒՄ [< тритий < լատ. Tritium], գ. (քիմ.): T ջրածնի ռադիոակտիվ իզոտոպ, զանգվածային թիվը 3 (այստեղից էլ անվանումը): 1934 թ. հայտնագործել են Է. Ռեզերֆորդը, Մ. Օլիֆանտը և Պ. Հարտեկը:

ՏՐԻՏՈՆ I [< тритон < հուն. Tritōn < triton], գ. (կենդբ.): Սալամանդրների ընտանիքին պատկանող պոչավոր երկկենցաղ:

ՏՐԻՏՈՆ II [< тритон < լատ. tritium], գ. (քիմ.): Ջրածնի ռադիոակտիվ իզոտոպի՝ տրիտիումի միջուկը (+), որը պարունակում է 3 նուկլոն (1 պրոտոն և 2 նեյտրոն):

ՏՐԻՏՈՆ III [< тритон < ֆր. triton < հուն.], գ. (երժշտ.): Եռատոն՝ լադում (գամմայում) երեք ամբողջ տոնների հաջորդականությունը (օր.՝ ֆա-սոլ-լյա-սի). այդպիսի հաջորդականության ծայրի հնչյունների միջև ընկած մեծացված կվարտա ինտերվալը (ֆա-սի):

ՏՐԻՈՒՄՎԻՐԱՏ [< триумвират < լատ. triumviratus < tres (trium) երեք + vir տղամարդ], գ. 1. (պատմ.): Եռապետություն՝ Հին Հռոմում պետության կառավարումը երեքով միասին: 2. *փխբ.* Միասին գործունեություն ծավալող երեք անձեր:

ՏՐԻՈՒՄՖ [< триумф < լատ. triumphus], գ. 1. (պատմ.): Հաղթահանդես, հաղթություն տարած զորավարի և նրա բանակի հանդիսավոր դիմավորումը Հին Հռոմում: 2. Նշանակալի, փայլուն հաջողություն, հաղթանակ:

ՏՐԻՈՒՄՖԱՏՈՐ [< триумфатор < լատ. triumphator], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ հաղթող զորավար, որին դիմավորում էին հաղթահանդեսով՝ տրիումֆով, հաղթահերոս: 2. *փխբ.* Որևէ բանում փայլուն հաջողության՝ հաղթանակի հասած մարդ:

ՏՐԻՖԹՈՆԳ [< трифтонг < գերմ. Triphtong < հուն. tria երեք + phthongos հնչյուն], գ. (լեզվբ. հնց.): Եռաբարբառ:

ՏՐՅՈՒԿ [< трюк < ֆր. truc], գ. (խսկց.): Ճարպիկ խաղ՝ հնարք՝ արարք:

ՏՐՅՈՒՄ [< трюм < հոլանդ. truim զետեղարան], գ. (ծով.): Նավամբար՝ զետեղարան տարբեր բեռների համար:

ՏՐՅՈՒՄՈ [< трюмо < ֆր. trumeau], գ. 1. (խսկց.): Մեծ ու կանգուն հայելի: 2. (ճարտ.): Դրվագավոր պատուհանամեջ, դռնամեջ, զարդանկար պատաման:

ՏՐՅՈՒՖԵԼ [< трюфель < գերմ. Trüffel իտլ. tartuffo], գ. 1. Շոկոլադե կոնֆետ՝ կոնի ձևով: 2. (բսբ.): Գետնասունկ:

ՏՐՈԳԼՈԴԻԶՄ [< троглодизм < հուն.], գ. Քարանձավաբնակություն:

ՏՐՈԳԼՈԴԻՏ [< троглодит < հուն. trōglodytēs որջում կամ քարանձավում

բնակվող, քարանձավաբնակ], գ. Քարանձավաբնակ:

ՏՐՈԼԵՅԲՈՒՍ [< троллейбус < անգլ. trolleybus], գ.(տրանս.): Էլեկտրական հոսանքով շարժվող բազմատեղ մարդատար ավտոմեքենա՝ քաղաքային անռելս էլեկտրաշարժ տրանսպորտի մի տեսակ:

ՏՐՈՄԲ [< тромб < հուն. thrombos թանձրուկ, մակարդակ], գ. (բժշկ.): Արնախեցի, թրոմբ:

ՏՐՈՄԲՈՆ [< тромбон < իտլ. trombone < tromba փող], գ. (երժշտ.): Պղնձյա փողային նվագարան: Հայտնի է 6 տարատեսակ՝ սոպրանոյից մինչև կոնտրաբաս. նվագախմբային գործիք է:

ՏՐՈՄԲՈՑԻՏՆԵՐ [< тромбоциты < հուն. thromos + kytos], գ. (կենսբ.): Արյան բաղադրիչ տարրեր:

ՏՐՈՄՊ [< тромп < ֆր. trompe], գ. (ճարտ.): Քարե որմածքով բրգաձև, կոնաձև, գնդաձև թաղի մաս կազմող կառուցվածքային տարր, որ հիմնականում ծառայում է գմբեթատակ քառակուսուց գմբեթի շրջանաձև հիմքին անցնելու համար:

...ՏՐՈՆ [< ...трон < էլեկտրոն բառի կրճատումը] Էլեկտրավակուումային սարքերի անունների ավանդական վերջավորությունը, օր.՝ գազատրոն ևն:

ՏՐՈՊԻԶՄՆԵՐ [< тропизмы < հուն. tropos ուղղություն, շրջադարձ], գ. (բսբ.): Արտաքին գործոնների միակողմանի ազդեցությամբ պայմանավորված բույսերի օրգանների (ցողուն, տերև, արմատ) շարժումները:

ՏՐՈՊԻԿՆԵՐ [< тропики < հուն. tropikos պտուտային], գ. (աշխրգ.): Արևադարձային երկրներ:

ՏՐՈՊՈՍՖԵՐ [< тропосфера < հուն. tropos + sphaira գունդ], գ. (երկրբ.): Մթնոլորտի ստորին, երկրի մակերևույթի ազդեցության առավել ենթակա մասը: Տարածվում է երկրի մակերևույթից 8-18 կմ բարձրություններում:

ՏՐՈՍ [< трос < հոլանդ. tros], գ. (խսկց.): 25 մմ հաստ ճոպանների ընդհանուր անվանումը:

ՏՐՈՏԻԼ [< тротил < тринитротолуол բառի կրճատ ձևից], գ. (քիմ.): Օրգանական միացություն, պայթուցիկ նյութ, որը օգտագործվում է ռազմական գործում և պայթեցման աշխատանքներում:

ՏՐՈՏՈՒԱՐ [< тротуар < ֆր. trottoir < trotter գնալ, քայլել, վազել], գ. (խսկց.): Մայթ:

ՏՐՈՑԿԻԶՄ [< ռուս. троцкизм], գ. (պատմ.): Գաղափարաքաղաքական հոսանք. առաջացել է XX դ. սկզբին, որպես մենշևիզմի, իսկ միջազգային մասշտաբով՝ ցենտրիզմի տարատեսակ: Անվանումը ստացել է այդ հոսանքի գաղափարախոս և պարագլուխ Լ. Դ. Տրոցկու անունից:

ՏՐՈՑԿԻՍՏ [< ռուս. троцкист], գ. (պատմ.): Տրոցկիզմի հետևորդ:

ՏՐՈՖԵՅ [< трофей < ֆր. trophée < հուն. trapaion հուշարձան ի նշան հաղթանակի], գ. (խսկց.): 1. Ռազմավար: 2. Ավարահիր, հաղթանշան: 3. Ասպատազարդ, զինազարդ:

ՏՐՈՒԲԱԴՈՒՐ [< трубадуры < ֆր. troubadour < պրովանս. trobar գտնել, կազմել, հորինել], գ. 1. (պատմ.): Միջնադարյան երգիչ հարավային Ֆրանսիայում (Պրովանսում), թափառող բանաստեղծ: 2. *փխբ.* Որևէ բան փառաբանող՝ գովաբանող մարդ:

ՏՐ(Յ)ՈՒԻԶՄ [< труизм < անգլ. truism < true ճիշտ, ճշմարիտ], գ. Համընդհանուր ճշմարտություն, ծեծված բան:

ՏՐՈՒՍԻԿ [< трусики < անգլ. trousers], գ. (խսկց.): Կիսավարտիք:

ՏՐՈՒՎԵՐ [< труверы < ֆր. trouvère, trouver գտնել, հորինել], գ. (պատմ.): XII-XIII դդ. ֆրանսիական բանաստեղծ-երգիչներ, որոնք իրենք հորինել և կատարել են իրենց երգերը, հեղինակել նաև վիպական ու դրամատիկական ստեղծագործություններ:

ՏՈՒԱ, ՏՈՒՅԱ [< туя < հուն. thya], գ. (բսբ.): Կենսածառ, սաստկահոտ նոճի, թեփուկատերև նոճի, դրախտանոճի, բուրանոճի:

ՏՈՒԱԼԵՏ [< туалет < ֆր. toilette], գ. (խսկց.): 1. Պճնասեղան, զարդասեղան: 2. Զուգարան, արտաքնոց: 3. Զգեստ, հագուստ, արդուզարդ, պճնազարդություն:

ՏՈՒԲԱ [< туба < իտլ. և լատ. tuba փող], գ. (երժշտ.): Ամենացածր հնչողությամբ նվագախմբային պղնձյա փողային երաժշտական գործիք: Հայտնի է երկու տեսակ:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ [< туберкулёз < լատ. tuberculum թմբիր], գ. (բժշկ.): Պալարախտ, թոքախտ՝ մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություն, որը բնորոշվում է հիմնականում թոքերում և ավշային հանգույցներում բորբոքային առանձնահատուկ փոփոխությունների առաջացմամբ:

ՏՈՒԳՐԻԿ [< тугрик < մոնղ.], գ. (ֆին.): Մոնղոլիայի դրամական միավորը:

ՏՈՒԶ [< туз < լեհ. tuz < գերմ. Daus], գ. 1. (թղթխղ.): Խաղաթղթի մեկանոցը: 2. *փխբ.* (խսկց.): Որևէ բնագավառում շատ ազդեցիկ՝ բարձրաստիճան մարդ:

ՏՈՒԺՈՒՐԿԱ [< тужурка < ֆր. toujours միշտ, մշտապես], գ. (խսկց.): Տնային կամ տարազային կուրտկա (սովորաբար երկլանջ):

ՏՈՒՄԲԼԵՐ [< тумблер < անգլ. tumbler < to tumble ընկնել], գ. (տեխ.): Էլեկտրական փոխարկիչի տեսակ՝ հոսանքափոխարկիչ:

ՏՈՒՆԴՐԱ [< тундра < ֆին. tunturi, բառացի՝ անանտառային հարթ՝ ողորկ գագաթ], գ. (երկրբ.): Երկրագնդի արկտիկական գոտու հարավային շրջանը՝ խիստ կլիմայով անտառազուրկ տարածություն:

ՏՈՒՆԴՐԱԿՏՅԱՐ, գ. (կենդբ.): Կտցարների դասին պատկանող թռչուն, որ ապրում է տունդրայում և անտառատունդրայում:

ՏՈՒՆԻԿԱ [< туника < լատ. tunica], գ. (պատմ.): Հին հռոմեական զգեստ. մի տեսակ խալաթ՝ կարճ թևիկներով կամ առանց թևիկի:

ՏՈՒՇ I [< туш < գերմ. Tusch], գ. (երժշտ.): Նվագախմբի կողմից կատարվող՝ կարճ երաժշտական ողջույն:

ՏՈՒՇ II [< туш < գերմ. Tusch], (ձայն.): Պարի ժամանակ՝ պարողներին ոգևորելու բացականչություն:

ՏՈՒՇ III [< тушь < գերմ. Tusche], գ. (նկարչ.): Հատուկ ձևով պատրաստված սև կամ գունավոր ջրաներկ, որը չի ծծվում, չի տարածվում թղթի վրա և շուտ չորանում է (օգտագործվում է գծագրության, գեղանկարչության, ինչպես նաև զանազան փաստաթղթեր գրելու համար):

ՏՈՒՇԵ [< туше < ֆր. touché < toucher ձեռք տալ, հպվել], գ. 1. (երժշտ.): Դաշնամուրի ստեղներին հպվելու (նաև սեղմելու, հարվածելու) բնույթը, եղանակը, որն ազդում է ձայնի ուժգնության և երանգի վրա: 2. (սպորտ.): Ըմբշամարտում՝ ըմբշամարտիկի թիակներով գորգին հպվելը:

ՏՈՒՐ [< тур < ֆր. tour < լատ. tornare կլորացնել, բոլորացնել], գ. 1. Որևէ բանի ծավալման՝ զարգացման՝ տեղի ունենալու յուրաքանչյուր առանձին փուլը մյուս փուլերի շարքում, էտապ, փուլ: 2. (սպորտ.) Խաղամաս:

ՏՈՒՐԲԻԴԻՄԵՏՐԻԱ [< турбидиметрия < լատ. turbidus պղտոր + հուն. metreō], գ. (քիմ.): Քիմիական վերլուծության լուսանկարչական եղանակ, որը հիմնված է

պղտոր միջավայրով անցնող լույսի կլանումը չափելու վրա:

ՏՈՒՐԲԻՆ [< турбина < ֆր. turbine < լատ. turbo (tourbinis) պտտահողմ, մրրիկ, հողմապտույտ, պտույտ], գ. (տեխ.): Պտտվող հարմարանքի միջոցով գոլորշու՝ գազի՝ ջրի ուժը մեքենական աշխատանքի փոխարկող շարժիչ:

ՏՈՒՐԲՈԳԵՆԵՐԱՏՈՐ [< турбогенератор < տուրբին + լատ. generator], գ. (տեխ.): Շոգետուրբինը շարժման մեջ դնող էլեկտրական գեներատոր:

ՏՈՒՐԳՈՐ [< тургор < լատ. turgere ուռչել, փքվել], գ. (կենսբ.): Բջջաթաղանթի լարված վիճակ, որը կախված է ներբջջային հեղուկի և արտաքին լուծույթի օսմոտիկ ճնշումներից և բջջաթաղանթի առաձգականությունից:

ՏՈՒՐԻԶՄ [< туризм < ֆր. tourizme < tour զբոսանք, ուղևորում], գ. Հանգստի՝ անծանոթ վայրեր տեսնելու կամ երկրի տարբեր շրջաններին ծանոթանալու նպատակով կատարվող ճանապարհորդություն, զբոսաշրջություն:

ՏՈՒՐԻՍՏ [< турист < ֆր. touriste], գ. (խսկց.): Զբոսաշրջիկ:

ՏՈՒՐՄԱԼԻՆ [< турмалин < գերմ. Turmalin], գ. (հնք.): Բյուրեղանման կազմությամբ հանք, որի թափանցիկ, գեղեցիկ երանգներով տարատեսակները օգտագործվում են որպես թանկագին քարեր:

ՏՈՒՐՆԵ [< турне < ֆր. tournée], գ. 1. Շրջագայություն (գաստրոլային): 2. Զբոսանք:

ՏՈՒՐՆԻԿ [< турник < ֆր. tourner պտույտ գործել, պտտվել], գ. (խսկց. սպորտ.): Զուգափայտ, մարզազուգափայտ:

ՏՈՒՐՆԻՐ [< турнир < գերմ. Turnier < ֆր. tournoi], գ. 1. (սպորտ. խսկց.): Սպորտային մրցություն, որի ժամանակ մրցման բոլոր մասնակիցները իրար հետ ունենում են մեկական հանդիպում, մրցաշար: 2. (պատմ.): Միջնադարյան ասպետների զինամարտ:

ՏՈՒՖ [< туф < լատ. tofus], գ. (հնք.): Հրաբխային կամ նստվածքային հանքային ապար, որ օգտագործվում է որպես շինաքար:

ՏՈՒՖԱԲԵԿՈՐ, գ. Տուֆաքարի բեկոր՝ կտոր:

ՏՈՒՖԱԲԼՈԿ, գ. Տուֆի մանրուքից պատրաստված աղյուսաձև արհեստական շինաքար:

ՏՈՒՖԼԻ [< ռուս. туфли], գ. (խսկց.): Անճիտք կոշիկ, մուճակ:

Ց

ՑԱՅՏՆՈՏ [< цейтнот < գերմ. Zeitnot < Zeit ժամանակ + Not կարիք], գ. 1. (սպորտ.): Սահմանված քանակով քայլերի կատարման համար հատկացված ժամանակի պակաս շախմատի կամ շաշկու պարտիաներում: 2. *փխբ.* Ժամանակի սղություն զգալը:

ՑԱՆԳ [< цанга < գերմ. Zange], գ. (տեխ.): Կիսովի զսպանակվող վռանի ձև ունեցող հարմարանք, որը ծառայում է գլանաձև կամ պրիզմաձև շինվածքների սեղմման համար, զսպախցուկ: Կիրառվում են մետաղահատ կամ փայտամշակման հաստոցներում:

ՑԱՊՖԱ [< цапфа < գերմ. Zapfen], գ. (տեխ.): Լիսեռի կամ սռնու՝ առանցքակալի վրա հենվող մաս, դարձյակ:

ՑԱՐ [< ռուս. царь < цезарь < լատ. Caesar], գ. (պատմ.): Մի քանի երկրներում (առավելապես նախահեղափոխական Ռուսաստանում) միապետի տիտղոսը և այդ տիտղոսը կրող անձը, արքա, թագավոր:

ՑԱՐԻԶՄ [< ռուս. царизм < տե՛ս Ցար], գ. (քղք.): Պետական իշխանության ձև, որի ժամանակ գերագույն անսահմանափակ իշխանությունը գտնվում է ցարի ձեռքում, ինքնակալություն, ցարական վարչակարգ, միապետություն:

ՑԵԶՈՒՐԱ [< цезура < լատ. caesura], գ. (գրկն. երժշտ.): Հատած՝ դադար՝ ոտանավորի տողի կամ երաժշտության մեջ:

ՑԵԼԵՍՏԻՆ [< целестин < լատ. caelestis երկնագույն], գ. (քիմ.): Միներալ: Քիմիական կազմը՝ $SrSO_4$: Կիրառվում է շաքարի, ապակու, դեղագործական արդյունաբերության մեջ, ինչպես նաև մետալուրգիայում:

ՑԵԼԻԲԱՏ [< целибат < լատ. caelibatus տղամարդու ամուրիություն < caelebs չամուսնացած], գ. (կրոն.): Կուսակրոնություն:

ՑԵԼՅՈՒԼՈԶ [< целлюлоза < լատ. cellula վանդակ], գ. 1. Այն նյութը, որից բաղկացած է բուսական բջիջների թաղանթը, և որն օգտագործվում է արդյունաբերության համար, թաղանթանյութ: 2. Փայտի և որոշ բույսերի ցողունների քիմիական մշակումով ստացվող նյութ, որ օգտագործվում է թղթի, արհեստական մետաքսի, պայթուցիկ նյութերի ևն արտադրության մեջ:

ՑԵԼՅՈՒԼՈԻԴ [< целлюлоид < լատ. cellula վանդակ + հուն. eidos կերպ, տեսք], գ. (քիմ.): Առաձգական և դյուրավառ պինդ նյութ, որ ստացվում է նիտրոցելյուլոզից և գործածվում է խաղալիքներ, արդուզարդի առարկաներ ևն պատրաստելու համար:

ՑԵԼՈՖԱՆ [< целлофан < լատ. cell(ula) + հուն. phaos լուսավոր], գ. Ցելյուլոզի նուրբ և առաձգական թաղանթ՝ փաթթոցի համար:

ՑԵԼՍԻՈՒՍ [< շվեդացի ֆիզիկոս ու աստղագետ Ցելսիուսի (Celsius) անունով], գ. Ջերմաչափ, որի աստիճանացույց սանդղակը բաժանված է 100 աստիճանի՝ ջրի սառչելու կետից մինչև եռման կետը:

ՑԵԽ [< цех < գերմ. Zeche], գ. (խսկց.): 1. Արտադրամաս, գործամաս: 2. Համքարություն:

ՑԵԿԱ [< ռուս. Цека < центральный комитет], գ. (խսկց.): *հպվ.* Կենտկոմ:

ՑԵՄԵՆՏ [< цемент < գերմ. Zement < լատ. caementum փշրած քար], գ. 1. Հանքային փոշենման նյութ, որից ջրի հետ շաղախելով պատրաստում են կապող, հեշտ չորացող ու ամրացող շաղախ: 2. Այդպիսի շաղախի չորացած և ամուր շերտը որևէ մակերեսի վրա: 3. *փխբ.* Միացնող՝ կապող՝ միավորող հանգամանք՝ երևույթ:

ՑԵՄԵՆՏԻՏ [< цементит < գերմ., լատ.], գ. (քիմ.): Երկաթի կարբիտ՝ երկաթի և ածխածնի քիմիական միացության (Fe_3C)՝ երկաթածխածնային համաձուլվածքների կառուցվածքային բաղադրիչներից:

ՑԵՆԶ [< ценз < լատ. census], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ քաղաքացիների գույքի պարբերական գնահատում ու վերագնահատում՝ նրանց համապատասխան հարկային կարգերի մեջ մտցնելու համար: 2. Քաղաքացիներին այս կամ այն իրավունքներից օգտվելու թույլտվության պայման: 3. Մի քանի երկրներում՝ մարդահամար կամ տնտեսական հաշվեհամար: 4. (մսնգ.): Ձեռնարկությունում այս կամ այն ցուցակի՝ կարգացուցակի մեջ մտցնելու պայման:

ՑԵՆԶՈՐ [< цензор < լատ. censor], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ պետական պաշտոնյա, որ ղեկավարում էր քաղաքացիների գույքի գնահատումը (ցենզը), հսկում հարկերի գանձմանը և հասարակական բարոյականությանը: 2. (հնց.): Գրաքննիչ:

ՑԵՆԶՈՒՐԱ [< цензура < լատ. censura], գ. 1. (պատմ.) Ցենզորի (1) պաշտոնը: 2. Գրաքննություն:

ՑԵՆՏ [< цент < անգլ. cent < լատ. centum հարյուր], գ. (ֆին.): Դրամական միավորի մեկ հարյուրերորդականի արժողությամբ մանր դրամ ԱՄՆ-ում, Հոլանդիայում և մի քանի այլ երկրներում:

ՑԵՆՏԱԼ [< центал < անգլ. cental < լատ. centum հարյուր], գ. Ctl, զանգվածի միավոր անգլիական չափերի համակարգում: Հավասար է 100 անգլիական ֆունտի կամ 45,35 կգ-ի:

ՑԵՆՏԻԳՐԱՄ [< центиграмм < լատ., անգլ., ֆր. հուն., տե՛ս Ցենտ և Գրամ], գ. Հարյուր գրամ:

ՑԵՆՏԼԻՏՐ [< центлитр < անգլ., լատ. + ֆր., տե՛ս Ցենտ և Լիտր], գ. Մեկ հարյուրերորդական (1/100) լիտր:

ՑԵՆՏՆԵՐ [< центнер < գերմ. Zentner < լատ. centum հարյուր], գ. Մետրական համակարգի ծանրության չափ = 100 կգ-ի:

ՑԵՆՏՐԱԼԻԶԱՑԻԱ [< централизация < լատ. centralis], գ. (խսկց.): Կենտրոնացում, համախմբած մի կենտրոնում:

ՑԵՆՏՐԱԼԻԶՄ [< централизм < լատ. centralis], գ. (քղք.): Կառավարման կամ կազմակերպման համակարգ, որի ժամանակ տեղական մարմինները ենթարկվում են կենտրոնական իշխանությանը, կենտրոնաիշխանություն:

ՑԵՆՏՐԻԶՄ [< центризм < լատ. centrum < հուն. kentron կենտրոնակետ, առանցքակետ], գ. (պատմ.): Օպորտունիզմի ձև II Ինտերնացիոնալի կուսակցությունների մեջ:

ՑԵՆՏՐԻՍՏ [< центрист < լատ.], գ. (պատմ.): Ցենտրիզմի կողմնակից՝ հետևորդ, կենտրոնամետ:

ՑԵՆՏՐԻՍՏԱԿԱՆ, ած. Ցենտրիզմին՝ ցենտրիստին հատուկ՝ վերաբերող:

ՑԵՆՏՐԻՖՈՒԳ [< центрифуга < գերմ. Zentrifuga < լատ. centrum կենտրոն + fuga փախուստ], գ. (տեխ.): Կենտրոնախույս ուժերի օգնությամբ խառնուրդները բաղադրիչ մասերի զատող մեքենա:

ՑԵՆՏՈՒՐԻԱ [< центурия < լատ. centuria < centum հարյուր], գ. 1. (պատմ.): Հին Հռոմում՝ ռազմական՝ զինվորական ստորաբաժանում՝ սկզբնապես բաղկացած 100 մարդուց, հարյուրյակ (լեգեոնի մի մասը): 2. Հին Հռոմում՝ միահավասար՝ միատեսակ գույք (ցենզ) ունեցող քաղաքացիների խումբ:

ՑԵՆՏՈՒՐԻՈՆ [< центурион < լատ. centurio (centurionis)], գ. (պատմ.): Հին հռոմեական բանակի՝ ցենտուրիայի ղեկավար, հարյուրապետ:

ՑԵՈԼԻ(Թ)ՏՆԵՐ [< цеолиты < հուն. zeō եռալ + lithos քար], գ. (քիմ.): Բյուրեղային կառուցվածքով ալյումասիլիկատներ: Հանդիպում են բնության մեջ և ստացվում են նաև արհեստական եղանակով:

ՑԵՐԲԵՐ [< цербер < լատ. Cerberus < հուն. Kerberos], գ. 1. (դից.): Կերբեր, Կերբերոս, հին հունական դիցաբանության մեջ՝ եռագլուխ չար շուն, որ հսկում էր դժոխքի մուտքը: 2. *փխբ.* Արթուն ու կատաղի պահակ:

ՑԵՐԵԲՐԱԼ [< церебральный < լատ. cerebrum գլխուղեղ], ած. 1. (կզմխս.): Ուղեղային: 2. (լեզվբ.): Քիմքային, վերնաքիմքային:

ՑԵՐԵԶԻՆ [< церезин < լատ. cera մոմանյութ], գ. (քիմ.): Սպիտակից շագանակագույն մոմանման նյութ է: Օգտագործվում է պլաստիկ քսայուղեր, հակակոռոզիոն ծածկանյութեր պատրաստելու համար և որպես մեկուսիչ՝ էլեկտրատեխնիկայում: Կիրառվում է նաև բժշկության մեջ:

ՑԵՐԵՄՈՆԻԱ [< церемония < լատ. cerimonia, caerimonia պաշտամունքային ծես, ծիսակատարություն], գ. (խսկց.): 1. Արարողություն, ծիսակատարություն: 2. *փխբ.* Նազ, ծեքծեքում, կոտրտվելը:

ՑԵՐԻՈՒՄ [< церий < անվանումը ստացել է N 1 փոքր մոլորակի՝ Ցերերայի անունից], գ. (քիմ.): Ce, պարբերական համակարգի VI պարբերության, III խմբի տարր, կարգահամարը՝ 58, ատոմական զանգվածը՝ 140,12: Օգտագործվում է էլեկտրավակուումային սարքերում՝ որպես գազակլանիչ:

ՑԻԱՆ [< циан < հուն. kyanos բաց կապույտ], գ. (քիմ.): Ազոտից ու ածխածնից բաղկացած անգույն թունավոր գազ:

ՑԻԱՆԱԹԹՈՒ, գ. (քիմ.): Ցիանի թթու, ցիանային թթու:

ՑԻԱՆԱՄԻԴ [< цианамид < հուն. kyanos + amin], գ. (քիմ.): Կարծր նյութ, որ ստացվում է կարբիդի կալցիումի (կրածնի) և օդի ազոտի փոխադարձ ներգործությամբ՝ բարձր ջերմության պայմաններում:

ՑԻԳԱՆ [< ռուս. цыгане, цыганы], գ. ած. (խսկց.): 1. Գնչու: 2. *փխբ.* Չափազանց ժլատ, կծծի:

ՑԻԼԻՆԴՐ [< цилиндр < հուն. kylindros < kylindo գլորում եմ, կլորում եմ], գ. (խսկց.): 1. Տղամարդու լայնեզր գլանաձև գլխարկ: 2. (տեխ.): Գլան:

ՑԻԿԼ [< цикл < հուն. kyklos շրջան], գ. 1. Որևէ բանի գործողության որոշ ժամանակամիջոցում ավարտուն ամբողջություն ներկայացնող երևույթների՝ ընթացքի ևն շրջան, պարբերաշրջան, փուլ: 2. Որևէ բանի հետ կապված արտահայտությունների՝ դրսևորումների՝ կատարման ևն առանձին փուլերի՝ շրջանների՝ միավորների միասնական շարքը՝ ամբողջությունը: 3. Որևէ սկզբունքով միավորված գիտությունների՝ գիտակարգերի ամբողջություն՝ խումբ: 4. Միևնույն ժանրի գեղարվեստական ստեղծագործությունների շարք, որոնք միավորվում են ընդհանուր թեմայով, գործող անձերով ևն, շարք: 5. Որևէ կարգի արտադրական՝ ուսումնական ևն միավորի ստորաբաժանում:

ՑԻԿԼԱՄԵՆ [< циклaмен < հուն. kyklaminos], գ. (բսբ.): Ալպյան մանուշակ. արջտակ, թաղթ:

ՑԻԿԼՈԹԻՄԻԱ [< циклотимия < հուն. kyklos շրջան + thymos ոգի], գ. (բժշկ.): Մանիակալ-դեպրեսիվ պսիխոզի թեթև ձևը: Հիվանդության կլինիկական պատկերը բնորոշվում է երեք հիմնական ախտանիշներով՝ տրամադրության բարձրացում կամ անկում, մտածողության արագացում կամ դանդաղեցում և հոգեշարժական գրգռվածություն կամ արգելակում:

ՑԻԿԼՈԻԴ [< циклоида < հուն. kykloeidēs շրջանաձև], գ. (երկրչ.): Հարթ կոր, որը գծում է r շառավղով շրջանին կենտրոնից a հեռավորության վրա անշարժ ամրացված p կետը, երբ շրջանն առանց սահելու գլորվում է ուղղի վրայով:

ՑԻԿԼՈՆ [< циклон < հուն. kyklōn պտտվող], գ. 1. (օդերև.): Մթնոլորտի մեծ արա-

գության հասնող պտուտական շարժում՝ շարժման կենտրոնում ճնշման նվազումով, որ ուղեկցվում է ամպամածությամբ ու մթնոլորտային տեղումներով: 2. (խսկց.): Փոթորիկ, մրրիկ: 3. (տեխ.): Օդը և գազերը կախված պինդ մարմիններից մաքրելու ապարատ, որի գործածությունը հիմնված է իներցիայի ուժի օգտագործման վրա, մրրկային փոշեմաքրիչ:

ՑԻԿԼՈՊ, գ. Տե՛ս Կիկլոպ:

ՑԻԿԼՈՏՐՈՆ [< циклотрон < հուն. kyklos շրջան + (elek) tron սաթ], գ. (ֆիզ.): Լիցքավորված մասնիկների շարժումն արագացնող կայանք՝ ապարատ, արագացուցիչ:

ՑԻԿՈՐԻԱ, ՑԻԿՈՐԻ [< цикорий < լատ. Cichorium], գ. (բսբ.): Եղերդ, եղերդակ, ճարճատուկ: Բարդածաղիկների ընտանիքին պատկանող բույսերի տեսակ, որոնք աճում են Եվրոպայում և Հյուսիսային Աֆրիկայում:

ՑԻԿՈՒՏԱ [< цикута < լատ. Cicuta], գ. (բսբ.): Ջրային մոլեխինդ՝ հովանոցավորների ընտանիքին պատկանող թունավոր բույս, խնդամոլի, խնդակոթ:

ՑԻՄԲԱԼ [< цимбал < լեհ. cymbaly < լատ. cymbalum ծնծղա], գ. (երժշտ.): Լարավոր հարվածային նվագարան: Ունի փայտե սեղանաձև տափակ իրան՝ վերևի դեկայի վրա ձգված լարերով: Կիրառվում է ժողգործիքների նվագախմբերում:

ՑԻՆԳԱ [< ռուս. цинга], գ. (խսկց.): Լնդախտ:

ՑԻՆԻԶՄ [< цинизм < հուն. kynismos], գ. 1. (պատմ.): Ցինիկների ուսմունքը: 2. *փխբ.* Լկտի՝ արհամարհական վերաբերմունք բոլորի կողմից ընդունված բարոյական նորմաների՝ պարկեշտության ու քաղաքավարական կանոնների նկատմամբ, անպատկառություն, լկտիություն: 3. Անպատկառ արարք՝ վարքագիծ: 4. Անպատկառ՝ լկտի խոսք:

ՑԻՆԻԿ [< циник < հուն.], 1. գ. (պատմ.): Հասարակական միջավայրի նկատմամբ մարդու լիակատար անկախություն՝ ինքնուրույնություն, մարդկային կուլտուրայի հանդեպ արհամարհական վերաբերմունք և դեպի նախամարդու վիճակի դարձ կատարել ցանկացող փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչ՝ հետևորդ: 2. ած. Անամոթ, անպատկառ:

ՑԻՆԿ [< цинк < գերմ. Zink], գ. (քիմ.): Քիմիական տարր. կապտասպիտակավուն կռելի մետաղ:

ՑԻՆԿՈԳՐԱՖ [< цинкограф < գերմ. Zink + հուն. graphō գրում եմ], գ. Ցինկագրիչ, ցինկագիր, ցինկագրության մասնագետ:

ՑԻՆԿՈԳՐԱՖԻԱ [< цинкография < գերմ. Zink + հուն. graphō գրում եմ], գ. Ցինկագրություն:

ՑԻՍՈԻԴ [< циссоид < հուն. kissos բաղեղ + eidos ձև, կերպ], գ. (մաթ.): Երրորդ կարգի հանրահաշվական կոր:

ՑԻՍՏԱ [< циста < լատ. cista < հուն. kistē արկղ], գ. (կենսբ.): Բազմաթիվ միաբջիջ օրգանիզմների ժամանակավոր գոյության ձև. բնութագրվում է նույնպես ցիստա կոչվող պաշտպանական պատյանի առկայությամբ:

ՑԻՍՏԵԻՆ [< цистеин < լատ.], գ. (քիմ.): Ծծումբ պարունակող փոխարինելի ամինաթթու: Օգտագործվում է աչքի ոսպնյակի մթագնումը բուժելու համար:

ՑԻՍՏԵՌՆ [< цистерна < cisterna < ջրամբար, ջրավազան], գ. 1. Հեղուկներ պահելու և տեղափոխելու մեծ պահեստարան, ինչպես և այդպիսի պահեստարանով ավտոմեքենա՝ վագոն ևն, գլանատակառ: 2. Ջրատար:

ՑԻՍՏԻՆ [< цистин < լատ.], գ. (քիմ.): Ծծումբ պարունակող փոխարինելի ամինաթթու՝ ցիստեինի երկսուլֆիդը:

ՑԻՍՏԻՏ [< цистист < հուն. kystis միզապարկ], գ. (բժշկ.): Միզապարկի թաղանթի բորբոքում:

ՑԻՎԻԼ [< цивильный < լատ.], ած. (խսկց.): Քաղաքակիրթ:

ՑԻՎԻԼԻԶԱՑԻԱ [< цивилизация < ֆր. civilisation < լատ. civilis քաղաքացիական], գ. (խսկց.): Քաղաքակրթություն:

ՑԻՏԱՏ [< цитата < լատ. citatum < citare մեջ բերել, հրապարակել], գ. (խսկց.): Մեջբերում, քաղվածք:

ՑԻՏՈ... [< цито... < kytos բջիջ, զետեղարան] Բարդ բառերի բաղադրիչ, որը ցույց է տալիս դրանց կապը բուսական և կենդանական բջիջների հետ:

ՑԻՏՈԼՈԳ [< цитолог < հուն.], գ. Բջջաբան՝ բջջաբանության մասնագետ:

ՑԻՏՈԼՈԳԻԱ [< цитология < ցիտո... + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Բջջաբանություն:

ՑԻՏՈԿԻՆԻՆՆԵՐ [< цитокинины < ցիտո... + kinēo շարժում եմ], գ. (կենսբ.): Բույսերի հորմոնների խումբ (կինիններ), 6-ամինապուրինի ածանցյալներ, որոնք առաջանում են արմատներում, ապա տեղաշարժվում դեպի ընձյուղները, տերևները, բողբոջները:

ՑԻՏՈՊԼԱԶՄԱ [< цитоплазма < ցիտո... + հուն. plasma քանդակված, ձևավորված], գ. (կենսբ.): Բջջաթաղանթի սահմանափակված բջջի պրոտոպլազմայի արտակորիզային մաս:

ՑԻՏՐՈՒՍ [< цитрус < լատ. citrus լիմոնի ծառ], գ. (բսբ.): Սատապազգիների ընտանիքին պատկանող բույս կամ թուփ:

ՑԻՐԿ [< цирк < լատ. circus, բառացի՝ պտույտ, շրջան], գ. (խսկց.): 1. Կրկես: 2. *փխբ.* Ծաղրի՝ զավեշտի առարկա:

ՑԻՐԿՈՆ [< циркон < գերմ. Zirkon < պարսկ. Zar-gūn ոսկե՝ ոսկյա քար], գ. (հնք.): Ցիրկոնիումի սիլիկատ, թափանցիկ կարմիր կամ շագանակագույն հանք, որի բյուրեղները գործածվում են որպես թանկագին քար:

ՑԻՐԿՈՆԻՈՒՄ [< цирконий < Ցիրկոն հանքի անվամբ], գ. (քիմ.): Քիմիական տարր. արծաթասպիտակավուն դժվարահալ մետաղ:

ՑԻՐԿՈՒԼ [< циркуль < լատ. circulus շրջան], գ. (հնց.): Կարկին (շրջանաձև մարմիններ գծագրելու միջոց):

ՑԻՐԿՈՒԼՅԱՐ [< циркуляр < լատ.], գ. ած. (հնց.): Շրջաբերական:

ՑԻՐԿՈՒԼՅԱՑԻԱ [< циркуляция < լատ. circulatio պտույտ], գ. (խսկց.): Շրջապտույտ, շրջանառություն:

ՑԻՐՈԶ [< цирроз < հուն. kirroz շիկակարմիր], գ. (բժշկ.): Մարմնի որևէ օրգանում

շարակցական հյուսվածքների աճելը, ինչը առաջացնում է այդ օրգանի գործառույթի խանգարում:

ՑԻՑԵՐՈ [< цицеро < Ցիցերոն հատուկ անունից], գ. (տպգր.): 1. Տպատառ, որի կեգելը հավասար է 12 պունկտի (4.51 մմ): Առաջին անգամ կիրառվել է 1467 թ. Ցիցերոնի «Նամակների» տպագրության ժամանակ: 2. Գծային չափերի միավոր, որն օգտագործվում է շարվածքի արտադրության ժամանակ:

ՑԻՖԵՐԲԼԱՏ [< циферблат < գերմ. Zifferblatt], գ. (տեխ.): Թվատախտակ, թվացույց (ժամացույցի):

ՑՈԿՈԼ [< цоколь < իտլ. zoccolo], գ. (ճարտ.): 1. Շենքի դրսի պատի ներքևի մասը, որ նստում է հիմքի վրա, գետնախարիսխ: 2. Սյան ներքևի լայն մասը: 3. (էլեկտր.): Էլեկտրալամպի մետաղյա մասը, որ պտտեցնելով ագուցվում է կոթառի մեջ:

ՑՈՒԳՑՎԱՆԳ [< цугцванг < գերմ. Zugzwang < Zug քայլ + Zwang հարկադրում], գ. (սպորտ.): Շախմատային տերմին. դրություն շախմատի խաղի ժամանակ, երբ կատարվող քայլը հանգեցնում է պարտության:

ՑՈՒԿԱՏՆԵՐ [< цукаты < լեհ. cukata < cukier շաքար], գ. (խոհր.): Շաքարաջրով թրջած և չորացրած մրգեր:

ՑՈՒՆԱՄԻ [< цунами < ճապ. tsu nami, բառացի՝ ափամերձ ալիք], գ. Հսկայական ալիք, որը բարձրանում է օվկիանոսի մակերևույթին ստորջրյա երկրաշարժների պատճառով:

ՈՒ

ՈՒԲԻՔՎԻՍՏՆԵՐ [< убиквисты < լատ. ubique ամենուր], գ. (բսբ.): Էկոլոգիական ամենատարբեր միջավայրերում ապրող բույսերի տեսակներ:

ՈՒԶՈՒՍ [< узус < լատ. usus ավանդույթ], գ. 1. (իրավբ.): Սովորույթ, սովորություն, ավանդույթ: 2. (լեզվբ.): Լեզվական միավորների սովորական, ընդունված գործածություն:

ՈՒԶՈՒՐՊԱՏՈՐ [< узурпатор < լատ. usurpator], գ. (քղք.): Իշխանության ապօրինի զավթող կամ ուրիշի իրավունքները բռնի յուրացնող անձ:

ՈՒԶՈՒՐՊԱՑԻԱ [< узурпация < լատ. usurpatio զավթում, գրավում], գ. (քղք.): Ուզուրպացում՝ բռնատիրություն՝ որևէ բանի ապօրինի զավթումը կամ ուրիշի իրավունքների բռնի յուրացումը:

ՈՒԶՈՒՖՐՈՒԿՏՈՒՍ [< узуфрукт < լատ. usufructus < usus օգտագործում + fructus պտուղ, եկամուտ], գ. (պատմ.): Հին Հռոմում ուրիշի գույքի և դրանից ստացված եկամուտների օգտագործման իրավունք՝ նրա ամբողջականությունն ու տնտեսական նշանակությունը պահպանելու պայմանով:

ՈՒԼՏԻՄԱՏԻՎ [< ультимативный < լատ.], ած. Ուլտիմատիվի բնույթ կրող, ուլտիմատում հանդիսացող, վերջնագրային:

ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄ [< ультиматум < լատ. ultimus ամենավերջին], գ. 1. (իրավբ.): Վերջնագիր՝ մի երկրի պահանջի չկատարման դեպքում որոշակի միջոցառումների իրագործում, որը հանգեցնում է երկու երկրների դիվանագիտական հարաբերությունների խզման: 2. Վերջնագիր՝ ներկայացված անձի, կազմակերպության ևն կողմից, որոշակի հետևանքներով շարունակական գործողություններով:

ՈՒԼՏՐԱ... [< ультра... < լատ. ultra] Բարդությունների փոխառյալ բաղադրիչ

ամենա..., գեր..., ծայրահեղ նշանակությամբ:

ՈՒԼՏՐԱԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ, ած. Չափազանց՝ ծայրահեղության հասած ժամանակակից:

ՈՒԼՏՐԱԿԱՐՃԱԼԻՔ, ած. Գերկարճալիք:

ՈՒԼՏՐԱՄԱՐԻՆ [< ультрамарин < գերմ. Ultramarin < լատ. ultra + marinus ծովային], գ. Ծովազվարթ՝ վառ կապույտ ներկ:

ՈՒՄԼԱՈՒՏ [< умляут, умлаут < գերմ. Umlaut < um վրա + Laut հնչյուն], գ. (լեզվբ.): Հետընթաց առնմանման հետևանքով առաջացած ձայնադարձի տեսակ գերմանական լեզուներում (տերմինը ներմուծել է Յ. Գրիմմը, օր.՝ Gast-Gäste):

ՈՒՆԱՆԻՄԻԶՄ [< унанимизм < ֆր. unanimisme < լատ. unanimus միաձայն, համաձայն], գ. (գրկն.): XX դ. ֆրանսիական գրականության մեջ հոսանք, որը քարոզում է մարդկանց միավորումը ընդհանուր բարոյական արժեքների հիմքի վրա (ի հակադրություն դասակարգային պայքարի):

ՈՒՆԻ... [< уни... < լատ. unus մեկ] Բարդ բառերի սկզբնամաս մի- իմաստով:

ՈՒՆԻԱ [< уния < լատ. unio միասնություն, միավորում], գ. (քրք.): Մեկ գերիշխանության ներքո մի շարք միապետությունների միավորման ձև:

ՈՒՆԻԱՏ [< униат < լատ. unio միասնություն, միավորում], գ. (եկեղ.): Եկեղեցական՝ եկեղեցիների միացման՝ միասնության կողմնակից:

ՈՒՆԻԹ(Տ)ՈՐՈՒԹՅՈՒՆ [< унитарность < լատ. unitor միաբանող], գ. (կրոն.): Միարարություն՝ կաթոլիկական եկեղեցու միություն (ունիայի) վրա հիմնված եկեղեցական ուղղություն, որն ընդունում է Հռոմի պապի գերագահությունը, կաթոլիկական դավանանքը՝ պահպանելով ավանդական ծիսակարգը և ժամերգության ազգային լեզուն:

ՈՒՆԻԿԱԼ [< уникальный < լատ. unicus], ած. (խսկց.): Խիստ հազվագյուտ, իր տեսակի մեջ բացառիկ արժեք ներկայացնող՝ ունեցող, բացառիկ, անկրկնելի:

ՈՒՆԻԿՈՒՄ [< уникум < unicum իր տեսակի մեջ եզակի՝ բացառիկ, ոչ սովորական], գ. Եզակի՝ բացառիկ արժեք ներկայացնող հազվադեպ բան:

ՈՒՆԻՊՈԼԱՅԻՆ ԻՆԴՈՒԿՑԻԱ [< униполярная (< լատ. unus մեկ + միջին լատ. polaris բևեռ) индукция] - (ֆիզ.): Միաբևեռ ինդուկցիա՝ էլեկտրաշարժ ուժի (էլշու) առաջացումը մագնիսացած մարմնում, երբ վերջինս շարժվում է մագնիսացման առանցքին ոչ զուգահեռ:

ՈՒՆԻՍՈՆ [< унисон < իտլ. unisono < լատ. unus մեկ + sonus հնչյուն], գ. (երժշտ.): Նույն բարձրությամբ մի քանի ձայնաստիճանների միասին հնչակցումը:

ՈՒՆԻՎԵՐՄԱԳ [< ռուս. универмаг < универсальный магазин հանրային խանութ, տե՛ս և հմմտ. Ունիվերսալ], գ. (խսկց.): Ունիվերսալ խանութ, հանրախանութ:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼ [< универсал < լատ. universalis ընդհանուր, համընդհանուր], ած. 1. Համապարփակ, ընդհանրական: 2. Լայն սպառման ապրանքների առևտուր անող: 3. Բազմաբնույթ: 4. Բազմաթիվ հարակից դիրքերում կամ աշխատանքներում բանող:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԱՆԵՐ [< универсалии < լատ. universalis ընդհանուր], գ. (փիլ.): Ընդհանուր հասկացություններ (միջնադարյան փիլիսոփայության կարևորագույն կատեգորիաներից և խնդիրներից): Այդ խնդրի լուծումն ունեցել է գոյաբանական, իմացաբանական և տրամաբանական տեսանկյուն:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄ [< универсализм < լատ.], գ. 1. Գիտելիքների՝ հմտությունների ևն բազմազան՝ համապարփակ բնույթ: 2. Համամարդկային միասնական

բարոյականություն քարոզող ուղղություն:

ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻՍՏ [< универсалист < լատ.], գ. Ունիվերսալիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՈՒՆԻՎԵՐՍԻԱԴԱ [< универсиада < լատ. universitas], գ.Ուսանողական համալիր մարզական խաղեր ու մրցումներ:

ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ [< университет < գերմ. Universität < լատ. universitas (universitatis) միություն, ամբողջություն], գ. (հնց.): 1. Համալսարան: 2. Համալսարանի շենք:

ՈՒՆԻՎԵՐՍՈՒՄ [< универсум < լատ. universum տիեզերք], գ. (փիլ.): Աշխարհը՝ որպես ամբողջություն, տիեզերք:

ՈՒՆԻՏԱԶ [< унитаз < Unitas ֆիրմայի անվամբ], գ. (խսկց.): Զուգարանակոնք, նստակոնք, ջրարտաքնոցի թաս:

ՈՒՆԻՏԱՐ [< унитарный < ֆր. unitaire < լատ.], ած. Միավորիչ, միացյալ:

ՈՒՆԻՏԱՐԻԶՄ [< унитаризм < ֆր. unitarisme < լատ. unitas միասնություն], գ. (քղք.): Միասնական՝ միացյալ երկիր:

ՈՒՆԻՏՈՐ [< унитор < լատ. unitor միաբար], գ. (պատմ.): Կաթոլիկ եկեղեցու քարոզիչ, որ առաքվում էր այլ երկրներ՝ այլադավան քրիստոնյաներին կաթոլիկության դարձնելու համար, միարար:

ՈՒՆԻՖԻԿԱՑՈՒՄ [< унификация < լատ. unio + facer անել], գ. Միատեսակացում:

ՈՒՆԻՖՈՐՄ [< униформа < ֆր. uniforme < լատ. ūnus (ūni) մեկ + fōrma ձև], գ. (հնց.): Համազգեստ:

ՈՒՆՏԵՐ-ՕՖԻՑԵՐ [< унтер-офицер < գերմ. Unteroffizier], գ. (ռազմ.): Ցածր սպայակազմի ընդհանուր անվանումը մինչհեղափոխական Ռուսաստանում և մի շարք այլ երկրներում:

ՈՒՆՑԻԱ [< унция < լատ. uncia], գ. 1. Կշռի չափ Հին Հռոմում, ինչպես նաև եվրոպական մի շարք երկրներում, որոնք կիրառել են նախքան մետրական համակարգի գործածությունը: 2. Դեղատան կշռի չափի միավոր՝ Ռուսաստանում (= 99.86 գր.): 3. Զանազան հին ոսկյա դրամների անվանումը Եվրոպայում (Սիցիլիայում, Իսպանիայում):

ՈՒՇՈՒ [< ушу < ճապ.], գ. (սպորտ.): Մարտարվեստի տեսակ:

ՈՒՌՌԱ, ՈՒՌԱ [< ура < գերմ. Hurra], (ձայն.): 1. Ցնծության՝ հիացման բացականչություն, ուրախություն՝ հրճվանք արտահայտելու ձայնարկություն: 2. Գրոհի՝ արշավանքի հարձակման կոչ՝ բացականչություն:

ՈՒՎԵՐՏՅՈՒՐԱ [< увертюра < ֆր. ouveture < ouvrir բացել], գ. (երժշտ.): 1. Երաժշտական նախերգանք: 2. Երաժշտական երկ նվագախմբի համար՝ մեկ մասից բաղկացած:

ՈՒՏԻԼ [< утиль < լատ. utilis օգտակար], գ. (խսկց.): Օգտագործման համար ոչ պետքական իրեր, որոնք կարող են որպես հումք ծառայել:

ՈՒՏԻԼԻԶԱՑԻԱ [< утилизация < ֆր. utilization < utile օգտակար < լատ. ūtilis օգտակար], գ. (մսնգ.): 1. Օգտագործում, օգտագործություն: 2. Թափոնների օգտագործում, օգտահանություն:

ՈՒՏԻԼԻՏԱՐ [< утилитарный < լատ. utilitas շահ, օգուտ], ած. 1. Օգտապաշտական, կիրառական, գործնական: 2. Օգտապաշտությամբ հագեցված՝ համակված, օգտահակ:

ՈՒՏԻԼԻՏԱՐԻԶՄ [< утилитаризм < լատ. utilitas շահ, օգուտ], գ. (հոգեբ.): Օգ-

տապաշտություն, օգտախնդրություն՝ բարոյագիտական ուսմունք, որը բարոյականության հիմքը և մարդկանց վարքի չափանիշն է համարում օգուտը:

ՈՒՏԻԼԻՏԱՐԻՍՏ [< утилитарист < լատ.], գ. 1. Օգտապաշտ, օգտախնդիր: 2. Ուտիլիտարիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՈՒՏՈՊԻԱ [< утопия < հուն. u ոչ, չկա + topos, բառացի՝ տեղ, որ չկա. XV-XVI դդ. անգլիացի գրող Թոմաս Մորի ստեղծած «Ուտոպիա» երկի անվամբ], գ. 1. (փիլ.): Հասարակական վերակառուցման՝ իդեալական հասարակարգի ստեղծման ուսմունք, որ հիմնված չէ հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների գիտական ըմբռնման վրա: 2. *փխբ.* Ֆանտազիա, երազանք, անիրագործելի իղձ՝ ձգտում:

ՈՒՏՈՊԻԶՄ [< утопизм < հուն.], գ. 1. Ուտոպիական ուսմունք՝ գաղափարախոսություն՝ հայացքներ: 2. Երազայնություն, անիրական ձգտում:

ՈՒՏՈՊԻՍՏ [< утопист < հուն.], գ. 1. Ուտոպիական սոցիալիզմի (կոմունիզմի) հետևորդ՝ կողմնակից: 2. Երազող, ցնորատես:

ՈՒՐԱՆ [< уран < հուն. uranos երկինք], գ. 1. (քիմ.): Ռադիոակտիվ քիմիական տարր, U, կարգահամարը՝ 92, ատոմական զանգվածը՝ 238.029: 2. Հին հունական դիցաբանության մեջ՝ երկնքի աստվածը: 2. (աստղգ.): Արեգակնային համակարգության մոլորակներից մեկը:

ՈՒՐԲԱՆԻԶԱՑԻԱ [< урбанизация < ֆր. urbanisation < լատ. urbanus, urbs քաղաք], գ. (մանգ.): Հասարակության զարգացման մեջ քաղաքների դերի բարձրացման պատմական գործընթաց, որն ընդգրկում է բնակչության սոցիալ-մասնագիտական, ժողովրդագրական կառուցվածքի, նրա ապրելակերպի, մշակույթի, արտադրողական ուժերի տեղաբաշխման, տարաբնակեցման և այլ փոփոխությունները:

ՈՒՐԲԱՆԻԶՄ [< урбанизм < լատ. urbanus քաղաքային], գ. 1. (պատմ): Գաղափարական հոսանք, որ ձգտում է քաղաքի նյութական ու մշակութային կյանքի զարգացմանը: 2. (գրկն.): Խոշոր քաղաքների պատկերումը և գովերգումը գրականության (նաև՝ արվեստի) մեջ:

ՈՒՐԲԱՆԻՍՏ [< урбанист < լատ.], գ. Ուրբանիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՈՒՐԴՈՒ [< урду < հինդի ordu ճամբար, կայանատեղ], գ. (լեզվբ.): Պակիստանի հիմնական լեզուն, որը նման է հինդիին, սակայն տարբերվում է նրանից, որ կատարել է մեծ թվով արաբական և պարսկական փոխառություններ:

ՈՒՐԵԱԶ [< уреаз < ուշ լատ. urea միզանյութ], (քիմ.): Կարբամիդահիդրոլազ՝ հիդրոլազների դասի ֆերմենտ, որը կատալիզում է միզանյութի քայքայումը ամոնիակի և ածխածնի երկօքսիդի:

ՈՒՐԵՄԻԱ [< уремия < հուն. ur(on) մեզ + haima արյուն], գ. (բժշկ.): Միզարյունության՝ քրոնիկական երիկամային անբավարարության հին անվանումը:

ՈՒՐՈԼՈԳԻԱ [< урология < հուն. ur (on) մեզ + logos գիտություն], գ. (բժշկ.): Կլինիկական բժշկագիտության բաժին, որն ուսումնասիրում է տղամարդկանց միզասեռական, կանանց՝ միզային համակարգի կենսաբանական և ախտաբանական վիճակը, հիվանդությունների պատճառագիտությունը, կլինիկան, մշակում բուժման և կանխարգելման մեթոդներ:

ՈՒՖՈԼՈԳԻԱ [< уфология < անգլ. ufology < UFO < հապավում Unidentified Flying Object չճանաչված թռչող օբյեկտ + հուն. logōs գիտություն], գ. (գիտ.): Գիտություն, որը ուսումնասիրում է չճանաչված թռչող սարքերը (օր.՝ թռչող ափսեները):

Փ

ՓԱԲ [< паб < անգլ. pub < public house կրճատված ձև՝ հասարակական տուն], գ. (խսկց.): Պանդոկ, գարեջրատուն:

ՓԱԴԻՇԱՀ [< падишах < պարսկ. patishah < pati տեր, պարոն + shah շահ], գ. (պատմ.): Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների միապետները և նրանց տրվող տիտղոսները:

ՓԱԶԼ [< пазл < անգլ. pazzle գլուխկոտրուկ, խնդիր], գ. (խսկց.): Գլուխկոտրուկ:

ՓԱԼՄԻՐԱ [< пальмира < Սիրիայի հյուսիսարևելյան Փալմիրա քաղաքի անունից], գ. (բսբ.): Արևադարձային Ասիայում հովհարաձև արմավենի, որի տերևները և պտուղները օգտագործվում են սննդի մեջ, հյութից գինի են ստանում, տերևներից՝ թուղթ. բնափայտը շինանյութ է:

ՓԱՍ [< пас < ֆր. (je) pass (ես) բաց եմ թողնում < passer բաց թողնել], գ. 1. (թղթխդ.): Փաս լինել (չխաղալ): 2. *ուղիղ և փխբ.* Խաղալուց ևն հրաժարվելը (ի վիճակի չլինել շարունակելը՝ տարբեր պատճառներով):

ՓԱՐԱՎՈՆ [< фараон < հուն. pharaon], գ. 1. (պատմ.): Փարավոն՝ հին եգիպտական թագավորները և նրանց տիտղոսը: 2. (արհմրհ.): Ոստիկան (անգլիախոս երկրներում):

ՓԱՐՔԻՆԳ [< паркинг < անգլ. parking < to park կայանել], գ. Ավտոմեքենաների կայանատեղ:

ՓԵՅՆԹԲՈԼ [< пейнтбол < անգլ. paintball < to paint նկարել + ball գնդակ], գ. (սպորտ.): Մարզաձև, երբ երկու թիմերի բաժանված մարզիկները փորձում են իրար վրա կրակել գույն տվող հատուկ գնդիկներով:

ՓԵՅՋԵՐ [< пейджер < անգլ. pager < to page կանչել], գ. (տեխ.): Ժամանակակից կապի տեխնիկական միջոցներից է: Փոքր ռադիոսարք, որն ընդունում է ինֆորմացիան հեռախոսային ծառայության միջոցով:

ՓԵՅՍԵՐ [< пейсы < իդիշ pejes < հին հրեերեն pê'ôth քունքամազեր], գ. (հզվդ.): Քունգագանգուրներ, քունքամազեր, ճալվեր (հրեաների մոտ):

ՓԻԱԼԱ [< пиала < պարսկ. peyale], գ. (խսկց.): Թաս (լայն բաժակ դեպի վեր ընդարձակվող պատերով):

ՓԻԱՌ, Տե՛ս **ՊԻԱՌ:**

ՓԻԼԻՆԳ [< пилинг < անգլ. peeling < to peel վրայից քերել, հանել], գ. (խսկց.): Դիմահարդարության մեջ՝ ոչ խոր կնճիռների վերացումը մաշկի արտաքին շերտերի հեռացմամբ:

ՓԻՐՍԻՆԳ [< пирсинг < անգլ. piercing < to pierce ծակել], գ. Մարմնի որոշ մասերի (լեզուն, պորտը ևն) ծակելը և որևէ զարդի ամրացնելը դրա մեջ. տարածված է երիտասարդների, դեռահասների ևնի միջավայրում նորաձև երևալու նպատակով:

ՓԻՓ ՇՈՈՒ [< пип-шоу < անգլ. peep թաքուն նայել + show բեմադրություն], գ. Էրոտիկ ներկայացում թաքնված հանդիսատեսի համար (հանդիսատեսը հատուկ պատուհանից նայում է փակ սենյակում մերկ պարող կնոջը):

ՓԻՔՍԵԼ [< пиксель < անգլ. pixel < picture cell պատկերի տարր], գ. (ինֆորմ.): Պատկերի խտության միավոր:

ՓԼԵՅԲՈՅ [< плейбой < անգլ. playboy < to play խաղալ, խայտալ + boy երիտասարդ, տղա], գ. (խսկց.): Թեթևամիտ, անբան, պճնամոլ, ցուցամոլ երիտասարդ:

ՓԼԵՅԵՐ [< плейер < անգլ. player], գ. (տեխ.): Ձայն և պատկեր վերարտադրող սարք:

ՓԼԵՅՄԵՅՔԵՐ [< плеймейкер < անգլ. playmaker], գ. (սպորտ.): Թիմային մարզաձևերում (ֆուտբոլ, բասկետբոլ ևն)՝ թիմի խաղը կազմակերպող և կարգավորող մարզիկ:

ՓԼԵՅ - ՕՖ [< плей-офф < անգլ. play-off < play խաղ + off դուրս], ած. գ. (սպորտ. խսկց.): Երկու մրցակիցների (մարզիկ կամ թիմ) մրցամարտ, երբ պարտվողը դուրս է մնում հետագա պայքարից:

ՓՈՓ [< поп- ... < անգլ. pop < popular ժողովրդական] Բարդ բառերի բաղադրիչ մաս մասայական, հանրաճանաչ, ժողովրդաճանաչ նշանակությամբ:

ՓՈՓՔՈՐՆ [< попкорн < անգլ. popcorn], գ. (խսկց.): Եգիպտացորենի հատիկներից պատրաստված ուտեստ, ադիբուդի:

ՓՐԱՅԴ [< прайд < անգլ. pride], գ. (կենդբ.): Առյուծների խումբը:

ՓՐԱՅՄԵՐԻԶ [< праймериз < անգլ. primaries < primary սկզբնական, նախնական], գ. (քղք.): 1. ԱՄՆ-ում՝ ընտրողների սկզբնական ժողովը՝ ընտրական պաշտոններում թեկնածուների առաջադրման համար, նաև այդպիսի ժողովներում անցկացվող քվեարկությունները: 2. Կուսակցական ժողովի պատգամավորների ընտրությունները ԱՄՆ-ում:

ՓՐԱՅՍ ԼԻՍՏ [< прайс-лист < անգլ. price-list < price գին + list ցուցակ, թվարկություն], գ. (առևտր.): Գնացուցակ՝ որևէ կազմակերպության կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների ցուցակ (սովորաբար ապրանքների տեխնիկական բնութագրումով, տեսակներով ևն)՝ իրենց գներով հանդերձ:

ՓՈՒՇՏՈՒ [< пушту < պարսկ. paštoo], գ. (լեզվբ.): Աֆղանստանի երկու հիմնական գրական լեզուներից մեկը (հնդեվրոպական լեզվաընտանիքի, իրանական ճյուղի լեզու):

ՓԼԵՅԵՐ [< плейер < անգլ. player], գ. (տեխ.): Ձայն և պատկեր վերարտադրող սարք:

Ք

ՔԱՄԵԼԵՈՆ [< хамелеон < հուն. chamaileōn < chamai երկրի վրա + leon առյուծ], գ. 1. (կենդբ.): Մողեսների խմբին պատկանող կենդանի, որ ընդունակ է գունափոխման շրջապատի համապատասխան, գույնփոխուկ: 2. (աստղգ.): Երկրի հարավային բևեռի մոտ գտնվող ոչ մեծ համաստեղություն: 3. *փխբ.* Անհաստատ համոզմունքների տեր, անկայուն՝ հարմարվող մարդ:

ՔԱՄԵԼԵՈՆԱՏԻՊ, ած. Քամելեոնի նման, անկայուն, հարմարվող:

ՔԱՇՄԻՐ [< кашемир < ֆր. cachemire, անգլ. cashmire < հնդկական Քաշմիր (Kashmir) նահանգի անունից], գ. (խսկց.): Բրդե կամ կիսաբրդե գործվածք:

ՔԱՈՍ [< хаос < հուն. chaos], գ. (դից.): 1. Հին հունական դիցաբանության ու փիլիսոփայության մեջ՝ անծայրածիր տարածություն, որ ներկայացնում է աշխարհի նյութական տարրերի խառնակ ամբողջություն, որից ծագել են բոլոր գոյացությունները: 2. *փխբ.* Իրերի՝ երևույթների խառնակ վիճակ:

ՔԱՍԹ(Տ)ԻՆԳ [< кастинг < անգլ. casting < to cast որակազրկել, նախնական՝ ձիերին], գ. (մսնգ.): Նախնական ընտրություն (երգիչների, դերասանների, մրցույթի մասնակիցների, աշխատակիցների ևն):

ՔԱՐԱՎԱՆ [< караван < ֆր. caravane < պարսկ. karavan], գ. Քարավան (ուղտերի, նավերի ևն):

ՔԱՐԹՐԻՋ [< картридж < անգլ. cartridge], գ. (տեխ.): 1. Հեղուկ, սորուն ևն նյութերի տեղափոխման և պահպանման համար նախատեսված միջոց, աման: 2. Քսերոքսային ապարատների, տպիչների փոխվող դետալ, որը ներկող նյութ է պարունակում իր մեջ, ներկապնակ:

ՔԱՐԻԲԴ(Ա) [< харибда < հուն. համանուն հատուկ անունից. հին հունական դիցաբանության մեջ՝ երկու հրեշներ, որոնք ապրում էին ափամերձ ժայռերի վրա ծովանեղուցի երկու կողմերում և կլանում ծովանավորդներին], գ. 1. Վտանգավոր հորձանուտ Սիցիլիայի Մեռնիայի նեղուցում, որ հնում շատ երկյուղալի էին համարում նավագնացության համար: 2. *փխբ.* Հորձանք, հորձապտույտ, ջրապտույտ:

ՔԱՐՏ [< карта < լեհ. karta < գերմ. Karte < լատ. charta թուղթ < հուն. chartes], գ. 1. (թղթխդ.): Խաղաթուղթ: 2. Ստանդարտ չափերով ու ձևով՝ որոշակի նպատակի համար պատրաստված և գրառումների սահմանված կարգն ունեցող՝ թղթի կամ ստվարաթղթի թերթ (օր.՝ գրադարանային՝ կուսակցական՝ բառարանագրական քարտ): 3. (հնց): Մթերայինա կամ հացի քարտային համակարգի փաստաթուղթ, որով համապատասխան խանութից հաց կամ մթերքներ են ստանում: 4. (հնց): Քարտեզ:

ՔԵԹՉ [< кетч < անգլ. to catch բռնել], գ. (սպորտ.): Պրոֆեսիոնալ ըմբշամարտ ԱՄՆ-ում. թույլատրվում են ամեն տեսակի հնարքներ հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար:

ՔԵՄՓԻՆԳ [< кемпинг < անգլ. camping < camp ճամբար], գ. (խսկց.): Ավտոտուրիստների ճամբար՝ հավաքատեղի՝ բազա:

ՔԵՅԹՐԻՆԳ [< кейтринг,кейтеринг < անգլ. catering հասարակական սնունդ], գ. (խոհր.): Ֆուրշետների, բանկետների, պիկնիկների, հարսանիքների ևնի արտագնա ռեստորանային սպասարկում՝համապատասխան ճևավոմամբ և պարագաներով:

ՔԵՉ [< кеч < անգլ. ketch < to catch բռնել], գ. (ծով.): Երկկայմ ոչ մեծ առագաստանավ:

ՔԵՐԼԻՆԳ [< кёрлинг < անգլ. curling], գ. (սպորտ.): Սառույցի վրա՝ խաղի մի տեսակ:

ՔԻԴՆԵՓԻՆԳ [< киднепинг < անգլ. kidnaping < kid երեխա + to nap գողանալ], գ. (հզվդ.): Մարդկանց (հիմնականում երեխաների) առևանգում՝ դրամաշորթության նպատակով:

ՔԻՄԵՌ [< химера < հուն. Chimaira], գ. 1. (դից.): Առասպելական հրեշ (հին հունական դիցաբանության մեջ): 2. (կենսբ.): Տարբեր՝ ոչ համածին հյուսվածքներից գոյացած մարմին: 3. *փխբ.* Ցնորք, պատրանք:

ՔԻՄԻԱ [< химия < միջին լատ. (al) chimia], գ. 1. (գիտ.): Նյութի ատոմային կառուցվածքը և նյութերի փոխադարձաբար մեկը մյուսին վերածումն ուսումնասիրող գիտություն: 2. Որևէ նյութի որակական բաղադրությունը: 3. Արտադրության մեջ քիմիական գիտելիքների՝ տվյալների ու մեթոդների կիրառությունը և այդ մեթոդներով նոր նյութեր ստանալը:

ՔԻՄԻԿԱԼԻՈՒՄ [< химикалиум < լատ.], գ. Քիմիական պատրաստուկներ՝ մթերքներ՝ նյութեր:

ՔԻՄԻԿԱՏ [< химикат < լատ.], գ. Նույնն է՝ Քիմիկալիում:

ՔԻՄԻՈԹԵՐԱՊԻԱ [< химиотерапия < քիմիա + թերապիա], գ.: Հիվանդությունների բուժում՝ քիմիական պատրաստուկներով (պրեպարատներով):

ՔԻՆԳ [< кинг < անգլ. king թագավոր], գ. 1. (թղթխդ.): Թղթախաղի մի տեսակ: 2. (խսկց.): Մարդկանց (նաև կենդանիներին) տրվող մականուն:

ՔԻՇՄԻՇ [< кишмиш < թուրք., պարսկ. kišmiš, չամիչ], գ. (բսբ.): Խաղողի մի տեսակ և դրա չամիչը:

ՔԻՔԲՈՔՍԻՆԳ [< кикбоксинг < անգլ. kickboxing < to kick հարվածել + boxing բռնցքամարտելը], գ. (սպորտ.): Բռնցքամարտի տարատեսակ, որի ժամանակ հարվածները հակառակորդին հասցվում են ոչ միայն ձեռքերով, այլ նաև ոտքերով:

ՔԼԻՐԻՆԳ [< клиринг < անգլ. clearing], գ. Հաշվանցում՝ 1. (բանկ.): Բանկային անկանխիկ հաշվարկների համակարգ՝ փոխադարձ պահանջների և պարտավորությունների հաշվառման ճանապարհով (միջազգային շուկայում՝ արժութային քլիրինգ, ներքին շուկայում՝ միջազգային քլիրինգ): 2. Հաշվարկների արարողություն բորսայում, որտեղ հաշվարկային պալատը բոլոր ժամկետային համաձայնագրերի վաճառողների առջև հանդես է գալիս համախմբված վաճառողի և համախմբված գնորդի դերում՝ դրանով իսկ երաշխավորելով կնքված համաձայնագրերի կատարումը, և մասնակիցներին ապահովագրում է հնարավոր ֆինանսական կորստից:

ՔԼՈՐ [< хлор < հուն. chlōros կանաչ, կանաչադեղնավուն], գ. (քիմ.): Քիմիական տարր. դեղնականաչավուն հեղձուցիչ գազ:

ՔԼՈՐԱԿԻՐ, գ. (քիմ.): Քլորի և կրի խառնուրդը ներկայացնող սպիտակագույն չոր փոշի, որ օգտագործվում է մանրէազերծման և կտորեղենը՝ թուղթը նն սպիտակեցնելու համար:

ՔԼՈՐԱՋՐԱԾԻՆ, գ. (քիմ.): Քլորի և ջրածնի միացությունը ներկայացնող անգույն՝ օդից ծանր և սուր հոտով գազ:

ՔԼՈՐԱՏՆԵՐ [< хлораты < հուն.], գ. (քիմ.): Քլորական թթուների աղերի ընդհանուր անվանումը:

ՔԼՈՐԱՑԵՏՈՆ [< хлорацетон < հուն.], գ. (քիմ.): Անգույն, հեղուկ վիճակով

օրգանական միացություն, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ սահմանափակ գործադրություն ունեցավ որպես արտասավաբեր թունանյութ:

ՔԼՈՐԱՑԵՏՈՖԵՆՈՆ [< хлорацетофенон < հուն.], գ. (քիմ.): Ուժեղ ներգործությամբ արտասավաբեր թունանյութ:

ՔԼՈՐԱՑԻՆԿ [< хлорацинк < քլոր + գերմ. Zink], գ. (քիմ.) Ցինկի քլորիդ:

ՔԼՈՐԵԼԱ [< хлорелла < հուն. chlōros կանաչ], գ. (բսբ.): Միաբջիջ ջրիմուռ:

ՔԼՈՐԻԴՆԵՐ [< хлориды < հուն. chlōros], գ. (քիմ.): Քլորի քիմիական միացությունները այլ տարրերի հետ:

ՔԼՈՐՈՖԻԼ [< хлорофилл < հուն. chlōros կանաչ + phyllon թերթ], գ. (կենսբ.): Գունավորող նյութ, որ տերևներին ու ճյուղերին տալիս է կանաչ գույն և օժտում ածխաթթվից իբրև սնունդ ածխածինը յուրացնելու հատկությամբ:

ՔԼՈՐՈՖՈՐՄ [< хлороформ < ֆր. chloroforme < հուն.], գ. (քիմ.): Ցնդական հեղուկ, որ քլոր է պարունակում և օգտագործվում է բժշկության մեջ որպես անզգայացնող՝ թմրեցնող միջոց:

ՔԼՈՐՊԻԿՐԻՆ [< хлорпикрин < հուն. chlōros + pikros դառը], գ. (քիմ.): Սուր հոտով անգույն հեղուկ, որ ազդում է լորձաթաղանթների վրա (գործածվում է որպես թունանյութ):

ՔՈԹԵՋ [< коттедж < անգլ. cottage լատ. callegium, բառացի՝ ընկերություն], գ. (խսկց.): Փոքր առանձնատուն (քաղաքային կամ գյուղական) կից ոչ մեծ հողակտորով:

ՔՈԼԵՋ [< коллеж < ֆր. collége < լատ.collegium,բառացի՝ընկերություն], գ. Միջնակարգ ուսումնական հաստատություն Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում:

ՔՈՐԴԱ [< хорда < հուն. chordē լար], գ. (կենսբ.): Թիկնալար՝ մարդու և քորդավոր կենդանիների առաձգական կմախքային առանցք:

ՔՈՐԵՅ [< хорей < հուն. choreios < choros շուրջպար], գ. (տղչփ.): Մեծասար՝ տաղաչափական հասկացության, երկվանկ չափական միավոր՝ բանաստեղծական ոտք, որը բաղկացած է մեկ երկար և մեկ կարճ վանկից:

ՔՈՐԵՅԱՄԲ [< хориямб < հուն. choriambos], գ. (տղչփ.): Անտիկ տաղաչափության մեջ՝ բանաստեղծական բարդ ոտք, որը բաղկացած է եզրային երկու երկար և դրանց միջև ընկած երկու կարճ վանկերից:

ՔՈՓԻՐԱՅԹ [< копирайт < անգլ. copyright < to copy վերարտադրել + right իրավունք], գ. (մսնգ.): Հեղինակային իրավունք:

ՔՍԵՆԻԱՆԵՐ [< ксении < հուն. xenos օտար], գ. (բսբ.): Սերմեր ու պտուղներ, որոնք միևնույն բույսի մյուս սերմերից կամ պտուղներից տարբերվում են իրենց գույնով, ձևով, մեծությամբ և այլ հատկանիշներով:

ՔՍԵՆՈ... [< ксено... < հուն. xenos ուրիշ, կողմնակի] Բարդ բառերի սկզբնամաս, որը նշանակությամբ համընկնում է տարածին, կողմնակի, խորթ, օտար բառերին:

ՔՍԵՆՈԳԱՄԻԱ [< ксеногамия < գերմ. Xenogamie < հուն. xenos ուրիշ, օտար + gamos ամուսնություն], գ. (բսբ.): Խաչաձև փոշոտման տեսակ, երբ փոշոտումը կատարվում է նույն տեսակի տարբեր բույսերի ծաղիկների միջոցով:

ՔՍԵՆՈԼԻԹ [< ксенолит < հուն. xenos օտար + lithos քար], գ. (երկրբ.): Բեկորների ներփակումներ, որոնք օտար են այն մագմատիկ ապարին, որի մեջ հանդիպում են:

ՔՍԵՆՈՆ [< ксенон < հուն. xenos օտար], գ. (քիմ.): Քիմիական տարր. իներտ գազերի խմբին պատկանող գազ, Xe, կարգահամարը՝ 54, ատոմական զանգվածը՝ 131,30:

ՔՍԵՆՈՖՈԲԻԱ [< ксенофобия < գերմ. Xenophobie, ֆր. xenophobie < հուն. xenos + phobōs վախ], գ. Անբարեհաճություն՝ թշնամանք ցանկացած օտարի հանդեպ:

ՔՍԵՐՈԳՐԱՖԻԱ [< ксерография < գերմ. Xerographìe < հուն. xeros չոր + graphō գրում եմ], գ. (տպգր.): Պատկերի լուսանկարչային վերարտադրության միջոց, որը հիմնված է ճառագայթային էներգիան էլեկտրականի փոխակերպման վրա:

ՔՍԵՐՈԿՈՊԻԱ [< ксерокопия < հուն. xeros չոր + լատ. copia բազմություն], գ. (տեխ.): Պատճեն (փաստաթղթի նն):

ՔՍԵՐՈՍՏՈՄԻԱ [< ксеростомия < գերմ. Xerostomie < հուն. xeros չոր + stoma բերան], գ. (բժշկ.): Բերանի չորացում թքազատման՝ թքաթորման գործընթացի խանգարման պատճառով:

ՔՍԵՐՈՔՍ [< ксерокс < անգլ. Xerox հատուկ անունից], գ. 1. (տեխ.): Պատճենահանող սարք՝ տեսանելի ինֆորմացիայի պատճենահանումը թղթի վրա, պատճենահան: 2. Պատճեն:

ՔՍԵՐՈՖԻՏՆԵՐ [< ксерофиты < հուն. xēros չոր + phyton բույս], գ. (բսբ.): Բույսեր, որոնք հարմարված են ապրելու չոր պայմաններում, կարող են դիմանալ գերտաքացմանը և ջրազրկմանը:

ՔՍԻԼԻՖՈՆ [< ксилифон < հուն. xylon (հատած) ծառ + phōnē հնչյուն], գ. Երաժշտական գործիք՝ մի քանի տախտակյա կտորներից, որոնց հարվածում են փայտե մուրճիկներով:

ՔՍԻԼՈ... [< ксило... < հուն. xylon փայտ] Բարդ բառերի սկզբնամաս, որը ցույց է տալիս դրանց կապը փայտի հետ՝ որպես հումք:

ՔՍԻԼՈԳՐԱՖԻԱ [< ксилография < քսիլո... + հուն. graphō գրում եմ], գ. (արվ.): Փայտագրություն՝ փայտի վրա կատարված նկար:

ՔՍԻԼՈԶ, գ. (քիմ.): Միաշաքար, ալդոպենտոզների չորս իզոմերներից մեկը: Պարունակվում է ծառերի բնափայտում, հացազգիների ծղոտում, եգիպտացորենի կողրերում:

ՔՍԻԼՈԼ, գ. (քիմ.): Երկմեթիլբենզոլներ: Օգտագործվում են որպես լուծիչներ, բենզինների բարձրօկտանային հավելիչներ, ստացման ելանյութեր:

ՔՎԱԶԱՐՆԵՐ [< квазары < անգլ. quasar *իպվ.* < quasistellar radiosource «ռադիոճառագայթման քվազիաստղային աղբյուր» արտահայտության կրճատումից], գ. (ֆիզ.): Հզոր ռադիոճառագայթումով՝ լուսանկարների վրա աստղի տեսք ունեցող արտագալակտիկական օբյեկտներ:

ՔՎԱԶԻՄԱՄՆԻԿՆԵՐ [< квазичастицы < լատ. quasi ասես թե, իբրև թե, համարյա], գ. (ֆիզ.): Կոնդենսացված միջավայրերի թույլ գրգռված վիճակները նկարագրող քվանտային մասնիկներ:

ՔՎԱՆՏ [< квант < գերմ. Quant < լատ. quantum որքան, ինչքան, քանի], գ. (ֆիզ.): Որևէ կարգի էներգիայի (ջերմային, էլեկտրական նն) փոքրագույն մասնիկ՝ քանակություն:

ՔՎԱՆՏԱՄԵԽԱՆԻԿԱ [< квантомеханика < գերմ. Quant + հուն. mēchanikē], գ. (գիտ.): Քվանտային մեխանիկա:

ՔՎԱՏՐՈՉԵՆՏՈ [< кватроченто < իտլ. quattrocento 400, il quattrocento 15 դար], գ. (արվ.): Վաղ Վերածննդի դարաշրջանը իտալական մշակույթում:

ՔՎԻԵՏԻԶՄ [< квиетизм < ֆր. quie′tisme < լատ. quietus խաղաղ, չներգործող], գ.

1. Կրոնամիստիկական ուսմունք, որ քարոզում է հայեցողական անգործունյա վերաբերմունք կյանքի նկատմամբ: 2. *փիլ.* Անտարբեր և հայեցողական վերաբերմունք կյանքի նկատմամբ:

ՔՎԻԵՏԻՍՏ [< квиетист < ֆր. < լատ.], գ. Քվիետիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՔՎԵՍՏՈՐ [< квестор < լատ. quaestor], գ. (պատմ.): 1. Ֆինանսական բարձրաստիճան պաշտոնյա Հին Հռոմում: 2. Ոստիկանական պաշտոնյա Իտալիայում: 3. Պառլամենտի տնտեսական մասի վարիչ մի քանի եվրոպական երկրներում:

ՔՎՈՏԱ [< квота < միջին լատ. quota մաս], գ. Բաժնեմաս, մասնորդ, չափաբաժին:

ՔՎՈՐՈՒՄ [< кворум < լատ. quorum (praesentia sufficit) որոնց (մասնակցությունը բավարար է)], գ. 1. Ժողովի մասնակիցների այն թիվը, որը կանոնադրության համաձայն բավարար է ժողովը իրավազոր համարելու համար: 2. Քվեարկության մասնակիցների այն թիվը, որ բավական է քվեարկությունը կայացնելու համար:

ՔՐԱՔԵՐ [< кракер < անգլ. kracher < to crack կոտրել, ջարդել], գ. (հմկրգչ. ժրգ.): Ծրագրավորող, ով կոտրում է համակարգչի պաշտպանական ծրագրերը տեղեկատվություն ստանալու համար (շահադիտական նպատակով):

ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ [< хрестоматия < հուն. chrēstomatheia < chrēstos լավ, օգտավետ + manthanō ուսանում եմ], գ. 1. Ուսումնական ձեռնարկ, որ բովանդակում է որևէ առարկայի համար ամենատարբեր նյութերը կամ հատվածները: 2. Առհասարակ՝ ժողովածու, ընտիր նյութերի՝ հատվածների հավաքածու:

ՔՐԻԶԱՆԹԵՄ [< хризантема < հուն. chrysanthemon < chrysos ոսկի + anthemion ծաղիկ], գ. (բսբ.): Ոսկեծաղիկ (մեծ, թավշյա ևն գլուխներով):

ՔՐՈՄ [< хром < հուն. chrōma գույն, ներկ], գ. 1. (քիմ.): Քիմիական տարր. կարծր արծաթագույն մետաղ: 2. Այդ մետաղի շերտերով աղաղված փափուկ կաշի: 3. Քրոմատներից ստացվող մի տեսակ դեղին ներկ:

ՔՐՈՄԱ... [< хромо... < հուն. chrōma (cromatos) գույն] Բարդ բառերի մաս. ցույց է տալիս առնչությունը 1. Գունավորման, գույնի: 2. Քրոմ՝ քիմիական տարրի հետ:

ՔՐՈՄԱԼ [< хромоал < քրոմ + ալյումին], գ. (քիմ.): Երկաթի հիմքով բարձր տեսակարար էլեկտրական դիմադրությամբ կրակահեստ համաձուլվածքների խմբի ընդհանուր անվանումը, որը պարունակում է 17-30% քրոմ, 4.5-6 % ալյումին: Կիրառվում է որպես էլեկտրական վառարանների տաքացուցիչ տարրերի նյութ:

ՔՐՈՄԱՆՍԻԼ [< хромансил < քրոմ, մանգան և սիլիցիում], գ. (քիմ.): Միջին լեգիրված կառուցվածքային պողպատ, որը պարունակում է մոտավորապես մեկական տոկոս քրոմ, մանգան, սիլիցիում: Կիրառվում է մեքենաշինության զանազան ճյուղերում:

ՔՐՈՄԱՏԻԶՄ [< хроматизм < հուն. chrōma (chromatos) գույն], գ. 1. (ֆիզ.): Սպիտակ գույնը տարբեր գույների տարրալուծվելու երևույթը: 2. (երժշտ.): Բարձրացող կամ իջնող ձայնի շարժում կիսատոներով:

ՔՐՈՄԱՏԻԿ [< хроматический < հուն. chrōmatikos գունային], ած. 1. (ֆիզ.): Քրոմատիզմին հատուկ: 2. (երժշտ.): Քրոմատիզմի վրա հիմնված: 3. Ձայնի մեկ կիսատոն իջեցում արտահայտող: 4. Կիսաձայներ ստանալու հարմարանք ունեցող:

ՔՐՈՄԱՏԻՆ [< хроматин < հուն. chrōma (chromatos) գույն], գ. (կենսբ.): Կենդանական և բուսական բջիջների միջուկի հատիկաձև նյութը, որ ընդունակ է ներկվելու (հյուսվածաբանական մշակումով):

ՔՐՈՄԱՏՆԵՐ [< хромат < հուն.], գ. (քիմ): Քրոմաթթվի դեղնագույն աղերը:

ՔՐՈՄԱՏՈԳՐԱՖԻԱ [< хроматография < հուն. chrōma գույն + graphō գրում եմ],

գ. (քիմ.): Նյութերի խառնուրդների բաժանման, քիմիական վերլուծության և ֆիզիկաքիմիական հետազոտման եղանակ:

ՔՐՈՄԱՏՈՖՈՆՆԵՐ [< хроматофоры < հուն. chrōma + phoros կրող], գ. (կենսբ.): 1. Մարդու և ողնաշարավոր կենդանիների սիգմենտային բջիջներ, որոնք պայմանավորում են ծածկույթների և որոշ ներքին օրգանների գունավորումը: 2. Բույսերի գորշ և կանաչ ջրիմուռների ժապավենաձև և աստղաձև օրգանելներ, որոնք պարունակում են քլորոֆիլներ, կարոտինոիդներ ևն և իրականացնում են ֆոտոսինթեզը: 3. Ֆոտոսինթեզող բակտերիաների օրգանելներ:

ՔՐՈՄԻՏ [< хромит < հուն.], գ.(հնք.): Քրոմ և երկաթ պարունակող մուգ գույնի հանք, քրոմական երկաթաքար:

ՔՐՈՄՈՊԼԱՍՏՆԵՐ [< хромопласты < հուն. chrōma + plastēs ձևավորված], գ. (բսբ.): Բուսական բջիջների գունավորված ներբջջային օրգանելներ, պլաստիդների տիպ:

ՔՐՈՄՈՍՈՄ [< хромосомы < հուն. chrōma + sōma մարմին], գ. (կենսբ.): Բուսական ու կենդանական բջիջների մեջ պարունակվող մարմիններ, որոնք համապատասխան գունավորման դեպքում լավ երևում են բջջի բաժանման ժամանակ:

ՔՐՈՄՊԻԿ [< хромпик < հուն.], գ. (քիմ.): Երկքրոմաթթվի աղ:

ՔՐՈՆԻԿԱ, գ. Տե՛ս Խրոնիկա:

ՔՐՈՆԻԿՈՆ [< хроникон < հուն. chrōnicon], գ. 1. Ժամանակագրություն: 2. Խրոնիկա, լրատու (թերթերի, հանդեսների): 3. (պատմ.): Վրացական թվագրությունը, որ բաղկացած է 532 տարի ընդգրկող հերթական շրջաններից (սկիզբը՝ աստվածաշնչյան մ.թ.ա. 5604 թ.):

ՔՐՈՆՈՄԵՏՐ [< хронометр < հուն.], գ. Տե՛ս Խրոնոմետր:

ՔՐՈՆՈՄԵՏՐԱԺ [< хронометраж < հուն. chrónos + metreō չափում եմ], գ. Տե՛ս Խրոնոմետրաժ:

ՔՐՈՆՈՍԿՈՊ [< хроноскоп < հուն. chrónos + skopeō նայում եմ, դիտում եմ], գ. Տե՛ս Խրոնոսկոպ:

Օ

ՕԱԶԻՍ [< оазис < հուն. oasis < եգիպտական Օասիս քաղաքի անունով], գ. 1. Անապատի մեջ կանաչապատ տեղ, որտեղ ջուր կա: 2. *փխբ.* Նպաստավոր տեղ՝ պայման՝ միջավայր աննպաստ՝ անբարեհաջող հանգամանքներով լի տեղում (հանգամանքներում, պայմաններում ևն):

ՕԲԵԼԻՍԿ [< обелиск < հուն. obeliskos], գ. (ճարտ.): Հետզհետե նեղացող քարե սյունանման կոթող:

ՕԲԵՐ... [< обер... < գերմ. ober գլխավոր, ավագ] Մասնիկ, որը ցույց է տալիս կոչումի ավագ պաշտոնյա, օր.՝ օբերլեյտենանտ:

ՕԲԵՐՏՈՆ [< обертон < գերմ. Obertöne], գ. (երժշտ.): Երկրորդական տոն, որ հիմնական ձայնին տալիս է յուրահատուկ երանգ կամ ձայնային յուրահատուկ որակ, հնչերանգ, ձայներանգ:

ՕԲԼԻԳԱՑԻԱ [< облигация < լատ. obligatio պարտականություն], գ. (ֆին.): 1. Փոխառություն: 2. Պարտատոմս: 3. Արժեթուղթ:

ՕԲԼԻԳՈ [< облиго < իտլ. obligo պատրավորություն], գ. (բանկ.): Պարտամուր-

հակների ընդհանուր պարտքի գումարը:

ՕԲԼԻՏԵՐԱՑԻԱ [< облитерация < լատ. obliteratio ոչնչացում], գ. (բժշկ.): Աճախցանում, աճակալնում (մարմնի նորմալ անցքերի, խողովակների, անոթների):

ՕԲՅԵԿՏ [< объект < լատ. objectum առարկա], գ. 1. (փիլ.): Մեզանից դուրս և մեր գիտակցությունից անկախ գոյություն ունեցող արտաքին աշխարհը, նյութական աշխարհը: 2. Գործողության՝ գործունեության առարկա, այն ամենը, որին ուղղված է որևէ գործողություն՝ գործունեություն ևն: 3. Տնտեսական՝ ռազմական միավոր հանդիսացող ձեռնարկություն՝ կառույց՝ տեղամաս ևն: 4. (քեր.): Ուղիղ խնդիր:

ՕԲՅԵԿՏԻՎ I [< объективный < լատ. objectivus առարկայական], ած. 1. Գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող: 2. Անկողմնակալ, անաչառ, հավասարատես: 3. Անաչառության՝ անկանխակալ մոտեցման վրա հիմնված:

ՕԲՅԵԿՏԻՎ II [< объектив < լատ. objectivus], գ. (տեխ.): Օպտիկական սարքի մեկ կամ մի քանի ոսպնյակից բաղկացած այն մասը, որ դարձած է դեպի դիտարկվող կամ լուսանկարվող առարկան:

ՕԲՅԵԿՏԻՎԻԶՄ [< объективизм < լատ.], գ. (փիլ.): 1. Օբյեկտիվ իրականության իրողությունների՝ երևույթների իրական ճանաչման վրա հիմնված մոտեցում՝ դատողություն՝ հայեցակետ: 2. Հասարակական կյանքի երևույթներին՝ իրադարձություններին ևն պասսիվ մոտեցում, որ սահմանափակվում է լոկ նրանց փաստական արձանագրումով և դրանով իսկ տանում դեպի նրանց արդարացումը և անխուսափելիությունը: 3. Անաչառ՝ անկանխակալ մոտեցում՝ վերաբերմունք:

ՕԲՅԵԿՏԻՎԻՍՏ [< объективист < լատ.], գ. Օբյեկտիվիզմի (2) հետևորդ՝ կողմնակից:

ՕԲՌՈԳԱՑԻԱ [< оброгация < լատ. obrogatio], գ. (իրավ.): Հին օրենքի մեջ մասնակի փոփոխություն մտցնելը:

ՕԲՍԵՐՎԱՏՈՐԻԱ [< обсерватория < լատ. observatorium], գ. (գիտ.): 1. Աստղադիտարան: 2. Դիտարան, դիտանոց:

ՕԲՍԵՐՎԱՑԻԱ [< обсервация < լատ. observatio դիտում, դիտարկում], գ. 1. (բժշկ.): Կարանտին: 2. (ծով.): Ծովում նավի գտնվելու վայրը որոշելը առափնյա առարկաների և երկնային լուսատուների միջոցով:

ՕԲՍԻԴ, գ. Նույնն է՝ Օբսիդիան:

ՕԲՍԻԴԻԱՆ [< обсидиан < լատ. obsidianus (lapis)], գ. (հնք.): Մուգ գույնի ապակու նման հրաբխային լեռնապար, սատանի եղունգ:

ՕԲՍԿՈՒՐԱՆՏ [< обскурант < լատ. obscurans (obscurantis) խավարամիտ], գ. ած. Խավարամտության պաշտպան, լուսավորության և գիտության թշնամի՝ հակառակորդ, խավարամոլ:

ՕԲՍԿՈՒՐԱՆՏԻԶՄ [< обскурантизм < լատ. obscurus մութ, խավար], գ. (մսնգ.): Խավարամտություն, խավարապաշտություն, խավարամոլություն:

ՕԲՍՏՐՈՒԿՑԻԱ [< обструкция < լատ. obstructio արգելք, խցանում], գ. 1. (քղք.): Ժողովի՝ նիստի խանգարումով կամ խափանումով արտահայտվող բողոք՝ պայքարի ձև (առավելապես պառլամենտական): 2. Որևէ բանի վիժեցմանը ուղղված ցուցադրական գործողություն՝ արարք:

ՕԲՍՏՐՈՒԿՑԻՈՆ [< обструкционный < լատ.], ած. Օբստրուկցիայի վրա հիմնված, օբստրուկցիայի բնույթ կրող:

ՕԲՍՏՐՈՒԿՑԻՈՆԻԶՄ [< обструкционизм < լատ.], գ. (քղք.): Օբստրուկցիայի

մեթոդներով վարվող քաղաքական պայքար:

ՕԲՍՏՐՈՒԿՑԻՈՆԻՍՏ [< обструкционист < լատ.], գ. (քղք.): 1. Օբստրուկցիոնիզմի կողմնակից: 2. Օբստրուկցիայի մասնակից:

ՕԴԱ [< ода < հուն. ōdē], գ. (գրկն.): Գովերգ, ներբող, հանդիսավոր ներբող՝ նվիրված ինչ-որ կարևոր իրողության կամ անձի, ձոն:

ՕԴԱԼԻՍԿԱ [< одалиска < ֆր. odalisque < թուրք. odalik < ōdah սենյակ], գ. (պատմ. հնց.): 1. Հարեմի սպասուհի՝ աղախին՝ ստրկուհի: 2. Հարճ, հարեմակին:

ՕԴԵԿՈԼՈՆ [< одеколон < ֆր. eau de Cologne, բառացի՝ «Կելնյան ջուր»], գ. Բուրավետ եթերային յուղերի լուծույթ սպիրտի մեջ, որ գործածվում է որպես օծանելիք:

ՕԴԵՈՆ [< одеон < հուն. ōdeion], գ. 1. (պատմ.): Երաժշտական ներկայացումների համար նախատեսված շրջանաձև կառույց Հին Հունաստանում: 2. Համերգային, թատերական ներկայացումների դահլիճ տարբեր երկրներում:

ՕԴԻՆ [< один < հին սկանդ.], գ. (դից.): Հին սկադինավյան դիցաբանության մեջ գերագույն աստված, պատերազմի և հաղթանակի, քամիների և ծովագնացության աստված, պատերազմում զոհվածների հովանավոր:

ՕԴԻՈԶ [< одиозный < լատ. odiosus], ած. Խիստ անցանկալի՝ անախորժելի՝ տհաճ, խորշելի:

ՕԴՈՆՏՈԼԻԹ [< одонтолит < հուն. odus (odontos) ատամ + lithōs քար], գ. 1. (բժշկ.): Ատամնաքար: 2. (երկրբ.): Ցածրորակ կիսաթանկարժեք քար, որը առաջացել է բրածո կենդանիների ոսկորների մնացորդներից:

ՕԴՈՆՏՈԼՈԳԻԱ [< одонтология < հուն. odus (odontos) ատամ + logōs գիտություն], գ. (բժշկ.): Ատամնագիտություն, ատամնաբանություն:

ՕԴՈՐՈԼՈԳԻԱ [< одорология < լատ. odor հոտ, բուրմունք + հուն. logōs գիտություն], գ. (իրավք.): Քրեագիտության բաժին, որը զբաղվում է հոտի միջոցով հանցագործի որոշման՝ նույնականացման խնդիրներով:

ՕԶՈՆ [< озон < հուն. ozōn բուրող], գ. (քիմ.): Թթվածնի երեք ատոմից բաղկացած միացություն. սուր հոտով O_3 գազ, որ գործածվում է ջրի և օդի մաքրման համար, ինչպես և թղթի և սննդի արդյունաբերության մեջ:

ՕԶՈՆԻՉ, գ. ած. (տեխ.): Մեղմ էլեկտրական լիցքի ազդեցությամբ օդը օզոնով հարստացնելու՝ հագեցնելու սարք, օզոնատոր:

ՕԶՈՆԱՏՈՐ [< озонатор < հուն.], գ. Օզոնիչ՝ օդի օզոնացման սարք:

ՕԻԴԻՈՒՄ [< ойдиум < լատ. oidium < հուն. ōon ձու], գ. (բսբ.): 1. Խաղողի ժանգ հիվանդության սնկիկը: 2. Ժանգ հիվանդությունը:

ՕԼԴԵՐՄԵՆ [< ольдермен < անգլ. alderman ավագ(ագույն) անձ], գ. (քղք.) 1. Մեծ Բրիտանիայում՝ դքսության կամ քաղաքային խորհրդի անդամ, որը չի ընտրվում բնակչության կողմից, այլ կոոպտացիայի է ենթարկվում: 2. ԱՄՆ-ում՝ քաղաքային խորհրդի անդամ:

ՕԼԵԻՆ [< олеин < լատ. oleum բուսական յուղ], գ. (քիմ.): Տեխնիկական օլեինաթթու:

ՕԼԵՈԳՐԱՖԻԱ [< олеография < լատ. oleum յուղ + հուն. graphō գրում եմ], գ. (արվ. հնց.): Յուղանկարատպություն՝ յուղանկարների բազմագույն արտատպություն:

ՕԼԵՈՒՄ [< олеум < լատ. oleum յուղ], գ. (քիմ.): Ծխացող ծծմբական թթու, ծծմբական անհիդրիդի՝ SO_3-ի լուծույթը անջուր ծծմբական թթվում: Օգտագործվում է ներկանյութերի, պայթուցիկ նյութերի արտադրությունում:

ՕԼԻԳԱՐԽ [< олигарх < հուն. oligarchia քչերի իշխանություն], գ. 1. (պատմ.):

Օլիգարխիստական կառավարության անդամ հին դարերում: 2. Քաղաքական և տնտեսական անկախություն և մեծ հարստություն ունեցող անձ:

ՕԼԻԳԱՐԽԻԱ [< олигархия < հուն. oligarchia], գ. (քղք.): 1. (պատմ.): Արիստոկրատական շահագործողական փոքրամասնություն, իշխանություն: 2. Խոշոր կապիտալի ներկայացուցիչների ոչ մեծ խմբի տնտեսական ու քաղաքական տիրապետություն:

ՕԼԻԳՈ..., ՕԼԻԳ... [< олиго... < հուն. oligos սակավ, աննշան, քիչ] Բարդ բառերի սկզբնամաս. ցույց է տալիս քանակության քչացումը, շեղումը բնականոնից դեպի նվազումը:

ՕԼԻԳՈՊՈԼԻԱ [< олигополия < օլիգո... + հուն. pōleō վաճառում եմ], գ. (տնտսգ.): Շուկայական իրավիճակ, երբ փոքր թվով խոշոր ձեռնարկություններ կառավարում են որոշակի ապրանքների կամ ծառայությունների շուկայի առաջարկը և վերահսկում են շուկայական գները:

ՕԼԻԳՈՖՐԵՆԻԱ [< олигофрения < օլիգո... + հուն. phrēn միտք, գաղափար], գ. (բժշկ.): Թուլամտություն, սակավամտություն՝ հոգեկան գործառույթների թուլամոլություն՝ թերզարգացում:

ՕԼԻԳՈՒՐԻԱ [< олигурия < օլիգ... + հուն. uron մեզ], գ. (բժշկ.): Սակավամիզություն՝ երիկամների գործառույթի խանգարում, որի արդյունքում քիչ է մեզ արտադրվում:

ՕԼԻՀԵՄԻԱ [< олигемия < հուն. oligōs ոչ շատ + haima արյուն], գ. (բժշկ.): Սակավարյունություն՝ արյան ընդհանուր մասսայի քչացում՝ պակասում:

ՕԼԻՄՊ [< олимп < հուն. Olympos], գ. 1. (բնստղծ.): Օլիմպոս, աստվածների բնակատեղ և կաճառ: 2. *փխբ.* Ընտիր շրջան, ինչ-որ հասարակության վերնախավ:

ՕԼԻՄՊԻԱԴԱ [< Олимпиада < հուն. Olympias (Olympiados)], գ. 1. (պատմ.): Օլիմպիական խաղերի միջև ընկած քառամյակը, որ ծառայում էր որպես թվարկության միավոր: 2. (սպորտ.): Միջազգային օլիմպիական խաղեր՝ սպորտային մրցումներ, որ կազմակերպվում են չորս տարին մեկ անգամ: 3. Որևէ բանի մրցույթ՝ մրցություն՝ մրցում:

ՕԼԻՎԻՆ [< оливин < լատ. oliva ձիթապտուղ], գ. (հնք.): Հրաբխային ապարների կազմի մեջ մտնող դեղնականաչ գույնի հանք:

ՕԼԻՖ [< олифа < հուն. aleipha յուղ, քսուք], գ. (քիմ.): Յուղաներկերի՝ քսուքների ևն համար գործածվող եփված ձեթ (կանեփի, վուշի ևն):

ՕԽԼՈԿՐԱՏԻԱ [< охлократия < հուն. ochlokratia < ochlos ամբոխ + kratos իշխանություն], գ. (քղք.): Ամբոխի իշխանություն, ամբոխապետություն, խուժանապետություն:

ՕԽՐԱ [< охра < հուն. ōchra դեղնավուն], գ. (հնք.): Բնական հանքային կարմիր կամ դեղին ներկ, կարմրահող, դեղնահող:

ՕԽՐԱՆԿԱ [< ռուս. охранка], գ. (մինչհ. խսկց.): Պահնորդական բաժին:

ՕԿԱԶԻՈՆԱԼԻԶՄ [< оказионализм, окказионализм < լատ. occasio < սեռ. հոլանդ. occasionis դեպք, առիթ], գ. (փիլ.): XVII դ. արևմտաեվրոպական փիլիսոփայական ուղղություն, որը իդեալիստորեն էր լուծում Ռ. Դեկարտի դուալիստական փիլիսոփայության առաջադրած հոգու և մարմնի փոխհարաբերության հարցը: Ներկայացուցիչներն էին Յո. Կլաուբերգը, Ա. Գեյլինքսը, Ն. Մաշբրանշը և ուրիշներ:

ՕԿԼՅՈՒԶԻԱ [< окклюзия < լատ. occlusus եզրափակիչ], գ. 1. (տեխ.): Գազերի

կլանումը հալած կամ կարծր մետաղների կողմից, գազակլանում: 2. (բժշկ.): Փոխնստվածք (վերևի և ներքևի ծնոտների ատամների):

ՕԿՏԱԷԴՐ [< октаэдр < հուն. oktō ութ + hedra հիմք, կողմ, նիստ], ած. գ. (երկրչ.): Ութանիստ՝ ութ նիստ՝ երես՝ կող ունեցող (մարմին):

ՕԿՏԱՆՏ [< октант < լատ. octans (octantis)], գ. (աստղգ.): Երկնքի հարավային կիսագնդի բևեռամերձ համաստեղություն:

ՕԿՏԱՎ(Ա) [< октава < լատ. octava ութերորդ], գ. 1. (երժշտ.): Ութնյակ: 2. (տոչփ.): 8 տողից բաղկացած բանաստեղծական տուն:

ՕԿՏԵՏ [< октет < լատ. octo ութ], գ. (երժշտ.): 1. Ութ երաժիշտ-կատարողներից բաղկացած անսամբլ: 2. Երաժշտական ստեղծագործություն ութ նվագարանի կամ ավելի հազվադեպ՝ ութ ձայնի համար:

ՕԿՏՅԱԲՐԻՍՏ [< октябрист < ռուս. октябрь հոկտեմբեր ամսանունից], գ. Ռուսաստանում 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակված ցարական մանիֆեստից հետո կազմակերպված՝ խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի կուսակցության անդամ կամ կողմնակից:

ՕԿՐՈՒԳ [< ռուս. округ], գ. (քղք.): Պետության տարածքի վարչական՝ ռազմական՝ տնտեսական ևն ստորաբաժանում, շրջան:

ՕԿՈՒԼԻՍՏ [< окулист < լատ. oculus աչք], գ. (բժշկ.): Ակնաբույժ, աչքի հիվանդությունների բժիշկ:

ՕԿՈՒԼՅԱՐ [< окуляр < լատ. ocularis ակնային], ած. Աչքի, ակնային:

ՕԿՈՒԼՏԻԶՄ [< оккультизм < լատ. occultus գաղտնի, նվիրական], գ. (գիտ.): Ընդհանուր անվանումը միստիկական ուսմունքների, որոնց համաձայն իբրև թե գոյություն ունի առանձին խորհրդավոր կապ մարդու և այսպես կոչված անդրշիրիմյան անիմանալի աշխարհի միջև, օկուլյականություն, ոգեհարցություն:

ՕԿՈՒԼՏԻՍՏ [< оккультист < լատ.], գ. ած. Օկուլտիզմի հետևորդ:

ՕԿՈՒՊԱՆՏ [< оккупант < լատ.], գ. 1. Օկուպացիայի մասնակից, նվաճող, զավթիչ: 2. Օկուպացիայի ձգտող, օկուպացիայի քաղաքականություն վարող (մարդ, երկիր, պետություն):

ՕԿՈՒՊԱՑԻԱ [< оккупация < լատ. occupatio], գ. (քղք.): Որևէ պետության կողմից օտար տարածքի զինված գրավումը, զինագրավում, զավթում:

ՕԿՈՒՊԱՑԻՈՆ [< оккупационный < լատ.], ած. 1. Օկուպացիային հատուկ, օկուպացիայի բնույթ կրող: 2. Օկուպացիայի ծառայող:

ՕՀՄ [< ом < գերմանացի ֆիզիկոս Գ. Ս. Օհմի անունով], գ. (ֆիզ.): Էլեկտրական դիմադրության չափման միավոր:

ՕՀՄՄԵՏՐ [< омметр < օհմ + հուն. metreō չափում եմ], գ. (ֆիզ.): Օհմաչափ՝ էլեկտրական դիմադրությունը չափելու գործիք՝ սարք:

ՕՄԱՐ [< омар < ֆր. homard], գ. (կենդբ.): Ծովային խոշոր՝ տասնոտանի խեցգետին:

ՕՄԲՈՒԴՍՄԵՆ [< омбудсмен < շվեդ. ombudsman ինչ-որ մեկի իրավունքների պաշտպան], գ. (քղք.): Մարդու իրավունքների պաշտպան:

ՕՄԵԳԱ [< омега < հուն. ō mega մեծ, այսինքն՝ երկար o], գ. Հունական այբուբենի վերջին տառը. Ալֆա և օմեգա-ն նշանակում է սկիզբ և վերջ:

ՕՄԼԵՏ [< омлет < ֆր. omelette < amelette < lamelle շերտիկ, թիթեղիկ], գ. (խոհ. խսկց.): Ձվածեղ:

ՕՄՆԻԲՈՒՍ [< омнибус < լատ. omnibus ամենքի՝ բոլորի համար], գ. (հնց.): Հանրակառք՝ շատ տեղանոց ձիակառք:

ՕՄՈՆԻՄ [< омоним < հուն. homōnyma < homos նույնական + ōnyma անուն], գ. (լեզվբ. հնց.): Համանուն (բառ):

ՕՄՈՆԻՄԻԱ [< омонимия < հուն. homōnymia,բառացի՝ նույնանունություն], գ. (լեզվբ. հնց.): Համանունություն:

ՕՄՖԱԼԻՏ [< омфалит < հուն. omphalos պորտ], գ. (բժշկ.): Նորածնի պորտի շրջանի մաշկի բորբոքում (պորտի փոքր վերքի վարակման պատճառով):

ՕՆԱԳՐ [< онагр < հուն. onagrōs], գ. (կենդբ.): Վայրի ավանակ:

ՕՆԱՆԻԶՄ [< онанизм < Աստվածաշնչյան գործող անձերից մեկի՝ Օնանի անվանումից], գ. (բժշկ.): Ձեռնաշարժություն, ձեռնամոլություն, սեռային այլասերվածության տեսակ:

ՕՆԱՆԻՍՏ [< онанист], գ. (բժշկ.): Օնանիզմով զբաղվող (մարդ):

ՕՆԴԱՏՐԱ [< ондатра < անգլ. ondatra < ֆր. ondatra < հնդկացիների լեզվից], գ. (կենդբ.): Մշկամուկ (նաև մորթին՝ մուգ, թանկարժեք):

ՕՆԴՈՒԼՅԱՏՈՐ [< ондулятор < ֆր. ondulateur < onde ալիք], գ. (տեխ.): Հեռագրական ընդունիչ սարք:

ՕՆԻԽԻԱ [< онихия < հուն. onyx (onychos) եղունգ], գ. (բժշկ.): Եղունգների հիվանդություն:

ՕՆԻՔՍ [< оникс < հուն. onyx], գ. (հնք.): Եղեգնաքար:

ՕՆԼԱՅՆ [< онлайн < անգլ. on-line օպերատիվ, տրամախոսական, զրույցի],1. մկ. ած. (ինֆորմ.): Առցանց՝ իրական ռեժիմով, տվյալ պահին: 2. գ. Համացանցի տեղակատվական տարածությունը՝ ծավալը:

ՕՆԿՈԼՈԳ [< онколог < հուն.], գ. (բժշկ.): Ուռուցքաբան՝ ուռուցքաբանության մասնագետ:

ՕՆԿՈԼՈԳԻԱ [< онкология < հուն. onkos այտուց + logos ուսմունք], գ. (բժշկ.): Ուռուցքաբանություն՝ բժշկության բաժին, որը զբաղվում է ուռուցքների ուսումնասիրությամբ ու նրանց բուժման միջոցներով ու եղանակներով:

ՕՆՈՄԱՍԻՈԼՈԳԻԱ [< ономасиология < հուն. onomasia իմաստ, անվանում + logōs գիտություն], գ. (լեզվբ. հնց.): Անվանաբանություն, անվանագիտություն:

ՕՆՈՄԱՍՏԻԿԱ [< ономастика < հուն. onomasticos անվանմանը վերաբերող՝ պատկանող], գ. 1. Լեզվում գոյություն ունեցող հատուկ անունների ամբողջությունը: 2 (լեզվբ.): Լեզվաբանության բաժին, որը զբաղվում է հատուկ անունների ուսումնասիրությամբ. անվանաբանություն:

ՕՆՏՈԳԵՆԵԶԻՍ, ՕՆՏՈԳԵՆԵԶ [< онтогенез < հուն. on (ontos) գոյ + genesis ծագում], գ. (կենսբ.): Կենդանական կամ բուսական օրգանիզմի անհատական զարգացումը նրա սաղմնավորման պահից մինչև կյանքի վերջը:

ՕՆՏՈԼՈԳԻԱ [< онтология < հուն. on (ontos) գոյ + logos ուսմունք], գ. (փիլ.): Գոյաբանություն՝ իդեալիստական մետաֆիզիկական ուսմունք կեցության մասին:

ՕՈԳԱՄԻԱ [< оогамия < հուն. ōon ձու + gamos ամուսնություն], գ. (կենսբ.): Սեռական գործընթացի տիպ, երբ բեղմնավորման ժամանակ միաձուլվում և զիգոտ են առաջացնում չափերով, ձևով ու վարքով իրարից խիստ տարբերվող սեռական բջիջները, գամետները:

ՕՈԳԵՆԵԶ [< оогенез < հուն. ōon + genesis ծագում], գ. (կենսբ.): Կենդանիների իգական սեռական բջջի՝ ձվաբջջի առաջացումը:

ՕՈԳՈՆԻՈՒՄ [< оогоний < հուն. ōon + gonos ծնունդ], (կենսբ.): Օոգամիայով բազմացող բազմաթիվ ստորակարգ բույսերի իգական սեռական օրգան:

ՕՈԼԻԹՆԵՐ [< оолиты < հուն. ōon + lithos քար], գ. (հմնք.): Գնդաձև կամ էլիպսոիդանման գոյացումներ ածխաթթվական կրից, Fe-ի և Mn-ի օքսիդներից, լեպտոքլորիտներից:

ՕՈՖՈՐԻՏ [< оофорит < հուն. ōophoron ձվարան], գ. (բժշկ.): Ձվարանի բորբոքում:

ՕՉԵՐԿ [< ռուս. очерк], գ. (գրկն. հնց.): 1. Ակնարկ: 2. Ուրվագիծ, ուրվագծում:

ՕՉԵՐԿԻՍՏ [< ռուս. очеркист], գ. ած. (հնց.): Ակնարկագիր:

ՕՊԱԼ [< опал < լատ. opalus], գ. (հնք.): Արևակն, արևաքար, ծիածանաքար:

ՕՊԵՐ [< опер < ռուս. оперуполномоченный կրճատված ձև], գ. (խսկց.): Ոստիկանության՝ հետաքննչական օրգանների աշխատակից:

ՕՊԵՐԱ [< опера < իտլ. opera < լատ. opera ստեղծագործություն, երկ], գ. (արվ.): 1. Թատերական ներկայացման համար գրված երաժշտական-դրամատիկական ստեղծագործություն, որ իր մեջ միավորում է գործիքային ու ձայնային երաժշտությունը (երբեմն նաև պարը): 2. Այդպիսի ստեղծագործության բեմադրությունը: 3. Այդպիսի ներկայացումների թատրոնը, շենքը:

ՕՊԵՐԱՏԻՎ [< оперативный < լատ.], ած. 1. Շուտափույթ կերպով գործին ընթացք տալու՝ գործելու ընդունակ, գործուն: 2. Ռազմական գործողություններին վերաբերող: 3. Գործարար: 4. Վիրահատական:

ՕՊԵՐԱՏՈՐ [< оператор < լատ. operator գործող, գործուն], գ. 1. (կինո.): Կինոնկարահանող մասնագետ-նկարիչ: 2. (մսնգ.): Բարդ մեխանիզմի աշխատանքը ղեկավարող կամ որոշակի արտադրական գործընթացի կատարման համար պատասխանատու բարձրորակ բանվոր: 3. Նույնն է՝ հնչյունային օպերատոր: 4. Տրանսպորտի պաշտոնյա, որ ընդունում է դիսպետչերի կարգադրությունները և նրան հաղորդում շարժման մասին տեղեկությունները: 5. Վիրահատ:

ՕՊԵՐԱՑԻԱ [< операция < լատ. operatio գործողություն], գ. 1. (բժշկ. հնց.): Վիրահատություն: 2. (ռազմ.): Ռազմական գործողություն: 3. Գործառնություն: 4. Գործողություն: 5. Գործարք:

ՕՊԵՐԱՑԻՈՆ [< операционный < լատ.], ած. 1. Վիրահատական: 2. Գործառնական:

ՕՊԵՐԱՑԻՈՆԱԼԻԶՄ [< операционализм < լատ.], գ. (փիլ.): XX դ. փիլիսոփայության մեջ՝ իմացաբանական-մեթոդաբանական ուղղություն: Հիմնադրել է ամերիկացի ֆիզիկոս Պ. Ու. Բրիջմենը (1882-1961թթ.):

ՕՊԵՐԵՏ(Ա) [< оперетта < իտլ. operetta], գ. 1. Կատակերգական բնույթի երաժշտական-թատերական ստեղծագործություն: 2. Երաժշտական կոմեդիայի թատրոն: 3. Երաժշտական կոմեդիայի ներկայացում:

ՕՊ(Փ)ԻՈՒՄ [< опий < լատ. opium < հուն. opion կակաչի հյութ], գ. (խսկց.): Ափիոն՝ կաթնահյութ, որը պարունակվում է քնաբեր կակաչի չհասունացած տուփիկների կաթնանոթներում:

ՕՊՈԶԻՑԻԱ [< оппозиция < լատ. oppositio հակադրում], գ. (քղք.): 1. Ընդդիմություն՝ որևէ կազմակերպության՝ հանրության՝ ընկերության ևն կազմի մեջ առանձնակի դիրք գրավող մարդկանց խումբ, որ իր տեսակետներով՝ սկզբունքներով՝ բացասական գծերով ևն հակադրվում է մեծամասնության տեսակետին՝ սկզբունքներին՝ քաղաքական գծին ևն: 2. Հակադրություն, որևէ բանի դեմ ուղղված գործողություն՝ բողոք ևն, դիմադրություն, ընդդիմություն:

ՕՊՈԶԻՑԻՈՆ [< оппозиционный < լատ.], ած. 1. Օպոզիցիա հանդիսացող, օպոզիցիայի բնույթ կրող, ընդդիմադիր: 2. Օպոզիցիա՝ ընդդիմություն կազմող:

ՕՊՈԶԻՑԻՈՆԵՐ [< оппозиционер < լատ.], գ. Օպոզիցիայի՝ ընդդիմության

մասնակից՝ անդամ՝ կողմնակից:

ՕՊՈՆԵՆՏ [< оппонент < լատ. opponens (opponentis) ընդդիմացող], գ. ած. Ընդդիմախոս:

ՕՊՈՐՏՈՒՆԻԶՄ [< оппортунизм < ֆր. opportunisme < լատ. opportunus հարմարավետ, շահավետ], գ. 1. (պատմ.): Թշնամի հոսանք բանվորական շարժման և պրոլետարական կուսակցությունների մեջ, որ պրոլետարիատի դասակարգային շահերը ենթարկում է բուրժուազիայի շահերին և քարոզում համաձայնողականություն՝ համագործակցություն բուրժուազիայի հետ և հրաժարվում պայքարի հեղափոխական մեթոդներից, հաշտվողականություն: 2. *փխբ.* Թուլակամություն, անհաստատություն, անկայունություն:

ՕՊՈՐՏՈՒՆԻՍՏ [< оппортунист < լատ.], գ. ած. 1. (պատմ.): Օպորտունիզմի կողմնակից, հաշտվողական: 2. *փխբ.* Անկայուն՝ համաձայնողական՝ անհաստատակամ մարդ:

ՕՊՏԱՑԻԱ [< оптация < լատ. optatio], գ. (իրավք.): Քաղաքացիության ընտրություն (մի երկրի որոշակի տարածքը մյուսին փոխանցելու գործընթացի ժամանակ):

ՕՊՏԻԿ [< оптик < հուն.], գ. 1. Օպտիկայի մասնագետ: 2. Օպտիկական իրեր պատրաստող վարպետ:

ՕՊՏԻԿԱ [< оптика < հուն. optikē], գ. 1. (ֆիզ.): Ֆիզիկայի մի բաժինը, որը զբաղվում է լույսի, նրա հատկությունների և օրինաչափությունների ուսումնասիրությամբ, տեսագիտություն: 2. (հվք.): Այն սարքերի և գործիքների ամբողջությունը, որոնց գործողությունը կապված է լույսի անդրադարձման ու բեկման օրինաչափությունների հետ: 3. (խսկց.) Օպտիկական ակնոցներ պատրաստող և վաճառող հաստատություն:

ՕՊՏԻՄԱԼ [< оптимальный < լատ. optimus ավելի լավ], ած. (գրք.): Ամենաբարենպաստ, առավելագույն, լավագույն տարբերակ:

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ, գ. Օպտիմալ դարձնելը, օպտիմալացնելը:

ՕՊՏԻՄԱՏՆԵՐ [< оптиматы < լատ. optimates ազնվատոհմիկներ], գ. (պատմ.): Գաղափարաքաղաքական հոսանքի ներկայացուցիչներ հռոմեական հանրապետությունում, որոնք արտահայտել են նոբիլիտետի շահերը:

ՕՊՏԻՄԱՑՈՒՄ, գ. Լավարկում՝ որոշակի գործառույթի էքստրեմումը գտնելու կամ բազմաթիվ հնարավոր տարբերակներից լավագույնն (օպտիմալը) ընտրելու գործընթաց:

ՕՊՏԻՄԵՏՐ [< оптиметр < լատ. optimus + հուն. metreō չափում եմ], գ. (տեխ.): Հարաբերական մեթոդով հատուկ ճշգրիտ գծային չափումներ կատարելու սարք:

ՕՊՏԻՄԻԶՄ [< оптимизм < լատ. optimus ավելի լավ], գ. Լավատեսություն:

ՕՊՏԻՄԻՍՏ [< оптимист < լատ.], գ. ած. Լավատես:

ՕՊՐԻՉՆԻԿ [< ռուս. опричник], գ. (պատմ.): Օպրիչնինայի շարքերում ծառայող ազնվական՝ կալվածատեր:

ՕՊՐԻՉՆԻՆԱ [< ռուս. опричнина], գ. (պատմ.): 1. Իվան Ահեղի կողմից գործադրված ծայրահեղ միջոցառումների համակարգը, որ ուղղված էր բոյարաիշխանական օպոզիցիայի ջախջախմանը և ռուսական կենտրոնական պետականության ամրապնդմանը: 2. Իվան Ահեղի հատուկ զորքերը, որոնք բացահայտում ու վերացնում էին դավաճանությունը: 3. Այն հողերը, որ Իվան Ահեղը խլել էր խոշոր բոյարներից և պահում էր իր անձնական՝ անմիջական կառավարման տակ:

ՕՊՑԻՈՆ [< опцион < գերմ. Option < լատ. optio (optionis) ընտրություն], գ. Ընտ-

րանք՝ 1. (իրավք.): Համաձայնագրի պայմանադիր կողմերից մեկի մյուսին տրամադրված պայմանների ազատ ընտրության իրավունք: 2. (առևտր.): Սահմանափակ պատասխանատվությամբ բորսայական գործառնությունների հատուկ տեսակ:

ՕՊՈՒՍ [< опус < լատ. opus աշխատություն, ստեղծագործություն], գ. (երժշտ.): Տերմին, որը կիրառվում է կոմպոզիտորի ստեղծագործությունների հաջորդական համարակալման համար:

ՕՍԵՏՐ [< ռուս. осетр], գ. (կենդբ.): Մսով և ձկնկիթով խոշոր արդյունաբերական նշանակություն ունեցող ձուկ, թառափ:

ՕՍԵՏՐԻՆԱ [< ռուս. осетрина], գ. (խսհր.): Օսետրի միսը իբրև սնունդ՝ կերակուր:

ՕՍՄԱՆ(ՆԵՐ) [< осман(ы) < գերմ. Osmanen < թուրք. Othman < արաբ. ’Othmân Թուրքիայում սուլթանական դինաստիայի հիմնադրի անունից], գ. (պատմ.): Թուրքական սուլթանների դինաստիա (1299-1922 թթ.), նաև օսմանյան Թուրքիայի բնակչությունը:

ՕՍՄԻՈՒՄ [< осмий < հուն. osmē հոտ], գ. (քիմ.): Քիմիական տարր. շատ կարծր կապտասպիտակավուն մետաղ, որ ստացվում է պլատինի հանքերից:

ՕՍՄՈՍ [< осмос < հուն. osmos հրում, ճնշում], գ. (ֆիզ.): Հեղուկ նյութերի ներծծումը՝ ներթափանցումը իրենց պատող բուսական կամ կենդանական թաղանթների միջով:

ՕՍՏ [< ост < գերմ. Ost], գ. Արևելք:

ՕՍՏԵ(Ո)... [< осте(о)... < հուն. osteon ոսկոր] Բարդ բառերի սկզբնամաս. օգտագործվում է ոսկրին և ոսկրային հյուսվածքին առնչվող տերմիններում:

ՕՍՏԵՈԳՐԱՖԻԱ [< остеография < օստեո... + հուն. + graphō գրում եմ], գ. (կզմխս.): Կմախքի ոսկորների նկարագրությունը:

ՕՍՏԵՈԴԻՍՊԼԱԶԻԱ [< остеодисплазия < օստեո... + հուն. dys խանգարում + plasis գոյացում, ձևավորում], գ. (բժշկ.): Ոսկրային հյուսվածքի հիվանդությունների խումբ (հաճախ բնածին). բնորոշվում է կմախքի տարբեր բաժինների կազմավորման խանգարումներով:

ՕՍՏԵՈԴԻՍՏՐՈՖԻԱ [< остеодистрофия < օստեո... + հուն. dys + trophē սնուցում], գ. (բժշկ.): Ոսկրային հյուսվածքի հիվանդությունների խումբ. բնորոշվում է կմախքի տարբեր հատվածների ձևախախտմամբ, պայմանավորված է նյութափոխանակության գործընթացների խանգարումով:

ՕՍՏԵՈԼՈԳԻԱ [< остеология < օստե(ո)... + հուն. logōs գիտություն], գ. (բժշկ.): Ոսկրաբանություն:

ՕՍՏԵՈԽՈՆԴՐՈԶ [< остеохондроз < օստեո... + հուն. chondros աճառ], գ. (բժշկ.): Կմախքի երկար խողովակավոր ոսկորների հենքաաճառային հատվածի և կարճ ոսկրերի ելուստների, բորբոքային հիվանդությունների խումբ:

ՕՍՏԵՈՄԱ [< остеома < օստեո... + հուն. oma ուռուցք], գ. (բժշկ.): Ոսկրի բարորակ ուռուցք:

ՕՍՏԵՈՄԻԵԼԻՏ [< остеомиелит < օստեո... + հուն. myelos ծուծ], գ. (բժշկ.): Վարակական-բորբոքային հիվանդություն, որի ժամանակ ախտահարվում է ոսկրածուծը, այնուհետև մեկ կամ մի քանի ոսկրերի ոսկրային հյուսվածքի տարրերը:

ՕՍՏԵՐԻԱ [< остерия < իտալ. osteria], գ. (հզվդ.): Պանդոկ Իտալիայում:

ՕՍՏԻՆԱՏՈ [< остинато < իտալ. ostinato, բառացի՝ համառ], գ. (երժշտ.): Երաժշտական որևէ թեմայի համառորեն կրկնելը:

ՕՍՏԻՏ [< остит < հուն. osteon ոսկր], գ. (բժշկ.): Ոսկրային հյուսվածքի բորբոքում:

ՕՍՏՐԱԿԻԶՄ [< остракизм < հուն. ostrakismos < ostrakom խեցիկ], գ. (պատմ.): Արտաքսում երկրից (քվեարկությամբ, խեցեգրությամբ). խեցեվճիռ: 2. *փխբ.* Աքսոր, հալածանք:

ՕՍՑԻԼՅԱՏՈՐ [< осциллятор < լատ. oscillare տատանվել], գ. (ֆիզ.): Տատանվող ֆիզիկական համակարգ:

ՕՍՑԻԼՈԳՐԱՄ [< осциллограмма < լատ. oscillum տատանում, թրթռում, երերում + հուն. gramma գրառում], գ. (տեխ.): Օսցիլոգրաֆով (տե՛ս)՝ տատանագրիչով ստացված գծագրական պատկեր:

ՕՍՑԻԼՈԳՐԱՖ [< осциллограф < լատ. oscillum տատանում + հուն. graphō գրում եմ], գ. (տեխ.): Տատանագրիչ՝ էլեկտրական ազդանշանները դիտելու և չափելու սարք:

ՕՍՑԻԼՈԳՐԱՖԻԱ [< осциллография < լատ. + հուն.], գ. (գիտ.): Տատանագրիչով էլեկտրական գործընթացների գրանցումն ու դրա մեթոդները:

ՕՎԱԼ [< овал < ֆր. ovale < լատ. ovum ձու], ած. գ. 1. գ. (երկրչ.): Ձվաձևություն. ձվի ձևով գծագրություն: 2. ած. Ձվաձև:

ՕՎԱՑԻԱ [< овация < լատ. ovatio ցնծություն], գ. Հիացմունքների՝ խանդավառության՝ ցնծության արտահայտություն բուռն ծափահարությունների միջոցով:

ՕՎԵՐԹԱՅՄ [< овертайм < անգլ. overtime < over վեր, դուրս, չափից ավելի + time ժամանակ], գ. (սպորտ.): Լրացուցիչ ժամանակ (ֆուտբոլում, հոկեյում ևն)՝ խաղի հիմնական ժամանակից դուրս ավելացված լրացուցիչ ժամանակ (սովորաբար երկու խաղափուլով) հաղթող թիմին որոշելու համար:

ՕՎՉԱՐԿԱ [< ռուս. овчарка], գ. (կենդբ.): Շների մի ցեղը, որ օգտագործվում է որսի, պահպանության, պահակային ծառայության ևն նպատակներով, հովվաշուն:

ՕՎՍԱՆՆԱ [< осанна < հին հրեերեն hoša‘nā! դե օգնի՛ր], ձայն. 1. Օվսաննա. փառաբանություն: 2. Փրկի՛ր (քրիստոնեական ժամերգության բացականչություն):

ՕՎՈՒԼՅԱՑԻԱ [< овуляция < ֆր. ovulation < լատ. ovum ձու], գ. (կենսբ.): Ձվազատում:

ՕՏԵՐՏՐԱԼ [< оттертрал < անգլ. otter ձկնորսական սարք + trawl ուռկանապարկ], գ. (ծով.): Ձկնորսական ցանց, որը քաշվում է պողպատյա երկար թոկով նավով, մեծ ուռկանացանց, ձկնացանց:

ՕՏԶՈՎԻԶՄ [< ռուս. отзовизм], գ. (պատմ.): 1905 թ. հեղափոխությունից հետո ՌՍԴԲԿ-ի մեջ առաջացած հոսանք, որ պահանջում էր հետ կանչել սոցիալ-դեմոկրատական պատգամավորներին պետական դումայից և հրաժարվել դասակարգային պայքարի լեգալ ձևերից. լիկվիդատորություն ձախից:

ՕՏԶՈՎԻՍՏ [< ռուս. отзовист < տե՛ս Օտզովիզմ], գ. ած. Օտզովիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՕՏԻՍԿ [< ռուս. отиск], գ. (խսկց.): 1. Առանձնատիպ: 2. Մամլատիպ, սևատիպ:

ՕՏԻՏ [< отит < հուն. us (ōtos) ականջ], գ. (բժշկ.): Ականջի բորբոքում:

ՕՏՈԼՈԳ [< отолог < հուն. us (ōtos) ականջ + logōs գիտություն], գ. (բժշկ.): Ականջաբան:

ՕՏՈԼՈԳԻԱ [< отология < հուն.], գ. (բժշկ.): Ականջաբանություն:

ՕՏՈՍԿՈՊԻԱ [< отоскопия < հուն. us (ōtos) ականջ + skopeō դիտում եմ], գ.

Ականջի խոռոչի, թմբկաթաղանթի ևն ուսումնասիրման մեթոդ:

ՕՏՈՖՈՆ [< отофон < հուն.], գ. (տեխ.): Լսողության ուժեղացուցիչ սարք (տեղադրվում է ականջի խեցու վրա):

ՕՐԱԿՈՒԼ [< оракул < լատ. oraculum գուշակություն, նախագուշակություն], գ. 1. (պատմ.): Պատգամախոս քուրմ: 2. (պատմ.): Պատգամախոսարան, պատգամախոսական տաճար: 3. *փխբ.* (գրք). Գուշակ, մարգարե: 4. (հնց.): Գուշակության գիրք:

ՕՐԱՆԳՈՒՏԱՆ [< орангутан < մալայերեն orangutan անտառի մարդ], գ. (կենդբ.): Նեղքիթ կապիկների ենթակարգին պատկանող մարդանման կապիկ, որ ապրում է Բոռնեո և Սումատրա կղզիներում:

ՕՐԱՆԺ [< оранжевый < ֆր. orange նարինջ], ած. (խսկց.): Նարնջագույն:

ՕՐԱՆԺԵՐԵԱ [< оранжерея < ֆր. orangerie < orange նարինջ], գ. (տեխ. հնց.): Ջերմոց:

ՕՐԱՏՈՐ [< оратор < լատ. orator < orare խոսել], գ. (հնց.): 1. Ելույթ ունեցող, ճառախոս: 2. Հռետոր, ճարտասան:

ՕՐԱՏՈՐԻԱ [< оратория < իտլ. oratorio], գ. (երժշտ.): Դրամատիկական թեմայով գրված երաժշտական ծավալուն ստեղծագործություն՝ երգչախմբի, մենակատարների և նվագախմբի միատեղ կատարման համար:

ՕՐԲԻՏ(Ա) [< орбита < լատ. orbita ծիր, ուղի, ճանապարհ], գ.: 1. (աստղգ.): Ուղեծիր: 2. *փխբ.* Ոլորտ, շրջանակ, շրջանածիր: 3. (կզմխս.): Ակնակապիճ, կապիճ:

ՕՐԳԱԶՄ [< оргазм < ֆր. orgazme < հուն. orgao կրքոտ՝ շատ ցանկանում եմ], գ. (կենսբ.): Սեռական հարաբերության գագաթնակետային պահը, սերմնաժայթքում:

ՕՐԳԱՆ [< орган < հուն. organon գործիք], գ. 1. (կենսբ.): Բուսական և կենդանական մարմինների գործարան: 2. Հասարակական կյանքի այս կամ այն բնագավառում որոշակի խնդիրների իրականացման գործով զբաղվող հիմնարկություն՝ կազմակերպություն ևն, մարմին: 3. Որևէ կուսակցության՝ ընկերության՝ հիմնարկության ևն պատկանող և նրա հայացքներն ու քաղաքականությունը արտացոլող պարբերական (թերթ, հանդես ևն):

ՕՐԳԱՆ(ՈՆ) [< орган < հուն. organon գործիք], գ. (երժշտ.): Երգեհոն:

ՕՐԳԱՆԵԼՆԵՐ [< органеллы < նոր լատ. organella < հուն.], գ. (կենսբ.): Նախակենդանիների մարմնի մասեր, որոնք կատարում են զանազան գործառույթներ:

ՕՐԳԱՆԻԶԱՑԻԱ [< органазация < գերմ. Organisation < ֆր. organisation], գ. (հնց.): 1. Կազմակերպում, կազմակերպելը: 2. Կազմակերպվածություն: 3. Կազմակերպություն: 4. (խսկց.): Կազմվածք, օրգանիզմ:

ՕՐԳԱՆԻԶՄ [< организм < լատ. organismus], գ. 1. Օրգանական մարմին՝ էակ (մարդ, կենդանի, բույս): 2. Մարդու հոգեկան ու ֆիզիկական հատկությունների ամբողջությունը: 3. Որևէ կարգի միասնական բարդ ամբողջություն:

ՕՐԳԱՆԻԿ [< органический < հուն.], գ. Օրգանական քիմիայի մասնագետ:

ՕՐԳԱՆՈԹԵՐԱՊԻԱ [< органотерапия < լատ. organismus + թերապիա], գ. (խսկց.): Օրգանաբուժություն:

ՕՐԳԱՆՈԻԴ [< органоид < հուն. organon + eidos կերպ], գ. (կենսբ.): Բուսական և կենդանական բջիջների առանձին մասեր, որոնք նրա կենսագործունեության մեջ հատուկ դեր են կատարում, օրգանակերպներ:

ՕՐԳԻԱ [< оргия < հուն. orgia], գ. 1. (պատմ.): Հին հունական ու հռոմեական Բաքոս-Դիոնիսի պատվին կատարվող պաշտամունքային տոն: 2. *փխբ.* Գի-

նարբուք, խրախճանք, սանձարձակ կերուխում և սեռական հաճույքներ:

ՕՐԴԱ [< орда < թուրք. orda սուլթանի պալատ], գ. (հնց.): 1. Հորդա՝ պետության կազմակերպման ձև (հնում թուրքական ժողովուրդների մոտ): 2. *փխբ.* Խառնաշփոթություն, խառնակություն:

ՕՐԴԱԼԻԱ [< ордалия < լատ. ordalia հոգն.], գ. (պատմ.): Միջնադարյան կաթոլիկ եկեղեցու հավատաքննության եղանակներից մեկը. մեղադրվողին «փորձում էին» կրակով՝ հրով, ջրով՝ շիկացած երկաթով չարչարելով և, եթե մեղադրվողը կարողանում էր դիմանալ այդ չարչարանքներին, համարվում էր անմեղ:

ՕՐԴԵՆ [< орден < լատ. ordo (ordinis) շարք, կարգ], գ. 1. Շքանշան: 2. (ճարտ.): Տե՛ս Օրդեր (2): 3. (կրոն.): Կրոնական ուխտ՝ միաբանություն:

ՕՐԴԵՐ [< ордер < գերմ. Order < ֆր. ordre հրաման, կանոն], գ. 1. Որևէ բան տալու՝ բաց թողնելու՝ վճարելու կամ ընդունելու՝ ստանալու գրավոր փաստաթուղթ: 2. (ճարտ.): Ճարտարապետական որոշ կառուցվածքների համակցության ու գեղարվեստական ձևավորման բնույթը:

ՕՐԴԻՆԱՏ [< ордината < լատ. ordinatus կարգավորված, նշանակված], գ. (մաթ.): Տարածության մեջ կետի դիրքը որոշող երեք կոորդինատներից մեկը:

ՕՐԴԻՆԱՏՈՐ [< ординатор < լատ. ordinator կարգադրիչ], գ. (բժշկ): Կլինիկայի՝ հիվանդանոցի ևն բուժող բժիշկ, որ աշխատում է բաժանմունքի վարիչի ղեկավարության ներքո:

ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱ [< ординатура < լատ.], գ. 1. Օրդինատորի պաշտոնը: 2. Բժշկական պրակտիկ ասպիրանտուրա:

ՕՐԴԻՆԱՐ [< ординар < լատ. ordinarius սովորական], ած. գ. 1. գ. (մսնգ.): Ջրի միջին բարձրությունը (երկար տարիների ընթացքում) որևէ ջրային ավազանում: 2. ած. (խսկց.): Սովորական

ՕՐԵՈԼ [< ореол < ֆր. auréole < լատ. corona aureola ոսկե թագ], գ. 1. (հնց.): Ճաճանչապսակ: 2. Լուսապսակ, փառապսակ: 3. (լսնկրչ.): Լուսեզրակ:

ՕՐԹԻՏ [< ортит < հուն. orthos ուղիղ], գ. (հնք.): Ալլանիտ (անգլ. հանքաբան Թ. Ալլանի (Th. Allan) ազգանվամբ) միներալ. բյուրեղագիտական համակարգը մոնոկլինային է: Կիրառվում է ապարների բացարձակ հասակը կապարային մեթոդով որոշելու և հազվագյուտ տարրեր (Ce, V ևն) կորզելու համար:

ՕՐԹՈԳՈՆԱԼ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ, (մաթ.): Ֆունկցիաներ, որոնք կազմում են օրթոգոնալ համակարգ:

ՕՐԹՈԳՈՆԱԼՈՒԹՅՈՒՆ [< ортогональность < հուն. orthogōnios], գ. (երկրչ.): Եռաչափ էվկլիդեսյան տարածության երկու վեկտորների ուղղահայացության գաղափարի ընդհանրացումը:

ՕՐԹՈԴՈՆՏԻԱ [< ортодонтия < հուն. orthos ուղիղ + odus (odontos) ատամ], գ. (բժշկ.): Ատամնաբուժության բաժին, որն ուսումնասիրում է ատամնաշարի սխալ կառուցվածքը և դրա ուղղման մեթոդները:

ՕՐԹՈԴՈՔՍ [< ортодокс < հուն. orthos ուղիղ + doxia կարծիք], ած. գ. 1. Որևէ ուսմունքի՝ գաղափարախոսության ևն անշեղորեն հետևող, ուղղափառ, հետևողական: 2. (եկեղ.): Հունական եկեղեցու դավանանքին հետևող քրիստոնյա:

ՕՐԹՈԴՈՔՍԻԱ [< ортодоксия < գերմ. Orthodoxie < հուն.], գ. (կրոն.): Ուղղափառություն:

ՕՐԹՈԼՈԳԻԱ [< ортология < հուն. orthos ճիշտ, ուղիղ + logōs գիտություն], գ. (լեզվբ.): Լեզվաբանության բաժին, որն ուսումնասիրում է լեզվական նորման և այդ նորմայից շեղումները:

ՕՐԹՈԿԼԱԶ [< ортоклаз < հուն. orthos ուղիղ+ klasis բեկվածք], գ. (հնք.): Ապար կազմող միներալ դաշտային ապարների խմբից: Մագմատիկ ապարների կարևորագույն ապար կազմող միներալներից է:

ՕՐԹՈՊԵԴ [< ортопед < հուն.], գ. Օրթոպեդիայի մասնագետ բժիշկ, բեկաբույժ:

ՕՐԹՈՊԵԴԻԱ [< ортопедия < հուն. orthos ուղիղ, ճիշտ + paideia դաստիարակություն], գ. (բժշկ.): Բժշկության մի բաժինը, որը զբաղվում է ողնաշարի ու վերջավորությունների ծռումների ու ձևափոխությունների ուսումնասիրությամբ՝ բուժումով ու կանխարգելմամբ, մարմնածռումնաբուժություն, ոսկրահարդարություն, ոսկրաբուժություն:

ՕՐԻԳԱՄԻ [< оригами < ճապ. Origami < ori ծալել + gami թուղթ], գ. 1. (արվ.): 1. Թուղթը ծալելով՝ ծալծլելով գեղարվեստական պատկերներ ստանալու արվեստը: 2. Այդպիսի արվեստի նմուշ:

ՕՐԻԳԻՆԱԼ [< оригинал < լատ. originalis նախասկզբնական, սկզբնական], գ. ած. 1. Բնագիր, նախօրինակ, սկզբնագիր: 2. Ինքնատիպ, արտասովոր:

ՕՐԻԵՆՏԱԼ [< ориентальный < լատ. orientalis], ած. Արևելյան:

ՕՐԻԵՆՏԱԼԻԶՄ [< ориентализм < լատ.] գ. Արևելագիտություն:

ՕՐԻԵՆՏԱԼԻՍՏ [< ориенталист < լատ.], գ. Արևելագետ:

ՕՐԻԵՆՏԱՑԻԱ [< ориентация < ֆր. orientation], գ. 1. Իր գտնված տեղի որոշումը, կողմնորոշում: 2. Շրջապատող իրադարձությունների՝ իրադրությունների ևն մեջ կողմնորոշվելու՝ դիրքորոշվելու կարողություն: 3. Քաղաքական՝ գիտական ևն հանգամանքներում կողմնորոշման հիման վրա որոշ ուղղություն՝ գործողությունների՝ գործունեության ևն մեջ, կողմնորոշում, դիրքորոշում:

ՕՐԻԵՆՏԻՐ [< ориентир < ֆր. orientir], գ. Տեղանքի ոչ շարժական և աչքի ընկնող առարկա (շենք, կառույց ևն), որ իբրև նշան է ծառայում շարժման ուղությունը՝ որևէ բանի տեղը՝ նպատակակետը ևն գտնելու համար, կողմնորոշիչ:

ՕՐԻՈՆ [< Орион < հուն. Ōriōn], գ. (աստղգ.): Հայկի համաստեղություն:

ՕՐԽԵՍՏՐԱ [< орхестра < հուն. orchestra], գ. (պատմ.): Հին հունական թատրոնում՝ շրջանաձև հրապարակ թատրոնի դերասանների և երգչախմբի համար:

ՕՐԽԻԴ [< орхид < հուն. orchis ձվիկ], գ. (բժշկ.): Ամորձիների բորբոքում:

ՕՐԽԻԴԵԱ [< орхидея < հուն. orchidion], (բսբ. հնց.): Խոլորձ:

ՕՐԿԵՍՏՐ [< оркестр < ֆր. orchestre < հուն. orchestra հին հունական թատրոնում՝ բեմի դիմացի տարածքը], գ. (երժշտ. հնց.): Նվագախումբ, երաժշտախումբ:

ՕՐՆԱՄԵՆՏ [< орнамент < լատ. ornamentum զարդարանք, զարդարում], գ. 1. Գեղանկարչական՝ քանդակագործական ևն նախշազարդ, որի հիմքում ընկած են կրկնվող երկրաչափական տարրեր կամ բուսական ու կենդանական մոտիվներ, զարդապատկեր, զարդանկար: 2. (երժշտ.): Հիմնական մեղեդիական բնույթը զարդարող՝ հարստացնող ձայների ամբողջությունը: 3. Առհասարակ՝ զարդ:

ՕՐՆԱՄԵՆՏԱԼ [< орнаментальный < լատ.], ած. Օրնամենտ հանդիսացող, օրնամենտի բնույթ ունեցող:

ՕՐՆԻԹՈԶՆԵՐ [< орнитозы < հուն. ornis (ornitos) թռչուն + eidos տեսակ], գ. (բժշկ., կենդբ.): Թռչունների և մարդու վարակիչ հիվանդություն. բնորոշվում է օրգանիզմի ընդհանուր թունավորման երևույթներով ու թոքերի ախտահարումով, հաճախ ունենում է ձգձգվող և քրոնիկական ընթացք:

ՕՐՆԻԹՈԼՈԳ [< орнитолог < հուն. ornis (ornitos) թռչուն + log(os) բան, ուսմունք], գ. Թռչնագետ՝ թռչնաբան, թռչնաբանության մասնագետ:

ՕՐՆԻԹՈԼՈԳԻԱ [< орнитология < հուն.], գ. (գիտ.): Թռչնագիտություն, թռչնա-

բանություն, կենդանաբանության՝ թռչուններն ուսումնասիրող բաժին:

ՕՐՆԻԹՈՊՏԵՐ [< орнитоптер < հուն. ornis (ornithos) թռչուն + pteron թև], գ. (օդգնց.): Թռչնաթևիկ՝ թևածիկ սավառնակ:

ՕՐՈԳԵՆԵԶ [< орогенез < հուն. oros լեռ + գենեզ], գ. Լեռնակազմություն՝ երկրակեղևի շարժում, որի ընթացքում առաջանում են լեռներ:

ՕՐՖՈԳՐԱՖԻԱ [< орфография < հուն. orthos ճիշտ, ուղիղ + graphō գրում եմ], գ. (լեզվբ. հնց.): Ուղղագրություն՝ որևէ լեզվի համար հանրության կողմից ընդունված գրության կանոնների համակարգը (հնչյունական, ձևաբանական, պատմական):

ՕՐՖՈԷՊԻԱ [< орфоэпия < հուն. orthos ճիշտ, ուղիղ + epos խոսք], գ. (լեզվբ. հնց.): Ուղղախոսություն՝ լեզվաբանության բաժին, որը զբաղվում է գրական՝ ճիշտ արտասանության ուսումնասիրությամբ:

ՕՈՒԵՆԻԶՄ, ՕՎԵՆԻԶՄ [< оуэнизм < անգլ. owenism], գ. (փիլ.): Անգլիացի սոցիալ-ուտոպիստ Ռ. Օուենի (Owen, 1771-1858 թթ.) և նրա հետևորդների ուսմունքը:

ՕՔԵՅ [< о' кей, о-кей < անգլ. O. K.], ձայն. (խսկց.): Համաձայնություն, հավանություն արտահայտող ձայնարկություն, լավ:

ՕՔՍԱԼԱՏ [< оксалаты < հուն. oxys թթու + hals (halos) աղ], գ. (քիմ.): Թթենջկաթթվի աղ:

ՕՔՍԻԴ [< оксиды < հուն. oxys թթու], գ. (քիմ.): Օքսիդացման միջին աստիճանը՝ ի տարբերություն գերօքսիդի (հիպերօքսիդի) և ենթօքսիդի, թթվածնատ:

ՕՔՍԻԼԻՔՎԻՏ [< оксиликвит < լատ. oxy(genium) թթվածին + liquid(us) հեղուկ], գ. (քիմ.): Պայթուցիկ նյութ. կազմված է հեղուկ թթվածնով հագեցած այրվող կլանիչներից (փայտածուխ, տորֆ, թեփ ևն):

ՕՔՐԱ [< oxpa < հուն. ōchros դեղնավուն], գ. Տե՛ս Օխրա:

ՕՖԵՐԵՆՏ [< оферент < լատ.], գ. Գործարկու՝ գործարք կնքելու առաջարկությամբ հանդես եկող:

ՕՖԵՐՏԱ [< оферта < լատ. offertus առաջարկություն], գ. Գործարկ՝ գործարք կնքելու առաջարկություն՝ անհրաժեշտ բոլոր պայմաններով:

ՕՖԹԱԼՄՈ... [< офтальмо... < հուն. ophtalmos աչք] Բարդ բառերի բաղադրամաս, որը ցույց է տալիս այդ բառերի կապը աչքերի հետ:

ՕՖԹԱԼՄՈԼՈԳ [< офтальмолог < օֆթալմո... + հուն. logōs գիտություն], գ. (բժշկ.): Աչքի բժիշկ, օֆթալմոլոգիայի մասնագետ, աչքաբան:

ՕՖԹԱԼՄՈԼՈԳԻԱ [< офтальмология < հուն.], գ. (բժշկ.): Գիտություն աչքի և դրա հիվանդությունների մասին, աչքաբանություն:

ՕՖԹԱԼՄՈՍԿՈՊ [< офтальмоскоп < օֆթալմո... + հուն. skopeō զննում եմ], գ. (բժշկ. տեխ.): Աչքի հատակը ուսումնասիրող գործիք:

ՕՖԻՍ [< офис < անգլ. office], գ. (խսկց.): Գրասենյակ:

ՕՖԻՑԵՐ [< офицер < գերմ. Offizier], գ. (խսկց.): Սպա:

ՕՖԻՑԻԱՆՏ [< официант < գերմ. Offiziant < միջին լատ. officians (officiantis) ծառայող], գ. (խսկց.): Մատուցող:

ՕՖԻՑԻՈԶ [< официоз < լատ.], ած. Կիսապաշտոնական տպագրական օրգան:

ՕՖԻՑԻԱԼ [< официальный < լատ. officialis], գ. (խսկց.): Պաշտոնական:

ՕՖՇՈՐ [< оффшор < անգլ. off shore], գ. (տնտսգ.): Արտոնյալ կամ չհարկվող կարգավիճակով գոտիներում ստեղծված ընկերություն:

ՕՖՇՈՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ [< оффшорные (< անգլ. off shore) компании] –

(տնտսգ.): Փոքր պետություններ, գոտիներ, ուր վարվում է արտասահմանյան փոխատվական կապիտալը ներգրավելու քաղաքականություն և հարկային ու այլ արտոնություններ են տրամադրվում միայն արտասահմանյան գործատերերի հետ արտարժույթով ֆինանսական գործառնությունների համար:

ՕՖՈՐՏ [< офорт < ֆր. eau-forte, բառացի՝ ազոտաթթու], գ. 1. Ժանտաջուր: 2. Ժանտաջրով՝ թթուներով մետաղի վրա ներգործելով ստացվող փորագրանկար: 3. Այդպիսի փորագրանկարից արտատպված պատկեր՝ դրոշմվածք:

ՕՖՈՐՏԻՍՏ [< офортист < ֆր.], գ.(արվ.):Օֆորտի մասնագետ, նկարիչ-փորագրող:

ՕՖՍԱՅԴ [< офсайд < անգլ. off side], գ. (սպորտ. խսկց.): գ. Խաղից դուրս վիճակ ֆուտբոլի՝ հոկեյի ևն խաղերում:

ՕՖՍԵԹ [< офсет < անգլ. offset (printing)], գ. (տպգր.): Տպագրության եղանակ՝ տեքստը ևն տպագրական ֆորմատից տրվում է առաձգական մակերեսի (օր. ռետինի վրա), իսկ դրանից էլ՝ թղթին, ռետինատպություն:

Ֆ

ՖԱ [< фа < լատ. fa], գ. (երժշտ.): 1. Երաժշտական գամմայի չորրորդ ձայնը: 2. Այդ ձայնի նշանը, ձայնանիշը:

ՖԱԲԻԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ [< фабианское (< անգլ. Fabia society հռոմեացի զորավոր Ֆաբիոս Մաքսիմուս Կունտատորի անունով) общество] - (պատմ.): Ֆաբիականներ, անգլիական մտավորականության ռեֆորմիստական կազմակերպություն, որը ստեղծվել է 1884 թ. հունվարին Լոնդոնում Բ. Շոունի, Ս. Վեբի, Ֆ. Պոդմորի, Է. Պիզի կողմից: Նպատակը աստիճանական բարենորոգումների միջոցով կապիտալիստական հասարակարգը սոցիալիստականի վերափոխելու գաղափարի պրոպագանդումն էր:

ՖԱԲԼԻՈ [< фабльо, фаблио < ֆր. fabliau < լատ. fabula], գ. (գրկն. պատմ.): Ֆրանսիական միջնադարում՝ արձակ կամ չափածո երգիծական բնույթի փոքր պատմվածք:

ՖԱԲՐ [< фабра < գերմ. Farbe ներկ], գ. Մազերը և բեղմորուքը սևացնելու ներկ:

ՖԱԲՐԻԿԱ [< фабрика < լատ. fabrica արհեստանոց], գ. (տնտսգ.): 1. Մեքենական միջոցներով հումք մշակող արդյունաբերական ձեռնարկություն: 2. Գործարանային եղանակով մսի, ձվի ևն արտադրությամբ զբաղվող ձեռնարկություն:

ՖԱԲՐԻԿԱՆՏ [< фабрикант < լատ.], գ. (հնց.): Ֆաբրիկատեր՝ ֆաբրիկա ունեցող:

ՖԱԲՐԻԿԱՏ [< фабрикат < լատ. fabricatus պատրաստված], գ. Ֆաբրիկայի պատրաստի արտադրանք:

ՖԱԲՐԻԿԱՑԻԱ [< фабрикация < լատ. fabricatio արտադրում, պատրաստում], գ. 1. Գործարանային ֆաբրիկայի արտադրություն: 2. *փխբ.* Կեղծարարություն, խարդախում:

ՖԱԲՈՒԼԱ [< фабула < լատ. fabula պատմություն, պատմելը, պատմվածք], գ. (գրկն.): Գեղարվեստական ստեղծագործության մեջ նկարագրվող դեպքերի ամբողջությունը՝ իրական հաջորդականությամբ, սյուժե:

ՖԱԳՈԹԵՐԱՊԻԱ [< фаготерапия < հուն. phagōs խժռող + թերապիա], գ. (բժշկ.): Որոշ վարակիչ հիվանդությունների բուժումը բակտերիաֆագների միջոցով:

ՖԱԳՈՏ [< фагот < իտլ. fagotto, բառացի՝ խուրձ, հանգույց], գ. (երժշտ): Երաժշտական փողային գործիք:

ՖԱԳՈՑԻՏ(ՆԵՐ) [< фагоциты < հուն.], գ. (կենսբ.): Արյան նետրոֆիլներ և ռաթիկուլաէնդորթելային համակարգի բջիջներ, որոնք ընդունակ են վերածվելու ակտիվ մակրոֆագերի:

ՖԱԳՈՑԻՏՈԶ [< фагоцитоз < հուն. phagos խժռող + kytos բջիջ], գ. (կենսբ.): Կենդանի բջիջների և անկենդան մասնիկների ակտիվ կլանումը և խժռումը միաբջիջ օրգանիզմներով կամ բազմաբջիջ կենդանիների հատուկ բջիջներով՝ ֆագոցիտներով:

ՖԱԶ [< фаза < հուն. phasis հայտնվել, ի հայտ գալ], գ. 1. Փուլ: 2. (էլեկտր.): Գեներատորի փաթույթի առանձին փունջ, ինչպես և նրան միացած էլեկտրահաղորդալարը:

ՖԱԶԱՆ [< фазан < գերմ. Fazan < հուն. phasianos < պատմական Կոլխիդայի ֆասիս գետի անունից], գ. (կենդբ. հնց.): Փասիան:

ՖԱԶԻՍ [< фазис < հուն. phasis երևալը], գ. Նույնն է՝ Ֆազ:

ՖԱԶՈՏՐՈՆ [< фазотрон < հուն. phasis + էլեկտրոն], գ. (ֆիզ.): Լիցքավոր մասնիկների արագացուցիչ:

ՖԱԼԱՆԳ [< фаланг < հուն. phalanx (phalangos)], գ. 1. (ռազմ. պատմ.): Փաղանգ՝ հոծաշարք զորաբանակ (Հին Հունաստանում): 2. *փխբ.* Հոծաշարք, խտաշարք, շարք: 3. (փիլ. պատմ.): Համայնքահատված (Ֆուրիեի ուսմունքի մեջ): 4. Ֆաշիստական կուսակցություն Իսպանիայում (նաև՝ որոշ այլ երկրներում): 5. (կենդբ.): Մորմ: 6. (կզմխս.): Մատնահատված:

ՖԱԼԵՐԻՍՏԻԿԱ [< фалеристика < լատ. phalerae մետաղյա զարդարանքներ՝ զինվորական աստիճանակարգությունը՝ կոչումները տարբերելու համար, տարբերանշաններ], գ. (մանգ.): Մեդալները, շքանշանները, տարբերանշանները ևն ուսումնասիրող պատմագիտական գիտակարգ:

ՖԱԼԼՈԻՄԻՏԱՏՈՐ[< фаллоимитатор < հուն. phallos + իմիտատոր], գ. (հզվդ.): Արհեստական առնանդամ:

ՖԱԼԼՈՒՍ, ՖԱԼԼՈՍ [< фаллос < հուն. phallos], գ. Առնանդամի քանդակապատկեր, որ մի շարք հին ու նոր ժողովուրդների մոտ պաշտամունքի խորհրդանիշ է:

ՖԱԼՇ [< фальшь < գերմ. Falsch], գ. (խսկց.): 1. Կեղծիք: 2. Խարդախում: 3. (երժշտ.): Սխալ նոտա, աղավաղում:

ՖԱԼՍԻՖԻԿԱՏ [< фальсификат < գերմ. Falsifikat < լատ. falsificatum կեղծում, խարդախում], գ. (խսկց.): Կեղծված՝ խարդախված ապրանք:

ՖԱԼՍԻՖԻԿԱՏՈՐ [< фальсификатор < գերմ. < լատ.], գ. (խսկց.): Կեղծարար, զերծարար:

ՖԱԼՍԻՖԻԿԱՑԻԱ [< фальсификация < լատ. falsificare կեղծել, խարդախել], գ. 1. Կեղծիք, կեղծում: 2. Կեղծարարություն, զերծարարություն: 3. (տնտսգ.): Կեղծում, ապրանքի նմանակում. արտաքին տեսքը պահպանելով՝ սպառվող ապրանքի որակի անկում:

ՖԱԼՍՏԱՐՏ [< фальстарт < անգլ. false start, բառացի՝ կեղծ՝ սխալ մեկնարկ], գ. (սպորտ.): Սխալ մեկնարկ, երբ մարզիկներից մեկը մինչև ազդանշանը մեկնարկում է:

ՖԱԼՑ [< фальц < գերմ. Falz < falzen ծալել], գ. 1. (տպգր.): Ծալագիծ, ծալատեղ, ծալուք: 2. (տեխ.): Կցածալվածք, կցակար, ծալակցվածք: 3. Ուղղանկյուն ծալաշերտ՝ տախտակները, քարերը իրար միացնելու համար (նախատեսված է աստիճանների, պատերի ևն միացման համար):

ՖԱԼՑԵՏ [< фальцет < իտալ. falsetto < falso կեղծ], գ. (երժշտ.): Տղամարդու երգչական ձայնի ամենաբարձր ռեգիստրը, որը դուրս է գալիս նրա սովորական ձայնածավալի սահմաններից և բնորոշվում է հնչյունների ուժգնության պակասեցմամբ, առանձնահատուկ փափկությամբ և օբերտոնների թվի նվազեցումից բխող՝ տեմբրի յուրահատուկ կեղծությամբ:

ՖԱԿԻՐ [< факир < արաբ. faqīr աղքատ], գ. (գրք.): 1. Դերվիշ: 2. Թափառական ձեռնածու:

ՖԱԿՏ [< факт < լատ. factum գործված, գործվածք, կատարվածք], գ. (խսկց.): 1. Փաստ՝ կատարված բան: 2. Իրողություն: 3. Իրականություն:

ՖԱԿՏՈՐ [< фактор < լատ. factor անող, գործող, արտադրող], գ. 1. Գործոն՝ ազդակ: 2. (հնց.): Տպարանի տեխնիկական բաժնի վարիչ:

ՖԱԿՏՈՐԻԱ [< фактория < անգլ. factory], գ. 1. Առևտրական գրասենյակ և առևտրականների բնակավայր գաղութային երկրներում: 2. Առանձին արդյունահանական (որսորդական, ձկնորսական ևն) հեռավոր շրջանների առևտրամատակարարման կայան:

ՖԱԿՏՈՐԻԱԼ [< факториал < անգլ. factorial < լատ. factor արտադրող], գ. (մաթ.): Մեկից մինչև տրված որևէ **n** բնական թիվը եղած բոլոր բնական թվերի արտադրյալը:

ՖԱԿՏՈՐԻՆԳ [< факторинг < անգլ. factoring], գ. (տնտսգ.): Ծառայությունների տեսակ, որ երկարաժամկետ պայմանագրի հիման վրա առևտրական միջնորդ ֆիրման մատուցում է իր հաճախորդին:

ՖԱԿՏՈՒՐԱ [< фактура < լատ. factura մշակում, կառուցում], գ. 1. (մանգ.): Արվեստի ստեղծագործությունների տեխնիկական առանձնահատկություն: 2. Գործվածքի՝ ապակու ևն արտաքին տեսքը բնորոշող մշակման բնույթը, մակատեսք: 3. (առևտր.): Ուղարկված ապրանքների ցուցակը ներկայացնող հաշիվ, ապրանքագիր, հաշվեգիր:

ՖԱԿՈՒԼՏԱՏԻՎ [< факультативный < ֆր. facultatif < լատ. facultas (facultatis) ունակություն, հնարավորություն], ած. Ոչ պարտադիր, կամովին ընտրվող՝ որոշվող, կամընտրական:

ՖԱԿՈՒԼՏԵՏ [< факультет < գերմ. Fakultät < լատ. facultas (facultatis) ունակություն, հնարավորություն], գ. Բարձրագույն ուսումնական հաստատության բաժանմունք, որ միավորում է հարակից գիտությունների ամբողջ խումբը:

ՖԱՅ [< фай < ֆր. faille], գ. (մնծգր.): Մետաքսյա կամ բրդյա խիտ գործվածք:

ՖԱՅԴԵՇԻՆ [< файдешин < ֆր. faille de Chine], գ. (մնծգր.): Բարձրորակ մետաքսյա գործվածք, ֆայի ընտիր տեսակ:

ՖԱՅԼ [< файл < անգլ. file], գ. 1. (հմկրգչ.): Համակարգչային ինֆորմացիայի որոշակիորեն բաժանված և որպես մեկ ամբողջություն վերցվող միավոր: 2. (խսկց.): Նուրբ թղթապանակ (պոլիէթիլենային):

ՖԱՅՏՈՆ [< фаэтон < ֆր. phaeton < հուն. Phaethōn < phaō առկայծել, կայծկլտալ, շողալ], գ. 1. (պատմ.): Ձիակառք: 2. (կենդբ.): Ծովահավ (արևադարձային ծովերի թռչուն): 3. (աստղգ.): Արեգակնային համաստեղության ենթադրյալ մոլորակ, որի պայթյունից առաջացել են մի քանի փոքր մոլորակներ (աստղակերպեր):

ՖԱՆԱՏ(ԻԿ) [< фанатик < լատ. fanaticus մոլի, մոլեգին < fanum < տաճար, եկեղեցի], ած. Մոլեռանդ, ծայրահեղական (անձ), որն իրեն մոլեռանդորեն նվիրել է կա՛մ ինչ-որ մեկի, կա՛մ ինչ-որ գաղափարի:

ՖԱՆԱՏԻԶՄ [< фанатизм < լատ.], գ. Մոլեռանդություն:

ՖԱՆԵՐ(Ա) [< фанера < գերմ. Furnier < ֆր. fournir դնել, վրան դնել], գ. (խսկց.): 1. Փայտի շատ բարակ նուրբ խավ՝ թերթ, որ օգտագործվում է ատաղձագործության մեջ՝ ատաղձագործական շինվածքների մակերեսին կպցնելու և նուրբ մակերես ստեղծելու համար, նրբատախտակ: 2. Այդպիսի թերթերը միասին սոսնձելով պատրաստվող տախտականման փայտանյութ:

ՖԱՆՏ [< фант < լեհ. fant < գերմ. Pfand գրավ], գ. Մի տեսակ խաղ, որի մասնակիցները հանձնում են որոշ իրեր խաղավարին, և խաղավարը այդ իրերը վիճակահանության նման մեկ-մեկ հանում է և առանց ցույց տալու՝ մասնակիցների առաջարկությամբ որոշում, թե հանված իրի տերը ինչ պիտի անի (երգել, պարել, արտասանել ևն):

ՖԱՆՏԱԶԻԱ [< фантазия < հուն. phantasia երևակայում, երևակայություն], գ. 1. Երևակայություն: 2. Երևակայածին տենչ՝ ձգտում՝ երազ, երազանք: 3. Մտացածին՝ անիրական և անիրագործելի բան: 4. (երժշտ.): Իմպրովիզացիոն բնույթի ազատ երաժշտական ստեղծագործություն:

ՖԱՆՏԱԶՅՈՐ [< фантазер < հուն.], գ. ած. (խսկց): Երևակայությունների գերի, երազող, երևակայամոլ:

ՖԱՆՏԱՍՄԱԳՈՐԻԱ [< фантасмагория < հուն. phantasma հատկանիշ, նշան + agoreuō խոսում եմ, ասում եմ], գ. (գրք.): 1. Ուրվատեսիլ, ուրվապատկեր: 2. Ցնորամտություն:

ՖԱՆՏԱՍՏ [< фантаст < հուն. phantastikos երևակայությանը վերաբերող], գ. 1. Ցնորամոլ, երազող, երևակայող: 2. (գրկն.): Ֆանտաստիկ երկեր գրող հեղինակ:

ՖԱՆՏԱՍՏԻԿ [< фантастический < հուն.], ած. 1. Երևակայական, երևակայության պտուղ հանդիսացող: 2. Անիրական, ցնորական: 3. Կախարդական, հեքիաթային: 4. Անհեթեթ, արտասովոր, տարօրինակ: 5. Ֆանտաստիկայի վրա հիմնված, ֆանտաստիկա հանդիսացող:

ՖԱՆՏԱՍՏԻԿԱ [< фантастика < հուն. phantastikē ունակություն երևակայության նկատմամբ], գ. 1. Երևակայածին միտք՝ պատկերացում: 2. Երևույթները՝ իրադարձությունները ևն խիստ չափազանցված ու գերբնական վիճակով պատկերող գեղարվեստական երկ: 3. (հվք.): Այդպիսի երկերի ամբողջությունը որպես գեղարվեստական գրականության և արվեստի բնագավառ: 4. Անիրագործելի՝ անիրական բան:

ՖԱՆՏՈՄ [< фантом < ֆր. fantōme < հուն. phantasma հատկանիշ, նշան], գ. 1. Ուրվական, ուրու: 2. Խրտվիլակ:

ՖԱՆՖԱՐ [< фанфара < իտլ. fanfara], գ. 1. Փողային պղնձե երաժշտական գործիք: 2. Այդ գործիքով տրվող ազդանշան: 3. (երժշտ.): Այդ գործիքով նվագող հանդիսավոր ու մարտաշունչ երաժշտական հատված՝ ֆրազ:

ՖԱՆՖԱՐՈՆ [< фанфарон < ֆր. fanfaron], գ. ած. 1. Սնապարծ, գլուխգովան: 2. Թեթևամիտ՝ անձնապանծ՝ ինքնագով անձ:

ՖԱՇԻԶՄ [< фашизм < իտլ. fascismo], գ. (պատմ.): 1. Իմպերիալիստական բուրժուազիայի ամենաագրեսիվ շրջանակների շահերն արտահայտող ծայրահեղ ռեակցիոն քաղաքական հոսանք, ինչպես և մոնոպոլիստական կապիտալի տեռորիստական դիկտատուրա, որ բնութագրվում է ծայրահեղ շովինիզմով, ռասիզմով,

բոլոր դեմոկրատական ազատությունների վերացումով և զավթողական պատերազմների նախապատրաստումով ու սանձազերծումով: 2. Այդ քաղաքականությունը և դրա գաղափարախոսությունը որդեգրած ազգային-սոցիալիստական կուսակցությունների ընդհանուր անվանումը:

ՖԱՇԻԶԱՑԻԱ [< фашизация < իտլ.], գ. Ֆաշիստականացում:

ՖԱՇԻՆԱ [< фашина < գերմ. Faschine < լատ. fascis հանգույց, կապ], գ. (տեխ.): Ճեղան, ցախակապ, ճեղանատրցակ. օգտագործվում է ճահճի մեջ ճանապարհ գցելու, հողային աշխատանքների ժամանակ ամբարտակների անցքերը փակելու ևն համար:

ՖԱՇԻՍՏ [< фашист < իտլ.], գ. 1. Ֆաշիստական կուսակցության անդամ: 2. Ֆաշիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՖԱՍ [< фасс < գերմ. fassen բռնել], ձայն. Հրամայական բացականչություն շանը՝ բռնիր՛, կծի՛ր իմաստով:

ՖԱՍԱԴ [< фасад < ֆր. façade < իտլ. faccio դեմք], գ. (ճարտ.): Շենքի՝ կառույցի ճակատ:

ՖԱՍԵՏԱՅԻՆ ԱՉՔԵՐ [< фасетные (< ֆր. facette) глаза] - (կենսբ.): Բարդ աչքեր, միջատների, սարդերի, խեցգետնակերպերի տեսողության զույգ օրգան:

ՖԱՍԿԱ [< фаска < ֆր. facette], գ. (տեխ.): Երեսակ, եզրաերեսակ, եզրահատած:

ՖԱՍՈՆ [< фасон < ֆր. façon], գ. (խսկց.): 1. Տարազ՝ ձև, որին համապատասխան մի բան ձևում ու կարում են: 2. *փխբ.* Յուցամոլություն, երևակայություն: 3. *փխբ.* Յուրահատուկ՝ տարօրինակ վարվելակերպ:

ՖԱՍՑԻԱ [< фасция < լատ. fascia շերտ, կապ], գ. (կզմխս.): Փակեղ, բարակ թաղանթ՝ պատյան (մկանի, անոթի ևն):

ՖԱՎՆ(ՈՒՍ) [< фавн(ус) < լատ. Faunus], գ. 1. (դից.): Անտառների ու դաշտերի աստվածը հռոմեական դիցաբանության մեջ, որ անասնապահության հովանավորն էր: 2. (կենդբ.): Ամերիկյան կապիկ, որ գագաթին երկու խոպոպ է կրում:

ՖԱՎՈՐԻՏ [< фаворит < ֆր. favori, favorite < լատ. favor բարեհաճություն], գ. 1. Բարձրաստիճան՝ ազդեցիկ դիրք ունեցող մարդու սիրեցյալ: 2. (սպորտ.): Ում գերադասություն՝ նախապատվություն է տրվում (մրցումների մեջ):

ՖԱՏ [< фат < ֆր. fat < լատ. fatuus հիմար], գ. (խսկց.): 1. Պճնամոլ՝ երևակայող՝ սեթևեթող՝ դատարկ մարդ: 2. (թատր.): Կեցվածքամոլ սիրահարի դեր և այդ դերը կատարող դերասան:

ՖԱՏԱ [< фата < թուրք.] գ. (անհնձն.): 1. Քող, ծածկոց: 2. Շղարշ: 3. Հարսնաքող:

ՖԱՏԱԼԻԶՄ [< фатализм < լատ. fatalis ճակատագրական], գ. Ճակատագրի՝ նախասահմանված և անխուսափելի բախտի հավատ, ճակատագրապաշտություն:

ՖԱՏԱԼԻՍՏ [< фаталист < լատ.], գ. Ֆատալիզմի կողմնակից՝ հետևորդ, ճակատագրի նկատմամբ կույր հավատ ունեցող, ճակատագրապաշտ:

ՖԱՏ(Թ)ՈՒՄ [< фатум < լատ. fatum], գ. (գրք.): Ճակատագիր:

ՖԱՐ [< фара < ֆր. phare Ալեքսանդրիայի մոտ գտնվող Փարոս (Pharos) կղզու անվամբ], գ. (խսկց.): Ավտոմոբիլի՝ շոգեքարշի ևն առաջամասի ցոլարձակ ունեցող լապտեր, ցոլարձակ լապտեր, լուսարձակ:

ՖԱՐԻՆԳԻՏ [< фарингит < հուն. pharynx (pharyngos) կոկորդ, բուկ], գ. (բժշկ.): Ընպանաբորբ:

ՖԱՐՄԱԿՈԳՆՈԶԻԱ [< формакогнозия < հուն. pharmakon դեղ + gnōsis գիտություն, իմացում], գ. (բժշկ.): Դեղագիտություն:

ՖԱՐՄԱԿՈԼՈԳԻԱ [< фармакология < հուն. pharmakon դեղ + logos ուսմունք], գ. (բժշկ.): Դեղաբանություն:

ՖԱՐՄԱԿՈԹԵՐԱՊԻԱ [< фармакотерапия < հուն. pharmakon դեղ + therapeia բուժում], գ. (բժշկ.): Դեղաբուժություն:

«**ՖԱՐՄԱԿՈՊԵԱ**» [< "Фармакопея" < հուն. pharmakopoiia < pharmakon դեղ + poieō անում եմ], գ. Դեղագիրք, պետական վավերացված ձեռնարկ՝ տեղեկատու գիրք, որ բովանդակում է դեղերը պատրաստելու՝ նրանց ստուգման, պահպանման ու բացթողման պարտադիր կանոնները, ինչպես և այն դեղանյութերի ցանկը, որոնք պետք է լինեն դեղատանը:

ՖԱՐՄԱՍ(Զ)ՈՆ [< фармазон < լեհ. farmazon], գ. 1. Ֆարմասոնության հետևորդ՝ կողմնակից, ֆարմասոնական կազմակերպության անդամ: 2. *փխբ.* Նորելուկ ու տարօրինակ գաղափարներով ու բարքերով ընդհանուրի համար խորթացած մարդ:

ՖԱՐՄԱՍ(Զ)ՈՆՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): XVIII դարում Անգլիայում առաջացած և հետագայում Եվրոպայի շատ երկրներում գաղտնի ընկերությունների ձևով տարածված կրոնափիլիսոփայական ուղղություն, որը «բարոյական կատարելագործման» խնդիրները միավորում էր քաղաքական ռեակցիոն հայացքների ու գործունեության հետ (ընկերությունը կրում էր «Ազատ որմնադիրներ» անվանումը):

ՖԱՐՇ [< фарш < ֆր. farce < լատ. farcire լցնել, խորիզել], գ. (խոհր.): Լցոնք, խճողակ:

ՖԱՐՍ [< фарс < ֆր. farce], գ. 1. Զավեշտախաղ, զավեշտ: 2. Ծաղրածություն, խեղկատակություն: 3. *փխբ.* Կեղծավոր՝ որևէ բանի արտաքին ձևավորումը ներկայացնող արարք՝ միջոցառում են:

ՖԱՐՍԻ [< фарси < պարսկ. parsi], գ. (լեզվբ.): Ժամանակակից գրական պարսկերենը՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի հարավարևմտյան խմբի լեզու:

ՖԱՐՎԱՏԵՐ [< фарватер < հոլանդ. vaarwater < vaar մաքուր + water ջուր], գ. (ծով.): 1. Նավարկուղի՝ նավարկման ուղի: 2. Ջրային տարածության նավարկելի՝ բավականաչափ խորություն ունեցող մասը: 3. *փխբ.* Քաղաքական գործունեության ուղղություն՝ ազդեցության ոլորտ ու դիրքորոշում, որին հետևում են:

ՖԱՐՏԻՆԳ [< фартинг < անգլ. farthing], գ. (ֆին.): Անգլիական ամենափոքր մետաղադրամը =1/4 պենսի:

ՖԱՐՏՈՒԿ [< фартук < լեհ. fartuck < նոր վերին գերմ. Vortuch գոգնոց], գ. (խսկց.): 1. Գոգնոց: 2. (տեխ.): Պատյան, շապիկ, ծածկոց: 3. (հնց.): Ոտնածածկոց (կառքի մեջ):

ՖԱՐՖՈՐ [< фарфор < նոր հուն. pharphuri < արաբ.], գ. (խսկց.): Ճենապակի:

ՖԱՑԵՑԻԱ [< фацеция < լատ. facetia հումոր], գ. (գրկն.): Վերածննդի դարաշրջանում՝ հումորային պատմվածք՝ կամ անեկդոտ՝ սրամիտ ավարտով. տարածված էր արևմտաեվրոպական գրականության մեջ:

ՖԱՑԻԱ [< фации < լատ. facies տեսք, կերպարանք, ձև], գ. (երկրբ.): 1. Նստվածքակուտակման ֆիզիկաաշխարհագրական պայմանները (կամ իրադրությունը) միջավայրի բոլոր առանձնահատկություններով: 2. Ապար կամ նստվածք, որն առաջանում է որոշակի ֆիզիկաաշխարհագրական իրադրության մեջ: 3. Լանդշաֆտագիտության մեջ՝ աշխարհագրական լանդշաֆտի տարրական մորֆոլոգիական միավորը, բնասահմանի կառուցվածքային մասը:

ՖԱՈՒՆԱ [< фауна < լատ. Fauna], գ. 1. Կենդանական աշխարհ, որևէ վայրի կամ

երկրաբանական որևէ ժամանակաշրջանի կենդանիների ամբողջությունը: 2. Տե՛ս Ֆավն:

ՖԱՈՒՍՏՓԱՄՓՈՒՇՏ [< фаустпатрон < գերմ. Faustpatrone], գ. (ռազմ.): Ձեռքի ռեակտիվ արկ, որ բաղկացած է ականից և երկու կողմից բաց փողից:

ՖԱՔՍ [< факс < լատ.], գ. Տե՛ս Ֆաքսիմիլե:

ՖԱՔՍԻՄԻԼԵ [< факсимиле < լատ. fac simile արա նույնը՝ նմանը], գ. (տեխ.): 1. Ֆոտոմեխանիկական վերարտադրությամբ հանվող ճշգրիտ պատճեն՝ արտապատկերում (ձեռագրի, նկարի ևն): 2. Այդ եղանակով հանված պատճեն: 3. Ժամանակակից կապի միջոց:

ՖԵԴԵՐԱԼ [< федеральный < ֆր. < լատ.], ած. Նույնն է՝ Ֆեդերատիվ:

ՖԵԴԵՐԱԼԻԶՄ [< федерализм < ֆր. fédéralisme < լատ. foedus միություն], գ. 1. Պետական կառուցվածքի ֆեդերատիվ համակարգ, դաշնություն: 2. Ֆեդերատիվ համակարգի՝ ձգտող հոսանք՝ ուղղություն:

ՖԵԴԵՐԱԼԻՍՏ [< федералист < ֆր. < լատ.], գ. Ֆեդերալիզմի կողմնակից՝ հետևորդ:

ՖԵԴԵՐԱՏԻՎ [< федеративный < ֆր. < լատ.], ած. 1. Ֆեդերալիզմի սկզբունքով կառուցված՝ կազմված: 2. Ֆեդերացիա հանդիսացող:

ՖԵԴԵՐԱՏՆԵՐ [< федераты < լատ. foederati < foedus դաշինք, պայմանագիր], գ. (պատմ.): 1. Հռոմի հետ դաշինքով կապված համայնքներ, որոնք սովորաբար անվանվել են դաշնակիցներ: 2. Հռոմեացիների մոտ, կայսրության սահմաններում ծառայող բարբարոսական ցեղեր, որոնք բնակության համար ստացել են սահմանամերձ հողեր և ռոճիկ: 3. Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ժամանակ հեղափոխությունը ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու համար ստեղծված կամավորական զորամիավորումների անդամներ:

ՖԵԴԵՐԱՑԻԱ [< федерация < ֆր. fédération միություն, միավորում], գ. 1. Միավորում, դաշնակցություն, դաշինք: 2. Մեկ պետական միասնական ամբողջության մեջ միավորված ինքնուրույն պետությունների դաշնակցային պետություն՝ կառավարություն: 3. Զանազան ինքնուրույն կազմակերպությունների՝ ընկերությունների միավորում՝ միություն:

ՖԵԵՐԻԱ [< феерия < ֆր. féerie < fée փերի, կախարդուհի], գ. (թատր.): 1. Թատրոնում՝ հեքիաթային շքեղ, շլացուցիչ ներկայացում՝ բեմադրական էֆեկտներով լուսային խայտաբղետ խաղերով, հրապուրիչ երաժշտությամբ, տեսարանների կախարդական այլափոխություններով: 2. Կրկեսային շքեղ հանդիսանք՝ կախարդական պատկերումներով:

ՖԵԼԴՄԱՐՇԱԼ [< фельдмаршал < գերմ. Feldmarschall < Feld դաշտ + Marschall մարշալ], գ. (պատմ.): Ռուսական մինչհեղափոխական բանակի և արտասահմանյան մի քանի երկրների բանակների բարձրագույն գեներալական տիտղոսը, ինչպես և այդ տիտղոսը ունեցող զինվորական:

ՖԵԼԴՄԱՐՇԱԼԱԿԱՆ, ած. Ֆելդմարշալին հատուկ:

ՖԵԼԴՇԵՐ [< фельдшер < գերմ. Feldscher], գ. (խսկց.): Բուժակ:

ՖԵԼԴՖԵԲԵԼ [< фельдфебель < գերմ. Feldwebel < Feld դաշտ + Weibel դատական կատարածու], գ. (պատմ.): Վաշտի հրամանատարի տնտեսական և ներքին կարգուկանոնի գծով օգնական ցարական բանակում, վերակա:

ՖԵԼԵՄԱ [< феллема < հուն. fellos խցան], գ. (բսբ.): Բույսերի խցանահյուսվածք:

ՖԵԼԶԻՏ [< фельзит < գերմ. Felsit], գ. (հնք.): Թթու էֆուզիվ ապարների հիմնական մանրահատիկ զանգվածը. կազմված է կալիումական դաշտային ապարից և քվարցից:

ՖԵԼԻԵՏՈՆ [< фельетон < ֆր. feuilleton < feuille թերթիկ], գ. 1. (գրկն.): Հրատապ հարցերի նվիրված և ծաղրական բնույթի լրագրային կամ ամսագրային հոդված, որում սուր քննադատության են ենթարկվում կյանքի այլանդակությունները՝ թերությունները: 2. Լրագրի կամ հանդեսի այն բաժինը, որտեղ տպագրվում են այդպիսի հոդվածները, թերթոն:

ՖԵԼԻԵՏՈՆԻՍՏ [< фельетонист < ֆր.], գ. Ֆելիետոններ գրող:

ՖԵԼԻՆՈԼՈԳԻԱ [< фелинология < լատ. felīnus կատվային + հուն. logōs գիտություն], գ. (կենդբ.): Գիտություն տնային կատուների մասին:

ՖԵԼԼԱՀ [< феллах < ֆր. fellah < արաբ. fallâh հողագործ], գ. (հզվդ.): Գյուղացի հողագործ արաբական երկրներում:

ՖԵԼՅԱՆՆԵՐ (ՖԵՅՅԱՆՆԵՐ) [< фельяны < ֆր. feuillants], գ. (պատմ.): Քաղաքական խմբավորում Ֆրանսիայում ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ժամանակ:

ՖԵԼՅՈՒԳԱ [< фелюга < իտլ. feluca], գ. (ծով.): Փոքր առագաստանավ Սև ծովում:

ՖԵԼՈԳԵՆ [< феллоген < հուն. phellos խցան + գեն], գ. (բսբ.): Խցանային կամբիում, բույսերի երկրորդային գոյացնող հյուսվածք:

ՖԵԼՈԴԵՐՄ [< феллодерма < հուն. phellos + derma մաշկ], գ. (բսբ.): Բույսերի պերիդերմի ներքին շերտը, որն առաջանում է ֆելոգենի բջիջների կիսման հետևանքով:

ՖԵՄԻԴԱ [< Фемида < հուն. Themis (Themidos)],
գ. 1. (դից.): Թեմիս՝ արդարադատության աստվածուհին հին հունական դիցարանում. պատկերվում է ժապավենով փակված աչքերով (որպես անաչառության խորհրդանիշ), մի ձեռքին՝ կշեռք, մյուսին՝ թուր: 2. *փխբ.* Արդարադատություն:

ՖԵՄԻՆԻԶԱՑԻԱ [< феминизация < լատ. femina կին, էգ < ֆր. féminisation], գ. (խսկց.): 1. Կանացիացում, իգականացում, արական սեռի անհատների օրգանիզմում իգական երկրորդային սեռական հատկանիշների ի հայտ գալը: 2. Հասարակության մեջ կանանց դերի և ազդեցության մեծացում:

ՖԵՄԻՆԻԶՄ [< феминизм < ֆր. féminisme < լատ. femina կին], գ. (քղբ.): Կանանց իրավահավասարության (տղամարդկանց հետ) ձգտող շարժումների ընդհանուր անվանումը:

ՖԵՅԱ [< фея < ֆր. fe´e < լատ. fatum բախտ], գ. (գրբ.): 1. (դից.): Հավերժահարս, փերի: 2. (խսկց.): Սիրած կին, գեղեցկուհի:

ՖԵՅԵՐՎԵՐԿ [< фейерверк < գերմ. Feuerwerk < Feuer կրակ + Werk գործ], գ. (խսկց.): 1. Հրավառություն, հրախաղություն: 2. Հրթիռ, հրավառելիք: 3. Համատարած լուսահեղեղ՝ հրավառություն:

ՖԵՅԽՈԱ [< фейхоа < իսպ. Feijoa < XIX դ. իսպանացի բուսաբան Գ. դե Սիլվա Ֆեյխոայի (G. de Silva Feijoa) անունից], գ. (բսբ.): Մշտադալար թուփ մրտազգիների ընտանիքից և դրա ուտելի պտուղը՝ անանասի և մորու համով:

ՖԵՆ [< фен < անգլ. fan հովհար], գ. (տեխ.): 1. Էլեկտրական օդամղիչ: 2. (խսկց.): Մազեր չորացնող էլեկտրական գործիք, վարսահարդարիչ:

ՖԵՆԱՑԵՏԻՆ [< фенацетин < ֆենոլ + լատ. acetum քացախ], գ. (դզգրծ.): Ջերմիջույց և ցավամոքիչ դեղամիջոց:

ՖԵՆԻՔՍ [< феникс < հուն. phoinix], գ. (խսկց.): 1. Փյունիկ՝ մի քանի հին ժողովուրդների դիցաբանության մեջ՝ ինքն իրեն այրելու և կրկին կենդանանալու հատկությամբ օժտված առասպելական թռչուն: 2. *փխբ.* Գեղարվեստական գրականության մեջ գործածվում է որպես հավերժական վերանորոգման՝ վերակենդանացման խորհրդանիշ:

ՖԵՆՈԼ [< фенол < հուն. phainō ներկայացնում եմ + լատ. ol(eum) յուղ], գ. (քիմ.): Օրգանական նյութ, որ ներկայացնում է բենզոլի ածանցյալը:

ՖԵՆՈԼՈԳ [< фенолог < հուն.], գ. Ֆենոլոգիայի մասնագետ, բնապարբերագետ:

ՖԵՆՈԼՈԳԻԱ [< фенология < հուն. phainō ներկայացնում եմ, հանդիսանում եմ + logos ուսմունք], գ. (գիտ.): Կենսաբանության մի բաժինը, որ ուսումնասիրում է բույսերի ու կենդանիների կյանքի այն պարբերական երևույթները, որոնք կապված են տարվա եղանակների հաջորդականության հետ (ծառերի ծաղկման՝ թռչունների չվելու ժամանակը են), բնապարբերագիտություն:

ՖԵՆՈՄԵՆ [< феномен < հուն. phainomenon հանդիսացող, ներկայացող], գ. 1. Ընդհանրապես՝ երևույթ: 2. Մասնավորապես՝ բացառիկ, արտասովոր երևույթ՝ դեպք՝ իրողություն: 3. Արտակարգ ընդունակություններով՝ ձիրքով մարդ: 4. (փիլ.): Իդեալիստական փիլիսոփայության մեջ՝ զգայորեն ընկալվող երևույթը ի հակադրություն « ինքնին իրի», որ անիմանալի է համարվում:

ՖԵՆՈՄԵՆԱԼ [< феноменальный < հուն.], ած. 1. Բացառիկ, արտասովոր, արտակարգ: 2. (փիլ.): Զգայելու՝ երևույթը զգայապես ընկալելու հետ կապված:

ՖԵՆՈՄԵՆԱԼԻԶՄ [< феноменализм < հուն.], գ. (փիլ.): Սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայական ուղղություն, որ ժխտում է օբյեկտիվ աշխարհի ճանաչողությունը և միակ հնարավորն է համարում ֆենոմենների ճանաչումը, բացառիկություն:

ՖԵՆՈՄԵՆԱԼԻՍՏ [< феноменалист < հուն.], գ. Ֆենոմենալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱ [< феноменология < հուն. phainomenon հանդիսացող, ներկայացնող + logōs գիտություն], գ. (փիլ.): 1. Իդեալիստական փիլիսոփայության մեջ՝ երևույթների մտահայեցական նկարագրություն այնպես, ինչպես նրանք տրված են վերացական մտահայեցումների մեջ: 2. Հեգելի փիլիսոփայության մեջ՝ գիտակցության (ոգու) զարգացման ուսմունքը:

ՖԵՆՈՏԻՊ [< фенотип < հուն. phainō ներկայացնում եմ + հուն. typos], գ. (գիտ.):

Օրգանիզմի անհատական զարգացման ընթացքում կազմավորված հատկությունների ու հատկանիշների ամբողջությունը:

ՖԵՈԴ [< феод < ուշ լատ. feodum, feudum], գ. (պատմ.): Արևմտյան Եվրոպայի երկրներում միջին դարերում հողատիրույթ կամ հաստատագրված եկամուտ, որ ստանում էր վասալը իր տիրոջից որոշակի ծառայությունների դիմաց:

ՖԵՈԴԱԼ [< феодал < միջին լատ. feodalis], գ. 1. Ֆեոդալական հասարակարգում՝ տիրող դասակարգի ներկայացուցիչ: 2. Կալվածատեր, ազնվական, ավատատեր:

ՖԵՈԴԱԼԻԶՄ [< феодализм < լատ.], գ. (պատմ.): Կապիտալիզմին նախորդած հասարակարգ, որ հիմնված էր արտադրության միջոցների ֆեոդալական սեփականատիրության և գյուղացի-հողագործների ոչ լրիվ սեփականության վրա՝ ճորտական կախման ձևով, ավատատիրություն:

ՖԵՍՏԻՎԱԼ [< фестиваль < ֆր. festival < լատ. festivus տոնական, ուրախական], գ. (խսկց.): Փառատոն, տոնակատարություն, արվեստատոն:

ՖԵՏԻՇ [< фетиш < ֆր. fe´tiche < պորտ. feitiço հմայիլ, հուռութք], գ. 1. (պատմ.): Նախնադարյան ժողովուրդների մոտ՝ իբր գերբնական-մոգական ուժով օժտված և դրա շնորհիվ պաշտամունքի արժանացած առարկա՝ իր: 2. Կույր հավատի՝ պաշտամունքի առարկա, բոլորի պաշտամունքի առարկա դարձած մարդ՝ երևույթ՝ իր:

ՖԵՏԻՇԻԶՄ [< фетишизм < ֆր. fétichisme < պորտ.], գ. 1. Անշունչ առարկաների և բնության երևույթների պաշտամունք: 2. *փխբ.* Որևէ բան կուրորեն պաշտելը, որևէ բան աստվածացնելը, աստվածացում:

ՖԵՏԻՇԻՍՏ [< фетишист < ֆր.], գ. Ֆետիշիզմի հետևորդ, ֆետիշների պաշտամունք ունեցող:

ՖԵՏՐ [< фетр < ֆր. feutre թաղիք], գ. (մնծգր.): Բարձրորակ և նուրբ թաղիք, որ օգտագործում են գլխարկներ՝ վալենկաներ ևն պատրաստելու համար:

ՖԵՐԶ [< ферзь < թուրք. Färz < պարսկ. ferz զորահրամանատար], գ. (սպորտ. խսկց.): Շախմատում՝ թագուհի (ամենաուժեղ ֆիգուրը):

ՖԵՐԻՏԻՆ [< ферритин < լատ. ferrum երկաթ], գ. (կենսբ.): Լյարդի, փայծաղի, ոսկրածուծի և այլ հյուսվածքների երկաթ պարունակող բարդ սպիտակուց:

ՖԵՐԻՏՆԵՐ [< ферриты < լատ.], գ. Անցումային մետաղների կոմպլեքս օքսիդները երկաթի (Fe_2O_3) և այլ օքսիդների հետ:

ՖԵՐՄԱ I [< ферма < ֆր. ferme], գ. 1. (պատմ.): Անասնապահության որևէ բնագավառով զբաղվող մասնագիտացված տնտեսություն: 2. Սեփական կամ վարձակալական հողերում ստեղծված գյուղատնտեսական ձեռնարկություն՝ տնտեսություն՝ ագարակ:

ՖԵՐՄԱ II [< ферма < ֆր. ferme], գ. (մսնգ.): Միմյանց միացած ձողերից ինժեներական կառուցվածք:

ՖԵՐՄԱՏԱ [< фермата < իտլ. fermata, բառացի՝ կանգառ, դադար], գ. (երժշտ.): 1. Երկարանիշ, դադարանիշ (⊙): 2. Երկարացում (ձայնի կամ դադարի):

ՖԵՐՄԵՆՏ [< фермент < լատ. fermentum թթվեցում, խմորում, մակարդում], գ.

(կենսբ.քիմ.): Կենդանի բջջի կողմից մշակվող և մարմնի մեջ տեղի ունեցող քիմիական ռեակցիաներին նպաստող օրգանական նյութ, խմորիչ:

ՖԵՐՄԵՆՏԱՑԻԱ [< ферментация < լատ. fermentare խմորում առաջ բերել], գ. Խմորում, մակարդում:

ՖԵՐՄԵՆՏԱՑԻՈՆ [< ферментационный < լատ.], ած. 1. Ֆերմենտացիային հատուկ: 2. Ֆերմենտացիայի միջոցով մշակելով զբաղվող, խմորումով մշակման ենթարկվող:

ՖԵՐՄԵՐ [< фермер < անգլ. farmer < farm ագարակ], գ. Ֆերմայի տեր, ագարակատեր:

ՖԵՐՄԻ [< ферми < Իտալացի ֆիզիկոս Էնիկո Ֆերմիի (Fermi) անունից], գ. (ֆիզ.): Ատոմային միջուկի չափման միավոր = միլիոներորդական միլիմետրի մեկ հազարերորդական մասը:

ՖԵՐՄԻՈՒՄ [< фермиум < լատ. fermium], գ. (քիմ.): Fm, տարրերի տարբերական համակարգի VII պարբերություն, III խմբի քիմիական տարր, կարգահամարը՝ 100: Արհեստականորեն ստացված ռադիոակտիվ տարր է:

ՖԵՐՈ... [< феррo < լատ. ferrum երկաթ] Գործածվում է որոշ բաղադրյալ բառերում որպես սկզբնաբաղադրիչ՝ երկաթ նշանակությամբ:

ՖԵՐՈՒԼԱ [< ферула < լատ. ferula ճիպոտ], գ. 1. (պատմ.): Ծեծաքանոն, պատժաքանոն, որով խփում էին դպրոցականների ափերին, դաստակին: 2. (գրք.): Ճնշող և արթուն հսկողություն:

ՖԹԻԶԻԱՏՐԻԱ [< фтизиатрия < հուն. phthisis հյուծախտ, բարակացավ, թոքախտ + iatreia բուժում], գ. (բժշկ.): Կլինիկական բժշկության բաժին, որն ուսումնասիրում է տուբերկուլյոզի հարուցիչի ձևաբանական և կենսաբանական առանձնահատկությունները և պայքարը դրա դեմ:

ՖԻԱՍԿՈ [< фиаско < իտալ. fiasco], գ. Լիակատար ձախողանք՝ անհաջողություն, ձախողում:

ՖԻԲՐ [< фибра < լատ. fibra թելիկ, մազաթել, նրբաթել], գ. 1. Նյարդ: 2. (տեխ.): Քիմիական մշակման ենթարկված և մամլված թղթե հաստ և ճկուն շերտ (օգտագործվում է որպես մեկուսիչ և ճամպրուկներ պատրաստելու նյութ):

ՖԻԲՐԻՆ [< фибрин < լատ. fibra թելիկ, մազաթել, նրբաթել], գ. (բնխս.): Չտարրալուծվող սպիտակուցային նյութ, որ առաջ է գալիս արյան մակարդման ժամանակ և հատկանշվում է թելերի կծիկի ձևով՝ տեսքով:

ՖԻԲՐՈԼԻ(Թ)Տ [< фибролит < լատ. fibra թելիկ + հուն. lithos քար], գ. (մսնգ.): Շինանյութ, որ ստացվում է ցեմենտի և մշակված փայտյա տաշեղներ խառնուրդից:

ՖԻԲՐՈՄԱ [< фиброма < լատ. fibra թելիկ + հուն. ...oma վերջավորություն ուռուցքների անվանումներում], գ. (բժշկ.): Բարորակ թելուռուցք:

ՖԻԲՐՈՄԻՈՄԱ [< фибромиома < լատ. fibra թելիկ + հուն. mys մկան +... oma վերջավորություն ուռուցքների անվանումներում], գ. (բժշկ.): Թելքամկանային ուռուցք:

ՖԻԳՈՒՐ(Ա) [< фигура < լատ. figura պատկեր, կերպար, կերպարանք], գ. 1. Որևէ բանի արտաքին տեսք՝ կերպարանք: 2. Մարդու կազմվածք: 3. Առարկայի կամ նրա մասերի դասավորությամբ ձևացրած բան (պատկեր, մարմին ևն): 4. Շարժման (քայլելու, պառկելու ևն) ժամանակ ընդունած դիրք: 5. (լեզվբ.): Ոճ, արտահայտություն, դարձվածք: 6. (երժշտ.): Երաժշտական ստեղծագործությունը հարստացնող ու զարդարող ռիթմային-մեղեդիական տարր: 7. Քանդակագործության ու գեղանկարչության մեջ՝ մարդու կամ կենդանու պատկեր՝ քանդակ: 8. (թատր.): Կերպար: 9. *փխբ.* Նշանավոր՝ անվանի մարդ: 10. Խաղաթղթի մեծ քարերը (մեկանոց, թագավոր, աղջիկ, զինվոր): 11. Շախմատի քար: 12. (մաթ.): Փակ գծով սահմանափակված հատված հարթության վրա, ինչպես և որոշակիորեն՝ որոշ կարգով դասավորված կետերի՝ գծերի՝ մակերեսների ևն ամբողջությունը:

ՖԻԳՈՒՐԱՑԻԱ [< фигурация < լատ. figuratio կերպար, կերպարային շարադրանք], գ. (երժշտ.): Երաժշտական նյութի մշակման մեթոդ, որ ֆակտուրային միջոցներով նպաստում է այդ նյութի դինամիկական զարգացմանը:

ՖԻԳՈՒՐԻՍՏ [< фигурист < լատ.], գ. (սպորտ.): Սառույցի վրա բարդ մարմնամարզական ֆիգուրներ (4) կատարող մարմնամարզիկ:

ՖԻԴԵԻԶՄ [< фидеизм < ֆր. fidéisme < լատ. fides հավատ], գ. (փիլ.): Իդեալիստական ուղղություն փիլիսոփայության մեջ, որ ճանաչողությունը փոխարինում է հավատով՝ գիտությունը ենթարկելով կրոնին:

ՖԻԴԵԻՍՏ [< фидеист < ֆր. < լատ.], գ. Ֆիդեիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՖԻԴԵԼ [< фидел < գերմ. Fiedel], գ. (երժշտ.): Լարային աղեղնավոր երաժշտական գործիք, որը տարածված է եղել VIII-XIV դդ. Արևմտյան Եվրոպայում թափառական երաժիշտների շրջանում:

ՖԻԴԵՐ [< фидер < անգլ. feeder < feed սնել, սնուցել], գ. (մսնգ.): Էլեկտրաէներգիան սնուցիչ կետերին կամ ռադիոընդունիչը օդալարին միացնող հաղորդալար:

ՖԻԴՈՒՑԻԱ [< фидуция < լատ. fiducia համոզվածություն, ապահովություն], գ. (առևտր. իրավք.): Գործարք՝ պայմանագիր՝ հիմնված վստահության վրա:

ՖԻԵՍՏԱ [< фиеста < իսպ. fiesta տոն < լատ. festivus ուրախ, տոնական], գ. Իսպանիայում և Լատինական Ամերիկայում՝ տոնահանդես, որը ուղեկցվում է փողոցային տոնախմբությամբ, դիմակահանդեսով, մասսայական երթերով, երգով ու պարով:

ՖԻԶԻԱՏՐԻԱ [< физиатрия < գերմ. Fhysiatrie < հուն. physis բնություն + iatreia բուժում], գ. (բժշկ.): Ֆիզիկական մեթոդներով (լույս, ջերմություն, էլեկտրականություն ևն) բուժում: Տե՛ս Ֆիզիոթերապիա:

ՖԻԶԻԿ [< физик < հուն.], գ. (խսկց.): Ֆիզիկոս՝ ֆիզիկայի մասնագետ:

ՖԻԶԻԿԱ [< физика < հուն. physikē < physis բնություն], գ. 1. Նյութի առավել ընդհանուր հատկությունների ու կառուցվածքի և նրա շարժման հիմնական ձևերի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն: 2. Բնության երևույթների՝ նյութերի ևն ֆիզիկական ուսումնասիրություն:

ՖԻԶԻԿՈՍ], գ. Տե՛ս Ֆիզիկ (1):

ՖԻԶԻՈԹԵՐԱՊԵՎՏ [< физиотерапевт < հուն.], գ. (բժշկ.): Ֆիզիոթերապիայի մասնագետ:

ՖԻԶԻՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ [< физиотерапевтический < հուն.], ած. (բժշկ.): Ֆիզիոթերապիային՝ ֆիզիոթերապևտին հատուկ՝ վերաբերող:

ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ [< физиотерапия < հուն. physis բնություն + therapeia բուժում], գ. (բժշկ): Ֆիզիկական՝ բնական երևույթների օգնությամբ բուժելը, լույսով՝ էլեկտրականությամբ՝ ջրով ևն բուժման միջոցներն ու եղանակները:

ՖԻԶԻՈԼՈԳ [< физиолог < հուն.], գ. Բնախոս:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱ [< физиология < հուն. physis բնություն + logos բան, ուսմունք], գ. Բնախոսություն՝ մարդու և կենդանիների, օրգանիզմների կենսագործունեությունը, նրանց առանձին համակարգերը, օրգանները, հյուսվածքները և ֆիզիոլոգիական ֆունկցիաներն ուսումնասիրող գիտություն:

ՖԻԶԻՈԿՐԱՏ [< физиократ < ֆր. physiocrates < հուն. physis բնություն + kratos իշխանություն, կառավարություն], գ. Ֆիզիոկրատական ուսմունքի հետևորդ՝ կողմնակից:

ՖԻԶԻՈՆՈՄԻԱ [< физиономия < ֆր. physionomie < հուն. physis բնություն + gnōmōn գիտակցող, իմացող], գ. (խսկց.): 1. Դիմագիծ: 2. Դեմքի արտահայտություն: 3. *փխբ.* Բնութագիր, բնույթ, բնորոշ գծերի՝ հատկությունների ամբողջությունը:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ [< ռուս. физкультура], գ. Ֆիզիկական կուլտուրա:

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐՆԻԿ [< ռուս. физкультурник], գ. (սպորտ.): Պարբերաբար կամ որպես պրոֆեսիոնալ՝ սպորտով՝ մարմնամարզությամբ զբաղվող անձ, մարմնամարզիկ:

ՖԻԹՆԵՍ [< фитнес < անգլ. fitness համապատասխանություն], գ. (խսցկ.): Սպորտային վարժությունների համալիր, որ նպատակաուղղված է մարմնի բարեձևությանն ու զարգացմանը:

ՖԻԼԱՆՏՐՈՊ [< филантроп < հուն. philanthrōpos], գ. ած. 1. Մարդասեր: 2. Բարեգործ:

ՖԻԼԱՆՏՐՈՊԻԱ [< филантропия < հուն. philanthrōpia < phileō սիրում եմ և anthrōpos մարդ], գ. 1. Մարդասիրություն: 2. Բարեգործություն:

ՖԻԼԱՏԵԼԻԱ [< филателия < հուն. phileō սիրում եմ + telos], գ. Նամականիշ-

ների հավաքածու կազմելը:

ՖԻԼԱՏԵԼԻՍՏ [< филателист < հուն.], գ. Ֆիլատելիայով զբաղվող անձ:

ՖԻԼԴԵԿՈՍ [< фильдекос < ֆր. fil d'Écosse շոտլանդական թել], գ. (մնծգր.): 1. Բամբակե ոլորած թել, որ մետաքսի փայլ ունի: 2. Այդպիսի թելից հյուսած գործվածք:

ՖԻԼԵ I [< филе < ֆր. filet], գ. 1. Սուկի՝ ողնաշարի անոսկր միս: 2. Ձկան սուկի:

ՖԻԼԵ II [< филе < ֆր. filet], գ. Ցանցային ասեղնագործություն, նախշակար, ցանցակար գործվածք:

ՖԻԼԻԱԼ [< филиал < լատ. filialis որդիական], գ. (խսկց.): Մեծ հիմնարկության՝ ընկերության ևն որոշ ինքնուրույնություն ունեցող բաժանմունք, մասնաճյուղ:

ՖԻԼԻԱՑԻԱ [< филиация < ֆր. filiation < լատ. filialis որդիական], գ. (իրավք.): Քաղաքացիության ձեռքբերում տվյալ երկրում ծնվելու շնորհիվ:

ՖԻԼԻԳՐԱՆ [< филигрань < ֆր. filigrane < իտլ. filigrana < լատ. filum դերձան + graneus հատիկավոր], գ. 1. Ցանցահյուսազարդ՝ ժանյակ հիշեցնող (ոսկուց, արծաթից և այլ մետաղալարից), լարահյուս ոսկերչական զարդ: 2. Ջրանշան: 3. Ջրանշանով թուղթ:

ՖԻԼԻՊԻԿ(Ա) [< филиппика < հուն. philippika հույն հռետոր Դեմոսթենեսի՝ մակեդոնական արքա Ֆիլիպի դեմ ուղղված քաղաքական ճառերի անվանումից], գ. Անողոքաբար մերկացնող ճառ՝ ելույթ մեկի դեմ:

ՖԻԼԻՍՏԵՐ [< филистер < գերմ. Philister], գ. (արհմրհ.): Նեղ մտահորիզոնի ու քաղքենիական բարքերի տեր մարդ, փարիսեցի, քաղքենի:

ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ [< филармония < հուն. phileō սիրում եմ + harmonia ներդաշնակություն, բարեհնչյունություն], գ. Երաժշտական արվեստի մասսայականացմամբ ու համերգների կազմակերպմամբ զբաղվող ընկերություն կամ հիմնարկություն:

ՖԻԼՄ [< фильм < անգլ. film, բառացի՝ ժապավեն], գ. (կինո.): Կինոնկար:

ՖԻԼՈԳԵՆԵԶ [< филогенез < հուն. phylē ցեղ, սեռ, տեսակ + genesis ծագում], գ. (կենսբ.): Կենսաբանական տեսակի պատմական զարգացման՝ էվոլյուցիայի ընթացքը: Տերմինը ներմուծել է 1866 թ. Է. Հեկկելը:

ՖԻԼՈԼՈԳ [< филолог < հուն.], գ. (հնց.): Բանասեր, բանասիրության մասնագետ:

ՖԻԼՈԼՈԳԻԱ [< филология < հուն. phileō սիրում եմ + logos բան, բառ], գ. (հնց.): Բանասիրություն:

ՖԻԼՈԿԱՐՏԻԱ [< филокартия < հուն. phileō սիրում եմ + ֆր. carte բացիկ], գ. Գեղարվեստական բացիկների հավաքածու կազմելը:

ՖԻԼՈՍՈՖԻԱ [< философия < գերմ. Philosophie < հուն. phileō սիրում եմ + sophia իմաստություն], գ. (հնց.): 1. Փիլիսոփայություն, իմաստասիրություն: 2. Տեսություն, տեսական սկզբունքների ամբողջություն: 3. փխբ. Փիլիսոփայություն, ըմբռնում, համոզմունքներ: 4. *փխբ.* Փիլիսոփայական դատողություններ:

ՖԻԼՈՔՍԵՐԻԱ [< филлоксера < հուն. phyllon թերթ + xeros չոր], գ. 1. Որթալվիճ: 2. *փխբ.* Վնասատու, որևէ բնագավառի համար վնասատու մարդ:

ՖԻԼՏՐ [< фильтр < ֆր. filtre < նոր լատ. filtrum թաղիք, կաճ], գ. 1. Հեղուկը քամելու՝ թորելու անոթ՝ նյութ ևն, քամիչ, պարզուտ, զտիչ: 2. (մսնգ.): Որևէ կարգի ճառագայթների՝ հոսանքի ևն արգելակման՝ խափանման սարք:

ՖԻԼՏՐԱՏ [< фильтрат < ֆր. < նոր լատ.], գ. Ֆիլտրով անցկացրած ու թորած հեղուկ:

ՖԻԼՏՐԱՑԻԱ [< фильтрация < ֆր. < նոր լատ.], գ. 1. Քամելը, թորելը: 2. Հեղուկի

բնականորեն ծծվելը՝ ներծծվելը ծակոտկեն նյութերի մեջ և քամվելը, զտվելը:

ՖԻԼՈՒՄԵՆԻԱ [< филумения < գերմ. Fhillumenie < հուն. phileō սիրում եմ + լատ. lumen լույս, կրակ], գ. Լուցկու տուփերի պիտակներից հավաքածու կազմելը:

ՖԻԿՏԻՎ [< фиктивный < ֆր. fictif < լատ. fictio անհեթեթություն, մտացածին բան], ած. Պատրանքային, անիրական, մտացածին, կեղծ, շինծու:

ՖԻԿՑԻԱ [< фикция < լատ. fictio հորինվածք, մտացածին բան], գ. Պատրանք, մտացածին՝ անիրական բան:

ՖԻԿՈՒՍ [< фикус < լատ. ficus թզենի], գ. 1. (բսբ.): Թթազգիների ընտանիքին պատկանող արևադարձային ծառ կամ փաթաթվող բույս: 2. Այդ բույսերի ցեղին պատկանող սենյակային գեղազարդային բույս:

ՖԻՆԱԼ [< финал < իտլ. finale < լատ. finalis վերջին, վերջնական], գ. 1. Վերջ, ավարտ: 2. *փխբ.* Որևէ բանի վերջը՝ վախճանը ներկայացնող երևույթ՝ հանգամանք են: 3. (սպորտ.): Մրցախաղերի եզրափակիչ փուլ, եզրափակիչ մրցախաղ:

ՖԻՆԱԼԻՍՏ [< финалист < իտլ.], գ. Մրցախաղի ֆինալին՝ եզրափակիչ փուլին մասնակցող (թիմ, մարզիկ են):

ՖԻՆԱՆՍ [< финансы < ֆր. finance < միջին լատ. financia եկամուտ, հասույթ, կանխիկ գումար], գ. 1. (առավելապես հոգնակի): Պետական դրամական միջոցների և դրամական գործառնությունների ամբողջությունը: 2. *փխբ.* Փող, դրամ, դրամական միջոցներ:

ՖԻՆԱՆՍԻՍՏ [< финансист < ֆր., միջին լատ.], գ. 1. Տնտեսագետ: 2. Դրամական խոշոր գործարքներ ու գործառնություններ կատարող կապիտալիստ, (արևմտհ.): Եկամտագետ:

ՖԻՆԻՇ [< финиш < անգլ. finish, բառացի՝ վերջավորություն], գ. 1. Արագության մրցման եզրափակիչ մասը՝ հատվածը: 2. Այդպիսի մրցության տարածքի վերջնագիծը, վերջնահարկ: 3. *փխբ.* Որևէ բանի ավարտական՝ վերջին մասը, վերջը:

ՖԻՆՆԱ [< финна < գերմ. Finne], գ. (կենսբ.): Երիզորդի թրթուր:

ՖԻՆՏ [< финт < իտլ. finta մտացածին բան], գ. 1. (խսկց. սպորտ.): Կեղծ շարժում՝ հարձակում: 2. (հնց.): Խորամանկություն, խուսափանք:

ՖԻՇԿԱ [< ռուս. фишка < ֆր. fiche ցցիկ, բրիկ, բացիկ], գ. (խսկց.): Խաղալիք, խաղահաշվի նիշ:

ՖԻՈՐԴ [< фиорд, фьорд < նորվեգ. fjord], գ. Ժայռոտ ափերով նեղ ծովածոց:

ՖԻՈՐԻՏՈՒՐԱ [< фиоритура < իտլ. fioritura, բառացի՝ ծաղկունք], գ. (երժշտ.): 1. Գեղգեղանք: 2. *փխբ.* (արհմրհ.): Փքուն՝ ճոռոմ դարձվածք, ճոռոմաբանություն:

ՖԻՌՆ [< фирн < գերմ. Firn], գ. (երկրբ.): Խոշորահատիկ ձյուն:

ՖԻՍԿԱԼ [< фискал < լատ. fiscalis պետական], գ. ած. 1. (խսկց.): Մատնիչ, լրտես, զրպարտիչ, բանսարկու: 2. (պատմ.): Վերահսկիչ, պետական հաստատությունների գործունեությունը վերահսկող պաշտոնյա (XVIII դ. Ռուսաստանում):

3. ած. (տնտսգ.): Գանձարանային, պետական գանձարանի՝ պետական, հարկաբյուջետային:

ՖԻՍՀԱՐՄՈՆԻԱ [< фисгармония < գերմ. Fisharmonium], գ. (երժշտ.): Հարմոն (երաժշտական գործիք):

ՖԻՍՏԱՇԿԱ [< фисташка < ֆր. pistache < հուն. pistakion], գ. 1. (բսբ.): Պիստակենի: 2. Պիստակ՝ պիստակենու պտուղը:

ՖԻՏԻԼ [< фитиль < թուրք. fitil < արաբ. fatīl], գ. (հնց.): 1. Պատրույգ: 2. Պայթաքուղ:

ՖԻՏԻՆ [< фитин < հուն. phyton բույս], գ. (դեղգրծ.): Շատ բույսերի մեջ պարունակվող օրգանական նյութ, որ օգտագործվում է որպես դեղամիջոց՝ նյարդային համակարգության մի քանի հիվանդությունների ժամանակ, ինչպես և նյութափոխանակությունը ուժեղացնող միջոց:

ՖԻՏԻՆԳ [< фитинг < անգլ. fitting < fit հարմարեցնել], գ. Կոյուղու ձևավորված մաս:

ՖԻՏՈ... [< фито... < հուն. phyton բույս] Բարդ բառերի սկզբնամաս, որ ցույց է տալիս նրանց կապը բույսերի կամ բուսաբանության հետ:

ՖԻՏՈՆՑԻԴՆԵՐ [< фитонциды < ֆիտո... + լատ. caedere սպանել], գ. (բսբ.): Բույսերում առաջացող կենսաբանորեն ակտիվ նյութեր, որոնք ոչնչացնում կամ ճնշում են մանրէների, մանրադիտակային սնկերի, նախակենդանիների աճումը և զարգացումը:

ՖԻՏՈՊԱԹՈԼՈԳԻԱ [< фитопатология < ֆիտո... + հուն. pathos ախտ, հիվանդություն + հուն. logos ուսմունք], գ. (գիտ.): Գիտություն բույսերի հիվանդությունների, դրանց կանխարգելման և վերացման միջոցների ու մեթոդների մասին:

ՖԻՏՈՑԵՆՈԶ [< фитоценоз < ֆիտո... + հուն. koinos ընդհանուր], գ. (բսբ.): Բուսական համակեցություն, համասեռ տեղամասում աճող բուսատեսակների ամբողջություն, որոնք բարդ փոխհարաբերությունների մեջ են գտնվում միմյանց, շրջակա միջավայրի և տեղի կենդանիների հետ:

ՖԻՏՈՖՏՈՐՈԶՆԵՐ [< фитофтороз < ֆիտո... + հուն. phthoros ոչնչացում], գ. (բսբ.): Բույսերի հիվանդություններ, որոնք հարուցվում են ֆիտոֆտորացեղի սնկերով: Առավել վնասակար է կարտոֆիլի, լոլիկի և մորմազգիների ընտանիքի շատ բույսերի համար:

ՖԻՐՄԱ [< фирма < իտլ. firma], գ. Իրավաբանական անձի իրավունքներ ունեցող առևտրական կամ արդյունաբերական ձեռնարկություն, որի մակնիշով ապրանքներ են վաճառվում կամ արտադրանքներ թողարկվում, արտադրատնտեսական միավորում:

ՖԻՔՍԱԺ [< фиксаж < ֆր. fixage < լատ. fixus կուռ, ամուր, պինդ], գ. (լանկրչ.): Քիմիական լուծույթ, որի մեջ թաթախում են երևակված ֆոտոթիթեղիկը՝ ֆոտոժապավենը կամ դրանցից հանված նկարը (պատկերը ամրակայելու համար):

ՖԻՔՍԱՏԻՎ [< фиксатив < ֆր. fixatif < լատ. fixus ամուր, կուռ, պինդ, անխախտ], գ. Մատիտանկարները (ածխանկարները նն) փչացումից ու մրոտումից պաշտպանող քիմիական լուծույթ:

ՖԻՔՍԱՏՈՐ [< фиксатор < ֆր. fixateur], գ. 1. (տեխ.): Ամրապնդիչ (հարմարանք): 2. Սևեռիչ, սևեռակ: 3. Արձանագրիչ, հաստիչ, հաստագրիչ:

ՖԻՔՍԱՑԻԱ [< фиксация < ֆր. fixation], գ. 1. Ամրակայում, ամրագրում, հաստատագրում: 2. Հաստատում: 3. Սևեռում, սևեռակում:

ՖԻՖԹԻ-ՖԻՖԹԻ [< фифти-фифти < անգլ. fifty-fifty, բառացի՝ հիսուն-հիսուն],

գ. մկ. (խսկց.): Կես-կես (50-50% հարաբերությամբ):

ՖԼԱԳՄԱՆ [< флагман < գերմ. Flagg(e)mann], գ. (ռազմ.): 1. Ռազմանավերի մեծ միավորման (էսկադրայի, դիվիզիայի ևն) հրամանատար: 2. ԽՍՀՄ-ում՝ ռազմածովային նավատորմի բարձր հրամանատարական կազմի կոչում 1935-40 թթ.: 3. Ֆլագմանական նավ:

ՖԼԱԳՇՏՈԿ [< флагшток < հոլանդ. Vlagstok < vlag դրոշակ + stok ձող], գ. (հնց.): Դրոշաձող, դրոշափայտ:

ՖԼԱԿՈՆ [< флакон < ֆր. flacon < միջին լատ. flasca շիշ], գ. (խսկց. հնց.): Սրվակ (հեղուկ պահելու համար), շշիկ:

ՖԼԱՄԻՆԳՈ [< фламинго < պորտ. flamingo < լատ. flamma հուր, բոց, կրակ], գ. (կենդբ.): Կարմրաթևիկ:

ՖԼԱՆԵԼ [< фланель < ֆր. flanelle], գ. (մնձգր.): Բրդե կամ բամբակե նոսր ու բարակ գործվածք:

ՖԼԵԲԻՏ [< флебит < հուն. phleps (phlebos) երակ], գ. (բժշկ.): Երակաբորբ՝ երակների բորբոքում:

ՖԼԵԲՈԳՐԱՖԻԱ [< флебография < հուն. phleps (phlebos) երակ + graphō գրում եմ], գ. (բժշկ.): Բժշկական հետազոտության մեթոդ, որի ժամանակ երակները հետազոտվում են՝ նրանց մեջ ներարկելով ցայտերանգ նյութ:

ՖԼԵԳՄԱՏԻԶՄ [< флегматизм < հուն.], գ. Ֆլեգմատիկություն:

ՖԼԵԳՄԱՏԻԿ [< флегматик < հուն. phlegmatikos լորձով լի՝ հարուստ], ած. 1. Սառնասրտությամբ ու հավասարակշիռ գործելակերպով բնորոշվող: 2. Սառնասրտություն ու հանդարտություն արտահայտող՝ պարունակող: 3. գ. Սառը՝ ոչ հախուռն բնավորությամբ մարդ:

ՖԼԵԳՄՈՆԱ [< флегмона < հուն. phlegmonē բորբոքում], գ. (բժշկ.): Ենթամաշկային ճարպաբջջանքի տարածուն սուր թարախային բորբոքում:

ՖԼԵՅՏԱ [< флейта < իտլ. flauto], գ. (երժշտ.): Փողային երաժշտական գործիք:

ՖԼԵՅՏԻՍՏ [< флейтист < իտլ.], գ. Ֆլեյտահար:

ՖԼԵՔՍԻԱ [< флексия < լատ. flexio թեքում], գ. (լեզվբ.): 1. Թեքում: 2. Թեքական մասնիկ, թեքամասնիկ:

ՖԼԵՔՍՈՐ [< флексор < լատ. flectere ծալել], գ. (կզմխս.): Ճալիչ՝ ծալող մկան:

ՖԼԵՔՍՈՒՐԱ [< флексура < լատ. flexura կորագիծ, ծռվածք], գ. 1. (երկրբ.): Աստիճանաձև կորություն, կրկնակորություն: 2. (բժշկ.): Ճալվածք, ծունկ, կորություն, ծռություն (աղիքի):

ՖԼԵՔՏԻՎ [< флектив < լատ.], ած. (լեզվբ.): Թեքական:

ՖԼԻԳԵԼ [< флигель < գերմ. Flügel թև], գ. (ճարտ.): Թևաշենք, կողաշենք, բակաշենք:

ՖԼԻԳԵԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏ [< флигель-адъютант < գերմ. Flügeladjutant], գ. (պատմ.): Ցարական շքախմբի համհարզի սպայական կոչում:

ՖԼԻՐՏ [< флирт < անգլ. flirt], գ. (խսկց.): Սիրախաղ:

ՖԼՅԱԳԱ [< фляга < գերմ. Flasche շիշ < միջին լատ. flasca շիշ], գ. (խսկց.): 1. Տափակաշիշ: 2. Մեծաման, մեծաշիշ (կանթերով), կանթաշիշ:

ՖԼՅՈՒՈՐՈԳՐԱՖԻԱ [< флюорография < լատ. flour հոսք + հուն. graphō գրում եմ], գ. (բժշկ.): Ռենտգենյան հետազոտության մեթոդ, որի ժամանակ լուսածոր էկրանի վրա ստանում են մարմնի մասերի ռենտգենյան պատկերը:

ՖԼՅՈՒՍ [< флюс < գերմ. Fluß], գ. 1. (բժշկ.): Լնդաբորբ: 2. Կավի՝ ճենապակե ևն իրերի թրծման ժամանակ նրանց մակերեսի քարանման ողորկ շերտի վերացմանը

նպաստող նյութ: 3. Մետաղների մշակման ժամանակ նրանց մակերեսի օքսիդային շերտը վերացնելու համար գործածվող նյութ, օքսիդահալիչ: 4. (հնք.): Հանքանյութին ավելացվող նյութ՝ նրա հալումը և խարամի վերածումն արագացնելու համար:

ՖԼՈՄԱՍՏԵՐ [< фломастер < անգլ. flowmaster < to flow հոսել + master վարպետ, նկարիչ], գ. (խսկց.): Մատիտի՝ ինքնահոսի ձևով գործիք՝ գրելու համար, ներկամատիտ:

ՖԼՈՊԻ ԴԻՍԿ [< флоппи-диск < անգլ. floppy-disk < floppy, բառացի՝ ազատ կախված + disk սկավառակ], գ. (հմկրգչ.): Տեղեկատվության կրիչ:

ՖԼՈՏ [< флот < հոլանդ. vloot], գ. (խսկց.): Նավատորմ, տորմիղ, նավատորմիղ:

ՖԼՈՏԱՏՈՐ [< флотатор < անգլ.], գ. 1. Ֆլոտացիայի մասնագետ: 2. Ֆլոտացիոն ձեռնարկության աշխատող:

ՖԼՈՏԱՑԻԱ [< флотация < անգլ. flo(a) tation, բառացի՝ ակներև դառնալը, ջրի երես դուրս գալը], գ. Հանքանյութի հարստացման եղանակ, որի ժամանակ մանրացված հանքանյութը հալում են, որպեսզի օգտակար հանածոն հալվի, իսկ անպետք ապարները տակը նստեն:

ՖԼՈՏԱՑԻՈՆ [< флотационный < անգլ.], ած. Ֆլոտացիային հատուկ, հարստացուցիչ:

ՖԼՈՏԻԼԻԱ [< флотилия < ֆր. flottille < իսպ. flotilla], գ. (ծով. հնց.): 1. Նավակազմ (մի ջրավազանում գտնվող): 2. Նավատորմիղ, հատուկ նպատակի ծառայող նավախումբ:

ՖԼՈՐԱ [< флора < լատ. Flora < հին հռոմեական աստվածուհու (ծաղիկների և գարնան) անունից], գ. Բուսական աշխարհ, որևէ վայրի կամ երկրաբանական դարաշրջանի բոլոր բուսական տեսակների ամբողջությունը:

ՖԼՈՐԻՆ [< флорин < իտալ. florino], գ. (ֆին.): 1. Հին իտալական ոսկեդրամ կամ արծաթադրամ: 2. Զանազան երկրներում գործածվող և տարբեր արժեքներ ունեցող մետաղադրամ:

ՖՅՈՆ [< фён < գերմ. Föhn < լատ. favonius տաք, արևմտյան քամի], գ. Տաք ու չոր, սրընթաց և ուժգին, վայրընթաց քամի, որը փչում է լեռներից դեպի հովիտները:

ՖՅՈՒԶԵԼԱԺ [< фюзелаж < ֆր. fuselage], գ. Սավառնակի հիմնակմախքը:

ՖՅՈՒՉԵՐՍ [< фьючерс < անգլ. future ապագա], գ. (առևտր.): Արժույթի և ապրանքների գնում կամ վաճառք՝ ապագայում՝ ենթադրվող որոշակի ժամկետի կուրսի կամ գնի հիման վրա:

ՖՅՈՒՐԵՐ [< фюрер < գերմ. Führer առաջնորդ], գ. (պատմ.): Ֆաշիստական Գերմանիայի առաջնորդի (Հիտլերի) տիտղոսը:

ՖՈԲԻԱ [< фобия < հուն. phobos վախ], գ. (բժշկ.): Մշտապես առկա վախի զգացում, որը զարգանում է որոշ հոգեխանգարումների ընթացքում:

... ՖՈԲԻԱ [< ...фобия < հուն. phobos վախ] Բարդ բառերի վերջնամաս, որը ցույց է տալիս դրանց կապը վախի հետ:

ՖՈԼ [< фол < անգլ. faul play անազնիվ խաղ], գ. (սպորտ. խսկց.): Խաղային մարզաձևերում՝ խաղի կանոնների խախտում, կոպտախաղություն, գռեհկախաղ:

ՖՈԼԳԱ [< фольга < լեհ. folga < լատ. folium թերթ], գ. Մետաղաթաղանթ, փայլաթիթեղ, նրբաթիթեղ. օգտագործվում է սննդամթերքների ևն փաթաթման համար:

ՖՈԼԻԱՆՏ [< фолиант < գերմ. Foliant < լատ folium թերթ], գ. (հնց.): 1. Թղթի երկծալ չափով տպագրված գիրք, թերթի կեսի ծավալով գիրք: 2. Մեծ՝ ստվարածավալ գիրք:

ՖՈԼԻԿՈՒԼ [< фолликул < լատ. folliculus պարկիկ], գ. (կզմխս.): Ողնաշարավոր կենդանիների մոտ՝ պարկ, պարկիկ, բշտիկ, գեղձաբշտիկ:

ՖՈԼԻՈ [< фолио < լատ. in folio էջի մեջ], գ. (ֆին. հաշվ.): Երկէջ՝ հաշվեմատյանի աջ և ձախ էջերը՝ նույն համարներով:

ՖՈԼԿԵՏԻՆԳ [< фолькетинг < դան. folketing < folk ժողովուրդ + ting ժողով], գ. (քղք.): Մինչև 1953 թ.՝ դանիական պառլամենտի ստորին պալատը, իսկ 1953 թ. Դանիային միապալատ պառլամենտը:

ՖՈԼԿԼՈՐ [< фольклор < անգլ. folk-lore], գ. 1. Ժողովրդական բանահյուսություն: 2. Որևէ ժողովրդի սովորույթների, հավատալիքների, ծեսերի ևն ամբողջությունը: 3. Տե՛ս Ֆոլկլորիստիկա:

ՖՈԼԿԼՈՐԻՍՏ [< фольклорист < անգլ.], գ. Ֆոլկլորագետ՝ բանագետ, բանահավաք:

ՖՈԼԿԼՈՐԻՍՏԻԿԱ [< фольклористика < անգլ.], գ. Ֆոլկլորագիտություն, բանագիտություն. գիտություն, որ զբաղվում է ֆոլկլորի ուսումնասիրությամբ:

ՖՈԿՈՒՍ I [< фокус < լատ. focus օջախ], գ. 1. Կիզակետ: 2. (լանկրչ.): Այն կետը, որ առավել պարզ կերպով է պատկերում լուսանկարվող առարկան: 3. (բժշկ.): Որևէ բանի կիզակետ՝ բարձրագույն կետ կամ կենտրոն:

ՖՈԿՈՒՍ II [< фокус < գերմ. Hokus pokus], գ. 1. Ձեռնածություն, աճպարարություն: 2. Ճարպիկ արարք՝ հնարք: 3. Ուրիշին ծիծաղելի դրության մեջ գցող ճարտարանք: 4. Ճարպիկ խաբեություն:

ՖՈԿՈՒՍՆԻԿ [< фокусник < գերմ.], գ. 1. Աճպարար, ձեռնածու: 2. *փխբ.* Խաբեբա: 3. Խեղկատակ:

ՖՈՅԵ [< фойе < ֆր. foyer, բառացի՝ օջախ], գ. (ճարտ.): Ճեմասրահ՝ տեղ թատրոնում, կինոյում ևն հաճախողների ճեմելու համար:

ՖՈՆ [< фон < ֆր. fond < լատ. fonus հիմք, հատակ], գ. 1. Պաստառի հիմնական գույնը, որի վրա պատկերվում է բուն նկարը, հիմնագույն: 2. Դաշտ, գործվածք՝ գորգ ևն, որի վրա անում են նախշերը: 3. Պատկերի խորք՝ հետին պլան: 4. *փխբ.* Ընդհանուր իրադրություն՝ իրավիճակ՝ միջավայր ևն, որի մեջ որևէ բան առանձնանում է՝ աչքի է ընկնում, հանրանկար:

ՖՈՆԱՍԹԵՆԻԱ [< фонастения < գերմ. Phonasthenie < ֆոնո... + հուն. astheneia թուլություն, անուժություն], գ. (բժշկ.): Ձայնաթուլություն, ձայնազրկություն:

ՖՈՆԱՑԻԱ [< фонация < ֆր. phonation < հուն. phōnē հնչյուն, ձայն], գ. (լեզվբ.): Արտասանություն, արտաբերություն:

ՖՈՆԴ [< фонд < լատ. fundus հիմք, հիմնադրամ], գ. 1. Որևէ նպատակի հատկացված դրամական կամ նյութական միջոցներ, հիմնադրամ: 2. Որևէ բանի հիմնական ռեսուրսները ներկայացնող դրամական կամ նյութական միջոցների ամբողջությունը: 3. Մի տեղում հավաքված և պահպանման ու օգտագործման համար նախատեսված զանազան կարգի գրավոր վավերաթղթերի ու աղբյուրների (գրքեր, ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր ևն) հավաքածու: 4. (տնտսգ.): Զանազան կարգի արժեթղթեր և տոկոսաբեր թղթեր: 5. Ստեղծագործական կազմակերպություններին առընթեր գործող հիմնարկություն՝ մարմին, որ նյութական օգնություն է ցույց տալիս ստեղծագործողներին: 6. *փխբ.* Արվեստի՝ գրականության՝ գիտության ևն արժեքավոր գործերի ամբողջությունը, գանձարան:

ՖՈՆԵՄԱ [< фонема < հուն. phōnema հնչյուն, ձայն], գ. (լեզվբ.): Հնչույթ՝ որևէ լեզվի (կամ բարբառների) խոսքային հնչյուն, որ դիտվում է իբրև բառերի կամ ձևույթների իմաստների տարբերակման միջոց:

ՖՈՆԵՆԴՈՍԿՈՊ [< фонендоскоп < հուն. phōnē հնչյուն + endon ներս, ներսը + skopeō դիտում եմ, նայում եմ], գ. (բժշկ.): Լսափող:

ՖՈՆԵՏԻԿ [< фонетический < հուն.], ած. (լեզվբ.): 1. Հնչյունական: 2. Հնչյունաբանական: 3. Հնչեղ:

ՖՈՆԵՏԻԿԱ [< фонетика < հուն. phonētikē հնչյունային], գ. (լեզվբ.): 1. Հնչյունաբանություն. լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է լեզվի հնչյունական կազմն ու համակարգը: 2. Հնչյունային կազմ, լեզվի հնչյունական կառուցվածքը:

ՖՈՆԻԿԱ [< фоника < հուն. phōnīkos հնչող], գ. (տոչփ.): Հնչականություն, հնչակազմություն, հնչական կողմ (բանաստեղծական խոսքի):

ՖՈՆՈ..., ...ՖՈՆ [< фоно..., ...фон < հուն. phōnē ձայն, հնչյուն] Բարդ բառերի մաս, որը ցույց է տալիս տվյալ բառերի առնչությունը ձայնի, հնչյունի հետ:

ՖՈՆՈԳՐԱՄ(ՄԱ) [< фонограмма < հուն. phōnē հնչյուն, ձայն + gramma գրանցում], գ. (տեխ.): 1. Ձայնագիր: 2. Ձայնագրություն:

ՖՈՆՈԳՐԱՖ [< фонограф < հուն. phōnē հնչյուն, ձայն + graphō գրում եմ], գ. (տեխ.): Ձայնագիր:

ՖՈՆՈԼՈԳԻԱ [< фонология < հուն. phōnē հնչյուն, ձայն + logos բան, ուսմունք], գ. (լեզվբ.): Հնչույթաբանության՝ լեզվաբանության (ավելի ճիշտ՝ հնչյունաբանության) բաժին, որ ուսումնասիրում է լեզվի հնչույթների համակարգը և նրանց տարբերակիչ հատկանիշները:

ՖՈՆՈՏ(Թ)ԵԿԱ [< фонотека < հուն. phōnē հնչյուն + theke զետեղարան, արկղ], գ. (հնց.): Ձայնագրվածքաբան, ձայնագրությունների պահեստարան՝ պահոց:

ՖՈՆՏԱՆ [< фонтан < իտալ. fontana < լատ. fons (fontis) աղբյուր], գ. (խսկց.): Շատրվան:

ՖՈՍԳԵՆ [< фосген < հուն. phōs լույս + genos սեռ], գ. (քիմ.): Շնչառական գործարանները վնասող անգույն հեղձուցիչ գազ:

ՖՈՍԻԼԻԶԱՑԻԱ [< фоссилизация < լատ. fossilis բրածո], գ. (հնէաբ. երկրբ.): Մեռած կենդանիների և բույսերի մնացորդների քարացման գործընթացը օրգանական նյութերը հանքայինով տեղակալելու ճանապարհով:

ՖՈՍՖԱՏ [< фосфат < հուն., տե՛ս Ֆոսֆոր], գ. (քիմ.): Ֆոսֆորաթթվի աղ, որ օգտագործվում է որպես պարարտանյութ, ինչպես և տեխնիկայի և բժշկության մեջ:

ՖՈՍՖՈՐ [< фосфор < հուն. phōs + phoros կրող, լուսակիր], գ. (քիմ.): Քիմիական տարր, դյուրավառ և մթության մեջ լուսարձակող նյութ, որ պարունակվում է մի քանի հանքերի մեջ, կենդանիների ոսկորներում և կենդանական ու բուսական հյուսվածքների մեջ, լուսածին:

ՖՈՍՖՈՐԵՍՑԵՆՑԻԱ [< фосфоресценция < հուն. phōs լույս + phoros կրող + լատ. escentiā վերջածանց՝ թույլ՝ գործողություն արտահայտելու նկատմամբ], գ. (ֆիզ.): Մի քանի նյութերի ու բաղադրությունների՝ ճառագայթման ազդեցությամբ լույս տալու, ինչպես և ճառագայթների դադարումից հետո էլ լուսարձակելու հատկությունը:

ՖՈՎԻԶՄ [< фовизм < ֆր. fauvisme < fauve վայրենի, գիշատիչ], գ. (նկարչ.): Ավանգարդիստական հոսանք XX դ. սկզբին ֆրանսիական գեղանկարչության մեջ:

ՖՈՏ [< фот < հուն. phōs (photos) լույս], գ. (ֆիզ.): Լուսավորվածության չափման միավոր:

ՖՈՏՈ [< фото < հուն. phōs (phōtos) լույս], գ. 1. Լուսանկարչական ապարատ: 2. Լուսանկար: 3. Լուսանկարչություն:

ՖՈՏՈԱԼԲՈՄ [< фотоальбом < ֆոտո + ֆր. album], գ. (լանկրչ.): Լուսանկարների ալբոմ:

ՖՈՏՈԱՊԱՐԱՏ [< фотоаппарат < ֆոտո + լատ. apparatus], գ. (լանկրչ.): Լուսանկարչական ապարատ:

ՖՈՏՈԳԵՆ [< фотоген < ֆոտո + հուն. genes սեռ], գ. Հանքային յուղ, որ ստացվում է նավթի, ձյութի թորումից, լուսածին յուղ:

ՖՈՏՈԳՐԱՎՅՈՒՐ(Ա) [< фотогравюра < ֆոտո + ֆր. gravure], գ. (արվ.): Լուսափորագրություն, լուսափորագրանկար:

ՖՈՏՈԷԼԵՄԵՆՏ [< фотоэлемент < ֆոտո + լատ. elementum], գ. (տեխ.): Լուսային ճառագայթները էլեկտրականի փոխարինող սարք:

ՖՈՏՈԷՖԵԿՏ [< фотоэффект < ֆոտո + լատ. effectus], գ. (ֆիզ.): Լուսային էներգիայի անմիջական փոխարկումը էլեկտրականի:

ՖՈՏՈԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ [< фотолаборатория < ֆոտո + միջին լատ. laboratorium], գ. (լանկրչ.): Լուսանկարչական լաբորատորիա:

ՖՈՏՈԼԻԶ [< фотолиз < ֆոտո + հուն. lysis փլուզում, քայքայում], գ. (ֆիզ.քիմ.): Հեղուկ, գազանման կամ պինդ նյութերի տարրալուծումը լույսի ազդեցությամբ:

ՖՈՏՈԽՐՈՆԻԿԱ [< фотохроника < ֆոտո + հուն. chronikos], գ. Իրադարձությունների՝ կյանքի երևույթների խրոնիկա՝ ժամանակագրություն լուսանկարների միջոցով:

ՖՈՏՈԿԱՄԵՐԱ [< фотокамера < ֆոտո + լատ. camera], գ. (լանկրչ. խսկց.): Ֆոտոխցիկ:

ՖՈՏՈՄԵԽԱՆԻԿԱ [< фотомеханика < ֆոտո + հուն. mēchanikē], գ. (լանկրչ.): Քիմիական ու լուսանկարչական գործընթացների օգնությամբ պատկերների վերարտադրման եղանակների ամբողջությունը:

ՖՈՏՈՄԵՏՐ [< фотометр, տե՛ս Ֆոտո և Մետր], գ. Լուսաչափ:

ՖՈՏՈՄԵՏՐԻԱ [< фотометрия < ֆոտո + հուն. metron չափ], գ. Լուսաչափություն:

ՖՈՏՈՄՈՆՏԱԺ [< фотомонтаж < ֆոտո + ֆր. montage], գ. 1. Ընդհանուր թեմայով կամ օբյեկտով իրար հետ կապված լուսանկարների կամ նրանց մասերի միացումը մի պատկերի մեջ: 2. Այդ եղանակով կազմված պլակատ՝ գովազդ՝ ցուցադրանյութ ևն:

ՖՈՏՈՆ [< фотон < հուն. phōs (phōtos) լույս], գ. (ֆիզ.): Լույսի մասնիկ՝ քվանտ:

ՖՈՏՈՊԼՅՈՆԿԱ [< фотоплёнка < ֆոտո + ռուս. плёнка], գ. (խսկց.): Ֆոտոթիթեղիկ, ֆոտոժապավեն:

ՖՈՏՈՊՈՒԲԼԻՑԻՍՏԻԿԱ [< фотопублицистика < ֆոտո + լատ. publicus], գ. (հնց.): Ֆոտոհրապարակախոսություն՝ ֆոտոռեպորտաժի վրա հիմնված հրապարակախոսություն՝ հրապարակախոսական գործունեություն:

ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ [< фоторепортаж < ֆոտո + ֆր. reportage], գ. Լուսանկարչությունը՝ որպես ռեպորտաժի տեսակ:

ՖՈՏՈՌԵՊՈՐՏՅՈՐ [< фоторепортер, տե՛ս Ֆոտո և Ռեպորտյոր], գ. Ֆոտո-

թղթակից, ֆոտոթղթակից-լուսանկարիչ:
ՖՈՏՈՍԻՆԹԵԶ [< фотосинтез < ֆոտո + հուն. synthesis], գ. Լուսասինթեզ:
ՖՈՏՈՍՏԵՆԴ [< фотостенд < ֆոտո + անգլ. stend], գ. Լուսանկարների ցուցավահանակ:
ՖՈՏՈՍՖԵՐԱ [< фотосфера < ֆոտո + հուն. sphaira], գ. (խսկց.): Լուսոլորտ, լուսաոլորտ:
ՖՈՏՈՏԵԽՆԻԿԱ [< фототехника < ֆոտո + հուն. technikē], գ. Լուսանկարչական տեխնիկա:
ՖՈՏՈՏԻՊ [< фототип < ֆոտո + հուն. typos], գ. Լուսատիպ:
ՖՈՏՈՏԻՊԻԱ [< фототипия < հուն. phōs (phōtos) լույս + typos դրոշմ, հետք], գ. Լուսատպություն, լուսատպագրություն:
ՖՈՏՈՔԻՄԻԱ [< фотохимия < ֆոտո + միջին լատ. (al)chimia], գ. Քիմիայի մի բաժինը, որ ուսումնասիրում է նյութերի փոփոխությունները և լուսային էներգիայի ներգործությամբ նրանց մեջ տեղի ունեցող ռեակցիաները:
ՖՈՏՈՔԻՄԻԿՈՍ [< фотохимик < ֆոտո + միջին լատ. (al)chimia], գ. Ֆոտոքիմիայի մասնագետ-քիմիկոս:
ՖՈՐԱ [< фора < իտլ. fora առաջ], գ. (սպորտ. խսկց.): Սպորտային մրցումներում՝ զիջում, հակառակորդին նախապես խաղամիավորներ՝ մրցատարածք զիջելը. օգտագործվում է *ֆորա տալ* բառակապակցության մեջ:
ՖՈՐԵԼ [< форель < գերմ. Forelle], գ. (կենդբ.): Իշխան (ձուկը):
ՖՈՐԶԱՑ [< форзац < գերմ. Vorsatz], գ. Առաջաթերթ:
ՖՈՐԻՆՏ [< форинт < հունգ.], գ. (ֆին.): Հունգարիայի դրամական միավորը:
ՖՈՐՄԱ [< форма < լատ. forma], գ. (խսկց.): 1. Ձև: 2. Կաղապար: 3. Համազգեստ: 4. (տպգր.): Տպաձև, տպագրական ձև:
ՖՈՐՄԱԼ [< формальный < լատ.], ած. (խսկց.): Ձևական:
ՖՈՐՄԱԼԻԶԱՑԻԱ [< формализация < լատ.], գ. Ձևականացում:
ՖՈՐՄԱԼԻԶՄ [< формализм < լատ.], գ. 1. Ձևապաշտություն: 2. Ձևամոլություն:
ՖՈՐՄԱԼԻՆ [< формалин < լատ. (aciditas) formica մրջնային (թթու)], գ. (քիմ.): Հեղձուցիչ սուր հոտով ախտահանիչ նյութ:
ՖՈՐՄԱԼԻՍՏ [< формалист < լատ.], գ. Ֆորմալիզմի կողմնակից՝ հետևորդ:
ՖՈՐՄԱՆՏ [< форманта < լատ. formans (formantis) կազմող, ձևավորող], գ. (լեզվբ.): Ձևորդ՝ խոսքի հնչյունի (առավելապես ձայնավորի) ձայնագիտական՝ լսելիական բնութագիրը, որ կապվում է ձայնային տոնի հաճախականության մակարդակի հետ և կազմում է հնչյունի երանգը (տեմբրը):
ՖՈՐՄԱՏ [< формат < գերմ. Format < ֆր. format < լատ. forma տեսք, արտաքին], գ. 1. Գրքի՝ թղթի՝ քարի ևն չափս: 2. Տպագրական տողի երկարությունը և մակերեսի բարձրությունը:
ՖՈՐՄԱՑԻԱ [< формация < լատ. formatio կազմավորում, տեսք, կերպարանք], գ. 1. Որևէ բանի զարգացման որոշակի աստիճան՝ փուլ, որ բնորոշվում է իրեն հատուկ կառուցվածքով՝ բնույթով ևն: 2. Մարդկային հասարակության զարգացման աստիճան, որ բնորոշվում է որոշակի տնտեսակարգով, հասարակական-տնտեսական ֆորմացիա: 3. Ճագումնաբանորեն իրար հետ կապված լեռնապարների ամբողջություն՝ համալիր, որոնց միատեղ կազմավորումն ու գոյությունը պայմանավորված է երկրաբանական միջավայրի որոշակի պայմաններով, կազմավորում:
ՖՈՐՄԻԱՏՆԵՐ [< формиаты < լատ. formica մրջյուն], գ. (քիմ.): Մրջնաթթվի աղերը և էսթերները:

ՖՈՐՄՈՒԼ(Ա) [< формула < լատ. formula], գ. 1. Բանաձև: 2. Բանաձևված սահմանում: 3. Որևէ կարգի մեծությունների՝ հարաբերությունների՝ բաղադրությունների՝ տարրերի ևն պայմանական արտահայտություն (թվանշաններով, տառերով, հատուկ պայմանական նշաններով ևն):

ՖՈՐՄՈՒԼՅԱՐ [< формуляр < գերմ. Formular < լատ. formula ձև, կանոն], գ. 1. Հատուկ գիրք՝ մատյան կամ բլանկ, որի վրա նշանակում են կառուցվածքի՝ մեխանիզմի ևն բնութագրական տվյալները և նրա օգտագործման՝ փչացումների՝ վնասվածքների ևն մասին տվյալները՝ ժամանակագրական հաջորդականությամբ: 2. Գրադարանային հաշվառման քարտ, որ դրվում է գրքի մեջ, և որի վրա գրանցվում են ընթերցողների կողմից նրա օգտագործմանը վերաբերող տվյալները: 3. Գրադարանի աբոնենտի գրքույկ, որի մեջ անհրաժեշտ տեղեկություններ են գրում ընթերցողի (աբոնենտի) մասին և նշումներ կատարում նրա վերցրած գրքերի մասին: 4. Առհասարակ՝ որևէ կարգի փաստաթուղթ, որ լրացվում է հատուկ տվյալների նշումով և վավերացվում համապատասխան մարդկանց կողմից:

ՖՈՐՇԼԱԳ [< форшлаг < գերմ. Vorschlag, բառացի՝ «հարվածից» առաջ], գ. (երժշտ.): Մեղեդիական զարդարանքի տեսակ, մեղեդիի հիմնական հնչյունին նախորդող կարճատև հնչյունը կամ այդպիսի հնչյունների խումբը, որ նրա հիմնական կառույցից դուրս է և սոսկ զարդարող նշանակություն ունի:

ՖՈՐՊՈՍՏ [< форпост < գերմ. Vorposten], գ. 1. Առաջապոստ, առաջադիրք, առաջավոր դիրք: 2. Առաջնակետ, որևէ բանի հենարան, ամրակետ:

ՖՈՐՍ [< форс < ֆր. force ուժ, կշիռ, նշանակություն], գ. (խսկց.): 1. Ցուցամոլություն, պճնամոլություն: 2. Սնապարծություն, պարծենկոտություն:

ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ [< форс-мажор < ֆր. force majeure], գ. (տնտսգ.): Արտակարգ հանգամանքներ, որոնց հետևանքով պայմանագրի պայմանները չեն կատարվում:

ՖՈՐՍՈՒՆԿԱ [< форсунка < անգլ. force - pump ներմղող պոմպ], գ. (խսկց.): Բոցամուղ:

ՖՈՐՎԱՐԴ [< форвард < անգլ. forward], գ. 1. (սպորտ. հնց.): Հարձակվող: 2. (տնտսգ.): Տարադրամով կամ գործարքով հաշվի փակում գործարքը կնքելուց երկու աշխատանքային օր հետո:

ՖՈՐՏԵ [< форте < իտալ. forte], (երժշտ.): 1. մկ. Ուժգին: 2. գ. Ուժգին տեմպ: 3. գ. Ուժգին կատարում (նվագում):

ՖՈՐՏԵՊԻԱՆՈ [< фортепьано, фортепиано < իտալ. fortepiano], գ. (երժշտ.): Դաշնամուր:

ՖՈՐՏԻՍԻՄՈ [< фортиссимо < իտալ. fortissimo < լատ. fortis ուժեղ, եռանդուն], մկ. գ. (երժշտ.): 1. մկ. Ֆորտեից էլ ավելի ուժեղ, բարձր: 2. գ. Նվագի բարձր տեղը կամ բարձր կատարումը:

ՖՈՐՏԻՖԻԿԱՑԻԱ [< фортификация < լատ. fortificatio ամրություն], գ. 1. (ռազմ.): Գիտություն ամրաշինության մասին: 2. Ամրություն, ամրաշինություն:

ՖՈՐՏՈՉԿԱ [< форточка < նոր վերին գերմ. Pforte դուռ < լատ. porta դուռ, դարպաս], գ. (խսկց.): Լուսամուտի օդանցք:

ՖՈՐՏՐԱՆ [< фортран < անգլ. for(mula) tran(slator)], գ. (ինֆորմ.): Ծրագրավորման լեզուներից մեկը, որը միտված է գիտատեխնիկական խնդիրների լուծմանը:

ՖՈՐՏՈՒՆԱ [< фортуна < լատ. fortuna], գ. (գրք.): Բախտ, ճակատագիր, երջանկություն:

ՖՈՐՈՒՄ [< форум < լատ. forum], գ. 1. (պատմ.): Հրապարակ, մրցարան: 2. *փխբ.* Ներկայացուցչական լայն ժողով, համաժողով:

ՖՈՔՍՏԵՐՅԵՐ [< фокстерьер < անգլ. foxterier], գ. (կենդբ.): Որսկան փոքրիկ շների ցեղ և այդ ցեղի շուն:

ՖՈՔՍՏՐՈՏ [< фокстрот < անգլ. foxtrot < fox աղվես + trot արագ քայլ], գ. 1. Քառատակտ եվրոպական պար: 2. Այդ պարի երաժշտությունը:

ՖՏՈՐ [< фтор < հուն. phthoros կործանում, խորտակում], գ. (քիմ.): Քիմիական տարր. կծու հոտով անգույն գազ:

ՖՏՈՐԼՈՆ [< фторлон < հուն.], գ. 1. Ֆտորի օրգանական միացություններից ստացվող մանրաթել: 2. Այդ մանրաթելերից պատրաստված մետաքսանման գործվածք:

ՖՐԱ [< фра < իտալ. fra < frate < լատ. frater եղբայր], գ. (եկեղ.): Կաթոլիկ վանականի անվան վրա դրվող հարգական մասնիկ:

ՖՐԱԳՄԵՆՏ [< фрагмент < լատ. fragmentum], գ. (արվ.): Արվեստի որևէ ստեղծագործության (գեղանկարչություն, քանդակագործություն ևն) կամ ինչ-որ տեքստի հատված, պատառիկ, բեկոր:

ՖՐԱԶ [< фраза < հուն. phrasis արտահայտություն, խոսքի դարձված], գ. 1. Ասույթ: 2. Դարձված: 3. Խոսք: 4. Արտահայտություն: 5. Գեղեցիկ արտահայտություն՝ խոսք, որ զուրկ է բովանդակությունից կամ քողարկում է բովանդակության կեղծությունը՝ կեղծիքը: 6. (երժշտ.): Երաժշտական թեմայի ոչ մեծ և հարաբերականորեն ավարտուն հատված:

ՖՐԱԶԵՈԼՈԳԻԱ [< фразеология < հուն. phrasis + logōs գիտություն, բառ, հասկացություն], գ. (լեզվբ. հնց.): 1. Դարձվածաբանություն, դարձվածագիտություն՝ լեզվաբանության բաժին, որն ուսումնասիրում է տվյալ լեզվի դարձվածքները: 2. Տվյալ լեզվի դարձվածքների ամբողջությունը:

ՖՐԱԶԵՈԼՈԳԻԶՄ [< фразеологизм < հուն.], գ. (լեզվբ. հնց.): Դարձվածք:

ՖՐԱԶՅՈՐ [< фразёр < ֆր. phraseur < հուն.], գ. ած. Ֆրազների (5) սիրահար, ճոռոմ արտահայտությունների սիրահար, դատարկախոս:

ՖՐԱԽՏ [< фрахт < գերմ. Fracht], գ. (հզվդ): Ծովային ուղիներով տեղափոխվող բեռների վճարման գումարը, փոխադրվող բեռները, ինչպես նաև փոխադրումը:

ՖՐԱԿ [< фрак < ֆր. frac < լատ. floccus բամբակ], գ. Տղամարդու սյուրտուկի մի տեսակ, որ առջևից կարճ ու բաց լանջեզրեր ունի, իսկ ետևից միջահատված տեսք՝ պոչ (հագնում են սովորաբար հանդիսավոր առիթներով), պոչազգեստ:

ՖՐԱԿՏՈՒՐԱ [< фрактура < լատ. fractura կոտրվածք, ճաք, կտոր, բեկոր], գ. 1.

(բժշկ.): Կոտրվածք: 2. (տպգր.): Գոթական տպատառ: 3. Գոթական տպատառի նմանվող ձեռագիր:

ՖՐԱԿՑԻԱ I [< фракция < ֆր. fraction < լատ. fractio ջարդոտում, ջարդուփշրում], գ. (քղք.): 1. Ներկուսակցական՝ պառլամենտի որևէ կուսակցության կամ կուսակցությունների ևն կազմակերպված խումբ՝ խմորում, կուսակցախումբ: 2. Քաղաքական կուսակցության մեջ կազմավորված խումբ՝ խմբավորում, որ կուսակցության մեծամասնության կողմից ընդունված գծին հակադրվում է իր քաղաքական հայացքներով ու սկզբունքներով ու պայքարում է կուսակցության գծի դեմ՝ մնալով կուսակցության շարքերում:

ՖՐԱԿՑԻԱ II [< фракция < ֆր. fraction բաժին, մաս < լատ.], գ. (քիմ.): 1. Խառնուրդի թորման հետևանքով զատվող մաս՝ թորամաս: 2. Խառնուրդամաս, բաղադրամաս (հողի): 3. (մանգ.): Զտամաս:

ՖՐԱԿՑԻՈՆ [< фракционный < ֆր. < լատ.], ած. Ֆրակցիային հատուկ, ֆրակցիա կազմող, ֆրակցիայի ձևով հանդես եկող:

ՖՐԱԿՑԻՈՆԵՐ [< фракцинер < ֆր. < լատ.], գ. Որևէ ֆրակցիայի անդամ:

ՖՐԱԿՑԻՈՆԻԶՄ [< фракционизм < ֆր. < լատ.], գ. Ֆրակցիոնություն, որևէ ֆրակցիայի քաղաքականություն վարելը:

ՖՐԱՄԲԵԶԻԱ [< фрамбезия < ֆր. framboise ազնվամորի], գ. (բժշկ.): Արևադարձային երկրներում ապրող մարդկանց մոտ հանդիպող մաշկային, ոսկրային, հոդային խրոնիկ վարակիչ հիվանդություն (մաշկի վրա նկատվում են մորիաձև աճվածքներ. այստեղից էլ անվանումը):

ՖՐԱՄՈՒԳԱ [< фрамуга < լեհ. framuga որմնախորշ], գ. (շին.): Վերնափեղկ (դռան կամ լուսամուտի):

ՖՐԱՆԿ [< франк < ֆր. franc], գ. (ֆին.): Դրամական հիմնական միավոր Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեցարիայում, Լյուքսեմբուրգում և Մոնակոյում:

ՖՐԱՆԿԼԻՆԻԶԱՑԻԱ [< франклинизация < ամերիկացի գիտնական Բ. Ֆրանկլինի (B. Franklin 1706-1790 թթ.) անունից], գ. (բժշկ.): Բուժման մեթոդ հաստատուն էլեկտրական դաշտի միջոցով, որը ստեղծվում է բարձրավոլտ գեներատորի միջոցով:

ՖՐԱՆԿՄԱՍՈՆ[< франкмасон < ֆր. francmacon, բառացի՝ ազատ քարհատներ], գ. (պատմ.): XVIII դ. Անգլիայում ծագած կրոնաէթնիկական ընկերության՝ կազմակերպության անդամ:

ՖՐԱՆԿՈ [< франко < իտալ. franco], գ. (առևտր.): Բեռնավարձի վճարում մինչև նշանակված տեղը:

ՖՐԱՆՇԻԶ(Ա) [< франшиза < ֆր. franchise], գ. (տնտսգ.): Առանձնաշնորհ՝ համատեղ գործունեության մասին պայմանագրերի հիման վրա կատարվող գործառնություն:

ՖՐԱՆՏ [< франт < լեհ. frant], ած. գ. (գրք.): Պճնամոլ, արտաքին փայլ՝ շուք ունեցող (մարդ):

ՖՐԱՏՐԻԱ [< фратрия < հուն. phratria], գ. (ազգգր.): Մեկ նախահորից առաջացած մի քանի ցեղերի խումբ, որոնք, հարաբերական ինքնուրույնությամբ հանդերձ, պահպանում են իրենց միասնությունը:

ՖՐԱՈՒ [< фрау < գերմ. Frau], գ. Ամուսնացած կնոջ անվանումը Գերմանիայում և մի քանի այլ երկրներում, տիկին, տիրուհի:

ՖՐԵԳԱՏ [< фрегат < ֆր. fre´gate < իտալ. fregata], գ. (ծով.): 1. Հնում՝ եռակայմ ռազմանավ: 2. Այժմ պահակային ծառայության ռազմանավ: 3. (կենդբ.): Խոշոր

արևադարձային ծովային թռչուն, ճղլակ:

ՖՐԵԶ [< фреза < ֆր. fraise], գ. (տեխ.): 1. Պտտական շարժումով բազմահատիչ կտրող գործիք, որ օգտագործում են մակերեսը փայլեցնելու, տաշելու՝ հղկելու համար: 2. Առաջ ձգված պտտվող սայրով թմբուկավոր մեքենա, որով փխրեցնում են հողը՝ տորֆ հատում ևն:

ՖՐԵԶԵՐ [< фрезер < ֆր., տե՛ս Ֆրեզ], գ. Նույնն է՝ Ֆրեզ (1):

ՖՐԵՅԴԻԶՄ [< фрейдизм < ավստրիացի հոգեբան Զ. Ֆրեյդի անունով], գ. (փիլ.): XIX դարի վերջում և XX դարի սկզբում ծագած հոգեբանական ուղղություն, որը փորձում է մարդկանց հոգեկան ու հասարակական կյանքի երևույթները բացատրել ենթագիտակցական կամ անգիտակցական բնազդներով ու հակումներով:

ՖՐԵՅԴԻՍՏ [< фрейдист < հատուկ անունից], գ. Ֆրեյդիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՖՐԵՅԼԻՆ, ՖՐԵՅԼԱՅՆ [< фрейлейн < գերմ. Fräulein], գ. Չամուսնացած կնոջ՝ աղջկա անվանումը Գերմանիայում և մի քանի այլ երկրներում, օրիորդ:

ՖՐԵՆՈԼՈԳԻԱ [< френология < հուն. phrēn միտք, հոգի + logōs գիտություն], գ. (հզվդ.): Գանգագուշակություն՝ գիտություն, որը գանգի ձևից որոշում է մարդու հոգեկան կերտվածքը:

ՖՐԵՆՉ [< френч < անգլ. Ֆելդմարշալ Զ. Ֆրենչի անվամբ], գ. Զինվորական քառագրպան կարճ բաճկոն:

ՖՐԵՈՆ [< фреон < ֆր. fréon], գ. (տեխ.): Գազանման կամ հեղուկ օրգանական արտադրանք, որը սառնարանային սարքերում օգտագործվում է որպես աշխատանքային նյութ:

ՖՐԵՍԿՈ [< фреска < իտլ. fresco թարմ], գ. Որմնանկար, թարմ, թաց կրասվաղի վրա մաքուր ջրով կամ կրաջրով բացված ներկերով գեղանկարչության տեխնիկա:

ՖՐԻ [< фри < ֆր. frit տապակած, բոված], գ. (խոհր.): Մեծ քանակով ձեթի մեջ տապակած կարտոֆիլի բարակ շերտեր:

ՖՐԻԳԻԴԻԶՄ [< фригидизм < լատ. frigidus սառը], գ. (կզմխս.): Բացարձակ անտարբերություն սեռական հարաբերության նկատմամբ (կնոջ մոտ), ֆրիգիդություն:

ՖՐԻԶ [< фриз < ֆր. frise], գ. (ճարտ.): 1. Ծոփոր: 2. Եզրազարդ (գորգի, պատի ևն):

ՖՐԻԶԵՐ [< фризер < անգլ. freezer < to freeze սառեցնել], գ. (տեխ.): Կիսաֆաբրիկատներ սառեցնող և պաղպաղակ արտադրող մեքենա՝ սարքավորում:

ՖՐԻԿԱԴԵԼԿԱ [< фрикаделька < ֆր. fricadelles < իտլ. frittadella տապակած կոտլետ < իտլ. fritto տապակած], գ. (խոհր.): Մսագնդիկ, ձկնագնդիկ, կոլոլակ (ճաշի մեջ):

ՖՐԻԿԱՍԵ [< фрикасе < ֆր. fricassee < fricasser մսի կտորները տապակել], գ. (խոհր.): Տապակած մսակոտոր կերակուր՝ որևէ համեմունքով:

ՖՐԻԿԱՏԻՎ [< фрикативный < ֆր. fricatif < լատ. fricare շփել], ած. (լեզվբ.): Շփական, օդի հոսանքը արտասանական գործարանների երկու մասերի մերձեցումով կազմված ճեղքին՝ նեղ անցքին քսվելով՝ շփվելով կազմավորվող հնչյուն:

ՖՐԻՍՏ(Թ)ԱՅԼ [< фристайл < անգլ. free-style, բառացի՝ ազատ ոճ], գ. (սպորտ.): Լեռնադահուկային սպորտի տեսակ, որը ներառում է դահուկային ձևավոր սահք, ակրոբատիկ թռիչքներ ցատկահարթակից և սահք լեռնաբլուրների վրայով:

ՖՐԻՏՅՈՒՐՆԻՑԱ [< фритюрница < ֆր. friture < frit տապակած, բոված], գ.

(խոհր. տեխ.): Սարք, որի մեջ լցված ձեթի մեջ տապակում են միս, կարտոֆիլ են:

ՖՐՈՆԴ(Ա) [< фронда < ֆր. fronde, բառացի՝ պարսատիկ], գ. (պատմ.): Հասարակական շարժում բացարձակ միապետության դեմ Ֆրանսիայում 1648-53 թթ.:

ՖՐՈՆՏ [< фронт < գերմ. Front < ֆր. front, բառացի՝ ճակատ], գ. (խսկց.): Ճակատ (պատերազմի), ռազմաճակատ:

ՖՐՈՆՏԱԼ [< фронтальный < ֆր. frontal], ած. (անհնձն.): 1. Ճակատային, ճակատավոր: 2. Ամբողջ ճակատով կատարվող: 3. *փխբ.* Ընդհանուր, ընդհանրական, բոլորի հետ կատարվող:

ՖՐՈՆՏԻՍՊԻՍ [< фронтиспис < ֆր. frontispice < լատ. frons (frontis) ճակատ + aspicere նայել], գ. 1. Շենքի գլխավոր ճակատ: 2. Ճակատազարդ, պատկերանկար (գրքի):

ՖՐՈՆՏԻՏ [< фронтит < լատ. frons (frontis) ճակատ], գ. (բժշկ.): Ճակատաբորբ:

ՖՐՈՆՏՈՆ [< фронтон < ֆր. fronton], գ. (ճարտ.): Վերնաճակատ:

ՖՐՈՒԿՏՈԶ [< фруктоза < լատ. fructus պտուղ], գ. Պտղաշաքար, մրգաշաքար՝ օրգանական նյութ, որը գոյություն ունի պտուղներում և մեղրի մեջ:

ՖՐՈՒՍՏՐԱՑԻԱ [< фрустрация < ֆր. frustration < լատ. frustration խաբեություն], գ. (հոգեբ.): Հոգեբանական վիճակ, որը առաջանում է մարդու համար նշանակալի որևէ նպատակի հասնելու անհնարինությունից և դրսևորվում է ճնշող լարվածությամբ, անելանելիության զգացումի տագնապով:

ՖՈՒԳԱ [< фуга < իտլ. fuga < լատ. fuga վազք, փախուստ], գ. (երժշտ.): Մեկ երաժշտական թեմայի հաջորդական կրկնությունը մի քանի ձայներով: 2. Այդպիսի կրկնությունների վրա հիմնված երաժշտական ստեղծագործություն:

ՖՈՒԳԱՆ [< фуганок < գերմ. Fugebank], գ. (տեխ.): Երկար ու մեծ ռանդա, մեծառանդա:

ՖՈՒԳԱՍ [< фугас < ֆր. fougasse հին ֆր. fou կրակ], գ. (ռազմ.): Ականի՝ ռումբի են պայթուցիկ լիցք:

ՖՈՒԳԱՏՈ [< фугато < իտլ. fugato], գ. (երժշտ.): Հոմոֆոն ստեղծագործություններում ձայների մուտքի նմանակման սկզբունքի կիրառումը:

ՖՈՒԳԵՏԱ [< фугетта < իտլ. fughetta ֆուգայի նվազականը], գ. (երժշտ.): Կառուցվածքով ոչ մեծ և ոչ բարդ ֆուգա, որում զարգացումը առանձին դեպքերում փոխարինվում է ինտերմեդիայով (առանց թեմայի նոր անցումների):

ՖՈՒԵՏԵ [< фуэте < ֆր. fouetté < fouetter շրմփացնել, մտրակել, ճիպոտահարել], գ. (արվ.): Կանացի դասական պարի ֆիգուր, որը կազմված է մի ոտքի մատների վրա բազմանգամյա պտույտներից և օդում մյուս ոտքի միաժամանակյա շրջանաձև շարժումներից:

ՖՈՒԶԻԱ [< фузия < ֆր. fusion < լատ. fusio միաձուլում], գ. (լեզվբ. հնց.): Միաձուլում, համաձուլում (ձևույթների):

ՖՈՒԿՍ [< фукс < գերմ. Fucks աղվես], գ. (սպորտ.): Բիլիարդում՝ պատահական հաղթագնդիկ:

ՖՈՒՄԱՐՈԼՆԵՐ [< фумаролы < իտլ. fumarola հրաբխի ծխացող ճեղք < լատ. fuma ծուխ], գ. (երկրբ.): Փոքր ճեղքեր և ճեղքվածքներ, որոնցով բարձրանում են մագմայից և դեռևս չսառած լավային հոսքերից ու պիրոպլաստիկ նստվածքներից անջատվող տաք գազերը:

ՖՈՒՄԻԳԱՆՏ(ՆԵՐ) [< фумиганты < լատ. fumagare ծխահարել], գ. (քիմ.): Քիմիական նյութեր, որոնք օգտագործվում են բույսերի և կենդանիների վնասատուների դեմ:

ՖՈՒՄԻԳԱՑԻԱ [< фумигация < լատ. fumagare ծխահարել], գ. (մանգ.): Բույսերի և կենդանիների վնասատուների դեմ պայքարի մեթոդ գոլորշիով կամ ֆումիգանտներով ծխահարելու միջոցով,ծխեցում:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏ [< фундамент < լատ. fundamentum], գ. (խսկց.): 1. Հիմք: 2. *փխբ.* Հիմք, հենարան:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ [< фундаментальный < լատ.], ած. 1. Հիմքային, հիմքի: 2. Ամուր, հաստատուն, հիմնարար: 3. Մեծ, կոթողային: 4. Հիմնական, գլխավոր:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼԻԶՄ [< фундаментализм < լատ.], գ. 1. (կրոն.): Բողոքականության հիմունքներից մեկը, որը դեմ է հնացած կրոնական հասկացությունների վերանայմանը: 2. Հիմնավորություն:

ՖՈՒՆԻԿՈՒԼՅՈՐ [< фуникулёр < ֆր. funiculaire < լատ. funiculus պարան, ճոպան], գ. (խսկց.): Ճոպանուղի:

ՖՈՒՆԿՑԻԱ [< функция < լատ. functio գործածում, կատարում, գործադրում], գ. 1. Գործառույթ: 2. Դեր, նշանակություն: 3. (գիտ.): Երևույթ, որ կախման մեջ է մի ուրիշ երևույթից և փոփոխվում է նրա փոփոխությունների համաձայն: 4. (մաթ.): Փոփոխական մեծություն, որի արժեքները կախված են մի ուրիշ փոփոխական մեծության արժեքներից և համապատասխանում են նրանց: 5. (կենսբ.): Մարմնի կամ նրա որևէ գործարանի կատարած աշխատանքը որպես նրա կենսագործունեության դրսևորում: 6. *փխբ.* Գործունեության՝ պարտականությունների ոլորտ, մեկի՝ մի բանի պարտականությունների ամբողջությունը:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ [< функциональный < լատ.], ած. 1. Գործառական: 2. Ֆունկցիայի հետ կապված, ոչ օրգանական, ոչ կազմախոսական: 3. (գիտ.): Լոկ որոշակի ֆունկցիա կատարող՝ առանց իմաստ ունենալու: 4. Ֆունկցիայի վրա հիմնված, երևույթների՝ տարրերի՝ բաղադրիչների ևն ֆունկցիայի՝ գործառույթի վրա հիմնված:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻԶՄ [< функционализм < լատ.], գ. Ֆունկցիոնալ մոտեցում, երևույթների՝ իրողությունների ևն ֆունկցիոնալ բնորոշման՝ բնութագրման վրա հիմնված տեսություն գիտության տարբեր բնագավառներում:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼԻՍՏ [< функционалист < լատ.], գ. Ֆունկցիոնալիզմի հետևորդ՝ կողմնակից:

ՖՈՒՆԿՑԻՈՆԵՐ [< функционер < լատ.], գ. (մանգ.): Կուսակցական կամ վարչական ապարատի աշխատող:

ՖՈՒՆՏ I [< фунт < գերմ. Pfund < լատ. pondus կշիռ, չափ], գ. 1. Ծանրության ռուսական հին չափ =409.5 գրամի, գրվանքա: 2. Չափ ու կշռի անգլիական և ամերիկյան համակարգում՝ ծանրության չափ = 453.6 գրամի: 3. (հնց.): Գազի՝ շոգու ևն ճնշման չափի միավոր:

ՖՈՒՆՏ II [< фунт < անգլ. pound(sterling)], գ. (ֆին.): Ֆունտ ստեռլինգ՝ Մեծ Բրիտանիայի դրամական միավորը:

ՖՈՒՌ [< фура < գերմ. Fuhre բեռնած սայլ], գ. (խսկց.): 1. (հնց.): Բեռնասայլ: 2. Մեծ բեռնատար (տարողունակ)՝ փակ թափքով, ֆուրգոն:

ՖՈՒՌՆԻՏՈՒՐ(Ա) [< фурнитура < ֆր. fourniture < fournir հասցնել, մատակարարել], գ. Արհեստագործական օժանդակ՝ մանր նյութեր և առարկաներ (կոճակներ, ճարմանդներ, կոշկակարական մեխ ևն):

ՖՈՒՏ(Թ) [< фут < անգլ. foot, բառացի՝ ոտք, ներքան], գ. Չափի միավոր անգլիական չափման համակարգում, ոտնաչափ = 30,5 սմ:

ՖՈՒՏԲՈԼ [< футбол < անգլ. football < foot ոտք + ball գնդակ], գ. (սպորտ.):

Մարզական թիմային խաղ, որի մեջ հակառակորդներից յուրաքանչյուրը ձգտում է հնարավորին չափ մեծ թվով գոլ խփել:

ՖՈՒՏԲՈԼԻՍՏ [< футболист < անգլ.], գ. Ֆուտբոլով զբաղվող մարզիկ, ֆուտբոլ խաղացող:

ՖՈՒՏԲՈԼԿԱ [< ռուս. футболка < անգլ.], գ. (խսկց.): Տրիկոտաժե մարզական շապիկ:

ՖՈՒՏԵՐՈՒՄ [< футерум < գերմ. Futter տակդիր, ընդկալ], գ. (տեխ.): Ջերմային ագրեգատորների ու դրանց մասերի, ինչպես նաև քիմիական ապարատների ներքին պաշտպանական երեսվածք, աղյուսապատում:

ՖՈՒՏԶԱԼ [< футзал < անգլ. foot ոտք + salle դահլիճ], գ. (սպորտ.): Ֆուտբոլ մարզադահլիճում, մինի ֆուտբոլ:

ՖՈՒՏԼՅԱՐ [< футляр < գերմ. Futteral], գ. (խսկց.): Պատյան, տուփ՝ փչացումից ինչ-որ բաներ զերծ պահելու համար:

ՖՈՒՏՈՒՐԻԶՄ [< футуризм < լատ. futurum ապագա], գ. (արվ. գրկն.): XX դարի արվեստի և գրականության մեջ ծագած ձևապաշտական ուղղություն, որը հրաժարվում էր ամբողջ մշակութային ժառանգությունից և փորձում ստեղծել նոր ոճ, որն իբրև թե պետք է կործաներ բոլոր ավանդույթները և ավանդական արվեստի սկզբունքներն ու ոճերը, ապագայապաշտություն:

ՖՈՒՏՈՒՐԻՍՏ [< футурист < լատ.], գ. Ֆուտուրիզմի հետևորդ՝ կողմնակից, ապագայապաշտ:

ՖՈՒՐԱԺ [< фураж < ֆր. fourrage], գ. (գղտնտ.): Խոտ, անասնակեր:

ՖՈՒՐԱԺԿԱ [< ռուս. фуражка < feurre ծղոտ], գ. (խսկց.): Եզրաբոլորքով գլխարկ, գդակ:

ՖՈՒՐԳՈՆ [< фургон < ֆր. fourgon], գ. 1. Ծածկավոր բեռնասայլ: 2. Առհասարակ՝ բեռնասայլ: 3. Փակ թափքով ավտոմեքենա: 4. Ավտոմոբիլի՝ սայլի ևն փակ թափք:

ՖՈՒՐԻԱ [< фурия < լատ. Furia], գ. 1. (դից.): Հռոմեական դիցաբանության մեջ՝ վրիժառության երեք աստվածուհիներից յուրաքանչյուրը: 2. *փխբ.* Չար՝ նախանձոտ կին:

ՖՈՒՐԻԵՐԻԶՄ [< фурьеризм < ֆր. fouriérisme], գ. (մսնգ.): Շ. Ֆուրիեի (1772-1837 թթ.) և նրա հետևորդների ուտոպիստական ուսմունքը:

ՖՈՒՐՄ(Ա) [< фурма < գերմ. Form ձև], գ. (տեխ.): Մետաղաձուլական հալոցքներին և ագրեգատներին օդի հոսանք մղող սարք:

ՖՈՒՐՆԻՏՈՒՐԱ, գ. Տե՛ս Ֆուռնիտուրա:

ՖՈՒՐՇԵՏ [< фуршет < ֆր. fourchette, բառացի՝ պատառաքաղ], գ. (խսկց.): Ընդունելություն, որի ժամանակ ներկաներն օգտվում են ուտեստներից և խմիչքներից՝ բավարար չափով մոտենալով սեղանին և վերցնելով վրայից առանց նստելու դրա շուրջը (կամ ուղղակի օգտվում են մատուցվող սկուտեղներից):

ՖՈՒՐՈՐ [< фурор < լատ. furor մոլեգնություն, վայրագություն], գ. Հրապարակային մեծ, աղմկահույզ, շռնդալից հաջողություն, որ ուղեկցվում է հիացմունքի բուռն արտահայտություններով (բուռն ծափահարություններով, «ուռա» գոչերով են):

ՖՈՒՐՈՒՆԿՈՒԼ [< фурункул < լատ. furunculus], գ. (բժշկ.): Չիբան, մազապարկի և շրջապատող շարակցական հյուսվածքի սուր թարախամեռուկային բորբոքում:

ՖՈՒՐՖՈՒՐՈԼ [< фурфурол < լատ. furfur թեփ + ol(eum) յուղ], գ. (քիմ.): Ֆուրֆուրալ, հետերոցիկլիկ ալդեհիդ: Բաց դեղնավուն, ցորենի թարմ հացի հոտով հեղուկ է: Օգտագործվում է նավթի արդյունաբերության մեջ:

ՖՈՒՖԱՅԿԱ [< ռուս. фуфайка], գ. (խսկց.): Գործովի տաք շապիկ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ազգգր. - ազգագրական
ախտ. - ախտաբանական
անհնձն. - անհանձնարարելի
աշխգր. - աշխարհագրական
առևտր. - առևտրական
աստղաֆիզ. - աստղաֆիզիկական
աստղգ. - աստղագիտական
արիմրհ. - արհամարհական
արվ. - արվեստ
արտ. - արտադրություն
արտդր. - արտադրական
արտսհմ. - արտասահմանյան
արևմտ. - արևմտահայերեն
բանկ. - բանկային
բժշկ. - բժշկական
բնգ. - բնագիտական
բնխս. - բնախոսական
բնստղծ. - բանաստեղծական
բսբ. - բուսաբանական
գեղն. - գեղանկարչական
գիտ. - գիտական
գղտնտ. - գյուղատնտեսական
գործ. հոլ. - գործիական հոլով
գրաս. - գրասենյակային
գրդր. - գրադարանային
գրկն. - գրականագիտական
գրք. - գրքային
դից. - դիցաբանական
դեղգրծ. - դեղագործական
դվնգ. - դիվանագիտական
եկեղ. - եկեղեցական
երժշտ. - երաժշտական
երկթղ. - երկաթուղային
երկրբ. - երկրաբանական
երկրբշխ. - երկրաբաշխական
երկրչ. - երկրաչափական
երկրֆիզ. - երկրաֆիզիկական
էլեկտր. - էլեկտրական
թատր. - թատրոն
թղթխղ. - թղթախաղ
ժղ. - ժողովրդական
ժրգ. - ժարգոնային
կինո. - կինոարվեստ
կրոն. - կրոնական
հաշվ. - հաշվապահական
հեգն. - հեգնական
հզվդ. - հազվադեպ
հմկրգչ. - համակարգչային
հմմտ. - համեմատել
հմռտգ. - համառոտագրություն
հյհյնք. - հայհոյանք
հնէաբ. - հնէաբանական
հնչ. - հնչյունական
հնց. - հնացած
հնք. - հանքային
հոգեբ. - հոգեբանական
հոգն. - հոգնակի
հպվ. - հապավում
հվք. - հավաքական
հռետ. - հռետորական
ճարտ. - ճարտարապետական
մաթ. - մաթեմատիկա
մանկ. - մանկավարժություն
մարդբ. - մարդաբանական
մարզ. - մարզական
մեխ. - մեխանիկա
մետղգ. - մետաղագործական
մինչհ. - մինչհեղափոխական
մնծգր. - մանածագործական
մսնգ. - մասնագիտական
նկարչ. - նկարչական
շին. - շինարարական
որս. - որսորդական
պատմ. - պատմական
պշտն. - պաշտոնական
ռադ. - ռադիո
ռազմ. - ռազմական
սխ. - սխալ
սպորտ. - սպորտային
տեխ. - տեխնիկական
տողչփ. - տաղաչափական
տնտսգ. - տնտեսագիտական
տպգր. - տպագրական
տրամբ. - տրամաբանական

ինֆորմ. - ինֆորմատիկա
իրավք. - իրավաբանական
լեզվք. - լեզվաբանական
լանկրչ. - լուսանկարչական
լրգ. - լրագրական
խսկց. -խոսակցական
խոհր. - խոհարարական
ծով. - ծովային
կենդբ. - կենդանաբանական
կենսբ. - կենսաբանական
կերպր. - կերպարվեստ
կզմխս. - կազմախոսական
տրանս. - տրանսպորտային
փխբ. - փոխաբերական
փիլ. - փիլիսոփայական
քեր. - քերականական
քիմ. - քիմիա
քղք. - քաղաքական
քրտզգր. - քարտեզագրական
ևն - և այլն
օդգնց. - օդագնացություն
օդերև. - օդերևութաբանական
օպտ. - օպտիկական
ֆիզ. - ֆիզիկա
ֆին. - ֆինանսական

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ալբ. - ալբաներեն
անգլ. - անգլերեն
ասոր. - ասորերեն
ավստրալ. - ավստրալիական լեզուներ
արաբ. - արաբերեն
արամերեն
արավակերեն
ացտեկերեն
աֆրիկանս
բակոնգո
բանտու
բուլղ. - բուլղարերեն
գերմ. - գերմաներեն
դան. - դանիերեն
եբր. - եբրայերեն
եգիպ. - եգիպտերեն
եթովպ. - եթովպերեն
էստ. - էստոներեն
էսկիմոսերեն
էսպերանտո
էվենեկերեն
թաթարերեն
թամիլերեն
թաջիկերեն
թուրք. - թուրքերեն
իդիշ
իսլանդ. -իսլանդերեն
իսպ. - իսպաներեն
իվրիտ
իտալ. - իտալերեն
լատ. - լատիներեն
լեհ. - լեհերեն
կելտ. - կելտերեն
կեղուա
հինդի
հունգ. - հունգարերեն
ղազախ. - ղազախերեն
ճապ. - ճապոներեն
մալայերեն
մալդիվերեն
միջին լատ. - միջին լատիներեն
մոնղ. - մոնղոլերեն
նանայերեն
նորվեգ. - նորվեգերեն
շոտլանդ. - շոտլանդերեն
շվեդ. - շվեդերեն
չեխ. - չեխերեն
չին. - չինարեն
պարսկ. - պարսկերեն
պոլինեզ. - պոլինեզերեն
պորտ. - պորտուգալերեն
պրովանս. - պրովանսերեն
ռում. - ռումիներեն
սաամերեն
սանսկրիտ
սերբ. - սերբերեն
սինգալերեն
սլավ. - սլավոներեն
վիետնամ. - վիետնամերեն
վրաց. - վրացերեն
տիբեթ. - տիբեթերեն
տուպի - գուարանի
ուդմ. - ուդմուրտերեն
ուկր. - ուկրաիներեն
ուրդու
ուշ լատ. - ուշ լատիներեն
օսեթերեն
ֆին. - ֆիններեն
ֆլամանդերեն
ֆր. - ֆրանսերեն

հնդկ.	- հնդկերեն
հին նորվեգ.	– հին նորվեգերեն
հին սլավ.	– հին սլավոներեն
հին սկանդ.	- հին սկանդինավերեն
հնդկց.	- հնդկացիական
հոլանդ.	- հոլանդերեն

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.	- ածական
գ.	- գոյական
եղնկ. բառ	- եղանակավորող բառ
թվ.	- թվական
մկ.	- մակբայ
ձայն.	- ձայնարկություն

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

(ՇՈՒՐՋ 10.000 ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ)

Համակարգչային շարվածքը՝ **Նաիրա Մկրտչյանի**
Սուսաննա Գասպարյանի
ձևավորումը՝ **Աննա Աղուզումցյանի**
Սրբագրիչ՝ **Վահանդուխտ Դերձյան**

Հանձնված է տպագրության՝ 21.01.2011 թ.: Չափսը՝ 60x84 1/16:
40.25 տպագր. մամուլ: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակ՝ 300: